ԱՆԱՆՈՂ ԱԿԱՆՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԴՊԵՍՏՈՍԱՐԱՆ

Սկսնակների համար ամենուրեք

2013

ՄԵԿՆՈՂ ԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ՀՐԱՄԱՆԱՒ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

8(47+925)
Հ-56

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼԻՈՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4973

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
2013

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Ա 565

Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

Կազմող՝ Լիլիթ Հովսեփյան
Խմբագիր՝ Գևորգ Տեր-Վարդանյան

Մեկնողական գրականության քրեստոմատիա: ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ
Ա 565 ԱՌԱԿՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ/Կազմ.՝ Լ. Հովսեփյան. – Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013. - 552 էջ:

Ներկա բնագիրն ընդգրկում է ավետարանական առակների մինչև ԺԵ. դ. մեկնությունների հատվածները, ու դրանք համակարգելու և որպես ամբողջական բնագիր ներկայացնելու առաջին փորձն է: Ավետարանական առակների մեկնության ներկայացվող բնագիրը հնարավորություն է տալիս մեկնողական գրական ավանդույթի մեջ ավելի տեսանելի դարձնել ավանդականն ու փոխանցվողը, ամեն առանձին հեղինակի անհատական-ինքնուրույն շերտերի դրսևորումները:

Գիրքը նախատեսված է Հոգևոր Ճեմարանների, Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ

ԳԱԲՐԻԵԼ ՉԵՄՊԵՐՃՅԱՆԻ

ISBN 978-9939- 59-116-2 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013 թ.

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրիստոսի առակների մեկնություններն առանձին մեկնողական երկեր չեն[1]. հեղինակները, մեկնելով այս կամ այն Ավետարանը, բնականաբար, մեկնել են նաև առակները: Առակի մեկնության առաջին օրինակը տալիս է Քրիստոս[2]: Գրական այս տեսակին բնորոշ է այլաբանությունը, ինչը մեկնիչների համար ստեղծագործական լայն հնարավորություններ է ստեղծել. «Առակքն Քրիստոսի նմանին պարտիզի, զի որպէս պարտէզն բղխէ զզանազան ծաղկունս և զծառս, սոյնպէս և Տէրն մեր կազմեաց զայսոսիկ իմանալի պարտէզս, որք բղխեն զանազան խորհուրդս՝ ծածկեալս ի սկզբանէ աշխարհի»[3]: Ավետարանական մեկնություններում հաճախ խոսվում է առակի՝ որպես գրական տեսակի, նրա այլաբանական մեկնության առանձնահատկությունների մասին:

Հայ միջնադարյան մատենագրության մեջ մինչև ԺԵ. դ. հայտնի են հետևյալ ավետարանական մեկնությունները, որոնց ձեռագիր կամ տպագիր մեզ հասանելի օրինակներն օգտագործվել են ներկայացվող բնագիրը կազմելիս[4].

---

[1] Բացառություն է կազմում Պետրոս արք. Բերդումյանի «Աղբիւր բացեալ» աշխատությունը, որը հայ մատենագրության մեջ պահպանված ավետարանական առակների միակ ամբողջական մեկնությունն է. տե՛ս Աղբիւր բացեալ՝ արարեալ Պետրոսի եպիսկոպոսի Բերթումեան Աղամալեանց, Սբ. Էջմիածին, 1857: Աշխարհաբար թարգմանությունը՝ Պետրոս արքեպիսկոպոս Բերդումյան, Բացված աղբյուր, թարգմանությունը՝ գրաբարից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Տիգրան սարկավագ Բաղումյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008:

[2] Տե՛ս, օրինակ, Սերմնացանի (Մատթ. ԺԳ. 18-23) կամ Որոմների առակի (Մատթ. ԺԳ. 36-43, 51-52) մեկնությունները:

[3] Աղբիւր բացեալ՝ արարեալ Պետրոսի եպիկոպոսի Բերթումեան Աղամալեանց, էջ 11:

[4] Օգտագործված ձեռագիր և տպագիր աղբյուրները տե՛ս առանձին: Նաև՝ Պետրոսյան Ե. եպս., Տեր-Ստեփանյան Ա., Սուրբ գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Երևան, 2002, էջ 80-85, 90-93:

«Չորս Ավետարանների մեկնություն» Ստեփանոս Սյունեցի[1] (Ը. դ.):

Մատթեոսի Ավետարանի մեկնություններ՝ Անանիա Սանահնեցի (ԺԱ. դ.), Ներսես Շնորհալու մեկնության շարունակությունը (Արիստակես և Եփրեմ (ԺԲ. դ.), Հովհաննես Ծործորեցի (ԺԳ.-ԺԴ.դդ.), սբ. Գրիգոր Տաթևացի (ԺԴ.-ԺԵ. դդ.):

Մարկոսի Ավետարանի մեկ թերի մեկնություն՝ Բարսեղ Մաշկևորցի (ԺԳ.-ԺԴ. դդ.):

Ղուկասու Ավետարանի մեկնություններ՝ Իգնատիոս Սկլեռնեցի (ԺԱ.-ԺԲ. դդ.), Սարգիս Կունդ (ԺԲ. դ.), Մատթեոս Ջուղայեցի (ԺԴ.-ԺԵ. դդ.):

Հովհաննու Ավետարանի մեկնություններ՝ Սարգիս Կունդ, սբ. Գրիգոր Տաթևացի, Մատթեոս Ջուղայեցի, Գրիգոր Խլաթեցի (ԺԴ.-ԺԵ. դդ.)[2]:

Մեկնության ավանդական եղանակի կողքին (Արիստակես և Եփրեմ Բարսեղ Մաշկևորցի, Մատթեոս Ջուղայեցի և այլք) հանդես են գալիս նաև լուծմունքը (Գրիգոր Տաթևացի) և քաղվածո-շարք մեկնությունը[3] (Սարգիս Կունդ):

Լուծմունքը Գրիգոր Տաթևացու նախասիրած մեկնողական եղանակներից էր և դիդակտիկ-ուսուցողական նպատակ էր հետապնդում[4]: Նա նույն այդ ձևով է մեկնաբանել նաև Հին Կտակարանի «Առակաց» և «Երգ երգոց» գրքերը[5]: Գրիգոր Տաթևացին սահմանափակվում է առանձին բառերով և կապակցություններով արտահայտ-

[1] Աշխարհաբար թարգմանությունը հրատարակվել է աշխատասիրությամբ՝ Վիգեն դպիր Ղազարյանի, Ս. Էջմիածին, 1997:

[2] Գրիգոր Խլաթեցու մեկնության միակ ինքնագիր օրինակը Երուսաղեմի 1400 թ.ի Հմր 2521 (էջ 1-530) ձեռագիրն է. մեր բնագիրը կազմելիս այս հեղինակի մեկնությունն օգտագործելու հնարավորություն չենք ունեցել:

[3] Սարգիս Կունդի օգտագործված աղբյուրների մասին տե՛ս Պետրոսյան Եզնիկ, «Երկու խոսք Սարգիս վրդ. Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատության մասին», Էջմիածին, 1982, Ը-Թ. էջ 45-48: Սարգիս Կունդ (ԺԲ. դ.), Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխատասիրությամբ՝ Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005, էջ 7: Նույն ձևով է գրված նաև Հովհաննու Ավետարանի մեկնությունը:

[4] Տե՛ս Սուրբ Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Յոհաննու Աւետարանին, աշխատասիրությամբ՝ Ղուկաս աբեղա Ջաքարյանի, խմբագիր՝ Արշավիր Գաբուջյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002, էջ 10:

[5] ՄՄ ձեռ. Հմր 1200, Համառօտ հաւաքումն ի տեսութիւն լուծմանց Երգոյ երգոյն (այսպես)՝ աշխատասիրեալ Գրիգորիոս հսկողի, արի և երջանիկ հռետորի եւ քաջ փիլիսոփայի հայոց՝ աշակերտի եռամեծին Յոհաննու Որոտնեցւոյ ի լուսաւոր բանից վարդապետին Վարդանայ. աւգնեա Հոգիդ Սուրբ Աստուած, 367ա-395:

վաղ խորհրդանիշերի այլաբանական մեկնաբանություններով՝ ընդհանրացնելով իրենից առաջ եղած մեկնությունները և ամբողջացնելով առանձին խորհրդանիշերի այլաբանական իմաստները: Գրիգոր Տաթևացու մեկնությունն ավետարանական ամբողջական բնաբաններ չունի:

Սարգիս Կունդի քաղվածո մեկնությունը հայ իրականության մեջ «մեզ հասած առաջին շարք մեկնությունն է», որտեղ օգտագործվել են Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Ստեփանոս Սյունեցու և Իգնատիոս Սկլեռնցու գործերի հատվածներ: Այս երկն աղբյուրագիտական արժեք ունի:

Ձևային այս տարբերությունները, անշուշտ, պայմանավորված էին կիրառական-գաղափարական պատճառներով, ինչի արդյունքում ստեղծվում են կառուցվածքային հատկանիշներով մեկը մեկից տարբեր մեկնություններ, որոնք մեկտեղել ենք սույն բնագրում:

Ներկա բնագիրն ընդգրկում է ավետարանական առակների մինչև ԺԵ. դ. մեկնությունների հատվածները, ու դրանք համակարգելու և որպես ամբողջական բնագիր ներկայացնելու առաջին փորձն է: Այդ նպատակով հաճախ հարկ է եղել համեմատել նույն գործի տարբեր հրատարակություններ, գրչագիր օրինակներ[1], համակարգել կամ փոփոխել որոշ ընթերցումներ[2]: Բնագրագիտական-աղբյուրագիտական քննությունը թողել ենք ուսումնասիրողներին՝ հույս ունենալով, որ սույն ծաղկաքաղ մեկնության բնագիրն օգտակար կլինի առակների և մեկնությունների խնդրահարույց հարցերին լուծում տալու համար:

Ավետարանական առակների մեկնության ներկայացվող բնագիրը հնարավորություն է տալիս մեկնողական գրական ավանդույթի մեջ ավելի տեսանելի դարձնել ավանդականն ու փոխանցվողը, ամեն առանձին հեղինակի անհատական-ինքնուրույն շերտերի դրսևորումները:

[1] Երկու ձեռագրի համեմատությամբ կազմել ենք Արիստակեսի և Եփրեմի մեկնության բնագրի հատվածը (տե՛ս օգտագործված ձեռագրերի մատենագիտությունը՝ ձեռ. Ա, Բ):

[2] Ինչպես, օրինակ, Իգնատիոսի մեկնության դեպքում:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱԿՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ ԵՒ ՏՊԱԳԻՐՆԵՐԸ

Ա. ՁԵՌԱԳՐԵՐ

Ներկայացվող բնագիրը ծաղկաքաղ է, ուստի հարկ ենք համարել առանձին հեղինակի բնագրային հատվածը կազմել ըստ մեկ լավագույն ձեռագիր օրինակի: Անհրաժեշտության դեպքում որոշ ընթերցումներ կարգավորել ենք այլ ձեռագրի հետ համեմատելով: Ձեռագիր վիճակում (դեռեւս անտիպ) են Արիստակեսի և Եփրեմի, Գրիգոր Տաթևացու[1], Մատթեոս Ջուղայեցու մեկնությունները: Ստորև ներկայացնում ենք օգտագործված ձեռագրերի ժամանակագրական ցանկը[2]:

1. ԺԲ., ԺԳ. դդ., 1249ից առաջ, ՄՄ ձեռ. Հմր 1283, Ժողովածու, Արիստակէս եւ Եփրեմ, Ժողովումն մեկնութեան սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէոսի. բնագիրը՝ 65ա-112բ (համեմատվել է ՄՄ ձեռ. Հմր 1253ի հետ (Ա): Սկզբից և վերջից թերի, սակայն ընտիր երկաթագրախառն բոլորգրով գրված ձեռագիր է, մանրակրկիտ եւ ճշգրիտ կետադրված է:

2. ԺԳ. դար, ՄՄ ձեռ. Հմր 5448. Ժողովածու, Մատթէոս Ջուղայեցի, Պատճառ սուրբ Աւետարանին Յոհաննու սրբոց վարդապետաց ասացեալ. բնագիրը՝ 30ա-289բ: Ձեռագիրս գրված է կոկիկ բոլորգրով, հեղինականիշ հարուստ նշումներով. սուրբգրային քաղվածքներն ամբողջական են՝ առանց համառոտումների. հատուկ անունների խոտոր ձևերով՝ «Իսրայէլ»-ի փոխարեն՝ «Իսրայէդ», «Յովհաննու» փոխարեն՝ «Յոհաննու» ծնընդեան-ծննդեան, սրովբէ-սերովբէ, գինոյն-գինւոյն: «Օ»-ի փոխարեն՝ «աւ», «ւ»-ը բառամիջում չկա՝ «գինոյն», «եկեղեցոյն»: «Սէրովբէ» ձևի փոխարեն ունի «սրովբէ» ձևը:

3. 1391 թ., ՄՄ ձեռ. Հմր 2519. Ժողովածու, Նուաստ եւ յետին աշակերտի Մաթէոս եռամեծաց Յովհաննու եւ Գրիգորի աշխատասիրեաց հաւաքումն Բանից յԱւետարանէն Ղուկասու եւ քարոզ յոլովք ի վայելումն մանկանց Հայաստանեայց. բնագիր՝ 4ա-82բ (Դ, ինքնագիր): Խոնավություն տեսած, գրադաշտի արտաքին անկյունների մասերը հաճախ անընթեռնելի, կան ընկած թերթեր, կոկիկ արևելյան (անցման) բոլորգրով: Գլուխների սկզբնատողերը՝ կարմիրով: Տեղ-տեղ թվարկումներն արված լուսանցային մասերում: Սրանից ընդօրինակված է ՄՄ ձեռ. Հմր 2518, որով էլ վերականգնել ենք սույն օրինակի ընկած թերթերի և անընթեռնելի հատվածները: Նկատելի են խուլերի ձայնեղացման երևույթներ՝ «անտ» «անդ»ի, «տնանգ» «տնանկ»ի, «պանտոկ» «պանդոկ»ի փոխարեն և այլն: Կան «յ» կիսաձայնի անկման դեպքեր՝ «հրամաեաց» «հրամայեաց»ի փոխարեն, «ը»ի հավելման դեպքեր՝ «ըռընգունք» «ռնգունք» ձևի փոխարեն և այլն:

4. ԺԴ., ԺԷ. դդ., ՄՄ ձեռ. Հմր 5871. Ժողովածու, Յոհաննու Որոտնեց[ւ]ոյ տիեզերայլոյս ռաբունապետի, արարեալ բան յԱւետարանէն Յոհաննու, բնագիր՝ 13ա-80բ: Մանր նոտրգրով է, բոլոր սուրբգրային տեղիներն ու բնաբանային հատվածները՝ կարմիր թանաքով: Գլուխների ու ենթագլուխների համարները՝ լուսանցային մասերում, համապատասխանաբար՝ կարմիր և սև թանաքով: Սուրբգրային տեղիները և շատ բառեր համառոտված՝ հատկապես տողերի վերջում: «Յ» կիսաձայնը բառամիջում և բառավերջում չկա:

5. 1416 թ., ՄՄ ձեռ. Հմր 1264, Գրիգոր աշակերտի եռամեծի եւ տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մաթէոսի. բնագիրը՝ 3ա-336բ (Գ): Կոկիկ բոլորգրով ընդօրինակություն է, բոլոր գլուխներն ու ենթագլուխները՝ կարմրով: Պատճառների թվագրումը՝ լուսանցային մասերում՝ կարմիր և սև թանաքով: Նկատելի են ձայնեղների խլացման երևույթներ՝ «պինտ» «պինդ»ի, «տնանգաց» «տնանկաց»ի, սկիսպն-սկիզբն, «անծուկ»ը «անծուկ»ի, «տաղանտ»ը «տաղանդ»ի փոխարեն և այլն:

6. 1590 թ., ՄՄ ձեռ. Հմր 1253. Ներսես Շնորհալի, Մեկնութիւն Մատթէի՝ լրացված Արիստակէսի և Եփրեմի կողմից, բնագիրը՝ 134ա-353ա (Ա): Խառը նոտրգրով գրված օրինակ է, ամեն առանձին գլուխ համապատասխան լուսանցազարդով և կարմիր թանաքով: Նկատելի են խուլերի ձայնեղացման երևույթներ՝ «տեսչութեամբ»ի փոխարեն՝ «տեսջութեամբ», «անկաւ»ի փոխարեն՝ «անգաւ» և այլն: «Ու»ի փոխարեն ունի «ւ»՝ «լւաւ», «հերձւած», «զանգւած» և այլն: Ունի «յ» կիսաձայնի հավելման՝ «նայ», «ապայ» և անկման՝ «հրամատ», «ցանկանահն» և այլ ձևեր:

7. ԺԵ. դ., ՄՄ ձեռ. Հմր 1200. Գրիգոր Տաթեւացի, Մեկնութիւն Երգոց երգոյն, բնագիրը՝ 367ա-395բ:

[1] Տպագրված է միայն Հովհաննեսի Ավետարանի մեկնությունը. տե՛ս ծնթ. 5:

[2] Համապատասխան միավորի նկարագրության վերջում նշված է նաև ձեռագրի՝ մեր բնագրում ստացած պայմանանշանը. օրինակ՝ (Ա) և այլն:

Բ. ՏՊԱԳՐԵՐ

Մեկնությունների տպագիր օրինակները ներկայացնում ենք հեղինակների ապրած ժամանակի կարգով[1].

1. Ստեփանոս Սիւնեցի, Մեկնութիւն չորից Աւետարանչացն, Համամ Արեւելցի, Մեկնութիւն առակաց, Աշխատասիրությամբ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի, խմբագրությամբ Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյանի և Արմեն Տեր-Ստեփանյանի, Աստվածաշնչյան մեկնություններ, Երևան, 1994 (ՍՏ).

2. Յովհաննէս Ծորմորեցի (ԺԳ-ԺԴ. դդ.), Մեկնութիւն Աւետարանին որ ըստ Մատթէի (Ե. 18 - ԻԸ. 20), աշխատասիրությամբ Գոհար Ղազարյանի, Սեդա Ստամբոլցյանի, Գայանե Ներսիսյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009.

3. Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի, արարեալ երանելւոյն Բարսղի Շնորհալի վարդապետի Ճոն կոչեցելոյ ըստ մակադրական անուանն, լուսաւոր մտօք և իմաստալի յորդորակօք, Հատոր երկրորդ, աշխատասիրութեամբ տ. Անդրէաս վարդապետի Նարինեան Ակնեցւոյ, Կ. Պոլիս, 1826 (ՄՏ).

4. Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի, Կ. Պոլիս, 1824 (ԻՏ).

5. Հրամանաւ տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի, արարեալ մեկնութիւն Ղուկասու Աւետարանին սուրբ վարդապետի Իգնատիոսի. համացանցային կայք՝ http://www.shiraksec.am/general_links/gradaran /electronayin_grarumner/electronayin _grarumner.html.

6. **Սարգիս Կունդ** *(ԺԲ. դ.), Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխատասիրությամբ Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005:*

ԲՆԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Տարբեր հեղինակների տարբեր ժամանակների, միաժամանակ տպագիր և ձեռագիր նյութերի համադրումը հարկադրում է միօրինակացնել բնագիրը. այդ է պատճառը, որ.

[1] Ներկայացնում ենք միայն բնագիրը կազմելու համար գործածված օրինակները, կողքը՝ փակագծերում, նշում ենք համապատասխան պայմանանշանը. օրինակ՝ ՍՏ, այսինքն՝ Ստեփանոս տպագիր և այլն: Մեկնությունների հրատարակությունների մատենագիտական ամբողջական ցանկը տե՛ս վերջում (Մատենագիտություն):

ա. Անտեսել ենք աւ-օ, եւ-և տարբերությունները, ինչպես նաև բառամիջում եւ բառավերջում յ-ի անհարկի չգոյութեան (օրինակ՝ «հրամաեաց», «զգաարան», «ցանկանահն» «հրամատ» և այլն) կամ աւելորդ գործածութեան դեպքերը («նայ», «ապայ», «նմայ» և այլն).

բ. Ուղղագրական ակնհայտ խոտոր ձեւերն արտահայտել ենք շեղատառով («տվօղին», «արօսեակ» և այլն).

գ. Ձեռագրերում առկա սրբագրումները ևս արտահայտել ենք ընթերցումների մեջ՝ համապատասխան պայմանանիշին հավելելով նշանը՝ «Գ մերում թողութեամբ (Գ՝ թողութեամբ մերում)». առաջինը բուն շարադրանքի ձևն է, երկրորդը՝ սրբագրումը, որոնց մոտ երբեմն նշել ենք՝ «լս» (լուսանցում).

դ. Քանի որ ձեռագրերի պայմանանիշերը նշանակել ենք հայերենի գլխատառերով, ընկալման շփոթ չառաջացնելու նպատակով տարընթերցումների մեջ մեծատառ չենք օգտագործել, իսկ թվատառերը երկու կողմից առել ենք կետերի մեջ («.կ.աւոր, .ճ.աւոր, .լ.աւոր» եւ այլն):

ե. Ընթերցումները նշանակել ենք ավանդական եղանակով. «փոխարեն»-ի համար՝], «չիք»-ի համար՝ >, բառի կրկնությունը՝ < >: Բնագրի անհրաժեշտ վերականգնումն արել ենք անկյունավոր փակագծերում՝ [ ]:

զ. Բնագրի կետադրությունը սրբագրել ենք ժամանակակից հայերենի կետադրությանը համապատասխան: Հատուկ անունների ուղղագրությունը նույնպես միօրինակացվել է (Աւսեպոս, Յօսեպոս-Յովսէպոս).

է. Եթե սուրբգրային քաղվածքը համապատասխանում է հայերեն Աստվածաշնչի բնագրին[1], նշել ենք համապատասխան հատվածի գլխահամարը եւ տնահամարը, իսկ եթե ընկալյալ բնագրի համեմատ տարբերություններ կան, նշանակել ենք «հմմտ.», վերաշարադրված հատվածները նշել ենք «տե՛ս» ցուցումով: Սուրբգրային քաղվածքներն արտահայտել ենք բնագրում: «Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի» պարականոն գրքից բերված մեջբերումների տեղիները նշել ենք տողատակում.

ը. Բնագիրը կազմել ենք ավետարանական առակների հերթականությամբ. առանձին առակի մեկնությունները դրել ենք հեղինակնե-

[1] Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց յաշխատութենէ Տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի, ի միաբանութենէ Մեծին Մխիթարայ բարունապետի եւ առաջին Աբբայի, Վենետիկ, 1805:

րի ապրած ժամանակի կարգով. այսպես՝ ՎԱՍՆ ՍԵՐՄԱՆԱՑ, Մատթ. ԺԳ. 4-23, Ստեփանոս Սիւնեցի, մեկնության հատվածը. Արիստակէս եւ Եփրեմ, մեկնության հատվածը և այսպես շարունակ.

Բ. Առակների խորագրերը պայմանական են. հիմք ենք ընդունել Մ. Օրմանյանի «Համապատում»[1] աշխատության աշխարհաբար խորագրերը, որոնք համադրել ենք Պ. Բերդումյանի «Աղբյուր բացեալ» աշխատության և Գրիգոր Տաթևացու մեկնությունների մեջ առկա խորագրերի հետ: Ստորև ներկայացնում ենք մեր բնագրի ավետարանական առակների խորագրերը համապատասխան հատվածներով[2].

Վասն սերմանաց (Մատթ. ԺԳ. 4-23, Ղուկ. Ը. 5-18)
Վասն որոմանց առակին (Մատթ. ԺԳ. 24-30)
Մեկնութիւն առակին որոմանց (Մատթ. ԺԳ. 36-43, 51-52)
Վասն հատոյ մանանխոյ (Մատթ. ԺԳ. 31-32, Ղուկ. ԺԳ. 18-19)
Առակ խմորոյն (Մատթ. ԺԳ. 33, Ղուկ. ԺԳ. 20-21)
Առակ գանձի (Մատթ. ԺԳ. 44)
Վասն մարգարտի (Մատթ. ԺԳ. 45-46)
Առակ ուռկանին (Մատթ. ԺԳ. 47-50)
Առակ հարիւր ոչխարաց (Մատթ. ԺԸ. 12-14)
Առակ երկուց պարտապանացն (Մատթ. ԺԸ. 23-35)
Վասն այգւոյն եւ մշակաց (Մատթ. Ի. 1-16)
Վասն անիծեալ թզենւոյն (Մատթ. ԻԱ. 18-20)
Առակ երկուց որդւոցն (Մատթ. ԻԱ 28-32)
Վասն այգւոյն (Մատթ. ԻԱ. 33-46, Մարկ. ԺԲ. 1-11)
Վասն սեղանին հարսանեաց (Մատթ. ԻԲ. 1-14)
Վասն թզենւոյն (Մատթ. ԻԴ. 32-35, Մարկ. ԺԳ. 28-31, Ղուկ. ԺԳ. 29-33)
Տանուտէր եւ տնտես (Մատթ. ԻԴ. 42-51, Մարկ. ԺԳ. 33-37)
Առակ տասն կուսանաց (Մատթ. ԻԵ. 1-13)
Առակ քանքարաց (Մատթ. ԻԵ. 14-30, Ղուկ. Ի. 9-18)
Բարի սամարացի (Ղուկ. Ժ. 29-37)
Առակ անմիտ մեծատանն (Ղուկ. ԺԲ. 16-21)
Առակ անպտուղ թզենւոյն (Ղուկ. ԺԳ. 6-9)
Յաղագս կորուսեալ ոչխարին (Ղուկ. ԺԵ. 3-7)

[1] Մաղաքիա արք. Օրմանյան, Համապատում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 214-224, 340, 399 և այլուր:

[2] Նշել ենք միայն բնագրի մաս կազմող հատվածները:

Վասն կորուսեալ դրամին (Ղուկ. ԺԵ. 8-10)
Վասն անառակ որդւոյն (Ղուկ. ԺԵ. 11-32)
Վասն անիրաւ տնտեսին (Ղուկ. ԺԶ. 1-9)
Մեծահարուստ եւ աղքատ (Ղուկ. ԺԶ. 19-31)
Դատաւոր եւ այրի կին (Ղուկ. ԺԸ. 1-8)
Փարիսեցի եւ մաքսաւոր (Ղուկ. ԺԸ. 9-14)
Առակ տասն մնասաց (Ղուկ. ԺԹ. 11-27)
Առակ ճրագի (Ղուկ. Ը. 16-18)
Վասն հրաւիրելոցն ի խնջոյս (Ղուկ. ԺԴ. 8-11)
Ընտրութիւն հրաւիրելոցն (Ղուկ. ԺԴ. 12-14)
Վասն մեծի խնջոյից (Ղուկ. ԺԴ. 15-24)
Վասն չար մշակացն (Ղուկ. Ի. 9-19)
Աւրինակ ճշմարիտ հովուի (Յովհ. Ժ. 1-18)
Վասն որթոյն եւ ճիւղին (Յովհ. ԺԵ. 1-11)

Ձեռագրական ամբողջ աշխատանքի կազմակերպման եւ բնագրի քննության ընթացքում շնորհակալությամբ ստացել ենք Գեորգ Տեր-Վարդանյանի սիրահոժար աջակցությունը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Զաքարիա աբեղա Բաղումյանի պատրաստակամ օգնությունը:

ՊԱՅՄԱՆԱՆԻՇԵՐ ՀԱՄԵՄԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Ա - ձեռ. Հմր 1253, 1590 թ.
Բ - ձեռ. Հմր 1283 ԺԲ., ԺԳ. դդ., 1249ից առաջ
Գ - ձեռ. Հմր 1264, 1416թ.
Դ - ձեռ. Հմր 2519, 1391թ.
ԻՏ – տպագիր, Իգնատիոս, 1824 թ.
ՄՏ – տպագիր, Բարսեղ Մաշկեւորցի (Շնորհալի), 1826 թ.
ՍՏ – տպագիր, Ստեփանոս Սիւնեցի, 1994 թ.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բնագրի հրատարակություններ

1. Հրամանաւ տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի, արարեալ մեկնութիւն Ղուկասու Աւետարանին՝ սուրբ վարդապետի Իգնատիոսի. համացանցային կայք՝ http://www.shiraksec.am/general_links/gradaran/electronayin_grarumner/electronayin_grarumner.html

2. Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ մինչ ի համարն 17 հինգերորդ գլխոյն և անտի աւարտեալ յերանելւոյն Յոհաննու Երզնկացւոյ, որ և կոչի Ծործորեցի, Կ. Պոլիս, 1825

3. Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի, ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի, Կ. Պոլիս, տպարան Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու, 1735

4. Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի, արարեալ երանելւոյն Բարսղի Շնորհալի վարդապետի Ճոն կոչեցելոյ՝ ըստ մակադրական անուանն, լուսաւոր մտօք և իմաստալի յորդորակօք, Հատոր երկրորդ, աշխատասիրութեամբ տ. Անդրէաս վարդապետի Նարինեան Ակնեցւոյ, Կ. Պոլիս, 1826

5. Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի, Կ. Պոլիս, 1824

6. Յովհաննէս Ծործորեցի (ԺԳ.-ԺԴ. դդ.), Մեկնութիւն Աւետարանին որ ըստ Մատթէոսի (Ե. 18-ԻԸ. 20), աշխատասիրությամբ՝ Գոհար Ղազարյանի, Սեդա Ստամբոլցյանի, Գայանե Ներսիսյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009

7. Սարգիս Կունդ (ԺԲ. դ.), Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխատասիրությամբ՝ Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005

8. Ստեփանոս Սիւնեցի, Մեկնութիւն չորից Աւետարանչացն, Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի խմբագրությամբ, Աթենք, 1988

9. Ստեփանոս Սիւնեցի, Մեկնութիւն չորից Աւետարանչացն, Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի խմբագրությամբ, Անթիլիաս, 1991

10. Ստեփանոս Սիւնեցի, Մեկնութիւն չորից Աւետարանչացն, Համամ Արեւելցի, Մեկնութիւն առակաց, աշխատասիրությամբ՝ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի, խմբագրությամբ Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյանի և Արմեն Տեր-Ստեփանյանի, Աստվածաշնչյան մեկնություններ, Երևան, 1994

11. Սուրբ Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Յոհաննու Աւետարանին, աշխատասիրությամբ՝ Ղուկաս աբեղա Զաքարյանի, խմբագիր՝ Արշավիր Գաբուջյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002

ԱՎԼԹՏԷՐԵՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՍՆ ՍԵՐՄԱՆԱՑ

Մատթ. ԺԳ. 4-23

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Յաւուրս յայնոսիկ ելեալ Յիսուս ի տանէն, նստէր առ ծովեզերն, եւ ժողովեցան առ նա ամբոխ բազում (հմմտ. Մատթ. ԺԳ. 1-2):

Յաղագս բազում մարդասիրութեանն ի տանէն ելանէր, ոչ միայն յերեւելոյն, այլ որպէս թուի ինձ եւ յաներեւութէն, եւ անփոյթ արարեալ իւրոյ ընութեանն իմանալւոյն եւ երկնաւորին, **«նստէր առ ծովեզերն»**. *ի ծովային ծփական կենցաղոյս այսորիկ, զի ցածուսցէ եւ խաղաղացուսցէ զծովս մարդկան զալեկոծեալ կենցաղս, այլ եւ ի նաւ մտանէր վասն նորին մարդասիրութեանն ի մարդկային եւ ի մահկանացու մարմինս եւ ապականացու, զի ազատեսցէ ի մահուանէ եւ յապականութենէ եւ արասցէ անմահս եւ անապականս:*

Եւ խաւսէր ընդ նոսա առակաւք (հմմտ. ԺԳ. 3):

Որք կային առ ծովեզերն, ընդ նոսա առակաւք խաւսէր, զի դեռ եւս ոչ էին կարաւղք յայտնապէս լսել զբանն Քրիստոսի, իսկ աշակերտացն ասաց որպէս կարաւղաց:

Լուարուք դուք զառակ սերմնահանին (ԺԳ. 18):

Իսկ զայժմեան զառակս ինքն իսկ մեկնէ, վասն որոյ ոչ է պարտ յերկարաբանել:

Ձեր երանի աչաց, զի տեսանեն եւ ականջաց՝ զի լսեն (հմմտ. ԺԳ. 16):

Ամէն ասեմ ձեզ. զի բազում մարգարէք եւ արդարք ցանկացան տեսանել, զոր տեսէքդ, եւ ոչ տեսին, եւ լսել, զոր լուայքդ, եւ ոչ լուան (հմմտ. ԺԳ. 17):

Աչս եւ ականջս, զի ոչ ասէ զերեւելիսս, կարծեմ ամենեցուն յայտնի է. վասն զի երեւելի աչաւք եւ փարիսացիքն տեսին զՔրիստոս եւ այլ ամբոխն հրէական մարդկան, նոյնպէս զգալի եւ մարմ-

4973

նական ձայնն Քրիստոսի լուան ամենեքեան մերձայկայքն. ապա ուրեմն երանէ զաչս եւ զլսելիս առաքելոցն, զի այնպէս տեսին զՔրիստոս, որպէս պարտ էր զՈրդի[ն] Աստուծոյ տեսանել, եւ այնպէս լուան նմայ, որպէս պարտ էր եւ պատշաճ Որդւոյ[ն] Աստուծոյ լսել: Ոմանք կարծեցին եթէ վասն յարութեանն եւ դատաստանին խաւսեցաւ ընդ նոսայ, եւ յաղագս այնորիկ երանեցան, բայց ինձ թուի առաջինն պատշաճագոյն. բազում մարգարէս ասաց եւ արդարս, եւ ոչ զամենեսեան, քանիս ոմանք ի մարգարէիցն եւ յարդարոցն տեսին իմանալի աչաւք զաւր գալստեանն Քրիստոսի, որպէս ինքն իսկ ասաց Քրիստոս. Աբրահամ ետես եթէ մարդանալ ունիմ եւ ի դժոխս իջանել եւ հանել զկապեալսն ի վիշապէն կամակորէ եւ ուրախ եղեւ ընդ այս տեսութիւն:

Որ[1] ունիցի փացի նմա եւ յաւելցի, եւ որ ոչն ունիցի եւ զոր ունիցի բա[ր]ձցի ի նմանէ (հմմտ. ԺԳ. 12):

Գտաք ի մեկնութեան Իւրոգինի, ի Մա[տ]թէոս աւետարանիչ յԺԲ.երորդ (երկոտասաներորդ) գիրսն, եթէ ամենայն տունկ, զոր տնկեաց Հայրն Միածնի Որդւոյն Աստուծոյ, ի յայն տունկ Միածնին վարդապետութիւնն առաւելէսցի. եւ մի՛ ոք կարծեսցէ զտունկն Պաւղոսի, եւ զաճելն Պաւղոսի արտաքոյ գոլ տնկոցն Աստուծոյ, զի ամենայն, որ ըստ հաճոյիցն Աստուծոյ է տնկեալ, տունկ Աստուծոյ կոչի. եւ յաւելոյ յայդպիսի տունկ. զայդպիսի տունկ որ ունի, յաւելցի այնպիսւոյն. բայց զոր ոչ տնկեաց Հայրն երկնաւոր, այլ ընդդիմակացն ի հոգւոջ եւ զայն, զոր ունի, բարձցի ի նմանէն: Զայդ Ուրիգինէս այդպէս մեկնեաց, եւ ես ոչ ընդդիմանամ, բայց կարծեմ ըստ այժմեան մեկնութեանս, եթէ «որ ունիցի զսերմն բարի»՝ հոգին, որ բարի է, «երկիր» անուանեցաւ, նմա առաւելեսցի եւ յաւելցի, իսկ որ «անկաւն առ ճանապարհաւն» եւ «ի վերայ վիմաց», եւ զայն, որ ընկալաւն ի վարդապետութենէն Քրիստոսի, եկեալ չարին, ի բաց բառնայ, վասն զի չէր հաստատեալ ի սրտի, ի բաց բարձաւ ի նմանէ զոր ունէրն:

[1] ՍՏ Մեկնութիւնը այս համարի տակ եւ ամբողջ հատուածի կանոնաւոր չէ ընթանում, այլ յետ ու առաջ ընկած: Գուցե այստեղ Չ.ը պակասաւոր է այն մեկնութեան հետ, որ կապուած է Որոգինեսից մէջ բերուած հատուածի հետ (ծնթ. կազմողի), էջ 77:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Նստէր առ ծովուն եւ որսայր՝ արկեալ ընդ ուռկանաւ զայնոսիկ, որ առ ծովերբն էին: Եւ ոչ վայրապար ինչ նստէր, այլ որպէս աւետարանիչն զնոյն իսկ ակնարկէ, եթէ զի առ հասարակ զամենիսեան ի մի վայր գումարիցէ (տե՛ս Մատթ. ԺԳ. 2), եւ ոչ զոք ի թիկանց թողուցու, այլ զամենիսեան ի դիմի կացուցանիցէ:

Եւ սկսաւ,- ասէ,- խաւսել ընդ նոսա առակաւք (հմմտ. Մատթ. ԺԳ. 3):

Ի լերինն թէպէտ եւ այնչափ վարդապետութիւնս արար, ոչ ինչ առակս յաւդեաց, քանզի տխմարք էին եւ ռամիկք, իսկ աստ դպիրք եւ փարիսեցիքն խառնէին: Եւ զի՞նչ ասիցէ.

Ահա ել սերմանացան՝ սերմանել զսերմանիսն[1] (ԺԳ. 4):

Եւ ուստի՞ ել, որ յամենայնին է եւ զամենայն լնու, եւ կամ որպիսի՞ իրաւք ել. ոչ ի տեղւոջէ ինչ ի տեղի, այլ խնամով եւ տեսչութեամբ եկեալ՝ մերձեցաւ առ մեզ ըստ մարմնազգածն, մարմնապատն լինելոյ: Եւ քանզի մեք չկարէաք մտանել առ նա վասն մեղացն, որ պարսպեալ[2] պահէին զմեզ, ինքն իւրովի ելեալ գա առ մեզ:

Եւ ի սերմանելն իւրում, էր որ անկաւ առ ճանապարհաւն, եւ թռչունք կերան[3] զնա (ԺԳ. 4):

ԵՓ *Արդ,* «սերմանահանն» *մի է, եւ երկիրն մի է, այլ արմատիքն չորք բաժինք երեւեցան ո՛չ ի սերմանողէն ինչ, այլ յերկրէն, որ չընկալաւ, այսինքն՝ [յ]անհնազանդ ոգոցն: Եւ ընդէ՞ր չասիցէ, թէ՝ զկէսն ընկալան[4] ծոյլքն եւ կորուսին, եւ զկէսն՝ մեծատունքն եւ հեղձուցին, եւ զկէսն յոյլ[ք]ն աղաւաղեցին: Ո՛չ կամի կսկծեցուցանել, զի մի ի վհատութիւն ինչ արկանիցէ, այլ թոյլ տայ լսողացն մտաց անձամբ զանձինս յանդիմանել:*

Եւ զի՞նչ ի դէպ էր, ասեն, ի մէջ փշոցն կամ յապառաժի եւ առ ճանապարհի[5] սերմանել, երկրի չէ՞ր ինչ այն ի դէպ: Բայց ոգւոց մարդկան եւ վարդապետութեան կարի ի դէպ իսկ էր եւ առաւել

[1] Ա > զսերմանիսն
[2] Ա պարան դեալ] պարսպեալ
[3] Ա > կերան
[4] Ա > ընկալան
[5] Ա > կամ յապառաժի եւ առ ճանապարհի

գովելի, քանզի ի խաւսուն երկիրս մարթի քարին եւս յերկիր պարարտ դառնալ եւ ճանապարհ ինչ լինել. ճանապարհ եւ կոխան անցաւորաց[1]*, այլ անդ պարարտ եւ պտղաբեր, եւ փշաբերացն կակուղ լինել սերմանեաց տեղիս, զի թէ չէ՛ր իսկ հնար, նա եւ սերմանէր իսկ ո՛չ. եւ եթէ առ ամենիսեան չեղեւ նորոգութիւն եւ փոփոխումն, այն ոչ սերմանահանին ինչ վնասէ*[2]*, այլ նոցայ, որք ոչն կամեցան դառնալ: Նա զիւրն, զոր ինչ պարտն էր առնել, արար: Եթէ նոքա նորայոցն եղեն մատնիչք, նա չէ ինչ վնասու պատճառ, որ այնչափ մարդասիրութիւն եցոյց:*

ԵՓ *Իսկ այն,* «**որ անկաւ առ ճանապարհաւն**»*, նա ինքն է նմանութիւն ոգւոց զրկողաց*[3]*, եւ իբրեւ զայն է, որ զմի քանքարն առ եւ անարգեաց զտուիչն բարերար* (տե՛ս Մատթ. ԻԵ. 14-30)*: Եւ զի ոչ կակղացաւ՝ ընդունել զսերմանիս նորա, եղեւ նա անց եւ կոխան ամենայն չարեաց. զի վասն այսորիկ ոչ եղեւ յանդ երկրի նորա տեղի վարդապետին, իբրեւ մշակի մտանել՝ պատառել զխստութիւն նորա եւ սերմանել ի նմա: Իսկ զչարն նմանութեան թռչնոյ գրեաց. եթէ յափշտակեաց զնա* (տե՛ս ԺԳ. 4)*: Յայտ արար յայսմ վայրի, եթէ ոչ բռնութեամբ յափշտակէ ի սրտէ զուսումն վարդապետութեան նորա, զի ահաւասիկ ըստ աւրինակին զոր եցոյց, ի դուռն լսելեաց կայր ձայն Աւետարանին, որպէս հատն ցորենոյ ի վերայ երեսաց երկրի. այն, որ ոչ ամփոփեաց արգանդին զսերմանիսն, որ անկան ի նմա, զի չէ՛ կարելի թռչնոցն քաղել զսերմանիս երկրի, որ ամփոփեաց զերկիր ցորեանն ի ներքոյ թեւոց իւրոց՝ ըստ այնմ, եթէ՝* «Ի սրտի իմում թագուցի զբանս քո» (Սաղմ. ՃԺԸ. 11)*: Եւ այնու, զի ի վերայ ապառաժին ասաց, եցոյց բարերարն զողորմութիւն գթութեան իւրոյ, զի թէպէտ ոչ լինէր գործեալ խստութիւն նորա, սակայն ոչ խնայեաց ի նմանէ զսերմանիս իւր, զի նոքա են, որ դառնան յաշակերտութենէ անտի նորա, իբրեւ զայնոսիկ, որ ասացին.* «Խիստ է բանդ այդ, ո՞ կարէ լսել դմայ» (Յովհ. Զ 61)*: Նման Յուդայի, որ լուաւ զբան նորա եւ ծաղկեցաւ նշանաւք նորա եւ ի ժամանակի փորձութեանն անդ*[4] *եղեւ անպտուղ:*

[1] Բ յանցաւորաց
[2] Ա սերմանահանին չվնասէ] սերմանահանին ինչ վնասէ
[3] Ա զզրկողաց
[4] Ա > անդ

Իսկ երկիր փշալից ընդունել զսերմանիսն (տե՛ս Մատթ. ԺԳ. 7)*, որ զզաւրութիւն իւր փշոյ*[1] *եւ տատասկի ետ, յայտ արար վարդապետն զսերմն իւր, յայնմիկ, զի սերմանեաց յաւժար զսերմանիս իւր ի յերկիր, յաղթի սնուցիչ աւտար վաստակոց: Թէպէտ եւ թագաւորեալ էր փուշ յերկրի անդ, սերմանեաց ի նմա*[2] *զիւրսն առատապէս, զի եղիցի առանց պատասխանի տալոյ:*

Մատեաւ մեծատուն մի առ Տէր ուրախութեամբ եւ ասէ. «Զայս ամենայն արարեալ է իմ ի մանկութենէ իմմէ» (հմմտ. Մարկ. Ժ. 20)*: Առ Տէրն սրբեաց եւ ետ մերկ սերմանիս.* «Թէ կամիս կատարեալ լինել, երթ վաճառեա՛ զինչս քո» (հմմտ. Մարկ. Ժ. 21)*, իսկ նա, իբրեւ ետես, թէ եկն եհաս կատարած սերմանն, զի ամենայն հեղձուցիչ փշոց*[3] *ազատեսցի, գտաւ տրտմեալ վասն մեծութեան իւրոյ, նա ինքն փուշ ապականիչ*[4]*, յապաղիչ նորայ: Իսկ* «**երկիր բարի**» *եւ պարարտ՝ ոգիք, որ գործեալ են ստուգութեամբ*[5]*, նման են այնոցիկ, որ կոչեցան եւ* «թողին զամենայն ինչս իւրեանց եւ գնացին զհետ նորա» (հմմտ. Ղուկ. Ե. 11)*: Իսկ* «**երեսնաւորն**» *եւ* «**վաթսնաւորն**» *եւ* «**հարիւրաւորն**»՝ *ասէ վասն ընթացից ի մանկութենէ, յերիտասարդութենէ, ի ծերութենէ, իբրու երկիրն մի է, եւ սերմն՝ մի: Իբրու ըստ կարին, այսպէս ժողովէ զթիւն, եւ իբրու մի՛ քան զմի առաւել են արմտաւք, սակայն եցոյց բարերարն զքաղցրութիւն իւր, զի իբրեւ եկին առնուլ զվարձս որոշեալ արմտաւք, յետինքն ընդ առաջինսն վարձս հասարակ առին:*

Դարձեալ՝ «**հարիւրաւորն**» *թուի, թէ կատարումն է այն ընտրութեան, որ առ զկնիք ընտրութեան եւ զմահ վկայութեան փոխանակ Աստուծոյ: Իսկ* «**վաթսնաւորքն**» *այնոքիկ են, որ կոչեցան եւ ետուն զմարմինս իւրեանց ի տանջանս չարչարանաց վասն Աստուծոյն իւրեանց: Եւ մահու փոխանակ Տեառն ոչ ժամանեցին, բայց կացին մնացին ի վախճանն բարւոք: Իսկ* «**երեսնաւորն**»՝ *չափ է հանապազորդ բարւոք երկրի, եւ են այնոքիկ, որ ընտրեցան յաշակերտութիւն եւ ոչ յարեան ի վերայ նոցա ժամանակք, հալածանաց եւ պսակեցան բարւոք վաստակաւք իւրեանց, իբրեւ զերկիր մի, որ պսակեալ իցէ պտղովք իւրովք, բայց յընտրութիւն մարտիրոսութեան եւ վկայութեան ոչ կոչեցան:*

[1] Ա փոշո] փշոյ
[2] Ա նա] նմա
[3] Ա փշոյ
[4] Ա > ապականիչ
[5] Ա ստուգութիւն

Մատեան աշակերտքն եւ ասեն. «Ընդէ՞ր առակաւք խաւսիս ընդ նոսա» (հմմտ. ԺԳ. 10):

Արժան է զարմանալ ընդ աշակերտսն, թէ զիա՞րդ ցանկային ուսանել եւ դէպ ժամանակի մնային, թէ ե՛րբ պարտ իցէ հարցանել, զի ոչ առաջի ամենեցուն զայն առնէին եւ զայս Մարկոսի յայտ արարեալ՝ ասէ, թէ՝ «Մատեան առ նա առանձինն» (հմմտ. Մարկ. Դ. 10). *այսպէս պարտ էր մաւրն եւ եղբարցն առնել, եւ միտ դիր նոցա խնամոցն, զոր ունէին առ այլս, զի նախ զնոցայն խնդրէին եւ ապա՝ զանձանց:*

«Ընդէ՞ր,- ասեն,- առակաւք խաւսիս ընդ նոսա» եւ ոչ ասացին՝ ընդ մեզ, զոր եւ այլուր ասէին, թէ՝ «արձակեաց զժողովուրդդ[1]*» եւ առ այն, զինչ ասիցէ Քրիստոս.*

«Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան երկնից, եւ նոցա չէ տուեալ» (ԺԳ. 11):

Զայս, ասէ, «ոչ»՝ հարկ մուծանիցէ կամ վիճակ ինչ վայրապար առանձին հասեալ նոցա, այլ զնոսա յայտ առնէ ամենայն չարեաց պատճառս եւ ցուցանէ, թէ պարգեւք էին իրքն եւ ի վերուստ տուեալ շնորհք, բայց ոչ վասն զի պարգեւք են այնու, ինչ անձնիշխանութիւնն բառնի: Եւ այս ի յաջորդացն յայտ է.

«Որ ունիցի,- ասէ,- տացի նմա եւ յաւելցի» (հմմտ. ԺԳ. 12):

Եւ զոր ասեն, այսպիսի է, եթէ յորժամ յաւժարութեամբ ոք եւ փոյթ յանձին ունիցի, տացի նմա ամենայն ինչ եւ յաստուածակոյս կողմանէ անտի, իսկ յորժամ յայսցանէ թափուր ոք իցէ, եւ չի լինիցի ինչ նպաստ յանձնէ, ապայ եւ ոչ յԱստուծոյ ինչ տացի նմա: Քանզի եւ զոր ունին, ասէ, բարձցի ի նմանէ ոչ իբրեւ յԱստուծոյ ինչ բառնալով, այլ նորա զիւր անձն չառնելով արժանի:

«Վասն այնորիկ առակաւք խաւսիմ ընդ նոսա, զի տեսանեն եւ ոչ տեսանեն» (ԺԳ. 13):

Եւ թէ չտեսանէին, ասեն, ապա պարտ էր զաչսն բանալ, եթէ բնութեան ինչ կուրութիւն էր, պարտ էր բանալ, իսկ եթէ կամաց եւ անձնիշխանութեան, զայն զի՞նչ հարկ էր առնել: Վասն այնորիկ

[1] Ա ժողովուրդտ

ոչ հարկ ինչ ասաց, թէ չտեսանեն, այլ թէ տեսանեն եւ չտեսանեն, զի յայտ լիցի, թէ յանձնիշխանութենէ է կուրութիւնն, քանզի տեսանէին զդեւս հանեալ եւ «ասէին, թէ՝ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս» (Ղուկ. ԺԱ. 15): *Եւ լսէին, զի առ Աստուած մերձացուցանէր զնոսա եւ բազում միաբանութիւն ցուցանէր զիւր ընդ Աստուծոյ, եւ ասէին, թէ՝ չէ դա յԱստուծոյ: Եւ կատարի առ նոսա մարգարէութիւնն Եսայեայ, որ ասէ՝* «Լսելով լուիջիք եւ մի իմասցջիք» (Ես. Զ. 9) *եւ այլն: Տեսանես եւ զմարգարէն մեծամեծ հաւաստեաւք լեալ ամբաստան զնոցանէ, քանզի չասաց, թէ՝ չտեսանէք, այլ թէ՝ տեսանէք, եւ ոչ տեսանէք, զի անձամբ իսկ զանձանց խցին զականջս եւ կափուցին զաչս եւ թանձրացուցին զսիրտս* (տե՛ս Մատթ. ԺԳ. 15), *զի ոչ միայն լսել չկամէին, այլեւ ծանունս լսէին, եւ զայս այնր աղագաւ առնէին, զի մի դարձցին, եւ թողցի նոցա: Զ[յ]աճախութիւն չարեաց նոցա կամի ցուցանել եւ զյաւժարութեամբ յետս կալն:*

Գուցէ դարձցին, եւ բժշկեցից զնոսա (հմմտ. ԺԳ. 15):

Յայտ արար, թէ եւ դառնալ մարթէ եւ թէ ապաշխարեսցեն, զոյ հնար:

Բայց ձեր երանի աչաց, զի տեսանեն եւ ականջաց, զի լսեն (ԺԳ. 16):

Ո՛չ զայս մինչ տեսանելեաց ասէ եւ ոչ զյայտնի լսելեացս, այլ զմտացն աչացն եւ զսրտին լսելեաց: Քանզի եւ նոքա հրէայք իսկ էին՝ ընդ նոսա սնեալք, այլ ոչ ինչ վնասեցան ի մարգարէութենէն, զի զարմատս բարութեանց յանձինս ունէին:

«Բազում մարգարէք եւ արդարք ցանկացան տեսանել, զոր տեսանէք եւ ոչ տեսին» (ԺԳ. 17):

Եւ զիա՞րդ իցէ, զի ոչ միայն, զոր հրէայքն ոչ տեսին, տեսանէին, այլեւ զոր արդարքն ցանկային[1] *տեսանել եւ ոչ տեսին: Այլ նոքա հաւատովք տեսին, եւ սոքա՝ աչաւք իսկ, եւ յայտ յանդիման: Տեսանես, զիարդ զհինն միաբանէ ընդ նորոյս, յայտ արարեալ, թէ ոչ միայն գիտէին նոքա զհանդերձեալսն, այլեւ կարի իսկ ցանկանային:*

[1] Ա ցանկանայ

Եւ արդ, լուարուք դուք զառակս սերմանացանին (ԺԳ. 18):

Եւ ապայ սկսանի ասել, զոր յառաջագոյնն ասացաք:

Զմիւսն՝ թէպէտ եւ յափշտակել կամի սատանայ, այլ մեք եմք տեարք՝ տալ ի ձեռս եւ չտալ: Եւ թէ ծածկեսցուք յաւժարութեամբ զսերմն եւ հանապազորդ յիշատակաւք զգուշասցուք, չկարէ յափշտակել, եւ զմիւսն՝ թէպէտ եւ ցամաքիցն սերմանիքն, այն ոչ ի խորշակէն ինչ լինի, քանզի ոչ ասաց ի խորշակէն ցամաքեցաւ, այլ վասն չունէր արմատս: Իսկ զմիւսն՝ թէպէտ եւ հեղձուցանէր փուշքն, ոչ ի փշոցն ինչ բռնութենէ, այլ ի ծուլութենէ այնոցիկ, որ փշոցն ետուն բուսանել: Գո՞յ հնար արգելուլ զչար բոյսսն, եթէ կամիցիս յաւգուտ մատակարարել զմեծութիւնն, քանզի չասաց, եթէ աշխարհս, այլ եթէ՝ հոգք աշխարհիս, եւ ոչ ասաց, թէ մեծութիւնն[1]*, այլ թէ՝ պատրանք մեծութեանն, զի ամենայն ինչ մեծութեանն պատրանք են, քանզի անուանք եւեթ են, եւ ոչ իրք հաստատունք: Ապայ յետո բարւոք երկիրն դնէ. թէպէտ եւ երկիրն բարւոք իցէ, եւ սերմանահանն՝ մի եւ սերմն՝ նոյն, այլ ոմն ՃԾ. (100), եւ ոմն՝ Կ. (60), եւ ոմն՝ Լ. (30) տայ զտոհմականսն: Թէպէտ եւ երկիրն բարւոք իցէ, սակայն գունակ գունակ կերպարանաւք երեւին: Տեսանես, զի ոչ մշակն ինչ է պատճառ, եւ ոչ սերմն, այլ երկիրն, որ ընդունիցի, ոչ ըստ բնութեան ինչ, այլ ըստ կամաց: Եւ քանզի մարդարսէր է, ո՛չ մի ճանապարհ հորդեաց, զի չասաց, թէ որ զՃ.(100)աւորն չառնիցէ, խոտան գտանի, այլ թէ որ զվաթսնաւորն առնիցէ, կեայ: Եւ ոչ այս չա՛փ միայն, այլեւ որ զերեսնաւորն առնիցէ եւ այսու դիւրին յարդարէ զփրկութիւնն: Եւ դո՛ւ, թէ չկարիցես*[2] *անինչ եւ առանց կարասոյ լինել, տաջիր աղքատացն յընչիցն, զոր ունիցիս եւ եթէ այնմ եւեթ բուռն չհանդարտիցես, բաժանեաց ընդ Քրիստոսի զինչսն, զի այսոքիւք կեցցես:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս ի տանէն, նստէր առ ծովեզերն: Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք (Մատթ. ԺԳ. 1-2):

[1] Ա > քանզի չասաց, եթէ աշխարհս այլ եթէ հոգք աշխարհիս, եւ ոչ ասաց, թէ մեծութիւնն

[2] Բ թէ չկարիցես կուսութիւն պահել աւրինաւք ամուսնականջիր եւ եթէ չկարիցես

Միշտ կարգին եւ ժամանակին հոգ տանի աւետարանչս Մատթէոս, որ է յատուկ սորա, իսկ այլքն՝ միայն բանիցն զաւրութեան, քանզի յորժամ զարմացոյց, ասէ եւ արար, զոր խնդրէին ծնաւղն եւ եղբարքն, որպէս ի հարսանիսն, թէպէտ նախ զսնափառութիւնն բժշկեաց, որպէս անդ, եւ յետոյ զպատշաճ պատիւն մատոյց ծնողին, ապա ելեալ ի տանէն՝ առ ծովեզերն բազմէր, որպէս զի ամենեքեան անդր յընդարձակ վայրի հաւաքեալ՝ շահեսցին ի վարդապետութենէն, միանգամայն եւ ծովեզերեայսն որսասցէ, զոր տեսեալ ժողովեցան առ նա բազումք: Իսկ առ ի միտս՝ յաղագս բազում մարդասիրութեանն ելեալ ի տանէն հայրենի սեփհական աթոռոյն, յաներեւութէն ասեմ, պայծառ եւ անմատչելի լուսոյն ծայրութեամբ, զոր աւրն նշանակէ, անփոյթ արարեալ իւրոյ բնութեանն իմանալւոյն եւ երկնաւորին, եւ նստաւ առ ծովեզեր կենցաղական մարմնոյս, յեզր կալով ծփական ալեաց ամբոխից մտաց եւ մարմնոյ մեղաց, որով բազում ժողովուրդք հրէից եւ հեթանոսաց ած առ ինքն ի ձեռն հաւատոցն:

Մինչեւ մտանել նմա ի նաւն եւ նստել եւ ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն (ԺԳ. 2):

Յաղագս այնորիկ ի նաւ մտանէր, զի մի՛ զոք ի թիկանց թողուցու, այլ զամենեսեան ի դիմի կացուսցէ եւ առանց խափանածուի զվարդապետութիւնն ամենեցունց պատմեսցէ: Իսկ մտաւորաբար՝ մտեալ ի մարմին մահկանացու, եւ զի մի թափանցումն միայն կարծեսցես, ասէ՝ «նստեալ», որ զյոյժ միութեամբ հանդչելն ցուցանէ եւ նովաւ ի ծով աշխարհի անվնաս մնացեալ: Եւ ո՛չ միայն այս, այլեւ ցածոյց մարմնովն զալեկոծութիւն ի մարդկանէ, որով էած զմարդիկ յեզր ծովու կենցաղոյս՝ ազատելով ի մահուանէ եւ առնելով անմահս եւ անապականս:

Եւ խաւսէր ընդ նոսա բազումս առակաւք եւ ասէր (ԺԳ 3):

Յորժամ ի լերինն ուսուցանէր ո՛չ առակաւք, քանզի անդ տխմարքն եւեթ էին եւ ռամիկքն, իսկ աստ՝ դպիրք եւ փարիսեցիք խառն եկեալ էին: Եւ դարձեալ, զի ցուցցէ, թէ ի լրումն եկեալ իսկ են տառք մարգարէիցն՝ մանաւանդ Դաւթեան, զի ասէր. «Բացից առակս զբերան իմ» (Սաղմ. ՀԷ. 2): *Իսկ առ ի միտս՝ յերկինս գոլով իմանալաբար զիմանալիսն ուսուցանէր, իսկ ի յերկիր իջեալ եւ ի*

ծով աշխարհի միեալ՝ մարմնականացս մարմնատիպ բանիւ աւրինակաւ վարդապետէր:

Ահա ել սերմանահան սերմանել (ԺԳ. 4):

«**Ահա**»յն *զյանկարծակի երեւումն իւր ի յերկրի նշանակէ՝ ըստ այնմ.* «Ահա այր, եւ ծագումն անուն նորա» (Զաք. Զ. 12): *Իսկ* «**ելն**»՝ *ո՛չ ի տեղւոջէ ի տեղի, որ յամենայնի է եւ զամենայն լնու, այլ զխնամով եւ զտեսչութեամբ մարմնազգեցութիւնն աւրինակէ, մինչ զի ի ծածուկ գոլով ի ծոցն Հաւր՝ ցուցաւ մեզ, քանզի մեք չկարէաք մտանել առ նա վասն մեղաց պարսպին, ի՛նքն իւրովի ելեալ եկն առ մեզ: Եւ դարձեալ՝ «ել» ասելովն ցուցանէ, թէ նախ ծննդեամբ ելեալ էր ի Հաւրէ եւ այժմ մարմնով ել ի կուսէն՝ ըստ այնմ.* «Ելի ի Հաւրէ եւ եկի յաշխարհ» (Յովհ. ԺԶ. 28). *զի որ միանգամ ել ի Հաւրէ, նա երկրորդ անգամ եկն յաշխարհ. եւ ո՛չ Հայր, որ ոչ յումեքէ է, եւ ոչ Հոգին, որ թէպէտ ելումն է ի Հաւրէ, այլ բղխմամբ եւ ո՛չ ծննդեամբ, զի Հոգին ըստ անձինն բղխումն միայն ի Հաւրէ է եւ ոչ յՈրդւոյ: Եւ պատճառն՝ զի միայն Հայր առաքէ եւ ո՛չ առաքի, քանզի Հայր ո՛չ յումեքէ ել, վասն այսորիկ ո՛չ յումեքէ առաքեալ ասի ի Գիրս, իսկ Որդի, զի ի Հաւրէ ծնանի եւ տայ Հոգւոյ, վասն այսորիկ առաքի ի Հաւրէ եւ առաքէ զՀոգի:*

Իսկ թէ ոք ասիցէ, թէ եւ Հոգի զՈրդի առաքէ՝ ըստ այնմ. «Տէր առաքեաց զիս եւ Հոգի նորա» (Եւ. ԽԸ. 16), *ապա ուրեմն եւ Որդի ի Հոգւոյ է, առ այս ասեմք լուծումն, թէ զայս առաքումն Որդւոյ ի Հոգւոյն ըստ մարդկութեանն ասէ մարգարէն, իսկ ըստ աստուածութեանն՝ Հոգի որպէս ի Հաւրէ, այսպէս եւ յՈրդւոյ առաքումն, վասն այսորիկ եւ առաքումն հաւասար ասի ի Հաւրէ եւ յՈրդւոյ, բայց աստ զՈրդւոյ միայն ասէ, քանզի ելումն է ծննդեամբ ի Հաւրէ, վասն այսորիկ եւ ըստ մարմնոյն ասէ, թէ՝* «**ել սերմանահան**», *իսկ* «**սերմանահան**» *զինքն անուանէ, որ զսերմն բարի վարդապետութեանն հանէ ի բնական բարութենէն եւ սերմանէ յերկիր, քանզի զնախ սերմանեալ բարին գաւսացոյց թշնամին, յաղագս որոյ կրկին ել՝ սերմանել:*

Եւ «**անդապտան**», *յորում սերմն անկանի, են հոգիք բանականաց, միանգամայն եւ զայն ցուցանէ, թէ սերման է ժամանակ, իսկ որայն ի հանդերձեալն բարդի: Եւ դարձեալ՝ ել ի խաչ եւ յերկինս, եւ զսերմն Հոգւոյն շնորհաց պէսպէս նորոգութեամբ սերմանեաց առաքելովքն՝ ըստ այնմ. «Ել ի բարձունս եւ գեր[եաց զգերութիւն], բաշխեաց աւար որդւոց մարդկան» (Հմմտ. Սաղմ. ԿԷ. 19), եւ որ ելն՝ ի վերոյ ել, քան զամենայն երկինս, զի լցցէ զամենայն: Եւ դարձեալ՝ ի գերեզմանէ եւ ի դժոխոց հանեալ զկապեալսն քաջութեամբ իւրով՝ ըստ նմանութեան արեւու, զի «ելանէ յառագաստէ» (Սաղմ. ԺԸ. 6) եւ սերմանեաց ի Հոգիս մեր զյոյս յարութեան, զի «սերմանի մարմին շնչաւոր եւ յառնէ մարմին հոգեւոր» (Ա. Կոր. ԺԵ. 44):*

Եւ ի սերմանելն իւրում՝ էր, որ անկաւ առ ճանապարհաւ, եւ եկն թռչուն երկնից եւ եկեր զնա:

Ըստ զանազան բարուց ժողովելոցն յարմարեաց զառակս, քանզի սերմն մի է, Սերմանահանն՝ մի եւ երկիրն՝ մի, սակայն արմտիքն ի չորս բաժանեցան, եւ այս ո՛չ ի Սերմանողէն, այլ յերկրէն, այսինքն՝ յանհնազանդ հոգւոցն: Բայց ընդէ՞ր ոչ ասաց, թէ զկէսն ընկալան կարծրասիրտքն եւ կորուսին, եւ զոմանս մեծատունքն եւ հեղձուցին, եւ զայլս յոյլքն եւ աղաւաղեցին. ո՛չ կամեցաւ առ այժմ կսկծեցուցանել, զի մի՛ վհատիցին, այլ թոյլ տայ անձամբ զանձն յանդիմանել ի ձեռն առակին: Եւ թէ ասիցէ ոք՝ զի՞նչ ի դէպ էր ճանապարհին, կամ յապառաժին, կամ ի մէջ փշոցն սերմանել: Նախ՝ զի որ սերմանէն՝ ո՛չ ընտրէ զերկիրն, այլ խառնիխուռն սերմանէ, զի առատութիւն սերմանողին ցուցցի եւ պատճառն հատանիցի: Եւ երկրորդ՝ երկիր չէ ի դէպ, բայց ոգւոց մարդկան եւ վարդապետութեան կարգի յարմար է եւ առաւել գովելի, զի որպէս զանձրեւ եւ զարեւ՝ չարաց եւ բարեաց (տե՛ս Մատթ. Ե. 45), այսպէս եւ զայս, քանզի խաւսուն երկիր վասն ընդունակ գոլոյ ընդդիմակաց կրից՝ մարթ է քարին պարարտ լինել եւ ճանապարհին չլինել կոխան եւ փշաբերն ծաղիկս վերընծիւղել. եւ թէ ո՛չ փոփոխին, ո՛չ սերմանողին է վնաս, այլ ընդունողացն: Իսկ թէ ոք ընդդէմ բերցէ, թէ ընդէ՞ր ասաց. «Գինի նոր ի փիկս նորս արկանելի է եւ ոչ ի հինս, զի երկոքին պահին» (հմմտ. Մատթ. Թ. 17), *իսկ աստ ի ճանապարհին եւ յապառաժին զսերմն կորուսանէ, ասասցուք, թէ այն շնորհացն է, որ յետ վարդապետութեանն նորանայ եւ ընդունի, իսկ այս սկիզբն վարդապետութեանն, որպէս ասէ, թէ՝ «ի սերմանելն իւրում՝ էր, որ անկաւ առ ճանապարհաւ»:*

Արդ, զայս թէպէտ Տէրն լուսաւոր եւ յայտնի մեկնէ ի կարգի իւրում, սակայն ի տեղւոջս զայս ասասցուք, թէ սոքա են հոգիք զրկո-

դացն, որպէս այն, որ զմի քանքարն էառ եւ անարգեաց զտուիչն նորա (տես Մատթ. Ե. 14-30), *զի ոչ կակղացաւ ընդունել զսերմանիս նորա եւ աճեցուցանել տոհմականաւք, այլ եղեւ կոխան ամենայն չարեաց, դիւաց եւ ախտից եւ մեղաց, քանզի ո՛չ մի է ճանապարհ կորստեան, այլ բազումք: Վասն որոյ թռչունն աւդոյդ չարն՝ զսերմն ուսման եւս քաղեաց ի սրտէ նորա, ո՛չ բռնութեամբ, քանզի աւասիկ ի դրունս լսելեաց մերձ էր ձայն Աւետարանին, որպէս հատ ցորենոյ ի վերայ երեսաց երկրի, այլ զի ոչ ամփոփեաց յարգանդ սրտի իւրոյ զսերմն, որ անկաւ ի նա, գործով ետ ուտել զնա, այսինքն՝ մոռացմամբ ծածկեաց զնա:*

Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում, եւ վաղվաղակի բուսաւ առ ի չգոյէ հիւթոյ երկրին: Ի ծագել արեւու տապացաւ, եւ զի ոչ գոյին արմատք, չորացաւ (ԺԳ. 5-6):

Աստ զմարդասիրութիւնն յայտնապէս ցուցանէ, զի թէպէտ ոչ էր հանդերձեալ կակղանալ խստութիւն նորա, սակայն ո՛չ խնայեաց ի սերմն իւր, որպէս այնոքիկ, որ յաշակերտութենէ յետս դարձան՝ ասելով, թէ. «Խիստ է բանդ, ո՞ կարէ լսել դմա (Յովհ. Զ. 61): *Նման Յուդայի, որ լուաւ զբան նորա եւ վաղվաղակի ծաղկեցաւ սքանչելեաւք նորա եւ ի ժամանակի փորձութեանն եղեւ անպտուղ, քանզի զբանն գործով ոչ արմատացոյց ի սիրտ իւր, վասն այսորիկ զաւսացոյց զնա սատանայ յառաքելական պտղոյն: Վասն զի արժան է եւ յանձանց մերոց նպաստ լինել սերման բանին հիւթոյ առաքինութեամբ, զի ի ծագել խորշակին նեղութեանց եւ վշտաց՝ ներողութեամբն Աստուծոյ յածել փորձողին, մի՛ դայթագղեալ վրիպիցիմք ի հաւատոցն, որպէս բազումք, քանզի չե՛ն ընդ մի համար տկարքն եւ զաւրաւորքն, յորժամ վիշտք ի վերայ հասանիցեն, այլ ոմն ժուժկալէ, իսկ ոմն՝ դթէ:*

Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, եւ ելին փուշքն եւ հեղձուցին զնա (ԺԳ. 7):

Թէպէտ զգաւրութիւն իւրեանց փշոյ եւ տատասկի ետուն, սակայն վարդապետն յայտնեաց զսէր իւր սերմանել եւ ի նոսա՛ յաւժարութեամբ, որպէս զի անպատասխանիք լինիցին: Եւ զի մի՛ ոք ասիցէ, թէ ի մէջ փշոյն զիա՞րդ բուսանէր, ասէ՝ «**հեղձուցին**» *եւ ոչ թէ «հեղձաւ», քանզի կամաւ մատնեցին զսերմն մեղաց եւ ապա-*

կանութեանց եւ ուժդութեանց: Քանզի աւանիկ ընչեղն յորժամ առ Տէրն եկն եւ եցոյց զվարս ի մանկութենէ իւրմէ երկիր գէր եւ պարարտ, սակայն փուշս բուսուցեալ, սրբել կամեցաւ. «Թէ կամիս կատարեալ լինել, վաճառեա զինչս քո» (Մատթ. ԺԹ. 21): *Եւ նա ո՛չ կամեցաւ, այլ գնաց խոժոռեալ դիմաւք իբրեւ զփուշս, վասն որոյ ասաց.* «*Այդպիսեացդ դժուարին է յարքայութիւնն մտանել*» (հմմտ. Մատթ. ԺԹ. 23), *այլ հրոյ ճարակ լինիցին, եթէ ոչ սրբեսցին, քանզի կամաւք թոյլ ետուն փշոցն ծածկել զբանն եւ անպտուղ առնել, վասն որոյ ո՛չ փշոցն բռնութեանն, այլ նոցա ծուլութե՛ան է մեղադրանքն:*

Եւ այլն անկաւ յերկիր բարի եւ տայր պտուղ. էր՝ որ հարիւրաւոր, եւ էր՝ որ վաթսնաւոր, եւ էր՝ որ երեսնաւոր (ԺԳ. 8):

Սոքա այնոքիկ են, որ զանդաստան մտաց իւրեանց գործեցին ստուգութեամբ, որպէս նոքա, որ «թողին զամենայն եւ գնացին զհետ նորա» (հմմտ. Մատթ. ԺԹ. 27): *Այլեւ ցուցանէ, թէ սակաւ են վաստակքն, եւ բազում են փառքն, միանգամայն ուսուցանէ եւ զայն, թէ սակաւք են, որ ապրելոց իցեն: Բայց «Հարիւրաւոր» եւ* «**վաթսնաւոր**» *եւ* «**երեսնաւոր**» *նախ զնոսա ասէ, որ յերեք հասակս բարեգործք եղեն՝ ի մանկութիւն, յերիտասարդութիւն եւ ի ծերութիւն: Եւ երկրորդ՝ յերիս ժամանակս հաւատացին. ոմանք՝ ի մանկութիւն եւ ընդունելիք եղեն, կէսք՝ ի կատարեալ այրութիւն [եւ] արժանաւորք գտան, եւ այլք ի ծերութեանն աշակերտեցան եւ հաճոյացան: Եւ երրորդ՝ հարիւրաւն զկատարելոցն ընտրութիւնն ասէ, որք ի վերայ հաւատոյն եւ գործոյն՝ եւ արեա՛մբ մարտիրոսացան. եւ «վաթսնաւոր»՝ զնոսա, որք կոչեցան ի հանդէս եւ ետուն զմարմինս իւրեանց ի չարչարանս վասն Տեառն, բայց ի մահն, յոր փութային, ոչ ժամանեցին, այլ արձակեալք ի բռնաւորաց՝ կացին մնացին բարւոք մինչ ի վախճան. իսկ* «**երեսնաւոր**»՝ *որք ընտրեցան յաշակերտութիւնն Քրիստոսի, եւ ո՛չ ժամանակ հալածանաց յարեաւ ի վերայ նոցա, այլ բարի վաստակաւք իւրեանց պսակեցան՝ իբրեւ զերկիր պտղաւք զարդարեալ: Եւ չորրորդ՝ որք բնական աւրինաւքն արդարացան, երեսնաւորք են, եւ որ զբաւորականաւն՝ վաթսնաւորք, իսկ [որք] Աւետարանաւն՝ նեղ եւ անձուկ ճանապարհաւն ընթացան եւ ոչ միայն զմարմին, այլեւ զմիտս մաքրեցին՝ հարիւրաւորք:*

Եւ հինգերորդ՝ որք զհոգիս առաքինութեամբ խոհականին զարդարեցին, հարիւրաւորք են, եւ որք զբանն ճշմարտախաւսութեամբ պայծառացուցին՝ վաթսնաւորք, իսկ որք զմարմինս անբիծ քաղաքավարութեամբ պահեցին՝ երեսանաւորք:

Արդ, եթէ մի այր զամենեսեան արար ըստ Դաւթի՝ «զնայ անբիծ, գործէ զարդարութիւն, խաւսի զճշմարտութիւն» (Սաղմ. ԺԴ. 2), *զերեսին փառսն ժառանգէ՝ զհոգւոյն, զբանին եւ զմարմնոյն, իսկ եթէ զանազան արք, զանազանապէս փառաբանեսցին: Վեցերորդ՝ ո՛չ զանտի փառսն ասէ, այլ զաստիս, արդ, որ* «զամենայնն եթող եւ գնաց զկնի նորա, զկին եւ զորդիս եւ զքորս եւ զագարակս, զհարիւրապատիկն ասէ առցէ եւ զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ» (հմմտ. Մատթ. ԺԹ. 29), *որք են աստ տաւնախմբութիւնք, որպէս սրբոցն եւ նշխարաց նոցին սքանչելագործութիւնք, իսկ անդ՝ երկնից արքայութիւնն: Եւ որք զկէս ընչից իւրեանց բաշխեցին եւ մասանցն ծառայեցին իբրեւ հարկաւոր պիտոյից, նոքա վաթսնաւորքն՝ յիշատակեալք եւ գովեալք ի կենցաղս ի բարիս եւ անդ եւս փառաց արժանաւորեալք ըստ գոյիցն: Իսկ որք արդար վաստակաւք կենցաղավարին, ո՛չ զայլոյ ուրուք յափշտակելով, այլ իւրեանց ընչիւքն շատանան եւ զայլ եւս աւրէնսն կատարեն, երեսնաւորք են, որք ի մարմնական կեանս յղփանան առատութեամբ պարգեւացն Աստուծոյ եւ անդ եւս հանգիստ գտանեն:*

Եւ եաւթներորդ՝ որք զերկինս ժառանգեն, հարիւրաւորք են՝ ըստ առաքելոյ. «Յոգիս արդարոց արանց կատարելոց յեկեղեցիս անդրանկաց գրելոցն յերկինս» (հմմտ. Եբր. ԺԲ. 23), *որք են առաքեալք եւ մարգարէք, եւ կուսանք հոգւով եւ մարմնով, եւ մարտիրոսք, եւ վարդապետք քարոզաւղք: Իսկ որք զդրախտն՝ վաթսնաւորք, եւ են նահապետք եւ հայրապետք եւ արդարք: Իսկ որք զերկիրս դրախտացեալ՝ երեսնաւորք, հաւատացեալ եւ սրբազան ժողովուրդք եւ ուղղափառ եկեղեցիք քրիստոնէից առանց աղանդոյ, քանզի որպէս աստիճանքն եւ գործքն զանազան, այսպէս եւ փառքն զանազան՝ ըստ առաքելոյ* (տե՛ս Ա. Կոր. ԺԵ. 41): *Եւ ութներորդ՝ երեսնաւորք, որք ծառայական երկիւղիւ պաշտեցին զԱստուած, իսկ վաթսնաւոր՝ որք վասն վարձուց մշակեցին յայգի աստուածային աւրինացն, իսկ հարիւրաւորք որդիական սիրով կատարիչք եղեն կամաց երկնաւոր Հաւրն: Իններորդ՝ կուսանաց պարգեւի պտուղ հարիւրապատիկ, եւ այս երկնային է, զոր նշանակէ հարիւրաւորն,*

իսկ՝ այրեաց պարգեւի պտուղ վաթսնաւոր, զի այսպիսիքս կրթեն զինքեանս ի գործ ողորմութեան: Իսկ ամուսնանալոց պարգեւի պտուղ երեսնաւոր, զի սոցա բաւական է լնուլ զտասն պատուիրանն հաւատով Սուրբ Երրորդութեանն, զի երեք տասն՝ երեսուն է, ըստ որում եւ զմեզ զաշխատաւղքս եւ զաւգտաւղսդ եւ զլսաւղսդ՝ մասին արժանի արասցէ սրբոցն ի լոյս:

Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ (ԺԳ. 9):

Ամենեքեան ունէին լսելիս, բայց զներքինն՝ ոչ, զոր մարգարէն ըղձացաւ առնուլ. «Յաւել ինձ ունկն ի լսել» (Եւ. Ծ. 4)*: Ուստի յայտ է, թէ հաւատո՛յ էին պէտք առ ընդունել զիմաստս առակին, եւ քննութեա՛ն հանճարոյ՝ առանց խորամանկութեան սրտի, զորս ո՛չ ունէին դպիրքն եւ փարիսեցիքն եւ ունէին պարզամիտ աշակերտքն, զի թէպէտ ոչ իմացան, այլ հարցմամբն լուեալ՝ տեղեկացան, որպէս եւ ասէ.*

Եւ մատուցեալ աշակերտքն՝ ասեն ցնա. «Ընդէ՞ր առակաւք խաւսիս ընդ նոսա» (ԺԳ. 10):

Նախ՝ զի ցանկութիւն ունէին ուսման առակին, վասն այնորիկ հարցին եւ այն ի դէպ ժամանակի «առանձինն», որպէս ասէ Մարկոս (Մարկ. Դ. 10), եւ ո՛չ առաջի ամենեցուն, որպէս մայրն եւ եղբարք նորա, քանզի խրատեցան անդ: Եւ երկրորդ՝ զի գութ խնամոց ունէին առ ժողովուրդն, զի նախ զնոցայն խնդրէին եւ ապա՝ զանձանց, վասն այնորիկ ասացին, թէ՝ **«Ընդէ՞ր առակաւք խաւսիս ընդ նոսա»** *եւ ո՛չ թէ «ընդ մեզ», որպէս եւ այլուր ցուցանէին, թէ՝* «Արձակեա՛ զժողովուրդդ» (Մատթ. ԺԴ. 15), *եւ թէ՝* «Գիտե՞ս, զի գայթագղեցին ոմանք» (հմմտ. Մատթ. ԺԵ. 12):

Նա պատասխանի եւ ասէ ցնոսա. «Քանզի ձե՛զ տուեալ է գիտել զիսորհուրդս արքայութեանն երկնից եւ նոցա չէ՛ տուեալ» (ԺԳ. 11):

Զայս ասելով՝ ոչ թէ հարկ ինչ կամ վիճակ մուծանիցէ առանձինն հասեալ նոցա, այլ զի սոքա ազատք էին ի չարեաց, եւ նոքա՝ չարեաւք յղփացեալ, իսկ «յանձն չարարուեսցի իմաստութիւն ոչ մտանէ»,- *ասէ Սողոմոն* (Իմաստ. Ա. 4)*: Եւ դարձեալ՝ ցուցանէ, թէ պարգեւք են իրքն, եւ ի վերուստ տուեալ՝ շնորհքն, բայց ո՛չ թէ պարգեւք են՝*

զանձնիշխանութիւնն բառնայ, այլ ըստ արժանեացն շնորհէ՝ ըստ այնմ. «Ողորմեցայց՝ որում ողորմեցայց» (Ելք ԼԳ. 19): *Յայտ ի յաջորդէս է, զի ասէ, որպէս զի մի՛ նոքա վհատիցին եւ սոքա ծուլասցին.*

Զի ոյր գուցէ, տացի նմա եւ յաւելցի, եւ ոյր ոչն գուցէ, եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ (ԺԳ. 12):

Այսինքն՝ թէ յորժամ յաւժարութիւն ոք եւ փոյթ յանձին ունիցի, տացի նմա ամենայն ինչ յաստուածակոյս կողմանէ անտի, իսկ յորժամ յայնցանէ թափուր իցէ ոք եւ ո՛չ լինիցի նպաստ յանձնէ, ապա եւ ոչ յԱստուծոյ ինչ տացի նմա, որպէս ասէ, թէ՝ «զոր ունիցի՝ բարձցի ի նմանէ»՝ *ո՛չ յԱստուծոյ ի բաց բառնալով, այլ նորա զիւր անձն չառնելով արժանի: Բարւոք ասաց եւ զայն, թէ՝ զոր կարծեն, թէ ունիցի, որպէս թէ եւ զա՛յն իսկ ոչ ունի: Եւ դարձալ՝ զի ոյր գուցէ պտուղ բարեաց, տացի նմա լսել զառակաւոր իմաստս Հոգւով, եւ ոյր ոչ գուցէ, եւ զլսե՛ն եւս բարձից ի նմանէ, զի մի՛ իմասցի՝ ըստ այնմ.* «Ամենայն ուռ, որ ոչ բերէ պտուղ, կտրէ զնա» (հմմտ. Յովհ. ԺԵ. 2), *եւ՝* «Ամենայն տունկ, զոր ոչ տնկեաց Հայր իմ», այլ չարն, «խլեսցի» (Մատթ. ԺԵ. 13): *Եւ դարձեալ՝ ոյր իցեն գործք արդարութեան, տաց նմա զփոխարէն ի հանդերձեալն եւ յաւելուածս փառաց շնորհեցից, իսկ ոյր ոչ են առաքինութիւնք, եւ զոր ունիցին շնորհք յինէն՝ առիցս ի նմանէ՝ ըստ այնմ.* «Կտրեցէ՛ք զդա ընդ մէջ» (հմմտ. Մատթ. ԻԴ. 51):

Վասն այնորիկ առակաւք խաւսիմ ընդ նոսա, զի տեսանեն եւ ո՛չ տեսանեն, եւ լսեն՝ եւ ո՛չ լսեն եւ ո՛չ առնուն ի միտ (ԺԳ. 13):

Եթէ չտեսանէին, ապա պարտ էր զաչս նոցա բանալ, իսկ եթէ բնութեա՛նն չէր կուրութիւնն, այլ կամացն եւ անձնիշխանութեանն, զայն զի՞նչ հարկ էր առնել: Վասն այնորիկ ո՛չ ասաց լոկ, թէ չտեսանեն, այլ թէ՝ «տեսանեն՝ եւ ոչ տեսանեն», *քանզի տեսանէին զդեւս հանեալ եւ ասէին.* «Բեեղզեբուղաւ հանէ» (հմմտ. Ղուկ. ԺԱ. 15), *եւ լսէին, զի առ Աստուած մերձեցուցանէր եւ բազում միաբանութիւն խաւսէր զիւր ընդ Աստուծոյ, ասէին, թէ՝* «Զէ՛ դա յԱստուծոյ» *(Հմմտ. Յովհ Թ. 16): Կամ թէ տեսաւղ ասեն զինքեանս Աւրինաւքն եւ կոյրք են, եւ լսեն զբանս մարգարէիցն եւ ո՛չ առնուն ի միտ զեկեալն, զոր մարգարէքն գուշակեցին՝ ըստ այնմ.* «Ի դատապտան եկի յաշխարհս, զի որք ոչ տեսանենն՝ տեսցեն, եւ որք տեսանենն՝ կուրասցին» (Յովհ. Թ. 39). *Եւ զի մի՛ ոք կարծիցէ թշնամանք միայն զիրն, ածէ զմարգարէն վկայ:*

Եւ կատարի առ նոսա մարգարէութիւնն Եսայեայ, որ ասէ. «Լսելով լուիջիք եւ մի՛ իմասջիք եւ տեսանելով տեսջիք եւ մի տեսջիք»: Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, եւ ականջաւք իւրեանց ծանունս լուան եւ զաչս իւրեանց կափուցին (ԺԳ. 14-15):

Լի հաւաստութեամբ ամբաստանէ զնոցանէ մարգարէն՝ ասէ, քանզի չասաց, թէ՝ «չտեսանէք», այլ թէ՝ «տեսանէք եւ ո՛չ տեսանէք», այսինքն՝ մարմնո՛վ միայն եւ ոչ հոգւով: Կամ տեսեալ՝ չտեսանիցէք, քանզի անձամբ իսկ զանձանց խցին զականջս եւ կափուցին զաչս, եւ թանձրացուցին զսիրտս իւրեանց, որպէս վահան կամ սալ դարբնի, եւ ոչ միայն չլսել կամէին, այլեւ «ծանունս» լսէին, այսինքն՝ դժուարանային ի լուրն: Եւ զայս է՞ր վասն:

Զի մի՛ երբէք տեսցեն աչաւք, եւ ակընջաւքն լուիցեն, եւ սրտիւքն իմասցին, եւ դարձցին, եւ բժշկեցից զնոսա (ԺԳ. 15):

Այսինքն՝ զի մի՛ դարձցին, եւ թողցի յաճախութիւն չարեաց նոցա, որով յայտ է, թէ կամաւ եւ յաւժարութեամբ սրտի խուսափեցին, քանզի թէ կամեցեալ էին, մարթ էր դառնալ եւ բժկութիւն ընդունել ի ձեռն ապաշխարութեան:

Բայց ձեր երանի՛ է աչացդ, զի տեսանեն, եւ ակընջացդ ձերոց, զի լսեն (ԺԳ. 16):

Ո՛չ զմարմնաւոր տեսանելեացս եւ զլսելեացս ասէ, այլ զհոգւոյն աչացն եւ զսրտին լսելեացն, քանզի երեւելի աչաւք եւ փարիսեցիքն եւ հրէայքն տեսին զՔրիստոս եւ զձայն նորա լուան, բայց ոչ հաւատացին: Ապա ուրեմն երանէ զաչս եւ զականջս, զի այնպէս տեսանէին զՔրիստոս՝ իբրեւ զՈրդի Աստուծոյ, եւ որպէս պատշաճ էր լսել որպէս Որդւոյն Աստուծոյ՝ այնպէս լսէին, վասն զի հրէայք էին սոքա՝ սնեալ ընդ նոսա, բայց ո՛չ վնասեցան ի մարգարէութենէն, զի զարմատս բարեաց յանձին ունէին: Ոմանք զայս վասն յարութեան եւ դատաստանի ասեն խաւսել ընդ նոսա եւ երանել, զի տեսանեն հայրական փառաւք եկեալ յերկնից եւ լսեն զլուրն երանաւէտ: Այլ ինձ ի դէպ առաջինն թուի:

Ամէն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք եւ արդարք ցանկացան տեսանել, զոր տեսանէքդ եւ ոչ տեսին, եւ լսել, զոր լսէքդ եւ ոչ լուան (ԺԳ. 17):

Եւ այս զիա՞րդ իցէ, զի ոչ միայն հրէայք ոչ տեսին, այլեւ արդարք: Գիտելի է, զի երկակի տեսութիւն է ի մեզ եւ լսելութիւն՝ ներքին եւ արտաքին: Արդ, զոր արդարքն ըղձացան տեսանել մարմնով՝ ըստ Դաւթի, թէ՝ «Փափագէ անձն իմ ի գաւիթս քո» (Սաղմ. ՁԳ. 3), *զի* «երեւեցայց երեսացդ Աստուծոյ» (Սաղմ. ԽԱ. 3), *զայն ո՛չ ետես, այլ հոգւով, յայտ է ահա՝ «Ցուցէր ինձ զճանապարհս քո կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց»* (Սաղմ. ԺԵ. 11), *եւ թէ՝* «Աբրահամ ցանկացաւ տեսանել զաւր իմ, եւ տես եւ ուրախ եղեւ» (Յովհ. Ը. 56), *եւ՝* «Տեսաք մեք զնա, եւ ոչ գոյր նորա տեսիլ»,- *ասէ Եսայի* (Ես. ԺԳ. 2) *այսինքն՝ հոգւով: Թէպէտ տեսիլ մարմնոյ նորա տակաւին ոչ էր ի միջի, իսկ հրէայքն մարմնով միայն տեսին եւ ո՛չ հոգւով, բայց սոքա՝ հոգւով եւ մարմնով՝ հոգւոյն տեսութեամբ քան զհրէայսն գերազանցեցին եւ մարմնոյն լսելութեամբ արդարոցն վերագոյն եղեն, յաղագս այնորիկ երանեցան: Եւ դարձեալ՝ ցուցանէ զՀնոյն միաբանութիւն ընդ Նորոյս, թէ ոչ միայն տեսանէին զհանդերձեալսն, զոր Քրիստոս կատարեաց, այլեւ խաւսէին վասն նորա եւ ցանկային՝ ըստ այնմ.* «Եւ տես Եսայի զփառս նորա եւ խաւսեցաւ վասն նորա» (հմմտ. Յովհ. ԺԲ. 41):

Եւ արդ, լուարո՛ւք դուք զառակ սերմանացանին (ԺԳ. 18):

Այսինքն՝ իմացայք զառակաւոր իմաստս, որ այլ իրս ասելով՝ ա՛յլ իմն ծանուցանէ. կամ թէ՝ կամիք ուսանել զառակաւոր բանսն. կամ՝ լսեցէ՛ք դուք արժանաւորքդ, որք տեսանէք եւ լսէք եւ ի միտ առնուք:

Յամենայնէ, որ լսէ զբանն արքայութեան եւ ոչ առնու ի միտ, գայ չարն եւ յափշտակէ զսերմանեալն ի սիրտ նորա. այն է, որ առ ճանապարհաւն սերմանեցաւ (ԺԳ. 19):

Սկսանի մեկնել լուսաւոր վարդապետութեամբ զառակն եւ «բան արքայութեան» *զԱւետարանն ասէ, ո՛ր ոչ մարմնական բարի, այլ հոգեւոր եւ աստուածային: Քարոզէ երկնից թագաւորութեանն ժառանգս լինել աշակերտելոցն հաւատով, բայց* «լսել» *եւ* «ոչ առնուլ ի միտ» *որպէս հրէայքն, որք ոչ բացին զառագաստ*

սրտին եւ ծածկեցին յաւժարութեամբ զսերմն Բանին եւ միշտ յիշատակաւք չզգուշացան, վասն այնորիկ յափշտակեաց սատանայ ոչ բռնութեամբ, այլ հաւանութեամբ անձնիշխան մտացն ի մոռացաւնս էած աստուածեղէն բանիցն՝ կոխան լինելով ախտիցն:

Եւ որ յապառաժին սերմանեցաւ, այն է, որ իրրեւ լսէ զբանն եւ վաղվաղակի խնդութեամբ ընդունի զնա: Բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է. ի լինել նեղութեան եւ հալածանաց վասն բանին, վաղվաղակի գայթագղին (ԺԳ. 20-21):

Ի հրաշիցն պակուցեալ կամ խոստմանցն տենչացեալ՝ եմուտ յուրկանն խնդութեամբ եւ ընկալաւ զբանն, բայց զգործն ոչ հետեւեցոյց արժանաւոր բանին, այլ առ ժամանակ մի շնորհաւք փայլեաց, իսկ յորժամ հալածումն եղեւ, զի ընտիրքն երեւեսցին եւ հալածիչք յանդիմանեսցին, նա պարտասեալ յանդիմանեցաւ: Բայց այսմ ո՛չ եթէ խորչակ փորձութեանն եղեւ պատճառ, այլ վասն զի չունէր արմատս, որպէս ասաց, վասն այնորիկ ցամաքեցան սերմանիքն:

Իսկ որ ի մէջ փշոցն սերմանեցաւ, այն է, որ իրրեւ լսէ զբանն, եւ հոգք աշխարհիս եւ պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն, եւ լինի անպտուղ (ԺԳ. 22):

«Փուշ» *զկեցուցիչ սէր աշխարհիս ասէ՝ ըստ այնմ.* «Փուշ բուսուցէ քեզ երկիր» (հմմտ. Ծնն. Գ. 18): *Արդ, որ ի սէր աշխարհիս հարեալք են եւ Ջանան Տեառն ծառայել, ո՛չ կարեն, քանզի* «ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի» (Մատթ. Զ. 24): *Վասն այնորիկ ասէ, թէ այն է, որ լսէ զբանն եւ կամիցի առնել, սակայն ո՛չ աշխարհս, այլ* «հոգք աշխարհիս», *եւ ոչ մեծութիւնն, այլ* «պատրա՛նք մեծութեանն», *քանզի ամենայն մեծութիւնք պատրանք եւեթ են եւ ո՛չ հաստատուն իրք, զաւրացեալ ի վերա բանին՝ հեղձուցանեն եւ առ սակաւ սակաւ ոսացուցեալ գաւսացուցանեն: Եւ այս ո՛չ ի փշոցն բռնութենէ, այլ ի մտացն ծուլութենէ, զոր թէ արհամարհեսցուք, դիւրաւ զբանն բեղմնաւորեալ աճեցուսցուք: Արդ, երեք մասունքն արտաքս ելին. ճանապարհ եղեալքն մեղաց եւ ի հաւատս եկեալ եւ մեռեալքն առանց գործոց, եւ ընչաւէտ մեծատունքն: Իսկ որք շահեալ աւգտեցան, ասէ եւ զայն.*

Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ, այն է, որ իբրեւ լսէ զբանն եւ ի միտ առնու, եւ տայ զպտուղ, է՝ որ հարիւր, եւ է՝ որ վաթսուն, եւ է՝ որ երեսուն (ԺԳ. 23):

Ասա ուսուցանէ, թէ ո՛չ ի սերմանողէն կամ ի սերմէն, այլ յընդունաւղ երկրէ՛ն զանազան եղեն սերմանքն եւ ո՛չ միայն ասացեալ առաջինքն, այլեւ պարարտ երկիրն գունակ կերպարանս ցուցին՝ հարիւր եւ վաթսուն եւ երեսուն, զի ստուգապէս իմասցիս, թէ ո՛չ բնութեան գործ է այն, այլ մտաց. կամ՝ զի երեք դասք արտաքս ելին, եմուտ մին փոխանակ երիցն՝ երեք աստիճանաւք հաւասարեալ, ո՛չ թուոյն զուգութեամբ, այլ փառացն բազմութեամբ: Եւ դարձեալ՝ յայսմ տեղւոջ զմարդասիրութիւնն եւ զհեզութիւնն իւր յայտ առնէ, քանզի ո՛չ ասաց՝ որ հարիւր չառնիցէ, խոտան է, այլ թէ՝ եւ որ զվաթսուն եւ զերեսուն առնիցէ, ընդունելի է, որով դիւրին կազմեաց փրկութեան ճանապարհ, որպէս թէ կուսութեամբ եւ անընչութեամբ ոչ կարիցես ընթանալ դու, ամուսնութեամբ եւ անընչութեա՛մբ ընթացիր, եւ թէ ո՛չ այնու, ընդ Քրիստոսի բաժանելով զինչսն՝ արժանաւոր լինիջիր երրորդի մասինն: Եւ այս առակ յայսոսիկ աւարտեցաւ:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ
ՎԱՍՆ ՍԵՐՄԱՆՑ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆՑ

Ահա ել սերմանացան՝ սերմանել (Մատթ. ԺԳ. 4)

Ոչ թէ ել ի տեղոջէ ի տեղի, զի անմարմին բնութիւնն Աստուծոյ յամենայնի է եւ զամենայն լնու: Զորս ինչ ցուցանէ «ելն».

Ա. Նախ՝ զծնանելն ի Հաւրէ յառաջ, քան զյաւիտեանս:

Բ. Երկրորդ՝ զի խնամաւք եւ տեսութեամբ եկն առ մեզ:

Գ. Երրորդ՝ զի ել մարմնով ի կուսէն:

Դ. Չորրորդ՝ ել ի քարոզութիւն:

Գիտելի է, զի բազում իրաւք բաղդատի վարդապետն սերմանողի: Եւ ասեմ Ժ. (10) կերպիւ.

Ա. Նախ՝ զի սերմանողն յանդն երթայ: Այսպէս վարդապետն երթայ առ ժողովուրդն:

Բ. Երկրորդ՝ թէ ոչ սերմանէ, ոչ աճէ: Եւ բանքն ի լսողքն աճեն:

Գ. Երրորդ՝ ընտրէ զսերմն եւ զհողն: Այսպէս եւ վարդապետն զճշմարիտ բանն ընտրեսցէ եւ զհաւատարիմ ժողովուրդն, որ կարեն տալ զպտուղ նորա արդիւնաւոր:

Դ. Չորրորդ՝ ընտրէ զժամանակն սերման: Այսպէս եւ վարդապետն զքարոզելոյ ժամանակն ընտրեսցէ՝ զմահու, զյարութեան, զտաւնի եւ զայլն:

Ե. Հինգերորդ՝ ընտրէ զհողն, թէ զո՞ր սերմն տանի: Եւ վարդապետն ընտրէ զդէմն եւ քարոզէ՝ հերձուածող թէ ուղղափառ, իմաստուն թէ տգէտ եւ այլն: Որպէս Քրիստոս տիմարացն պարզ խաւսէր եւ դպրացն եւ փարիսեցւոցն առակաւոր բանիւք:

Զ. Վեցերորդ՝ ըստ չափոյ հերկին սերմանէ: Եւ վարդապետն չափաւոր քարոզէ, զի աւելին ծանրացուցանէ եւ նուազն ծարաւ թողու:

Է. Եւթներորդ՝ որքան սերմանէ, նոյնքան եւ հնձէ: Եւ վարդապետն՝ որքան աշխատի եւ քարոզէ, այնքան վարձս ընդունի:

Ը. Ութերորդ՝ նախ հերկէ եւ ապա սերմանէ: Եւ պարտ է կակղացուցանել զսիրտն եւ ապա զճշմարիտն ուսուցանել:

Թ. Իններորդ՝ յետոյ խնամէ եւ ջրէ: Եւ վարդապետն յետ քարոզութեանն աղաւթս առնէ եւ աւրհնէ:

Ժ. Տասներորդ՝ նախ ինքն վայելէ ի պտղոյն, որպէս առաքեալ ասէ. «Մշակին աշխատելոյ պարտ է նախ ի պտղոյն վայելել» (Բ Տիմոթ. Բ. 6): *Որպէս Տէրն առնէր եւ ուսուցանէր: Այսքան ըստ նմանութեան: Այլ նոյնքան զանազանութիւն է սերման եւ քարոզութեան.*

Ա. Նախ՝ զի այն սերմն եւ սերմանողն, եւ երկիրն իմանալի է, եւ այս՝ զգալի:

Բ. Երկրորդ՝ նա՝ հոգեւոր, եւ սայ՝ մարմնաւոր:

Գ. Երրորդ՝ նա՝ կենդանի, եւ սայ՝ անկենդան:

Դ. Չորրորդ՝ նա՝ բանական, եւ սայ՝ անբան:

Ե. Հինգերորդ՝ նա՝ անմահ եւ անապական, իսկ սայ՝ մահկանացու եւ ապականացու:

Զ. Վեցերորդ՝ նա՝ երկնաւոր սերմն եւ սերմանողն եւ կրողն, եւ սայ՝ երկրաւոր:

Է. Եւթներորդ՝ այն մի է սերմանողն Քրիստոս, եւ մի է սերմն, եւ մի է բանական երկիր, իսկ այս՝ բազում:

Ը. Ութերորդ՝ այն բոլորն ի բազումս, եւ բոլորն ի մասնաւորս, եւ այս՝ ոչ:

Թ. Իններորդ՝ նա յամենայն տեղիս սերմանէ՝ ի քար, ի փուշ, եւ սա՝ ոչ:

Ժ. Տասներորդ՝ նա բան սերմանէ եւ արդիւնք ժողովէ, եւ սայ՝ զոր սերմանէ, զնոյն հնձէ՝ ըստ սերմանց: Այսքան որիշ են:

Հարց. Վասն է՞ր սերմն մի է, եւ արդիւնքն՝ Դ. (4):

Պատասխանի՝ Վասն անհնազանդ հոգոցն: Ոմն զսերմն կորոյս, ոմն բուսաւ եւ չորացաւ, ոմն հեղձաւ եւ ոմն արդիւն արար (տե՛ս Մատթ. ԺԳ. 5-7): *Եւ տես, զի չէ պարտ յանուանէ զոք յանդիմանել.*

Ա. Նախ՝ զի մի՛ դառնասցին:

Բ. Երկրորդ՝ զի մի՛ յուսահատեսցին, այլ որպէս Տէրն հասարակաց խրատեաց զմեծատունս եւ զայլս:

Հարց. Վասն է՞ր ի քար եւ ի փուշ սերմանէ:

Պատասխան. Ա. Նախ՝ ի կողմանէ լսողացն, զի կարեն ի չարէն փոփոխիլ եւ լինել բարի, զի բանաւորք են եւ անձնիշխանք:

Բ. Երկրորդ՝ ի կողմանէ ասողին, զի երեւեսցի բարութիւն նորա, զի առանց ակնառութեան քարոզէ: Եւ դարձեալ՝ անպատասխան լիցին ոչ լսողքն:

Այն, որ անկաւ առ ճանապարհաւն (ԺԳ. 3):

Այս առաջինն է, որ զսերմն կորոյս եւ զրկեաց զՏէրն, որպէս այն, որ զմին քանքարն էառ եւ կորոյս (տե՛ս Մատթ. ԻԵ. 18): *Եւ «ճանապարհն» Գ. (3) յատկութիւն ունի.*

Ա. Նախ՝ զի ոչ ծածկէ զսերմն. նոքա են, որ զսերմն ի լսելիքն եւ ի կամքն ունին եւ ոչ ի մէջ սրտին:

Բ. Երկրորդ՝ զի կոխան է. ցուցանէ զծոյլն, որ կոխան են սատանայի եւ մեղաց:

Գ. Երրորդ՝ ջուր լինի ժողովեալ. ցուցանէ զբղջախոհն, որ ոչ ունի զսերմն բանին: Եւ զի պինդ է եւ ոչ գործի, վասն այն ոչ ծածկէ զսերմն եւ լինի կոխան եւ ջրկոյս: Սոյնպէս եւ ծոյլն ոչ ընդունի զխրատն, լինի կոխան եւ բղջախոհ, վասն այն թռչունն աւդային քաղէ զբանն, ոչ ի սրտէն, այլ յերեսացն եւ ի կամացն:

Երկրորդն՝ «ապառաժն» (ԺԳ. 5).

Գ. է յատկութիւնն.

Ա. Նախ՝ զի բարձր է:

Բ. Երկրորդ՝ խիստ է:

Գ. Երրորդ՝ ցուրտ է: Նշանակէ զհպարտն եւ զբարկացողն, եւ զնախանձաւորն, որ ատէ զամենեցուն բարին: Սոքա ոչ ունին հող եւ հիւթ, եւ արմատ: Հող, որ է խոնարհութիւն եւ հեզութիւն: Հիւթ՝ յոյսն կենդանի: Արմատ՝ հաւատն եւ սէրն՝ հաստատեալ ի խոնարհութիւնն: Եւ «արեգակն» (ԺԳ. 6) *ասա զսատանայ անուանէ եւ տապ՝ զփորձութիւնն, ըստ նմա.* «Խէթիւ նայեցար ընդ իս արեգակն» (Երգ Ա. 5): *Եւ սոքա հպարտութեամբ շուտով բուսանին եւ ի տապոյն չորանան, որպէս նոքա, որք յետս կացին ի Քրիստոսէ: Եւ Յուդայ, որ ծաղկեցաւ նշանաւքն, եւ անպտուղ եղեւ:*

Երրորդ՝ «փուշքն» (ԺԳ. 7).

Նշանակէ զագահն եւ զորկորամոլքն, որպէս երկիր զգաւրութիւնն ի փուշն տա, այսպէս եւ սոքա միշտ հոգան վասն ագահութեան եւ որովայնի:

Եւ փուշ է մեծութիւնն վասն չորից.

Ա. Նախ՝ զի հեղձուցանեն զպտուղ հոգւոյն, որպէս մեծատունն, որ զամենայն պատուիրանն պահեալ էր, յորժամ ասաց Քրիստոս. «Վաճառեա՛ զինչս քո», «գնաց տրտմեալ» (Մատթ. ԺԹ. 21, 22) *եւ անպտուղ յարքայութենէն:*

Բ. Երկրորդ՝ որպէս փուշն ի ժողովելն եւ ի կրելն կսկծէ, այսպէս մեծութիւնն փուշ է հոգւոյն. ի ժողովելն չարչարի, ի պահելն հոգայ, ի ծախելն ցաւի:

Գ. Երրորդ՝ փուշն զոտս եւ զձեռս խոցէ, եւ մեծութիւնն զհոգեւոր գնացս խափանէ եւ զբարի գործս:

Դ. Չորրորդ՝ զի փուշն լուցկի է հրոյն, եւ մեծութիւնն՝ գեհենոյն, որպէս մեծատունն այրէր ի տանջանս (տե՛ս Ղուկ. ԺՁ. 23):

Սոքայ, որ ունին զէ. (7) մահացու մեղքն, ոչ ընդունին զսերմն Բանին, այսինքն՝ «ճանապարհ» (ԺԳ. 4)՝ *ծոյլ եւ բղջախոհն, «ապառաժ»* (ԺԳ. 5)՝ *հպարտն, բարկացողն, նախանձոտն, «փուշ»* (ԺԳ. 7)՝ *ագահն եւ որկրամոլն:*

Չորրորդն՝ «արգաւանդ[1] երկիր» (հմմտ. ԺԳ. 8):

Որ արդարութեամբն պարարտացեալ են եւ քրքրեալ. սոցա ամենեցուն ընդդէմ են, որ ասացաք, սոքա ընդունին զպատուիրանս Աստուծոյ եւ տան զպտուղ գործոյն, որպէս առաքեալքն, որ «թողին

[1] Գ արգաւանք

զամենայն եւ գնացին զհետ Քրիստոսի» (Ղուկ. Ե. 11): *Եւ սոքա յերեք բաժանին. ըստ կամացն յաւժարութեան, որ զանազան է եւ ոչ՝ ըստ բնութեան, որ հասարակ է ամենեցուն: Տե՛ս «զՃ.(հարիւր)աւորն»* (ԺԳ. 8):

Հարց. Զի՞նչ է «Ճ.», «Կ.» եւ «Լ.[1]*»* (ԺԳ. 8):

Պատասխանի. Զանազան բարի գործս եւ զարդիւնս նշանակէ՝ առաւել եւ նուազ եւ միջակ: Եւ զայս ասեմք ԺԶ. (16) կերպիւ.

Ա. Նախ՝ որ քրիստոնեայ ծնաւղաց զաւակ է՝ մկրտեալ, եւ ի մանկութենէ մինչ ի մահ զբարիս գործէ, այն Ճ. (հարիւր)աւորն է: Եւ որ յերիտասարդութեանն է եկեալ ի հաւատս, այն Կ. (վաթսն)աւորն է: Եւ որ ի ծերութեանն է, գայ ի հաւատս, այն Լ. (երեսն)աւորն է:

Հարց. Վասն է՞ր սոցա հասարակ տայ զվարձն, որպէս այն, որ յառաջին ժամն եւ ի Զ. (վեց) ի մետասան ժամն գործեաց յայգին (տե՛ս Մատթ. Ի. 6):

Պատասխանի. Երեք է իմացումն.

Ա. Նախ՝ ասեն զառատ բարութիւնն եւ զողորմութիւնն ցուցանէ Աստուծոյ:

Բ. Երկրորդ՝ արդարութեամբ է, զի թէպէտ ի վերջին ժամանակն մտին, այլ ըստ իւրաքանչիւր կարողութեան եւ ըստ թուոյ կենաց իւրեանց հաւասար գործեցին, յիրաւի հասարակ պատուեսցին:

Գ. Երրորդ՝ ասեն ոմանք, թէ դահեկան զտեսութիւնն Աստուծոյ կոչէ, զոր հասարակ տեսանեն ըստ կարողութեան, այլ զպսակ արդեանցն՝ առաւել եւ նուազ, որպէս «Ասպղ քան զասպղ առաւել է փառաւք» (Ա. Կոր. ԺԳ. 41), *ասէ առաքեալ: Երկրորդ՝ ասէ Եփրեմ. «Ճ. (հարիւր) են մարտիրոսքն կատարեալ, որք վկայեցին արեամբ»: Վաթսուն՝ որք զչարչարանս եւ զհալածանս կրեցին եւ ի վախճան ոչ հասին: Երեսուն՝ որք մնացին ի հաւատս Քրիստոսի առանց հալածանաց եւ խաղաղութեամբ վախճանեցան: Երրորդ՝ կուսանքն՝ հարիւրաւոր, ողջախոհ ամուսանցեալքն՝ վաթսնաւոր: Դարձեալք ի մեղաց՝ երեսնաւոր:*

Դ. Չորրորդն՝ զղջացեալքն՝ երեսնաւոր, խոստովանեալքն՝ վաթսնաւոր, ապաշխարեալքն՝ հարիւրաւոր:

[1] Այսուհետեւ՝ .Ճ.] հարիւր, .Կ.] վաթսուն, .Լ.] երեսուն. համապատասխանաբար՝ .Ճ.աւոր] հարիւրաւոր, .Կ.աւոր] վաթսնաւոր, .Լ.աւոր] երեսնաւոր

Ե. Հինգերորդ՝ որ ըստ մարմնոյ չարչարին՝ երեսնաւոր: Եւ բանիւ սաղմոսեն՝ վաթսնաւոր եւ մտաւք միշտ զվերինն խորհին՝ հարիւրաւոր:

Զ. Վեցերորդ՝ աշխարհականք՝ երեսնաւոր եւ միաբան վանականք՝ վաթսնաւոր եւ ճգնաւորք յանապատս՝ հարիւրաւորք:

Է. Եւթներորդ՝ պաշտաւնեան՝ երեսնաւոր, քահանան՝ վաթսնաւոր, քահանայապետն՝ հարիւրաւոր:

Ը. Ութերորդ՝ ըստ այսմ կարգի՝ բարեպաշտ թագաւորք՝ հարիւրաւոր, իշխանք՝ վաթսնաւոր, իշխեցեալքն՝ երեսնաւոր:

Թ. Իններորդ՝ բաբունիք՝ հարիւրաւոր, քարոզողք՝ վաթսնաւոր, աշակերտք՝ երեսնաւոր:

Ժ. Տասներորդ՝ հաւատն՝ երեսուն, յոյսն՝ վաթսուն, սէրն կատարեալ՝ հարիւր, զի մեծ է, քան զնոսա:

ԺԱ. Մետասաներորդ՝ պահքն՝ երեսնաւոր, աղաւթքն՝ վաթսնաւոր, ողորմութիւնն՝ հարիւրաւոր, որ կատարեալ առնէ զմարդ:

ԺԲ. Երկոտասաներորդ՝ կամաւոր աղքատն՝ հարիւրաւոր, ողորմածն՝ վաթսնաւոր, որ կամի զողորմութիւնն կամ բաժակ ցուրտ ջուրն տալ՝ երեսնաւոր:

ԺԳ. Երեքտասաներորդ՝ որք նախքան զաւրէնս՝ երեսնաւոր, եւ որք յաւրէնս՝ վաթսնաւոր եւ որք ընդ շնորհաւքս՝զհարիւրաւորն:

ԺԴ. Չորեքտասաներորդ՝ երկոտասանքն՝ հարիւրաւոր, եւթանասունքն՝ վաթսնաւոր, հետեւողքն՝ երեսնաւոր:

ԺԵ. Հնգետասաներորդ՝ աստ առցեն սուրբք զերեսնաւոր՝ խնդութիւնն ի միտս եւ յետ մահու՝ զվաթսնաւորն՝ հանգիստն ի հոգիս եւ յարութեանն՝ զհարիւրաւորն՝ յարքայութեանն երկնից:

ԺԶ. Վեցտասաներորդ՝ ասեն ոմանք՝ զերկիրս սրբեալ՝ երեսնաւոր եւ զդրախտն՝ վաթսնաւոր եւ զարքայութիւնն՝ հարիւրաւոր: Եւ զայս տեղեաւ իմանալ ոչ է հասարակ կարծիս, զի մի է արքայութիւնն երկնից: Իսկ թէ ըստ փառաց զանազանութեան ընդունելի է, որպէս «Ասպղ քան զասպղ առաւել է փառաւք» (Ա. Կոր. ԺԳ. 41), *ասէ առաքեալ:*

Այսքան առ այս:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԵՐՄԱՆԱՑԱՆ[Ի]

Յամենայն է, որ լսէ զբանն արքայութեան (Մատթ. ԺԳ. 19)

Այսինքն է, թէ յԱւրինաց եւ թէ յԱւետարանէն եւ այլն: Տե՛ս, զի մեր կամաւք յափշտակէ սատանայ, զի թէ ծածկեմք յաւժարութեամբ ի մեզ եւ հանապազ յիշատակեմք զպատուիրանսն, ոչ կարէ քաղել: Այս առաջինն:

Տե՛ս եւ զերկրորդն, զի ոչ ասաց ի փորձութեանցն ցամաքել, այլ զի ոչ ունի արմատ եւ հիւթ, որպէս ասացաւն:

Տե՛ս եւ զերրորդն, զի թէ զփուշ մեծութեանն քաղեմք, այսինքն՝ տրաւք տնանկաց, ոչ հեղձնումք: Եւ ոչ թէ մեծութիւն է չար, այլ հոգք մեծութեանն, զի ամենայն խաբող եւ պատրանք է մեծութիւնն եւ ոչ մնացական իր:

Իսկ **«հարիւր»** *եւ* **«վաթսուն»** *եւ* **«երեսուն»** (ԺԳ. 8).

Ա. Նախ՝ ցուցանէ, թէ զան[ա]զանութիւն պտղոցն ոչ ի մշակէն է եւ ոչ ի սերմանցն, այլ յանձնիշխան կամացն, զի որ ոք կամի, առաւել կամ նուազ պտղաբերէ:

Բ. Դարձեալ զմարդասիրութիւն փրկչին ցուցանէ, զի բազում ճանապարհ եցոյց, զի թէ ընդ մինն ոչ կարասցեն գնալ, չլինիցին անպիտանք, ընդ միւսն գնասցեն, որպէս ասացաւ իվերոյ:

Դարձեալ գիտելի է, զի հարիւրն կատարեալ թիւ է, զի տասամբ չափի, եւ վաթսուն կատարեալ է, զի Զ. (6) Ժ. (10)ն է, եւ երեսուն կատարեալ է, զի Գ. (3) Ժ. (10)ն է:

Արդ, երեք դասք են յեկեղեցիս, այսինքն՝ կուսանք, այրիք եւ ամուսնացեալք: Ամուսնացեալքն են երեսնաւոր, զի նոցա բաւական է հաւատ Սուրբ Երրորդութեանն եւ Ժ.(10)բանեան աւրէնք: Եւ այրիքն՝ վաթսնաւոր, զի ընդ Ժ.(10)բանեան աւրինացն պարտ է եւ նոցա Զ. (6) ողորմութիւնն, զոր հրամայեաց Քրիստոս. «Քաղցեա, եւ եղուք ինձ ուտել» (Մատթ. ԻԵ. 35) *եւ այ[լ]ն: Իսկ կուսանքն պարտին զԺ.(10)բանն այլ եւ զամենայն մասնաւոր խրատս եւ զկանոնս լիով կատարել:*

Դարձեալ գիտելի է, զի երից ոմանց միայն է հարիւրաւորն անփոփոխ, այսինքն՝ մարտիրոսաց, վարդապետաց եւ կուսանաց: Նախ՝ զի մարտիրոսքն կատարեալ յաղթեցին զաշխարհս, եւ կուսանք՝ զաղտեղի ցանկութիւն աշխարհիս, եւ վարդապետք՝ զսատանայ եւ զհակառակողքն, ոչ միայն յինքեանց, այլեւ յայլոց հալածեցին:

Եւ դարձեալ՝ վարդապետք՝ իմացմամբն յափշտակեալ է եւ խորհի զվերինս, եւ մարտիրոսք՝ արիութեամբ սրտիւ եւ կուսանք՝ ցանկութեամբն առ Աստուած դիմեցին: Վասն որոյ եւ միայն սոքա ոսկեղէն պսակացն արժանի եղեն:

Դարձեալ զէմք առակիս հայի եւ յանմարմին զաւրս երկնից, ըստ որում՝ սերմանահան բանն զամենայն երկնաւորացն եցոյց զխնամս տեսչութեան իւրոյ: Այլ ոմանք կամաւ իւրեանց ճանապարհ եղեն չարեաց, որպէս սատանայ, եւ խստացաւ ի չարն եւ սնուցիչ եղեւ աւտար բուսոց: Իսկ այլ դասքն ետուն տոհմականս զպտուղս իւրեանց: Առաջին դասքն՝ հարիւրաւոր, զի անմիջոց տեսանեն զԱստուած եւ ուսանին, եւ միջինքն՝ վաթսնաւոր, զի յառաջնոցն ուսանին եւ զվերջինս ուսուցանեն: Եւ վերջինքն՝ երեսնաւոր, զի միայն ուսանին միշտ: Այսքան յառաջին առակն:

Ղուկ. Ը. 5-18

ԻԳՆԱՏԻՈՍ

Եւ ի շրջելն նորա եւ յուսուցանելն՝ ժողովեցան առ նա բազմութիւն մարդկան, առ եզր ծովուն Գալիլիացւոց, եւ սկսանի խաւսել ընդ նոսա առակաւք: Վասն զի եւ այս գրեալ էր վասն նորա. «Բացից առակաւ զբերան իմ, խաւսեցայց զիմաստութիւն զծածկեալն ի սկզբանէ» (հմմտ. Սաղմ ՀԷ. 2):

Վասն որոյ կարգէ զանձն իւր սերմանաւղ բանին:

Եւ զոգիս բանաւոր եւ մտաւոր՝ երկիր, յոր սերմն անկանիցի: Եւ են ոմանք ի սոցանէ առապարք, որ ի բազմապատիկ մեղացն հոսմանէ ողողեալ՝ գերփեցաւ թանձրութիւն իմաստից հողոյն, եւ այնպէս մնացին ապառաժուտ: Որք թէպէտ եւ ընկալան զսերմանս բանին, սակայն զպտուղ առաքինութեան հատուցանել սերմանողին ոչ զաւրեցին: Վասն զի ոչ ունին, որով համբերեն տապոյ սատանայական փորձութեանցն, յորմէ տարաժամ խորշակահար կորնչին: Եւ ոմանք ճանապարհ զանձինս արարին՝ գնալ ի ոտից եւ սմբակաց ախտից եւ կռեալ, պնդեալ կարծրացան՝ ախտացեալ ամբարշտութեամբ եւ ծածկեալ զսերմն բանին ոչ ունին: Եւ ի վերայ սոցա[1] *վաղվաղակի հասանէ թուչուն փորձութեանն, եւ քա-*

[1] ԻՏ սոցա վերա

զեալ ի բաց առնու զսերմանս բանին, եւ այսպէս անչնորհ սերմանողին ցուցանին: Են եւ ոմանք յոլովութենէ աշխարհական փչոցն ցանկութեանց տեղի, որք ընկալան զբանն: Եւ զի ոչ էր հնար՝ նեղ եւ ընդարձակ ճանապարհաւ միում գնալ եւ զփուչս մեղաց, եւ զսերմանս առաքինութեան ի միում ոգւոյ սնուցանել, նորին աղագաւ եւ սոքա հեղձուցին եւ ի պտղոյ առաքինութեան պակասեալ գտան: Ցուցան եւ բարիք ոմանք, որք պահեցին զանձինս ի լինելոյ ճանապարհ կամ ապառաժուտ: Նաեւ ոչ փչոց եղեն ընդունակ, այլ իբրեւ զբարի երկիր ընկալան զսերմն բանին ի բարի մշակողէն ոգւոց եւ աճեցուցին զբարեաց արդիւնս տուողին սերմանն, սակայն ոչ միով չափով ամենեքեան ցուցան, այլ զանազանեալ են: Եւ որքան աճեցուցանեն զպտուղ բարեաց, ըստ նմին սահմանեալ է նոցա յԱստուծոյ եւ պարգեւացն չափ:

Ուսուցանէ աշակերտացն միայն զառակին իմաստ եւ յայտնէ նոցա, թէ այսու գիտութեամբ ջահ վառեաց զնոսա յառաւտ լուսոյ անտի, զոր ինքն բնութեամբ ունէր: Եւ ոչ է աւրէն նոցա թաքուն լինել, այլ ունին նոքա ի ժամանակէ անտի իբրեւ զլոյս սաստիկ սփռել ընդ բնաւս, որ յայնժամ ի Պաղեստին ծածկեալ կային:

Առ այս երկեցուցանէ, որք զլանան զպտուղն՝ ասելով, որ ունիցի զգործս բարիս, եւս յաւելցին ի նմա սերմանք բանին: Իսկ որ ոչ կամեցաւ տալ զպտուղ բարեաց, լսելն եւս բարձցի ի նմանէ՝ ըստ այնմ. «Ամենայն ուր, որ բերէ պտուղ, սրբէ զնա, եւ որ ոչ բերէ պտուղ, կտրէ զնա» (հմմտ. Յովհ. ԺԵ. 2)*:*

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Եւ ժողովեալ բազումք ի քաղաքաց քաղաքաց եկելոց առ նա (Ղուկ. Ը. 4)՝ *առ եզր ծովուն Գալիլեացւոց:*

ՈՍԿ *Որսայր եւ արկանէր ընդ ուռկանաւ զայնոսիկ, որ առ ծովուն դեգերէին: Եւ առհասարակ զամենեսին ի մի վայր գումարէր, զի մի՛ զոք ի թիկանց թողուցու: Այլ զամենեսին ի դիմաց կացուցանէ, զի զալէկոծութիւն կենցաղոյս ցամաքեցուցանիցէ:*

Խաւսէր ընդ նոսա առակաւ (Ը. 4):

Ի լերինն: Թէպէտ եւ այնչափ վարդապետեաց, ո՛չ առակ յաւղեաց, զի տխմարք էին եւ ո՛չ էին կարող յայտնապէս լսել զԲանն Քրիստոսի, իսկ աստ դպիրքն եւ փարիսացիքն ընդ նոսա էին: Բանայ առակաւ զբերանն, խաւսի զիմաստութիւն՝ ի սկզբանէ զծածկեալն:

Եւ սերմանահան (Ը. 5):

ՈՍԿ *Ուստի՞ եւ, որ «զերկինս եւ զերկիր լնու» (հմմտ. Երեմ. ԻԳ. 24)՝ ըստ մարգարէին, եւ ո՛չ ի տեղոջէ ի տեղիս փոփոխի: Վասն տեսութեան եկեալ առ մեզ մարմնապատ լինելով, քանզի մեք ո՛չ կարէաք մտանել առ նա վասն մեղաց պարսպին: Ինքն իւրով գթովն եկն առ մեզ:*

ԻԳ *Զինքն անուանէ սերմանող Բանին եւ զհոգիս մարդկան մտաւոր երկիր, յոր սերմ[ն] անկանիցի:*

Եւ ի սերմանելն՝ ոմն անկաւ առ ճանապարհաւն եւ եղեւ կոխան (Ը. 5):

ԵՓ *Ոգիք զրկողացն որպէս այն, որ զմին քանքարն էառ եւ անարգեաց զբարերար տուիչն: Զի ո՛չ կակղացաւ ընդունել զսերմն Բանի նորա եւ եղեւ կոխան ամենայն չարեաց: Վասն այսորիկ ո՛չ եղեւ երկիր նորա տեղի վարդապետին, որ մշակէր արաւրով Բանին՝ պատառել զխստութիւն նորա եւ սերմանել ի նմա զուսումն աստուածային:*

Եւ թռչունք երկնից կերան զնա (Ը. 5):

ԵՓ *Զչարն անուանեաց թռչուն, զի ո՛չ բռնութեամբ յափշտակեաց զվարդապետութիւն ի լսելեաց նորա: Զի եցոյց զաւրինակն զի աւետարանին ձայնն ի դուրս լսելեացն մերձ էր, որպէս հատ ցորենոյն ի վերայ երկրի: Նա ո՛չ կամեցաւ ծածկել յարգանդ սրտի իւրոյ զսերմանիսն, որ անկաւ ի նմա, եւ ետ թռչնոց մուտ՝ անփոփել ի ներքոյ թեւոց իւրոց:*

Եւ այլն անկաւ ի վերայ ապառաժի (Ը. 6):

Բարերարն զգթութիւն իւր եցոյց ողորմութեան: Զի թէպէտ եւ ո՛չ էր գործել զխստութիւն երկրի նորա, սակայն ո՛չ խնայեաց ի նմա զսերմն իւր: Այնոքիկ են, որ դառնան յաշակերտութենէ նորա, եւ իբրեւ զայնոսիկ, որ ասացին. «Խի՛ստ է բանդ, ո՞ կարէ լսել

դմա» (Յովհ. Զ. 61): *Նման Յուդայի, զի լուաւ նմա եւ եղեւ ապառաժուտ, եւ ի ժամանակի փորձութեանն եղեւ անպտուղ:*

ՈՍԿ *Բայց բանաւոր երկրի[ն] հնար է քարին երկիր պարարտ լինել:*

Եւ այլն անկաւ ի մէջ փշոցն (Ը. 7):

ԵՓ *Զգաւրութիւն իւր փշոցն եւ տատասկացն ետ: Եւ փուշն թագաւորեաց առատապէս, զի եղիցի նա անպատասխանի: Եկն մեծատունն առ Տէրն մեր՝ ցուցանելով զվարսն ի մանկութենէ: Եւ Տէր սրբեաց զփուշն ի սերմանեացն՝ ասելով.* «Եթէ կամիս կատարեալ լինել, գո՛ւր զինչս քո աղքատաց» (Մարկ. Ժ. 21): *Եւ նա, իբրեւ ետես զսերմն ի փշոցն հեղձուցչացն ազատեալ, տրտմեցաւ վասն մեծութեանն մերկանալոյ, որ փուշ ապականիչ աստուածային սերմանն էր, եւ փշաբեր երկրին պարտ էր լինել սերման տեղոյն:*

Եւ այլն անկաւ յերկիր բարի եւ պարարտ (Ը. 8):

ՍՏ Հոգիք արդարագործաց նման կոչեցելոցն, որ թողին զամենայն ինչս իւրեանց եւ գնացին զհետ Քրիստոսի:

Իսկ երեսնաւորն (հմմտ. Մատթ. ԺԳ. 23):

ՈՍԿ *Նշանակէ զ[ը]նթացս ի մանկութենէ յերիտասարդութիւն եւ յերիտասարդութենէ ի ծերութիւն: Արդ՝ սերմանահանն մի էր եւ երկիրն մի, եւ արմտիքն ի չորս բարժանեցան: Սակայն բարերարն եցոյց զքաղցրութիւն իւր, զի յետինքն ընդ առաջինսն զվարձս հաւասար առին* (տե՛ս Մատթ. Ի. 16): *Այլ սոքա այնոքիկ են, որ ընտրեցան յաշակերտութիւն Քրիստոսի, եւ ժամանակ հալածանաց ո՛չ յարեաւ ի վերայ, եւ բարիոք վաստակաւք իւրեանց պսակեցան եւ իբրեւ զերկիր պտղաւք զարդարեցան:*

Իսկ վաթսնաւորքն (հմմտ. Մատթ. ԺԳ. 23):

Այնոքիկ են, որ կոչեցան ի չարչարանք վասն Աստուծոյ մարտիրոսութեամբ: Եւ ո՛չ ժամանեցին փոխանակ Տեառն մեռանել, այլ կացին մնացին բարիոք մինչեւ ի վախճանն:

Իսկ հարիւրաւորն (հմմտ. Ը. 8, Մատթ. ԺԳ. 23):

ՍՏ *Թուի ինձ, թէ կատարումն է ամենայն ընտրութեան եւ կնիք, վկայ լինել վասն Քրիստոսի եւ մեռանել:*

Հարցին ցնա աշակերտքն եւ ասեն. Ընդէ՞ր խասիս ընդ նոսա առակաւք (հմմտ. Ը. 9):

ՈՍԿ. *Արժան է զարմանալ ընդ աշակերտսն, եթէ զիա՞րդ ցանկային ուսանել եւ ի դէպ ժամանակի հարցանել: Եւ ո՛չ առաջի ամենեցուն զայն առնէին: Եւ զայս Մարկոս յայտ առնէ, թէ մատեան առանձինն* (հմմտ. Մարկ. Զ. 32): *Այսպէս պարտ էր մաւրն եւ եղբարցն առնել:*

Ասէ. Ձեզ տուել է գիտել զխորհուրդս արքայութեանն երկնից, եւ նոցա չէ տու[եալ] (Ը. 10):

Զայս ասելով՝ ո՛չ եթէ հարկ ինչ կամ վիճակ մուծանէ, այլ զնոսա առնէ պատճառս բարեացն եւ չարեաց[ն]: Եւ ցուցանէ, թէ շնորհք են ի վերուստ տուեալ, բաց ո՛չ զանձնիշխանութիւն խափանէ: Եւ այս ի յաջորդացն յայտ է:

Զի տեսցեն եւ ոչ տեսցեն (Ը. 10):

Ո՛չ եթէ բնութեամբ էր կուրութիւն նոցա, այլ կամաւ ո՛չ տեսանէին: Եւ զի յայտ է, զի յանձնիշխան կամս էր կուրութիւն նոցա, քանզի տեսանէին զդեւս հանեալ եւ ասէին, թէ՝ «Բէեղզեբեղաւ հանէ դա» (Ղուկ. ԺԱ. 15, 18):

Լսելով լուիցեն եւ մի՛ իմասցին (Ը. 10):

Լսէին, զի Աստուած մերձեցուցանէր զնոսա եւ բազում միաբանութիւն ցուցանէր զիւրն ընդ Հաւր: Եւ նոքա ասէին. «Ո՛չ է դա յԱստուծոյ» (Յովհ. Թ. 16): *Տեսանե՞ս, զի զմարգարէն կոչէ յամբաստանութիւն նոցա, զի անձնիշխանութեամբ զաչս եւ զականջս կափուցին:*

Ո՛չ որ լուցանէ ճրագ եւ թաքուցանէ ընդ կարասեաւ (Ը. 16):

ՍՏ *Ո՛չ յաղագս երեւելի ճրագին ասէ զայն, այլ վասն իմանալոյն եւ ուղիղ վարդապետութեանն, որ ոչն ծածկի անաւթիւք իւիք կամ ի ներքոյ մարմնոյ «կամ ընդ մահճաւք»* (Ը. 16): *Այսոքիկ են մարմինք մարդկան՝ լսողք Բանին վարդապետութեան ճշմարիտ լուսոյն Քրիստոսի:*

Այլ ի վերայ աշտանակի տան (Ը. 16):

Որպէս անաւթ տան եւ աշտանակ, նոյնպէս եւ հոգւոյն զաւրութիւնն եւ մարմնոյն:

Իգ. *Կամ որպէս ջահ վառեալ զառաքեալսն յիւր լուսոյն:*

Զի որպէս չիք ինչ ի ծածուկ, որ ո՛չ յայտնեսցի (Ը. 17):

Եւ ո՛չ է աւրէն նոցա թաքուն լինել: Այլ որպէս զլոյս սփռեալ ընդ բնաւ աշխարհս, որ յայնժամ ընդ Պաղեստին ծածկեալ էին:

Զի ոյր գուցէ, տացի նմա եւ յաւելցի (Ը. 18):

Սպ. *Որպէս զի ասիցէ, թէ՝ «Որ ունի զճրագն եւ լինէ լուսով ի վերայ աշտանակի, տացի նմա գաղտնին եւ յայտնին»* (հմմտ. Ղուկ. ԺԱ. 33): *Բայց որ ունիցի զսերմն բարի՝ զհոգին բարին, որ սերմանեցաւ ի նմա: Եւ ամենայն տունկ, զոր տնկեաց Հայր Տեառն մերոյ՝ աստուածային վարդապետութիւնն, զի ամենայն, որ զհաճոյսն Աստուծոյ առնէ, յայնպիսի տունկ յաւելցի:*

Եւ ոյր ոչն գուցէ, զոր ունիցի, բարձցի ի նմանէ (Ը. 18):

Քանզի ո՛չ իբրեւ յԱստուծոյ ինչ բառնալով, այլ նա զանձն ո՛չ արար արժանի:

«Ամենայն տունկ, զոր ո՛չ տնկեաց Հայր իմ երկնաւոր, խլէ» (Մատթ. ԺԵ. 13):

ԻԳ *Այլ ընդ[ղ]իմակաց Հոգին բարձցի ի նմանէն:*

Իսկ որ ոչ կամեցաւ լսել եւ տալ զպտուղ բարեաց, ըստ գրեցելոյն՝ «Ամենայն ուռ, որ ո՛չ բերէ պտուղ բարի, կտրէ զնա» (Յովհ. ԺԵ. 2):

ՎԱՄՆ ՈՐՈՄԱՆՑ ԱՌԱԿԻՆ

Մատթ. ԺԳ. 24-30

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Այլ առակ եդ առաջի նոցայ՝ ասելով. «Նման է արքայութիւնն երկնից մարդոյ, որ սերմանեաց սերմն բարի յանդաստանի իւրում, իսկ ի ննջել մարդկան՝ եկն թշնամի նորա եւ սերմանել որոմն ի մէջ ցորենոյն եւ գնաց (հմմտ. Մատթ. ԺԳ. 24-25):

«Սերմանողն»՝ *Աստուած ամենայն բարւոյ եւ արդարութեան մարդկան, «անդաստան»՝ աշխարհս եւ ննջեալ մարդիկ, որք ծուլանան եւ անփոյթ առնեն զհրամանէն Աստուծոյ.* «թշնամի» *է Աստուծոյ բանսարկուն,* «ցորեան»՝ *արդարութեան պտուղ,* «որոմն»՝ *անիրաւութիւնն, իսկ* «թողուլն» *եւ «ոչ փետելն զորոմանն մինչեւ զհունձսն»՝ երկուս թուի ինչ նշանակել ինձ, կա՛մ ի ժողովել զորոմանն հնձողացն հրեշտակաց, եւ այլոց զաւրութեանց խլիլ եւ ցորենոյն՝ յաղագս անգիտութեան եւ զի անգիտանան յայտնի մարգարէէն Եզեկիէլ.* «Յորս, - ասէ, - նշան իցէ նոսայ, մի՛ մերձենայցէք» (հմմտ. Եզեկ. Թ. 6). *եւ յԵլիցն, ի տալ հրաման զսեամս երրա[յ]եցիոցն նշանակել արեամբն, զի մի՛ մտցէ անդ սատակիչն* (տե՛ս Ելք ԺԲ. 12, 23). *արդ կա՛մ վասն այդորիկ ասացաւ՝ թողի կացցէ մինչեւ ի հունձս կամ ցվախճան որոմանն. եթէ ոչ փոփոխեցի եւ լինիցի ցորեան, ապա ի վախճանի աշխարհիս այսորիկ այրեսցի անշէջ հրովն որոմնն, եւ ցորեանն ժողովեսցի յիշատեմարանս իւր:*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Այլ միւս եւս առակ երկրագործին. զբարի ոք սերմն սերմանել յագարակին, յորում եւ ի քուն լինելն նորա չար որոմանցն սերմանողն զիւրն ցանէ (հմմտ. Մատթ. ԺԳ. 24-25):

Աստ զհերձուածողացն զժողովսն յառաջագոյն ասէ, եւ աստ իսկ սատանայի խարդախութեանն գործէ. միշտ ընդդէմ ճշմարտութեանն զմոլորութիւնն ճակատել: Բազում կերպարանս նմին նման գունաւորեալ՝ առ ի դիւրաւ գողանալ զայնոսիկ, որք վաղ-

վաղակի պարտիցին: Վասն այնորիկ ոչ այլ ինչ սերմն սերմանեաց, այլ զորոմն, եւ որ նման իսկ էր ցորենոյն: Ապայ ասէ զկերպարանս վնասակարութեանն, թէ յորժամ ի քուն եղեն մարդիքն, որ ոչ սակաւ ինչ վտանգ տագնապի, կախէ զպարանոցէ իշխանաց, որոց հաւատացեալ իցեն պահպանութիւնք անդաստանաց. ոչ միայն իշխանաց, այլեւ նոցա, որի իշխանութեամբ իցեն: Յայտ առնէ եւ զմոլորութիւնն ընթերակաց ճշմարտութեանն, որպէս զի ելք իսկ իրացն վկայեն, զի եւ առ մարգարէիքն սուտ մարգարէք էին, եւ առաքելաւքն՝ սուտ առաքեալք, եւ յետ Քրիստոսի դերաքրիստոսն[1], այսինքն՝ նեռն, հակառակ Քրիստոսի, զի թէ ոչ տեսանիցէ, ո՞ւմ լինիցի նմանող սատանայ եւ կամ ումէք վնասակար, եւ զի ոչ գիտէ, ոչ ժտի: Բայց այժմ, քանզի գիտաց, թէ ոմն զՃ.(100)աւոր տոհմականս արար եւ ոմն զԿ.(60)աւոր եւ ոմն՝ զԼ.(30)նաւորն, ապայ ընդ այլ ճանապարհ գայ գաղտագողի: Վասն որոյ եւ հանապազորդ իսկ զգուշութեան պետք են, քանզի այսպիսի [ի]նչ եղեւ զառաջինն, զի բազումք յառաջնորդաց զմարտս անաւրէնս յայլ աղանդաց մուծին յեկեղեցի գաղտագողի եւ բազում պատճառս ետուն վնասակարութեան չարի: Վասն այնորիկ յետ գործելոյ գյանդսն եւ ոչ իւիք պակաս գտանելոյ, «ապայ ցանէ ի վերայ սերմանն զորոմն» (հմմտ. ԺԳ. 25), զոր աւրինակ եւ հերձուածողքն՝ ոչ վասն այլ իրիք, այլ վասն սնապարծութեան արկանեն զիւրեանց թիւնսն, զոր եւ յաջորդաւքն իսկ յայտ առնէ:

Յորժամ արձակեաց զբոյսն եւ արար պտուղ, ապայ երեւեցաւ եւ որոմն (հմմտ. ԺԳ. 26):

Որպէս եւ հերձուածողքն, որ զառաջինն թագուցանեն զյանձինս, եւ յորժամ համարձակիցին եւ մեծարանաց արժանի լինիցին, յայնժամ հեղուն զթիւնսն: Եւ զի՞ բերիցէ զճառս ծառայիցն ի մէջ, որ չարացան ընդ բոյս որոմանցն, եւ զի՞ ասիցէ, թէ՝ չէ պարտ զնոսա ի միջոյ բառնալ (հմմտ. ԺԳ. 29):

«**Թշնամի**» *զնա կոչէ* (ԺԳ. 28) *ասէ վասն մարդկան վնաս առնելոյ, զի զմեղանչականութիւնն ի մեզ ցուցանէ, եւ սկիզբն մեղանչականութեանն ոչ յայնմանէ է, զի մեզն մեղանչէ, այլ զի ընդ Աստուծոյ կամացն իշխեաց կացուցանել թշնամութիւն:*

[1] Բ անդիքրիստոս] դերաքրիստոս

Մատուցեալ ծառայքն ասեն՝ «Տէ՛ր, կամիս, զի երթիցուք, խլեսցուք զայն ի բաց (հմմտ. ԺԳ. 29):

Ասէ զծառայիցն զփոյթ եւ զխնամակալութիւնն ցուցանէ, որ կարի իսկ դարման տանելոյ նորա սերմանն էր:

«**Միգուցէ,- ասէ,- զցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք**» (հմմտ. ԺԳ. 29):

Զայս ասէ, զի զպատերազմունս եւ զարիւնս եւ զսպանութիւնս կարճեսցէ: Երկուք մտաւք արգելոյր զնոսա. մի՝ զի ցորենոյն ինչ ոչ մեղանչիցեն, երկրորդ՝ զի կրելոց են զանհնարին զպատիժս, որ առանց բժկութեան ցաւս աղխտանայցեն: Եւ զի՞նչ յայտ առնիցէ այն, թէ՝ «գուցէ զցորեանն ի բաց խլիցէք», զի թէ զէն կամիցէք կոտորել զհերետիկոսս, հարկ լինիցի եւ ի սրբոցն զբազումս ընդ նոսա կոտորել, կամ թէ անգստին որոմանցն բազումք են դառնալոց լինել ցորեան: Եթէ յառաջագոյն զնոսա ասէ՝ «խլիցէք», ապականիցէք զայնոսիկ, որ ցորեան լինելոց են, զի մարթի դառնալ եւ լինել[1] պիտանացու, թէ կամիցին, ապա թէ նոյնն մնայցեն, մինչ ցվախճան որոմն, ապայ ասացից ցհնձողսն[2].

«**Կապեցէ՛ք զորոմնդ ի[3] խրձունս առ ի յայրել**» (ԺԳ. 30):

Դարձեալ յիշեցուցանէ նոցա զՅով[հ]աննու զբանսն, որք դատաւոր կացուցանեն զնայ, մինչ մաւտ ի ցորեանն կայցէ որոմն, խնայել պարտ է ի նոսա, զի մարթի ցորեան դառնալ: Եւ յորժամ ոչինչ շահեալ գնայցէ սնոտի, յայն ժամ ի հարկէ իսկ անհրաժեշտ պատիժքն ընդունիցին զնա, զի մի կարծիցեն, թէ եւ ցորեանն, ընդ նմին[4] կապիցի խրձունս ի նիւթ հրոյ: Ասէ.

«**Զցորեանն ժողովեցէք ի[5] շտեմարանս իմ**» (ԺԳ. 30):

[1] Ա ի լինել
[2] Ա զհնձողսն
[3] Ա > զորոմնդ ի
[4] Ա > ընդ նմին
[5] Ա յի] ի

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ: Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում (Մատթ. ԺԳ. 24):

Նախ՝ երեւելիքս ծանաւթ քարոզք են աներեւութիցն՝ ըստ առաքելոյ (տե՛ս Հռոմ. Ա. 20), *վասն այսորիկ ընդել եւ զգալի աւրինակաւք զիմանալիսն տպաւորէ՝ նման եւ յարմար բաղդատութեամբ:*

Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն: «**Այր**» *յաղագս ներգործական զաւրութեանն զԱստուած անուանէ՝ զսերմանաւղն ամենայն բարեաց յանդաստան աշխարհի բանական բնութեանս, որ իւր է ագարակ՝ ստեղծուածք եւ գործք ձեռաց, որով ծանուցանէ, թէ Աստուած բարի է բնութեամբ եւ բարեաց պարգեւաւղ, չարի եւ ո՛չ իմիք՝ ըստ այնմ, թէ՝* «Բարի է Իսրայէլի Աստուած» (Սաղմ. ՀԲ. 1), *եւ թէ՝* «Արար զամենայն, եւ ահա բարի են» (հմմտ. Ծնն. Ա. 31): *Բայց ո՛չ զամենայն բարեացն մասունս ետ գործով, այլ զսե՛րմն միայն զաւրութեամբ ի մեզ տնկելով, որպէս զի պատուիրանացն, որ ետ մեզ յետոյ, նորին զաւրութեամբ գործոց յառաջագոյն առաք, զի կատարեսցուք եւ մի պակաս ցուցցուք առաւղք զբարիս, քան զտուողին սերմանիս: Եւ երկրորդ՝ զհերձուածողացն ժողովս յառաջագոյն ազդէ եւ* «**այր**» *զինքն անուանէ՝ կատարեալ աստուածութեամբ եւ մարդկութեամբ մարդն Յիսուս Քրիստոս արքայն երկնից եկեղեցւոյ, որ սերմանեաց զսերմն ուղղափառ հաւատոյ յագարակ եկեղեցւոյ, զոր ստացաւ անբիծ եւ անարատ արեամբն իւրով՝ ըստ այնմ.* «Դու ես վէմ» *հանդերձ դաւանութեամբդ,* «եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ» (Մատթ. ԺՁ. 18):

Եւ ի քուն լինել մարդկան՝ եկն թշնամի նորա եւ ցանեաց ի վերայ որոմն ի մէջ ցորենոյն եւ գնաց (ԺԳ. 25):

Ի ննջել մարդկային բնութեանս ծուլութեամբ՝ եկն բանսարկուն, որ թշնամի Աստուծոյ է եւ ասի, եւ խառնեաց զմեղս ի մէջ բարեացն՝ գունելով եւ բարւոյն կերպարանաւք զչարն, որով պատրեաց, եւ գնաց ծածկեաց զանձն, որպէս թէ չէ բնաւին ինքն պատճառ մեղացն: Եւ այս ե՞րբ. ոչ յառաջագոյն, այլ յորժամ ետես, թէ պտուղս բեղմնաւորս ցուցին, ոմն՝ հարիւր եւ ոմն՝ վաթսուն եւ ոմն՝ երեսուն, քանզի ո՛չ անդ ժտի, որ ոչ են բարեաւք փարթամացեալ, բայց ասիցէ ոք, թէ որք ննջեցին, զի՞նչ ընդհատ է յառաջնոցն, որք յապառաժին կամ ի ճանապարհին սերմանեցան: Ասասցուք բազում իրաւք, զի նոքա անդէն ի սկզբանն յափշտակեցան՝ չեւ եւս արմատս հաստատեալ, բայց ըստ բազում մեքենայիւք ջանացաւ խանգարել, որով խրատիմք, թէ միշտ զգուշութեան պէտք են արթուն լինել, զի մի՛ յորոմանցն ապականիցիմք:

Եւ դարձեալ՝ տագնապ կախէ այսու զպարանոցէ իշխանացն, որոց հաւատացեալ իցեն զպահպանութիւն անդաստանաց, նաեւ հնազանդելոցն՝ ըստ այնմ. «Արածեա զոչխարսդ իմ» (Յովհ. ԻԱ. 16), *եւ թէ՝* «Արածեցէք որ ի ձեզ զհաւտսդ» (Ա. Պետր. Ե. 2), *եւ թէ՝* «Նոքա տքնին վասն ոգւոց ձերոց» (Եբր. ԺԳ. 17), *որք դատարկացեալ ի գործոց եւ [յ]անփոյթ առնելոյ զհաւատից, որպէս հովիւք հնոյ ժողովարանին, խարդախանաւք թշնամին եմոյծ աղանդ հերձուածողաւք յեկեղեցի:* «**Զորոմն**» *ասաց ընդդէմ ճշմարտութեանն, որպէս զսուտ մարգարէսն եւ զսուտ առաքեալսն եւ զդերաքրիստոսն հակառակ Քրիստոսի, այսպէս եւ զհերձուածողսն ներհակ վարդապետաց, բայց ո՛չ ի բռնութենէ, այլ ի հովուացն անգործութենէ, որք սպրդեալ գաղտագողի զորոմն անիրաւ հերձուածոյն ցանեցին ի մէջ ուղղափառ սերման հաւատոյն: Քանզի ո՛չ զայլ ինչ սերմն մեղաց եւ կամ չար գործոց, այլ զորո՛մն, որ նման էր ցորենոյն, զչարափառութիւն սնափառ ախտիւ վարակեալ. եւ ինքեանք բարձեալ ի կենաց գնացին, բայց աղանդն մնաց յեկեղեցի ի յիշատակ չարեաց նոցին:*

Եւ իբրեւ բուսաւ խոտն եւ արար պտուղ, ապա երեւեցաւ եւ որոմն (ԺԳ. 26):

Յիրաւի յաճման հասակին եւ ի կատարեալ զգայութեանցն ախտ չարութեանն գործոց, ցանկութեամբն հանդերձ, երեւի խլրտալով ի մարմինն: Եւ դարձեալ՝ հերձուածաւղքն զառաջինն թագուցանէին զանձինս եւ յորժամ մեծարանաց արժանի լինէին եւ փառս ընդունէին, քանզի այս է «**խոտն**», *յայնժամ համարձակեալ՝ զթոյնս հեղուին:*

Մատուցեալ ծառայք տանուտէրոնն ասեն ցնա. «Տէ՛ր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում, արդ ուստի՞ ունիցի զորոմն» (ԺԳ. 27):

Աստ զխնամակալութիւն սրբոց հրեշտակացն նշանակէ, միանգամայն եւ վկայս ցուցանէ աստուածութեանն, զի զբարին սերմանեաց յագարակի աշխարհի, եւ առ այսու եւ զայն եւս, թէ ուսման են կարաւտ եւ սիրաւղք: Եւ դարձեալ՝ առաքելոցն է ասացուածս, որք ի տանէ Տեառն եկեղեցւոյ ուսեալ զհաւատս ուղղափառս՝ սերմանեցին յեկեղեցի, ուստի եւ զնեռինն ծանեան իրս եւ ծանուցին յառնել ի վերջին ժամանակին:

Եւ նա ասէ ցնոսա. «Այր թշնամի արար զայն» (ԺԳ. 28):

Ցուցանէ, թէ ո՛չ է Աստուծոյ, այլ այլոց ումեմն թշնամւո՛յ արարուած չարութիւն, եւ ճշմարտապէս թշնամի ո՛չ միայն բնութեանս, այլեւ Աստուծոյ, քանզի սկիզբն դրժութեանն ո՛չ յայնմանէ ինչ է, զի ի մեզն մեղանչեաց, այլ զի եւ կամացն Աստուծոյ հակառակել իշխեաց: Եւ դարձեալ՝ յայտնապէս զհերձուածաւղսն «թշնամի» ասէ, զի որք սուտ խաւսեցան՝ խաբեալք յարգանդէ եւ աւտարացեալք ի մաւրէ աւազանէ, թշնամիք են Աստուծոյ, զի զուղիղ բանն խաթարեալ եղծին եւ զչար հերձուածս հաստատեցին:

Ասեն ցնա ծառայքն. «Կամի՞ս, զի երթիցուք քաղեսցուք զայն ի բաց» (ԺԳ. 28):

Ո՛վ երանելի հպատակութեան ծառայիցն, զի ո՛չ վայրապար հայցէին հրաման, այլ զկամացն պէտս կատարէին, քանզի թէպէտ հոգիք են հարկաւորք ի սպասաւորութիւն առաքելք (տե՛ս Եբր. Ա. 14), *բայց ո՛չ առանց կամացն Աստուծոյ ներգործեն ինչ՝ ըստ մարգարէին* (տե՛ս Սաղմ. ճԲ. 20): *Միանգամայն եւ զտաղտկալն նոցա ի չարեացն նշանակէ, որ եւ հայցեն, զի սուրբ սերմանքն ոչ կորնչիցին, եւ որմունքն ըստ արժանեացն դատիցին: Եւ դարձեալ՝ արդարոց աղաւթիւք ոչ բառնայ Աստուած զաղանդ չարափառացն, որպէս յորժամ ասէին.* «Կամի՞ս, զի իջուցուք հուր», *եւ նա ասէ՝ ո՛չ* (հմմտ. Ղուկ. Թ. 54), *որպէս եւ ոչ զսատանայ եւ կամ զցանկութիւնս ի մարմնոց եւ զհալածիչս յաշխարհէ, զի փորձքն երեւեսցին, եւ աղանդասարքն իրաւամբք պատուհասեցին, զայնքան ժամանակս տեղի տուեալ զղջման, եւ նոքա ոչ ապաշխարեցին, որպէս եւ ի հնումն ասէր.* «Ո՛չ ի միում ամի բնրձից զազգն, զի մի՛ զազանքն բազմասցին» (հմմտ. Ելք ԻԳ. 29):

Եւ նա ասէ ցնոսա. «Մի՛ գուցէ մինչ քաղիցէք զորոմն, եւ զցորեա՛նն ընդ նմին ի բաց խլիցէք» (ԺԳ. 29):

Նախ հրաժարեցուցանէ, զի խափանելով զփորձութիւն դիւաց՝ դադարէ եւ բարեգործութիւնն, զի յաղագս մարտի աւդային այսոցդ՝ զաւրանան ճգունք բարեպաշտիցն, եւ հանդիսանան գործք արդասաւորք ընդդէմ չարին: Եւ երկրորդ՝ զսպանութիւնսն կարճէ այսու. մի՝ զի մի՛ ցորենոյն մեղանչիցեն եւ միւս՝ զի կրելոց են որմունքն զանհնարին պատիժս, որք զանբժշկելին ախտացան, զի թէ զէնս կազմիցէք, ասէ, կոտորել զհերետիկոսս, կամ բառնալ զհալածիչս, հարկ լինի եւ զոմանս ի սրբոցն ընդ նոսա կոտորել:

Թոյլ տուք երկոցունց աճել ի միասին մինչեւ ի հունձս (ԺԳ. 30):

Անսասջիք, ասէ, դէպ ժամանակի, զի բազումք ի նոցանէ ցորեան լինելոց են, որ այժմ որոմունքն են, զի մարթ է դառնալ եւ լինել պիտանացուս, եթէ կամիցին: Իսկ զի՞նչ այն, թէ՝ **«երկոցունց աճել ի միասին»**, *այսինքն՝ կատարիլ բարեացն բարեաւք իւրեանց եւ չարեացն չարեաւք իւրեանց, կամ միմեանց պիտոյանան ի կենցաղս, որպէս հատ ցորենոյ՝ փեճեկին իւրոյ: Բայց քանզի կամի խլել զորոմունսն, սակայն վասն անգիտութեան հնձողացն այժմ ոչ կամի: Ուստի՞ ասացեալ է արդեաւք, թէ հրեշտակք ոչ գիտեն զտանջանաց արժանիսն. ասացուք՝ ո՛չ, յայտ ի մարգարէութենէ՛ն է.* «Ցորոյ վերայ նշանն է,- *ասէ,- մի՛ մերձենայցէք»* (Եզեկ. Թ. 6), *եւ յելսն Եգիպտոսի, զսեմս դրանց երբայեցւոց աւծանել ետ արեամբ* (տե՛ս Ելք ԺԲ. 21-23), *զի մի՛ մտցէ սատակիչն, քանզի յորժամ յայտնէ եւ զոր յայտնէ՝ զայն գիտեն, որպէս ասելոց է, թէ՝ «Ասացից ցհնձաւղսն ի կատարածի»: Եւ թէ ասէ ոք՝ ընդէ՞ր ոչ այժմ յայտնէ, նախ՝ որպէս ասացաւ, զի զղջասցին, եւ երկրորդ՝ զի ուսուսցէ, թէ ո՛չ ամենեցունց վրէժխնդրութիւնն աստ է, այլ մասնաւորաց՝ ի խրատ այլոց, այլ անդ բնաւից կատարեալն հատուցմունք:*

Եւ ի ժամանակի հնձոց ասացից զհնձաւղսն. «Քաղեցէք նախ զորոմնդ եւ կապեցէք զայդ խրձունս առ ի յայրել, եւ զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս իմ» (ԺԳ. 30):

Յայտնապէս զինքն դատաւոր գոլ ցուցանէ՝ ըստ Յովհաննու ձայնին (տե՛ս Մատթ. Գ. 12), *եւ Տէր փառաց եւ տանջանաց, բայց «ժամանակ հնձոց» կամ զիւրաքանչիւր ելս մահուն ասէ եւ զպատու-*

հասին ժամանակն, յորում լրացեալ մեղաւք տանջին ի հրեշտակաց տանջողաց՝ ըստ այնմ. «Առաքեաց ի նոսա փանջանս ի ձեռն հրեշտակի չարի» (Սաղմ. ՀԷ. 49), *եւ կամ՝ զկատարած աշխարհիս՝ որպես ինքն ասէ (տե՛ս Մատթ. ԺԳ. 39), որք քաղեն զորոմունսն յաւուր նեռինն, իբր այն՝* «Ո քաղէ զոգիս իշխանաց» (Սաղմ. ՀԵ. 13): *Եւ դարձեալ՝ քաղեն ի նոցանէ զմասնաւոր բարութիւնս, որպէս զի ամենեւին այրելիքն մնասցեն, եւ կապեն խրձունս զցաւղունսն առ ի յայրել յաւիտենական գեհեանն՝ ըստ այնմ.* «Կապեցէ՛ք զդորա ձեռս եւ զոտս» (Մատթ. ԻԲ. 13), *եւ թէ՝* «Ի գործս ձեռաց իւրեանց կապեսցին մեղաւորք» (Սաղմ. Թ. 17), *այսինքն՝ անզերծանելի գոլ ի տանջանսն՝ իբր զկապեալ շղթայիւ համագումար ի միասին ըստ խրձան աւրինի, քանզի մինչ ի ցորեանն իցէ որոմն, խնայել պարտ է, զի թերեւս դարձցի եւ զի մի՛ կոխիցի ցորեանն, իսկ յորժամ անզեղջ մնայցէ եւ քաղիցի, այնուհետեւ ո՛չ ունիցի անխայումն:*

Բայց ընդէ՞ր նախ զորոմն առաջին. զի մի՛ կարծիցեն, թէ եւ ցորեանն ընդ նոսին ժողովիցի. վասն որոյ եւ ասէ, թէ՝ «եւ զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս իմ»՝ *յարքայութիւնն վերին, որ պատրաստեալ է ի սկզբանէ նոցին, որք հաց սուրբ գտան եւ կերակուր Աստուծոյ եւ մարդկան եղեն: Եւ երկրորդ՝ զի ըստ կարգի այնպէս հանդիպելոց է, զի նախ մեղաւորք յայրումն առաքին եւ ապա արդարքն նման Տեառն փառաւորին: Լսի եւ այսպէս, թէ՝ բարձէք զմեղսն յաշխարհէ եւ կապեցէք ի գլուխս սատանայի, որ պատճառ եղեւ նորին՝ բորբոքիլ հրով գեհենին՝ ըստ այնմ.* «Պակասեսցին մեղաւորք յերկրէ, եւ ամբարիշտք մի՛ եւս գտցին ի նմա» (Սաղմ. ՃԳ. 35), *եւ արդարքն զերծեալք ի պատրանաց նորա՝ ժողովին ընդ հրեշտակս եւ աւրհնեն զԱստուած յաւիտեան:*

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԻՆ ՈՐՈՄԱՆՑ

Մատթ. ԺԳ. 36-43, 51-52

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Յայնժամ թողեալ զամբոխն եկն ի տուն (հմմտ. Մատթ. ԺԳ. 36):

«**Տուն**» *Յիսուսի է գիտութիւն բազմացեալ, որ յԱւետարանսն ասացեալ է, վասն նորայ զի՛նչ խաւսեցաւ եւ կամ զի՛նչ գործեաց:*

Որ սերմանէ է Որդի մարդոյ զսերմն բարի. եւ ագարակն աշխարհս է, բարի սերմ՝ որդիք արքայութեանն (հմմտ. ԺԳ. 37-38):

Որք ընկալան զսերմ բարի վարդապետութիւնն Քրիստոսի, եղեն «բարի սերմանք»՝ *որդիք արքայութեանն Աստուծոյ: Իսկ որք ընկալան զվարդապետութիւն չարին եւ ի բաց ընկեցին զսերմն Քրիստոսի, սոք[ա] եղեն որդիք չարին՝* «որոմն» *գեհենին հրոյ. թագաւորութիւն Քրիստոսի* «եկեղեցի» *է եւ բանք աստուածայինք. ուստի զայթագղութիւնք, այսինքն՝ այլ աղանդք, որ առնեն զանաւրէնութիւն, ժողովեսցին եւ անկցին ի հնոց հրոյն:*

Անդ [եղիցի] լալ եւ կրճել ատամանց (ԺԳ. 42):

Հոգի իւրոյ կերակրոյն գործոց բարեաց, եւ ճշմարիտ գիտութեան մանրաւղ եւ ծամաւղ, սա ի ժամանակի յանդիմանութեանն գտեալ արհամարհաւղ գործոց բարեաց եւ ճշմարիտ գիտութեան ի նոյն ի ճշմարիտ գիտութենէն՝ յանդիմանեալ «կրճտել» *ասի զատամունս, ինքն զինքեան ամբաստանեալ տանջի:*

Յայնժամ արդարքն ծագեսցեն առաջի Աստուծոյ որպէս զարեգակն (հմմտ. ԺԳ. 43):

Զանբաւ պայծառութիւն ասէ եւ համարձակութիւն ընդ աստի նեղութեանս, զոր վայելելոց են ի հանդերձեալ յաւիտենին ի թագաւորութեանն հաւր իւրեանց:

Եւ ասէ ցնոսա Յիսուս. «Իմացարո՞ւք զայս ամենայն» (ԺԳ. 51):

Ոչ հանդիմանելով հարցանէր, քանզի ճշմարտապէս գիտէր, եթէ իմացան կամ չիմացան, այլ հաստատապէս, ո՛չ ապաքէն իմացուք զայս ամենայն:

Եւ ասէր ցնոսայ. վասն այդորիկ ամենայն դպիր աշակերտեալ ի յարքայութիւն երկնից, նման է տանուտեառն, որ հանէ ի գանձէ իւրմէ հին եւ նոր (հմմտ. ԺԳ. 52):

«Աշակերտեալ արքայութեանն երկնից» *կոչի, որ ի Հրէաստանէն առնու զՔրիստոսի ուսումնն, իսկ խորագոյն ասել, որ ի գրոյն ելանէ ի հոգեւորականն. արդ որ առաւելեալն է անսուտ գիտութեամբ, լինի երկնային բազմութեանն յարքայութեանն տանուտեր, եւ ո՛չ միայն ի ծառայութենէ, այլ եւ յաղքատութենէ ազատեալ լինի որպէս Քրիստոս, իսկ որ սորա նման գպիր* **«հանէ ի գանձէ իւրմէ»** *զՀին եւ զՆոր Կտակարանս, ցուցանէ եթէ ո՛չ միայն չէ պարտ, այլ եւ անհնարին է բաժանել զՆորս ի Հնոց Կտակարանացն:*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Մատեան աշակերտքն եւ ասեն. «Մեկնեա՛ մեզ զառակ որոմանց ագարակին» (Մատթ. ԺԳ. 36):

Թէպէտ եւ այլուր յորժամ ուսանել ինչ կամէին, զանգիտէին հարցանել: Եւ արդ, ուստի՞ եղեւ նոցա այսպիսի համարձակութիւն: Յայնմանէ, զի լուան, թէ՝ «Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեանն Աստուծոյ» (Մարկ. Դ. 11) *եւ ընդելացան, վասն որոյ եւ առանձինն իսկ հարցանէին եւ ոչ առաջի բազմութեանն, զի մի ի նախանձ զոք գրգռեսցեն, այլ զի զՏէրն պահեսցեն զաւրէնս: Եւ զիա՞րդ իցէ, զի զխմորոյն եւ զմանանխոյն թողեալ զառակ, զայն եւեթ հարցանէին: Այլ զայս իբրեւ զյայտնի ինչ թողին եւ զայն իբրեւ թէ անճառ ինչ ունիցի եւ աւելի զաւրութիւն ցուցանել, վասն որոյ եւ ոչ սաստէ ի նոսա, այլեւ վերըստին եւս լնու զուսուցեալսն:*

«Ո՛ր սերմանէ,- ասէ,- սերմն բարի՝ է Որդի մարդոյ: Եւ ագարակն աշխարհս է» (ԺԳ. 37, 38) *եւ այլն:*

Յորժամ ինքն իցէ սերմանիչն եւ նորին ագարակն, եւ յարքայութենէ իւրմէ հրամիցէ ժողովել, ապայ կարի իսկ յայտ է, թէ այս աշխարհս նորա է, եւ այն: Եւ արդ, դու միտ դիր անչափ մարդասիրութեանն ի սերմանելն ինքնին սերմանէ եւ ի տանջելն այլոց հրամայէ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդսն՝ եկն ի տուն (Մատթ. ԺԳ. 36):

Կրկին իրաւք նախախնամէ Աստուած զաշխարհ՝ կա՛մ բարութեամբ, կա՛մ բարկութեամբ, եւ յորժամ մարդիկ այսու ոչ զգաստանան, այնուհետեւ թողու ի խնամոց իւրոց, որպէս զհինն Իսրայէլ. «Թողի, - ասէ, - զնոսա գնալ զհետ կամաց սրտից իւրեանց» (Սաղմ. Զ. 13): *Այսպէս եւ Տէրն առակաւ կամէր զգաստացուցանել զնոսա, իսկ նոքա ո՛չ հարցին, որով զգաստանային, վասն որոյ թողեալ զնոսա արտաքս ի վարդապետութենէն իւրմէ՝* «եկն ի տուն»: *Եւ* «տուն» *է գիտութիւն Տեառն բազմացեալ, որ յԱւետարանսն է ասացեալ վասն նորա, զոր ինչ արար եւ զոր ինչ գործեաց: Եւ դարձեալ՝ զի ոչ ոք ի ժողովրդենէն զկնի եկն, յայտ է, զի դպիրքն եւ փարիսեցիքն էին, որք ոչ վասն այլ իրաց եկեալ էին, այլ զի բանս ինչ կարիցեն հանել ի նմանէ, եւ իբրեւ ոչ կարացին հանել, քանզի ոչ իմացան զասացեալն, թողին զնա եւ գնացին, եւ նա թողեալ զնոսա՝ եկն ի տուն, զի ուսուցցէ զտենչացաւղս ուսմանն, որպէս ասէ: Կամ զտաճարն ասէ* «տուն»:

Մատեան առ նա աշակերտքն իւր եւ ասեն. «Մեկնեա՛ մեզ զառակս որոմանցն ագարակի» (ԺԳ. 36):

Ամենայն ուրեք ուսանել խնդրեն, բայց ո՛չ իշխէին հարցանել. ասա՛ ուստի՞ համարձակութիւն առին: Ինձ թուի՝ յայնմանէ, զի ասաց՝ «Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեանն, իսկ նոցա չէ տուեալ» (Մատթ. ԺԳ. 11), *վասն այնորիկ հարցանեն. բայց առանձինն, յորժամ ի տուն եկն, եւ ո՛չ առաջի բազմութեանն, զի մի՛ ի նախանձ զոք գրգռեսցեն, այլ զՏեառն պահեսցեն զաւրէնս: Բայց քննելի է, թէ ընդէ՞ր զմանանխոյն եւ զխմորոյն թողեալ զառակ՝ զորոմանցն հարցանէին: Կամ թէ հարցին, եւ ոչ գրեցան կամ թէ զայն իբր զյայտնիս թողեալ եւ զայս իբր աւելի զաւրութիւնս ունել հարցա-*

նէին, վասն որոյ եւ ոչ սաստեաց, այլ վերստին լնու զասացեալն՝ յամաւթ առնելով զնոսա, որք ոչ հարցին, զի կամաւ չախորժէին:

Նա պատասխանի եր եւ ասէ ցնոսա. «Որ սերմանէ սերմն բարի, է Որդի մարդոյ»: Եւ ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են, որ որդիքն արքայութեան են (ԺԳ. 37-38):

Աշակերտացն բացայայտէ զասացեալ առակն լուսաւոր եւ հակիրճ բանիւ, քանզի նա, որ մարգարէիւքն սերմանէր ըստ աստուածութեանն զաստուածպաշտութիւնն, աստ դարձեալ մարդկութեամբն զԱւետարանին վարդապետութիւն, վասն ի բարիս ածելոյ զմարդիկ ի հինն եւ ի նորս: Իսկ «ագարակ» զաշխարհս անուանեալ՝ զփոքրկութիւն եւ զնուաստութիւն առ դրախտն եւ առ վերին կեանսն համեմատելով: Եւ որք ընկալան զվարդապետութիւն Տեառն, եղեն բարի սերմանք, այսինքն՝ բարեգործք, նաեւ սերմանաւղք ի յայլս, քանզի իբրեւ սերմն աւրինակեալ է կենցաղոյս առաքինութիւնք վասն յաճախութեան բազմապատիկ պտղոյ որային եւ մշտնջենաւոր պսակին, որք ժառանգք լինելոց են արքայութեանն վերին:

Իսկ որոմնն որդիք չարին են (ԺԳ. 38):

Նոքա, որք առին զվարդապետութիւն չարին, որպէս հրէայք եւ հերձուածաւղք եւ անհաւատ հեթանոսք, որք զկամս նորին պաշտելով՝ չար գործովք ծնունդք եւ որդիք եղեն նմին, այսինքն՝ ժառանգք հրոյ գեհենին:

Եւ թշնամին, որ վարեաց զայն, սատանայ է (ԺԳ. 39):

Ուսուցանէ թէ եւ նա՛ կերպարանի ըստ ճշմարիտ մշակացն ձեւոյ եւ պատառէ զսիրտ մարդկան արօրիւ չարութեանն՝ սերմանելով զխորհուրդս չարեաց, որ եւ աճեցեալք գործովք՝ երեւի որոմնն, որով զթշնամութիւնն կացուցանէ՝ ոչ միայն առ մարդ, այլեւ առ Աստուած՝ զբարի սերմանս նորա խանգարելով: Նաեւ ա՛յլ ազգ. զի որ զմեզս յղանայ եւ վճարէ գործով, թշնամի Աստուծոյ է եւ հակառակ կամաց նորա՝ ըստ առաքելոյ (տե՛ս Յակ. Դ. 4):

Եւ հունձք կատարած աշխարհիս է (ԺԳ. 39):

Ընդէ՞ր յառաջագոյն, յորժամ զաշակերտսն առաքէր, ասաց. «Հունձք բազումք են, եւ մշակք՝ սակաւ, աղաչեցէք զՏէր հնձոցն, զի հանցէ մշակս ի հունձս իւր» (Մատթ. Թ. 37-38), *եւ թէ՝* «Ամբարձէք զաչս ձեր եւ տեսէք զարտորայս, զի սպիտակացեալ են եւ ի հունձս հասեալ» (Յովհ. Դ. 35), *իսկ աստ զկատարած աշխարհիս դարձեալ* «**հունձ**» *ասէ: Արդ՝ կամ երկդիմի է հունձ մեղաց եւ կենաց, զառաջինն ի մեղաց հատին մանգաղաւ բանին առաքեալքն եւ մուծին յշտեմարանս եկեղեցւոյ զհաւատացեալսն եւ զյարդն սպառնական բանիւ արտաքս հոսեցին, իսկ յերկրորդումն հրեշտակք ի կենաց հնձեն եւ ի վերինն Սիոն ժողովեն, քանզի որպէս գալուստն կրկին, այսպէս եւ հունձն: Եւ կամ թէ՝ այն վճիռ էր փառաց եւ տանջանաց, իսկ այս՝ պտուղ ունկնդրութեան՝ արդեամբք եւ ներգործութեամբ բարի սերմանցն եւ որոմանցն:*

Եւ հնձաւղքն՝ հրեշտակք են (ԺԳ. 39):

Առաջնոյն՝ մարգարէքն սերմանաւղք եւ առաքեալքն՝ հնձաւղք, իսկ վերջնոյն սերմանաւղ՝ Որդին Մարդոյ, եւ հնձաւղք՝ սպասաւորք նորին հրեշտակք երկնային, որպէս Յովհան ի Յայտնութեանն ետես զհարուածս եաւթն սկաւառակացն, որով կատարած արարին յաւիտենիս (տե՛ս Յայտ. ԺԵ. 7):

Որպէս ժողովի որոմնն եւ ի հուր արկանի, այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս: Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթագղութիւնս եւ զայնոսիկ, որք գործեն զանաւրէնութիւն: Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց (ԺԳ. 40-42):

Նախ ցուցանէ, թէ ճշմարիտ հատուցմունքն ի հանդերձեալն են: Եւ դարձեալ՝ զբարերարութիւն իւր յայտ առնէ, զի յորժամ զսերմն բարի սերմանէր, անձամբ առնէր, իսկ յորժամ վասն տանջանացն պատմէ, զհրեշտակս ասէ, առաքէ: Եւ միւս եւս. զի յորժամ սերմանէ, յագարակի իւրում սերմանէ, եւ յորժամ ժողովէ, յարքայութենէ իւրմէ ժողովէ, յայտ ուրեմն է, թէ այս աշխարհս եւ այն՝ նորա է, որով ուսուցանէ, թէ ամենեքեան յառնելոց են, թէպէտ ոմանք՝ ի կեանս եւ ոմանք՝ ի դատաստանս: Եւ դարձեալ՝ արքայութիւն է Տեառն՝ եկեղեցի սուրբ եւ բանք աստուածայինք, իսկ գայթագղութիւնք՝ աղանդք եւ հերձուածք, որք մտին յեկեղեցի՝ թոյլ տալովն

Աստուծոյ, եւ յետոյ ընտրին: Եւ դարձեալ՝ որ գայթագղեցուցանէ եւ որ գայթագղի եւ գործէ զանաւրէնութիւն՝ երկոքին տանջին, բայց ո՛չ ամենայն գայթագղեցուցանաւղ, այլ որ ի մե՛ղս գայթագղեցուցանէ. ապա թէ ոչ՝ ընդէ՞ր ասաց Տէրն, թէ՝ «Որ գայթագղելոց է, գայթագղեսցի», *զի է երիս տեղի, որ թէպէտ գայթագղեցուցանեն, ո՛չ տանջին գայթագղեցուցիչքն, այլ գայթագղեալքն միայն:*

Եւ դարձեալ՝ որ պատահմամբ անկանի ի մեղս, սակայն այլ ոչ զղջասցի, իսկ կամաւորքն, որք են անաւրէնութեան գործաւղքն, առ հասարակ չարչարին: Եւ դարձեալ՝ սատանայ եւ կամարարքն նորին, որպէս ասաց Տէրն. կամ «գայթագղութիւն» զանհաւատ կռապաշտսն ասէ, որպէս յԱւրէնսն «գայթ» կոչեաց զգործս այլազգեացն (Ելք ԻԳ. 33, Լ.Դ. 22), եւ «անաւրէն», որք յԱւրէնս յանցեան, ի մի տեղի տանջեսցին ի դժոխս, թէպէտ եւ զանազանութիւն լինի: «Արկցեն,- ասէ,- ի հնոց հրոյ, անդ եղիցի [լալ եւ կրճել ատամանց], ըստ այնմ՝ «Արկցեն զնա ի լիճ հրոյն» (հմմտ. Ցայտ. ԺԹ. 20), *եւ թէ՝* «Սատակեսցէ Տէր Յիսուս Հոգւով բերանոյ իւրոյ» (Բ Թես. Բ. 8) *եւ այրմամբ շրթանց իւրոց: Իսկ յաղագս լալոյն եւ կրճելոյն ատամանց ասացեալ է, բայց աստ այսչափ, զի ի ժամանակի յանդիմանութեանն գտաւ արհամարհաւղ գործոց բարեաց, յԱստուծոյ ճշմարտէ յանդիմանեալ՝ ինքն զինքն տանջէ եւ կրճտէ զատամունս իւր, վասն զի զբարիս սերմանցն եւ զճշմարիտ գիտութեանն զգործն ո՛չ ծաքեաց ատամամբք իւրովք ի կենցաղս, անդ դատարկ գոլով ծնաւտին՝ կրճէ զատամունս, նաեւ ի դառնագոյն վշտացն եւս:*

Յայնժամ արդարքն ծագեսցին իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից: Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ (ԺԳ. 43):

Կրկին տանջանք լինի[ն] մեղաւորացն. նախ՝ զի ինքեանք հրոյ եւ կրճել ատամանց մատնին, եւ երկրորդ՝ զի տեսանելով զփառս արդարոցն՝ առաւել չարչարին եւ այն, զի ձեռնահաս գոյր հասանել եւ ոչ հասին: Բայց ծագմունք արդարոցն ո՛չ այսչափ միայն, այլ բազմապատի՛կ, քան զծագումն սորա, այլ զի պայծառագոյն քան զսա, աստղ ոչ ունէայք, վասն այսորիկ ի մերոց ծանաւթիցն տայ մեզ աւրինակ, ապա թէ,ոչ՝ արեգակն եաւթնապատիկ է լինելոց ըստ մարգարէին (տե՛ս Ես. Լ. 26), *զի՞նչ ասես զարդարոցն: Եւ այսու զանբաւ պայծառութիւնն եւ զհամարձակութիւնն եւ զգեղեցկութիւնն իմա, զոր վայելելոց են արդարքն ի հանդերձեալ յաւիտենին՝ փոխանակ աստի նեղութեանցս: Եւ զի այս այսպէս է, ի վերա բերէ, թէ՝* «Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ»: *Այսինքն՝ մի՛ կարծել անմահանալ զնոսա իբր զանբան անմահդ, այլ փառաւք ճոխութեամբ ի կամարս երկնից բարձրասցին, զորս չարչարողքն տեսեալ՝ պատկառեսցին, կամ իբր շրտեալ աչք ի բոլորակածիր արեգական ճառագայթէ:*

Բայց տարակուսելի է, թէ է՞ր վասն առաքեալն ասէ, թէ՝ «Արդարքն յափշտակին ընդ առաջ Տեառն» (Ա. Թես. Դ. 16), *իսկ աստ՝ նախ մեղաւորքն մատնին ի տանջանս եւ ապա արդարքն իբր զարեգակն ծագեն: Գիտելի է, զի արդարոցն յերկինս պատրաստեալ է բնակութիւն, իսկ յորժամ ժամանակ գալստեանն եկեսցէ, իջանէ յերկնից փառաւքն Հաւր, եւ արդարքն առեալ զմարմինս իւրեանց, ելանեն ընդ առաջ Տեառն յաւդս, եւ նոքաւք իջեալ յերկիր Տէրն՝ բեմ կազմէ եւ տայ զվճիռ մեղաւորացն՝ ըստ այնմ.* «Կոչեսցէ զերկինս ի վերուստ եւ զերկիր՝ ի դատել զժողովուրդ իւր» (Սաղմ. ԽԹ. 4): *Յայնժամ իբրեւ այր թագաւոր յառնէ իւրովք բարեկամաւքն եւ տանի զնոսա յերանութեան հանգիստն՝ պսակել լուսեղէն փառաւք, որպէս զարեգակն, քանզի այրեցողական զաւրութիւն հրոյն եւ աղջամղջինն, որով ամենայն յաղին, տանջանք պատրաստեցան մեղաւորացն եւ լոյսն՝ պսակք արդարոցն, զաւրութեամբ ձայնի Տեառն բաժանեալ ի հրոյն լոյս բոցոյն՝ ըստ մարգարէին* (տե՛ս Սաղմ. ԻԸ. 7):

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Իսկ երկրորդ առակ որոման ուղիղ է կարդեալ.

Ա. Նախ՝ զի այն՝ սերմն եւ այս, եւ այն՝ անդաստան, եւ այս:

Բ. Երկրորդ՝ զի յետ բարի սերմանողին չարն սերմն է մերձաւոր: Եւ են ամենայն առակք արքայութեանն ԵԺ.ան (15): Եւ թէ զմաճն ընդ սոսայ կարգեսցես, վեցտասան եղիցի:

Հարց. Վասն է՞ր առակաւք խաւսէր:

Պատասխանի. Վասն Զ. (6) պատճառի.

Ա. Նախ՝ որպէս ասաց Եփրեմ. «Ի մէջ դպրաց եւ փարիսեցւոց խաւսէր»:

Բ. Երկրորդ՝ զի արժանաւորքն իմասցին եւ անարժանքն՝ ոչ: Ըստ որում՝ տեսցեն եւ մի՛ տեսցեն:

Գ. Երրորդ՝ զի կատարեսցի բան մարգարէին. «Բացից առակաւ զբերան իմ» (Մատթ. ԺԳ. 35) *եւ այլն:*

Դ. Չորրորդ՝ առակաւոր բանն հաստատուն մնայ:

Ե. Հինգերորդ՝ մարդն հոգի է եւ մարմին եւ միջնորդութեամբ մարմնոյն հասանի յանմարմինն, որպէս սանտղաւք, այսպէս առակաւք՝ զբանն:

Զ. Վեցերորդ՝ որպէս զպայծառութիւն արեգական հայելով կամ ջրով տեսանեմք, այսպէս ի պայծառ լոյս Աւետարանին՝ առակաւոր բանիւք:

Այս առակ ընդդէմ նոցա է, որք զբարի եւ զչարս յԱստուծոյ իմանան եւ պատճառ են, զի մի լիցի Բ. Աստուածս ըստ Մանիքեոսի:

Ասեմք, եթէ Աստուած միայն բարեաց է պատճառ եւ ոչ չարեաց: Եւ յայտ է յերից.

Ա. Նախ՝ ի բնականէն, որպէս ի լուսոյն լոյս գայ յառաջ եւ ի քաղցրութենէն՝ քաղցր, այսպէս եւ ի բարի Արարչէն՝ բարի արարածք, որպէս վկայէ Մովսէս. «Եղեւ Ասպուած, եւ բարի են յոյժ» (Ծննդ. Ա. 31):

Բ. Երկրորդ՝ յայտ է ի Հին Աւրինացն, որոց ասէ մարգարէն. «Ոչ թէ դու, Ասպուած, կամիս զանաւրէնութիւն, եւ ոչ բնակեն առ քեզ չարք» (Սաղմ. Ե. 5-6):

Գ. Երրորդ՝ յայտ է ի Նորոյս, որպէս այս, որ ասէ. «Այր երկրագործ զսերմն բարի սերմանեաց յագարակի իւրում եւ թշնամին ցանեաց զորոմն չարութեան» (հմմտ. Մատթ. ԺԳ. 24-25): *Եւ այլ ուր ասէ.* «Ծառ բարի պտղոյ բարի առնէ եւ չար ոչ առնէ» (հմմտ Ղուկ. Զ. 43):

Իսկ առ պատճառն նոցա ասեմք, եթէ ոչ լինին Բ. (2) Աստուածք, այլ մի, զի բարին էութիւն է եւ գոյացութիւն, իսկ չար՝ ոչ է էութիւն, այլ՝ պակասութիւն՝ ի սկզբնաչարէն գտեալ: Ոչ ուրեմն են Բ. Աստուածք, այլ մի Աստուած՝ արարիչ բարոյ եւ էութեան:

Հարց. Զի՞նչ է սերմն բարի:

Պատասխանի. Ա. Նախ՝ էութիւնն եւ բնութիւն հրեշտակաց եւ մարդկան:

Բ. Երկրորդ՝ սկզբնական բարին, զոր եղ ի բնութիւնն եւ ազատ կամքն եւ Բանն, եւ այլն:

Գ. Երրորդ՝ Աւրէնքն ի ձեռն մարգարէից:

Դ. Չորրորդ՝ Աւետարանն Քրիստոսի:

Հարց. Զի՞նչ է որոմն:

Պատասխանի. Չար սերմանքն է ի սկզբնաչարէն.

Ա. Նախ՝ ի յերկինս սերմանեաց եւ խռովեցոյց:

Բ. Երկրորդ՝ ի դրախտն եւ յանցոյց:

Գ. Երրորդ՝ ի յերկրի զանազան չարիս, ի մէջ մարդկան:

Դ. Չորրորդ՝ զհերձուածողս ի մէջ եկեղեցոյ:

Ա. Արդ, առաջինն՝ ի փառաց զրկեաց:

Բ. Երկրորդ՝ ի կենաց:

Գ. Երրորդ՝ ի բարեաց:

Դ. Չորրորդ՝ ի հաւատոց, որ մեծ է քան զամենայն:

Վասն քնոյ

Հարց. Զի՞նչ է «**քուն լինելն**» (ԺԳ. 25):

Պատասխանի. Առ Աստուած քուն զներելն իմանամք, եւ յառնել՝ զվրէժն: Եւ առ Քրիստոս, որ ննջեաց ի վերայ խաչին եւ յարեաւ:

Եւ առ մարդս Դ. (4) կերպիւ առեալ լինի քուն.

Ա. Նախ՝ զգայութեանց քունն:

Բ. Երկրորդ՝ մտաց տգիտութիւնն:

Գ. Երրորդ՝ ծուլութիւնն ի բարեաց:

Դ. Չորրորդ՝ մեղաց քունն, որ ննջեմք ի մահ:

Նոյնպէս եւ արթնութիւնն Դ. (4) է.

Ա. Նախ՝ մարմնոյն:

Բ. Երկրորդ՝ մտացն զգուշութիւն:

Գ. Երրորդ՝ ժրութեան գործոյ:

Դ. Չորրորդ՝ առաքինութեանց:

Զոր ամենայնիւ պարտ է մեզ արթուն կալ, զի մի սերմանեսցէ ի մեզ զորոմն թշնամին:

Վասն հերձուածողաց

Հարց. Վասն է՞ր «**որոմն**» *ասէ* (ԺԳ. 25):

Պատասխանի. Վասն Ժ. (10) պատճառի.

Ա. Նախ՝ զի հակառակ է որոմն ցորենոյն: Եւ հերձուածողն զամենայն ինչ հակառակ ունի՝ զհարցումն, զբանն, զգործ եւ զայլն:

Բ. Երկրորդ՝ զի նման է ցորենոյն, յորժամ բուսանի: Եւ հերձուածողն նմանութեամբ պատրէ, բանիւ, անուամբ, հանդերձիւ եւ այլն:

Գ. Երրորդ՝ զի գաղտագողի մտանէ՝ ի քուն լինելն մարդկան:

Դ. Զորրորդ՝ ի մէջ ցորենոյն բուսանի: Այսպէս եւ սուտ մարգարէքն, եւ սուտ առաքեալքն ի մէջ ճշմարտիցն, զի նոցա հակառակ էին:

Ե. Հինգերորդ՝ ի վերայ ցորենոյն, զի հերձուածողն զաւելորդն ուսուցանէ, որ անպիտան է:

Զ. Վեցերորդ՝ դառն է որոմն, եւ բազում դառնութիւն մուծին յեկեղեցի դասք հերձուածողացն:

Է. Եւթներորդ՝ վնասէ զխելս: Եւ հերձուածողն՝ զհաւատս սուրբ:

Ը. Ութերորդ՝ փայլուն է գունով: Եւ հերձուածողն լկտի է եւ սնապարծ:

Թ. Իններորդ՝ ի պտուղն երեւի որոմն: Եւ հերձուածողն նախ ծածկէ եւ յետոյ յայտնէ:

Ժ. Տասներորդ՝ կերակուր է անասնոց կամ նիւթ հրոյ, եւ հերձուածողն՝ սատանայի, եւ նիւթ գեհենին, որպէս ասէ. «Կապեցէք ի խրձունս առ ի յայրել» (ԺԳ. 30):

Հարց. Զի՞նչ է. «**Այր թշնամի արար**» (ԺԳ. 28):

Պատասխանի. Թշնամի կոչէ զսատանայ: Եւ Դ. (4) է իմացումն.

Ա. Նախ՝ զի վնասիչ են մարդոյ:

Բ. Երկրորդ՝ զի զմեզ թշնամի առնեն Աստուծոյ:

Գ. Երրորդ՝ մեր թշնամութեամբն ի յԱստուած հակառակին, որոյ արարած եմք:

Դ. Զորրորդ՝ զի պատկեր եմք, զքէն նորա ի մեզ վճարեն:

Իսկ ծառայք զհրեշտակս կոչէ կամ զմարգարէս եւ զառաքեալս եւ զայլ սուրբս:

Հարց. Վասն է՞ր ոչ ետ թոյլ քաղել զորոմն (հմմտ. ԺԳ. 29-30):

Պատասխանի. Վասն Դ. (4) պատճառի.

Ա. Նախ՝ զի մի՛ լիցի սուր եւ սպանումն ի յեկեղեցի, որպէս ի Հինն:

Բ. Երկրորդ՝ զի մի խլեսցի եւ ցորեանն ընդ նոսա:

Գ. Երրորդ՝ զի թէ դարձցին եւ լինիցին ցորեան եւ պիտանի:

Դ. Զորրորդ՝ զի թէ անզեղջ մնասցեն, զանհնարին պատիժս ընկալցին անվախճան: Յայսմանէ ուսեալք՝ բարեպաշտ թագաւորքն ոչ սպանանէին զհերետիկոսս, այլ արտաքսէին յաշխարհէն իւրեանց:

Հարց. Ապա ոչ է պարտ դատել զվնասակարս հոգոյ կամ մարմնոյ:

Պատասխանի. Ասեն վարդապետք, թէ՝ ոչ են պատժելի Դ. (4) ոմանք.

Ա. Նախ՝ թէ անգիտութեամբ մեղանչեն, որպէս այն, զի աշակերտքն ասեն. «Հուր իջուցանել ի քաղաքն, եւ Տէրն արգել զնոսա» (Ղուկ. Թ. 52-56):

Բ. Երկրորդ՝ թէ վասն մարդկան փառաց եւ անարգութեան լինի, ոչ են պատժելի, որպէս եպիսկոպոսն ընդ բանիւ կապէ վասն փառաց կամ ագահութեան իւրոյ:

Գ. Երրորդ՝ թէ կարծեալք լինի մեղքն եւ սուտ վկայ են, ոչ է պատժելի:

Դ. Զորրորդ՝ թէ իշխան լիցի երկրի, եւ նովաւ բազում անմեղ պատժեսցին, զի իշխանն որպէս փուշ է այգոյ, յորժամ քակին նոքա, այգին կոխան լինի:

Արտաքոյ սոցա ամենայն մեղանչականք պատժելի են: Եւ յայտ է յերից.

Ա. Նախ՝ ի բնականէն, յորժամ աւձ խածանէ զմատն, եթէ ոչ հատանեն, բոլոր մարմինն ապականի:

Բ. Երկրորդ՝ ասէ Աւրէնքն, թէ՝ «Ի սեղանոյ իմոյ արդաքս քարշեսցես զմեղանչականսն» (հմմտ. Ելից ԻԸ. 43):

Գ. Երրորդ՝ ասէ առաքեալ. «Փոքր մի խմոր զամենայն խմորէ» (Ա. Կոր. Ե. 6) *եւ թէ՝* «հան զչարն ի միջոյ» (Ա. Կոր. Ե. 13), *զի բարձցի աղաղակ ընդ նմա: Ապա՝ պարտ է զհերձուածողս եւ որք անզեղջ մնան ի չարիս, արտաքսել յեկեղեցոյ* (տե՛ս Ա. Կոր. Ե. 10):

Վասն դժոխոց

Հարց. Զի՞նչ է «**կապեցէք ի խրձունս**» (ԺԳ. 30):

Պատասխանի. «**Կապելն**» *է, որ ասաց դատաւորն.* «Կապեցէք զոտս եւ զձեռս, հանէք ի խաւարն» (հմմտ. Մատթ. ԻԲ. 13): *Իսկ* «**խրձունքն**», *այսինքն՝ զհամամեղս ի միասին տանջել, որպէս զնեստորականսն՝ ի մի, եւ զարիոսեանսն՝ ի մի, զամբարտաւանսն՝ ի մի, եւ զպոռնիկքն՝ ի մի, եւ զայլ չարսն ըստ իւրաքանչիւր գործոց:*

Եւ գիտելի է, զի թէպէտ ի մի խուրձն կապին, այլ զանազանապէս այրին, որպէս այն, որ արքայութիւնն՝ մի է, եւ միապէս առին զդահեկան տեսութեանն Աստուծոյ, այլ առաւել եւ նուազ տեսանեն զԱստուած: Նոյնպէս եւ մի է դժոխքն եւ մի հուր գեհենին, այլ առաւել եւ նուազ տանջէ, որպէս ասէ Եզեկիէլ. «Անցի ընդ գետն, եւ էր

մինչ ի սրունս եւ յերանս եւ մինչ ի գաւտին եւ ի պարանոցն» (հմմտ. Եզեկ. ԽԷ. 4-6): *Այս է հրեղէն գետն.*

Ա. Առաջին՝ այրէ մինչեւ յոլոքսն. նոքա են, որ նոր սկիզբն արարին մեղաց եւ մեռան:

Բ. Երկրորդ՝ մինչեւ յերանս. նոքա են, որ մեղաց ի մեղս ընթանան, զի ծունկն է ընթանալոյն պատճառ, ծնկամբն այրեսցին:

Գ. Երրորդ՝ մինչեւ ցգաւտին այրին. նոքա են պոռնիկքն, զի սկիզբն վավաշոտ ախտին երիկամունքն է:

Դ. Չորրորդն՝ մինչեւ ցպարանոցն այրին. նոքա են, որ ի մէջ մեղացն անզեղջ մնացին, որպէս ասէ առաքեալ. «Հուր ձորպիր պարանոցաթաւալ ընկալցի զնոսա» (հմմտ. Ես. Լ. 28): *Յորոց փրկեսցէ Քրիստոս՝ յոյսն մեր, զամենայն հաւատացեալս անուան իւրոյ յաններելի ի տանջանաց գեհենին:*

Այս է երկրորդ առակն:

ՎԱՍՆ ՀԱՏՈՅ ՄԱՆԱՆԽՈՅ

Մատթ. ԺԳ. 31-32

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Այլ առակ ասաց նոցա. «Նման է արքայութիւնն երկնից հատոյ մանանխոյ, որ է փոքրագոյն քան զամենայն սերմանիս» (հմմտ. Մատթ. ԺԳ. 31-32), *եւ որ ինչ ի կարգին:*

Հատի մանանխոյ նմանեցուցանէ, որպէս թուի ինձ, ոչ բեռն իւրոյ քաղցր եւ թեթեւ վարդապետութեանն լինելոյ, թէպէտ եւ առ ժամանակ մի երեւի խստագոյն եւ ծանրագոյն, այլ յորժամ կատարիցի յոք եւ բերիցէ պտուղ, ծառ լինի ի մեծագոյն քան զամենայն մարդկա[յ]ին հիւնադութեան բանջարս. «Որ հիւանդն է, - ասէ, - բանջար կերիցէ» (Հռոմ. ԺԴ. 2), *յաղագս ոչ հանդուրժելոյ հաստատուն կերակրոց եւ թողին յայնպիսի ծառ թռչունք հոգիք մարդկան, եւ կամ հատ մանանխոյ ասէ զինքն, վասն զի փոքրացաւ եւ աղքատացաւ՝ առեալ զկերպարանս ծառայի, իսկ յորժամ փառաւորեցաւ եւ բարձրացաւ, ձգեաց առ ինքն զամենեսեանն, եւ ժառանգեաց զազգս եւ իշխեաց ամենայն ծագաց երկրի. ծառ եղեւ մեծ, որ հանդեան ամենայն թռչունք երկնաւորք, այսինքն՝ հոգիք առաքելոց եւ մարգարէից եւ ամենայն արդարոց: Քրիստոսի յաղագս արքայութեանն Աստուծոյ. բան փոքր էր յառաջագոյն եւ անարգ երեւէր. եւ աճեաց եւ քան զամենայն բան, որ սերմանեալ էին ի մարդիկ, մեծացաւ յոյժ, եւ այնչափ զաւրացաւ, զի աստուածային եւ երկնաւոր զաւրութիւնք հանդչէին յոստս նորայ. ոստք նորա կարծելի են, որք մեծացան բանիւ նորա, առաքեալքն են նմանողք առաքելոցն:*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Այլ միւս եւս առակ մանանխոյն, զի.

Փոքր է նայ, քան զամենայն սերմանիս (հմմտ. Մատթ. ԺԳ. 32):

ԵՓ *Վասն զի փոքրկութեան քարոզութեանն, որ ի սկզբանն էր, ասաց իբրեւ զայն, զի ասէ.* «Մի երկնչիր, հաւտ փոքրիկ» (Ղուկ. ԺԲ. 32):

Եւ յորժամ բուսանի,- ասէ,- եւ աճէ, լինի ծառ (հմմտ. ԺԳ. 32):

Զի թագաւորէ Աւետարան նորա, մինչեւ ի ծագս երկրի: «Ընդ ամենայն երկիր, - ասէ, - ել բարբառ առեպեաց նոցա» (Հռոմ. Ժ. 18):

Եւ գան,- ասէ,- թռչունք (ԺԳ. 32):

Հեթանոսք աշխատեալք հանգչին ի վերայ հաւատոցն. «Եկայք,- ասէ,- առ իս, ամենայն աշխատեալք» (հմմտ. Մատթ. ԺԱ. 28):

Դարձեալ նմանեցոյց զանձն իւր հատոյ, որ սերմանեցաւ յերկիր (տե՛ս Մատթ. ԺԳ. 37): *Եւ առ իւր մարմինն յերկրէ, այն, զի ի վերայ նորա հանգեաւ թռչունն սուրբ՝ ըստ Յովհաննու ձայնին* (տե՛ս Յայտն. ԺԹ. 21):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ. «Նման է արքայութիւնն երկնից հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում: Որ փոքր է քան զամենայն սերմանիս, եւ յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս, եւ լինի ծառ, մինչեւ գալ թռչնոց երկնից եւ հանգչել յոստս նորա» (Մատթ. ԺԳ. 31-32):

Որք բնախաւսեցին, ասեն զմանանխոյ անփտելի ունելով բնութիւն, եւ յորում տեղւոջ անկանի՝ բուսանի, եւ կատարեալ է ըստ ձեւոյն եւ ճճեաց անուտելի, եւ զաւրաւոր ըստ որակին: Արդ, ըստ այսմ գաղափարի՝ «**հատ մանանխոյ**» *զինքն անուանէ՝ անփուտ գոլ ըստ աստուածութեանն եւ մարդկութեանն, որ սերմանեալ ի մարդկային բնութիւնս՝* «**բուսաւ յերկրէ**» *ըստ մարգարէին* (Սաղմ. ՁԴ. 12), *կատարեալ լրմամբ՝ աստուածութեամբ եւ մարդկութեամբ, զաւրաւոր հրաշիւք եւ անարատ ի մեղաց, զի ուտիճն մեղսասէր ո՛չ կարաց կամագիւտ լինել նորա:* «**Որ փոքր է [քան զամենայն սերմանիս]**». *կամ զի ի գոյզն եւ յաղքատ աղջկանէ ծնաւ ի յայրի եւ կամ ըստ կարծեաց հրէիցն, եւ կամ զի փոքրկացաւ՝ առեալ զկերպարանս ծառայի, նաեւ ըստ մահուն եւս: Իսկ յորժամ աճեաց անաճելին բնութեամբ ըստ մարմնոյ, որպէս ասացեալ է, թէ* «աճէր հասակաւ» (հմմտ. Ղուկ. Բ. 52), *եւ կամ ի ձեռն սքանչելեացն մեծացաւ եւ փառաւորեցաւ քան զամենայն մարդ՝ սերմանեալ ի մարդկանէ, զթագաւորս ասեմ եւ զմարգարէս, եւ եղեւ ծառ՝ կենաց ի խաչին, մինչ ձգել առ ինքն տնաւրինաբար զթռչունն սուրբ երկնային՝ զՀոգին աղաւնակերպ իջեալ հանգուցեալ ի վերա գլխոյ նորա, զոր «ոստ»*

ասաց, քանզի ո՛չ ըստ աստուածութեանն, այլ ըստ մարդկութեանն ընկալաւ տնաւրինաբար:

Եւ դարձեալ՝ զքարոզութիւն Աւետարանին, որ ի սկզբանն ի ձեռն առաքելոցն ի հատ մանանխոյ առակէ, իբր այն, զի ասէ. «Մի՛ երկնչիր, հա՛ւտ փոքրիկ» (Ղուկ. ԺԲ. 32), *քանզի իբրեւ զսերմն զՀոգին շնորհաց առին, որով աճեցեալ եղեւ ծառ մեծ, զի թագաւորեաց Աւետարանն մինչ ի ծագս երկրի՝ ըստ այնմ.* «Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, եւ մինչեւ ի ծագս [աշխարհի են խաւսք նոցա]» (Սաղմ. ԺԸ. 5), *որով առաւել գտաւ քան զամենայն բան մարդկային, որ ճարակ տուաւ բնութեանս մերոյ, մինչ գալ հոգւոց մարգարէից եւ արդարոց եւ թռչնոց զաւրութեանց երկնից եւ հանգչել ի քարոզութիւնս առաքելոցն, որք մեծացան բանիւ նորա: Որպէս թէ լցան իղձք բաղձանաց առաջին արդարոց եւ հանգեան ի տառապանաց, զոր վասն բնութեանս կրէին: Եւ կամ՝ թռչունք հեթանոսք աշխատեալք մարմնով եւ հոգւով յաւդս եւ ի ծովու՝ ընդ հովանեաւ Աւետարանին մտին եւ հանգեան ի մեղացն բեռանց՝ ըստ այնմ.* «Եկա՛յք առ իս, ամենայն աշխատեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ. 28):

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

«Հատ մանանխոյ» ասէ զԱւետարանն եւ զհաւատն Քրիստոսի, զի նախ փոքր է ի մէջ փոքր հաւտից առաքելոցն եւ յետոյ աճեաց, «ընդ ամենայն երկիր ել բարբառ Աւետարանին» (հմմտ. Հռոմ. Ժ. 18), *եւ հեթանոսք, աշխատեալք ի կուռս, հանգեաւ ի հաւատս Աւետարանին, ըստ այնմ.* «Եկայք առ իս ամենայն աշխատեալք, եւ ես հանգուց[ից զձեզ]» (Մատթ. ԺԱ. 28):

Հարց. Վասն է՞ր ի հատ մանանխոյ առակէ զհաւատն:

Պատասխանի. Վասն Ժ. (10) պատճառի.

Ա. Նախ՝ զի փոքր է քան զամենայն սերմանիս: Եւ հաւատն փոքր է, քան զամենայն գիտութիւնս:

Բ. Երկրորդ՝ յերկիր անկեալ՝ բուսանի: Եւ հաւատն ի սիրտ մարդկան աճէ:

Գ. Երրորդ՝ նախ՝ ծածկի եւ ապա յայտնի: Եւ հաւատն ի սիրտն ծածկի եւ ապա յայտնի:

Դ. Չորրորդ՝ նախ՝ զարմատն հաստատէ, եւ ապա՝ բուսանի: Եւ հաւատն նախ հաստատի ի հոգին եւ ապա ի զգայարանքն բուսանի:

Ե. Հինգերորդ՝ աճի եւ մեծանայ: Եւ հաւատն աճէ յուսով եւ սիրով եւ մեծանայ գործով:

Զ. Վեցերորդ՝ «Թռչունք հանգչին ի յոստն» (ԺԳ. 32): Եւ ամենայն իմացմունք հանգչին ի հաւատն:

Է. Եւթներորդ՝ բոլոր է: Եւ հաւատն բոլոր է, ի բոլոր սրտէ եւ ի բոլոր մտաց (տե՛ս Մատթ. ԻԲ. 37):

Ը. Ութերորդ՝ անծակ է: Եւ հաւատն՝ անապական, ոչ ինչ կրէ յարտաքուստ:

Թ. Իններորդ՝ անբեկ է: Եւ հաւատն անրիծ եւ աներկեւան:

Ժ. Տասներորդ՝ կծու է: Եւ հաւատն ունի զգործս նեղ եւ անձուկ:

Նմանապէս եւ բաղդատի առ Տէրն, որ հատ եղեւ կենդանութեան.

Ա. Նախ՝ փոքր կեցաւ յարգանդի կուսին:

Բ. Երկրորդ՝ մարմին եղեւ, հոգի եւ միտք:

Գ. Երրորդ՝ առ Հայր եւ յարգանդի հաստատ:

Դ. Չորրորդ՝ զի ծնաւ ի կուսէ:

Ե. Հինգերորդ՝ աճէր հասակաւ մարմնոյն:

Զ. Վեցերորդ՝ բոլորն Աստուած է մարդացեալ:

Է. Եւթներորդ՝ անապական էր մարմնով:

Ը. Ութներորդ՝ անբաժան միացեալ:

Թ. Իններորդ՝ նեղ եւ անձուկ տնաւրէնութեամբն:

Ժ. Տասներորդ՝ եղեւ ծառ քաղցր պտղով մարմնոյն, եւ Հոգին Սուրբ հանգեաւ ի վերայ նորա:

Այսքան երրորդն:

Ղուկ. 18-19

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխ[ոյ] (Ղուկ. ԺԳ. 19):

«Հատ մանանխոյ» զինքն ասէ Քրիստոս, վասն զի փոքրկացաւ եւ աղքատացաւ՝ առեալ զկերպարանս ծառայի: Եւ վասն աւետարանական քարոզութեանն. «Որ փոքր էր» (Մատթ. ԺԳ. 32) *ի սկզբանէ աշակերտացն, եւ սփռեալ տարածեցաւ ընդ տիեզերս:*

Եւ աճեալ՝ եղեւ ծառ (ԺԳ. 19):

ՍՏ *Իսկ յորժամ փառաւորեցաւ եւ բարձրացաւ, ձգեաց զամենեսին առ ինքն եւ ժառանգեաց զազգս եւ իշխեաց ամենայն ծագաց երկրի: Եւ բան նորա փոքր էր յառաջագոյն եւ անարգ երեւեր:*

Աճեաց քան զամենայն բան, որ սերմանեալ էր ի մարդիկ եւ մեծացաւ յոյժ:

ԵՓ *Զի թագաւորեաց Աւետարան նորա մինչեւ ի ծագս երկրի. «Ընդ ամենայն երկիր ել բարբառ»* (Հռոմ. Ժ. 18) *աւետեաց նորա:*

Եւ թռչունք երկնից բնակէին յոստս նորա (ԺԳ. 19):

ՍՏ *Հոգիք առաքելոց եւ մարգարէից եւ ամենայն սրբոց, յորս բնակեն թռչունք երկնաւորք: Եւ այնչափ զաւրացաւ, մինչ զաւրք «երկնից բնակեն յոստս նորա»: «Ոստ նորա» թուի ինձ, որք մեծացան բանիւ նորա՝ առաքեալքն եւ նմանողք նոցա:*

ԵՓ *Թռչունք՝ հեթանոսք, աշխատեալք հանգչին ի վերայ հաւատոց.* «Եկայք առ իս ամենայն աշխատեալքդ» (Մատթ. ԺԱ. 29):

ԱՌԱԿ ԽՄՈՐՈՅՆ
Մատթ. ԺԳ. 33

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Այլ առակ խաւսեցաւ ընդ նոսա. «Նման է արքայութիւնն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ՝ թաքոյց ի գրիւրս երիս, մինչեւ խմորեցաւ բոլորն» (հմմտ. Մատթ. ԺԳ. 33):

«Խմոր»՝ *վարդապետութիւնն Քրիստոսի,* **«կին»՝** *հոգի մարդոյ,* **«գրիւք երեք»՝** *մասունք հոգւոյն՝ բանական, սրտմտական, ցանկական եւ կամ երեք մասունք ժամանակիս՝ անցեալն եւ առաջիկայս եւ հանդերձեալն. որ ոք յերրեակ ժամանակիս յայսմիկ պահեսցեն յինքեանս զվարդապետութիւնն Քրիստոսի, այսինքն՝ բոլոր զինքն լուսաւորեաց:*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Դարձեալ խմորոյ նմանեցոյց զարքայութիւնն (տե՛ս Մատթ. ԺԳ. 33): *Զոր աւրինակ նա զբազում ալեւրն յիւր ընութիւնն չրջէ, նոյնպէս եւ՝ «դուք,- ասէ,- զամենայն աշխարհս դարձուցանէք»: Եւ տես, զիմաստութիւնն, զի զընութեան ինչ իրս ի մէջ բերէ՝ յայտ արարեալ, թէ որպէս մարթի այնմն լինել, նոյնպէս եւ այսմ: Զի որպէս խմորն, որ յորժամ ի զանգուածն մաւտի, յայնժամ խմորէ, նոյնպէս եւ դուք. յորժամ միջամուխ լինիջիք ձերոց պատերազմողացն, յայնժամ յաղթիցէք նոցա: Եւ զոր աւրինակ յորժամ խմորն թաղի եւ ոչ ապականի, այլ առ սակաւ սակաւ յինքն ձգէ եւ դարձուցանէ, նոյնպէս եւ քարոզութիւնդ առ սակաւ սակաւ զամենիսեան դարձուցանէ[1]:*

Իսկ երիս գրիւս ասելն՝ զբազմութիւնն առակէ, քանզի գիտէ զթիւս զայս ի վերայ բազմութեանն առնուլ: Եւ ընդ այն մի՛ ինչ զարմանայցես, եթէ զարքայութենէն ճառեալ: Մանանխոյ (տե՛ս Մատթ. ԺԳ. 31-32, Ղուկ. ԺԳ. 18-19) *եւ խմորոյ նմանեցուցանէ* (տե՛ս Մատթ. ԺԳ. 33, Ղուկ. ԺԳ. 20-21), *քանզի ընդ տխմար եւ ընդ տգէտ մարդկան[2] խաւսէր, որք այնու եւս առաւել յորդորէին:*

[1] Ա > նոյնպէս եւ քարոզութիւնդ առ սակաւ սակաւ զամենիսեան դարձուցանէ
[2] Ա մարդիկ

«Խմոր» դարձեալ զանգուած, մարմին նորա ի զանգուած տանն Ադամայ: Եւ ինքն է, որ արկ ի խմորն զզաւրութիւնն, նմին իրի եւ խառնեաց յայնչափ բազմութիւն անհաւատից եւ արար հաւատացեալս, զի մեք փոփոխիցիմք յայլս ի մերմէ իմաստութենէ: Եւ արդ, մի ոք զնուազութիւնն աղարտիցէ, զի բազում է զաւրութիւն քարոզութեանն, եւ որ խմորեցաւն մի անգամ, դարձեալ զայլս[1] խմորեաց: Զոր աւրինակ եւ կայծակունք. յորժամ զփայտն վառիցեն, զվաղուց այրեցեալ բոցոյն յաւելուած առնեն եւ այնու եւ յայլսն ճարակին, նոյնպէս եւ քարոզութիւնն: Եւ ոչ ասաց՝ **«հուր»,** *այլ՝* **«խմոր»,** *զի հրոյն ո՛չ ամենայն ինչ իւր է, այլ կէս մի եւ փայտին, իսկ խմորն[2] ամենեւիմբ[3] ինքն ազդէ: Եւ թէ Բժ. (12) այր զամենայն աշխարհս խմորեցին, ի միտ առ՝ որչափ ինչ իցէ մեր անպիտանութիւնս, զի այսչափ ինչ իցեմք եւ չկարեմք զմնացեալսն ածել յուղղութիւն:*

Զայս ամենայն խաւսեցաւ Յիսուս ընդ ժողովրդեանն, եւ առանց առակի ոչ [ինչ] խաւսէր ընդ նոսա (հմմտ. ԺԳ. 34):

Մարկոս ասէ՝ որպիսի ինչ կարէին լսել (տե՛ս Մարկ. Դ. 9):

«Խաւսէր ընդ նոսա առակաւք», *եւ զի ցուցցէ եթէ ոչ աւտար ինչ եւ նորոգէ, ածէ զմարգարէն ի մէջ, որ յառաջագոյն գուշակէր զաւրինակ այնպիսի վարդապետութեանն, եւ ուսուցանէ մեզ զՔրիստոսի միտս: Եթէ ոչ, զի իմանայցեն, այլ զնոսա ածիցէ ի հարցուածս.* **«խաւսէր ընդ նոսա»,** *յարէ ի նոյն, թէ՝* **«Առանց առակի ոչինչ խաւ[սէր]»:** *Թէպէտ բազում անգամ առանց առակի խաւսեցաւ, այլ յայնժամ եւ ոչ ինչ, սակայն ոչ ինչ ոք եհարց ցնայ, քանզի տանջանս մեծամեծս սպառնային առակքն, այլ նոքա ոչ ինչ ընդոստեան: Վասն այնորիկ եթող զնոսա եւ գնաց* (հմմտ. Մատթ. ԺԳ. 36):

Եւ ոչ ոք երթայր զհետ նորա ի դպրացն, ուստի յայտ իսկ է, թէ ոչ վասն այլ իրիք եկեալ էին անդր, այլ զի բանս ինչ կարիցեն հանել ի նմանէ, եւ իբրեւ ոչինչ իմացան յասացելոցն, եթող եւ գնաց:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Ա՛յլ առակ խաւսեցաւ ընդ նոսա եւ ասէ. «Նման է արքայութիւնն

[1] Ա զայս
[2] Ա <իսկ խմորն>
[3] Ա ամենեւին

երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ՝ թագոյց ի գրիւս երիս ալեւր, մինչեւ ամենայն խմորեցաւ» (Մատթ. ԺԳ. 33):

Կրկին իմաստ եւ ա՛յս առակ ընձեռէ. նախ՝ զմարմինն իւր «**խմոր**» *անուանէ, որ ծնեալ ի ձեռն կնոջ՝ խառնեաց ի զանգուած տանն Ադամայ՝ հոգւոյ եւ մարմնոյ եւ մտաց, մինչեւ ամենայնն անմահացաւ յուսով յարութեանն՝ լինելով* «առաջին պտղոյ ենջեցելոց» (Ա. Կոր. ԺԵ. 20), *կամ՝ եկեղեցի ի ձեռն հաւատոյն, որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ մկրտեալ յանուն նորին: Եւ կամ* «**կին**» *զհոգի մարդոյ ասէ, զի թէպէտ բնութիւնն արու է յաղագս ներգործութեանն, բայց յԱստուծոյ առնլով սերմանս բարւոյ՝ կարաւղ է եւ գրիւս երիս՝ զերիս մասունս հոգւոյն՝ զբանն զցասումն եւ զցանկութիւն, նաեւ զերիս մասունս ժամանակիս՝ զանցեալն եւ զներկայն եւ զապառնին: Արդ, որ յերիս մասունս հոգւոյ յերիս հատուածս ժամանակաց եւ ի հասակս ընկալաւ հաւատով եւ երկիւղիւ եւ սիրով զմարմինն Տեառն հաղորդութեամբ՝ ըստ այնմ.* «Ի ծոց իմ թագուցի զբանս քո, որպէս զի մի՛ մեղայց քեզ» (հմմտ. Սաղմ. ՃԺԸ. 11), *այնպիսին բոլոր զինքն աստուածատեսակս գործելով լուսաւորէ եւ մարմին եւ ոսկր նմին լինիցի: Եւ երկրորդ՝ զվարդապետութիւնն առակէ ի խմոր յաղագս ձգողական զաւրութեանն, քանզի որպէս խմորն զբազում ալիւրն, զոր* «**երեքն**» *նշանակէ, յիւր զաւրութիւնն շրջէ, նոյնպէս եւ դուք զամենայն աշխարհս՝ զԱսիա եւ զԼիբիա եւ զԵւրոպիա, դարձուցանէք ըստ բնութեան խմորոյ սահմանի, զի որպէս այն, նոյնպէս եւ այդմ մարթ է լինել: Բայց յորժամ խառնիցի խմորն, նոյնպէս եւ դուք, յորժամ միջամուխ լինիցիք պատերազմողաց ձերոց, յայնժա՛մ յաղթիցէք նոցա, որպէս եւ եղեւ իսկ, զի մի ի միոյ խմորեալ՝ զբազումս յիմաստս իւրեանց փոխեցին զաւրութեամբ նորին: Զսակաւն ի բազում աճեցոյց, զի զոր աւրինակ հուր վառեալ զբազում անտառս բորբոքէ, նոյնպէս եւ նոքա խմորեալք ի Տեառնէ, զբազում աշխարհս խմորեցին առ ի յամաւթ մեզ, զի այսքան վարդապետք այժմ զմնացեալն ի նոցանէ ոչ կարեմք դարձուցանել: Եւ դու մի՛ ինչ զարմասցիս, թէ զարքայութիւնն երկնից մանանխոյ եւ խմորոյ բաղդատէ, քանզի ընդ ախմարս եւ ընդ տգէտս խաւսէր, քանզի այնչափ անտեղեակք էին, զի մեկնութեան կարաւտանային, բայց այնու առաւել յորդորէին:*

Այլ վարանելի է ի տեղւոջս, թէ է՞ր աղագաւ զմի եւ զնոյն էութիւն նիւթոյ Գիրք սովորեցին ի լաւից եւ յոռեաց առնուլ ապացոյց, իբր այն՝ «Ահա այր, եւ ծագումն անուն նորա» (Զաք. Զ. 12), *եւ թէ՝* «Ծագեցից երկիւղածաց իմոց արեգակն արդարութեան» (հմմտ. Մաղ. Դ. 2), *եւ թէ՝* «Երեւեցաւ մեզ արեգակն ի բարձանց» (հմմտ. Ղուկ. Ա. 78), *իսկ ընդդիմակին, թէ՝* «Արեգակն ի փուէ քեզ մի մեղիցէ» (Սաղմ. ՃԻ. 6), *եւ թէ՝* «Ծագեաց արեւ հանդերձ խորշակաւ» (Յակոբ Ա. 11)*: Եւ դարձեալ՝* «Խաւարեսցին ապտեղք գիշերոյն այնորիկ» (Յոբ Գ. 9), *եւ թէ՝* «Ես եմ ապտղ առաւաւտուն» (հմմտ. Յայտ. ԻԲ. 16)*: Եւ դարձեալ՝* «Ելեր բազմեցար իբրեւ զառիւծ յանձնապաստանէ» (հմմտ. Ծնն. ԽԹ. 9), *եւ ի տեսիլ կենդանեացն՝ դէմք միոյ դէմք առիւծու լծեալ ի կառս Աստուծոյ եւ ներհակին, թէ՝* «Ոտիսն ձեր սատանայ իբրեւ զառիւծ գոչէ» (Ա. Պետ. Ե. 8) *եւ* «դարանանայ իբրեւ զառիւծ ի մորուջ իւրում (հմմտ. Սաղմ. Թ. 30)*: Եւ դարձեալ՝* «Գեղք յորովայնէ նորա բղխեսցեն» (Յովհ. Է. 38), *եւ՝* «Աղբիւր ի գրանէ Տեառն ելցէ» (Յովել Գ 19), *եւ՝* «Գնացք գեղոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ» (Սաղմ. ԽԵ. 5), *եւ թէ՝* «Մի՛ ընկլուզցեն զիս պտղոյտք ջրոց» (Սաղմ. ԿԸ. 16), *եւ՝* «Շրջանք գեղոց պաշարեցին զիս» (հմմտ. Սաղմ. ՁԷ. 18), *եւ՝* «Ապրեցո զիս ի ջուրց բազմաց» (Սաղմ. ՃԽԳ. 7)*: Եւ դարձեալ՝* «Որպէս զի. քաղցր են ի քիմս իմ բանք քո, քան զմեղր բերանոյ [իմոյ]» (Սաղմ. ՃԺԸ. 103), *եւ* «Կերայ զհաց իմ մեղու իմով» (Երգ Ե. 1), *եւ թէ՝* «Մեղր կաթէ ի շրթանց կնոջ պոռնկի» (Առակ. Ե. 3), *եւ՝* «Քաղցր բանիւք պատրեն զսիրտ անմեղաց» (հմմտ. Հռոմ. ԺՁ. 18)*: Եւ դարձեալ՝* «Ծագեաց մեզ Տէր եղջիւր ի Դաւիթ» (հմմտ. Սաղմ. ՃԼԱ. 17), *եւ՝* «Բարձր եղիցի եղջիւր արդարոյ» (Սաղմ. ՀԴ. 11), *եւ թէ՝* «Զեղջիւրս մեղաւորաց փշրեսցես» (Սաղմ. ՀԴ. 11), *եւ՝* «Մի՛ բարձրացուցանէք ի բարձունս զեղջիւրս ձեր» (հմմտ. Սաղմ. ՀԴ 5)*: Եւ դարձեալ՝* «Դնեմ ի հիմունս Սիոնի վէմ ընտիր» (հմմտ. Ես. ԻԸ 16), *եւ թէ՝* «Քար գայթագղութեան եւ քար գլորման» (Հռոմ. Թ. 33) *եւ այլ սոյնպիսիք յոլովք եւ անթիւք: Նոյնպէս եւ աստ՝* «Նման է արքայութիւնն երկնից խմորոյ», *եւ թէ՝* «Զգո՛յշ լերուք ի խմորոյ սադուկեցւոցն» (Մատթ. ԺՁ. 6), *եւ թէ՝* «Մի՛ ի խմորն հին եւ մի՛ ի խմորն չարութեան, այլ յանխմորն սրտագութեան եւ ճշմարտութեան» (Ա. Կոր. Ե. 8)*:*

Արդ՝ տարակոյս յայսոսիկ: Իսկ լուծումն ճշմարիտ՝ ճշմարտախոհիցն է յայտնի, բայց որքան մերս դատի նուաստ տեսութիւն, ըստ երկուս եղանակս իմանամք: Նախ՝ զի ամենայն էութիւն արարածական երկդիմի ունի զաւրութիւն՝ լաւագոյն եւ վատթարագոյն, արդ, ըստ լաւ կողմանն՝ լաւիցն առնուն ապացոյց, եւ ըստ յոռոյն՝ վատթարագունիցն, զոր եւ մի ի բազմացն յիշեսցուք: Քանզի ահա աւձ ըստ թունիցն դառնագոյն է եւ մահաբեր, իսկ զի եւ ի նմանէ հանեն բժիշկք, որք զթիւրակէքն կազմեն, որով զթոյնս նորա բժշկեն: Նոյնպէս եւ արեգակն, զի ըստ լուսոյն պայծառու-

թեան՝ ազնուագոյն է եւ պատճառ խնդութեան, իսկ ըստ տապոյն՝ կիզիչ է եւ ցամաքեցուցիչ. նոյնպէս եւ ամենայն ինչ: Եւ երկրորդ՝ Աստուած բնութեամբ բարի է, քանզի զանեղութիւնն ունի, իսկ մարդիկ՝ ստացմամբ, վասն զի եղականք են, զի որպէս յառաջին գոյացութեանն յանէութենէ ի լինելութիւն եկն փոփոխմամբ, այսպէս եւ այլայլութիւն միշտ կրէ եւ ի բարւոյն ի չարն միտէ, ուստի փայտ գիտութեան բարւոյ եւ չարի ի Գրոց անուանեցաւ (տե՛ս Ծնն. Բ. 17):

Եւ արդ, քանզի ի գլուխ արարածոցս ստեղծաւ եւ աշխարհի գլուխ կարգեցաւ եւ ընդունայնացաւ, ընդ նմին եւ արարածքս հնազանդեցան՝ ըստ առաքելոյ, թէ՝ «Ընդունայնութեան արարածք հնազանդեցան, ո՛չ իւրեանց կամաւ, այլ վասն այնորիկ, որ հնազանդեցոյցն յուսով» (Հռոմ. Ը. 20): *Եւ արդ, որպէս մարդն երբեմն ի չարն դիմէ եւ երբեմն ի բարին՝ վասն ասացեալ պատճառին, այսպէս եւ էակքս երբեմն ի չարն յիշին եւ երբեմն ի բարին՝ փոփոխական գոլով, որպէս եւ մարդն, մինչ հոլովմամբ կենցաղոյս դարձեալ ի կատարելութիւն բարւոյն ելանիցեն, որպէս ասէ Պաւղոս, թէ՝* «Եւ ինքեանք իսկ արարածք հեծեն եւ երկենն մինչեւ ցայժմ, զի ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան յազատութիւն փառացն Որդւոյն Աստուծոյ» (հմմտ. Հռոմ. Ը. 21-22), *եւ Դաւիթ, թէ՝* «Տեսից զերկինս՝ զգործս մատանց քոց, զլուսին եւ զաստեղս» (Սաղմ. Ը. 4) *հաստատեալ նորոգմամբ եւ ո՛չ փոփոխեալ, որպէս այժմ:*

Բայց եթէ ոք ասիցէ, թէ յետ ի բարին ելանելոյ դարձեալ ի չարն թաւալիցի, ասասցուք, թէ՝ ո՛չ, զի կամ զչարին փորձ դժնդակութեան առեալ՝ ոչ տենչայ նմին, այլ միշտ ի բարին յաւերժանալով ինքն՝ գլուխն աշխարհի, եւ ընդ նմին՝ աշխարհ ամենայն, եւ կամ բնաւ կատարի ի բարին լրմամբ, մինչ զի ոչ կարէ դառնալ ի չարն, որպէս եւ են այժմ հրեշտակք անշարժ ի չարիսն, իբր զքարն պիլաւր ի ջրոյ եռացեալ: Եւ ասեմ զայս ո՛չ բարձումն անձնիշխան կամացն, այլ ընդունելութիւն բարւոյն՝ լրմամբ մտացն. ահա ա՛յս է պատճառն, [զի] զմիոյ նիւթոյ էութիւն բարւոյ եւ չարի առնուլ ապացոյց Գիրք սովորեցին:

Զայս ամենայն խաւսեցաւ Յիսուս առակաւք ընդ ժողովրդեանն. եւ առանց առակի ոչինչ խաւսէր ընդ նոսա (ԺԳ. 34):

Մարկոս ասէ, թէ վասն այնորիկ խաւսէր առակաւք, որպէս զի կարողասցին լսել (տե՛ս Մարկ. Դ. 33), *զոնէ թէ ո՛չ զիմաստս բանին,*

սակայն զճառս պատմութեանն իմանային: Իսկ ասելն, թէ՝ **առանց առակի ոչ ինչ խաւսէր»**, *ո՛չ յամենայն ժամ, այլ յայնժամ միայն, ո՛չ վասն այնորիկ, զի մի՛ իմանայցեն, այլ որպէս զի ի հարցումն չարժեսցէ զնոսա. բայց նոքա ոչինչ ընդոստեան, թէպէտ տանջանս ահագինս սպառնացաւ նոցա առակաւքն:*

Զի լցցի ասացեալն ի մարգարէէն. «Բացից առակաւք զբերան իմ եւ բղխեցից զծածկեալսն ի սկզբանէ աշխարհի» (ԺԳ. 35):

Թէպէտ նոքա ոչինչ հարցին, սակայն աւետարանիչս զմարգարէն վկայ ածէ, թէ ո՛չ աւտարս ինչ, այլ զկանխասացութիւն տեսանողին կատարէ (տե՛ս Սաղմ. ՀԷ. 2), *որ զվարդապետութիւն Տեառն առակաւոր ասաց լինել: Ապա ուրեմն լցեալ են տառք մարգարէիցն՝ ի կատարումն եկեալ բանին, զոր բղխէր Հոգւով առակաւոր վարդապետութեամբ, որ ինչ ծածկեալ էր ի սկզբանէ արարածոց մինչ ի կատարած աշխարհի, նախ գալստեանն իւրոյ խորհուրդ եւ ապա փառք արդարոց եւ տանջանքն մեղաւորացն, որ թէպէտ սուղ յայտնեալ էր, բայց կատարեալ ի տեառնէ ծանուցաւ:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Եւ այս ըստ կարգի առաջնոյդ յարմարեալ, զի նա ըստ բնութեան աճէ, եւ սա:

Հարց. Վասն է՞ր խմորն երբեմն չարութեան եւ աղանդոյ աւրինակի եւ երբեմն՝ արքայութեան:

Պատասխանի. Նախ՝ զի ունի զաւրութիւն եւ ունի ապականութիւն, ըստ զաւրութեան բարոյն բաղդատի, եւ ըստ ապականութեան՝ չարին:

Դարձեալ՝ երբեմն արեգակ եւ արօսեակ զբարին նշանակէ, եւ երբեմն՝ զչար: Նոյնպէս եւ այս:

Իսկ զի՞ խմորն.

Ա. Նախ՝ զի ընտանի եւ ծանաւթ է ամենեցուն:

Բ. Երկրորդ՝ զի նա ըստ բնութեանն առնէ, ապա եւ Արարչին մարթի առնել:

Եւ երիւք բաղդատի.

Ա. Նախ՝ որպէս խմոր զամենայն ալիւրն յինքն շրջէ, այսպէս եւ առաքեալքն զամենայն աշխարհս դարձուցին:

Բ. Երկրորդ՝ յորժամ խառնի յալիւրն, յայնժամ խմորէ: Եւ առաքեալքն. յորժամ քարոզութեամբն եւ չարչարանաւք ի մէջ հեթանոսաց խառնեցան, ապա յաղթեցին նոցա:

Գ. Երրորդ՝ որպէս խմորն թաղի եւ ոչ կորնչի, այլ զալիւրն յինքն քարշէ, այսպէս եւ առաքեալքն ի մէջ հեթանոսաց ոչ կորեան, այլ զսին զնոսա:

Իսկ Գ. (երեք) գրիւն զբազմութիւնն նշանակէ, ըստ այնմ. «Որ Բ. (երկու) եւ Գ. (երեք) ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես, ի մէջ նոցա» (Մատթ. ԺԸ. 20): *Եւ դարձեալ՝ բազում չափէ գրիւն եւ բազում՝ հատ:*

Իսկ «**Կնոջ առեալ**» *(Մատթ. ԺԳ. 33), որպէս այն, որ եգիտ զդրամն: Երբեմն այր կոչի վասն արիական բնութեանն, երբեմն՝ կին, վասն կրող զաւրութեան, ըստ այնմ.* «Որ կրէ զամենայն բանիւ զաւրութեան իւրոյ» (Եբր. Ա. 3)*:*

Դարձեալ «**խմոր**»՝ *Բանն Աստուած յարգանդի կուսին ի զանգուած տանն Ադամայ, զհոգի, զմարմին, զմիտս միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն: Նոր խառնումն եւ սքանչելի խառնուած, որպէս առողն, նոյնպէս եւ առեալն Աստուած, այն է՝ բոլորն խմորեցաւ: Եւ դարձեալ՝ որպէս խմորն փոխէ զմերձաւորն, եւ նա՝ զհեռաւորն: Նոյնպէս եւ Քրիստոս՝ զառաքեալսն: Եւ նոքաւք զամենայն հաւատացեալսն յաւդեաց յինքն՝ զլուխ եղեալ մեզ, եւ մեք անդամք ըստ առաքելոյ* (տես Ա. Կոր. ԺԲ 27)*: Եւ այս ըստ հաւատոյն եւ մարմնոյ նորայ ճաշակմամբն, եւ այլն ամենայն յայտ է ի մեկնիչն:*

Ղուկ. ԺԳ. 20-21
ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Նման է արքայութիւն Աստուծոյ խմորոյ (Ղուկ. ԺԳ. 21):

ԵՓ *Որպէս խմոր ի զանգուած, նոյնպէս եւ մարմինն Քրիստոսի ի զանգուած տանն Ադամայ, կամ՝ վարդապետութիւն[ն] Քրիստոսի:*

Առեալ կնոջ՝ թաքոյց ի գրիւս երիս (ԺԳ. 21):

Սպ. *(եփ.) Կին՝ հոգի մարդոյն:*

Գրիւս երիս (ԺԳ. 21):

Երեք մասունք հոգոյն՝ բանական, սրտմտական, ցանկական: Երեք մասունք ժամանակիս՝ անցեալն եւ առաջիկայս եւ հանդերձեալքն: Որ յերեք ժամանակի յայսմիկ պահեսցէ յինքեան զվարդապետութիւնն Քրիստոսի, այնպիսին բոլոր զինքն լուսաւորեաց:

ԱՌԱԿ ԳԱՆՁԻ
Մատթ. ԺԳ. 44
ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Դարձեալ նման է արքայութիւնն Աստուծոյ գանձի ծածկելոյ յանդի (հմմտ. Մատթ. ԺԳ. 44):

«**Անդաստան**»՝ *աստուածային մարգարէութեան գիրն, որ ասի զանազանութիւն տնկոց ի բառսն. իսկ* «**գանձ**»՝ *մտացն ծածկելոյ զաւրութիւն եւ իմաստութիւն ի բառսն՝ ես այլապէս* «**անդաստան**»՝ *Քրիստոս, յորում ամենայն գանձ գիտութեան եւ իմաստութեան ծածկեալ կան, զգանձս գաղտնիս եւ զծածուկս նա ոչ արկանէ առաջին շանց եւ խոզոց, զմարգարիտ եւ զսրբութիւն* (տես Մատթ. Է. 6):

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Դարձեալ նման է արքայութիւնն երկնից գանձի ծածկելոյ յագարակի եւ մարգարտ[ի] գեղեցկի գնե[ա]լ ի վաճառականէ (հմմտ. Մատթ. ԺԳ. 45):

Զոր աւրինակ անդ հատ մանանխոյն եւ խմորն սակաւ ինչ այլ գունակ կերպարանս ունէին զմիմեանց, նոյնպէս եւ աստ՝ «**գանձ**[1]» *եւ* «**մարգարիտս**», «**զխմորն**» *եւ* «**զհատ մանանխոյն**», *վասն զաւրութեան քարոզութեանն յաւդէ յառակ, թէ յաղթելոց է ամենայն տիեզերաց, եւ զգանձն պատուականութեանն, զի ձգի իբրեւ զխմոր եւ տարածանի իբրեւ զմանանեխ, պատուական է իբրեւ զմարգարիտ եւ բազում շահս յաւդէ իբրեւ զգանձս:*

Եւ ընդէ՞ր միոյ մարգարտի ասէ. քանզի մի է ճշմարտութիւնն եւ ոչ ի բազումս ճեղքեալ: Եւ զոր աւրինակ, որ մարգարիտն ունիցի, ինքն միայն գիտէ, թէ մեծանալոց է, եւ բազմաց չէ ինչ յայտ: Բազում անդամ եւ ի ձեռին իսկ ունիցի, եւ ոչ ոք գիտէ, քանզի ոչ է, թէ անձնեղ ինչ մարմին իցէ, սոյնպէս եւ քարոզութիւնն. ոյք ունին, գիտեն, թէ մեծանալոց են: Իսկ անհաւատքն ո՛չ զգանձն գիտեն, եւ ո՛չ զմեծութիւնն ի միտ առնուն:

[1] Բ գանձս

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Դարձեալ՝ նման է արքայութիւնն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թագոյց եւ ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ, զոր ունի եւ գնէ զագարակն զայն (Մատթ. ԺԳ. 44):

Ըստ պէսպէս ներգործութեան իրացն առակս յաւդէ եւ նովաւ զիմանալին ծանուցանէ, զոր աւրինակ ասէ ագարակի ոք պատահեալ, որ զգանձ ունիցի յինքն ծածկեալ, զամենայն զդոյս իւր տայ եւ զագարակն զայն ստանայ: Նոյնպէս «ագարակ» է Քրիստոսի մարմինն, զոր յերկրեղինացս էառ, եւ «գանձ ծածկեալ»՝ աստուածութիւնն, զոր գտին ի ձեռն հաւատոց հրէայք եւ հեթանոսք եւ ամենայն մարմնականացս բարաւրութիւնն ետուն: Եւ կամ զհաւա՛տն իսկ, զի այն է մերն ամենայն, եւ զնա, որ բաւական է ամենայնի, փոխանակ առին, եւ զայս խնդութեամբ՝ ըստ առաքելոյ. «Զյափշտակութիւն ընչից ձերոց խնդութեա՛մբ ընկալարուք» (Եբր. Ժ. 34), *եւ՝* «Ուրախ եմք ի չարչարանս, որ վասն Տեառն» (հմմտ. Կող. Ա. 24). *ասէ եւ Յովհան. «Եղեր յոգւոջ իմում մի՛ ինչ պատուական ստացուած համարիլ քան զքեզ»*[1]*:*

Եւ դարձեալ՝ «ագարակ» է տառք մարգարէից, որ ունի[ն] զանազանութիւն տնկոց ի բառսն, յորում ամենայն գանձք իմաստութեան եւ գիտութեան ծածկեալ կան՝ զաւրութիւն մտացն եւ ի ծածուկ ունելով՝ ըստ այնմ. «Դնէ ի խորս զգանձս իւր» (Սաղմ. ԼԲ. 7), *զոր գտեալ ոք աշխատասէր ընթերցմամբ եւ Հոգւոյն ընդունելութեամբ, թագուցանէ ի միտս՝ ըստ այնմ.* «Մի՛ տայք զսրբութիւն շանց եւ մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց» (Մատթ. Է. 6)*: Ուստի եւ անճառ խնդութեամբ լնանի միտք աշխատողին եւ արհամարեալ զփառս աշխարհի եւ բարեաւ մնալ ասացեալ մարմնական հանգստի՝ ի Գիրս Սուրբ տաժանի, որ զգանձն երկնային իմաստից խորհրդեանն Քրիստոսի յամանս խեցեղէն ժողովեալ հաւաքէ ի Հին եւ ի Նոր կտակարանաց: Դարձեալ՝* «ագարակ» *աշխարհս է, եւ* «գանձ ծածկեալ յագարակի»՝ *աշխարհի՝ է գործք բարիք, որ զարքայութիւնն ժառանգեցուցանէ: Եւ* «ծածկեալ», *զի պարտ է զգործս բարիս ոչ ի փառս մարդկան գործել՝ ըստ Տեառն* (տե՛ս Մատթ. Զ. 1-4), *այլ ի ծածուկ Հաւր հատուցանողին, որպէս ասէ, թէ՝ «գտեալ թագոյց»,* եւ *խնդայ ընդ գիւտ գործոցն, զոր եգիտ ի բանից Աստուծոյ՝ ըստ Դաւթայ, թէ՝ «Ցնծացայ ես ի բանս քո, որպէս այն, որ գտանէ աւար բազում»* (Սաղմ. ՃԺԸ. 162), *եւ յանճառ խնդութենէն լցեալ՝ հրաժարէ յաշխարհէս եւ ուրանայ զանձն եւ ստանայ սովաւ զծածկեալ կեանսն:*

[1] Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի, Ը

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Նման է արքայութիւնն երկնից գանձի ծածկելոյ յագարակի (Մատթ. ԺԳ. 44)

Արքայութիւնն հոմանուն է եւ Ժ. (10) կերպիւ առեալ լինի ի գրոց.

Ա. Նախ՝ արքայութիւն է Սուրբ Երրորդութիւնն, ըստ որում. «Արքայութիւն քո արքայութիւն յաւիտենից» (Սաղմ. ՃԽԴ. 13) *եւ ծածկեալ է անմատոյց լուսով եւ անգիտութեան միգով:*

Բ. Երկրորդ՝ Քրիստոս է արքա՝ որդի արքային, ըստ որում. «Մերձեալ է արքայութիւնն Աստուծոյ» (Ղուկ. Ժ. 11), *եւ նա ծածկեալ է յագարակի մարմնոյն:*

Գ. Երրորդ՝ կոչի արքայութիւն եւ առաջին գալուստն արքային, ըստ որում. «Հասեալ է ի վերայ ձեր արքայութիւնն Աստուծոյ» (Ղուկ. ԺԱ. 20): *Եւ կոչի արքայութիւն առաջին, զի արար փրկութիւն հոգւոց:*

Դ. Չորրորդ՝ Գիրք Սուրբ եւ Աւետարանն, որ ծածկեալ է առակաւ եւ բառիւ, ըստ որում. «Բարձցի ի ձէնջ արքայութիւնն եւ տացի [ազգի, որ առնիցէ զպտուղս նորա]» (Մատթ. ԻԱ. 43):

Ե. Հինգերորդ՝ եկեղեցի սուրբ կոչի արքայութիւն, զի բնակիչ է արքայութեան՝ ըստ որում. «Արքայութիւնն նմանի ուռկանի» (տե՛ս Մատթ. ԺԳ. 47-50) *եւ ժողովելոց եւ ծածկեալ է ըստ կենցաղոյս:*

Զ. Վեցերորդ՝ խորհուրդք եկեղեցոյ կոչի արքայութիւն, զի տանի յարքայութիւնն, զոր «նման է խմորոյ» (ԺԳ. 33), *ասէ: Եւ նա ծածկեալ է մարմնական նիւթով:*

Է. Եւթներորդ՝ հաւատքն կոչի արքայութիւն՝ նման հատոյ մանանխոյ (տե՛ս Մատթ. ԺԷ. 19, Մարկ. Դ. 30-34, Ղուկ. ԺԳ. 18-19), *եւ նա ծածկեալ է ի սրտի:*

Ը. Ութներորդ՝ հոգին մարդոյ, զի պատկեր է արքային, ըստ որում. «Արքայութիւնն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է ծածկեալ» (հմմտ. Ղուկ. ԺԷ. 21):

Թ. Իններորդ՝ եւ կոչի արքայութիւն եւ միւս անգամ գալուստն, յորժամ եկեսցէ Որդի մարդոյ արքայութեամբ իւրով (տե՛ս Մատթ. Իե. 31): Եւ կոչի արքայութիւն, զի տացէ զփառս արքայութեան սիրելեաց իւրոց, եւ նա ծածկեալ է ի ներքի կողմ վարագուրին:

Ժ. Տասներորդ՝ արքայութիւն է ժառանգութիւնն երկնից, եւ նա ծածկեալ է յերկինս, զոր ակն ոչ ետես եւ այլն: Զորմէ ասէ. «Եկայք աւրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի» (Մատթ. Իե. 34):

Վասն գանձի

Իսկ «**գանձ**» *կոչի վասն Ը. (8) պատճառի.*

Ա. Նախ՝ զի փարթամութիւն է:

Բ. Երկրորդ՝ շահ ունողացն:

Գ. Երրորդ՝ պատուական է:

Դ. Չորրորդ՝ ցանկալի է:

Ե. Հինգերորդ՝ զի մթերեա[լ] է:

Զ. Վեցերորդ՝ խնդութիւն տայ:

Է. Եւթներորդ՝ ստանալի է:

Ը. Ութերորդ՝ փրկութիւն, ըստ որում. «Գանձիւք եղիցի փրկութիւն նոցա» (հմմտ. Ես. ԼԳ. 6):

Իսկ «**ծածկեալ**» (ԺԳ. 44) *վասն չորից.*

Ա. Նախ՝ զի բազմաց անգիտեալ է:

Բ. Երկրորդ՝ զի խնդրելի է:

Գ. Երրորդ՝ զի գտանելի է:

Դ. Չորրորդ՝ զի մնացական է:

Հարց. «**Վաճառեաց զամենայն ինչ**» (հմմտ. ԺԳ. 44):

Պատասխանի. Երեք է իմացումն, այսինքն՝ որ ինչ մեր է, եւ ներս ի մեզ, եւ շուրջ զմեզ:

Ա. Նախ՝ հոգի եւ մարմին եւ միտքս մեր է:

Բ. Երկրորդ՝ աստուածային եւ մարդկային առաքինութիւնքս ի մեզ է:

Գ. Երրորդ՝ ժամանակն եւ հանգիստ եւ ինչք եւ ազգականք շուրջ զմեզ են, տալ պարտիմք զամենայն, ասէ:

ՎԱՍՆ ՄԱՐԳԱՐՏԻ

ԺԳ. 45-46

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Դարձեալ նման է արքայութիւնն երկնից վաճառականի, որ խնդրեսցէ գեղեցիկ մարգարիտ (հմմտ. Մատթ. ԺԳ. 45), *եւ որ ինչ ի կարգին է:*

Բազում զանազանութիւնք են մարգարտոց գեղեցկաց, եւ հնդիկն, եւ պարսկականն, նոյնպէս եւ յարեւմտեան ծովուն ի Բրետտանիկան յովկիանոսի լինին եւ Բոսպորոն. լինին եւ յԱկառնական ծովուն. այդ յաղագս երեւելի մարգարտաց. իսկ որ խնդրէ զգեղեցիկն զարմանալի մարգարիտն, որ ո՛չ խնդրէ զայլափառիցն եւ զաղանդաւորացն բանս, զաղջամղջին եւ զսեւաթոյրս, այլ զճշմարիտ աւրէնսս եւ զգեղեցիկ ճրագունս, զհազարապետս խորհրդոցն Աստուծոյ, զառաքեալսն եւ զմարգարէս, եւ ի նոսայ ամենեսեան զբազմագիւնն Քրիստոս, եւ որ խնդրէ զայս մարգարիտ զամենայն ինչս իւր տուգանեայ (՞), զի զինքն շահեսցի եւ զփոքրն խափանէ, զի զվեհագոյն գիտութիւնն յինքն ընկալցի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Դարձեալ՝ նման է արքայութիւնն երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս: Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն ինչ, զոր ունէր եւ գնեաց զայն մարգարիտ (Մատթ. ԺԳ. 45-46):

Զոր աւրինակ անդ հատ մանանխոյ եւ խմորն սակաւ ինչ զանազանութիւն ի միմեանց ունէին, նոյնպէս եւ աստ գանձն եւ մարգարիտն, զի զնոսա վասն զաւրութեան քարոզութեանն յաւդեաց առակ, թէ յաղթելոց է ամենայն տիեզերաց, զի տարածի իբր զմանանեխ եւ ձգի իբր զխմոր, իսկ զսոսա՝ թէ շահաբեր է իբր զգանձ եւ պատուական է որպէս մարգարիտ: Ըստ որում իմանամք, թէ զոր «**գանձ**» *ասաց, զնոյն եւ* «**մարգարիտ**» *ասէ եւ* «**գեղեցիկք**», *քանզի բազում տեսակք են մարգարտաց՝ հնդկայինն եւ պարսկականն եւ*

որ յԱրեւմտեան ծովուն եւ յովկիանոս լինի: Բայց ասա՛ ոչ վասն զգալի, այլ իմանալի անխաւս մարգարտին ճառէ, զոր «**գեղեցիկ**» *ասէ՝ ըստ այնմ, թէ՝* «**Ընտրեալ է ի բիւրուց**» (Երգ Ե. 10), *եւ՝* «Գեղեցիկ է նա տեսանելով քան զամենայն որդիս մարդկան» (Սաղմ. ԽԴ. 3), *վասն որոյ վաճառականն խնդրէ նախ, եւ ապա՝ զոր ինչ ունի՝ տայ եւ գնէ զայն մարգարիտ: Այսինքն՝ արթուն եւ զգոյշ լինի գիւտի մարգարտին եւ հրաժարէ յերկրաւոր խորհրդոց եւ ի ցանկութեանց, որով ստացանի մարգարիտն այն, քանզի զոր աւրինակ, որ զմարգարիտն ունիցի, ինքն գիտէ, թէ մեծանալոց է, եւ բազմաց չէ յայտ, նոյնպէս եւ որ զՔրիստոս եւ զքարոզութիւն նորա ունի, գիտէ, թէ փառաւորելոց է, իսկ անհաւատքն ոչ գնա գիտեն եւ ոչ զմեծութիւն նորա ի միտ առնուցուն:*

Քննելի է եւ այն, թէ ընդէ՞ր ասաց մի զմարգարիտն: Նախ՝ զի մի է ճշմարտութիւնն եւ ո՛չ ի բազումս ճեղքեալ, որպէս չարն: Եւ երկրորդ՝ «զի մի է Աստուած եւ մի՝ միջնորդն Աստուծոյ եւ մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս» (Ա. Տիմ. Բ. 5), *որ թէպէտ զմարդկային բնութիւնս զգեցաւ՝ խառնելով ընդ աստուածութեանն, սակայն մի Որդի Աստուծոյ եւ կուսին ասի՝ անապական գոլով եւ լուսատեսիլ մարմնական էութեանն՝ վասն առ Բանն անշփոթ միութեամբ ըստ աւրինի մարգարտի գունոյ եւ մարմնոյ:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

«**Մի պատուական մարգարիտ**» (Մատթ. ԺԳ. 46)*:*

Հարց. Վասն է՞ր «**մի**» *մարգարիտ ասէ:*

Պատասխանի. Ա. Նախ՝ զի մի է ճշմարիտ հաւատն եւ բոլոր, ըստ որում. «Մի Տէր, մի հաւատ» (Եփես. Դ. 5):

Բ. Երկրորդ՝ զի մի է ճշմարտութիւնն եւ բոլոր, եւ ոչ ի բազումս ճեղքի, որպէս սուտն, զի ամենայն սուտ բազում է, այլ ոչ ամենայն բազում սուտ է:

Գ. Երրորդ՝ մի է ճիշտն, եւ բազում է աւրինակն. որպէս մի է բունն եւ բազում ստեղունքն:

Դ. Չորրորդ՝ մի է ճշմարիտ բանն, եւ բազում՝ պարագայքն. որպէս մի է գոյացութիւնն, եւ բազում՝ պատահմունք:

Եւ դարձեալ՝ մի է, զի միայն ստացողքն մեծանան նովաւ, եւ միայն նոքա գիտեն զմեծութիւն նորա: Այսպէս՝ մի է հաւատն, եւ միայն ստացողին է աւգուտ, եւ միայն նոքա գիտեն զմեծութիւնն, իսկ անհաւատքն՝ եւ ոչ ինչ:

Դարձեալ՝ «**մարգարիտ**» *կոչի Տէր մեր, ըստ այնմ՝ զանխաւս մարգարիտն:*

Եւ այս ԺԶ. յատկութեամբ մարգարտի.

Ա. Նախ՝ ի ցաւղոյ գոյանայ: Եւ Բանն Աստուած ի Հաւրէ էջ:

Բ. Երկրորդ՝ յարգանդ՝ ոստրէոս, կուսին՝ անսերմն յղացեալ:

Գ. Երրորդ՝ որպէս նա անապական ծնեալ:

Դ. Չորրորդ՝ ի մէջ ծովու կենցաղոյս, կամ եզրական գիտութեանց:

Ե. Հինգերորդ՝ ցանկացողքն գտանեն միայն:

Զ. Վեցերորդ՝ մի է յամենայն էսս եւ ընտրեալ ի բիւրուց:

Է. Եւթներորդ՝ «պատուական է, եւ ամենայն ինչ չարժէ զնա» (հմմտ. Առակ. Ը. 11)՝ *ըստ իմաստնոյն:*

Ը. Ութերորդ՝ «գեղեցիկ է տեսլեամբ քան զամենայն որդիս մարդկան» (հմմտ. Սաղմ. ԽԴ. 3)՝ *ըստ Դաւթի:*

Թ. Իններորդ՝ յստակ է անմեղութեամբ:

Ժ. Տասներորդ՝ անապական մարմնով:

ԺԱ. Մետասաներորդ՝ պայծառ է սքանչելեաւք:

ԺԲ. Երկոտասաներորդ՝ լուսաւոր է բանիւ:

ԺԳ. Երեքտասաներորդ՝ բժշկական է արդեամբ:

ԺԴ. Չորեքտասաներորդ՝ բոլոր է եւ կատարեալ անսկիզբն աստուածութեամբ եւ անվախճան մարդկութեամբ:

ԺԵ. Հնգետասաներորդ՝ անբեկ եւ անբաժան միութեամբ:

ԺԶ. Վեցտասաներորդ՝ անխաւս մարգարիտ, զի անգին է մեծութեամբ:

Այսքան վասն պատուական մարգարտին, նմանապէս եւ զհաւատ եւ զայլ եղանակ արքայութեանն իմացիս:

ԱՌԱԿ ՈՒՌԿԱՆԻՆ

Մատթ. ԺԳ. 47-50

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Դարձեալ նման է արքայութիւնն երկնից ուռկանի արկելոյ ի ծով եւ յամենայն ազգաց ժողովելոց (Մատթ. ԺԳ. 47):

«Ծով» *ալեկոծեալ՝ կենցաղս է մարդկային՝ յամենայն ազգէ ժողովեալ ուռկանաւն աներեւութիւ կամ զգանազան եւ բազմադիմի մարդկան յաւժարութիւն կամ կոչումն հեթանոսաց. գործաւղք ուռկանին՝ Տէրն եւ հրեշտակք, որ սպասաւորեն նմա, եւ ոչ ելանէ ուռկանն, եթէ ոչ լրումն հեթանոսաց մտցէ, այսինքն՝ ոչ դադարէ վարդապետութիւնն Քրիստոսի մինչեւ ի վախճանն աշխարհիս:*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Դարձեալ նման է արքայութիւնն ուռկանի արկելոյ ի ծով (Մատթ. ԺԳ. 47):

Եւ ի՞ւ ընդհատէ այս յորոմանն առակէ, զի անդ ոմանք կեան եւ ոմանք կորընչին, այլ անդ վասն չար կրաւնիցն արար զընտրութիւն, որք ոչ բարւոք նայիցին ի միտս գրոց: Եւ աստ, վասն գործոց չարաց, որքան զամենիսեան եւս հիքագոյն իցեն:

Ելցեն,- ասէ,- հրեշտակ[ք] եւ մեկնեսցեն զչարս ի միջոյ արդարոց եւ արկցեն [զնոսա] ի հնոց հրոյն (ԺԳ. 49-50):

Զայս առակ առանց հարցանելոյ ինքն մեկնէ եւ սակաւ մասամբ զամենայն յայտ առնէ, զի յորժամ լսիցեն, զի զյոռիսն ի բաց խլիցէ, անպատժական ինչ զկորուստն համարիցին: Մեկնութեամբն յայտ առնէ, թէ.

Ի հնոց հրոյն անգանելոց են, ուր լալ աչաց է եւ կրճել ատամանց (ԺԳ. 50):

Բայց դարձեալ յետ այսր ընտրութեան, որ ի ծովէս է, այսինքն՝ յաշխարհէս, այլ միւս եւս ընտրութիւն լինի նոցա. ա՛յս ահա կարի եւս երկիւղի է:

Եւ յորժամ հանին,- ասէ,- զնա արտաքս, մատչին ընտրել զբարի բարին, եւ զխոտանսն արտաքս ընկեցին (հմմտ. ԺԳ. 48):

Զկունքն, որ մտին յուռկանսն՝ մարդիք ի հաւատս նորա, եւ «բարիք»ն այնոքիկ են, որ սկսան եւ կատարեցին զԱւետարան նորա: Եւ «խոտան» այնոքիկ են, զորս մերժեաց, ընկէց եկեղեցի ի միջոյ իւրմէ, վասն ուրացութեան նոցա:

«Ի միտ առէ՞ք,- ասէ,- զայս ամենայն»: Ասեն. «Այո՛, Տէ՛ր» (հմմտ. ԺԳ. 51):

Եւ քանզի իմացան, ապայ եւ գովէ զնոսա:

Վասն այնորիկ,- ասէ,- ամենայն դպիր՝ աշակերտեալ արքայութեանն երկնից, նման է առն տանուտեառն (ԺԳ. 52):

Որպէս եւ այլուր իսկ ասէ, թէ՝ «Առաքեցից ի ձեզ իմաստունս եւ դպիրս» (հմմտ. Մատթ. ԻԳ. 33): *Տեսանես, զի չխոտէ զհինն, այլ գովէ եւ գանձս եւս կոչէ: Որպէս զի որք աստուածեղէն գրոց չիցեն տեղեակք, չեն երբէք լինելոց տանուտեարք՝ ոչ յանձանց ինչ ունիցին եւ ոչ յայլոց ինչ առնուցուն, այլ անփոյթ արարեալ՝ լինին սովամահ: Եւ ոչ այնպիսիքն միայն, այլեւ հերձուածողք վրիպեալ են յայնպիսի երանութենէ, զի ոչ հանեն զՀինն եւ ոչ՝ զՆորն, այլ յերկոցունց զրկեալ են, զի սոքա, երկոքին ընդ միմեանս կապեալ՝ գրկախառնեն: Եւ արդ լուիցեն, որք զգրոյն ընթերցուածոց փոյթ յանձին չկամիցին ունել, որչափ վնաս անձանց կուտիցեն:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ ի ծով եւ յամենայն ազգաց ժողովելոյ: Զոր՝ իբրեւ լցաւ, հանեալ ի ցամաք՝ եւ նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս եւ զխոտանն ի բաց ընկեցին (Մատթ. ԺԳ. 47-48):

Որ նախ քան զայս առակք էին կոչման հեթանոսաց ի հաւատս եւ վարդապետութեան Աւետարանին էին ապացոյցք, իսկ այս առ

հանդերձեալն հայի ընտրութիւն, որ ո՛չ հաւատոց, այլ գործոց է քննութիւն: Վասն որոյ յետ ուռկանի Աւետարանին արկելոյ ի ծով աշխարհիս եւ յամենայն ազգաց հրէից եւ հեթանոսաց ժողովելոյ ի հաւատս, եւ կամ զբազմադիմի յաւժարութիւնս մարդկան ի մի վայր հաւաքելոյ եւ լնլոյ կենցաղոյս, միանգամայն եւ զհեթանոսաց եկեղեցի, յայնժամ այլ իմն ահագին ընտրութիւն լինելոց է համեստ եւ հաստատ ատենիւ. զտուգապէս բարիս, որք սկսան զհաւատս եւ կատարեցին գործով, յամանս արքայութեանն ժողովել եւ խոտանիցն բացընկեցիկ լինել, որք եկին ի հաւատս եւ ուրացան եւ կամ գործովք ընկղմեցան:

Այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք եւ մեկնեսցեն զչարս ի միջոյ արդարոց: Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց (ԺԳ. 49-50):

Զայս առակ առանց հարցանելոյ ինքն մեկնէ եւ մասամբ զամենայն յայտ առնէ եւ բացերեւակի զտանջանս ցուցանէ, զի մի՛ յորժամ բացընկեցիկ լինիցին, անպարտական զկորուստն համարեսցին: Դարձեալ՝ ուսուցանէ, թէ յայսմ կենցաղի ո՛չ է խտրոց արդարոց ի մեղաւորաց, քանզի իրաւունքն Աստուծոյ ո՛չ որոշեալ բաժանէ զնոսա ի միմեանց. մի՝ զի թերեւս զդջասցին, եւ երկրորդ՝ զի պիտանացու են աշխարհիս իբր ցանկ այգւոյ եւ կամ տերեւ խաղողոյ: Իսկ յորժամ դարձուցանէ զիրաւունս յարդարութիւն, յայնժամ զուտ ընտրութեամբ տրոհէ ո՛չ միայն զմարդ ի մարդոյ, այլեւ զխորհուրդ ի խորհրդոյ եւ զարժանաւորն հատուցանէ դատաստանի՝ ըստ իւրաքանչիւր գնացիցն նոցա:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Ասեմք Ժ. (10) կերպիւ.

Ա. Նախ՝ ուռկանն գործի[ք] է որսոյ, եւ Աւետարանն՝ մարդկան:

Բ. Երկրորդ՝ յայլմէ ձգի, եւ նա ի Քրիստոսէ:

Գ. Երրորդ՝ ի մէջ ծովու է պիտանի, եւ նա ի ծովի կենցաղոյս:

Դ. Չորրորդ՝ ի ցամաք ձգէ, եւ նա յարդարութիւն եւ յերկինս հանէ:

Ե. Հինգերորդ՝ յանկարծակի ձգի, եւ նա յանկասկած ժամու:

Զ. Վեցերորդ՝ ըմբռնէ, եւ Աւետարանն՝ զմարդիկ:

Է. Եւթներորդ՝ հաւաքէ, եւ Աւետարանն՝ յեկեղեցիս:

Ը. Ութերորդ՝ բաժանէ յայլ ձկանց, եւ նա՝ յանհաւատից:

Թ. Իններորդ՝ զբազումս ըմբռնէ, եւ բազում են հաւատացեալք:

Ժ. Տասներորդ՝ անխտիր ժողովէ, եւ նմա չիք խտիր ոչ հրէի, եւ ոչ հեթանոսի (տե՛ս Գաղ. Գ. 27-28) *եւ այլն:*

Եւ դարձեալ ասացաւ վասն ուռկանի եւ կարթի յառաջագոյն յերկրորդ հատորն՝ յԲ. (2րդ) համարն տես[1]:

Հարց. Զի՞նչ է «բարի՝ բարին յամանս» (ԺԳ. 48):

Պատասխանի. Կրկին է ընտրութիւնն.

Ա. Նախ՝ ուռկանաւ, որ ի ծովէ աշխարհի մտին ի հաւատս սուրբ:

Բ. Երկրորդ՝ որ ընտրին ուղղափառք եւ չարափառք, արդարք եւ մեղաւորք, որք սկսան ի հաւատս եւ կատարեցան ի գործս բարիս, նոքա մնան յեկեղեցի: Եւ որք թիւրեցան ի հաւատոց կամ ի գործոց, արտաքսին յեկեղեցոյ, ըստ այնմ՝ «Որ երախայք էք, եւ թերահաւատք եւ անմաքուր, ելէ՛ք», գոչէ սրբազան ձայն[2]:

Եւ որպէս աստ կրկին է ընտրութիւնն, այսպէս եւ անդ:

Ա. Նախ՝ յետ մահու հոգոց:

Բ. Երկրորդ՝ ի կատարածի հոգւոց եւ մարմնոց:

Եւ դարձեալ՝ որք աստ յեկեղեցոյ արտաքսին, եւ անդ՝ յարքայութեանցն Աստուծոյ, զի պատկեր է եկեղեցի վերնոյն Սիոնի:

Հարց. «**Դպիր աշակերտեալ**» (ԺԳ. 52):

Պատասխանի. «**Տանուտէրն**» (ԺԳ. 52) *Քրիստոս է՝ Տէր երկնի եւ երկրի, եւ ունի զՆոր եւ զՀին դանձս կտակաց: Եւ ամենայն, որ*

---

[1] Գ Տե՛ս հատոր Բ. Վասն ուռկանի:
«Հարց. Զի՞նչ կարթն եւ զի՞նչ ուռկանն:
Պատասխանի. Վեց իրաւքն զանազանին.
Ա. Նախ՝ ծածուկ ուսուցանելն կարթ է, եւ յայտնին՝ ուռկան:
Բ. Երկրորդ՝ մերձաւորն՝ կարթ, եւ հեռաւորն՝ ուռկան:
Գ. Երրորդ՝ որ յինքեանց խաւսէին՝ կարթ, եւ որ յԱւետարանէն՝ ուռկան:
Դ. Չորրորդ՝ միոյն քարոզն՝ կարթ, եւ բազմացն՝ ուռկան:
Ե. Հինգերորդ՝ նախքան զխաչն՝ կարթ, եւ յետոյ՝ ուռկան:
Զ. Վեցերորդ՝ ի հրեայսն՝ կարթ, եւ ի հեթանոսս՝ ուռկան», էջ 68աբ:

[2] Տե՛ս Պատարագամատոյց ըստ արարողութեան Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, Գ. կանոն սրբոյ պատարագի (պատարագ հաւատացելոց). հմմտ. «Մի՛ որ յերախայից, մի՛ որ ի թերահաւատից, եւ մի՛ որ յապաշխարողաց եւ անմաքրից մերձեսցի խորհուրդս». համացանցային կայք՝ http://www.sourphagop.org/books/Surb%20Patarag.pdf

դպիր է եւ իմաստուն, յորժամ արքայութեանն աշակերտէ, լինի տանուտէր՝ եւ Նոր, եւ Հին գանձուցն հանող, որպէս վարդապետն Քրիստոս:

Եւ յայսցանէ արտաքոյ են տգէտք, որ ոչ զՀինն գիտեն եւ ոչ զՆորս: Ոչ գիտեն եւ ոչ յայլմէ ուսանին եւ լինին սովամահ, ըստ որում. «Տաց ձեզ սով լսելոյ զԲանն Աստուծոյ» (հմմտ. Ամովս. Ը. 11)*: Եւ դարձեալ՝ հերձուածողք, որպէս մանիքեցիք զՀինն ուրանան եւ մարկիոնացիք՝ զՆորս:*

Եւ այժմ այլ ազգիք զՀինն եւ զՆորս ուրանան, զի որ զմինն ոչ ընդունի, եւ ոչ զերկուսն, զի Հինն եւ Նորս կապեալ են ընդ միմեանս գրկախառն, միաշունչ եւ միադէմ, վասն որոյ Աստուածաշունչ կոչի՝ ի միոյ Հոգւոյ շնչեցեալ:

Այսքան առ այս:

ԱՌԱԿ ՀԱՐԻՒՐ ՈՉԽԱՐԱՑ

Մատթ. ԺԸ. 12-14

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Զիա՞րդ թուի ձեզ, թէ լինիցի Ճ. (100) ոչխար, եւ մոլորիցի մի ի նոցանէն, ո՞չ ապաքէն թողուցու զՂ. (90) եւ զինն: Եւ խնդրիցէ զմոլորեալն եւ որ զկնի (հմմտ. Մատթ. ԺԸ 12):

Տեսանե՞ս՝ որպիսի իրաւք յորդորէ զմեզ՝ ունել խնամ տկար եղբարց: Արդ, մի՛ ասիցես, թէ այս անուն դարբին է եւ այս անուն՝ կոշկակար, եւ միւսն՝ հողագործ եւ արհամարհիցես, զի մի այնպիսի ինչ ադտ ախտանայցես: Տե՛ս, զիա՛րդ զգուշացուցանէ՝ խոնարհել եւ տանել դարման այնպիսեացն եւ ի հասարակաց սովորութենէ, յորժամ թողեալ հովուին[1] զայլսն՝ երթեալ զկորուսեալն խնդրիցէ: Թէ գտանիցէ զմոլորեալն, ուրախ առնի յոյժ ընդ գիւտ եւ ընդ ապրել կորուսելոյն: Եթէ Աստուած այնպէս ուրախ լինիցի ընդ գիւտ միոյ ուրուք ի փոքրկանց, դու զիա՞րդ արհամարհիցես, զոր Աստուծոյ այնչափ փոյթ իցէ, յորոց վերայ զանձնն եւս պարտ էր դնել, թէ ասիցէ՝ տկար եւ անարգ իցէ: Վասն այնորիկ իսկ պարտ է խնամ ունել, զի զնա կեցուցանել կարիցես: Քանզի եւ ինքն իսկ եթող զՂ. (90) եւ զինն ոչխարսն եւ եկն եւ չկարաց բազմաց փրկութիւնն խաղաղել զմիոյն կորուստ: Իսկ Ղուկաս ասէ, թէ ի վերայ ուսոցն եւս եբարձ (տե՛ս Ղուկ. ԺԵ 5): Եւ մեծ ուրախութիւն եղեւ ի վերայ ապաշխարութեան[2] միոյ մեղաւորի, քանզի ի վերայ Ղ. (90) եւ ինն արդարոցն եւ ի թողլոյ զապրեալսն եւ ի խնդալ ընդ գիւտ կորուսելոյն, բազում եցոյց զխնամսն:

ԵՓ *Ընդէ՞ր լինի ուրախութիւնն վասն մեղաւորացն, զի ապաշխարեն առաւել քան զարդարոցն, զի ոչ մեղան, այլ քանզի ուրախութիւն զկնի տրտմութեան լինի: Եւ զի՞ եղեւ նոցա տրտմութիւն. զի մեղան. լինի ուրախութիւն, յորժամ ապաշխարեն:* «Ուրախ լինել, - ասէ, - պարտ էր, զի եղբայրս քո այս մեռեալ էր եւ եկեաց» (հմմտ. Ղուկ. ԺԶ. 32) *եւ այլ եւս: Եւ ահա ուրախութիւն եւ տրտմութիւն հոգւոյ չարչարանք են: Զիա՞րդ ի յերկինս տրտմեցուցանեն եւ ուրախ առնեն,*

[1] Ա հուվին, Բ հովվին
[2] Ա > ապաշխարութեան

այլ դատապարտեցան ի մեղս: Անուանեցաւ տրտմութիւնն ի վերինսն, զի մեք լիցուք չարչարեալք, զի զհրեշտակս տրտմեցուցին մեղք մեր, քանի[1] *եւս արժան է մեզ ապաշխարել:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Զիա՞րդ թուի ձեզ. եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչխար, եւ մոլորիցի մի ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսուն եւ զինն ոչխարն ի լերինս եւ երթայցէ խնդրիցէ զմոլորեալն (Մատթ. ԺԸ. 12):

Ընդել աւրինակաւս ցուցանէ ո՛չ վայրապար լինել զիւրն գալուստ, այլ կարի յարմար եւ մոլորելոյն հարկի, որպէս զի յորդորէ զմեզ ըստ նմին աւրինակի խնամ տանել տկար եղբարց, քանզի եւ զհովիւն ոչ կարէ խաղաղացուցանել բազմացն գիւտ վասն միոյն կորստեան: Այսպէս եւ դու մի՛ զոք արհամարհիցես, թէ այս անուն հողագործ է, կամ այն անուն՝ դարբին, այլ խոնարհութեամբ դարման տանել այնպիսեացն եւ առաւել փոյթ վասն մոլորելոցն ունել, քան փրկելոցն, քանզի փրկեալքն ամրացեալք են ի հաւատն իբր ի լերինս, իսկ մոլորեալն յածի եւ գազանակուր լինի, վասն այսորիկ պարտի խնդրել: Բայց ի հարիւր ոչխար առակեաց զբանականութեանս լրումն՝ զհրեշտակաց եւ զմարդկան, զի անմեղք եւ անմահ կենդանիք յԱստուծոյ ստեղծան, իսկ մինն մոլորեալ եղեւ յանմեղութենէն, միանգամայն եւ յանմահութենէն, որով համեմատ վերին բանականացն էր, եւ պակասեաց ի կատարեալ թուոյն՝ ըստ Սողոմոնի, թէ՝ «Պակասեալն ոչ կարէ ի թիւ անկանիլ» (Ժող. Ա. 15), *զի որպէս ոչխար ի գաւթէ պակասի, եւ Ադամ՝ ի դրախտին փառաց, վասն այնորիկ մի ասէ: Ուստի գթացեալ արարիչն ի խնդիր ել՝ թողեալ անմոլար զիննն դասս հրեշտակացն, զոր իննսուն եւ իննիւն նշանակեաց, ի լերինս, այսինքն՝ յերկինս, եւ եկն ի մահ վասն միոյ մոլորելոյն: Նաեւ այսու այլ իմն կինս, եւ եկն ի մահ վասն միոյ մոլորելոյն: Նաեւ այսու այլ իմն յայտ առնէ, թէ որպէս մին առ հարիւրն ունի զանազանութիւն, այսպէս մարդկային բնութիւնս առ հրեշտակացն բազմութիւն, քանզի հազարաց հազարք են եւ բիւրուց բիւրք են: Եւ որպէս ի դրամոցն թիւ մի ի տասանցն էր, որով զնոյն բանական պատկեր ունել ցուցանէր, այսպէս եւ յոչխարացն մի ոչխար էր, որ զնմանութիւն անմահութեանն յանձին բերէր:*

[3] Ա քանզի

Եւ եթէ լինիցի գտանել զնա, ամէ՛ն ասեմ ձեզ, զի ուրախ լինի ի վերայ նորա առաւել քան ի վերայ իննսուն եւ իննունցն, որ չիցեն մոլորեալ (ԺԸ. 13):

Տակաւին յաւրինակն գայ. բայց դու ինձ զճշմարտութի՛ւնն իմա, քանզի զ«եթէ» բառդ ոչ եթէ ըստ կարծեացն դնէ, որ ճշմարտապէսն գտաւ, այլ զայն յայտ առնէ, եթէ ո՛չ հարկիւ եւ բռնութեամբ է ազատութիւնն մեր, այլ կամաւք եւ յաւժարութեամբ, յորժամ նա այց առնիցէ, եւ մեք ի գիւտն եկեսցուք: Քանզի լինի եւ այն, զի նա խնդրիցէ, եւ մեք ապստամբեալ ի բաց հեստիմք, բայց յորժամ գտանիցեմք, կարի իմն ուրախացուցանեմք զնա, որով յայտ է, թէ կորուսանելովն տրտմեցուցանեմք: Արդ, եթէ ուրախանայ Տէր յարարածս իւր ըստ երգոյն (տե՛ս Սաղմ. ՃԳ. 31) *այնքան, մինչ զի ի վերայ ուսոց բառնայ՝ ըստ Ղուկայ* (տե՛ս Ղուկ. ԺԵ. 5), *ապա դու ընդէ՞ր տրտմիցիս: Եւ թէ ընդէ՞ր ի վերայ գտանելոցն առաւել ուրախանայ, քան ի վերայ անմոլարիցն: Ըստ սովորութեան վարի, զի ուրախութիւնն զկնի տրտմութեանն է, զի տրտմեցան ընդ մեղս մարդկան, ուրախանան, յորժամ ապաշխարեն մարդիկ՝ ըստ այնմ.* «Պարտ է ուրախանալ, զի եղբայրս այս մեռեալ էր եւ եկ[ե]աց, կորուսեալ էր եւ գտաւ» (Ղուկ. ԺԵ. 32): *Արդ, եթէ ի մեղս գոլով մեր՝ տրտմին նոքա, իբր այն՝* «Զղջացայ, զի արարի զմարդն» (հմմտ. Ծնն. Զ. 7), *քանի՛ առաւել պարտ է տրտմութիւն զգենուլ մեզ ի մեղս գոլով եւ յապաշխարութիւնն փութալ:*

Այսպէս ո՛չ են կամք առաջի Հաւր իմոյ, որ յերկինս է, եթէ կորիցէ մի ի փոքրկանցս յայսցանէ (ԺԸ. 14):

Կա՛մ թէ՝ զայս առաջին կամք ասէ Հաւր, զի ոչ կամի բնաւին զկորնչիլն՝ ըստ այնմ, թէ՝ «Ոչ խնդայ Աստուած ի կորուստ կենդանեաց» (Իմաստ. Ա. 13), *եւ այս երկրորդ՝ ի մեղացն դառնալ եւ զնա ուրախացուցանել: Կա՛մ թէ՝ ոչ են կամք Հաւր իմոյ, թէ ոք ի մեղս լինիցի եւ նովաւ զկորուստն ժառանգէ, այլ զդառնալն եւ զփրկութիւնն՝ ըստ այնմ.* «Ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա ի չար ճանապարհէն եւ զկեալն» (Եզեկ. ԺԸ. 32): *Բայց այսու ամենայնիւ զնոսա, որք հանդերձեալ են յերկինս ելանել, մանուկ լինելովն՝ զամբարտաւանութիւնն առ ոտն հարկանել եւ առ գայթագղեցուցիչսն արթունս լինել:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Հարց. Զի՞նչ է **«հարիւր ոչխարն»** (Մատթ. ԺԸ. 12):

Պատասխանի. Ա. Նախ՝ զմարդիկ ընդ հրեշտակացն թուէ հաւասար պատուով եւ կատարեալ թուով: Դարձեալ՝ հարիւրն Ժ. (10) Ժ. (10) է, ցուցանէ Թ. (9) դասք հրեշտակացն եւ զմարդկան Ժ. (10) դար ի վերայ նոցա: Եւ յայտ է ի Ժ. (10) կորուսեալ դրամէն:

Եւ յորժամ մարդն մոլորեցաւ, «Թ. (9)»՝ զդասս հրեշտակացն ասէ եւ «իննսուն», զի կատարեալք են եւ նուիրեալք Աստուծոյ:

Իսկ «ոչխար» կոչին առհասարակ Բ.Ժ.ն (12) յատկութեամբ.

Ա. Նախ՝ զի սուրբ են:

Բ. Երկրորդ՝ պատարագելիք:

Գ. Երրորդ՝ ծնընդկան բարեաց:

Դ. Չորրորդ՝ քաղցր կաթամբ սնուցանեն:

Ե. Հինգերորդ՝ ունին նիւթ լուսոյ՝ զիմաստութիւն:

Զ. Վեցերորդ՝ զինքեանս ծածկեն:

Է. Եւթներորդ՝ զայլս զգեցուցանեն:

Ը. Ութերորդ՝ միմեանց հովանի լինին:

Թ. Իններորդ՝ հովուելիք են:

Ժ. Տասներորդ՝ զգաւն են:

ԺԱ. Մետասաներորդ՝ աւձահալածք են:

ԺԲ. Երկոտասաներորդ՝ պարկեշտ են, որպէս ասացաւ յառաջին համարն:

Հարց. Զի՞նչ է **«լերինս ասելն»** (ԺԸ. 12):

Պատասխանի. Կամ զերկինս է իմանալ կամ զհրեշտակս վասն չորից.

Ա. Նախ՝ զի բարձր են ընութեամբ:

Բ. Երկրորդ՝ հեռացեալք ի մէնջ:

Գ. Երրորդ՝ անշարժ հաստատեալք:

Դ. Չորրորդ՝ ամրացեալք ի թշնամեաց:

Հարց. Որպէ՞ս **«մոլորեցաւ մինն»** (հմմտ. ԺԸ. 12):

Պատասխանի. Չորիւք.

Ա. Նախ՝ ի հովուէն:

Բ. Երկրորդ՝ ի հաւտէն:

Գ. Երրորդ՝ ի փարախէն:

Դ. Չորրորդ՝ ի ճանապարհի պատուիրանէն, որպէս ասէ Դաւիթ. «Մոլորեցայ ես որպէս զոչխարն կորուսեալ» (Սաղմ. ՃԺԸ. 176):

ԱՌԱԿ ԵՐԿՈՒՑ ՊԱՐՏԱՊԱՆԱՑՆ

Մատթ. ԺԸ. 23-35

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Վասն այնորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի (Մատթ. ԺԸ. 23), *եւ որ ի կարգին է:*

Միտք առակիս այս են. ուսուցանել մեզ, թէ պարտիմք զյանցանս մարդկան, որ առ մեզն լինին, թողուլ նոցայ պարտական ամենայնի մարդկան ձեռն, եւ յետ սորա յարտաքինսն բանսարկուն. եւ կամ որ ունի ինչ ի յաւիտենէս յայսմանէ քանքար բարի մարդիկ, որով մեծանուն լինէր Աբրահամ եւ այլք սուրբք. քանքար չար որ ի կապարոյ, յորոյ վերա[յ] նստէր կինն անիրաւ, զոր ետես Զաքարիաս (տես Զաք. Ե. 7):

Հրամայեաց զնա վաճառել տէրն եւ զկինն նորա եւ զորդիս (ԺԸ. 25):

Հրամայէ Աստուած հրեշտակաց եւ այլոց սպասաւորաց տալ ցտանջաւղսն. «տանջաւղքն»՝ հրեշտակք ի դատաստանի հանդերձելումն:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Եւ յառաջ մատուցեալ՝ մտադրութեամբ լսիցեմք զառակն.

Մատուցաւ, - ասէ, - առ նա պարտական մի բիւր տաղանդոյ եւ զի ո՛չ զոյր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել զկին եւ զորդիս (հմմտ. Մատթ. ԺԸ. 25):

Մի՞թէ յանգորոյն եւ յանողորմ ինչ մտաց. ա՛ւն անդր, այլ զարհուրեցուցանել կամի զնա սպառնալեաւքն, զի յաղաչանս ածիցէ եւ ո՛չ զի վաճառիցէ, զի թէ զայն կամէր, յորժամ աղաչեացն, չանսայր, եւ ոչ զայնչափ պարտսն չնորհէր: Եւ ընդէ՞ր ո՛չ յառաջ, քան զհամարսն եթող նմա զպարտսն. ցուցանել կամեցաւ, թէ յո՛րչափ պարտուց արար զնա ազատ:

«Երկայնամիտ լեր, - ասէ, - առ իս, եւ զամենայն հատուցից քեզ»: Եւ գթացեալ տէրն արձակեաց զնա եւ զպարտսն եթող (ԺԸ. 26-27):

Տեսանես դարձեալ զմարդասիրութեանն առաւելութիւն. ժամանակ միայն խնդրեաց ծառայն, եւ նա եւս մեծ քան զոր[1] *խնդրեացն, ետ. զամենայն պարտսն, ասէ, շնորհեաց նմա յաւժար եւ յառաջնումն իսկ էր թողուլ: Եւ ոչ կամեցաւ, թէ իւր միայն իցէ ձիրն, այլ զի եւ նա եւս նպաստ լիցի աղաչանաւքն եւ մի՛ առանց պսակելոյ գնասցէ: Եւ զի նորա էր ամենայն, թէպէտ եւ անկաւ ծառայն եւ աղաչեաց, պատճառս թողութեան զգթալն ցուցանէ:* «Գթացաւ», *ասէ եւ* «թող նմա»[2], «եւ ելեալ» *վաղվաղակի. ոչ յետ բազում ժամանակի, այլ անդրէն վաղվաղակի, մինչդեռ զերախտիսն ի ձեռին ունէր, ի չարիս վարէր պարգեւաւն եւ զազատութիւնն, զոր առ ի Տեառնէն, մոռացաւ:*

Եգիպ,- ասէ,- զմի ի ծառայակցացն, որ պարտ էր, ճ. (100) դահեկան, խեղդէր զնա եւ ասէր. «Հատոյ, զոր պարտիսն» (ԺԸ. 28):

Տեսե՞ր զՏեառն մարդասիրութիւնն, տե՛ս եւ զծառային խստութիւնն եւ զանմարդի բարիսն: Եւ նա ասէ. «Երկայնամիտ լեր, եւ հատուցից քեզ» (Մատթ. ԺԸ. 26)*: Եւ նա ոչ զբանսն յիշէր, որովք ինքն ապրեցաւ ի պարտուցն բիւր տաղանդաց: Եւ ո՛չ գնաւահանգիստն զմտաւ ածէր, որ ի կարէ ձմեռն ձմերայնոյն փրկեցաւ, եւ ո՛չ կերպարանք աղաչանացն յիշեցուցանէին նմա զՏեառն մարդասիրութիւնն, այլ զայն ամենայն առ խստութեան եւ ագահութեան եւ ոխակալութեան սրտին մոռացեալ, քան զգազանս եւս վայրենիս վայրենագոյն լեալ*[3]*, խեղդէր եւ պնդէր զծառայակիցն եւ չածէր այնպիսի ինչ զմտաւ եւ ոչ յիշէր զիւր տագնապն, թէպէտ չէին զոյգ նորա պարտքն եւ սորայ, զի մին վասն բիւր տաղանդաց եւ միւսն վասն ճ. (100) դահեկանի աղաչէր, մին՝ զծառայակիցն եւ միւսն՝ զտէրն, մին՝ կատարեալ թողութիւնս առնոյր բիւրուցն եւ միւսն՝ ժամանակ խնդրէր սակաւուցն, եւ ոչ լսէր ոք:*

Տարաւ էարկ,- ասէ,- զնա ի բանդ, տեսին ծառայակիցքն եւ եկին պատմեցին տեառնն (հմմտ. ԺԸ. 31):

[1] Բ զորս
[2] Ա > եւ թող նմա
[3] Ա > քան զգազանս եւս վայրենիս վայրենագոյն լեալ

Մարդկան անդամ հաճոյ չէին իրքն, թող թէ Աստուծոյ, վշտակիցք[1] *լինէին, որ չէին ինչ պարտականք, արդ, զի՞նչ ասիցէ տէրն.*

«Ծառա՛յ չար,- ասէ,- զայն ամենայն պարտսն թողի քեզ, չէ՞ր պարտ եւ քեզ՝ ողորմել քում ծառայակցին, որպէս ես քեզ ողորմեցայ» (հմմտ. ԺԸ. 32-33):

Տե՛ս դարձեալ զհեզութիւն Տեառնն. դատ դնէ եւ իրաւունս տայ, թէպէտ հանելոց էր զպարգեւսն, մանաւանդ, թէ ոչ նա իսկ է[2]*, որ հանիցէ, այլ որ առն անդրէն դարձուցանէ, թէ՝* «զայնչափ պարտսն թողի քեզ, չէ՞ր պարտ եւ քեզ՝ ողորմել քում ծառայակցին»: *Թէպէտ եւ իրքն ծանր*[3] *թուին քեզ, այլ ի շահսն պարտ էիր նայել, որ ինչ յինէն քեզ եղեւ, եւ դու ըստ քեզ այլում պարտ էիր առնել: Եւ զայն, զի ասիցես, եթէ նա զքեզ տրտմեցոյց, դու ի՛սկ զԱստուած բարկացուցէր, եւ զոյգն աղաչանաւք հաշտեցուցեր, եւ թէ զայդ եւ զայն առ միմեանս եղեալ էր, ապա իմանայիր, թէ ո՛յր ծանրագոյն էր. մինչ զբիւր տաղանդն պարտ էր, ո՛չ ինչ թշնամանեաց եւ ո՛չ «ծառայ չար» կոչեաց, այլ ողորմեցաւ: Իսկ յորժամ առ ծառայակիցն անգորոյն գտաւ, ապա ասէ՝* «ծառայ չար»:

Եւ մատնեաց,- ասէ,- զնա տանջանաց, մինչեւ հատուցէ (ԺԸ. 30):

Այսինքն՝ զյաւիտենից տանջանսն, զի չիցէ երբեք ժամանակ, յորում հատուցանել կարիցէ. «Զեղեր,- ասէ,- պիտանի երախտեաւքն, ածից յուղղութիւն տանջանաւքն»:

Նոյնպէս եւ Հայր իմ, որ յերկինս է, արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք ի սրտէ զյանցանս եղբարց ձերոց (հմմտ. ԺԸ. 35):

Ոչ ասէ, թէ՝ «Հայրն ձեր», *այլ թէ՝* «Հայրն իմ». *չառնէ այնուհետեւ արժանի զայնպիսի զչարսն եւ զմարդատեացսն անուանել «Որդիս Աստուծոյ»:*

Այսու Բ.ս (2) ինչ իրս խնդրէ. նախ՝ զի զանձանց մեղս ըստգտանիցեմք եւ ապա՝ զի զայլոց եւս թողուցումք ոչ բանիւք միայն, այլեւ ի սրտէ եւ ի մտաց:

[1] Ա վշտակից
[2] Ա իցէ] իսկ է
[3] Ա ծաղր

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ համար առնուլ ի մէջ ծառայից իւրոց (Մատթ. ԺԸ. 23):

Բաղդատութեամբս ուսուցանէ, թէ իւրաքանչիւր հանդերձեալ է հաշիւ տալ գործոց իւրոց, մասնաւոր՝ յայսմ աշխարհի, եւ ընդհանուր՝ յորժամ բեմ դնի եւ դատաստան կազմի: Եւ երկրորդ՝ յիշեցուցանէ, թէ ոչ միայն դատաւոր է, այլեւ ստեղծաւղ, որ իբր զծառայս ստացաւ զսոսա արարչութեամբ՝ ըստ մարգարէին, թէ՝ «Ամենայն ծառայք քո են» (Սաղմ. ՃԺԸ. 91), *եւ սոքա զբիւր երախտիսն առեալ՝ ապստամբեցին, ուստի եւ ի համար կոչին՝ ըստ տիրական իշխանութեան դատաստանին: Եւ երկրորդ՝ ո՛չ վայրապար թագաւորի նմանեցուցանէ զարքայութիւնն երկնից, այլ զի ցուցցէ, թէ թագաւոր ստեղծաւ մարդն ի պատկեր նորին, եւ թէպէտ յանցեաւ, սակայն նոյն ցանկութեամբն վառեալ՝ թագ եդին ոմանք եւ տիրեցին բազմաց: Եւ չորրորդ՝ զգաւրութիւն իւր յայտ առնէ, թէ յորում ժամանակի կամի, կարաւղ է քննութիւն պահանջել՝ թէ՛ յայսմ կենցաղի, թէ՛ ի հանդերձեալն:*

Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտական մի բիւր քանքարոյ (ԺԸ. 24):

Տաղանդն «քանքար» ասի՝ ըստ եբրայեցւոցն, որ է հարիւր եւ քսան եւ չորս լիտր եւ ըստ կշռոյ՝ ինն հազար դահեկան: Արդ, ասէ. «Մատուցաւ առ նա պարտական մի». *ուստի՞ յայտ է. ի հրեշտակաց, որ միջնորդ եւ վկայք են գործոց մարդկան, որպէս բարեաց, նոյնպէս եւ չարեաց: Կամ ի գործոց իւրոց ցուցաւ, քանզի քանքարն առ բարիսն բարի է եւ առ չարսն՝ չար՝ ըստ ծանրութեան կշռոյ կապարի, որպէս ետեսն Զաքարիաս (տե՛ս Զաք. Ե. 7-8)՝ երգէ եւ Դաւիթ, թէ՝* «Անաւրէնութիւնք իմ... որպէս բեռն ծանր ծանրացան ի վերա իմ» (Սաղմ. ԼԷ. 5): *Քանզի որպէս հարիւրն, այսպէս եւ բիւրն զկատարելութիւն մեղացն նշանակէ: Բայց տեսցուք եւ զպարտսն, քանզի փոխատու Աստուած է, որ ի պատկեր անապականութեան իւրոյ գոյացոյց զմարդն եւ զթագաւորութիւնն իւր իբր զկնիք եդ ստեղծուածին եւ զիւր բարութեանն սերմանս առ նմին եւ զգաւրութիւն գործոյն, զոր քանքարն նշանակէ, յաւել յայս եւ զայլ եւս զերախտիսն, զի*

զամենայն երեւելիս վասն մեր ստեղծ՝ զերկին, զերկիր, զերկրային, զծովային, զաւդային, զլուսաւորս, զդրախտն եւ զայլ եւս բարիս, զոր Աւրինաւք եւ նախ քան զԱւրէնսն շնորհեաց: Յետ այսր եւ զՈրդին միածին ետ, որով որդիս արար վերստին ծննդեամբն, զՀոգին հեղլով՝ զմեզս շնորհեաց եւ բիւր բարութիւնս տալ խոստացաւ, յաղագս որոյ պարտ էր վասն նորա զաւրհանապազ մեռանել, իսկ նա ո՛չ զայս, այլ զդիւրինն պահանջեաց, զանոխակալութի՛ւնն ասեմ: Այլ մեք ոչ միայն զայս ոչ առնեմք, այլեւ յաւելումք մեղս ի վերայ մեղաց, զի յորժամ մարդ տեսանեմք, ցածնումք ի մեղաց, իսկ Աստուած տեսանէ միշտ, եւ մեք ոչ դադարեմք, եւ զի տակաւին վայելեմք ի բարիսն, որով առաւել սաստկանան մեղք եւ ծանրանան պարտք: Ահա այսոքիկ են քանքար պարտուցն:

Իբրեւ ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել զէրն նորա եւ զկին նորա, եւ զորդիս եւ զամենայն, որ զինչ եւ ունիցի, եւ հատուցանել (ԺԸ. 25):

Կամ ըստ հաւատոցն գործ ցուցանել ոչ ունէր, կամ զբոլոր գոյս տալ ըստ իմաստուն վաճառականին (տե՛ս Մատթ. ԺԳ. 45-46) *եւ զարարիչն ճանաչել, զոր Տէր կամէր՝ ո՛չ առնէր: Եւ ա՛յլ ազգ. Հրամայելն վաճառել ո՛չ յանագորոյն եւ յանողորմ մտաց է, ա՛ւն, անդր ի բա՛ց տար, այլ զարհուրեցուցանէ սպառնալեաւք, զի յաղաչանս ածիցէ եւ զիւր մարդասիրութիւնն ցուցանէ, զի թէ զայն կամէր, յորժամ աղաչեացն, չանսայր եւ ո՛չ զայնքան պարտսն շնորհէր: Իսկ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր ոչ յառաջ քան զհամարսն եթող նմա զպարտսն. ասասցուք՝ ցուցանել կամեցաւ, թէ յո՛րչափ պարտուց արար զնա ազատ: Բայց զի՞նչ վաճառելն իցէ. ինձ թուի՝ բառնալ ի կենաց հրամայէ զկին եւ զորդիս եւ ի պէսպէս փորձութիւնս եւ յաղքատութիւնս ձգել, որպէս բազմաց պատահէ ըստ թզենւոյն առակի* (տե՛ս ԺԳ. 6-9), *քանզի այս է հատուցումն մեղաց, որ ասէ մարգարէն, թէ՝* «Ընկալաք ի ձեռանէ Տեառն զհատուցումն» (հմմտ. Ես. Խ. 2), *զի թերեւս զգաստասցի, որպէս եղեւն, քանզի յաղաչանս եկն:*

Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա եւ ասէր. «Երկայնամի՛տ լեր առ իս, եւ զամենայն հատուցից քեզ» (ԺԸ. 26):

Թուի այսու ի հաւատս գոլ նշանակէ, եւ գործոց մաքրութիւն ստանալ մաղթէր ի ձեռն երկայնմտութեանն՝ ըստ մշակին աւրինի,

քանզի որպէս այլք այլոց, այսպէս եւ իւրաքանչիւր ոք անձին իւրոյ մշակ է, զոր աղաչանաւք ի հաւանութիւն ածէ: Քանզի բնաւորեալ է այս՝ ի նեղութեան յիշել զԱստուած եւ ներումն յերկայնմտութենէ նորա խնդրել, որոյ տիպ՝ բիւր քանքարոյ պարտականիս՝ հեթանոսք եղեն, թէ կամիս ընդարձակութիւն տալ բանիս:

Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա եւ զփոխն եթող նմա (ԺԸ. 27):

Ծառայն մի ինչ խնդրեաց՝ երկայնմտութիւն, իսկ նա երկու մեծ իմն չնորհէ. մարդասիրութեամբ զպարտսն թողու եւ ի կապանաց արձակէ: Եւ զայս յառաջնումն կամէր, բայց զի մի՛ իւր միայն լինիցի ձիրն, այլ զի եւ նա եւս նպաստ լիցի աղաչանաւք եւ մի՛ առանց պսակելոյ գնասցէ, թէպէտ իւր էր ամենայն: Յայտ ի գթութենէն է, քանզի այսպիսի է մարդասիրութիւն նորա, ի միոյ ձայնէ թախանձանաց բազում անգամ հրաժարէ ի տանջանաց, որպէս պոռնիկին եւ մաքսաւորին եւ աւազակին եւ այլոց բազմաց, յորմէ եւ մեք վարժիմք, զի թէպէտ եաւթանասուն անգամ թողուցումք, իբր զկաթ մի ջրոյ առ ծով մի մեծ հաշուիցիմք՝ մերձ դնելով զգթութիւն նորա:

Եւ ելեալ ծառայն՝ եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ պարտ էր նմա հարիւր դահեկան, եւ կալեալ զնա՝ խեղդէր եւ ասէր. «Հատո՛ ինձ զոր պարտիս» (ԺԸ. 28):

Ո՛չ յետ բազում ժամանակի, այլ անդէն մինչդեռ զերախտիսն ի ձեռին ունէր, ի չարիս վարէր պարգեւաւն, քանզի եգիտ, ասէ, զմի ի ծառայակցացն եւ խեղդէր, զի ո՛չ զբանսն յիշէր, որով ինքն ապրեցաւ, եւ ո՛չ զնաւահանգիստն, որով փրկեցաւ: Այլ զայն ամենայն խստութեամբ եւ ագահութեամբ եւ ոխակալութեամբ սրտին մոռացեալ՝ քան զգազանս վայրենագոյն լեալ՝ խեղդէր զծառայակիցն յաղագս հարիւր դահեկանի, այսինքն՝ վասն փոքունց սխալանաց միմեանց, որ յաչս մարդկան մեծագոյն թուի, ըստ հարիւրին: Զի կամ դրժումն ընչից է, կամ բամբասանք լեզուի, կամ հարուած ձեռին եւ այլ սոյնպիսինք, զոր ոչ կամիմք ներել միմեանց՝ ըստ առաքելոյ (տե՛ս Կողոս. Գ. 13), *այլ ծանրացուցանեմք զվիշտն՝ չար փոխանակ չարի չափելով:*

Արդ, անկեալ ծառայակցին առ ոտս նորա՝ աղաչէր զնա եւ ասէր. «Երկայնամի՛տ լեր առ իս եւ հատուցից քեզ»: Եւ նա ոչ կամէր, այլ չոգաւ արկ զնա ի բանտ, մինչեւ հատուցէ զպարտսն (ԺԸ. 29-30):

Զոր ինչ ինքն տեառն արար, ի ծառայէն նմին պատահեցաւ եղեալ, բայց նա ոչ զգաստացաւ եւ այն, զի յոլովս ունէր զանազանութիւն, զի անդ զտէր աղաչէր եւ աստ առ ծառայակիցն մաղթէր: Ինքն ի տեառնէ մարդասիրութիւն գտեալ եւ առ ընկերն խստութիւն ցուցեալ, նորայն բիւր տաղանդ եւ սորայն՝ հարիւր դահեկան, եւ սա ժամանակ միայն խնդրէր, իսկ նա զկատարեալ թողութիւնն առնոյր, վասն որոյ արժանի է գանի, զի զոր ետեսն՝ չվարդապետացաւ, եւ զոր ոչ ետես՝ արար, որպէս ասէ. «Զոգաւ,- ասէ,- արկ զնա ի բանդ»: Ինձ թուի՝ զկապանաց եւ զբանդրանաց որոշումն նշանակէ, որ վասն սակաւ յանցանաց եղբարց, զանճառելի նզովս արտաքս ժայթքեն անդուռն բերանով անգութք ի մարդկանէ, եւ բազումք այն են, որ նովիմբ կապանաւք վախճանին եւ ոչ առնեն թողութիւն:

Իբրեւ տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն, տրտմեցան յոյժ եւ եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն, որ ինչ եղեւն (ԺԸ. 31):

Մարդկան անգամ չէին հաճոյ իրքն, թող թէ Աստուծոյ, քանզի վշտակից լինին այնպիսեացն արք չափաւորք եւ բողոքեն առ Աստուած, կամ վասն սակաւ պարտուցն, զորս ոչ չնորհեն, այլ խեղդեն, կամ վասն նզովիցն, որպէս ասացաւ: Դարձեալ՝ թէ ոք զհրեշտակս ասիցէ ծառայակից մեզ, ո՛չ իւիք ի ճշմարտութենէն սխալէ, քանզի հոգիք են հարկաւորք՝ առաքեալք ի սպասաւորութիւն՝ ըստ առաքելոյ (տե՛ս Եբր. Ա. 14), *եւ ընդ այսպիսի իրս մարդկան տրտմին՝ որք ի դարձն եւ ի փրկութիւնն ուրախանան եւ ցուցանեն Տեառն իւրեանց զեղեալն, ըստ Կուռնելեայ իրացն* (տե՛ս Գործք Ժ), *ոչ թէ Աստուած ոչ գիտէ, քա՛ւ լիցի, այլ զի ձեւով բանիս ի ձեռն նոցա պաշտպանութեան զստուգութիւն իրացն կամի նշանակել եւ սոցին վկայութեամբ հաստատուն ցուցանել զեղեալն, քանզի նոցին միջնորդութեամբ՝ խորհրդոց եւ բանից եւ գործոց ամենայնի քննութիւն լինի:*

Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր եւ ասէ. «Ծառա՛յ չար, զամենայն զպարտսն թողի քեզ, վասն զի աղաչեցեր զիս»: Իսկ արդ,

ո՞չ էր պարտ եւ քե՛զ ողորմել ծառայակցին քում, որպէս եւ ես քեզ ողորմեցայ» (ԺԸ. 32-33):

Յորժամ վկայիւքն կնքեցաւ, յայնժամ կոչեաց՝ առ ի վարդապետութիւն մեզ: Բայց կոչելն կամ Գրոց դաստիարակութիւնն է, որով զամենեսեան առ ճշմարտութիւնն կոչէ եւ յԱստուծոյ հաճութիւնն, կամ աւրհասական մահն, որով ի կենացս արտահանէ՝ ըստ երգոյն՝ «Դա՛րձ, անձն իմ, ի հանգիստ քո, զի Տէր կոչեաց զքեզ» (Սաղմ. ՃԺԴ. 7)*: Այլ դու տե՛ս դարձեալ զհեզութիւնն, զի թէպէտ կոչեաց, ո՛չ ըստ իշխանութեանն դատ տայ, այլ իրաւունս ղնէ, թէպէտ հանելոց էր զպարգեւն, մանաւանդ թէ ո՛չ նա իցէ, որ հանիցէ, այլ որ առն՝ անդրէն դարձուցանէ: Դարձեալ՝ կոչեաց ո՛չ ի հարցումն, այլ ի գանս եւ ի ձաղանս, որպէս ասէ.* «**Ծառայ չար**»*: Յորժամ զիւր պարտսն պահանջէր՝ զբիւր քանքարն, ո՛չ այսպիսի անուամբ կոչեաց, իսկ յորժամ զընկերն տագնապեաց, այսպիսի անուամբ անուանէ, քանզի վասն մեր վրէժխնդիր լինի եւ զմերն զամենայն իւր համարի, որպէս զբարիսն, այսպէս եւ զչարիսն:* «**Ծառայ չար**»՝ *ո՛չ բնութեամբ, այլ յաւժարութեամբ. յայտ յաջորդէս է, զի զայնքան պարտսն թողի քեզ, ասէ, եւ դու ոչ կամեցար զսակաւն շնորհել, եւ այն՝ ծառայակցին, ապա ուրեմն յիրաւի ասաց այլուր, թէ՝* «Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն» (Մատթ. Ե. 7)*:*

Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց, մինչեւ հատուցէ զամենայն զպարտսն (ԺԸ. 34):

Յայսմանէ ուսանիմք, թէ շնորհ եւ ողորմութիւն միանգամ է, իսկ յետ այնորիկ ի նոյն չարիս գտեալ՝ նախանձ հրոյն է, որ ուտէ զհակառակորդն՝ ըստ սրբոյն Յովհաննու, թէ՝ «Գիտեցեալ զնա, ի նմանէ ողորմութիւն գտեալ՝ նոյնպէս վարիք, եւ զառաջինն եւս համարեսցի ձեզ, եւ ո՛չ ընկալջիք զողորմութիւն ի նմանէ»[1]*: Վասն որոյ յետ զթութեանն ետես զնա յանգթութիւն վարակեալ, բարկացաւ նմին՝ ո՛չ ըստ բնութեան, որ անախտանալին է, այլ ըստ տպաւորութեան ձեւանայ, որպէս զի զանձանց մերոց յանցանս ծանիցուք, թէ ո՛րքան ծանրագոյնք են, մինչ զի զանբարկանալին ի բարկութիւն շարժէ:*

«**Մատնեաց,- ասէ,- զնա դահճաց**», *այսինքն՝ սպասաւոր հրեշտակաց, որք* «**հնձաւոք**» *անուանեցան եւ չար գործոց մարդկան դատիչ*

[1] Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի, Գ

եւ կշտամբիչ, կամ բանսարկուին կամաց, որ ի սկզբանէ մարդասպանն է (տե՛ս Յովհ. Ը. 44)*: Նոցին բարկութեան տանջանացն եւ զսա մատնեալ հաւասարեաց՝ ըստ այնմ.* «Երթա՛յք ի հուրն, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա» (հմմտ. Մատթ. ԻԵ. 41)*, զի երախտեաւքն չեղեւ պիտանի, զեթ տանջանաւքն զգաստացցի:* «Մինչեւ հատուցէ, - ասէ, - զամենայն զպարտսն»*:* «**Մինչեւ**»*դ ո՛չ ժամանակական է, այլ յաւիտենական, իբր այն՝* «Ոչ ելցէ անտի, մինչեւ հատուցանիցէ զյետին բնիոնն» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 59)*, այսինքն՝ զբիւր պարտս քանքարացն՝ զերախտեացն համայն եւ զմեղացն, զխորհրդոց եւ զբանից եւ զգործոց, նաեւ զծառայակցացն խոշտանկանաց պատիժս:*

Նոյնպէս եւ Հայր իմ, որ յերկինս է, արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբաւր իւրում ի սրտից ձերոց զյանցանս նոցա (ԺԸ. 35):

Պարզեաց զառակն, թէ յաղագս որո՛յ իրաց արկ առաջի, որպէս զի իւրաքանչիւր ոք ի մէնջ թողուցումք ընկերին զյանցանս նոցա զբազմապատիկսն եւ զանչափսն, քանզի ո՛չ աւտարի, այլ եղբաւրն թողուցումք, որպէս զի մի՛ երկնառաք բարկութեանն մատնիցիմք: Բայց զի՞նչ է, թէ՝ «**Հայր իմ, որ յերկինս է**»*: Թուի, թէ ո՛չ արժանի համարեցաւ զայնպիսի մարդատեացսն Որդի Աստուծոյ կոչել եւ ասել «Հայր ձեր», այլ թէ՝* «**Հայր իմ**»*, զի որդի հարազատ, զնմանութիւն հաւրն բերէ, զի ողորմածն՝ ողորմածին որդի, եւ բարին՝ բարւոյն: Իսկ ասելն՝* «**ի սրտից ձերոց զյանցանս նոցա**»*՝ զի մի՛ յետ թողութեանն բանիւ՝ չարայուշ լինիցիմք մտաւք որպէս բազումք, այլ ի սրտէ թողուցումք: Նախ զիւրն, զի սիրտն է աղբիւր ամենայն չարեաց, որպէս զի առանց ըստգտանաց լինիցի, որով համարձակ առ Աստուած մատչիմք՝ ըստ Յովհաննու, եւ ապա զընկերացն, որպէս զի նա զմերն թողցէ զբիւրապատիկն եւ զծանրագոյնն: Տե՛ս եւ այսպէս. Թագաւոր զԱստուած ըստ՝ Դաւթի.* «Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Ապտուած է» (հմմտ. Սաղմ. ԽՁ. 3)*, բայց որչափ խնամէ զմարդ, իբրեւ զհայր է, իսկ յորժամ սկիզբն դատման առնէ, որպէս զթագաւոր է եւ արքայ երկնից, զի զարքայութեանն նմանութիւն աստ դատողութեամբն ցուցանէ: Իսկ պարտական բիւր քանքարոյ՝ հոգի, զի անձնիշխան կամաւք աղբիւր է չարեաց, եւ ծառայակից՝ մարմինն, եւ այսպէս ըստ կարգի կազմեա զբանդ, եթէ կամիցիս:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Ոմն պարտ էր բիւր տաղանդ, եւ ոմն՝ ճ. (100) դահեկան (Մատթ. ԺԸ. 24, 28):

Վասն բազում պատճառի զայս առակ ասաց.

*Ա. Նախ՝ զի մի կարծեսցեն, թէ մեծ եւ ծանր հրամայեաց Հ.ի՛ցն (70) Է. (7) թողուլ. ասա «**բիւր տաղանդ**» ասաց:*

Բ. Երկրորդ՝ զի [յ]որդորիցէ զմեզ ի թողութիւն ընկերին եւ երկնչել ի պատժոյն:

Գ. Երրորդ՝ զի մի մեծամտեսցին, որ թողուն ընկերին, զի եւ ինքեանք բազում թողութեանց կարաւտին:

Դ. Չորրորդ՝ եցոյց, թէ ոչ են ծանր թողութիւնք, այլ յոյժ դիւրին, յորժամ սէր ունիցին:

Ե. Հինգերորդ՝ եցոյց զառաւել մարդայսիրութիւնն Աստուծոյ, թէպէտ մեք զամենայն մեղս ընկերին չնորհեմք, այլ անբաւ է մարդասիրութիւն նորա, որպէս մեծ ծով առ կաթ մի ջրոյ:

Զ. Վեցերորդ՝ եցոյց այսու, թէ ոչ միայն չնորհաւք, այլ զատաստանաւ համար առնու ամենայն գործոց մարդկան՝ բարեաց եւ չարեաց:

Է. Եւթներորդ՝ ցուցանէ, թէ որչափ առաւել բազում է տաղանդ, քան զդահեկան եւ բիւր քան զճ. (100), այնքան առաւել եւ բազում է մեղանչումն մեր առ Աստուած, քան ընկերին առ մեզ:

Ը. Ութերորդ՝ ցուցանէ, թէ բազում պարտուց մեր աղաչելովն զԱստուած թողութիւն գտանեմք ասա: Եւ առաւել, քան զոր խնդրեմքն, տայ:

Թ. Իններորդ՝ ցուցանէ, թէ հրեշտակք հանապազ տեսանեն զգործս մեր՝ զբարիս եւ զչարս, եւ մատուցանեն Աստուծոյ, որպէս ասացն. «Հրեշտակք նոցա տեսանեն զերեսս Հաւր իմոյ» (հմմտ. Մատթ. ԺԸ. 10):

Ժ. Տասներորդ՝ ցուցանէ, թէ զառաջին պարգեւքն, որ եթող, դարձեալ պահանջէ ի մէնջ, յորժամ մեք ոչ թողումք ընկերին եւ կամ յառաջին մեղսն անզեղջ մնամք, որպէս ասէ Ննջումն Յոհաննու՝ «Եւ զառաջինն եւս պահանջեսցէ ի ձէնջ» *եւ այլն:*

ՎԱՍՆ ՄԵԾ ՄԵՂԱՑ

Հարց. Որքա՞ն է առաւել մեղանչումն առ Աստուած, քան առ մարդիկ:

Պատասխանի. Թէպէտ ամենայն մեղք յանցումն է հրամանին Աստուծոյ, այլ առ Աստուած առաւել մեղանչեմք, քան առ մարդոյ: Եւ յայտ է ի չորից.

Ա. Նախ՝ ի կերպարանացն. որքան մեծ է Աստուած, քան զմարդ, այնքան մեծ է Աստուծոյ մեղանչել, քան մարդոյ:

Բ. Երկրորդ՝ ի բազմութենէն. որ յաճախ մեղանչեմք Աստուծոյ, եւ սակաւ՝ մարդոյ:

Գ. Երրորդ՝ յակնածելոյն, զի յորժամ տեսանէ մարդ, դադարեմք ի մեղաց, եւ Աստուած հանապազ տեսանէ, եւ ոչ դադարեմք:

Դ. Չորրորդ՝ ի բազում երախ[տ]եացն սաստկանան մեղք, զի բազում ունիմք երախտիք Աստուծոյ, եւ լինիմք ապերախտ եւ յանցաւոր նմա: Իսկ ի մարդկանէ սակաւ երախտիս ունիմք:

Նմանեցաւ արքայութիւնն երկնից թագաւորի, որ արար համարս (հմմտ. ԺԸ. 23):

Այս ութերորդ կամ իններորդ նմանութիւն արքայութեանն ըստ կարգի առաջի սերմանացանին եւ այլոց: Գիտելի է, զի աստ ի ժամանակիս յայսմ գործն է եւ անդ ի յաւիտենին հատուցումն գործոց: Ոչ աստ հատուցումն գոյ եւ ոչ անդ՝ գործ: Այլ թէ ուր ուրէք երեւի, խրատէ եւ առհաւատչեայ անդ ի հատուցմանն: Վասն որոյ երկուցն ի միասին զաւրինակդ դնէ:

Հարց. Որպէ՞ս «**առնէ համարս**» (տե՛ս ԺԸ. 23):

Պատասխանի. Որպէս թագաւորք երկրի երիւք առնուն զհամարս. կամ վասն բանից, կամ գործոց, կամ ընչից, այսպէս եւ ամենայնի թագաւորն յայնմ աւուր.

Ա. Նախ՝ որ բանիւ ետ զաւրէնս:

Բ. Երկրորդ՝ որ գործով ետ իշխանութիւնս:

Գ. Երրորդ՝ որ ետ մեծութիւն:

Վասն բիւր տաղանդին

Հարց. Զի՞նչ է «**բիւր տաղանդն**» (հմմտ. ԺԸ. 24):

Պատասխանի. Տաղանդն կշռոյ անուն է, որպէս ասեն՝ ճԻԵ. (125) լիտր, եւ լիտրն ՀԲ. (72) դահեկան եւ կամ քանքար եւ մնաս լսի: Իսկ բիւրն Դ. (4) գլխաւոր թուով կատարի, որ է Ժ. (10), ճ. (100), Ռ. (1000) եւ բիւր:

Ա. Նախ՝ նշանակէ զայնոսիկ, որ յանցանեն մարմնով եւ հոգով եւ մտաւք: Որք մարմնով մեղանչեն, Ժ.ին (10) են պարտական, զի կրկին է զգայութիւնք մարմնոյ, եւ որք հոգով՝ զՃ. (100), եւ կամաւորքն՝ Ռ. (1000), եւ անզեղջն բիւր ունի զպարտս:

Բ. Երկրորդ՝ որք չորք հասակաւն յանցանեն, այսինքն՝ տղայութեամբ, երիտասարդութեամբ, կատարեալ հասակաւ եւ ծերութեամբ:

Գ. Երրորդ՝ չորք են աւրէնք, այսինքն՝ բնական, բանական, գրաւոր եւ Աւետարանն:

Դ. Զորրորդ՝ չորից երախտեացն նախասացեալ, որք յանցաւոր գտանին, բիւրուց են պարտական:

Եւ «կշիռքն»՝ գծանրութիւն մեղացն, եւ «քանքարն» զարծաթ շնորհացն ցուցանէ:

Հարց. Վասն է՞ր զկին եւ զորդիսն վաճառէ (հմմտ. ԺԸ. 25):

Պատասխանի. Ա. Նախ՝ ոչ թէ անգթութիւն է, այլ սպառնալիք, զի յաղաչանս յածիցէ: Ուստի յայտ է, յորժամ աղաչեաց, լուաւ եւ զպարտսն շնորհեաց:

Բ. Դարձեալ յիրաւի, զի նոքաւք յանցեաւ, նոքաւք եւ պատժեսցի, որպէս տանուտէրն ընդանեաւք եւ առաջնորդն՝ հետեւողաւք:

Գ. Եւ դարձեալ՝ զհոգի եւ զմարմին եւ զգայութիւնսն նշանակէ:

Իսկ «վաճառելն» է, որ աստ ապաշխարութեամբ քաւեմք:

Հարց. Վասն է՞ր ոչ յառաջ, քան զհամարսն եթող (հմմտ. ԺԸ. 27):

Պատասխանի. Ա. Նախ՝ զի ցուցցէ, թէ որչափ պարտուց ազատեաց զնա:

Բ. Երկրորդ՝ «համար» զխոստովանութիւնն նշանակէ:

Հարց. Վասն է՞ր յետ աղաչելոյն շնորհեաց նմա (հմմտ. ԺԸ. 26-27):

Պատասխանի. Եւ յառաջ, քան զաղաչելն կամի զտալն, այլ վասն երից կամի զաղաչելն.

Ա. Նախ՝ որ փոքր աղաչելովն մեծ պարգեւէ:

Բ. Երկրորդ՝ զի եւ մեք նպաստ լիցուք թողութեան մերում[1]*:*

Գ. Երրորդ՝ զի եւ յետ թողութեան զպսակն առցուք: Այլ ամենայն ձիր եւ շնորհք ի գթութեանց նորա է: Վասն այն ասէ. «Գթացաւ եւ եթող զպարտսն» (հմմտ. ԺԸ. 27)*:*

[1] Գ մերում թողութեամբ (Գ՛ լս. թողութեան մերում)

Վասն հարիւր դահեկանին

Հարցումն. Զի՞նչ է «Ճ. դահեկան» (ԺԸ. 28)*:*

Պատասխանի. Պարտք ընկերին փոքր է, քան զպարտս Աստուծոյ, որպէս Ճ. (100) դահեկանն առ բիւր տաղանդն: Զի երիւք է պարտական մարդոյ, այսինքն՝ բանիւ կամ գործով կամ ընչիւք:

Եւ նշանակէ նիւթ արծաթոյն՝ զբանն, եւ վեց դանգն՝ զգործն, եւ դահեկանն՝ զինչս: Եւ հարիւրն, զի Ժ. (10) զգայութեամբ եւ կատարեալ մեղանչեմք:

Հարց. Վասն է՞ր ոչ լուաւ (ԺԸ. 30)*:*

Պատասխանի. Ա. Նախ՝ վասն խստութեան սրտին:

Բ. Երկրորդ՝ վասն ագահութեան արծաթոյն:

Գ. Երրորդ՝ վասն ոխակալ մտացն:

Եւ ոչ էր հաւասար երկուց պարտապանացն.

Ա. Նախ՝ ի տիպքն. զի մին բիւր տաղանդ, եւ միւսն՝ Ճ. (100) դահեկան:

Բ. Երկրորդ՝ ի դէմքն. մինն՝ տէր, եւ մինն՝ ծառայակից նմա:

Գ. Երրորդ՝ ի շնորհքն. միոյն կատարեալ թողաւ, եւ մինն ժամանակ խնդրէր եւ ոչ գտաւ, քան զգազանս առաւել գտաւ՝ խեղդելովն: Եւ «արկ ի բանտ», որ է անարժան կապանք:

Իսկ «ծառայակիցք» *հրեշտակք են՝ պատմողք նմա.* «Հրեշտակք նոցա տեսանեն զերեսս Հաւր» (հմմտ. Մատթ. ԺԸ. 10), ասէ:

Կոչեաց զնա եւ ասէ՝ ծառայ չար (ԺԸ. 32)*:*

Առաջին կոչելն աստ է, իսկ վերջինս՝ ի դատաստանն: Քաղցրաբար է, եւ այս՝ խստութեամբ: Տե՛ս, զի դատաստանաւ եւ իրաւամբ հանէ ի նմանէ զամենայն պարգեւսն: Մանաւանդ, թէ ինքն, որ է առն, նա դարձուցանէ, որպէս զքանքարն, որ ոչ շահեցաւ:

Հարց. Զի՞նչ է «ծառայ չար»*:*

Պատասխանի.

Ա. Նախ՝ Ընդդէմ բարոյն:

Բ. Երկրորդ՝ թշնամեաց է:

Գ. Երրորդ՝ խիստ եւ բարկացողն է:

Դ. Զորրորդ՝ ստուգաբանի՝ ծառայ չոր եւ անպտուղ:

Տե՛ս, մինչ բիւր տաղանտ պարտէր, ոչ կոչէր «չար», այլ զի ոչ ողորմեցաւ. այս է, զի անողորմն եւ ոխակալն առաւել չար է, քան զմեղաւորն:

Եւ մատնեաց զնա յաւիտենից տանջանացն: Տե՛ս, զի Դ. վնաս եղեւ յոչ ողորմելոյն.

Ա. Նախ՝ զթողեալ պարտսն խնդրեաց:

Բ. Երկրորդ՝ ծառայ չար կոչեցաւ:

Գ. Երրորդ՝ տանջանեաց մատնեաց:

Դ. Չորրորդ՝ յորդիութենէն Աստուծոյ զրկեցաւ, զի Հայր իմ կոչեաց եւ ոչ ձեր, վասն զի բարերար եւ մարդասէր է Հայրն, եւ չարն եւ մարդատեացն նմա որդի ոչ կոչի:

Եւ այսու Բ. (2) իրս խնդրէ ի մէնջ.

[Ա.] Նախ՝ զանձանց մեղս ըստգտանել եւ զղջանալ:

[Բ.] Երկրորդ՝ զայլոց մեղս թողուլ ի սրտէ եւ ոչ միայն ի լեզուէ: Այսքան առ այս:

ՎԱՄՆ ԱՅԳԻՈՅՆ ԵՒ ՄՇԱԿԱՅ

Մատթ. Ի. 1-16

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Նման է արքայութիւն Աստուծոյ մարդոյ տանուտեառն (Մատթ. հմմտ. Ի. 1):

«**Մարդ**» *Աստուած ասի ի բազում Գիրս Աստուածայինս, վասն զգենլոյն Որդւոյն Աստուծոյ զպատկեր մարդկան, եւ* «**տանուտէր**» *է տանս այսմիկ, զորմէ առաքեալն ասաց.* «Մովսէս հաւատարիմ է յամենայն տան նորա, այլ Քրիստոս իբրեւ որդի ի վերա[յ] տան իւրոյ, որոյ տուն մեք եմք» (հմմտ. Եբր. Գ. 5-6)*:*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

[Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ ել ընդ առաւաւտս ի վարձու ունել մշակս յայգի իւր] (Մատթ. Ի. 1):

Այր ոմն տնկեաց այգի (Ի. 9):

«**Այգի**» *զհրամանն Աստուծոյ կոչէ եւ զպատուիրանն եւ ժամանակ գործոց զկեանս աշխարհիս:* «**Մշակս**»՝ *զազգի ազգի կերպարանս կոչեցելոցն ի հրամանս, իսկ* «**երեք ժամուն**» (Մատթ. Ի. 3) *եւ ի հասարակ աւուրն եւ* «**Թ. ժամուն**»*, որ այլ եւ այլ տիս հասակացն մատչիցին եւ ընտիրք գտանիցին: Եւ է՞ր վասն արդեւք զամենեսեան միանգամայն վաղվաղակի ոչ կալաւ ի վարձու, զի յորժամ հաւանելոց էին, յայնժամ կոչեաց զնոսա, որպէս եւ զՊաւղոս, յորժամ հաւանելոց էր, յայնժամ կոչեաց* (տե՛ս Գործք Թ. 1-19)*: Եւ զի՞ զամենեսին ի առաջին հասակէն կամի ձգել առ ինքն. զայն առակս յայտ առնէ:*

«**Ել,- ասէ,- ընդ առաւաւտս ունել մշակս ի վարձու**» (Ի. 1):

[Յ]այտ իսկ է, թէ անդբստին յառաջին հասակին կոչէ, այլ զայս առակ, որ երեր ի մէջ, զի մի ոք ասիցէ, թէ ոչ կոչեցա ես, մինչ տղայն էի, չեմ այսուհետեւ ընդունելի: Յայտ արար, թէ՝ յորժամ դառնայ մարդ, յամենայն ժամ ընդունելի լինի: Եւ զի՞ ոչ սկսաւ տալ նախ առաջնոցն, զի յուսացեալ էին վասն վարձուց իւրեանց.

զի մի՛ թուի վերջնոցն, թէ՝ **«պակաս ինձ առնուցուն»**, *սկսաւ տալ նախ վերջնոցն:*

Դարձեալ, զի եկ նա ընդ առաւաւտն, եւ յերրորդն եւ ի Զ. (6)ն եւ յեւթն եւ ի ԱԺ. (11)ն (հմմտ. Ի. 6):

Լսի վասն ի սկզբան քարոզութեան նորա, իբրեւ կարգելով մինչեւ ի խաչելութեան անդ, զի ի ԱԺ. (11) ժամու անդ եմուտ աւազակն յադին դրախտն, եւ զի մի պատուհասեալ լիցի վասն այսր, յայտ արար զկամս իւր, զի թէ է՛ր ուրուք ի վարձու կալեալ զնայ, վաստակէր նա: Ո՛չ ոք, ասէ, կալաւ զմեզ ի վարձու, որպէս տուաք մեք աստուածութեանն, որ ինչ խոնարհագոյն է, քան զնա, տայ նա մեզ, ինչ որ վերագոյն է քան զմեզ: Վարձեցեալ եղաք ի գործ վաստակոց ըստ զաւրութեան մերում, այլ հրաւիրեալ եղաք ի հատուցումն վարձուց աւելի, քան զզաւրութիւն մեր: Այլ ի վաղջան կատարածի տացեն նմա փառս հաւատացեալք՝ ըստ զաւրութեան իւրեանց, եւ ապստամբքն ըստ բռնութեանն, որ կայ ի վերայ նոցա: Ի գործ այգւոյն ո՛չ ողորմութիւն նորա պատուհասեցաւ եւ ոչ ստուգութիւն նորա եպերեցաւ, ստուգութեամբ իւրով ետ որպէս եւ ուխտեացն եւ ողորմութեամբ իւրով գթացաւ, որպէս եւ կամեցաւ: Այլվարանք այն են, թէ յայնչափ վաստակոց վերայ մաւտ ի սպառ յախտէ նախանձու վնասեցին ոմանք, իբրեւ տեսին, ասէ, թէ ի բարութիւնս վայելէին, ուստի իւրեանց չէր ինչ վնաս լինելոց, եւ ոչ նոքաւք իւրեանց վարձն նուազէր ինչս: Զար էին եւ խանդային ընդ այլոցն բարութիւնս, որ նախանձու միայն եւ չարակնութեան նշանակ էր: Եւ այլ զինչ աւելի քան զայն խնդրիցես, յորժամ եւ տանուտէրն իսկ վասն նոցա իրաւունս տայէ:

Ո՞չ, ասէ. **«Դէնար ի միոջ հատէր զվարձն: Առ զքոյդ եւ գնայ»** (հմմտ. Ի. 13-14):

Եւ «առ». այս զի՞նչ իցէ ասել: Զիք ոք, որ այնպէս իրաւունս կամի ցուցանել կամ մեղադիր լինել յարքայութեանն երկնից, զի սուրբ է ի նախանձու եւ ի չարակնութենէ այն բնակութիւն, զի թէ աստ են իսկ սուրբք եւ զանձինս եւս անգամ դնէին ի վերայ մեղաւորաց, որ չափ եւս առաւել էր անդ: Եւ է՞ր վասն այնպիսի կերպարանաւք յարդարեաց զբանն, զի յաւժարութիւնս յորդորիցէ զայնոսիկ, որք ի վաղջանի եւ ծերութեան իցեն: «Դառնալ» եւ լինել

պիտանիս. եւ մի այնպէս կարծել, թէ ընդ վայր հարեալ իցեն, եւ չիցէ ինչ հնար ուղղութեան:

Այսպէս,- ասէ,- եղիցին առաջինք յետինք, եւ յետինք՝ առաջինք, զի բազումք են կոչեցեալք եւ սակաւք են ընտրեալք (Ի. 16-17):

Թուի ինձ, թէ զհրէիցն իսկ ակնարկիցէ եւ զհաւատացելոց, որք յառաջնումն պայծառագոյնք երեւեցան եւ յետոյ ծուլանայցեն եւ յետս երթիցեն եւ զայլոց, որ ի չարեացն զերծանիցին եւ անցուցանիցեն ընդ բազում առաքինութեամբ: Եւ Տէր մեր վասն այնորիկ առակեաց զառակն.

«Մի՞թէ չունիմ իշխանութիւն գործել ի տան իմում զինչ եւ կամիցիմ» (հմմտ. Ի. 16):

Զի թէ ի վերայ դարու եւ ի վերայ վաղջանի կատարի, վասն է՞ր եմուտ այս, զի ասէ, թէ.

«Ակն քո չար է» (Ի. 15):

Ո՞ ետ թոյլ վերջին արդարոցն կեալ որպէս եւ առաջինքն, եւ ո՛չ վաստակեցին. կամ ի նոսին իսկ յայնոսիկ, որ եղենն կալեալ ի վարձու ընդ առաւաւտս, ո՛չ գոյին ի նոսա, որ տղայք մեռան: Ահաւասիկ՝ Աբէլ. առաջին տղա մեռաւ, տրտնջէ վասն նորա Սէթ, որ եղեւ փոխանակ նորա (տես Ծնն. Դ. 25):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ եկ ընդ առաւաւտս ի վարձու ունել մշակս յայգի իւր (Մատթ. Ի. 1):

Դէմք առակի ոչ տան ամենայն իրաւք զտեսութեանն լրումն, այլ միայն առաջնորդ մտացն լինիցին, զոր եւ մեք արասցուք՝ հետամուտ լինելով բանիցս, թերեւս ըստ կարգի լուծանել մարթասցուք: Արդ՝ **«տուն»** *անուանէ զաշխարհս եւ* **«տէր տանս»**՝ *զԱրարիչն սորին՝ ըստ առաքելոյ.* «Մովսէս հաւատարիմ ի վերայ տան նորա» (հմմտ. Եբր. Գ. 5), *իսկ Որդին տէր է տան աշխարհիս, քանզի որպէս յայլում տեղւոջ «մեծատուն» զինքն անուանեաց եւ զընդ ձեռամբ անկեալսն* **«տնտես»** *կոչեաց* (Ղուկ. ԺԶ. 1-8), *ասա* **«տանուտէր»** *եւ* **«մշակ»** *յորջորջէ:* **«Եկ ընդ առաւաւտս ի վարձու ունել մշակս յայգի**

իւր»: «Առաւաւտ» *կամ զսկիզբն արարչութեանն ասէ, յորում ստեղծաւ լոյս եւ փարատեցաւ խաւար, եւ վարձեցաւ Ադամ աւրինաւք ի դրախտին, կամ յԱդամայ մինչեւ ի Նոյ, զի սկիզբն էր աշխարհի, եւ կամ զառաջին գալուստն, որ առաւաւտ ծագեցաւ մեզ յետ նսեմութեան գիշերոյ Աւրինացն եւ մեղացն, ուստի ել յարեւելից ի Հաւրէ փեսայաւրէն ձեւով, այսինքն՝ մարմնական գեղով, եւ երեւելով լուսաւորեաց զմեզ, կամ զլինելութիւն իւրաքանչիւր մարդոյ ծննդեամբ յաշխարհս: Իսկ «այգի»՝ զհրամանս Աւրինացն կամ զժողովուրդն, ըստ մարգարէին, թէ՝* «Այգի եղեւ» (Ես. Ե. 1), *այլեւ զսուրբ եկեղեցի, յորմէ բղխէ զգինի զմայլեցուցիչ երկհամ՝ բաւական գոլ յուրախութիւն երկնաւորաց եւ երկրաւորաց:*

Եւ «մշակ»՝ զարդարսն, որ եղեն առաջնորդ ժողովրդեանն, կամ զսոսին իսկ զմարդիկ՝ զկոչեցեալս յաւրէնս ի սկզբանէ մինչ ի կատարած աշխարհի, եւ զայս ոչ առանց վարձու, այլ նախ եւ առաջին վարձ՝ նոյն ինքն հանդէսն, զի որ արասցէ զայս, կեցցէ սոքաւք: Եւ երկրորդ՝ հարիւրապատիկն, զորս ընդունին կատարիչք աւրինացն, որպէս հին Իսրայէլ՝ զպարգեւական երկրին ժառանգութիւնն, եւ սուրբք ամենայն՝ զբարգաւաճիլն ի մարդկանէ: Եւ երրորդ՝ զմշտնջենաւոր կենացն վայելչութիւն, ըստ այնմ՝ «Վարձք ձեր բազում են յերկինս» (Մատթ. Ե. 12)*: Եւ չորրորդ՝ զճշմարիտն ասել զբանական հոգւոյն պայծառութիւն, զոր «դահեկան» ասէ, զի ամենայն աւրէնք յաղագս այնորիկ եղան, զի զաղտեղեալ պատկեր հոգւոյն վերստին ձուլեսցեն եւ կատարեալս ցուցցեն զմարդն ըստ Աստուծոյ: Եւ հինգերորդ՝ իւրաքանչիւր առաջնորդի կամ մարդոյ կամք եւ դիտաւորութիւն, զոր ինչ խնդրեաց հոգեւոր կամ մարմնաւոր՝ բարի:*

Եւ արկ վարձս մշակացն աւուրն դահեկան եւ առաքեաց զնոսա յայգի իւր (Ի. 2):

«Աւր»՝ զբովանդակ կենցաղս մարդկան ասէ, որ ի ծննդենէ մինչեւ ի մահ ընթանամք: Եւ ո՛չ վայրապար «աւր» ասէ, այլ քանզի աւրինաւքն Աստուծոյ լուսաւորեալ է իբր արեգակամբ ճանապարհս մեր՝ բնականաւն եւ գրաւորականաւն եւ աւետարանականաւն: Քանզի աւրն լոյս ասի՝ ըստ այնմ. «Պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց» (Սաղմ. ԺԸ. 9), *եւ* «Ճրագ են բանք քո ոտից իմոց» (Սաղմ. ՃԺԸ. 105), *եւ* «Լոյս եւ ճանապարհ կենաց» (Առակ. Զ. 23), *եւ թէ՝* «Լոյս

են հրամանք քո ի վերայ երկրի» (Ես. ԻԶ. 9)*: Բայց դու տե՛ս զմարդասիրութիւնն, զի նախ զվարձս մշակացն դնէ եւ ապա յայգի Աւրինացն առաքէ եւ կամ ի վերակացութիւն ժողովրդեանն, որպէս զի վարձուցն ակնկալութեամբ թեթեւագոյն զճգունսն բերիցեն, եւ տքնեալ վասն ոգւոց: Եւ վարձս՝ որպէս ասացաք, է հոգւոյն մաքրութիւն, որ եւ երանութիւն է ըստ Դաւթայ, թէ՝* «Երանեալ է այր, որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց..., այլ յաւրէնս Տեառն են կամք նորա..., եղիցի նա որպէս ծառ, որ տնկեալ է ի գնացս ջուրց» (Սաղմ. Ա. 1-3), *կամ բաղձանք մտաց, զոր խնդրեաց ոք յԱստուծոյ:*

Եւ ելեալ զերորդ ժամու՝ եկեալ այլս, զի կային դատարկք ի հրապարակս: Ասէ եւ ցնոսա. «Երթայք եւ դո՛ւք յայգի իմ, եւ որ ինչ արժան իցէ, տայց ձեզ»: Գնացին եւ նոքա (Ի. 3-5):

Պէսպէս ժամուքս, զոր առադրէ, կամ զազգի ազգի հասակս ասէ, կամ զպէսպէս կերպարանս կոչեցելոցն, կամ զայլեւայլ ժամանակս, յորում կոչեցան եւ ստոյգ ի Նոյէ մինչեւ յԱբրահամ իմա՛, զորս քննելի է, թէ ընդէ՞ր ոչ զամենեսեան միահաղոյն կալաւ ի վարձու: Գիտելի է, զի յորում ժամանակի եւ յեղանակի եւ ի հասակի հաւանելոց էին, յայնժամ կոչեաց զնոսա, որպէս զՊաւղոս, քանզի տանուտէրն յառաջին հասակէն եւ ի ժամանակէն կամէր յինքն ձգել զմենեսեան, յայտ է յառաւաւտուն ելանելոյն, սակայն եկեալքն այնպէս գային: Այլեւ զայն ասելի է, զի ո՛չ ամենեքին միանգամայն ծնանին յաշխարհի, այլ ըստ կարգի. այսպէս եւ կոչումն լինի: Բայց զի՞նչ է այն՝ «զի կային,- ասէ,- դատրակք ի հրապարակս»*: Թուի զնոսա ասել, որ ոչ չարեաց ընդունակք էին, այլեւ ոչ աւրէնս ունէին, բայց միայն ի հրապարակս աշխարհիս դեգերեալք կային՝ հայելով ի լուսաւորս եւ յաստեղս եւ յայլ տարերս՝ զցանկութիւն Աստուծոյ ունէին եւ ոչ գտանէին, որպէս Աբրահամն այն, վասն որոյ յորժամ կոչեցաւ, յաւժարութեամբ եկն, եւ ըստ արժանաւորութեան հաւատոյն ընկալաւ զարդարութիւն հանդերձ իւրայնովքն: Կամ զուխտ թլփատութեանն ասէ:*

Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու եւ զինն ժամու՝ արար այնպէս (Ի. 5)**:**

Այսու զկոչումն, որ մինչ ի Մոսէս եւ ի Դաւիթ եղեւ, նշանակէ եւ ի Դաւթէ հանդերձ մարգարէիքն մինչ ի ծնունդ Բանին, վասն այնորիկ ոչ բաժանէ զժամսն, այլ առ ընթեր միմեանց կարգէ, զի

Աւրէնք եւ մարգարէք ոչ են զատուցեալք ի միմեանց: Քանզի յԱբրահամէ եւ ի Մոսիսէ սկսեալ մինչ ի Յովհաննէս Մկրտիչ ոչ պակասեաց աստուածապաշտութիւնն կոչմամբ մարգարէիցն՝ ըստ այնմ. «Աւրէնք եւ մարգարէք մինչեւ ցՅովհաննէս» (Մատթ. ԺԱ. 13)*:*

Եւ զմեծասաներորդ ժամու ելեալ՝ եգիպտ այլս, զի կային դատարկք. Ասէ ցնոսա. «Ընդէ՞ր կայք ասր զաւրս ցերեկ դատարկք»: Ասեն ցնա. «Զի ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու»: Ասէ ցնոսա. «Երթայք եւ դուք յայգին, եւ որ ինչ արժան է՝ առնուցուք» (Ի. 6-7):

Թէպէտ ժամուցս բաժանմամբ զհասակն ասիցէ ոք յարմարագոյնս լինել, իբր թէ ոմանք ի տղայութեան կոչեցան իբր Տիմոթէոս, առ որ գրեաց Պաւղոս, թէ՝ «Ի մանկութենէ գիտես զԳիրս Սուրբս» (Բ. Տիմ. Գ. 15)*, եւ այլք ի պատանեկութեան, եւ կէսք յերիտասարդութեան, եւ ոմանք ի կատարելութեան, եւ ի մետասան ժամուս, որ ասացաւ՝ ի ծերութեան, որպէս աւազակն ի խաչելութեան նորա: Բայց ինձ զժամանակն հաճելի է, որպէս ասացի, քանզի մետասան ժամաւս յայտնապէս զգալուստն իւր ցուցանէ, որ ի լրման ժամանակի կենցաղոյս, ըստ առաքելոյ՝ յայտնեցաւ մարմնով* (տե՛ս Գաղ. Դ. 4)*, ելեալ ի Հաւրէ եւ եկեալ յաշխարհս, որ մետասան ժամ անուանի մինչ ի կատարած աշխարհի: Վասն որոյ ասէ՝ «եգիպտ այլս». այսինքն՝ աւտարացեալս յԱւրինացն, որք են հեթանոսք, զորս եգիպտ՝ ըստ այնմ.* «Եղբայրս քո մեռեալ էր եւ եկ[ե]աց, կորուսեալ էր եւ գտաւ» (Ղուկ. ԺԵ. 32)*: Եւ* **«զի կային դատարկք»**, *որպէս Կուռնելիոսն այն (տե՛ս Գործք Ժ. 1), եւ կամ այլք իբրեւ զնա, որք թէ յետոյ կոչեցան, բայց զի զանցեալ ժամանակն ոչ ի չարիս պարապեցան, այլ դատարկք ի մեղաց մնացին, զորս կոչեաց՝ ասելով, թէ՝* **«Ընդէ՞ր կայք ասր զաւրս ցերեկ դատարկք»**: *Կամ թէ՝ զգործոյ ժամանակս դատարկ անցուցիք, կամ թէ՝ անցեալ է կենցաղս՝ ուսուցանէ.* «Այժմ մինչ զլոյս ընդ ձեզ ունիք, գնացէք ի լոյս» (հմմտ. Յովհ. ԺԲ. 35) *հաւատոյ եւ աւրինաց:*

Ասեն ցնա. «Զի ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու»: *Զի մի՛ պատուհասեսցին, յայտ արարին զկամս իւրեանց, զի թէ ուրուք ի վարձու կալեալ էր, վաստակեալ էին եւ նոքա, բայց վասն պակասութեան ուսուցչացն, ոչ եկին ի կատարելութիւն, քանզի* «զիա՞դդ հաւատացեն, - ասէ, - եթէ ոչ լուիցեն» (հմմտ. Հռոմ. Ժ. 14)*, ուստի յայտ է, թէ ունէին զյաւժարութիւնն եւ կոչողի սպասէին: Որոց ասէ.* **«Երթայք եւ դո՛ւք յայգին, եւ որ ինչ արժան է, առնուցուք»:** *Որպէս զի մի՛ ոք ասիցէ, թէ՝ ոչ կոչեցայ ես մինչ տղայն էի, այժմ ոչ եմ ընդունելի, յայտ առնէ այսու, թէ յորում ժամու եւ դառնայ ոք, ընդունելի է Աստուծոյ, քանզի արդար դատաւոր է Աստուած՝ հատուցանել իւրաքանչիւր ըստ արժանեաց իւրեանց: Զի յորժամ ընծայեմք մեք աստծուածութեանն, որ ինչ խոնարհագոյն է, քան զնա, տայ նա մեզ որ ինչ վերագոյն է քան զմեզ եւ վարձեալ եղաք ի գործ վաստակոյ ըստ զաւրութեան մերում, այլեւ հրաւիրեցաք ի հատուցումն վարձուց աւելի, քան զզաւրութիւն մեր:*

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր. «Կոչեա՛ զմշակսն եւ տո՛ւր նոցա վարձս՝ սկսեալ ի յետնոցն մինչեւ ցառաջինսն» (Ի. 8):

Երեկոյ ոմանք զաւրհասական մահն իւրաքանչիւր ումեք ասեն, յորում ոչ է այլ ժամանակ գործոյ, եւ զի ի վախճանին զհատուցումն իւր տեսանէ ամենայն ոք: Բայց ինձ թուի, թէ լրումն յաւիտենի կենցաղոյս ասէ, յորում իւրաքանչիւր ումեք արժանիքն հատուցանին, ըստ առաքելոյ՝ «Ասպուծոյ լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին» (Եբր. ԺԱ. 40)*: Իսկ* **«գաւառապետ»** *կամ զհրեշտակս ասէ, որոց միջնորդութեամբն զԱւրէնսն ընկալաք՝ ըստ այնմ՝* «Առէք զԱւրէնս ի հրամանս հրեշտակաց եւ ոչ պահեցէք» (Գործք Է. 53)*, կամ զառաքեալս եւ զմարգարէս, որք պատգամաւորք եւ վերակացուք կտակարանացն եղեն:* **«Կոչեա՛,- ասէ,- զմշակսն»**, *այսինքն՝ ի մարմնոյ կամ ի հոգոյ, քանզի* «Ինքնին Տէր հրամանաւ հրեշտակապետի ի ձայն փողոյ իջանէ, եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն» (հմմտ. Ա. Թես. Դ. 15)*, եւ թէ՝* «Առաքեսցէ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցեն զընտրեալս նորա ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նորա» (հմմտ, Մատթ. ԻԴ. 31):

«Տուր նոցա,- ասէ,- վարձս՝ սկսեալ ի յետնոցն մինչեւ ցառաջինսն»: *Ասի ուսանիմք, թէ ամենայն տուրք բարիք թէպէտ յԱստուծոյ իջանէ* (տե՛ս Յակ. Ա. 17) *ի մարմնի եւ զկնի, սակայն ըստ կարգի ի ձեռն հրեշտակաց ի մարդիկ իջանէ, քանզի եւ նոքա են, որ զորոմունս խրձունս կապեն եւ ի հուր արկանեն* (տե՛ս Մատթ. ԺԳ. 30)*: Բայց ընդէ՞ր ի յետնոցն սկսեալ. զի առաջինքն յուսացեալ էին վարձուց իւրեանց, արդ, զի մի՛ թուեսցի վերջնոցն, թէ պակաս ինչ առնուցուն, նախ զնոցայն ետ: Եւ ա՛յլ ազգ. ցուցանէ զպատիւս վերջնոցն, որք ի Քրիստոս հաւատացին, քանզի մարմին եւ անդամք*

յայգին, եւ որ ինչ արժան է, առնուցուք»: *Որպէս զի մի՛ ոք ասիցէ, թէ՝ ոչ կոչեցայ ես մինչ տղայն էի, այժմ ոչ եմ ընդունելի, յայտ առնէ այսու, թէ յորում ժամու եւ դառնայ ոք, ընդունելի է Աստուծոյ, քանզի արդար դատաւոր է Աստուած՝ հատուցանել իւրաքանչիւր ըստ արժանեաց իւրեանց: Զի յորժամ ընծայեմք մեք աստծուածութեանն, որ ինչ խոնարհագոյն է, քան զնա, տայ նա մեզ որ ինչ վերագոյն է քան զմեզ եւ վարձեալ եղաք ի գործ վաստակոյ ըստ զաւրութեան մերում, այլեւ հրաւիրեցաք ի հատուցումն վարձուց աւելի, քան զզաւրութիւն մեր:*

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր. «Կոչեա՛ զմշակսն եւ տո՛ւր նոցա վարձս՝ սկսեալ ի յետնոցն մինչեւ ցառաջինսն» (Ի. 8):

Երեկոյ ոմանք զաւրհասական մահն իւրաքանչիւր ումեք ասեն, յորում ոչ է այլ ժամանակ գործոյ, եւ զի ի վախճանին զհատուցումն իւր տեսանէ ամենայն ոք: Բայց ինձ թուի, թէ լրումն յաւիտենի կենցաղոյս ասէ, յորում իւրաքանչիւր ումեք արժանիքն հատուցանին, ըստ առաքելոյ՝ «Ասպուծոյ լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին» (Եբր. ԺԱ. 40)*: Իսկ* **«գաւառապետ»** *կամ զհրեշտակս ասէ, որոց միջնորդութեամբն զԱւրէնսն ընկալաք՝ ըստ այնմ՝* «Առէք զԱւրէնս ի հրամանս հրեշտակաց եւ ոչ պահեցէք» (Գործք Է. 53)*, կամ զառաքեալս եւ զմարգարէս, որք պատգամաւորք եւ վերակացուք կտակարանացն եղեն:* **«Կոչեա՛,- ասէ,- զմշակսն»**, *այսինքն՝ ի մարմնոյ կամ ի հոգոյ, քանզի* «Ինքնին Տէր հրամանաւ հրեշտակապետի ի ձայն փողոյ իջանէ, եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն» (հմմտ. Ա. Թես. Դ. 15)*, եւ թէ՝* «Առաքեսցէ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցեն զընտրեալս նորա ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նորա» (հմմտ, Մատթ. ԻԴ. 31):

«Տուր նոցա,- ասէ,- վարձս՝ սկսեալ ի յետնոցն մինչեւ ցառաջինսն»: *Ասի ուսանիմք, թէ ամենայն տուրք բարիք թէպէտ յԱստուծոյ իջանէ* (տե՛ս Յակ. Ա. 17) *ի մարմնի եւ զկնի, սակայն ըստ կարգի ի ձեռն հրեշտակաց ի մարդիկ իջանէ, քանզի եւ նոքա են, որ զորոմունս խրձունս կապեն եւ ի հուր արկանեն* (տե՛ս Մատթ. ԺԳ. 30)*: Բայց ընդէ՞ր ի յետնոցն սկսեալ. զի առաջինքն յուսացեալ էին վարձուց իւրեանց, արդ, զի մի՛ թուեսցի վերջնոցն, թէ պակաս ինչ առնուցուն, նախ զնոցայն ետ: Եւ ա՛յլ ազգ. ցուցանէ զպատիւս վերջնոցն, որք ի Քրիստոս հաւատացին, քանզի մարմին եւ անդամք*

նորա եղեն՝ ըստ այնմ, թէ՝ «Փոքրիկն մեծ է յարքայութեանն» (հմմտ. Մատթ. ԺԱ. 11): *Քանզի առաջինքն խորհրդով միայն միացան ի Տէր մեր եւ աւրինակաւ, իսկ վերջինքն՝ եկեղեցի հեթանոսաց՝ խորհրդով եւ բանիւ եւ գործով եւ ճշմարտութեամբ, այլեւ արեամբ եւ վկայական նահատակութեամբ, որպէս եւ գրեալ է.* «Բազում դպրերք սպացան մեծութիւն..., բայց դու առաւել եղեր եւ անցուցեր զամենեքումբք» (Առակ. ԼԶ. 29)*: Եւ ես եւ Յովհաննէս, զի կային առաջի աթոռոյն եւ գառինն՝ արկեալ զինքեամբ արկանելի սպիտակ* (տե՛ս Յայտ. Է. 9), *նաեւ Պաւղոս ընդարձակս իմաստասիրէ վասն գերազանցութեան հեթանոսաց* (տե՛ս Հռոմ. Գ. 29, 24-30, Ժ. 12): *Դարձեալ՝ սկսանելն ի յետնոցն զողորմութիւնն Աստուծոյ յուշ առնէ, զի հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱստուած, քանզի ի գործ այգւոյն որպէս ստուգութիւնն ոչ եպերեցաւ՝ տալով առաջնոցն որպէս ուխտեաց, այսպէս ողորմութիւն նորա ոչ պատուհասեցաւ գթալով ի յետինսն նախ՝ որպէս կամեցաւ, քանզի* «ողորմութիւնք եւ ճշմարտութիւնք գնան առաջի երեսաց նորա» (հմմտ. Սաղմ. ՁԸ. 15)*:*

Իբրեւ եկին որք զմեկտասաներորդ ժամուն, եւ առին մէն մի դահեկան (Ի. 9):

Նախ՝ զի մի՛ առաջինքն մեծամտիցեն՝ նախատելով զվերջինսն, եւ մի՛ սոքա վհատիցին, այլ զի ուսցին, թէ գոյ կարողութիւն վերջին մտելոցն յայգի Աւրինացն եւ հաւատոյն՝ ըստ ժամանակի կամ ըստ հասակի ի սակաւ ժամանակս զբովանդակ մաքրութիւն հոգւոյ ստանալ իւրաքանչիւր ոք առանձին, զոր «դահեկանն» *նշանակէ, որով ի տեսութիւնն Աստուծոյ ձգի մաքուր սրտիւ: Եւ երկրորդ՝ զի որ առաջինքն Աւրինաւքն սրբեցան, նա աւանիկ յետինքն ի մետասան ժամու մկրտութեամբն պայծառացան: Եւ երրորդ՝ ուսուցանէ, թէ ի հանդերձեալն նախ արդարքն զփառս իւրեանց ժառանգեն եւ ապա մեղաւորք՝ զտանջանս՝ ըստ առաքելոյ, զի ասէ.* «Փառք եւ պատիւ ի վերայ ամենայնի, որ գործէ զբարի, եւ նեղութիւն եւ անձկութիւն, որ գործէ զչար» (հմմտ. Հռոմ. Բ. 7-9), *որպէս զի կրկին լիցի յանցաւորացն պատիժ. մի՝ ի տեսլենէ արդարոցն փառաց, թէ յո՛րպիսի իրաց զրկեցան եւ ապա՝ զկորուստ անձանցն, զոր պատրաստեցին յաւժարութեամբ:*

Եկեալ եւ առաջինքն՝ համարէին, թէ աւելի առնուցուն, եւ առին մէն մի դահեկան եւ նոքա (Ի. 10):

Որք յԱւրէնս եկին կամ ի հաւատս նախ քան զայլս ժամանակաւ եւ կամ հասակաւ, ընկալան բարիս ըստ Աւրինացն խոստման, սակայն նախանձու ախտիւ ախտացան, որպէս զբազումս է տեսանել, մանաւանդ զկուսանս եւ զճգնաւորս, որք այսպիսի ախտիւ յղփանան՝ հայելով յընկերացն յառաջատումն եւ ի շնորհս՝ ի հոգեւորս կամ ի մարմնաւորս, եւ բորբոքին մախողական յաչաղմամբ եւ կարծեն զինքեանս մեծագոյն փառաց հասանել վասն սրբութեան կուսութեանն եւ կամ այլ առաքինութեանն, ժառանգել աստ զփառս ի մարդկանէ եւ անդ զպսակն առ ի Հաւրէ: Իսկ արդար դատողութիւնն Աստուծոյ՝ ըստ չափոյ սրբութեանն զմարմնական հանգիստ եւ զփառս պատրաստէ նոցա ըստ իւրեանց ախորժակացն որպէս կամին, բայց վասն նախանձուն առ այլս, յանտի փառացն տարագիր առնէ, որպէս գյիմար կուսանսն: Եւ զի այսպէս է՝ յաջորդս ցուցանէ: Կամ՝ առաջին դարուն մարդիկն, որ յոլովս ապրեցան, կարծէին աւելի առնուլ զփառս, բայց ի մետասան ժամու, որ սակաւ ապրին յետ Քրիստոսի, առաւելուն փառաւք քան զնոսա, զի նոքա կենաւք, իսկ սոքա՝ շնորհաւք:

Իբրեւ առին, գրգնջէին զգանուգեառնէն եւ ասէին, թէ՝ «Դոքա յետինքդ մի ժամ գործեցին, եւ հասարակո՞րդս մեզ արարեր զդոսա, որ զծանրութիւն աւուրն բարձաք եւ զտաւթ (Ի. 11-12):

Թէպէտ ոմանք ասեն առակ միայն գոլ զիրս եւ ո՛չ ճշմարտութեամբ այնպէս լինել, քանզի այն գաւառ ազատ է ի բամբասանաց եւ ի մախանաց, զի թէ աստ սուրբքն զանձինս վասն մեղաւորաց բաշխեն, անդ զիա՞րդ ընդ այլոց շնորհս մախան, այլ զի յորդորագոյնս առնիցէ զվերինս, այնպէս յորդորեաց զբանն՝ դառնալ ի ծերութեանն եւ պիտանի լինել այնքան, մինչ զի զբազումս ի նախանձ շարժեսցէ, որպէս մուտն անառակին՝ զերէց որդին (տե՛ս Ղուկ. ԺԵ. 11-32): *Իսկ մեզ ասելի է, թէ ստուգապէս զչար էին եւ խանդային ընդ այլոց բարիս, յորմէ ինքեանք ոչ նուազ էին, բայց ո՛չ անդ ի հանդերձեալն, այլ յայս կենցաղի: Զի որ ինչ անդր հատուցանի, աստէն գործոց է հատուցումն, վասն որոյ զբանն եւ զգործն ձեւացուցանէ, որպէս զի յիրաւի եւ արդար դատաստանն Աստուծոյ կարծեցեալ լինի, վասն զի ախտ տրտնջման եւ նախան-*

ձու ոչ ի մարդիկ միայն ձգի, այլեւ յԱստուած, թէ ընդէ՞ր զայս այսպէս արարեր, կամ նորա զայս իշխանութիւն ընձեռեցեր եւ կամ զսա յայնպիսի փառաց զրկեցեր, որպէս տեսանեմք այժմ եւ լսեմք զայսպիսի բարբանջանս ի բազմաց, որպէս եւ ասէ. «Տրտնջէին զտանուտեառնէն եւ ասէին, թէ՝ «Դորա յետինքդ մի ժամ գործեցին, եւ հաւասարակո՞ղդս մեզ արարեր զդոսա»: *Քանզի բազմաց պատահէ, որք ազգաւ կամ հասակաւ յետինք են, սակայն շնորհաւքն Աստուծոյ յառաջեն յաստիճանս կամ ի մարմնական փարթամութիւնս, կամ ի մեծագոյն իշխանութիւնս եւ ի պատիւ, որպէս Դաւթի յառաջանալն, որ յետին էր ազգաւ եւ հասակաւ, եւ Սաւուղի նուազիլն, ընդ որս մախայր միշտ եւ սպանանել ձեռնարկէր* (տե՛ս Ա. Թագ. ԺԶ-ԻԵ), *սոյնգունակ եւ այլոց յոլովից լինիցի այս:*

«Որ զծանրութիւն աւուրն բարձաք եւ զտաւթ»: «Աւր»՝ *զբոլոր կենցաղս իւր անուանէ, իսկ «ծանրութիւն»՝ զառ ի սա եղեալ փորձութիւնքն, պէսպէս խաղաղութիւն եւ պատերազմ, աղքատութիւն եւ փարթամութիւն, առողջութիւն եւ հիւանդութիւն, ազատութիւն եւ ծառայութիւն: Եւ «տաւթ»՝ զդիւական տապն ասէ, յորում վշտանան հոգիք մարդկան յայլանդակ խորհրդոցն ձանձրութենէ, ի բարկութենէն ասեմ եւ ի ցանկութենէն, ի տրտմութենէն եւ յերկիւղէն եւ յայլ համազգի ախտիցն: Այսմ ամենայնի համբերեցաք, ասեն, եւ զսոսա հաւասար մե՞զ պսակես: Դարձեալ՝ տրտնջելն այնոցիկ է, որ ի մարմնաւոր իրս վաստակին, զի մարմնաւորն առանց աշխատանաց եւ տրտնջման ոչ լինի, որպէս Մարթայ տրտնջեաց ի մարմնաւոր գործն զբաղեալ, իսկ զբարին, որք բառնան կամաւք՝ թեթեւ է, ըստ Տեառն.* «Լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ՝ փոքրո[գի]» (Մատթ. ԺԱ. 30), *վասն այնր տրտունջ ոչ լինի: Իսկ սոքա տրտնջեցին վասն մարմնոյ աշխատութեանցն, որ ի տուէ եւ հոգւոյ զբաղմանցն, որ ի գիշերի, քանզի այս է աւրն՝ տիւ եւ գիշեր:*

Նա պատասխանի եւ միում ի նոցանէ եւ ասէ. «Ընկե՛ր, չզրկեմ զքեզ, ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս: Ա՛ռ զքոյդ եւ ե՛րթ» (Ի. 13-14):

Ո՛վ արդար դատաւորութեանն, քանզի ոչ գոյ այլ աւելի իրաւունք, յորժամ ինքն իսկ տանուտէրն վասն նոցա իրաւունս դնէ դատաստանաւ եւ ո՛չ սաստիւ: Եւ ասէ «միում ի նոցանէ». զի՞նչ է «միումն». իբր թէ ամենայնքն զմի բարք ունէին նախանձոտքն:

«Ընկեր», այսինքն՝ հակառակ ինձ եւ ընդդիմացաւղ աւրինաց իմոց, քանզի հաւասար ինձ դատաւոր եղեր եւ զիմսն ընդ քննութեամբ արկանէիր, թէ ընդէ՞ր այս անուն պատուեցաւ յետին գոլով, կամ այն անուն նուազեցաւ՝ առաջին լինելով: «Չզրկեմ զքեզ». *զնոսա քեզ հասարակորդս առնելով՝ չէ՛ ինչ զրկութիւն, այլ արդարութիւն, զի զյետնոցն յաւժարութիւնն ի բարին՝ զոր ունէին, յառաջագոյն եւ զցանկութիւնն կշռելով ընդ քո առաքինութիւնն հաւասարեալ, ուստի եւ զվարձն համեմատեսցի, մանաւանդ, զի ոչ ի քոյոցն ետու, այլ զքոյն քեզ շնորհեցի եւ յիմոյն անծախապէս նմա պարգեւեցի:* «Ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս», *այսինքն՝ մարմնական փառաց, որում ըղձացար եւ երկրաւոր հանգստեան. ո՞չ զայդ աւասիկ հատուցի անպակաս, զի դիտաւորութիւն քո այն էր, եւ ես լցի, քանզի ո՛չ զայդ աւրէնքն, այլ հոգւոյ մաքրութիւնն ուսուցանէր, իսկ դու զայն թողեալ՝ մարմնական բարութեան հաշիւ պահանջէիր յինէն, զոր ետու իսկ:* «Ա՛ռ զքոյդ,- ասէ,- եւ ե՛րթ». *այն իսկ, թէ՝ ի դասս տրտնջողացն ընկալար զբարեաց քոց փոխարէն ի կեանս քո, այժմ երթ ի տանջանս ի դասս վասն նախանձուն, որ առ բազումս, զի թէ զայս ախտ ոչ էիր ախտացեալ, հանդերձեալ էի պարգեւել զկնի հարիւրապատիկն եւ զյաւիտենական կենացն ժառանգութիւն, բայց զի յաչաղկոտ եղեր, ըստ չափոյ բարեացն, զոր ունէիր, առեր զմարմնական բարիսն եւ փոխանակ նախանձուն՝ երթ ժառանգեա զգեհենին պատիժս, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա, քանզի որ նախանձի ընդ եղբաւրն՝ վատթարագոյն է, քան զվատսն, որ բնաւին բարիս ոչ արարին, զի Գիրք սովորութիւն ունի ընդ սպանման կարգել զնախանձն* (տե՛ս Յոր Ե. 2, Հռոմ. Ա. 29, Գաղ. Ե. 20-21):

Եթէ կամիմ յետնոցս տալ որպէս եւ քեզ, եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմսս առնել զինչ եւ կամիմ (Ի. 15):

Յառաջագոյն զյետնոցն յաւժարութիւնն՝ առաջնոց գործոցն բաղդատեաց եւ եցոյց, թէ չէ զրկութիւն, այլ յիրաւի հաւասարեցան, իսկ այժմ այլազգ յանդիմանէ՝ զողորմութիւնն յուշ առնելով եւ զառատութիւնն, քանզի «ողորմեցայց որում ողորմեցայց եւ գթացայց յորս գթացայց» (Ելք ԼԳ. 19), «քեզ զի՞ փոյթ է, միթէ ասէ՞ կալ ցքրուտն» (հմմտ. Հռոմ. Թ. 20-21),- *ասէ առաքեալ: Բայց թուի, թէ՝ զի յետինքս առանց տրտնջման մնացին, տաց զհարիւրապատիկն, որպէս նոցա, տայ*

եւ զյաւիտենական փառսն, որպէս զի ուսցուք ո՛չ յոք նախանձել, թէպէտ եւ առանց վաստակոյ ի շնորհս վայելիցէ: Յիրաւի՛ ապա այսպիսիքս առնուն վարձս ըստ գործոց, առնուն եւ պակս շնորհաց, ըստ կամաց ողորմութեանն Աստուծոյ:

Կամ թէ ակն քո չար է, զի ես առատս եմ (Ի. 15):

Այս կարի յանդիմանութիւն է եւ նախատինք նախանձոտացն, զի զրեթէ ասէ՝ յիւրոց բարեաց, թէ ոք ոչ մատակարարէ այլոց, ունի տեղի նախանձու, զի զիւրն այլոց ոչ կամի, իսկ զայլոց բարիս այլոց յաչաղելն մեծագոյն չարութիւն է եւ անհրաժեշտ բարկութեան առիթ: Բայց «ակն» զմիտսն ասէ, յորս բազմացեալ ախտ նախանձուն վասն բունանալոյն ի նմա չարին՝ գայ եւ ի տեսանելիս եւ ըստ ոչ կամեցողութեան բանսարկուին գործի առեալ զաչս մարդկան՝ չարակնէ զբազումս, ուստի եւ վնասէ իսկ, որպէս ասեն ոմանք: Դարձեալ՝ «ակն քո չար է», այսինքն՝ թէ մտաւք քո զայն խնդրեցէր, որ քեզ չար եղեւ, ինձ զի՞նչ փոյթ է, «զի ես առատս եմ» եւ ի տալն զխնդիրն ես բարի եմ: Կամ թէ՝ «ես առատս եմ», այսինքն՝ զի որ յինէն զբարին խնդրեաց, ես նմա զայն պարգեւեցի, զբարին գործել եւ վասն իմ աշխատել, որ եւ զգործաւղսն պահեաց առանց աշխատութեան, որ ոչ ձանձրացան եւ տրտնջեցին իբրեւ զքեզ:

Այնպէս եղիցին յետինք առաջինք, եւ առաջինք՝ յետինք, զի բազումք են կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք (Ի.16):

Նախ, որպէս ասացաք, վասն հրէից յառաջ կոչեցելոց ասէ եւ ո՛չ հաւատացելոց, եւ հաւատացելոց յառաջելոց քան զնոսա, եւ ապա վասն ամենեցուն կանխաւ ծագելոցն առաքինութեամբ, եւ յետոյ հեղգացելոց եւ յետս ընկղմելոց, եւ որք ի չարեացն զղջացան եւ զբազմաւք գերազանցեցին՝ է փոփոխմունս: Լսի եւ այսպէս, թէ ամենեքեան են ստեղծուածք Աստուծոյ, բայց որք Աստուծոյ են՝ սակաւք են ընտիրքն, որք իմաստութեամբ ի մարմնոյս ի բաց որոշեցան եւ առ ճշմարիտ եւ ականակիտ լոյսն հայեցան: Իսկ բազումքն, որք զկնի կաւոյն ցնդեցան՝ ոչ կարացեալք ի վեր յառել, [յ]Աստուծոյ են, բայց ո՛չ Աստուծոյ:

Բայց զի՞նչ այն, թէ՝ «բազումք են կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք»: Եթէ այդպէս իցէ, ապա ընդէ՞ր եւ կոչեցան իսկ. կոչեցան՝ զմարդասիրութիւնն ցուցանէ, իսկ յընտրութիւնն ոչ ժամանեալք, զնոցա հեղգութիւնն, որպէս ասաց այլուր, թէ՝ «Սակաւք են, որ ապրելոց իցեն» (Մատթ. Է. 14, Ի 16, Ղուկ. ԺԳ. 23-30), *ուրկանն զամենայն ազգս ժողովեաց, բայց զբարի բարին միայն յամանս հաւաքեաց* (տես Մատթ. ԺԳ. 48), *եւ ի հարսանեացն զաղտեղեալն հանդերձիւ արտաքս հանին* (տես Մատթ. ԻԲ. 11-13), *եւ Յուդաս կոչեցաւ ընդ նոցին, բայց յետոյ Սատանա եղեւ: Գրէ եւ Պաւղոս, թէ զորս յառաջագոյն ճանաչէր կերպարանակից լինել պատկերի Որդւոյ իւրոյ, զնոսին եւ կոչեաց եւ արդարացոյց եւ փառաւորս արար* (տես Հռոմ. Ը. 29-30), *ուստի յայտ է, թէ միայն կոչումն չէ բաւական ի փրկութիւն, եթէ ոչ արժանի գնացս կոչմանն ցուցանիցեմք՝ ըստ առաքելոյ, թէ՝* «Յոր կոչումն կոչեցաւ, ի նմին մնասցէ» (Ա. Կոր. Է. 20), *զի մի՛ յընտրութենէն վրիպեցիմք՝ յետինք լինելով, եւ ի փառացն անկանիցիմք: Ո՛չ վայրապար եւ զայն եւս ասէ, թէ՝* «**Եղիցին յետինք առա|ջինք|**», *զի նախ ասաց, թէ բազումք եղիցին առաջինք յետինք, եւ ասա՝ զընդդէմն, զի ցուցցէ, թէ նախ առաջինքն արտաքս ելին եւ յետինք եղեն, եւ ապա յետինքն մտեալ՝ առաջինք եղեն:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Նմանեցաւ արքայութիւնն առն տանուտեառն (Ի. 1):

Այս Թ. (9) կամ Ժ.(10)երորդ աւրինակ արքայութեանն:

«Այգի» *կոչէ զհրամանս եւ զպատուիրանս Աստուծոյ: Եւ այլք ասեն՝ այգի է եկեղեցի սուրբ, ըստ այնմ.* «Այգի եղեւ սիրելոյն» (Եսա. Ե. 1): *Եւ նոյն է միտք երկոցունց: Եւ ժամանակ գործոյ է կեանք աշխարհիս, զի ահա ժամանակ ընդունելոյ եւ այլն:*

Եւ «մշակք» *են զանազան դէմք՝ քահանայք, վարդապետք, առաքեալք, մարգարէք, մարտիրոսք, կուսանք եւ այլք: Սոքա են ժողովեալք ի յեկեղեցի եւ զհրամանս Տեառն կատարեն:*

Վասն ժամուց կոչմանց (տես Ի. 5):

Հարց. Զի՞նչ է զանազան ժամք կոչեցելոցն:

Պատասխանի. Զորիւք է իմանալ.

Ա. Նախ՝ հասարակ՝ իւրաքանչիւր մարդոյ առաւաւտն՝ տղայութիւն, մինչ ի Է. (7) ամն մասն ունի տգիտութեանց: Երրորդ ժամն պատանեկան, մինչ ի ԺԴ. (14) սոյնպէս լինի կատարեալ: Վեց ժամն՝ երիտասարդն երեսնամեայ. ամենայն ինչ ջերմ է եւ զաւրաւոր: Թ. (9) ժամն խոնարհի արեգակի, ԽԵ. (45) ամն պաղի

ամենայն ինչ մեր: Մետասաներորդ ժամն, որ մտանէ արեգակն, Կ. (60)ամեայ ծերութիւնն մերձ ի մահն:

Բ. Երկրորդն՝ յառաջին դարուն մինչ ի Քրիստոս: Առաւաւտն՝ Ադամ, որ հրամայեաց գործել եւ պահել (հմմտ. Ծնն. Բ. 15): *Երրորդն՝ Նոյ, որ էառ զաւրէնս: Հասարակն՝ Աբրահամ, որ ել յերկրէ եւ յազգէ իւրմէ: Ինն ժամն Մովսէսիւ կոչեցաւ: Մետասաներորդ՝ ի վերջին ժամուս, Բանն մարմնացեալ կոչեաց զՀեթանոսս:*

Գ. Երրորդ՝ ի ծնընդենէ Փրկչին մինչ ի խաչն: Առաւաւտ՝ սկիզբն քարոզութեան, եւ սքանչելիքն, եւ այլակերպելն, եւ գալն յԵրուսաղէմ: Եւ խաչն, որ ի մետասան ժամուն էած զաւազակն ի դրախտն:

Դ. Զորրորդ՝ յառաջին գալստենէն ի միւսանգամ գալն: Առաւաւտ՝ քարոզութիւնն: Երրորդ ժամն՝ իջումն Հոգւոյն: Հասարակն՝ առաքելոցն քարոզութիւն: Ինն ժամն՝ վարդապետացն: Մետասանն՝ Եղիայ եւ Ենովք կոչեն:

Այսպէս չորեքդիմի է տեսութիւն առակիս, զոր մեկնիչդ զերկուսն կամի:

Արդ, գիտելի է, զի Ժ. (10) ինչ ցուցանէ բան առակիս.

Ա. Նախ՝ ցուցանէ զփոյթ տանուտեառն, որ միշտ ի վարձու ունի զմշակս այգոյն:

Բ. Երկրորդ՝ ցուցանէ զպատշաճ ժամս կոչման, զի յորժամ հաւանին, յայնժամ կոչէ զնա, որպէս զՊաւղոս:

Գ. Երրորդ՝ ցուցանէ, թէ յառաջին հասակէն կոչէ, վասն այն ասէ՝ «**ել ընդ առաւաւտս**»:

Դ. Զորրորդ՝ յոյս տայ ամենայն մարդկան, զի յորժամ եւ դառնամք ի մեղաց, ընդունելի է, թէ մինչ ի վերջին շունչն:

Ե. Հինգերորդ՝ ցուցանէ, թէ ի վերջնոցն սկսանի տալ վարձս առաջնոցն, զի առաջինքն յուսով հաստատեալք էին, եւ վերջինքն մի թուլասցին:

Զ. Վեցերորդ՝ մեք տուաք, որ ինչ խոնարհ է քան զաստուածութիւն նորա, այսինքն՝ զպաշտաւնսն, եւ նա տայ, որ ինչ վերագոյն է, քան զմեզ, այսինքն՝ զտեսութիւնն իւր, զոր «**դահեկան**» *կոչէ* (Ի. 2):

Է. Եւթներորդ՝ ցուցանէ, որ ի վաստակն ըստ զաւրութեան մերում վարձեցաք, որ ինչ արժանն է, ասէ՝ «**տաց**» (Ի. 4), *այլ ի հատուցումն վարձուցն առաւել քան զգործն առաք:*

Ը. Ութերորդ՝ ցուցանէ, թէ ի վաղջանի կենաց հաւատացեալքն զփառս տան կամաւ, եւ ապստամբքն ի բռնութենէն, որ կայ ի վերայ նոցա դառնան. վասն այն եւ ասեն. «*Ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու*» (Մատթ. Ի. 7):

Թ. Իններորդ՝ ի գործ այգոյն, ոչ արդարութիւնն զողորմութիւնն զրկեաց, եւ ոչ ողորմութիւնն՝ զարդարութիւնն: Արդարութեամբ ետ գործողացն յայգին, եւ ողորմութեամբ՝ որ ի վերջին ժամն ուղղեցաւ: Վասն այն ի յայլ թարգմանս Աւետարանացն, որ ընդ առաւաւտս ել, նոցա արկ մին դահեկան վարձ, եւ որ ի յերից ժամն, եւ ի վեցն եւ ի յինն, ասաց՝ «*Որ ինչ արժան է, տաց*» (Ի. 7): *Եւ որ ի մետասանն, ասէ՝* «**Ե՛րթ եւ գործեա՛ յայգւոջն**», *եւ ոչ այլ ինչ ասաց, զի ողորմութեամբ ետ նմա:*

Ժ. Տասներորդ՝ ցուցանէ, թէ ոմանք յառաջին մշակացն նախանձեցան եւ կորուսին զվարձս իւրեանց, վասն այն ասացաւ նմա՝ «*ընկեր սատանայի, առ զքոյդ եւ երթ*» (հմմտ. Ի. 14-15), *զի արքայութիւն իմ սուրբ է ի նախանձուէ:*

Հարց. Ո՞վ է «**փանուտէրն**» (տե՛ս Ի. 8):

Պատասխանի. Զհայր Աստուած նշանակէ: Եւ «**գաւառապետ**» *(Ի. 8)՝ զՔրիստոս, զի նա է պետ ամենայն իշխանութեանց եւ պետութեանց եւ իշխան ամենայն երկրի:*

Հարց. Զի՞նչ է «**երեկոյ**» (տե՛ս Ի. 8):

Պատասխանի. Ըստ չորից իմացմանցն.

Ա. Նախ՝ երեկոյ է կենաց լրումն:

Բ. Երկրորդ՝ ժամանակ գալստեանն:

Գ. Երրորդ՝ խաչելութիւնն:

Դ. Զորրորդ՝ կատարած աշխարհի:

Հարց. Զի՞նչ է «**դահեկան**» (Ի. 2):

Պատասխանի. Զոր ինչ նշանակէ.

Ա. Նախ՝ զպայծառութիւն պատկերին, զոր կորուսաք Ադամաւ եւ գտաք Քրիստոսիւ, զի պատկեր է կայսեր:

Բ. Երկրորդ՝ զտեսութիւնն Աստուծոյ, զի գիր ունի զԱստուծոյ:

Գ. Երրորդ՝ զկատարեալ պսակն, զի վեց դանկ է:

Դ. Զորրորդ՝ զանապական ժառանգութիւնն ըստ նիւթոյն:

Հարց. Զի՞նչ է «**սկսեալ յերեկոցն մինչեւ ցառաջինսն**» (Ի. 8):

Պատասխանի. Զոր է իմացումն.

Ա. Նախ՝ ի վերջին արդարոցն սկսանի զվարձն, ըստ այնմ. «Ապտուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի առանց մեր կատարեսցին» (Եբր. ԺԱ. 40):

Բ. Երկրորդ՝ նախ՝ զաւազակն եմոյծ ի դրախտն եւ ապա՝ զԱդամ եւ զայլ սուրբսն:

Գ. Երրորդ՝ նախ՝ աղքատացն եւ ապա՝ սիրողաց:

Դ. Չորրորդ՝ ի վերջին եւ նուազ գործոցն սկսանի հատուցանել, մինչեւ ցմեծամեծս:

Հարց. Վասն է՞ր սոցա հասարակ տայ զվարձն, որք յառաջին ժամէն եւ ի վեցն, եւ ի յինն, եւ ի վերջին ժամն գործեցին:

Պատասխանի. Որպէս ասացաք ի հարիւր, վաթսուն եւ երեսնաւորն.

Ա. Նախ՝ զառատ բարութիւնն եւ զողորմութիւնն Աստուծոյ ցուցանէ:

Բ. Երկրորդ՝ արդարութեամբ է, զի թէպէտ ի վերջին ժամն մտին, այլ ըստ իւրաքանչիւր կարողութեան եւ ըստ թուոյ կենաց իւրեանց հաւասար գործեցին, յիրաւի հաւասար պատուեսցին:

Գ. Երրորդ՝ ասեն ոմանք, թէ դահեկան զտեսութիւնն Աստուծոյ կոչէ, զոր հասարակ տեսանեն ըստ կարողութեան, այլ զպսակ արդեանցն՝ առաւել եւ նուազ, որպէս «Ապրղ քան զապրղ առաւել է փառաւք» (Ա. Կոր. ԺԵ. 41), *ասէ առաքեալ:*

Դ. Չորրորդ՝ եւ ստոյգ, թէպէտ ամենեքեան տեսանեն անընդմիջաբար զԱստուած, այլ առաւել եւ նուազ ըստ սրբութեան իւրեանց, որպէս աչք մարդկան զարեգակն առաւել եւ նուազ տեսանէ, ըստ պարզութեան իւրեանց:

Հարց. Որպէ՞ս նախանձին արդարքն անդ:

Պատասխանի. Անդ ոչ է նախանձ արդարոցն, այլեւ ոչ աստ, զի զանձինս դնեն ի վերայ միմեանց: Այլ այնպէս կազմէ զբան առակին, զի մեք մի նախանձեսցուք աստ, վասն այն մեկնիչդ ի վերայ տիոց հասակիս մեր մեկնէ զառակդ, եւ ոչ ի վերայ դարու եւ կատարածի աշխարհի:

Այսքան առ այս:

ՎԱՍՆ ԱՆԻԾԵԱԼ ԹՋԵՆԻՈՅՆ

Մատթ. ԻԱ. 18-20

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Այգուցն քաղցեաւ (հմմտ. ԻԱ. 18):

Երեք անպատշաճութիւն երեւի.

Ա. Նախ՝ զի այգուցն քաղցեաւ, զի բնական է ի Զ. (6) ժամն քաղցնուլ:

Բ. Երկրորդ՝ զի կրկին անգիտացաւ. մին՝ զպտուղն եւ միւս՝ զժամանակն, զի նիսան եւ մարտի ժամանակ ոչ է պտղի:

Գ. Երրորդ՝ զի անմեղ անէծ զթզենին:

Քաղցն է ցանկութեանն, անգիտանալն Բանին մասին, անիծանելն ցասմանն: Առաջինն ցուցանէ, զի կամաւ քաղցեաւ, որպէս յորժամ Խ. (40) աւր պահեաց: Նոյնպէս եւ միջինն, զի կամաւ անգիտացաւ, որպէս Հայր ասէր ցԱդամ՝ «Ո՞ւր ես» (Ծնն. Գ. 9), *եւ ցԿայէն.* «Ո՞ւր է եղբայր քո» (Ծնն. Դ. 9), *եւ ցՄովսէս.* «Զի՞նչ է ի ձեռին քո» (հմմտ. Ելից Դ. 2):

Իսկ վասն վերջնոյն բազում դնեն պատճառս վարդապետք, զոր ժողովեսցուք մեք ԺԵ. (15) գլուխս:

Ա. Նախ՝ վասն աշակերտացն, զի քաջալերեաց զնոսա, զի ունէին երկիւղ եւ տրտմութիւն. ովսաննայիւն զտրտմութիւնն մերժեաց եւ թզենեաւն զերկիւղ հրէիցն փարատեաց:

Բ. Երկրորդ՝ կրկին զաւրութիւն է Աստուծոյ, այսինքն՝ արարչական եւ արքունական, որ է բարերարել, որ զբազումս արար, եւ աստ պատժէ, զի մի՛ ասիցեն, թէ ոչ կարաց զանձն փրկել՝ ըմբռնեցաւ:

Գ. Երրորդ պատճառաւ անէծ զթզենին, զի ազդումն աստուածութեան իւրոյ ետ ամենեցուն, բարեկամացն նշան բերկրութեան, եւ թշնամեացն՝ երկիւղ, աշակերտքն հաստատեցան եւ աւտարքն զարմացան:

Դ. Չորրորդ՝ զի ցուցցէ զխոնարհութիւն եւ զքաղցրութիւն առ նենգաւորսն իւր, որ զանշունչ տունկն ցամաքեցոյց, կարէր զնոսա սատակել:

Ե. Հինգերորդ՝ որ կամէր բառնալ զպատիժ մարդկան Գ. (3) ինչ պատժեաց, այսինքն՝ զվէմսն փշրեալ, եւ զխոզսն հեղձեալ, եւ զտունկն գոսացուցեալ, զի վիմովն պատառեսցին սիրտք անհաւատից եւ խոզիւքն հեղձցին մոլար խաբէութիւնք չարին եւ անմեղ տնկովն Երուսաղէմ գաւսասցի, վասն խաչի յանցանաց իւրոց, ըստ որում ձայնն ի տաճարին, գնամք աստի, գնամք եւ այլ ոչ դառնամք, եւ որպէս պատմէ Յովսէպոս[1]*:*

Զ. Վեցերորդ՝ աւրէն էր հրէից՝ «զայգի եւ զձառս ոչ առնել ճռաքաղ, եւ թէ զեզերս արտի քո մի քաղեսցես» (հմմտ. Ղեւտ. ԺԹ. 10): *Եւ Տէր ծառոյն անարգեալ զաւրէնս արար ճռաքաղ, վասն վրէժխնդրութեանն աւրինացն անէծ զտունկն:*

Է. Եւթներորդ՝ գերգեսացիքն կամաւ ոչ ելին առ Քրիստոս, կոտորեաց զխոզսն եւ ակամայ եկին: Այսպէս եւ տէր թզենոյն վասն ագահութեան ոչ գայր առ Քրիստոս, զի մի յանդիմանեսցի: Յանդիմանեաց զտունկն եւ ի հարկէ եկն:

Ը. Ութերորդ՝ զի յորժամ մեղաւ Ադամ եւ մերկացաւ ի փառաց եւ թզենեաւ ծածկեաց զմերկութիւնն, եկն Տէրն եւ վճարեաց զպարտս նորա եւ չորացոյց զթզենին, զի ոչ է պիտոյ Տէր եւ նորա ծածկոյթ Ադամայ, զի դարձաւ նայ յառաջին փառս իւր:

Թ. Իններորդ՝ անէծ զթզենին ոչ վասն քաղցի, այլ վասն աշակերտացն զարմանալոյ, զի նոր իմն էր նշանն ի թզենին, որ դալարագոյն է, քան զամենայն տունկ, որպէս ասէ հետակայ. «Ոչ միայն թզենոյդ, այլ թէ լերինդ ասիցէք՝ ելցի» (հմմտ. ԻԱ. 21):

Ժ. Տասներորդ՝ զի ցուցցէ, թէ Արարիչ է բնաւից. կարէ տնկել եւ խլել:

ԺԱ. Մետասաներորդ՝ յաւրինակ հրէիցն, որ զուարճէին աւրինացն ձեւով եւ դատարկ ի գործոց, վասն որոյ խլեաց զնոսա, եւ չորացան յարմատոց:

ԺԲ. Երկոտասաներորդ՝ թզենին՝ դառն, եւ անիծաւ: Այսպէս եւ դառնացեալքն մեղաւք չորացին եւ սատակեսցեն յերկրէն կենդանեաց ի միջոյ արդարոց:

ԺԳ. Երեքտասաներորդ՝ յաւրինակ կեղծաւորաց, որք միայն ունին զձեւ առաքինոյ եւ ոչ զպտուղ, զոր զկարի մեղաւորսն ընդ

[1] Գ Յաւսեպոս

մէջն կորել հրամայէ եւ զբաժինն ընդ կեղծաւորսն դնել: Թեւ ոմանք վասն սատանայի ասեն այս կեղծաւոր:

ԺԴ. Չորեքտասաներորդ՝ ասեն, թէ աւձն արտաքոյ դրախտին ել ի ծառ թզենի եւ պատրեաց զԵւայ. անէծ զայնպիսի ենթակայ եւ պատճառ խաբէութեան մարդոյն:

ԺԵ. Հնգետասաներորդ՝ ասեն ոմանք, թէ պտուղն, զոր կերաւ Ադամ, այդ էր, վասն այն Քրիստոս անէծ, զի եղեւ պատճառ եւ առիթ անկման մերոյ ի դրախտէն: Անէծ զնա, զի վերստին տալոց էր գերագոյն փառք, քան զդրախտին:

Հարց. Որպէ՞ս չորացաւ:

Պատասխանի. Ա. Նախ՝ ամենայն տունկ յերկար ժամանակաւ չորանայ: Իսկ այս՝ յանկարծակի:

Բ. Երկրորդ՝ զի ի տերեւոյն եւ ի ստեղանցն թառամի, եւ սայ յարմատոյն չորացաւ:

Գ. Երրորդ՝ զի կեղեւն սպիտակացեալ, որպէս զաստղ փայլէր, վասն որոյ զարմացան:

Իսկ որ ասէ աւրինակաւ լերին ի դէմս հպարտացեալ լերինն է իմանալ, որպէս ասացաւ յայն մասին ի համարն:

ԱՌԱԿ ԵՐԿՈՒՑ ՈՐԴԻՈՑՆ

Մատթ. ԻԱ. 28-32

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

«Զի՞նչ թուի ձեզ. այր մի ունէր երկուս որդիս» (հմմտ. Մատթ. ԻԱ. 28):

«Այրն»՝ *Քրիստոս, եւ «երկու որդիքն» երկու ժողովուրդք՝ հրէայք եւ հեթանոսք, որ ասաց, եթէ՝* «**երթամ Տէր**»՝ *հրէական ժողովուրդն, որ ասաց՝ եթէ՝* «**երթամ**» *յայգին ի գործ ուրախութեան, եւ* «**ոչ գնաց**», *եւ երկրորդն՝ հեթանոսական ժողովուրդն, որ ասաց* «**ոչ երթամ, եւ յետոյ զղջացեալ գնաց յայգեստանն**» (տե՛ս ԻԱ. 30)*:*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Արդ, ասէ առակ ինչ.

Առն միոջ,- ասէ,- էին Բ. որդիք (ԻԱ. 28):

«Երկու որդիքն» *Բ. (2) ինչ իրս յայտ առնեն, որ ի հրէայս եւ ի հեթանոսս գործեցան, զի սոքա նախ չառնին յանձն եւ ոչ ունկնդիրք իսկ եղեն աւրինացն: Եւ նոքա ասէին, թէ՝* «Զամենայն, զոր ինչ եւ ասիցէ մեզ Աստուած, արասցուք եւ լուիցուք» (Ելից ԻԴ. 7): *Եւ յետոյ արդեամբք իսկ անհնազանդք եղեն, զի մի կարծիցեն, թէ աւրէնքն ինչ աւգնիցեն նոցա: Ցուցանէ, թէ աւրէնքն իսկ դատախազ են նոցա, վասն այնորիկ զի անձամբ զանձինս դատապարտիցեն, ի նոցանէ իսկ կամի հանել զվճիռն: Եւ քանզի զուղղորդն չախորժեցին յանձն առնուլ, ապա առակաւքն ածէ զնոսա յայն, զոր կամին, զի առ չիմանալ բանիցն ետուն զպատասխանին, անձամբ անձանց հատին զվճիռն, ապա ինքն իսկ յայտնէ:*

Մաքսաւորք եւ պոռնիկք,- ասէ,- յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւնն երկնից (ԻԱ. 31):

Զի թէ լոկ ասացեալ էր զայս, ծանր թուէր նոցա բանն, բայց զի յետ նոցա զվճիռն տալոյ անձանց ասէ, ո՛չ այնպիսի ինչ տաղտկալի թուէր, վասն այնորիկ եւ զպատճառսն առընթեր դնէր:

«Եկն,- ասէ,- առ ձեզ Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան» (հմմտ. ԻԱ. 32):

Այսինքն, զի ոչ յափշտակեաց նա անձին իւրոյ զպատիւ տեառն իւրոյ, այլ իբրեւ կարծէին վասն նորա՝ Քրիստոսն իցէ: Ասաց նոցա. «Թէ եւ ո՛չ զիսրացս կաւշկաց նորա արժանի եմ բառնալ» (հմմտ. Մարկ. Ա. 7, Յովհ. Ա. 27):

«**Եկն,- ասէ,- առ ձեզ Յովհաննէս**» *եւ ոչ առ նոսա: Եւ ոչ այսչափ միայն, այլեւ զարդարութեան ճանապարհն: Քանզի եւ ոչ այնպէս իսկ մեզ կարէին դնել, եթէ ծոյլ ինչ ոք էր եւ չառնէր փոյթ զումեքէ, այլեւ վարս անարատս ունէր եւ խնամս կարի իսկ յաճախագոյնս, եւ սակայն ոչ անսացէք նմա, եւ այնու եւս կշտամբիք, զի մաքսաւորքն անսացին, եւ դուք՝ ոչ ընդ նոսա եւ ոչ յետ նոցա: Ամենեւին իսկ վրիպեալ էք ի ներելոյ եւ ի թողութենէ: Նոցա*[1] *կարի իսկ պարծանք են եւ զձէնջ յոյժ ամբաստանութիւն*[2]*. առ ձեզ եկն, եւ ոչ համարեցայք ինչ, եւ առ նոսա ոչ չոգաւ, եւ ընկալան, եւ դուք զնոսա եւս չկարացէք առնել անձանց վարդապետս: Ապա ուրեմն ոչ միայն ըստ շնորհացն եմուտ մաքսաւորացն եւ պոռնկաց, այլ՝ ըստ արդարութեան, զի ոչ նոյնպէս պոռնիկ[ք] կացին եւ մտին, այլ լուան եւ հաւատացին, եւ սրբեցան, եւ փոփոխեցան, եւ մտին:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Բայց զիա՞րդ թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք, եւ մատուցեալ առ առաջինն՝ ասէ. «Որդեա՛կ, երթ այսաւր գործեա՛ յայգւոջ»: Նա պատասխանի եւ ասէ. «Երթամ, տէ՛ր, եւ ոչ չոգաւ»: Մատեաւ եւ առ միւսն եւ ասէ նոյնպէս: Նա պատասխանի եւ ասէ. «Ոչ կամիմ», բայց յետոյ զղջացաւ եւ չոգաւ յայգին:

Արդ, ո՞ յերկոցունց արար զկամս հաւրն: Ասեն՝ յետինն (Մատթ. ԻԱ. 28-31):

«Երկու որդի»՝ *զհրէայս եւ զհեթանոսս առակէ, որով զուռուցեալ միտս նոցա զնստուցանէ, որք յԱւրէնսն յեցեալ էին եւ յԱբրահամ պանծային. ցուցանէ, թէ եւ հեթանոսք ստեղծուածք են Աստուծոյ եւ ծնունդք բանի նորա: Իսկ* «այր»՝ *զԱստուած վասն ներգործական եւ կատարուն զաւրութեանն, կամ վասն մարմնազգեցութեանն, որ եղեւ մարդ ի զանգուածէն Ադամայ: Իսկ* «մատչելն» *զմարդասիրութիւնն Աստուծոյ քարոզէ, որ խոնարհեցաւ առ Աբրահամ եւ էջ ի Քորէբ եւ ի Սինա, եւ ետ զԱւրէնսն եւ ասաց զգուանաւք.* «Որդեա՛կ, երթ այսաւր, գործեա՛ յայգւոջ»: «Այգի» *զԱւրէնսն ասէ, զի*

[1] Բ նոցա] նոքա

[2] Բ ամբաստանութիւն] ապաստանութիւն

ցուցցէ, թէ քաղցր է պտուղ Աւրինացն եւ կցորդի գործոցն, այլեւ կատարելագործ է եւ իմաստնագործ եւ լուսաւորիչ, զոր «**աւրն**» *նշանակէ՝ ըստ Դաւթի՝* «Յայտնութիւն բանից քոց լուսաւորէ եւ իմաստուն առնէ զգաղայս» (Սաղմ. ճԺԸ. 130)*: Կամ թէ* «**աւր**» *զբովանդակ կենցաղս ասէ՝ կալ յԱւրէնսն որչափ կենդանի է, զի կեանք մարդկան իբր զմի աւր է: Իսկ նա վասն սաստիկ տեսլեան ծնողին պատասխանի ետ, թէ՝* «**Երթամ, տէ՛ր**», *այս է, զի ասացին.* «Զամենայն զոր ինչ ասացէ Տէր Աստուած մեր՝ լուիցուք եւ արասցուք» (հմմտ. Ելք ԺԹ. 8), *եւ յետոյ արդեամբք իսկ յետս կացին՝ ըստ այնմ.* «Գիրացաւ եւ կիցս ընկէց, եւ յետս եկաց յԱստուծոյ փրկչէն իւրմէ» (հմմտ. Բ Աւր. ԼԲ. 15)*: Դարձեալ՝ եւ յերկրորդ տնտեսութիւնս զնոյն արար, զի նախ առ նոսա մատեաւ վասն սիրոյ հարց, եւ մարմին ի նոցանէ էառ՝ ըստ այնմ.* «Ոչ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրաէլի» (Մատթ. ԺԵ. 24), *եւ կոչեաց զնոսա ի հնազանդութիւն եկեղեցւոյ այգւոյ եւ ինքեան, որ որթ եղեւ ճշմարիտ* (տե՛ս Յովհ. ԺԵ. 1), *վարդապետութեամբ Աւետարանին գործել մի՛ զկորստական կերակուրն, այլ զայն, որ տանի ի կեանսն* (տե՛ս Յովհ. Զ. 27), *եւ նոքա վասն սքանչելեացն, զոր զկոյրս լուսաւորէր եւ զանդամալոյծս առողջացուցանէր, զդիւրահարս բժշկէր, զմեռեալս յարուցանէր եւ սակաւ հացիւ զբազումս յագեցուցանէր, յանձն առին հաւատալ ի նա, բայց ոչ չոգան գործով, քանզի ո՛չ ի սրտէ, այլ վասն հրաշիցն յայն գային՝ ըստ այնմ, թէ՝* «Բազումք հաւատացին ի նա, բայց ինքն Յիսուս ոչ հաւատայր զանձն նոցա, զի գիտէր զինչ կրէր ի մարդն» (հմմտ. Յովհ, Բ. 23-25), *եւ թէ՝* «Խնդրէք զիս, իբր ոչ եթէ նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք ի հացէ անտի եւ յագեցարուք» (Յովհ. Զ. 26)*: Ա՛յս է ասելն «Երթա՛մ, տէր», եւ ոչ չոգաւ»: Եւ զի նախ նոցա ասաց, յայտ առնէ եւ զինքեանն մարդասիրութիւնն, միանգամայն եւ զպատճառն հատանէ, զի ճշմարիտ լիցի եւ յաղթաւղ ի դատելն* (տե՛ս Սաղմ. Ծ. 6), *եւ զայս ոչ միայն անձամբ, այլեւ առաքելովքն, որպէս ասէր Պաւղոս.* «Զեզ բանս այս փրկութիւն առաքեցաւ..., որովհետեւ ոչ ընդունիք, դառնամք ի հեթանոսս» (հմմտ. Գործք ԺԳ. 26, 46). *վասն այսորիկ ասէ, թէ՝* «**Մատեաւ եւ առ միւսն**», *իբր ի հարկէ:*

Բայց ե՞րբ մատեաւ՝ քննելի է: Կամ ընականն աւրինաւք, որ է մտացն խիղճ, զոր եդ Աստուած ի նոսա, կամ այն, զի գրեաց ի վերայ բռեայ սեղանոյն զԱւրէնսն յանցսն Յորդանանու, կամ մարգարէիւքն, եւ նոքա հրաւիրեցան. յայտ ի բանից նոցա է, որպէս Յոնան անձամբ իսկ չոգաւ ի Նինուէ (տե՛ս Յովն. Գ. 3)*: Բայց ճշմարտապէս այսպիսի է. զի առաքելովք կոչեաց՝ ըստ այնմ.* «Երթայք

աշակերտեցէք զամենայն հեթանոսս» (Մատթ. ԻԸ. 19)*: Եւ նա յառաջագոյն ըմպահկեալ՝ ըստ անառակին իրաց, ապա յետոյ եկեալ ի միտս՝ զղջացաւ եւ եմուտ յեկեղեցի* (տե՛ս Ղուկ. ԺԵ. 11-32) *եւ ծառայեաց Որդւոյն երկնաւորի, որպէս տեսանեմք այժմ:*

«**Արդ, ո՞ յերկոցուց արար զկամս հաւրն**»,- *հարցանէ: Աստի ուսանիմք զաւանդութիւն իմն գեղեցիկ, զի թէպէտ եւ բանն է ընդ պատժաւք եւ ընդ պսակաւք, սակայն ոչ այնքան, որպէս եւ գործն: Է՞ր վասն. զի մարդ յերկուց է՝ ի հոգւոյ եւ ի մարմնոյ, եւ ծնաւղ բանին հոգին է, եւ ի լրութիւն ածաւղ՝ մարմինն: Արդ, յորժամ խոկայ միտքն եւ կամ խաւսի լեզուն զսխալն, թէպէտ յանցաւոր է, սակայն ոչ կատարելապէս, զի առանց մարմնոյ է, իսկ յորժամ մարմինն եւս աւժանդակէ գործով, կատարելապէս կշտամբի կամ փառաւորի՝ ըստ առաքելոյ, թէ՝* «Իւրով մարմնովն ժառանգէ զբարի կամ զչար» (հմմտ. Բ Կոր. Ե. 10)*: Վասն այսորիկ ոչինչ գրեաց զհնչումն ձայնին, այլ զարդիւնս. ասաց.* «**Ո՞ արար զկամս Հաւրն**», *այսինքն՝ գործեաց զփրկութիւն անձինն:* «**Ասեն՝ յետինն**». *զի մի՛ կարծիցեն, թէ Աւրէնքն ինչ աւգնիցեն նոցա, ցուցանէ, թէ նա՛ է դատախազ նոցա, յորժամ ոչ գործեն զնոսա՝ ըստ այնմ.* «Գոյ որ դատի զձեզ, Մոսէ՛ս, յոր դուքն յուսացեալ էք» (հմմտ. Յովհ. ԺԲ. 48), *այսինքն՝ Աւրէնքն, եւ թէ՝* «Բանն, զոր խաւսեայ՝ նա դատի զնոսա» (հմմտ. Յովհ. ԺԲ. 48)*: Վասն այսորիկ ի նոսա ձգեաց, եւ նոքա անձամբ զանձինս դատապարտեցին՝ ի վերայ ինքեանց ձգելով զվճիռն, եւ զանձինս աւտար ի կամացն Աստուծոյ ցուցին:*

Ասէ ցնոսա Յիսուս. «Ամէն ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք եւ պոռնիկք, յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն Աստուծոյ» (ԻԱ. 31):

Տեսանե՞ս, թէ՝ ո՛րպէս յայտնեաց, զոր թէ նախ էր ասացեալ. ծանր թուէր նոցա բանն եւ տաղտկալի, բայց յորժամ զվճիռն ետուն անձանց, ապա ի մէջ բերէ զայս, թէ ճշմարիտ այդպէս է, որպէս ասացիք, «**զի մաքսաւորք եւ պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն Աստուծոյ**»*: Ո՛չ յայտնապէս ասաց «հեթանոսք», զի մի՛ ամենեւին վհատիցին, այլ թէ՝* «**մաքսաւորք եւ պոռնիկք**»*: Այսու ցուցանէ նախ՝ թէ ի հրէից բազումք հաւատացին եւ հաւատալոց էին, որպէս Մատթէոս մաքսաւոր եւ Ղեւի Ալփեայ եւ Պաւղոս, եւ ի պոռնկաց եւս, որպէս կինն այն, որ արտասուաւքն զոտս նորա լուանայր եւ հերովն մաքրէր եւ իւղովն աւծանէր* (տե՛ս Ղուկ. Է. 37-38)*: Եւ երկրորդ՝ զհեթանոսս յա՛յս առակէ* «**մաքսաւոր**»՝ *զառ ի*

միմեանց յանցա՛նսն ասէ, իսկ «**պոռնիկ**»՝ *զհեռանալն յԱստուծոյ եւ զշնալն ընդ քարի եւ ընդ փայտի* (տե՛ս Երեմ Գ. 9), *սոքա թարց Աւրինաց՝ միայն ի հաւատոցն արդարութենէ յառաջեցին յարքայութիւնն Աստուծոյ: Եւ դարձեալ՝* «**յառաջելն**» *ասել՝ ոչ թէ սոքա երթիցեն եւ նոքա՝ զկնի, այլ զի նախանձ արկցէ նոցա, թէ կամեսցին հաւատալ, զի ոչինչ այնպէս յորդորական առնէ զթանձրամիտն, որպէս նախանձն, վասն այսորիկ հանապազ ասէր, թէ՝* «Եղիցին առաջինք յետինք, եւ յետինք՝ առաջինք» (Մատթ. ԺԹ. 30, Ի. 16)*: Հանդերձ այսու եւ այլ իմն ուսուցանէ, թէ մուտ յարքայութիւնն է Աւրինաց պահպանութիւնն, զի որք զղջանանն ի մեղաց եւ մտանեն գործեն յայգի նորա՝ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ քաւել զյանցանսն, թէպէտ եւ յոյժ ծանրագոյն իցեն մեղաւք, վերին կենացն լիցին ժառանգք՝ ըստ այնմ.* «Թէ անաւրէնն դարձցի յանաւրէնութենէ իւրմէ, կեցցէ» (հմմտ. Եզեկ. ԺԸ. 21), *որպէս եւ ընդդէմ այսր.* «Արդարն եթէ դարձցի յարդարութենէ իւրմէ, մի՛ յիշեսցի արդարութիւն նորա, զոր արար, այլ ի մեղս իւր մեռցի» (հմմտ. Եզեկ. ԺԸ. 24), *ապա ուրեմն ամաչեսցեն յոյժ՝ որք զապաշխարութիւնն խոտեն:*

Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան, եւ ո՛չ հաւատացէք նմա, եւ մաքսաւորք եւ պոռնիկք հաւատացին նմա, եւ դուք տեսէք եւ ո՛չ զղջացարուք յետոյ հաւատալ նմա (ԻԱ. 32):

Դարձեալ՝ այսու զառաջինն հաստատէ. զի որպէս Տէրն առ ձեզ մատեաւ նախ, այսպէս եւ ծառայն, զի առ ձե՛զ եկն Յովհաննէս եւ ո՛չ առ նոսա ընթացաւ, եւ ո՛չ այսչափ միայն, այլեւ «**արդարութեան ճանապարհաւ**»*, քանզի ոչ կարէք մեղ դնել նմա, թէ ծոյլ ոք էր կամ ոչ առնէր փոյթ զումեքէ, եւ կամ արտաքոյ Աւրինացն ընթանայր, այլ զի վարս անարատս ունէր՝ եւ խնամս կարի յաճախագոյնս: Նա՛ զի եւ ոչ յափշտակեաց զպատիւ Տեառն իւրոյ, այլ իբրեւ կարծէին վասն նորա, թէ նա իցէ Քրիստոսն, ասաց, թէ՝* «Եւ ոչ զխրացս կաւշկաց նորա արժանի եմ բառնալ» (հմմտ. Մատթ. Գ. 11), *որ եւ մեծ արդարութիւն է, սակայն ո՛չ անսացիք նմա, որ է յոյժ կշտամբանք անձանց ձերոց, զի այնպիսում առն ոչ հաւատացէք: Եւ ա՛յս եւս կրկին տանջանք. զի մաքսաւորքն անսացին եւ մկրտեցան, եւ դուք ո՛չ ընդ նոսա եւ ո՛չ յետ նոցա, որ ամենեւին անարգանք են ձեզ եւ նոցա՝ պարծանք, զի առ ձեզ եկն եւ չհամարեցայք ինչ, եւ առ նոսա ոչ չոգաւ եւ ընկալան, եւ դուք ոչ նախանձեալ ընդ նոսա եւ անձանց ձերոց վարդապետ ստացեալ փարթար յետին լինել*

նոցա, թէ եւ ոչ առաջին: Վասն այսորիկ վրիպեալ էք ի ներելոյ եւ ի թողութենէ դուք, եւ նոքա ոչ միայն ըստ շնորհաց մտին, այլեւ ըստ արդարութեան, զի ո՛չ նոյնպէս պոռնիկ կացին եւ մտին, այլ լուան եւ հաւատացին եւ սրբեցան եւ փոխեցան, եւ ապա՛ մտին՝ ըստ երգոյն, թէ՝ «Ռահաբ պոռնիկն եւ բաբելոնացին եւ հնդիկն եւ այլազգիքն անդ էին» (հմմտ. Սաղմ. ՁՁ. 4):

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Այս մետասան առակն է արքայութեան:

«**Այր**» (Մատթ. ԻԱ. 28) *կոչի Աստուած.*

Ա. Նախ՝ արի եւ զաւրաւոր է:

Բ. Երկրորդ՝ առնող եւ արարիչ է: Եւ մի է աստուածութիւնն եւ բնութիւնն:

Եւ «**Բ. որդիք**» (ԻԱ. 28)՝ *հրեայք եւ հեթանոսք: Այլեւ արդարք, որպէս փարիսեցիք եւ մեղաւորքն, որպէս մաքսաւորք:*

Յայսմ առակէ Զ. (6) իր ուսուցանէ.

Ա. Նախ՝ թէ հաւասար որդիք են հրեայք եւ հեթանոսք ըստ արարչութեան:

Բ. Երկրորդ՝ առաջին են հրեայք ըստ Աւրինաց:

Գ. Երրորդ՝ նոքա բանիւ հնազանդ եւ գործով՝ ոչ, եւ սոքա բանիւ ոչ հնազանդեցան, այլ գործով:

Դ. Չորրորդ՝ զի ոչ ինչ աւգնէ աւրէնքն բանիւ, այլ դատախազ լինի:

Ե. Հինգերորդ՝ զի անձամբ դատապարտեցին զինքեանս:

Զ. Վեցերորդ՝ զի մեղաւորք արդարացան զղջմամբն եւ հաւատով, եւ նոքա անզեղջ եւ անհաւատ կացեալ՝ կորեան:

Վասն Յովաննու

Հարց. Յովաննէս եկն ճանապարհաւ արդարութեան (ԻԱ. 32):

Պատասխանի. Չորս ինչ ցուցանէ աստ արդարութիւնն.

Ա. Նախ՝ խոնարհութիւն, որ ոչ ընկալաւ զպատիւ Տեառն իւրոյ, ասէ. «Չեմ արժանի լուծանել զխրացս նորա» (հմմտ. Յովհ. Ա. 27):

Բ. Երկրորդ՝ արդար քարոզութեամբ:

Գ. Երրորդ՝ անարատ ի վարս:

Դ. Չորրորդ՝ ամենեցուն խնամարկու:

Եւ ամենայն քարոզողի պարտ է զչորեսինս զայս ստանալ:

ՎԱՄՆ ԱՅԳԻՈՅՆ

Մատթ. ԻԱ. 33-46

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Այլ առակ լուարուք. Այր տանուտէր տնկեաց այգի եւ շրջագայեաց ցանգ եւ փորեաց հնձան (հմմտ. Մատթ. ԻԱ. 33):

«**Այգի**»՝ *առաջին ժողովուրդն*, «**ցանգ**»՝ *պահպանութիւնն Աստուծոյ*, «**աշտարակ**»՝ *տաճարն*, «**հնձան**»՝ *տեղի պատարագացն եւ նուիրացն*, «**մշակք**»՝ *հրէայքն եւ իմաստունք ժողովրդեանն, գնալ Տեառնն՝ ոչ եւս երեւիլ նոցա ի հրեղէն ամպ, ժամանակ մերձեցեալ եւ ծառայք, մարգարէիցն առաքումն, ու որդի Քրիստոս.*

Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա եւ կալցուք զժառանգութիւն սորայ (ԻԱ. 38):

Որպէս Հերովդէս լուեալ վասն գալստեան նորա կոտորեաց զմանկտին Բեթղահէմի, կամելով զնա կորուսանել (տե՛ս Մատթ. Բ. 16), *գանեցաւ Միքիա, ապտակեալ ի Սեդեկիայէ* (տե՛ս Բ. Մնաց. ԺԸ. 23): *Սպանին զԶաքարիաս ի մէջ տաճարին եւ սեղանոյն* (տե՛ս Մատթ. ԻԳ. 35), *քարկոծեցին զԵրեմիաս* (տե՛ս Երեմ. ԼԸ. 6) *եւ զԶաքարիաս զորդի Յովիդայայ (տե՛ս Բ Մնաց. ԻԴ. 20-21):*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Այլ միւս եւս առակ լուարուք զայգոյն եւ զտնկողէն եւ զնորին խնամոցն եւ զաչաղկոտ մշակացն, որք վասն չտալոյ զպտուղն սպանին զծառայսն, ապա եւ զհարազատ որդին եւ զժառանգ այգւոյն (տե՛ս Մատթ. ԻԱ. 33-43):

«**Այգի**» *այն իսկ է, զոր յԵգիպտոսէ փոխեաց, սատակեաց զհեթանոսս եւ զնոսա տնկեաց,* «**ցանկով պարսպեաց**» (ԻԱ. 33) *զնա Աւրինաւքն: Եւ գուբ* «**հնձան փորեաց**» *ի նմա (ԻԱ. 33)՝ զտաճարն. եւ* «**շինեաց աշտարակ**» *(*ԻԱ. 33)՝ *զսեղանն: Եւ* «**եւ զնա ցմշակսն**» (ԻԱ. 33)՝ *զառաջնորդսն ասէ: Եւ* «**գնաց**», *ասէ* (ԻԱ. 33), *այն իսկ է, զոր երկայնամիտն իսկ եղեւ եւ ո՛չ անդէն առ ետեղ, էած զպատիժսն: Բայց դու տես ասա զնորա կարեւոր խնամսն եւ զնոցա զանչափ վատութիւնսն, զի եւ զմշակացն գործ ինքն գործեաց՝ զցանկն ածելով եւ զայգին տնկելով եւ զայլն ամենայն կազմելով: Սակաւ ինչ յանձնարար նոցա՝ դարմանել եւեթ զտնկեալն եւ պահել, եւ չէր ինչ պակաս, այլ ամենայն ինչ կազմ եւ կատարեալ, սակայն այնպէս ինչ չաւգտեցան:*

Եւ առաքեաց առ նոսա զծառայս իւր (հմմտ. ԻԱ. 34):

Զմարգարէսն՝ առնուլ զպտուղս նորայ՝ զհնազանդութիւնն եւ զգործոցն զհանդէս, սակայն եւ այնմ եւս զչարութիւն ցուցանէին. ո՛չ միայն զպտուղն չտալովն, որք յայնչափ խնամս վայելեցին, այլեւ դժկամակ լինէին ընդ ծառայսն, որ գնային եւ արեամբ եւս զձեռս լնուին՝ ինքեանք վրիժապարտք, եւ յայլոց վրէժս պահանջէին: Նմին իրի եւ երկիցս եւ երիցս առաքեաց (տե՛ս Մատթ. ԻԱ. 35, 36, 37), *զի եւ առաքչին մարդասիրութիւնն երեւեսցի, եւ նոցա՝ հեստութիւնն:*

Յետոյ,- ասէ,- առաքեաց զորդի իւր (հմմտ. ԻԱ. 37):

Եւ է՞ր վասն յառաջ ո՛չ առաքեաց զորդին, զի յիրացն, որ ընդ ծառայսն անցուցին, ստգտանիցեն զանձինս եւ ի ցասմանէն ցածնուցուն եւ ապա յայնմ, որ եկն, զանգիտեսցեն եւ ամաչեսցեն, զի՞նչ իցէ, թերեւս ակն ածիցեն. ոչ եթէ առ անդէտս ինչ ասիցէ. ա՛ւն անդր քաւ լիցի, այլ առ ի ցուցանել, թէ կարի իմն չարիք եւ պատասխանի տալոյ չի՞ք ինչ հայթեթանք: Այլ ինքն գիտէր, թէ սպանանելոց էին, եւ առաքեաց, զի թերեւս ակն ածեսցեն. զոր ինչ պարտ էր նոցա առնել, պատմէ, թէ ակն ածել պարտ էր եւ ո՛չ յանդգնել: Եւ արդ զի՞նչ գործեցին, որոց ընդ առաջ[1] *պարտ էր իսկ երթալ եւ թողութիւն վասն առաջին յանցանացն խնդրել, նոցա եւս քան զեւս գուն գործեալ յառաջին պղծութիւնսն յաւ[ել]ուին:*

Տեսին,- ասէ,- զորդին եւ ասեն. «Եկայք սպանցուք զսա» (հմմտ. ԻԱ. 39):

Է՞ր վասն եւ վասն որո՞յ իրաց:

«Սա է ժառանգն,- ասեն,- սպանցուք, եւ մեր լիցի ժառանգութիւն» (հմմտ. ԻԱ. 39):

[1] Ա պարտ էր իսկ

Որպիսի ինչ մեզ[1] *կամ ի մեծ կամ ի փոքու կարիցէք դնել, այլ զի թերեւս պատուեացն զձեզ, այնու մեղադիր լինիք, եւ կամ զի Աստուածն է եւ վասն ձեր մարդ եղեւ եւ բազում եւ մեծամեծ սքանչելիս արար:*

ԵՓ *Իսկ յետոյ առաքել զՈրդին. ոչ թէ, զի վերջին էր նա, այլ յետոյ երեւեցաւ, այն, որ երբեմն էր իսկ, որպէս եւ վկայեաց Յովհաննէս, թէ՝* «Որ գալոցն է զկնի իմ, առաջի իսկ է» (հմմտ. Յովհ. Ա. 29)*: Տե՛ս ընդ ամբարշտութեանն եւ զկարի անմտութիւնն եւ զպատճառս սպանութեանն.* «**Եկայք, ասեն, սպանցուք**»*:*

ԵՓ *Զնա սպանին, եւ ժառանգութիւնն նոցա բարձաւ եւ տուաւ հեթանոսաց:*

Կ *Տեսանես՝ զի արդ յառաջագոյն մարգարէանա, եւ զտեղին եւ ուր սպանանելոց էին, յայտ առնէ:*

Հանին,- ասէ,- արտաքոյ այգւոյն եւ սպանին (ԻԱ. 40):

Մուծանէ զնա ի դատ առաջի նոցա եւ ասէ, որում արժանի են մշակքն. հատին ինքեանք զվճիռ ի վերայ անձանց իւրեանց եւ ասեն.

«Չարսն չարաւ կորուսցէ, եւ զայգին տացէ այլոց մշակաց» (ԻԱ. 41):

Եւ ո՛չ այսու զհեթանոսաց մուտն կարի քաջ յայտնեաց, զի մի՛ ամենեւին պատճառս տացէ նոցա, այլ ակնարկեաց միայն, թէ տացէ այլոց եւ զմարգարէութիւնն ի մէջ բերէ եւ պատկառելով ասասէ.

«Չիցէ,- ասէ,- ընթերցեալ ձեր: *Թէ՝* **Զվէմն, զոր անարգեցին շինողքն»** (հմմտ. ԻԱ. 42):

ԵՓ *Ո՞ր* «**վէմ**»*. այն, որ ադամանդն կոչի, զի ահաւասիկ ասէ.* «Դնեմ ես ադամանդ ի մէջ որդոցն Իսրայէլի» (հմմտ. Նաւ. Դ. 7)*:*

Կ *Իսկ* «**շինողս**» *զհրէից վարդապետսն կոչէ, որպէս եւ Եզեկիէլ ասէ, թէ՝* «Շինէին զորմնն եւ ծեփէին փորիւ առանց միջ ամուր առնելոյ» (հմմտ. Եզեկ. ԺԳ. 10)*: Եւ զիա՞րդ «անարգեցին», զի ասէին, թէ՝ «Սա չէ յԱստուծոյ եւ մոլորեցուցանէ զժողովուրդս»:*

[1] Ա մեզ] մեղ

Ի Տեառնէ եղեւ այս եւ է սքանչելի յաչս մեր (ԻԱ. 42):

Զի ամենեւին յայտ առնիցէ, թէ նոքա վասն թերահաւատութեանն ելանելոց են, եւ հեթանոսքն՝ հաւատովք մտանելոց: Եւ զայս քանանացովն եւ իշովն եւ Ճ.(100)ապետիւն յայտ արար. ածէ եւ զսովիմբ եւ զպատիժսն:

Եթէ ամենայն, որ ընդ հարցցի ընդ վիմիս ընդ այսմիկ, փշրեսցի, եւ յոյր վերայ անկցի, մանրեսցէ զնոսա (հմմտ. ԻԱ. 44):

Երկուս կորուստ սպառնացաւ աստ՝ մի՝ ի գթելոյն եւ ի գայթակղելոյն:

ԵՓ *Զի՞ մարտեան ընդդէմ նորա իշխանք ժողովրդեանն եւ կամեցան շիջուցանել զնա. զի ոչ քաղցրացաւ նոցա ուսումն վարդապետութեան նորա, զայն յայտ առնէ՝ ասելովն, թէ՝* «**Որ անկցի ի վերայ վիմիս, փշրեսցի**»*:*

Եւ միւսն՝ ի պաշարմանէն եւ յառնելոյ զքաղաքն եւ ի[1] *ընաջինջ առնելոյ, զորս կարի իսկ յայտնագոյնս գուշակեաց, եթէ* «**հոսեսցէ զնա**»*. զի վէմն, ասէ, որ հարկանէր զպատկերն, եղեւ լեառն մեծ, եւ լցաւ ի նմանէ ամենայն երկիր, եւ զի խափանեաց նա զկռոցն պաշտամունս այլովքն հանդերձ:*

Կ *Եւ արդ, իբրեւ լուան զայս ամենայն, պարտ էր երկիր պագանել եւ յերկիւղէ պատժոցն, զոր լուան, ակնածել եւ ցածնուլ:*

Այլ նոքա, իբրեւ լուան, գիտացին, թէ առ նոսա ասաց: Եւ խնդրէին ունել զնա, բայց ի ժողովրդենէն երկեան (հմմտ. ԻԱ. 45-46):

Զգայլին տակաւ, թէ զնոցանէ խաւսի առակաւ, բայց նոքա ո՛չ ի բազմացն երկեւղէ ցածնուին եւ ոչ ի բանիցն ասացելոց, եւ ոչ ի մարգարէիցն վկայութենէ, եւ ոչ յայնմանէ ինչ ակնածէին, զի ինքեանք իսկ անձամբ անձանց ետուն զվճիռն, քանզի անդէն զմաւտաւորս եւեթ խնդրէին, զի չիք ինչ, որ այնպէս գլխիվայր կործանէ եւ դարահոս եւ քարավէժ առնիցէ, որպէս յորժամ աստէն ոք ընդ ժամանակեա կեանս բեւեռեսցի: Եւ չիք ինչ, որ յայսմ ամենայնի տացէ վայելել, որպէս որ միշտ զանտիսն ոք նախամեծար առնիցէ. «Խնդրեցէք, - ասէ, - նախ զարքայութիւն Աստուծոյ, եւ այս ամենայն յաւելցի ձեզ» (Մատթ. ԺԲ. 31):

[1] Ա > ի

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Ա՛յլ առակ լուարուք (Մատթ. ԻԱ. 33):

Ընդէ՞ր միշտ առակ կարգէ. զի զարտաքինսն յոյժ հաւանեցուցանեն առակաւոր խաւսք եւ վարդապետութիւնք, այլեւ զմարգարէութիւնն լնու: Բայց զի՞նչ է, թէ՝ «Ա՛յլ առակ լուարուք»*: Կամ թէ՝ ի վերայ առաջնոյն կրկին յանդիմանութիւն, կամ այն՝ յաղագս արտաքսելոյն, եւ այս՝ յաղագս նորա երախտեացն եւ նոցա անշնորհութեանն եւ չար փոխանակ բարւոյն հատուցանելոյ:*

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի եւ ցանգով պատեաց զնա, եւ փորեաց ի նմա հնձան, եւ շինեաց աշտարակ, եւ եւ զնա ցմշակս եւ գնաց ի տար աշխարհ (ԻԱ. 33):

Մարդասիրի Աստուած ի բազում գիրս աստուածայինս «տանուտէր» կոչիլ. կամ վասն դատողական իշխանութեան տան աշխարհիս եւ ինքնատէրութեանն, կամ վասն զգենլոյ Որդւոյն Աստուծոյ զպատկեր մարդկան, ըստ առաքելոյ՝ «Մոսէս հաւատարիմ է ի վերայ տան նորա, այլ Քրիստոս Տէր է տան իւրոյ, որոյ տունն մեք իսկ եմք» (հմմտ. Եբր. Գ. 5-6)*: Արդ, սա տնկեաց* «**այգի**»*, կամ զդրախտն ձեռաւք իւրովք եւ լուսով՝ իբր ցանկով, պատեաց եւ զատոյց յայսմ աշխարհէ, եւ փորեաց ի նմա հնձան՝ յամենայն ծառոց ուտելն, այլեւ մտացն խորութեամբ ճմլել զիմաստս Հաւրն, յորմէ ուրախութեան գինին արտաքս հոսէր: Եւ* «**աշտարակ**»*՝ ի գիտութեան փայտէն հրաժարեցուցանելն, եւ ետ զնա ի մարդն՝ գործել եւ պահել ըստ աւրինի մշակաց՝ կրկին տածմամբ: Իսկ* «**գնալն**» *զաներեւոյթ լինելն Աստուծոյ նշանակէ, քանզի ընդ մարմին եւ ընդ անմարմին կարի իմն յոյժ է միջոցն:*

Եւ կամ՝ «**այգի**»*՝ զոր ի ձեռն Մոսիսի տնկեաց՝ խլելով զքանանացիս եւ տնկելով զիսրայէլացիս՝ ըստ Դաւթայ.* «[Այգի] յեգիպտոսէ փոխեցեր, հաներ զհեթանոսս եւ զնոսա տնկեցեր» (Սաղմ. ՀԹ. 9)*, եւ Եսայի, թէ՝* «Այգի զաւրութեանց տունն Իսրայէլի» (հմմտ. Ես. Ե. 7)*, իսկ* «**ցանկ**»*՝ զխնամսն ասէ յեգիպտոսէ եւ այսր, կամ զԱւրինացն զգուշութիւն, որով որոշեալ ի հեթանոսական պաշտամանցն: Եւ* «**հնձան**» *զտեղի զենմացն ասէ եւ* «**աշտարակ**»*՝ զսեղանն քաւութեան, յորում ոչ ոք իշխէր մտանել, բայց միայն քահանայապետն, եւ զայն միանգամ ի տարւոջն* (տես Ելք Լ. 10)*, որ ըստ բարձրագոյն խորհրդոցն, որ ի սեղանն կատարէր, զխաչին ասեմ հնձան,* «**աշտարակ**» *կոչեաց. կամ*

վասն տաճարին ասաց զայս: Իսկ «**մշակ**» *զառաջնորդս եւ զդպիրս ժողովրդեանն ասէ, յորս ետ գործել զայգին, այսինքն՝ վարդապետել եւ դաստիարակել առ ի հաւատս ըստ Աւրինացն, որք գուշակք էին Աւետարանին աւետեաց:*

«*Եւ գնաց,- ասէ,- ի տար աշխարհ*»*: Կամ՝ զի երկայնամիտ եղեւ եւ ոչ անդէն էած զպատիժն, յորժամ յանցեան, կամ՝ այլ ոչ եւս երեւեցաւ նոցա հրեղէն ամպով, որպէս ի Սինէական լերինն* (տես Ելք ԺԹ.)*: Բայց դու տե՛ս ինձ աստ զնորա կարեւոր խնամսն, զի զմշակացն զծանրագոյն գործն ինքն գործեաց՝ զտնկելն, զպատելն, զշինելն, եւ նոցա դարմանել եւեթ յանձն արար եւ պահել, եւ չէր ինչ պակաս, այլ ամենայն ինչ կազմ էր, սակայն եւ ոչ այնպէս աւգտեցան:*

Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա (ԻԱ. 34):

Ո՛չ իսկոյն մինչդեռ նորատունկք էին, զի մի՛ դժուարեսցին, այլ յորժամ ժամանակ պտղոյն մերձեցաւ, այսինքն՝ զի կերակրեաց յանապատին մանանայիւն եւ սնոյց վիմաբուղխ ջրովն (տես Ելք ԺԶ., ԺԷ.) *եւ չնորհեաց զպարգեւական երկիրն՝ հանգչելով ի նոսա եւ զարգացոյց պէսպէս տրաւք, եւ զաւելորդ բողբոջս ուռոց նոցա խանգարիչս յապաւիչս՝ զամեղեկացիսն եւ զքանանացիս, զեաւթն ազգս զաւրաւորս քան զնոսա քանցեաց եւ ապա առաքեաց զծառայս իւր առ մշակսն, զմարգարէսն առ քահանայսն եւ առ իշխանսն՝ խնդրել հաւատս եւ գործս բարիս ի ժողովրդենէն եւ կամ զհնազանդութիւն Աստուծոյ: Եւ թէ ընդէ՞ր զմարգարէսն* «**ծառայս**»*, իսկ զքահանայս* «**մշակ**» *կոչէ, զի մարգարէքն զկամս Աստուծոյ միայն պաշտէին առանց վարձու, իսկ քահանայքն վասն վարձուց տասանորդին մշակ էին ժողովրդեան:*

Եւ կալեալ մշակացն զծառայս նորա՝ զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին (ԻԱ. 35):

Տէ՛ս զչարութիւն նոցա, ոչ միայն զպտուղն չետուն՝ որք յայնչափ խնամս վայելեցին, այլեւ դժկամակ լինէին ընդ ծառայսն եւ արեամբ զձեռսն լնուին, ինքեանք վրիժապարտք էին եւ յայլոց վրէժս խնդրէին: «**Զոմն տանջեցին**»*,- ասէ: Գանեցաւ Միքիա յԱքայաբէ եւ ապտակեցաւ ի Սեդեկիայէ* (տես Գ. Թագ. ԻԲ.)*, սպանաւ*

Զաքարիա ի մէջ տաճարին եւ սեղանոյն (տե՛ս Մատթ. ԻԳ. 35), *եւ սղոցեցաւ Եսայիաս, քարկոծեցին զԵրեմիա եւ զմիւս Զաքարիա՝ որդի Ամովթայ:*

Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազում քան զառաջինսն, եւ արարին նոցա նոյնպէս (ԻԱ. 36):

Այսու զմարդասիրութիւնն իւր ցուցանէ եւ զնոցա հեստութիւնն, բայց «**բազում ծառայս**» *ասելով կարի զպատիժս նոցա ծանրացուցանէ, զի ոչ ի ծառայիցն Աստուծոյ ակն ածեցին եւ ոչ ի բազմացն աչառեցան, այլ սպանին եւ զնոսա եւ չարչարեցին եւ նախատեցին, որպէս զԵղիա եւ զԵղիսէոս եւ զերկոտասան մարգարէսն եւ զայլս բազումս:*

Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր եւ ասէ. «Թերեւս ամաչեսցեն յորդւոյ ասփի իմմէ» (ԻԱ. 37):

Է՞ր վասն յառաջագոյն ոչ առաքեաց զՈրդին. զի յիրացն, որ անցուցանէին ընդ ծառայսն, ըստգտանիցեն զանձինս եւ ցածնուցուն ի ցասմանէն, եւ ապա յայնմանէ, որ եկն, զանգիտեսցեն եւ ամաչեսցեն: Եւ դարձեալ՝ յետոյ առաքեալ զՈրդին, ո՛չ եթէ վերջին էր նա, այլ յետո՛յ երեւեցաւ մարմնով, որ ըստ աստուածութեանն նախ էր, քան զյաւիտեանս՝ ըստ Յովհաննու, թէ՝ «Որ զալոցն է զկնի իմ, նախ քան զիս է» (հմմտ. Յովհ. Ա. 15)*:* «**Առաքեաց,- ասէ,- առ նոսա զորդի իւր**»՝ *զհամագոյակիցն իւր եւ զհարազատ սիրելին, որպէս վկայեաց ի Թաբոր եւ ի Յորդանան* (տե՛ս Մատթ. ԺԳ. 5, Գ. 17): *Եւ «առաքեաց» ասելն, զմարդկութիւնն նշանակէ, կամ իբրեւ զԱստուած՝ զի զհաճութիւն Հաւրն ցուցցէ առ որս զիւրն զամենայն զբանս եւ զգործս վերաբերէր:*

«**Թերեւս,- ասէ,- ամաչեսցեն յորդւոյ ասփի իմմէ**»*: Ո՛չ թէ երկբայութեամբ զ«թերեւս»ն դնէ, ա՛ւն անդր ի բաց տար. որ գիտէ զամենայն նախ քան զլինելն իւրեանց, գիտէ՛ր, թէ սպանանելոց են եւ զնա, այլ ցուցանէ, թէ կարի մեծ չարիք գործեն, եւ պատասխանի տալոյ չիք հայթհայթանս, զի գիտացին, թէ Որդի է, նախ ի մարգարէիցն եւ ի բերանոյ նորա լուան եւ ի գործոցն ճանաչեցին, զի ոչ հանգոյն ծառայիցն, այլ տիրաբար հրաման տայր տարերց, եւ հնազանդէին, եւ զմեղս թողոյր եւ ազատէր, յորոց ծանեան, թէ Տէր է եւ Որդի Աստուծոյ, բայց յանդգնեալ սպանին, որոց ակն ածէն*

էր անկ եւ ամաչելն: Իսկ եթէ ոք ընդդէմ դնիցէ, թէ որովհետեւ գիտէր, թէ սպանանելոց են, ընդէ՞ր իսկ առաքեաց, եւ թէ առաքեաց, ասէ՝ ոք, վասն բարութեանն, եւ նոքա սպանին եւ զգիտութինն Աստուծոյ կատարեցին, զի մի՛ անգէտ կարծիցի, է՞ր վասն մեղադրէ նոցա եւ տանջէ: Առ այս նախ զՊաւղոսին ասասցուք, թէ՝ «Դու ո՞վ ես, մա՛րդ, որ պատասխանի տաս Աստուծոյ» (Հռոմ. Թ. 20)*: Եւ երկրորդ՝ զի գիտէր Աստուած, թէ սպանանելոց են զՈրդին՝ յայտ է ահա, բայց նոքա, որ սպանին, ո՛չ յաղագս այնորիկ սպանին, զի զկամս Հաւրն արասցեն, եւ զգիտութիւն նորա լցցեն, այլ առ նախանձու մատնեցին եւ սպանին, որպէս վկայէ աւետարանիչն (տե՛ս Մատթ. Իէ. 18), վասն այսորիկ տանջեսցին, զի գիտութեամբն՝ յառաջադրութիւնն Աստուծոյ հաստատեսցի եւ սպանումն տոյժք նոցին եղիցի, որպէս ինքն ասաց, թէ* «Որդի մարդոյ ըստ սահմանելոյն ի կամս Հաւր երթայ, որպէս եւ գրեալ է, բայց վա՛յ յոր ձեռն մատնեսցի» (հմմտ. Ղուկ. ԻԲ. 22)*:*

Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն ընդ միմս. «Սա՛ է ժառանգն, եկայք սպանցուք զսա եւ կալցուք զժառանգութիւն սորա»: Եւ առեալ՝ հանին զնա արտաքոյ քան զայգին եւ սպանին (ԻԱ. 38-39):

Յայտ առնէ այսու զնոցա լրբութիւնն, միանգամայն եւ զինքեան աստուածական զաւրութիւնն, որ ծանեաւ զխորհուրդ մտաց նոցա, քանզի իբրեւ տեսին, ասէ, այսինքն՝ զանմարմին Բանն Հաւր՝ զանտեսն աչաց, մարմնով երեւեալ յերկրի՝ ըստ մարգարէին (տե՛ս Բարուք Գ. 38), *եւ ծնեալ Որդի ի կուսէն՝ ըստ Դաւթի, ասացին ի միտս.* «**Սա է ժառանգն**», *ապա ուրեմն ո՛չ յանդգէաս սպանին: Տես եւ զմի՛ւս եւս չարութիւն, զոր պարտ էր ընդ առաջ երթալ եւ նեղումն հայցել վասն առաջին յանդգնութեանն, նոքա գուն եղեալ եւ զայս յառաջին պղծութիւնն յաւելուին՝* «**Սա է ժառանգն, եկայք սպանցուք**»*: Է՞ր աղագաւ եւ կամ վասն որո՞յ իրաց. թերեւս յանցա՞նք ինչ իցեն մեծ կամ փոքր, թերեւս պատուե՞աց զձեզ կամ վասն ձեր մա՞րդ եղեւ եւ բազում սքանչելի՞ս ի ձեզ ներգործեաց: Ո՛չ ասեն, այլ զի* «**կալցուք զժառանգութիւն սորա**»*: Այս կարի անմտութիւն է զկնի լրբութեանն եւ ամբարշտութեանն, որպէս նախ Հերովդէս խորհեցաւ կոտորել զմանկունսն՝ կամելով կորուսանել զնա* (տե՛ս Մատթ. Բ. 16-18) *եւ ոչ կարաց, նոյնպէս եւ նոքա խորհեցան՝ որում ոչ հանդիպեցան, զի որք ուտէին զիսրայէլ, բերանալիր*

բերանով մինչեւ ի սպանումն նորա, յետ սպանման նորա՝ բարձաւ ժառանգութիւն նոցա եւ տուաւ հեթանոսաց՝ ըստ Դաւթի. «Տաց զհեթանոսս ի ժառանգութիւն եւ զամենայն ծագս» (հմմտ. Սաղմ. Բ. 8)*: Քանզի յիրաւի ասացեալ է, թէ ոգիք ըմբռնեալ ի մեղս՝ ի մտաց եւս անկանին, զի ընդունայն եղեւ խորհուրդ նոցա եւ ըմբռնեցան ի գիտութեանն իւրեանց, որպէս ասացին մարգարէքն* (տե՛ս Սաղմ. Ե. 11, Ես. Ը. 10, ԽԴ. 25, Երեմ. ԽԹ. 7, Աբդիու 6)*:* **«Եկայք սպանցուք զսա,- ասեն,- եւ կալցուք զժառանգութիւն սորա»:** *Որպէս ասացաք, յայտնի եղեւ այսու, թէ վասն ագահութեան եւ նախանձու ի սպանումն եկին ժառանգին Հաւր եւ ո՛չ ի կամացն Աստուծոյ լրումն փութացան:*

«Հանին զնա,- ասէ,- արտաքոյ [քաղաքին] քան զայգին եւ սպանին»: *Յառաջագոյն մարգարէանայ վասն մահուն, միանգամայն եւ զտեղին յայտնապէս ցուցանէ, զոր յետ բազում նշանացն հանեալ արտաքոյ քաղաքին, զոր առակաւ* «այգի» *ասէ, խաչեցին՝ ըստ առաքելոյ, թէ՝* «Արտաքոյ դրանն չարչարեցաւ» (Եբր. ԺԳ. 12)*: Այլեւ արտաքոյ Աւրինացն սպանին, զի հրամայէր ոչ մխել զձեռն յարիւն անպարտ* (տե՛ս Բ. Այր. ԺԹ. 10, ԻԱ. 8)*, եւ նոքա* «որսացան զանձն արդարոյ» (Սաղմ. ՂԳ. 21)*: Նաեւ այսու զկամաւորն նշանակէ մահ:*

Արդ, յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ (ԻԱ. 40):

Որպէս երբեմն ասէր մարգարէին. «Զի՞նչ ինչ առնելոյ էր այգւոյ իմում, եւ ես ոչ արարի» (Ես. Ե. 4)*. Նոյնպէս եւ աստ զդատաստանն առ նոսա ձգէ, թէ՝ ի՞մ իմիք արժանի են մշակքն: Բայց զի՞նչ է, թէ՝* **«Յորժամ եկեսցէ տէր այգւոյն»:** *Կամ յերկայնմտութենէն զարթչի եւ վրէժխնդիր լինի արեանն Որդւոյ, կամ յորժամ փառաւքն Հաւր յերկնից եկեսցէ հատուցումն առնել իւրաքանչիւր գործոց, զի՞նչ արասցէ նոցա, այսինքն՝ թէ որք անձամբ սոսկ սխալեցան, ո՛չ կարիցեն ապրել ի բարկութենէն, իսկ որք յարիւն Որդւոյն Աստուծոյ ձեռնամուխ եղեն, զի՞նչ արասցեն:*

Ասեն ցնա. «Զչարսն չարաւ կորուսցէ եւ զայգին տացէ այլոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց» (ԻԱ. 41):

Յակամայ կամս հատին ի վերայ անձանց զվճիռն, թէ դատապարտելոց են, որ եղեւ իսկ ստուգութեամբ, զի թշնամեացն վկայութիւնն լի է ճշմարտութեամբ: **«Զչարսն,- ասեն,- չարաւ կորուսցէ»:**

Երկնակի լսի այս: Կամ թէ՝ զոր ինչ արարին նոքա ընդ ծառայսն Աստուծոյ չարութիւն, եկեսցէ հռոմայեցին եւ արասցէ ընդ նոսա կորուստ եւ սպանութիւն, որ հանգոյն նոցա եւ չարք են նոքա: Եւ կամ թէ՝ զչարութեամբ զչարացեալսն կորստեան մատնէ, այլեւ զչարագործսն հանդերձ չարութեամբն իւրեանց կորուսանէ, որպէս զսոդոմայեցիսն, զի ոչ զնոսա միայն տանջէ, այլեւ զտեղիս նոցա բնաջինջ աւերէ (տե՛ս Ծնն. ԺԹ.)*:*

«Եւ զայգին տացէ այլոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց»: *Այս զհեթանոսաց մուտն յայտնապէս նկարէ, զի* «այլն» *զի՞նչ յայտնէ, քան թէ զազգս աւտարս հեթանոսաց, որոց տնկեցաւ փոխանակ հին այգւոյն՝ նոր ժողովուրդ հաւատացելոց ի Քրիստոս եւ ցանկեցաւ առաքելովք եւ մարգարէիւք, այլեւ բարեպաշտ թագաւորաւք: Եւ փորեցաւ հնձան խաչին, յորմէ վտակք կրկնակի աղբեր կայլակնացեալ հրաշիւք բղխէ եւ յաներեւոյթս զբանաւոր անդաստանս ոռոգէ, կանգնելով աշտարակ զմարմինն տէրունական՝ շինեալ ի հոգւոյ եւ ի մարմնոյ եւ ի մտաց, միացեալ լրմամբ աստուածութեանն եւ բարձրացեալ ի խաչին, որոյ մշակ՝ Հայրն է երկնաւոր եւ կամաց նորին հետեւաւղք՝ աստուածային որեարք, որք տան զպտուղն կենաց ծառոյն,* «որ տնկեալ է ի գնացս ջուրց» (Սաղմ. Ա. 3)*, ի ժամու մաքրութեան սրբազան ժողովրդոց զմարմին եւ զարիւն Որդւոյն Աստուծոյ, այլեւ դաւանութիւնս ուղիղս ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ, նաեւ ի տնաւրէնութիւն Բանին, եւ գործս մտաւորս եւ կատարեալ բանական պաշտաւնս ի ժամու կենցաղոյս, որ ժամանակ է ընդունելի եւ աւր փրկութեան՝ ըստ Պաւղոսի* (տե՛ս Բ. Կոր. Զ. 2)*, նաեւ խոստովանութիւն յետ յանցանացն եւ* «պտուղ արժանի ապաշխարութեան» (Մատթ. Գ. 8) *ծաղկեաց բարեաց գործովք ի ժամու զղջմանն եւ ըստգտանաց սրտին՝ ի փառս Աստուծոյ Հաւր եւ Որդւոյ նորա եւ Հոգւոյ Սրբոյ այժմ եւ յաւիտենից յաւիտեանս. ամէն:*

Ասէ ցնոսա Յիսուս. «Չիցէ՞ երբէք ընթերցեալ ձեր ի Գիրս. «Զվէմն, զոր անարգեցին շինաւղքն, նա եղեւ գլուխ անկեան: Ի Տեառնէ եղեւ այս, եւ է սքանչելի յաչս մեր» (ԻԱ. 42):

Զի՞նչ զայս ասէ առ կարգ բանին՝ տգէտս լինել առ մարգարէութիւնն Դաւթի (տե՛ս Սաղմ. ճԺԷ. 22-23)*: Թուի ինձ յայսմ տեղւոջ համառաւտ անցանել աւետարանչիս, քանզի ասէ Ղուկաս, թէ յորժամ*

վճիռ եհատ վասն չար մշակացն, թէ զնոսա կորուսցէ եւ զայլսին այլոց տացէ (տես Ղուկ. Ի. 16), *որպէս եւ ինքեանք իրաւ համարեցան՝ ըստ Մատթէոսի, ապա իմացեալ, թէ վասն անձանց է այն, ասացին՝ քա՛ւ լիցի զայդ առնել, եւ նա, հայեցեալ ի նոսա՝ ասաց, այսինքն՝ ակնարկեաց, թէ՝ լինելո՛ց է, ապա թէ ոչ՝ զիա՞րդ արդարանայ գրեալն, թէ՝* «**Զվէմն, զոր անարգեցին շինաւոր, նա եղեւ գլուխ անկեան**»: «**Վէմ**» *զինքն ասէ՝ ըստ Եսայեայ, թէ՝* «Դնեմ ի հիմունս Սիոնի վէմ ընտիր» (Եսայ. ԻԸ. 16), *գլուխ անկեան ադամանդեայ, որպէս ասաց Ամոս* (տես Ամոս Է. 7-8): *Նախ՝ վասն անմալելի եւ անխորտակելի գոլոյ: Եւ երկրորդ՝ վասն կուսածնութեանն, որպէս եւ ետես Դանիէլ՝* «վէմ հատեալ առանց ձեռին» (Դան. Բ. 34): *Եւ երրորդ՝ վասն անշարժութեանն: Եւ չորրորդ՝ վասն մշտնջենաւորութեանն, զի յաւիտենական ունի զէութիւնն: Եւ հինգերորդ՝ վասն բղխելոյ զաստուածահրաշ վարդապետութիւնն համաքատակ վիմին, որ յանապատին* (տես Ելք ԺԷ. 6), *որպէս գրեաց եւ Պաւղոս, թէ՝* «Վէմն էր ինքն Քրիստոս» (Ա. Կոր. Ժ. 4), *որ արբուցանէր կանխաւ զՋուրն՝ աւրինակ տալով ժողովրդեանն: Եւ վեցերորդ՝ վասն միացուցանելոյ զհին եւ զնոր Աւրէնս, որոց եղեւ գլուխ անկեան՝ ըստ վիմի Աւրինի, որպէս ասէ ինքն Տէրն, զոր անարգեցին ի ժամանակի հաւատոցն, թէ՝ չէ՛ դա յԱստուծոյ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն* (տես Յովհ. Է. 12, Ժ. 16): «**Շինաւոր**»՝ *վարդապետքն եւ քահանայքն հրէից՝ ըստ Եզեկիէլի, թէ՝* «Շինէին որմ եւ ծեփէին առանց խճելոյ» (հմմտ. Եզեկ. ԺԳ. 10-11), *զի որք կարգեցան զժողովուրդս առ Աստուած ածել, նոքա պատրաստեցան ի բաց կացուցանել:*

«**Նա եղեւ գլուխ անկեան**»: *Աւրինակաւ ասէ, թէ որպէս վէմ, յանհմտութենէ շինողաց յետս ձգեալ, յետոյ անկիւնաքար լինի եւ զերկոսին որմունս ի միասին կցեսցէ, այսպէս եւ նա զերկոսին ազգս՝ զհրէայս եւ զհեթանոսս, զմարդիկ եւ զհրեշտակս, զհոգի եւ զմարմին, ի միասին պատկանեաց, որք յոյժ հեռագոյնք եւ հակառակք էին միմեանց՝ հաւատովք եւ գործովք եւ ցանկութեամբ:* «**Ի Տեառնէ եղեւ այս, եւ է սքանչելի յաչս մեր**». *ցուցանէ, թէ նոքա վասն թերահաւատութեան ելանելոց են, եւ հեթանոսք հաւատով մտանելոց, որպէս քանանացւովն եւ իշովն եւ հարիւրապետիւն յայտ արար* (տես Մատթ. ԺԵ. 22-28, ԻԱ. 1-7, Ը. 5-13), *եւ զի յԱստուծոյ է այս՝ ելն հրէից եւ մուտն հեթանոսաց, սքանչացաւ Դաւիթ ի տեսութիւնս իւր* (տես Սաղմ. ՀԹ. 9), *ոչ ընդ փոխումն այգւոյն, զի ըստ արժանեացն էր այն, այլ ընդ կանխատեսութիւնն Աստուծոյ:*

Վասն այսորիկ ասեմ ձեզ, զի բարձցի ի ձէնջ արքայութիւն Աստուծոյ եւ տացի ազգի, որ առնիցէ զպտուղս նորա (ԻԱ. 43):

«**Վասն այսորիկ**»՝ *վասն մարգարէական կանխութեանն եւ ի վերուստ վճռին: Բայց զի՞նչ է այն, զի նախ* «**այգի**» *ասաց եւ այժմ* «**արքայութիւն**» *անուանէ: Կամ թէ դուռն արքայութեանն Աւրէնքն է, զոր* «**այգի**» *ասաց, իսկ յորժամ ոք զԱւրէնսն ոչ գործիցէ, եւ ոչ յարքայութիւնն մտանել կարէ, կամ թէ ա՛յլ ազգ. զի որչափ ոք զաւրէնս թագաւորի արասցէ, հնազանդ է թագաւորին այնմիկ եւ ասի, իսկ յորժամ աւրինացն ապստամբէ, եւ ի թագաւորութենէ նորա արտաքս ելանէ, զի ոչ ասի նա նոցա թագաւոր, վասն զի ոչ առնեն զհրամանս նորա: Զա՛յս նշանակէ ասելն, թէ՝* «**Բարձցի ի ձէնջ արքայութիւն Աստուծոյ եւ տացի ազգի**», *այսինքն՝ հեթանոսաց, որք գործեն զգործս նորա:*

Եւ որ անկցի ի վերայ վիմիս այսորիկ, փշրեսցի, եւ յոյր վերայ անկցի, հոսեսցէ զնա (ԻԱ. 44):

Եւ զի «**վէմ**» *ասաց զինքն, այժմ զկարծիս նոցա լուծանէ, որ խորհեցան սպանանել զնա, զի թէպէտ մարտեան ընդ նմա իշխանք ժողովրդեանն, այս է անկանելն ընդ վիմին, եւ կամեցան չիջուցանել զնա ի ձեռն խաչին, ինքեանք իսկ խորտակեցան յահաւոր զաւրութենէն եւ ի նշանացն եղելոց, եւ բարձաւ թագաւորութիւն նոցա, եւ եղծաւ կարգ պատարագացն, եւ ցրուեցան ընդ ոլորտս երկրի, զոր աւրինակ ման խեցի, յորժամ հարկանիցի ի վիմի, քանզի դժուարին ասացաւ ընդդէմ խթանի աքացել* (տես Գործք ԻՁ. 14) *եւ կամ ընդ վիմի նետաձիգ լինել, զի զանձի՛նս հարկանիցեն այնպիսիքն:* «*Եւ յոյր վերայ անկցի, հոսեսցէ զնա*». *այս զինքեան վրէժխնդրութիւնն ասէ, զոր էառ ի նոցանէ պաշարմամբ քաղաքին՝ բնաջինջ առնելով զնոսա, ըստ Դաւթի, թէ՝* «Փշրեսցէ զնոսա զաւազանաւ երկաթեաւ» (հմմտ. Սաղմ. Բ. 9), *եւ՝* «Իբր զփոշի, զի հողմ հոսէ ի վերայ երեսաց երկրի» (Սաղմ. Ա. 4): *Եւ դարձեալ՝ փշրեաց վէմն այն զդեւս եւ հոսեաց զկռապաշտութիւնն ի մտաց մարդկան: Եւ դարձեալ՝ զՅովհաննէս հաստատէ* (տես Մատթ. Գ. 12), *զոր ի յերկրորդն գալուստ սրբէ զկալ աշխարհիս եւ հոսէ ընտրութեամբ դատաստանին զթեթեւամիտ*

յարդսն՝ զհրէայս անհաւատս եւ զհերձուածաւղս, որք են ձախակողմեանքն, ի հուրն անշէջ, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:

Իբրեւ լուան քահանայապետքն եւ դպիրք եւ փարիսեցիք զառակս նորա, գիտացին, թէ վասն նոցա ասաց: Եւ խնդրէին զնա ունել, բայց երկեան ի ժողովրդոցն, զի իբրեւ զմարգարէ ունէին զնա (ԻԱ. 45-46):

Իբրեւ լուան զայս ամենայն, պարտ էր երկիրպագանել եւ յերկիւղէ պատժոցն, զոր լուան, ակն ածել եւ ցածնուլ: Նոքա զընդդէմն արարին, զի յորժամ գիտացին, թէ վասն նոցա ասաց, կամեցան ըմբռնել եւ սպանանել, բայց երկեան՝ ո՛չ յԱստուծոյ կամ ի բանիցն ասացելոց, կամ ի մարգարէիցն վկայութենէն, այլ ի բազմամբոխ խուժանէն, զի մարդահաճոյք էին, վասն այնորիկ «ցրուեցան ոսկերք նոցա մերձ ի դժոխս» (հմմտ. Սաղմ. ՃԽ. 7)*: Դարձեալ՝ տես եւ զա՛յն, զի ժողովուրդքն թէպէտ ոչ կատարելապէս զնա ծանեան, բայց ի բանիցն եւ ի գործոցն հրաշից զէթ իբր զմարգարէ ունէին, իսկ նոքա, որ զԱւրէնսն ընթեռնուին, իբր զմահապարտ դատապարտէին: Է՞ր վասն. զի զմաւտաւորս եւեթ խնդրէին, զի չիք այլ ինչ, որ գահավէժ առնէ եւ դարահոս գործիցէ, որպէս ընդ ժամանակեայս բեւեռելն, եւ չիք ինչ, որ յայսմ ամենայնէ զերծուցանէ եւ զմերձակայս եւս վայելել տացէ, որպէս այն, զի զանտիսն նախամեծար առնիցէ՝ ըստ այնմ՝* «Խնդրեցէք զարքայութիւն նորա, եւ այդ ամենայն յաւելցի ձեզ» (հմմտ. Մատթ. Զ. 33), *զորս նոքա ոչ ունէին, եւ ոչ աշակերտել կամէին, որոց յաւելու միւս եւս առակ:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Այս երկոտասան առակ արքայութեան: Այսմ առակաւս Ը. (8) իրս ուսուցանէ.

Ա. Նախ՝ զի այգի է ժողովուրդն, ըստ Եսայայ. «Այգի եղեւ սիրեցեալ յանկեան Իսրայէլ» (Ես. Ե 1):

Բ. Երկրորդ՝ տնկողն եւ խնամողն Աստուած է:

Գ. Երրորդ՝ մշակ զառաջնորդն ասէ:

Դ. Զորրորդ՝ վասն պտուղ խնդրելոյ:

Ե. Հինգերորդ՝ զծառայսն անարգելոյ:

Զ. Վեցերորդ՝ զորդիսն սպանանելոյ:

Է. Եւթներորդ՝ ի դատաստան ինքեան ետուն զվճիռն:

Ը. Ութերորդ՝ բարձաւ ի նոցանէ արքայութիւնն եւ տուաւ հեթանոսաց:

Հարց. Վասն է՞ր այգի կոչէ զժողովուրդն:

Պատասխանի. Վասն Ի. (20) պատճառի.

Ա. Նախ՝ զի տեղեաւ փոփոխեալ տնկի. «Այգի յԵգիպտոսէ փոխեցի» (Սաղմ. ՀԹ. 9), *ասէ:*

Բ. Երկրորդ՝ փուշքն խլի. «Հանէր զհեթանոսս եւ զնոսա տնկեցեր» (Սաղմ. ՀԹ. 9):

Գ. Երրորդ՝ տեղիք պարարտ խնդրէ, յանկեան ի տեղոջ պարարտութեան:

Դ. Զորրորդ՝ նախ՝ հաստատի արմատն. «Հաստատեցեր զարմատս նորա ի հաւատն» (հմմտ. Սաղմ. ՀԹ. 10), *ասէ:*

Ե. Հինգերորդ՝ տարածէ շառաւիղս. «Եւ բազմացաւ ժողովուրդն մինչեւ ի ծովս» (հմմտ. Սաղմ. ՀԹ. 12), *ասէ:*

Զ. Վեցերորդ՝ կանաչ է սաղարթն՝ զուարճացեալ ի միտս:

Է. Եւթներորդ՝ անուշահոտ ծաղիկ՝ յոյսն անմահութեան:

Ը. Ութերորդ՝ գնդակն՝ կապեալ սիրով:

Թ. Իններորդ՝ ողկոյզ քաղցր, գործք բարեաց:

Ժ. Տասներորդ՝ գինին իմաստութիւն եւ ուրախութիւն հրեշտակաց եւ մարդկան:

ԺԱ. Մետասաներորդ՝ ի բազմացն մի այգի եւ մի եկեղեցի կոչի:

ԺԲ. Երկոտասաներորդ՝ ումեմն է այգին եւ ժողովուրդն Աստուծոյ:

ԺԳ. Երեքտասաներորդ՝ յերեք ամն տայ պտուղ, որ է Գ. (3) հասակն:

ԺԴ. Զորեքտասաներորդ՝ յօտելն խոստովանութեամբ:

ԺԵ. Հնգետասաներորդ՝ գօղձն (՞), կուռքն կամ հերձուած:

ԺԶ. Վեշտասաներորդ՝ «ցանգն» (ԻԱ. 33), *աւրէնքն, որ յօտաբաց պարսպէ եւ որոշէ:*

ԺԷ. Եւթն եւ տասներորդ՝ գուփ «հնձան» (ԻԱ. 33)՝ *տաճարն, յորում ամենայն բարութիւնք մեր հաւաքին, եւ որ ի նմանէ շնորհք բաշխին:*

ԺԸ. Ութ եւ տասներորդ՝ «աշտարակ» (ԻԱ. 33)՝ *սեղանն քաւութեան:*

ԺԹ. Ինն եւ տասներորդ՝ **«ձողին»** *իշխանքն ըստ մարմնոյ:*

Ի. Քսաներորդ՝ **«մշակք»** *առաջնորդքն ըստ հոգոյ, սոքա հարկաւորք են այգոյ:*

Հարց. Զի՞նչ է **«Գնաց ի փար աշխարհ»** (ԻԱ. 33). *այսինքն՝ զի երկայնամիտ լինէր եւ ոչ ի նոյն ժամն պատժէր:*

Հարց. Զի՞նչ գործ է մշակին:

Պատասխանի. Զորս.

Ա. Նախ՝ բրելն խրատով:

Բ. Երկրորդ՝ աղբ՝ ապաշխարութեանն:

Գ. Երրորդ՝ ջուր գիտութեան:

Դ. Չորրորդ՝ պահեալն աղաւթիւք:

Վասն պտղոյ այգւոյն

Հարց. Զի՞նչ է **«պտուղն խնդրել»** (ԻԱ. 34):

Պատասխանի. Վեց ինչ.

Ա. Նախ՝ ըստ պատուիրանին՝ զհնազանդութիւնն:

Բ. Երկրորդ՝ ըստ զանազան խնամոցն:

Գ. Երրորդ՝ ըստ ժամանակին՝ յերկար եւ նուազ:

Դ. Չորրորդ՝ ըստ իւրաքանչիւր դիմաց՝ ծեր եւ տղայ:

Ե. Հինգերորդ՝ ըստ աստիճանաց՝ մեծ եւ փոքր:

Զ. Վեցերորդ՝ ըստ զանազան մասանց՝ հոգոյ եւ մարմնոյ զգայութեանց խնդրէ զանազան պտուղ: Նոցա խնդրողքն մարգարէքն էին եւ ի մէնջ հրեշտակք Աստուծոյ, որ զաղաւթս եւ զամենայն գործս բարիս մատուցանեն Աստուծոյ:

Եւ Դ. (4) է յանցումն նոցա.

Ա. Նախ՝ զի պտուղ ոչ ետուն:

Բ. Երկրորդ՝ զծառայսն անարգեցին եւ սպանին:

Գ. Երրորդ՝ ինքեանք էին վրիժապարտք եւ զայլս պարտաւորէին:

Դ. Չորրորդ՝ հանապազ եւ անզեղջ կամաւք:

Վասն որդւոյ

Հարց. Վասն է՞ր **«Յեպտոյ առաքեաց զորդին»** (ԻԱ. 37):

Պատասխան. Վասն չորից.

Ա. Նախ՝ զի յառաջին գործոցն, որ ծառայիցն արարին, զղջացին:

Բ. Երկրորդ՝ զի երկիցեն ի բարկութենէ նորա:

Գ. Երրորդ՝ զի ամաչեսցեն ի բարութենէ հաւրն:

Դ. Չորրորդ՝ զի յառաջին յանցանացն թողութիւն խնդրեսցեն:

Հարց. Վասն է՞ր ասէ. **«Թերեւս ամաչեսցեն»** (ԻԱ. 37), *միթէ՞ անգէտ էր նոցա:*

Պատասխանի. Ոչ էր անգէտ, զի գիտէր որ սպանանէին, եւ նայ առաքեաց ի սպանումն: Այլ զայն պատմէ, զոր պարտն էր առնել եւ ոչ ամաչել, եւ նոքա ոչ արարին, այլ առաւել չարացան:

Հարց. Զի՞նչ է առաւելութիւնն:

Պատասխանի. Չորս ինչ.

Ա. Նախ՝ անդ զծառայսն սպանին եւ ասա՝ զտէրն եւ զսիրելի որդին:

Բ. Երկրորդ՝ անդ վասն պտղոյ, եւ ասա՝ վասն այգոյն:

Գ. Երրորդ՝ զնոսա ի ներս, եւ զսայ արտաքոյ այգոյն:

Դ. Չորրորդ՝ զնոսա սպանին, եւ զսայ խաչեցին:

«Սա է ժառանգն» (ԻԱ. 38):

Կրկին ասեն զպատճառն.

Ա. Նախ՝ զի սա ժառանգ է, սպանցուք:

Բ. Երկրորդ՝ վասն ժառանգութեանն, զի մեր լիցի (հմմտ. ԻԱ. 38):

Վասն առաջնոյն չունին ինչ մեղադիրք.

Ա. Նախ՝ զի պատուեաց զնոսա եւ ետ զայգին:

Բ. Երկրորդ՝ զի Աստուածն մարդ եղեւ եւ վասն փրկութեան նոցա:

Գ. Երրորդ՝ զի բազում բժշկութիւնս արար:

Դ. Չորրորդ՝ զաստուածգիտութիւն քարոզեաց:

Վասն երկրորդին՝ ժառանգութիւնն բարձաւ ի նոցանէ եւ տուաւ հեթանոսաց վասն չորից.

Ա. Նախ՝ զի թշնամիք եղեն սպանութեամբն, զայս ի նետ թշնամեաց նոցա:

Բ. Երկրորդ՝ զի նոքա ոչ սպանին զոք:

Գ. Երրորդ՝ զի ետուն զպտուղն:

Դ. Չորրորդ՝ զի անփոփոխ կացին, զանփոփոխ ժառանգութիւնն նոցա ետ:

Հանին արտաքոյ եւ սպանին (ԻԱ. 39):

Զորս ինչ մարգարէանայ.

Ա. Նախ՝ զսպանումն:

Բ. Երկրորդ՝ զտեղին:

Գ. Երրորդ՝ զպատճառն:

Դ. Զորրորդ՝ զկերպն:

Հարց. Վասն է՞ր արտաքոյ քաղաքին:

Պատասպանի. Վասն չորից.

Ա. Նախ՝ զի արտաքսեցին յայգոյն:

Բ. Երկրորդ՝ զի ընդ չարագործս համարեցան:

Գ. Երրորդ՝ զի զողջակէզն արտաքոյ սպանէին:

Դ. Զորրորդ՝ զի արտաքոյ է աշխարհ վերնոյն Երուսաղէմի. ասա մեռաւ եւ անդ սրբեաց եւ եհան զմեզ:

Վասն չարաց

Հարց. Զի՞նչ է «չարն չարաւ կորուսցէ» (ԻԱ. 41):

Պատասխանի. Այսինքն՝ զչար գործողքն չար մահուամբ, որպէս այն, որ «Սուր ածցէ, սրով անկցի» (Մատթ. ԻՁ. 52): *Կամ ի ձեռն չարաց կամ զչար տանջանացն ասէ:*

Եւ գիտեալ է, զի զչարն չարաւ եւ զբարին բարեաւ՝ արդարութեանն է, զչարն բարեաւ՝ ողորմութեանն է, զբարին չարեաւ՝ նեղողամտութեանն է Աստուծոյ:

Վասն վիմի

Վէմն, զոր անարգեցին (ԻԱ. 42):

Հարց. Վասն է՞ր «Վէմ» *կոչի Քրիստոս:*

Պատասխանի. Բազում են պատճառք, եւ ասեմք Ի. (20) գլխովք.

Ա. Նախ՝ «Վէմ» *կոչի, զի կուսածին է, որպէս* «Ի լեռնէ վէմն առանց ձեռին հատեալ» (Դանիէլ Բ. 45), *ասէ:*

Բ. Երկրորդ՝ Ադամ «հող» *կոչեցաւ* (Ծնող. Բ. 6), *եւ Քրիստոս՝* «Վէմ» (Ա. Կոր. Ժ. 4) *վասն անապական մարմնոյն:*

Գ. Երրորդ՝ վէմ աղամանդեայ, զի անգծելի է չարին:

Դ. Զորրորդ՝ զի առ ինքն քարշէ զսեւացեալս եւ զծանրացեալս մեղաւք:

Ե. Հինգերորդ՝ նշան բարձրութեան եւ խստութեան, որպէս վէմն յուսանոց քահանային:

Զ. Վեցերորդ՝ զի կարծրացեալ է հրով աստուածութեանն:

Է. Եւթներորդ՝ զի ծանր է խոնարհութեամբ:

Ը. Ութերորդ՝ ցամաք է յաշխարհական ցանկութեանց:

Թ. Իններորդ՝ ի հովիտս դաղարի, այսինքն՝ ի խոնարհս հանգչի:

Ժ. Տասներորդ՝ հաստատ է. որ յենուն ի նա, հաստատին:

ԺԱ. Մեռասաներորդ՝ անշարժ է. ի գետոց եւ ի հողմոց ոչ շարժի:

ԺԲ. Երկոտասաներորդ՝ ուժով է. որ կրէ զամենայն զաւրութեամբ իւր:

ԺԳ. Երեքտասաներորդ՝ սեղմ է մասնկունքն, այսինքն՝ անբաժանելի է միաւորութիւնն:

ԺԴ. Զորեքտասաներորդ՝ անփոփոխելի է, այսինքն՝ աստուածութեամբն եւ մարմնովն նոյն:

ԺԵ. Հնգետասաներորդ՝ զի հիմն է եկեղեցոյ:

ԺԶ. Վեցտասաներորդ՝ եւ անկիւնաքար, որ զերկու որմունս ի մի կապեաց:

ԺԷ. Եւթն եւ տասներորդ՝ եւ գլուխ, որ կատարումն է ամենայնի:

ԺԸ. Ութն եւ տասներորդ՝ զի գլորէ եւ կործանէ զանհաւատս:

ԺԹ. Ինն եւ տասներորդ՝ խորտակէ զդիմահարս եւ զահավիժէ:

Ի. Քսաներորդ՝ յորոյ վերայ անկցի, հոսէ եւ ցրուէ զզաւրութիւնս թշնամոյն, որպէս՝ «Վէմն, որ եհար զպատկերն եւ փշրեաց, եւ ինքն ելից զտիեզերս» (հմմտ. Դանիէլ Բ. 34):

Եւ գլուխ անգեան (ԻԱ. 42):

Ա. Նախ՝ հրէից եւ հեթանոսաց:

Բ. Երկրորդ՝ երկուց կտակարանաց:

Գ. Երրորդ՝ հոգւոյ եւ մարմնոյ:

Դ. Զորրորդ՝ երկնի եւ երկրի:

Ե. Հինգերորդ՝ հրեշտակաց եւ մարդկան:

Եւ «Շինաւդ» (ԻԱ. 42) *կոչէ զվարդապետս, որ զուսմունս Հին աւրինաց եւ զժողովուրդն շինէին եւ փորիւ ծեփէին, այսինքն՝ ի ցոյցս մարդիկ եւ դատարկ ի հաւատոց, կամ սէրն է ամրութիւն եւ կապ ի մէջ որմոյն, զոր ոչ ունէին:*

Դարձեալ՝ «**վէմ անարգեալ**» (ԻԱ. 42) *զՀեթանոսս նշանակ է, որ անարգէր համարել նոցա եւ յետոյ կատարեալք եղեն հաւատով եւ գլուխ անգեան:*

Եւ գիտելի է, զի պարտ էր երկրպագել Քրիստոսի եւ հնազանդել վասն չորից.

Ա. Նախ՝ երկնչել ի բազում ժողովրդոցն:

Բ. Երկրորդ՝ ի սպառնալեացն Քրիստոսի:

Գ. Երրորդ՝ ի բանից մարգարէիցն:

Դ. Չորրորդ՝ ի վճռէն իւրեանց չարացն կուրուստ:

Հարց. Վասն է՞ր, որ զաշխարհս ըմբռնէ, յերկուցն զրկի: Եւ որ զհանդերձեալն խնդրէ, զերկուքն վայելէ:

Պատասխանի. Զորս պատճառս ասեն.

Ա. Նախ՝ զի աշխարհս այս ստուեր է, եւ այն՝ որպէս մարմին, որ զմարմին ըմբռնէ, նայ ունի եւ զստուերն, այլ որ զստուերն, զոչ ոքն ունի:

Բ. Երկրորդ՝ այս աւրինակն է, եւ այն՝ ճշմարտութիւնն:

Գ. Երրորդ՝ այս անցաւորն է, եւ այն՝ անանցն:

Դ. Չորրորդ՝ այս փոքր է, եւ այն՝ մեծ, որ զմեծն ունի եւ զփոքրն, վասն այն խրատէ. «Խնդրեցէք նախ զարքայութիւնն, եւ այդ ամենայն յաւելցի» (Մատթ. Զ. 33):

Այսքան առ այս:

Մարկ. ԺԲ. 1-11

ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՒՈՐՅԻ

Եւ սկսաւ խաւսել ընդ նոսա առակաւք եւ ասել: Այր մի փնկեաց այգի եւ ած շուրջ զնովաւ ցանգ եւ գուբ հնձան փորեաց եւ շինեաց աշտարակ եւ եկ զնա ցմշակս եւ գնաց ի փար աշխարհ (Մարկ. ԺԲ. 1):

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Կարի իմն հպարտ եւ փառասէր է ազգ մարդկան, վասն որոյ դժուարի եւ տաղտապի ընդ լուր նախատանաց անձին, թէ եւ արժանի եւս իցէ պատժոց եւ տանջանաց, այլ ոչ այնպէս ի գաւառացն՝ լսել զանարգանս, զի առ ինքն մոռանայ զիրաւն, իսկ վասն այլոց զարդարութեան տայ վճիռ:

Յաղագս այսորիկ առակաւք խաւսին Գիրք, որպէս զի այնու մեղուցեալքն յանգէտս եւ յակամայ կամս պարտաւորեսցեն զինքեանս եւ հեռասցին ի չարեացն, ըստ որում տեսանեմք զսոյն կատարեալ առ Դաւիթ ի ձեռն առակին Նաթանայ (տե՛ս Բ. Թագ. ԺԲ. 1-14):

Եւ յաղագս այսորիկ Քրիստոս այժմ առակաւք սկսանի խաւսել ընդ նոսա, զի թէ զղջասցին իբրեւ զԴաւիթ եւ ապաշաւեսցեն, թողութիւն գտցեն, որպէս եւ նա, ապա թէ ոչ՝ անձամբ զանձինս դատապարտեսցեն:

Այր մի,- *ասէ,-* **փնկեաց այգի** (ԺԲ. 1):

Բազումք ի մարգարէիցն յայգի աւրինակեն զժողովուրդն, ըստ այնմ. «*Այգի յԵգիպտոսէ փոխեցեր, սատակեցեր զՀեթանոսս եւ զնոսա տնկեցեր*» (Սաղմ. ՀԹ 9), *եւ Ովսէէ ասէ.* «*Այգի տաշտաւոր պտղալից Իսրայէլ*» (Ովսէէ Ժ. 1), *եւ Երեմիա՝* «*Ես տնկեցի զքեզ այգի ճշմարիտ, ամենեւին պտղաբեր*» (հմմտ. Եր. Բ. 21), *եւ Եսայի՝* «*Այգի Տեառն զաւրութեանց տունն Իսրայէլի է, եւ մարդն Յուդա նորատունկ սիրելի*» (Ես. Ե. 7):

Եւ ընդէ՞ր առակեն «*յայգի*». *վասն բազում պատճառաց: Նախ՝ վասն գեղեցկութեանն, զի գեղեցիկ եւ վայելուչ է այգին, որպէս ասէ Եսայի.* «*Այգի վայելուչ եւ ցանկալի*» (Ես. ԻԷ. 2), *եւ Դաւիթ՝* «*Կին քո որպէս [զ]այգի վայելուչ*» (Սաղմ. ՃԻԷ. 3):

Այսպէս եւ մարդն վայելուչ եւ գեղեցիկ ստեղծաւ յԱստուծոյ, զի խառնուած է եւ ոչ պարզ եւ միատեսակ, որպէս հրեշտակքն, եւ վայելուչ են ի խառնուածոց եւ յազգի ազգի գունոց շէնքն, քան զպարզ եւ զմիատեսակ կերպն, ըստ որում ոսկին եւ ակունքն ըստ ինքեանց գեղեցիկք են, այլ եւս գեղեցիկք երեւին, յորժամ ի միմեանս ընդելուզին:

Այսպէս եւ մարդն գեղեցիկ գտաւ, քան զայլս ի ստեղծուածոց, զի զամենայն արարածական բնութիւնս յինքն ժողովեաց՝ զիմանալիս եւ զզգալիս, զշնչաւորս եւ զանշունչս, եւ ոչ ինչ եթող արտաքոյ ինքեան, ուստի այսու աւրինակաւ առաւել ասի մարդն պատկեր Աստուծոյ, քան թէ վասն մտացն:

Զի եթէ վասն մտացն, եւս առաւել զհրեշտակսն պարտ էր պատկեր Աստուծոյ կոչել, բայց զի չգտանի ի գիրս ուրեք ասացեալ, թէ հրեշտակքն ըստ պատկերի Աստուծոյ եղեն: Յայտ է, թէ վասն այնորիկ ասէ զմարդն պատկեր Աստուծոյ (տե՛ս Ծնն. Ա. 27), *զի զամենայն արարածս յինքն բերէ զգալապէս, որպէս Աստուած իմանալաբար:*

Եւ զի զայս՝ զպատկեր լինելն Աստուծոյ, աւելի ունէր, քան զհրեշտակսն, յաղագս այսորիկ անհնարինքն հրեշտակաց հնարաւորք եղեն սմա: Զի նոքա յետ յանցանացն ոչ կարացին արդարանալ, իսկ սոքա արդարացան, զորոց եւ Քրիստոս վկայեաց՝ ասելով, թէ՝ «Իմաստնագոյնք են որդիք աշխարհիս այսորիկ, քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց» (Ղուկ. ԺԶ. 8). *այսինքն՝ մարդիկ քան զհրեշտակս:*

Եւ ո՞վ ոք արդեաւք ասել կարիցէ զայսր կենդանւոյ զառաւելութիւն, ընդ լայնութիւն ծովու անցանէ, ընդ երկինս գնայ տեսութեամբ, զաստեղացն շարժմունս եւ զչափս նկատէ, զպտուղս երկրի եւ ծովու վայելէ, ի հեռաստանէ ի ձեռն գրոյ յաշխարհէ յաշխարհ ընդ որս կամի, խաւսի, ամենայնի իշխէ, ընդ հրեշտակաց եւ ընդ Աստուծոյ եւս խաւսակցի, դիւաց սաստէ, զսատանայ նուաճէ, տուն եւ տաճար Աստուծոյ լինի, յանմահական կեանս ժառանգէ զարքայութիւն:

Երկրորդ՝ զի որպէս այգին յոլով ունի պէտս դարմանի եւ խնամոց, քան զայլս ի պտղաբերացն, զի այլքն ոչ ունին պէտս յամենայն ամի յատանելոյ եւ այնքան կակղելոյ զարմատն, նաեւ ոչ այլոցն պտղոց այնքան երկիւղ է ի վնասակար թռչնոց եւ ի գազանաց, որպէս պտղոյ այգւոյն: Այսպէս եւ մարդն յոլով ունի պէտս խնամոց եւ պահպանութեան, որքան բազում ունի եւ թշնամիս ներքոյ եւ արտաքոյ ի սիրելեաց եւ յընտանեաց, զի «թշնամիք,- ասէ,- առն ընտանիք իւր» (Մատթ. Ժ. 36): *Զի որքան պատուական է, այնքան եւ բազումս ունի թշնամիս եւ զվնասիչս իւր, զի անարգ եւ արհամարհ իրացն ոչ ոք դնէ ակն, իսկ զեղեցկին եւ պատուականին՝ ամենեքեան են ցանկացող տեսութեան:*

Երրորդ՝ զի որպէս այլքն ի պտղաբերաց յորժամ անպտուղք լինին, գան ի պէտս ինչ շինութեան, իսկ այգին ոչ այնպէս, զի ոչ գայ ի պէտս յաղագս շինութեան, որպէս ասէ Եզեկիէլ. «Մի թէ առնուցո՞ւն յայգւոյ փայտ մի, առնել գործի ինչ կամ ցից մի կախել զնմանէ անաւթ ինչ» (Եզեկ. ԺԵ. 3), *թէ եւ ողջոյն հատանիցի, չէ ինչ պիտոյ ի գործ, բայց թէ հրոյ ճարակ լինիցի ի սպառ:*

Այսպէս եւ մարդն յորժամ անպտուղ գտանի ի գործոց բարեաց եւ յառաքինութեանց, յետ այնքան գեղեցիկ շինուածոցն եւ ազգի ազգի խնամոցն Աստուծոյ եւ պահպանութեան, յայնժամ չգայ, այլ ինչ իրաց ի պէտս, բայց միայն զի ճարակ եւ այրելիք լինիցի հրոյ գեհենին:

Այր մի,- *ասէ,*- **տնկեաց այգի** (ԺԲ. 1):

«**Այր մի**». *այսինքն՝ Հայր Աստուած, որ կոչի մարդ վասն գթութեան իւրոյ եւ մարդասիրութեան, զի որպէս գթայ հայր յորդիս եւ կին ի ծնունդս որովայնի իւրոյ, այսպէս եւ գթայ Աստուած յազգս մարդկան, ասեն մարգարէքն Դաւիթ եւ Եսայի* (տե՛ս Սաղմ. ՃԲ. 13, Ես. ԽԹ. 15):

«**Տնկեաց այգի**». *այսինքն՝ զժողովուրդն իսրայէլացւոց, զոր եհան յԵգիպտոսէ եւ բնակեցոյց ի գաւառն Պաղեստինոյ ի պարարտ երկրի, ըստ այնմ՝ «Այգի եղեւ սիրեցելւոյն յանկեան ի տեղւոջ պարարտութեան»* (Ես. Ե. 1):

Եւ ած շուրջ զնովաւ ցանգ (ԺԲ. 1):

«**Ցանկ**»[1] *զաւրէնսն ասէ կամ պարիսպ, զի աւրէնքն քան զպարիսպս ամրածածուկ պահէին զնոսա, այլեւ զվերակացութիւն եւ զպահպանութիւն հրեշտակացն կոչէ* «**ցանկ**»:

Զի որպէս այգի, ցորքան ամրացեալ է ցանկով եւ պահպանաւք, անվնաս կայ ի գազանաց եւ ի յափշտակողաց, այսպէս եւ մարդն. ցորքան ամրացեալ է աւրինաւքն Աստուծոյ՝ կատարելով զնոսին, որով պահեալ լինի եւ ի հրեշտակաց, անվնաս կայ եւ ի յախտից հոգեկանաց եւ ի փորձութենէ յանմարմին թշնամւոյն, այսինքն՝ ի սատանայէ եւ ի դիւաց:

Եւ գուբ հնձան փորեաց (ԺԲ. 1):

Այսինքն՝ զսեղանն եւ զգանձարանն, կամ «հնձան» ասէ՝ զպէսպէս եւ զազգի ազգի մկրտութիւնսն, որովք սրբեալք լինէին ի մեղացն մարմնականաց, որպէս եւ մեք սուրբ աւազանաւն՝ ի հոգեկանացն եւ ի մարմնականացն:

Եւ շինեաց աշտարակ (ԺԲ. 1):

[1] ՍՏ > ցանկ

Զտաճարն ասէ, որ կանգնեցաւ յԵրուսաղէմ իբր դղեակ թագաւորի ի բնակութիւն Աստուծոյ, զի յորժամ ի կարիս ինչ հասցեն, դիւրաւ գտցեն զնա, եւ խնդրեսցեն զաւգնականութիւն ի նեղութեանն:

Եւ եկ զնա ցմշակս (ԺԲ. 1):

Այսինքն՝ ի քահանայսն եւ ի վերակացուս ժողովրդեանն, զի ետ զժողովուրդն յիշխանութիւն նոցա՝ գործել ընդ նոսա որպէս եւ կամին՝ եթէ չար եւ եթէ բարի, որպէս այգեգործ մի զայգին իւր պահպանէ:

Եւ գնաց ի փար աշխարհ (ԺԲ. 1):

Ոչ եթէ փոփոխումն տեղեաց ի տեղիս, զի յամենայն տեղիս է Աստուած եւ զամենայն լնու, ըստ այնմ. «Ո՞չ զերկինս եւ զերկիրս ես լնում, ասէ Տէր» (Երեմ. ԻԳ. 24): Եւ թէ՝ «Աստուած մերձաւոր եմ ես եւ ոչ հեռաւոր» (Երեմ. ԻԳ. 23), եւ թէ՝ «Հոգի Տեառն ելից զտիեզերս» (Իմաստ. Ա. 1), եւ թէ՝ «Եթէ ելանեմ յերկինս, դու անդ ես, եւ թէ իջանեմ ի դժոխս եւ անդ մոտ ես» (Սաղմ. ճԼԸ. 8), «առ ի զիս յետս դարձուցանել եւ յեզերս ծովու գտի զքեզ» (Հմմտ. Սաղմ. ճԼԸ. 9):

Ապա ուրեմն «գնալն ի հեռաւոր աշխարհ» զհամբերելն եւ զերկայնամտելն Աստուծոյ ասէ, զի ոչ փոյթ ընդ փոյթ խնդրէ զբարիսն եւ կամ պատժէ զչարիսն, այլ՝ երկայնամիտ լինի առ երկոսին, որպէս եւ ի թզենին ուսաք:

Զի թէպէտ յառաջին ամն չեգիտ պտուղ, այլեւ ոչ յերկրորդն, որ է առաջին եւ միջին հասակ մարդոյն կամ ժամանակի անցեալն եւ ներկայն եւ չցասեաւ, իսկ յերրորդն՝ ապա ցասեաւ, որ թէպէտ եւ մնաց, սակայն աղաչանաւք այգեգործին:

Եւ ո՞ր են «հասակքն»:

Առաջինն՝ ի միոյն, մինչ ի տասն եւ չորս ամն, յորժամ կարէ զաւակ սերմանել եւ միջինն ի տասն եւ հինգ ամէն մինչեւ յերեսունն, յորժամ եւ իւր որդին որդիս ծնանի, որ է երրորդ հասակն եւ ժամանակին՝ անցեալ, ներկայ եւ ապառնի:

Եւ թէ յայս երիս ժամանակս չպտղաբերիմք, հատանիմք եւ ի հուր արկանիմք, այլ աղաչեսցուք զՏէր, զի զմեզ արասցէ հաղորդս աստուածային պարգեւաց, թողութեան մեղաց եւ ընդունելութեան Հոգւոյն Սրբոյ:

Վասն զի մինչեւ ցայս վայր քաղցրութեամբ ներէ, թերեւս գտցէ բարիս, իսկ յետ այսորիկ թէպէտ եւ ներէ, սակայն ցասմամբ եւ տրտմութեամբ:

Զսոյն ուսանիմք եւ ի մարգարէէն. «Կացի, մնասցի,- ասէ,- զի բերցէ ինձ զխաղող» (հմմտ. Ես. Ը. 17)՝ զգործս բարիս եւ «եբեր զփուշս» (Ես. Ը. 17) եւ զտատասկս՝ զգործս չար: Զի ոչ միայն գործք աղտեղիք խղճիւ մտաց չարչարեն զմարդն ի թմրութիւն, այլեւ, զի տրտմեցուցանեն մեզք մեր զԱստուածն բարերար, որպէս փուշք՝ զմեզ:

Վասն որոյ ըստ Պաւղոսի. «Երկիր գործեալ, որ ըմպէ զանձրեւս եւ ծնանիցի փուշս, մերձ է յանէծս եւ յայրումն, այսպէս եւ մարդն» (հմմտ. Եբր. Զ. 7-8):

Եւ առաքեաց առ մշակսն ի ժամանակի ծառայ մի, զի ի մշակաց անտի առցէ ի պտղոյ այգւոյն: Եւ նոցա կալեալ, զան հարին զնա եւ արձակեցին ունայն (ԺԲ. 2-3):

Յառաջ առաքեաց զՄովսէս, զի զպտուղ աւրինացն, զոր ետ ի մշակացն խնդրիցէ, եւ նոքա «զան հարին զնա» եւ վիրաւորեցին, որպէս ասէ սաղմոսն. «Բարկացուցին զՄովսէս ի բանակի եւ զԱհարոն Սուրբ Տեառն» (Սաղմ. ճԵ. 16): Եւ թէ. «Զարչարեցաւ Մովսէս վասն նոցա (Սաղմ. ճԵ. 32), զի դառնացուցին զոգի նորա» (Սաղմ. ճԵ. 33):

«Եւ արձակեցին ունայն», զի չունէին զպտուղ աւրինացն, այլ ունայն էին ի բարեաց:

Դարձեալ առաքեաց (առ նոսա) այլ ծառայս, եւ զնա կառափնապեցին եւ արձակեցին անարգեալ (ԺԲ. 4):

Զ Դաւիթ ասէ եւ զայլ սաղմոսասացսն, որք առաքեցան յետ Մովսէսի, զի զարթուսցեն զմշակսն ի սէր բարեգործութեան, իսկ զայն Դաւիթ, որ էր գլուխ սաղմոսողացն, քաղցր երգով ի յաղերէ Հոգւոյն Սրբոյ լուսաւորեալ, ի բաց ընկեցին՝ ասելով. «Ո՞վ է Դաւիթ կամ ո՞վ է Որդին Յեսեայ, զի՞նչ մասն է մեր ընդ Դաւթի կամ զի՞նչ ժառանգութիւն ընդ որդւոյն Յեսսեայ» (հմմտ. Գ. Թագ. ԺԲ. 16):

Եւ դարձեալ՝ այլ առաքեաց, եւ զնա սպանին եւ զբազումս այլս, զոմանս հարկանէին եւ զոմանս սպանանէին (ԺԲ. 5):

Զդասս մարգարէիցն ընկերաւք նոցա, որ քարոզութեամբն եւ վկայութեամբն իւրեանց յանդիմանէին զժողովուրդն եւ զչարիսն, որ գալոց էին, յառաջագոյն խաւսեցան:

Միտ դիր չարութեան մշակացն, զի եւ ոչ յետ ժամանակի պտղաբերք լինէին, զի լսողութեան պտուղն ոչ կարաւտանայ ժամանակաց եւ եղանակաց, որպէս զայլս ի սերմանց եւ ի պտղոց:

Զի կարողութիւն է եւ ի միում աւուր ընդ արկանել սերմանցն եւ զհասկն առնուլ, որպէս առ Կանդակայ եթովպացին (տե՛ս Գործք Ը. 27) եղեւ եւ առ այլս բազումս, իսկ նոքա եւ ոչ յետ յոլով ժամանակաց պտղաբերեցին:

Նաեւ ոչ միայն զպտուղն չտալով, որք յայնչափ խնամս բազում ժամանակս վայելէին եւ այնչափ ի վատութիւնս հասեալ, այլ եւ դժկամակս լինէին ընդ ծառայսն, որ գային:

Զի թէ չգոյր ուստեք հատուցանել զպարտսն, չէր պարտ ցասնուլ եւ անարգել, այլ աղաչել եւ ներողութիւն խնդրել, իսկ նոքա ոչ միայն անարգէին, այլեւ արեամբ եւս զձեռս լնուին: Թէպէտ եւ առաջին իսկ զայն պատուիրան առեալ էին, թէ մի սպանանիցես (տե՛ս Ելք Ի. 12) *եւ թէ որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեանն նորա, հեղցի արիւն նորա* (տե՛ս Ծնն. Թ. 6), *ինքեանք վրիժապարտք եւ յայլոց եւս վրէժս պահանջէին:*

Որպէս ոք ի բանտի գոլով եւ ի կապանս հանէ զերկաթսն յոտիցն եւ այնու զբանդապահսն սպանանէ, որ է կարի անմտութեան գործ:

Եւ նմին իրի իսկ եւ երկիցս եւ երիցս առաքեաց, զի եւ առաքիչն մարդասիրութիւն երեւեսցի եւ նոցին հեստութիւն եւ յամառութիւն:

Այս երեք կարգ ծառայիցս ամենայն ուսուցիչքն, որ ի ներքոյ աւրինացն էին, իմացեալ լինին, որ յայլում տեղւոջ գրեալ է, զոր ասէ Ղուկաս, թէ. «Պարտ է լնուլ ամենայն գրելոցն յաւրէնսն Մովսէսի եւ ի սաղմոսսն եւ ի մարգարէսն վասն իմ» (Ղուկ. ԻԴ. 44):

Յետ այսց բանից եւս գրէ Ղուկաս, ասէ. «Տէր այգւոյն զի՞նչ արարից» (Ղուկ. ԻԱ. 40):

Յերկուս դէմս լսի ասացեալս, թէ՝ **«զի՞նչ արարից»**. *մի՝ թէ որ պարտ էր լինել, եղեւ, եւ չէ ինչ թերի եւ պակաս, այլ այն ամենայն լիով կատարեալ է, ըստ որում ասէր մարգարէին. «Զի՞նչ պարտ էր առնել այգւոյ իմոյ, զոր եւ ես ոչ արարի»* (հմմտ. Ես. Ե. 4), *եւ միւս*

եւս պարակուսանք է: Որպէս չար վէրս յիմաստուն բժշկէ բազում դեղաւք ծառայեալ եւ ոչ ողջացեալ, տարակուսի եւ ասէ. **«Զի՞նչ դեղ կազմեցից սմա, զի զոր ինչ գիտէի, սպառեցաւ, եւ այլ ոչ եւս գոյ»**: *Այսպէս եւ Աստուած յետ զամենայն ինչ գործելոյ եւ նոքա ի նոյն չարիս մնացին, տարակուսի, թէ* **«զի՞նչ արարից»**: *Ըստ այնմ, թէ. «Զիք սպեղանիք. ոչ ձեթ եւ ոչ պատանս: Զայս եւ յՈվսէիւ ասէր, թէ. «Պաշարեաց զիս ստութեամբ Եփրեմ եւ ամբարշտութեամբ տունն Իսրայէլի եւ Յուդա (Ովսէ. ԺԱ. 12), «պաշարելն» նեղել եւ սղարել ասէ»* (հմմտ. Ես. Ա. 6):

Եւ արդ, որպէս սղարեալ նեղի ի թշնամեաց իւրոց, տագնապի եւ վշտանայ, այնպէս եւ Աստուած զանգատ առնէ զնոցանէ, թէ այնքան աճեցուցին զչարիսն մինչ զի ի պաշարումն:

Ըստ որում եւ աստ ասէ, թէ **«զի՞նչ արարից»**, *զի պաշարելոցն է ձայնս այս, զի յորժամ ոչ գտանեն հնարս ելի եւ փախստեան, ասեն, թէ զի՞նչ արասցուք:*

«Եւ զի անհնարինքն մարդկան հնարաւորք են Աստուծոյ» (Ղուկ. ԺԸ. 27), *խորհեցաւ տալ զորդին, որպէս եւ ասէ աւետարանիչս:*

Ապա՝ որդի մի էր իւր սիրելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ եւ ասէ. «Թերեւս ամաչեսցեն յորդւոյ ասպի իմմէ» (ԺԲ. 6):

«Ապա՝որդի մի էր իւր սիրելի». *զմեծ եւ զանպատմելի սէրն իւր առ ազգս մարդկան ցուցանէ Աստուած:*

Զի ոչ եթէ բազում որդիս ունէր եւ ընտրեաց ի բազմացն զատելին միայն, այլ մի էր Որդին, եւ այն՝ հաճոյ եւ սիրելի, որ է Քրիստոս միածին Որդին, որում վկայեաց ի Թաբոր եւ ի Յորդանան, ասելով, թէ՝ «Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ» (Մարկ. Թ. 6):

«Զնա առաքեաց առ նոսա յետոյ». Ոչ եթէ վերջին էր նա, այլ զի յետոյ երեւեցաւ մարմնով, այն, որ միշտ էր, որպէս վկայեաց Յովհաննէս, թէ. «Զկնի իմ գայ այր, որ յառաջ իսկ էր, քան զիս» (Յովհ. Ա. 30): *Եւ Պետրոս, թէ. «Որ որ էրն նախքան զսկիզբն աշխարհի, այժմ երեւեցաւ»* (Ա Պետ. Ա. 20). *եւ հրեշտակն, թէ՝ «Որ այժմ ծնաւ ձեզ փրկիչ, որ է աւծեալ Տէր»* (հմմտ. Ղուկ. Բ. 11): *Եւ Պաւղոս, թէ՝ «Յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած»* (Հռոմ. Թ. 5):

«Զի Բանն ի սկզբանէ էր» ըստ Յովհաննու (Յովհ. Ա. 1), *եւ ի վեր եւ բարձրագոյն, քան զամենայն, իսկ զմարմինն յետոյ զգեցաւ,*

ըստ մարգարէին, թէ՝ «Սա Աստուած մեր, ընդ որում ոչ համարեսցի այլ» (Բարուք Գ. 36). *«Յետ այսորիկ յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ»* (Բարուք Գ. 38):

Ուստի յայտ է, թէ «յետոյ» ասելս վասն մարմնոյն է եւ ոչ յաղագս աստուածութեանն եւ ոչ եթէ չէր նա գիտակ, զի ոչ էին կարաւղ առաջինքն փրկել զմարդիկ եւ արդարացուցանել, այլ զի բարձցէ ի միջոյ զյամառութիւն մարդկան: Զի յոյժ հպարտ է ազգ մարդկան, եւ ոչ հաւանի բանիւք, եթէ ոչ նախ իրաւքն զփորձ առցէ, սորին աղագաւ ներեաց եւ երկայնմտեաց մինչ ի վախճան ժամանակի:

Զի թէ յառաջ ինքն էր եկեալ, ասէին մարդիկ, թէ հնար գոյր աւրինաւքն եւ ընտանի մերով ուղղութեամբքն ապրել, վասն այսորիկ եկաց, մինչ ամենեքեան ընդ մեղաւք անկան, հրէայք եւ հեթանոսք, եւ գիտացին զինքեանս ի վերջին տկարութիւն եւ ի վտանգս հասեալ, ըստ որում եւ ողբալով ասէին. «Զարթո՛ զզաւրութիւնս քո եւ ե՛կ ի կեցուցանել զմեզ» (Սաղմ. ՀԹ. 3), *զի «Խոնարհ եղեն մինչեւ ի հող անձինք մեր, եւ յերկիր կցեցան մէջք մեր»* (Սաղմ. ԽԳ. 25): *Եւ թէ՝ «Ծանեաք Տէր զմեղս մեր»* (Երեմ. ԺԴ. 20), *եւ «Զանաւրէնութիւնս մեր մեք մեզէն գիտեմք»* (Ես. ԾԹ. 12):

Եւ դարձեալ՝ զի միանգամ մատուցանելոց էր Քրիստոս զանձն պատարագ վասն մեղաց, սակայն ի սկզբանն ոչ եթէ զամենայն մեղս գտին մարդիկ, զի Ադամ զդատապարտութիւն մահու միայն եգիտ, եւ մինչեւ ի ժամանակս ջրհեղեղին գուսանական երգն եւ պոռնկութիւնն եւ ազգի ազգի գունովք զարդարելն զդէմս միայն յայտնեցան եւ յետ ջրհեղեղին, ապա արբեցութիւնն եւ կռապաշտութիւնն եւ արուագիտութիւնն եւ ի գալ աւրինացն եւս բազմացան, զի պատճառս առին մեղքն զպատուիրանն եւ շարժեցին զմարդիկ յամենայն ցանկութիւնս:

Եւ զի չէր նմա հնար երկրորդ անգամ մեռանել, վասն այսորիկ եկաց մինչեւ ի բուսանել մեղացն ամենեցունց եւ ապա եկն:

Զի թէ նախ քան զկատարումն մեղացն լեալ էր գալուստն Քրիստոսի, մեղքն, զոր յետոյ գտանելոց էին, անբժշկելի մնայր եւ ամենայն ինչ անաւգուտ գործէր:

Արդ, զորաւրինակ իմաստուն երկրագործ կայ մնայ մինչ ի բուսանել ամենեցուն փչոցն վնասակարաց եւ ապա սկսանի սրբել զանդաստանն, այսպէս եւ Քրիստոս եկաց՝ ըստ Դանիէլի. «Մինչ ի

վախճանել մեղացն եւ ի կատարել անաւրէնութեանցն» (հմմտ. Դան. Թ. 24), *եւ ապա եկն եւ մեռաւ եւ մեռոյց զմեղսն:*

Վկայէ այսմ եւ Պաւղոս, զի նախ ասէ, թէ՝ «Լցան ամենայն անիրաւութեամբ, պոռնկութեամբ, չարութեամբ» (հմմտ. Հռոմ. Ա. 29) *եւ այլովքն, զորս թուէ եւ ապա ի վերայ ածէ, թէ՝ «Յայտնեցաւ արդարութիւնն Աստուծոյ ի ժամանակիս յայսմիկ»* (Հռոմ. Գ. 26) *եւ այլն տես:*

Ասէ եւ Ժողովողն. «Որ լինելոցն էր արդեն իսկ եղեւ, եւ Աստուած խնդրեսցէ զհալածեալն» (Ժող. Գ. 15):

Երրորդ՝ նա թէ եւ ի սկզբանն եղեալ էր այս, ոչ այսպէս սքանչելի եւ հրաշափառագոյն երեւէր, յորժամ ամենայն բժշկութեան աւրինակք յանդիմանեցան: Եւ տես զայս ամենայն ուրեք լեալ յԱստուծոյ, նախ՝ թոյլ տայ յանդիմանել տկարութեան մարդկան եւ ապա՝ յայտնի առնէ զզաւրութիւնն իւր: Որպէս առ փարաւոնիւ նախ ամենեքեան յանդիմանեցան եւ ոչ կարացին յայտնել զերազն եւ ապա ի ձեռն Յովսէփու ծանոյց նոցա (տես Ծնն. ԽԱ. 15):

Եւ առ Նաբուքոդոնոսորաւն նախ թոյլ ետ զտկարութիւն խոստովանել դիւթացն եւ մոգուցն, որով ի միտ առին յետ մեկնութեանն, թէ աստուածային է գործն (տես Դան. Բ. 24): *Նոյն գտանի եւ առ Բաղտասարաւ, նմանապէս եւ առ մարգարէիւքն. նախ ասէին սուտքն յինքեանց եւ ապա՝ ճշմարիտ մարգարէն ի յԱստուծոյ եւ յետ այնորիկ ելք իրացն վկայութեամբ: Եւ զի մեծ եւ սքանչելի էր այս յետ տկարութեան բնութեանս եւ աւրինացն յայտնի առնել զզաւրութիւնն իւր, վասն այսորիկ յետ մարգարէիցն առաքէ զՈրդին, ըստ որում եւ ասէ. «Ապա՝ որդի մի էր իւր սիրելի. զնա առաքեաց առ նոսա յետոյ»: Որպէս զի յիրացն, զոր ընդ մարգարէսն անցուցին, ըստգտանիցեն զանձինս եւ ի ցասմանէն ցածնուցուն եւ ապա յայնմանէ, որ եկն, զանգիտիցեն եւ ամաչեսցեն, վասն որոյ ասէ.* **«Թերեւս ամաչեսցեն յորդւոյ ասպի իմմէ»:** *Որ էր հակառակն, զի չէին ամաչելոց, ոչ եթէ չգիտէր, թէ զինչ լինելոց էր, ոչ վասն անգիտութեան ասէ ինչ, որ զամենայն գիտէ, այլ յամենայն ժամ յերկուս դէմս խաւսի գիր զազատութիւն, ինքնիշխան կամաց մերոց ցուցանելով, որպէս զայն, զի ասաց, թէ՝* «Ո՞ւր ես Ադամ» (Ծնն. Գ. 9). *եւ թէ՝* «Աղաղակ Սոդոմացւոցն յաճախեաց առ իս (հմմտ. Ծնն. ԺԸ. 20), արդեւաւք իջեալ տեսից, թէ ըստ աղաղակի նոցա վճարիցեն ինչ առ իս, ապա թէ ոչ զի գիտացից» (հմմտ. Ծնն. ԺԸ. 21) *եւ այլուր, թերեւս լուի-*

ցեն: Որ ամենայնք անգիտութեան իմն բանք թուին, բայց ոչ թէ առ ի չգիտել ասաց զայն, այլ որպէս մատակարար է իմն, որ իւրն վայելէ: Առ Ադամաւ, զի զնա յաղերս իւրոց մեղացն ածիցէ, առ սոդոմայեցւովքն, զի զմեզ խրատիցէ, չտալ վճիռ մինչեւ յիրացն վերահասու լեալ իցեմք, առ մարգարէիւն, զի մի կարծիցեն զկանխասացութիւնն անմիտքն, բռնադատիչ ստունկանութեանն: Իսկ աստ թէ զայս պարտ էր առնել եւ ակնածել յորդւոյն, զի թէ առ ծառայսն անհնազանդք գտան, սակայն յորդւոյն պատուոյ պատկառել պարտ էր:

Հարցցուք զԱրիոս եւ զԵւնոմիոս, զի ահա Հայր յայտ առնէ, եթէ անգէտ էր հարցանելով զԱդամ եւ յապաղէր զՍոդոմայեցւոցն դատաստան եւ ըստ մարդկային կարծեաց, թուի, թէ ի սուտս ել յասելն թէ՝ «Ամաչեսցեն յորդւոյ ապտի իմմէ»: *Զոր ինչ պատասխանեն վասն հաւրն, պատասխանեսցուք նոցա, զի զոր ասեն՝ յասել Որդւոյ, թէ ոչ ոք գիտէ զժամն եւ զժամանակն. ո՛չ հրեշտակք երկնից եւ ո՛չ Որդի, բայց միայն Հայր* (տե՛ս Մատթ. ԻԴ. 36). *անգէտ ասեն զՈրդի եւ փոքր, քան Հայր, ապա աստ անգէտ ասեն զՀայր եւ փոքր՝ քան զՈրդի, որով սուտ լինին:*

Իսկ մշակքն իբրեւ տեսին զնա զի գայր, ասեն ցմիմեանս. «Սա է ժառանգն. եկայք սպանցուք զսա, եւ մեր լիցի ժառանգութիւնն». եւ կալեալ զնա՝ սպանին եւ հանին արտաքոյ այգւոյն (ԺԲ. 7-8):

Փոխանակ զի պարտ էր առաջի անկանել եւ թողութիւն խնդրել, զոր առ ծառայսն յանցեան, նոքա եւս մեծագոյն չար ձեռնարկեն, զի որչափ մեծ է տէր, քան զծառայ. մանաւանդ, թէ Աստուած քան զմարդ, այսպէս մեծ եւ ծանր էր սպանութիւնն Քրիստոսի, քան զմարգարէիցն:

Տեսին, ասէ, զնա, զի գայր, ասեն ցմիմեանս. «Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա»: *Առ որս պարտ է ասել, թէ ընդէ՞ր սպանանէք զնա, այլ թերեւս զի պատուեաց զձեզ եւ կամ զի Աստուած էր եւ վասն ձեր մարդ եղեւ եւ բազում սքանչելիս արար՝ զբորոտս սրբեաց, զանդամալոյծս առողջացոյց, զմեղս եթող եւ յարքայութիւնն կոչեաց:*

Ոչ վասն այսր ասեն, այլ զի. «մեր լիցի ժառանգութիւնն»: *Որ թէ պահեալ էին զպատուիրանս նորա, եղբարք եւ ժառանգակիցք Քրիստոսի լեալ էին՝ ըստ Պաւղոսի* (տե՛ս Հռոմ. Ը. 17), *իսկ այժմ ամենեւին տարագիրք եղեն՝ զայս գործելով:*

«Իսկ մշակքն իբրեւ տեսին զնա, զի գայր». *ի ձեռն ասացելոցս յայտնէ զիշխանացն հրէից, թէ ոչ վասն անգիտութեան զՔրիստոս խաչեցին, այլ իմացան, թէ նա է, զորմէ ասաց Դաւիթ՝ «Խնդրեա՛ յինէն եւ տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն»* (Սաղմ. Բ. 8):

Զի յորժամ ժողովեցան ի խորհուրդ, ասէին. «Տեսանէք, զի ոչինչ աւգտիք, ահա աշխարհ ամենայն զկնի նորա գնաց» (Յովհ. ԺԲ. 19). *Թէ՝ «Թողումք զնա, ամենեքեան հաւատան ի նա»* (հմմտ. Յովհ. ԺԱ. 48):

Ժառանգութիւն Որդւոյն Աստուծոյ տուեալ է ամենայն հեթանոսաց եկեղեցւոյ, զոր իւրով արեամբն գնեաց եւ յարութեամբն տիրեաց, զոր չար բնակիչքն զնա խաչելով՝ յափշտակել կամէին զայս ժառանգութիւն, զոր տուաւ նմա եւ զհաւատս նորա խափանել եւ զարդարութիւն աւրինացն Մովսէսի յառաջել ջանային:

Զի ազգին Ղեւեայ բաժին տուան զենմունք պատարագացն, եւ գիտացին, թէ խափանելոց են զենմունքն ի ձեռն Քրիստոսի, եւ հոգեւոր պատարագն յեկեղեցի հաստատեսցի: Մեռցի, ասեն, ապա Քրիստոս, զի մնասցեն կաթսայք եւ զենմունք խոյոց եւ զուարակաց, որպէս եւ էին:

Եւ կալեալ զնա, սպանին եւ հանին արտաքոյ այգւոյն (ԺԲ. 8):

Մատթէոս եւ Ղուկաս ասեն, թէ՝ «Հանին զնա արտաքոյ, քան զայգին եւ սպանին» (Մատթ. ԻԱ. 39, Ղուկ. Ի. 15), *որ ցուցանեն զտեղին, թէ արտաքոյ քաղաքին կամեցան սպանանել զնա, որպէս եւ եղեւն իսկ:*

Իսկ Մարկոսի ասելս, թէ «կալեալ զնա սպանին» *նախ եւ ապա* «հանին արտաքոյ այգւոյն», *զայն յայտնէ, որ ոչ թէ միայն ի ժողովրդենէն արտաքս ելցէ, զի մի տիրեսցէ նոցա, այլեւ յանուանէ հրէութեանն զրկեալ գտանցի, ըստ որում եւ ասէին. «Սամարացի ես դու եւ ոչ հրէայ իսրայէլացի, եւ դեւ գոյ ի քեզ»* (Յովհ. Ը. 48) *եւ ոչ Հոգի Սուրբ, որպէս ի մարգարէսն:*

Եւ միտ դիր չարութեան նոցա, զի ոչ միայն առ կենդանութեամբն եւ մինչ ի խաչին էր, նախատէին զնա, այլեւ մինչ ի գերեզմանին էր, որպէս եւ ասէին առ Պիղատոս. «Տէ՛ր, յիշեցաք, զի մոլորեցուցիչն այն ասէր, մինչ կենդանին էր» (Մատթ. ԻԷ. 63), *այլեւ*

առ քարոզութեամբ առաքելոցն. եւ այսպէս որչափ կարողութիւն իւրեանց էր, յիւրեանց սահմանացն ի բաց հանին եւ ետուն ընդունել հեթանոսաց:

Արդ, զի՞նչ արասցէ տէր այգւոյն. եկեսցէ եւ կորուսցէ զմշակսն եւ տացէ զայգին ի ձեռս այլոց (ԺԲ. 9):

Մատթէոս ասէ, թէ ինքեանք ասացին, թէ՝ «Զչարսն չարաւ կորուսցէ, եւ զայգին տացէ այլոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց» (Մատթ. ԻԱ. 41):

Որ ցուցանէ, թէ ինքեանք հատին զվճիռ ի վերա ինքեանց, որ է յոյժ ճշմարտութիւն դատաստանի, յորժամ ինքեանք, որ պատժելոց իցեն, անձամբ անձանց[1] *տայցեն վճիռ:*

Իսկ աստ Մարկոս ասէ, թէ ինքն ետ զվճիռն. եւ չեն հակառակ միմեանց, զի երկոքեան եղեն. նախ՝ զի ինքեանք հատին զվճիռն եւ ապա՝ ինքն Քրիստոս վճռեաց, ըստ որում. «Յորժամ գիտացին զբանն, թէ վասն նոցա էր, ասեն, քաւ մի լիցի», որպէս ասէ Ղուկաս (Ղուկ. Ի. 16):

Վասն որոյ եւ մարգարէիւն հաստատէ, թէ ստուգապէս առանց ամենայն պատճառի լինելոց է տալ այլոց վաստակաւորաց զայգին, այսինքն՝ հեթանոսաց, որ գալոց են յարեւելից եւ յարեւմտից, ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ՝ բազմիլ ընդ Աբրահամու եւ ընդ Իսահակայ եւ ընդ Յակոբայ յարքայութեանն երկնից (տե՛ս Մատթ. Ը. 11), *եւ թէ՝ «Բարձցի ի ձէնջ արքայութիւնն Աստուծոյ եւ տացի ազգի, որ առնիցէ զպտուղս նորա»* (Մատթ. ԻԱ. 43):

«Եկեսցէ եւ կորուսցէ զմշակսն եւ տացէ զայգին ի ձեռս այլոց». *զտուրս չնորհացն, զոր ամբարտաւանն արհամարհէ, տացէ խոնարհին, ըստ այնմ, թէ. «Որ ունիցի, տացի նմա եւ յաւելցի եւ որ ոչն ունիցի, եւ զայն, զոր յափշտակեաց, հանցեն ի նմանէ»* (հմմտ. Մատթ. ԺԳ. 12, հմմտ. Ղուկ. ԺԹ. 26): *Եւ այս Աստուծոյ էր սահմանեալ, որում մարգարէական աւրինակքն վկայեն՝ ասելով.*

Եւ ոչ զգիրն զայն իցէ ընթերցեալ ձեր, թէ զվէմն, զոր անարգեցին շինաւղքն, նա եղեւ գլուխ անկեան: Ի տեառնէ եղեւ այս, եւ է սքանչելի յաչս մեր (ԺԲ. 10-11):

[1] ՄՏ անձին

Որպէս թէ ասիցէ, զի՞նչ այլով իւիք լնուին գիրք, եթէ ոչ այս, այսպէս լինիցի, խոտիլ հրէիցն եւ ընտրիլ հեթանոսացն, զի զոր նոքա զՔրիստոս իբրեւ զքար ինչ անպիտան ի բաց ընկեցին յինքեանց, հեթանոսք ընդ առաջ եկին եւ իբրեւ զքար իմն մեծագին եւ պատուական թագ ի վերայ գլխոց իւրեանց եդին ըստ այնմ, թէ՝ «Եդ ի գլուխ իւր պսակ ի քարէ պատուականէ» (հմմտ. Սաղմ. Ի. 5):

«Զվէմն, զոր անարգեցին շինաւղքն». *«Շինաւղք»՝ զհրէից վարդապետսն կոչէ, իսկ «վէմ»՝ զՔրիստոս, զոր արհամարհեցին շինաւղքն, որք զանձինս իւրեանց եւ զայլոց պարտ էին արժանաւոր տուն եւ բնակութիւն շինել Աստուծոյ: Եւ այս լինելոց էր հնազանդութեամբն Քրիստոսի, զոր նոքա ոչ կամեցան եւ այլոց արգել եւ խափան լինէին, ըստ այնմ, թէ՝ «Վայ ձեզ՝ դպրաց եւ փարիսեցւոց, զի փակէք զարքայութիւնն երկնից առաջի մարդկան, դուք ոչ մտանէք, եւ որք մտանենն, չտայք թոյլ մտանել»* (Մատթ. ԻԳ. 13):

«Նա եղեւ գլուխ անկեան». *որպէս որ զանդամանդ հարկանէ, ինքն ցաւեցեալ լինի, այսպէս եւ որ ընդ Աստուած մարտնչի, ինքն մանաւանդ վնասեալ լինի:*

Զի թէ սիրելիքն Աստուծոյ մարդիկք ցաւելի բնութեամբ, որչափ առաւել անարգեցան, այնքան առաւել պատուականք երեւեցան, ապա զի՞նչ պարտ է ասել յաղագս Աստուծոյ, զոր եւ այժմ ի մարգարէական բանիցս ուսանիմք, զի իշխանք հրէիցն չկամէին միոյ ազգին եւ փոքու ժողովրդեանն Իսրայէլի տիրել եւ իշխել Քրիստոսի, նա աւանիկ ամենայն հեթանոսաց, եւ որք ի հրէիցն հաւատացին, զամենեսեան ի մի խառնեաց իբրեւ զվէմ ինչ անկիւնակալ: Զի որպէս մի եւ նոյն քար զերկու անկիւնս միաւորէ յինքեան, այսպէս եւ Քրիստոս յերկու ժողովրդենէն՝ ի հրէից եւ ի հեթանոսաց, մի տուն եւ մի տաճար շինեաց ի բնակութիւն աստուածութեանն:

Որպէս եւ յերեկոյի ընթրեացն ժամանակի զերկու ուխտսն ի մի խառնեալ՝ միացոյց, զի ի միում սեղանի կատարեաց զհինն եւ սկսաւ զնոր խորհուրդ մարմնոյ եւ արեան իւրոյ (տե՛ս Մատթ. ԻՁ. 17-30):

«Նա եղեւ գլուխ անկեան: Ի տեառնէ եղեւ այս, եւ է սքանչելի յաչս մեր». *«նա»՝ այսինքն՝ նախատեալն եւ անարգեալն, խաչեալն ընդ չարագործս եւ թաղեալն, զոր եւ Պետրոս ի հրապարակախաւսութեանն վասն ի ծնէ կաղին բժշկութեանն ասէր, թէ՝ «Նա է վէմն*

անարգեալ ի ձէնջ չինողաց, որ եղեւ գլուխ անկեան (Գործք Դ. 11), *եւ չիք այլով իւիք փրկութիւն»* (Գործք Դ. 12):

Եւ զի այս այնչափ զարմանալի էր, ասէ. «**Ի Տեառնէ եղեւ այս**», *զի այս միայն Աստուծոյ վայելէր, որում ամենայն դժուարինքն դիւրինք են եւ անհնարինք՝ հնարաւորք, որ զմեզ՝ զդիւաց կոխան լեալս եւ զանբանիցն հաւասարեալս, զթշնամիսս եւ զապստամբս, մահուամբ Միածնի Որդւոյն իւրոյ յորդեգրութեան իւրոյ պատիւս վերացոյց եւ յանճառ բարիսն կոչեաց եւ զխորհուրդն, զոր ո՛չ հրեշտակք եւ ո՛չ հրեշտակապետք կարացին իմանալ, հեթանոսք ի ձեռն Քրիստոսի ուսան, նմին իրի ասէ.* «**Ի Տեառնէ եղեւ այս**», *զի եթէ նա չէր գործակից լեալ.* «*Մեք անձամբք մերովք չէաք բաւական, այլ բաւականութիւնն մեր յԱստուծոյ եղեւ*»,- *ասէ Պաւղոս* (հմմտ. Բ Կոր. Գ. 5). *եւ Քրիստոս՝ թէ՝* «*Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն իմ, որ զիս առաքեաց, ձգեսցէ զնա*» (Յովհ. Զ. 44), *որպէս եւ աստ ասէ:*

«**Ի Տեառնէ եղեւ այս, եւ է սքանչելի յաչս մեր**». *զի կարի իմն հեռի էին ի միմեանց հրէայք եւ հեթանոսք եւ այժմ, խառնեալք ընդ միմեանս, եղեն մի ի ձեռն հաւատոցն ի Քրիստոս:*

Դարձալ՝ զի ել ժողովուրդն, եւ մտին հեթանոսք, եւ ընտանիքն եւ մերձաւորքն աւտարք եւ հեռաւորք եղեն, եւ աւտարքն եւ հեռաւորքն՝ ընտանիք եւ մերձաւորք, սորին վասն ասէ. «**Է սքանչելի յաչս մեր**»:

Տպազիոն ակն, որ յԵթովպիա գտանի, զարմանալի է ի տեսս, արդ՝ որպէս այն քարն սքանչելի է ի տեսութիւն աչացն, նոյնպէս եւ սա սքանչելի թուի տեսութեան հոգւոց մերոց:

«**Է սքանչելի յաչս մեր**». *այսինքն՝ միայն ի յաչս հաւատացելոց, իսկ յաչս անհաւատիցն՝ ոչ եւս. ըստ այնմ, թէ՝* «*Զոր աւրինակ զարմացին բազումք ի վերայ քո*» (Ես. ԾԲ. 14), *այսինքն՝ հաւատացեալքն,* «*այնպէս անարգեսցի տեսիլ քո ի մարդկանէ*» (հմմտ. Ես. ԾԲ. 14), *այսինքն՝ յանհաւատիցն, զի յԱստուծոյ եւ ի հոգեկիր մարդկանէ փառաւորէր, իսկ անարգէր*[1] *ի նոցանէ, որ մարդ միայն էին՝ զրկեալք ի Հոգւոյն Սրբոյ: Ի սոյն կարգ գրեն Մատթէոս եւ Ղուկաս, թէ՝* «*Ամենայն, որ հարցի ընդ վէմս ընդ այս, խորտակեսցի, եւ յորոյ վերայ անկցի, հոսեսցէ զնա*» (հմմտ. Մատթ. ԻԱ. 44, Ղուկ. Ի. 18):

[1] ՍՏ անարգիւր

Յաղագս այսր վիմի ասէ Ամովս ի դիմաց Աստուծոյ. «*Ահաւասիկ ես հաստատեցից ադամանդ ի մէջ ժողովրդեան իմոյ Իսրայէլի, եւ ոչ եւս յաւելից անցուցանել զնովաւ,* (Ամովս Է. 8) *եւ ապականեսցին բագինքն եւ մեհեանքն*» (հմմտ. Ամովս Է. 9):

Ամենայն, որ հարցի ընդ վէմս ընդ այս. այսինքն՝ զի ժողովեցան ի վերայ Քրիստոսի գլխաւորք ժողովրդեանն եւ կամեցան շիջուցանել զնա ի ձեռն խաչին, զի ոչ քաղցրացաւ նոցա ուսումն վարդապետութեան նորա, սակայն նմա ոչինչ կարացին ստանալ, այլ ինքեանք իբրեւ զալիս ծովու ընդ վէմն հարեալ՝ փշրեցան, այսինքն՝ զրկեալք եղեն ի հոգեւոր եւ ի մարմնաւոր բարութեանցն, զի յետ խաչին եւ ի գերութիւն վարեցան:

Եւ յորոյ վերայ անկցի, հոսեսցէ զնա, այսինքն՝ ի վերայ մեղացն եւ սատանայի, զի որպէս առիւծ անկանի ի վերայ որսոյ ինչ եւ զէշ պատառէ զնա, այսպէս եւ Քրիստոս ի ձեռն խաչին յարձակեցաւ ի վերայ սատանայի եւ կռապաշտութեանն եւ եհար սատակեաց եւ կործանեաց զնոսա:

Յաղագս որոյ եւ մինչ ի խաչին էր, առիւծաբար գոչեաց, զարհուրեցուցանելով զմահ եւ զիշխանն նորա, որով խափանեցան եւ պաշտամունք կռոցն եւ աւերեցան մեհեանք նոցա:

Վկայէ այսմ եւ ասացեալն ի Դանիէլէ, զի. «*Վէմն, որ հատաւ ի լեռնէ առանց ձեռին մարդոյ* (հմմտ. Դան. Բ. 34) *եւ եհար զպատկերն եւ մանրեաց զնա իբրեւ զփոշի կալոյ ամարայնոյ եւ առ զնոսա սաստկութիւն հողմոյ եւ տեղի ոչ գտանէր նոցա: Եւ վէմն, որ եհար զպատկերն, եղեւ լեառն մեծ եւ ելից զամենայն երկիր*» (Դան. Բ. 35): *Վասն զի յետ խաչին ընդ ամենայն տիեզերս սփռեցան առաքեալքն՝ խլելով զկռապաշտութիւնն եւ սերմանելով զաստուածպաշտութիւնն:*

Եւ արդ, յորժամ զայս ամենայն լուան զառակս եւ զվկայութիւն մարգարէիցն եւ զիւրսն եւս, ո՞չ ապաքէն պարտ էր ակնածել եւ լռել ի չարութենէն, սակայն յետ այսր ամենայնի ասէ Մարկոս.

Եւ խնդրէին զնա ունել եւ երկեան ի ժողովրդենէ անտի (ԺԲ. 12):

Որպէս թէ ստեաց ընդդէմ ինքեան, որով առաւել հաստատէին, թէ ճշմարիտ ասաց, զի ինքն էր ժառանգ այնոցիկ չար մշակացն:

Դարձեալ՝ ի հաւատս ամենեքեան եղբարք են, որք ոչ սիրեն զմիաւորութիւն եւ զխախաղութիւն եկեղեցւոյ, յորժամ կամին չար առնել եւ վասն բազմութեանն երկիւղի կամ առ ամբոխոյ արգելեալ լինին, իսկ յորժամ ժամանակ գտանեն, հալածեն զեկեղեցին, խաչել զՔրիստոս, որպէս խաչաւղ Քրիստոսի:

Զի գիտացին, թէ առ նոսա ասաց զառակն *(այսինքն՝ վասն նոցա)* **եւ թողին զնա եւ գնացին** (ԺԲ. 12):

Որ սակաւ մի մնայ, շատ յամէ, արդ՝ եթէ մնաց առ ժամն, երկարեաց ժամանակն:

Երբեմն կալեալ ընդ մէջ նոցա էանց, եւ ոչ տեսին. երբեմն երեւէր եւ զչարութիւն նոցա արգելոյր, զի ասէին. «Ո՞չ սա է Յիսուս եւ ահա յայտնապէս խաւսի եւ ոչ ասէ ոք ինչ» (հմմտ. Յովհ. Է. 26):

Իսկ աստ, զի յերկիւղէ բազմացն զարհուրեալ էին, զայն բաւական համարի եւ չառնէ նշան ինչ, զի ոչ կամէր զամենայն ի վեր քան զմարդ գործել:

ՎԱՍՆ ՍԵՂԱՆԻՆ ՀԱՐՍԱՆԵԱՑ

Մատթ. ԻԲ. 1-14

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Դարձեալ պատասխանեալ՝ Յիսուս ասէ նոցայ առակաւք. «Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրոյ» (Մատթ. ԻԲ. 1):

Յառաջին առակիդ առն տանուտեառն ասաց, իսկ այժմ առն թագաւորի. վասն զի յառաջնումն ոչ էր յիշելոց զառաքումն զաւրականացն, իսկ աստ յիշելոց էր: «Հարսանիս արար» Հայր Աստուած Որդւոյ իւրոյ փեսայի Քրիստոսի եւ հարսին՝ եկեղեցական հոգւոյ, որ ոչ ապականի, այլ զանապականութիւն ի նորայ միաւորութենէն եւ ի հաղորդութենէն ընկալաւ. ծառայս կոչէ զՄովսէս եւ զմարգարէսն:

Եւ նոքա ոչ կամեցան գալ (հմմտ. ԻԲ. 3):

Ոմանք վասն փութոյ կենցաղոյս այսորիկ եւ ադտեղութեան:

Եւ դարձեալ առաքեաց այլ ծառայս (ԻԲ. 4):

Զամենայն վարդապետսն եւ զհայրապետսն:

Ահա ճաշ իմ պատրաստեալ է, զուարակք եւ պարարակք իմ զեղեալ (ԻԲ. 4):

«Ճաշ»՝ սեղան իմաստութեան եւ գիտութեան աստուածայնոյ, ցուլք մեծ՝ աստուածաբանութիւնք ուրախարարք, «պարարակք»՝ քաղցր վարդապետութիւնք, որ պարարէ զոգիս:

Լուեալ թագաւորին բարկացաւ, յղեալ զաւրականս, կորոյս զսպանողսն զայնոսիկ եւ զքաղաքն նոցա հրկէզ արար (ԻԲ. 8):

«Զաւրական»՝ Աստուծոյ հրեշտական այսպես զաւրութիւնքն եւ ապա Վեսպեսիանոս, եւ «զաւրականն», որ եկեալ կորոյս զՀրէաստան յետ խաչելութեանն Քրիստոսի եւ զքաղաքս նոցա հրով վիպանեաց:

Յայնժամ ասէ թագաւորն ծառայից իւրոց (հմմտ. ԻԲ. 8):

«Ծառայ»՝ ասա առաքեալքն եւ հրեշտակք կարգեալք ի կոչումն հեթանոսաց. ասացին իսկ առաքեալքն ցՀրէայսն, ձեզ հարկաւոր էր նախապատմել զբանն Աստուծոյ, բայց զի անարժան զձեզ արարէք յաւիտենականի կենացն, վասն այնորիկ երթամք ի հեթանոսս (տե՛ս Գործք ԺԸ. 6):

Եւ ելեալ ծառայիցն ի ճանապարհս ժողովեցին զամենեսեան, զորս գտին զչարս եւ զբարիս (հմմտ. ԻԲ. 10):

Զչարս ժողովեցին, զի մոռացին զչարութիւն իւրեանց եւ զգեցին հանդերձ հարսանեաց եւ զկերակուր աստուածային ունիցին. եւ զբարիսն կոչեցին եւ հեթանոսք էին. ապա զիա՞րդ բարիք: Բարիս զայնպիսիսն լսելի է, որք մեղմագոյն էին ի չարութեանն եւ բնութեամբ զաւրինացն գործէին:

Եւ մտեալ՝ թագաւորն տեսանէր (ԻԲ. 11):

Եմուտ թագաւորն յառաջ քան զուրախութիւնն, զի տեսանիցէ՝ ո՞վ իցէ արժանաւոր ուրախութեան, եւ ով ոչ իցէ:

Եւ տես անդ այր մի, որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց (ԻԲ. 11):

Վասն զի չէր մերկացեալ զչարութեանն եւ զգեստ ամպարշտութեանն, այլ դեռ եւս զգեցեալ ունէր եւ միայն նենգութեամբ եւ խորամանկութեամբ մտեալ էր, այսինքն՝ անաստուածութեամբ եւ ամպարշտութեամբ ոչինչ բերելով ի պատուիրանէն Քրիստոսի եւ յառաքինութենէ, վասն այնորիկ եւ կարկեցաւ, զի ոչ ունէր պատասխանի: Կապեն հրեշտակք զձեռս եւ զոտս եւ հանեն ի տանջանն զոտս զգնացս, ձեռս՝ զազդողական զաւրութիւնսն:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Դարձեալ առակ հարսանեացն զայնչափ խնամսն, զոր միւս անգամ ունելոց էր, հրէիցն առնէ յայտ, զի յառաջնումն առակին այսպէս երեւի, թէ յառաջ, քան զխաչելութիւնն կոչեաց զնոսա եւ ասա՝ յետ սպանանելոյն փութա ձգել զնոսա առ ինքն: Եւ յորժամ զանհնարին պատիժսն աւրէն էր կրել նոցա, յայնժամ առ հարսանիսն կոչէ զնոսա եւ առաւել պատուով պատուէ (տե՛ս Մատթ. ԻԲ. 5):

Եւ արդ ո՞ ոք կայցէ քան զնոսա ապախտաւոր եւ թշուառական, զի եւ ի հարսանիս կոչէալք փախչէին: Ո՞ ոք կամիցի ի հարսանիս չերթալ եւ յարքայի եւ յարքայորդւոյ ի հարսանիս: Եւ է՞ր վասն ասեն «հարսանիք կոչեցան» (ԻԲ. 3), *զի ուսանիցիս զԱստուծոյ խնամսն եւ զգութ, եւ զիրացն զպայծառութիւն, զի չիք տրտմական եւ տխրական, այլ ամենեւին ամենայնն լի է հոգեւոր ուրախութեամբ, վասն այնորիկ եւ «փեսա» իսկ կոչէ զնա Յովհաննէս* (Յովհ. Գ. 29): *Եւ է՞ր աղագաւ Հաւր չի խաւսի ի հարսն, այլ որդւոյ, զի յառաջին առակն զմահուանէն ճառեաց եւ ասա ցուցանէ, թէ յետ մահուանն լինելոց են հարսանիքն, յայնժամ լինելոց է փեսայ, յորժամ ի մեռելոց յարիցէ: Այլ նոքա եւ այնպէս չէին պիտանիք, զի քան զայն, զինչ կայցեն*[1] *անհնարին աղէտք, զի այս երեքկին իսկ ամբաստանութիւն է, նախ՝ զի մարգարէսն իսկ կոտորեցին, ապա՝ զի զՈրդին իսկ սպանին, երրորդ անգամ՝ զի ի հարսանիս Որդւոյն, զոր սպանին, կոչեցան եւ չկամեցան գալ, այլեւ պատճառս եւս յաւդէին զհարկիս եգանց եւ զգաղարակս եւ զկանայսն, թէպէտ եւ ի դէպ ինչ պատճառքն կարծիցին, այլ անտի իսկ ուսանիցիմք, թէ եւ կարի ինչ կարեւոր պէտք ի վերայ կայցեն, քան զամենայն նախամեծար մարթէ զհոգեւորսն համարել եւ ոչ յանկարծակի ինչ եւ փութանակի կոչէ, այլ յառաջ քան զբաղում ժամանակս:*

«Ասացէք,- ասէ,- ցկոչնականսն»: Եւ դարձեալ՝ եթէ. «Կոչեցէ՛ք զհրաւիրեալսն» (հմմտ. ԻԲ. 3-4):

Որ կարի աճեցուցանէ զամբաստանութիւնն, երբեմն կոչեաց մարգարէիւքն ամենեքումբք եւ ի ձեռն Յովհաննու, որ առ նոյն յորդորէր եւ ասէր, թէ՝ «Նմա պարտ է աճել եւ ինձ՝ մեղմանալ» (Յովհ. Գ. 30): *Եւ դարձեալ Որդւովն, որ ասէր.* «Եկայք առ իս, ամենայն աշխատեալք եւ ծանրաբեռինք, եւ ես հանգուցից զձեզ» (հմմտ. Մատթ. ԺԱ. 28), *եւ ոչ միայն բանիւք, այլեւ արդեամբք իսկ կոչէ զնոսա, եւ յետ վերանալոյն Պետրոսիւ, այլովք առաքելովն: Եւ քանզի իբրեւ զՈրդին տեսին, ըմբոստացան*[2] *եւ սպանին, ապա եւ ծառայիւքն միւս անգամ կոչէ՝ ոչ յաշխատութիւնս ինչ եւ ի քրտունս, այլ յուրախութիւն եւ ի փափկութիւն:*

---

[1] Ա կայցէ

[2] Ա ըմբաստացան

«Զուարակք իմ,- ասէ,- եւ պարարակք զենեալ են» (ԻԲ. 4):

Տեսանես՝ որպիսի բարեկենդանք էին եւ որպիսի խրախութիւնք, սակայն եւ ո՛չ այնպէս ինչ պատկառեցոյց զնոսա, այլ որչափ առաւել երկայնամիտ լինէր, նոյնչափ կարի իսկ քան զնոյն խստանային, ոչ առ չպարապել ինչ, այլ[1] *առ ծուլութիւն:*

Յուլացան,- ասէ,- եւ ո՛չ կամեցան (հմմտ. ԻԲ. 5):

Եւ ոչ միայն այն չարիք են, զի ո՛չ կամեցան գալ, այլեւս անհնարին եւ մոլեկան աւճիրք այն էին, զի զհրաւիրականսն թշնամանէին եւ կոտորէին, եւ նոքա ի հարսանիս փեսային, որ ի նոցանէ սպանաւ, կոչեցեալ հրաժարէին եւ զվերջին եւս զհրաւիրականսն կոտորեցին, զի՞նչ այլ ինչ հանգոյն, կայր այնպիսիս կատաղութեան, որում եւ Պաւղոս մեղադիր լինի, որքան զՏէրն ասէ. «Սպանին եւ զիւրեանց մարգարէսն եւ զմեզ, - ասէ, - հալածեցին» (հմմտ. Ա Թեսաղ. Բ. 15): *Եւ արդ, զի՞նչ գործիցէ յետ այնր ամենայնի:*

Հրձիք առնէ զքաղաքսն եւ առաքէ զաւրսն՝ կոտորել զնոսա (հմմտ. ԻԲ. 7):

Զայս ասելով՝ զայն հարուածս յայտ առնէ, որ առ Տիտոսիւ եւ Վիսպիանոսիւ հասին ի վերա նոցա, թէ՝ «Եւ զՀայր բարկացուցին՝ նմա չհաւատալովն, եւ ինքն իսկ ել յայտ[2] *առնլով զվրէժխնդրութիւնն», վասն այնորիկ ոչ անդրէն վաղվաղակի իբրեւ սպանին զորդին, առին զքաղաքն, այլ ետ խ. (40) ամի, զի ցուցցէն իւր յերկայնմտութիւնն յետ քարկոծելոյն զՍտեփաննոս* (տե՛ս Գործք Է. 57-59) *եւ սպաննելոյն զՅակոբոս* (տե՛ս Գործք ԺԲ. 1-2) *եւ թշնամանելոյ զառաքեալսն:*

Տեսե՞ր զիրացն ճշմարտութիւն եւ զվաղվաղակի զպատժոցն ի վերայ հասանելոյ. մինչդեռ Յովհաննէս կենդանի էր, եւ այլք բազումք, որ ընդ Քրիստոսի շրջէին, ելին իրքն ի գլուխ, եւ վկայք իրացն գործելոց լինէին, որք ի նմանէն իսկ լուան զայն, վասն այսորիկ եւ ինքն իսկ ասէ:

Հարսանիքս պատրաստ էին, եւ հրաւիրեալքն չէին արժանի (ԻԲ. 8):

[1] Ա > այլ
[2] Ա յայց] յայտ

Զի մի՛ կարծիս ինչ յամառութեան նոցա թողուցու. նախ առ նոսա առաքեաց, եւ ինքն առ նոսա եկն, զի զնոսա կարկեսցէ եւ զմեզ խրատեսցէ, թէ նա զիւրն զամենայն կատարեաց, թէպէտ եւ չիցէ ոք, որ շահիցի ինչ, զի նոքա չէին արժանի:

«Ելէք,- ասէ,- ընդ ամենայն ճանապարհս, եւ զոր ոք գտանիցէք, կոչեսցջիք զանարգս եւ զարհամարհեալս» (հմմտ. ԻԲ. 10):

Ցուցանէ, թէեւ այս եւս յիրաւի լինելոց է, որ կարի իսկ կսկծեցուցանէր զհրէայսն եւ քան ընդ կործանումն քաղաքին իւրեանց ընդ մուտն հեթանոսաց կարի իմն մորմոքէին: Բայց զմի ոք ի հաւատս ապաստան եղեալ, ապա եւ զդատաստանէն իսկ ճառէ, որ վասն չար գործոցն լինելոց է, զի առ այն, որ չեւ իցեն հաւատացեալ. վասն հաւատոց եւեթ ճառէ եւ առ հաւատացեալսն զվարուց փոյթ յանձին ունելոյ, զի «հանդերձ հարսանեաց» զվարս եւ զգործսն կոչէ: Եւ եթէ շնորհացն իցէ կոչումն, է՞ր վասն այսպէս ճշտիւ զհանդերձս մաքուրս պահանջիցէ: Վասն զի կոչելն եւ սրբելն այն շնորհացն է՝ եւ սուրբ եւ մաքուր պահել զհանդերձս այն կոչնականացն: Իսկ կոչումն, ոչ[1] *ըստ արժանաւորութեան կոչեցելոցն եղեւ, այլ ըստ*[2] *շնորհացն պարգեւաց, եւ պարտ էր այսուհետեւ երախտեացն երախտիս հատուցանել եւ մի՛ այնչափ չարութիւն ցուցանել յետ այնպիսի պատուոյ, զի որպէս նոքա ո՛չ գալովն թշնամանեցին, նոյնպէս եւ դու, յորժամ անառակ վարուք անցեալ բազմեսցիս, զի աղտեղի հանդերձիւքն մտանելն այն իսկ է, յորժամ անսրբական վարուք երթիցես ատի անդր:*

Քանզի եւ պապանձեցաւ, ասէ ի հարցանելն (հմմտ. ԻԲ. 12-13):

Տեսանես, զի թէպէտ եւ իրքն յայտնի կան, ո՛չ պատժէ եւ ո՛չ նախ ինքն տացէ զվճիռն վնասակարացն, յորժամ չգիտիցէ՝ ուստէք իրաւունս ցուցանել, ապա այնուհետեւ յանհնարին տանջանս մատնիցի[3]*, զի մի յորժամ խաւար լսիցես, այսպիսի ինչ անլոյս միայն համարիցիս զտեղիս տանջանաւորացն, այլեւ զայն լսիցես, եթէ՝*

Եղիցի լալ եւ կրճել ատամանց (ԻԲ. 13):

Զի այնու զանժուժկալական դաժանութիւն ցաւոց տանջանացն յայտ առնիցէ:

[1] Ա որ] ոչ
[2] Ա > ըստ
[3] Բ մատնիցէ

Լուարուք զայս, որ ի խորհրդականն վայելիցէք եւ աղտեղի հանդերձիւ[ք] յայնպիսի տեղի գայցէք, տեսէք՝ ուստի կոչեցարուք ի ճանապարհաց եւ այն, զի կաղքն եւ հաշմեալք իսկ էիք հոգւով. ոչ եւս չար, քան զմարմնոց խեղութիւս է, ակն ածեցուք ի մարգասիրութենէ այնորիկ, որ կոչեացն, եւ մի ոք ի նոյն աղտեղի հանդերձս կացցէ հանապազ, այլ իւրաքանչիւր ոք ի ձէնջ քննեսցէ եւ լուացցի խոստովանութեամբ եւ արտասուաւք զպատմուճան հոգւոյն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Դարձեալ պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա առակաւք. «Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում: Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս, եւ ոչ կամեցան գալ» (Մատթ. ԻԲ. 1-3):

Յառաջնումն առակին «**փանուտէր**» *ասաց եւ աստ՝* «**թագաւոր**», *քանզի ո՛չ իսկոյն վրէժխնդիր լինելոց էր, այլ յետոյ. յորժամ հրաժարէին ի հարսանեացն՝ հանդերձեալ էր զաւրականս առաքել: Վասն այսորիկ* «**թագաւորի**» *նմանեցաւ,* «**որ արար,- ասէ,- հարսանիս որդւոյ իւրում**». *Թէպէտ յետո՛յ եղեւ հարսանիքն Որդւոյ, սակայն նախ քան զյաւիտեանս սահմանեալ էր՝ ըստ առաքելոյ* (տե՛ս Ա Կոր. Բ. 7): *Իսկ* «**հարսանիք**» *է, նախ առաջին՝ խառնումն Բանին ընդ բնութիւնս մարմնոյ միութեամբ, եւ ապա՝ եկեղեցական հոգւոց՝ ըստ Յովհաննու, թէ՝* «Որ ունի հարսն, նա է փեսայ» (Յովհ. Գ. 29), *եւ Պաւղոս, թէ՝* «Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի» (Եփես. Ե. 32), *եւ դարձեալ թէ՝* «Ձեզ զամենեսեան խաւսեցայ իբր զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Քրիստոսի» (հմմտ. Բ Կոր. ԺԱ. 2), *յորոյ հաղորդութենէն զանապականութիւն ընկալաւ. մարմինն Տեառն՝ արդեամբք եւ եկեղեցի սուրբ՝ յուսով աւետեաց: Եւ վասն է՞ր* «**հարսանիս**» *անուանէ. զի ուսանիցիս զիրացն պայծառութիւնն, թէ չիք տրտմական ինչ, այլ ամենայնն լի է հոգեւոր ուրախութեամբ: Եւ է՞ր աղագաւ Հաւր ոչ խաւսի հարսն, այլ Որդւոյ. զի յառաջին զմահուանէ Որդւոյ ճառեաց, աստ ցուցանէ, թէ յետ մահու լինելոց է հարսանիքն, եւ յայնժամ լինելոց է փեսայ, յորժամ ի մեռելոց յարիցէ, զի զամենեսեան առ ինքն ձգէ* (տե՛ս Յովհ. ԺԲ. 32): «**Առաքեաց,- ասէ,- զծառայս իւր**». *այսու զանչափ խնամսն, զոր առնելոց էր հրէիցն, յայտ առնէ, զի յառաջնումն առակին այսպիսի երեւի, թէ յառաջ քան զխաչն կոչեաց զնոսա, իսկ աստ՝ յետ սպանանելոյն փութայ ձգել առ ինքն, զի յորժամ զանհնարին պատիժս աւրէն էր նոցա կրել, ի հարսանիս կոչէ եւ առաւել պատուով պատուէ: Եւ արդ, ո՞ ոյք այնքան ապախտաւոր լիցէ եւ թշուառական, զի ի հարսանիս կոչիցի յարքայորդւոյ եւ յարքայէ եւ փախչիցի ի նմանէ:* «**Առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիսն, եւ ոչ կամեցան գալ**»: «**Ծառայս**» *զՄոսէս ասէ եւ զմարգարէսն կամ զՅովհաննէս զհրաւիրեալն ի մարգարէիցն: Կոչեաց ի վայելս, եւ ոչ կամեցան՝ ասէ, զոր չիք այլ ինչ անհնարին աղէտ քան զայս, զի այս երեքկին ամբաստանութիւն է. նախ՝ զի զմարգարէս կոտորեցին, եւ ապա զՈրդին իսկ սպանին, եւ երրորդ՝ ի հարսանիսն Որդւոյ, որ սպանաւ, կոչեցան եւ ոչ կամեցան:*

Դարձեալ առաքեաց այլ ծառայս եւ ասէ. «Ասացէք հրաւիրելոցն. «Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ եւ պարարակք զեղեալ են, եւ ամենայն ինչ պատրաստ է, եկա՛յք ի հարսանիս» (ԻԲ. 4):

Կարի աճեցուցանէ զամբաստանութիւնն, զի երբեմն կոչեցան մարգարէիւքն, հրաւիրեաց եւ Յովհաննէս, թէ՝ «Նմա պարտ է աճել եւ ինձ՝ մեղմանալ» (Յովհ. Գ. 30), *կոչեաց եւ ինքն, թէ՝* «Եկա՛յք առ իս, ամենայն աշխատեալք, եւ ես հանգուցից զձեզ» (հմմտ. Մատթ. ԺԱ. 28), *եւ նոքա ըմբոստացան: Ապա եւ առաքելովքն միւսանգամ կոչէ, այլեւ հայրապետաւքն եւս, ոչ յապաշխարութիւն եւ ի քրտունս, այլ յուրախութիւն եւ ի վայելս, սակայն եւ ոչ այն պատկառեցոյց զնոսա, զի որչափ երկայնամիտ լինէր, այնքան ախտանային:* «**Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի**»՝ *սեղան լի իմաստութեամբ եւ գիտութեամբ աստուածայնոյ՝ զմարմինն տէրունական եւ զարիւնն իւր սուրբ՝ քաղցր ճաշակողացն եւ ախորժ քան զմեղր եւ զխորիսխս: Ե՛ւ ոչ վայրապար սա* «**ճաշ**» *եւ Ղուկաս* «**ընթրիս**» *ասէ* (Ղուկ. ԺԴ. 16), *այլ նշանակէ* «**ընթրիսն**», *զի ի լրման կենցաղոյս եւ երեկոյացեալ դարուս բաշխեաց զմարմին եւ զարիւն աշակերտացն ի վերնատանն, իսկ* «**ճաշ**»՝ *զի ժամ էր երրորդ, յորժամ բեւեռեցաւ ի խաչին՝ տալոյ քաղցելոց մտաց զկերակուրն անմահացուցիչ եւ զգիտութիւնն իւր ըստ Դաւթի, թէ՝* «Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան» (Սաղմ. ԻԲ. 5), *որպէս եւ զՀոգին Սուրբ՝ ի սոյն ժամու: Այլեւ զաստուածային*

գիտութեան իմաստն ի ձեռն բանից վարդապետութեան, որ քաղցր է ի կոկորդս քննողացն՝ ըստ այնմ, թէ՝ «Քաղցր են ի քիմս իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ» (Սաղմ. ՃԺԸ. 103), *զոր* «**ճաշն**» *ասաց, նաեւ զսեղան Հաւր, յորս բազմեցուսցէ եւ անցեալ պաշտեսցէ* (տե՛ս Ղուկ. ԺԲ. 37), *որ է նորա վարդապետելն եւ մեր ուսանելն: Զոր պատրաստեսցի, ասէ, քանզի յառաջագոյն կազմեալ է զարդարոցն փառս, որպէս զերկիրն պարգեւական, որ բղխէր զկաթն եւ զմեղր հին ժողովարանին՝ ասելով.* «Տարայց զքեզ յերկիրն, զոր պատրաստեսցի քեզ» (հմմտ. Ելք ԻԳ. 20), *զոր վասն սննդագործ զաւրութեանն եւ կատարելագործ իմաստութեանն՝ «կաթն եւ մեղր» անուանեաց եւ ասա* «**ճաշ**» *կոչէ, որում ըղձացաւ տարփաւղ հոգին, թէ՝* «Երանի, որ կերիցէ ճաշ յարքայութեանն Աստուծոյ» (Ղուկ. ԺԴ. 15)*:*

«**Զուարակք իմ եւ պարարակք զեներ են**»,- *ասէ: Հանգոյն այսմ եւ Ղուկաս ասէ, թէ՝* «Զենէք զեզն պարարակ» (հմմտ. Ղուկ. ԺԵ. 23), *որով զխրախութիւն բարեկենդանութեանն նշանակէ, զի գալուստ Տեառն.տարեկան ընդունելի քարոզեցաւ ի մարգարէիցն* (տե՛ս Ես. ԿԱ. 2)*: Բայց* «**զուարակ**» *զմարմինն իւր կոչէ՝ զհեզն միանգամայն եւ զերկրավաստակ, որով զբանական երկիրս մեր գործեաց՝ պտղաբերս առնելով Աստուծոյ աւրինակաւ մարմնոյ իւրոյ: Իսկ* «**պարարակ**» *զգէրն ասէ եւ* «**ուղղալիցն**»՝ *ըստ մարգարէին* (Սաղմ. ԿԵ. 15), *պարարտացեալ աստուածութեանն աւծմամբ, զորոյ ասէ, թէ՝* «**զենեալ են**»*: Զայս զխաչէն ասէ՝ կանխաւ յառաջաձայնեալ, որպէս զի ցուցցէ, թէ նա՛խ սահմանեալ էր մահն Որդւոյ ի փրկութիւն եւ յուրախութիւն բանականաց՝ ըստ այնմ.* «Զոր եդ յառաջագոյն ի տնտեսութիւն լրման ժամանակաց» (Եփես. Ա. 9), *միանգամայն եւ զկամաւորն նշանակէ:*

Եւ դարձեալ՝ զի բազմաւորական ասէ՝ կամ թէ՝ ոչ միայն մարմնով, այլեւ հոգւով եւ մտաւք պատարագեցաւ, զոր «**իմ**» *ասէ, քանզի արդարեւ Բանին էր մարմինն՝ ըստ առաքելոյ, թէ՝* «Երեւեցաւ մարմնով եւ արդարացաւ Հոգւով» (Ա Տիմ. Գ. 16), *եւ համարձակիմ ասել, թէ աստուածութեամբն եւս վասն առ մարմին ներմիութեան տնաւրինաբար, կամ թէ՝ ոչ միայն փեսայն զենաւ, այլեւ բարեկամք փեսային եւ հարսն եւ որդիքն խողխողեցան՝ առաքեալք եւ մարգարէք, պարարակք հոգելիցք վասն մարդկան, որպէս եւ Տէրն, զանձինս իւրեանց պատարագեցին: Եւ դարձեալ՝ զուարակք մեծամեծք եւ պարարակք զենեալք՝ աստուածաբանութիւնք ուրախարարք եւ*

քաղցր վարդապետութիւնք նորա, որ պարարեն զհոգիս՝ ուսուցանելով զգենումն Որդւոյ, միանգամայն եւ ի նոյն յորդորեն: Իսկ ասելն՝ «**եւ ամենայն ինչ պատրաստ է**»՝ *զհոգեւոր ուրախութիւնն ասէ յեկեղեցի եւ մեղաց թողութիւնն, եւ զորդէգրութեան շնորհն, եւ զարքայութեանն յոյս, եւ զայլ սոյնպիսիս:*

Եւ նոքա յուլացեալ՝ գնացին ոմն յագարակ իւր, եւ ոմն՝ ի վաճառ իւր: Եւ այլք կալան զծառայս նորա, թշնամանեցին եւ սպանին (ԻԲ. 5-6):

Պատճառս յաւդէին, որպէս Ղուկաս ասէ, զհարկիս եղանց եւ զագարակս եւ զկանայս (տե՛ս Ղուկ. ԺԴ. 18-20), *զի թէպէտ ի դէպ ինչ պատճառքն կարծիցին. այլ մեք անտի ուսանիմք՝ թէպէտ եւ կարի ինչ կարեւոր պէտք ի վերայ կայցեն, քան զամենայն ինչ նախամեծար զհոգեւորն պարտ է համարել: Իսկ* «**յուլացան**» *ասելն զպղերգութիցն եւ զծուլիցն նշանակէ, եւ* «**ագարակ**»**աւն**՝ *զերկրասիրացն եւ զագահացն, իսկ* «**եզամբքն**»՝ *զզգայութեանցն պատրանս եւ* «**վաճառ**»**աւն**՝ *զվաճառականացն եւ զխաբեբայիցն, որք զրկութեամբ յափշտակեն զայլոց արարս, յայնժամ հրէայքն, որք ոչ հետեւեցան Աւետարանին՝ քարոզութեամբն, եւ այժմ ապիրատքն եւ անհաւատքն, որք ի նոյն ախտս վարակեալք են: Իսկ կարի չարքն, որք զծառայսն՝ զառաքեալս նորա, թշնամանեցին եւ գանեալ սպանին, զի ոչ միայն ոչ կամեցան գալ ի հարսանիսն, այլեւ մոլեկան ոճիրս գործեցին, զի զհրաւիրակսն խողխողեցին, որոց եւ Պաւղոս մեղադրէ, թէ՝* «զՏէրն սպանին եւ զմարգարէսն եւ զմեզ հալածեցին» (Ա Թես. Բ. 15)*: Տեսանե՞ս զզանազանութիւն ախտիցն, թէ որպէ՛ս հաւասար վերջացուցանէ հարսանեացն, զի ոմանք ծուլութեամբ, եւ ոմանք՝ մարմնասիրութեամբ, եւ այլք հակառակութեամբ ի բաց հեստին ի հոգեւոր ուրախութենէն:*

Իսկ թագաւորն իրրեւ լուաւ, բարկացաւ եւ առաքեաց զզաւրս իւր եւ սատակեաց զսպանաւղսն զայնոսիկ եւ զքաղաքն նոցա այրեաց (ԻԲ. 7):

Յիրաւի բարկացաւ, զի բազում ժամանակս ներեաց՝ թերեւս ի զղջումն գայցեն, իսկ նոքա ի չարութիւն վերջին թեւակոխեցին եւ զերկայնմտութիւն նորա պատճառ խստութեան անձանց արարին եւ բարկութեան անաւթ զանձինս պատրաստեցին, որպէս

փարաւոն, կամ թէ չհաւատալովն յՈրդի՝ զՀայր բարկացուցին, վասն որոյ ի հարուածս գայ, որպէս ասէ, թէ՝ «**Առաքեաց զզաւրս իւր**»: *Զայս զՏիտոսէ եւ զՎեսպիանոսէ ասէ, եւ թէ* «**իւր**» *ասէ, մի՛ զարմանար, քանզի եւ զՆաբուքոդոնոսոր բաժակ ոսկի ի ձեռին իւր կոչեաց* (տե՛ս Երեմ. ԾԱ. 7) *եւ զմարախ զոր իւր ասէ* (տե՛ս Յովել Բ. 25), *վասն զի զկամս նորա պաշտեն: Նոյնպէս եւ զսոսա, զի զվրէժ Որդւոյ իւրոյ առին, թէպէտ ոչ անդէն վաղվաղակի, յորժամ սպանին, այլ յետ քառասուն ամի, յորժամ եւ զհարիւրական զոմն գլխատեցին, որպէս զՅակոբոս, զոմն քարկոծեցին, որպէս զՍտեփաննոս, եւ զայլսն թշնամանեցին, որպէս զի ներելովն զերկայնմտութիւնն ցուցցէ եւ վրէժխնդրութեամբն՝ զզաւրութիւնն: Քանզի տակաւին Յովհաննէս կենդանի էր, եւ այլք բազումք, որք ընդ Քրիստոսի էին, տեսին զաւերն Երուսաղէմի, որպէս լուան ի Տեառնէ, զի եկեալ Հռոմայեցւոցն՝ բարձին զիշխանութիւն նոցա, զորս սպանին եւ զմանկունս եւ զկանայս գերի վարեցին եւ զքաղաքս նոցա հրով այրեցին, որպէս պատմէ Յովսէպոս*[1]:

Յայնժամ ասէ ցծառայս իւր. «Հարսանիքս պատրաստ են, եւ հրաւիրեալքն չէին արժանի: Արդ, երթայք ի յանցս ճանապարհաց եւ զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիս» (ԻԲ. 8-9):

Նախ առ նոսա առաքեաց, եւ ինքն առ նոսա եկն, զի մի՛ կարծիս ինչ յամառութեան թողուցու, որպէս ասէ, թէ՝ «**հրաւիրեալքն չէին արժանի**», *այսինքն՝ թէ եւ անգամ հրաւիրելոյ չէին արժանի, թող թէ կոչելոյ, բայց զի մի՛ բարուրս դիցեն, այլ զի նոքա ըմբերանեսցին, եւ մեք խրատեսցուք, եւ ապա ի հեթանոսս առաքէ: Բայց եթէ զլինելոցս իբր զեղեալ ճառէ, մի՛ ինչ սքանչանար, զի այս նորա սովորութիւն էր, զի* «յորժամ լինիցի,- *ասէր,-* հաւատասցիք, եթէ ես եմ» (Յովհ. Մատթ. ԻԸ. 19)*: Իսկ* «**ծառայս**» *դարձեալ զառաքեալսն ասէ, որք հրեշտակք կարգեցան ի կոչումն հեթանոսաց.* «Երթայք աշակերտեցէք զամենայն հեթանոսս» (հմմտ. Մատթ. ԻԸ. 19), *եւ Պաւղոս ասէր հրէիցն, թէ՝* «Նախ ձե՛զ պարտ է պատմել զբանն Աստուծոյ, բայց զի անարժան զձեզ արարէք, երթամք ի հեթանոսս» (հմմտ. Գործք ԺԳ. 46)*:*

«**Հարսանիքս պատրաստ են**». *կազմ է առագաստս ընդունել զեկեալսն, եւ հրէայքն մարգարէիւք հրաւիրեալք՝ կամաւ անար-*

[1] Հրեա պատմիչ Հովսեպոս Փլավիոսն այս դեպքերը նկարագրում է «Հրեական պատերազմ» երկում. տե՛ս ծնթ. կազմողի, էջ 473:

ժանք եղեն երկնաւոր խնջոյիցս: «**Երթայք,- ասէ,- ի յանցս ճանապարհաց**». *կամ զանարգս եւ զարհամարհեալս, որք ի վերայ ճանապարհին նստին, զխեղս եւ զկոյրք, որպէս Ղուկաս ասէ* (Ղուկ. ԺԴ. 21), *որք են հեթանոսք խեղք հոգւով եւ կոյրք ի գիտութենէ տեսլեան նոցա կռապաշտութեամբ, կամ որք անց են եւ ճանապարհ՝ կոխանք լեալք դիւաց ճիւաղաց, կամ որք յանցաւորք եղեն ի շաւիղս ճանապարհի աւրինացն Աստուծոյ:* «**Եւ զորս միանգամ գտանիցէք, կոչեցէք ի հարսանիս**». *զի հասարակաց եղեւ շնորհ մարդասիրութեանն Քրիստոսի՝ հրէից եւ հեթանոսաց եւ բարբարոսաց, որով կարի իմն կսկծեցուցանէր զհրէայսն, զի քան ընդ քաղաքին կործանումն՝ ընդ մուտն հեթանոսաց մորմոքէին, իսկ* «**կոչելն**» *զհաւատովն ձգելն ի նա նշանակէ:*

Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս՝ եւ ժողովեցին զամենեսեան զոր եւ գտին՝ զչարս եւ զբարիս, եւ լցան հարսանիքն բազմականաւք (ԻԲ. 10):

Զսփռել աշակերտացն ասէ, որք ճանապարհորդեցին ընդ ոլորտս տիեզերաց եւ ժողովեցին ի փարախս հաւատոյ զբնաւ ազգս մարդկան, զորս գտին, այսինքն՝ որք հաւատացին յանուն նորա եւ ի կորստական գործոցն ի գիւտն ժամանեցին: Իսկ զի՞նչ այն, թէ՝ «**զչարս եւ զբարիս**»: *Զարք, որ կարի կռամոլքն էին եւ կախարդասարքն եւ այլ եւս օճրագործքն, որպէս զի զչարութիւնն մոռասցին եւ հանդերձ հարսանեաց զգեցցին, եւ կերակուրս աստուածայինս ունիցին: Իսկ բարի, որք մեղմագոյնք էին ի չարիս կամ որք բնութեամբ զաւրինացն գործէին:* «*Եւ լցան հարսանիքն բազմականաւք*». *Ղուկաս «տունն» ասէ* (Ղուկ. ԺԴ. 24), *որ զաշխարհս նշանակէ լցեալ հաւատացելովք՝ ըստ այնմ.* «Քարոզեսցի Աւետարանս ընդ ամենայն երկիր» (հմմտ. Մատթ. ԻԴ. 14). *կամ թէ զայն, թէ՝* «Ի տան Հաւր իմոյ աթեւանք բազումք են» (Յովհ. ԻԴ. 14)*: Իսկ Մատթէոս, զի զհարսանիսն ասէ լնուլ, զի հարսանիք ուսաք զԲանին խառնումն առ մարմնոյն միութիւն, որ եղեւ գլուխ եկեղեցւոյ, եւ եկեղեցի սուրբ յօդմամբ հաւատոյ միացաւ ի գլուխն իւր, որով լրացաւ մարմին նորա բազում անդամաւք, յորմէ եւ ի գլխոյ անտի աճէ զաճումն իւր սուրբ՝ լցեալ շնորհաւք նորա: Այլեւ զտեղի անկելոյն լցին զհարսնարանն վերին բազմականքն ի դեղանն Հաւր, որպէս ասաց:*

Եւ մտեալ թագաւորն հայել զրազմականաւքն՝ եթես անդ այր մի, որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց (ԻԲ. 11):

Թէպէտ զայս վասն առակին յաւդացուցանէ, սակայն հաւատամք ճշմարտապէս ընդ մեզ լինել՝ ըստ իւր իսկ ասիցն, թէ՝ «Ընդ ձեզ եմ զամենայն աւուրս կենաց» (հմմտ. Մատթ. ԻԸ. 20), *եւ թէ՝* «Ուր երկու եւ երեք ժողովեալ են յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա» (Մատթ. ԺԸ. 20)*: Արդ, նախ քան զուրախութեանն վայելս՝ մտանէ դիտել՝ ո՛վ արժանաւոր իցէ ուրախութեանն եւ ո՛վ՝ ոչ:* **«Եթես անդ այր մի,- ասէ,- որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց»:** *Զայս կամ [վասն] հերձուածողացն ասէ, որք թէպէտ եկին ի հաւատս, սակայն չար աղանդոցն որոմամբ ներկեցին զանձինս, վասն զի զհանդերձ հարսանեաց փեսային, այսինքն՝ զմարմին Բանին, զոր զինուորքն ոչ պատառեցին, սոքա պատառեալ յանձնէ ի բաց ձգեցին պէսպէս հերձուածովք, զի ոմն երկու որդիս ասաց, եւ ոմն՝ ի յերկնից բերեալ զմարմինն, եւ այլք ի Մարիամայ զսկիզբն մուծին, եւ կէսք չփոթումն բնութեանցն տուին, եւ այսպէս մերկք եւ խայտառակք մնացին, եւ զի թէպէտ հակառակք աղանդաւք վարեցան, բայց յամբարշտութիւնն հաւասարք գտան, վասն այսորիկ իբրեւ զմի այր ասաց: Կամ վասն գործոց ասէ զայս, զի բազումք հաւատացին, բայց վարս անարժանս հաւատոյն ցուցին, քանզի այնպիսեացն եւ հաւատն իսկ առանց գործոց մեռեալ է: Արդ, զի մի՛ ի հաւատս միայն ապաստան լիցին, զիրս դատաստանին ի մէջ բերէ, որ վասն չար գործոցն լինելոց է, զի ո՛չ ասաց, թէ չունէր հանդերձ, այլ թէ՝ հարսանեա՛ց ոչ ունէր:*

Քանզի հանդերձ երկու գիտեմք հոգւոյ. մի՝ զառաքինութեանն ծածկոյթ, որ պանծալի զգեցաւղն ցուցանէ, որպէս ինքն զգեցաւ Բանն հանդերձ մարմնովն, զարդարութիւն ասեմ եւ զայլ առաքինութիւնն, եւ միւս՝ զչարութեանն թաւռոպ (տրոփ՞), որ նախատելի ցուցանէ, որպէս զՅուդաս, որ փոխանակ աւրհնութեանն հանդերձի, զոր մաքրութիւնն շնորհէ, զանէծս զգեցաւ իբրեւ զհանդերձ, զոր չարութիւնքն ընձեռեցին եւ տարագիր ի հարսանեաց փեսային արարին եւ ի բազմականացն աթոռակցութենէ մերժեցին: Իսկ թէ ոք ասիցէ՝ է՞ր այսպիսի ճշդիւ զհանդերձս պահանջէ, ասասցուք, թէ կոչել եւ սրբել, եւ այն՝ զոչ արժանաւորս, ըստ շնորհացն է, եւ շնորհ միանգամ է, իսկ սուրբ եւ մաքուր պահել զհանդերձս՝ այն կոչնականացն է եւ երախտեացն եւ երախտիս հատուցանողացն, քանզի ոչ է պարտ այնչափ չարիս ցուցանել յետ այնպիսի պատուոյ: Զի որպէս նոքա, ոչ գոլովն թշնամանեցին, նոյնպէս եւ դու, յորժամ աղտեղի հանդերձիւք եւ անսրբական վարուք աստի անդր երթիցես, մանաւանդ զի նա ոչ գիտէր զաղտեղի պատմուճանն անարժանս գոլ հարսանեաց, իսկ դու ուսար եւ վարդապետեցար:

Բայց են ոմանք, որ **«հանդերձ հարսանեաց»** *զմկրտութիւնն ասեն՝ ըստ առաքելոյ, թէ՝* «Որք ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք» (Գաղ. Գ. 27)*: Արդ, ասէ՝ թէպէտ բազում ազգք ի պէսպէս պատճառս ճանաչեցին զԱստուած, բայց որք զզգեստ անապականութեան կնքոյն եւ զծածկոյթ ամաւթոյ մերկութեանն ոչ առին, ո՛չ են ժառանգելոց զարքայութիւնն Աստուծոյ՝ ըստ Տեառն, թէպէտ եւ բազում գործս բարութեան յանձինս ցուցանեն, զի այնպիսիք կուրացեալք անձամբ՝ ո՛չ ի փառս Աստուծոյ, այլ ի փառս անձին առնիցեն զայն, ի դէպ ելցէ նոցա բանն, թէ՝* «Այն իսկ են վարձք նոցա» (Մատթ. Զ. 2)*:*

Եւ ասէ ցնա. «Ընկե՛ր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց». եւ նա պապանձեցաւ (ԻԲ. 12):

Այսինքն՝ հակառակ կրաւնից եւ աւրինաց իմոց՝ զիա՞րդ իշխեցեր մտանել. ո՛չ զչարութիւն եւ զամբարշտութիւնն մերկացեալ, այլ տակաւին զգեցեալ ունիս, այսինքն՝ նենգութեամբ եւ խորամակութեամբ եւ անաստուածութեամբ մտեր, ոչինչ զգենլով ի պատուիրանացն, որ զառաքինութիւնն բազմատեսակս անկանէ, զի թէ անլուայ ոտիւք եւ առանց լոգարանաց ոչ մտանէին ի բակս մեհենիցն, քանի՛ աւելի ի տէրունեանն ընթրիս: Լուիցեն զայս, որք ի խորհրդական սեղանն մատչին աղտեղի հանդերձիւք, քանզի նոյն բան ահաւոր է անարժանիցն, վասն որոյ պարտ է ակնածել ի մարդասիրէն, որ կոչեացն, եւ այն՝ ի «ճանապարհացն անցից», եւ զպատմուճանս հոգւոյն լուանալ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ, եւ զարդարել զանձինս առաքինութեամբ, եւ ապա՛ ի սեղանն մատչել, ուր հրեշտակք են բազմեալ պայծառ հանդերձիւք, որպէս ի խաչին եւ ի գերեզման փրկչին յայտնապէս տեսին, քանզի ճշմարտապէս խաչին է խորհուրդ եւ գերեզմանին նշանակ:

«Եւ նա պապանձեցաւ»,- *ասէ. որպէս Զաքարիաս, ոչ հաւատացեալ բանից հրեշտակին, եղեւ համր եւ կայր պապանձեալ* (տե՛ս Ղուկ. Ա. 20)*, նոյնպէս եւ այրս այս, անհաւատ եղեալ պատուրանաց փրկչին,*

եւ անմաքուր վարուք սպասաւորէ երկնաւոր հացին, պապանձի, զի ոչ ունի պատասխանի: Իսկ նորա այն՝ նշանի վասն, իսկ սորա՝ յաղագս պատժոց, վասն որոյ նորայն լուծաւ, իսկ սորայն ե՛ւս պնդեցաւ, քանզի ո՛չ գոյ այլ ինչ, որ կարկեցուցանէ զբերան եւ կապէ զձեռս եւ զոտս, որպէս մեղացն շղթայք՝ ըստ այնմ՝ «Ի գործս ձեռաց իւրեանց կապեսցին մեղաւորք» (Սաղմ. Թ. 17), *որպէս ցուցանէ:*

Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորսն. «Կապեցէ՛ք զդորա զոտս եւ զձեռս եւ հանէք զդա ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց (ԻԲ. 13):

Տեսանե՞ս, զի ո՛չ յառաջագոյն տանջէ, մինչեւ ինքն, որ մեղաւն, զվճիռն իւր հատանիցէ: Քանզի յորժամ պապանձեցաւ, ապա՛ «**ասէ թագաւորն ցսպասաւորսն**»: *Յորժամ զբարիսն շնորհէր, ինքն առանց միջնորդի զխրախութիւնն կազմեաց եւ այժմ ի տանջանս սպասաւորաւք վարի՝ հրեշտակաւք, որպէս զի իմասցուք, թէ ի կամացն կեանք են՝ ըստ մարգարէին* (տե՛ս Սաղմ. ԻԹ. 6), *իսկ ի տանջելն՝ ի մէ՛նջ բռնադատի:* «**Կապեցէ՛ք զդորա զոտս եւ զձեռս**». «**ոտք**»՝ *զգնացս, իսկ* «**ձեռս**»՝ *զազդողական զաւրութիւնն, զի յորժամ տանջէ Աստուած, այլ ո՛չ է ժամանակ գործելոյ կամ խորհելոյ աստ, նմանապէս եւ անդ՝ ըստ այնմ.* «Գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ» (Ղուկ. ԺԶ. 3)*:*

Եւ ա՛յլ ազգ. կապել ձեռացն եւ ոտիցն՝ զշնորհաց առնումն նշանակէ եւ զպատկերին պարգեւն, զոր ետ առաջին եւ վերջին փչմամբն՝ ըստ այնմ, թէ՝ «Կտրեցէք զդա ի մէջ» (հմմտ. Մատթ. ԻԴ. 51), *զի որպէս ի մէջ կտրեալն անշարժ է, այսպէս եւ կապեալն, զի շնորհաւք նորա եմք, զինչ եւ իցեմք, զոր ի բաց առեալ զայն՝ զմարդն հանդերձ չարութեամբն խաւարին մատնէ, որպէս ասէ.* «**Եւ հանէք զդա ի խաւարն արտաքին, ուր լալ աչացն է եւ կրճել ատամանց**»: *Յաղագս սոցա ասացեալ է յառաջագոյն, այլ աստ այնչափ, զի որպէս յաւուրս Նոյի ոչ միայն երարձ զհոգին ի մարդկանէ վասն լինելոյ նոցա մարմին* (տե՛ս Ծննդ. Զ. 3), *այլեւ ջրով հեղեղեաց. այսպէս եւ յերկրորդն գալուստ ոչ միայն զիւրն առնու շնորհս, այլեւ ի խաւարն առաքէ եւ անբուժելի ցաւոցն՝ լալ աչացն եւ կրճել ատամանցն մատնէ: Են ոմանք, որ* «**խաւար**» *եւ* «**ծուխ**» *եւ* «**ցուրտ**» *զբանսարկուն ասեն եւ զդեւսն, վասն զի խաւար է բանսարկուն, որ հալածեցաւ ի լուսոյն եւ ծուխ եղեւ կուրացուցիչ՝ մտաց մերոց, այս*

է աչացն լալ, եւ ցուրտ՝ կրճել ատամանցն, այսինքն՝ պոռնկութեամբ եւ պէսպէս հայհոյութեամբ ցրտացուցին զմարմինս մեր. նոցա տանջանացն կցորդս առնէ, զորոց զկամսն կատարեցին:

Զի բազումք են կոչեցեալք եւ սակաւք ընտրեալք (ԻԲ. 14):

Հանգոյն (ինձ թուի) ուռկանին առակի ասացեալս, զի որպէս անդ հասարակ ի ծովէն ուռկանեցին եւ յետոյ հանեալ ի ցամաք՝ զբարի բարին յամանս ժողովեցին եւ զխոտանն ի բաց հանին, այսպէս եւ աստ: Զի թէպէտ ամենեքեան կոչեցան, բայց որք ի վերայ բարի կոչմանն հիման հաւատոյն զբարի գործս չինեցին ոսկի ընտիր եւ ակունս պատուականս (տե՛ս Ա. Կոր. Գ. 12), *յըշտեմարանս երկնից հաւաքեցան եւ առագաստի հարսանեացն արժանաւորք գտան, սակաւքն, որք նեղ ճանապարհաւն ընթացան. իսկ յոլովքն, որք ի լայնն փութացան, արտաքս ի բաց ընկեցան: Յորմէ փրկեսցէ զհաւատացեալսն անուան իւրոյ Քրիստոսն մեր եւ Աստուած եւ արժանաւորս արասցէ երկնաւոր առագաստին՝ մաքուր պատմուճանաւ մտանել ի հոգեւոր հարսանիսն ընդ բազմելոց անդ արդար հոգւոցն: Որում փառք եւ պատիւ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Նման է թագաւորութիւնն երկնից հարսանեաց (հմմտ. ԻԲ. 2):

Այս երեքտասան առակն է արքայութեան: Դէմք առակիս. նախ՝ առ հրէայս է, եւ ապա՝ առ հեթանոսս, եւ առ արդարս, եւ առ մեղաւորս: Եւ Ը. (8) իրս ուսուցանէ.

Ա. Նախ՝ վասն հարսանեաց խաւսի:

Բ. Երկրորդ՝ վասն բազում կոչողաց:

Գ. Երրորդ՝ կոչեցելոց՝ հրէից եւ հեթանոսաց:

Դ. Չորրորդ՝ որք հրաժարեցան յուլութեամբ:

Ե. Հինգերորդ՝ որք անարժան մտին:

Զ. Վեցերորդ՝ պ[ա]տիժ մարմնական:

Է. Եւթներորդ՝ դատաստան քննութեան:

Ը. Ութերորդ՝ տանջանք յաւիտենից:

Եւ տե՛ս զառաւել խնամս, զոր ունէր հրէիցն նախքան զխաչն, եւ յետ խաչին, եւ յայտ է յերից.

եւ անմաքուր վարուք սպասաւորէ երկնաւոր հացին, պապանձի, զի ոչ ունի պատասխանի: Իսկ նորա այն՝ նշանի վասն, իսկ սորա՝ յաղագս պատժոց, վասն որոյ նորայն լուծաւ, իսկ սորայն ե՛ւս պնդեցաւ, քանզի ո՛չ գոյ այլ ինչ, որ կարկեցուցանէ զբերան եւ կապէ զձեռս եւ զոտս, որպէս մեղացն շղթայք՝ ըստ այնմ՝ «Ի գործս ձեռաց իւրեանց կապեսցին մեղաւորք» (Սաղմ. Թ. 17), *որպէս ցուցանէ:*

Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորսն. «Կապեցէ՛ք զդորա զոտս եւ զձեռս եւ հանէք զդա ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց (ԻԲ. 13):

Տեսանե՞ս, զի ո՛չ յառաջագոյն տանջէ, մինչեւ ինքն, որ մեղաւն, զվճիռն իւր հատանիցէ: Քանզի յորժամ պապանձեցաւ, ապա՛ «ասէ թագաւորն ցսպասաւորսն»: *Յորժամ զբարիսն չնորհէր, ինքն առանց միջնորդի զխրախութիւնն կազմեաց եւ այժմ ի տանջանս սպասաւորաւք վարի՝ հրեշտակաւք, որպէս զի իմասցուք, թէ ի կամացն կեանք են՝ ըստ մարգարէին* (տե՛ս Սաղմ. ԻԹ. 6), *իսկ ի տանջելն՝ ի մէ՛նջ բռնադատի:* «**Կապեցէ՛ք զդորա զոտս եւ զձեռս**». «**ոտք**»՝ *զգնացս, իսկ* «**ձեռս**»՝ *զազդողական զաւրութիւնն, զի յորժամ տանջէ Աստուած, այլ ո՛չ է ժամանակ գործելոյ կամ խորհելոյ աստ, նմանապէս եւ անդ՝ ըստ այնմ.* «Գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ» (Ղուկ. ԺԶ. 3)*:*

Եւ ա՛յլ ազգ. կապել ձեռացն եւ ոտիցն՝ զշնորհաց առնումն նշանակէ եւ զպատկերին պարգեւն, զոր ետ առաջին եւ վերջին փչմամբն՝ ըստ այնմ, թէ՝ «Կտրեցէք զդա ի մէջ» (հմմտ. Մատթ. ԻԴ. 51), *զի որպէս ի մէջ կտրեալն անշարժ է, այսպէս եւ կապեալն, զի չնորհաւք նորա եմք, զինչ եւ իցեմք, զոր ի բաց առեալ զայն՝ զմարդն հանդերձ չարութեամբն խաւարին մատնէ, որպէս ասէ.* «**Եւ հանէք զդա ի խաւարն արտաքին, ուր լալ աչացն է եւ կրճել ատամանց**»: *Յաղագս սոցա ասացեալ է յառաջագոյն, այլ աստ այնչափ, զի որպէս յաւուրս Նոյի ոչ միայն երարձ զհոգին ի մարդկանէ վասն լինելոյ նոցա մարմին* (տե՛ս Ծննդ. Զ. 3), *այլեւ ջրով հեղեղեաց. այսպէս եւ յերկրորդն գալուստ ոչ միայն զիւրն առնու չնորհս, այլեւ ի խաւարն առաքէ եւ անբուժելի ցաւոցն՝ լալ աչացն եւ կրճել ատամանցն մատնէ: Են ոմանք, որ* «**խաւար**» *եւ* «**ծուխ**» *եւ* «**ցուրտ**» *զբանսարկուն ասեն եւ զդեւսն, վասն զի խաւար է բանսարկուն, որ հալածեցաւ ի լուսոյն եւ ծուխ եղեւ կուրացուցիչ՝ մտաց մերոց, այս*

է աչացն լալ, եւ ցուրտ՝ կրճել ատամանցն, այսինքն՝ պոռնկութեամբ եւ պէսպէս հայհոյութեամբ ցրտացուցին զմարմինս մեր. նոցա տանջանացն կցորդս առնէ, զորոց զկամսն կատարեցին:

Զի բազումք են կոչեցեալք եւ սակաւք ընտրեալք (ԻԲ. 14):

Հանգոյն (ինձ թուի) ուռկանին առակի ասացեալս, զի որպէս անդ հասարակ ի ծովէն ուռկանեցին եւ յետոյ հանեալ ի ցամաք՝ զբարի բարին յամանս ժողովեցին եւ զխոտանն ի բաց հանին, այսպէս եւ աստ: Զի թէպէտ ամենեքեան կոչեցան, բայց որք ի վերայ բարի կոչմանն հիման հաւատոյն զբարի գործս չինեցին ոսկի ընտիր եւ ակունս պատուականս (տե՛ս Ա. Կոր. Գ. 12), *յըշտեմարանս երկնից հաւաքեցան եւ առագաստի հարսանեացն արժանաւորք գտան, սակաւքն, որք նեղ ճանապարհաւն ընթացան. իսկ յոլովքն, որք ի լայնն փութացան, արտաքս ի բաց ընկեցան: Յորմէ փրկեսցէ զհաւատացեալսն անուան իւրոյ Քրիստոսն մեր եւ Աստուած եւ արժանաւորս արասցէ երկնաւոր առագաստին՝ մաքուր պատմուճանաւ մտանել ի հոգեւոր հարսանիսն ընդ բազմելոց անդ արդար հոգւոցն: Որում փառք եւ պատիւ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Նման է թագաւորութիւնն երկնից հարսանեաց (հմմտ. ԻԲ. 2):

Այս երեքտասան առակն է արքայութեան: Դէմք առակիս. նախ՝ առ հրէայս է, եւ ապա՝ առ հեթանոսս, եւ առ արդարս, եւ առ մեղաւորս: Եւ Ը. (8) իրս ուսուցանէ.

Ա. Նախ՝ վասն հարսանեաց խաւսի:

Բ. Երկրորդ՝ վասն բազում կոչողաց:

Գ. Երրորդ՝ կոչեցելոց՝ հրէից եւ հեթանոսաց:

Դ. Չորրորդ՝ որք հրաժարեցան յուլութեամբ:

Ե. Հինգերորդ՝ որք անարժան մտին:

Զ. Վեցերորդ՝ պ[ա]տիժ մարմնական:

Է. Եւթներորդ՝ դատաստան քննութեան:

Ը. Ութերորդ՝ տանջանք յաւիտենից:

Եւ տե՛ս զառաւել խնամս, զոր ունէր հրէիցն նախքան զխաչն, եւ յետ խաչին, եւ յայտ է յերից.

Ա. Նախ՝ որ ետ զառաջին այգին:

Բ. Երկրորդ՝ ներեաց զյանցանս խաչին:

Գ. Երրորդ՝ կոչեաց ի հարսանիս, եւ նոքա ամենայնի ապերախտ եղեն եւ հրաժարեցան.

Ա. Նախ՝ ի հարսանեաց:

Բ. Երկրորդ՝ ի թագաւորութենէն:

Գ. Երրորդ՝ յՈրդոյ թագաւորին:

Դ. Չորրորդ՝ ի հարսնութենէն:

*Հարց. Վասն է՞ր «**հարսանիք**» կոչէ* (ԻԲ. 2, 3 եւ այլք):

Պատասխանի. Երբեմն «գոգ» (Ղուկ. ԺԶ. 22-23) *կոչէ վասն հանդստեան, երբեմն՝ «դրախտ»* (Ղուկ. ԻԳ. 43) *վասն վայելչութեան, երբեմն՝ արքայութիւն վասն պատուականութեան* (տե՛ս Մատթ. Ե. 3) *եւ այլին:*

*Եւ ասա «**հարսանիք**» կոչէ վասն չորից.*

Ա. Նախ՝ վասն առաւել սիրոյ:

Բ. Երկրորդ՝ վասն պայծառութեան:

Գ. Երրորդ՝ վասն ուրախութեան:

Դ. Չորրորդ՝ վասն միաւորութեան, վասն որոյ «փեսայ» կոչէ զնա Յովաննէս (Յովհ. Գ. 29):

Հարց. Որպէ՞ս է միաւորութիւն անախտ հարսանեաց:

Պատասխանի. Որպէս զանազանի լոյս ի խաւարէ եւ անուշ հոտ ի գարշութենէ:

Եւ յայտ է ի չորից.

Ա. Նախ՝ զի հոգեւոր է:

Բ. Երկրորդ՝ անապական:

Գ. Երրորդ՝ միշտ:

Դ. Չորրորդ՝ որքան յերկարի, առաւելու սէրն, իսկ այս ամենայնին ընդդէմ:

Այլեւ գերազանց է քան զհրեշտակաց միաւորութիւնն երիւք.

Ա. Նախ՝ անդ, որպէս տէր ընդ ծառայ, եւ աստ՝ որպէս գլուխ յանդամս միաւորի:

Բ. Երկրորդ՝ անդ այլ ընդ այլոյ, եւ աստ՝ ընդ բնութենակից միաւորի:

Գ. Երրորդ՝ զի Քրիստոսիւ ընդ Հաւր միաւորի եւ լինի Աստուածս ընդ Աստուած միացեալ, որպէս. «Դու, Հայր, ի յիս, եւ նոքա ի մեզ իցեն» (Յովհ. ԺԷ. 21) *եւ այլն:*

Եւ ասա չորս ինչ հարցանելի է.

Ա. Նախ՝ թէ որքա՞ն է հարսանիք Քրիստոսի:

Բ. Երկրորդ՝ թէ ո՞ւր լինի:

Գ. Երրորդ՝ թէ ե՞րբ:

Դ. Չորրորդ՝ վասն է՞ր Որդի միայն է փեսայ, եւ ոչ՝ Հայր կամ Հոգի:

Ա. Վասն առաջնոյն գիտելի է, զի Գ. (3) կերպիւ ասի «հարսանիք».

ա. Նախ՝ այն, որ Բանն Աստուած միացաւ ի մարմնի:

բ. Երկրորդ՝ որ միացաւ հոգով ընդ եկեղեցի:

գ. Երրորդ՝ յորժամ յարուցանէ մարմնով:

Բ. Վասն երկրորդին. թէ ո՞ւր, այսինքն՝ առաջինն՝ յարգանդի կուսին, միջինն՝ ի ստորինս երուսաղէմ, վերջինն՝ ի վերինն երուսաղէմ:

Գ. Վասն երրորդին. թէ՝ ե՞րբ. այսինքն՝ ի կէտ յղութեանն, եւ ի ժամ խաչին, եւ ի միւսանգամ գալուստն:

Դ. Եւ չորրորդն. թէ վասն է՞ր Որդի միայն է փեսայ:

Պատասխանի. Ասեմք վասն չորից.

ա. Նախ՝ զի Որդի միայն փեսայացաւ յարգանդի:

բ. Երկրորդ՝ Որդի միայն պսակեցաւ խաչիւ, ըստ Սողոմոնի. «Տեսէք զպսակն արքայի» (Երգ երգոց, Գ. 11) *եւ այլն:*

գ. Երրորդ՝ Որդի բխեաց զկողահոս աղբերն ուստի շինեցաւ եկեղեցի: Զրովն սրբի, զարիւնն ըմպէ:

դ. Չորրորդ՝ Որդի էջ ի դժոխս վասն հարսանեաց հոգւոց, եւ յորժամ յարեաւ նոքաւք, յայնժամ եղեւ հարսանիք:

Ի յայս խորհուրդս յետ յարութեանն Գ. (3) աւր կաթողիկէք ոչ ընթեռնում եւ Խ. (40) աւր ընդ մեզ է փեսայն. ոչ պահեմք սուգ:

Դարձեալ հարցումն, թէ՝ որպէ՞ս հարսնանայ եկեղեցի:

Ասեմք, թէ մկրտութիւն եւ դրոշմ նշան է հարսին եւ մահն կոչումն է ի հարսանիս, եւ յարութիւնն միաւորի ընդ փեսային:

Դարձեալ՝ այժմ հաւատով եմք հարսնացեալ եւ յետ մահու՝ յուսով եւ յետ յարութեան՝ սիրով միացեալ, որպէս ցուցաւ:

Իսկ թէ վասն է՞ր Քրիստոս «փեսայ» կոչի եւ եկեղեցի սուրբ՝ «հարսն», ասացեալ է ի Մեկնութիւնս Երգոյ երգոցն[1] *գտցես եւ*

[1] Ձեռ. Հմր 1200. «Հարց. Վասն է՞ր փեսայ կոչի Քրիստոս: Պատասխանի. Վասն ժ. (10) պատճառի: Նախ՝ զի գերազանց է եւ ջերմ սէրն ընդ եկեղեցի, որ փեսայի առ

զմեղաւորս յիշեսցես առ Տէր:

հարսն: Երկրորդ՝ վասն առաւել միաւորութեանն, որ ասացաք: Երրորդ՝ միայն փեսայն է տէր հարսինն. եւ Քրիստոս միայն է Տէր եւ գլուխ եկեղեցւոյ, զի ունի զբնութիւնս մեր: Չորրորդ՝ միայն փեսայն է թագ եդեալ ի մէջ բազմութեան. եւ Քրիստոս միայն է թագաւոր անվախճան: Հինգերորդ՝ թագ դնէ եւ հարսինն հաւասար իւր. եւ Բանն Աստուած, ընդ բնութիւնս միանալով, եղեւ առեալն մարմինն...: Վեցերորդ՝ փեսայն ցանկայ միշտ զկատարումն կամացն, եւ Քրիստոս՝ զփրկութիւն մարդկան: Եւթներորդ՝ վասն որդեծնութեան լինի. եւ ծնաւ Քրիստոս զհաւատացեալս աւազանաւն: Ութերորդ՝ սերմանող է փեսայն. եւ Քրիստոս զբոլոր բարութիւնս սերմանեաց ի մեզ: Իններորդ՝ քաղցր է ծայն հարսինն փեսային, եւ լսէ նմա. եւ քաղցր է երգն եկեղեցւոյ Քրիստոսի, եւ տայ զխնդրելին: Տասներորդ՝ փեսայն՝ թողութիւն զհայրն եւ զմայր եւ երթայ զհետ հարսինն Ադամայ. եւ Քրիստոս եթող անբաժանաբար զՀայրն ի յերկինս եւ զմայրն տրտմագին յեկեղեցի եւ եկն մարմնով ի մահ եւ հոգւով ի դժոխս եւ ազատեաց զհոգին մարդկան: Յաղագս այսր Փեսայ կոչի Քրիստոս», էջ 379ա:

«Հարց. Վասն է՞ր կոչի հարսն եկեղեցի սուրբ, որ ասէր Յովհաննէս. «Որ ունի հարսն, նա է փեսայ» (Յովհ. Գ. 29): Պատասխանի. Եւ այս վասն Ժ. (10) պատճառի: Նախ՝ որ փեսայն խաւսի զհարսն եւ երթայ առ նա. նոյնպէս Բանն Աստուած նախ սիրեաց զեկեղեցի եւ եկն յերկիր, ըստ այնմ՝ «Ոչ զի մեք սիրեցաք զնա, այլ նա նախ սիրեաց զմեզ» (Յովհ. Ա., Դ. 10), ասէ: Երկրորդ՝ զի զարդարեալ է հարսն զարդուք փեսային եւ եկեղեցի սուրբ զարդարեալ է աստուածային եւ մարդկային առաքինութեամբն եւ ի նմանէ է զգեցեալ՝ ըստ այնմ. «Ցնծասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցաւ հարդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան, որ հարսն զարդու զարդարեաց զիս» (Ես. ԿԱ. 10): Երրորդ՝ հարսինն նշան դնի եւ ապա՝ պսակ. նոյնպէս եւ եկեղեցւոյ. խնամախաւսք եկին մարգարէքն եւ առաքեալք, եւ նշանեցաւ հաւատովն եւ սրբեցաւ աւազանաւն աստ եւ կոչի յուսովն յետ մահու եւ պսակի սիրովն ի հանդերձեալն ընդ իմաստուն կուսանացն մտեալն յառագաստն: Չորրորդ՝ թագուհի կոչի հարսն, որ յար անուամբ ի թագաւորէն թագուհի եւ փեսայուհի: Այսպէս եւ եկեղեցի սուրբ ի Քրիստոսէ քրիստոնեա եւ ի փրկչէն փրկեալ կոչի: Հինգերորդ՝ մի է հարսն ի բազմութենց եւ մի է ընդհանրական եկեղեցի սուրբ, որ ընդ ոլորտս տիեզերաց յառաջին մարդոյն մինչեւ վերջինն, որք հոգւով եւ հաւատով հարսնացան Քրիստոսի: Վեցերորդ՝ մի՛ է կամք եւ սիրտ եւ մարմին հարսինն ընդ փեսային եւ եկեղեցի սուրբ մի է կամաւք եւ հոգւով եւ մարմնով ընդ Քրիստոսի, այսու, զի ունի զմարմինն մեր եւ զհոգի եւ մի եմք ընդ նմա մեր մարմնով, նաեւ հոգւով, զի «որ միանայ ի Տէր, մի հոգի է»,- ասէ առաքեալ: Նաեւ ըստ աստուածութեանն պատկեր եմք նմա: Եւ յայտ է կատարեալ միաւորութիւնն ի ճաշակումն հաղորդութեան մարմնով եւ արեամբ, միանամք ի մարմին եւ ի հոգին Քրիստոսի. եւ զի Աստուծոյ է մարմին եւ արիւն, միաւորիմք ընդ աստուածութիւն նորա: Այսպէս կատարեալ միաւորութիւնն եկեղեցւոյ, որ ինքն ասաց. «Հա՛յր, դու յիս, եւ ես ի քեզ» (Յովհ. ԺԷ. 21): Եւ նոքա ի մեզ իցեն, զի եղիցին կատարեալք ի մի: Եւթներորդ՝ կոյս է հարսն եւ կոյսն զանապական եւ զսուրբ լինելն եկեղեցւոյ նշանակ է: Ութերորդ՝ հարսն ցնծութեան է կոչումն, եւ դարձաւ սուգն եկեղեցւոյ յուրախութիւն Քրիստոսի, զի բարձաւ արտաւսր յամենայն աչաց: Իններորդ՝ կրաւղ է սերման. եւ կրէ սուրբ եկեղեցի զամենայն սերմանս բարութեան ի Քրիստոսէ, որ ասացաւ: Տասներորդ՝ աճեցուցանէ հարսն. եւ եկեղեցի սուրբ միշտ աճէ ծննդեամբ, այլեւ աճէ արդեամբ զճ.(100)աւորն, զԿ.(60)աւորն եւ զԼ.(30)աւորն պտղաբերեալ: Յաղագս այսորիկ հարսն կոչի եկեղեցի սուրբ, որ ի գիրս Երգոյ երգոցն», էջ 379բ:

ԼՈՒԾՔԱՆՔ

Հարց. Զի՞նչ է լուծք եղանց եւ ագարակն եւ այլ (տե՛ս Ղուկ. ԺԴ. 16-24):

Պատասխանի. Հինգ լուծք եղանցն՝ Ե. (5) զգայութիւնս մեր մարմնոյ, զի կրկին է աչք եւ ականջք եւ այլն: Իսկ «ագարակն»՝ սէր աշխարհիս, ընչից, եւ հայրենեաց, եւ կինն՝ փափկութիւն մարմնոյ: Զայսցանէ ասէ Յոհաննէս կաթողիկէքն. «Ցանկութիւն աչաց եւ ցանկութիւն մարմնոյ եւ ամբարտաւանութիւն ասպի կենաց» (Ա. Հովհ. Բ. 16):

Ա. Նախ այս է միտքն՝ թէպէտ կարեւոր պատճառք լիցի, պարտ է զհոգեւոր գործն նախամեծար առնել, քան զմարմնոյն:

Բ. Երկրորդ՝ փոխանակ եղանց, ասէ. «Եղն պարարակք զենեալ են» (ԻԲ. 4) *եւ վասն ագարակին՝ զարքայութիւնն, եւ փոխանակ կնոջն՝ հարսանիք խոստանայ:*

ՎԱՍՆ ԿՈՉՈՂԱՑ

Հարց. Ո՞րք էին կոչողք հրէից:

Պատասխանի. Ա. Նախ՝ մարգարէքն ամենայն:

Բ. Երկրորդ՝ Յովաննէս:

Գ. Երրորդ՝ ինքն Քրիստոս. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք» (հմմտ. Մատթ. ԺԱ. 28), *ասէ:*

Դ. Չորրորդ՝ առաքեալքն, որ յետ յարութեանն: Նոյնպէս եւ զհեթանոսս կոչեցին առ Քրիստոս:

Հարց. Այժմ մեզ ո՞վ է կոչող:

Պատասխանի. Զորեք դիմի է կոչնակք մեր:

Ա. Նախ՝ նոյն ինքն մարգարէից եւ առաքելոց եւ Աւետարանին սուրբ:

Բ. Երկրորդ՝ վարդապետք, քարոզք եւ մեկնիչք:

Գ. Երրորդ՝ հրեշտակք ծածկապէս:

Դ. Չորրորդ՝ ժամահարն, որ կոչէ զմեզ հանապազ ի հարսնարանս սուրբ՝ ի տեղի աղաւթից եւ ի ճաշ:

Զի աստ մտաւք միաւորիմք, եւ յետ մահու՝ հոգով, եւ յետ յարութեան՝ բոլորիւ:

ՎԱՍՆ ՁԵՆՄԱՆՑ

Հարց. Զի՞նչ է «**ճաշն**» *եւ* «**ընթրիսն**» (ԻԲ. 4):

Պատասխանի. Աստ մարմնոյ եւ արեան ճաշակումն ճաշ կոչի, եւ անդ՝ ի հանդերձեալն՝ ընթրիս:

Հարց. Զի՞նչ է «**եզն պարարակ**» (ԻԲ. 4):

Պատասխանի. Մարդկութիւնն՝ Քրիստոսի պարարեալ աստուածութեամբն: Դարձեալ մարմինն, որ կերակրէ եւ արիւնն զմայլէ:

Հարց. Վասն է՞ր բազմաւրինակի ասէ. «**զուարակք իմ եւ պարարակք զենեալ են**» (ԻԲ. 4):

Պատասխանի. Երիւք տեսանի.

Ա. Նախ՝ զի ի բազում տեղիս պատարագի:

Բ. Երկրորդ՝ զի բազում աւուրս բաշխի:

Գ. Երրորդ՝ զի բազում աւգտութիւնն, որպէս մանանայն ըստ ախորժակացն, բազում որակս տայր, այսպէս ըստ կամաց բազում շահս շնորհէ կերողացն զնա:

Բարկացաւ թագաւորն եւ կոտորեաց (հմմտ. ԻԲ. 7):

Ա. Նախ՝ ցուցանէ, թէ բարկանայր վասն չհաւատալոյն ի Քրիստոս:

Բ. Երկրորդ՝ զի ինքն ել ի վրէժխնդիր ի ձեռն Տիտոսի եւ Վէսպիանոսի: Յետ Խ. (40) ամի ելին յԵրուսաղէմ ի տաւնի Զատկին, եւ պաշարեցին եւ Զ. (6) բիւր սովով սատակէր ի քաղաքն, եւ ՃԻ. (120) բիւր՝ սրով, եւ Ծ. (50) բիւր գերի վարեցին եւ զքաղաքն ի հիմանէ կործանեցին, որպէս պատմէ Յովսէպոս:

Հարց. Վասն է՞ր յետ Խ. (40) ամի եւ ոչ անդէն առ խաչիւն:

Պատասխանի. Ա. Նախ՝ զի ցուցցէ զերկայնմտութիւնն իւր:

Բ. Երկրորդ՝ զի աղաւթեաց ի վերայ խաչողացն:

Գ. Երրորդ՝ զի ներեաց Հայր վասն Որդոյն, այլ ոչ վասն առաքելոցն. զՍտեփաննոս քարկոծեցին (տե՛ս Գործք Է. 57-59) *եւ զՅակովբոս գլխատեցին* (տե՛ս Գործք ԺԲ. 1-2) *եւ արկին ձեռս յառաքեալս, վասն որոյ խնդրեաց վրէժս:*

Յանցս ճանապարհաց (ԻԲ. 9)

Զհեթանոսաց ասէ, որք աղքատ եւ անարդ եւ անծանաւթք էին եւ զանազան չարեաց ճանապարհ եղեալ:

Իսկ «**կոչելն**» (հմմտ. ԻԲ. 9). *նախ որ ի հաւատս կոչեցան եւ ապա ի զանազան աստիճանս, զոր բազմելն ցուցանէ:*

Իսկ «**մտեալ թագաւորն**» (հմմտ. ԻԲ. 11)

Զգալն ի դատաստան: Ըստ Դանիէլի՝ «Հինաւուրցն նստաւ» (Դանիէլ Է. 9), *եւ Պաւղոս՝ «մուծցէ զանդրանիկն յաշխարհս»* (Եբր. Ա. 6):

«**Հայելն**» *քննելն է դատաստանաւ:*

Եւ վասն հաւատոց եւ գործոց

Հարց. Վասն է՞ր ըստ հաւատոցն եւ գործս խնդրէ:

Պատասխանի. Վասն Դ. (4) պատճառի.

Ա. Նախ՝ զի հաւատովք զշնորհն առնումք աստ, եւ գործովք՝ զփառքն:

Բ. Երկրորդ՝ հաւատովն կոչիմք եւ սրբիմք, եւ գործովք պահեմք զկոչումն եւ զսրբութիւն:

Գ. Երրորդ՝ գործքն տեսակ եւ կեանք է հաւատոյն, որպէս ասէ Յակոբոս. «Հաւատք առանց գործոց մեռեալ են» (Յակոբ Բ. 26):

Դ. Չորրորդ՝ հաւատքն ի հոգւոյն է մասն, եւ գործքն՝ ի մարմնոյն, զի այս է տեսականն, եւ գործնականն՝ ի մեզ կատարել:

Նոյնպէս եւ շնորհք եւ գործք, զի շնորհաւք կոչիմք, կոչիմք ի հաւատս կամ յաստիճանս, եւ ոչ ըստ արժանեաց եւ շնորհաւքն Աստուծոյ սրբիմք ի մեղաց, այլ գործաւք պահեմք զկոչումն եւ զսրբութիւնն, այլեւ գործաւքն շնորհացն Աստուծոյ երախտահատոյց լինիմք: Ապա թէ ոչ, չար գործաւք թշնամանեմք զշնորհքն եւ զտուողն:

Վասն հանդեանից (ԻԲ. 11)

Վեց իրս հարցանելի է.

Ա. Նախ՝ թէ զի՞նչ է հանդերձ հոգւոյ:

Պատասխանի. Որպէս գործք ձեռաց լինի հանդերձ մարմնոյ, այսպէս ամենայն գործք մեր հանդերձ է հոգւոյն:

Բ. Երկրորդ հարցումն. Վասն է՞ր ասի՝ «**հանդերձ**» (ԻԲ. 12):

Պատասխանի. Վասն չորից.

Ա. Նախ՝ որպէս զգեստն այլ է ի զգեցողէն, նոյնպէս այլ է գործն ի գործաւղէն:

Բ. Երկրորդ՝ փոփոխելի է, նոյնպէս եւ գործք:

Գ. Երրորդ՝ ծածկէ զմարմինն, եւ գործք՝ զհոգին:

Դ. Չորրորդ՝ հանդերձիւ ճանաչի մարդ, եւ գործովն՝ հոգին:

Երրորդ հարցումն. Որքա՞ն է հանդերձ հոգոյ:

Պատասխանի. Երեք, այսինքն՝ բնական, շնորհաց եւ փառաց: Բնական զմարմինս ունիմք ի ծնողաց, զշնորհացն ի յեկեղեցի, զփառացն ի հանդերձեալն: Այս յատուկ ընտրելոցն միայն:

Դարձեալ՝ բնական, պատահական եւ հատուցման, այս հասարակաց՝ չարեաց եւ բարեաց:

Չորրորդ հարցումն. Զի՞նչ է «**հանդերձ հարսանեաց**» (ԻԲ. 12):

Պատասխանի. Մարմնապէս երեք է, այսինքն՝ սպիտակ, եւ նոր, եւ ազգի ազգի գունով: Սուրբ Հոգոյն սպիտակ անմեղութիւնն է, որպէս ասէ Սողոմոն. «Եղիցի յամենայն ժամ հանդերձ քո սպիտակ» (հմմտ. Ժող. Թ. 8):

Եւ զանազան գոյն՝ ազգի ազգի առաքինութիւնք, որպէս պահք, աղաւթք, ողորմութիւն, ճգնութիւն, մարտիրոսութիւն եւ այլն: Եւ նորն, զի նորոգիմք աւր ըստ աւրէ՝ յառաջեալ ի բարին:

Իսկ սեաւն եւ աղտեղի եւ հին ոչ է հանդերձ հարսանեաց, այսինքն՝ անզգջութիւն եւ սովորութիւն եւ յուսահատութիւն ի մեղս:

Հինգերորդ հարցումն. Զի՞նչ է հանդերձ այժմու հարսին:

Պատասխանի. Որպէս հարսին Դ. (4) հանդերձ է մարմնոյ եւ Գ. (3)՝ գլխոյն, այսպէս եւ հարսնացեալ եկեղեցի Գ. (3) առաքինութեամբ ծածկեն զհոգի, որ է հաւատ, յոյս եւ սէր: Եւ Դ. (4) առաքինութեամբ՝ զմարմին, որ է խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն եւ արդարութիւն, եւ այս է հանդերձ շնորհաց ի Քրիստոսէ. «Որք ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք», ասէ (Գաղ. Գ. 27):

Վեցերորդ հարցումն. Զի՞նչ է հանդերձ փառաց ի հանդերձեալն:

Պատասխանի. Եւթն զարդ յարուցելոցն, այսինքն՝ երեք՝ հոգւոյն, որ է դէմ յանդիման՝ տեսութիւնն եւ անմոռացութիւնն եւ անտրտում ուրախութիւնն: Եւ Դ. (4)՝ զարդ մարմնոյ, այսինքն՝ անչարչարութիւնն, պայծառութիւնն, թեթեւութիւն, թափանցութիւն: Սոքա են Է.(7)եկի շնորհք, զոր Ադամ կորոյս Է.(7)եակ յանցանաւք եւ յարութեանն ըստանան ընտրեալքն, զորմէ ասէ Եսայի.

«Ցնծացաւ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան եւ պատմուճան արդարութեան» (Ես. ԿԱ. 10) *եւ այլն:*

Այսքան վեց հարցումն վասն հանդերձին:

Հարց. Վասն է՞ր ասէ. «**Եկեալ այր մի**» (հմմտ. ԻԲ. 11):

Պատասխանի. Երեք է տեսութիւնն.

Ա. Նախ՝ ցուցանէ առանձին քննութիւն լինել:

Բ. Երկրորդ՝ զի որոշող է չարութիւնն:

Գ. Երրորդ՝ ի մէջ եկեղեցոյ սակաւ են առանց գործոց:

Հարց. Վասն է՞ր ասէ «**ընկեր**» (ԻԲ. 12):

Պատասխանի. Ա. Նախ՝ ընկեր ես հաւատոց եւ ոչ գործոց:

Բ. Երկրորդ՝ չարին սատանայի ընկեր:

Գ. Երրորդ՝ ընկեր ես հրէից անհաւատից. նոքա հաւատս ոչ ունին եւ դու՝ գործս:

Եւ յայսմանէ յայտ է.

Ա. Նախ՝ զի յառաջ քան զաւր դատաստանին ոչ պատժէ, այլ նախ հարցանէ եւ ապա հատուցանէ:

Բ. Երկրորդ՝ նախ ինքն տայ զվճիռն, ըստ այնմ՝ «Զչարսն չարաւ կորուսցէ» (ԻԱ. 41):

«**Եւ նա պապանձեցաւ**» (ԻԲ 12)

Ա. Նախ՝ յերկիւղէ թագաւորին:

Բ. Երկրորդ՝ զի ոչ գտանէ իրաւունս կամ պատճառ: Զայսմանէ ասէ՝ Բանք լռել եւ գործք թագաւորել: Տե՛ս, զի ոմանք պապանձին եւ ոմանք պատասխանեն. «Երբ տեսաք քաղցեալ» (Մատթ ԻԵ. 37): *Եւ ոմանք պատճառեն.* «Այր խիստ ես» (Մատթ. ԻԵ. 24) *եւ այլն:*

ՎԱՍՆ ՏԱՆՋԱՆԱՑ

Հարց. Զի՞նչ է «**կապեցէք զձեռս եւ զոտս**» (ԻԲ. 13):

Այն է, որ ասէ. «Ի գործս ձեռաց իւրեանց կապեսցին մեղաւորք» (Սաղմ. Թ. 17): *Եւ թէ՝* «Զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկին» (Մատթ. ԺՁ. 19):

Եւ չորս ինչ ցուցանէ.

Ա. Նախ՝ թէ յայնժամ անլոյծ կապի:

Բ. Երկրորդ՝ զի մի փոխիցէ եւ գործիցէ:

Գ. Երրորդ՝ զի ինքն կապեաց ընդդէմ բարւոյն. կապեսցի ի բարեաց:

Դ. Չորրորդ՝ զի կապեաց ի մէջս, յիրաւի կապեսցի ի պատիժս:

Հարց. Զի՞նչ է **«խաւարն արտաքին»** (ԻԲ. 14):

Պատասխանի. Ա. Նախ՝ արտաքոյ է այսմ խաւարիս, որ է պակասութիւն, այլ այն խաւարն պակասութիւն է բարեաց:

Բ. Երկրորդ՝ զի արտաքոյ է այցելութեանն Աստուծոյ:

Գ. Երրորդ՝ զի խաւարն լինի յաւդոյ, եւ այն՝ ի հրոյ:

Դ. Չորրորդ՝ այս խաւար՝ երբեք եւ ուրեք, եւ այն՝ միշտ եւ ամենեցուն:

Լալ աչաց եւ կրճել ատամանց (ԻԲ. 13):

Ա. Նախ՝ ցուցանէ զդաժան, անժուժութիւն ցաւոցն:

Բ. Երկրորդ՝ զներքին եւ զարտաքին կիրք, խաւարն եւ լալ աչացն յայտնէ:

Գ. Երրորդ՝ ամենայն զգայութեանց տանջանք:

Դ. Չորրորդ՝ ի չորից տարերացն տանջանք ցուցանէ:

Իսկ թէ, որպէս ջերմ եւ ցուրտ ի միասին տանջէ, ասացեալ է ի Չորրորդ մասին Ը. համարն[1]*:*

Հարց. Զի՞նչ է **«Բազումք կոչեցեալք եւ սակաւք ընտրեալք»** (ԻԲ. 14): *Իսկ առաքեալ ասէ.* «Զորս կոչեաց, արդարացոյց եւ փառաւոր արար» (հմմտ. Առ Հռոմ. Ը. 30)*:*

Պատասխանի. Զորիւք տրամատի.

Ա. Ոմանք կոչին եւ ընտրին՝ հնազանդեալք, որպէս սուրբքն ամենայն: Բ. Ոմանք կոչին եւ ոչ ընտրին՝ չար կամաւք, որպէս հրեայք: Գ. Ոմանք ոչ կոչին եւ ընտրին՝ բարի կամաւք: Դ. Ոմանք ոչ կոչին եւ ոչ ընտրին, որպէս խոտեալք:

Արդ, առաքեալ զհնազանդեալսն ասէ, եւ Տէր՝ զհակառակեալս կամաւք:

[1] Տե՛ս ձեռ. Գ, Դ. հատոր, Վասն դժոխոց, էջ 193ա:

ՎԱՍՆ ԹՋԵՆԻՈՅՆ

Մատթ. ԻԴ. 32-35

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

«Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն» (Մատթ. ԻԴ. 32):

«Թզենի» *այժմ կամ զամենայն աշխարհս աւրինակեալ նշանակէ, որում կատարած լինել մարգարէանայ, կամ զամենայն մարդ, որ գնայ ըստ երանելի կենդանութեանն եւ ցանկա[յ] տեսանել զԲանն Աստուծոյ, զի ուրախասցի, քանզի որպէս թզենիդ ի ձմերանի զաւրութեամբ ունի յինքեան զծաղկելն, նոյնպէս եւ առաքինութեամբ զարդարեալն՝ ի յանցաւոր յաշխարհիս. վասն զի դեռեւս չէ հասեալ աւետեաց պսակին, այլ յուսայ եւ որպէս ընդ հայէլի տեսանէ զբարիսն խոստացեալ. իսկ ի գալստեան արդար դատաւորին՝ յորժամ հասանէ աւետեացն, յայնժամ յայտնապէս եւ ոչ յուսով, որպէս թզենւոյն պտուղն, որ ի ձմերանի աներեւոյթ է, իսկ յամարանի՝ երեւելի ամենեցուն:*

Յորժամ նորայ ոստքն կակղասցին եւ տերեւն ցցուեսցի (հմմտ. ԻԴ. 32):

Մինչդեռ ձմեռային ժամանակ է, եւ ոստն խոստացեալ է, եւ տերեւն ոչ է ցցուեալ, իսկ յորժամ ի ձմերայնւոյս յամառայինն երթայ, յայնժամ ոստքն կակղանան եւ ցցուին, նոյնպէս եւ որ յաշխարհէս յառնէ՝ ի խռովութենէս յալեկոծեալ, ճանապարհորդէ ի խաղաղական յաւիտեանն. բերէ ոստս կակղացեալ՝ զսիրտն մարմնեղէն եւ ոչ քարեղէն տերեւս եւ ապա՝ պտուղ կատարեալ:

Ամէն ասեմ ձեզ՝ ոչ անցէ ազգս այս, մինչեւ այդ ամենայն եղիցի» (հմմտ. ԻԴ. 34):

«Ազգս այս» *լսելի է, որպէս Նորոյ Կտակարանաց. Ազգս այս,- ասէ,- մի՛ անցցէ, եւ ոչ եկեսցէ յաւետիսն խոստացեալ, եթէ ոչ այդ ամենայն, զոր խաւսեցայդ, եղիցի, նեռինն գալուստն, կատարած եւ կորուստ ամենայն աշխարհիս այսորիկ ի լաւագոյն տեսակս:*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Ի թզենւոյ անտի ուսարուք, յորժամ իսկ եւ իսկ ոստքն նորա կակղանայցեն այլովքն հանդերձ, քանզի ասաց, թէ՝ «Վաղվաղակի յեւր նեղութեան առ[ւրցն այնոցիկ]» (Մատթ. ԻԴ. 29): *Եւ նոքա զայն խնդրէին, թէ յետ որչափ ժամանակաց եւ զաւրն եւս ճշգրտիւ ցանկային լսել, վասն այնորիկ եւ զաւրինակ թզենւոյն ի միջի դնէ՝ յայտ արարեալ, թէ ո՛չ բազում ժամանակք են*[1] *ի միջի, այլ անդրէն վաղվաղակի եւ գալուստն պատահիցի, զոր ոչ միայն առակաւս, այլեւ այլովք բանիւք, որ յետ սոցին է, գուշակեաց:*

«Գիտասջիք,- ասէ,- զի մերձ է առ դուրս (հմմտ. ԻԴ. 33):

Այսու եւ այլ իմն ամառն հոգեւոր մարգարեանայ եւ ջեր[մ] եւ անքոյթ լինել յաւուրն յայնմիկ արդարոցն ի յայտնի ձմերայնոյն եւ մեղաւորացն՝ նմին հակառակ, ձմեռն յամարանին, զոր եւ յաջորդաւքն յայտ արար, թէ մինչ դեռ ի բարեկենդանութեան[2] *իցեն, հասանիցէ ի վերայ նոցա աւրն: Ո՛չ յայն սակս ինչ միայն եղ զառակ թզենւոյն, եղ ի միջի, զի զանջրպետութիւն ժամանակացն ցուցանիցէ, զոր մարթէր եւ այլազգ յայտ առնել, այլ զի գոնեայ այնու հաւատարիմ զբանն առնիցէ, թէ արդար եւ այնպէս ելանելոց է ի գլուխ, որպէս եւ այսմ հարկ է լինել, նոյնպէս եւ այնմ:*

Այլ դարձեալ վասն զի ի լուծանել զպատուիրան նախաստեղծին ճաշակմամբ պտղոյն, թզենւոյն սաղարթիւքն ծածկէր զինքն առընթեր նորա գոլով, նշանակելով, թէ զնովաւ աւձն թիւրապատեցաւ, զոր ու նախամայրն զնոյնս փածաւ ծածկոյթ մերկութեանն ի մերկանալ զփառսն: Վասն այնորիկ եւ զնա ցամաքեցոյց, ասելովն, թէ՝ «Մի՛ լիցի ի քեզ պտուղ յաւիտեան» (հմմտ. Մատթ. ԻԱ. 19): *Այսինքն՝ ըստ յառաջին յանցանացն, որով մահ թագաւորեաց, արդ, յորժամ տեսանիցէք զնոյն չարութիւն, դարձեալ պտկեալ*[3] *եւ դալարացեալ, գիտասջիք, թէ մերձ է իմ գալուստն:*

Ոչ,- ասէ,- անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի (ԻԴ. 34):

Կ Որ Երուսաղէմի վիշտքն պատերազմացն, սովոյն, ժանդիցն, սրոյն եւ սասանութեանն, սուտ Քրիստոսացն, սուտ մարգարէիցն

[1] Բ լինին
[2] Բ բարեկեցութեան] բարեկենդանութեան
[3] Ա պրկեալ] պտկեալ, Բ՝ պտկեալ

ընդ, բնաւս տարածանել Աւետարանիս ամբոխքն ու խռովութիւնքն: Իսկ ասելովն, թէ «ազգս այս». ո՛չ զնոցանէ, որ յայնժամն էին, ասէ, այլ զհաւատացելոցն: Քանզի գիտէ ազգ, ոչ[1] *ի ժամանակացն միայն դրոշմել, այլեւ ի կրաւնիցն եւ յառաքինութեանն աւրինակ է: Դարձեալ ստէպ իմն զնոսա ի հաւատս յորդորէ:*

«Երկինք եւ երկիր,- ասէ,- անցցին, եւ բանք իմ մի՛ անցցեն» (ԻԴ. 35):

Այսինքն՝ թէ հաստատելոցդ եւ անշարժիցդ[2] *դիւրին է*[3] *եղծանել, եւ ոչ իմոց բանիցս ի գետին անգանել, միանգամայն իսկ եւ արարիչ ամենեցուն ցուցանէ զանձն, քանզի վասն կատարածին խաւսեցաւ յաղագս այնպիսիս իրաց, որում բազումք չհաւատացին. «զերկինս եւ զերկիր» ի մէջ երեր՝ զանբաւ զաւրութիւնն յայտարարեալ.* «Ընդ բազում իշխանութեամբ ցուցանէ, թէ Տէր է ամենայն երկրի» (հմմտ. Յուդիթ Բ. 5):

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Հարց. Վասն է՞ր ի թզենոյ ասէ զառակն:

Պատասխանի. Վասն Ժ. (10) պատճառի.

Ա. Նախ՝ զի յԵրուսաղէմ բազում են թզենիք, կամի յընդել իրացն բերել զաւրինակ, զի դիւրալուր լիցի բանքն:

Բ. Երկրորդ՝ զի ասաց վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն, եւ նոքա խնդրէին զժամանակն, թէ ե՞րբ լինիցի, վասն որոյ զթզենին աւրինակ տայ վաղվաղակի գալստեանն յետ նեղութեան նեռինն, զի յետ ձմերան վաղվաղակի կանաչի:

Գ. Երրորդ՝ զի այլ իմն ամառն ցուցանէ արդարոցն, ի ձմերան՝ մեղաւորցն, եւ հակառակ նմին[4] *ձմեռն մեղաւորաց ի մէջ ամարան նոցա:*

Դ. Չորրորդ՝ որպէս հարկիւ գայ ամառն յերեւել թզենոյն, այսպէս հարկիւ գայ Քրիստոս՝ յերեւել նեռին:

Ե. Հինգերորդ՝ որպէս թզենին ունի յինքեան զզաւրութիւն ծաղկելոյ, այլ պահէ ի ձմերանն մի[ն]չ ի գարունն, նոյնպէս եւ

[1] Ա որ] ոչ
[2] Ա անլուծիցդ] անշարժիցդ
[3] Բ իցէ
[4] Գ՝ լս. նմին

արդարքն յաշխարհիս յայսմիկ, ոչ են հասեալ խոստացեալ պսակին, այլ յուսով ակն ունին, զի յորժամ հոգեւոր գարուն լինի, պայծառասցին պսակաւք եւ պտղովք իմաստութեանն Աստուծոյ, որ միշտ հեղու ի նոսա:

Զ. Վեցերորդ՝ որպէս թզենին յինքեան ծածկեալ ունի զդալարութիւնն, զոր յետոյ յայտնի, նոյնպէս եւ սուրբք ի հոգիս իւրեանց ծածկեալ ունին զգործս բարիս, զոր յետոյ ի մարմինս իւրեանց յայտնեսցի:

Է. Արդ, զայսոսիկ ամենայն ծառ ցուցանէ, եւ նշենին նախ ծաղկի, քան զթզենին, վասն որոյ եւթներորդ պատճառաւ աւրինակ տայ զթզենին, զի յորժամ մերկացան նախաստեղծն, թզենեաւ ծածկեցան: Եւ կարծեմ, թէ արտաքոյ դրախտին ընդ թզենին թիւրապատեցաւ աւձն եւ պատրեաց զԵւայ, վասն որոյ Տէրն անէծ զթզենին՝ ասելով. «Մի լիցի այլ պտուղ ի քէն» (Մատթ ԻԱ. 21, հմմտ. Մարկ. ԺԱ. 14)*, այսինքն՝ խափանեսցի պատրանքն սատանայի, որ ի քէն եղեն: Ասէ՝ Յորժամ տեսանիցէք զնոյն թզենին դարձեալ դալարեալ ի ձեռն նեռինն, յայնժամ լինիցի գալուստն Որդոյ Մարդոյ:*

Ը. Ութերորդ՝ նախ տերեւն երեւի թզենոյն, եւ ապա՝ պտուղն: Նոյնպէս նեռն. նախ՝ զսաղարթն իւր արձակէ, որք են կարապետ նեռինն, եւ յետոյ ինքն որպէս պտուղ կսկծեցուցանող, որ չարչարէ զսուրբս:

Թ. Իններորդ՝ որպէս զտապ ամարանոյ ի սիրոյն Աստուծոյ ցամաքեցուցանէ եւ քաղցր բանիւ հաւանեցուցանէ ի կամս իւր:

Ժ. Տասներորդ՝ որպէս զթզենին նախ անէծ, եւ յետոյ աւրինակ տայ, այսպէս նախ անէծ զմեզս եւ կարճեաց եւ յետոյ թանձրացաւ եւ զաւրացաւ ի մարդիկ, եւ գործք բարիք սպառեսցին, մինչ միայն աստուածպաշտութիւնն մնայ առ ոմանս, ըստ որում Որդի մարդոյ թերեւս գտցէ հաւատս յերկրի:

Իսկ որ ասէ. «**Մերձ է ի դուրս**» (ԻԴ. 33)*, ցուցանէ, թէ զհետ նեռինն յանկարծակի երեւի գալուստն Քրիստոսի, որպէս գող ի տուն մտեալ եւ առ պահն տան տէրն ի դուրս հասեալ, ըմբռնէ զնա ի վնասն եւ սատակէ, այսպէս եւ Տէրն զնեռն առնէ, ըստ Պաւղոսի՝* «Զոր Տէր Յիսուս սատակեսցէ զնա» (Բ Թեսաղ. Բ. 8)*: Եւ դառնալ, մինչ մեծամեծս բարբառէր եղջիւրն, որ է նեռն, բարձաւ գազանն եւ կորեաւ:*

Այսքան առ այս:

Ոչ անցցէ ազգս այս (ԻԴ. 34):

Զորիւք իմանի.

Ա. Նախ՝ զազգն հրէից ասէ՝ ոչ անցցէ, մինչեւ կրեսցեն զայս ամենայն պատուհասս եւ զվիշտս Երուսաղէմի:

Բ. Երկրորդ՝ վասն առաքելոցն ասէ. ոչ անցցեն ամենեքեան, մինչեւ տեսցեն զկործանումն նոցա:

Գ. Երրորդ՝ վասն հաւատացելոցն ասէ, թէ յայսպիսի նեղութեանցս եւ վշտացս, որ գալոց են, ոչ կարեն անցուցանել եւ պակասիլ զնոսա, զի ոչ միայն լեզուաւ եւ ժամանակաւ է ազգն, այլեւ հաւատով եւ առաքինութեամբ ազգ կոչին:

Դ. Չորրորդ՝ նոյն ինքն ազգն հրէից մնայ մինչ ի գալուստ նեռինն:

Երկինք եւ երկիր անցցեն (ԻԴ. 35):

Ա. Նախ՝ վասն ճշմարտութեան եւ հաստատութեան[1] *իւր բանին ասէ, թէ հնար է դոցայ անցանել, զոր Սողոմոն յատակն ասէ* (Իմաստ. ԺԹ. 7)*, եւ ոչ իմ բան ի յերկիր անկանել* (տե՛ս Մատթ. ԻԴ. 35)*:*

Բ. Երկրորդ՝ ցուցանէ զինքն Տէր եւ Արարիչ երկնի եւ երկրի, եւ փոփոխող:

Գ. Երրորդ՝ զայն ասէ «անցանել», որ նորոգութիւն ստանան՝ ըստ մարգարէին, թէ. «Եղիցի երկին նոր եւ երկիր նոր» (Ես. ԿԵ. 17)*:*

Դ. Չորրորդ՝ զի ամենայն ստեղծական իր պարտի եւ զապականութիւն ստանալ, եւ զի ոչ անցանին դոքայ, իմ բանիւ, ասէ, մնան (հմմտ. Մատթ. ԻԴ. 35, Մարկ. ԺԳ. 31, Ղուկ. ԻԱ. 33)*:*

Մարկ. ԺԳ 28-31

ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՒՈՐՅԻ

Բայց դուք ի թզենւոյ անտի ուսջիք զառակն, յորժամ տակաւ ոստքն նորա կակղանայցեն, եւ տերեւ արձակիցի ի նմա, գիտէք, թէ մերձ է ամառն: Նոյնպէս եւ դուք, յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջի՛ք, թէ մերձ է առ դուրս (Մարկ. ԺԳ. 28-29)*:*

Նմանութիւնն թզենւոյ մարգարէութիւնն է, տերեւն արձակեալ՝ է այժմու խաւսք, եւ ամառն մերձեալ՝ է աւր դատաստանին:

Յայնժամ ամենայն ծառ յայտնելոց է, զոր ունի ի ներքոյ, եթէ ի ներքոյ չորացեալ է, այրեն եւ եթէ դալար իցէ, բերեն յԵդեմ, որ է

[1] Գ հաստատութեան եւ ճշմարտութեան (Գ՝ ճշմարտութեան եւ հաստատութեան)

դրախտն: Եւ տնկեն ընդ հովանեաւ ծառոյն կենաց, քանզի տերեւ այն ծառոյն է բան փրկութեան մարդկան, որ ասելոց է. «Եկայք աւրհնեալք Հաւր իմոյ» (Մատթ. ԻԵ. 34):

Յորժամ թզենւոյն տերեւն ցցուի, **«գիտէք, թէ մերձ է ամառն»:** *Այսպէս եւ յորժամ տեսանիցէք զայս, զոր ինչ գրեալ է, մի՛ կարծէք, թէ առ ժամայն կատարումն է, այլ իբրեւ զկարապետս, որ գան յառաջ, ցուցանեն, թէ մերձ է կատարումն աշխարհիս:*

Դարձեալ՝ ոչ միայն յայն սակս ինչ էած ի մէջ զառակիս, զի զանջրպետութիւնն ժամանակացն ցուցանիցէ, այլ զի գոնէ այնու հաւատարիմ զբանն առնիցէ, թէ արդարեւ այնպէս ելանելոց է ի գլուխ:

Դարձեալ՝ զի ի լուծանել նախաստեղծին զպատուիրանն, որով աւտարացաւ յԱստուծոյ, թզենւոյն սաղարթիւք զինքն ծածկէր, զոր խորհրդապէս յաւրինակ մեղացն չորացոյց Տէրն:

Արդ, այժմ ասէ, թէ յորժամ զնոյն չարութիւն պտկեալ տեսանիցէք, այսինքն՝ ի բաց քարշեալ զմարդիկ յԱստուծոյ եւ ծածկեալ հեշտութեամբ մեղացն, որպէս յառաջ տերեւով թզենւոյն ի յայնպիսի անաւրէնութեան բազմանալն իմացիք, թէ մերձ է գալուստն, որպէս յայլուր ասաց. «Որդի մարդոյ եկեալ՝ գտցէ հաւատս յերկրի» (Ղուկ. ԺԸ. 8)*, զի գործքն ամենեւին սպառեալ լինին, եւ հազիւ թէ գտանիցի ուրեք հաւատք, զի սատանայ յորժամ իմանայ զմերձիլ գալստեանն, առաւել կատաղի արկանել զմարդիկ ի չարիս եւ խոտորեցուցանել յԱստուծոյ, սակայն ոչ յերկարի, այլ արագ ի վերայ գայ կատարածն, ըստ առակիս, զոր ի մէջ էած: Դարձեալ՝ այս թզենի աւրինակէ զժողովարանն, ընդ որ գալով առ նա, Տէրն մեր ոչ եգիտ պտուղ ի նմա, բայց միայն տերեւ, զի չունէր պտուղ իրաւանց եւ դատապարտեցաւ յաւիտենական ամլութեամբ, այլ կուրութիւնն փոքր ի շատէ եղեւ Իսրայէլի, մինչեւ լրումն հեթանոսաց մտցէ եւ ապա ամենայն Իսրայէլ կեցցէ.* **«ծառն թզենի»** *հրէից ժողովարանն, որ երկար եկաց ցամաք եւ անպտուղ,* **«փայ պտուղ»** *զոր ուրացաւ:*

Վասն որոյ ասէ Յոր. «Զի գոյ յոյս ծառոյ, զի թէպէտ եւ կտրեսցի ի հոտոյ ջրոյ, դարձեալ ծաղկեսցի» (հմմտ. Յոբ ԺԴ. 7):

Յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք, թէ մերձ է աւր դատաստանին: Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի: Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ անցանիցեն (ԺԳ. 29-31):

«Ազգ» *զհաւատացեալսն կոչէ, ըստ այնմ, զի ոչ յաղթեցան՝ ոչ ի սովոյ, ոչ ի սրոյ, ոչ ի մահուանէ* (տե՛ս Հռոմ. Ը. 35-39) *եւ ոչ ի սուտ Քրիստոսէն, եւ ոչ ի մարգարէիցն ստոց, եւ ոչ կորնչին մինչեւ այսն ամենայն կատարի: Վասն որոյ յերկրորդ գալստեանն բազում եւ անթիւ գտանին հաւատացեալք, որք համբերեն նեղութեանց վասն Քրիստոսի:*

Դարձեալ՝ **«ազգ»** *ասէ զամենայն ազգ մարդկան, եւս առաւել՝ զհրէիցն, ասէ Ժողովողն. «Ազգ գայ եւ ազգ երթայ, եւ երկիր յաւիտեան կայ»* (Ժող. Ա. 4): *Նոյնպէս եւ* **«Երկինք եւ երկիր անցցեն»՝** *ըստ արտաքին պատկերի կերպարանացն, եւ մնան յամենայն ժամանակս ըստ բնութեանն:*

Դարձեալ՝ **«երկին»** *ասէ զաւդս, վասն որոյ թռչունք, որ յաւդս,* **«թռչունք երկնից»** *կոչին:*

Ասէ Պետրոս, թէ՝ «Երբեմն աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ, եւ այժմ երկինք եւ երկիր նովին բանիւ գանձեալ կան՝ հրոյ պահեալք» (Բ Պետր. Գ. 6-7):

Ցուցանէ յայտնապէս, թէ այլ երկինք ոչ անցանի հրով, այլ այն, որ կորեաւ ջրով:

Զի այն երկին, որ դատարկ է յաստեղաց եւ լի ամպովք, նա է անցանելոց եւ ոչ այն, որ աստեղաւք մոլորականաւք եւ անմոլորիւք զարդարեալ է: Ջուր հեղեղին միայն հնգետասան կանգուն բարձրացաւ, քան զբարձրութիւն լերանց, եւ ոչ անց մինչեւ ի սահմանս, ուր միաբանի հուրն եւ աւդն: Նոյնպէս եւ հուրն ոչ բարձրանայ աւելի, քան զոր բարձրացաւն ջուրն, զի վարդապետք ասեն, թէ՝ «Մաքրելոց է աւդն մինչեւ ցայն վայր, ուր ելեալ է ծուխ զոհիցն»:

«Երկինք եւ երկիր անցցեն». *դարձեալ՝ անմարմինք են երկինքն եւ հրեշտակք, եւ դեւք, եւ հոգիք մարդկան եւ ոչ անցանեն յաւիտեան: Եւ հուրն եւ աւդ, եւ ջուր, եւ երկիր ոչ անցանեն, սակայն ոչ ջեռուցանեն եւ ոչ ցրտուցանեն, ոչ բուսուցանեն եւ ոչ աճեցուցանեն, այլ մնան անկիրք եւ անգործ:*

Մարմինք մարդկան նորոգին եւ մնան յաւիտեան եւ անվախճան, անասունք եւ գեռունք եւ թռչունք խափանին, եւ ծառք անցանեն եւ կորնչին եւ խառնին ի տարերս, ուստի գոյացան: Արեգակն եւ լուսին եւ աստեղք լուծանին եւ անցանեն յիւրեանց

դրախտն: Եւ տնկեն ընդ Հովանեաւ ծառոյն կենաց, քանզի տերեւ այն ծառոյն է բան փրկութեան մարդկան, որ ասելոց է. «Եկայք աւրհնեալք Հաւր իմոյ» (Մատթ. ԻԵ. 34):

Յորժամ Թզենւոյն տերեւն ցցուի, **«գիտէք, թէ մերձ է ամառն»**: *Այսպէս եւ յորժամ տեսանիցէք զայս, զոր ինչ գրեալ է, մի՛ կարծէք, թէ առ ժամայն կատարումն է, այլ իբրեւ զկարապետս, որ գան յառաջ, ցուցանեն, թէ մերձ է կատարումն աշխարհիս:*

Դարձեալ՝ ոչ միայն յայն սակս ինչ էած ի մէջ զառակիս, զի զանջրպետութիւնն ժամանակացն ցուցանիցէ, այլ զի գոնէ այնու հաւատարիմ զբանն առնիցէ, թէ արդարեւ այնպէս ելանելոց է ի գլուխ:

Դարձեալ՝ զի ի լուծանել նախաստեղծին զպատուիրանն, որով աւտարացաւ յԱստուծոյ, Թզենւոյն սաղարթիւք զինքն ծածկէր, զոր խորհրդապէս յաւրինակ մեղացն չորացոյց Տէրն:

Արդ, այժմ ասէ, թէ յորժամ զնոյն չարութիւն պտկեալ տեսանիցէք, այսինքն՝ ի բաց քարշեալ զմարդիկ յԱստուծոյ եւ ծածկեալ հեշտութեամբ մեղացն, որպէս յառաջ տերեւով Թզենւոյն ի յայնպիսի անաւրէնութեան բազմանալն իմացիք, թէ մերձ է գալուստն, որպէս յայլուր ասաց. «Որդի մարդոյ եկեալ՝ գտցէ հաւատս յերկրի» (Ղուկ. ԺԸ. 8)*, զի գործքն ամենեւին սպառեալ լինին, եւ հազիւ թէ գտանիցի ուրեք հաւատք, զի սատանայ յորժամ իմանայ զմերձիլ գալստեանն, առաւել կատաղի արկանել զմարդիկ ի չարիս եւ խոտորեցուցանել յԱստուծոյ, սակայն ոչ յերկարի, այլ արագ ի վերայ գայ կատարածն, ըստ առակիս, զոր ի մէջ էած: Դարձեալ՝ այս Թզենի աւրինակէ զժողովարանն, ընդ որ գալով առ նա, Տէրն մեր ոչ եգիտ պտուղ ի նմա, բայց միայն տերեւ, զի չունէր պտուղ իրաւանց եւ գատապարտեցաւ յաւիտենական ամլութեամբ, այլ կուրութիւնն փոքր ի շատէ եղեւ Իսրայէլի, մինչեւ լրումն հեթանոսաց մտցէ եւ ապա ամենայն Իսրայէլ կեցցէ.* **«ծառն թզենի»** *հրէիցն ժողովարանն, որ երկար եկաց ցամաք եւ անպտուղ,* **«տայ պտուղ»**՝ *զոր ուրացաւ:*

Վասն որոյ ասէ Յոր. «Զի գոյ յոյս ծառոյ, զի թէպէտ եւ կտրեսցի ի հոտոյ ջրոյ, դարձեալ ծաղկեսցի» (հմմտ. Յոբ ԺԴ. 7):

Յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք, թէ մերձ է աւր դատաստանին: Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի: Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ անցանիցեն (ԺԳ. 29-31):

«Ազգ» *զհաւատացեալսն կոչէ, ըստ այնմ, զի ոչ յաղթեցան՝ ոչ ի սովոյ, ոչ ի սրոյ, ոչ ի մահուանէ* (տե՛ս Հռոմ. Ը. 35-39) *եւ ոչ ի սուտ Քրիստոսէն, եւ ոչ ի մարգարէիցն ստոց, եւ ոչ կորնչին մինչեւ այսն ամենայն կատարի: Վասն որոյ յերկրորդ գալստեանն բազում եւ անթիւ գտանին հաւատացեալք, որք համբերեն նեղութեանց վասն Քրիստոսի:*

Դարձեալ՝ **«ազգ»** *ասէ զամենայն ազգ մարդկան, եւս առաւել՝ զհրէիցն, ասէ Ժողովողն. «Ազգ գայ եւ ազգ երթայ, եւ երկիր յաւիտեան կայ»* (Ժող. Ա. 4): *Նոյնպէս եւ* **«Երկինք եւ երկիր անցցեն»***՝ ըստ արտաքին պատկերի կերպարանացն, եւ մնան յամենայն ժամանակս ըստ բնութեանն:*

Դարձեալ՝ **«երկին»** *ասէ զաւդս, վասն որոյ թռչունք, որ յաւդս,* **«թռչունք երկնից»** *կոչին:*

Ասէ Պետրոս, թէ՝ «Երբեմն աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ, եւ այժմ երկինք եւ երկիր նովին բանիւ գանձեալ կան՝ հրոյ պահեալք» (Բ Պետր. Գ. 6-7):

Ցուցանէ յայտնապէս, թէ այլ երկինք ոչ անցանի հրով, այլ այն, որ կորեաւ ջրով:

Զի այն երկին, որ դատարկ է յաստեղաց եւ լի ամպովք, նա է անցանելոց եւ ոչ այն, որ աստեղաւք մոլորականաւք եւ անմոլորիւք զարդարեալ է: Զուր հեղեղին միայն հնգետասան կանգուն բարձրացաւ, քան զբարձրութիւն լերանց, եւ ոչ անց մինչեւ ի սահմանս, ուր միաբանի հուրն եւ աւդն: Նոյնպէս եւ հուրն ոչ բարձրանայ աւելի, քան զոր բարձրացաւն ջուրն, զի վարդապետք ասեն, թէ՝ «Մաքրելոց է աւդն մինչեւ ցայն վայր, ուր ելեալ է ծուխ զոհիցն»:

«Երկինք եւ երկիր անցցեն». *դարձեալ՝ անմարմինք են երկինքն եւ հրեշտակք, եւ դեւք, եւ հոգիք մարդկան եւ ոչ անցանեն յաւիտեան: Եւ հուրն եւ աւդ, եւ ջուր, եւ երկիր ոչ անցանեն, սակայն ոչ ջեռուցանեն եւ ոչ ցրտուցանեն, ոչ բուսուցանեն եւ ոչ աճեցուցանեն, այլ մնան անկիրք եւ անգործ:*

Մարմինք մարդկան նորոգին եւ մնան յաւիտեան եւ անվախճան, անասունք եւ զեռունք եւ թռչունք խափանին, եւ ծառք անցանեն եւ կորնչին եւ խառնին ի տարերս, ուստի գոյացան: Արեգակն եւ լուսին եւ աստեղք լուծանին եւ անցանեն յիւրեանց

երեւակայութենէն եւ դառնան ի լոյսն յայն, յորմէ չինեցան եւ ստեղծան ի սկզբանն, զի լոյս իւրեանց դառնայ ի լոյսն, եւ մարմինք իւրեանց յայն, յորմէ չինեցան:

«Եւ բանք իմ ոչ անցանիցեն». *այսինքն՝ հանգիստ եւ փառք արդարոցն եւ արքայութիւնն երկնից անանցանելի մնան յաւիտեան, նոյնպէս եւ տանջանք մեղաւորացն, զոր պատմեաց, եւ գեհենն սատանայի ոչ անցանեն, եւ այլ ամենայն բանքն, զոր ասաց վասն հանդերձելոցն, անանցանելի մնան:*

«Երկինք եւ երկիր անցցեն». *ոչ զի անցանեն, ասէ, այլ ցուցանէ, թէ դիւրին է, զի սոքա անցանեն, որք անշարժք եւ մնացականք, քան թէ անկանի մին յայսցանէ ասացելոցս:*

Ղուկ. ԺԳ. 29-33

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Ասաց եւ առակ մի նոցա. Տեսէք զթզենիդ: Յորժամ ոստքն կակղանայ եւ տերեւն ցցուի (հմմտ. Ղուկ., ԻԱ. 29-30):

ԿՐ *Վասնզի յանցանել նախաստեղծին զպատուիրանաւն թզենոյն սաղարթովն ծածկէր զմերկութիւն[ն], որ աւձն պատեցաւ: Արդ, մի՛ լիցի ի քեզ պտուղ յաւիտեան, որ մահացաւ մարդկան ազգ: Քանզի եկի, զի խաչիւ եւ լեղոյն ճաշակմամբն ջնջումն մեղաց ար[ար]ից՝ առ ի դարձուցանել զազգ[ս] մարդկան ի կռապաշտութենէ դիւաց, զոր աւտարացոյց ի դրախտէն ազգի ազգի չարիւք եւ գրաւեաց զմարդիկ: Արդ՝ զկնի իմոյ գալստեանս մի՛ լիցի ի քեզ այնպիսի պտուղ: Եւ թզենոյն ցամաքութեամբն զդիւական պաշտաւնն ցամաքեցոյց:*

Յորժամ տեսանիցէք, զի ոստն կակղանայ, ճանաչէք թէ մերձ է ամառն (ԻԱ. 30):

Յորժամ տեսանէք զթզենիդ սաղարթաւորեալ կրկին անգամ, այսինքն՝ զայսպիսի պտուղ՝ զկռապաշտութեան ընձուղեալ ի մարդիկ:

Սպ. *Եւ դարձեալ. ի նոյն կռապաշտութեան պատրէ զմարդիկ խաբող առաջին նշանաւք՝ ստաւք:*

ՍՏ *Քանզի թզենի եւ այլ ծառք ի ձմերանի խստացեալ ոստքն ո՛չ ունին զաւրութիւն կակղանալոյ՝ ոստաւք ցուցանել ծաղիկ:*

Նոյնպէս եւ առաքինիքն յաշխարհի, վասն զի ո՛չ են հասեալ աւետեաց պսակին, այլ յուսով որպէս ընդ հայելի տեսանեն զբարիսն խոստացեալ: Իսկ ի մերձիլ ամարանին կակղանայ եւ ցցուի:

Նոյնպէս եւ դուք, յորժամ տեսանէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք, թէ մերձ է արքայութիւն Աստուծոյ (ԻԱ. 31):

Արդ, ի գալ արդար դատաւորին հասանեն պսակին յայտնապէս, եւ [ի] յառնել խռովութեանց աշխարհիս՝ ի խաղաղ նաւահանգիստն յաւիտենական ճոխանան: Եւ կակղանայ քարացեալ սիրտ մարմնեղէն, եւ ցուցանեն գոյնս գոյնս ծաղկաց, որ փթթին վայելչացեալ գեղեցկապէս, եւ պտուղս կատարեալս ըստ զանազան առաքինութեանց, որ վաստակեցին ի սակաւ ժամանակ կենցաղոյս:

Ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի (ԻԱ. 32):

ԿՐ *Թէպէտ զվիշտս եւ զնեղութիւնս հրէիցն ի ձեռն սովոյ եւ սրոյ, գերութեամբ ի Տիտոսէ եցոյց* (տե՛ս Բ. Մակաբ. ԺԱ. 1-38), *այլ առաւել զյետին ժամանակացն ասէ, որ կրելոցն են ի Նեռնէն, զի հաւանեալքն նմա զանհնարին տանջանսն կրեն: Զի որպէս ընդ առաքելոցն ասաց Քրիստոս. «Մինչ ի կատարած աշխարհի»* (Մատթ. ԻԸ. 20) *լինել զինքն իմանի եւ որք ի նոցանէ աշակերտեալք են: Այսպէս եւ՝ ըստ մեղաւորացն հետեւմանց: Արդ՝ մեղաւորք՝ ազգացն դիւաց եւ այլ մոլորութեանց միեւնոյն ազգ ասաց: Արդարեւ ո՛չ անցանէ ազգ մարդկային ընդդեմս մինչ ի գալուստն Քրիստոսի, յորում առհասարակ փոփոխին արարածք ամենայն:*

Սպ. *Կամ ազգս այս ասի Նոր Կտակարանս. «Մի՛ անցցէ, մինչեւ եկեսցէ աւետիսն խոստացեալ»* (հմմտ. Եբր. Զ. 13): *Եւ ամենայն, զոր ասաց, ի Նեռինն գալուստն է եւ ի կատարածի աշխարհիս: Եւ կորուստ այսորիկ ի լաւագոյն տեսակս փոխել՝ նորոյ երկնի եւ նորոյ երկրի:*

Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անց[անիցեն] (ԻԱ. 33):

ԿՐ *Զերկինս եւ զերկիր եցոյց, ըստ արարածոց գոլոյն փոփոխումն առնուլ, գոյացուցիչն երկնի եւ երկրի: Իսկ աստուածային բանիցն ո՛չ եւս անցանել, որ արար զնա, զի ո՛չ ընդ նիւթականաց գրաւի:*

ՏԱՆՈՒՏԷՐ ՈՒ ՏՆՏԵՍ

Մատթ. ԻԴ. 42-51

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Արթուն լերուք, [զի] ոչ գիտեք յորո՛ւմ ժամու Տէրն ձեր գայ (ԻԴ. 42):

Զայս ոչ միայն վասն կատարածի աշխարհիս ասաց, այլ եւ վասն կատարածի իւրաքանչիւր մարդկան. **«արթուն լերուք»** *գործովք բարւոք, զի ոչ գիտէք զաւր վախճանի ձերոյ, յորժամ կոչէ Տէրն ձեր զոգիդ ի մարմնոյդ:*

Ո՛վ իցէ արդեւք ծառայ հաւատարիմ եւ իմաստուն (հմմտ. ԻԴ. 45):

Հաւատք եւ իմաստութիւն, յորժամ որպէս առաքինութիւն տեսանի, զհետ երթան միմեանց, այսինքն՝ հաւատարիմն եւ իմաստութիւնն. եւ որ իմաստուն, նաեւ հաւատարիմ. իսկ որ ունի զիմաստութիւնն որպէս խորամանկութիւն, մարթի ոչ հաւատարիմ լինել այնպիսոյն, որք են իմաստունք հանգոյն աւձին եւ տնտեսին անիրաւութեան. արդ, որ հաւատարիմ է եւ իմաստուն, որպէս Պաւղոս եւ Պետրոս եւ նոցին նմանողք, որք տային զկերակուր զվարդապետութիւնս իւրեանց ի ժամու արժանաւորաց, զայնպիսի ծառայս իւր, զոր կացոյց ի վերայ տան իւրոյ աշխարհիս, եկեալ Քրիստոս ի գալստեան իւրում, երանելիս ցուցանէ:

Իսկ եթէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում (հմմտ. ԻԴ. 48):

Ապա եթէ ոչ իցէ ծառայն **«իմաստուն եւ հաւատարիմ»**, *այլ չար եւ յիմար, եւ արասցէ չարութեան եւ յիմարութեան գործս, եկեալ Տէր, յերկուս հատցէ զնա:*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Արթուն լերուք, զի ոչ գիտէք (հմմտ. ԻԴ. 42):

Ոչ՝ ասաց, թէ՝ «Ոչ գիտեմ», այլ թէ՝ **«Ոչ գիտէք»**[1], *քանզի կասկածագոյնս կամի լինել նոցա ցանկ, յայտարարեալ, թէ նմին իրի չասաց, նոցա զայն:*

Զայս գիտասջիք. եթէ գիտէր տանուտէրն՝ յորում պահու գող գայ, հսկէր եւ չտայր ական հատանել (հմմտ. ԻԴ. 43):

Յայն սակս չասաց[2] *զաւրն եւ զժամ, զի արթունք լինիցին. «Յորժամ չունիցիք,- ասէ,- ակն, յայնժամ,- ասէ, - եկեսցէ»: Եւ զոր ասեն այսպիսի ինչ է, թէ գիտէին բազումք, թէ երբ մեռանիցին, ընդ այն ժամանակս եւեթ պնդէին, վասն որոյ եւ զիւրաքանչիւր վաղճան կենաց անյայտ արար: Եւ թուի ինձ, թէ եւ զծոյլսն պատկառեցուցանէ, թէ ո՞րչափ ընչիցն փոյթ անձին ունին կասկածք*[3] *ի գողոցն, եւ այնչափ եւս անգամ չտանին դարման ոգւոց իւրեանց, նոքա յորժամ կասկածիցեն, հսկեն եւ չտան ինչ ի ներքուստ գողոցն հանել: Եւ դուք, թէպէտ եւ գիտէք, զի գալոց է, եւ արդարեւ իսկ գալոց է, եւ չկայք արթունք եւ չլինիք պատրաստականք, այլ անպատրաստ գնալ աստի, վասն այնորիկ*[4] *ի սատակումն քնէածիցն*[5] *գալոց է աւրն: Զոր աւրինակ եւ նա, թէ գիտէր, փախչէր, նոյնպէս եւ դուք, թէ [է]իք պատրաստք, ապրէիք: Եւ քանզի զդատաստանէն յուշ արար, այնուհետեւ առ վարդապետս շրջէ զբանն եւ զտանջանաց եւ զպատուոց խաւսի:*

«Ո՞վ իցէ, - ասէ, - հաւատարիմ ծառայ եւ իմաստուն, զոր կացուցէ տէր ի վերայ տան իւրոյ» (ԻԴ. 45):

Եւ զայս ո՛չ միայն վասն ընչից ասէ, այլեւ վասն բանին եւ վասն զաւրութեան եւ վասն ամենայն տեսութեան, որում իւրաքանչիւր ինչ ումէք յանձն[6] *լինիցի, զի իւրաքանչիւր զինչ եւ ունիցի*[7]*, ի հասարակաց աւգուտ պարտի ի կիր արկանել, եթէ իմաստութիւն իցէ եւ թէ իշխանութիւն եւ թէ մեծութիւն եւ թէ զինչ եւ իցէ: Մի ի վնաս ծառայակցացն եւ մի յանձին կորուստ: Նմին իրի իսկ զերկո-*

---

[1] Ա > ոչ ասաց, թէ ... գիտէք
[2] Բ չասէ
[3] Բ կասկածանք
[4] Բ այսորիկ
[5] Բ քնածիցն
[6] Բ յանձին
[7] Ա > զի իւրաքանչիւր զինչ եւ ունիցի

ՏԱՆՈՒՏԷՐ ՈՒ ՏՆՏԵՍ

Մատթ. ԻԴ. 42-51

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Արթուն լերուք, [զի] ոչ գիտեք յորո՛ւմ ժամու Տէրն ձեր գայ (ԻԴ. 42):

Զայս ոչ միայն վասն կատարածի աշխարհիս ասաց, այլ եւ վասն կատարածի իւրաքանչիւր մարդկան. **«արթուն լերուք»** *գործովք բարւոք, զի ոչ գիտէք զաւր վախճանի ձերոյ, յորժամ կոչէ Տէրն ձեր զոգիդ ի մարմնոյդ:*

Ո՛վ իցէ արդեւք ծառայ հաւատարիմ եւ իմաստուն (հմմտ. ԻԴ. 45):

Հաւատք եւ իմաստութիւն, յորժամ որպէս առաքինութիւն տեսանի, զհետ երթան միմեանց, այսինքն՝ հաւատարիմն եւ իմաստութիւնն. եւ որ իմաստուն, նաեւ հաւատարիմ. իսկ որ ունի զիմաստութիւնն որպէս խորամանկութիւն, մարթի ոչ հաւատարիմ լինել այնպիսոյն, որք են իմաստունք հանգոյն աւձին եւ տնտեսին անիրաւութեան. արդ, որ հաւատարիմ է եւ իմաստուն, որպէս Պաւղոս եւ Պետրոս եւ նոցին նմանողք, որք տային զկերակուր զվարդապետութիւնս իւրեանց ի ժամու արժանաւորաց, զայնպիսի ծառայս իւր, զոր կացոյց ի վերայ տան իւրոյ աշխարհիս, եկեալ Քրիստոս ի գալստեան իւրում, երանելիս ցուցանէ:

Իսկ եթէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում (հմմտ. ԻԴ. 48):

Ապա եթէ ոչ իցէ ծառայն **«իմաստուն եւ հաւատարիմ»**, *այլ չար եւ յիմար, եւ արասցէ չարութեան եւ յիմարութեան գործս, եկեալ Տէր, յերկուս հատցէ զնա:*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Արթուն լերուք, զի ոչ գիտէք (հմմտ. ԻԴ. 42):

Ոչ ասաց, թէ՝ «Ոչ գիտեմ», այլ թէ՝ **«Ոչ գիտէք»**[1], *քանզի կասկածագոյնս կամի լինել նոցա ցանկ, յայտարարեալ, թէ նմին իրի չասաց, նոցա զայն:*

Զայս գիտասջիք. եթէ գիտէր տանուտէրն՝ յորում պահու գող գայ, հսկէր եւ չտայր ական հատանել (հմմտ. ԻԴ. 43):

Յայն սակս չասաց[2] *զաւրն եւ զժամ, զի արթունք լինիցին. «Յորժամ չունիցիք,- ասէ,- ակն, յայնժամ,- ասէ, - եկեսցէ»: Եւ զոր ասեն այսպիսի ինչ է, թէ գիտէին բազումք, թէ երբ մեռանիցին, ընդ այն ժամանակս եւեթ պնդէին, վասն որոյ եւ զիւրաքանչիւր վաղճան կենաց անյայտ արար: Եւ թուի ինձ, թէ եւ զծոյլսն պատկառեցուցանէ, թէ ո՞րչափ ընչիցն փոյթ անձին ունին կասկածք*[3] *ի գողոցն, եւ այնչափ եւս անգամ չտանին դարման ոգւոց իւրեանց, նոքա յորժամ կասկածիցեն, հսկեն եւ չտան ինչ ի ներքուստ գողոցն հանել: Եւ դուք, թէպէտ եւ գիտէք, զի գալոց է, եւ արդարեւ իսկ գալոց է, եւ չկայք արթունք եւ չլինիք պատրաստականք, այլ անպատրաստ գնալ ասի, վասն այնորիկ*[4] *ի սատակումն քնէածիցն*[5] *գալոց է աւրն: Զոր աւրինակ եւ նա, թէ գիտէր, փախչէր, նոյնպէս եւ դուք, թէ [է]իք պատրաստք, ապրէիք: Եւ քանզի զդատաստանէն յուշ արար, այնուհետեւ առ վարդապետս շրջէ զբանն եւ զտանջանաց եւ զպատուոց խաւսի:*

«Ո՞վ իցէ, - ասէ, - հաւատարիմ ծառայ եւ իմաստուն, զոր կացուցէ տէր ի վերայ տան իւրոյ» (ԻԴ. 45):

Եւ զայս ո՛չ միայն վասն ընչից ասէ, այլեւ վասն բանին եւ վասն զաւրութեան եւ վասն ամենայն տեսութեան, որում իւրաքանչիւր ինչ ումէք յանձն[6] *լինիցի, զի իւրաքանչիւր զինչ եւ ունիցի*[7]*, ի հասարակաց աւգուտ պարտի ի կիր արկանել, եթէ իմաստութիւն իցէ եւ թէ իշխանութիւն եւ թէ մեծութիւն եւ թէ զինչ եւ իցէ: Մի ի վնաս ծառայակցացն եւ մի յանձին կորուստ: Նմին իրի իսկ զերկո-*

---

[1] Ա > ոչ ասաց, թէ ... գիտէք
[2] Բ չասէ
[3] Բ կասկածանք
[4] Բ այսորիկ
[5] Բ քնածիցն
[6] Բ յանձին
[7] Ա > զի իւրաքանչիւր զինչ եւ ունիցի

սեանն պահանջէ ի նմանէ, «**հաւապարիմ**» *կոչէ զնա, զի ոչ խորեաց ինչ եւ ո՛չ ընդ վայր զտէրունիսն ծախեաց: Եւ* «**իմասպուն**», *զի գիտաց յաւգուտ մատակարարեալ զտուեալսն, նաեւ երկոցունց իսկ պետք են մեզ՝ եւ չգողանալ զտէրունիսն, եւ յաւգուտ մատակարարել:*

«Ամէն ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուցէ զնա» (ԻԴ. 47):

Զի՞նչ այնմ պատուոյ զուգական կայցէ, որ բան զայն մեծարանսն յանդիման կացուցէ[1]*՝ զերանութիւնսն, զբարութիւնն, յորժամ երկնից թագաւորն, որ զամենայն ի ձեռին ունի, զմարդ ի վերայ ընչից իւրոց կացուցանիցէ: Վասն որոյ եւ* «**իմասպուն**» *իսկ կոչէ զնայ, զի բարուոք միտք ի փոքունց մեծամեծաց արժանի առնեն. զգաստացար աստ՝ երկնից արքայութեանն արժանի լինելոց ես:*

Ապայ թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում. «Յամէ տէր իմ ի գալ» (հմմտ. ԻԴ. 48):

Եթէ ասիցէ ոք՝ տեսե՞ր՝ որպիսի խորհուրդք մտին վասն յայտ աւուրն չլինելոյ, քանզի ասէր՝ «**Տէր իմ յամէ**», *ասասցուք առ այնս, թէ ոչ վասն յայտնի լինելոյ աւուրն, այլ վասն չարութեան ծառային, ապա թէ ոչ՝ յիմաստունն եւ ի հաւատարիմն ընդէ՞ր ոչ մտին յայսպիսի միտք: Ասես, եթէ՝* «**Յամէ տէր իմ ի գալ**», *ո՞ հեգդ*[2] *եւ թշուառականդ ապաքէն ունիցիս ակն գալոյ, ընդէ՞ր չհոգայցես: Եւ այսու ուսանիմք, թէ յամէ իսկ ոչ, եւ այս ոչ եթէ տէրն, այլ չար ծառային մտաց է վճիռս: Վասն այնորիկ իսկ պատուհասի:*

Եւ սկսանի հարկանել զծառայակիցսն իւր (ԻԴ. 49):

Թուի ինձ, թէ զայս զթշնամանողացն եւ զագահիցն ասիցէ՝ ակնարկելով, եւ բազում ամբաստանութիւն ցուցանէ, յորժամ զոր կերակրելն առեր հրաման՝ փոխանակ կերակրելոյն գան հարկանես: Թուի ինձ, թէ զբարեկեցացն ակնարկիցէ զայս, քանզի եւ ընդ բարեկեցութեանն մեծամեծ տանջանք կան:

Զի ուտիցէ եւ ըմպիցէ ընդ արբեցողս (ԻԴ. 49):

[1] Բ կացուցանել կարասցէ
[2] Ա հեգք

Զոր կորստութենէն գուշակէ. ո՛չ վասն այնորիկ առեր, զի ի բարեկեցութիւն վատնիցես, այլ զի յողորմածութիւն ծախեսցես, զի թէ զքո ի՞նչ ունիցիս, թէպէտ եւ յարդար վաստակոց իցէ, կամ ի հայրենի ժառանգութենէ ստացար: Վասն աղքատացն հաւատացաւ քեզ այն, յանաւթ ետ քեզ զայն, զի այնու առաքինանայցես[1]*. արդ, տուր զնորայն նորա: Վասն որոյ եւ զցասումն յայտ արարեալ՝*

Կտրել զնա ըմդ մէջն (հմմտ. ԻԴ. 51) *հրամայեաց:*

Նմին իր[ի] եւ զսէրն ծանուցիչ իւրոց աշակերտացն արար: Քանզի ամենեւին հարկ է այնմ, որ սիրեն, զայնմանէ, զոր սիրիցեն, հոգալ: Եւ արդ, զայն ճանապարհ կալցուք, քանզի այն իսկ է, որ յերկինս տանի եւ Քրիստոսի նմանողս առնէ եւ Աստուծոյ, ըստ կարի մերում:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Արթո՛ւն կացէք, զի ոչ գիտէք՝ յորում ժամու Տէրն ձեր գայ (Մատթ. ԻԴ. 42):

Զայս կամ վասն կատարածի աշխարհիս ասաց, կամ վասն իւրաքանչիւր ուրուք վախճանի: Եւ արթուն ո՛չ ի քնոյ հրամայէ լինել, զի այս անհնար է՝ որք ընդ մարմնոյ կապեալ են եւ հաղորդեալ կերակրոյ, այլ բարի գործովք պատրաստ լինել, ասէ, եւ սպասել միշտ գալստեան նորա, «**զի ոչ գիտէք՝ յորում ժամու Տէրն ձեր գայ**»*: Ո՛չ ասաց, թէ՝ ոչ գիտեմ, այլ թէ՝ ոչ գիտէք, որպէս զի ցուցցէ, թէ վասն այսորիկ ոչ ասեմ զաւրն, զի արթուն լինիջիք: Եւ արթնութիւնն կրկին է, որպէս եւ քունն. ի զարթման գոլով եւ ոչ գործել, զի են ի քուն՝ որ յաստիս միայն հային, եւ են, որ ի հանդերձեալն հային, սակայն ծուլացեալ զհանդերձելոյն՝ ոչ գործեն: Արդ, պարտ է ըստ երկուցս արթուն լինել, զանտիսն նկատել եւ ի ճգունս անխոնջ վաստակել եւ այսպիսի գոլով՝ կացէք կասկած ցանկ, որպէս գրէ Պաւղոս՝* «Մարան աթայ» (Ա Կոր. ԺԶ. 22)*, այսինքն՝ Տէր գալոց է, զգո՛յշ կացէք:*

Զա՛յն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն՝ յորում պահու գող գայ, հսկէր՝ եւ ոչ տայր թոյլ ական հատանել զտանն իւրոյ (ԻԴ. 43):

[1] Բ առաքինայցես

Այսինքն՝ յաշխարհական իրաց առէք ապացոյց, այս է՝ «զայն գիտասջիք», ըստ առաքելոյ, թէ՝ «Զայն խորհեսցի» (Բ Կոր. Ժ. 7, 11)*:* **Զ«պահն»** *կրկի՛ն իմա. կամ վասն հասարակաց, կամ մասնաւոր կատարածի. եւ* **«զող»** *վասն յանկարծութեանն ասէ եւ ծածուկ ի մարդկանէ լինելոյն՝ ըստ այնմ, թէ՝* «Այր Տեառն իբրեւ զգող եկեալ է» (հմմտ. Բ Պետր. Գ 10, Ա Թես. Ե 2)*: Քանզի, թէ գիտէին բազումք զաւրհաս մահու իւրեանց, ընդ այն ժամանակս եւեթ պնդէին, իսկ այժմ, զի անյայտ մնաց, արթուն լինիցին, որպէս տանուտէրն, ասէ, թէ զժամանակ գալոյ գողոյն գիտեցէր, յայն ժամանակին միայն հսկէր եւ ոչ տայր վնասել տան իւրոյ, իսկ որովհետեւ զայն ժամանակ ոչ գիտիցէ, պարտի զգիշերն ողջոյն արթուն լինել, զի մի՛ գողանայցեն զինչս նորա: Ահա եցոյց զշահն, թէ է՛ր վասն ոչ յայտնեաց զաւրն:*

Դարձեալ՝ եւ զծոյլսն պատկառեցուցանէ այսու, թէ նոքա ո՛րչափ վասն ընչիցն հոգան եւ կասկածեն ի գողոց, եւ այն վասն երկբայ իրացն, քանզի բազում անգամ պատահէ ոչ գալ գողոց, իսկ դուք գիտէք, զի գալոց է, եւ ոչ կայք արթունք: Եւ վասն ական հատանելոյն ասացեալ է յառաջագոյն: Դարձեալ՝ գող է սատանայ, որ միշտ գողանայ զմեզ ի Տեառնէ, քանզի սպրդելով մտանէ ի միտս մեր՝ զայսաւրն իւր հայցելով եւ զվազիւն Աստուծոյ նուիրելով, այլեւ զչարն բարի դունելովն գողանայ ի մէնջ, զոր պարտ է տանուտեառն, մտացն ասեմ վերակացուի գիտել եւ հսկաւղս լինել ի ձեռն Գրոց վարդապետութեան եւ միշտ ընդդէմ դնել խորհրդոց նորա, զի մի՛ հատցէ ի ձեռն խորհրդոց զտունս մեր յաւարի, այսինքն՝ զմարմինս ի պէսպէս ախտիցն լրմունս:

Վասն այսորիկ եւ դո՛ւք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք, գայ Որդի մարդոյ (ԻԴ. 44)*:*

Վասն որո՞յ իրաց եղերուք պատրաստք: Վասն ժամո՛ւն ասէ, զի ոչ գիտիցէք. քանզի յեղակարծում ժամանակի հասցէ ի վերայ, զի մի՛ խռովիցիք, ըստ մարգարէին, առանց պատրաստութեան լինել (տե՛ս Ես. ԺԳ. 6-9, ԻԴ. 19)*, որպէս քնած էին հասանէ սատակումն, վասն զի առանց պատրաստութեան են՝ ըստ յիմար կուսանացն* (տե՛ս Մատթ. ԻԵ. 1-13)*. բայց պատրաստութիւն զգործոցն ասէ, զի մաքուր եւ կազմ լինիցին վարուք: Նմանապէս եւ մահուանն պարտ է սպասել, զի ոչ ոք գիտէ զժամանակ մահուանն իւրոյ, որ է նշանակ ընդհանրական փոփոխմանն:*

Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն, զոր կացոյց տէր իւր ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր ի ժամու (ԻԴ. 45)*:*

Նախ զնեղութեանցն յուշ արար, եւ ապա զայն փութանակի գալստեամբն մխիթարեաց: Զի մի՛ կարծիցեն, թէ գալուստ նորա ամենեցուն է փրկութիւն, այսուհետեւ վասն հաւատոցն եւ գործոցն վարդապետէ: Կամ զի ասաց՝ երկու յանդի եւ յերկանի եւ ի մահիճս, եւ մին ի սոցանէ առեալ, եւ միւսն՝ թողեալ, ասէ այժմ, թէ ո՛յք են առաքեալքն, եւ ո՛յք՝ թողեալքն: **«Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն»**. **«Իսկն»** *ստուգութեան է տարացոյց, եւ* **«ո՞վն»**՝ *ո՛չ հարցման, այլ հիացման աւրինակ՝ ըստ այնմ.* «Ո՞վ է, որ դիմեալ գայ յԵդովմայ» (Ես. ԿԳ. 1)*, եւ թէ.* «Ո՞վ է սա, որ եկանէ յանապատէ» (հմմտ. Երգ Գ. 6)*, որպէս թէ ասել՝ որ ճշմարիտ հաւատարիմ եւ իմաստուն ծառայ է, զարմանալի է բազմաց: Եւ է այս նախ առ վարդապետսն եւ որ ունին բանի զաւրութիւն, եւ առ իշխանսն հոգեւորս եւ մարմնաւորս, միանգամայն եւ առ ընչեղս, եւ ապա իւրաքանչիւր ումեք, որ ունիցի առանձին շնորհս, յայտ արար: Արդ, ի սոցանէ՛, որ ոք գտանի հաւատարիմ եւ իմաստուն, քանզի ծառայք ամենեքեան ըստ արարչութեանն, որպէս ասէ Դաւիթ (տե՛ս Սաղմ. ՃԺԸ. 91), միանգամայն ըստ տնտեսութեանն՝ ըստ առաքելոյ, թէ՝* «Ո՛չ էք անձանց տեարք, քանզի գնոց գնեցայք» (Ա Կոր. Զ. 19-20)*: Բայց աստ ծառայ՝ զի զկամս տեառն իւրոյ առնիցէ, լինելով* **«հաւատարիմ»** *եւ* **«իմաստուն»**. *Հաւատարիմ, զի ոչ խորէ եւ գողանայ կամ ընդվայր զտերունիսն ծախէ, իսկ իմաստուն՝ զի յաւգուտ այլոց գիտիցէ մատակարարել եւ ո՛չ ի վնաս ծառայակցաց: Քանզի լինին բազումք եւ ո՛չ իմաստունք, որպէս այն, որ զմի քանքարն էառ եւ ոչ յայլս իմաստութեամբ աճեցոյց, եւ են, որք յայլս տնաւրինեն եւ զանձանց անփոյթ առնեն: Վասն այսորիկ ասաց՝* **«հաւատարիմ ծառայ եւ իմաստուն»:**

Կամ՝ **զ«հաւատարիմն»** *վասն հաւատոյն իմա, իսկ* **«իմաստունս»**՝ *սակս գործոյն, քանզի որ հաւատայ եւ գործէ, կատարեալ է, ապա թէ ոչ՝ երկոքեան մեռեալ եւ դատարկք են՝ ըստ առաքելոյ* (տե՛ս Յակոբ Բ. 14-26)*: Կամ՝ հաւատք, որ է պարզամտութիւն՝ ըստ այնմ, թէ՝* «Պարզամիտն հաւատայ ամենայն բանի» (հմմտ. Առակ. ԺԴ. 15)*, իսկ իմաստութիւն՝ առանց խորամանկութեան եւ նենգութեան խառնեալ ընդ միմեանս է գեղեցիկ առաքինութիւն, որպէս այլուր ասաց.* «Եղերուք խորագետք իբրեւ զաւձս եւ միամիտք իբրեւ զաղաւնիս» (Մատթ. Ժ. 16)*, որպիսի*

ոք էին Պետրոս եւ Պաւղոս եւ այլք նմանաւղք նոցին. քանզի վասն աղաւնի գոլոյն վչտացն համբերէին եւ ի վարդապետութենէն ոչ կային ի բաց եւ վասն իմաստութեանն, ըստ ժամանակի եւ տեղւոյ եւ երեսաց, զհոգեւոր կերակուրն ջամբէին: «Զոր կացոյց,- ասէ,- տէր իւր ի վերայ ծառայից իւրոց». Ղուկաս «գերդաստանաց» ասէ (Ղուկ. ԺԲ. 42), *որ է ընչից եւ ստացուածոց, եւ զայս յայտ առնեն զանազան ասացեալքս, թէ ո՛չ տեարք ծառայիցն են եւ ո՛չ ընչիցն, զոր սեփհականեն, այլ հազարապետք եւ վերակացուք նորայնոցն, յորոց խնդիր լինելոց է՝ ըստ Պաւղոսի.* «Խնդիր է ի մէջ հազարապետաց, եթէ ոք հաւատարիմ գտցի» (Ա Կոր. Դ. 2)*:*

Երանի իցէ ծառային այնմիկ, զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս: Ամէ՛ն ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուցցէ զնա (ԻԴ. 46-47):

Զի՞նչ այսմ պատուոյ հանգոյն կացցէ, կամ ո՞ր բան զմեծարանս զայս յանդիման կացուցանել կարէ, զոր ամենեցունց Տէրն ի գալստեանն իւրում յերանութիւնսն գրէ, քանզի այս է առեալն յանդէն եւ յերկանէն: Բայց ո՛չ սոսկ առնիցէ զհրամայեալսն, այլ այնպէս, որպէս ասացի, քանզի բազումք ոչ առնեն եւ այլք թէպէտ առնեն, այլ կամ ի փառս մարդկան, կամ ի հպարտութիւն անձանց: Արդ, զի առնեն լինիցի, եւ ի փառս Աստուծոյ առնեն, եւ յորժամ զամենայնն առնիցեն, ասիցեն, թէ՝ «Ծառայք անպիտանք եմք» (Ղուկ. ԺԷ. 10). *ա՛յս է* **«այնպէսն»***: Յայնժամ* **«ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուցցէ»***: Տես, զի սակաւ զգաստութիւնն ասա յո՛րպիսի թագաւորութիւնս հանէ, իբր այն.* «Թէ ի սակաւուն հաւատարիմ է եւ ի բազմին հաւատարիմ է» (հմմտ. Ղուկ. ԺԶ. 10)*: Կամ ասա որպէս զՄոսէս, որ ընչից Աստուծոյ, այս է՝ ի վերայ ստացուածոց նորա հրամանատու կարգեցաւ՝ որպէս զԱստուած, եւ կամ անդ՝ զոր ինչ ունի Աստուած, ժառանգէ եւ նա՝ թագաւորութիւն, անմահութիւն, պայծառութիւն, վայելչութիւն, մշտնջենաւոր ցնծութիւն, անվախճան հանգիստ եւ այլ սոյնպիսիս:*

Ապա թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում. «Տէր իմ յամէ զգալ» (ԻԴ. 48):

Այս նոքա են, որ թողան, եւ զի մի՛ ակնառութեամբ կարծիցի թողուլն, խայտառակէ զչարիսն: Եւ **«չար»** *վասն այն կոչէ, զի անհաւատ է եւ յիմար, եւ յիմարութիւն՝ ըստ այնմ, զի ոչ խորհի ոչ գալ, այլ թէ՝* «**յամէ զգալ**»*, յորմէ ուսանիմք, թէ ըստ կարծեաց նորա՝ յամէ, իսկ ըստ ճշմարտութեանն՝ եւ ո՛չ յամէ իսկ: Իսկ թէ ասիցէ ոք, թէ այսպիսի խորհուրդք վասն ոչ գիտելոյ զաւրն մտին խորհի, ասասցուք, թէ ո՛չ աւուրն անյայտութիւն, այլ ծառային չարութիւնն եղեւ պատճառ, ապա թէ ոչ՝ յիմաստունն եւ ի հաւատարիմն ընդէ՞ր ոչ մտին այսպիսի խորհուրդք, այլ ի չարն, թէ՝* «**տէր իմ յամէ զգալ**»*: Իսկ զի՞նչ այն, թէ՝* «**ի սրտի իւրում**»*. ցուցանէ, թէ բազումք երեւին յաչս մարդկան առաքինիք, այլ մտաւք հայհոյիչք են, զոր եւ Աստուած գիտէ, որ զերիկամունսն քննէ* (տե՛ս Սաղմ. Է. 10, Երեմ. ԺԱ. 20)*, եւ յաղագս այնորիկ դատէ:*

Եւ սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր (ԻԴ. 49):

Տես, թէ խորհուրդք սրտին յո՛րպիսի ապիրատութիւնս ձգեաց, յորմէ ուսանիմք, թէ աղբիւր չարութեան գործոյն սիրտն է՝ ըստ Տեառն բանին (Մատթ. ԺԵ. 19)*, որպէս ասէ եւ Դաւիթ, թէ յորժամ անզգամեցաւ ի սրտի իւրում, ապականեցաւ գործով* (Սաղմ. ԺԳ. 1)*: Իսկ հարկանել ծառայակցացն՝ կրկին չարութիւն ցուցանէ եւ երեքկին, նախ՝ զի հարկանէ, եւ այն՝ զծառայակիցսն, եւ զորս կերակրել հրաման էառ՝ զնոսին գանէ, որ է յոյժ չարութիւն, եւ* «**հարկանել**» *զթշնամանելն ասէ եւ զագահելն:*

Ուտիցէ եւ ըմպիցէ ընդ արբեցաւղս (ԻԴ. 49):

Դարձեալ եւ ա՛յս երկպատիկ չարութիւն, զի զոմանց յափշտակէ եւ զայն ընդ շռայլս վատնէ, որ նշանակէ զբարեկեցիկսն եւ զորկոբաժէտսն, որք մեծամեծ տանջանաւք տանջին, որպէս մեծատունն՝ ո՛չ ըստ այնմ, յոր վայելեաց, այլ զի եւ ոչ յողորմութիւնն ծախեաց, թէպէտ յարդար վաստակոց եւ կամ թէ ի հայրենական ժառանգութենէ ունէր զմեծութիւնն. ապա զի՞նչ արասցեն՝ որք այլոց արարովք շուայտին:

Այլ դու եկ ինձ իմա զկարգս հոգւոյն մասանց, թէ ո՛րպէս առ հասարակ չարացան ի ծառայն չար, որ մարմնոյ ծառայեաց. քանզի նախ զբանականն ախտացոյց՝ թիւր խորհելով ի սրտին եւ զկնի այնմ՝ զցասմականն, որով ի հարուածս ծառայակցացն եկն, յետ որոյ եւ ցանկութեամբն վատնեցաւ՝ ուտելով եւ ըմպելով ընդ արբեցաւղս, որոյ լծակից գիտեմ զվաւաշոտս եւ զպէսպէս օճրա-

գործութիւնս: Եւ այսպէս զբնական ուղղութիւնն ի միում վայրկենի կործանեաց անմտութեամբն տնտեսի յաւժարամտութիւնն, եւ գովի, զի դարմանէ զծառայսն տեառն ի ձեռն հակառակացն մեռելութեան, քանզի նոցա ապականութիւն՝ կերակուր եւ բարեկարգութիւն լաւացն է: Եւ չարախաւսի չար ծառայն, որ յաղագս ընդ արբեցաւղսն լինելոյ վիրաւք տանջէր զԱստուծոյ ծառայսն, վասն զի վէրք են ճշմարտապէս ընդդէմ առաքինութեանն՝ չարութիւնն, որպէս եւ Դաւիթ ի քաղաքի Տեառն սպանանէր զմեղաւորս (տե՛ս Սաղմ. Ճ. 8), *այսինքն՝ ի քաղաք հոգւոյն զխորհուրդ չարութեանն, որ գործաւնեայք են անաւրէնութեանն, սատակէ, ուստի կեանք լինի վեհագունիցին՝ ըստ այնմ. «Ես սպանանեմ եւ ես կեցուցանեմ»* (Բ Աւր. ԼԲ. 39):

Գայցէ տէր ծառային այնորիկ յաւուր, յորում ոչ ակն ունիցի, եւ ի ժամու, յորում ոչ գիտիցէ, եւ կտրեսցէ զնա ընդ մէջ եւ զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց (ԻԴ. 50-51):

Թէպէտ բազում անգամ վրէժխնդիր լինի Աստուած արքունական դատողութեամբ ի մարմնական կենցաղս այնպիսեացն, զոր «գալուստ» ասէ, որպէս բազմաց պատահեաց՝ չար եւ վատ ծառայից, բայց մեք ըստ կարգի բանիս ի հանդերձեալն իմանամք զասացեալս, որ ոչ միոյ, այլ հասարակաց չարաց ծառայից լինելոց է: «Գայցէ,- ասէ,- տէր ծառային այնորիկ». եզակի դնէ՝ կամ թէ ամենեքեան միապէս չարք գտան ի տէրունիսն, թէպէտ յիւրաքանչիւր վարս ի հոգեկանս կամ ի մարմնականս չարացան կամ թէ զի մի՛ ոք կարծիցէ՝ որպէս աստ, նոյնպէս եւ անդ սպրդեալ դաւղիցի, յատուկ իւրաքանչիւր ումեք դատաստան լինելոց է: «Յաւուր յորում ոչ **ակն ունիցի, եւ ի ժամու յորում ոչ գիտիցէ»:** *Յեղակարծում ժամու, ասէ, հասանէ, մինչդեռ ի մանկութեան գոլով աւուր կամ ի փարթամութեան լինելով ժամու՝ ոչ ակն ունէր վրէժխնդրութեան եւ տանջանաց, այլեւ ոչ էր պատրաստեալ զանձն բարի գործովք՝ գալստեան նորա, եւ կամ մտածութեամբ միայն: Տես եւ զայն, զի զանգիտութիւնն մեզ միշտ դնէ, զի արթունք լինիցիմք:*

«Եւ կտրեսցէ զնա ընդ մէջ եւ զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ». *առանց հարցաքննութեան, քանզի գործք նորա դատեն զնա յայնպիսի ցասումն արկանել: Իսկ զի՞նչ ընդ մէջ հատանելն իցէ. կամ*

թէ զիւր ինքեան զչնորհսն առնուցու՝ զուսմանց, կամ զարուեստից, կամ զիշխանութեանց՝ հոգեւորաց եւ մարմնաւորաց, զի որպէս թագաւորք յորժամ զառ ի յինքեանց պատուեալն ըստ ապերախտութեանն դատեն, նախ մերկանան զպարգեւսն եւ ապա տանջեն, այլեւ զպատկերին պատիւն առնու եւ իբր զանբանս տանջէ, զի ոչ ի բարին զխորհուրդն, այլ ի չարն ծախեաց, որպէս ոք ումեք սուր տայցէ վասն պիտոյից, եւ նա արիւն հեղու, իսկ նա ոչ միայն զսուրն առնու, այլեւ զնա սպանանէ: Կամ թէ՝ հոգին եւ մարմինն տանջի՝ ըստ առաքելոյ. «Իւրաքանչիւր մարմնով ժառանգէ՝ եթէ բարի եւ եթէ չար» (հմմտ. Բ Կոր. Ե. 10), *քանզի հաւասարք էին ի չարքն, զոյգ եղիցին եւ անդ, ուր լալ աչացն է եւ կրճել ատամանցն. ա՛յս է «մէջն». քանզի երկու բաժինն տանջի, եւ դատաստանն որպէս մարմնոյն, այսպէս եւ հոգւոյն հատանի: Իսկ «կեղծաւոր» կամ զնոյն ինքն զբանսարկուն ասէ, որ խաւար է եւ լոյս կերպարանի, կամ զայլս ի մարդկանէ, որպիսիք էին դպիրքն եւ փարիսեցիքն: Նոցա տանջանացն բաժանակից առնէ, ասէ, ո՛չ վայրապար, այլ քանզի եւ ինքն կեղծաւոր էր, զի քարոզէր այլոց զգալուստն եւ կամ զմահն եւ ինքն ի սրտին խորհէր յամել զգալն եւ զմահն:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Ո՞վ իցէ հաւատարիմ եւ իմաստուն տնտես (տե՛ս Մատթ. ԻԴ. 45):

Այս ԺԴ. (14) առակն է արքայութեան եւ կուսանացն՝ ԺԵ. (15) եւ քանքարացն՝ ԺԶ. (16):

Բովանդակ ամենայն առակք ԺԶ. (16) են, յորժամ զմաճն թուեսցես: Ապա թէ ոչ՝ հնգետասանք են: Եւ կարդ Գ. (3) առակացս հայի ի կարդ ագարակի եւ մահճաց եւ երկանի, որ նախասացաւ:

Եւ Դ. (4) ինչ ուսուցանէ.

Ա. Նախ՝ զտնտեսն ամենայն բանի եւ ընչից՝ իշխանութեանց, արուեստից եւ այլն:

Բ. Երկրորդ՝ զգալ դատաւորին:

Գ. Երրորդ՝ զպատիւ բարեաց:

Դ. Չորրորդ՝ զպատիժ չարեաց:

Հարց. Զի՞նչ է «հաւատարիմն» (ԻԴ. 45):

Պատասխանի. Ա. Նախ, որ ոչ գողանայ:

Բ. Երկրորդ՝ որ ոչ ընդ վայր կորուսանէ, զի միապէս չար է եւ պինդն եւ շռայլն:

Հարց. Զի՞նչ է «**իմաստունն**» (ԻԴ. 45):

Պատասխանի. Ա. Նախ՝ որ ընտրէ զդէմքն:

Բ. Երկրորդ՝ զտեղին:

Գ. Երրորդ՝ զժամանակն:

Դ. Չորրորդ՝ զբարին, եւ ապա ի գործ ածէ:

Հարց. Զի՞նչ է բարին:

Պատասխանի. Ա. Նախ՝ որ հասարակաց հաղորդէ:

Բ. Երկրորդ՝ որ ինքեան եւ այլոց է աւգուտ, որպէս յայտ է ի լուսաւորս, յամպս, ի բոյսս եւ յայլն: Իսկ ընդդէմ այսմ չար է.

Ա. Նախ՝ որ անհաղորդն է:

Բ. Երկրորդ՝ որ վնաս է ինքեան եւ այլոց:

Հարց. Զի՞նչ է «**ամենայն ինչքն**» (ԻԴ. 47):

Պատասխանի. Այն է, որ ասաց. «Ամենայն, որ ինչ քո է, իմ է» (հմմտ. Յովհ. ԺԷ. 10)*: Զայն խոստանայ բարեաց: Եւ չորիւք յատկանայ անդ ի բարութիւնն.*

Ա. Նախ՝ զի բոլոր է, եւ այս՝ մասնաւոր:

Բ. Երկրորդ՝ երկնային, եւ այս՝ երկրային:

Գ. Երրորդ՝ անմարմին, եւ այս՝ մարմնաւոր:

Դ. Չորրորդ՝ անանց, եւ այս՝ անցաւոր:

Հարց. Տէր իմ յամէ ի գալ (ԻԴ. 48):

Պատասխանի. Կրկին է գալն.

Ա. Նախ՝ մահուամբ գայ:

Բ. Երկրորդ՝ դատաստանաւ: Այս՝ մասնաւոր, եւ այն՝ հասարակ:

Հարկանէ զծառայս (ԻԴ. 49):

Որ բանիւ թշնամանէ զայլս, կամ որ զհարկն պահանջէ տանջանաւք, ցուցանէ զայն, որ ի բարեկեցութեան կայ՝ ուտելով եւ ըմպելով:

Հարց. Զի՞նչ է «**ընդ մէջ կտրելն**» (հմմտ. ԻԴ. 51):

Պատասխանի. Չորս է իմացումն.

Ա. Նախ՝ որ զհոգի եւ զմարմին բաժանէ:

Բ. Երկրորդ՝ զհոգին ի կայեանս անհաւատիցն դնէ:

Գ. Երրորդ՝ ի դատաստանին ի ձախակողմ բաժանէ:

Դ. Չորրորդ՝ ի կենդանեաց հատեալ ի հուրն առաքէ:

Հարց. Վասն է՞ր:

Պատասխանի. Վասն չորից.

Ա. Նախ՝ զի անահաւատ եղեւ:

Բ. Երկրորդ՝ զի հարկանէ զծառայս:

Գ. Երրորդ՝ զի որ կորստութեամբ հեշտանայր:

Դ. Չորրորդ՝ զի անհաղորդ էր աղքատաց:

Մարկ. ԺԳ. 33-37

ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՒՈՐՑԻ

Զգոյշ եղերուք, հսկեցէք եւ կացէք յաղաւթս, զի ոչ գիտէք, երբ ժամանակն իցէ (Մարկ. ԺԳ. 33):

Կարի իմն սիրելի եւ ցանկալի է մարդկան, միշտ եւ հանապազ գիտաւղ եւ ծանաւթ լինել անյայտից եւ ծածկեցելոց իրաց, եւ այս ի յանկատար եւ ի յանհաստատ մտաց պատահէ լինել, այլեւ ի հոգ յանձին չունելոյ եւ ի դատարկութենէ, որպէս տգէտք ի մանկտւոյ չդադարեն թախանձել զծնաւղս եւ զդայեակս ի հարցուածոց, թէ զի՞նչ է այս եւ կամ զինչ՝ այն: Ուստի եւ բազումք ի կատարելոցն հասակաւորք տղայք են բարուք, ի վերա հասանել վախճանին ժամանակի փութան:

Եւ զի՞նչ զարմանք են, եթէ ընդ հասարակաց մարդկան այսպիսի անցք անցանեն, զի եւ սուրբ առաքեալքն իսկ գլխովին յաճախագոյն զսոյն կրեցին, որպէս ի սկիզբն այսր Աւետարանի մատուցեալ հարցանէին ցՔրիստոս. «*Ասա մեզ՝ ե՞րբ լինիցի այս, եւ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանդ եւ վախճանի աշխարհիս*» (Մատթ. ԻԴ. 3)*: Եւ յետ յարութեանն ի մեռելոց ասէին, թէ՝* «*Ասա՛ մեզ ի ժամանակի աստ յայսմիկ հասուցանելոց իցե՞ս զարքայութիւնն Իսրայէլի*» (հմմտ. Գործք Ա. 6)*, իսկ յետ զՀոգին Սուրբ ընդունելոյ ոչ միայն ինքեանք չհարցանէին, այլեւ զայլս, որք զնոյն ախտանային, կարճէին, որպէս գրէ Պաւղոս առ Թեսաղոնիկեցիսն, թէ՝* «*Վասն ժամուց եւ ժամանակաց եղբարք չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ*» (Ա. Թես. Ե. 1)*.* «*Զի դուք ինքնին ստոյգ գիտէք, թէ աւր Տեառն, իբրեւ զգող գիշերոյ, այնպէս հասանէ*» (Ա. Թես. Ե. 2):

Իբրեւ զաւելորդ եւ զանաւգուտ խնդիր, արգել, զի չասաց, թէ ոչ ոք գիտէ, եւ ոչ ումեք յայտնեցաւ, այլ թէ՝ «Չէ ինչ պիտոյ գիտել

ձեզ», *որովք եցոյց, թէ ինքն գիտէ, որպէս եւ աստ Քրիստոս չասաց, թէ ոչ գիտեմ, այլ թէ՝*

«Ոչ գիտէք՝ երբ ժամանակն իցէ» (ԺԳ. 33):

Եւ արդ, ասա, զի՞նչ աւգուտ իցէ. համարեաց, եթէ յետ քսան ամի լինի վախճան կամ յետ երեսնոյ եւ կամ հարիւրոյ, զի՞նչ շահ անտի մեզ գործէր, ո՞չ ապաքէն իւրաքանչիւրոյ վախճան իւրոյ կենացն կատարած է, զի՞ քննես զհասարակաց վախճանէն:

Այլ, զոր ինչ յայլսն կրեմք, զանձանց թողումք եւ զհասարակաց քննեմք եւ հոգամք, եթէ այս անուն պոռնիկ է եւ շնացաւղ եւ միւսն՝ ագահ եւ յափշտակաւղ. եւ զիւրոցն ոք փոյթ յանձին չունի: Նոյնպէս եւ աստ թողեալ ընդ իւրաքանչիւր վախճանի հոգալն զհասարակացն կամին ուսանել:

Ընդէ՞ր նեղիս վասն այնր, եթէ զայս վախճան առաքինութեամբ կատարեսցես, ոչինչ անտի վնաս կրեսցես, համարեաց, եթէ հեռի իցէ եւ եթէ մաւտ, չէ ինչ մեզ աւգուտ, եւ վասն այնորիկ Քրիստոս չասաց: Այլ երբեմն գողոյ, երբեմն որոգայթի նմանեցուցանէ, ըստ այնմ, թէ՝ «Յանկարծակի հասանիցէ ի վերայ ձեր աւրն այն իբրեւ զորոգայթ» (Ղուկ. ԻԱ. 35). *եւ թէ՝ «Արթուն լերուք՝ ոչ գիտէք յորո՞ւմ ժամու գող գայ»* (հմմտ. Մատթ. ԻԴ. 42-43):

Եւ թէ վասն է՞ր իբրեւ զորոգայթ եւ իբրեւ զգող գիշերոյ ծածկեցաւ ի մէնջ ժամն հասարակացն եւ առանձինն, ասացից, զի եթէ յայտնի էր ժամանակ մեռանելոյն, ոչ ոք զառաքինութեանն փոյթ յանձին ունէր, այլ զամենայն աւուրս կենաց իւրոց ի չարիս անցուցանէր եւ ի ժամ մերձեալ մահուն սկիզբն առնէր առաքինութեանն: Զի թէ այժմ անյայտութեան ահն տագնապէ զմեզ, բազումք մինչ ի վերջին չունչն սպասեն եւ ապա զղջանան, յոլովք եւ առանց զղջման եւ խոստովանութեանն գնացին:

Եթէ զայն եւս երկիւղ ի միջոյ բառնայր, ո՞ ոյք լինէր ցածուն. ոչ ոք երբէք:

Արդ, զի մի այս լինիցի, նմին իրի ոչ զհասարակաց ժամն եւ ոչ զիւրաքանչիւր առանձինն յայտնեաց, զի կամի, թէ ցանկայցեն այնմ եւ ակն ունիցին, եւ միշտ փութայցեն գործել զբարիս:

Եւ այլ ազգ եւս, կէսք մահու ցանկան եւ կէսք՝ կենաց, եւ նա, որ զմահն կամէր, յորժամ գիտէր, թէ վաղիւն մեռանելոց է, եւ զթագաւորն եւս արհամարհէր եւ ոչ հրաժարէր, զորս կամէր սպանանել՝

վրէժխնդրելով ի թշնամեաց եւ բազումս եւս այլ չարիս գործէր. նախ՝ զկամս սրտին կատարելով եւ ապա՝ ընդունէր զվախճան, եւ նա, որ զկեանս կամէր, առ տրտմութեանն յանկարծակի սատակէր:

Զի եթէ ոք յերիտասարդացն եւ ի զարդասէր աղջկանց, գիտէին, եթէ վաղիւն մեռանելոց էին, իբրեւ զաղանք չարք, յորժամ ըմբռնիցին, յահէն սատակին, նոյնպէս եւ նոքա յառաջ, քան զժամանակն ահարեկեալ մեռանէին:

Նաեւ արք բարիք ոչինչ վարձս գործոց բարեաց ընդունէին, եթէ գիտէին, թէ յետ երից աւուրց երթալոց էին:

Զի թէպէտ եւ ինքեանք զանձինս ի վիշտս արկանէին, ի դէպ էր այլոց ասել ցնոսա, եթէ՝ գիտէ՞ք, զի յետ երիս աւուրց մեռանելոց էք եւ վասն այնորիկ տայք զանձինս ի վիշտս: Իսկ որ չգիտցէ զմահն եւ տայ զանձն ի վիշտս, զայս ոչ ոք կարէ ասել ցնա:

Յայտնեցից զսոյն եւ աւրինակաւ, եթէ յառաջագոյն գիտացեալ էր Աբրահամու, եթէ չէ սպանանելոց զորդին, զի՞նչ վարձք էին նմա. եւ կամ Պաւղոսի, եթէ յառաջագոյն գիտացեալ էր, զի չէր մեռանելոց եւ արհամարհէր զմահն, ո՞ւր երեւէր զարմանալի, զի եւ քան զամենեսեան վատն զայս գործէր, որպէս ցուցաւ վերագոյն:

Տեսանե՞ս՝ որչափ շահ է ի չգիտելոյ զվախճանն, վասն այնորիկ իբրեւ զգող գիշերոյ հասանէ, զի մի ի չարիս գրաւեսցուք զանձինս եւ մի ի ծուլութիւնն, զի մի եւ վարձքն մեր նուազեսցին:

«Արթո՛ւն[1] եղերուք, ասէ, հսկեցէք» (ԺԳ. 33):

Զի առ արթունսն թէպէտ եւ լինի մուտ գողոյ, ոչինչ վնասել կարիցէ, այլ զնոսա, որք ի քունն կայցեն, յամենայնէ մերկացուցեալ՝ գնայցէ:

Եւ քուն զմեզսն կոչեն Գիրք, որպէս եւ արթնութիւնն՝ զառաքինութիւն. եւ ընդէ՞ր քուն կոչեն զչարիսն, զի նախ խափանեալ յառաքինութենէ, ապա գործէ զչարիսն:

Այլեւ, որպէս երազովք, ցնորեալք անառակ գործովքն, զի այնպիսիք են վայելք աշխարհիս, երազ է մեծութիւնն եւ փառքն եւ ամենայն ինչ նոյնպիսիք:

Եւ որպէս որ ի քունն կայցէ, չճանաչէ զճշմարիտն եւ զսուտն, այլ ընդ չգոյն իբրեւ ընդ գոյ ցնորեալ շրջի, նոյնպէս եւ որք չարեաւք կեան, չտեսանեն զէսն եւ զմնացականսն, որ են գործքն

[1] ՍՏ զգոյշ] արթուն

բարիք եւ առաքինութիւնք, այլ զսահելիս եւ զանցաւորս՝ զվայելս եւ զհեշտութիւնս աշխարհիս:

Արթո՛ւն[1] եղերուք, ասէ (հմմտ. ԺԳ. 33):

Եւ չէ բաւական միայն արթուն լինել, այլեւ պարտ է եւ զինեալս գտանիլ, զի թէ արթուն ոք իցէ եւ զէն չունիցի, վաղվաղակի հասեալ գողոց, զձեռսն ի գործ արկցեն ի նա, նոյնպէս եւ մեք, թէեւ արթունք լինիմք, այսինքն՝ ուղիղ հաւատով եւ անզէն, եւ մերկ կայցեմք յառաքինութենէ, ոչ ինչ արգելու զսատանայ յագեցուցանել ի մեզ զսուրն:

Վասն որոյ Պաւղոս յետ արթուն լինելոյն խրատէ եւ ասէ, թէ՝ «Զգեցցուք զզրահսն հաւատոյ եւ սիրոյ եւ դիցուք զսաղաւարտն յուսոյ եւ փրկութեան» (Ա. Թեսաղ. Ե. 8): Որովք զգործսն եւ զհաւատսն ակնարկեաց, ոչ զվայրապար հաւատոց ասէ, այլ իբրեւ զզրահս, զոր ոչ ինչ կտրիցէ վաղվաղակի, այլ իցէ ամուր պարիսպ բոլոր մարմնոյն:

Նոյնպէս եւ դու զհաւատսն եւ զսէր վառեալ զոգւովդ, եւ չիցէ ինչ ի հրեղէն նետից սատանայի, որ ի քեզ գամագիւտ կարիցէ լինել, զի որ զոգին իւր սիրոյն զինու վառեալ իցէ, ընդ վայր աշխատին նենգագործքն, ոչ նախանձ, ոչ բարկութիւն, ոչ ցանկութիւն եւ ոչ այլ ինչ կարէ վնասել այնպիսի ոգւոյ:

Եւ դիցուք զսաղաւարտն յուսոյ եւ փրկութեան, զի որպէս սաղաւարտն զգլուխն պահիցէ յամենայն կողմանց, նոյնպէս եւ յոյսն չտայ մտացն գլորել, այլ կանգուն կացուցանէ: Զի որ այնպիսի զինուք վառի, ոչ երբէք անկանի, զի կան մնան հաւատք, յոյս եւ սէր (տե՛ս Ա. Կոր. ԺԳ. 13), *եւ ապա ցուցանէ, թէ ուստի՞ ծնանին սոքա:*

«Զի ոչ ետ[2] զմեզ Աստուած, - ասէ, - ի բարկութիւն, այլ ի փրկութիւն կենդանութեան ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի (Ա Թեսաղ. Ե. 9), *որ մեռաւն վասն մեր»* (Ա. Թեսաղ. Ե. 10):

Տես, թէ որպէ՞ս ցանկացեալ էր մեր փրկութեանն, մինչ զի եւ զՈրդին իւր ետ վասն մեր, ոչ վայրապար, այլ ի մահ: Մի՛ զանգիտեր, ապա մերձենալ առ Աստուած եւ մի զմտաւ ինչ ածեր վասն մաւտաւոր վշտացս եւ նեղութեանց, զի որ զմիածինն ետ, զի փրկեսցէ, յի՞նչ այլ ինչ վասն քոյոյ փրկութեան խնայիցէ: Զի եթէ

[1] ծնթ. 1
[2] ՄՏ եդ

առ դատաւորն երթայաք, որ դատելոց էր զմեզ, եւ նա այնչափ սէր ցուցեալ վասն մեր, մինչեւ զՈրդին իւր սպանանել. կասկածէա՞ք ինչ: Հաւատացուք յաւրինակ սիրոյն եւ ակնկալցուք բարութեանցն մեծամեծաց, զի զառհաւատչեայն ընկալաք: Զի կարի անմտութիւն է զայսպիսի երախտաւոր չսիրել:

«Արթո՛ւն[1] եղերուք, հսկեցէք», *զի մարթի արթնոյն ննջել եւ չգործել ինչ բարիս, վասն այնորիկ նովիմբ զմտաւ ածէ, թէ եւ* **«հսկեցէք»** *եւս, այսինքն՝ թէ եւ մտաւք եւս արթուն լերուք: Զի եթէ մարմնովն ոք արթուն է եւ մտաւքն ննջէ, ընդ վայր լինի աշխատելն, յաղագս այնորիկ չէ պարտ մարմնով միայն աղաւթել եւ լեզուաւ սաղմոսել, այլեւ մտաւքն կցորդ գտանել ասացելոցն, ըստ այնմ, թէ՝ «Սաղմոս ասացից* (Սաղմ. ճ. 1) *եւ ի միտ առից»* (Սաղմ. ճ. 2). *եւ թէ՝ «Սաղմոս ասացից հոգւով եւ մարմնով»* (հմմտ. Ա. Կոր. ԺԴ. 15):

Զի մարմին յորժամ ննջէ, տիրէ ի վերայ նորա բռնութիւն բնութեանն եւ ոչ ըստ կամաց մերոց ներգործէ ի մեզ: Եւ հոգի, յորժամ թագաւորէ ի վերայ նորա քուն ձանձրութեանն, այսինքն՝ կարճմտութիւն եւ տրտմութիւն[2], տիրէ ի վերայ նորա թշնամին եւ գործէ նովաւ ինչ, զոր ոչ կամի նա: Տե՛ս, թէ որքա՛ն մեծ վնաս է ննջելն հոգւոյն, քան մարմնոյն, ուստի յայտ է, թէ զարթուն կալն, զոր ասաց Տէրն, առաւել վասն հոգւոյն ասաց, քան թէ մարմնոյն, իբրեւ զայն, զի ասէ. «Սթափեցարուք արդարութեամբ» (Ա. Կոր. ԺԵ. 34). *եւ՝ «Զարթեայ, եւ ես ընդ քեզ եմ»* (Սաղմ. ճԼԸ. 18): *Եւ վասն այսորիկ ոչ ձանձրանամք ի պաշտաւնս յայս:*

«Արթո՛ւն[3] եղերուք, հսկեցէք եւ կացէք յաղաւթս». *Եցոյց, թէ աղաւթքն զաւրութիւն ունի փրկել յայնմ աւուր երկիւղէն, որպէս գրէ Ղուկաս, թէ՝ «Յամենայն ժամ աղաւթս արարէք, զի արժանի լինիցիք զերծանիլ յայնմ ամենայնէ, որ լինելոցն է եւ կալ առաջի Որդւոյ մարդոյ»* (Ղուկ. ԻԱ. 36): *Ի սոյն տեղւոջ յիշեն Մատթէոս եւ Ղուկաս, թէ՝ «Որպէս էին յաւուրսն Նոյի եւ Ղովտայ, եւ ոչ գիտէին, մինչեւ եկն ջրհեղեղն եւ անձրեւն հրեղէն եւ եբարձ զամենայնսն: Նոյնպէս եւ եղիցի յաւուրսն Որդւոյ մարդոյ»* (Մատթ. ԻԴ. 38-39, հմմտ. Ղուկ. ԺԷ. 27):

[1] ՄՏ զգոյշ
[2] ՄՏ > եւ սրտմտութիւն
[3] ՄՏ զգոյշ] արթուն

Որ եւ այսու եւս ցուցանէ, թէ եւ զառաջինսն ինքն արար: Տայ եւ այլ եւս նշանս, որով յայտ առնէ, թէ չէ անտեղեակ աւուրն:

Եթէ երկու իցեն յագարակի եւ եթէ ի մահիճս, եւ եթէ աղայցեն ի մի երկանս, մինն առցի եւ միւսն՝ թողցի (հմմտ. Մատթ. ԻԴ. 40):

Զնոյն յայտ առնեն եւ այս աւրինակք, զի այնպէս յանպատրաստս մինչ ոչ ակն ունիցին եւ ոչ զմտաւ ածիցեն, հասանիցէ ի վերա նոցա:

Նա զի եւ ծառայքն եւ տեարք եւս վարին եւ մնան, եւ որք ի դիւրութեանն իցեն եւ որք յաշխատութեան, որպէս եւ ի հնումն ասէ, թէ՝ «Յայնմանէ, որ յաթոռն արքունի նստէր, մինչեւ ցայն, որ ի յերկանսն կայր, զի ասաց, թէ դժուարաւ ապրին մեծատունք» (հմմտ. Մատթ. ԺԹ. 23, Մարկ. Ժ. 25). *ցուցանէ, թէ ոչ նոքա ամենեքեան կորնչին եւ ոչ աղքատքն ամենեքեան ապրին:*

Թուի, թէ այսու եւ զայն ինչ յայտ առնիցէ, թէ դիւրաւ լինելոց է գալուստն, զի կէսք յանդաստանի եւ կէսք՝ ի ջրաղացս, եւ կէսք յանկողինս գտանիցին յանհոգս:

Տեսնե՞ս՝ զիա՞րդ զամենայն ստոյգ գիտէ, յաղագս որոյ ասէ.

«Զգոյշ եղերուք, հսկեցէք եւ կացէք յաղաւթս». *դարձեալ մերժէ ի հարցուածոյն, զի կասկածագոյնս կամի լինել նոցա եւ միշտ կազմ գտանել գործովք բարեաց, ըստ որում այլուր ասէ. «Եղիցին գաւտիք ձեր պնդեալ ընդ մէջ»* (Ղուկ. ԺԲ. 35), *այսինքն՝ զի պատրաստիցիմք սրբութեամբ, «եւ ճրագունք ձեր լուցեալք»* (Ղուկ. ԺԲ. 35), *զի աշխարհս իբրեւ գիշեր է եւ կարաւտ լուսոյն արդարութեան:*

«Զի ոչ գիտէք, երբ ժամանակն իցէ». *զո՞ր ժամանակ՝ զդատաստանին, եւ ոչ ասաց, թէ՝ «Ոչ գիտեմ», այլ թէ՝* **«Ոչ գիտէք»**, *զի թէ գիտէին բազումք, թէ երբ մեռանիցին, ընդ այն ժամանակս եւեթ պնդէին:*

Արդ, զի մի՛ յայն ժամանակ միայն պնդիցին, նմին իրի իսկ ոչ զհասարակաց ժամն ասէ եւ ոչ զիւրաքանչիւր առանձինն, զի կամի, թէ ցանկ այնմ ակն ունիցին եւ միշտ զբարիս գործիցեն, վասն որոյ զերկոսինն անյայտ արար:

Որպէս այր մի գնացեալ ի տար աշխարհ՝ թողուցու զտուն իւր եւ տացէ ծառայից իւրոց իշխանութիւն եւ իւրաքանչիւր զգործ իւր. եւ դռնապանին պատուէր տայցէ, զի արթուն լինիցի (ԺԳ. 34):

«Այր մի» *զանձն իւր անուանէ:* **«Գնացեալ»**, *որ կատարեաց զամենայն տնաւրինական գործս իւր՝ զծնունդն, զմկրտութիւնն, զխաչն, զյարութիւնն եւ համբարձաւ յերկինս:*

«Գնացեալ ի տար աշխարհ». *յատուկ եւ առանձին տեղի մարմնոյն՝ հողն է, ըստ այնմ, թէ՝ «Հող էիր եւ ի հող դարձցիս»* (Ծնն. Գ. 19), *իսկ մարմինն Քրիստոսի ոչ ետես զապականութիւն, վասն որոյ եւ ոչ դարձաւ ի հող, այլ գնաց յաւտար աշխարհ, այսինքն՝ ի ձեռն փրկչին մերոյ Բանին Աստուծոյ, յերկինս եղեւ տարեալ՝ ի նոր եւ յանսովոր տեղի:*

«Թողուցու զտուն իւր», *որ է եկեղեցի,* **«եւ տացէ ծառայից իւրոց իշխանութիւն»**. *ըստ Մատթէոսի՝ «ութ տաղանդ»* (տե՛ս Մատթ. ԻԵ. 14-30) *եւ ըստ Ղուկասու՝ «տասն մնաս»* (տե՛ս Ղուկ. ԺԹ. 11-27)՝ *է իշխանութիւնն, զոր ետ, որ են հաւատքն եւ ազգի ազգի շնորհքն, որ կատարելագործի ի մէջ եկեղեցւոյ:*

«Եւ իւրաքանչիւր զգործ իւր». *այսինքն՝ զի ոչ եթէ որպէս զչար Տէր եւ զանիմաստ վերակացու, որ զայն գործ յանձնէ ծառայից իւրոց, զոր ոչ կարեն կատարել, այլ նա քաղցրութեամբ եւ իմաստութեամբ բաժանեաց զգործսն՝ ըստ ուժոյ եւ զաւրութեան, որպէս զի հեղգացեալքն դատապարտեսցին:*

Յաղագս այսորիկ ումեմն՝ հինգ, ումեմն՝ երկուս եւ ումեմն՝ մի ետ զքանքարսն, իւրաքանչիւր ըստ իւրում կարի:

Զի եթէ նմա, որում զմի քանքարն ետ, զհինգն էր տուեալ, կարէր պատճառել զծանրութիւն գործոյն եւ արդարանալ, իսկ զի ըստ կարողութեանն կարգեալ էր նմա զգործն, յաղագս այսորիկ ոչ պատճառեաց զտկարութիւն կամ զծանրութիւն, այլ զհեղգութիւնն, որով եւ դատապարտեցաւն իսկ:

Ապա ուեմն ամենայն աւրէնք եւ պատուիրանք, զոր կարգեաց Քրիստոս, կարելիք են եւ հնարաւորք, թէպէտ ծուլից եւ հեղգացելոց անկարելիք եւ անհնարինք թուեցեալք լինին, ըստ որում եւ ասէ. «Եւ իւրաքանչիւր զգործ իւր». այսինքն՝ ի գործ եւ ի վաստակ, յոր ախորժեաց, ետ նմա զաւրութիւն բարեգործել, ըստ այնմ, թէ՝ «Աւրէնսգէտ առնես զնա ի ճանապարհի, յոր եւ հաճեցաւ» (Սաղմ. ԻԴ. 12). *որպէս եւ Յովհաննէս զզինուորսն եւ զմաքսաւորսն եւ զայլսն խրատէր, թէ զինչ պարտ էր առնել* (տե՛ս Ղուկ. Ժ. 10-14):

Եւ դռնապանին պատուէր տայցէ, զի արթուն լինիցի (ԺԳ. 34):

«Դոնապան» կոչէ զքահանայս, զվարդապետս եւ զեպիսկոպոսս, զի սոցա ասաց Քրիստոս, թէ՝ «Տաց ձեզ զփականս արքայութեանն երկնից, եւ զոր միանգամ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս» (Մատթ. ԺԶ. 19):

Այսինքն՝ դուք դռնապանք արքայութեանն, զի զորս կամիք, ածէք յարքայութիւնն, եւ զորս ոչ կամիք ի բաց հալածէք, ըստ որում եւ այլուր զծոյլս ի քահանայիցն, որք չարութեամբ իւրեանց արգելք եղեն ոմանց՝ մտանել յարքայութիւնն, ասէր. «Վայ ձեզ, քահանայիցդ, որ փակէք զարքայութիւնն երկնից առաջի մարդկան, դուք ոչ մտանէք, եւ որք մտանենն, չտայք թոյլ մտանել» (հմմտ. Մատթ. ԻԳ. 13):

Եւ զիա՞րդ փակէ քահանայն զարքայութիւնն իւր եւ այլոց. ի ձեռան գործոցն չարեաց, զի բազումք ի ժողովրդենէն, որ ատեցաւղք են չարի, յորժամ տեսանեն զքահանայն ի չարիս, յաւժարին եւ ինքեանք զնոյն գործել, մանաւանդ՝ թէ եւս չար լինին քան զնոսա, զի յորժամ զայնպիսի քահանայն տեսանիցէ ժողովուրդն, եւս չար ի յոռութիւնս հաստատի: Զի յորժամ առաքինի իցէ վարդապետն, նմանաւղ եւեթ լինի նմա, իսկ յորժամ անպիտան, անցուցանէ չարութեամբն վասն դիւրութեամբ ի չարն միտելոյ:

Եւ դռնապանին պատուէր ետ արթուն լինել, որպէս եւ առ Եզեկիէլ ասաց. «Որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ ի վերա ժողովրդեանդ (Եզեկ. Գ. 17), *եթէ ոչ զգուշացուցանիցես զամբարիշտն դառնալ ի ճանապարհէ իւրմէ չարէ, զարիւն նորա, որ է մեղքն եւ չարիքն, ի քէն պահանջեցից»* (Եզեկ. Գ. 18):

Զգուշացուցանելս ոչ միայն բանիւ ասէ, այլ գործով, որ է դիւրագոյն ուսումն, որպէս եւ վասն Քրիստոսի ասէ, թէ՝ «Սկսաւ Յիսուս առնել գործով եւ ապա ուսուցանել բանիւ» (հմմտ. Գործք Ա. 1): *Եւ յորժամ յայտնեաց զմեծութիւն գործոյն եւ զծանրութիւն վտանգին, ապա ի վերայ եբեր, թէ՝*

Արդ, արթուն կացէք, զի ոչ գիտէք՝ երբ տէր տանն գայցէ (ԺԳ. 35):

Այսինքն, թէ՝ միտ դիք եւ տեսէք, թէ յի՞նչ կոչեցեալ էք եւ կամ որպիսի՞ քննութիւն լինելոց է ձեզ, զի քահանայքն՝ ասէ, հզաւրագոյն պահանջեսցին, քանզի զգործոց ամենեցուն, որ հաւատացան ձեզ՝ զարանց եւ զկանանց, նաեւ զմատաղ մանկտւոյ եւ զփոքր

աղջկանց, համարս տալոց էք, վասն որոյ ասէ. **«Արթո՛ւն կացէք»:** *Զի թէ որք անբան ոչխարաց հաւտից հովիւք եւ վերակացուք են, այնքան հոգան եւ խնամ տանին ի գիշերի եւ ի տունջեան՝ պահել ի գողոց եւ ի գազանաց:*

Որպէս ասէր առ Լաբան Յակոբ, թէ՝ «Ի գիշերի ցրտակէզ լինէի եւ ի ցերեկի արեւու այրեցեալ լինէի, եւ զգողունին յանձնէ տուժէի, եւ զգազանաբեկ ոչ բերէի» (հմմտ. Ծնն. ԼԱ. 38-41):

Ապա որչա՞փ պարտին հոգալ եւ խնամ տանել այնոքիկ, որ բանական հաւտի վերակացուք են, զոր գնեաց Քրիստոս արեամբն իւրով:

Որպէս ասաց Պաւղոս առ երիցունսն եփեսացւոց. «Զգոյշ լերուք յորում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդս Տեառն, զոր գնեաց արեամբն իւրով» (հմմտ. Գործք Ի. 28):

Արթո՛ւն կացէք, զի ոչ գիտէք՝ երբ տէր տանն գայցէ՝ յերեկորեայ, եթէ ի մէջ գիշերի, եթէ ի հաւախաւսի, եթէ ընդ առաւաւտս (ԺԳ. 35):

Թէպէտ եւ զիւրաքանչիւրսն ի ժամուցն ընդ անգիտութեամբ փակեաց, սակայն ի մէջ գիշերին ի դէպ է իմանալ զգալուստն լինել: Զի ի մէջ գիշերին սպանան անդրանիկքն Եգիպտոսի (տե՛ս Ելք ԺԲ. 29) *եւ ի մէջ գիշերի ասէ՝ եղեւ բարբառ. «Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա»* (Մատթ. ԻԵ. 6). *եւ «Յայնմ գիշերի, եթէ իցեն երկու ի մի մահիճս, մին՝ առցի եւ միւսն՝ թողցի»* (Ղուկ. ԺԷ. 34): *Ապա ուրեմն ի գիշերի լինի յարութիւնն ի ժամուն, յորում յարեաւ Քրիստոս ի գերեզմանէն, եւ յայտ է, թէ ի գիշերի միշաբաթուն, զի ի սոյն գիշերի ստեղծ Քրիստոս զերկինս եւ զերկիր, եւ ի սոյն գիշերի յարեաւ: Արդ, զի ի գիշերի լինելոց է յարութիւնն եւ ի միաշաբաթին գիշեր, զայս յայտնեցին Գիրք, ապա թէ յորո՞ւմ միաշաբաթւոջ, զայս յայտնեցին:*

Գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ ի քուն (ԺԳ. 36):

Այսինքն՝ ի հոգս եւ ի զբաղմունս աշխարհի եւ աշխարհայնոցս, որ է սուտ եւ սնոտի, զի որպէս այնոքիկ, որ ի քուն են, ոչ տեսանեն զիրս ճշմարիտս, այլ զփորձնական երեւմունս եւ զառաչաւք տեսութիւնս, որք յորժամ զարթչին, ոչինչ է, զոր տեսին:

Նոյնպէս եւ այնոքիկ, որք զհեշտութիւն աշխարհիս սիրեցին եւ վեյելից սորա պարապեցին ի կեանս յայս, յորժամ ի ձեռն մահու ի

բաց ելանեմք յաշխարհէս, ապա ստուգապէս տեսանեմք, թէ ոչինչ է վայելչութիւն աշխարհիս, մանաւանդ, թէ ոչընչին ոչինչ, ըստ Ժողովողին, թէ՝ «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ սնոտի է եւ ընդունայն» (Ժող. Ա. 2):

Բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ՝ արթուն կացէք (ԺԳ. 37):

Ի յայս կատարումն փակեաց զբանն, որպէս հասարակաց պատուիրան ի վերայ ամենայնի, որով յետինքն լուիցեն առաջնոցն, որպէս զի լիցի[1] *համանգամայն հասարակաց բարի եւ ոչ միոյ անձին:*

«**Ամենեցուն ասեմ՝ արթուն կացէ՛ք**». *ոչ միայն վերակացուաց եւ առաջնորդաց եկեղեցւոյ հրամայէ արթուն կալ, այլեւ ամենայն հաւատացելոց, որք հրաման ընկալան՝ ամենայն պահպանութեամբ պահել զդրունս սրտից, զի բնաւ չար փորձութիւն թշնամւոյն մի՛ մտցէ ի ներքս, եւ Տէր մեր մի՛ գտցէ զմեզ ի քուն, որպէս ասէ Պաւղոս. «Արթուն լերուք եւ մի՛ մեղանչէք»* (Ա. Կոր. ԺԵ. 34):

«**Ամենեցուն ասեմ՝ արթո՛ւն կացէք**». *զի մի՛ ոք պատճառիցէ, եթէ չուսոյց ոք եւ կամ թէ զեղծ ինչ էին վարք վարդապետին, վասն այնորիկ ոչ զգուշացայ անձին, սորին վասն զպատճառս զայս բառնալով, ամենեցուն պատուիրէ խնամ տանել առաքինութեան եւ արթուն պահել զմիտս եւ զգայութիւնս: Զի ոչ եթէ անբան եւ անմիտ կենդանի ես, այլ իմաստուն եւ հանճարեղ, զի այնպէս ստեղծ զքեզ Աստուած, զի եւ առանց աւրինաց եւ վարդապետաց եթէ կամիս, կարաւղ ես գործել զբարիս, որպէս յայտնի է ի բազմաց: Ըստ որում գրէ Պաւղոս, թէ՝ «Հեթանոսք, որք զաւրէնս ոչ ունին, ի բնութենէն խրատեալք, զաւրինացն գործէին, որք ընթեռնուն զբանս աւրինացն գրեալ ի սիրտս իւրեանց»* (հմմտ. Հռոմ. Բ. 14-15):

Զի որպէս հրէայքն ի գրոյն ուսանէին զարժանն, այսպէս եւ հեթանոսք ի սրտէն եւ ի մտացն խղճէ: Ասէ եւ մարգարէն, թէ՝ «Եղիցին ամենայնքն ուսեալք յԱստուծոյ, եւ մի եւս ուսուցանիցէ իւրաքանչիւր զեղբայր իւր եւ ասիցէ, թէ՝ ծանի՛ր զՏէր, զի ամենեքեան ծանիցեն զիս՝ ի փոքրկանց մինչեւ ցմեծամեծս» (հմմտ. Երր. Ը. 10-11):

[1] ՍՏ մի լիցի] լիցի

Զունիս առաքինի վարդապետ, այլ ունիս զբուն վարդապետն՝ զՔրիստոս. ի նմանէ ուսիր, որ ասաց. «Ուսարուք յինէն, զի հեզ եմ» (Մատթ. ԺԱ. 29) *եւ մի՛ նայիր ընդ այժմու վարդապետսն, այլ ընդ նա եւ ընդ նորին աշակերտսն:*

Որպէս եւ Պաւղոս գրէ, ոչ միայն կորնթացւոցն, այլեւ ամենայն հաւատացելոց, որք՝ յայնժամ եւ որք՝ այժմ, թէ՝ «Նմանաւղք եղերուք ինձ, որպէս եւ ես՝ Քրիստոսի» (Ա. Կոր. ԺԱ. 1):

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Եւ դուք նմանողք մարդկան, որ ակն ունիցին տեառն, թէ երբ գայցէ ի հարսանեաց (Ղուկ. ԺԲ. 36):

Իգ. *Զգուշացուք գալստեան նորա, որպէս զիմաստուն կուսանսն, որք պայծառ լապտերաւք պատրաստ մտին յառագաստ Տեառն իւրեանց վաղվաղակի* (տե՛ս Մատթ. ԻԵ. 1-13):

Զի գաւտի ընդ մէջ ածիցէ եւ բազմեցուսցէ (ԺԲ. 37):

ՍՏ *Ըստ ասացելումն. «Զգեցաւ Տէր զաւրութիւն՝ ընդ մէջ իւր ածաւ»* (Սաղմ. ՂԲ. 1): *Եւ է արդարութեամբ պնդեալ զմէջ իւր, որով զիւրաքանչիւր ոք ըստ արժանեաց բազմեցուսցէ եւ ըստ արժանեաց սպասաւորէ:*

Իգ *Ո՞վ քանի՞ անչափ է մարդասիրութիւն նորա, զի զոր առնու, բազմապատիկ հատուցանէ: Առնու զապականացու ողորմութիւնն կարաւտելոցն եւ տայ զանապական կեանսն:*

Եւ անցեալ՝ պաշտիցէ զնոսա (ԺԲ. 37):

ՍՏ *Արդ՝ զանց արարեալ Տեառն զերեւելաւքս սպասաւորէ այնոցիկ, որ արթունք են յիմանալիսն:*

Իգ *Զի զոր մեք գաւտի ածեալ ծառայեցաք կամաց նորա, զոր պատուիրեաց, ծառայէ եւ նա մեզ: Զամենայն կամս մեր կատարէ եւ զցանկութիւնս մեր լնու, եւ ամենայն աստուածային խորհրդոցն տեղեակ առնէ զմեզ: Այսպէս սպասաւորիմք ի Տեառնէ: Թէ յառաջնում պահուն:*

ՍՏ *Առաջին եւ երեկոյին պահ մարդոյն մանկութեանն հասակն է:*

Եթէ երկրորդ (ԺԲ. 38):

ՍՏ *Երիտասարդականն է:*

Երրորդ (ԺԲ. 38):

Մերականն է:

ՍՏ *Արդ՝ հրամայէ արթուն կալ յամենայն հասակի, զի արժանասցին բազմեալ եւ սպասաւորեալ ի Տեառնէ:*

ԻԳ *Մի՛ ծախել զժամանակս ամենայն հեղգութեամբ եւ յոչ ժամու սպասաւորել, զի որ այսպիսի խորհրդով վարին չուայտել:*

Եթէ գիտէր տանուտէրն յորում պահու գող գայ (ԺԲ. 39):

Այսինքն է՝ եւ ո՛չ դուք զժամ մահուն եւ ո՛չ զիմ գալըստեանն:

ՈՍԿ *Զի թէ գիտէին բազումք, եթէ երբ մեռանիցիմք, ընդ այն ժամանակս եւեթ պնդէին: Վասն որոյ զիւրաքանչիւր ժամանակ կենացն վախճանի ո՛չ արար յայտ, զի արթունք լիցին: Թուի, թէ զծոյլսն պատկառեցուցանէ. որչափ ընչիցն հոգան ի գողոցն, այնչափ հոգոց իւրեանց դարման ո՛չ տանին:*

Դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ո՛չ ակն ունիցիք, գայ Որդ[ի] մարդոյ (ԺԲ. 40):

ՍՏ *Ո՛չ լինիցիք պատրաստականք, այլ իբրեւ անզգայք գնայիք աստի: Վասն այսորիկ ի սատակումն քնածիցն գալոց է աւրն այն: Զոր աւրինակ, թէ նա գիտէր՝ փախչէր, նոյնպէս եւ դուք, եթէ էիք պատրաստականք՝ ապրէիք: Զայս ո՛չ միայն վասն կատարածի աշխարհի ասաց, այլեւ վասն կատարածի իւրաքանչիւր մարդկան: Արդ՝ արթուն լերուք ի գործս բարիս, յորժամ Տէրն ձեր կոչէ զոգիսդ ի մարմնոյդ:*

Ասէ Պետրոս. Առ մե՞զ է առակդ, եթէ՞ առ ամենեսեան (ԺԲ. 41):

ԻԳ *Կամեցաւ ուսանել զխորհրդոյն զաւրութիւնն, թէ ամենեցուն է պատուէրս եւ հատուցումն, թէ նոցա, որ յայնժամ լսէին:*

Ասէ Տէր. «Ո՞վ է հաւատարիմ *եւ* **իմաստուն տնտես, զոր կացուցէ տէր ի վերայ ծառայից իւրոց՝ տալ կերակուր ի ժամու»** (ԺԲ. 42):

ՍՏ *Զի ո՛չ խորեաց ինչ եւ գողութեամբ ո՛չ ընդ վայր զտերունիսն ծախեաց: Հաւատք եւ իմաստութիւն, յորժամ զառաքինի ոք գտանէ, զհետ երթան միմեանց, զի որպէս Պաւղոս եւ Պետրոս եւ նոցին նմանողքն, որք տան կերակուր զվարդապետութիւնս իւրեանց ի ժամու արժանաւորացն: Իսկ որ ունի զիմաստութիւն խորամանկութեամբ, ո՛չ հաւատարիմ է այնպիսի: Եւ ո՞րք են իմաստունք հանգոյն աւձին եւ տնտեսուն անիրաւութեան: Վասն պաշտաւն եւ հնազանդութեան սրբոցն, զի սպ[աս]աւորէ, ծառայէ Աստուծոյ, որպէս Մովսէս պաշտաւնեայ, ծառայ Աստուծոյ ասի* (տես Ելք ԺԴ. 31), *եւ Աստուած տեսող լինի ծառայից իւրոց:*

Երանի ծառային այնմիկ, զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս: Ի վերայ ինչից իւրոց կացուցէ զնա (ԺԲ. 43-44):

ՍՏ *Զի՞նչ այնմ պատուոյ զուգական կայցէ: Ո՞ր բան զայն մեծարանս կարէ յանդիման կացուցանել զերանութիւնսն եւ զբարութիւնսն, յորժամ երկնից թագաւորն, որ զամենայն ի ձեռին ունի, զմարդ ի վերայ ինչից իւրոց կացուցանէ:*

Ապա թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում. «Յամէ տէր գալ» (ԺԲ. 45):

ՍՏ *Ո՛չ հեգ եւ թշուառական ծառային. ապաքէն ունիս ակն, ընդէ՞ր ո՛չ հոգայցես:*

Սպ. *Զի չար եւ յիմար ասէ, որ արասցէ ըստ յիմարութեան եւ զգործսն վատթարութեան:*

Սկսանիցի հարկանել զծառայակիցսն իւր (ԺԲ. 45):

ՈՍԿ *Թուի ինձ, եթէ զայս զթշնամանողացն եւ զագահացն ասէ, եւ ամբաստանութիւնս բազում[ս] ցուցանէ զնոցանէ, որ փոխանակ կերակրելոյ զան:*

Հարկանէ ուտել *եւ* **ըմպել** *եւ* **արբենալ** (ԺԲ. 45):

Թուի ինձ զբարեկամացն ակնարկէ աստ. ընդ որկորտութեանն մեծամեծ տանջանք կան, զոր գուշակեաց: Ո՛չ վասն այնորիկ առեր, զի ի բարեկեցութեան վայելեսցես, այլ զի յողորմութիւն ծախեսցես: Թէպէտ եւ յարդար վաստակոց է կամ ի հայրենեաց, վասն աղքատաց հաւատացաւ քեզ այն:

Եկեալ տէր ծառային այն՝ կտրեսցէ զնա ընդ մէջն (ԺԲ. 46):

Վասն որոյ զցասումն յայտ արար: Զի զսէրն ծանոյց աշակերտաց իւրոց, քանզի այն իսկ է, որ յերկինս տանի եւ Քրիստոսի նմանողս առնէ ըստ կարի մերում:

Եւ ծառայ, որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ եւ ո՛չ ըստ կամացն պատրաստե[ս]ցէ, արբցէ գան բազում (ԺԲ. 47):

ԻԳ. *Գիտութեամբ չափով կշռէ: Վասնզի որ գիտութեամբ արհամարհոտ գտաւ պատուիրանին, աններելի ունի զդատաստանս:*

Եւ որ ոչն գիտէ, եւ արժանի գանի գործէ (ԺԲ. 48):

Իսկ որ առ տգիտութեանն յանցեաւ, կրեսցէ սակաւ պատուհաս այլ ներելով, զի արդար է ի դատաստանի Աստուած: Իմ եթէ չէր եկեալ եւ խաւսեալ ընդ նոսա, մեղ ինչ ո՛չ գոյր նոցա: Բայց արդ՝ չի՛ք պատճառս վասն մեղաց իւրեանց:

Ամենայնի, որում շատ տուաւ, շատ պահանջեսցի ի նմանէ (ԺԲ 48):

Սպ. *Ո՛չ է հաւասար ամենեցուն տուեալ եւ ո՛չ հասարակ ամենեցուն աւանդեալ ի Քրիստոսէ:*

Եւ որում բազում տուաւ, առաւել խնդրեսցի (ԺԲ. 48):

Աւանդեալ Պետրոսի եւ Ղուկասու, բայց ո՛չ հաւասարապէս: Ուստի եւ առաւելագոյն խնդրեսցէ ի Պետրոսէ:

ԱՌԱԿ ՏԱՍՆ ԿՈՒՍԱՆԱՑ

Մատթ. ԻԵ. 1-13

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Յայնժամ նմանեսցի արքայութիւնն երկնից Ժ. կուսանացն (Մատթ. ԻԵ. 1):

«Ժ. (տասն) կուսանք»՝ Ժ. (տասն) զգայութիւնքս են ի մեզ. հինգ հոգեւորք եւ հինգ՝ մարմնաւորք, եւ են մարմնաւորք՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք, շաւշափելիք. նոյն աւրինակ եւ հոգեղէնն: «Արդ, որ եւրես զիս, եւրես զՀայր իմ» (հմմտ. Յովհ. ԺԴ. 9), *ասէ. մարմնոյ աչաւք եւ Հրէայքն տեսին զՔրիստոս, բայց զՀայր ոչ տեսին. ապա ուրեմն զՀոգւոյն տեսանելեաց ասէ, նոյնպէս եւ լսել եւ հոտոտել եւ ճաշակել եւ շաւշափել. արդ, որ հոգւոյ զգայութեամբք ծառայեցուցանէ զմարմնական զգայութիւնս, որպէս Սաղմոսարանով տասնաղեաւ սաղմոսեցիս զքեզ* (տես Սաղմ. ՃԽԳ 9), *այնպիսին իմաստուն է, վասն զի հինգ իմաստուն զգայութեամբքն վարեցաւ, իսկ որ միայն մարմնեղէն զգայութեամբք, այնպիսին յիմար, քանզի ոչինչ զանազանի յանասնոց: Ղամպարս ասէին ունել եւ սոքայ, որպէս եւ իմաստունքն, վասն զի հոգի ամենեցուն հաւասար եւ վարդապետութիւն առաքելոցն եւ այլոց վարդապետացն:*

Յիմարքն առեալ զլապտերսն իւրեանց, եւ ձեթ ոչ առին ընդ ինքեանս (հմմտ. ԻԵ. 3):

«Ձեթ»՝ բանն առաքելական եւ մարգարէական, զայսպիսոյ ձիթոյ պարարտութիւն ոչ ունէին հեղեալ յոգիս իւրեանց:

Եւ ի յամել փեսային, ննջեալ ամենեքեան քուն իցին (հմմտ. ԻԵ. 5):

Ներէ զեռեւս Քրիստոս եւ յամէ հասուցանել իւրաքանչիւր ումեք ի մէնջ. ննջեն, վասն զի դեռ եւս յաշխարհիս եւ ամենեքին:

Ի մէջ գիշերին ձայն եղեւ. «Ահա փեսայ գայ, արիք» (հմմտ. ԻԵ. 6):

Ի ննջել ամենեցունց, հրեշտակք գոչեն մեծ ձայնիւ եւ ի լսելիս ննջեցելոցն, եւ լինի յարութիւն ամենեցունց:

«Պատրաստքն» (տե՛ս Մատթ. ԻԵ. 10) *կեցեալք հոգեղէն զգայութեամբք մտանեն ընդ Յիսուսի յարքայութիւնն, իսկ յիմարքն արտաքսին յարքայութենէն:*

Եւ իմաստունքն պատասխանեցին եւ ասեն. «Գուցէ ոչ իցէ բաւական մեզ եւ ձեզ» (ԻԵ. 9):

Յորժամ ժամանակ էր ուսանելոյ, չուսայք. արդ, ժամանակիս վարդապետութիւնն անցեալ է, ոչ մեք ուսուցանել բաւական եմք եւ ոչ դուք ուսանել. լսելի է եւ այսպես ի վերջին հասակի ծերութեան եւ ի հիւանդութեան ոք եթէ կամիցի ըստ մարմնեղէն զգայութեանց չվարիլ, ոչ կարէ. ապա թէ եւ կամիցի ուսանել եւ կեալ ըստ հոգեղինացն, յանկարծակի հասանէ վախճանն, որպէս եւ բանս ցուցանէ եւ փակի որպէս դուռն ի վերայ նորայ:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Յայնժամ նմանեալ լիցի արքայութիւնն երկնից տասն կուսանաց (հմմտ. Մատթ. ԻԵ. 1):

Եւ արդ, է՞ր վասն ի կուսանաց դէմս հանէ զառակն. ո՛չ վայրապար ինչ ճառէ վասն մեծամեծ երեսացն, յորժամ զկուսութենէ խաւսեցաւ, ասէ. «Են ներքինիք, որ զանձինս իրեանց արար ներքինիս վասն արքայութեանն երկնից: Եւ որ կարողն է տանել, տարցի» (Մատթ. ԺԹ. 12): *Քանզի գիտէ իսկ զբազումս ի մարդկանէ, թէ մեծ իմն փառս անտի ունին, եւ արդար եւ մեծ իսկ են իրքն: Եւ յայտ անտի է, զի ոչ ի հնումն ի նախնեացն ի սրբոց արանցն պահանջեցաւ այս ուղղութիւն եւ ոչ ի նորումն եմուտ ընդ հարկաւ աւրինաց, քանզի ո՛չ եթէ հրաման ինչ ետ, այլ ի կամս լսողացն ապաստան արար*[1]*. Նմին*[2] *իրի եւ Պաւղոս ասէր, թէ՝* «Վասն կուսանաց հրաման ինչ ի Տեառնէ ո՛չ ունիմ» (Ա. Կոր. Է. 25)*: Եւ քանզի մեծ էին իրքն, եւ բազում փառք թուէին անտի բազմաց, զի մի, որ զայն ուղղիցէ, զամենայն ուղղեալ համարիցի եւ զայլոցն եւս անփոյթ առնիցէ, դնէ զայն առակ*

[1] Ա ապաստ արար] ապաստան արար
[2] Ա նման] նմին

ի միջի, որ կարող է[1] *հաւանեցուցանել, զի թէ զայլն ամենայն ունիցի զկուսութիւնն եւ յողորմութեան ե[ւ]դոյն*[2] *լոկ իցէ, ընդ պոռնկին արտաքս ելցէ*[3] *եւ ընդ տմարդիսն եւ ընդ անողորմսն կայցէ: Նմին իրի եւ յիմարս կոչէ զնոսա, զի որք զմեծամեծ վաստակսն կրեցին յանձինս, ի փոքունս յոռացան եւ մատնիչք եղեն:*

Իսկ իմաստութիւն ոչ զկուսութիւն նոցա կոչէ, զի ահաւասիկ ամենիքեան նոքա կուսանք էին, այլ զգործս նոցա բարիս անուանէ[4] **«իմաստութիւն»***: Նաեւ Եւայ ի կուսութեանն իւրում ամբարիշտեցաւ եւ անկեալ մերժեցաւ ի դրախտէն փափկութեան, զի թէ սրբութեան հրեշտակաց նմանող լինի կուսութիւն քո, տես դու, զի եւ հրեշտակք սուրբ են*[5] *ի նախանձուէ այլովքն հանդերձ, եւ զոր աւրինակ ո՛չ պարտաւորեցար դու ի շնութենէ, սոյնպէս մի պարտաւորեսցիս դու ի սրտմտութենէ եւ ի բարկութենէ:*

Կ «Լապտերս» *ասա զկուսութեան շնորհսն կոչէ եւ զսրբութեան յստակութիւն:* **«Իւղ»**՝ *զմարդասիրութիւնն եւ զողորմութիւնն եւ զկարաւտելոցն աւգնութիւն* (տե՛ս Մատթ. ԻԵ. 3):

Ի յամել փեսային, նիրհեցին ամենիքեան եւ ի քուն մտին (ԻԵ. 5):

Ցուցանէ, թէ ո՛չ ժամանակք անցին ի միջի, եւ այսու դարձեալ զաշակերտսն եւս մերժէ առ ի չունելոյ իսկ եւ իսկ ակն արքայութեան նորա: Քանզի այնպէս իմն սպասէին, վասն այնորիկ իսկ ստէպ նահանջէ[6] *զնոսա յայնմ ակնկալութենէ, հանդերձ այնու եւ զայն եւս յայտ առնէ, թէ՝ քուն է մահն, քանզի* **«ննջեցին»**, *ասէ* (տե՛ս Մատթ. ԻԵ. 5):

Ի հասարակ գիշերի բարբառ եղեւ (հմմտ. ԻԵ. 6):

Կամ թէ առակին այն պատշաճէր, եւ վասն այնորիկ[7] *ի նոյն յարէ եւ կամ դարձեալ ցուցանէ, թէ ի գիշերի լինելոց է յարութիւնն՝ ըստ*[8] *բարբառոյն Պաւղոսի յայտ արարեալ՝ ասէ, թէ՝* «Հրամանաւ ի ձայն հրեշտակապետի ի փող յերփին իջանէ յերկնից» (հմմտ. Ա. Թեսաղ. Դ. 15):

[1] Բ բաւական է
[2] Ա դեղոցն] եւղոյն
[3] Բ ելանէ
[4] Բ անուանեաց
[5] Ա հրեշտակացն սուրբ է] հրեշտակք սուրբ են
[6] Ա պահանջէ] նահանջէ
[7] Բ այնորիկ իսկ
[8] Բ > ըստ

Եւ զի՞նչ յայտ՝ «փողքն առնիցեն», կամ զինչ «աղաղակն», թէ՝

Փեսայ գայ: Եւ իբրեւ կազմեցին զլապտերսն, ասեն յիմարքն ցիմաստունսն. «Տուք մեզ յեւղոյդ ձերմէ» (Իե. 6-8):

*Դարձեալ զնոսա «**յիմարս**» կոչէ, յայտ արարեալ, թէ չիք ոք յիմարագոյն քան զնոսա, որ յինչսն յոլովիցեն եւ անդր մերկ երթայցեն, ուր մարդասիրութեան պետք իցեն եւ բազում եւղոյ: Եւ ո՛չ այսու միայն յիմարք էին, այլ զի եւ անդ ակն ունէին առնուլ յընկերացն եւ յայնժամ ժամանակի խնդրէին*[1]*, եւ քան զայն կուսանսն չէ՞ր ոք առաւել մարդասէր, որք այնու առաքինացան. եւ սոքա ո՛չ զամենայն խնդրեցին.*

«Տուք մեզ,- ասեն,- իւղոյդ ձերմէ» (Իե. 8). *զկարեւոր պիտոյիցն յայտ առնէ:*

«Շիջանին,- ասէ,- լապտերքս մեր» (Իե. 8):

Սակայն եւ այնպէս վրիպեցան, զի ո՛չ նոցա մարդասիրութիւնն, յորոց խնդրէին եւ ոչ սոցա ժուութիւնս, որք յուզէին[2]*, եւ ոչ պէտքն եւ կարիքն արարին նոցա հասանել յայնմն, զի ուսանիցիմք անտի, թէ ոչ ոք կարիցէ մեզ անդ աւգնական լինել, ո՛չ զի չկամիցի*[3]*, այլ զի չէ իսկ ձեռնհաս:*

«Երթայք,- ասէ,- առ այնոսիկ, որ գնոյն տան, եւ գնեցիք» (հմմտ. Իե. 9):

Եւ ո՞վ իցեն[4]*, որ «գնոյն տան». աղքատքն՝ բանաւոր ծիծառունք: Եւ ո՞ւր իցեն՝ ասա, ի դրունս եկեղեցւոյ նստին, որք զհոգեւոր գարունն մեզ մարգարէանան. ասէն պարտ է խնդրել եւ ո՛չ յայնմ*[5] *ժամանակի. ասէն պարտ է եւղ ժողովել, զի անդ լինիցի պիտանացու:*

Եւ իբրեւ լուան,- ասէ,- գնացին [գնել]. Եկն փեսայն, եւ պատրաստքն մտին ընդ նմա, այլքն արտաքոյ մնացին (հմմտ. Իե. 10):

Յետ բազում վաստակոց, յետ այնչափ քրտանց եւ անհնարին պատերազմին յաղթութեան՝ նշանակ մոլեգին բնութեանն կանգնելոյ, ամաւթալից մնացին եւ չիջելաւք լապտերաւք գնացին գլխարկեալք[1] *եւ կորացեալք, զի չիք ինչ մթագոյն քան զկուսութիւնն, որ առանց եւղոյ իցէ: Արդ, զի՞նչ աւգուտ ի կուսութենէն եղեւ, յորժամ զփեսայն ո՛չ տեսին եւ բախելն զդուրսն չվճարեաց*[2] *ինչ, այլ զահագին բանսն լուան, թէ՝*

«Երթայք ի բաց, չգիտեմ զձեզ» (հմմտ. Իե. 12):

Յորժամ նա զայն ասիցէ, չիք այլ գեհեան չար քան զայն, ե՛ւ ոչ անհնարին տանջանք, մանաւանդ, թէ եւս դժնդակագոյն քան զգեհեն իցէ բանն, քանզի եւ որոց գործէին զանաւրէնութիւն, զնոյն ասաց:

«Արթուն լերուք, զի ոչ գիտէք զաւրն եւ ոչ՝ զժամն» (հմմտ. Իե. 13):

Տեսանես, զիա՞րդ ստէպ զայս եւեթ ասէ, կարի իմն աւգուտ ցուցանէ զանգիտութիւն ելանելոյն մերոյ աստի:

Այս առակ յընչիցն ողորմութիւնս առնելոյ, վասն առնելոյ ասացեալ է եւ զմիւսն, որ զհետ նորին, առ այնոսիկ[3]*, որ ո՛չ ընչիւք, եւ ո՛չ բանիւք, ե՛ւ ոչ վերակացութեամբ, ե՛ւ ոչ այլիւք կամիցին աւգուտ լինել ընկերաց, այլ զամենայն թագուցանիցեն: Եւ է՞ր վասն այս*[4] *առակ թագաւոր ընձայեցուցանէ եւ նա փեսայ, զի ուսանիցիս, թէ զիարդ ընդանութեամբ է Քրիստոս, ընդ այնպիսի կուսանս, որք զինչսն ի բաց մերկանայցեն:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսային եւ հարսին (Մատթ. Իե. 1):

Յառաջ ասացելոցն աւրինակ կարգէ, զի որպէս իւրոյ գալստեանն՝ զթզենին, այսպէս իմաստուն եւ չար ծառայիցն՝ զկուսանսն: Եւ թէ ընդէ՞ր ի կուսանս առակէ ի տասն: Նախ՝ զի մեծագոյն են իրք կուսութեանն. յայտ յայնմանէ է, զի ասաց. «Են ներ-

[1] Ա > խնդրէին
[2] Բ խնդրէինս] յուզէինն
[3] Ա չի կամեցի] չկամիցի
[4] Բ > ով իցեն
[5] Ա յայն

[1] Բ՛ գլխակորք
[2] Բ վճարեցաւ
[3] Ա > առ այնոսիկ
[4] Ա > այս

քինիք, որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեանն Աստուծոյ, եւ որ կարողն է տանել՝ տարցի» (Մատթ. ԺԹ. 12), *եւ Պաւղոս, թէ՝* «Վասն կուսութեան հրաման ի Տեառնէ ոչ ունիմ» (հմմտ. Ա. Կոր. Է. 25), *եւ ի նախնումն ոչ պահանջեցաւ այս ուղղութիւն: Եւ արդ, զի մեծ են եւ առանց հարկի եղաւ, զի մի՛, որ զայն ուղղիցէ, զամենայն կատարեալ կարծիցէ եւ զայլոցն անփոյթ արասցէ, ցուցանէ աստ, թէպէտ զայլն ամենայն ունիցի կուսութիւն եւ զողորմութեանն իւղ ոչ ունիցի, ընդ պոռնիկսն եւ ընդ տմարդիսն արտաքս անկանիցի: Եւ երկրորդ՝ զի ո՛չ զամենայն հոգւոց ասէ, այլ զհաւատացեալ ուղղափառաց, եւ* «**կոյս**», *զի պարկեշտութեամբ վարեցան ի կենցաղս, որպէս աւրէն է քրիստոնէից, զի որպէս կոյս ասի, որ անփորձ է ամուսնութեան, նոյնպէս եւ զգայութիւն սոցա ոչ փորձեաց սատանայ զտասունսն:*

Իսկ «**փասն**» *ասէ զկուսանսն կամ վասն տասն զգայութեանց հոգւոյ եւ մարմնոյ, զորս սուրբս պահեցին, քանզի տասն սուրբ է, կամ զտասն բան Աւրինացն, եւ զհաւատոյ, եւ զաղաւթիցն: Այլեւ աշխարհս տասն է, որով նոքա վարեցան: Կամ զերկու կողմանց՝ զիմաստնոցն եւ զյիմարացն զգայութիւնսն ասէ, քանզի ամենայն հոգի ի մարմին է, եւ զգայութիւն հինգ են հոգւոյն, որով ներգործէ ի մարմինն, զորս խառնեալ յիրեարս՝ տասն ասաց զկուսանսն եւ ապա յետոյ յերկու հինգ բաժանէ: Դարձեալ՝ տասն զբովանդակ բնութիւնս մարդկան կոչէ, քանզի յետ ինուանցն՝ տասն սոքա են՝ ըստ դրամին* (Մատթ. ԺԸ. 12-14, Ղուկ. ԺԵ. 8-9) *եւ ոչխարին* (Ղուկ. ԺԵ. 8-10): *Կամ՝ տասն կատարեալ թիւ է, զկատարեալ բնութիւնս Ադամայ նշանակէ, իսկ զսոսա յերկու հինգ բաժանէ, զի իւրաքանչիւր ոք ի մարդկանէ հինգ զգայութեամբ վարի, եւ հինգ զգայութիւնս տասն է, զի իւրաքանչիւր զգայութիւն երկու է, որպէս երկու աչք եւ զոյգ լսելիք եւ հոտոտելիք, եւ ճաշակելիք եւ շաւշափելիք, վասն այսորիկ* «**փասն**» *ասէ եւ ի հինգ բաժանէ: Եւ* «**կոյս**» *դնէ, զի սոքա նախ անփորձ էին ի մեղաց, կամ զի զգայութիւնք առանց յիրելոյ ի զգալիսն՝ անվնաս է եւ անարատ: Իսկ* «**իմաստուն**» *եւ* «**յիմար**»՝ *զի ոմանք ուղիղ վարին զգայութեամբն, եւ ոմանք՝ թիւր:*

«**Որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսային եւ հարսին**»: *Նախ զհաւասարութիւնն ասէ կուսանացն եւ ապա զզանազանութիւնն, քանզի կոյս լինել եւ զլապտերս ունել եւ ընդ առաջ ելանել՝ հասարակք հաւասարք էին, այսինքն՝ սուրբք եւ հաւա-*

տացեալք ամենեքեան, որպէս ասացաք, կամ թէ՝ կուսանք իսկ էին: Իսկ լապտերաւքն կամ զշնորհս կուսութեանն յայտ առնէ, որպէս ոմանք ասեն, կամ զբարի գործն, զի ամենեքեան ունէին՝ ըստ այնմ. «Լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան», *եւ* «Ոչ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուանաւ», *եւ* «Տեսցեն զգործս ձեր բարիս» (Մատթ. Ե. 15, 16). *քանզի տեսանել աչացն է, եւ սա ի լոյսն հայի: Կամ զլուսաւորութիւն վարդապետութեան առաքելոցն եւ վարդապետացն* «**լապտերք**» *կոչէ, քանզի եւ յայս՝ հասարակաց վայելեցին: Եւ ելիւքն եւս հաւասարք են, քանզի ամենեքեան յանդիման լինելոց են Քրիստոսի՝ ըստ առաքելոյ* (տե՛ս Բ Կոր. Ե. 10), *եւ թէ՝* «Զձեզ զմանեսեան իբրեւ զկոյս մի խաւսեցայ յանդիման առնել Քրիստոսի» (հմմտ. Բ. Կոր. ԺԱ. 2): *Կամ՝* «**ելին ընդ առաջ**» *ասելն զայն ցուցանէ, զի նախ քան զգալուստ փեսային բարձրացան առաքինութեամբ՝ պատրաստելով զինքեանս գալստեանն նորա: Եւ ա՛յլ ազգ. զի բազումք յառաջ ելին ի կենցաղոյս նախ քան զգալուստ բանին:*

Իսկ զի ասէ «**փեսային եւ հարսին**», *կամ զընտանութիւնն Քրիստոսի, որ առ կուսանսն, յայս համեմատէ, կամ* «**փեսայ**» *զբանն ասէ եւ* «**հարսն**»՝ *զմարմինն, քանզի յոր միացաւն, նովին միութեամբ եւ յերկնից գայ, որպէս եւ երթն: Կամ* «*փեսայ*»՝ *զՔրիստոս, եւ* «**հարսն**»՝ *զնախայարուցեալ սուրբսն եւ զյափշտակեալսն, զոր* «*եկեղեցի անդրանկաց*» *ասէ Պաւղոս* (Եբր. ԺԲ. 21), *այլեւ զհրեշտակսն իմա, քանզի եւ նոքա մերձաւորք են Քրիստոսի:*

Հինգն ի նոցանէ յիմարք էին, եւ հինգն՝ իմաստունք (Իե. 2):

Բաժին մի, ասէ, ի բոլորիցն, որ զհինգ զգայութիւնս ունէին, յիմարք էին, եւ մասն մի նովիմբք զգայութեամբքս՝ դարձեալ իմաստունք, քանզի եւ այսու հասարակք էին: Եւ «**յիմարս**» *ասէ զհինգն՝ կամ թէ՝ ի մեծամեծսն վաստակեցին եւ ի փոքունս յոռացան եւ մատնիչք եղեն, քանզի զի՞նչ քան զայս յիմարութիւն կայցէ՝ յինչս յաւելուլ եւ անդր մերկ ընթանալ, ուր բազում մարդասիրութեան պէտք են եւ իւղոյ: Կամ թէ՝ մարմնեղէն զգայութեամբ միայն վարեցան յաստիս, որպէս զանասունս, զորս եւ* «**յիմարս**» *կոչէ: Այլեւ բարեգործք էին եւ կոյսք, սակայն փառս ի մարդկանէ պահանջէին, զորս յիրաւի* «**յիմարս**» *ասաց: Իսկ* «**հինգն՝ իմաստունք**»՝ *իմաստութիւն ո՛չ զկուսութիւնն ասէ, որպէս ոմանք կարծեն, քանզի ամենեքեան կուսանք էին եւ ոչինչ աւգտեցան, որպէս Եւա ի կուսու-*

թեան իւրում ամբարշտեցաւ եւ ի դրախտին փառացն զրկեցաւ: Այլ կամ զբովանդակ սրբութիւնն ասէ, որպէս հրեշտակք ունէին, մինչ զի ի տրտմութենէ եւ ի բարկութենէ սուրբս լինել եւ ի նախանձուէ եւ ո՛չ միայն ի պոռնկութենէ, կամ թէ՝ բարեգործ եւ ողորմած, եւ զայն ի փառս Աստուծոյ, եւ ի վերին կենացն հայեցումն իմացաւղ եւ տեսաւղ, կամ թէ՝ զգաստ գոլով զմարմնոյն զգայութիւնն ծառայեցուցանեն զգայութեան հոգւոյն՝ «**իմաստուն**» *անուանեցան:*

Յիմարքն առին զլապտերսն եւ ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին: Իսկ իմաստունքն առին ձէթ ամանաւք ընդ լապտերս իւրեանց (Իե. 3-4):

Աստ ընդ հասարակութեանն դնէ եւ զգանազանութիւնն, քանզի ձէթ, ասէ, ոչ բարձին յիմարքն իբրեւ զիմաստունսն. իսկ «**իմաստունքն առին,- ասէ,- եւ ձէթ ամանաւք**»: «**Իսկ յիմարքն առին զլապտերս իւրեանց**», *այսինքն՝ զկուսութիւն առանց ողորմութեան կամ զհաւատս առանց գործոց, կամ զբարի գործոց փոխարէնս զփառս ի մարդկանէ, զոր ժողովեցին ի միտս իւրեանց: Իսկ ձէթ՝ զանտի կենացն պայծառութիւնն եւ զլոյս փառաց անմատչելի լուսոյն ոչ ունէին յինքեանս:* «**Իսկ իմաստունքն առին,- ասէ,- եւ ձէթ ամանաւք ընդ լապտերս իւրեանց**»: *Զփառացն գեղեցկութիւն ժողովեցին իբր յաման ի միտս իւրեանց՝ խառնելով ընդ վարս կենաց իւրեանց, որ պայծառ էր իբրեւ զլոյս, զոր* «**լապտեր**» *ասէ, կամ ընդ հաւատոցն եւ զգործն լծեցին: Այլեւ ընդ կուսութեանն զողորմութիւնն եւ զմարդասիրութիւնն զգեցան՝ վարժեալք ի լուսաւոր բանից առաքելական եւ մարգարէական վարդապետութեանց, զոր ի ձէթ առակէ, եւ զի հեղին զսոսա ի յաղքատս, զոր «աման» կոչէ, զի յորժամ պակասիցէ այս, ընկալցին զնոսա:*

Քննելի է եւ այն, թէ ընդէ՞ր նախ յիմարքն առին զլապտերս առանց իւղոյ եւ ապա՛ իմաստունքն: Կամ թէ՝ մարմնական ախտ, զորս յիմարութիւն ասէ, ի ծննդենէ նախ ի զգայութիւնս ընդելանայ, եւ ապա յետոյ անձնիշխանականն պայծառանայ ի ձեռն տեսութեանն, կամ թէ՝ յիմարացն նախ քարոզեցաւ բան հաւատոյն, որպէս հրէից երբեմն եւ ապա հեթանոսաց, եւ թէ՝ «Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն» (Ղուկ. Ե. 32)*: Յորս հայեցեալ ոմանք՝ զառակս կուսանացս վասն հրէից եւ հեթանոսաց ասեն ասացեալ, յիմար՝ զհրէայսն, որպէս Մոսէս ասաց, թէ՝* «Ազգ

մի խորթիրդակորոյս են նոքա եւ ժողովուրդ յիմար եւ ոչ իմաստուն» (հմմտ. Բ Աւր. ԼԲ. 28), *եւ իմաստուն՝ զհեթանոսս, որ Հոգւովն իմաստնացան, եւ «լապտեր»՝ զԱւրէնսն, զոր բարձին առանց շնորհաց, եւ հեթանոսք ընկալան զգիրն հանդերձ Հոգւովն, քանզի* «ոչ եկի լուծանել, այլ լնուլ» (Մատթ. Ե. 17), *յայտ է՝ իւղով: Արդ, թէպէտ այս յարմար թուի, բայց ճշմարիտ առաջինն է, քանզի ի հինն ոչ եղեւ կուսութիւն, որպէս ասացաք:*

Եւ ի յամել փեսային՝ նիրհեցին ամենեքեան եւ ի քուն մտին (Իե. 5):

«**Յամել**» *կամ զվրէժխնդրութեան ներումն ասէ յանցաւորացն, առ որով ոչ միայն ծուլանան յիմարքն, այլեւ իմաստունքն, զի գոյ եւ քուն իմաստնոյն՝ ըստ գրեցելումն, այսինքն՝ կարծիք գայթագղութեան, որպէս ասէ Դաւիթ, թէ՝* «Նախանձեցայ ես ընդ անաւրէնս» (Սաղմ. ՀԲ. 3), *եւ՝* «Փոքր միւս եւս՝ սասանեալ էին գնացք» (հմմտ. Սաղմ. ՀԲ. 2), *գայթագղեցան եւ աշակերտքն, էանց սուր եւ ընդ կուսին անձն. այս է ամենեցուն ի քուն մտանելն: Կամ* «**յամել**»՝ *զգալստեանն ասէ ժամանակ, յորում հարսնացեալ հոգիքն սպասեն անմահ փեսային:* «**Եւ նիրհեցին ամենեքեան եւ ի քուն մտին**»՝ *ընտրեալքն եւ մեղաւորքն:* «**Նիրհել**»՝ *վասն հիւանդութեանն, եւ* «**քուն**»՝ *վասն մահուանն ասէ: Կամ զնիրհելն արդարոցն իմա, զի մահ նոցա ոչ է քուն, այլ նիրհումն, զոր Պաւղոս «ննջել» ասէ* (Ա. Կոր. ԺԵ. 6, 18), *իսկ մեղաւորացն՝ քուն՝ վասն խոր թմբրութեանն եւ յիմարութեանն: Եւ դարձեալ՝ յամելն ցուցանէ, թէ ոչ բազում ժամանակք անցանեն ընդ մէջ, այլ սակաւ ինչ յամումն է եւ յապաղումն, որով մերժէ զաշակերտսն՝ առ ի չունելոյ ակն արքայութեան նորա:*

Բայց գոյ ի տեղիս տարակուսանս, թէ ընդէ՞ր ասա յամել ասէ փեսային, եւ Պաւղոս գրէ, թէ՝ «Տէր մերձ է» (Փիլիպ. Դ. 5), *եւ այլուր, թէ՝* «Ոչ յամեցուցէ Տէր զաւետիս իւր» (Բ. Պետ. Գ. 9), *իսկ Յակոբոսս, թէ՝* «Դատաստանն առ դուրս կայ» (հմմտ. Յակոբ. Ե. 9)*: Ա՛յս իսկ է լուծումն. զի որ ի յաւիտենականն հայի, Տէր մերձ է եւ առ դուրս, իսկ որ ի կենցաղս՝ յամել թուի վասն հեշտութեանն: Եւ ա՛յլ ազգ. զի* «**մերձ եւ առ դուրս**» *ասելն զբազում անգամ այցելութիւն առնելն նշանակէ՝ ըստ այնմ.* «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ. 20), *իսկ* «**յամելն**» *վասն հանդերձեալ գալստեանն ասէ:*

Տեսցուք եւ զայն, թէ է՞ր վասն ի քուն մտին: Եւ ասեմք. նախ՝ վասն բնութեանն, զոր եւ ինքն կրեաց վասն Ադամայ վճռին՝ թէ. «Հող էիր եւ ի հող դարձցիս» (Ծնն. Գ. 19), *զի դեռ յաշխարհիս են ամենեքեան, եւ երկրորդ՝ զի ըստ չորս պատճառաց ննջէ մարդ, եւ զմենեսեան սոքա կրեցին: Մի՝ յորժամ ոք նստեալ ի ճանապարհի եւ սպասէ ընկերին գալստեան եւ ի յամել նորին ննջէ. մնացին եւ սոքա եւ ի յամելն ննջեցին, որպէս ասաց: Եւ երկրորդ՝ վասն աշխատութեանն, որպէս գրեալ է Յուդիթն, թէ՝* «Ի ճանապարհին աշխատեցայ եւ մտեալ ի տուն՝ ննջեցի» (հմմտ. Յուդիթ ԺԲ. 4). *վաստակեցան եւ սոքա՝ յայտ է ահա: Եւ երրորդ՝ ի տրտմութենէ, որպէս աշակերտքն տրտմեալ վասն մահուն Յիսուսի՝ ննջէին, որոց ասաց Տէր, թէ՝* «Ո՞չ կարացէք ժամ մի արթուն կալ» (Մատթ. ԻՁ. 40). *կրեցին եւ կուսանքն տրտմութիւն, որպէս Դաւիթ եւ Պաւղոս՝* «Զաւրհանապազ տրտում գնայի» (Սաղմ. ԼԷ. 7), *եւ թէ՝* «Տրտմութիւն կալաւ զիս ի վերայ մեղաւորաց» (Սաղմ. ճԺԸ. 53), *եւ թէ՝* «Տրտմութիւն է ինձ եւ անպակաս ցաւք սրտի իմոյ» (հմմտ. Հռոմ. Թ. 2)*: Եւ չորրորդ՝ ի չարչարանաց, որպէս Պետրոս ննջէր ի մէջ երկուց զինուորաց* (տե՛ս Գործք ԺԲ. 6), *եւ Եղիա ի ներքոյ ցրդենեւոյն վասն չարչարելոյն յԱքաաբէ* (տե՛ս Գ Թագ. ԺԹ. 3-5): *Զորս յոլովս կրեցին յանձինս չարչարանք յիմարքն՝ համանգամայն եւ իմաստունքն, վասն այսոցիկ պատճառաց ննջեցին եւ ի քուն մտին:*

Եւ ի մէջ գիշերի եղեւ բարբառ. «Ահա փեսայ գայ, արի՛ք ընդ առաջ նորա» (Իե. 6):

Ըստ առակին պատշաճի զայս ղնէ, թէ՝ **«ի գիշերի»**. *կամ ցուցանէ, թէ ի գիշերի լինելոց է յարութիւնն, որպէս ազատութիւնն Իսրայէլի ի գիշերի, եւ մահ անդրանկացն, եւ որպէս ծնունդն եւ յարութիւնն Քրիստոսի: Իսկ* **«ի մէջ գիշերի»**, *զի անգիտելի է, քանզի որպէս ի մէջ գիշերի ոչ ոք գիտէ զինչ գործէ ընկեր նորա, նոյնպէս եւ գալուստ նորա: Եւ դարձեալ՝ գիշեր վասն կռապաշտութեանն եւ մեղացն եւ կախարդութեանն ասէ՝ ըստ մարգարէին, թէ՝* «Գիշեր լիցի ձեզ ի տեսլենէ, եւ երեկոյասցի յղղձութենէ» (հմմտ. Միք. Գ. 6). *արդ, յորժամ այսոքիկ դարձեալ զաւրանան, լինի գալուստ նորա:* **«Եղեւ բարբառ,- ասէ,- «Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա»»**: *Զայս եւ Պաւղոս ասէ, թէ՝ հրամանաւ ի ձայն հրեշտակապետի եւ ի փող յետին իջանէ յերկնից* (տե՛ս Ա. Թեսաղ. Դ. 15), *քանզի* **«փող»** *զբարբառն*

ասէ, թէ **«Ահա փեսայ գայ»**: *Վասն է՞ր յառաջագոյն ասաց, թէ՝ «ընդ առաջ ելին փեսային եւ հարսին», եւ այժմ, թէ՝* **«փեսայ գայ»**: *Կամ գլխովն եւ զանդամն նշանակէ, կամ նախ փեսայ գայ ի բարբառն առաջին, եւ սուրբքն ելանեն ընդ առաջ յաւդս, եւ ապա կրկին բարբառ, յորում ամենեքեան, որ ի հող մահու ննջեալք են, յառնեն հաւասար ի մեծաձայնութենէ հրեշտակագոչ փողոյն, որպէս ասէ.*

Յայնժամ յարեան ամենայն կուսանքն եւ կազմեցին զլապտերս իւրեանց (Իե. 7):

Ի մահահանգիստ քնոյն միահամուռ յառնեն արդարքն եւ մեղաւորքն՝ ի ձայնէ բարբառոյն զաւրացեալք, քանզի ձայն Տեառն ձայն զաւրութեան է՝ ըստ մարգարէին (տե՛ս Սաղմ. ԻԸ. 4), *իսկ կազմելն զլապտերսն՝ գործոց իւրեանց համար եւ հաչիւ առնելն է եւ զհատուցումն պատրաստեալ ընդունել:*

Ասեն յիմարքն ցիմաստունսն. «Տո՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր» (Իե. 8):

Ա՛յս իսկ կարի յիմարութիւն էր, թող զառաջինն, զի յայնժամ ժամանակի խնդրէին եւ ակն ունէին առնուլ, եւ թէպէտ մարդասէրք էին կուսանքն, ոչ ետուն, եւ այն՝ զի ոչ զամենայնն, այլ մասնաւոր խնդրեցին՝ ըստ այնմ. «Էարբ Նոյ ի գինւոյն» (Ծնն. Թ. 21)՝ *ո՛չ զամենայն, որպէս եւ ոչ Աբրահամն կաթիւ ջրոյ զովացոյց զպապակ մեծատանն* (տե՛ս Ղուկ. ԺՁ. 24-26): **«Տուք մեզ,- ասեն,- յիւղոյդ ձերմէ»**, *այսինքն՝ աւգնեցէք մեզ բարի գործովք եւ աղաւթիւք ձերովք:* **«Ահա շիջանին լապտերքս մեր»**. *քանզի որպէս ասացաք, զբարի գործսն «լապտեր» ասէ, եւ այն դատարկ էր, զի յոյս նոցա յանցաւոր աշխարհիս էր, եւ ի փառս մարդկան արարին, իսկ մարդկան գովութիւն շիջաւ յետ մահուանն, քանզի անցաւոր էր, զի թէ ի մարմնաւորս, մինչդեռ կենդանի է, պակասի գովութիւնն, զի՞նչ ասես յետ մահու: Եւ զիա՞րդ պակասէ՝ ասասցէ ոք. քանզի մարդ առաւել խնդրէ զգովութիւնն, եւ որքան ի գործն է՝ գովեն, եւ նա ի գովութիւնն յեցեալ՝ աւր ըստ աւրէ պղերգանայ, եւ ի թուլանալ գործոյն՝ դադարէ եւ գովութիւնն. ապա ուրեմն յիրաւի ասացին, թէ՝* **«շիջանին լապտերքս մեր»**: *Կամ թէ՝ կազմութիւն լապտերացն կուսութեան չնորհն է, եւ որք ոչ ունին զողորմութեանն իւղ՝ շիջաւ փառք կուսութեանն, քանզի ոչինչ աւգտեցան յայնմանէ, թէ-*

պէտ ողորմութիւն խնդրէին, քանզի ողորմածացն ողորմութիւնն ասացեալ (տե՛ս Մատթ. Ե. 7):

Պատասխանի եղուն իմաստունքն եւ ասեն. «Գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական, այլ երթայք ի վաճառականս եւ գնեսջի՛ք ձեզ» (Իե. 9):

Թէ կուսանք էին եւ զլապտեր գործոցն ունէին եւ ոչ առին, ապա զի՞նչ գործեսցեն, որ ոչ են կոյսք՝ ոչ հոգւով եւ ոչ մարմնով եւ ոչ զգայութեամբք, եւ ոչ ունին լապտերս գործոց բարեաց: Ինձ թուի, թէ այնպիսիքն ոչ յառնեն ի դատաստան, այլ ի կորուստ եւ յապականութիւն եւ ի մահուանէ ի մահ փութացեալք, քանզի ասացին, թէ՝ «գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական»: *Ո՛չ ասացին ոչ տալ, որ տմարդութեան նշանակ էր, այլ թէ՝* «ոչ է մեզ եւ ձեզ բաւական», *զի ոչ նոցա մարդասիրութիւնն եւ ոչ սոցա ժտութիւնն եւ ոչ հարկաւոր պիտոյիցն կարիք արժանացոյց զնոսա խնդրոյն: Է՞ր վասն. վասն անբաւականութեանն, յորմէ ուսանիմք, թէ ոչ ոք է անդ ձեռնհաս ումեք, ո՛չ զի ոչ կամիցի, այլ զի ո՛չ կարիցէ, որպէս ասէր Աբրահամ, թէ՝* «Վիհ մեծ է» (Ղուկ. ԺԶ. 26), *եւ այլ ոմն՝* «Թէ իցեն անդ Յոբ եւ Նոյ եւ Դանիէլ, զանձինս իւրեանց միայն ապրեցուցանեն» (հմմտ. Եզեկ. ԺԴ. 14), *եւ թէ՝* «Արդարն հազիւ կեցցէ» (Ա. Պետ. Դ. 18):

Եւ ա՛յլ ազգ. յորժամ ժամանակ էր ուսանելոյ, ոչ ուսայք, արդ, ժամանակ վարդապետութեան անցեալ է, ո՛չ ումեք ուսուցանել կարեմք, եւ ոչ դուք՝ ուսանել: Եւ դարձեալ՝ ցուցանէ, թէ անյագ է մարդկային հոգին աստուածային փառացն, վասն այսորիկ ասէ Դաւիթ, թէ՝ «Յագեցայց յերեւիլ երեսաց փառաց քոց» (Սաղմ. ԺԶ. 15)՝ *գիտելով, թէ հոգի ոչ երբէք լրանայ յանտի փառացն տեսութենէ:* «Երթայք,- ասէ,- ի վաճառականս եւ գնեսջի՛ք». *այսինքն՝ երթայք ողորմութի՛ւն արարէք եւ գնեցէք ի բանաւոր աղքատացն եւ ի հոգեւոր ծիծառանցն, որք զհոգեւոր գարունն մեզ մարգարէանան՝ ի դրունս եկեղեցւոյ նստելով. ա՛նդր պարտ է ժողովել, զի աստ պիտանացու լինիցի: Կամ՝ երթայք ի վաճառականսն՝ ի մարդիկ, որոց զկուսութիւնն եւ զայլ բարեգործութիւնն վաճառեցէք եւ զգովութիւնն առէք, քանզի* «այն իսկ են վարձք նոցա» (Մատթ. Զ. 2):

Իբրեւ նոքա գնացին գնել, եւ եկն փեսայն, եւ պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, եւ փակեցաւ դուռն (Իե. 10):

Ոչ եթէ յետս դարձան յաշխարհ գնել, քանզի այն անհնար էր՝ ըստ այնմ, թէ՝ «Հոգի, որ ելանէ, այլ ո՛չ եւս դառնայ» (Սաղմ. ՀԷ. 39), *այլ ա՛յս իսկ է, զի գնացին ի միտս իւրեանց, որպէս Պետրոս երբեմն, իմանալ զփառս գործոցն, զոր ի մարդկանէ ըմբոշխնեցին, եւ զի այն շիջեալ էր, եւ մինչ յայս տարակոյսս կային, թէ զի՛նչ առնիցեն, եկն փեսայն եկեղեցւոյ՝ փառաւքն Հաւր, եւ ժողովեցան առ նա հարսունքն, որք պատրաստեալ էին զանձինս նմա՝ ի փառս Աստուծոյ առնելով զգործս իւրեանց, եւ մտին յերկնաւոր առագաստն՝ միանալով ընդ Բանին ի հոգեւոր եւ յանճառ խրախութիւնն: «Եւ փակեցաւ դուռնն». այսինքն՝ ողորմութեանն դուռն, որ բաց է աստանաւր, եւ մարդասիրութեանն գութ, կամ գործոյ ժամանակն, որպէս տնտեսն ասէր, թէ՝* «Գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ» (Ղուկ. ԺՁ. 3), *քանզի յոյժ ամաւթ է խնդրելն եւ ոչ առնուլն, որպէս սոքա: Տես եւ զա՛յն, զի որպէս նախքան զննջելն ունէին երիս հասարակութիւնս եւ մի զանազանութիւնս, այսպէս եւ յետ քնոյ մահուն գտաւ ի նոսա երիս հասարակութիւնս եւ մի զանազանութիւնս, քանզի ննջելն եւ յառնելն եւ կազմելն զլապտերսն հասարակաց էր, իսկ մտիլն ընդ փեսային եւ նոցա արտաքոյ մնալ՝ որիշ եւ զանազան, որ նշանակէ, թէ հոգւով եւ մարմնով եւ մտաւք հաւասարք էին, այլեւ զաւրէնսն՝ զբնականն եւ զգրաւորականն եւ զաւետարանականն, հանգոյն ընկալան, բայց ի պաշտաւնն Աստուծոյ բաժանեցան, զի ոմն ի փառս Աստուծոյ, իսկ ոմն ի փառս մարդկան, վասն այսորիկ եւ անդ որոշեցան: Եւ աստ դարձեալ ցուցանէ, թէ նախ արդարքն մտանեն ի փառս, եւ ապա մեղաւորքն արտաքսին ի տանջանս, որպէս ասէ.*

Յետոյ գան եւ այլ կուսանքն եւ ասեն. «Տէ՛ր, Տէ՛ր, բա՛ց մեզ»: Նա պատասխանի եւ ասէ. «Ամէ՛ն ասեմ ձեզ, եթէ ո՛չ գիտեմ զձեզ» (Իե. 11-12):

Դէմք է այս առակիս, զի այսպէս կարգէ, կամ թէ՝ այնպես պատահէ լինել, որպէս այնոքիկ, որք ասէին, «Ո՞չ յանուն քո զաւրութիւնս արարաք եւ դեւս հանաք, եւ ի հրապարակս մեր ուսուցեր», առ որս ասաց, թէ՝ «Ոչ գիտեմ զձեզ» (հմմտ. Մատթ. Է. 22, 23): *Ինձ թուի, թէ որ ինչ աստ կատարի, անդ պատկեր եւ ձեւ առնու, զի սոքա առանց ողորմութեան էին: Եւ կամ, որպէս ասացաք, զգործս իւրեանց եւ զվաստակս ի գովեստ մարդկան ծախեցին, եւ բազում*

անգամ յողորմութիւն յորդորէր Գիրք, եւ թէ՝ «Տէր ցրուէ զոսկերս մարդահաճոյից» (Սաղմ. ԾԲ. 6), *եւ թէ՝* «Մի՛ առնէք ի ցոյցս մարդկան» (հմմտ. Մատթ. Զ. 1), *քարոզէին միշտ, եւ նոքա զայս լուեալ՝ յետս ձգէին եւ ոչ անսային, այլ կախեալ զողորմութենէն Աստուծոյ կային եւ ի գործս իւրեանց վստահանային, զոր Գիրք ոչ գիտէր զաւրէնս զայսոսիկ, վասն այսորիկ յորժամ անդր ընթացան, զնոյն տեսին, զոր աստ գործեցին:*

Եւ կամ այլ ազգ ցուցանէ ասելն, թէ՝ «**յետոյ գան**». *զի թէպէտ մարդասէր լինի ոք յետ անդր գնալոյն, ոչինչ շահի եւ կամ ի պատժոցն զերծանի, քանզի աստ ոչ չոգաւ: Բայց կարի աղէտ ինձ թուի եւ դառնագոյն տանջանք, զի յետ այնքան պատերազմացն յաղթութեան եւ գործոցն երկասիրութեան՝ ի բաց վարեցան, որք շինջեալ լապտերաւք եւ ամաւթալից եւ գլխարկեալ կորանաւք յետս չոգան՝ ոչինչ աւգուտ գտեալ ի կուսութենէն, որ առանց իւղոյ էր, եւ ոչ ի գործոցն, որ ի փառս աշխարհի ներգործեալ կատարէր՝ զահագինն զայն լսելով բարբառ, թէ՝* «**Ո՛չ գիտեմ զձեզ**», *այսինքն՝ ի փառս իմ ճգնեալ եւ կամ աւրինաց իմոց հետեւաւղ եղեալ: Որ ինձ յոյժ չար եւ անհնարին տանջանք եւ դժնդակագոյն քան զգեհենն թուի, հեռանալ ի վայելչութենէ փառացն, որոյ գեղեցկութեանն ոչ գոյ չափ, եւ մերձաւորս լինել դիւաց, որոց կորուստն է պատրաստեալ: Յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոսն մեր եւ Աստուած, որում փառք եւ պատիւ վայել է միշտ ընդ Հաւր եւ Հոգւոյն իւրոյ, այժմ եւ յանբաւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Արթո՛ւն կացէք, զի ո՛չ գիտէք զաւրն եւ ոչ զժամն (Իե. 13):

Աստանաւր յայտնապէս դնէ զշահ անգիտութեան աւուրն, զի բազում աւգուտս գործէ՝ արթունս առնելով զմեզ եւ զգաստս՝ պատրաստել աներեկ աւուրն՝ բարի գործովք, զի մի՛ մնասցուք արտաքս ըստ շինման հինգ կուսանացն:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Նմանեսցի արքայութիւն Ժ. կուսանաց (Մատթ. հմմտ. Իե. 1):

Յայսմ առակէ Զ. (6) իրս ուսուցանէ մեզ.

Ա. Նախ՝ «**կոյս**» *կոչէ զազգ մարդկան:*

Բ. Երկրորդ՝ «**յիմար**» *եւ* «**իմաստուն**» *ասէ* (Իե. 2):

Գ. Երրորդ՝ «**փեսայ**» *կոչէ զինքն եւ հարսն՝* «**զեկեղեցի**» *(Իե. 5):*

Դ. Չորրորդ՝ զժամ յարութեանն ասէ:

Ե. Հինգերորդ՝ զբարբառ հրեշտակացն:

Զ. Վեցերորդ՝ զառագաստն բացեալ եւ փակեալ ոմանց:

Հարց. Վասն է՞ր ի դէմ կուսանացն առակէ:

Պատասխան. Ա. Նախ՝ զի մեծ պատիւ է կուսութեան: Եւ յայտ է ի չորից.

Ա. Առաջին՝ զի ի մէջ մարդկան փառաւոր էր, որպէս յայտ է ի ներքինեացն, որ ի մարդկանէ լինին: Եւ «**ոմանք**» *վասն արքայութեան ասաց Տէրն:*

Բ. Երկրորդ՝ զի ի հինն եւ ի նորս սակաւք եղեն, որպէս Եղիայ եւ Իեղիսէոս եւ Մկրտիչն եւ աւետարանիչն:

Գ. Երրորդ՝ զի ոչ հրամանաւ եդ, այլ ըստ կարողութեան. ասաց. «Որ կարողն է տանել, տարցէ» (Մատթ. ԺԹ. 12):

Դ. Չորրորդ՝ ասէ առաքեալ. «Վասն կուսանաց հրաման ի Տեառնէ ոչ ունիմ» (Ա. Կոր. Է. 25), *այլ գովեմ, թէ՝* «լինին իբրեւ զիս» (հմմտ. Ա. Կոր. Է. 7):

Բ. Երկրորդ՝ զի մի, որ զկուսութիւն ունին, միայն բաւական համարեսցին եւ ծուլասցին:

Գ. Երրորդ՝ ուսուցանէ, թէ որ կոյսն է եւ յիմար, ընդ պոռնիկն արտաքս ելցէ: Եւ յայտ է յեւայէ, որ կուսութեամբ մեղաւ եւ ել ի դրախտէն: Եւ հրեշտակք կոյսք էին եւ ամբարշտութեամբ դեւք եղեն:

Հարց. Ո՞րք են «**Ժ. կուսանք**» (ԻԴ. 1):

Պատասխանի. Ա. Նախ՝ ամենայն ազգ մարդկան՝ չարք եւ բարիք, որպէս Ժ. (10) դրամն եւ զմինն կորուսեալ:

Բ. Երկրորդ՝ ամենայն հաւատացեալք՝ արդարք եւ մեղաւորք, որպէս Ժ. (10) մնասն (Ղուկ. ԺԹ. 11-27) *եւ քանքարն* (Մատթ. Իե. 14-30):

Գ. Երրորդ՝ իւրաքանչիւր մարդ. Ժ. (10) զգայութեամբ, Ե.ն (5) հոգոյն իմաստունք են եւ քննողք, եւ Ե.ն (5)՝ մարմնոյն յիմարք, զի ամենայն ինչ հեշտանան, որպէս Ժ. (10) քաղաք, ասաց, ունել (Ղուկ. ԺԹ. 17):

Հարց. Վասն է՞ր «**փասն**» *(Իե. 1) ասաց:*

Պատասխանի. Վասն Դ.ից (4).

Ա. Նախ՝ զի Ժ. (10) թիւն կատարեալ է եւ նուէր Աստուծոյ: Ցուցանէ, որք կատարեալ են կուսութեամբ, նոքա նուիրին Աստուծոյ:

Բ. Երկրորդ՝ Ժ. (10) են մասունք արարածոց եւ Ժ. (10) երկինք, որպէս Է. (7) գաւտիք եւ հաստատութիւնն եւ ջրեղէնն եւ հրեղէնն ցուցանէ, թէ տեղիք կուսանաց հրեղէն երկինքն է:

Գ. Երրորդ՝ Թ. (9) դասք հրեշտակաց են եւ մարդն՝ Ժ.(10)երրորդ: Ցուցանէ, թէ կուսանքն միայն դասեսցին ընդ հրեշտակս, զի կուսութիւնն գործ հրեշտակաց:

Դ. Չորրորդ՝ Ժ. (10) զգայութիւնք է մեր, որպէս ասացաւ:

Ցուցանէ, որք կոյսք լինին եւ սուրբք մարմնով եւ հոգով եւ մտաւք, նոքա են արժանի առագաստին:

Հարց. Վասն է՞ր նախ զյիմարսն դնէ:

Պատասխանի. Վասն չորից.

Ա. Նախ՝ զի յոռութեանց նոցա զպատիւ իմաստնոցն ցուցանէ:

Բ. Երկրորդ՝ նախ՝ յիմարեցաւ բնութիւնս եւ յետոյ իմաստնացաւ:

Գ. Երրորդ՝ նախ՝ հեթանոսք էին եւ ապա՝ ի հաւատս եկին:

Դ. Չորրորդ՝ նախ՝ ի հասարակ կենաց ի ճգնութիւն ելանեմք:

Հարց. Ե՞րբ ելին կուսանք ընդառաջ փեսային (հմմտ. Իե. 6):

Պատասխանի. Այսպէս թուի, թէ յետ մահուն կամ յորժամ ի գերեզմանէն ելանեմք: Այլ Ոսկէբերանն ասէ. «Յորժամ յաշխարհական վարուց ելին»: Յորժամ զնեղ եւ զանձուկ ճանապարհն ընտրեցին, յայնժամ ելին ընդ յառաջ Քրիստոսի:

Վասն լապտերաց եւ իւղոց

Հարց. Զի՞նչ է «**լապտերն**» (Իե. 3):

Պատասխանի. Զկուսութեան շնորհսն նշանակէ: Եւ այս վասն չորից.

Ա. Նախ՝ զի սուրբ եւ յստակ է ջահն, եւ կուսութիւնն սրբէ զհոգի եւ զմարմին:

Բ. Երկրորդ՝ լուսատու է, եւ կուսութիւնն պայծառ եւ լուսաւոր առնէ զմիտս:

Գ. Երրորդ՝ զխաւար մեղաց եւ զտգիտութեան փարատէ:

Դ. Չորրորդ՝ զճանապարհս ցուցանէ, եւ կուսութիւնն՝ զերկնից ճանապարհն:

Հարց. Զի՞նչ է «**իւղն**» (Իե. 8):

Պատասխանի. Եւղ զմարդայսիրութիւն եւ զողորմութիւնն ասեն ամենայն վարդապետք: Եւ այս վասն չորից.

Ա. Նախ՝ զի նիւթ է լուսոյ, եւ ողորմածութիւնն նիւթ է մշտնջենաւոր կենացն եւ լուսոյ:

Բ. Երկրորդ՝ յամենայն իրաց գլուխն ելանէ, եւ ողորմութիւնն բարձր ի գլուխ պարծի առ դատաստանաւն:

Գ. Երրորդ՝ իւղ զուարթ առնէ, եւ ողորմութիւնն պարարէ եւ զուարթացուցանէ զհոգին:

Դ. Չորրորդ՝ անարգել յամենայն ինչ մտանէ եւ յինքն ինչ ո՛չ մտանէ: Այսպէս ողորմածութիւնն մտանէ առ Աստուած եւ առ հրեշտակս եւ առ սուրբս եւ զամենայն մեղս ծածկէ, եւ ինքն ի մեղաց ոչ ծածկի. «Զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես», ասէ (Դանիել Դ. 24):

Դարձեալ լապտերն յերից վառի, եւ թէ մինն պակասէ, շիջանի, այսինքն՝ լոյսն, իւղն եւ պատրոյգն: Եւ հոգւոյն լապտերն, այսինքն՝ կուսութիւնն, ողորմութիւնն եւ դիտաւորութիւնն, զի կուսութիւնն լոյս է եւ ողորմութիւնն՝ եւղ եւ ճիշտ դիտումն՝ պատրոյգն ի միջի, զի զկուսութիւնն եւ զողորմութիւնն վասն արքայութեանն եւ սիրոյն Քրիստոսի արասցէ: Նոյնպէս եւ հաւատք եւ յոյս ի սէրն են կապեալ:

Հարց. Զի՞նչ է «**նիրհեցին եւ ի քուն մտին**» (Իե. 5):

Պատասխանի. Երեք ինչ ցուցանէ.

Ա. Նախ՝ թէ բազում ժամանակք անցանեն ի միջի:

Բ. Երկրորդ՝ ի դէմս աշակերտացն, զի մի՛ փութով խնդրեսցեն զարքայութիւնն ի կեանս այս:

Գ. Երրորդ՝ թէ քուն է մահն, որպէս ասեն իմաստունք: Նինջն մահ է առժամանակեայ եւ մահն՝ քուն յաւիտենից:

Հարց. Վասն է՞ր զմահն «**քուն**» *կոչեն գիրք:*

Պատասխանի. Ա. Նախ՝ զի երկոքին խափանեն զգայարանս:

Բ. Երկրորդ՝ զի յերկոսին յառանձնանայ հոգին ըստ ինքեան:

Գ. Երրորդ՝ որպէս ի քուն դիւրագարթն ունի ձայնէ, այսպէս եւ Քրիստոս դիւրաւ ձայնիւ միայն յարուցանէ զմեռեալս ամենայն, որպէս զՂազար՝ ըստ նմա. «Մեռեալք, լսիցեն ձայնի Որդւոյն [Աստուծոյ, եւ որք լսիցեն], կեցցեն» (Յովհ. Ե. 25):

Հարց. Զի՞նչ է «**Ի մէջ գիշերի**» (Իե. 6):

Պատասխանի. Կամ առակն այնպէս պատշաճէր. կամ ի գիշերի լինելոց է յարութիւնն, զժամն ուսուցանէ ի մէջ գիշերի յաւուր

կիրակէի, յորում ժամու ինքն յարեաւ ի գերեզմանէ: Եւ որպէս յայնժամ լերինն Սինեայ՝ հրով եւ միգով եւ փողով, գայցէ ի նոյն աւրն ի դատեալ: Տե՛ս, զի պարտ է կանանց ի մէջ գիշերի յառնել եւ զլապտերս մտաց պատրաստել աղաւթիւք եւ թէ ոչ հանապազ պարտ է ի կիրակէն ի մէջ գիշերի կանխել, ըստ Դաւթի (տե՛ս Սաղմ. ԼԱ. 4):

Հարց. Զի՞նչ է փողն յետին, որ ասէ առաքեալ (տե՛ս Ա. Կոր. ԺԵ. 52):

Պատասխանի. Առաջին փող մարգարէքն էին, միջին՝ առաքեալք եւ վարդապետք, վերջինն՝ հրեշտակք: Սոքա կոչեն յԱւրէնս եւ ի շնորհս եւ ի փառս:

Հարց. Զի՞նչ է բարբառ փողոյն:

Պատասխանի. Այսինքն՝ «ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորայ» (Մատթ. ԻԵ. 6):

Վեց բան է կատարեալ:

Վասն փեսայի եւ հարսին

Հարց. Վասն է՞ր «փեսայ» կոչի Քրիստոս (ԻԵ. 6):

Պատասխանի. Վարդապետք ասեն վասն Ժ. (10) պատճառի.

Ա. Նախ՝ վասն ջերմ սիրոյն, որ ունի առ հարսնացեալ եկեղեցի:

Բ. Երկրորդ՝ վասն գերազանց միաւորութեանն, որ ցուցաւ նախ:

Գ. Երրորդ՝ փեսայն միայն է Տէր հարսինն, եւ Քրիստոս միայն է գլուխ եկեղեցոյ:

Դ. Չորրորդ՝ փեսայն միայն ունի զթագ, եւ Քրիստոս միայն է թագաւոր ամենայնի:

Ե. Հինգերորդ՝ եւ հարսին թագ դնէ, յորժամ գայ Աստուած ի մէջ աստուածացելոց:

Զ. Վեցերորդ՝ փեսայն միշտ ցանկայ զկատարումն կամաց, եւ Քրիստոս միշտ ցանկայ զփրկութիւն մարդկան:

Է. Եւթներորդ՝ ծնաւղ է զաւակաց, եւ Քրիստոս ծնանի աւազանաւն զմեզ:

Ը. Ութերորդ՝ սերմանո՛ղ է փեսայն, եւ Քրիստոս զամենայն բարիս սերմանեաց ի հոգիս:

Թ. Իններորդ՝ քաղցր է ձայն հարսին փեսային, եւ քաղցր է երգն եկեղեցոյ Քրիստոսի:

Ժ. Տասներորդ՝ փեսայն թողեալ զհայրն եւ զմայրն՝ ընթանայ զհետ հարսինն՝ ըստ Ադամայ, եւ Քրիստոս՝ անբաժանաբար թողեալ զՀայր ի յերկինս եւ զմայր ի յերկրի, եւ եկն ի խաչ վասն մեր:

Այսպէս եւ եկեղեցի «**հարսն**» *կոչի՝ ըստ այնմ.* «Որ ունի հարսն, նա է փեսայ» (Յովհ. Գ. 29)*: Եւ այս ցուցաւ ի Մեկնութիւնս Երգոց, Գ. (3) համարն տե՛ս*[1]*:*

Վասն իմաստութեան կուսանաց

Հարց. Զի՞նչ է իմաստութիւն կուսանացն (ԻԵ. 2):

Պատասխանի. Հինգ ինչ.

Ա. Նախ՝ զի զմարմինն եւ զհոգին սուրբ պահեն:

Բ. Երկրորդ՝ ընդ կուսութեան եւ զիւղն ողորմութեան խառնեն:

Գ. Երրորդ՝ զհաւատս եւ զգործս ստանան:

Դ. Չորրորդ՝ զձայն փեսային ի միտ պահեցին, որ ասէր. «Ողորմութիւն կամիմ եւ ո՛չ զզոհ» (Մատթ. Թ. 13):

Ե. Հինգերորդ՝ զի նախ զիւղն պատրաստեցին ըստ մարգարէին. «Պատրաստեցայ եւ ո՛չ խռովեցայ» (Սաղմ. ՃԺԸ. 60):

Հարց. Զի՞նչ է յիմարութիւն կուսանաց:

Պատասխանի. Հինգ ինչ.

Ա. Նախ՝ ընդդէմ իմաստնոցն զմարմին կոյս պահեն եւ ոչ զհոգին:

Բ. Երկրորդ՝ որ զմեծամեծս վաստակեցին եւ ի փոքունս ընչասիրութեամբն յոռի գտան:

Գ. Երրորդ՝ որ աստ զինչս ժողովեցին եւ անդ՝ մերկ երթան:

Դ. Չորրորդ՝ աստ ընկերացն ոչ ետուն եւ անդ կամին առնուլ:

Ե. Հինգերորդ՝ որ անժամ խնդրեցին:

Եւ գիտելի է, զի Դ. (4) իրաւք ոչ առնումք զխնդրելին:

Ա. Նախ՝ թէ ո՛չ խնդրեմք, եւ սոքա խնդրեցին:

Բ. Երկրորդ՝ թէ ոիժդիցեն տուողք, եւ իմաստունքն ողորմածք էին:

Գ. Երրորդ՝ թէ զամենայն խնդրեն, եւ սոքա՝ «տուք մեզ իւղոյդ», ասեն, «մասն ինչ» (հմմտ. ԻԵ. 8):

Դ. Չորրորդ՝ թէ չլինի կարիք, եւ սոքա ասեն՝ «**Շիջանին լապտերք**» (ԻԵ. 8):

---

[1] Տե՛ս ձեռ. Հմր 1200, էջ 379աբ:

Ապա՝ յայտ է, զի ո՛չ վասն անգթութեան ոչ տուին, այլ զի ոչ էին ձեռնհաս: Եւ Աբրահամ ողորմածն էր քանանացւոց. մեծատանն կաթիլ մի ջրոյ ոչ ետ (տե՛ս Ղուկ. ԺԶ. 25):

Յայսմանէ յայտ է, զի ոչ գոյ անդ աւգնութիւն մարդկան՝ ո՛չ տալ, ո՛չ առնուլ, ո՛չ գտանել եւ ոչ այլ ինչ:

Գնացէք ի վաճառականքն եւ գնեցէք, ուստի մեք գնեցաք (Իե. 9):

Հարց. Եւ ո՞րք են իւղավաճառք, այսինքն՝ աղքատք, կոյրք, կաղք եւ այլք: Նոքա են բանաւոր ծիծռունք, որ զդէմս Քրիստոսի ունին եւ զյարութիւն գուշակեն եւ ի դրունս եկեղեցոյ են նստեալ եւ վաճառեն զիւղն մեզ:

Եկն փեսայն, եւ պատրաստքն մտին (Իե. 10):

Այսինքն՝ եկն խնդութիւնն, եկն արդարոցն պարծանքն, եկն ի գիշերի լոյս եւ եմոյծ յառագաստն, եւ փակեցաւ դուռն: Վա՛յ իմ մտաց եւ եղուկ լսելեաց: Եւ «դուռն» կոչի Քրիստոս, որպէս ասէր. «Ես եմ դուռն» (Յովհ. Ժ. 9) *վասն երից.*

Ա. Նախ՝ դուռն կոչի մարդկութիւնն, զի նովաւ Աստուած ի յաշխարհս եմուտ:

Բ. Երկրորդ՝ դուռն կոչի եւ մարմինն մեզ, զի նովաւ յաստուածութիւնն մտանեմք:

Գ. Երրորդ՝ դուռն է բոլորն Քրիստոս, զի նովաւ առ Հայր ելանեմք՝ ըստ նմա. «Ոչ ոք գայ առ Հայր, եթէ ոչ ինեւ» (Յովհ. ԺԴ. 6):

Նոյնպէս «ճանապարհ» *կոչի ըստ երիցս այսոցիկ.*

Ա. Նախ՝ զի Բանն Աստուած մարմնով եկն առ մեզ:

Բ. Երկրորդ՝ եւ մարմնով առ Բանն ընթանամք:

Գ. Երրորդ՝ եւ բոլորիւն առ Հայր ընթանամք:

Յեղոյ գան եւ այլ կուսանքն (Իե. 11):

Յամենայն կողմանց պաշարեալք, ճրագք անցեալ, գլուխ խոնարհեալք, սիրտք տրտմեալք. տեսանէք եղբարք զայն ամենայն վաստակեալք, զմոլեգին պատերազմ բնութեանս յաղթեալք՝ յառագ[աստ] ո՛չ մտին եւ զփեսայն ո՛չ տեսին:

Հարց. Վասն է՞ր ինքն պատասխանեաց՝ չգիտել եւ ոչ հրեշտակք:

Պատասխանի. Ա. Նախ՝ զի մորմոքեսցին, յորժամ զձայնն լուիցեն եւ ոչ տեսցեն:

Բ. Երկրորդ՝ ոչ քաղցր ձայն, այլ զբարկութեան լսեն, որ առաւել դժնդակ է, քան զհուր գեհենի:

Գ. Երրորդ՝ զի մի լիցի այլ ոք միջնորդ եւ բարեխաւս. ինքն տայ պատասխանի:

Հարց. Թէ ոչ ունիմք ինչք, ոչ եմք կոյս:

Պատասխանի. Նախ ասեմք, եթէ բազում է իւղն, որպէս գործնականն տեսակն իւղն է, եւ գործքն հաւատոյն իւղ է, եւ սէրն յուսոյն իւղ է, ծունր եւ արտասուք աղաւթիցն իւղ է, այսպէս եւ աղքատութիւնն կուսութեան իւղ է:

Դարձեալ ասեմք, թէ չունիս ինչք, ունիս մարմին, բան, սիրտ, կամք. դոքաւք սիրեա՛ եւ լե՛ր իմաստուն կոյս:

Հարց. Պա՞տ է ի մեծի գիշերին Ժ. (10) մոմ վառել եւ հինգն շիջուցանել:

Պատասխանի. Այո՛յ, պարտ է ամէն Աւետարանի կրկին մոմ վառել, որպէս ինքն ասաց. «Ես եմ լոյս աշխարհի» (Յովհ. Ը. 12):

Ա. Նախ՝ զի լոյս է հոգոյ եւ մարմնոյ:

Բ. Երկրորդ՝ լոյս է աստ եւ ի հանդերձեալն:

Գ. Երրորդ՝ զի կրկին հրեշտակն նստէր ի գերեզմանին:

Իսկ յայնմ աւուր պարտ է Ժ. (10) մոմ վառել ի խորհուրդ Ժ. (10) կուսանացն:

Եւ այս վասն Գ. (3) պատճառի.

Ա. Նախ՝ զհանդէսատուրն պատուեալ:

Բ. Երկրորդ՝ զի աչաւք տեսցեն եւ ի միտ առցեն:

Գ. Երրորդ՝ զի բազում խորհուրդ ունի.

ա. Նախ՝ ցուցանէ զփառս եւ զկեանս արդարոց եւ զկորուստ մեղաւորաց:

բ. Երկրորդ՝ զհաւատացեալս եւ զանհաւատս յերկրի:

գ. Երրորդ՝ զի Ե. (5) զգայութիւն հոգ յոսման եւ Ե. (5)՝ ի հոգ լուծանի:

Վասն արթնութեան եւ քնոյ

Հարց. Զի՞նչ է «Արթո՛ւն կացէ՛ք» (Իե. 13):

Պատասխանի. Զորս է արթնութիւն, այսինքն՝ բարի եւ բարեգոյն, չար եւ չարագոյն: Բարի է, որ զգայարանաւք ի գործ աշխատութեան լինի եւ բարեգոյն, որ մտաւքն ի խոկումն մահուն եւ կոտորած լիցի: Եւ չար, որ զգայութեամբն զմեղս զգայ եւ տեսանէ եւ լսէ: Եւ չարագոյն, որ մտաւքն խորհի, կամի զչարն:

Նոյնպէս եւ Դ. (4) է քուն. բարի քուն է, որ զչափաւորն ննջէ եւ բարեգոյն, որ յաշխարհէ անհոգ լիցի, իսկ չար քուն է, որ ծուլութեամբ ննջէ եւ չարագոյն, որ ի մեղս հեշտանայ եւ ննջէ: Վասն սորայ ասէ. «Լոյս փուր, Տէր, աչաց, զի մի՛ [ե]ղբէք ննջեցից ի մահ» (Սաղմ. ԺԲ. 3), «Եւ զարթոյ զաչս իմ» (Սաղմ. ճԺԸ. 18):

ԱՌԱԿ ՔԱՆՔԱՐԱՑ

Մատթ. Իե. 14-30

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Քանզի որպէս այր ի գնալն իւրում, կոչեաց զծառայս իւր եւ աւանդեաց նոցա զինչս իւր, ումեմն եւ հինգ տաղանդ, ումեմն՝ երկու, ումեմն՝ մի (Մատթ. Իե. 14):

«**Տաղանդ**» *կշռոյ անուն է, որպէս դիտր, մնաս եւ այդպիսիք ինչ, զոր թարգմանեցին առաջին թարգմանիչքն* «**բանքար**»: «**Այրն**», *որ ետ զքանքարն՝ Քրիստոս ուսուցանել զաստուածային բանս.* «Զարծաթ իմ ընտրեալ եւ փորձեալ եւթնապատիկ ի հողոյ (հմմտ. Սաղմ. ԺԱ. 7), *եւ վերացեալ ի հեռաստան աշխարհ, յերկրէ ի յերկինս: Բայց վասն է՞ր* «**հինգ**» *եւ* «**երկու**» *եւ* «**մի**» *ասին: Որ զհինգն էառ՝ ճշմարտապէս գիտացեալ զվեհագոյն միտս աստուածային գրոց ըստ Սողոմովնի, հինգ աստուածային զգայութեամբք ըստ Պաւղոսի, կրթեալք զգայարանաւքն փոխեցան անտուստ տեսանել զաներեւոյթն, որ ի սկզբանէ աշխարհիս արարածովս իմացեալ, եւ զայլս ուսուցին ամենայն աստուածային վարդապետութեամբ: Իսկ որ* «**զերկուսն**», *սմա ոչ պարգեւեցաւ միայն գիրն, այլ եւ զաւրութիւն աստուածային գրոց, թէպէտ եւ ոչ այնպէս կատարեալ, որպէս որ հինգ էառ. այսպեսոյս նախ քննեալ զտեսակս արարածոց Աստուծոյ եւ զհիւթս նոցա, եւ ի սոցանէ փոփոխեալ յարարիչն հիւթոյն եւ ի տեսակացն, յանդրանիկն ամենայն արարածոց, ուսուցեալ եւ զայլս կրկնապատիկ արար զերկուսն: Իսկ որ զմինն էառ, զգիրն միայն որպէս եւ Հրէայքն, եւ միտք գրոյն թաքեան ի նմանէն եւ զայլս ոչ ուսուցին, այլ ի խորութիւն սրտի իւրեանց թաքուցին, զոր պարտ էր արկանել ի սեղանաւորս, ի վարդապետս հմուտս, որք ունէին բարի վարդապետութիւն եւ ի նոցանէ զմիտս գրոյն ուսանել եւ զայլս ուսուցանել. արդ, վասն զի ոչ արար զայդ, զոր պարտ էր առնել, ելանէ ի խաւարն արտաքին. եւ զարմանա՞ս եթէ վասն ոչ ուսուցանելոյ զբանն Աստուծոյ այսպէս պատուհասի: Լո՛ւր Պաւղոսի.* «Վա՛յ է ինձ, - ասէ, - եթէ ոչ աւետարանեմ» (հմմտ. Ա. Կոր. Թ. 16): *Խաւարն արտաքին է, ուր հոգին ամենեւիմբ խաւարեալ է դառն տրտմութեամբ եւ ոչ է այցելութիւն աստուածային լուսոյ. եւ Փիլովն Եբրայեցի,*

եթէ թու[ի] քեզ այրն ընդունելի զմովսէական գիրսն պատմելով, զխաւարն որ ի վերա[յ] անդնդոց արտաքս քան զբոլոր աշխարհս, ասէ, զինել. եւ տե՛ս, թէ անարժանք աշխարհիս արտաքսին ի բոլոր աշխարհէս, եւ ոչ միայն ի դրախտէն Աստուծոյ:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Իսկ թէ ի Ղուկաս այլազգ կա տաղանդացն առակ (տե՛ս Ղուկ. ԺԹ. 11-27), *առ այն զայս պարտ է ասել, թէ այլ այս է եւ այլ՝ այն:*

Ոմն ասէ, թէ՝ հինգ տաղանդ եդուր ցիս, եւ ոմն՝ երկու (Մատթ. հմմտ. Իե. 20):

Ցուցանէ, թէ ի նմանէ առին զպատճառս շահաւորութեանն եւ կարի իսկ շնորհ ունին եւ զամենայն նմա համարին եւ առ այն, զինչ ասիցէ Տէրն:

«Քաջդ ծառայ եւ բարեգործ» (հմմտ. Իե. 21, 23):

Եւ այն իսկ է բարեգործին զընկերին իրս տեսանել: Եւ «հաւատարիմ» ասէ (Մատթ. Իե. 21, 23):

«Որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ» (Իե. 21):

Զամենայն երանութիւնս այսու բանիւ յայտ առնէ: Բա[յ]ց միւսն ո՛չ այսպէս, այլ որպէս՝

«Գիտէի,- ասէ,- զի այր մի խիստ ես» (Իե. 24) *եւ այլն*[1]*:*

Եւ առ այն, զ՞ինչ ասիցէ տէրն. պարտ էր, ասէ, տալ զարծաթդ իմ ի տրապիզիտս[2]*: Այսինքն՝ խաւսել պարտ էր, խրատել, թելադիր լինել: Զանսային, ասէ, եւ քո զի՞նչ վնաս էր յայնմ, զի՞նչ այլ հեզութիւն այնպիսի կայցէ, զի մարդիք ոչ առնեն այնպիսիս, այլ զփոխատուսն առնեն պարտապան պահանջելոյն: Իսկ նա ո՛չ այնպէս, այլ քեզ պարտ էր, ասէ, տալ եւ զպահանջելն յիս ապաստան առնել:*

«Եւ ես, եկեալ,- ասէ,- փոկոսեաւք պահանջէի զայն» (հմմտ. Իե. 27):

[1] Բ եւ որ ի կարգին] եւ այլն
[2] Բ տրապէզիտս

Զունկնդրութիւն[1] *գործոցն հանդէս, քեզ զդիւրագոյնսն պարտ էր առնել, եւ ինձ՝ զդժուարագոյնսն թողուլ, որովհետեւ զայն չարարեր:*

«Առէք, - ասէ, - ի դմանէ զտաղանդ եւ տուք այնմ, որ ունիցի զտասն» (հմմտ. Իե. 28):

Զի՞նչ իցէ այս, որ զշնորհսն բանին վարդապետութեան յաւգուտ ունիցի եւ չարկանէ ի կիր, զշնորհսն կորուսանէ, եւ որ փոյթ յանձին ունիցի մատակարարել, եւս առաւել ամփոփէ յինքն զպարգեւսն, զոր աւրինակ որ էառ եւ չէարկ ի կիր կորոյս: Բայց ոչ մինչ ցայն եւեթ է վնաս վատացելոյն, այլեւ անհնարին տանջանս կրիցէ: Տեսանես, զի ոչ միայն յափշտակողն եւ ագահն, այլեւ որ զբարիսն չգործիցէ, տանջելոց է զանհնարին տանջանսն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Որպէս այր մի, գնացեալ ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իւր եւ եդ նոցա զինչս իւր (Մատթ. Իե. 14):

Կուսանաց առակն յընչիցն ողորմութիւն առնելոյ վասն ասացեալ եղեւ, եւ կամ որք զգործս ի փառս մարդկան արարին՝ կարգեցաւ այն, իսկ այս՝ որ ոչ ընչիւք եւ ոչ բանիւք եւ ոչ վերակացութեամբ եւ ոչ այլ ինչ իւիք կամին աւգուտ առնել ընկերացն, այլեւ ոչ իսկ բարեգործք լինիցին, այլ զամենայն թագուցանիցեն: «Որպէս այր մի,- ասէ,- գնացեալ ի տար աշխարհ». «այր»՝ ոչ միայն յաղագս կատարեալ աստուածութեանն, այլեւ յաղագս այրացելոյ Յիսուսի աստուածաստեղծութեանն, որ յաստուածութենէն եւ ի մարդկութենէն մի եղեւ՝ Որդի Աստուծոյ եւ մարդոյ: Զսա՛ ասէ «գնացեալ ի տար աշխարհ». «գնաց»՝ զմահուն ասէ եւ զչարչարանացն, որ յոյժ միջոց է ընդ կենդանիս եւ ընդ մեռեալս, կամ զդժոխս, որ հեռի եւ անծանաւթ է ի մերմէ բնութենէս, այլեւ զյառնելն ի մեռելոց եւ զնստիլն ընդ աջմէ Հաւր, որով եւ երկայնմտութեամբ ներէ իսկ: Գնալ անուանէ ի տար աշխարհ, քանզի ոտից մարդկան անկոխելի է եւ մտաց եւս անհասանելի, զոր Պաւղոս «ներքին կողմն վարագուրին» կոչէ (Եբր. Զ. 19): **«Կոչեաց զծառայս իւր եւ եդ նոցա զինչս իւր»**. *ոչ է այս ըստ մշակացն յայգին, այլ ամենեքեան գործաւորք*

[1] Բ զունկնդրութիւնս

են, քանզի ոչ եթէ առ իշխանսն միայն եւ կամ ընդ հրէայսն եւեթ, այլ ընդ ամենեսեան խաւսի՝ կոչելով ի ձեռն առաքելոցն՝ Աւետարանին վարդապետութեամբ ի հաւատս եւ ի գործս, քանզի այս է ինչք նորա: Այլեւ զշնորհս ասէ զպէսպէս՝ զհոգեկանս եւ զմարմնականս, զի ամենեքեան Աստուծոյ են, զոր Պաւղոս թուէ (տե՛ս Ա. Կոր. ԺԲ. 8-11), *եւ այլուր՝* «Թէ առէր, զի՞ պարծիս իբրեւ չառեալ» (Ա. Կոր. Դ. 7): *Նաեւ զխոստումն անճառ բարեացն ինչս իւր անուանէ:*

Ումեմն եւ հինգ քանքար եւ ումեմն՝ երկուս, եւ ումեմն՝ մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի, եւ գնաց (Իե. 15):

«Հինգ»՝ *որ զբնական իմաստութիւնն միայն գիտէ ի ձեռն հինգ զգայութեան առանց մտաց Գրոց: Եւ որ զերկուն էառ՝ նոքա են, որ զբնականն ունին եւ զմիտս Գրոց: Իսկ որ զմին էառ՝ նոքա որ զմիտս Գրոց միայն գիտեն: Եւ ի սմանէ առնուլ զմին եւ տալ այնմ, որ զհինգն ունի, այն իսկ է, զի էառ ի նոցանէ զծանաւթութիւն մտաց Գրոց եւ ետ բնականացն, որպէս ետ զմեկնութիւն Գրոց Դիոնէսիոսի եւ այլոց՝ ի բաց բառնալով ի հրէից վարդապետաց եւ տալով հեթանոսաց իմաստասիրաց: Նախ արժան է գիտել, եթէ այս առակ եւ որ ի Ղուկասն կայ ասացեալ վասն տաղանդացն* (տե՛ս Ղուկ. ԺԹ 12-28), *մի՞ են, եթէ զանազան: Արդ, ոմանք ասեն, թէ՝ այլ այս, եւ ա՛յլ է այն, բայց ինձ թուի, թէ մի են: Իսկ թէ ասիցէ ոք, ընդէ՞ր ապա տասն են անդ մնասն, զոր ետ, եւ աստ՝ ութ ի հաշիւ արկանէ. ասասցուք, թէ տասն են՝ ըստ Ղուկայ, սակայն զերկուսն ոչ պահանջէ, որպէս աստ ցուցանէ, զհաւատն ասեմ եւ զմկրտութեանն շնորհ, քանզի ձրի ետ, իսկ այլք զբնական աւրէնսն, ասեն, եւ զգրաւորականն յաշակերտաց Աւետարանիս ոչ խնդրէ, քանզի նա զտալն ասէ, եւ սա՝ զխնդրելն:*

«Ումեմն եւ,- ասէ,- հինգ քանքար». *տաղանդն* «քանքար» *ասի ըստ եբրայեցւոցն, որ է ինն հազար դահեկան, եւ ոմանք տասն ասեն, եւ է այս հինգ շնորհ, զորս թուէ առաքեալ.* «Եթէ ոք ի ձէնջ սաղմոս ունիցի, վարդապետութիւն ունիցի, յայտնութիւն ունիցի, լեզուս ունիցի, եւ եթէ թարգմանութիւն ունիցի» (Ա. Կոր. ԺԴ. 26): *Եւ* «քանքար»՝ *վասն զտեալ եւ փորձեալ աստուածային շնորհին, կամ որ զհինգն առ՝ գիտաց ճշմարտապէս զվեհագոյն միտս աստուածային գործոց ըստ Սողոմոնի, եաւթն աստուածային զգայութեամբք կրթեալ ըստ Պաւղոսի՝ յընտրութիւն բարւոյ եւ չարի, զոր* «կատարեալս» *կոչէ առաքեալ* (Յակ. Ա. 17):

Իսկ «ումեմն՝ երկուս»: *Զայս Պետրոս ասէ.* «Եթէ ոք վարդապետէ իբրեւ զԱստուծոյ պատգամ, զոր շնորհեաց նմա Աստուած, եւ եթէ ոք մատակարարէ իբրեւ ի զաւրութենէ Աստուծոյ, զոր տուեալ է նմա» (հմմտ. Ա. Պետ. Դ. 11), *եւ կամ* «Տեսանելի է արարածովքս իմացեալ զաներեւոյթ զաւրութիւնն Աստուծոյ» (հմմտ. Հռոմ. Ա. 20)՝ *եւ զայլս ուսուցին աստուածային վարդապետութեամբ, կամ զհոգեկան եւ զմարմնական առաքինութեան սերմանս ընկալան: Եւ դարձեալ՝ եթէ հոգեւոր իշխան իցէ, ունի առ ընթեր եւ զմարմնաւոր հոգաբարձութեան պայծառութիւն, կամ զՀին եւ զՆոր Կտակարանս, այլեւ աստուածսիրութեան եւ մարդասիրութեան զաւրութիւն, կամ զհաւատոց եւ զգործոց, կամ զտեսական եւ զգործնական:* «Եւ ումեմն՝ մի, իւրաքանչիւր [ըստ իւրում կարի]». *այսինքն՝ մի շնորհ՝ հոգեւոր կամ մարմնաւոր, հոգեւոր՝ որպէս սարկաւագութիւն, եւ մարմնաւոր՝ որպէս հիւսնութիւն կամ դարբնութիւն, քանզի զայս վասն այնորիկ եդ, զի ցուցանէ, թէ որ յոյժ պակասն է՝ ի միոջ նուազ է, որպէս ասէ, թէ իւրաքանչիւր ըստ իւրում կարի յԱստուծոյ ընկալան եւ ի վերուստ ունին զնպաստաւորութիւն շնորհացն, որով պանծան:*

Զոգաւ վաղվաղակի՝ որ առ զհինգն, գործեաց նոքաւք եւ շահեցաւ այլ եւս հինգ (Իե. 16):

Թէ ասիցէ ոք, թէ ընդէ՞ր ոչ առանց նորայոց ինքեանք գործեցին, այլ նորին տրաւքն շահեցան, ասասցուք՝ զի մի՛ ի պահանջելն դժուարիցին՝ իբրեւ ոչ տուեալ, եւ մի՛ ի գործելն հպարտասցին՝ իբրեւ նոր իմն գործ գործեալ, վասն այսորիկ առեալ զնորայն՝ աճեցուցին, զի մի՛ պակասիցէ առողին բարին քան զտուողին սերմանս: «Զոգաւ,- ասէ,- վաղվաղակի՝ որ առ զհինգն, գործեաց նոքաւք եւ շահեցաւ այլ եւս հինգ». *կամ զգաւրութիւնն, զոր ստացան, զայն արդեամբք կատարեցին, կամ թէ՝ զառեալ շնորհս ի պէտս այլոց մատակարարեցին: Իսկ* «վաղվաղակի» *ասելն՝ զի փութով եւ յաւժարութեամբ եւ ո՛չ ի հարկէ եւ բռնադատութեամբ:*

Նոյնպէս եւ որ զերկուսն՝ շահեցաւ այլ եւս երկուս (Իե. 17):

Ըստ առաջնոյդ տեսլեան եւ զա՛յս իմա. բայց ասելն, զի այլ է սերմն, եւ այլ է պտուղն, կամ այլ են գործքն, եւ այլ են փառքն՝ զի ոմն՝ ի մարդոյ, իսկ փառքն՝ յԱստուծոյ:

Եւ որ զմին առ՝ գնաց փորեաց զերկիր եւ թագոյց զարծաթ տեառն իւրոյ (Իե. 18):

Այսոքիկ նոքա են, որք հաւատացին եւ բնաւին գործոյ փոյթ ոչ արարին, զի կամ ընդ առնուլն մեռան եւ յերկիր թաղեցան, որպէս նոքա ի ժամ մահուն զմկրտութիւնն կամ զհաղորդութիւնն խնդրեն, եւ կամ առեալ՝ երկրասէրք եղեն եւ գարշապարաւք իւրեանց յերկիր խրեցան, եւ զարծաթ շնորհացն ոչ մաքուր գործովք արծարծեցին, այլ չարութեամբ ամփոփեցին եւ զլոյս Հոգւոյն շիջուցին՝ ոչ վարժեալք յառաքելոյ, թէ՝ «Մի՛ շիջուցանէք զՀոգին» (Ա. Թես. Ե. 19), *որով կնքեցարուք յաւուրն փրկութեան: Եւ դարձեալ՝ նոքա են, որ զշնորհս ոչ ի բազմաց աւգուտս մատակարարեցին, այլ ի պէտս անձանց իւրեանց խորեցին, նաեւ այնոքիկ, որք ի գիրն հային եւ ո՛չ ի Հոգին, որպէս հրէայք եւ թանձրամիտք, որք թագուցին զմիտս գրոյն ի խորութիւն սրտից իւրեանց՝ զլուսաւոր բան աւրինացն Աստուծոյ:*

Յետ բազում ժամանակի գայ տէր ծառայիցն այնոցիկ եւ առնէ համարս ի մէջ նոցա (Իե. 19):

Ցուցանէ, թէ առաջինս շնորհաց էր ժամանակ, իսկ միւսանգամ գալուստն՝ դատաստանի եւ համարս պահանջելոյ: Բայց «**յետ բազում ժամանակաց**» *ասելն ըստ կարծեաց հեշտասիրացն դնէ, ապա թէ ոչ՝* «հազար ամ յաչս Տեառն իբրեւ աւր երեկի է, զի անց» (Սաղմ. ՁԹ. 4), *իսկ* «**ի մէջ նոցա առնել զհամարն**» *զիրաւունս դատաստանին ասէ, զի նոցուն վկայութեամբ կնքի վճիռն գեղեցկացն եւ կամ այլ ազգ ունողացն՝ ըստ այնմ, թէ՝ «Բերանաւք իւրեանց հաճեսցին»* (Սաղմ. ԽԸ. 14):

Եւ մատուցեալ, որ զհինգ քանքարն առ, մատոյց այլ եւս հինգ քանքար եւ ասէ. «Տէ՛ր, հինգ քանքար եդուր ցիս, արդ ահաւասիկ հինգ այլ եւս քանքար ի վերայ շահեցայ» (Իե. 20):

Զհպատակութիւն աշակերտին ցուցանէ, թէ առ ի նմանէ ունի զպատճառ շահաւորութեանն, եւ կարի իսկ շնորհ նմին ունի եւ զամենայն նմա համարի՝ ըստ առաքելոյ, թէ՝ «Ոչ ես, այլ շնորհն Աստուծոյ, որ ընդ իս» (Ա. Կոր. ԺԵ. 10), *զորս* «ընդունայն ոչ վատթարեցի» (Փիլիպ. Բ. 16)*: Նաեւ այսու այլ իմն նշանակէ, եթէ ոչ միահաղոյն դատաստան, այլ ուրոյն ուրոյն առանձինն հարցաքննութիւն լինելոց է:*

Դարձեալ՝ այսոքիկ նոքա են, որ զբազումս առին եւ զբոլորն յաւգուտ այլոց մատակարարեցին, այլեւ յամենայն սրտէ եւ ի զաւրութենէ զԱստուած սիրեցին եւ զհրամանս նորա առանց թերութեան լցեալ կատարեցին, որպիսի ոք էր Պաւղոս, զի ասէր. «Զբաւուք պատերազմ պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի», եւ իբր վստահութեամբ ասէ՝ «Այսուհետեւ կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուցէ Տէր» (Բ. Տիմ. Դ. 7). *եւ է ա՛յս, զոր ասէ:*

Ասէ ցնա տէրն իւր. «Ազնի՛ւ ծառայ, բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մո՛ւտ յուրախութիւն տեառն քոյ» (Իե. 21):

«**Ազնիւ**» *ասելովն ինքեան նմանեցուցանէ, զի որպէս այրն* «**ազնիւ**» *ասացաւ, որ զքանքարն ետ, նոյնպէս եւ ծառայն, որ զնոյն աճեցոյց, որ քան զայս զի՞նչ երանութիւն կայցէ եւ կամ զարմացումն, յորժամ ծառայն տեառն հաւասարիցի: Քանզի ամենայն առաքինութեան գլուխ ա՛յս է եւ կատարած՝ առ Աստուած նմանութիւն, ընդ որս հիացեալ ասէ Սողոմոն.* «Ծառայ յորժամ թագաւորեսցէ» (Առակ. Լ. 22), *եւ Պաւղոս, թէ՝ «Եղիցի Աստուած ի մէջ աստուածացելոց», զի ըստ արարածոյն, որում անկ է ծառայ կոչիլ, միայն է զանազանութիւն եւ ոչ այլ իւիք:* «**Բարի եւ հաւատարիմ**», *այսինքն՝ իբր զիս բարեգործ առ ամենեսեան, որ զընկերին կարիսն տեսանելով գթացար:* «**Եւ հաւատարիմ**», *զի ոչ խորեցեր յանձին պէտս եւ կամ յանաւգուտս վատնեցեր, այլեւ հաւատացեր բազմապատիկ փոխարինին:*

«**Որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից**». *այսինքն՝ որովհետեւ ի յանցաւոր եւ ի սակաւակեաց կեանսդ հաւատարիմ գտար, եկ ժառանգեա զմշտնջենաւորն եւ զանվախճանն, քանզի սակաւ եւ բազում ոչ միայն ըստ փոքրկութեան եւ ըստ մեծութեան գիտէ դնել Գիրք, այլեւ ըստ նուազութեան եւ առաւելութեան, որով ցուցանէ, թէ առաւելագոյն շնորհաւք փառաւորին սուրբքն քան զաստի կենացս պայծառութիւնն, զի սոքա իբր սակաւ սերմանք են առ բազմապատիկ փոխարինին արդիւնսն:* «**Մո՛ւտ,- ասէ,- յուրախութիւն տեառն քո**». *զբովանդակ խրախութիւնսն միով բանիւ* «**ուրախութիւն**» *անուանէ. զոր տէր ունի՝ եւ քե՛զ շնորհէ,* «**մո՛ւտ**», *այսինքն՝ յուսով արդեամբ վայելեա՛:*

Մատուցեալ եւ որոյ զերկուս քանքարսն առեալ էր եւ ասէ. «Տէ՛ր, երկուս քանքարս եղուր ցիս, ահաւասիկ երկուս եւս այլ քանքարս, զոր ի վերայ շահեցայ» (Իե. 22):

Աստուած ոչ եթէ ի բազմութիւն գործոցն եւ կամ ի մեծութիւն ընչիցն, այլ ի յաւժարութիւն կամացն եւ ի ջերմութիւն բաղձանացն հայիցի՝ ըստ առաքելոյ, թէ՝ «Յորժամ կամքն առաջի կայցէ՝ ըստ գոյին ընդունելի» (հմմտ. Բ. Կոր. Ը. 12), *եւ՝* «Հայեցայ Աստուած ի պպտարագն Աբելի» (հմմտ. Ծնն. Դ. 4), *եւ ընկալաւ զերկուս լումայս այրի հոգւոյն* (տե՛ս Ղուկ. ԻԱ. 2-3): *Նոյնպէս եւ հոգիս այս, որ ըստ իւրում կարութեանն, զոր ընկալաւ շնորհս՝ բեղմնաւորեաց եւ աճեցուցեալ շահեցաւ, մատչի պարծելով ի զաւրութիւն նորա, թէ՝ ոչ միայն զոր ետուր՝ ոչ կորուսի, այլեւ կրկնապատիկս արարի յարգմամբ գործոյն՝ առ ի շնորհացն առաւելութիւն:*

Ասէ ցնա տէրն իւր. «Ազնի՛ւ ծառայ, բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մո՛ւտ յուրախութիւն տեառն քոյ» (Իե. 23):

Այս ո՛չ կրկնաբանութիւն է, այլ մեծ իմաստութեան իմն աւանդութիւն, քանզի զոր աւրինակ այլ փառք է արեգական, եւ այլ լուսնի (տե՛ս Ա. Կոր. ԺԵ. 41), *այսպէս եւ պատիւ եւ պսակք արդարոցն՝ ըստ արդար լծոցն Աստուծոյ կշռեալ եւ ըստ արժանաւորութեան բաժանեալ, որպէս զի յատուկ պսակելով զսուրբսն՝ նախ գովութեամբ եւ ապա փառացն վայելչութեամբ, կրկին կսկիծ լինիցի ծուլիցն եւ հեղգացելոցն, զի որպէս հանդէսն՝ զանազան, նոյնպէս դրուատն եւ փառքն՝ զանազան: Բայց թէ ասիցէ ոք, թէ զի՞նչ զանազանի այս յառաջնոյն, զի որպէս զնորայն սակաւ կոչեաց, եւ զսորայն, եւ որով բանիւ զնա պսակեաց, եւ զսա, ասասցուք՝ թէպէտ գործքն առաւել եւ պակաս, առ որով եւ փառքն, սակայն շնորհ՝ մի, զի հաւասար աճեցուցին, զոր զնա ըստ իւր չափոյն, իսկ զսա ըստ իւր արժանեացն պատուեաց: Իսկ զի զերկոսեան «սակաւ» կոչեաց զասա՛ս, ընդ հանդերձելոյն շնորհն եւ ի փառսն համեմատեաց:*

Մատուցեալ եւ որոյ զմի քանքարն առեալ էր եւ ասէ. «Տէ՛ր, գիտէի, զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, եւ ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր (Իե. 24):

Երկեայ, գնացի եւ թագուցի զքանքարս քո յերկրի. արդ աւասիկ քոյդ՝ ցքեզ» (Իե. 25):

Յայսմ վայրի ամաչեսցեն պարսաւասէրքն, որք ասեն, թէ ընդէ՞ր ոչ ամենեցուն զոյգ զշնորհս պարգեւէ՝ զհոգեւորս կամ զմարմնաւորս, զի թէ զմի էառ տարտամս այս հոգի եւ զայն ոչ գործեաց, զի՞նչ ասես, թէ բազմաց շնորհաց ընկալուչ եղեալ էր: Նաեւ տուաւղն իսկ կարի քաջ գիտէր, թէ չէ բնաւին գործելոց, այլ ետ, զի մի՛ պատճառեսցեն այնոքիկ, որ զպատճառսն կամիցին: **«Գիտէի,- ասէ,- զի այր մի խիստ ես».** *յոյժ կատաղի է յանդգնութիւնն, եւ այնքան, մինչ զի ընդ անձին մարտնչի եւ հակառակ ինքեան խաւսի, որպէս Ադամն առաջին, զի ո՛չ զանձին մեղկութիւն, այլ զԱստուած, որ ստեղծ զկինն, ասաց պատճառ գոլ չարին: Նոյնպէս եւ այրս այս, ո՛չ զվատութիւն ինքեան, այլ զնորին խստութիւնն:* **«Գիտէի,- ասէ,- զի այր մի խիստ ես»,** *այսինքն՝ բուռն եւ անհաւան:* **«Հնձես, զոր ոչ սերմանեցեր, եւ ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր». «հնձես»,** *այս է՝ շնորհ ոչ ետուր եւ մահուամբ ի դժոխն ամբարեցեր, եւ* **«ժողովես»,** *այս է՝ յարքայութիւնն ժողովեցեր, որք ոչ շնորհք առին եւ ոչ բարեգործք ցուցան: Առաջնոյն աւրինակ՝ փարաւոն եւ Եսաւ* (տե՛ս Ծնն. Իե. 21-26, Ելք Ա.-ԺԴ., Մաղ. Ա. 2-3), *եւ երկրորդին՝ աւազակն եւ մաքսաւորն* (Ղուկ. ԺԸ. 10-14, ԻԳ. 39-43). *արդ, այսպիսի է անզգամ, զի զաստուածոյսն դատէ, որ եւ լուաւ, թէ՝* «Ողորմեցայց, որում ողորմեցայցն, եւ գթացայց, որում եւ գթացայց» (Ելք ԼԳ. 19), *իսկ պատասխանի, զի նոքա ոչ արարին զանձինս պատրաստ շնորհացն Աստուծոյ, որպէս փարաւոն, եւ սոքա տեղի ետուն ողորմութեանն Աստուծոյ, որպէս աւազակն եւ այլք, ապա ուրեմն ոչինչ անիրաւութիւն է, որպէս ասաց, թէ՝* **«Հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, եւ ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր»:**

Դարձեալ՝ առ յանդգնութեամբն տես եւ զստութիւնն, զի այսպէս ամենայն անիրաւ ի պատասխանին է պատրաստ: Արդ, եթէ ոչ սերմանեաց եւ ոչ սփռեաց, որպէս ասեսդ, ուստի՞ ունիս՝ զոր հաստուցանեսդ, թէ՝ **«ա՛ռ զքոյդ».** *ապա ուրեմն որով ստեցեր՝ կուտեցեր զչարիս քո ի գլուխ քո:* **«Երկեայ,- ասէ,- գնացի եւ թագուցի զքանքարս քո».** *հազիւ ուրեմն զճշմարիտն յայտնեաց, թէ՝ զերկչոտութեան զախտն ախտանայի, վասն այսորիկ ծածկեցի զշնորհս քո ի տղմի: Առ որս ասելի է, թէ ո՛վ ապիրատ, ընդէ՞ր երկեար, միթէ ի բազմաց աւգտութենէ կասկածա՞նս կրեցեր, թէ վարդապետիդ պատուոյ հաւասար լինիցին, քանզի ոչ ունիս ասել, թէ՝* **«Երկեայ՝ գուցէ զշնորհսն կորուսանիցեն»,** *զի այն ոչ է քում անկ, այլ նորա է հարցաքննութիւն եւ պահանջումն: Ապա ուրեմն առ լրբութեանդ եւ պղերգու-*

թեանդ եւ անբան երկիւղիդ զյաչաղանաց ախտն ախտանայիր, զի ոչ կամեցար զԱստուծոյն ի յԱստուծոյն վայելել: **«Գնացի եւ թագուցի զքանքարս քո յերկրի».** *բովանդակ կեանքս, ասէ, յորում ընթացայ ծուլութեամբ, վախճանեցի եւ ի ներ հեշտութեան զշնորհս քո ծրարեցի՝ դանդաղկոտ գոլով եւ երկասէր, մինչ ի գերեզման մտի. արդ,* «առ,- ասէ,- **զքոյդ զքեզ»:** *Եթէ ոչ համարէր պահանջեալ եւ ոչ յաւր մահուն հասեալ, եւ ոչ զնորայն կամէր նմին աւանդել, այլ ստիպեալ ի մահուն վճռէ եւ ի հաշուոյն այցելութենէ բռնադատեալ, ուր ուրեմն ասէ.* «Ա՛ռ **զքոյդ»:**

Պատասխանի եւ տէրն եւ ասէ ցնա. «Ծառայ չա՛ր եւ վատ, գիտէիր, թէ հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, եւ ժողովեմ՝ զոր ոչ սփռեցի: Պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս, եւ եկեալ ես՝ փոկոսեաւք պահանջէի զիմն (Իե. 26-27):

Տես, թէ ո՛րպիսի մեծ վնաս է վատութիւնն, զի ընդ չարութեանն լծի, քանզի «չարութիւն» *զերկու մասին հոգւոյն անզգամութիւնն ասէ, զոր ունէր այրս այս. զնախանձն, որ բանին է, եւ զյանդգնութիւնն եւ զերկիւղն անսուրբ, որ ցասմատեսակին է չարութիւն, զի ոմն ըստ առաւելութեան, եւ ոմն ըստ նուազութեան, որոց կցորդէ եւ զվատութիւնն, որ է ընդդէմ արիութեանն:* «Ծառայ չա՛ր եւ վատ,- ասէ,- գիտէիր, թէ հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, եւ ժողովեմ՝ զոր ոչ սփռեցի»: *Ղուկաս ասէ.* «Ի բերանոյ քումմէ՛ դատեցայց զքեզ» (Ղուկ. ԺԹ. 22), *զի եթէ ոչ գիտէիր զիս այսպէս, ունէիր իմն ներումն, իսկ որովհետեւ այսպէս գիտես, ընդէ՞ր ոչ արկեր զարծաթն իմ ի սեղանաւորս. ապա թէ ոչ այսպէս, այլ հեզ, որպէս եւ եմս իսկ, է՞ր վասն յանդգնութեամբ բարբառեցար: Արդ, եթէ այսպէս եւ եթէ այնպէս,* «**պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս»:** *Իսկ զի՞նչ սեղանաւորն. կամ արկանելն է ի տրապիզիտս մտաց, որոց ի խոկմանէ խորհրդոյն հետեւի եւ գործն, որով աճեալ զարգանայ շնորհն Աստուծոյ զաճումն սուրբ Տերմամբ, կամ ըստ մարմնական սովորութեան, եւ զայս յաւդէ յառակս, քանզի գոն յաշխարհի ըստ քաղաքի քաղաքի սովորութիւն՝ տալ զարծաթն ի սեղանաւորս շահի: Զայս աւրինակ, ասէ, եւ քեզ պարտ էր առնել զինչ եւ իցէ շնորհս, ի փոխ տալ այնոցիկ, որ պէտս ունէին, եւ խրատել եւ թելադիր լինել կամ զառաքելոյն առնել՝ աւանդել զշնորհն հաւատարիմ մարդոց, որ կարաւղ էին եւ զայլս ուսուցանել ի վարդապետս հմուտս* (տե՛ս

Բ. Տիմ. Բ. 2): *Զանսային՝ ասէ, եւ քեզ զի՞նչ վնաս էր յայնմանէ, զի տալն միայն էր քեզ եւ ո՛չ պահանջելն, որպէս ասէ՝* «**Եւ եկեալ ես՝ փոկոսեաւք պահանջէի զիմն»:** *Տեսանե՞ս, զի ոչ ասաց նախ, թէ՝* «*չեմ խիստ*», *այլ կամեցաւ գործով զհեզութիւնն յանդիման կացուցանել, եւ զի՞նչ քան զայս այլ հեզութիւն, զի ի մարդիկ ոչ առնին այսպիսի իրք, այլ փոխատուն առնու զպարտսն, իսկ աստ ասէ, թէ՝ քեզ պարտ էր ասել եւ զպահանջեալն յիս ապաստան առնել, դու զդիւրինն գործել եւ զդժուարինն ինձ ներել, եկեալ, ասէ, ես վաշխիւք խնդրէի զիմն, այսինքն՝ զունկնդրութիւն բանին եւ զգործոցն հանդէս, եւ զիմն, զոր ետու, զշնորհս եւ ո՛չ զաւտար ինչ պահանջէի: Ահա յայտ արար, թէ վասն է՛ր տայ զշնորհս. ցուցանէ եւ զայն, թէ մանրամասն քննութիւն ի գալստեան նորա լինելոց է, թէպէտ ոմանց ներէ այժմ:*

Արդ, առէք ի դմանէ զքանքարդ եւ տուք այնմ, որ ունիցի զտասն քանքարն (Իե. 28):

Հայեաց եւ ի միտ առ, թէ ո՛րպէս մարդասէր է, զի ի բարեացն տուրս առանց միջնորդի վարեցաւ, իսկ զվրէժխնդրութիւնն՝ այլոց հրամայէ՝ սպասաւորակ զաւրութեանց, որպէս ի հինն, զի զհաց երկնից ինքն ետ նոցա ուտել, իսկ յորժամ տրտնջեցին, «առաքեաց ի նոսա փանջանս ի ձեռն հրեշտակի չարի» (Սաղմ. ՀԷ. 49): *Բայց զի՞նչ է առնուլն զքանքարն. այս ինձ թուի, զի որ զշնորհս բանի եւ կամ այլ ինչ իրաց ունիցի եւ չարկանէ ի կիր ինքեան գործով եւ կամ յաւգուտ բազմաց, զնոյն ինքն եւ զշնորհս կորուսանէ, որպէս Յուդային եղեւ:* «**Տուք,- ասէ,- այնմ, որ ունիցի զտասն քանքարն».** *աստանաւր յայտ առնէ, թէ վասն անճառ բարերարութեանն ամենեցուն փառս պատրաստեալ է ի սկզբանէ, իսկ յորժամ ոմանք անձնիշխան գիտութեամբ անարժան լինին այնմ գովեստի եւ փառաց, յայնժամ զնոցուն պատիւն արժանաւորացն շնորհէ եւ կատարելոցն, որպէս ել Յուդայ, եւ եմուտ Մատաթիա: Եւ չեն այս զարմանք, զի թէ անարժանն առ վայր մի ժառանգեաց զպատիւն, թէպէտ ոչ ծաննաւ զնորին մեծութիւնն, քանիա՞ւն յարմարագոյն է սրբոցն ժառանգութիւն, որպէս ասէ.*

Զի ամենայնի, որ ունիցի, տացի եւ յաւելցի, եւ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ (Իե. 29):

Կամ թէ՝ որ փոյթ ունիցի յանձին մատակարարել զշնորհս, և՛ւս առաւել ամփոփէ յինքն զպարգեւն, որպէս Տիմոթէոս եւ այլք բազումք, ապա թէ ոչ մատակարարէ, եւ զա՛յն եւս կորուսանէ, որպէս ասացաք: Կամ թէ՝ որ ունիցի գործս բարիս, տացի փոխարէնս ըստ վաստակոցն եւ յաւելցի փառս, եւ պսակս անպատումս ձիր շնորհի, իսկ որ չունիցի գործս բարեաց, եւ զոր ունիցին շնորհս՝ զաւազանին եւ կամ զայլ իմն պարգեւս, մերկացայց ի նմանէ եւ ապա ի տանջանս առաքեցից, զի գիտասցէ, թէ որ արհամարհէ զիւիք, արհամարհեսցի ի նոցանէ, եւ զի ոչ միայն զրկի ի փառաց, այլեւ ժառանգ լինի տանջանաց ըստ յաջորդիդ: Կամ ա՛յլ ազգ. զի ասէ ի տեսիլն Յովհաննու, թէ՝ «Կա՛լ զոր ունիս» (Յայտ. Գ. 11), *նոյնպէս եւ ասա իմա, թէ՝* «Որ ունիցի՝ տացի», *այսինքն՝ թէ որ ըմբռնէ զառեալն, ունի եւ վայելէ, իսկ որ ոչ ունի զտուեալն, զերծցի ի նմանէ այն՝ ասէ, եւ է այս՝ կամ ըստ մարմնաւոր տրոց, կամ ըստ հոգեւոր շնորհաց վարդապետութեան, կամ քահանայութեան:*

«Եւ զծառայդ անպիտան հանէք ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց» (Իե. 30):

Յիրաւի՛ անպիտան, զի ո՛չ ինքեան եւ ոչ այլոց աւգուտ արար. «Հանէք,- ասէ,- ի խաւարն արտաքին»: *Ոմանք ասեն, թէ ո՛չ վասն ուսուցանելոյ այլոց զբանն այնպէս պատուհասի. ասասցուք՝ լո՛ւր Պաւղոսի, որ ասէ.* «Վա՛յ է ինձ, եթէ ոչ աւետարանեմ» (Ա. Կոր. Թ. 16)*: Արդ, տես, զի որք յայլս բարի չգործեցին, յարտաքին խաւարն առաքեցան, ապա ո՞ւր երթալոց են յափշտակաւղքն եւ ագահքն եւ չարանախանձ յաչագկոտքն եւ տրտնջաւղքն: Իսկ* «**խաւար արտաքին**» *կամ զբանսարկուն ասէ, որ արտաքսեաց զինքն ի լուսոյ եւ խաւարեալ է իւրովքն, դառն տրտմութեամբ անդր առաքէ, յորում ոչ առնէ այցելութիւն Տէր լուսով իւրով, կամ խաւարն սկզբնածին, որ ի լուսոյն հատաւ եւ այժմ հատանի եւ հատանէ ի հաստատեալ լուսաւորացդ՝ նորոգութեամբ: Շրջապատեալ խաւարն զբոլոր աշխարհիս՝ յեզր ելանէ արտաքս քան զերկիրս, յորում է եւ ջուր հրացեալ եւ սառնամանիք անհանդուրժելի: Անդր տանջին մեղաւորքն, զի ոչ միայն յերկնից եւ ի դրախտէն արտաքսին, այլեւս ի բոլոր երկրիս վայելչութենէ, քանզի եւ սա՛ յայնժամ դրախտացեալ զերեսն սուրբ պաշտէ:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Յառաջագոյն ասացելոցս յայտ է եւ միտք առակիս՝ այս:

Հարց. Զի՞նչ է «**քանքարն եւ մնաս**[1]» (Մատթ. Իե. 15, Ղուկ. Ժթ. 12):

Պատասխանի. Երկոքին զարծաթ նշանակեն եւ ո՛չ զկշիռ: Եւ գիտեալ է, զի այլ է քանքարն, որ աստ ասէ, եւ այլ՝ «**մնասն**»՝ *զոր Ղուկաս* (Ղուկ. Ժթ. 12): *Եւ յայտ է ի չորից.*

Ա. Նախ՝ ի տեղոյն. այն՝ յերիքով եւ այս՝ ի լեռն ձիթենեաց:

Բ. Երկրորդ՝ ի ժամանակէն. այն՝ նախքան զնստելն յաւանակի եւ այս՝ յետ նստելոյն:

Գ. Երրորդ՝ ի թուոյն. անդ Ժ. (10) թուէ եւ աստ՝ Ը. (8):

Դ. Չորրորդ՝ ի շահելոյն. մնասն արար Ժ. (10) մնաս, եւ արար Ե. (5) մնաս: Եւ քանքարն. Ե. (5) եւ Բ. (2) շահեցաւ:

Հարց. Զի՞նչ է «**Այր մի ազնուական**» (հմմտ. Իե. 14):

Պատասխանի. «**Այր**»՝ *զմարդացեալն Աստուած կոչէ.*

Ա. Նախ՝ վասն արիական զաւրութեանն:

Բ. Երկրորդ՝ զի ծնաւ արու:

Գ. Երրորդ՝ զի մարդեղացաւ հոգւով եւ մարմնով եւ մտաւք կատարեալ:

Իսկ «**ոմն**» *նախ որոշէ ի բազմաց, զի Աստուած է մարդացեալ:*

Բ. Երկրորդ՝ անորիշ է բնութեամբ եւ դիմաւք՝ մի Տէր, մի Քրիստոս, մի կամք եւ մի գործ եւ այլն:

«**Ազնուական**», *այսինքն՝ գեղեցիկ եւ պատուական ոչ միայն աստուածութեամբն, այլեւ մարմնովն.* «Զի գեղեցիկ էր տեսանելով» (հմմտ. Սաղմ. ԽԴ. 3), *ասէ: Եւ* «Եղբաւրորդին կարմիր եւ սպիտակ եւ ընտրեալ ի բիւրուց» (Երգ Ե. 10):

Յաշխարհ հեռի (հմմտ. Իե. 14).

Ա. Նախ, զի մարմնով եկն յաշխարհս այս, եւ «թագաւորել» զմարմնանալն ասէ: Եւ այս է «**աշխարհ հեռի**», *ուր կրտսեր որդին վատնեաց զինչս հաւրն* (տե՛ս Ղուկ. ԺԵ. 11-34):

Բ. Երկրորդ՝ դժոխքն աշխարհ հեռի յամենայն բարեաց եւ մոռացեալ յԱստուծոյ եւ թագաւորեալ է, որ մեռելոց եւ կենդանեաց տիրեաց:

[1] Գ մնաց] մնաս

Գ. Երրորդ՝ վերին աշխարհին, ուր «համբարձաւ եւ նստաւ ընդ աջմէ Հաւր» (Մարկ. ԺԶ. 9), *եւ գալոց է թագաւոր անդի:* «Ակն ունիցիք», ասէ, «թէ երբ դառնայ ի հարսանեաց» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 36):

Եւ յայտ է հեռու գոլն ի բազմաց.

Ա. Նախ՝ զի մինն՝ իմանալի եւ մինն՝ զգալի:

Բ. Երկրորդ՝ ապականացու եւ անապական:

Գ. Երրորդ՝ անփոփոխ եւ փոփոխական:

Դ. Չորրորդ՝ վերին եւ ներքին:

Ե. Հինգերորդ՝ լոյս եւ խաւար:

Զ. Վեցերորդ՝ տեղիք արդարոց եւ մեղաւորաց եւ այլ բազում:

Վասն ծառայից

Կոչեաց զծառայս իւր (ԻԵ. 14):

Զորս կերպ է ծառայութեան.

Ա. Նախ՝ որ կամաւ լինի:

Բ. Երկրորդ՝ գնեալ:

Գ. Երրորդ՝ գերեալ:

Դ. Չորրորդ՝ ընդոծին:

Եւ այս Դ. (4) կերպիւս ծառայեմք Քրիստոսի.

Ա. Նախ՝ կամաւ՝ ըստ հաւատոյն:

Բ. Երկրորդ՝ զի արեամբ գնեաց:

Գ. Երրորդ՝ ի գերողէն դարձոյց:

Դ. Չորրորդ՝ ընդոծին արարչութեամբն:

Վասն քանքարաց

Հարց. Զի՞նչ է. «*Ումեմն ետ Ե. (5) քանքար, ումեմն՝ Բ. (2), ումեմն՝ Ա. (1)*» (ԻԵ. 15):

Պատասխանի. Երեք է իմացումն.

Ա. Նախ՝ բացարձակ: Զամենայն շնորհս նշանակէ՝ հոգեւոր կամ մարմնաւոր՝ քահանայութիւն, իշխանութիւն, ինչք, արուեստ, գեղեցկութիւն, հասակ, ծերութիւն, տղայութիւն եւ այլն, որ ըստ կամաց տուաւ տվողին, եւ ըստ կարի առողին առաւել եւ նուազ տայ:

Բ. Երկրորդ՝ քանքար է **«հինգ»**, *զոր ասէ Պաւղոս ի Ա. Կորնթացւոց.* «Եթէ ոք Սաղմոս ունիցի, եթէ՝ մարգարէութիւն, եթէ՝ Յայտնութիւն, եթէ՝ լեզու, եթէ՝ թարգմանութիւն» (Ա. Կոր. ԺԴ. 26), *պարտ է զայս ուսանել եւ ուսուցանել:*

Իսկ **«Բ. քանքար»** *Պետրոս ի Կաթողիկոսքն ասէ.* «Եթէ ոք խաւսեսցի, իբրեւ զԱստուծոյ պատգամս, եթէ ոք մատակարարեսցէ ի զաւրութենէ շնորհացն Աստուծոյ» (Ա. Պետ. Դ. 11): *«Խաւսիլն» քարոզողաց է եւ* **«մատակարարեալն»**՝ *զշնորհս ձեռնադրողաց: Դարձեալ զհոգեւոր եւ զմարմնաւոր շնորհս ասէ՝ խաւսել եւ մատակարարել, այսինքն՝ բանիւ ուսուցանել եւ գործով ցուցանել:*

Իսկ **«Ա. քանքար»** *է հաւատք առանց գործոց, զոր առնու ի մկրտութեանն եւ ոչ գործէ եւ շահեցուցանէ, որպէս ասէ Յակոբոս.* «Հաւատք առանց գործոց դատարկք են» (Յակ. Բ. 20):

Գ. Երրորդ՝ միտք եւս յայտնի. **«Ե. քանքարն»** *է, որ զամենայն շնորհս հոգեւոր Ե. (5) զգայութեամբ ի բարին գործեմք եւ շահիմք՝ թէ վարդապետութիւն, թէ քահանայութիւն կամ այլինչ աստիճան:*

Իսկ **«Բ.»**, *որ զամենայն շնորհս հոգեւոր եւ մարմնաւոր, հոգւով եւ մարմնով ի գործ ածեմք թէ՛ զաստուածային առաքինութիւնս՝ հաւատ, յոյս, սէր, թէ՛ զմարդկա[յ]ին՝ խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն եւ արդարութիւն:*

Իսկ **«Ա. քանքարն»** *ըստ միանձնաւորութեան մարդոյ՝ առեալ մին շնորհք կամ հոգեւոր կամ մարմնաւոր կամ զհաւատք կամ զգործն կամ մին արուեստ, կամ մին աստիճան, կամ մին կրաւն: Եւ զայն ոչ ի յինքն գործէ եւ ոչ այլոց ուսուցանէ:*

Հարց. Վասն է՞ր, որ զմինն էառ թաքոյց, եւ որ զԲ.ն (2) եւ զԵ.ն (5) գործեաց (տես ԻԵ. 16-18):

Պատասխանի. Ոչ է հարկ, թէ ամենայն, որ մին էառ, թաքուցանէ, կամ որ աւելի՝ ի գործ ածէ. այլ բազում անգամ լինի, որ զմեծ աստիճան էառ եւ ոչ գործէ եւ որ էառ զփառքն, գործէ եւ շահի:

Այլ վասն այն դնէ զառակդ, զի ցուցցէ, թէ որք շահին, բազում են, քան որ կորուսին:

Հարց. Զի՞նչ է **«մնասն. Ժ. մնաս եւ հինգ այլ եւս»** (Ղուկ. ԺԹ. 16-23):

Պատասխանի. Զհոգեւորն Ժ. (10) զգայութեամբ գործեմք եւ զմարմնաւորն՝ Ե. (5):

Եւ «**կրկինն**» *այն է, որ ինքն գործէ եւ այլոց ուսուցանէ: Եւ դարձեալ, որ մարմնով եւ հոգւով ի գործ ածէ:*

Հարց. Զի՞նչ է, որ Ժ. (10) մնաս խոստացաւ եւ զուիթն ետ:

Պատասխանի. Զերկուքն նախ ինքն յարգեաց, այսինքն՝ մինն անեղին մարդ լինել: Երկու՝ անմահին մեռանել, զոր նմա յանգէ եւ ոչ մեզ:

Հարց. Զի՞նչ է «**ազնիւ ծառայ եւ բարի**» (Իե. 21):

Պատասխանի. Զիւրն անուն նմա կոչէ, որ ազնիւ եւ բարերար եւ հաւատարիմ է Տէր: Եւ ապա ի վերա բազում շնորհացն կացուցանէ, որպէս ցուցաւ յառակ տնտեսին (տե՛ս Մատթ. ԻԴ. 45-51):

Մուտ յուրախութիւն տեառն քո (Իե. 21):

Նախ որպէս չար ծառայ այն տրտմութեան եւ պատճառ տեառն իւրոյ, նոյնպէս եւ բարին՝ ուրախութեան: Եւ դարձեալ՝ «**Մուտ զուրախութիւն տեառն քո**» *փոխանակ տրտմութեանց, զոր կրեցէր յերկրի եւ շահեցար Քրիստոսիւն:*

Տե՛ս, զի ծառայն չար ոչ լինի շնորհակալ, որպէս բարիքն ասացին, թէ՝ «**Զքանքարդ դու եփուր ցիս, եւ քո է շահն**» (հմմտ. Իե. 20):

Այլ զի՞նչ՝ «**Գիտեմ, զի այր մի խիստ ես**» (Իե. 24). *այսինքն՝ դառն եւ բարկացող:* «**Երկեա**», *զի երկչոտ է,* «**եւ թաքուցի յերկիր**» *(Իե. 25), զի ծուլութեամբ ի մարմինն թաքոյց: Իսկ* «**ծրարելն ի վարշամակի**» (Ղուկ. ԺԹ. 20)՝ *զնախանձ եւ զատելութիւն ցուցանէ:*

Հարց. Զի՞նչ է «**հնձես, զոր ո՛չ սերմանեցեր**» (Իե. 24) *եւ այլն:*

Պատասխանի. Ա. Նախ այն է, որ Հայր սերմանեաց մարգարէիւքն, եւ Որդին հնձեաց առաքելովք: Եւ Հայր եդ զՀին Աւրէնս, եւ Որդին եբարձ: Եւ Հայր սփռեաց զհեթանոսս, եւ Որ[դ]ին ժողովեաց:

Բ. Երկրորդ՝ հնձաւղ պատուիրանաց լրման եւ բարձաւղ անիծից, զոր Հայր եդ եւ ժողովէ ի դատաստան զամենայն մարդիկ:

Գ. Երրորդ՝ զմահն եբարձ, զհոգիսն ազատեաց եւ ի չարեացն բարի ժողովեաց:

Հարց. Զի՞նչ է «**ծառայ չար եւ վատ**» (Իե. 26):

Պատասխանի. «**Չար**», *այսինքն՝ անհաւատ կամ նախանձոտ, իսկ* «**վատ**», *այսինքն՝ ծոյլ եւ անարի: Եւ պարտ է արկանել ի սեղան սրտից, եւ Գ. (3) է շահն:*

Ա. Նախ՝ այն է, որ ասացն՝ շահիլ:

Բ. Երկրորդ՝ լսաւղն աւգտի:

Գ. Երրորդ՝ քանքարն յաւելու:

Եւ թէ ոչ լսէ, «**փոկոսեաւք պահանջէք**» (Իե. 27):

Իսկ թէ ոչ ուսուցանէ՝ վասն ծուլութեան կամ նախանձու, կամ երկչոտութեան, ասա պակասէ գիտութիւնն, եւ անդ՝ բարձցի շնորհքն եւ փառքն, եւ ինքն տանջանս կրէ:

Իսկ որ շահեցաւ, ասա ուսուցանելով առնու, եւ անդ՝ փառաւք եւ պարգեւաւք:

Տե՛ս, որ զգլուխն դարձոյց ի Տէրն, այնպէս պատժի. մէք, որ զշնորհն եւ զգլուխն կորուսանեմք, զի՞նչ լինիմք:

Տե՛ս դարձեալ, որ ոչ ողորմեցաւ, պատժեցաւ, եւ որք զայլոց զրկեն եւ յափշտակեն, զի՞նչ լինիցին:

Եւ դարձեալ, տե՛ս, զի կրկին է չար. մին՝ որ զչարն գործէ եւ մին՝ որ զբարին ո՛չ առնէ: Եւ կրկին է բարին. մին՝ որ զբարին առնէ եւ մին՝ որ զչարն ո՛չ առնէ:

Հարց. Վասն է՞ր «**արծաթ**» *ասէ զբան* (Իե. 27):

Պատասխանի. Ա. Նախ՝ զի բանդն սուրբ է, որպէս զարծաթ:

Բ. Երկրորդ՝ պատուական է:

Գ. Երրորդ՝ պայծառ է:

Դ. Չորրորդ՝ անապական: Եւ այլն ասացաւ վասն դահեկանի: Այսքան առ այս:

Ղուկ. Ի. 9-18

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Այր ոմն տնկեաց այգի եւ ետ մշակեաց եւ գնաց ճանապարհ աւուրս բազումս (հմմտ. Ղուկ. Ի. 9):

«**Այգի**»՝ *աստուածական վարդապետութիւնն մարգարէական եւ առաքելական, յորս զայգին ետ, զի պտղաբերեսցէ հրէական ժողովուրդն.* «**ծառայք**» (տե՛ս Ի. 10)՝ *Մովսէս եւ այլ մարգարէքն.* «**որդին, զոր սպանին**» (տե՛ս Ի. 15)՝ *Քրիստոս՝ միածին Որդին Աստուծոյ:*

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻ

Ղուկ. Ժ. 29-37

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Պատասխանեալ Յիսուսի ասաց. «Այր մի իջանէր Յերուսաղեմէ յերիքով եւ անկաւ ի ձեռս աւազակաց» (հմմտ. Ղուկ. Ժ. 30), *եւ որ ի կարգին է:*

«Այրն, որ իջանէր յերուսաղեմէ յերիքով»՝ *Ադամ, եւ ամենայն մեղուցեալք ըստ նմանութեան յանցուածոցն Ադամայ: Եւ «Երուսաղէմ»՝ դրախտն, յորմէ արտաքսեցան.* «Երիքով»՝ *աշխարհս, յոր ել ի դրախտէն.* «աւազակք»՝ *սատանա[յ] եւ գունդք նորայ.* «մերկութիւն» (տե՛ս Ժ. 30)՝ *ի փառացն եւ յանմահութենէն անկանելն,* «վէրքն» (տե՛ս Ժ. 30)՝ *մեղքն եւ յանցանք ամենայն.* «թողուլ կիսամահ» (տե՛ս Ժ. 30), *զի մեռաւ մեղաւքն վիրաւորեալ,* «կիսամահ» *վասն այնորիկ, զի ակնկալութիւնն գալստեան սամարացւոյն, այսինքն՝ Փրկչին, դարձեալ ի կենդանութիւն փոփոխէր.* «քահանայ» (Ժ. 31) *եւ* «ղեւտացի» (Ժ. 32)՝ *մարգարէքն, որպէս թուի ինձ, եւ վարդապետքն, որք յառաջ, քան զՔրիստոս.* «սամարացի»՝ *Քրիստոս. սամարացի կոչեցաւ եւ դիւահար, ասէ Գրիգորիոս, այլ փրկեաց զնա, որ* «իջանէրն յերուսաղեմէ յերիքով եւ անկաւ ի ձեռս աւազակացն»: «Ձեթ» (Ժ. 34)՝ *ողորմութիւնն, զոր արար ի վերա[յ] նորա.* «գինին» (Ժ. 34)՝ *ուրախութիւն, զոր ի փրկել յաւազակացն պարգեւեաց.* «գրասպն» (Ժ. 34), *յոր եհան մարմինն իւր, յոր երարձ զմեզս աշխարհի:* «Պանդոկին» (Ժ. 34)՝ *եկեղեցի Աստուծոյ.* «պանդոկապետ» (Ժ. 35)՝ *առաքեալքն եւ նոցին նմանողք՝ վարդապետք եկեղեցւոյ.* «երկու դահեկանքն» (Ժ. 35)՝ *Հին եւ Նոր Կտակարանք. դարձումն սամարացւոյն երկրորդ անգամ* (տե՛ս Ժ. 35)՝ *երկրորդ գալուստն Քրիստոսի, յորժամ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց իւրոց, առաքելոցն եւ այլոց վարդապետաց զպսակն արքայութեան, զի ջանացան եւ վաստակեալ ճգնութեամբ դարձուցին զորդիս Ադամայ ի բարեպաշտութիւն:*

ԻԳՆԱՏԻՈՍ

Նա, իբրեւ կամեցաւ զանձն արդարացուցանել, ասէ՝ «Ո՞վ է իմ ընկեր» (Ղուկ. Ժ. 29):

Ոմանց թուեցան բանքս, թէ անբարտաւանութեան իցեն՝ չհամարել ոք ընկեր, այլ ունի այս զցոյց մտացն ի տէրունական բանից, զի թէ անբարտաւան ինչ խաւսէր, չտայր այսպիսի բանս պատասխանի: Քանզի յԱւրէնսն գրեալ էր. «Սիրել զսիրելին եւ ի բաց դառնալ ի թշնամւոյն» (հմմտ. Առակ. Գ. 17), *եւ այսպէս ոչ էր հասարակաց տարածեալ սիրոյն առաւելութիւն, վասն որոյ կամեցաւ ուսանել, թէ առ ո՛րս պարտ էր բաժանել զսէրն, զի գիտութեամբ լիցի հաղորդութիւն սիրոյն: Առ այս ասէ Յիսուս.*

Այր մի իջանէր յերուսաղէմէ յերիքով եւ անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա եւ վէրս ի վերայ եդին, թողին զնա կիսամահ եւ գնացին (Ժ. 30):

Ամենայն ուրեք զանձն իւր աւրինակ տայ մեզ ամենայն բարեաց, զի զոր ինչ ուսոյց, զնոյն եւ գործով ելից: Յորժամ վասն հեզութեան կամեցաւ զբանն հաստատագոյն առնել, ասէ. «Ուսարո՛ւք յիւէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ (Մատթ. ԺԱ. 29)*: Եւ դարձեալ՝* «Որդի մարդոյ ոչ եկն պաշտաւն առնուլ, այլ պաշտել եւ տալ զանձն իւր՝ փրկանս բազմաց» (Մարկ. Ժ. 45)*: Զայս եցոյց, յորժամ սփածանելով կտաւ, լուաց զոտս աշակերտացն եւ ասէ.* «Աւրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, եւ դուք միմեանց արասջիք» (հմմտ. Յովհ. ԺԳ. 14-15)*: Անուանէ դարձեալ զանձն «Հովիւ քաջ, որ ի վերայ ոչխարաց դնէ զանձն»* (Յովհ. Ժ. 11) *եւ գնայ զհետ մոլորելոյն եւ գտեալ՝ ի վերա ուսոցն բառնայ: Դարձեալ ասէ.* «Սիրեցէ՛ք զմիմեանս, որպէս ես զձեզ սիրեցի» (Յովհ. ԺԵ. 12), *զի «այսպիսի սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց»* (Յովհ. ԺԵ. 13):

Արդ, ուսուցանէ հովուացն այսպիսի ունել զվերակացութիւնն եւ ոչ նմանել վարձկանացն վատթարութեան, նոյնպէս եւ բարեկամացն՝ զսիրոյն չափ: Արդ, այսպէս եւ առ աւրինականս այս զգործս իւր առակաւ առաջի եդ: Եւ թէ զիա՞րդ ունի այս աւրինակ բանիցս զցոյցս թարգմանութեան խորհրդոյն. «Այր մի իջեալ յերուսաղէմէ յերիքով» *նշանակ ունի բնութեանս մերոյ, վասն զի առաջին մարդովն ամենեքեան անկան եւ ի մի համարեալ, որք*

ի նմանէ ծննդեամբ յառաջ եկին, իբրեւ զմի այր անկեալ ի ձեռս աւազակաց, քանզի յաստուածային վայելչութեան փառաց անտի, զոր ունէաք ի դրախտի անդ, սողոսկեալ անկաք ի խոնարհ, ի ստորինս յայս կեանս: Եւ այնպէս, ի բարձրութենէ անտի իջեալ ի խոնարհ, անկաք ի ձեռս առաջին չարին եւ դաւաճանողին զմեզ: Արդ, թէպէտ եւ զառաջին խոցուածս նեսրից աւազակացն ընկալաք ի դրախտի անդ, որով եւ մերկացաք զփառսն, սակայն մնաց սերմն անապականութեան: Իսկ յետ իջանելոյն ի դրախտէն անտի յայս վայր, ապա ի սպառ անկաք ի ձեռս առաջնորդին կորստեանն եւ յայնժամ կարեվէր խոցեցայք եւ կարի մերկացեալ յաստուածային շնորհէն՝ խայտառակ գտաք, մինչեւ ասել Աստուծոյ. «Ոչ մնաց հոգի իմ ի մարդիկդ յայդ, վասն լինելոյ դոցա մարմին, եւ զղջացայ, զի արարի զմարդն ի վերայ երկրի» (Ծնն. Զ. 6): *Դարձեալ եւ որք յետ սատակմանն եւ ջուրցն կորստեան եւս անաւրինագոյնք, քան զնոսա զառաջինսն գտան եւ անկեալք ի ձեռս աւազակաց՝ անխնայ խոցոտեցին զբնութիւնս մեր եւ զամենայն թոյնս դառնութեան իւրեանց հեղին ի մեզ, զի էին ատելիք մեր եւ պատահեցին մեզ՝ յանտես առնելն Աստուծոյ, վասն չար յաւժարութեանն, որ ի մեզ: Որով եւ մեք իսկ ձեռնտու եղաք պատերազմողին եւ սատակչին մերոյ, զի եղաք ուխտ ընդ դժոխս եւ ընդ մահու դաշինս կռեցաք եւ ի ստութեան եղաք զյոյսն մեր՝ ըստ Եսայեայ* (տե՛ս Եսայ. ԻԸ. 15): *Արդ, այսպէս ինքնաւրէն յաւժարութեամբ հեռացաք յամենակալ խնամոցն Աստուծոյ եւ անկեալ ի ձեռս աւազակաց՝ վիրաւորեցին զմեզ պէսպէս մեղացն ախտիւք եւ թողին կիսամահ: Եւ զի՞նչ եւս արդեաւք «կիսամահն» իցէ: Ասէ զայս վասն այնոցիկ, առ որս մնաց արդարութեանն շունչ կենդանական, զի անուանեաց զծնունդս Ադամայ մի այր եւ անկեալ ի ձեռս սատանայի: Եւ թէպէտ նա չարանախանձ թշնամի գոլով՝ հնարեցաւ զամենայն մարմին մարդկային բնութեանս առհասարակ՝ սպանանել մեղաւք, այլ շնորհքն Աստուծոյ պահեցին արդարս յամենայն դարս՝ ըստ նմանութեան Մելքիսեդեկի* (տե՛ս Եբր. Ե. 1-14): *Յայս հայեցեալ ասաց՝* **«Թողին կիսամահ եւ գնացին»:**

Իսկ քահանայն եւ ղեւտացին ընդ նոյն եկեալ, տեսին եւ զանց արարին (հմմտ. Ժ. 31, 32):

Յայտնի է, զի բազում մարգարէք եկեալ նոյն բնութեամբ, զնոյն կարիս ունելով, հազիւ զանձինս իւրեանց զերծուցին ի մահաբեր մեղացն վիրաց, այլ անկելոյն աւգնել ինչ՝ ոչ զաւրեցին, թէպէտ եւ տեսին զծնունդս Ադամայ՝ անկեալ ընդ այսպիսի մահացու ախտիւք, զանց արարին, զի ոչ ունէին, որով փրկէին: Իսկ իբրեւ ետես ձեռն ամենակեցոյց, թէ չիք ուստեք փրկութիւն, ըստ Եսայեայ՝ «Հայեցայ, եւ ոչ ոք էր, որ փրկէր: Զմտաւ ածի, եւ ոչ ոք էր, որ ի թիկունս հասանէր: Փրկեաց, - ասէ, - աջ իմ եւ սրտմտութիւն իմ միայն զդէմ կալաւ» (հմմտ. Ես. ԿԳ 5): *Այսպէս յայց ել, եկն ընդ նոյն ճանապարհ՝ որպէս Հովիւ ընդ հետս մոլորեալ ոչխարին* (տե՛ս Յովհ. Ժ. 1-18):

Սամարացի ոմն,- ասէ,- ճանապարհորդեալ, եկն, ետես եւ գթացաւ (հմմտ. Ժ. 33):

«**Սամարացի**» *անուանէ զանձն, թերեւս որով նախատէին զնա՝ «սամարացի ես», ասէին: Այլ նա, որ մաքրիչն է, չգարշի յումեքէ, անուանէ զինքն այնպիսի անուամբ:* «**Եկն**» *եւ նա, որ կանգնելոց էր զնա, նոյն ճանապարհաւն, այսինքն՝ զի եմուտ նա ի նոյն ինքն ճանապարհ բնութեանս, զի յորմէ սկսանիմք մեք, սկսաւ եւ նա: Եմուտ յորովայն եւ եկն ծննդեամբ յերկիր եւ շրջեցաւ անարատութեամբ եւ եգիտ զկիսամահ բնութիւնս՝ անկեալս մեղաւք, որով վիրաւորեցաք: Եւ թէպէտ եւ ունէր աստուածաբար փրկել՝ ըստ որում՝* «Յամենայնի բաւական է, եւ ամենայն ինչ նմա հնարաւոր է» (հմմտ. Մարկ. Թ. 22), *սակայն իրաւամբք կամեցաւ կեցուցանել. էառ զմերս եւ մերովս հատոյց զմերն պարտիս: Զի, զոր աւրինակ, զանկեալ անասուն ի խորխորատ չկարէ ոք ի վեր բերել, եթէ ոչ ինքն ի խորխորատն իջանիցէ, եւ զմանուկ գլորեալ՝ չկարէ ոք ի վեր առնուլ, եթէ ոչ առ նա խոնարհեսցի, զսոյն եւ զայս աւրինակ խնամոց Տէրն եւ Արարիչն եցոյց՝ բնութեանս մերոյ, զի յանկանելն մեր ի խոնարհ յայս վայր, անկաւ եւ նա ի վերայ մեր, զի յարուսցէ զանկեալքս:* **«Եկեալ,- ասէ,- առ նովաւ, ետես եւ գթացաւ եւ պատեաց զվէրսն»:** *Արդ, ահա յայտնի են ցոյցք առաջիկայ բանիս, զի որքան յաճախեաց սատանայ՝ խոցոտել զմեզ, յաճախեաց եւ կենարարն՝ պատել զվէրս մեր, ըստ այնմ՝* «Ուր առատել եղեւ մեղքն, առատել եղեւ շնորհքն» (Հռոմ. Ե. 20), *վասն զի ձրի դեղաւք բժշկեաց զմեզ: Նաեւ սատանայ ձրի հար եւ վիրաւորեաց զմեզ, զի ոչ ինչ վնասեցաք նմա:*

Արկ,- ասէ,- ի նա ձէթ եւ գինի (հմմտ. Ժ. 34):

Զի՞նչ այլ, քան զայս յայտնապէս ցոյցք առակաւոր բանիս: Յայտ է ահա՝ աւազանին շնորհք եւ աւծումն շնորհի որդեգրութեանն, եւ արիւնն փրկական, որ կենդանացոյց զմեռեալս մեղաւք եւ առողջացոյց զվէրս հոգւոց:

Եդ,- ասէ,- ի վերայ գրաստու եւ ած ի պանդոկի (հմմտ. Ժ. 34):

Երբեմն ի վերայ ուսոյ բառնայ եւ երբեմն ի վերայ գրաստու դնէ, որ ինչ պատշաճի ձեւ կերպարանաց աւրինակին, այնպէս յաւրինէ զբանն: Արդ, չինեալ զեկեղեցի, կարգեաց առաքեալս եւ մարգարէս, հովիւս եւ վարդապետս: Ի սմա ժողովէ յար զանկեալս եւ զվիրաւորեալս յարկածիցն մեղաց, եւ զորս ինքն կենդանացոյց եւ ի վիրացն մաքրեաց, աւրէնս դնէ առաջնորդաց եկեղեցւոյ, զի վերակացու, տեսուչ եւ խնամակալ լիցին, զի մի՛ դարձեալ աւազակք տիրեսցեն զմեզ՝ իսպառ սպանանել:

Եւ երկու դահեկանն (Ժ. 35):

Թերեւս զՀին եւ զՆոր Աւանդութիւնս ակնարկէ: Խոստանայ եւ ի գալստեանն իւրում վարձս: Արդարեւ, մեծ ի վարձուց ընդունակք լինելոց են ի հատուցմանն, եթէ Աւետարան ունիցին զվերակացութիւնն: Ապա թէ վատթարք իցեն, ունին եւ նոքա յարդարադատ իրաւանցն Աստուծոյ զարժանն առնուլ՝ զհատուցումն վրիժուց՝ ըստ այնմ՝ «Երանի՛ իցէ ծառային այնմիկ, զոր եկեալ Տէրն գտանիցէ արարեալ այնպէս» (Մատթ. ԻԴ. 46): «Ապա թէ ասիցէ ծառայն չար յամէ Տէրն զգալն եւ սկսանիցի հարկանել զծառայակիցսն» (հմմտ. Մատթ. ԻԴ. 48-49): «Եկեսցէ Տէր ծառային այնմիկ եւ ընդ մէջն կտրեսցէ զնա՝ բառնալ զիւրն» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 46): *Արդ, այսպէս է նորա հատուցումն պարտեաց՝ ըստ արդարութեան արդարոցն եւ անբարշտութեան՝ անիրաւացն:*

Եւ զայս ասացեալ՝ հարցանէ. «Ո՞ թուի քեզ մերձաւոր լինել[1] անկելոյն» (Ժ. 36):

Զնոյն ինքն զնա նստուցանէ դատաւոր եւ ընտրիչ լինել՝ արդարութեան արդարացելոցն: Իսկ նա, վասն զի յայտնի էր առանց քննութեան, ասէ.

[1] ԻՏ լեալ

Որ արար զողորմութիւն ի վերայ նորա: Եւ ասէ ցնա. «Երթ, արա՛ զնոյն եւ կեցցես» (հմմտ. Ժ. 37):

Վասն զի այս ծայրագոյնն է առաքինութեանցն: Զայս ինքն անձամբ ելից եւ զսոյն ուսոյց: Եւ ի հասարակաց քննութեան եւ ի դատելն սոքաւք երկաքանչիւր դասքն բաժանին՝ ոմանք պատուեալ պսակին, փոխանակ զի այցելու եղեն կարաւտելոցն եւ ոմանք՝ արհամարհեալ պատժին, որք անտես արարին զայս աւրինակ բարեգործութեան: Արդ, զի այսքան կարեւոր եւ աւգտակար է այս ուղղութիւն բարեաց, վասն այնորիկ եւ Տէրն նախ աւրինակաւ վարի բանիւն եւ ի գիտութիւն ածեալ ասէ՝ «Երթ, արա՛ եւ դու նոյնպէս եւ կեցցես»:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Իբրեւ կամեցաւ արդարացուցանել զանձն, ասէ. Եւ ո՞վ է իմ ընկեր (Ղուկ. Ժ. 29):

Կարծեցաւ ոմանց, թէ ամբարտաւանութեամբ ինչ խաւսեցաւ: Բայց ո՛չ: Ի տերունական բանից անտի յայտ է, քանզի յաւրէնսն գրեալ էր. «Սիրել զսիրելին եւ ի բաց դառնալ ի թշնամոյն»: Եւ այսպէս ո՛չ էր հասարակ տարածեալ սիրոյն առաւելութիւն ի թշնամիսն եւ ի սիրելիսն: Կամեցաւ ուսանել, եթէ որպէս պարտ է բաժանել սիրոյն, զի հաղորդեսցի գիտութեամբն:

Եւ Յիսուս ասէ. «Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրեքով» (Ժ. 30):

ՍՏ «Այրն», *որ* «իջանէր յԵրուսաղեմէ», *Ադամ եւ ամենայն մեղաւորք ըստ նմանութեան յանցանացն Ադամայ: ՅԵրուսաղեմէ՝ ի դրախտէն, յորմէ արտաքսեցաւ եւ անկաւ ի ստորին բնակութիւնս: Երիքով, որ է կուրութիւն, աշխարհս է, յոր բնակեցաւ յետ դրախտին:*

ԻԳ *Ամենայն ուրեք զանձն աւրինակ տայ բարեաց, զոր ինչ ուսոյցն. «Ուսարուք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ»* (Մատթ. ԺԱ. 29) *եւ «Որդի մարդոյ ո՛չ եկն պաշտաւն առնուլ, այլ պաշտել»* (Մատթ. Ի. 28, Մարկ. Ժ. 45) *եւ «Սիրեցէք զմիմեանս, որպէս ես զձեզ սիրեցի»* (Յովհ. ԺԵ. 12):

Անկաւ ի ձեռս աւազակացն (Ժ. 30):

ՍՏ *Աւազակք՝ սատանայ եւ դեւք նորա:*

ԻԳ *Ադամ եւ ամենայն ծնունդք նորա իբրեւ զայր մի՝ անկեալ ի ձեռս նոցա, քանզի յաստուածային վայելչութենէ փառաց դրախտին, զոր ունեաք, սողոսկեալ անկաք ի բարձրութենէն ի խոնարհ՝ իջեալ ի ձեռն դաւաճանողին զմեզ:*

Որք մերկացին զնա (Ժ. 30):

ՍՏ *Ի փառացն եւ յանմահութենէն զանկեալն ասէ:*

ԻԳ *Եւ մերկացեալ յաստուածային շնորհացն՝ խայտառակ գտաք, մինչեւ ասել Աստուծոյ. «Ո՛չ մնասցէ Հոգի իմ ի մարդիկդ յայդոսիկ, վասն լինելոյ դոցա մարմին» (Ծնն. Զ. 3): Եւ զամենայն զդառնութիւն սատանայի եհեղ ի մեզ վասն չար յուժարութեանն մերոյ եւ անտես առնելոյն Աստուծոյ, վասն զի եդաք ուխտ ընդ դժոխս եւ ընդ մահու դաշինս կռեցաք, եւ եդաք զյոյսն մեր ի խստութիւն: Եւ յուժարութեամբ հերքեցաք յամենակալին խնամոցն:*

Վէրս ի վերայ եդին (Ժ. 30):

ՍՏ *Մեղքն եւ յանցանքն եւ չարաչար կիրքն:*

Թողին կիսամահ (Ժ. 30):

Զի մեռաւ մեղաւքն՝ վիրաւորեալ կիսամահ սամարացոյն եւ վասն ակնկալութեան, այսինքն՝ Փրկչաւն ի կենդանութիւն փոխիլ:

ԿՂ *Զի ո՛չ կարացին յափշտակել զհոգին ի մարմնոյն ասէ զայս:*

ԻԳ *Իսկ նախանձ թշնամոյն հնարեցաւ զամենայն բնութիւնս մարդկան առհասարակ սպանանել մեղաւք: Այլ աստուածային շնորհն մնաց յարդարսն յամենայն դարս՝ ըստ նմանութեան Մելքիսեդեկի եւ այլոց արդարոցն:*

Քահանայ գայր իջ[անել] (Ժ. 31):

ԿՂ *Մելքիսեդեկ ասի [եւ] Ղեւտացի:*

ՍՏ *Որպէս ինձ թուի՝ մարգարէք եւ վարդապետք աւրինացն, որ յառաջ քան զՔրիստոս:*

ԻԳ. *Բազում մարգարէք եւ քահանայք, զնոյն բնութեանս կիրս ունելով, հազիւ ուրեմն զերծուցին զանձինս ի մահաբեր վիրաց մեզացն: Սակայն անկելոցն աւգնել ո՛չ զաւրեցին, թէպէտ եւ տեսին զծնունդս Ադամայ: Անկեալ ընդ այսպիսի ախտիւք՝ զանց արարին, զի ո՛չ էին կարող փրկել:*

Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն (Ժ. 33):

ԿՂ *Զմարդկային կիրս ասէ:*

ԵՓ *Արդ՝ Տէր մեր իբրեւ կամեցաւ կեցուցանել զազգս մարդկան, զի ընթացան հրեշտակք անուամբ իւրեանց եւ թագաւորք կոչմամբ իւրեանց եւ մարգարէք նշանաւք իւրեանց եւ քահանայք նուիրականաւք իւրեանց: Եւ մարդիկ ո՛չ փրկեցան, մինչեւ էջ յերկնից այն, որ բուռն հարկանէ եւ յարուցանէ:*

ՍՏ *Սամարացի՝ Քրիստոս, որ սամարացի կոչեցաւ եւ դիւահար: Որպէս ասէ Գրիգորիոս. «Այլ փրկեաց զազգս մարդկան»:*

ԻԳ *Եմուտ յորովայն Կուսին եւ եկն ծննդեամբ յերկիր եւ շրջեցաւ անարատութեամբ: Թէպէտ եւ կարող էր աստուածաբար փրկել, զի ամենայն ինչ նմա հնարաւոր է, սակայն իրաւամբք կամեցաւ կեցուցանել: Էառ զմերս եւ հատոյց զպարտիս մեր: Եւ, զոր աւրինակ՝ զանկեալ անասունն ի խորխորատ ո՛չ ոք կարէ ի վեր բերել, եթէ ո՛չ ինքն ի խորխորատն իջանէ, եւ զմանուկ գլորեալ ոք չկարէ ի վեր առնուլ, թէ ո՛չ առ նա խոնարհեսցի, նոյնպէս եւ Տէրն:*

Տեսեալ զնա՝ գթացաւ: Եւ պատեաց զվէրս նորա (Ժ. 33-34):

ԵՓ *Զի որքան յաճախեաց սատանայ խոցոտել զմեզ, յաճախեաց կենարարն պատել զվէրս մեր: Ըստ այնմ, եթէ՝ «Ուր առաւել եղեն մեղքն, առաւել եղեն շնորհքն» (Հռոմ. Ե. 20), վասն զի ձրի դեղաւք բժշկեաց զմեզ: Եւ սատանայ ձրի եհար եւ վիրաւորեաց զմեզ, զի ո՛չինչ վնասեցաք նմա:*

Արկ ի վերայ նորա ձէթ (Ժ. 34):

ՍՏ *Տէր «ձէթ» (Ժ. 34) զողորմութիւնն ասէ, զոր արար ի վերայ նորա, «գինի» (Ժ. 34)՝ ուրախութիւն[ն], զոր ի փրկելն յառաջագոյն պարգեւեաց:*

ԻԳ *Կամ աւազանին շնորհքն՝ զաւծումն որդեգրութեան, եւ գինին՝ արիւնն փրկական, որ կենդանացոյց զմեռեալս մեղաւք եւ առողջացոյց զվէրս հոգոց:*

Եդ ի վերայ գրասպի իւրոյ (Ժ. 34):

ՍՏ *Գրաստ, յոր եհան մարմինն իւր, որով եբարձ զմեղս աշխարհի:*

ԻԳ *Արդ՝ երբեմն ի վերայ ուսոյ բառնայ եւ երբեմն ի վերայ գրաստի, զի որ ինչ պատշաճի կերպարանն, սոյնպէս ձեւացուցանէ զԲանն:*

Ած զնա ի պանդոկ մի (Ժ. 34):

ՍՏ *Պանդոկն՝ եկեղեցի Աստուծոյ, պանդոկապետն՝ առաքեալք եւ նոցին նմանողք՝ վարդապետք եկեղեցոյ:*

ԻԳ *Ի սմա ժողովէ զանկեալս եւ զվիրաւորեալս յարկածից մեղաց, զոր ինքն կենդանացոյց, զի վերակացուք տեսուչք եւ խնամակալք լիցին, զի մի՛ դարձեալ աւազակք տիրեսցեն:*

Հանեալ եկ ցպանդոկապետն երկուս դահեկանս (Ժ. 35):

ՍՏ *Հին եւ Նոր Կտակարանք:*

Զոր ինչ ծախեսցես ի դմա, ի միւս անգամ գալստեանն իմում հատուցից քեզ (Ժ. 35):

ՍՏ *Դարձումն սամարացոյն երկրորդ գալուստն Քրիստոսի, յորժամ հատուցանէ ըստ իւրաքանչիւր գործոց առաքելոցն եւ այլոց վարդապետաց զպսակն արդարութեան, զի ջանացան վաստակեալք ճգնութեամբ եւ դարձուցին զորդիս Ադամայ ի բարեպաշտութիւն:*

ԻԳ *Ապա, թէ ասիցէ ծառայն չար. «Յամէ տէր իմ զգալն»* (Մատթ. ԻԴ. 48, Ղուկ. ԺԲ. 45) *եւ սկսանի հարկանել զծառայակիցսն, եկեսցէ Տէր ծառայիցն այնոցիկ, ընդ մէջ կտրեսցէ զնա բառնալ զիւրսն:*

Արդ՝ ո՞ [յ]երիցն թուի քեզ մերձաւոր անկելոյն (Ժ. 36):

ԵՓ *Արդ՝ Տէր մեր շամարտացովն զքահանայսն եւ զղեւտացիսն նախատեաց, զի ո՛չ արարին ողորմութիւն ի վերայ ազգին իւրեանց: Ո՛չ շամարտացի լերուք, ասաց Տէրն, այլ եցոյց զվիրաւոր հրէայն, զի զնոսա յամաւթ արասցէ շամարտացովն, որ թշնամի էր: Նաեւ հեթանոսաւքն, որով առակեաց, որ ո՛չ արարին ողորմութիւն ի վերայ ազգին իւրեանց, զի այլազգի եւ թշնամի էր նոցա:*

Եւ նա ասէ. «Որ արար զողորմութիւն ի վերայ նորա» (Ժ. 37):

ԻԳ *Վասնզի յայտնի էր եւ առանց քննութեան:*

Ասէ ցնա Յիսուս. «Երթ, արա՛ դու նոյնպէս» (Ժ. 37):

ԵՓ *Ի վերայ հրէի որդոյ ժողովրդեան քո, զոր հրամայեցին Աւրէնքն գթալ ի վիրաւորն* (տե՛ս Բ. Աւր. ԻԱ. 1-8): *Եւ դու մի՛ իբրեւ զայնոսիկ, որ ո՛չ արարին ողորմութիւն լինիր, այլ համարեալ լիցի ցաւոտն իբրեւ զմերձաւորն քո, եւ մեծ հոգաբարձութեամբ բժշկել զնա:*

ԻԳ *Փոխանակ, զի այցելու եղեն կարաւտելոց՝ պսակեալ պատուին, եւ ոմանք՝ արհամարհոտք եւ անգութք պատժին, որք անտես արարին զկարաւտեալսն:*

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով եւ անկաւ ի ձեռս [աւազակաց] (Ղուկ. Ժ. 30):

Աքանչանալ պարտ է ընդ կարգաւորութիւն առակաւոր բանիս Տեառն, զի թէ իմաստակ մարդոյ գոն շարադրութիւն բանից, քանի եւս առաւել մարդացելոյն, որ է Աստուծոյ իմաստութիւն եւ զաւրութիւն: Արդ, սկիզբն առակաւոր բանիցս ի յանկմանէն Ադամայ արար եւ կատարումն՝ ի միւս անգամ գալուստն, անդ ուր ասէ. «Տալ զհամ[ա]ր քանքարին» (հմմտ. Մատթ. ԻԵ. 19), *զոր եւ զայս բան սկզբան մանրամասնաբար մեզ քննելի է:*

Արդ, «այր» *ասէ զԱդամ, իսկ* «Երուսաղէմ»՝ *զդրախտն, զի Երուսաղէմ* «գեղ խաղաղութեան» *կոչի: Իսկ* «Երիքով»՝ *զաշխարհս, զի Երիքով* «լուսին» *թարգմանի, որ է փոփոխական, զոր եւ զփոփոխումն սորին յերկարելով բացայայտեցից, մանաւանդ, զի այսոքիկ յԵրուսաղէմ ոչ գոյին, վասն որոյ* «խաղաղութիւն» *կոչէ զնա:*

Ա. Նախ՝ զի այս երկիր միշտ այլայլի երեսաւք, երբեմն՝ չոր եւ երբեմն՝ գէճ, երբեմն՝ սառեալ, երբեմն՝ ջերմացեալ, կանաչ եւ անբոյս: Եւ այսոքիկ ոչ գոյին ի դրախտին, զի անփոփոխ ունի նա զկայացումն:

Բ. Երկրորդ՝ զի այս երկիրս միշտ փոփոխի եղանակաւքն. ի գարուն յամառն, ի յաշուն ի ձմեռն, եւ այսոքիկ ոչ գոյին ի դրախտին, զի անդ միշտ գարուն էր:

Գ. Երրորդ՝ զի աստ տիւ զգիշերն փոխէ, եւ գիշերն՝ զտիւ, եւ եւս զի գիշերն երբեմն յերկար, եւ երբեմն՝ կարճ, նոյնպէս եւ տիւն: Իսկ յաստուածային վայրն այն ոչ գոյր գիշեր, այլ միշտ՝ լոյս:

Դ. Զորրորդ՝ զի աստ անկանի սաղմն յարգանդ մաւրն, եւ ցաւաւք եւ երկամբք ծնանիմք, որպէս եւ պատիժ եղ Աստուած բնութեանս: Իսկ անդ, եթէ կացեալ էին զուղիղն, ոչ էր մեզ ցաւաւք եւ երկամբք ծնանիլ, այլ անախտաբար, որպէս լոյս՝ ի լուսոյ:

Ե. Հինգերորդ՝ զի տղայ լինիմք, եւ մանկութիւնն զնա փոխէ, եւ երիտասարդութիւն զնա, եւ ծերութիւնն զնա եւ այլն: Իսկ ի լուսեղէն բնակութիւն ոչ գոյր ծերանալ եւ հնանալ, այլ միշտ մանկութիւն, որպէս եւ վայրուցն վայել էր:

Զ. Վեցերորդ՝ զի երբ հիւանդանամք եւ դարձեալ առողջանամք, նաեւ վէրք ընդունիմք ի մեզ, խոց եւ կսկիծ, իսկ յերանեալ տեղիքն եւ ոչ գոյին հիւանդութիւն եւ տկարութիւն, այլ միշտ առողջ եւ զուարճացեալ դիմաւք:

Է. Եաւթներորդ՝ զի աստ երբեմն տրտմիմբք եւ ուրախանամք, եւ պակասին ախորժակքն մեր, եւ զի թշնամիք կեղեքեն, խլեն եւ կողոպտեն: Իսկ ի հրեշտակաց վայրքն ոչ գոյր պակասութիւն ինչ ախորժակացն, ուստի բաղկանայ տրտմութիւն, նոյնպէս եւ ոչ գոյր թշնամի, այլ անձնիշխան կամաւք ընկէց զինքն ի փառաց՝ ըստ այնմ. «Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ» (Սաղմ. ԽԸ. 13, 21):

Ը. Ութերորդ՝ զի աստ ոմն՝ աղքատ եւ ոմն՝ մեծատուն, եւ այն, որ մեծատունն է, ոչ միշտ, նոյնպէս եւ աղքատն, իսկ ի փառաւոր տեղիքն ոչ գոյր աղքատութիւն կամ մեծ եւ փոքր, այլ՝ հաւասար ամենեցուն վայելուածք պատրաստեալ է Տէրն:

Թ. Իններորդ՝ զի աստ երբեմն՝ արդար, եւ մին՝ դարձեալ մեղաւոր, եւ ոչ նոյն կացելոցն եւս արդարացեալ եւ միջակ, եւ առաւել, եւ նուազ, իսկ յանմեղութեան տեղիք ոչ գոյր մեղք, վասն որոյ եւ ապաշխարութիւն, այլ արդարութեամբ միշտ ցանկացեալ յաստուածային տեսութեանն:

Ժ. Տասներորդ՝ զի աստ ոչ եմք միշտ կենդանի, այլ մահ փոխէ զմեզ եւ ոչ ի նոյն յամեմք, այլ դարձեալ յառնեմք ի մեռելոց, իսկ անդր ոչ գոյր մահ, եւ յայտ է, զի ի պտղոյն ուտելն եղ զմահ, վասն որոյ եւ յարութեան պիտոյացաւ, այլ միշտ կեանք: Արդ, զայս ամենայն պակասութիւնս երեր բնութեանս մարդկան, իջանելով անձնիշխան կամաւք ի մեղս եւ զրկեաց յանմահ վայրէն, վասն որոյ յիրաւէ ասէ, զի.

Անկաւ ի ձեռս աւազակաց (Ժ. 30):

Զի որ բարութեանն ոչ տանի, յիրաւի չարեաց դիպի:

Եւ զի՞ «**գող**» *սատանայ կոչի եւ* «**աւազակապետ**»: *Եւ այս վասն բազում պատճառի:*

Ա. Նախ՝ զի գողն ի գիշերի շրջի. այսպէս եւ սատանայ ի խաւարի շրջի՝ ըստ այնմ. «Ցիրէ, որ շրջի ի խաւարի» (Սաղմ. Ղ. 6):

Բ. Երկրորդ՝ զի գողն փախչի յիշխանաց եւ ի մեծամեծաց, այսպէս սատանայ՝ [յ]եկեղեցւոյ, յԱւետարանէ եւ ի սրբոցն՝ ըստ այնմ. «Անկցին ի կողմանէ քում[մ]է Ռ. (հազարք)» (Սաղմ. Ղ. 7):

Գ. Երրորդ՝ զի գողն թաքնաբար մտանէ ի տուն՝ հանել զկարասին, մինչ զի ոչ գիտէ տէր տանն. այսպէս սատանայ թաքնաբար մտանէ ի տուն, այսինքն՝ ի սիրտ մարդոյն՝ հանել զբարի գործ առաքինութեան, մինչ զի ոչ իմանայ մարդն:

Դ. Զորրորդ՝ զի գողք եւ աւազակք եթէ ոչ կարեն թաքնաբար առնուլ, բռամբ կամին քակել զտունն եւ զտէր նորա սպանանել. այսպէս եւ սատանայ մինչ ոչ կարէ խաբել զմարդն, յարուցանէ փորձանս ի վերայ մարդոյն, թերեւս կարիցէ աւերել զբարւոք կամս նորա:

Ե. Հինգերորդ՝ զի գողն յորժամ մտանէ ի տունն, նախ՝ շիջուցանէ զգիտութիւն մարդոյն եւ ապա՝ սերմանէ ի նմա զամենայն մեղս:

Զ. Վեցերորդ՝ զի որպէս գողն զազնիւն առնու ի տանէն եւ զվատթարն թողու, այսպէս եւ սատանայ առնու զբարիս մարդոյն եւ զվատթար մեղսն ի նմա թողու՝ սպանանելով զնա:

Է. Եաւթներորդ՝ զի գողն յորժամ մտանէ ի տունն, եթէ ի տունն մի մարդ է, սպանանէ, ապա թէ բազում՝ ոչ կարէ. այսպէս եւ սատանայ, թէ գտանէ ի մարդն մի սրբութիւն, վաղվաղակի սպանցէ զնա, որպէս ասէ. «Վա՛յ միոյն ի ճանապարհի» (հմմտ. Ժող. Դ. 10), *եւ* «չուան երեքկին մի խզեսցի» (հմմտ. Ժող. Դ. 12):

Ը. Ութերորդ՝ զի որպէս գողն յորժամ ոչ կարէ ընդ նեղ ծերպս ծակուց մտանել, յայնժամ արձակէ անդ մանուկ փոքր եւ մտանէ ի ներքս. նմանապէս եւ սատանայ, յորժամ գայ առ արդարս եւ ոչ կարէ զմահու չափ մեղս մուծանել ի ներքս, յայնժամ հնարի զնեբելիսն սակաւ սակաւ մատուցանել ի նա, ուստի վարժեալ՝ անկանի ի մեղս մահու չափ:

Թ. Իններորդ՝ զի յորժամ տեսանէ գողն զտէր տանն յարթուն, ոչ կարէ ինչ գողանալ, իսկ թէ ննջէ, ապա առնու: Նմանապէս

սատանայ յորժամ տեսանէ զժիրսն ի բարեգործութեանն, ոչ կարէ քարշել զնա ի մեղս, իսկ յորժամ ծուլանան, նմանապէս սերմանէ զչարիս իւր:

Ժ. Տասներորդ՝ զի որպէս գողն ոչ կարէ ուրանալ զսովարական գործն իւր, այսպէս սատանայ ոչ կարէ ուրանալ զչարութիւն իւր, վասն որոյ Ադամայ եւ ասար հասուցանէ զչարիս իւր, զի նովաւ ոչ բաւականացաւ կամ կորստեան բնութեանս, այլեւ զիւրաքանչիւրսն առանձնակի կորուսանէ ի վիհն յաւիտենական, վասն որոյ ասէ. **«Անկաւ ի ձեռս աւազակաց»:**

Եւ արդ, ոչ միայն Ադամայ, այլեւ ի մեզ գործէ սատանայ, յորժամ ի մեղս անկանիմք, զայսոսիկ, զոր թուէ Տէրն:

Ա. Նախ՝ զի ի մերձենալն ի մեղս գերի լինիմք սատանայի՝ ըստ այնմ. «Որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց» (Յովհ. Ը. 34):

Բ. Երկրորդ՝ զի մերկացուցանէ զմեզ, այսինքն՝ զանապականութիւն եւ զանմահութիւն, այլեւ զչնորհս աւազանին, զաղաւթս եւ զպահս:

Գ. Երրորդ՝ վէրք դնէ ի հոգիսն զխայթոց մահուն յաւիտենական զմեղքն:

Դ. Զորրորդ՝ զի կիսամահ առնէ, այսինքն՝ յորժամ մարդն ի մեղքն է, մեռեալ է հոգին, եւ մարմինն միայն է կենդանի, վասն որոյ **«կիսամահ»** *կոչէ: Եւ դարձեալ՝ առ բնութիւնս գործեաց սատանայ, զի կամեցաւ զբոլորն մեռուցանել: Իսկ նախախնամութիւնն ոչ եթող, այլ յարոյց ի բնութենէս զարդարս՝ զՆոյ եւ զԱբրահամ եւ զայլս, վասն որոյ* **«կիսամահ»** *կոչի:*

Ե. Հինգերորդ՝ զի անտէր առնէ զմարդն, այսինքն՝ զհրեշտակս պահապանս ի բաց քակէ ի մէնջ եւ ինքն ոչ պահէ, այլ՝ տանջէ:

Իսկ արդ՝ **«վէրք»** *զմեղքն ասէ, եւ զմեղքն վիրաց նման է բազում եղանակաւ:*

Ա. Նախ՝ զի վէրքն յայլ ումեմնէ լինի, զի թէ թրով հատանեն կամ փայտով հարկանեն. այսպէս եւ մեղքն ի պատճառէ սատանայի լինի, որ կամի միշտ խոց պահել զհոգին՝ ըստ այնմ. «Նախանձ բանարկուին եմուտ մահ յաշխարհ» (Իմաստ. Բ. 24):

Բ. Երկրորդ՝ զի գոյ վէրք, որ յանձնէ մարդոյն յառաջ գայ եւ ոչ ի պատճառէ, այսպէս՝ գոյ մեղք, որ մարդն ինքն խորհելով յառաջն բերէ առանց աւգնականութեան սատանայի, զի միտք մարդկան ի խնամս չարին հաստատեալ են ի մանկութենէ:

Գ. Երրորդ՝ զի վէրն շարաւակալի եւ տուն առնէ. այսպէս եւ մեղքն, ժողովեալ այլեւս աւր ըստ աւրէ բնակութիւն կազմէ իւր զհոգին, եթէ ոչ, մարդն փութով արտաքսէ:

Դ. Զորրորդ՝ զի մի վիրացն պարտին բազում սպեղանիք լինել. այսպէս եւ մեղացն պարտին բազում զղջումն եւ ապաշխարութիւնք:

Ե. Հինգերորդ՝ զի դժուարաւ ողջանան վէրքն, այսպէս եւ մեղքն դժուարաւ ելանէ ի մարդոյն, որք անզեղջք են. «Զի այս ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահաւք եւ աղաթիւք» (Մատթ. ԺԷ. 20):

Զ. Վեցերորդ՝ զի վէրքն ի մի մասն անդամոյն լինի, բայց զամենայն անդամսն ցաւեցուցանէ. այսպէս՝ մեղքն թէպէտ ի հոգին է, սակայն բոլոր մարդոյն բերէ տանջանք՝ ըստ այնմ. «Վշտանայ ինչ մի անդամ, վշտանան ամենայն անդամքն» (հմմտ. Ա. Կոր. ԺԲ. 26):

Է. Եաւթներորդ՝ ի լինել վիրացն ի մի անդամն ոչ կարէ առնել այլ ինչ գործ, այսպէս մեղաւք լցեալ հոգի ոչ կարէ առնել արդարութիւն ինչ:

Ը. Ութերորդ՝ զի թէ ոչ ելանէ ամենայն փուտ մարմնոյն, ոչ առողջանայ մարմինն, եւ թէ մին մասն մնա, նա զառաջին կերպն ստանայ, այսպէս եւ մեղքն, թէ ոչ հատանէ մարդն ի հոգւոյն, ոչ կարէ ապրել հոգին, այլ զամենայն հանել պարտ է, զի զինչ աւգուտ է զխոտն քաղել եւ զարմատն ի ներքս թողուլ, զի վաղիւն կրկին բուսանի, այլ արժան է զարմատն քակել, զի մի եւս բուսցի:

Թ. Իններորդ՝ զի իմաստուն բժիշկ պիտոյ է, զի զվէրսն բժշկեսցէ, այսպէս եւ հոգեւոր բժիշկն պարտի գիտուն լինել, որով կարասցէ զվէրսն հոգւոյն առողջացուցանել՝ ըստ այնմ. «Որ հանճարեղն է՝ զառաջնորդութիւն ստացի» (Առակ. Ա. 5), *զի յիմար բժիշկն առաւել խոցէ զվէրսն:*

Ժ. Տասներորդ՝ զի թէպէտ բժշկին վէրքն, սակայն սպիքն մնայ ի նոյն տեղիքն. այսպէս եւ թէպէտ մեղքն սրբին ի մարդոյն, սակայն յիշատակութիւն մեղացն մնան, այսինքն՝ խղճմտանքն, որ է սպի ի հոգին:

Արդ, զայս ամենայն, զոր մեք ի մեղս հանելով ցուցաք, ի յԱդամ գործեցաւ, մինչեւ մերձ եղեւ դժոխոցն: Իսկ ասելն.

Դէպ եղեւ անցանել ընդ այն ղեւտացին եւ քահանային եւ զանցարարին (հմմտ. Ժ. 31-3):

Ա. Նախ՝ «**ղեւտացի**» *զՄովսէս ասէ եւ զմարգարէս, զի ոչ ինչ կարացին աւգնել բնութեանս, զի փրկիչն անմեղ պարտի լինել, եւ նոքա, ի մեղաց մարմնոյ ծնեալ, ոչ կարէին ամենեւին անմեղ լինել: Իսկ* «**քահանայ**»՝ *զԱհարոն եւ զայլ քահանայսն, որք ոչ կարացին ապրեցուցանել զբնութիւնս, որպէս ասէ Պաւղոս* (տե՛ս Եբր. Ժ. 11-17): *Իսկ յորժամ Տէրն ամենեցուն ետես, եթէ ոչ ոք կարաց աւգնել անկելոցս, ինքն խոնարհեցաւ եւ ծնաւ մարդկապէս եւ փրկեաց զմեզ:*

Դարձեալ՝ համանգամայն «**ղեւտացի**» *եւ* «**քահանայ**» *զՀին աւրէնսն է իմանալ, զի գործով ոչ կարաց արդարացուցանել զբնութիւնս, որպէս ասէ Պաւղոս* (տե՛ս Եբր. Ժ. 11-17): *Իսկ* «**սամարացի**» *զՆոր աւրէնսն ասէ, որ հաւատով ջանաց եւ ապրեցոյց: Եւ զի Տէր մեր կարաւղ էր զաւրութեամբ բազկի իւր ապրեցուցանել զմեզ, այլ զի կամեցաւ արդար իրաւամբք փրկել, վասն որոյ մարմին էառ*[1]*: Եւ զոր աւրինակ տղայ ոք անկեալ յերկիր՝ ոչ է հնար կանգնել, եթէ ոչ գրկախառն պատեսցէ եւ բարձրացուսցէ. այսպէս՝ Տէր մեր մերձ եղեալ անկելոցս եւ բարձրացոյց զչարչարանս՝ կրելով զչարչարանս վասն մեր, վասն որոյ ասէ.*

Սամարացի ոմն եկեալ եւ գթացաւ (հմմտ. Ժ. 33):

Զի սամարացի կոչեցաւ նա ի հրէից:

Արդ, Տէր մեր Ժ. (10) բարութիւնս արար անկելոյն ի ձեռս աւազակաց:

Ա. Նախ եւ առաջին՝ բարութիւն, զոր արար Տէր մեր բնութեանս՝ հայելն է յանկեալքս, վասն որոյ զսոյն աւրինադրեաց հայել յաղքատն եւ ի տնանկն՝ ըստ այնմ. «Հիւանդ էի, եւ եկիք առ իս» (հմմտ. Մատթ. ԻԵ. 36):

Բ. Երկրորդ՝ բարութիւն, զի գթացաւ եւ զսոյն ուսոյց՝ գթալ յաղքատս եւ ի տնանկս եւ ի մեղաւորսն:

Գ. Երրորդ՝ զի «**մերձեցաւ առ հիւանդն կիսամահ**». *այս է* «**մերձենալն**», *զի էառ մարմին ի բնութենէս:*

Դ. Չորրորդ՝ զի «**պատեաց զվէրս նորա**». *այսպէս Տէրն՝ սուրբ պատուիրանաւ իւրով:*

[1] Դ <Վասն որոյ մարմին էառ>

Ե. Հինգերորդ՝ զի «**ձիթով աւծ**». *այսինքն՝ աւծմամբ Հոգւոյն Սրբոյ ի մկրտութիւնն:*

Զ. Վեցերորդ՝ զի «**գինի եհեղ ի վերայ**». *այսինքն՝ զհաղորդութիւն արեան իւրոյ պարգեւեաց մեզ:*

Է. Եաւթներորդ՝ զի «**երարձ ի գրաստի**». *այսինքն՝ զցաւս մեր երարձ ի վերայ խաչափայտին:*

Ը. Ութերորդ՝ զի «**եհան յանկեալ տեղէն եւ աւծ ի պանդոկ**». *այսինքն՝ եհան ի գժոխոց եւ եդ յեկեղեցի:*

Թ. Իններորդ՝ զի «**յանձնեաց ի պանդոկապանն**». *այսինքն՝ յառաքեալսն եւ ի հայրապետսն, զոր աւրինակ թագաւոր երթեալ ի տար աշխարհ եւ յանձնէ զտուն ի սիրելի բարեկամ իւր* (տե՛ս Ղուկ. ԺԹ. 12):

Ժ. Տասներորդ՝ զի «**եկ Բ. դահեկանս**» *առ ի դարմանել զհիւանդն. այսինքն՝ զՀին եւ զՆոր Կտակարանսն, որ նոքաւք առողջանա մարդն:*

Իսկ զի՞ «**պանդոկ**» *անուանէ զեկեղեցի: Եւ այս վասն բազում պատճառի ըստ համեմատութեան իմն:*

Ա. Նախ՝ զի պանդոկն յոյս է ապաւինութեան տեղւոջ ճանապարհորդաց. այսպէս եւ եկեղեցի յոյս եւ ապաւէն է հաւատացելոց յանակնկալ ի տեղիս յայս կենցաղումնս, յոր ապաւինեալ՝ հասանիմք վերին խորանին:

Բ. Երկրորդ՝ զի հանգիստ է ճանապարհորդաց պանդոկն. այսպէս եւ մեղուցեալ անձանց հանգիստ է եկեղեցի՝ ըստ այնմ. «Եկայք առ իս, ամենայն աշխատեալք եւ ծանրաբեռինք, եւ ես հանգուցից [զձեզ]» (հմմտ. Մատթ. ԺԱ. 29):

Գ. Երրորդ՝ զի անասուն[ք] եւ մարդիկ ի միասին բնակին ի պանդոկի. այսպէս մեղաւորք եւ արդարք ի միասին հաղորդեն յեկեղեցիս ի սուրբ մարմնոյ եւ արեան՝ ըստ այնմ. «Գայլք եւ գառինք ի միասին ճարակեսցին» (Ես. ԿԵ. 25):

Դ. Չորրորդ՝ զի պանդոկն պահէ ի ցրտոյ եւ ի տաւթոյ. այսպէս եւ եկեղեցի ի ցրտութենէ անհաւատութեանն ջերմացուցանէ դաւանութեամբն եւ ի ջերմութենէ մեղաց զովացուցանէ խոստովանութեամբ թողութեան բան՝ ըստ այնմ. «Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս» (Յովհ. Է. 37):

Ե. Հինգերորդ՝ զի պանդոկն ի գազանաց անվնաս պահէ. այսպէս եւ եկեղեցի, անվնաս պահէ ի գազանէ սատանայէ՝ ըստ այնմ. «Դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն[1]» (Մատթ. ԺԶ. 18):

Զ. Վեցերորդ՝ զի ի պանդոկն չինեալ են մասնաւոր տունք. այսպէս եւ յեկեղեցի կարգեալ են զանազան առաքինութիւնք՝ եւ բարձր, եւ խոնարհ:

Է. Եաւթներորդ՝ զի զոր, ինչ խնդրէ մարդն, գտանէ անդ, զի պատրաստեն տեարք պանդոկին, այսպէս եւ զոր, ինչ կամի ոք, յեկեղեցւոջ իմաստութիւն եւ գիտութիւն գտանէ:

Ը. Ութերորդ՝ զի պանդոկապան կարգեալ են. այսպէս եւ յեկեղեցի՝ եպիսկոպոս եւ քահանայ:

Թ. Իններորդ՝ զի զինչս ճանապարհորդաց ի պանդոկապանն հաւատացեալ լինի, այսպէս եւ զգործս մեղաւորաց եւ արդարոց առ քահանայսն է հաւատացեալ, զի նոյնպէս է պահող եւ կորուսանող:

Ժ. Տասներորդ՝ զի վարձ առնու պանդոկապետն, յորժամ զամենայն կատարէ, այսպէս եւ առաջնորդք եկեղեցւոյ առնուն վարձս յետ ուղղափառ կատարելութեանն, վասն որոյ ասէ Տէրն.

Եւ [ցպանդոկապետն] երկու դահեկանս եւ ասէ. «Դարմանեա՛ զդա, եւ ի միւսանգամ գալստեան իմոյ հատուցից քեզ (հմմտ. Ժ. 35):

Վասն որոյ ուրախացեալ առաջնորդք եկեղեցւոյ, ժրացեալք ի գործս բարիս պարտիմք լինել: Զի ահա փոխարէն վաստակոց ձերոց խոստացաւ Տէրն մեր, մի գուցէ ծուլութեամբ եւ զվատթար գործսն առնելով, զրկիցիմք ի յանճառ բարեացն, եւ ոչ միայն զրկիցիմք, այլեւ ի չարիս պահեսցէ զմեզ փոխանակ ուրախութեանն, մանաւանդ զայս աւրինակ ետ մեզ Տէր, զի գթասցուք առ միմեանս եւ զմահ յանձին բերցուք, որպէս նայն, զի եւ նորին տեսութեանն արժանաւորեսցուք շնորհաւք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայել է փառք:

[1] Դ յաղթահարեսցէ

ԱՌԱԿ ԱՆՄԻՏ ՄԵԾԱՏԱՆՆ

Ղուկ. ԺԲ. 16-21

ԻԳՆԱՏԻՈՍ

Ասէ.

Առն ուրումն մեծապան եղուն անդր փոհմականս: Եւ խորհէր ի մտի իւրում եւ ասէր. «Զի՞նչ գործեցից, զի ոչ գոյ տեղի, ուր ժողովեցից զարդիւնս իմ» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 16-17):

Զայս առակ եղ առաջի, զի ուսեալ մեր, զանձինս ազատեսցուք ի ծառայութենէ չար ցանկութեանցս այսոցիկ, վասն զի խնամք տեսչութեանն Աստուծոյ չառնէ անտես բնաւ զոք: Զի թէ աղքատացուցանէ զմեզ, փորձէ, թէ ե՞մք ժուժկալք եւ համբերողք, եթէ ոչ ինչ զչարիցիմք ի նեղութիւնս, եթէ կարճամիտք եւ դիւրակործանք: Եւ եթէ մեծութիւն տայ եւ այնու փորձէ, եթէ ոչ ինչ ախտացաք ի գոյս ապականացուս եւ ոչ յաւրացաք ի փառս, որ փախստական է եւ ոչ կայ ի հաստատութեան, որպէս երեւի: Արդ, են վկայք այսոցիկ առաջինքն, որք փորձեցան եւ ընտիրք գտան: Եւ որք վատթարք եւ խենեղք ցուցան, եւ ունիմք այսոցիկ առաջին զԱբրահամ, զոր հրամանաւ եհան Աստուած ի հայրենի ժառանգութենէն եւ ած ի յերկիրն Քանանացւոց եւ ասէ. «Քեզ տաց զերկիրս զայս» (հմմտ. Ծնն. ԺԳ. 7)*: Եւ փոխանակ երկրին ժառանգութեան, ած ի վերայ նորա վտանգ սովու, զի վասն նեղութեանն այնորիկ եմուտ յԵգիպտոս, եւ քան զտագնապ սովուն մեծ էր նմա՝ կնոջն հանելն ի նմանէ* (տե՛ս Ծնն. ԺԲ. 11-13)*, սակայն արդարն կայր ամենայնիւ ի հաստատութեան եւ ոչ տարակուսէր ընդ այն, թէ ոչ լցաւ խոստումն Աստուծոյ, այլ հակառակքն ընկալան զնա: Ապա փորձ գտեալ եւ անպարտելի ի տրտմականսն, դարձուցանէ այնուհետեւ զփորձութիւնն ի հեշտալիսն եւ ի փառաւորագոյնսն, զի ետ նմա զկինն բազում ստացուածովք եւ ած զնա դարձեալ ի նոյն գաւառ* (տե՛ս Ծնն. ԺԲ. 20, ԺԳ. 1-3) *եւ այնքան մեծացոյց զնա, մինչեւ իւր ծառայիւքն զգերիչսն Սոդոմացւոց վանեաց[1] եւ զաւարն դարձոյց եւ ոչ կամեցաւ բնաւ առնուլ ինչ յաւարէ անտի՝ ախտացեալ ի նո-*

[1] ԻՏ վարեաց

սա, այլ մնաց անըմբռնելի յայսպիսեաց կրից (տես Ծնն. ԺԴ. 8-17): *Յաղագս որոյ ասէ.* «Զգեցից ահա զձեռն իմ առ Աստուած, զի ի շաղամաթէ միոջէ մինչեւ ի խրաց մի կաւշկաց ոչ առից» (հմմտ. Ծնն. ԺԴ. 23): *Այսպիսի ոք ցուցաւ եւ Յոբ, զի ի փառսն ոչ հեշտացաւ եւ ոչ ամբարտաւանեաց, եւ ի բառնալն ի նմանէ մեծութեանն՝ ոչ զայրացաւ եւ ոչ ետ անզգամութիւն Աստուծոյ, այլ այնպէս երկոքումբք անպարտելի գտաւ* (տես Յոբ Ա.-ԽԲ.): *Են առ այս բազումք, որ ի նեղութիւնս եւ ի դժնդակ իրս*[1] *հէգս եւ թշուառականս զանձինս համարին, իբրեւ զայնոյս, որոց ոչ իցէ Աստուած: Դարձեալ են, զորս մեծացոյց, եւ նոքա յուսացան ի մեծութիւնս եւ մոռացան, թէ է Աստուած, որ մեծացուցանէ եւ աղքատացուցանէ: Եւ այնքան յաւրացեալ, հարան ի սէր ընչիցն, մինչեւ խաւարեալք յախտիցն ցանկութեանց, անյոյս եղեն յաստուածային փառացն եւ ի մեծութենէ անտի, որ արդարոցն պահեալ կան յերկինս: Զոր աւրինակ այրս այս, զոր առեալ Տէրն, նովաւ զարհուրեցուցանէ զագահս եւ զարթուցանէ զթմբրեալսն արծաթսիրութեան ախտիւն, եւ իմաստնացուցանէ զյիմարս՝ մի՛ կապել զմիտսն ի յախտս չար ցանկութեանն եւ մի՛ հաստատել զյաւժարութիւն կամացն՝ ի գոյս երեւելիս, որ ոչ կայ ի հաստատութեան, այլ խաբէութեամբ ունի զմեզ: Վասն որոյ ասէ.* «**Եփուն անդ փոհմականս**»: *Բազմացոյց Աստուած զսերմանիս նորա, զոր արկ յերկիր, զի ուսցի նմանիլ երկրին բարութեան եւ այնպէս առատացուցանել յինքն Աստուծոյ՝ զպտուղ առաքինութեանն: Զի, ահաւասիկ, եւ մեք երկիր եմք Աստուծոյ, որ՝* «Ընկալաք ի նմանէ զսերմանս բանին եւ պարտապան եմք՝ հատուցանել զսերմանողին զպտուղ բարեաց եւ ընդունել աւրհնութիւն ի նմանէ» *ըստ առաքելոյն* (հմմտ. Եբր. Զ. 7): *Ապա թէ փշաբերք ոմանք իցեմք եւ անպտուղք՝ մերձ են անէծքն եւ վախճանն, այրումն եւ կորուստ, որ ընդունելոց է զայնպիսին յետ աստի հրաժարելոյն* (տես Եբր. Զ. 8): *Եւ կարի յիրաւի են այս դատաստանքն Աստուծոյ ի վերայ ամբարշտաց, զի յետ այսքանեաց խրատուց եւ այսպիսեաց պարգեւաց եւ առատացուցանելոյ Աստուծոյ զարդիւնսն, ուստի պարտ էր նմա սփռել եւ տալ աղքատաց, զի* «արդարութիւն մնասցէ յաւիտեանն»՝ *ըստ երգոյն* (հմմտ. Սաղմ. ճԺԶ. 2), *զոր լուաւ: Սակայն նա յայսպիսեաց աստի ինչ ոչ ածէր զմտաւ, այլ լցեալ չար ցանկութեամբ ընչիցն՝ վարանէր*

[1] ԻՏ կիրս

խորհրդովք: «**Զի՞նչ,- ասէ,- արարից**»: *Որպէս այնոքիկ, որ յոյժ կարի չքաւորեալք յամենայն պիտոյից՝ տարակուսալ ասեն.* «**Զի՞նչ արարից, ուսքի՞ հանդերձ, ուսքի՞ կերակուր**»: *Ըստ նմին եւ սա, ախտիւ ագահութեանն ըմբռնեալ, ասէ.*

Զի՞նչ արարից, զի ոչ գոյ տեղի, ուր ժողովեցից զարդիւնս իմ (հմմտ. ԺԲ. 17):

Արդարացեալ է աստ ասացեալն, եթէ՝ «Հաւատացեալոյն ամենայն երկիր լի է սրացուածովք, իսկ անհաւատին՝ եւ ոչ դանգ մի» (հմմտ. Առակ. ԺԹ. 4): *Քանզի աղքատ եւ ծարաւ[ի] է ամենայն ոք, որ ախտիւ կապեալ իցէ, թէպէտ եւ ամենայնի Տէր իցէ: Զի զի՞նչ աւգուտ ի փարթամութենէն իցէ, յորժամ ի ցանկութենէ այնմ, որ ոչ ունի՝ իբրեւ զկարաւտ ոք, չարչարիցի: Եւ ստուգապէս ազատ է եւ ամենայնի Տէր, որ զամենայն արհամարհեաց եւ ի վերոյ էանց, քան զերեւելիս. եւ ոչ ի միջէ ըմբռնեալ յախտէ յերանելի կեանս կեայ՝ առանց հոգոց եւ ցաւոց, որ զմիտս չարչարեն: Յորմէ այս այր զանձն ազատել ոչ կամեցաւ, այլ վարակեալ ախտիւն՝ ասէ.* «**Ո՞ւր ժողովեցից զարդիւնս իմ**»: *Ապա սկսանի տալ զանձն բազում աշխատութեանց եւ ծախուց ընչից եւ չգրէ ինչ զայս, բայց միայն յայն հայի, զի լցցէ զցանկութիւնն, յորում կապեցաւ բնութիւնն: Նաեւ ոչ զայն ած զմտաւ, եթէ ոչ ներէ նմա*[1] *ժամանակն, այլ վստահացեալ ասէ.*

Քակեցից զշտեմարանս իմ եւ եւս մեծամեծս շինեցից եւ անդր ժողովեցից զցորեան եւ զամենայն բարութիւնս իմ: Եւ ասացից ցանձն իմ՝ «Անձն, ունիս բազում բարութիւնս՝ համբարեալ բազում ամաց. հանգի՛ր՝ կե՛ր, ա՛ր եւ ուրախ լե՛ր» (ԺԲ. 18-19):

Ո՛վ մեծի յիմարութեանն, որպէս թէ պակասեաց զաւրութիւնն երկրի եւ այլ ոչ եւս յաւելու տալ զպտուղ, եւ զայն միայն ունի եւ բազում ամաց բաւական է, եւ ամենեքեան, որ ոչ զնոյն համբրեցին, կորնչելոց են, եւ ինքն միայն մնալոց է յերկրի: Պարտ էր զայն զմտաւ ածել, թէ որ զայս ամենայն առատացոյց, մինչ ոչ էր, ունի նա նովին բնութեամբ եւ յառաջիկայ ժամանակն եւս բազմացուցանել զնոյն: Եւ ամենայն ամք իւրեանց արմտեաւքն չափին եւ լցեալ են եւ չեն կարաւտ փոխ առնուլ ի դրացւոցն, բայց թէ՝

[1] ԻՏ > նմա

իրաւունք աստուածային բարկութեանն շարժեսցի՝ վանել զերկիր վասն այսպիսեաց ամբարշտաց: Իսկ սա յայսպիսեաց աստի ինչ ոչ ած զմտաւ, ոչ զչափ պիտոյից բաւականին ունել եւ յաւելորդացն մասնաւորել զկարաւտեալսն, եւ ոչ թէ գոյ նախախնամութիւն Աստուծոյ ի վերայ բնութեանս եւ առնէ բարիս բարեաց եւ տանի զթիւրսն յափշտակութեամբ ի կորուստ: Այլ այնպէս, որպէս թէ եւ ինքն անձին բաւական իցէ, երանէ զանձն եւ ասէ. **«Ունիս բազում բարութիւնս, կե՛ր, ա՛րբ եւ ուրախ լե՛ր»:**

Զայսպիսի ախտացեալս Սողոմոն, քան զամենայն վատթարս, եւս վատթարս եւ աղտեղագոյնս կոչէ յասելն. «Որ ի նոցանէ սարկագոյնքն են, զորկոր եւ զորովայն ապրուածացուցին (Իմաստ. Բ., Փիլ. Գ. 18)*: Զի իբրեւ Աստուծոյ կան ի ծառայութիւն՝ տալ զցանկութիւն անբան մասին բնութեանս, եւ զի մի պակասեսցի այն, երկիւղիւ տագնապին՝ բազում ժամանակաց մթերել, եւ ոչ իմանան եւ ոչ ածեն զմտաւ, թէ ի կէս աւուրց լքցեն զամենայն եւ այնպէս աղքատ, մերկ եւ խայտառակ պատահեսցին անտի կենացն: Վասն որոյ* **ասէ առ նա Աստուած. «Անմի՛տ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն, եւ զոր պատրաստեցերդ՝ ո՞ւմ լինիցի»** (հմմտ. ԺԲ. 20):

Արդարեւ, անմտութիւն մեծ է, որ իւր ոգւոյն տէր ոչ է՝ ունել կամ արձակել, եւ այսքան զբաղմամբ եւ սիրով հարեալ է յերեւելիս եւ ի հոսանուտս: Առ այսպիսիս հայեցեալ Ամբակում՝ ասաց. «Վա՛յ, որ յաճախէ անձին իւրոյ, որ ոչ իւր իցէ. մինչեւ յե՞րբ ծանրացուցանէ զանուր իւր ծանրութեամբ, զի յանկարծակի յարիցեն կերիչք նորա եւ զարթիցեն դաւաճանք նորա եւ եղիցիս նոցա ի յափշտակութիւն: Զի դու կողոպտեցեր զազգս բազումս, եւ զքեզ կողոպտեսցեն մնացորդք ամենայն ժողովրդոց» (Ամբ. Բ. 8): *Այսպիսի է եւ ի Տեառնէ ասացեալն.* **«Յայսմ գիշերի զոգիդ պահանջեն, եւ զոր պատրաստեցեր՝ ո՞ւմ լիցի»:**

Ո՛վ, որքան է յիմարութիւնս եւ զիա՞րդ զաւրացաւ՝ յաղթել, զի յետ այսքան խրատու սաստոյ եւ յանդիմանութեան տակաւին եւս քարշեալ՝ ձգեն զմեզ ախտիցն ցանկութիւնք եւ, գերեալ, վարեն աւրինաւք մեղացն, եւ ոչ զարհուրիմք եւ ոչ զանգիտեմք ի սպառնալեաց աստի, որ եւ զխրատ լաւագունիցն ցանկութեան ընդ իւր ունի: **«Զորս պատրաստեցեր,- ասէ,- ո՞ւմ լիցի»:** *Զի ահա աւտարաց թողաք զայն, եւ մեք թափուր գնացաք, եւ որք ժառանգեն զմերն, բազում անգամ յատելեաց հանդիպին լինել եւ ոչ ի սիրելեաց:*

Եւ իբրեւ զայրս զայս աւրինակաւ առաջի եդ, ապա դարձուցանէ զբանն առ ամենեսեան, որք զնոյն ախտանան:

«Նոյնպէս, - ասէ, - եւ որ գանձէ անձին, եւ ոչ յԱստուած մեծանայցէ» (ԺԲ. 21):

Զի մի ոք, որ ի նոյն գործս ամբարշտութեան իցէ, կարծեսցէ, թէ անպարտ վճարիցէ[1]*, այլ գիտել, թէ եւս տոկոսեաւք ի մէնջ պահանջին: Զի եթէ այս միայն էր դատաստան իրաւանցն Աստուծոյ, յաստի կենացս վրիպել ագահաց եւ աւտարաց տալ զնոցա ժառանգութիւնն եւ յետ սոցին չգոյր ինչ՝ ի վերուստ կարգեալ հուր տանջողական, երանելիք ոմանք էին: Բայց սակայն, զի աստ սիրեցին մեծանալ եւ անձանց գանձեցին եւ առ Աստուած ոչ մեծացան, յանտի ճոխութենէն զրկեալք են: Եւ կայ պահի նոցա, որ ի հասարակաց քննութեան անդ ասացեալ լինի՝* «Ի բաց գնացէք յինէն, անիծեա՛լք» (հմմտ. Մատթ. ԻԵ. 41)*: Եւ յիրաւի, են այս դատաստանք, զի որք զանձինս կամաւ ի բաց փակեցին ի մեծութենէ անտի, որ առ Աստուծոյ է՝ աղքատանալ ի հանդերձեալսն, ժառանգեն զԴաւթայ ասացեալն.* «Բաժին ժառանգութեան մեղաւորաց, եւ է նա հուր եւ ծծումբ» (հմմտ. Սաղմ. Ժ. 7)՝ *անլոյս խաւարաւ խառնեալ: Արդ, զայս ժառանգեն, զի ունէին մեծանալ յԱստուած եւ ոչ ընտրեցին զայն՝ դնել ի բարեաց մասին: Եւ զայս ասացեալ՝ դարձուցանէ զբանն առ աշակերտսն, ամփոփէ զնոսա եւ ի հարկաւորացն հոգալոյ, զի մի ի ստոյգ հոգւոցն վրիպեսցին:*

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Առն մեծապան եփուն անդր փոհմականք (Ղուկ. ԺԲ. 16):

ԻԳ. *Զայս առակ եդ առաջի ամենեցուն, որ մտանեն յաշխարհս, զի ուսեալ ազատեսցուք ի չար ծառայութեանց ցանկութեան: Վասնզի տեսչութիւն Աստուծոյ ո՛չ առնէ անտես զոք, զի թէ աղքատացուցանէ՝ փորձէ, թէ համբերեմք եւ ո՛չ տրտնջեմք՝ կարճամտեալք դիւրակործանք: Թէ մեծութիւն տայ՝ փորձէ, թէ ո՛չ յաւրանամք ի փառս: Եւ որպէս Աբրահամ հրամանաւ Աստուծոյ ի հայրենեացն ել եւ եկն յաւտար երկիր, խոստացաւ տալ ի ժառան-*

[1] ԻՏ վճարեսցի

զութիւն զերկիրն, եւ ած սով: Եմուտ յԵգիպտոս, հանաւ կինն ի նմանէ: Եւ արդարն եկաց հաստատուն եւ դարձաւ փառաւք, զի ետ զկինն՝ հանդերձ ստացուածաւք, ի տեղի իւր: Եւ մեծացաւ, մինչ իւր ծառայիւքն զերեացն սոդոմացիոց դարձ արար եւ ո՛չ առ յաւարէն (տես Ծնն. ԺԲ. 1-20): *Եւ Յոր փառաւքն ո՛չ ամբարտաւանեաց եւ ի բառնալ մեծութեանն ո՛չ զայրացաւ եւ ո՛չ ետ անզգամութիւն Աստուծոյ: Եւ են աղքատք, որ ի նեղութեան[ն] անյոյս եղեն յԱստուծոյ, թէ ո՛չ է Աստուած: Եւ զորս մեծացոյց, մոռացան զԱստուած, որ մեծացոյց զնոսա, եւ ախտիւք ընչիցն յաստուածային փառացն, որ յերկինս պահի արդարոցն՝ անյոյս եղեն:*

Եւ ունն անդ տոհմականք (ԺԲ. 16):

Բազմացոյց Աստուած զսերմանիս նորա, զոր արկ յերկիր, զի ուսցի նմանանել երկրին բարեաց, եւ հոգիս իւր առատացուցանել՝ զպտուղ առաքինութեան[ն] Աստուծոյ: Զի մեք երկիր եմք Աստուծոյ, որ ընկալաք զսերմն Բանին Աստուծոյ, եւ պարտապան եմք սերմանողին հատուցանել զպտուղ բարեաց գործոց: Եւ ըստ առաքելոյ՝ «Ընդունել զաւրհնութիւն: Ապա եթէ փշաբերքն մերձ են յանէծս, եւ վախճանն կորուստ եւ այրումն գեհենին» (հմմտ. Եբր. Զ. 7-8):

Խորհէր ի միտս իւր, թէ զի՞նչ արարից (ԺԲ. 17):

Զի որպէս այնոքիկ, որ յոյժ չքաւորք իցեն եւ տարակուսեալ ասեն՝ ուստի՞ հանդերձ, ուստի՞ կերակուր, այնպէս եւ սա ախտիւն ագահութեան ըմբռնեալ տարակուսէր:

Ո՛չ զոյ տեղի, ուր ժողովեցից զարդիւնս իմ (ԺԲ. 17):

Հաւատացելոյն ամենայն աշխարհս լի ստացուածովք է, իսկ անհաւատին՝ եւ ո՛չ դանդ մի: Քանզի աղքատ եւ ծառայ է, որ ախտիւ ագահութեամբ կապեալ է, թէպէտ բազումս ունի: Եւ զի՞նչ աւգուտ ի փարթամութենէն իցէ, յորժամ ցանկութեամբ ընչիցն իբր կարաւտ ոք չարչարի: Այլ ստոյգ ագատ, որ զամենայն արհամարհէ եւ վերանայ քան զերեւելիս եւ ո՛չ իւիք ըմբռնի: Այնպիսին [յ]երանելի կեանս կայ առանց ցաւոց եւ հոգոց, որ զմիտսն չարչարէ որպէս մեծատանց:

Քակեցից զշտեմարանս եւ մեծամեծս շինեցից (ԺԲ. 18):

Ո՜վ յիմարութիւն, որպէս թէ երկրի զաւրութիւն պակասեաց եւ այլ ո՛չ եւս տայ զպտուղ, եւ ամենեքին կորնչին եւ ինքեանք միայն մնան յերկրի: Պարտ էր ածել զմտաւ, թէ որ ասաց. «Բ[ղ]խեսցէ երկիր զսերմն սերմանել ի վերայ երկրի» (Ծնն. Ա. 11): *Նոյն եւ յառաջակայ ժամանակս բազմացուցանէ, եւ ամենայն ոք իւրովքն շատանայ եւ ո՛չ կարաւտի փոխ առնուլ ի դրացոյն, բայց եթէ իրաւամբք Տէր զբարկութիւնն շարժէ վասն այնպիսեաց ամպարշտաց:*

US *Ովսէ մարգարէ ասէ վասն ագահաց. «Մեծացայ եւ գտի ինձ ցաւս»* (հմմտ. Ովսէ ԺԲ. 8), *այսինքն՝ զմամոնայ եւ ամենայն վաստակք իմ մի՛ գտցին վասն անաւրէնութեանց, որ յանց[ե]այ ես նոքաւք:*

Ունցիս բարիս՝ կեր, արբ եւ ուրախ լեր (ԺԲ. 19):

ԻԳ. *Զայսպիսի ախտացեալս Սողոմոն քան զամենայն վատթարս եւ աղտեղագոյնս կոչէ՝ յասելն. «Որ ի նոցանէ ստրկագոյնք են, զորորովայնն աստուածացուցին»: Զի իբր Աստուծոյ կան ի ծառայութեան, զի մի՛ պակասեսցէ եւ երկի[ւ]ղիւ տագնապին, եւ բազում ժամանակաց մթերս ժողովեն: Եւ ո՛չ իմանան, թէ ի կէս աւուրց լքցեն զամենայն եւ մերկ, խայտառակ երթան յայն կեանսն: Վասն որոյ առ նոսա ասէ Աստուած.*

Անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջեմ (ԺԲ. 20):

Արդարեւ անմտութիւն մեծ է, որ իւր ոգոյն տեղի ո՛չ է ունել: Եւ այսքան զբաղմամբ սիրով հարեալ է ի կենցաղս հոսանուտ, զոր եղկէ Ամբակում. «Վա՜յ, որ յաճախէ անձին իւրոյ, որ ո՛չ իւր իցէ» (Ամբակ. Բ. 6): *Եւ մինչեւ յե՞րբ ծանրացուցանես զանուր ծանր, զի յանկարծակի յարիցէ զերիչք նորա, եւ զարթիցեն դաւաճանողք նորա, եւ եղէց ես նոցա յափշտակութիւն: Զի դու կողոպտեցեր զբազումս, եւ զքեզ կողոպտեսցեն ամենայն ժողովուրդք:*

Զոր պատրաստեցեր, ո՞ւմ լիցի (ԺԲ. 20):

Ո՞վ որքան է յիմարութիւն, եւ զիա՞րդ զաւրացաւ յաղթել մամոնայ յետ այսքան խրատու աւրինաց եւ մարգարէից եւ աւետարանչաց եւ հայրապետաց [եւ] վարդապետաց: Եւ ձգէ յախտս եւ գերեալ վարէ աւրինաւք մեղաց, եւ ո՛չ զարհուրիմք: Եւ ո՛չ զանգիտեմք, զի ահա, զոր պատրաստեցեր, ատելիքն վայելեն:

Նոյնպէս եւ, որ գանձէ անձին, եւ ո՛չ յԱստուած մեծանայ (ԺԲ. 21): *Զի մի ոք, որ ի նոյն գործ ամպարշտութեան իցէ, կարծէ անպարտ վճարել: Այլ գիտէ, զի տոկոսիւք ի մէնջ պահանջեն, զի Աստուծոյ իրաւունք[ն], զի որ աստ սիրեցին անձանց գանձել եւ առ Աստուած ո՛չ մեծացան, յանտի ճոխութենէն զրկեալք են: Եւ պահի նոցա. «Ի բաց գնացէք յինէն»* (Մատթ. Թ. 24)՝ *անիծիւք: Եւ տարագրին յերանութենէ աղքատացն, զոր եւ Դաւիթ ասաց. «Ժառանգութիւն մեղաւորաց հուր եւ ծծումբ»* (հմմտ. Սաղմ. Ժ. 7): *Զի ո՛չ կամեցան յԱստուած մեծանալ:*

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Առն ուրումն մեծապան եպուն անդք պոհմականս (Ղուկ. ԺԲ. 16):

[Բարերարն մեր եւ ազատիչն յամենայն անաւրէնութեանց Յիսուս զայս աւրինակ եղ առաջի, զի ուսցուք մեք եւ զանձինս մեր ազատեսցուք ի ծանր ծառայութենէ ագահութեանն, վասն զի խնամք տեսչութեանն Աստուծոյ չառնէ անտես բնաւ զոք, զի թէ աղքատացուցանէ զմեզ, եւ այն վասն Գ. (3) պատճառի:

Ա. Նախ՝ փորձէ զմեզ, թէ ժուժկալ եմք եւ համբերող[ք] ի յաղքատութիւնն, թէ՝ ոչ:

Բ. Երկրորդ՝ թէ չարանամք ի յաղքատութեան մէջն, թէ՝ ոչ:

Գ. Երրորդ՝ եթէ կարճամիտ եւ դիւրակործան եմք, թէ՝ ոչ:

Նոյնպէս եւ մեծութիւն տայ] /ընկած թերթի բովանդակությունը լրացրել ենք ըստ ՄՄ. ձեռ. 2518ի. տե՛ս էջ 31ա-32ա/ *եւ այն եւս Գ. (3) պատճառի:*

Ա. Նախ՝ փորձէ, թէ չար ինչ գործեմք, թէ՝ ոչ:

Բ. Եւ երկրորդ՝ թէ յինչսն ամբարտաւանիմք, որ փոփոխական է եւ ոչ հաստատուն:

Եւ Գ. Երրորդ՝ թէ զԱստուած առնէ ընչիցն տուող, թէ զինքն քաջութիւն:

Արդ, են վկայք բանիցս առաջինք նահապետք, որք փորձեցան եւ ընտիր գտան: Նմանապէս եւ նոքա, որք վատթար գտան եւ տկարք: Եւ ունիմք այսոցիկ առաջին աւրինակ զԱբրահամ, զոր Աստուած հրամանաւ եհան ի հայրենի ժառանգութենէն եւ ած յերկրին քանանացւոց եւ ասէ. «Քեզ տաց զերկիրս զայս» (հմմտ. Ծնն. ԺԷ. 8), *եւ փոխանակ տալոյ [զ]ժառանգութիւն, ած ի վերայ նորա վտանգք սովու, զի վասն նեղութեան մտին յԵգիպտոս: Եւ*

քանզի զոյգ սովու մեծ վտանգ նմա էր այն, զի զկինն խլեաց փարաւոն, սակայն արդարն կայր ամենայնիւ ի հաստատութեան եւ ոչ տարակուսէր ընդ այն: Դարձոյց այնուհետեւ զփորձութիւնս ի հեշտալիսն եւ ի փառաւորագոյնսն, զի ետ նմա դարձեալ զկինն բազում ստացուածովք եւ ած զնա դարձեալ ի նոյն գաւառս, եւ այնքան մեծացոյց, մինչ զի իւր ընդոծին ծառայիւքն զգերիչս սոդոմայեցւոց կոտորեաց, եւ զաւարն դարձոյց եւ ոչ կամեցաւ առնուլ բնաւին ինչ ի յաւարէ անտի, այլ մնաց անըմբռնելի յայնպիսի կրից: Յաղագս որոյ ասէր. «Զգեցիս զձեռն իմ առ Աստուած» (հմմտ. Ծնն. ԺԴ. 22), *զի չաղամաթէ միոջէ մինչեւ ցխրացս կաւշկաց մի ոչ առից: Երկրորդ ունիմք աւրինակ զՅոբ, զի յայնչափ փառսն առաւել ոչ հեշտացաւ եւ ոչ ամբարտաւանացաւ: Եւ յորժամ եբարձ ի նմանէ զմեծութիւնն եւ զորդիսն, ոչ զայրացաւ կամ երկմտեցաւ եւ ոչ ետ անզգամութիւն Աստուծոյ, այլ այնպէս երկոքումբք անպարտելի մնաց, այսինքն՝ գտաւ, վասն այնորիկ կրկնապատիկ ետ նմա Աստուած զինչսն եւ զչափ որդոցն եւ եւս առաւել բարձրացոյց զնա: Դարձեալ՝ ըստ այսմ աւրինակի են բազումք, որ ի նեղութիւնս եւ ի դժնդակ կիրս, հէք եւ թշուառական զանձինս համարին, իբրեւ զայնոսիկ որ ոչ իցէ Աստուած: Դարձեալ են, որ մեծացոյց եւ նոքա յուսացան ի մեծութիւնս եւ մոռացան, թէ է Աստուած, որ մեծացուցանէ եւ աղքատացուցանէ, եւ այնքան խրեալք ի սէր ընչիցն, մինչեւ խաւարեալք յախտից ցանկութեանց անյոյս եղեն յաստուածային փառացն եւ ի մեծութենէ անտի, որ արդարոցն պահեալ է յերկինս: Զոր աւրինակ, այրս այս, զոր Տէրն նովաւ զարհուրեցուցանէ զագահսն եւ զթմբեալսն արծաթասիրութեամբ ախտիւն]:*

Եւ գիտելի է, զի ագահութիւնն մի է յէ.է (7) մահու չափ մեղացն եւ ոչ միակերպ է ագահութիւնն, այլ զանազան եւ բազմապատիկ:

Ա. Նախ՝ կոչի «ագահ», որ զընտանիսն զրկէ ի հայրենեացն ընչից եւ յայլոց նմանեաց:

Բ. Երկրորդ՝ որ զաւտարն զրկէ ի յիւրոց հալալ արդեանցն կամ ի վաճառս եւ կամ յայլ իրս:

Գ. Երրորդ՝ կոչի «ագահ» նա, որ իւր զինչս, որ արդարութեամբ ստացաւ, հաստատէ զմիտսն առ նոսա, թէ՝ այս իմ է եւ այլում ոչ տաց:

Դ. Զորրորդ՝ է «**ագահ**», *որ ի յինչսն յուսայ, իբր թէ ինչքն փրկեսցէ զնա յամենայն որոգայթից, վասն որոյ ասէ Սողոմոն.* «Ոչ ագնեսցեն ինչք յաւուր բարկութեան» (Առակ. ԺԱ. 4):

Ե. Հինգերորդ՝ կոչի «**ագահ**», *որ բազում ուտէ եւ քան զչափն ի վեր, վասն որոյ առաքեալն լալով ասէ.* «Թշնամիք են խաչին Քրիստոսի» (հմմտ. Փիլիպ. Գ. 18):

Զ. Վեցերորդ՝ գողութիւնն է ագահութիւն, զի զորս ոչ կարաց յայտնի տանել, գաղտնի տանի:

Է. Եաւթներորդ՝ ագահութիւն է, որ չահ առնու ի վերայ փոխոցն, զի ընդդէմ է աստուածային պատուիրանացն:

Ը. Ութերորդ՝ է ագահութիւն մատնելութիւնն, զի կամի զարիւն մարդոյ ըմպել, զի կատարեալ մարդասպանութիւն է:

Թ. Իններորդ՝ սուտ երդմնահարութիւնն, որ վասն ընչից, վասն որոյ ասէ. «Ամենեին մի՛ երդնուլ» (Մատթ. Ե. 34):

Ժ. Տասներորդ՝ անհանգստութիւնն, որ ոչ կամի հանգչել ի չարչարանաց, այլ յամենայն ժամ կամի ժողովել, կուտել եւ կուռս շինել, որպէս այրս այս, որ ասէ.

Որոյ եղուն անդր գոհմականք (ԺԲ. 16):

Բայց աստ է տարակոյս ինչ, զի ոմանք ընդդէմ բերեն՝ ասելով, եթէ Աստուած առնէ զբազմութիւն պտղոցն, ապա եւ պատճառ նա է ագահութեան ախտին, զի նա բազում տայ, վասն որոյ ժողովէ, զի թէ փոքր էր տուեալ, ոչ անկանէր այրն այն ի մահու չափ մեղս: Զոր պատասխանեսցուք, թէ ի կամսն Աստուծոյ ոչ գոյ նշան չար առնելոյ ամենեւին, զի զամենայն, զոր ինչ առնէ, վասն բարեաց խորհրդոց առնէ՝ ըստ այնմ. «Զամենայն, զոր ինչ արար Ատուած, եւ ահա բարի են յոյժ» (հմմտ. Ծնն. Ա. 31): *Նոյնպէս եւ զբազմացուցանելն արմտեացն առնէ վասն Բ. (2) պատճառի:*

Ա. Նախ՝ զի աւրինակ տայ զերկիր, զի որպէս նա զիւր բարութիւնն աճեցուցանէ, նոյնպէս ասէ. «*Եւ դուք աճեցուցէք ի ձեզ զբազմապատիկ առաքինութիւնսն*», *զի եւ մեք երկիր եմք աստուածային Բանին ընդունակութեան՝ ըստ այնմ.* «Եղ սերմանացան սերմանել» (Ղուկ. Ը. 5), *վասն որոյ ասէ մարգարէն.* «Տեսէ՛ք յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարհ» (հմմտ. Բ. Աւր. Դ. 39, հմմտ. Ցեսու Բ. 11), *զի լինիցիք մշտաշարժ ի բարին, իբրեւ զերկինս, եւ հաստատունք ի նոյն բարիս, որպէս զերկիր: Իսկ մարդիկ, առեալ զմեծութիւնն յԱստուծոյ,*

կամակոր մտաւք մերձենան ի մեղս մահու չափս: Ապա եւ ոչ է պատճառ մեղացն Աստուած, այլ անձնիշխան կամքն մարդոյն:

Եւ երկրորդ՝ զի թէ ոչ տայ Աստուած զաճեցումն պտղոյն, ասեն թերիքն, թէ չկամէ Աստուած, զի ոչ կամի զայլոց զմեծութիւնն, վասն որոյ տայ յաջողումն ամենայն իրաց նոցա, զի ապ ի բերան լինիցին, յորժամ ոչ կարիցեն տանել մեծութեան:

Եւ դարձեալ՝ տայ Աստուած զինչս մարմնականս, զի նովաւ գնեսցեն զարքայութիւնն՝ ըստ այնմ. «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան» (Ղուկ. ԺԶ. 9), *զի յորժամ պակասեսցի այս, ընդունիցին զձեզ յարկսն յաւիտենից: Իսկ այրս այս զդիմակն աստուածային կամացն արար, զի ոչ սփռեաց եւ ետ աղքատաց, զի արդարութիւն նորա մնացեալ էր յաւիտեան:*

Այլ ասէր ի միտս իւր՝ զի՞նչ արարիցէ (հմմտ. ԺԲ. 17):

Եւ արդ, տե՛ս, զի աստ հաւասարք են մեծատունք եւ աղքատք, զի աղքատքն հոգան, զի կերակուր գտանիցեն, եւ մեծատունք՝ թէ ո՞ւր ժողովեսցեն զինչսն: Աստ, արդարացաւ ասելն, թէ՝ «Հաւատացեալոց ամենայն երկիր լի է բարութեամբ, եւ անհաւատին՝ ոչ դանկ մի» (հմմտ. Առակ. ԺԷ. 4), *քանզի աղքատ եւ ծառայ է ամենայն ոք, որ ախտիւ կապեալ իցէ, թէպէտ եւ տէր իցէ ամենայն ընչից՝ ըստ այնմ.* «Որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց» (Յովհ. Ը. 34): *Զի զի՞նչ աւգուտ է ի փարթամութենէն, յորժամ աղքատի նման կարաւտութեամբ չարչարի: Եւ ցուցից, զի աղքատն հանգիստ է, քան զմեծատունն, բազում յեղանակաւ:*

Ա. Նախ՝ զի աղքատն վասն մին բերանոյ կերակրոյ հոգայ, իսկ մեծատունն՝ վասն բազմաց:

Բ. Երկրորդ՝ զի աղքատն հարկաւորաւն բաւականանայ, որ զիւրաւ գտանին, իսկ մեծատունն զվայելչականն, որ դժուար կրիւք ժողովէ:

Գ. Երրորդ՝ զի փոքր ունի աղքատն զտկարութիւն մարմնոյ վասն փոքր կերակրոյն, իսկ մեծատունն առաւելէ ախտք եւ ցաւք ի մարմինն կրիս[1] *եւ այլք, եւ այն վասն բազում եւ յագ զամենայն ինչ ուտելոյն:*

[1] Դ նկրիս

Դ. Չորրորդ՝ զի աղքատն ոչ հոգայ վասն գողոց, այլ հանգիստ ննջէ, իսկ մեծատունն, ոչ կարէ ճշմարտապէս ննջել վասն երկիւղի գողոցն. թէ յայսմ ժամու կորեն զտունն, եւ թէ միւսն՝ այլ:

Ե. Հինգերորդ՝ զի աղքատն ինքեամբ միայն կարէ ապրել, իսկ մեծատունն՝ ոչ, այլ պիտոյ է նմա բազում աւգնական, զի ըստ այսմ կոճղ է մեծատունն կամ անդամալոյծ:

Զ. Վեցերորդ՝ զի աղքատն ի նեղութեան ժամանակին հեշտաւ փախչի եւ ի ճանապարհի ոչ վախէ՝ ըստ այնմ. «Մերկք յաւազակաց ոչ երկնչին»: Իսկ ի լինել խռովութեանցն մահն հասեալ է մեծատանն, զի կողոպտեն եւ սպանանեն:

Է. Եաւթներորդ՝ զի աղքատն ի կապանաց ոչ երկնչի, որ վասն ընչից, զի բազում աղքատ ի հանգիստ ի քուն, իսկ զմեծատունն ըմբռնեալ, եւ մինն տանջէ՝ Ռ. (1000) խնդրելով եւ միւսն՝ բեւր եւ այլն:

Ը. Ութերորդ՝ զի աղքատն կարէ. Ծ. (50) աւուր ճանապարհ գնալ հետիոտս բոկ, իսկ մեծատունն եւ ոչ ժամ մին, թէ պատեհ է գնալ, եւ եւս յայտնագոյնս ասա է տեսանել, զի մեծատունն աղքատին զգեստիւն զերծանի ի թշնամեաց, եւ թէ իւր զգեստիւն կենայ, ըմբռնեալ տանջի, զի մատնիչք են զգեստքն:

Թ. Իններորդ՝ զի ամենայն աւրէնք ի վերայ մեծատանն հակեն. ողորմութիւն, պահք, արտասուք, վասն մեծամեծ մեղաց, շահ առելոյն, զրկելոյն եւ այլոցն: Իսկ աղքատին ոչ գոյ ամենայն, զի միշտ ի պահս է եւ առաքինի եւ ոչ զոք զրկէ եւ կամ ստէ, վասն որոյ եւ արդարոց աւրէնք ոչ գոյ, զի կատարեալ են:

Ժ. Տասներորդ՝ զի աղքատն ոչ ունի երկիւղ այնմ տանջանաց, բայց երանութիւն՝ ըստ այնմ. «Երանի՛ աղքատաց հոգւով» (Մատթ. Ե. 3), *իսկ մեծատանն՝ գոյ, զի ասէ.* «Վա՛յ ձեզ, մեծատանցդ, զի ընկալայք զմխիթարութիւն [ձեր]» (Ղուկ. Զ. 24):

Արդ, ահա ճշմարտապէս ցուցաւ, զի աղքատն է ամենայնի տէր, զաշխարհիս ինչս արհամարհեալ է, քանզի ի վեր անցանի այնպիսին, քան զամենայն զգալիսս եւ երանելի կեանս ստանայ առանց հոգոց եւ ցաւոց, որ զմիտս չարչարեն: Իսկ այրս այս ոչ կամեցաւ ազատել զինքն ի չարչարանաց, այլ սկսանի յաշխատանք եւ ի չարչարանք, սկիզբն առնէ մեծամեծ տներ շինել եւ ամբար, զի ժողովեսցէ զբազում տարե[ա]ն կերակուր: Եւ զիա՞րդ այրս այս: Այլեւ ի մերում ժամանակի տեսանեմք, զի չգրեն ոչ ինչ զայն չափ 'աշխատանք, որ վասն մեղաւոր ցանկութեանց: Իսկ թէ խրատ տամք, թէ մի փող յաղքատաց տուր, եւ ահա մեռանի, եւ թէ եկեղեցի յիշենք, քար քարշեն: Այլ ըստ նմանութեան առնս ասեն ի մտի.

«Գիտեմ՝ զինչ արարից. քակեցից զշտեմարանս իմ եւ այլ եւս մեծամեծս շինեցից (ԺԲ. 18):

Եւ ասացից ցանձն [իմ]. «Անձն [ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց. հանգի՛ր՝ կե՛ր, ա՛ր՝ եւ ուրախ լեր]» (ԺԲ. 19):

Եւ արդ, յիմարութիւն սորայ բազում է:

Ա. Նախ՝ զի խորհեցաւ, թէ պակասեաց յերկրէ զաւրութիւնն, եւ այլ ոչ տա պտուղ, վասն որոյ ասէ՝ **«ժողովեցից»:**

Բ. Երկրորդ՝ զի ապաւէն ինքեան զայն չափն արար, որ առ ժամն կայր, վասն որոյ ասէ. **«Ունիս բազում բարութիւնս»:**

Գ. Երրորդ՝ զի ասաց, թէ այս որչափ կենդանի եմ, բաւական է ինձ, վասն որոյ ասէ՝ **«ամաց բազմաց»:**

Դ. Չորրորդ՝ զի ասաց ի մտի, թէ որք ոչ են ամբարեալ, կորնչելոց են, եւ ես միայն մնալոց եմ, վասն որոյ ասէ. **«Կե՛ր, ա՛ր եւ ուրախ լե՛ր»,** *զի դու յաշխարհի ես մնալոց:*

Ե. Հինգերորդ՝ զի ինքն առ ինքն խորհեցաւ, եւ ոչ զԱստուած արար կցորդ իւրոցն խորհրդոյ, վասն որոյ ասէ Աստուած՝ **«անմիտ»** (Ղուկ. ԺԲ. 20):

Նոյնս է խորհուրդ, որ այժմ յաշխարհի գիրկս արկեալ են եւ զինքեան միայն խնդրեն ի վերայ աշխարհիս մեծ: Իսկ որք կամին զուղիղն ընթանալ ճանապարհ, Բ. (2) ինչ պարտ է առնել:

Ա. Նախ՝ զի զչափ պիտոյիցն հարկաւորաց բաւական ունել ինքեան առ ժամանակին:

Բ. Եւ երկրորդ՝ զաւելորդսն մասնաւորել, կարաւտելոցն ցրուել եւ սփռել՝ ըստ այնմ. «Բրդեաց զհաց կարաւտելոցն, եւ ժողովելոյ զկաղս եւ զկոյրս յընդունելութեանն» (հմմտ. Ես. ԾԸ. 7): *Եւ զայս էր, վասն զի ասէ մարգարէն.* «Բարի առնէ Տէր բարեաց» (Սաղմ. ՃԻԴ. 4): *Իսկ զթեւրսն յագահութեան կորուսանէ ընդ այնոսիկ, որք անհաւատք են եւ անաւրէնք: Իսկ որք ինքեանց միայն գանձեն, ասէ.*

«Անմիտ, յայսմ գիշերի զոգիդ [ի քէն ի բաց պահանջիցեն, եւ զոր պատրաստեցերն, յո՞ւմ լինիցի]» (ԺԲ. 20):

Արդարեւ յիմարութիւն է, զի որ զիւր հոգւոյն համարձակութիւն ոչ ունենայ պահել, այնչափ սիրով յերեւելիսս եւ ի հոսանուտ սխալեալ իցէ, վասն որոյ ասէ Ամբակում. «Վա՛յ, որ յաճախէ յանձին իւրոյ, որ ոչ իւր իցէ (Ամբակ. Բ. 6), զի յանկարծակի յարիցեն կերիչք նոցա, եւ զարթիցեն դաւաճանք նոցա, եւ եղիցի նոցա ի յափշտակութիւն (հմմտ. Ամբակ. Բ. 7): Զի դու կողոպտեցեր զազգս բազումս, եւ զքեզ կողոպտեսցեն մնացորդք ժողովրդոց» (Ամբակ. Բ. 8): *Նմանապէս եւ գրեցեալս ի Տեառնէ գուշակէ: Եւ արդ՝ տե՛ս զայսմ ժամանակի զյիմարութիւնն, զայսքան խրատս եւ սպառնալիս, եւ մեք յիմարեալք՝ ոչ զարհուրիմք ի սպառնալեաց աստի, զի ահա տկարացաք, թողաք զայն եւ թափուր գնամք յաստի կենացս, եւ որք ժառանգեն զմերն, ատելիքն մեր եւ սիրելիքն, զի որք առնուն յԱստուծոյ զապրանքն, մի՛ իմասցին, թէ ձրի առին, այլ վասն այն, զի շահովն ի տէր ընչիցն դարձուցանեն, զի թէ այս կենացս զրկիլն միայն էր պատիժ, երանելի էր: Բայց, սակայն աստ սիրեցին մեծանալ եւ անձանց գանձեցին եւ առ Աստուած ոչ մեծացան: Յանդ ի ճոխութենէն զրկեալք են եւ կայ պահ ի նոցա, որ հասարակ քննութեան նա սխալ լինի.* «Գնացէ՛ք յինէն, անիծեա՛լք» (հմմտ. Մատթ. ԻԵ. 41), *որոց մի՛ լիցի մեզ նմանել: Իսկ որ արարին զկամսն, տե՛ս՝ որպէս խրատէ.* «Վաճառեցէ՛ք զինչս ձեր եւ տո՛ւք [ողորմութիւն]» (Ղուկ. ԺԲ. 33)*: Մանաւանդ, զի «հաւտ փոքրիկ» կոչէ* (Ղուկ. ԺԲ. 32) *զառնաւղս կամաց իւրոց, զի քսակ յերկինս ունին եւ գանձ անպակաս՝ զԱստուած, որ ոչ հատանեն ուտիչք դժոխոցն, եւ դեւք խորել ոչ կարեն ի նմանէ, որոց լիցի եւ մեզ հասանել, ուրախանալ ընդ փեսային յուրախութիւնսն անզրաւ կենաւք, եւ նմա փառք յաւիտեանս:*

ԱՌԱԿ ԱՆՊՏՈՒՂ ԹՋԵՆԻՈՅՆ
Ղուկ. ԺԳ. 6-9

ԻԳՆԱՏԻՈՍ

Ապա առակաւ եւս հաւատարմագոյնս դնէ զնոյն: Զայս ամենայն ուրեք առնէ, որպէս յորժամ զգուշացոյց յագահութենէ եւ ապա առակաւ վարի առ այն եւ ի մէջ դնէ զայրն, որոյ բազմացան արմտիքն, եւ նա խորհէր մեծացուցանել զչտեմարանսն ըստ նմին ասէ եւ զայս.

Թզենի մի էր յայգւոջ ուրումն. եւ եկն ի նա խնդրել պտուղ, եւ ոչ եգիտ (հմմտ. Ղուկ. ԺԳ. 6):

Եւ զի՞նչ արդեաւք պարտ է յառակէս ուսանիլ, եթէ ոչ զմեզ՝ տնկեալ յեկեղեցւոջ Աստուծոյ, որում պարտապան եմք՝ տալ անխափան զպտուղ առաքինութեան՝ փոխանակ ընդ որոյ տնկեաց եւ գործէ, ապա եթէ զլանամք՝ եւ ծուլութեամբ կորուսանեմք զպտուղն, հատանելն առաջի կայ՝ ըստ Յովհաննու, որ ասէ. «Ամենայն ծառ, որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի» (Մատթ. Գ. 10)*:*

Եւ աստ **ասէ ցայգեգործն. «Ահա երեք ամք են, յորմէ հետէ գամ՝ պտուղ խնդրել եւ ոչ գտանեմ. կտրեա՛ զդա, ընդէ՞ր եւ զերկիրդ խափանէ»** (հմմտ. ԺԳ. 7):

Այգւոյ առակաւ յորժամ առնու ասել՝ ազգին ամենայնի է նշանակ: Որպէս այն՝ «Տնկեաց այգի եւ եւր ցմշակս» (հմմտ. Մատթ. ԻԱ. 33), եւ «Այգի եղեւ սիրելոցն» (հմմտ. Ես. Ե. 1): *Իսկ ծառոյ նմանեցուցանելն զիւրաքանչիւր ուրուք զանձն առանձին*[1] *նշանակէ: Ըստ նմին եւ ի բարեգործելն եւ ի պատուհասելն՝ երբեմն հասարակաբար եւ երբեմն՝ առանձնապէս խաւսի: Զնոյն եւ ի հատուցմանն ուսաք, զի է, յորում համաշխարհական ածէ տագնապ, եւ է, զի զմի անձն ուրուք, որպէս կամի, հարկանէ ի խրատ այնոցիկ, որ նովին չափով չարութեամբ վարակեալք իցեն: Զայս աւրինակ եւ աստ ուսանիմք:* **«Երեք ամք են,- ասէ,- յորում ոչ եւր պտուղ. կտրեա՛ զդա»: «Երեք ամք»** *ասելն զայն տայ իմաստս, զի ամենայն աւուրք եւ ժամանակք յե-*

[1] ԻՏ > առանձին

բիս որոշմունս բաժանեալ են՝ ի սկիզբն, ի միջոց եւ ի կատարած: Արդ, եցոյց բանիւն, եթէ ոչ ի սկզբանն եգիտ պտուղ եւ ոչ ի միջոցին, սակայն ներեաց երկայնմտութեամբ եւ ոչ ի սկզբան անդ կամեցաւ հատանել: Թէպէտ մինչ ի կատարած զամենայն ինչ զմեր տեսանէ եւ, նախ քան զգալն մեր ծննդեամբ յերկիր՝ ըստ Դաւթայ ասելոյն. «Անկերպարան տեսին զիս աչք քո, հանդերձ ընդ այնոսիկ ամենեսեան, որ գրեալ են ի գիրս քո» (հմմտ. Սաղմ. ՃԼԸ. 16): *Արդ, այսպէս յայտնի են նմա, սակայն ներէ, զի առանց պատասխանւոյ արդարասցի ի դատելն: Վասն որոյ եւ աստ եցոյց զքաղցրութիւնն եւ ապա՝ զբարկութիւնն՝ ասելով.* «**Կտրեա՛ զդա, ընդէ՞ր եւ զերկիրդ խափանէ**»: *Դարձեալ եւ աստ՝ ընդ բարկութեանն խառնեալ է եւ ողորմութիւն նորա՝ ըստ Ամբակումայ, զի ասէ.* «Ի ժամանակի բարկութեան զողորմութիւնդ յիշեսցես» (հմմտ. Ամբ. Գ. 2): *Զի թէ կամք էին նորա կտրել, բնաւ զի՞նչ պէտք էին զայգեգործն առ այս գործակից ունել եւ ոչ հատանել, այլ հրամայել: Վասն որոյ ուսանիմք աստի, թէ աւրէնս եղ առաջնորդաց՝ բարեխաւս լինիլ եւ աղաւթիւք ի վերայ մեղաւորաց խնդրուածս առնել եւ հաշտեցուցանել զայն, որ ոչ բարկանայ բնաւ երբէք, սակայն ձեւանայ, զի զարհուրեցուսցէ, եւ ուսուցանէ զառաջնորդս զարժանն ի ներքս բերել զխնամակալութիւնն: Որպէս յորժամ Մովսէսի ասէր.* «Ի բաց կա՛ց, թո՛ղ հարիցս սպակեցից զդոսա, եւ զքեզ արարից յազգ մեծ» (հմմտ. Թիւք ԺԴ. 12): *Եւ արդ, եթէ կամէր սատակել, զի՞նչ պէտք էր[1] ասել. «Թոյլ տո՛ւր, ի բաց կա՛ց», եւ ո՞վ ոք էր Մովսէս, որ ընդդէմ կայր: Այն, որ բազում մաղթանաւք ընդ Յորդանան ոչ էանց* (Բ Աւրն. Գ. 23): *Այլեւ վասն այնորիկ ասէ. «Ի բաց կա՛ց», զի ընդդէմ կացցէ, ասել.* «Եթէ թողուս դոցա, թող, ապա թէ ոչ, եւ զիս ջնջեա՛ ի դպրութենէն, յորում գրեցեր (հմմտ. Ելից ԼԱ. 31-32): *Այսպէս* եւ *աստ ասէ՝ «կտրեա՛», եւ ապա զոր պարտ է առնել մշակին, ինքն առաջի դնէ:*

Ասէ. «Թոյլ տուր, զի բրեցից եւ արկից աղբ. թերեւս տացէ պտուղ, ապա թէ ոչ՝ յարմատոյ հատցես զդա» (հմմտ. ԺԳ. 8-9)

Արդ, այսոցիկ երկոցունց պարտական են վերակացուք՝ տքնել եւ աղաւթիւք առ Աստուած միշտ պաղատել: «Նոքա,- ասէ,- առաքեալն, տքնին վասն ոգւոց ձերոց, զի եւ համարս տալոց են ընդ ձեր» (հմմտ. Եբր. ԺԳ. 17): *Իսկ առ մարդիկ զգործս առաքինի մշակաց ցուցանել՝ ըստ այնմ,*

[1] ԻՏ էին

զոր Պաւղոս Տիմոթէի գրեաց. «Սաստեա՛, յանդիմանեա՛, խրատեա՛ ամենայն երկայնանկութեամբ եւ վարդապետութեամբ» (Բ. Տիմ. Դ. 2): *Եւ որպէս ինքն իսկ ընդ հիւանդացեալսն հիւանդանայր եւ ընդ գայթակղեալսն տապանայր* (տե՛ս Բ. Կոր. ԺԱ. 29), *եւ որ առ Եզեկիէլ յԱստուծոյ ասացեալ է, զի զգործ վերակացութեանն լցցէ Աստուծոյ, զի մի՛ արեան ուրուք պարտապան լիցի վասն հեղգութեանն* (տե՛ս Եզեկ. Գ. 17): *Բազում են առ այս, որ ոք կամիցի մերձ դնել զմարգարէիցն եւ զառաքելոցն զբանս, որով ընդ Աստուծոյ խաւսեցան: Եւ որպէս առ ժողովուրդն զգործս վերակացութեան ցուցին, զի ընդ Աստուծոյ պաղատանաւք խաւսեցան, զի խնայեսցէ ի ժողովուրդն եւ առ նոսա սաստկացուցանէին զսպառնալիսն Աստուծոյ: Որպէս այն, որ ասէ.* «Ես՝ հովիւս մեղայ, խաշինքդ զի՞նչ մեղաւ: Եղիցի սուր քո յիս ի գրուն հաւր իմոյ» (հմմտ. Բ. Թագ. ԻԴ. 17): *Իսկ առ ժողովուրդն ասէ.* «Ազգ չար եւ դառնացաւդ, որ ոչ ուղղեաց զսիրտ իւր» (Սաղմ. ՀԷ. 8): *Եւ ահա բազմապատիկ են առ այս սրբոցն բանք, որ խրատեն զառաջնորդս, թէ զիա՞րդ պարտ է ասել Աստուծոյ.* «**Տէ՛ր, թո՛ղ զդա յայս ամ եւս**»: *Եւ թէ զի՞նչ է «բրելն» եւ «արկանելն աղբ». արուեստք են սոքա երկրագործաց, որով զանբան երկիր ածեն ի պտղաբերութիւն: Եւ դիւրին է զայս յեղուլ ի մերս տեսութիւն, թէ զիա՞րդ վերակացուք մարդկան ունին բանիւն կակղել զխստութիւն մտաց, իբրեւ բրչաւ եւ զարթուցանել զջերմութիւն սիրոյն Աստուծոյ հոգիս ըստ զաւրութեան աղբոյն եւ առնել պտղաբերս առաքինութեան եւ զերծանել ի հատանելոյ անտի աստուածային սրոյ բարկութեանն եւ մնալ յարաժամ ի տանն Աստուծոյ տնկեալս: Իսկ, ի նմին անպտղութեան մնացեալ, ապա իրաւամբք յարմատոյ հաւատոյն եւ ի կենաց աստի կտրել զնա: Իսկ եթէ մշակն եւս չարանայցէ, ունի եւ սա իւր առանձինն զբարկութեանն Աստուծոյ զսաստ.* «Զչարսն, - ասէ, - չարաւ կորուսցէ, եւ զայգին տացէ այլոց մշակաց» (Մատթ. ԻԱ. 41): *Եւ թէ՝ «Զչար հովիւսդ չարաչար կորուսիցս եւ իմում հաւտիդ, ես խնամարկեցից»* (հմմտ. Եզեկ. ԼԴ. 8-10):

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Թզենի մի էր տնկեալ ուրումն յայգւոջն (Ղուկ. ԺԳ. 6):

ԿՐ *Այգւոյն՝ զՀաւրէ գուշակէ, եւ թզենի՝ հրէայքն են, որ յայգի ի Պաղեստին, յորում զնոսա յատուկ տնկեաց: Ըստ այնմ՝ «Այգի յԵգիպտոսէ, հաներ զՀեթանոսս, զԻսրայեղս տնկեցեր»* (Սաղմ. ՀԹ. 9):

ԳՐ *Ճշգրիտ պատկէր մարդկութեանս է թշուառացեալ: Եկն խնդրել պտուղ եւ ո՛չ եգիտ* (ԺԳ. 6):

ԻԳ. *Զհաւատացեալս յեկեղեցի Աստուծոյ,*

կր. *Յորում պարտապան եմք տալ զպտուղ առաքինութեան:*

իգ. *Այլ թէ ո՛չ տամք հատանել, որպէս ասաց. «Ամենայն ծառ, որ ո՛չ բերէ պտուղ, հատանեն եւ ի հուր այրի»* (Մատթ. Գ. 10):

Այս երեք ամք են, որ գամ խնդրել պտուղ, եւ ո՛չ գտ[անեմ] (ԺԳ. 7):

ԵՓ *Վասն երից գերութեան նոցա: Զի խրատեսցին եւ ո՛չ խրատեցան: Ասէ. «Զուր տարապարտուց հարի ես զորդիս ձեր, եւ ո՛չ խրատեցան գալ առ իս»: Ժամանակն ելթանասունեւթներորդացն, քանզի ի ժամանակին անդ՝ դարձին իւրեանց, կատարին երեք ամքն, որ յառաջ քան զնորա գալուստն էր:*

«Խնդրեցի ի նոցանէ այր մի խրամակարկատ եւ ո՛չ գտի» (հմմտ. ԺԳ. 7):

Ի Սոդոմ տասն խնդրեցաւ: «Երեք ամք» եցոյց Փրկիչն զանձն իւր նոցա նշանաւքն, որ գործեցաւ, եւ ո՛չ ետուն պտուղ հաւատոյ:

Կր. «Այգեգործ» (ԺԳ. 7)՝ *Քրիստոս,* «**երեք ամք**»՝ *որ եկն ի մկրտութիւնն եռամեան դատարկութեամբ:*

Գր.(Նարեկ.) *Որ զբնաւ յաւիտեանս պարունակէ ժամանակ, զանցեալն եւ զներկայս, որ զապառնոյն յամայր [յ]ամրութեամբ յերկարաձգելոյ՝ [յ]այգի աշխարհիս արմատացելոյ սին սաղարթիւ պաճուճեալ, զրկեալ ի պտղոյ:*

Կտրեա՛ զդա, ընդէ՞ր եւ զերկիրդ խափանէ (ԺԳ. 7):

ԿՐ *Զի նոքա միայն էին ի Պաղեստին եւ ո՛չ այլ ոք, յորոց հաւատալոց էին ոմանք:*

ԵՓ *Զի կամեցաւ Հայր խլել զնոսա: Այն, զի ասաց ցՄովսէս. «Թոյլ տուր ջնջել զդոսա»* (հմմտ. Ելք ԼԲ. 10-12), *զի ետ նմա պատճառ աղաչել եւ խնդրել ի նմանէ:*

ԻԳ *Արդ՝ թէ կամէր սատակել, զի՞նչ պէտք էին, «թոյլ տուր»* (հմմտ. Ելք ԼԲ. 10-12), *«ի բաց կաց»* (հմմտ. Մատթ. ԻԵ. 41, Ղուկ. ԺԳ. 27): *Եւ ո՞վ ոք էր Մովսէս, որ ընդդէմ կայր նորա, որ բաղում պաղատանաւք ընդ Յորդանան ո՛չ էանց: Աւրէնս եդ առաջնորդաց՝ բարեխաւս լինել աղաւթիւք ի վերայ մեղաւորաց, հաշտեցուցանել զանբարկանալին բնութեամբ: Սակայն ձեւանայ, զի զարհուրեցուսցէ զառաջնորդս խնամակալութիւն ի ներս բերել:*

Նա ասէ. «Տէ՛ր, թողացոյ եւ զայս ամ եւս» (ԺԳ. 8):

Եփ. *Յայսմ վայրի եցոյց մշակն, թէ կամեցաւ Տէր խլել զնա: Յայտ արար զխնամակալութիւն իւր մշակն եւ զգութն իւր ողորմածն:*

Կր. *Զժամանակ քարոզութեան աշակերտացն ցուցանէ, յորս բազումք ի նոցանէ հաւատացին:*

Իգ. *Իսկ առ մարդիկ զգործս առին ի մշակացուցանել, որպէս Պաւղոս առ Տիմոթէոս գրեաց. «Սաստեայ, յանդիմանեայ, խրատեայ երկայնմտութեամբ, վարդապետութեամբ»* (հմմտ. Բ. *Տիմ. Դ. 2): Եւ Պաւղոս ընդ հիւանդացեալսն հիւանդանար, ընդ գայթագղեալսն տապանայր: Եւ ցեղեկիէլ ասէր Աստուած. «Զի մի՛ արեան ուրուք պարտապան լիցիս հեղգութեամբ»* (հմմտ. Երեմ. ԽԸ. 10):

Սգ. *Արդ՝ հրշեմակք բարեխաւսք, այլեւ՝ խնամակալք, որք դեղերին հանապազ առ մեզ, ընդ մերումս կարեկցելով՝ բարեմասնութիւնս մերում սպասեն: Եւ յաւիտենական փրկութեան մեր աղերսեն՝ ասելով. «Զգործս ձեռաց քոց մի՛ անտես առնէր»* (Սաղմ. ՃԼԷ. 8): *Քանզի արդարեւ մեր են աղաչանքս այս՝ ի բարերարէդ Աստուծոյ կարդեալ առ նոսա, զի նոքա բանիւ են ստեղծեալ եւ մեք ձեռաւք բարեգործեալ:*

Բրեցից եւ արկից աղբ (ԺԳ. 8):

ԻԳ *Արուեստք են երկրագործացն զերկիր ածել ի պտղաբերութիւն, իսկ վերակացուք մարդկան բանիւ զբանաւոր երկիր կակղեն զխստութիւն մտացն իբր բրչաւ՝ զարթուցանել զջերմութիւն սիրոյն Աստուծոյ յոգիս, ըստ զաւրութեան աղբոյն, եւ առնել պտղաբերս առաքինութեամբ, եւ զերծանել ի սրոյ աստուածային բարկութեանն:*

Ապա թէ ո՛չ՝ յամէ եւս հատցես (ԺԳ. 9):

Կր. *Որք ո՛չ արարին պտուղ հաւատոց, ի Տիտոսէ ջնջեցան՝ հատեալք սրով, որպէս անդ հատումն թզենոյն նշանակեաց:*

Իգ. *Իսկ զանպտուղսն յարմատոյ հաւատոյ[ն] եւ ի կենաց աստի կտրէ: Իսկ եթէ զմշակսն չար անուանէ եւ զբարկութիւնն սաստս.*

«Զչարսն չարաւ կորուսցէ» (Մատթ. ԻԱ. 41): *Զչար հովիւն ի միում հաւտիդ ես խնամարկեցիս:*

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Թգենի մի էր փնկեալ յայգւոջ ուրումն, եւ եկն խնդրել պտուղ [ի նմանէ] եւ ոչ [եգիպ] (Ղուկ. հմմտ. ԺԳ. 6):

Զայսոսիկ խնդրելով՝ զմիտս պարտիմք մաքրել, զի ուղիղ իմասցուք զառակիս զաւրութիւն: Քանզի «այգի» ասելով զեկեղեցի նշանակեաց, եւ թէ վասն է՞ր «այգի» կոչէ զեկեղեցի, եւ այս վասն բազում պատճառի:

Ա. Նախ՝ զի զայգին նախ փորեն եւ ապա՝ տնկեն. եւ Տէր մեր նախ կակղացոյց քարոզութեամբ Աւետարանին եւ առաքելոցն եւ ապա շինեաց զեկեղեցի:

Բ. Երկրորդ՝ զի զոյգ լինի որթն, որ դնեն յածուսն, մինն՝ յայս կոյս եւ մինն՝ յայն, եւ Բ.(երկ)ոքին ծայրք որթին ի մէջն. այսպէս եւ եկեղեցի տնկեցաւ Հին եւ Նոր կտակարանաւքն, յորոց մինն հայի ի յառաջին արդարսն եւ մինն՝ ի վերջին սուրբսն, եւ երկոքեանն ի մի Քրիստոս նային միաբանութեամբ:

Գ. Երրորդ՝ զի որթն փոքր է քան զամենայն տունկս եւ բարակ, բայց տերեւքն՝ լայն եւ ողկոյզն՝ զանազան. այսպէս եւ եկեղեցի անարգէ ի մէջ ամենայն անհաւատիցն եւ աւր[ը]ստաւրէ նուազի, բայց տերեւ խորհրդոյն լայնատարած եւ պտուղ գործոց առաքինութեանն զանազան ճանապարհաւ տանի ի կեանսն յաւիտենական:

Դ. Չորրորդ՝ զի միայն որթն, ոչ է այգի, վասն զի միայն է եւ ոչ է յարգեալ, զի զպատուականութիւն նորա այլքն ցուցանեն: Վասն որոյ տնկի շրջակայ նորին եւ ի մէջն յայլ պտղոց: Նախ՝ զի աւգնական են մնացականութեան պտղոյ որթոյն, եւ ապա, զի որթն բարձրացեալ անկանի, զնովաւ եւ առաւել զաւրանայ. այսպէս եւ Տէր մեր ոչ զմի ազգս ընտրեաց իւր եկեղեցի, այլ յԲԺ.անից (12) եւ յՀԲ. (72) լեզու, եւ ուղղափառն ի մէջ նոցա սնանի, զի ըստ անուանն, որ Քրիստոսի են, ամենեքեան զմիմեանս պահէն եւ ի միմեանս նախանձելով՝ գործք բարին աճեն: Վասն որոյ Պաւղոս ասէ. «Զորս եդ Ասպուած յեկեղեցւոջ՝ այս է, նախ զառաքեալս եւ [երկրորդ]

՝զրաւոում մարգարէս» (Ա. Կոր. ԺԲ. 28), *եւ ապա ասէ.* «Նախանձաւոր լերուք շնորհացն» (Ա. Կոր. ԺԴ. 1):

Ե. Հինգերորդ՝ զի մի որթն ոչ այգի է եւ ոչ ի նմանէ հնարի գինի լինել կամ կարաս լնուլ. այսպէս եւ մի ազգ Հայոց, կամ այլոց միայն ոչ է կատարեալ յեկեղեցիսն Աստուծոյ, զի Տէր զսա ժողովեաց ի մի առ ի լնուլ զտեղի անկելոցն, յորոյ մի ազգէ անհնար է լնուլ նա, վասն որոյ եւ յամենայն ազգս շինեաց եկեղեցի եւ ի սոցանէ հազիւ լնուն ի վերինն Երուսաղէմ, զի հակառակն մերձ է:

Զ. Վեցերորդ՝ զի կրկին անուամբ յորջորջի՝ հասարակ եւ յատուկ. հասարակ՝ «այգի» *եւ յատուկ՝* «որթ». *այսպէս եւ քրիստոնէից աղաւթարանք հասարակ եկեղեցի կոչին, իսկ յատուկ ի նոսա՝ ղպտի, հնդի եւ ասորի, հայ եւ հոռոմ եւ լատինք եւ այլք:*

Է. Եաւթերորդ՝ զի սակաւ խորշակն զայգին անպտուղ գործէ, մանաւանդ մերձ ի հասանելն. այսպէս եւ զհաւատացեալսն, որ յեկեղեցի, եթէ հնար ինչ իցէ եւ զընտրեալսն փոքր ինչ տեսակ մեղացն խանձատէ, եւ առաւել ի ծերութեանն, զի այն է կամք չարին, զի մերձ ի տկարանալ մարդոյն, որ է ծերութիւնն, դիւրաւ սահեցուցանէ, զի տկարացեալ է ամենայն իրաւք, վասն որոյ երանի, որք մանկութեամբ մեռան:

Ը. Ութերորդ՝ զի ի մէջ ամենայն տնկոց այգւոյն առաւել է չարչարանք, զի յաշունն թագուցանեն ընդ հողով ի դաշտավայրն, զի մի չոր ցուրտն ապականէ եւ զարունն յաւտելն եւ կրկին բերել եւ զքոսն քաղել եւ զխոտն, եւ ցանկել յամենայն կողմանց, ուրեմն հազիւ գայ ի կատարումն. այսպէս եւ եկեղեցւոյ Քրիստոսի առաւել է չարչարանք, քան զամենայն ազգաց, զի յաշուն մարգարէիցն թագոյց զհաւատալ նոցա ի բանս նոցա. «Եւ եկեսցեն աւտարածինք հովիւ խաշանց քոց, եւ այլազգիք այգեգործ եւ մաճակալք քո» (Ես. ԿԱ. 5): *Իսկ ի գարուն գալուստեան Բանին յայտնի արար.* «Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոս, մկրտեցէք զնոսա» (Մատթ. ԻԸ. 19): *Այլեւ եհատ զամենայն յաւելորդս եկեղեցւոյ զկռապաշտսն եւ զքո՛սն հերձուածողաց քաղեաց եւ ցանկեաց հաւատացեալ թագաւորաւքն, եւ այժմ անաւրէն փշովք պարսպեալ է, զի քրիստաւնեայք գթութեամբ կակուղ են եւ ոչ վարեն զհակառակսն, զոր անաւրէնն անողորմութեամբ, որպէս փուշս խածանեն զաւտար հակառակսն, եւ ոչ թողուն մերձենալ յեկեղեցին Աստուծոյ:*

Թ. Իններորդ՝ զի դառն է եւ թթու պտուղ այգւոյն մինչեւ յաշուն, իսկ աշունն հասանի, վասն որոյ եւ կթի հասարակաբար եւ հնձան արկանի, որ ի մէջ այգւոյն, յորմէ ելանեն նախ՝ քաղցրահամ քաղցու եւ ի լնուլ զկարասն եւ թաղելն յետ ժամանակաց, ապա բանան, եւ է գինի ուրախարար. այսպէս եւ կեանք եկեղեցւոյ եւ հաւատացելոց ի յայս կեանքս դառն է, զի որք կամին աստուածպաշտութեամբ կեալ, ի հալածանս կացցեն, մինչեւ հասանին յաշուն մահուն, որք հատանին յեկեղեցւոյ մահուամբ եւ ժողովին ի գերեզմանս ի դուռն եկեղեցւոյ, յորոց ելանեն կատարեալ զղջումն եւ յոյս առ Աստուած, եւ պատգամ մեռելոց [եւ] աղաւթք, յորմէ լնանի կարաս արքայութեանն ամբարք զղջացելոցն եւ այլ սրբոցն: Եւ յետ այս կենցաղոյս, բանայ Տէրն զկատարելոցն դաս եւ տանի յառագաստ արքայութեանն, մատուցանէ Հաւր զիւրաքանչիւր դասս սրբոց՝ իբր զբաժակ լի անուշահամ գինով, զոր մարդեղութեամբն իւրով վաստակեաց՝ ասելով. «Ահաւասիկ ես եւ մանկունք իմ» (Առ Եբր. Բ. 13):

Ժ. Տասներորդ՝ զի այգին քակի նախ ի գազանաց գայլոց եւ աղուեսուց, ըստ Երգոյն (տե՛ս Երգ Բ. 15), *եւ ապա ի յոչ լինել այգեգործին եւ դարձեալ ի դառնութենէ ժամանակին, որ ի հեծելոց շարժմանէ, մանավանդ, թէ Տէր այգւոյն մեռեալ լինի կամ գնացեալ: Այսպէս եւ եկեղեցի քակի ի չորից յայսցանէ, նախ՝ ի գազանաց անհաւատից եւ յաղուեսուց հերձուածողաց, եւ առաւելն յոչ լինել ի բարեգործ առաջնորդաց եկեղեցւոյ, որք եմք աստի յայսմ ժամանակիս, վասն որոյ եւ քակեցան եկեղեցիք: Այլեւ ի դառնութենէ հեծելոց, որ իբրեւ* «Զծովու խռովութեանց, [յելանելոյ ոգւոց մարդկան յերկիւղէ՝ եւ ի կարծեաց] եկելոց ի վերայ տիեզերաց» (Ղուկ. ԻԱ. 25-26), *ասաց Տէրն, մանաւանդ, զի ցամաքեցաւ սէր բազմաց եւ ատելութիւն բազմաց: Եւ ատելութիւն ո՛չ միայն միմեանց, այլեւ աւրինաց ժամատեղաց վանից, բանից եւ առաքինութեանց, զի հաւասար ատեն զամենեսեան, միայն սիրեն զպորտ եւ զորովայն, վասն որոյ եւ քակեցաւ եկեղեցի: Իսկ տէր այգւոյս ոչ թէ մեռեալ է, այլ գնացեալ ի տար աշխարհ, մանաւանդ, զի բարձիթողի արար զմեզ, զի գնացաք ըստ կամս անձաց, վասն որոյ յիմարութիւն է ի մէջ այս ամենայն պակասութեանցս, թէ նստի ոք՝ առնել ինչ:*

Իսկ յեկեղեցւոջն տնկեալ զմեզ. եւ զի՞ ծառոյ նմանեցուցանէ զհաւատացեալսն: Եւ այս վասն բազում պատճառի.

Ա. Նախ՝ զի ծառն ի մէջ այգւոյն տնկի եւ ոչ արտաքոյ. այսպէս եւ հաւատացեալք ի յեկեղեցի ի ծոց աւազանին ծնանին՝ ըստ այնմ. «Տնկեալք եղիցին ի տան Տեառն» (Սաղմ. ՂԱ. 14):

Բ. Երկրորդ՝ զի մատղաշ լինի տունկն, յորժամ տնկեն. այսպէս եւ հաւատացեալք, երախայանան, ապա մկրտին, մանաւանդ թէ յերախայութեանն աւրինադրեցաւ մկրտել՝ ըստ այնմ. «Իբրեւ զարդի ծնեալ մանկունս [խաւսուն եւ անխարդախ կաթինն փափաքիցէք]» (Ա. Պետ. Բ. 2):

Գ. Երրորդ՝ զի ծառ ջրով աճէ. այսպէս եւ հաւատացեալք՝ բանիւ գետոց աստուածային, որ բղխէ յեկեղեցւոջ՝ ըստ այնմ. «Գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջուրք կենաց» (հմմտ. Յովհ. Է. 38), եւ թէ՝ «Աղբիւր ի տանէ Տեառն ելցէ եւ արբուսցէ [զձորն վիճակաց]» (Յովել Գ. 19):

Դ. Չորրորդ՝ զի ի մի ժամանակս ոչ բերեն ամենեքեան պտուղ. այսպէս եւ հաւատացեալք. ոմանք ի ծերութեանն արդարանան, եւ այլք՝ ի մանկութենէ սուրբք: Եւ դաձեալ՝ յիւրաքանչիւր ժամանակս եղեն առաքինիք եւ արդարք յառաջն եւ յետո:

Ե. Հինգերորդ՝ զի իւրաքանչիւր ծառ իւր պտղովն զարդարի, զոր յինքենէ հանէ. այսպէս եւ ամենայն ոք իւր գործովն պայծառանայ՝ ըստ այնմ. «Յայնժամ ծագեսցին արդարքն յարքայութեան իբրեւ զարեգակ» (հմմտ. Մատթ. ԺԳ. 43):

Զ. Վեցերորդ. զի եւ ոչ մի համ լինի ամենեցունց. այսպէս եւ ոչ ամենայն հաւատացեալք առաքինանան միապէս, զի. «Այլ փառք արեգական եւ [այլ փառք] լուսնի եւ [այլ փառք] աստեղաց» (Ա. Կոր. ԺԵ. 41):

Է. Եաւթներորդ. զի ծաղկին եւ ապա պտուղն երեւի. այսպէս եւ հաւատացեալք նախ ծաղկին սրբութեամբ եւ պտուղ՝ զարքայութիւնն ժառանգեն՝ ըստ այնմ. «Ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեսցին» (հմմտ. Սաղմ. ՂԱ. 14) եւ եւս բազումք եղիցին» (Սաղմ. ՂԱ. 15):

Ը. Ութերորդ. զի է ի ծառոցն, որ պտուղ բերեն, եզը՝ քաղցր եւ մէջն՝ դառն, եւ են, որ եզը՝ դառն եւ մէջն՝ քաղցր. այսպէս եւ եկեղեցի. ոմանք կեղծաւորին արտաքուստ ի ցոյցս մարդկան՝ երեւիլ առաքինի, վասն որոյ ասէ. «Նման էք գերեզմանացն բռելոց» (հմմտ. Մատթ. ԻԳ. 27): *Իսկ ոմանք խոշոր զգեստիւ պահաւք զառաքինութիւն ի հոգին գործեն՝ ըստ այնմ.* «Շրջեցան լեշկ մաշկաւք, կարաւտեալք, նեղեալք» (Եբր. ԺԱ. 37), *յաղագս որոյ ասէ.* «Ճ.(100)ապատիկ առցեն» (հմմտ. Մատթ. ԺԹ. 29):

Թ. Իններորդ. զի այգեգործն հանապազ խնամէ զծառն եւ խնդրէ պտուղ. այսպէս եւ Տէր մեր, միշտ խնամէ զմեզ եւ պահանջէ պտուղ

առաքինութեան՝ ըստ այնմ. «Ես եմ որթ եւ դուք՝ ուռ» (Յովհ. ԺԵ. 5): «Եթէ ոչ բերէ պտուղ, [կտրէ զնա]» (Յովհ. ԺԵ. 2); *Եւ թէ՝ «Հայր իմ մշակ է»* (Յովհ. ԺԵ. 1) *եւ այլն:*

Ժ. Տասներորդ. զի թէ ոչ բերէ պտուղ, հատանէ զնա տէր այգւոյն, այսպէս եւ թէ ոք ոչ առնէ առաքինութիւն յեկեղեցւոջ, հատանէ Աստուած զնա ի կենաց՝ ըստ այնմ. «Քակեցից զցանկ նորա եւ երէ վայրի արածեսցի ի նմա» (հմմտ. Սաղմ. ՀԹ. 13-14), *եւ թէ՝* «Որ ոչ առնէ [զ] պտուղ [բարի], հապանի եւ ի հուր արկանի» (հմմտ. Մատթ. Գ. 10):

Իսկ զի՞ թզենւոյ նմանեցոյց եւ ոչ այլ ինչ ծառոց: Եւ այս վասն բազում պատճառի:

[Ա.] Նախ՝ զի յաշխարհն պաղեստին է, եւ ոչ են առաւել ծառք, բայց թզենիք յոլովք զամենեսեան, վասն որոյ եւ զնա եդ աւրինակ, բայց եւ ոչ այս առանց խորհրդոյ:

Բ. Երկրորդ՝ զի թզենին ոչ ունի ծաղիկ, այլ ի բնէ պտուղ: Զնոյնս խնդրէ Տէրն, ոչ սուտ հեթեթանք առաքինութեան, այլ կատարեալ սրբութիւն. «Երանի՛ որ[ք] սուրբք են սրտիւք, զի նոքա [զԱստուած տեսցեն]» (հմմտ. Մատթ. Ե. 8):

Գ. Երրորդ՝ զի կարճ է հասակաւ եւ ոչ կարէ բարձրանալ, որպէս զընկոյզն, եւ թէ բարձրանայ, չորանայ յարմատոցն. այսպէս ուսոյց խոնարհ լինել, զի զնա սիրէ Աստուած՝ ըստ այնմ. «Ես յո՛ հանգեայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս» (Ես. ԿԶ. 2): *Իսկ թէ հպարտանայ, անկանի ի խոնարհ.* «Որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի» (հմմտ. Մատթ. ԻԳ. 12):

Դ. Չորրորդ՝ զի ի սկիզբն փոթոթէ պտուղ թզենւոյն եւ յետոյ քաղցրանայ. այսպէս եւ զնեղ եւ զանձուկն այսմ աշխարհիս սիրէ Տէրն, որով կարեմք վերին քաղցրութեանն հասանել, եւ յայտ է, զի տեսանելով զկեանս մեր՝ անաւրէնք թքանեն ի մեզ, վասն որոյ գրէ Պաւղոս. «Բազում նեղութեամբ պարտ է մտանել այն [յարքայութիւն Աստուծոյ]» (Գործք ԺԴ. 21):

Ե. Հինգերորդ՝ զի թէ ոք բազում ուտէ, վնաս առնէ մարմնոյն. այսպէս՝ թէ բազում է առաքինութիւն, վնաս բերէ մարմնոյն, վասն որոյ պիտոյ է ընդ մէջն գնալ ճանապարհ՝ ոչ զհոգին վնասել եւ ոչ՝ մարմինն:

Զ. Վեցերորդ՝ զի ոչ պատուաստի ընդ այլ ծառոյ. այսպէս ուսոյց, թէ առաքինութիւն ոչ միաբանի ընդ աշխարհական պատրանա՝ ըստ այնմ. «Ոչ [ոք ծառայ] կարէք երկուց տերանց ծառայել» (Ղուկ. ԺԶ. 13):

Է. Եաւթներորդ. զի են ի թզենեաց, որ ամենեւին դառն բերեն պտուղք, վասն որոյ «ժանդք» կոչին. այսպէս եւ որք ոչ ունին պտուղ արժանի սրբութեան, որդիք «ժանդք» կոչին, որպէս որդիքն Հեղեայ (տե՛ս Ա. Թագ. Դ.):

Ը. Ութերորդ. զի ի մի յարմատոց բազում ճուղք արտաքս գան, նմանապէս, յորժամ ոք զառաքինութիւնն կամի, ինքնին աճեն զայլ ամենայն, քանզի շարեալ են ընդ միմեանս իբրեւ զշղթայսն:

Թ. Իններորդ՝ զի ի մէջ պտղոյն բազում հատիկ լինին եւ սերմ. նմանապէս եւ զայն առաքինութիւնն սիրէ Տէրն, որ բազում աշխատանաւք լինի, եւ ոչ որ դիւրութեամբ՝ ըստ այնմ. «Որ կամիցի գալ զկնի իմ, ուրացցի զանձն եւ առցէ զխաչ [իւր] եւ եկեսցէ [զհետ իմ]» (Մատթ. ԺԶ. 24, հմմտ. Մարկ. Ը. 34):

Ժ. Տասներորդ. զի երիս անգամ պտուղ բերէ թզենին, եւ առաջինն ոչ հասանի, եւ վերջինն՝ թերակատար մնայ, իսկ միջինն՝ կատարեալ լինի: Որով եցոյց զերից ժամանակաց ապաշխարութիւն եւ զսրբութիւն, այսինքն՝ [զ]տղայութեանն, զերիտասարդութեանն եւ զծերութեանն: Զի տղայութեանն ապաշխարութիւնն ոչ հասանէ ի կատարումն, զի ոչ ունի անդորր միտք մանուկն, մանաւանդ բարութեամբ ոք երիտասարդականն առաջի կայ: Եւ ծերութեանն թերակատար է, զի ոչ զաւրէ մարմին աղաւթել եւ պահել: Իսկ միջին հասակին, որ է երիտասարդութիւնն, կարէ ուղղապէս ապաշխարել, զի բաւականանայ աղաւթել եւ պահել, եւ արտասուել եւ հաստատեալ է միտքն յընդունել զապաշխարութիւնն, վասն որոյ Ադամ երեսնամեայ ստեղծաւ, զի այն է ժամանակ զղջմանն եւ սրբութեան: Եւ դարձեալ յերիս ժամանակս խնդրէ պտուղ Տէրն եւ յամենայն ժամու: Եւ թէ ի տղայութեանն ոչ տայ, չկտրէ, զի ի միջին ժամանակն տացէ: Եւ թէ յայն եւս գտանի անպտուղ, խնայէ, թէ ի ծերութեանն զղջասցի՝ ըստ այնմ, թէ՝ «Ոչ կամիմ զմահ մեղուցելոց՝ [ասէ Ադովնայի Տէր], այլ զի դարձցի [ի ճանապարհաց իւրոց չարեաց, եւ կեցուսցէ զանձն իւր]» (Երեմ. ԺԸ. 32): *Իսկ թէ ի ծերութեանն եւս ոչ տացէ, յայնժամ ասէ.*

«Այս Գ. ամք են, յորում ոչ եկ պտուղ, կտրեա՛ զդա, ընդէ՞ր եւ զերկիրդ խափանէ» (հմմտ. ԺԳ. 7):

Եւ զայս է՞ր վասն արար. զի ներեաց մինչեւ ի ծերութիւնն, զի առանց պատասխանոյ արդարասցի դատել: Արդ, տես զամենախնամ գութն, զի գործէ Աստուծոյ ի բարկութեանն զողորմութիւնն յիշել, ըստ Ամբակումայ. «Ի ժամանակի բարկութեան զողորմութիւն յիշեսցես» (հմմտ. Ամբակ. Գ. 2): *Զոր եւ աստ եցոյց զողորմութիւնն իւր, զի թէ կամք էին նորա կտրելն, զի՞նչ պէտք էր զայգեգործն առ այս գործակից ունել, այլ հատանել առանց հարցանելոյ այգեգործին: Վասն որոյ ուսանիմք աստի, թէ աւրէն եղ առաջնորդացն բարեխաւս լինել աղաւթիւք ի վերայ մեղաւորաց եւ հաշտեցուցանել զայն, որ ոչ երբէք բարկանայ, սակայն ձեւանայ բարկանալ, զի զարհուրեցուսցէ զմեզ եւ ուսուսցէ զառաջնորդսն, զարժանն ի ներքս բերել զխնամակալութիւն: Զոր աւրինակ Մովսիսի ասէր.* «Թող հարից եւ սպարակեցից զդոսա» (հմմտ. Ելք ԼԳ. 5): *Եւ արդ, եթէ կամէր սատակել զնոսա, զի՞նչ պէտք էր ասել.* «**Թոյլ տուր**», *այսինքն՝ ի բաց կաց, եւ ո՞վ ոք էր Մովսէս, որ ընդդէմ կայր այն, որ բազում մաղթանաւք ընդ Յորդանանն ոչ անց: Այլ վասն այսորիկ ուսոյց, զի ընդդէմ կացցէ ասել, թէ՝* «**թողուս դոցա՝ թող**»: *Ապա թէ ոչ՝ եւ զիս ջնջեա՛ ի գպրութենէս, յորս գրեցեր: Այսպէս եւ աստ ասէ.* «**Կտրեա՛**», *եւ ապա, զոր պարտն էր առնել մշակին, ինքն առաջի դնէ: Ասէ.*

Թոյլ տուր, զի բրեցից եւ արկից աղր (հմմտ. ԺԲ. 8):

Արդ, այսոցիկ երկոցունց պարտապան են վերակացուք:

Ա. Նախ՝ տքնել եւ ապա՝ աղաւթիւք առ Աստուած պաղատել, որպէս ասէ Պաւղոս. «Նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, զի համարս տալոց են ընդ ձեր» (հմմտ. Եբր. ԺԳ. 17):

Բ. Երկրորդ՝ առ մարդիկ զգործս առաքինի մշակացն ցուցանել՝ ըստ այնմ, զոր Պաւղոս Տիմոթէոսի գրեաց. «Ցանդիմանեա՛, սաստեա՛ ամենայն երկայնմտութեամբ եւ վարդապետութեամբ» (հմմտ. Բ. Տիմ. Դ. 2), *եւ որպէս ինքն իսկ Պաւղոս ընդ հիւանդացեալսն հիւանդանայր եւ ընդ գայթակղեալսն տապանայր* (տե՛ս Բ. Կոր. ԺԱ. 29): *Վասն որոյ Աստուած առ Եզեկիէլիւ ասաց.* «Դէտ կացուցի զքեզ, տեսանիցես զսուրն [եկեալ], զգուշացո մեղաւորին, ապա թէ ոչ՝ զարիւն [նորա] ի ձեռաց [քոց խնդրեցից]» (հմմտ. Եզեկ. ԼԳ. 6-8): *Որպէս եւ Դաւիթ ասէր զայս գործ առաքինութեան, առ Աստուած ասէր.* «Ես հովիւս մեղայ, խաշինքդ զի՞նչ գործեցին,տեղիցի սուր քո յիս» (հմմտ. Բ. Թագ. ԻԴ. 17): *Իսկ առ ժողովուրդն ասէր.* «Ազգ չար եւ դառնացող» (Սաղմ. ՀԷ. 8):

Արդ, բազմապատիկ է այսպիսի բանք ի գիրս աստուածային, թէ զի՞նչ պարտ է առ Աստուած խաւսել եւ որպէս զժողովուրդն խրատել:

Իսկ թէ զի՞նչ իցէ «**բրելն եւ արկանել աղր**». *սոքա արուեստք են երկրագործաց, որով զանբան երկիրն ածեն ի պտղաբերութիւն: Եւ դիւրին է զայս իմանալ, այսինքն՝ զի բրելն զխրատ վերակացուացն նշանակէ, եւ այս ըստ բազում յեղանակի:*

Ա. Նախ՝ զի կոչտ է երկիրն, վասն որոյ բրեն. այսպէս եւ սիրտ մեղաւորին քարացեալ կայ ի մեղքն՝ ըստ այն[մ]. «Հանից զսիրտ[ն] քարեղէն ի մարմնոց ձերոց» (Եզեկ. ԼՁ. 26):

Բ. Երկրորդ՝ զի սակաւ սակաւ բրեն զերկիրն. այսպէս եւ առաջնորդք պարտին սակաւ սակաւ խրատիւ կակղացուցանել զսիրտ մեղաւորին:

Գ. Երրորդ՝ կրկին բրեն, որ ամենայն տեղ հաւասար բրեալ լինի. այսպէս եւ զխրատն պարտ է կրկնել եւ Գ. (3) կրկնել՝ ըստ Տեառն, եթէ. «Ասա յորժամ դու եւ նա միայն իցէք» եւ այլն (Մատթ. ԺԸ. 15):

Դ. Չորրորդ՝ զի զսէգն եւ զաւելորդն հանեն. այսպէս եւ վերակացուին պարտ է նախ զմեղս ապաշխարութեամբ մաքրել տալ եւ ապա՝ զուղիղ կարգն յաւրինել:

Ե. Հինգերորդ՝ զի յորդոր ջրով զովացուցանէ զբրեալն. այսպէս եւ քահանային պարտ է յորդառատ իմաստիւք զովացուցանել զպասքեալ ոգին՝ ըստ այնմ. «Շրթունք քահանային զգուշասցին գիտութեան, եւ աւրէնք խնդրեսցեն [ի բերանոյ նորա]» (Մաղաք. Բ. 7):

Զ. Վեցերորդ՝ զի բրիչն սուր պարտի լինել, որով փորեն. այսպէս եւ բանք քահանային, յաստուածային գրոց պարտի լինել, որ սուր է, քան զամենայն երկսայրի եւ հատանէ մինչեւ ցորոշումն շնչոյ:

Է. Եաւթներորդ՝ զի բռամբ փորեն եւ ոչ ըստ հողին կամաց. այսպէս եւ քահանային պարտ է ջանիւ խրատել, զի մեղաւորն ոչ կամի զխրատելն, վասն զի դժուար թուի նմա, որպէս ասէ. «Փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդորել» (Բ. Պետ. Ա. 15):

Ը. Ութերորդ՝ զի աղբ ածեն շուրջ զծառովն, զի ջերմ պահեսցեն զարմատն. այսպէս եւ առաջնորդն պարտի զարթուցանել զջերմ սէրն Աստուծոյ ի սիրտս մեղաւորին, այսինքն՝ յոյս դնել անկեալ եւ բեկեալ սրտին: Այլեւ ինձ թուի «աղբ» աստ զմարմնաւոր ինչսն

ասէ, զոր պարտ է տալ առաջնորդին անգեղջ մեղաւորին, զի գոնեա ի սիրոյ մարմնաւոր տրոցն դարձցի ի մեղաց. զայս կեանքն յայտնի անուն ասեն մարմնաւոր ընչիցն:

Թ. Իններորդ՝ զի աղբն զպտուղն բերէ. այսպէս եւ յոյսն զառաքինութիւնն աճեցուցանէ, որով լինի զերծանել ի հատմանէ կենացն եւ մնալ յարաժամ ի տանն Աստուծոյ տնկեալք:

Ժ. Տասներորդ՝ զի զայս ամենայն յամենայն ամի առնեն այգեգործքն: Իսկ թէ ոչ առնեն, ոչ բերէ պտուղ. այսպէս՝ քահանայքն պարտին յամենայն տարի եւ յամենայն ամիս, նա թէեւ յամենայն աւր խնդիր առնել՝ զբեկեալսն կապել, զխոցելոցն դեղ դնել, զի թէ ոչ դնեն, ոչ կարեն արդարանալ ժողովուրդքն: Իսկ եթէ զայս ամենայն առնեն եւ դարձեալ ի նոյն անպտղութեանն մնան, յիրաւի կտրի ծառն, որպէս ասացաւ: Այսպէս եւ մեղաւորն յետ այսչափ ուսուցանելոյ յամէ ի մեղս եւ ոչ դառնայ իրաւամբք յարմատոյ հաւատոյն, եւ ի կենաց աստի հատանէ զնա Տէրն: Լուարո՛ւք ծէրք, որք զժամանակս ձեր ի մէջ մեղաց էք դեգերեալ, այժմ ահա ժամ է, մի՛ յապաղէք, զի ահա ժամանակ ընդունելի, ահա աւր փրկութեան, մի՛ դնէք պատճառ, զի այլ տղայանալ ոչ կարէք, այլ պատրաստեցէք զձեզ մահու, զի կէս մարմնոյ ձեր ի գերեզմանի կախեալ կայ, զի մի՛ զվերջին հատումն ընդունիցիք, քանզի ասէ. «Զչարսն չարեաւ կորուսցէ» (Մատթ. ԻԱ. 41): *Իմացարուք եւ զայս, քահանա՛յք, որք էք այգեգործ եկեղեցւոյ. մի՛ ծուլասցուք եւ մի՛ հեղգասցուք ի բժշկելոյ զմեզ եւ զժողովուրդն Աստուծոյ մերոյ: Զի թէ ոչ զգաստանամք՝ ասէ.* «Զչար հովիւն չարաչար կորուսից» (հմմտ. Մատթ. ԻԱ 41) եւ՝ «Իմում հիւանդին ես խնա[մա]րկեցից»: *Մանաւանդ, թէ կրկին պատժոց դիպիմք, մին՝ վասն մեր մեղացն, եւ մին՝ վասն ժողովրդեանն: Եւ արդ, բաւակա՛ն է մերն կորուսանել զմեզ, ժրասցո՛ւք, զի մի՛ զնոցա բեռն ի վերայ մեզ դիցի, այլ պատրաստ լինել ընդ շահաւէտ ծառայիցն արժանի լինել՝ այնմ, որ ասէ.* «Ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ [հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցի զքեզ], մուտ յուրախութեան Տեառն» (Մատթ. ԻԵ. 21, հմմտ. Ղուկ. ԺԹ. 17) *ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որով եւ ընդ որում Հաւր մի եւ Հոգւոյն Սրբոյ վայել (այսպես). փառք:*

ՅԱՂԱԳՍ ԿՈՐՈՒՍԵԱԼ ՈՉԽԱՐԻՆ

Ղուկ. ԺԵ. 3-7

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Այր ոմն ի ձէնջ, որ ունէր Ճ. ոչխար եւ կորուսեալ[1] զմինն ի նոցանէն, ո՞չ թողուցու զիննսուն եւ զինն յանապատի եւ երթայ առ կորուսեալն (հմմտ. Ղուկ. ԺԵ. 3):

«Հարիւր»դ է *թիւ կատարեալ, հոգւոյ մարդկան նշանակ, իսկ «կորուսեալ ոչխար»ն, որ մեղաւք եւ անաւրէնութեամբ է կորուսեալ, զոր եկն Որդին մարդոյ խնդրել եւ կեցուցանել, եւ* «բարձեալ ի վերայ ուսոց իւրոց» (տե՛ս ԺԵ. 5), *զի անաւրէնութիւնս մեր եբարձ եւ զմեղս մարմնով՝ ուսովք իւրաւք յորս զխաչն բարձեալ եւ երթայր ի չարչարանս:*

ԻԳՆԱՏԻՈՍ

Մաքսաւորք եւ մեղաւորք, կացեալ առ նմա, վայելեցին յառատ պարգեւս նորա, իսկ դպիրք եւ փարիսեցիք, հեղձեալք նախանձու՝ բանրասէին զբժշկին խոնարհելն առ ախտացեալս եւ զհովուին գնալն զհետ կորուսելոյ ոչխարին (տե՛ս Ղուկ. ԺԵ. 1-7): *Այն, որ բազմապատիկ եցոյց զխնամս մարդասիրութեան, մինչեւ ի վերայ ուսոց բառնալ եւ յառաջինն տանել պատիւ եւ ուրախութեամբ հաղորդս առնել զհրեշտակս՝ մերումս երկութեան: Դարձեալ, կրկին առակաւն այլովք զնոյն ցուցանէ, զի «հովիւ» զինքն անուանէ, փոխանակ զի պարտ էր նմա չարչարիլ եւ գտանել զկորուսեալ ոչխարս՝ զմեզ, դարձեալ եւ ինքն «ոչխար», զի պատարագեսցի փոխանակ աշխարհի: Եւ աստ՝ տէր դրամին եւ ոչ գարշի յայսպիսեաց անուանց:*

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք եւ մեղաւորք՝ լսել ի նմանէ (Ղուկ. ԺԵ. 1):

---

[1] ՍՏ կարուսեալ

ԵՓ *Ընտրեաց զՅակոբոս մաքսաւոր, զի քաջալերեսցեն ընկերք նորա երթալ ընդ նմա: Բազմեցոյց զնոսա առ ինքն: Այս է տեսիլ սքանչելի, հրեշտակք դողան եւ մերձ են մեղաւորք եւ ուրախ լինին: Զուարթունք զահի հարեալ են ի մեծութենէ նորա, եւ մաքսաւորք ուտեն եւ ըմպեն ընդ նմա: Տեսին վերինք՝ զարմացան, եւ ներքինք յիմարեցան: Սատանայ ապշեցաւ, մահ վա[տ]թարացաւ, ուրախութիւն յերկինս եւ ցնծութիւն հրեշտակաց, զի հնազանդեցան ապստամբք եւ զգաստացան մաքսաւորք եւ արդարացան մեղաւորք:*

Տրտնջէին փարիսեցիքն եւ դպիրքն. Ընդէ՞ր զմաքսաւորս ընդունի եւ ուտէ ընդ նոսա (ԺԵ. 2):

ԵՓ *Փարիսեցիք խռովեցան եւ դպիրք բորբոքեցան հերձեալք ի նախանձուէ, եւ մաքսաւորք եւ մեղաւորք ցնծան ուրախութեամբ:*

ԻԳ *Բամբասէին զբժիշկն՝ խոնարհեալ առ ախտացեալս, եւ զհովիւն՝ գնացեալ զհետ կորուսեալ ոչխարին:*

Այր ոմն ունէր հարիւր ոչխար, եւ կորուսեալ զմի ի նոցանէ (ԺԵ. 4):

Զի որպէս մարդ զհոգոյն զհրեշտակաց ունի զբնութիւն, այսպէս եւ առ հրեշտակս առակեաց զմարդկային բնութիւնս: Այսպէս եւ իննսուն եւ ինն ոչխար, որ չիցեն մոլորեալ, զհրեշտակաց, բազմութիւն նշանակէ, եւ որպէս ոչխարն ի գաւթէն հեռանալով զմոլորեալ իմանին, այսպէս եւ Ադամ ի դրախտէն:

ՍՏ *Հարիւր թիւտ կատարեալ զհոգիս մարդկան նշանակեաց, կորուսեալ ոչխարն՝ որ մեղաւք եւ անաւրէնութեամբ կորեաւ:*

Եկն ի խնդրել՝ զկորուսեալ ոչխարն բարձեալ ի վերայ ուսոյ իւրոյ (ԺԵ. 5):

Զի զանաւրէնութիւնս մեր երարձ մարմնով ուսով իւրովք, յորոյ գլխաչն բարձեալ՝ երթայր ի չարչարանս «Հովիւն քաջ» (Յովհ. Ժ. 11, 14), *որ եկ զհետ առիւծուն եւ թափեաց աքացս երկուս, այսինքն՝ երկու[ս] ոտս եւ ունկն դրոշմաւոր, լսելիք մարդկան, որ առակի ի մեր բնութիւնս:*

ԻԳ *Արդ՝ այն, որ բազմապատիկ եցոյց զխնամս մարդասիրութեանն մինչեւ ի վերայ ուսոց բառնալ եւ տանել յառաջին պատիւն, եւ ինքն ոչխար փոխանակ աշխարհի:*

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Ո՞վ որ իցէ ի ձէնջ մարդ, որ ունիցի Ճ. (100) ոչխար, եւ կորուսանիցէ [զ]մի ի նոցանէ. [ո՞չ] թողուցու զիննսունն եւ զինն յանապատի] (հմմտ. Ղուկ. ԺԵ. 4):

Բազմադիմի առակաւք զամենախնամ տեսութիւն աստուածային սիրոյն, զոր ունի առ արարածս, յայտ առնէ: Զի սովորութիւն է բժշկացն առ հիւանդն գնալ. է երբեմն, զի դեղ առնէ վիրացն եւ ցաւոցն, եւ է, զի բանս մխիթարականս խաւսի, եւ է ինչ, զի յոյս դնէ, զայլք աւրինակ տալով, զոր առողջացուցեալ է: Այսպէս եւ Տէր մեր, եկեալ առ հիւանդացեալ բնութիւնս, երբեմն խրատեաց զմեզ վարդապետութեամբ, երբեմն բժշկեաց զախտաժետս մեր, երբեմն յոյս դնէ հոգւոցն, որ ի գժոխս, իբր թէ վասն նոցա է մարմնացեալ, եւ երբեմն՝ մեզ, յետոյ եկեալ, այլ խրատ տայ՝ գործեցեալ զաւրութեամբն, որ ի ձեռն իւր չարչարանացն գտաւ զմարդկային բնութիւնս, վասն որոյ առակաւոր բանիւք ասէ.

Ով որ իցէ ի ձէնջ (ԺԵ. 4):

Աստ տեսանելի է, զի կրկին առակ համանգամայն ասաց աստ վասն մի խորհրդոյ, այսինքն՝ մարդկային բնութեանս, յառաջին՝ զՃ. (100) ոչխարն (Ղուկ. ԺԵ. 3-7) եւ զկորուսեալ դրամն (Ղուկ. ԺԵ. 8-10):

Բայց նախ տեսցուք վասն ոչխարացն, եւ զի՞ զհրեշտակաց բնութիւնն եւ զմարդկան ոչխարաց նմանեցուցանէ: Եւ այս վասն բազում պատճառի:

Ա. Նախ՝ զի սուրբ կենդանի է ոչխարն. այսպէս եւ սուրբք էին մարդկային բնութիւնս յառաջին յանմեղութեանն ընդ հրեշտակաց, որպէս եւ հրեշտակք, վասն որոյ ասէ մարգարէն. «Փոքր ինչ խոնարհ [արարեր զնա] քան զհրեշտակս քո, փառաւք եւ պատուով [պսակեցեր զնա]» (Սաղմ. Ը. 6):

Բ. Երկրորդ՝ զի ոչխարն սար սուրբ ունի հանդերձ իւր. այսպէս եւ լուսով պարածածկ էր մարդն, որպէս եւ հրեշտակք, զոր եւ յետ

մեղանչելոյն ասէ. «Ծանեան, զի մերկացեալ[ք] էին ի լուսոյն» (հմմտ. Ծնն. Գ. 7):

Գ. Երրորդ՝ զի անսխալ ճանաչէ ոչխարն զտէրն իւր. այսպէս եւ յայնժամ դէմ յանդիման տեսանէր մարդն զԱստուած, որպէս հրեշտակք, զոր պատմէ Մովսէս ի գիրս իւր:

Դ. Չորրորդ՝ զի աւձահալած բնութիւն է ոչխարացն. այսպէս եւ ամենայն ախտք, որ իբրեւ զաւձ խածանեն զմեզ, հալածական լինէր ի մարդոյն, որպէս եւ ի հրեշտակաց:

Ե. Հինգերորդ՝ զի յոյժ փափագէ ոչխարն աղի եւ փութայ առ նա. այսպէս եւ մարդն Բանին կենաց եւ լուսափայլութեանն միշտ փափագէր ընդ հրեշտակաց, վասն որոյ ընդ մեղանչելն ասէր. «Մի՛ մնասցէ հոգի իմ ի դոսա, վասն լինելոյ [դոցա] մարմին» (հմմտ. Ծնն. Զ. 3):

Զ. Վեցերորդ՝ զի ոչխարք ի մէջ գաւթին անմոլարք են. այսպէս եւ յանմահական վայրքն անմոլարք էին մարդիկք ընդ հրեշտակս:

Է. Եաւթներորդ՝ զի յանկարծակի փողատէ գայլն զոչխարսն, մինչ զի ոչ իմանայ. այսպէս եւ սատանայ խաբեաց զմարդն, մինչ ոչ գիտաց նա զխաբէութիւն նորա, վասն որոյ ասէ. «Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ» (Իմաստ. Բ. 24):

Ը. Ութերորդ՝ զի այն ոչխարացն, որք են ի գաւիթն, ոչ ինչ հոգայ տէրն, այլ վասն կորուսելոցն. այսպէս եւ Աստուած ոչ ինչ հոգայ վասն հրեշտակացն, զի անմոլարք են, այլ վասն մարդկային հոգւոց, զի հեռացեալ էր ի նմանէ:

Թ. Իններորդ՝ զի տեարք ոչխարացն խնդիր ելանեն եւ ոչ ծառայքն, զի չէ փոյթ ծառային վասն կորստեան ոչխարին. այսպէս եւ հրեշտակաց ոչ փոյթ է վասն կորստեան մարդկան: Եւ յայտ է ի զենումն պարարակին, զի չաղ էին, թէ դմա արարեր եւ մեզ՝ ոչ:

Ժ. Տասներորդ՝ զի քան զամենայն կենդանի սիրեցեալ լինի յաչս տեառն իւրոյ. այսպէս եւ յամենայն կենդանիս, զոր ստեղծ Աստուած, միայն զմարդն սիրեաց, վասն որոյ «**մարդասէր**» *կոչի եւ ոչ հրեշտակասէր կամ անասնասէր, յաղագս որոյ առակէ Տէրն ի յոչխար զմարդկային բնութիւնն: Իսկ զի՞ Ճ. (100) թիւ. այս զկատարեալն ցուցանէ, զի Ճ. (100) թիւն կատարեալ է, զի զԺ. (10) Ժ. (10) անգամ պատկեալ լինի, որ է կրկնապատիկ կատարեալ, այսպէս՝ կրկին ստեղծուածոցս կատարելութիւն մարդն է՝ հրեղինաց եւ հողեղինաց: Իսկ զի՞ Ճ. (100) թուովն զմինն կորուսեալ եցոյց, զի մարդովն Ժ. (10) էին՝ ինն դաս հրեշտակ եւ մին՝ մարդ, որ լինի Ժ. (10), վասն որոյ ի կորուսել միոյն, ել ի խնդիր կորուսելոյն:*

Եւ զի՞ «**անապատ**» *կոչէ զերկինս: Եւ այս վասն բազում պատճառի:*

Ա. Նախ՝ զի յանապատին ոչ է գործ մարդոյ, այսինքն՝ վարել եւ ցանել եւ այլն. այսպէս եւ յերկինս ոչ գոյր աշխատանք մարմնականք:

Բ. Երկրորդ՝ զի կենդանիք, որ յանապատի են, առանց վաստակոց ապրին. այսպէս եւ ի դրախտին առանց քրտանց եւ ճգանց ի հանգստեան էր մարդն, զի յորժամ անէծ՝ ասէ. «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց [քո]» (Ծնն. Գ. 19):

Գ. Երրորդ՝ զի յանապատի ոչ գործի մեղք. այսպէս եւ երկնայինքն անապատ են ի մեղաց, զի ոչ գոյր անդ ախտակցութիւն ինչ:

Դ. Չորրորդ՝ զի անապատն զհեռաւորութիւնն նշանակէ. այսպէս եւ երկինքն իմանալի հեռի է ի սգայական աշխարհէս՝ ըստ այնմ. «Գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն» (Ղուկ. ԺԹ. 12):

Ե. Հինգերորդ՝ զի որ յաշխարհի կենան ի մէջ շինութեան, ոչ կարեն բնակել յանապատի վասն անսովոր տեղեացն. այսպէս եւ որք այժմ ոչ սովորին մտաւք յերկինս լինել միշտ, ոչ կարեն բնակել անդ, զի չունին ծանաւթութիւն ի նմա, վասն որոյ եւ Պաւղոս ասէ. «Զվերինն խորհեցարուք, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ» (հմմտ. Կողոս. Գ. 1-2):

Զ. Վեցերորդ՝ զի որք կամին, դիւրաւ հասանին յանապատ. այսպէս եւ որք ցանկան ելանել յերկինս, դիւրին է, զի Տէրն ասէ. «Լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ՝ թեթեւ (հմմտ. Մատթ. ԺԱ 30), որով գտջիք»,- *ասէ,-* «հանգիստն անձանց ձերոց» (հմմտ. Մատթ. ԺԱ. 29):

Է. Եաւթներորդ՝ զի յանապատի սակաւ կենդանիք բնակին. այսպէս եւ յիմանալի խորանն սակաւք վայելեն՝ ըստ այնմ. «Սակաւք են, որ մտանեն ընդ նա» (հմմտ. Մատթ. Է. 14):

Ը. Ութերորդ՝ զի թէ ոք գնայ յանապատ, ի շինութենէ տանի հետ իւրն հաց եւ փայտ եւ այլն. այսպէս եւ յաշխարհէ աստ, թէ ելանել կամիմք յերկինս, պարտիմք հանդերձ զգենուլ զառաքինութիւն, եւ կերակուր պատրաստել զսրբութիւն: Զի թէ յանկասկած ժամու գնամք, գուցէ ոչ իցէ մեզ տեղիք, եւ յայնժամ սկսանիցիմք զյետին տեղին ունել ամաւթով, եւ լսել զձայնն, որ ասէ. «Ընկե՛ր, ընդէ՞ր մտեր

այսր, զի ոչ ունիս հանդերձ հարսանեաց» (Մատթ. ԻԲ 12) *կամ «իւղ լապտերաց»* (տե՛ս Մատթ. ԻԵ. 1-13):

Թ. Իններորդ՝ զի «**անապատն**» *«անչէն» ստուգաբանի. նմանապէս եւ յերկինս ոչ գոյ շինութիւն մեղաւորաց, զի որք աստ պատրաստեցին բնակութիւն, անդ ոչ ունին՝ ըստ այնմ.* «Ի բաց գնացէք ամենեքեան, զի ոչ գիտեմ զձեզ մշակքդ անիրաւութեան» (հմմտ. Ղուկ. ԺԳ. 27):

Ժ. Տասներորդ՝ զի յանապատի գող ոչ գոյ. այսպէս եւ յերկինս ոչ գոյ խաբիչ, պատրիչ, վասն որոյ թողու զհաւատն գուարթնոցն եւ եկն՝ խնդրել զկորուսեալն ոչխար, յաղագս որոյ ասէ Դաւիթ. «Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառ[այս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ]» (Սաղմ. ճԺԸ. 176):

Արդ, եկեալ Տէր մեր եւ ստեղծաւղ եւ եգիտ զմոլորեալ բնութիւնս ի մէջ մեղաց եւ երարձ ի վերայ ուսոցն զփայտ խաչին, որ գուշակէր զբարձրութիւն մարդկան յապականութենէ մահու եւ մեղաց յանապականութիւն եւ ի կեանս: Այսքան առ այս:

ՎԱՄՆ ԿՈՐՈՒՍԵԱԼ ԴՐԱՄԻՆ
Ղուկ. ԺԵ. 8-10

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Կամ ո՞վ կին, որ ունիցի դրամս Ժ., եւ եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ ապաքէն լուցանէ ճրագ եւ սրբէ զտունն, եւ խնդրէ փութապէս (հմմտ. Ղուկ. ԺԵ. 8):

«**Կին**» *նշանակէ զհոգի մարդոյ,* «**Ժ. դրամ**» *նկարագրեալ ի նմա՝ կատարեալ առաքինութիւնք. միաբանութեամբ հին հոգեղէն*[1] *զգայութեանց ընդ հինգ մարմնեղէն զգայութիւնքս, յորոց եթէ կորուսանիցէ մի յառաքինութեանց, լուցանէ ճրագ, զբանն աստուածային, յորմէ լինի յիշողութիւն աստուածային պատուիրանին.* «Մի՛ շնար, մի՛ սպանանէր, մի՛ գողանար եւ մի եղիցին քեզ ապրուածք ապրարք» (հմմտ. Բ. Օրին. Ե. 7, 17-18). *աւել ածէ*[2]*, զտուն իւր սրբէ, զմարմինն ի չարութենէն, որ եղեւ ի պատուիրանազանցութենէն. կոչէ զբարեկամս եւ զդրացինս, զհամափառս եւ զգուգահաւատ զհոգիս եւ ասէ ցնոսա. «Ուրախակից լերուք ինձ, զի գտի զկորուսեալ առաքինութիւնն իմ»:*

ԻԳՆԱՏԻՈՍ

Ո՞վ իցէ կին, որ ունիցի դրամս տասն. եւ թէ կորուսանիցէ մի դրամ, ո՞չ լուցանէ ճրագ եւ ածէ աւել ի տան եւ խնդրէ ստէպ՝ մինչեւ գտանիցէ (հմմտ. Ղուկ. ԺԵ. 8):

Բազմադիմի առակաւք զամենախնամ տեսչութիւն աստուածային սիրոյն, զոր ունի առ արարածս, յայտ առնէ: Զի զոր աւրինակ ի հարիւրերորդ թուոյ անտի, որ ի յերկինս են, մի՝ «**ոչխար**» *անուանէ զմարդիկ, Տէր գոլով ամենեցուն՝ հաւասարէ զարարածական բնութիւնս եւ զինքն* «**հովիւ**» *ասէ* (տե՛ս Ղուկ. ԺԵ. 1-7)*, որ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ եւ եկն՝ գտանել մերովս զմեզ: Եւ մի ի տասանց անտի կորուսեալս ասէ զմեզ, որ յայց*

[1] US հոգեղեն
[2] US աւելածէ

ելեալ կորուսելոյ պատկերին, այն, որ ի սկզբան անդ պայծառ եւ անապական ստեղծաւ յամենաբարի Արարչէն, արծաթեղէն եւ պատուեալ, յարմարեալ ըստ իւր պատկերին եւ ի նմանութեան: Քանզի զայս առակաւ դրամին[1] *զեկուցանել թուի: Արդ, սա, պակասեալ ի թուոյ տասանցն, զի այսպէս զդասս հրեշտակաց ուսաք ինն գոլով*[2] *եւ տասներորդ մերս բնութիւն՝ պակասեալ ի թուոյ անտի: Իսկ եթէ զոչխարսն հարիւր ասաց, նոյն է, վասն զի տասամբք չափեալ է: Արդ, եկն խնդրել զպատկերն իւր, որ անյայտեալ էր խաւարաւ անգիտութեան եւ անհաւատութեան, եւ ծածկեալ աղբով մեղաց եւ անաւրէնութեան, եւ վառէ զմարմինն իւր պայծառ լուսով աստուածային բնութեանն՝ լուծանել զխաւարն անգիտութեան՝ ըստ այնմ, զոր ասէ.* «Ես եմ լոյս աշխարհի» (Յովհ. Ը. 12): *Եւ Եսայի ասէ.* «Ոյք նստէին ի խաւարի եւ ի սպուերս մահու, լոյս ծագեսցի ձեզ» (հմմտ. Ես. Թ. 2): *Եւ այս է, զոր ելոյց ճրագ եւ աւազանին շնորհաւք եւ որդեգրութեամբ ի մեղաց հոգւոյն*[3] *մաքրեաց, եւ այս է «տանն աւել ածել»: Եւ եգիտ զիւր թագաւորական պատկերն եւ յառաջին մաքուր արծաթեղէն բնութիւնն զարձոյց եւ ուրախացաւ վասն գտանելոյն զմեզ: Հաղորդս առնէ ուրախութեանն եւ զիմանալի բնութիւնսն:*

Ասէ. «Ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ, զոր կորուսի» (ԺԵ. 9):

Ո՛վ, որպիսեա՛ց մեզ պէտք են բանից եւ ժուժկալութեան՝ հաւասարեցուցանել շնորհին եւ ուրախութեանն զբանս: Բայց խոստովանեալ է այս ոչ միայն մերում տկարութեանս անմերձենալի գոլ, այլեւ կարի զաւրաւորագունիցն ի բանս, որպէս ահա յայտնի են, որ թափեցին զզաւրութիւնս իւրեանց եւ խոստովան եղեն, թէ ոչ ինչ զաւրեցին ասել: Եւ ի հիացման եղեալ՝ անճառելեացն ետուն եւ ի փառս հանգուցին զբանսն՝ ըստ այնմ. «Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ գիտութեանն[4] Աստուծոյ, զի առանց քննելոյ են դատաստանք նորա (Հռոմ. ԺԱ. 33)*:* «Արդարեւ, մեծ են գործք քո, Տէր, - ըստ Դաւթայ, - եւ յոյժ խոր են խորհուրդք քո» (Սաղմ. ՂԱ. 6)*: Եւ՝* «Այր անզգամ զայս ոչ ծանեաւ եւ անմիտն զայս ի միտ ոչ էառ» (Սաղմ. ՂԱ. 7)*: Թէ զիա՞րդ էջ խոնարհու-*

[1] ԻՏ պատկերին] դրամին
[2] ԻՏ գոլ
[3] ԻՏ > հոգւոյն
[4] ԻՏ > եւ իմաստութեան եւ գիտութեանն

թեամբ եւ «ընդ մեզ Աստուած» (Մատթ. Ա. 23) *եղեւ մարդկապէս եւ ստացաւ զմեզ՝ նորոգեալ վերստին եւ զարդարեալ զպատկերն, զոր եգիտ յաղբսն*[1] *զազրալի գործոց թաղեալ եւ ցնծացաւ արարիչն բնութեանս ի գտանելն զկորուսեալս՝ զմեզ, ցնծութիւն արար երկնաւորացն եւ երկրաւորացս ի միասին: Ուրախ եղեւ եւ Հայրն բոլորեցունց վասն փրկութեան մերոյ, վասն որոյ ասէ.*

Ուրախութիւն է առաջի հրեշտակաց Աստուծոյ վասն միոյ մեղաւորի, որ ապաշխարիցէ (հմմտ. ԺԵ. 10):

Արդ, զի զամենայն ինչ անձամբ վճարեաց Տէրն մեր եւ զոր ինչ խնամս գթութեան եցոյց առակաւ՝ զանձն յայտնեաց այնու, զի զնաց զհետ մոլորելոյ ոչխարին եւ եգիտ զպատկերն թագաւորական: Եւ զի մի Որդւոյ միայն շնորհապարտ լինիցին արարածք, վասն այնորիկ կարգէ առ նմին եւ զՀաւրն խնամակալութիւն, որ ինչ Հաւր սեպհական է խնամոց եւ գթութեան, քանզի հաճեցաւ Որդւոյն միջնորդութեամբն եւ պատարագաւ հաշտիլ ընդ մարդկան եւ շնորհել զյանցանս եւ տալ զառաջին պատիւն: Արդ, զայս ամենայն թանձր աւրինակաւ բանին ի դէմս տեսութեան ածէ, որով զմերն եցոյց ստահակութիւն եւ զմիտս ապախտաւորս եւ զՀաւրն բարեմտութիւն եւ զանյիշաչարն լինել:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Կամ կին, որ ունիցի դրամս տասն, եւ կորուսանիցէ դրամ մի| (Ղուկ. ԺԵ. 8):

ԿՐ *Տասն դրամ զեկուցանէ զթիւ տասն դասուց հրեշտակաց, վասն որոյ մի ի դասուցն ասաց զմարդկային բնութիւն: Զի որպէս տասն ամք ի հարիւր աւարտի, այսպէս եւ միակաւն ի տասն իսկ դրոշմի: Եւ զի որպէս դրամն ունի զթագաւորական տպաւոր[եալ] զպատկերն, այսպէս եւ մարդ զթագաւորական տպաւորեալ զպատկեր ունէր յինքեան: Ըստ Մովսիսի, թէ՝ «Արար Աստուած զմարդն ըստ պատկերի իւրում»* (Ծնն. Ա. 27):

ՍՏ *Կին՝ հոգի մարդոյն, տասն դրամն, որ նկարեալ ի նմա կատարեալ առաքինութիւն՝ միաբանութեամբ հինգ հոգոյն զգայու-*

[1] ԻՏ յաղբն

թեամբն ընդ հինգ մարմնոյն զգայութիւնն, յորոց եթէ կորուսանիցէ մի յառաքինութենէն, բազմադիմի առակաւք զխնամ աստուածային սիրոյն յայտնեաց, զոր ունի առ մարդ: Եւ յայց ելեալ կորուսելոյ պատկերին այն, որ յիսկզբանն պայծառ եւ անապական ստեղծաւ ի բարի Արարչէն, արծաթեղէն եւ պատուեալ մարդս է պակասեալ ի տասն դասուց հրեշտակաց: Արդ՝ եկն ի խնդրել զպատկերն իւր՝ անյայտեալ խաւարաւն անգիտութեան եւ անհաւատութեամբ, եւ ծածկեալ աղբով եւ անաւրէն մեղաւք:

Լուցանէ ճրագ (ԺԵ. 8):

ՍՏ *ԶԲանն աստուածային, յորում լինի յիշողութիւն աստուածային պատուիրանին. «Մի՛ շնար: Մի՛ գողանար: Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք աւտարք»* (Ելք Ի. 14, 15, 3):

ԻԳ. *Առ զմարմինն պայծառ՝ աստուածային բնութեամբ միացեալ, լուծանէ զխաւար անգիտութեան: Որպէս ասաց Տէր. «Ես եմ լոյս աշխարհի»* (Յովհ. Ը. 12): *Եւ Եսայի ասէ. «Որք էիք ի խաւարի եւ ի ստուերս մահու, լոյս ծագեաց ի ձեզ»* (հմմտ. Ես. Թ. 2):

Ազէ աւել ի փանն (ԺԵ. 8):

Ստ. Զտունն սրբէ՝ զհոգին ի չարութենէ, որ եղեւ ի պատուիրանազանցութենէն: Ի մեղաց մաքրեաց՝ շնորհաւք որդեգրութեամբ հոգոյն:

Խնդրէ սփէպ եւ գտանէ (ԺԵ. 8-9):

Զիւր թագաւորական պատկերն, եւ յառաջին մաքուր արծաթեղէն բնութիւնն բարձրացոյց:

Կոչէ զբարեկամս եւ զդրացիս իւր (ԺԵ. 9):

ՍՏ Զհամափառ[ս] եւ [զ]զուգահաւասար հոգիս:

Եւ ասէ ցնոսա. Ուրա՛խ լերուք, զի գտի (ԺԵ. 9):

Զկորուսեալ առաքինութիւնն:

Այսպէս ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի, որ ապաշխարէ (ԺԵ. 10):

ԵՓ *Ուրախութիւն զկնի տրտմութեանն լինի: Զի եղեն տրտմակից հրեշտակք, զի մեղան մադիկ: Լինի ուրախութիւն, յորժամ ապաշխարեն: Որպէս ասաց Տէր. «Ուրախ լինել պարտ էր, զի եղբայրս քո մեռեալ էր եւ կենդանացաւ»* (ԺԵ. 32): *Ահա ուրախութիւն եւ տրտմութիւն հոգեղինաց: Տրտմութիւնք չարչարանք են, զիա՞րդ յերկինս տրտմութիւն եւ ուրախութիւն առնի: Զի պարտաւորեցան մարդիկ ի մեղս, անուանեցաւ տրտմութիւն ի վերինս: Զի թէ զհրեշտակս տրտմեցուցին մեղք մեր, քանի՞ եւս արժան է մեզ ապաշխարել, զի զԱստուած տրտմեցուցաք՝ զԱրարիչ[ն] հրեշտակաց:*

ԻԳ *Հիացաւ առաքեալն անճառելաւքն եւ ի փառս հանգուցանէ զբանն: Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեանն Աստուծոյ, զի առանց քննելոյ են դատաստանք նորա: Որպէս ասաց Դաւիթ. «Մեծ են գործք քո եւ յոյժ խոր են խորհուրդք քո»* (Սաղմ. ՂԱ. 6): *Եւ այր անզգամ զայս ո՛չ ծանեաւ, եւ անմիտն զայս ի միտ ո՛չ առ, եթէ զիա՞րդ էջ խոնարհութեամբ Աստուած եւ եղեւ մարդկապէս ընդ մեզ: Եւ շրջեցաւ Աստուած ընդ մարդկան եւ խոստացաւ զմեզ նորոգել վերստին, եւ զարդարեաց զպատկերն, զոր եգիտ յաղբն զազրալի գործովք թաղեալ: Եւ ցնծացաւ Արարիչն բնութեամբ, ուրախութեամբ երկնաւորաց եւ երկրա[ւորա]ցս ի միասին, Հայրն բոլորեցունց, վասն փրկութեան մարդկ[ան]:*

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Իսկ ըստ այսմ յարացուցի յաւել եւ զդրամն Ժ. (10) թուովն, զի թէպէտ Տէր մեր եկն եւ մարմին առեալ եւ զբնութիւն մարդկան հանեալ յերկինս, որպէս ցուցաւ: Այլ յետ մարդեղութեանն մնացեալ որդիքս Ադամայ ծնեալ յաւազանէն, զոր կնոջ անուամբ յորջորջէ՝ եդեալ զպատկեր անմեղութեանն ի սրբեալն է.(7)պատիկ շնորհաւք Հոգւոյն ի հաւատացեալսն: Դեռեւս կորուսանէ եկեղեցի զմի ոք, զի դեռ խաբեութիւն չարին մերձ է եւ մարմին՝ ցանկացող: Վասն որոյ ոչ բաւականացաւ առաջին գտանելովն, զոր ինքն եգիտ, այլ ետ զնոյն գործ գտանելոյն ի ձեռն եկեղեցւոյ, յորժամ մեղանչէ ոք՝ լուցանել ճրագ իմաստութեան, զի առաջին գտմանն ոչ պիտոյացաւ այս, քանզի հոգւով եւ մարմնով կորեալ էր մարդն, վասն որոյ եւ ինքն եկն ի խնդիր, իսկ երկրորդիս միայն գործով

կորուսանէ սատանայ զմարդն, եւ մնայ միտքն եւ զգայութիւնքն, զոր կարողանայ լոյս իմաստութեանն խրատիւ եւ քարոզութեամբ դարձեալ գտանել զնա: Վասն որոյ ասէ.

Ո՞ իցէ կին, որոյ իցեն դրամք Ժ. (Ղուկ. ԺԵ. 8):

Եւ զի՞ յառաջն զերկուս բնութիւնսն ասաց՝ զհրեշտակաց եւ զմարդկան, վասն որոյ Ճ. (100) ասաց, եւ մի ի նոցանէ մարդն էր, իսկ աստ՝ զմարդկային բնութիւնս միայն ասէ, վասն որոյ Ժ. (10) միայն ասէ, որ ունի Ժ. (10) զգայութիւնս՝ հոգեկանս եւ մարմնականս, յորոց անհնարին է ի միասին կորնչել, բայց մի ի նոցանէ սխալի, քանզի գող է սատանայ այժմ եւ ոչ բռնաւոր, վասն որոյ որպէս գող զմինն տանի, այսպէս եւ սատանայ զմի մարդ կամ զմի ի զգայարանացն պատրէ նախ եւ ապա՝ զայլսն ըստ կարգի:

Եւ զի՞ ի դրամ աւրինակէ զպատկերն իւր, զոր նոր նորոգեաց: Եւ այս եւս ունի պատճառ բազում բաղդատութեամբ իմն:

Ա. Նախ՝ զի դրամն արծաթի լինի եւ ունի յինքն ձեւս գրեալ զպատկեր թագաւորի եւ զանունն. այսպէս եւ մարդն է ի մահկանացուածս եւ նկարեալ ունի յինքն զպատկերն Աստուծոյ, այսինքն՝ զանձնիշխանութիւնն եւ զանմահութիւն հոգւոյն:

Բ. Երկրորդ՝ զի անբաժանելի է պատկերն եւ գիրն յարծաթոյն. այսպէս անքակ է անմահութիւն հոգւոյն եւ անձնիշխան կամքն, վասն որոյ եւ բնաւորեցաւ եւ մարմնոյն զանմահական կեանս ստանալ ի կրկին նորոգմանն:

Գ. Երրորդ՝ զի ժանգ առնու դրամն ի պատճառէ իմիքէ. այսպէս եւ հոգին առնու աղտեղութիւն մեղաց ի ներգործութենէ չարին՝ ըստ այնմ. «Նախանձու բանսարկուին եմուտ [մահ յաշխարհ]» (Իմաստ. Բ. 24):

Դ. Զորրորդ՝ զի դրամն անդրադարձեալ «մարդ» կոչի ըստ գրոյն, եւ «մարդն»՝ դրամ. այսպէս եւ Աստուած մարդ եղեւ, եւ մարդն աստուածացաւ, զի անբաժանելի են ի միմեանց այժմ:

Ե. Հինգերորդ՝ զի դրամն տեսեալ ճանաչեմք զթագաւորին պատկերաւն, որ ի նմա, այսպէս՝ «ԶԱստուած չիք տեսեալ ոք» (հմմտ. Ա. Յովհ. Դ. 12) *ըստ աւետարանչին, բայց միածնաւն, որ է պատկեր աներեւութին Աստուծոյ, ճանաչեմք զԱստուած Հայր, քանզի նա ուսոյց մեզ զնա:*

Զ. Վեցերորդ՝ զի զաւրութեամբ ունի արծաթն զանուն թագաւորին, իսկ յորժամ ընթեռնումք, երեւի ներգործութեամբ. այսպէս

եւ ոք յորժամ ի չար գործսն է, ոչ է պատկեր Աստուծոյ, զի զայն անասնոց արար պատկեր եւ զանձնիշխան կամքն ընդ լծով ախտին հնազանդեցուցեալ, յաղագս որոյ ոչ է նա ներգործութեամբ պատկեր Աստուծոյ: Իսկ յորժամ ի բարի գործսն է, յայտնի երեւի ներգործութեամբ ի բարի գործոցն, թէ պատկեր է նա նախատպին, զի այսքան ամենայն բարի են, այս է ընթեռնուլն:

Է. Եաւթներորդ՝ զի հող ծածկէ զդրամն, եւ այն է կորնչելն. այսպէս՝ ծուլութիւնն զբարութիւն գործոցն կորուսանէ զպատկերն Աստուծոյ, զի հողոյն յատկութիւն է ծուլութիւնն:

Ը. Ութերորդ՝ զի զարծաթ ի հողէն պարզեն եւ յիստակեն, ըստ մարգարէին (հմմտ. Սաղմ. ԺԱ. 7), *եւ ապա յետոյ զպատկերն նկարեն. այսպէս եւ զմարմինս մեր ի հողոյ կազմեալ է Արարիչն, եւ ապա զբանական Հոգին ի նմա եդեալ՝ ըստ այնմ.* «Առ Տէր Աստուած հող յերկրէ եւ սպեղծ զմարդն» (հմմտ. Ծնն. Բ. 7): Եւ կամ. «Նախ ծնանիմք ի մարմնոյ, եւ ապա՝ ի հոգւոյն աւազանի» (հմմտ. Մատթ. Ա. 20):

Թ. Իններորդ՝ զի ամենայն դրամ, յորում գրոշմեալ է պատկերն, միապէս ունի զպատկեր թագաւորին, այսպէս եւ ամենայն հաւատացեալ միապէս պատկեր Աստուծոյ, զի չիք խտիր ոչ արուի եւ ոչ իգի, իսկ անհաւատքն անպատկեր են, զոր այլազգիքն «մուտալաս» կոչեն, այսինքն՝ ձեւով միայն եւ ո՛չ արդեամբք պատկեր Աստուծոյ:

Ժ. Տասներորդ՝ զի արծաթն բնականապէս ունի զպայծառութիւնն իւր, իսկ թէ ոք պղինձ խառնէ ի նմա, ապա նուաղանայ. այսպէս եւ մարդն բնականապէս անմեղ ստեղծաւ յԱրարչէն, իսկ յազգմանէ չարին խամրացաւ զի խառնեաց զորոմն չարութեան ի մէջ ցորենոյն՝ ըստ բանին Տեառն (տե՛ս Մատթ. ԺԳ. 25-30):

ԺԱ. Մետասաներորդ՝ զի բնաւորեալ է արծաթոյ ոչ կարող գոլ թաքուցանել զայն, ինչ որ ի նմա խառնեն՝ պղինձ կամ այլ ինչ. այսպէս եւ ի մարդն եդ բնական Աստուած զխիղճ մտացն, որով ոչ կարէ թաքչել մեղք ի մարդումն՝ ըստ այնմ. «Ոչ ինչ է ի ծածուկ, որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի, որ ոչ ծանիցի» (Մատթ. Ժ. 26):

ԺԲ. Երկոտասաներորդ՝ զի հնարեցան մարդիկ զպղնձախառն դրամ ջլէտալ եւ պայծառ երեւեցուցանել. այսպէս եւ մարդս հնարի կեղծաւորութեամբ ծածկել զմեղսն, որ ամբարեալ է ի հոգին ըստ փիլիսոփային՝ աղքատութիւն կեղծաւորել զհարստութիւն եւ դիմակն նոյնպէս:

ԺԳ. Երեքտասներորդ՝ զի թէպէտ զայս հնարեցան, փութով բացուի այսպէս դրամին, եւ ամենեքեան տեսանեն, եւ է փող. այսպէս եւ մարդն թէպէտ ի կենդանութեան իւրում սակաւ ժամանակս ծածկել զմեղս, սակայն դիպի աւուր, յորում գաղտնիք ամենայն յայտնին՝ ըստ այնմ. «Աթոռք եդան, եւ դպրութիւնք բացան» (հմմտ. Դան. Է. 10), *եւ թէ՝* «Մեզ ամենեցուն յանդիման առաջի, զի ընկալցի [իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի եւ եթէ չար]» (հմմտ. Բ. Կոր. Ե. 10):

ԺԴ. Զորեքտասներորդ՝ զի զաւեր դրամն ոչ ոք ընդունի, մանաւանդ զայն, զոր թագաւորն հրամայէ ոչ ընդունել. այսպէս եւ ի լինել բազում ամաց ի մեղս մարդոյն եւ ներողութեամբն Աստուծոյ յամեալ յոլով ժամանակս՝ թերեւս դարձցի՝ ըստ մարգարէին. «Ոչ կամիմ զմահ մեղաւորին» (հմմտ. Եզեկ. ԺԸ. 32), *իսկ յորժամ ոչ կամի դառնալ, յայնժամ շարժի բարկութիւնն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհաւանութեան, եւ ամենայն արարածոց ատելի լինի, եւ հրեշտակաց եւ ամենայն սրբոց:*

ԺԵ. Հնգետասաներորդ՝ զի յորժամ ի հուր անկանի դրամն, ոչ եւս երեւի պատկերն, որ ի նմա, այսպէս եւ մարդն յորժամ ի դժոխքն անկանի, ոչ եւս է ի համարի մարդկան, զի ոչ է խնամքն Աստուծոյ առ նմայ, այլ՝ որպէս ծառայ բորբոք ցանկութեանցն, թողեալ զաստուածային բորբոքումն սիրոյն. այսպէս եւ Տէրն արդար դատաստանաւ հատուցանէ մարդկան, ըստ վկայութեան խղճմտանաց իւրոց: Արդ, այս ամենայն պատահեալ բնութեանս մերում եւ անկեալ ի դժոխս: Իսկ Տէրն մեր եւ թագաւորն Աստուած կամեցաւ նորոգել զպատկերն իւր, խոնարհեալ ած աւել տան աշխարհիս տնաւրէնութեամբ մարդեղութեանն իւրոյ կամ սքանչելագործութեամբն ի մի վայր ժողովեաց եւ, գտեալ զմարդն ժանգոտեալ եւ մեղաւք լցեալ, զոր եւ սրբեալ, մաքրեաց աւազանաւն եւ եհան յառաջին պատիւն ի պատկերակցութեանն իւր, վասն որոյ եւ ուրախակից եղեալ հրեշտակք փառք ի բարձունս առաքեն նմա վասն փրկութեան մարդկան: Այսպէս եւ եկեղեցւոյ ետ զաւրութիւն զհեռացեալն յինքենէ խոնարհութեան աւելաւն՝ ժողովել ի ծոց իւր եւ փութով գտանել ճրագիւ մարմնոյ աստուածութեանն նորայ՝ աւրինակ տալով զնա, որ վասն մեր կրեաց զամենայն, զի դարձցուք եւ կեցցուք:

Եւ քանզի ճրագ անուանէ զմարմին իւր, եւ այս ըստ բազում եղանակի:

Ա. Նախ՝ զի ճրագն է խաւար առանց լուսոյ եւ սեւադէմ. այսպէս եւ մարդկային բնութիւնս, զոյր նախքան զմարդանալն Քրիստոսի խաւարեալ մեղաւք եւ սեւացեալ անաւրէնութեամբ:

Բ. Երկրորդ՝ զի ճրագին մին մասն վառի լոյս. այսպէս եւ Բանն Աստուած, ոչ զբոլոր մարդիկ էառ միաւորութեամբն, այլ՝ մի անհատ մարմին միաւորեաց բանական հոգւովն ընդ լոյս աստուածային բնութեանն:

Գ. Երրորդ՝ զի ճրագն յանկարծակի երեւի ի խաւարեալ տան. այսպէս եւ Բանն Աստուած յանկարծակի եկն եւ մարմնացաւ, եւ զլոյս փառաց իւրոց ծագեաց աշխարհի՝ ըստ այնմ. «Յանկարծակի եկեսցէ Տէր ի տաճար ուխտին» (հմմտ. Մաղաք. Գ. 1), եւ թէ՝ «Որք նստէին ի խաւարի [եւ ի ստուերս մահու], լոյս ծագեցաւ նոցա» (Մատթ. Դ. 16):

Դ. Զորրորդ՝ զի Տէրն ասէ, թէ ճրագն ի վերայ աշտանակի դնի եւ լոյս տայ ամենեցուն, որ ի տան իցեն. այսպէս եւ Տէր մեր բարձրացաւ ի խաչին, եւ անտի ծագեաց լոյս համապայծառ որդւոց մարդկան՝ ըստ այնմ. «Յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ [իս]» (Յովհ. ԺԲ. 32):

Ե. Հինգերորդ՝ զի ի վառել ճրագին փախչի խաւարն ի տանէ, այսպէս ընդ մարմնանալ Բանին Աստուծոյ փախեաւ սատանայ ի յաշխարհէս՝ ըստ այնմ. «Իշխան աշխարհիս [այսորիկ] ընկեսցի արտաքս» (Յովհ. ԺԲ. 31):

Զ. Վեցերորդ՝ զի ի լուսոյն, որ ի տան վառի, ամենեքեան հաղորդին՝ մարդ եւ անասուն եւ գազան. այսպէս եւ ընդ իջանել Տեառն մերոյ ի դժոխս, ոչ ոմանք լուսաւորեսցեն, այլ՝ զամենեսեան եհան՝ ըստ այնմ. «Որք ի կապանս էք, ելէք, եւ որք ի խաւարի՝ յայտնեցարուք» (հմմտ. Եսայ. ԽԹ. 9), *եւ թէ՝* «Տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ մերոյ» (հմմտ. Ղուկ. Գ. 6):

Է. Եաւթներորդ՝ զի մինչդեռ ոչ է վառեալ ճրագ ի տանն, ոչ գիտեն՝ զի՞նչ գործի ի տանն. այսպէս եւ մինչեւ ի մարմնանալ Բանին ոչ կարացին իմանալ զգրեալսն ի մարգարէիցն՝ ըստ այնմ. «Տեսանելով տեսցեն եւ մի՛ տեսցեն» (Մատթ. ԺԳ. 14): *Իսկ Տեառն մերոյ գալստեամբն յայտնեցան միտք գրոց եւ գործոց, որպէս ասի յԱւետարանին.* «Յայնժամ երաց զմիտս նոցա՝ իմանալ զգիրս» (Ղուկ. ԻԴ. 45):

Ը. Ութերորդ՝ զի լոյս առանց պատրոյգի ոչ երեւի, եւ պատրոյգ առանց լուսոյ ոչ վառի. այսպէս Բանն Աստուած առանց մարմնոյն

ոչ է Քրիստոս, եւ ոչ մարմինն առանց Բանին միաւորութեանն՝ Աստուած:

Թ. Իններորդ՝ զի նուազ աչքն նուազ տեսանէ զլոյս ճրագին եւ պայծառն՝ առաւել. այսպէս եւ հերձուածողն նուազ ունի հաւատս, վասն որոյ բաժան կարծէ զԲանն ի մարմնոյն, իսկ ուղղափառ հաւատացեալն ըստ ուղիղ տեսութեան հաւատոյն՝ ուղիղ տեսանէ զԲանն միացեալ ի մարմնի, որպէս եւ է իսկ՝ ըստ այնմ. «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց [ի մեզ]» (Յովհ. Ա. 14):

Ժ. Տասներորդ՝ զի յորժամ իր ինչ կորնչի ի խաւարչտին տեղւոջ, ճրագիւ գտանի. այսպէս եւ մարդկային բնութիւնս կորեալ էր ի խոր խաւարի, վասն որոյ վառեաց զմարմինն Բանն Աստուած պայծառ լուսով աստուածութեամբն եւ ելեալ ի խնդիր եգիտ, որպէս ասացաւ ի վերոյ:

Իսկ թէ զիա՞րդ ի «ճրագ» առակեաց զմարմինն եւ ոչ [յ]արեգակ կամ ի լուսին: Այս է, զի ճրագն մերձ լինի մեզ, վասն որոյ զայն ետ աւրինակ, որ մերձ մեզ էր, իբր թէ ինքն այնպէս մերձ եկեալ, որպէս ճրագն եւ ոչ է հեռու, որպէս արեգակ եւ լուսին: Նմանապէս եւ եկեղեցի վառէ ճրագ զվարդապետսն, յորժամ եւ պիտոյ իցէ, վասն զի մին մասն է ճրագին, որ լուսաւորէ եւ այն առանց տարակուսանաց, այսպէս եւ ի վարդապետսն բանն ուղիղ է, զի թէպէտ եւ ինքն վատթար եւ սեւացեալ լինի գործով, ոչ կարէ զգործն իւր ուսուցանել, այլ զայն լոյս շնորհացն, որ յԱստուծոյ տուեալ է ի բերան նորա:

Իսկ զի՞ տան նմանեցուցանէ զաշխարհս եւ զեկեղեցի, որ ի քարանց: Եւ այս վասն բազում պատճառի:

Ա. Նախ՝ զի տունն չորեքանկիւնի լինի. այսպէս եւ աշխարհս Դ. (4) կողմ ունի. արեւելք եւ արեւմուտք եւ այլն: Եւ ի նոյն ձեւ չինի եկեղեցի:

Բ. Երկրորդ՝ զի ի վերայ հիման չինի տուն, այսպէս՝ լերինք եւ բլուրք հիմունք են երկրի՝ ըստ այնմ, որ ասէ Յոբ. «Հիմունք երկրի սարսեցին» (հմմտ. Յոբ Թ. 13)*: Եւ կամ դարձեալ՝ աշխարհ ի վերայ հիման Աստուծոյ է չինեալ՝ ըստ այնմ.* «Հաստատեաց զերկիր ի վերայ հաստատութեան իւրոյ» (Սաղմ. ՃԳ. 5)*, եւ եկեղեցի ի վերայ հիման հաւատոյ, զոր ոչ կարացին շարժել հեղեղք:*

Գ. Երրորդ՝ զի մասամբ ժողովեալ քար եւ փայտ եւ այլն, եւ ապա կոչի տուն. այսպէս յերկնէ եւ յերկրէ, եւ որ ի մէջ սոցա պա-

բառեալ են զմիմեանց բնութիւնք, է աշխարհ, քանզի այս է սահման սորա՝ ասէ փիլիսոփա. եւ եկեղեցի ի բազում խորհրդոց եւ ի շնորհաց պայծառանայ, վասն որոյ ոչ ունի գեղեցկութիւն եկեղեցի, որ ոչ ունի վարդ եւ զայլսն:

Դ. Զորրորդ՝ զի ի ձեռն ճարտարի չինի տուն. այսպէս եւ ի ձեռն ամենահնար իմաստութեանն Աստուած չինեաց զաշխարհս՝ ըստ այնմ. «Ասպուած իմաստութեամբ իւրով հիմունս արկ [երկրի]» (Առակ. Գ. 19): *Նմանապէս եւ զեկեղեցի նա չինեաց:*

Ե. Հինգերորդ՝ զի հաստատ է շինութիւն տանն. այսպէս եւ Աստուած զաշխարհ հաստատեաց, զի «մի սասանեսցի յանիրեան»,- *ասաց մարգարէն (Սաղմ. ՃԳ. 5), նմանապէս եւ կազմուածք տաճարին Աստուծոյ:*

Զ. Վեցերորդ՝ զի ձեղունք եւ տանիս գոն տանն. այսպէս եւ աշխարհ ձեղունք ունի զէ. (7) գաւտիսն եւ տանիս, զՋրեղէն կամարն՝ ըստ այնմ. «Խորք որպէս [զգեստ] վերարկու է նորա» (Սաղմ. ՃԳ. 6), *եւ թէ՝* «Արկեր ի վերայ ջուրց զվերնայարկս նորա» (Սաղմ. ՃԳ. 3)*. յայս միտս եւ եկեղեցի չինեցաւ ներքին կամարաւքն եւ վերին գումբեթաւն:*

Է. Եաւթներորդ՝ զի տուն կամարաձեւ կապի, եւ մարգարէն [ասէ]. «Զգեցեր զերկինս, որպէս խորան» (Սաղմ. ՃԳ. 2). եւ եկեղեցի ի նոյն ձեւ կիսաբոլոր կամար կապի:

Ը. Ութերորդ. զի զտուն վասն հանգստեան չինի, այսպէս եւ աշխարհ վասն բնակութեան կենդանեաց չինեցան:

Թ. Իններորդ. զի ի տունն ննջեն եւ յառնեն մարդիկ. այսպէս եւ յաշխարհի մեռանին մարդիկ եւ աստ դարձեալ յառնեն ի մեռելոց՝ ըստ այնմ. «Խաղաղութեամբ քո յայս եւ ի սոյն ննջեսցուք եւ զարթիցուք» (Սաղմ. Դ. 9)*: Յայս միտս ի դուռնս եկեղեցւոյ թաղումք, զի ի նորին խորհուրդ յառնիցեմք:*

Ժ. Տասներորդ՝ զի գոյ հնար զհին տունն քակել եւ դարձեալ՝ նորոգել, այսպէս եւ ի հանդերձեալն կրկնակի նորոգեսցէ զաշխարհս Տէրն՝ ըստ այնմ. «Եղիցին երկինք նոր եւ երկիր նոր» (Ես. Կե. 17)*, զոր Տէր նորոգեսցէ, այսպէս եւ փոխանակ այսմ եկեղեցւոյ՝ վերինն Սիոն նորոգի ի վայելումն արժանաւորաց իւրոց, յորոց յայսցանէ յայտ է ասելն Տեառն, մտանել ի տունս յայս եւ լուսաւորել զմեզ* (հմմտ. Եփես. Գ. 9):

Արդ, այսքան բարերարութիւն ցուցեալ Տէրն մեր եւ այլս բազումս, զոր կամիմք յառաջիկայդ ուսանել: Եւ արդ, նա ստեղծաւղ

է գոյիցս, կարող է աւգնական լինել մեզ եւ սրբել զմեզ ի ժանգոյ մեղացն: Զի թէ զբոլոր ընութիւնս ազատեաց ի մեղաց, յայտ է, թէ եւ զմեզ կարող է արդարացուցանել, բայց այսքան եւեթ, զի մեք կամակար մտաւք զանձինս խոնարհեցուսցուք ի ներքոյ սրբութեան եւ ապաշխարութեան, զի մինչ դեռ չիք մեր աղաղակել, լուիցէ մեզ, եւ մինչդեռ չիք ինչ գործեալ, նա ձեռնկալու լինի մեզ: Իսկ արդ, այսքան ողորմութեան շնորհք եցոյց մեզ Տէր, զի մի՛ յաւիտենական կորստեանն պատահիցիմք, զի չիք մեր ապաւէն բաց ի նմանէ, վասն զի բազմագութ է եւ անոխակալ, եւ անյիշաչար եւ բազում անգամ ողորմի, եւ թէեւ Հ.(70)եկին մեղուցեալ իցեմք, զամենայն թողու, վասն որոյ մի զանյիշաչարութիւն նորա պատճառս առնելով անդարձ լիցուք, այլ յիշեսցուք եւ զպատուհասսն եւ, երկնչելով ի նմանէ, երկիւղիւ վարեսցուք զկեանս մեր եւ արժանի լիցուք մասին սրբոցն ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, շնորհաւք եւ ողորմութեամբ Հաւր նորին եւ Հոգւոյն Սրբոյ, որին փառք [յաւիտեանս. ամէն]:

ՎԱՍՆ ԱՆԱՌԱԿ ՈՐԴՒՈՅՆ

Ղուկ. ԺԵ. 11-32

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Եւ ասէր. «Այր ոմն ունէր երկուս որդիս, եւ ասէ կրտսերագոյնն ցհայրն. «Հա՛յր, տուր ինձ մասն, որ ինչ հասանի յ[ը]նչիցդ»: Իսկ նա բաժանեաց նոցա զգոյսն (հմմտ. Ղուկ. ԺԵ. 11):

Որպէս որ յառաջ երկու առակքն յորդորեն յապաշխարութիւն զմեղուցեալս, նոյնպէս եւ առաջիկայս. իսկ զերիցագոյն որդին եւ զկրտսերագոյն ի յերկուս զաւրութիւնս բանական հոգւոցն բաժանելի է, եւ դեռ եւս ոչ մեղուցեալս զորդին երիցագոյն, իսկ զորդին կրտսերագոյն իմ մեղուցեալս, որք վերջացան ի փառացն Աստուծոյ: Ոմանք ասացին՝ որդի երիցագոյն՝ զիսրայեղական ժողովուրդն, եւ որդի կրտսերագոյն՝ զհեթանոսական ժողովուրդն, բայց այս ոչ թուի ինձ ճշմարիտ, քանզի ցերէց որդին ասէ հայրն որդեսէր.

Եթէ դու, որդեակ, հանապազ ընդ իս ես, եւ ամենայն, որ ինչ իմ է, քո է (հմմտ. ԺԵ. 31):

Իսկ Իսրայեղացիք, բազում անգամ յանցուցեալ, ոչ եղեն ընդ Հաւրն, եւ հեթանոսաց ժողովուրդն ո՛չ էր երբէք առեալ մասն ի Հաւրէն եւ կորուսեալ, այլ որպէս ասացին, «երէց որդին» զհոգիս նշանակէ, որք ոչն մեղանն, եւ «կրտսերագոյն»՝ զհոգիսն, որք մեղանն եւ ապաշխարենն: Այլ ասիցէ ոք. «Վասն է՞ր կրտսերագոյն ասացան «հոգիք անառակացն», եւ երիցագոյն՝ «հոգիք արդարոցն»: Առ այս ասացից, եթէ վասն անառակութեանն եւ վասն բաժանելոյ յառաքինութենէ եղբաւրն իւրոյ «կրտսեր» կոչեցաւ, այլ ոչ ըստ ժամանակի: Եւ եթէ որպէս ոք կարծիցէ ասել, հա՛յր, այժմ զփրկիչն կարծեմք, որ ասացն ցաշակերտսն. «Որդեակք իմ», եւ դարձեալ՝ «Քաջալերեա՛ց դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ» (Մատթ. Ժ. 22):

Գնաց,- ասէ,- յերկիր հեռաստան (հմմտ. ԺԵ. 13):

Ի յարդարութենէ եւ յերկնային կենդանութենէն յերկրային ցանկութիւնս եւ զբաղումն խաւարային աշխարհիս այսորիկ:

Եւ ցրուեաց զամենայն գոյացութիւնս իւր կելով անառակապէս (հմմտ. ԺԵ. 14):

Հայրն աւանդեաց նմա զինչս առաքինութեան, իսկ նորա զհրամանով հաւրն զանց արարեալ, կորոյս զամենայն առաքինութիւնն, որպէս եւ ես որ շարագրեցիս, ուսեալ զամենայն գործ աստուածա[յ]ին առաքինութեանն ի Քրիստոսէ եւ յաշակերտաց նորայ արտաքսեցի անառակական գործովք վարեալ:

Եւ եղեւ սով սաստիկ ի քաղաքին յայնմիկ (հմմտ. ԺԵ. 14):

«Սով եղեւ»՝ լսել զբանն Տեառն եւ խնամակալութեանն Աստուծոյ, զի պակասեալ եւ նուազեալ յիւրոցն դարձցի առ Հայրն, ցանկացեալ Հաւրն մարդասէր հեզութեանն:

Եւ նա սկսաւ պակասել (հմմտ. ԺԵ. 14):

Այսինքն՝ եթէ ի մոռացումն եկն իւրոյ ցանկութեանն:

Եւ գնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց գաւառին այնորիկ (հմմտ. ԺԵ. 15):

«Քաղաքացիք գաւառին», որ հեռի է յերկնաւոր գաւառէն՝ սատանայ եւ դաշնաւորք նորայ, ասաց:

Եւ նա յղեաց զնա յանդաստան իւր արածել խոզս (հմմտ. ԺԵ. 15):

«Անդաստան» եւ ագարակ սատանայի, ուր են տունկք, զորս ոչ տնկեաց Հայրն երկնաւոր, եւ «խոզք», որ զմարգարիտն կոխեն եւ անցանեն, նա արածէ խոզս, որ զցանգութիւն մարմնական կատարէ եւ թաւալի ի ժանտահոտութիւնս ախտից մարդկան, այլ եւ այնպիսին, որ պղծովն հոգւով լցեալ է եւ սերմանէ ի մարմին, այլ ոչ ի հոգի:

Եւ ցանգայր յագենալ յեղջերէն, զոր ուտէին խոզքն (հմմտ. ԺԵ. 16):

Բանական հոգի ցանկանայ վարդապետութեան եւ բանից թէպէտ եւ ոչ բարի, սակայն որ եւ իցէ բան վարդապետական. «եղջեր»դ այդ պտուղ քաղցր է եւ պարարէ զմարմին, թէպէտ եւ կղկղանաց առնէ արգելումն, եւ նշանակէ զբանս հիւթասիրաց եւ մարմնասի-

բաց, որք ասեն զմարմնական ցանկութիւնս բարի ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց:

Եւ ոչ ոք տայր նմա (ԺԵ. 18):

Բարեյուզաց զխախտեալ ուսմունս ոչ աւանդե[ցին] յետինք, զի մի յանդիմանեսցին:

Եւ յինքն եկեալ՝ ասաց (հմմտ. ԺԵ. 17):

Որպէս թմբրեալ եւ զթմբրութիւն ի բաց ընկեցեալ, յիշէ երանելութեան հաւրն, վարձկան կոչի, որ ծառայէ ումէք կամ Աստուծոյ եւ կամ ա՛յլ ումէք. եւ ծառայէ ոչ վասն սիրելոյ զնա, այլ զի փոխանակ ծառայութեանն վարձուց ակն ունիցի:

Եւ ասացից ցնա. «Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո» (ԺԵ. 18):

Յերկնաւորսն մեղայ, զի թողեալ զերկնաւորացն գործս, յերկրաւորս քարշեցայ. «առաջի քո», զի անցեալ զպատուիրանաւ քով, ընդ սատանայի յարեցայ:

Եւ յարուցեալ գնաց առ հայրն իւր (ԺԵ. 20):

Ընդ ասել բանին եւ զգործսն կատարէր. զվերջինսն մոռացեալ եւ յառաջինսն ձգեալ:

Եւ դեռ եւս նորայ հեռի գոլով տեսեալ հայրն՝ գթացաւ եւ ընդ առաջ ընթացեալ, անկաւ զպարանոցաւն նորա եւ համբուրեաց (հմմտ. ԺԵ. 20):

Դեռ եւս հեռի էր, վասն զի ի յանցանացն ոչ էր թաւթափեալ. եւ զի զղջացեալ փութայր առ Հայրն, տեսանէր զնա եւ անկանէր ի վերա[յ] պարանոցի նորայ, որ ազատեալն էր այն ինչ ի լծոյ սատանայի. տայր նմայ եւ համբոյր, նշանակելով զմիաւորութիւն առ որդին:

Ասէ հայրն ցծառայս իւր. «Վաղվաղակի, հանէք զպատմուճանն առաջին եւ զգեցուցէք դմայ, եւ տուք մատանի ի ձեռս դորա եւ կաւշիկս՝ յոտս դորայ (հմմտ. ԺԵ. 22):

Առաջին «պատմուճան»՝ զառաջին զարդ հոգւոյն, որով զարդարէ եւ ուրախացուցանէ զհոգիս ապաշաւելոց եւ ի բաց ընկելոց զտրտմական անզարդութիւն յանցանաց. «մատանի»՝ զնկարա-

գիրն, որ զգործական հոգւոյն զարդարէ. «կաւշիկս»՝ ոչ զեգիպտացւոցն, զոր հրամայէ ի բաց ընկենուլ այնոցիկ, որ ելանեն եւ գնան ի վերա[յ] սրբո[յ] երկրին, այլ որ ի պատրաստութիւն սրբոյ Աւետարանին կազմեցան:

Եւ ածէք զզուարակն պարարեալ՝ զենէք, զի կերեալ ուրախասցուք (հմմտ. ԺԵ. 23):

«**Զուարակ պարարեալ**» *բանն ողջախոհ վարդապետութեան, կամ ինքն իսկ Քրիստոս՝ բան եւ իմաստութիւն Աստուծոյ, որպէս եւ Սողոմոն ասէ.* «Իմաստութիւն շինեաց իւր տուն եւ կանգնեաց սիւնս եւթն եւ զեն զգենլիս իւր» (Առակ. Թ. 1), *եւ որ ի կարգին է:*

Իսկ որդի նորա երիցագոյն էր յագարակի (հմմտ. ԺԵ. 25):

«**Որդին երէց**», *որպէս եւ ասացաւ բանական բնութեանս, որ ոչ մեղուցեալ է ի բարի եւ ի պարարտ անդաստանի՝ եղեւ գործաւղ անդաստանի բարւոյ, հակառակ անդաստանին, որ ունէր զխոզսն:*

Եւ որպէս գայր մերձեցեալ ի տուն, լուաւ զձայն երգոց եւ պարուց (հմմտ. ԺԵ. 25):

Երգ երաժշտականք են եւ համաձայնք եւ կրկնաձայնք. արդ, պարտ էր ի դառնալ որդւոյն առ հայրն եւ ապաշխարել, երգոց համաձայնից լսել, եւ ոչ հակառակա[ւ] ձայնից. եւ երգք համաձայնք են աստուածաբանութիւնք, գովեստք, աւրհնութիւնք եւ ա՛յլ այսպիսի զանազանս, որ կատարի ի փառս Աստուծոյ:

Ահայ այսչափ ամս ծառայեցի քեզ, եւ ոչ երբէք զհրամանով քո զանց արարի, եւ ինձ երբէք ոչ եփուր ուլ մի (հմմտ. ԺԵ. 29):

Գիտա, զի ոչ է անգործ եւ դատարկ Սուրբ Հոգւոց զաւրութեանցն կենցաղք, այլ ունին ի բնութիւնն իւրեանց պատշաճ ծառայութիւն. «**իսկ ուլ մի ինձ ոչ եփուր**». *վասն զի զենումն ուլոյ հոգւոյ է բանականի, որ բարձրացուցանէ զմեղուցեալն եւ հանէ ի սուրբ կենդանութիւն. եւ ոչ վասն զի ոչ մեղուցեալ երէց որդին, վասն այնորիկ եւ ոչ ուլոյ պիտենայր ի զոհ եւ ի զենումն:*

Իսկ յորժամ եկն որդիս քո այս, որ կերաւ զկեանս քո ընդ պոռնիկս ընկալար (հմմտ. ԺԵ. 30):

Բանքս վստահելոյ են յառաջախորհութիւն. «**պոռնիկք**»՝ *զանազան չարութիւնք նիւթական եւ մարմնական կենցաղոյս:*

Որդեակ, դու հանապազ ընդ իս ես (ԺԵ. 31):

Վկայութիւն հաւրն, եթէ երբէք ոչ մեկուսացաւ ի բարւոյն:

Ուրախանալ պարտ է եւ խնդալ, զի եղբայրս քո այս մեռեալ էր եւ եկաց, կորուսեալ էր եւ գտաւ (ԺԵ. 32):

«**Մեռեալ**»՝ *վասն զի զկենարար գոյացութիւնն ցրուեաց, կելովն անառակութեամբ.* «**կորուսեալ**», *վասն զի ըզլայն եւ ընդարձակ ճանապարհն գնայր, զտարաւղն ի կորուստն. իսկ ի մտաւ ածել զալ առ հայրն, կենդանացաւ եւ գտաւ ի բաց եղեալ զմեռելութիւն եւ զկորուստն:*

ԻԳՆԱՏԻՈՍ

Ասէ. «Առն միոջ էին երկու որդիք. Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. «[Հա՛յր], տո՛ւր ինձ բաժին, որ անկանի յընչիցդ»: Եւ նա բաժանեաց նոցա զկեանսն (Ղուկ. ԺԵ. 11-12):

Դէմք առակիս առ ամենակալ բնութիւն արարչին Աստուծոյ հայի: Իսկ «**առն**» *անուամբ գնա նշանակել՝ կարգ բանին զայն վայելչական ունի, զի որով արժանացոյց զարարածս որդիս անուանել, նովին եւ զՀաւրն ամենակատար բարձրութիւնն խոնարհեցուցանէ ի մերս.* «Եւ ասէ. «Առն միոջ էին երկու որդիք»: *Եւ արդ զո՞րս պարտ է իմանալ «երկուս որդիս»: Ոմանց թուեցաւ զարդարս եւ զմեղաւորս ասել, այլ որ զայս ուղիղ դատեցան ասել համաւրէն՝ ի վերայ ամենայն բանիցն կարգաւ ոչ կացին, առ որս պարտ է հայել անվրէպ, զի ամենայն ասացեալքն պատշաճ ունիցին զթարգմանութիւնն: Իսկ առ արդարս եւ մեղաւորս ասել՝ զի՞նչ յայտնութիւն ունիցի այն, թէ՝ երէց որդին յանդաստանէ եկեալ՝ լուաւ զձայն երգոցն եւ բարկացաւ եւ ասելն ցհայրն, թէ՝*

«Երբէք զպատուիրանաւ քո ոչ անցի, եւ ուլ մի ոչ եփուր ինձ եւ անառակիդ զեներ զեզն պարարակ» (հմմտ. ԺԵ. 30-31):

Եւ արդ, ո՞վ ոք յարդարոց իցէ, որ ունիցի ասել Աստուծոյ, թէ՝ «**Երբէք զպատուիրանաւ քո ոչ անցի**»: *Զի ահաւասիկ.* «Ամենեքեան մե-

դան եւ նուազեցան ի շնորհացն Աստուծոյ» (Հռոմ. Գ. 23), *ըստ առաքելոյն, եւ ամենեքեան կարաւտ էին Քրիստոսի պատարագին եւ ձրի արդարութեանն: Եւ ո՞վ ոք է յարդարոց, որ իւր ոչ համարի զմահն Քրիստոսի, զի ահաւասիկ, որ կարի արդարս պահեցին զանձինս, առանց պարտեաց ոչ են: Նա, զի եւ դատակնիք յանցանացն ի վերայ ամենեցուն անկաւ՝ ըստ այնմ՝* «Թագաւորեաց մահ յԱդամայ մինչեւ ցՄովսէս եւ ի վերայ չյանցուցելոցն՝ ըստ նմանութեան յանցուածոցն Ադամայ» (Հռոմ. Ե. 14): *Արդ, «մինչեւ ցՄովսէս» ասելն զայն յայտնէ, թէ անդ զաւրացան խորհուրդք գալստեանն Քրիստոսի եւ բառնալոյ զթագաւորութիւնն մահու: Այլ պարտիքն Ադամայ էր ի վերայ ամենայն ծննդոց նորա, եւ այսպէս Քրիստոս ի վերայ արդարոց եւ մեղաւորաց մեռաւ: Դարձեալ եւս ասելի է, թէ՝ ահաւասիկ Ադամ առաջին մարդն յանցաւոր գտեալ եւ ոչ ունէր զոք երիցագոյն, քան զինքն յարդարութեան կացեալ, եւ զիա՞րդ առ արդարս եւ մեղաւորս այս տեսեալ ստուգութիւն ունի: Ուստի պարտ է մեզ խնդրել զայն, որ առանց ընդդէմ ինչ լինելոյ տայ զիմաստս թարգմանութեան բանին: Արդ, է ասել զայս առանց ամենայն կարծեաց, թէ ըստ որում առաջին աւրինակաւքն հովիւ զանձն եցոյց եւ ոչխար՝ զհրեշտակս եւ զմարդկան ազգ, եւ ի թուոյ հարիւրոցն, որ կացին յիւրեանց պատիւն, մոլորեալս զմեզ, եւ դարձեալ՝ դրամս տասն, որ ունէր, զնոյն զհրեշտակսն եւ զմարդիկ, եւ ի տասանցն թուոյ՝ կորուսեալ մարդկան ազգ: Ըստ նմին եւ այսու եւս առակաւ պատիւ դնէ ծառայական բնութեանս եւ անուանէ որդիս Աստուծոյ, այնմ, որ արարիչ է բնութեամբ*[1]*: Եւ երէց են հրեշտակք վասն ժամանակին, զի նախ գոյացան, քան զամենայն երեւելի արարածս եւ վասն պատուոյն բարձրութեան, որպէս եւ գրեալ է վասն մարդկան.* «Փոքր ինչ խոնարհ արարէր զնա, քան զհրեշտակս քո» (Սաղմ. Ը. 6, Եբր. Բ. 7): *Արդ, զայս առաջի եդեալ՝ ամենայն ինչ յարմար եւ ուղիղ ունի զտեսութիւնն: Արդ,* «Ասէ կրտսերն ցհայրն. «Տո՛ւր ինձ բաժին»: *Եւ թէ զի՞նչ խնդրեալն իցէ, ոչ եթէ գոյր ինչ ասել, այլ զէմք են առակի: Եւ այսպէս պահանջէ կարգ բանին, վասն որոյ ինքն ըստ որում արար եւ բաժանեաց, որպէս որդւոց. զամենայն ինչ, զոր ստացաւ արարչութեամբ եւ ետ իմանալեացն զիմանալի աշխարհն՝ ի բնակութիւն եւ ի ժառանգութիւն, իսկ զգալեացս մեզ, որոշեաց*

[1] ԻՏ բնութեանս

զդրախտն ի բնակութիւն՝ տեղի ամենաբարի, անկարաւտ, անմահ եւ անապական: Արդ, զայս ընկալեալ կրտսերոյն յամենառատ պարգեւատուէն՝ ոչ պահեաց, այլ ի կողմն եղեալ նենգաւոր աւձին, կամեցաւ մեծ ինչ ստանալ եւ, զոր ունէրն, կորոյս: Աստուածանալ ցանկացաւ եւ անաստուած կալ ի դրախտին անդ, եւ ի փառացն, զոր ունէր, մերկացեալ գտաւ:

Եւ այս է, զոր ասաց.

Յետ ոչ բազում աւուրց, ժողովեալ զամենայն կրտսերոյն,գնաց յաշխարհ հեռի (ԺԵ. 13):

«**Յետ ոչ բազում աւուրց**» *ասէ՝ յայտ արարեալ, թէ ոչ եկաց ժամանակ ինչ յայնպիսի գրգանս վայելչութեան դրախտին փափկութեան, այլ ի սակաւ աւուրս վաղվաղակի անց զպատուիրանաւն: Եւ այս է* «**գնալն յաշխարհ հեռի**», *վասն զի չիք ինչ տեղի բնաւ ուրեք հեռի յԱստուծոյ, զի՝* «Թէ ելանեմ յերկինս, անդ ես, - ասէ, - եւ թէ ի դժոխս իջանեմ, եւ անդ մերձ ես, եւ թէ թեւաւք թռուցեալ յեզերս ծովու անկանիցեմ, եւ անդ ձեռն քո դիրէ ինձ» (Սաղմ. ՃԼԸ. 8)*: Վասն որոյ չիք տեղի, որ որոշէ զմեզ յԱստուծոյ բայց*[1]*՝ ի մեղաց, ըստ այնմ՝* «Մեղք մեր որոշեն ի մէջ ձեր եւ յԱստուծոյ» (Ես. ԾԹ. 2)*: Արդ, այսպէս աւտարացաւ յԱստուծոյ, որ աստուածանալն կամեցաւ աւձին գործակցութեամբն եւ մերկացեալ ի լուսոյն, որով ծածկեալ էր, ամաւթալից եղեալ, կորանայր եւ ի մէջ ծառոցն ծածկեալ՝ թաքուցանէր զանձն: Աստանաւր հասանէ ի վերայ նորա դատակնիք մահու եւ, մահկանացու լեալ, եկան, արձակեաց զնա ի տեղւոջէ անմահիցն եւ ընկէց ի տեղիս յայս մահկանացուաց, որք ընդ ապականութեամբ անկեալ են: Արդ, յայս անկեալ, ոչ եկաց ի պարտիս առաջին սխալանացն, այլ յաւել եւս անբարշտել առ բարեգործն Աստուած, մինչեւ, ամենայնիւ յիմարեալք ապշութեամբ, անկաք ի մարդկային եւս մտաց: Արդ, զայս եդաք, զի ընդ ամենայն բնութիւնս ծննդոցն Ադամայ, իբրեւ ընդ միում անձին են բանք, վասն խոտորելոյ յուղիղ աւանդիցն, որ դրութեամբ է եւ ունակութեամբ, որով ոչ հնարեցաւ բերել զաւրէնս արարչին: Յաղագս որոյ ասէ.*

Անդ վատնեաց զամենայն ինչս իւր, զի կ[ե]այր անառակութեամբ (ԺԵ. 13):

[1] ԻՏ բաց

«Վարեալ ընչիցն»՝ *աստուածային շնորհացն բնաւ առ ի նմանէ պակասելն է: Եւ զի զառաջինն թէպէտ եւ ել ի դրախտէն եւ, անմահ գոլով, մահկանացու եղեւ, սակայն մնաց առ նա փայլակն շնորհաց Հոգւոյն, զոր թէ պահեալ էր մաքուր վարուք, երանելի ոմն էր, ըստ որում՝ Աբէլ եւ Ենովս եւ Ենովք եւ Նոյ: Բայց զի անառակ վարուք եւ զայն եւս կորոյս, յաղագս որոյ կարի*[1] *հէգ եւ թշուառական գտաւ՝ թափուր յամենաբարի պարգեւաց հոգւոյն:*

Եւ իբրեւ սպառեաց,- ասէ,- զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին յայնմիկ (ԺԵ. 14):

«Սպառել զամենայնն»՝ *է պակասելն ի գործոց բարեաց եւ անկանելն ի շնորհացն Աստուծոյ: Յետ այսորիկ եւ գիտութիւն ճշմարիտ աստուածածանաւթութեանն բարձաւ: Եւ այս է «սովն սաստիկ», զի չիք ինչ այլ սով դառնագոյն եւ տաժանելի, իբրեւ զհոգւոցն*[2] *սով, որ ի պակասութենէ աստուածային գիտութեանն եւ վարուց առաքինութեանն է: Արդ, կարի անհնարին նեղութիւն է հոգւոցն սով, որ թէպէտ եւ յախտիցն յիմարեալ, կրեն զնա եւ իմանալ ոչ կարեն, սակայն տագնապին անբերելի սովովն հաշտեալք: Վասն որոյ ոչ «սով» սոսկ ասաց, այլ «սով սաստիկ»՝ ըստ այնմ՝* «Տաց ձեզ,- ասէ,- ոչ սով հացի եւ ոչ ծարաւ ջրոյ, այլ սով՝ լսելոյ զբանն Աստուծոյ» (Ամովս Ը. 11): *Եւ յաղագս այսր սովոյ տագնապի՝ չքաւորեալ յամենապատիկ շնորհացն.*

Գնացեալ յարեցաւ ի մի ոմն քաղաքացեաց աշխարհին այնորիկ (հմմտ. ԺԵ. 15):

Ո՞ ոք արդեաւք իցեն առ որս յարեցաւ. ահա յայտ է այս, զի ի ստոյգ գիտութենէն Աստուծոյ վրիպեալ մարդոյն, յարեցաւ ի դեւսն: Վասն զի այսպէս՝ իբրեւ ախտիւ մեղաց լցին դեւքն զբնութիւնս եւ խաւարաւն անգիտութեան աւտարացուցին յԱստուծոյ: Սկսան այնուհետեւ պատիր խաբէութեամբ երեւումն տալ արհաւրաց եւ այլ եւս բազմապատիկ երեւմունս սնոտիս, որով հաւանեցուցին զմարդիկ՝ ծառայել նոցա: Եւ այն, որ ունկնդիր եղեւ՝ ուտել զպտուղ ծառոյն եւ աստուածանալ, ի պաշտաւն առ[3] *եւ աստուածացոյց զդեւսն՝ արկեալ զանձն ընդ նոցա ծառայութեամբն, որ ի սկզբան անդ թշնամին եւ պատերազմողն էր: Եւ նա անյագ չարութեամբ վարեցաւ առ բնութիւնս մեր եւ զամենայնն եհեղ ի մեզ զբարկութիւն իւր եւ քան զամենայն արարածոցս բնութիւն, կամեցաւ անարգ առնել զմեզ, քանզի առաջին ընդ Աստուծոյ հաստատեաց զանձն ի թշնամութիւն եւ հակառակ Արարչին ամբարձաւ եւ անկեալ ի պատուոյն՝ պատրանաւք եւ զմեզ հաւանեցոյց ընդ իւր անկանել եւ այսպէս տիրեաց բնութեանս մերում: Եւ զի արարիչն փառաց վնասել ինչ ոչ զաւրէր՝ գտեալ զմեզ՝ պատկեր եւ նմանութիւն Աստուծոյ, այնպէս հնարեցաւ ամենայն նախատանաւք եւ զազրալի գործովք թշնամանել զկերպարանն եւ ի խոնարհ ընկենուլ, քան զամենայն անարգս ի կենդանեաց: Զոր աւրինակ՝ ատելի ոք թագաւորի եւ նմին չար ինչ հատուցանել անկարացեալ եւ պատահեալ որդւոյ նորա եւ կամ թէ՝ պատուականի ուրուք ի ծառայիցն, եւ զամենայն, զոր ունի չարութիւն առ թագաւորն, ի նա հնարի թափել եւ նմին իսկ թագաւորին համարի զվնասն: Այսպէս եւ սատանայ, կալեալ ընդ ձեռամբ զմարդն, կամեցաւ մարդոյն թշնամանաւքն նախատել զարարիչն, որ արար զնա՝ իւր պատկեր եւ նմանութիւն: Եւ այս է, զոր ասէ.*

Առաքեաց զնա յագարակ իւր՝ արածել խոզս (հմմտ. ԺԵ. 15):

Այս է՝ անմաքուր վարք[1] *ամենայն գարշութեամբ անասնոցն վատթար գնացիւքն շաղախեալք, յիմարագոյնք եւ անսուրբք, քան զանասունսն գտաք: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւս հիգագոյնս կամեցեալ զմեզ առնել, հաւանեցոյց զզազրագոյնս ի կենդանեաց ի պաշտաւն առնուլ եւ նուէրս եւ զոհս մատուցանել եւ երկիր պագանել, իբրեւ Աստուծոյ եւ արարիչն՝ ըստ այնմ՝ զոր առաքեալն գրեաց առ Հռովմայեցիսն.* «Զփոխելն զպաշտաւն արարչին յարարածս եւ զլնուլն ամենայն անարգ եւ աղտեղագոյն ցանկութեամբ եւ գործովք, փոխեցին,- ասէ,- զփառս անեղծին Աստուծոյ ի նմանութիւն պատկերի եղծանելի մարդոյ եւ թռչնոց եւ չորքոտանեաց եւ սողնոց: Վասն այնորիկ մատնեաց զնոսա Աստուած ի միտս անարգութեան, ի պղծութիւն՝ անարգել զմարմինս իրեանց յանձինս իրեանց» (հմմտ. Հռոմ. Ա. 23-4): *Եւ զի՞նչ, քան զայսպիսի կիրս ապականութեան եւ խոզարած լինելոյ նշանակ: Արդ, վասն զի յաշխարհի*

[1] ԻՏ > կարի
[2] ԻՏ զհոգւոյն
[3] ԻՏ էած] առ

[1] ԻՏ յանմաքուր վարս

վարս վերջին գործ անպատուութեան է խոզս արածելն[1] *եւ ի հոգւոց անմաքուր վարս է այս, զոր ընտրութեամբ առաքելոյն ցուցաք, վասն որոյ յայս հայեցեալ՝ Տէրն մեր ասաց առակաւ, եթէ՝* **«Առաքեաց զնա յագարակ իւր՝ արածել խոզս»**:

Եւ նա ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն, զոր խոզքն ուտէին, եւ ոչ ոք տայր նմա (ԺԵ. 16):

Եւ զի՞նչ արդեաւք իցէ այս կերակուր, զի խոզիցն գոյր առատ եւ ի նմանէ պակասեալ գտաւ: Արդ, վասն զի ասաց, թէ «սատկացաւ սովն», եւ սովն էր գործոց բարեաց եւ աստուածային շնորհացն պակասութիւն եւ ընդ ամենայն չարեաց կալ ի ծառայութիւն: Արդ, առ այս հայելով, այսպէս իմանամք, թէ անասունք զիւրեանց բնակաւոր շարժումն բնութեանն, զոր բնաւորեաց ի նոսա Արարիչն, պահեցին, այլ մարդկային բնութիւնս եւ զայն եւս կորոյս, զի ունէր մարդն բնութեամբ եղեալ նմա յԱրարչէն՝ ճանաչել զԱստուած եւ սիրել զնա եւ ընտրել զբարին եւ զչարն ի միմեանց: Եւ այս է, զոր ասէ, թէ՝ «**եւ ի խոզիցն կերակրոց պակասեալ գտաւ**»: *Այն իսկ է, զի գոյ բնական առաքինութիւն յանասուն կենդանիս, որպէս ցուցեալ է ի գրոց վարդապետաց. արագիլ՝ արդար, եւ տատրակ՝ ողջախոհ, եւ եղն եւ էշ ի գովութիւն առեալ են առ չարութեամբն Իսրայէլի (Ես. Ա. 3): Եւ դարձեալ՝ անասունք ճանաչեն զամուսնութեանն սահման, որ առ էգսն է արուացն լինել եւ խնայեն ի ծնունդս իւրեանց, իսկ մարդիկ զայս եւս լքին: Ունէին ճանաչել զԱստուած՝ որպէս եղն եւ էշ՝ զմսուր եւ զստացիչ, եւ ոչ ծանեան (Ես. Ա. 3): Եւ վարել աւրինաւոր մերձաւորութեամբ եւ ոչ կացին ի սահմանս բնութեան, այլ ըստ առաքելոյն.* «Աղտեղագոյն եւ գարշ ցանկութեամբ եւ անկարգ խառնակութեամբ անարգեցին զբնութիւնս» (հմմտ. Հռոմ. Ա. 24): «Զի էգք նոցա, - ասէ, - փոխանակեցին զպէտս բնականս ի պէտս անբնականս, նոյնպէս եւ արուացն թողեալ զբնական պէտս իգացն, բորբոքեցան ցանկութեամբ ի միմեանս. արուք ընդ արուս զնայուտառակութիւն գործէին եւ զդարձ փոխարինին յանձինս իւրեանց ընդունէին» (Ա. Հռոմ. 26-27): *Զի չիք ինչ չարիք, քան զայս անաւրինագոյն, որ վատթարէ զմարդ եւ քան զշուն գարշելի առնէ: Է առ այս եւ մծղնէիցն անբերելի անաւրէնութիւն. եւ որ ի պարսս աւրինաւք եդին՝ որդւոյ ընդ մաւր անկանել, յորմէ եւ ձիգք իգամոլք զգուշանան: Այրեցին եւ զծնունդս իւրեանց ի վերայ բագնեաց առաջի դիւաց, յորոց վերայ անասունք անգամ զանձինս ոչ մատնեն, այլ մարդիկ յաւժարութեամբ զոհեցին զուստերս եւ զդստերս իւրեանց դիւաց: Արդ, այս է կերակուր, զոր խոզքն ուտէին եւ անառակին՝ ոչ էր: Քանզի ի միտս ոք եդեալ յիմաստուն քննողաց, աւրինակ ամենայն բնութեանս անառակաւն առեալ, խորհէր ասել, թէեւ ոչ իբրեւ զբանաւորս եւ զմտաւորս ունիմք զկերակուր արդարութեան, որով բուծանին անձինք եւ զհաց հաւատոյն, որով հաստատին ոգիքն, զոնէ իբրեւ զանասունս (զոր խոզիւք զեկոյց) պարտ էր ունել զբնակաւորն կերակուր առաքինութեան, զոր եղջերքն եցոյց, զի բնակաւոր կերակուր է խոզից եւ վարիլն աւրինաւք բնութեան ի ցանկութիւնս եւ ոչ չար, քան զգազանսն լինել արտաքոյ բնութեան՝ վարիլ անաւրէն խառնակութեամբ եւ խնայել ի բնութեանս ծնունդ եւ ոչ այրել ի յաւրանալ դիւաց եւ այսու մասամբ անմտանալ, քան զխոզս: Եւ այս է ահա կերակուրն, զոր ուտէին խոզքն, եւ անառակին ոչ ոք տայր: Վասն զի աստուածախաւսութիւնք լռեցին, եւ ուսուցիչ ոչ ոք էր, զի՝* «Ամենեքեան խոտորեցան եւ անպիտանացան, ընդ Ապրուծոյ եւ հրեշտակք լքին» (Սաղմ. ԺԳ. 3): *Եւ այսպէս, պակասեալ ի բարեաց մարդոյն եւ քան զգազանս եւ զանասունս ի բարեաց գործոց աղքատացեալ, որ են կերակուր ոգւոց:*

Ասէ ի միտս իւր. «Քանի՞ վարձկանք են ի տան հաւր իմոյ հացալիցք, եւ ես ասպ՝ սովամահ կորնչիմ: Յարուցեալ գնացից առ հայր իմ եւ ասացից. «Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո» (հմմտ. ԺԵ. 17):

Առ այս հայելով՝ զարմացեալ եմ ընդ այն, որ գրեաց զսովն պակասութիւն բարեաց, իսկ «**զցանկալն եղջերն**»՝ *ցանկալ մեղաց կարգեալ եցոյց: Արդ, եթէ սովոյն տագնապ արդարութեան նուազութիւն է, ո՞չ ապաքէն մեղացն ցանկալ յաւելուած սովոյ է, եւ ի մեղս գոլով՝ զիա՞րդ ասէ՝* «**ոչ ոք տայր**»: *Եւ թէ զմեղս ցանկայր ունել, զիա՞րդ աստի դառնայ առ հայրն՝ ասել.* «**Քանի վարձկանք են անդ, եւ ես ասպ սովամահ կորնչիմ**»: *Ո՞չ ահա յայտ է, թէ հացին էր ցանկացեալ, եւ որ զեղջիւրն ոչ ունէր, որով յագէր, յիշեաց դառնալ ի տուն հաւրն, զի հացիւ յագեսցի: Աստի յայտ է, թէ որք զայս ասեն, ինքեանք իւրեանց բանիցն զհետ գնալ ոչ գիտեն: Եւ մի՛ ոք ինձ ընդդէմ դիցէ, թէ զՅովհաննուն յանդգնութեամբ ըստգտա-*

[1] ԻՏ խոզարած լինել] խոզս արածելն

նեմք զբանս, զի ոչ է Յովհաննու, այլ այլոց ուրումն, որ իւրով անուամբն արդարանալ ոչ ունէր, զնորա անունն առնու՝ հաստատել զիւրն կարծիսն:

Սակայն մեք անդրէն ի մերն դարձցուք աւրինակ բանից, քանզի ի միտս եղեալ անառակին՝ յիշեաց զիւր առաջին բարետոհմութիւնն, զմտաւ ած եւ զթշուառութիւնն, զոր անառակութեամբն ստացաւ եւ տաղտկացաւ ի զազրալի վարուց անտի, որ եւ քան զխոզսն անմտագոյն եւ գարշ կեանս ստացաւ: Ապա զմտաւ ած՝ դառնալ յարարիչն: Ծանեաւ ի խնամոց աստի կենացս, թէ գթած է իրրեւ զՀայր (տե՛ս Ղուկ. Զ. 36)*: Զի թէ որք այսքան ի չարիս հարեալ են եւ թիկունս ի նա դարձուցեալ, եւ նա ի բաց ոչ դառնայ, այլ տակաւին եւս այսպիսի նախախնամութեամբ բարեգործէ մարմնոյ՝ առատացուցանելով զպէտս բնութեանս՝ յերկրէ եւ յերկնից զպտուղս եւ զլուսոյ հոսումն եւ զայս՝ չարեաց եղելոց: Քանի՞ եւս ունի բարեգործել հոգեւորապէս դարձելոցն առ նա նովին բնութեամբ: Եւ արդ, ուստի՞ էր նմա այս իմաստք, ասիցէ ոք, արդեա՞ւք յայնմ ժամանակի, յորում այնքան խորին խաւարաւ կռապաշտութեան ընկղմեալք էին: Առ որս պատշաճ է ասել, թէ բնական գիտութեամբն կարող էին մարդիկ զամենայն ինչ ուղղել եւ կալ քննութեամբ ի վերայ գիտութեանն Աստուծոյ: Եւ զայս առաքելոյն յայտնապէս ցուցեալ է.* «Գիտութիւնն Աստուծոյ յայտնի էր, - ասէ, - ի նոսա, քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա, զի աներեւոյթ աստուածութիւն նորա ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին եւ ոչ գտանիցեն ամենեքին՝ տալ պատասխանի, զի ծանեան զԱստուած եւ ոչ իբրեւ զԱստուած փառաւորեցին կամ գոհացան, այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց» (հմմտ. Հռոմ. Ա. 19-21)*: Աստի ուսանիմք, թէ ունէին բանական իմաստութիւն, որով զբնութիւն արարածոցս քննեցին եւ զշրջանս լուսաւորացն եւ զտին զբազմադիմի արուեստս եւ զարմանալիս եւ զժուարիմացս: Նովին քննութեամբ եւ իմաստիւք կարէին իմանալ զԱրարիչն ամենեցուն այսոցիկ: Քանզի զիա՞րդ մարդ[1], որոյ այսքան իմաստք ոչ ունէր[2] կալ ի վերայ արարածոցս եւ ճանաչել զԱրարիչն եւ զնախախնամիչն նոցա: Եւ ո՞վ ոք այնքան անմտագոյն ի մարդկանէ, որ ոչ ունէր իմանալ զպատկերս, զոր արարին*

[1] ԻՏ մարթ] մարդ
[2] ԻՏ ունիլ

մարդիկ[1], թէ աստուածք ոչ են: Եւ զանասունս տեսանէին ընդ չարչարանաւք եւ ընդ ապականութեամբ անկեալս եւ ծառայականս եւ սակաւակեացս եւ վաղամահս, զի են, որք զարմատս երկրի ճարակեն եւ են, որք զմարմին միմեանց որսան, պատառեն եւ կերակուր առնեն, եւ ոչ բան է նոցա եւ ոչ իմաստութիւն, եւ ոչ թէ ունին գիտութիւն՝ բնակութիւն չինելոյ, այլ ծերպ վիմաց է բնակութիւն նոցա եւ թափառեալ շրջին յանձրեւու եւ յարեւու: Դարձեալ եւ լուսաւորացդ պար[2]. Թէպէտ եւ են պայծառ եւ ի բարձունս[3] կացեալք, սակայն անդադար շրջաբերութիւն նոցա յանդիմանէ զնոսա ծառայական ունել բնութիւն, քանզի զի՞նչն այս Աստուծոյ անկ է, ոչ երբէք ունել զկայ, այլ այնքան արագութեամբ երեւիլ ի ծագս երկրի եւ մեծաւ աշխատութեամբ այնքան վերանալ ի բարձունս եւ վայրաբեր եղեալ՝ անցանեն ընդ ստորին վայրս երկրի եւ անսխալ կատարեն զընթացս: Եւ ո՞վ ոք անգիտանայ, եթէ ոչ է այս սպասաւորութիւն անձնիշխան բնութեան[4], այլ ծառայական, եւ այլ ոմն է գեր ի վերոյ կացեալ իշխան, որ կառավարէ զնոսա եւ այնքան շտապ տագնապի լուսաւորացդ հասուցանէ: Եւ արդ, այս է առաքելոյն ասելն, թէ՝ «Գիտութիւնն Աստուծոյ յայտնի էր ի նոսա» (Հռոմ. Ա. 19)*: Յայս իմաստ եկեալ անառակն՝ ծանեաւ զԱրարիչն եւ զՀաստիչն ամենեցուն: Արդ, պարտ է մեզ վասն յայտնութեան զմի ոք յարդարոցն, որ ինքնաւրէն իմաստիւք հաւատոց արդարութեան եղեւ գիտակ, ի դէմս անառակին առնուլ: Քանզի անառակ ընդ առաջին մարդոյն ամենայն բնութիւնս ցուցաւ, եւ յորժամ զմի ոք առաջին գնեմք, ի նա նկարեալ է անառակ՝ ամենայն բնութեանս դարձ: Եւ ունիմք առ այս զԱբրահամ, որ ընտրիչ եղեւ ամենայնի այսոցիկ, զոր ասացաք: Հայեցաւ նա ի բնութիւն անասնոց եւ ծանեաւ, թէ անասունք են եւ զքարինս եւ զփայտս եւ զայլ նիւթ երկրի՝ իմացաւ ըստ իւրեանց բնութեանն եւ զլուսաւորս գիտաց վասն սպասաւորութեանն, թէ ծառայք են: Հայեցաւ եւ ի սովամահ բնութիւնս՝ յԱստուծոյ որոշեալ եւ ընդ այսքան գարշելի ախտիւք ամենայն անաւրէնութեան անկեալ: Եւ ետես ի ստեղծուածի բնութեանս, թէ քան զամենայն երեւելիս պատուական է մարդ վասն*

[1] ԻՏ մարդիք
[2] ԻՏ պատ] պար
[3] ԻՏ բարձու] բարձունս
[4] ԻՏ բնութեամբ

մտաւոր եւ բանաւոր բնութեանն եւ անձնիշխան կամացն: Ծանեաւ եւ զայն, թէ պիտանի է Արարչին իւրոյ, որպէս պատուեաց եւ զամենայն արարածս կացոյց նմա ի ծառայութեան[1]*, թէպէտ եւ մարդոյն անմտացեալ ծառայեաց նոցա: Արդ, զայս իմացեալ, խորհեցաւ ազատեալ զանձն իւր ի ծառայութենէ աստի չարեաց (որ սովամահ արարին զբնութիւնս)՝ դառնալ յառաջին ժառանգութիւնն: Վասն որոյ ասէ.*

Քանի՛ վարձկանք են ի տան հաւր իմոյ հացալիցք, եւ ես ապ՝ սովամահ կորնչիմ (հմմտ. ԺԵ. 17):

Եւ ո՞վ ոք վարձկանքն իցեն: Թուի, թէ լուսաւորքդ են, որք կարգեցան յԱրարչէն՝ իբրեւ զվարձկանս ծառայել մարդկան, իբրեւ որդւոց եւ կալ յայնպիսի անյապաղ սպասաւորութեան, որք միշտ անցանելով՝ չափեն զժամանակս, եւ կան յայնքան բարձրութեանն[2] *ջահ լուցեալք ի վերուստ բարեգործեն զերկիր՝ անուցեալ զպտուղս եւ լուծանել զխաւար: Արդ, այսպէս վարձկանք են, որ վասն մեր կան ի ծառայութեան*[3] *եւ «հացալիցք են», զի գեղեցիկ են պայծառութեամբ եւ անկարաւտք ամենայնիւ: Իսկ մարդկային բնութիւնս յայնքան թշուառութիւն անկեալ եւ խաւարաւ անգիտութեան փակեալ՝ մինչեւ սովամահ կորնչել զյաւիտենական սատակումն: Արդ, յայսմ վտանգի եղեալ, զարթեաւ ի թմրութենէ մեղացն եւ ուշաբերաց՝ դառնալ առ բարերար Հայրն, վասն որոյ ասէ.*

«Յարուցեալ գնացից առ հայրն իմ եւ ասացից ցնա. «Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո, եւ ոչ եւս եմ արժանի կոչիլ որդի քո, այլ արա՛ զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց» (ԺԵ. 18-19):

Եւ այս եւս խնամք արարչին է, զի այնպիսի արար զբնութիւնս, որ թէպէտ դիւրակործան եմք ի մեղս, սակայն առանց ուսանելոյ ինքնագտակ եմք ապաշխարութեան եւ ապաշաւելոյ, զոր գործեցաք զամբարշտութիւնն, ըստ որում եւ այն տնտես, զոր գովեաց Տէրն՝ «զգնդրեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար» (Ղուկ. ԺՁ. 8): *Եւ որպէս Նինուէացիքն, զի կործանումն միայն լուան ի մարգարէէն եւ իմացան, թէ Աստուած է, որ վասն անաւրէնութեան կորուստ*

[1] ԻՏ ծառայութիւն
[2] ԻՏ բարձրութեամբ
[3] ԻՏ ծառայութիւն

սպառնայ եւ վասն ուղղութեան կեցուցանէ: Զսոյն զայս էած զմտաւ Աբրահամ՝ յաւրինակ ամենայն հեթանոսաց հաւատոց եւ փրկութեան, որպէս երախայրիք[1] *ընծայեալք Աստուծոյ նշանակեն ամենայն պտղոցն ժողովելոց յշտեմարանս:* **«Յարուցեալ,- ասէ,- գնացից առ հայրն իմ»:** *Եւ այս ոչ սոսկ մտածութիւն, այլ որպէս խորհեցաւ՝ զնոյն փութացաւ կատարել.*

Յարուցեալ եկն առ հայրն: Եւ մինչդեռ հեռագոյն էր, եւրեւ հայրն եւ գթացաւ, յարեաւ եւ եկն ընդառաջ, անկեալ զպարանոցաւն, գիրկս արկ[2] **եւ համբուրեաց զնա** (հմմտ. ԺԵ. 20):

Ո՛վ, մեծի մարդասիրութեան Հաւրն, զիա՛րդ ամենաբարի է բնութեամբ: Ո՛վ, որքա՛ն անչափ են խնամքն Քրիստոսի, զիա՞րդ զծածուկ կամս Հաւրն յայտնեաց մեզ եւ ընտանեցոյց զմեզ արարչին՝ որդիս անուանելով, որ եւ ծառայս անուանել ոչ էաք արժանաւորք: Զնա Հայր անուանէ, որ արարիչ է բնութեամբ, եւ որ ինչ հաւր սեփհական է սիրոյ, զնոյն եւ Արարիչն եցոյց: **«Յարեաւ,- ասէ,- ի հեռաստանէ տեսեալ՝ ընդ առաջ գնաց»:** *Ոչ ապաշխարութիւն ինչ, ոչ արտաւսր եւ ոչ հառաչանք, այլ միայն դիմեաց գալ, եւ* **«նա, տեսեալ, ընդ առաջ գնաց, անկեալ զպարանոցաւն՝ համբուրեաց»:** *Ոչ գարշեցաւ յաղտեղացելոյն մեղաւք, այն, որ ամենամաքուրն է բնութեամբ: Արդ, այս ամենայն անճառ եւ անքննելի բարեաց տեսութիւն առակաւ ի Տեառնէ ասացեալ, նոյն յայտնապէս կատարեալ առ Աբրահամ ցուցաւ:* «Հաւատաց, - ասէ, - Աբրահամ յԱստուած եւ համարեցաւ նմա յարդարութիւն, եւ որ ի հաւատոց անտի են, արհնին ընդ հաւատացելոյն Աբրահամու» (հմմտ. Գաղ. Գ. 6-7)*: Ահաւասիկ, արդարացուցանէ զասելն՝* **«Դարձայց առ հայր իմ»:** *Իսկ հաւրն ընդառաջ գնալն՝ բազմաւք ցուցեալ է՝ առաջին այն՝ ըստ սրբոյն Ստեփաննոսի՝* «Աստուած փառաց երեւեցաւ հաւր մերում Աբրահամու՝ մինչչեւ բնակեցուցեալ էր զնա ի Խառան» (Գործք Է. 2): *Եւ զի՞նչ այլ, քան զայս Հաւրն ընդառաջ լինել անառակին: «Աբրահամ հաւատաց յԱստուած եւ համարեցաւ նմա արդարութիւն»* (Գաղ. Գ. 6): *Եւ Աստուած, եկեալ առ նա, ասէ,* «Ելլ յերկրէ քումմէ եւ յազգէ քումմէ եւ եկ յերկիր, զոր ցուցից քեզ» (Ծնն. ԺԲ. 1)*: Դարձեալ՝* «Երեւեցաւ Աստուած Աբրահամու առ կաղնեաւն Մամբրէի,

[1] ԻՏ երեխայրիք
[2] ԻՏ էած] արկ

եւ ընդ առաջ գնաց Աբրահամ, երկիր եպագ, ողջոյն եր եւ համբուրեաց» (հմմտ. Ծնն. ԺԸ. 2): *Ահաւասիկ՝ անկանիլն զպարանոցաւ անառակին եւ համբուրելն, եւ նստելն եւս առ նմա, եւ լուանալն, եւ ուտելն եւս զարմանալի եւ յայտնելն զկործանումն Սոդոմայ եւ աւետիք ծնանելոյն զԻսահակ եւ որ այլ եւս աստուածախաւսութիւնք առ նահապետն եղեն: Եւ վկայ են այսոցիկ խնամոց եւ սիրոյ, զոր առ անառակն եցոյց Հայրն բոլորեցունց: Ասէ անառակն.*

«Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո (ԺԵ. 21):

Թէպէտ հայրն անյիշաչար եղեւ, սակայն նա խոստովանի զյանցանս եւ զստահակութիւնն, վասն զի այս իսկ է յարմար եւ պիտանացու՝ Աստուծոյ թողուլն եւ մեր չմոռանալն զաւրինազանցութիւնն մեր, վասն որոյ ի դէպ է ասել, թէ եւ զայս, եւս բազում հառաչանաւք պաղատեցաւ նահապետն առաջի Աստուծոյ, որ է ասելն. «**Մեղայ յերկինս եւ առաջի քո**»: *Արդ, վասն զի զդէմս Ադամայ եւ ամենայն ծննդոց նորա առեալ ունի նահապետն, ըստ որում եւ ասացաւ, վասն այնորիկ զայն պարտիս խոստովանի, որ Ադամայն է, եւ ի վերայ ամենայն բնութեանս ձգի, ասէ.* «**Հա՛յր, մեղայ յերկինս**»: *Զդրախտն կոչեաց «երկինս», յորում առաջին յանցանքն եւ դատապարտութիւնն եղեւ, որով այսքան ապականութիւն հեղաւ ի բնութիւնս մեր, իսկ «երկին» ասել զդրախտն, վասն տեղւոյն դրութեան եւ անմահ եւ անապական կենացն է:* «**Մեղայ,- ասէ,- յերկինս եւ առաջի քո**»: *Զի ոչ թաքուն եւ անյայտ ուրեք, այլ անզգամութեամբ առաջի ամենատես աչացդ: Նաեւ, զի չէ հնար իսկ թաքչել, բայց կէս վնասու է զարհուրելն եւ թաքուցանել զանձն եւ ամաւթալի համարել զմեղս եւ դողալ ի սպառնալեացն Աստուծոյ եւ կարի անաւրինագոյն է կամակատար մտաւք եւ առանց ամաւթոյ, յանդգնութեամբ եւ արհամարհանաւք գործել զմեղս: Վասն որոյ խոստովանի անառակն, որպէս թէ այսպիսի ոք իցէ.*

«Եւ ոչ եմ,- ասէ,- արժանի, թէ կոչեցայց որդի, այլ արա՛ զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց» (հմմտ. ԺԵ. 19):

Արդարեւ այսպիսի միտս ունել յանցաւորաց, թէպէտ ի խնամոցն Աստուծոյ արժանաւորին թողութեան, սակայն զանձինս առ յանցաւորս[1] *պարտ է ունել եւ ի չափու կալ եւ չմոռանալ զմեղսն,*

[1] ԻՏ յանցաւորս] պարտաւորս

այլ յիշատակաւ մեղացն խոնարհել: Զի որչափ մեք անարժան զանձինս համարիմք եւ ի խոնարհ ընկենումք, նա ի վեր տանի, եւ որչափ ամբառնայ ոք, նա ի խոնարհ ընկենու: Ըստ որում եւ ասա է տեսանել զյանցաւորն, ասէ.

Արա զիս իբրեւ զմի ի վարձկանաց [քոց]» (ԺԵ. 19):

Իսկ հայրն ասէ ծառայիցն. «Հանէ՛ք զպատմուճանն առաջին եւ ագուցէ՛ք [նմա]» (ԺԵ. 22):

Զի զայն, որ մերկացաւ անհնազանդութեամբն, վերստին զգեցցի հնազանդութեամբն: Բայց առ այս որպէ՞ս աւրէն է զկարգ բանիս յառաջ վարել, իցէ՞ արդեաւք ասել, եթէ յառաջ քան զխաչն զձեռագիր պարտեացն Ադամայ այլ ոք պատառեաց կամ հանդերձ մերկութեան նորա զգեցոյց: Եւ արդ, եթէ գոյր հատուցանել ուրուք զայս, ապա զիա՞րդ կարաւտացաք Աստուծոյն մարդանալոյ եւ մեռանելոյ: Նախ՝ զի անկելոյն ի ձեռս աւազակացն չէր ոք, որ աւգնէր, մինչեւ նա եկն, որ Սամարացի զանձն անուանեաց (տե՛ս Ղուկ. Ժ. 29-37): *Վասն որոյ, զի ուղիղ ի վերայ խորհրդոյն հաստատեսցուք զտեսութիւն բանիս. աւրէն է այսպէս ճշմարտել զբանս եւ գիտել, թէ նախքան զխաչն ամենեքեան ընդ պարտեաւք էին՝ ըստ առաքելոյն.* «Թագաւորեաց մահ յԱդամայ մինչեւ ի Մովսէս եւ ի վերայ չյանցուցելոյն» (Հռոմ. Ա. 14): *Արդ, այս է մեզ հաստատուն նշանակ, զի խորհուրդ մահուն Քրիստոսի նախ ժամանեաց, արդարացոյց զարժանիսն ոչ եթէ կատարեալ փրկութեամբ, այլ զառհաւատչեայն փրկութեան, ըստ որում եւ մեք Քրիստոսիւ յուսով ապրեցաք: Այսպէս եւ արդարքն անվրէպ վստահացեալք աւազանիս շնորհաց, զգեցան խորհրդեամբ զմաքրութիւն՝ աւրինակաւ պատմուճանին առաջնոյ, զոր հրաման ետ զգեցուցանել: Եւ այսպէս առ յապայ ամենայն ինչ, որ կատարեցաւ Քրիստոսիւ, ցուցաւ առ նոսա՝ ըստ առաքելոյն.* «Այն ամենայն,- ասէ,- աւրինակաւք ընդ նոսա անցանէր, եւ գրեցաւ ի մեր վարդապետութիւն» (հմմտ. Ա Կոր. Ժ. 11):

Արդ, վասն զի պարտ էր խորհրդոյ տնաւրէնութեանն հաստատագոյն լինել, այն, որ կարի դժուարին է հաւատալ վասն ահաւորութեան խորհրդոյն, վասն այնորիկ կանխեաց, յառաջագոյն արդարացոյց զորս ընտրեցան եւ առ նոսա աւրինակաւք զտնաւրէնութեան խորհուրդն տպացոյց, զմարգարէսն զարմացոյց, որք ընկալեալ զխորհուրդ փրկութեանն, աւետեաւք զարթուցին զամենայն հոգիս՝ զուարճանալ յուսովն եւ խրոխտալ ի վերայ բոնու-

թեանն մահու: Վասն որոյ եւ ենովք առաջին զաւրացաւ՝ լուծանել զմահ, եւ յԱբրահամէ եւս յաճախեցին խորհուրդք՝ քարոզել զայս զաւրութիւն աստուածային մատակարարութեանն, որով ելոյծ զմահ եւ երարձ զկնիք դատապարտութեան մերոյ: Ուստի եւ առ նա պատշաճի առակիս բան, զի ասացաւ՝ հանել զպատմուճանն առաջին եւ զգեցուցանել նմա, ըստ որում եւ «**զեզն պարարակ,- ասաց,- զենուլ**» (հմմտ. ԺԵ. 23): *Եւ ոչ ի նմին զենեալ էր, այլ խորհրդեամբ զենաւ վասն վստահացեալ յուսոյն: Նոյն աւրինակաւ զգեցան արդարքն զգեստ անապականութեան զՔրիստոս յուսով խոստմանն, ըստ որում եւ մեք ոչ եմք մատուցեալ ի լեառն շաւշափելի, այլ յիմանալի լեառն եւ ի բիւրաւոր բանակս հրեշտակաց եւ յոգիս արանց*[1] *կատարելոց եւ առ դատաւորն ամենեցուն Քրիստոս, եւ տակաւին եւս յաշխարհի եմք, բայց հաւատովք ունիմք զպարգեւսն: Եւ ի հակառակէն դարձեալ ասացաւ Ադամայ.* «Յաւուր յորում ուտիցես, մեռանիցիս» (հմմտ. Ծնն. Բ. 17)*: Եկեր եւ մեռաւ զաւրութեամբ, թէպէտ եւ ոչ ազդմամբ: Ըստ այսմ աւրինակի առցես զառաջնոցն՝ զգենուլ զպատմուճանն առաջին: Այլ առանց Քրիստոսի եւ ոչ մի ինչ բնաւ արդիւնք ուրուք ելից, զի ամենեքեան ի դժոխս արգելեալ, փակեալ էին ընդ իշխանութեամբ մահու: Վասն այնորիկ աղաղակէին.* «Զարթո՛ զգաւրութիւնս քո եւ եկ ի կեցուցանել զմեզ: Եւ ինքն Տէր եկեսցէ եւ փրկեսցէ զմեզ» (հմմտ. Ես. ԼԵ. 4)*:*

Արդ, զայս այսպէս դատեալ՝ ժամ է ի նոյն ինքն յառաջինն մեր դառնալ բանս, այն, զի հրաման ետ հայրն զգեցուցանել զմերկացեալ որդին առաջին պատմուճանաւն: Եւ արդ, որո՞ց հրաման տայ ծառայիցն՝ զգեցուցանել զպատմուճանն, զոր մերկացաւ անհնազանդութեամբն, եւ ոչ միում երբէք, զի ինքն միայն է զգեցուցանաւղ: Եւ այն զի՞նչ իցէ, զի ասէ. «**Հանէ՛ք զառաջին պատմուճանն եւ զգեցուցէք**»*: Դէմք են, որով յաւդանայ ձեւ կերպարանաց առակաւոր բանից*[2]*, զի ըստ աւրինի թագաւորաց պաշտաւնէիւք վճարէ: Բայց ամենակատար բնութիւնն ոչ է կարաւտ սպասաւորաւք վարել, այլ հրամանաւ լնու, յոր փութայ: Ապա թէ պարտ ոք վարկցի զառաքեալսն առաջի դնել, որոց ասաց.* «Երթայք, աշակերտեցէք զհեթանոսս, զգեցուցէք յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն» (հմմտ. Մատթ.

[1] ԻՏ > արանց
[2] ԻՏ փառաւոր բանիս] առակաւոր բանից

ԻԸ. 19)*: Բայց ընդդէմ կայ այսոցիկ այն, զի եւ նոքին իսկ առաքեալքն ի մերկացելոց աստի են եւ կարաւտ, զի զգեցցին: Եւ զայս վասն վայրապարացն արգելաք: Ապա թէ ոչ, չեն*[1] *ինչ ի հակառակացն (մինչ զի եղծանել զբանս տեսութեան առակին), եթէ զգեցան ի Տեառնէ եւ զգեցուցին զտիեզերաց մերկութիւնն՝ սպասաւորք աստուածայնոցն լեալ տնտեսութեան ի ձեռն աւազանին շնորհի:*

Եւ յետ զգեցուցանելոյ, ապա յաւելու, զի մատանի դիցէ ի ձեռին (տե՛ս Ղուկ. ԺԵ. 22)*, զի ամենայնիւ շքեղասցի անկեալն ի շնորհաց՝ ըստ այնմ, զոր Եսայիաս ետես զառաւելութիւն պարգեւացն եւ ուրախացեալ ասէ.* «Յնծասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան. իբրեւ փեսայի, եդ ինձ պսակ եւ իբրեւ հարսն, զարդու զարդարեաց զիս» (Ես. ԿԱ. 10)*:*

Զայս աւրինակ զարդու եւ աստ՝ անառակն զգենու:

Դիք,- ասէ,- մատանի ի ձեռս դորա (հմմտ. ԺԵ. 22):

Նոյն տեսութիւն է բանիս, որպէս այն, որ զկորուսեալ դրամն խնդրեաց զթագաւորական պատկերն: Եւ աստ մատանի տուեալ լինի, զի քանդուածով ականն, զնոյն թագաւորական պատկերն նշանակէ, զոր դարձեալ դրոշմէ ի նա զտիպս թագաւորական կնքոյն:

Ագուցէ՛ք,- ասէ,- եւ կաւշիկս յոտս դորա (հմմտ. ԺԵ. 22):

Որպէս զի ամրացեալ համարձակ լիցի կոխել զգլուխ կամակոր աւձին, այն որ ի սկզբան անդ հրաման առ սպասել եւ հարկանել զգարշապարս մեր: Արդ, զգեցուցանէ կաւշիկս եւ իշխանութիւն տայ՝ կոխել զաւձս եւ զկարիճս եւ զամենայն զաւրութիւնս թշնամւոյն (տե՛ս Ղուկ. Ժ. 19)*: Եւ այսպիսի թագաւորական պատուով պատուեալ՝ ապա խրախունս առնէ.*

Ուտէ՛ք,- ասէ,- զեզն պարարեալ, զենէ՛ք, զի կերիցուք եւ ուրախ լիցուք (հմմտ. ԺԵ. 23):

Ո՛վ մեծի խորհրդեանս[2] *եւ զարմանալեաց, որ բաւական է հիացուցանել եւ զյոյժ թանձրագոյնսն մտաւք: Եւ արդ, ընդ ո՞ր առաւել ոք սքանչասցի. ընդ Հա՞ւրն, որ վասն անառակ ծառա-*

[1] ԻՏ չէ] չեն
[2] ԻՏ խորհրդեանն

յիցս փրկութեան զստոյգ եւ զսիրելի Որդին, իբրեւ զզուարակ, ի զենումն տայ՝ ոչ ի հարկէ եւ ոչ բռնադատեալ եւ ոչ տրտմութեամբ, այլ ուրախութեամբ: Ասէ. **«Կերիցուք եւ ուրախ լիցուք»:** *Եթէ ընդ Որդւոյն, որ զայս ամենայն առակաւ առաջի դնէ լսողացն վասն անձին իւրոյ զենման՝ յուրախութիւն եւ ի կերակուր ապստամբացս, այսպիսեաւք եւ Եսայիաս մարգարէանայ վասն նորա.* «Իբրեւ ոչխար,- ասէ,- ի սպանող վարեցաւ, իբրեւ զորոջ առաջի կտրչի անմռունչ կայ» (Ես. ԾԳ. 7): *Եւ թէ՝* «Տէր մատնեաց զնա առ մեղս մեր» (հմմտ. Ա Պետ. Գ 18, Ա Յովհ. Դ 10): *Եւ ասա ասէ.* **«Ածէք զեզն պարարակ».** *այս է մարմինն, զոր ի մէնջ էառ՝ պարարեալ աստուածային բնութեամբն եւ վասն մեր զենեալ: Եւ այս եւս տպացաւ առ նահապետաւն, յորում պատարագեալ եղեւ Իսահակ եւ ի նմա տեսանէր զչարչարանս անչարչարելոյն եւ զպատարագելն անպատարագելի գառինն, որպէս ասէ, որ ասացն:* «Արդ, այս ամենայն եղեւ հաճութեամբ Հաւրն» (հմմտ. Եփես. Ա. 9), *յաղագս որոյ ասէ.*

«Կերիցուք եւ ուրախ լիցուք: Զի այս որդի իմ մեռեալ էր եւ եկաց, կորուսեալ էր եւ գտաւ» (ԺԵ. 23-24):

«Մեռեալ էր», *ասէ: Կարի անբերելի եւ դառնագոյն մահ այն, որ մեղացն է եւ զճշմարիտ կեանսն սպանանէ եւ կորուսանէ, եւ կարի տաժանելի կորուստ այն, որ հոգւոցն է ապականութիւն եւ ի գեհենի անդ: Ըստ նմին եւ կենդանութիւն կարի զարմանալի՝ աստուածային եւ յաւիտենական կենդանութիւն: Նոյնպէս եւ գտանելն առ Աստուծոյ եւ ի յարկսն յաւիտենից, որոյ ուրախութիւնն անփոխանորդելի է: Արդ, վասն այսր մեծի փրկութեանս, որով ամենայն ազգ ընծայեցան Աստուծոյ Հաւր ի ձեռն Որդւոյն միջնորդութեան եւ պատարագին, որով եհեղ զարիւնն իւր ի վերայ ամենայն ծննդոցն Ադամայ: Ուրախացաւ Հայրն եւ ուրախացոյց զամենեսեանն, վասն որոյ ասէ*[1]. **«Սկսան ուրախ լինել»** (ԺԵ. 24):

Եւ էր,- ասէ,- երէց որդին յազարակի, եւ մինչդեռ գայր եւ մերձ էր ի տունն, լուաւ զձայն երգոցն եւ զպարուցն: Եւ կոչեցեալ զմի ի ծառայիցն, հարցանէր, թէ՝ զի՞նչ իցէ այն: Եւ նա ասէ. «Զի եղբայր քո եկեալ է, եւ հայր քո եզեն զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա» (հմմտ. ԺԵ. 25-27):

[1] ԻՏ > ասէ

Զիմանալեացն բնութիւն եւ բնակութիւն թանձր աւրինակաւք յաւդացուցանէ, որպէս աւրէն էր ունել հաղորդութիւն առակին առ ճշմարտութիւնն: Արդ, ասէ. **«Զերէց որդին եկեալ յանդաստանէ».** *եւ այս յաւդեալ բան միայն զայն ունի նշանակ, զի մերձ ոչ էր եւ ոչ տեղեակ խորհրդոյն: Եւ այս ահա յայտնի է, որպէս ուսաք, զի այս խորհուրդ փրկութեան ծածկեցաւ յիմանալեացն, որ մերձ են առ Աստուծոյ՝ ըստ առաքելոյն, որ ասէ.* «Խորհուրդն, որ ծածկեալն էր յաւիտեանց եւ յազգաց, այժմ յայտնեցաւ ի ձեռն եկեղեցւոյ» (Կող. Ա. 26): *Եւ թէ՝* «Յայտնեսցի արդ իշխանութեանց եւ պետութեանց ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իշխանութիւն Աստուծոյ» (Եփես. Գ. 10): *Եւ թէ այժմ ուսան զայս խորհուրդ, այպիսեաւքս ցուցեալ է ըստ առաքելոյն եւ ըստ առակիս տեսութեան, զի յորժամ այս ամենայն անքննելի աստուածային տնտեսութեան խորհուրդ կատարեցաւ յերկրի, եւ մարդկան ազգ մաքրեալք հոգւոյն որդեգրութեամբն ընծայեցան Աստուծոյ եւ պար առեալ յեկեղեցիս՝ մարդիկ, որ դիւաց էին պաշտաւնատարք, ընդ հրեշտակս երգեն աւրհնութիւնս Աստուծոյ՝ գոհանալով զանչափ պարգեւացն նորա եւ վայելեն ի մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ եւ աղաղակեն ըստ առաքելոյն եւ ասեն հոգւովն՝ Աբբայ, Հա՛յր: Եւ Հոգին, որ ի մեզ հեղաւ, վկայէ, թէ եմք որդիք Աստուծոյ* (Հռոմ. Ը. 15-16): *Արդ, զայս լուեալ վերնոցն զարմացեալք, անգիտանալով զխորհուրդ փոփոխմանն յանկարծաւրէն, վասն որոյ հարցանեն զներքին դասն, զի նոքա առաքեցան յերկիր ի մարդկան սպասաւորութիւն, եւ նոքա որպէս էին խորհրդազգացք, պատմեն նոցա զտնաւրէնութեան խորհուրդն, վասն զի Գաբրիէլ նոցա դասապետ էր, որ զաւետիսն Մարիամու ետ եւ Զաքարիայ: Եւ ի ժամանակի ծննդեանն բազմութիւն երկնաւոր զաւրացն, որք աւրհնէին զԱստուած վասն անճառելի խորհրդոյն, յայնմ դասէ էին: Արդ, թէպէտ եւ այս այսպէս արդարացեալ է, բայց ինձ կարի յարմար թուի զհետ գնալ ժամանակին եւ իրացն կատարման, որ ըստ տեսութեանն*[1] *կարի յարէ ի ճշմարտութիւնն: Վասն որոյ ունիմք զայս տալ ժամանակ ի վերանալոյն, զի իբրեւ եմուտ ի յերկինս աւրհնութեամբ հրեշտակացն, որք յուղարկէին զնա եւ մերձեցաւ յառաջին դասն, որ տեղեակ էին ամենայնի, մեծաւ ցնծութեամբ ընդ առաջ եղեն անթիւ բազմութիւնն այն եւ սկսան մեծաձայն*

[1] ԻՏ տնտեսութեանն] տեսութեանն

ուրախութեամբ աւրհնել զանճառելի խորհուրդն, վասն զի տեսին մարմնով զայն, զոր ոչ երբէք տեսին ըստ աստուածութեանն: Եւ այնչափ բազմութիւնն՝ շարժեալք յիւրեանց[1] *կարգեալ կայանիցն, յուղարկէին զնա աւրհնութեամբ: Իսկ վերինքն, որ բնաւ անգէտք էին իջանելոյ նորա յերկիր եւ մարդանալոյն, տեսեալ զնա մարմնով ի վեր երթեալ եւ լուեալ զանսովոր ձայն հնչման աղաղակին առաջին դասուն, որք զիւրեանցն թողեալ տեղի դասուն՝ ընդ նմա գային աւրհնութեամբ եւ ի սքանչման եղեալ, սկսան եւ նոքա աղաղակել, որպէս ցուցանէ մարգարէութիւնն Եսայեայ.* «Իսկ այս ո՞վ է, - ասէ, - որ դիմեալ գայ յԵդովմայ եւ կարմրութիւն ձորձոց իւրոց ի բոսորայ» (Ես. ԿԳ. 1)*: Սկսանի ինքնին տալ զպատասխանին, վասն զի յառաջ գնայր քան զհրեշտակսն, որ ընդ նմայն էին, եւ ասէ. «Ես խաւսիմ զարդարութիւն եւ իրաւունս փրկութեան»* (Ես. ԿԳ. 1)*: Ի գործոյն զինքն յայտնէ եւ ոչ ի ընութենէ պատուոյն: Վասն որոյ անգիտացեալ իշխանութեանցն՝ տակաւին եւս համարձակ իբրեւ ընդ մարդոյ խաւսին եւ ասեն.* «Վասն է՞ր են կարմիր ձորձք քո եւ հանդերձք քո իբրեւ հնձանահարի» (Ես. ԿԳ. 2)*: Եւ զայլն եւս հարցաքննութիւն, որ ըստ Եսայեայ ի կարգին, յորում պատասխանեաց նոցա եւ թէ ո՞վ իցէ զբնութիւնն՝ ոչ յայտնեաց, այլ զոր, ինչ գործեաց զփրկութիւնն առաջի եղ՝ նման հաւրն բանից, յորժամ ասէր թախանձանաւք.*

«Այս եղբայր քո մեռեալ էր եւ եկաց, կորուսեալ էր եւ գտաւ» (ԺԵ. 32):

Ըստ նմին եւ Յիսուս զնոյն առաջի դնէ հարցաքննողացն զթշուառութիւն եւ զկորուստ մարդկան, ասէ. «Եւ զի ոչ ոք էր, որ փրկէր, հայեցայ, եւ ոչ ոք էր, որ ի թիկունս հասանէր: Ապա ողորմեցայ կորուսելոյն, հնձան հարի զթշնամին եւ գտի զկորուսեալն եւ կենդանացուցի զմեռեալն» (հմմտ. Ես. ԿԳ. 5-6)*: Իսկ ներքին դասն, որ ընդ նմա գային, իբրեւ տեսին, թէ անգիտութեամբ իբրեւ զմարդ ոք հարցաքննեն զնա, ասեն մեծաձայն աղաղակաւ՝ իբրեւ սաստելով իշխանութեանցն.* «Համբարձէ՛ք իշխանք զդրունս ձեր ի վեր, եւ մտցէ թագաւոր փառաց» (Սաղմ. ԻԳ. 7)*: Այսինքն՝ թոյլ տուք, ի բաց կացէք, ճանապարհ արարէք, զի մտցէ թագաւոր փառաց*[2]*: Եւ յայսոսիկ եւս ի հիացման եղեալ՝ զարմացան, վասն զի ոչ գիտէին նոքա զոք մարմնով թագաւոր փառաց,*

[1] ԻՏ յիւրաքանիւր] յիւրեանց
[2] ԻՏ Որդի Աստուծոյ] թագաւոր փառաց

որ այնպիսի բուռն զաւրութեամբ մտանէր յերկինս: Եւ այսպիսի նոր եւ զարմանալի տեսութեան պատահեալ՝ ասեն. «Ո՞վ է սա թագաւոր փառաց» (Սաղմ. ԻԳ. 8)*: Ապա ներքինքն ասեն.* «Տէր զաւրութեանց, սա ինքն է՝ թագաւոր փառաց» (Սաղմ. ԻԳ. 10)*: Տէր զաւրութեանց, որ յատուկ Աստուծոյ է: Եւ զայս լուեալ՝ բնաւ ապշեցան, զի ոչ կարացին կալ ի վերայ խորհրդոյն, միայն լռեալ դադարեցին, զի մարդ տեսանէին եւ լսէին Տէր զաւրութեանց եւ թագաւոր փառաց: Եւ զայս նոքա ասէին, որ ներքին, քան զնոսա էին, եւ նոցա գիտութեանն կարաւտ: Եւ այսպէս, ի հիացման եղեալ, կային՝ տեսանել, եթէ զի՞նչ կամիցի լինիլ այն: Իսկ յորժամ տեսին, թէ էանց ընդ ամենայն դասս իշխանութեանց եւ պետութեանց եւ տէրութեանց եւ ել ի վերոյ, քան զամենայն երկինս եւ եմուտ ի ներքին կողմն վարագուրին եւ նստաւ ընդ աջմէ մեծութեան ի բարձունս, իբրեւ յիւր սեփհական աթոռ: Ապա սկսան հարցանել զներքին դասն, զի ուսցին ի նոցանէ: Եւ այս է երէց որդւոյն կոչել զմի ի ծառայիցն եւ հարցանել: Պատմեն ապա զամենայն ինչ ստուգութեամբ՝ զիջանելն յերկնից, զբնակելն յորովայնի կուսին, զառնուլն մարմին եւ միաւորել ընդ աստուածութեանն եւ աստուածանալ մարդոյն եւ մարդանալն Աստուծոյ եւ տալ զանձն ի չարչարանս վասն մարդկան եւ արդարացուցանել եւ առ ինքն ժողովել զդիւաց սպասաւորսն: Արդ, սոքա, որք շրջին ընդ մարդկան, զայս լուան ի մարգարէիցն եւ ուսան ի յելից խորհրդոյն, որ կատարեցաւ ի մէջ մարդկան եւ ուսուցին զվերին դասապետութիւնսն: Եւ այսպէս ճշմարտեալ է Պաւղոսի ասելն՝ «Յայտնեսցի իշխանութեանց եւ պետութեանց ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ»* (հմմտ. Եփես. Գ. 10)*: Արդ, այս անբաւ խնամք Աստուծոյ առ մարդիկ, իբրեւ յայտնեցաւ իշխանութեանցն, կրեցաւ ի նոսա այսպիսի ինչ, զոր ասաց Տէրն.*

Բարկացաւ եւ ոչ կամէր մտանել (ԺԵ. 28):

Մարդկաւրէն ձեւացուցանէ զբանն, ապա թէ ոչ՝ այս յայտնի է, զի ահիւ եւ դողութեամբ կան առաջի Աստուծոյ, եւ ոչ է բնաւ համարձակելի նոցա՝ խաւսել ինչ առաջի Աստուծոյ, այլ վասն զի իմացան զայս, եթէ զբնութիւն մարդոյ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն, եւ նստաւ աստուածացեալ մարդն ընդ աջմէ Աստուծոյ եւ նմա կրկնի ամենայն ծունր երկնաւորաց եւ երկրա-

ւորաց (տե՛ս Փիլ. Բ. 10): *Ծանեան, թէ ի վեր անց մարդկան ազգ քան զնոսա, զի ի բուն իսկ յերկինս եւ ոչ մի ոք յիմանալեացն եմուտ՝ ըստ այնմ.* «Ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ՝ որ էջն յերկնից» (Յովհ. Գ. 13): *Եւ որպէս խոստացաւ առաքելոցն, թէ՝* «Ուր եսն եմ, եւ դուք անդ ընդ իս իցէք» (Յովհ. ԺԴ. 3)*: Եւ առ Հայր կարդալով, զայս աղաւթէր.* «Կամիմ,- ասէ,- զի ուր ես եմ, եւ սոքա անդ՝ ընդ իս իցեն, զի տեսանիցեն զփառս իմ» (Յովհ. ԺԷ. 24)*: Արդ, յայս բարձրութիւն մտին մարդիկ՝ խաղալիկքն դիւաց, որ հրեշտակաց անգամ անմտանելի է, ախտացան ստուգապէս, զի կրի եւ ի նոսա այս ախտ, որ առ մեզ ոգւոց միայն է, եւ է այս նախանձ եւ փառասիրութիւն եւ ամբարտաւանութիւն, բայց ոչ զաւրանայ՝ բռնանալ եւ նեղել զնոսա, որպէս եւ զմեզ: Վասն որոյ ի դէպ է ասել զայս, թէ ախտացան, զի յայնպիսի պատիւ բնութիւն նոցա ոչ ել եւ որչափ եղեն, այլ ինչ յաւելուած պատուոյ ոչ առին: Եւ այս է ասելն.*

Այս քանի ամք են, զի ծառայեմ քեզ եւ երբէք զպատուիրանաւ քո ոչ անցի. եւ ուլ մի ոչ եպուր ինձ, զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ: Իսկ յորժամ այս որդի քո եկն, որ անառակութեամբ ծախեաց զամենայն ժամանակն, զեներ դմա զեզն պարարակ (հմմտ. ԺԵ. 29-30):

Արդ, ոչ եթէ զայս ասել ոք բաւական է, այլ միայն խորհեցան ախտիւ նախանձուն, այլ Հայրն բոլորեցունց մեծաւ խնամակալութեամբ սփոփանս բանից մխիթարութեան առաջի դնէ եւ նոցա:

«Որդեակ,- ասէ,- դու հանապազ ընդ իս ես: Եւ որ ինչ իմ է, ամենայն քո է» (հմմտ. ԺԵ. 31):

Ըստ առաջին տեսութեան, որպէս ցուցաւ, թէ յաւդուածք են բանից մարմնաւորացս կրից, որ առաջնորդութիւն տան յիմանալեացն տեսութիւն, այսպիսեաւքս չափել զնոցայն եւ որպէս պատշաճ է իմանալ վասն նոցա, զի են անկարաւտ բնութեամբ եւ յայնքան բարձրութեան կացեալ եւ ոչ յախտալից եւ ոչ տխրական ինչ կեանս կամ հարկեցուցիչ ի մեղս: Եւ զայս ամենայն մեծութիւն պատուոյ ոչ արեամբ եւ ոչ ճգամբք կամ տաժանելի կրիւք ստացան, այլ ընդ ստեղծուածին՝ յամենառատ պարգեւատուէն ձրի շնորհ ընկալան: Իսկ հէք եւ թշուառական մերս բնութիւն ընդ թանձրագունի եւ վայրաբեր մարմնոյ կապեալ, եւ աւրէնք բազ-

մապատիկ ըստ ախտիցն չափեալ, եւ բնութիւնս պատերազմող, եւ հակառակ մեզ կացեալ, եւ աւձն խաբող, եւ յիմարութիւնն անտեղի[1], եւ ցանկութիւնն ձգող, եւ կարիքն հեշտութեամբ ըմբռնող, եւ գրգռիչն շարժող, եւ որ տիրեացն, մեծաւ բռնութեամբ կապեաց, եւ կուրութիւնն զդուռն փակեաց, եւ անգիտութիւնն զճանապարհն կորոյս, եւ հիւանդութիւնն զիմաստութիւնն ելոյծ եւ թմրութիւնն զխորխորատն ծածկեաց, եւ կամքն զտեսութիւնն կապեաց եւ լուծիչն այսոցիկ կարի ծանր եւ տաժանելի՝ արիւն, քիրտն եւ ապաժոյժ սով եւ մերկութիւն, արտաւսր եւ հառաչանք, բանտ եւ կապանք, քերանք եւ նախատինք, տքնութիւն եւ գետնախշտի լինիլ: Եւ զի՞նչ եւս զամենայն յաւելից զվիրացն զբժշկիչ պատուիրանն, յորմէ յամենեցունց յայսցանէ ազատ են իմանալիքն, որով աւրէն էր արդարադատ Հաւրն դատել զերդայրն դատիչ կորուսելոյն եւ զանձն ազատել յանիրաւ կարծեաց: Առ այս, զի եւ հաւասար արարիչ, կամ թէ Հայր համարձակելի իցէ ասել, որ այսպէս կապեաց եւ այնպէս ազատս եթող, այլ վասն զի գթած է, խնայէ, զի մի դժուարեսցի յանդիմանութեամբն, եւ այլովք տայ զիրաւունս:

Մեռեալ էր,- ասէ,- եւ եկ[ե]աց, կորուսեալ էր եւ գտաւ (ԺԵ. 32):

Ո՞վ ոք այնպէս խիստ եւ վայրագ իցէ, որ ոչ խնդայ ընդ այն, յորժամ ի մեռելոց զոք տեսցէ եւ կամ զկորուսեալն գտցէ: Յայս միտս Հայի եւ այն, զոր Տէրն առ փարիսեցիսն ասաց. «Ոչ են,- ասէ,- պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց» (հմմտ. Մարկ. Բ. 17): *Այսպէս եւ աստ ցուցանէ զպատարագելն Որդւոյ, զի գնեսցէ զմեզ արեամբ խաչին, եւ այս գերելոցն պէտք են եւ պատշաճ, եւ ոչ նոցա, որ մնացին յիւրեանց պատուին եւ պայծառութեան: Նոյնպէս եւ ուրախանալն, զի որպէս վասն մեռանելոյն եւ կորստեանն՝ տրտմութիւն, այսպէս եւ ի յառնելն եւ ի գտանելն՝ ուրախութիւն:*

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Առն միոջ էին երկու որդիք (Ղուկ. ԺԵ. 11):

Զի զամենայն, ինչ Քրիստոս անձամբ վճարեաց, զխնամս գթութեանն եցոյց: Զի գնաց զհետ մոլորեալ ոչխարին եւ եգիտ զպատ-

[1] ԻՏ տեղի] անտեղի

կերն թագաւորական, զի մի՛ Որ[դ]ոյ միայն շնորհակալ լիցին արարածք ամենայն: Ցուցանէ ասա զՀաւր սեփական խնամակալութիւնն, քանզի նա հաճեցաւ Որդոյն միջնորդութեամբ, որ պատարագեցաւ վասն մեր:

Առն միոջ էին երկու որդի[ք] (ԺԵ. 11):

Պատիւ զնէ ծառայական բնութեանն եւ արարիչ բնութեանն: Երէց են հերշտակք, զի յառաջնում աւուրն գոյացան, յորժամ ասաց Աստուած. «Եղիցի լոյս» (Ծնն. Ա. 3): *«Ի լուսոյ եղեն», որպէս Գրիգոր Աստուածաբան ասէ: Առաջին լոյս՝ Աստուած եւ երկրորդ լոյս՝ հրեշտակք եւ երրորդ լոյս՝ մարդ, զոր. «Փոքր ինչ խոնարհ արար քան զհրեշտակս»* (Սաղմ. Ը. 6). *ասաց Դաւիթ:*

ՍՏ *Երէց որդի զհոգիս նշանակէ, որք ո՛չ մեղան, եւ կրսերագոյն՝ զհոգիսն, որք մեղան եւ ապաշխարեն: Եւ վասն է՞ր են կրսերագոյն հոգիք անառակացն: Վասն անառակութեան եւ վասն բարժանելոյ յառաքինութենէ եղբաւր[ն] իւրոյ, վասն որոյ կրսեր կոչեցաւ, եւ երէց՝ հոգիք արդարոցն: Հայր այժմ զՔրկիչն կարծեմ, որ ասաց ցաշակերտսն. «Որդեակք իմ»* (Յովհ. ԺԳ. 33): *Եւ դարձեալ. «Քաջալերեաց, դո՛ւստր, հաւատք քո կեց[ուցին զքեզ]»* (Մատթ. Թ. 22):

Ասէ կրսերն ցհայրն. «Տուր ինձ բարժին» (ԺԵ. 12):

ԻԳ *Առակիս դէմս այսպէս պահանջեն եւ կարգ բանից:*

Եւ նա բարժանեաց նոցա զկեանսն (ԺԵ. 12):

Զոր ստացաւ արարչութեամբ եւ ետ իմանալեացն զերկնից բնակութիւն: Իսկ զգալեացս մեզ՝ զդրախտն ի բնակութիւն եւ ամենաբարի, եւ անկարաւտ, անմահ եւ անապական յամէնառատ պարգեւէն, եւ ո՛չ պահեաց գործակցութեամբ չարին: Կամեցաւ աստուածանալ եւ անաստուած կալ ի դրախտի անդ, եւ յաստուածատուր փառացն մերկացաւ:

Եւ յետ ոչ բազում աւուրց (ԺԵ. 13):

Յայտ արար, զի ո՛չ եկաց ժամանակ ինչ ի վայելչութեան[ն], ի փափկութեան դրախտին, այլ ի սակաւ աւուրց ինչ վաղվաղակի անց զպատուիրանաւն:

Գնաց յաշխարհ հեռի (ԺԵ. 13):

Սպ. *Զիք տեղի հեռի յԱստուծոյ. «Թէ ելանեմ յերկինս, դու անդ ես, եւ թէ իջանեմ ի դժոխս, անդ մերձ ես»* (Սաղմ. ՃԼԸ. 8): *Թէ՝ «Առից զթեւս իմ, բնակեցայց յեզր ծովու, սակայն անդ ձեռք քո տիրեսցեն* (հմմտ. Երեմ. ԻԳ. 23-24): *Արդ՝ չիք տեղի, որ որոշէ զմեզ յԱստուծոյ, բայց միայն մեղք: Որպէս ասաց Տէր. «Մեղք ձեր որոշեն ի մէջ ձեր եւ Աստուծոյ»* (Ես. ԾԹ. 2): *Մերկացաւ Ադամ ի դրախտէն լուսոյ, որով ծածկեալն էր, եւ ամաւթով կորանայր եւ ի մէջ ծառոցն թաքուցանէր զանձն: Եւ անմահն մահկանացու եղեւ: Վասն այնորիկ հան, արձակեաց զնա ի տեղոջէ անմահիցն յերկիր մահկանացու եւ ապականելի:*

Սպ. *Յերկիր հեռի յարդարութենէ եւ յերկնային կենդանութենէ, յերկրային ցանկութիւնս, եւ ի խաւարային յաշխարհս յայս:*

Անդ վատնեաց զինչս իւր (ԺԵ. 13):

Իգ. *Զաստուածային շնորհաց զպակասումն ասէ: Զի թէպէտ եւ ել ի դրախտէն, սակայն մնաց առ նմա փայլակն ի շնորհաց հոգոյն: Զոր եթէ պահեալ էին ադամայինքս մաքուր վարիւք, երանելի ոմն էին, որպէս Աբէլ եւ Ենովս, Ենոք եւ Նոյ:*

Զի կեայր անառակութ[եամբ] (ԺԵ. 13):

Վասն որոյ եւ անառակ վարիւք զայն եւս կորոյս եւ հեգ եւ թշուառական գտաւ՝ թափուր յամենայն բարի պարգեւաց հոգոյն:

ՍՏ *Զոր Հայր աւանդեաց նմա զինչս, որ են առաքինութիւնք, իսկ նորա, զհրամանաւ Հաւրն, զանց արարեալ՝ կորոյս զամենայն առաքինութիւնսն:*

Սկ.(գր.) *Ես ո՛չ փախեայ եւ ի գործոց տղմականաց՝ ո՛չ զանհնարինն զմտաւ ածելով սովոյ կղկղանս, դիմեցի առ Հայրն, եւ ո՛չ զանբաւ գթութիւն նորա, կալայ ջատագով յանձն զրկեալս յողորմութենէ շնորհի նչխարին, թէպէտ եւ զանմեղութիւն ո՛չ պահեցի եւ սրտահաճութիւն բարեսէր Հաւրն եւ ի գիտութիւն գալ ճշմարտութեանն եւ կեալ սիրելի ամենեցուն, որպէս ասս, որ շարագրեցի՝ ուսեալ զամենայն գործս աստուածային առաքինութեան ի Քրիստոսէ եւ յաշակերտաց նորա, եւ արտաք[ս]եցայ անառակ գործովք վարեալ:*

Եւ իբրեւ սպառեաց զամենայնն (ԺԵ. 14):

Գր. *Զպակասեալն ի բարեաց գործոց եցոյց, եւ անկաւ ի բարեաց շնորհացն Աստուծոյ: Եւ յետ այսորիկ ճշմարիտ աստուածածանութիւն բարձաւ ի նմանէ:*

Եղեւ սով սաստիկ յաշխարհին յայնմի[կ] (ԺԵ. 14):

Դառնագոյն եւ տաժանելի է հոգոյն սովն: Թէպէտ եւ ոմանք յիմարեալ կրեն զնա եւ ո՛չ իմանալ կարեն, սակայն տագնապին անըմբերելի սովովն խարշեալք: Ըստ այնմ՝ «Տայց ձեզ ո՛չ սով հացի եւ ո՛չ ծարաւ ջրոյ, այլ սով ի լսելոյ զԲանն Տեառն» (Ամովս Ը. 11): *Յաղագս այնորիկ՝ չքաւորել:*

ՍՏ *Կամ սով ի խնամակալութենէն Աստուծոյ, զի նուազեալ ի բարեացն դարձցի առ Հայրն, ցանկացեալ Հաւրն մարդասիրութեանն եւ գորովասիրութեանն:*

Եւ սկսաւ չքաւորել (ԺԵ. 14):

Այսինքն է՝ մոռացումն եկն իւրոց ցանկութեանն եւ յորմէ անկաւ յամենապատիկ շնորհացն:

Գնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացեաց աշխարհին այնորիկ (ԺԵ. 15):

ԻԳ Զի ի ստոյգ գիտութենէն Աստուծոյ վրիպեցաւ մարդ եւ յարեցաւ ի դեւս: Ըստ այնմ, եթէ՝ «Թողին զիս եւ ընդ դեւսն բեւեռեցան» (հմմտ. Երեմ. Ա. 16): *Եւ թողին զաղբիւրս ջրոյ կենդանութեան եւ փորեցին իւրեանց ջրհոր ծակոտկէն, որ ո՛չ տանի ջուր: Կուռք, որոյ անունն Աստուծոյ էր, ի վերայ նորա աւգնութիւն եւ ո՛չ երբեք: Սկսան այնուհետեւ դեւքն պատիր խաբէութեամբ երեւումն տալ սնոտիս, որով հաւանեցան մարդիկ ծառայել նոցա:*

Եւ նա անյագ չարութեամբ վարեցաւ ընդ մեզ եւ եհեղ զբարկութիւն իւր: Քանզի ընդդէմ Աստուծոյ հաստատեաց զինքն ե՛ւ թշնամի ե՛ւ հակառակ Արարչին: Համբարձաւ եւ անկաւ ի պատուոյն, եւ հնազանդեցոյց զմեզ ընդ իւր անկել, եւ տիրեաց բնութեանս մերում: Եւ զի Աստուծոյ փառացն վնասել ո՛չ կարաց, գտեալ զմեզ պատկեր Աստուծոյ՝ ամենայն զազրալի գործովք թշնամանեաց զկերպարանս մեր քան զամենայն անարգ կենդանիս: Որպէս ատելի ոք թագաւորի նմա, վնասել ո՛չ զաւրէ, որդոյ

նորա կամ ծառայից թափէ զդառնութիւն՝ թագաւորին համարելով զվնասն:

Առաքեաց զնա յագարակ իւր ար[ա]ծել խո[զս] (ԺԵ. 15):

Քանզի այսպէս գիտեն պատուել դեւք զ[ը]նդունողս իւրեանց, վասն զի յաշխարհիս վարս վերջին գործ անարգութեան խոզարածն է եւ հոգոց անմաքուր վարք, զոր հաւանեցոյց ի զազրագոյնս [ի] կենդանեաց ի պաշտաւն առնուլ եւ զոհս մատուցանել եւ երկիր պագանել իբրեւ Աստուծոյ: Ըստ առաքելոյն՝ «Փոխեցին զփառս անեղին Աստուծոյ ի նմանութիւն պատկերի եղծանելի՝ մարդոյ եւ թռչնոց եւ չորքոտանեաց եւ սողնոց: Վասն այնորիկ մատնեաց զնոսա Աստուած ի միտս անարգութեան ի պղծութիւն» (Հռոմ. Ա. 23-24): *Զինչքա՞ն զայս անարգութեան կիրք խոզարած լինել գարշութեամբ անասնոցն եւ վատթար գնացիւք, եւ յիմարագոյն քան զանասունս գտաք, զի՝ «Եղն եւ էշ զմսուր ստացչին իւրոյ ծանեան»* (հմմտ. Ես. Ա. 3), *եւ մարդիկ զԱրարիչն իւրեանց ո՛չ ծանեան:*

Ստ. *Կամ յերկնաւոր գաւառէն սատանայ եւ պաշտաւնեայք նորա հեռացան: Եւ մտին յագարակ սատանայի, ուր ո՛չ տունկք երկնաւորք, զոր տնկեաց Հայր: Եւ իբրեւ խոզք զմարգարիտն կոխեն եւ անցանեն: Նա է խոզարած, որ զցանկութիւն մարմնականս կատարէ եւ թաւալի ի ժանդահոտութիւն ախտից մարդկան, այլ այնպիսիքն պիղծ հոգովն լցեալ են, եւ ի մարմին սերմանեն եւ ո՛չ ի հոգի:*

Ցանկայր լնուլ զորովայնն յեղջերէն, զոր խոզքն ուտէին, եւ ո՛չ ոք տայր նմա (ԺԵ. 16):

ԻԳ *Զի անասունք, զոր բնաւորեաց ի նոսա, Արարիչն պահեցին, զի գոյ բնական առաքինութիւն յանասուն կենդանիս: Որպէս արագիլ արդար ի գրոց ասացաւ եւ տատրակ՝ ողջախոհ, եւ անասունք ճանաչեն զամուսնութեան զսահման եւ խնայեն ի ծնունդս իւրեանց: Իսկ մարդիկ եւ զայս եւս լքին եւ զծնունդս իւրեանց այրեցին առաջի դիւաց, յորոյ վերայ անասունք զանձինս իւրեանց մատնեն: Այլ մարդիկ զոհեցին զուստերս եւ զդստերս դիւաց յաւժարութեամբ: Նաեւ ո՛չ իբրեւ զմտաւորս եւ զբանաւորս կերակրիմք զհաց հաւատոյն, որով հաստատին ոգիք ի բարեպաշտու-*

թեան եւ զի բնաւ, որ կերակուր է խոզից, աւրինաւք բնութեամբ վարիլ ի ցանկութիւնս: Իսկ մարդիկ աղտեղագոյն եւ գարշ խառնակութեամբ անարգեցին զբնութիւնս, զի մի՛ ասացից զիգացն եւ զարուացն, զոր առաքեալ նախատէ զխայտառակութեան գործն եւ զոլովիւքն զանց արարից վասն պարկեշտութեան լսողացն: Զոր Յովէլ ասէ, թէ՝ «Պակասեցան կերակուրք ի տանէ Աստուծոյ» (Յովէլ Ա. 16)՝ *գիտութիւն սուրբ յանմաքուր անձանց:*

US *Կամ բանական հոգի ցանկայ վարդապետութեան բանից: Թէպէտ եւ ո՛չ բարիոք է վարդապետութիւն, որպէս եղջերդ այդ պտուղ քաղցր, ընդ նմին եւ դառն, որ նշանակէ զբան մարմնասիրաց, որք ասեն զմարմնական ցանկութիւն բարի՝ «Ըստ մարմաջելոյ լսելեաց իւ[րեանց]»* (Բ. Տիմոթ. Դ. 3):

Եւ ոչ ոք պայր նմա (ԺԵ. 16):

Բարեմտաց զխախտեալ ուսմունս ո՛չ աւանդեն յետինքն, զի մի՛ յանդիմանեսցին:

Եկեալ ի միտս իւր (ԺԵ. 17):

Քանզի ի միտս եկեալ անառակին՝ յիշեաց զառաջին բարետոհմութիւնն եւ զյետին թշուառութիւն, զոր անառակութեամբ ստացաւ, ապա զմտաւ ած դառնալ յԱրարիչն: Ծանեաւ ի խնամոց աստի կենացս, եթէ՝ «Գթած է իբրեւ զՀայր» (հմմտ. Զ. 36), *որք ի չարիս հարեալ են եւ յԱստուծոյ թիկունս դարձուցեալ: Եւ նա ի բաց ո՛չ դառնայ, այլ տակաւին խնամէ զպէտս բնութեանս յերկնից եւ յերկրէ զպտուղս եւ զտարածումն լուսոյ, զճառագայթից ծաւալումն, զաւդոց ցնդումն: Քանի՞ եւս ունի բարեգործել հոգեւորապէս դարձելոցն առ նա, քանզի ունէր մարդն բնութեամբ եղեալ ի նմա յԱրարչէն՝ ճանաչել զԱստուած եւ սիրել զնա եւ ընտրել զբարին եւ զչարն ի միմեանց: Թէպէտ եւ աստուածխաւսութիւնք լռեցին եւ ուսուցիչ ոչ ոք էր, եւ զայս առաքեալ յայտնեաց, թէ՝ «Գիտութիւն Աստուծոյ յայտնի էր ի նոսա, քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա: Զի աներեւոյթ աստուածութիւն եւ զաւրութիւն ի սկզբանէ աշխարհիս արարածովքս իմացեալ տեսանին, զի ոչ գտանիցին տալ պատասխանի: Զի ծանեան զԱստուած, եւ ոչ իբրեւ զԱստուած փառաւորեցին կամ գոհացան, այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց»* (Հռոմ. Ա. 19-21): *Աստի իմանամք, եթէ բնական*

իմաստութեամբ քննեցին զարարածս եւ զշրջանս լուսաւորացն եւ բազում արուեստս գտին, վասն որոյ նովին իմաստուն քննութեամբ պարտ էր իմանալ զԱրարիչ ամենեցունց, որ գերիվերոյ կացեալ իշխան՝ կառավարէ զամենայնն:

US *Եւ յինքն եկեալ որպէս զթմբրեալ, եւ զթմբրութիւն ի բաց ընկեցեալ՝ յիշեաց զՀաւրն երանութիւն:*

Քանի՞ վարձկանք են (ԺԵ. 17):

Թուի, թէ որք կարգեցան լուսաւորք յԱրարչէն ծառայել մարդկան եւ իբրեւ որդոց կալ ի սպասաւորութիւն: Միշտ անցանելով չափեն զժամանակս՝ ջահ լուցեալ ի վերուստ լուծանելով զխաւար եւ սնուցանելով զպտուղս, որ վասն մեր կան ի ծառայութիւն:

Սպ. *Վարձկան կոչի, որ ծառայէ Աստուծոյ կամ այլ ումեք: Եւ ծառայէ ո՛չ վասն սիրելոյ զնա, այլ փոխանակ ծառայութեանն վարձուց ակն ունիցի:*

Ի պան հաւր իմոյ (ԺԵ. 17):

ԿՐ *Տուն ասի, որ է եկեղեցի Աստուծոյ, յորում երկրպագի երկնաւոր Հայրն:*

Հացալիցք (ԺԵ. 17):

ԻԳ *Զի գեղեցիկ են պայծառութեամբ եւ անկարաւտք ամենեւին, իսկ մարդկան բնութիւնս թշուառութեամբ լի եւ խաւարաւ անգիտութեամբ փակեալ, մինչեւ սովամահ կորնչել զյաւիտենական կորուստն:*

Կր. *Իսկ «Հացն կենաց իջեալ յերկնից»* (Յովհ. Զ. 41) *Քրիստոս է, որ բաշխի ի վերայ սրբոյ սեղանոյ[ն]:*

Յարուցեալ գնացից առ հայրն իմ (ԺԵ. 18):

Եւ եկեալ՝ զփութապէսն ասէ, զի որք դառնան եւ ապաշխարելն խորհին, նոյնպէս մի՛ յապաղեսցեն:

Ասացից. Հա՛յր, մեղա յերկինս (ԺԵ. 18):

«Յերկինս» ասելով՝ զառաջին յանցանսն, որ ի դրախտին, գուշակէ, զի անդ նախ՝ մեղաւ մարդկային բնութիւնս, որ եւ երկինք անուանի վասն անախտութեանն եւ անապականութեանն:

ՍՏ *Յերկնաւորս մեղայ, զի թողի զերկնաւորացն գործն եւ յերկրաւորս քարշեցայ ի խնամոցն Աստուծոյ:*

ԻԳ *Այսպիսի եղեւ բնութիւնս: Թէպէտ եւ զիւրամեղ է, սակայն առանց ուսանելոյ ինքնագէտ է ապաշխարութեան եւ ապաշաւանաց, զոր գործեաց: Որպէս Տէրն գովեաց զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար* (տե՛ս Ղուկ. ԺԶ. 1-8), *եւ որպէս նինուեացիքն, որ ի մարգարէէն կործանումն միայն լուան եւ իմացան, եթէ Աստուած է, որ վասն անաւրէնութեան կորուստ սպառնայ եւ վասն արդարութեան կեցուցանէ* (տե՛ս Յովհ. Գ. 5-10):

ԳՐ *Մեղայ, Տէ՛ր, մեղայ, եւ [զ]անաւրէնութեանց իմոց ես ինձէն վկայեմ:*

Սկ. *Եւ գրեմ զպարտուց զսակ[ս] անձինս մեղաց, քան զհող երկրի հմափոշոյ մեղայ բարերարիդ գթութեանց անարգս մեղայ:*

Եւ առաջի քո (ԺԵ. 18):

Զի անցեալ զպատուիրանաւ քո ի սատանայ յարեցայ:

Ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո, արա՛ զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց (ԺԵ. 19):

ԳՐ Անառակ որդին պատկառանաւք հայրենի գթոցն թախանձանս արկանէր՝ ողորմելի եւ աղերսական ձայնիւ, արտասուագո՛ղ ողբով մատուցեալ առաջի քո, «**Հա՛յր գթութեանց եւ Աստուած**» (Բ Կոր. Ա. 3) *բոլորից:*

Չեմ արժանի եւ բնաւ ծառայ կոչիլ (ԺԵ. 19):

Ոչ միայն որդի, այլեւ անպիտան վարձկան: Ընկալ զսովեալս եւ զտարագրեալս վնասիւք, եւ զցաւս քաղցոյ լկանաց նուազեցելոյս կեցոյ հացիւդ կենաց, յագեցոյ եւ բժշկեայ եւ ողորմեայ:

Յարուցեալ եկն առ հայրն: Եւ մինչդեռ հեռագոյն էր, եպես հայրն եւ գթա|ցաւ| (ԺԵ. 20):

ՍՏ *Դեռեւս հեռի էր, վասն զի ի յանցանացն ո՛չ էր թաւթափեալ, միայն զղջացեալ փութայր առ հայրն: Ո՛վ մեծ մարդասիրութիւն Հաւրն* |**ԻԳ**| *եւ ամենաբարի բնութիւնն: Ո՛վ քանի՞ անչափ են խնամքն Քրիստոսի, որ զծածուկս Հաւրն կամացն յայտնեաց մեզ եւ ընտանեցոյց Որդի[ս] անուանելով, որ եւ ծառայս ո՛չ*

էաք՝ արժանաւորք, եւ զնա Հայր անուանեաց զարարչագործն եւ, որ ինչ կարի սեփական է, սիրոյ եցոյց:

Յարեաւ ընթացաւ ընդառաջ (ԺԵ. 20):

ՍՏ *Թուի, թէ զառակիս դէմս առ Աբրահամ դնէ, զբնութիւնս մեր գուշակէ: Արդ՝ իբրեւ էր Աբրահամ յՈվր քաղաքի, քաղաքի քաղդեացոց, եւ անդ երեւեցաւ նմա Աստուած, յորժամ պաշտէր զտարերս լուսաւորաւքդ: Եւ նա խնդրեաց գտանել զԱստուած, եւ արագ եգիտ զԱստուած: Եւ պատմեաց զաւետիսն տոհմի իւրոյ եւ հաւատացին, եւ յուժարեցան գնալ յոր կողմ եւ երթայցէ Աբրահամ: Բայց եղբայր իւր Առան ո՛չ հաւատաց տեսլեանն, սատակեաց զնա Տէր* (տե՛ս Ծնն. ԺԱ. 28):

ԻԳ. *Ո՛չ ապաշխարութիւն ինչ, ո՛չ արտասուք, ո՛չ հառաչանք, այլ միայն դիմեաց գնալ: Եւ նա տեսեալ՝ ընդառաջ գնաց: «Հաւատ[աց] Աբրահամ յԱստուած, եւ համարեցաւ նմա յարդարութիւն»* (Հռոմ. Դ. 3) *եւ, որք ի հաւատոց անտի են, աւրհնին ընդ հաւատացելոյն Աբրահամու: Եւ Աստուած փառաց երեւեցաւ հաւր մերում, մինչեւ բնակեցուցեալ էր զնա ի Խառան, զինչքա՞ն զայս ընդառաջ լինել հաւրն անառակին:*

ՍՐԿ *Իւրով ի բազում գթով ընթացաւ ընդառաջ, որպէս բարեգործի ումեք որդոյ ի սկզբանէ: Նա եւս առաւել որպէս փափագող կենդանութեան մեռելոյ եւ ի գիւտ կորուսելոյ:*

Անկաւ զպարանոցաւ նորա (ԺԵ. 20):

Սգ. *Որ ազատեալն էր ի լծոյ սատանայի:*

Եւ համբուրեաց զնա (ԺԵ. 20):

Տայր նմա եւ զհամբոյրն՝ նշանակելով զմիաւորութիւն առ որդին:

Սրկ.(սգ.) *Ո՛չ արդեւք յիշեաց ինչ խնամ առատն զառաջին անզգամութեան զսխալանացն սաստկութիւն վերստին առ ինքն դարձմամբ: Ո՛չ զարշեցաւ ի տգեղութենէ հոգոյ նորա մաքուրն յամենայնի: Եւ գերազանցեալ սրբութեամբ ծայրագունիւ՝ ո՛չ անսաց ի կատարում գալ գործով, զոր ինչ խորհեցաւ թշուառացեալ որդին՝ հայելով ի սրտին ախորժակն միայն, արար մոռացումն ապիրատութեանն: Գիրկս արկանէր զերբեմն ապստամբելոյ*

որդոյն [գ]պարանոցաւն՝ համբուրելով վասն կարաւտութեանն: Զտարաժամ անդրէն դարձեալ որդին, զի թէպէտ եւ անագան, սակայն ո՛չ անարժան գովութեան:

ԻԳ *Արդ, երեւեցաւ Աստուած Աբրահամու առ կաղնե[ա]ւն Մամբրէի: Աբրահամ ընդառաջ գնաց, երկիր եպագ եւ ետ ողջոյն եւ համբուրեաց* (տե՛ս Ծնն. ԺԸ. 1-5): *Ահաւասիկ անկաւ զպարանոցաւ անառակին եւ համբուրեն, եւ նստեն առ նմա, լուանալն եւ ուտելն* (տե՛ս Ղուկ. ԺԵ. 20-23):

Ասէ ցնա որդին. «Հա՛յր, մեղայ յերկինս» (ԺԵ. 21):

Կր. Լե՛ր ընդառաջ քո ողորմութեամբ, բանաւորացս ապաւինութիւն:

Իգ. Թէպէտ եւ հայրն անյիշաչար եղեւ, սակայն նա խոստովանի զյանցանացն ստահակութիւն: Եւ այս իսկ է պիտանացու: Զի յորժամ մեք յիշեմք՝ Աստուած թողու եւ մոռանայ զյանցանսն, իսկ յորժամ մոռանամք՝ նա յիշէ զանաւրէնութիւնս մեր: Արդ, զդէմս Ադամայ եւ ամենայն ծննդոց նորա առեալ՝ նահապետին ասէ. «Հա՛յր, մեղա՛ յերկինս»:

ԿՐ Զդրախտն կոչեաց երկինս, յորում՝ առաջին [յ]անցանքն եւ դատապարտութիւնքն, որով այսքան ապականութիւն հեղաւ ի բնութիւնս մեր: Իսկ «[յ]երկինս» ասել զդրախտն՝ վասն տեղոյն գրութեան եւ անմահ եւ անապական կենացն:

«Մեղա՛ եւ առաջի քո» (ԺԵ. 21):

Գր. Զի ո՛չ թաքուստ եւ անյայտ ուրեք, այլ առաջի ամենատես աչացդ, ուր չիք հնար թաքչել, զի զանգործս իմ տեսին աչք քո եւ ի գիրս քո ամենեքին գրեցան:

«Ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո» (ԺԵ. 21):

Այսպիսի միտս ունել պարտ է յանցաւորաց: Թէպէտ եւ ի խնամոցն Աստուծոյ արժանաւորին թողութեան, սակայն զանձինս առ յանցաւորս պարտ է ունել եւ յիշատակաւ մեղացն խոնարհել:

Զի որչափ մեք զանձինս ի խոնարհ ընկենումք, նա ի վեր տանի, եւ որչափ ամբառնամք, նա ի ստորեւս ընկենու:

Ասէ հայրն զծառայս իւր. «Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին եւ զգեցուցէք» (ԺԵ. 22):

Ըստ որում՝ «Եւ զեղն պարարակ, ասաց, զենուլ» (հմմտ. ԺԵ. 23): *Եւ ոչ ի նմին զենեալ էր, այլ խորհրդով զենաւ վասն յուսոյն վստահութեան: Նոյն աւրինակաւ զգեցան արդարքն զզգեստն անապականութեան զՔրիստոս յուսով խոստմանն: Եւ ո՛չ եմք մատուցեալ ի լեառն շաւշափելի, այլ յիմանալի լեառնն եւ ի բանակս բիւրաւոր հրեշտակաց: Եւ տակաւին յաշխարհի եմք, բայց հաւատով ունիմք զպարգեւս: Նոյնպէս եւ աստ ասէ.*

Զգեցուցէք (ԺԵ. 22):

Դէմք են առակաւոր բանից, զի ո՛չ ըստ աւրինի թագաւորաց պաշտաւնէիւք վճարէ, բայց ամենակատար բնութիւնն ո՛չ կարաւտի սպասաւորաւք վարիլ, որոյ կամելն գործ է կատարեալ:

Իգ. Զգեցոյ գթած եւ անոխակալ, անաւրինեալ մեղաւորիս զանկապուտ հանդերձին զծածկոյթ:

ՍՐԿ *Արդ՝ մերկութիւն նշաւակութեանս ո՛չ տերեւ թզենոյ,*

Գր. այլ զեղեցիկ պատմուճանաւ լինէր զգեցեալ, զոր ունէր նախքան զաւտարանալն ի Հաւրն պայծառութենէն:

ՍՏ *Կամ առաջին պատմուճան՝ զառաջին զարդ հոգոյն, որով զարդարէ եւ ուրախացուցանէ զհոգի ապաշխարողացն եւ ի բաց ընկենու զտրտմական անզարդութիւն յանցանացն:*

«Տուք զմատանին ի ձեռս նորա» (ԺԵ. 22):

ԿՐ *Զազատութիւն ի ծառայական կարգացն, եւ զորդեգրութեան աշտիճան ի ձեռն որդեգրութեան աւազանին պատմուճանաւն:*

ՍՏ *Մատանի՝ զնկարագիրն, որով գործական հոգին զարդարի:*

Գր. *Արդ՝ աւանդակորոյս ձեռացն աղտեղեալ մեղաւք՝ զկնիք մատանոյն համարձակութեան ամենառատ կամաւք մատուցես ինձ:*

Իգ.(գր.) *Կամ զի քանդակուածով ականն զնոյն թագաւորական պատկերն նշանակէ, զոր դարձեալ դրոշմէ ի նա զտիպս թագաւորական կնքոյն:*

«Եւ զկաւշիկս յոտս նորա» (ԺԵ. 22):

Կր. *Զի աներկիւղ լիցի գարշապարն ի թիւնից աւձին՝ ընթանալ զյաւիտենական ճանապարհն: Կաւշիկս ո՛չ զեգիպտացոցն, զոր հրամայեաց ի բաց ընկենուլ այնոցիկ, որ գնան ի վերայ Սուրբ երկրի, այլ որ ի պատրաստութենէ սուրբ աւետարանին կազմեցան:*

Գր *Նաեւ զգարշապարացն թշուառութիւն ամրացոյց ի խածանող վիշապէն: Զմերկութիւն ոտից ամուր վերարկու՝ պահպանութեամբն ամրափակէ վերստին խորհրդական կաւշկաւք:*

Իգ. Զի համարձակ լիցի կոխել զգլուխ կամակոր աւձին եւ զամենայն զաւրութիւն թշնամոյն: Եւ իբրեւ զթագաւոր նըստուցանէ պատ[ո]ւով յաթոռ զբնութիւնս մեր:

«Ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք» (ԺԵ. 23):

Ո՛վ մեծ խորհրդեանս եւ արժանի զարմանալեացս, որ հիացուց անէ զթանձրամիտս ընդ Հաւրն գթածի, որ վասն անառակ ծառայից փրկութեան զստոյգ եւ զսիրելի Որդին ի զենումն տայ ուրախութեամբ:

«Ուրախ լիցուք» (ԺԵ. 23):

Ընդ Որդոյն, որ զայս ամենայն առաջի դնէ լսողացն՝ վասն անձին իւրոյ զենման յուրախութիւն ապստամբացս: Վկայէ եւ Եսայի. «Որպէս զոչխար ի սպանդ վարեցաւ, եւ որպէս զորոջ առաջի կտրչի անմռունչ կայ» (Ես. ԾԳ. 7):

Սպ. *Արդ, զուարակ պարարեալ՝ Բանն ողջախոհ վարդապետութեամբ, կամ ինքն իսկ Քրիստոս Բան եւ իմաստութիւն Աստուծոյ: Որպէս Սողոմոն ասէ. «Իմաստութիւն շինեաց իւր տուն եւ կանգնեաց սիւնս եւթն: Զէն զգենլիս իւր եւ խառնեաց զխառնելիս իւր»* (Առակ. Թ. 1-2):

ԿՐ *Զի մկրտելոցն եւ որդիացելոցն վայելէ մարմին եւ արիւն Փրկչին:*

Գր. *Մարդասիրութեամբ կարաւտելոց բաշխեաց նուէրս առատապէս, որ մատուցեալ միշտ բաշխի եւ կայ անպակաս ի լրութեան: Յարակայ զենեալ ի սպանդարանի անթիւ սեղանոց՝ անսպառութեամբ բոլոր յամենեսին եւ ընաւ յամենայնի: Էութեամբ է յերկինս եւ իսկութեամբ յերկրի, աննուազ մարդկութեամբ եւ անթերի աստուածութեամբ զենեալ եւ բաշխեալ ի մասունս անհատս, զի զամենեսին հաւաքեսցէ առ ի նոյն մարմին զլխոյն իւրում:*

Եւ արդ՝ Հայր ամենագութ, որ զամենայն անպատում պարգեւեցեր մարդկան՝ յաղթեալ ի մարդասիրութենէ քումմէ, բարձրեալ, հզաւր, անսկիզբն, անեղ, անբաւընդակելի, աննիրհելի, ակն նկատաւղ, ծնաւղ անքն[ն]ին փառաց Միածնիդ:

ՍՐԿ *Զուգականին Որդւոյ սիրելոյ եւ հնազանդութեան խոնարհութիւն, ամենայնիւ հաւասար մեզ եւ առանց մեղաց, անչարչարական էութեան, զուգագունին՝ չարչարանք մարմնով, եւ անմահին՝ մեռելութիւն յաղագս մեր կենդանութեան:*

«Զի որդիս իմ մեռեալ էր եւ եկեաց» (ԺԵ. 24):

Իգ. *Դառնագոյն մահ այն է, որ մեղացն է, որ զճշմարիտ կեանսն սպանանէ:*

«Կորուսեալ էր եւ գտաւ» (ԺԵ. 24):

Տաժանելի կորուստ այն է, որ հոգոյն է ապականութիւն ի գեհենի անդ, եւ կենդանութիւն եւ կարի զարմանալի եւ աստուածային եւ յաւիտենական: Նոյնպէս եւ գտանելն՝ առ յԱստուծոյ յարկսն յաւիտենից բնակելով, եւ ուրախութիւն անփոխանորդելի:

Գր. *Աւետարանեայ բանիւ աւրհնութեամբ զկենդանութիւն ինձ մահացելոյս, զբարեբանութիւն կամացդ յայտնեայ, ստացիր քեզ անուն անճառ, եւ ինձ թշուառիս՝ նորոգ փրկութեան: Կորուսցես զգիր մուրհակի մեղուցելոյս ամբաստանութեան, զվճիռ հոգոյս ջրեսցես աստուածապէս՝ կայլակաւք որդոյ քո սիրելոյ:*

Վստահութիւն փրկութեան բարեաց, արեամբ Քրիստոսի քո, նկարեսցես զհոգի եւ զմարմին կորուսելոյս:

ՍՐԿ *Որ եկն կոչել զմեղաւորս յապաշխարութիւն եւ բժշկել զախտաժէտս հիւանդութեամբ չարութեան:*

Եւ էր երէց որդի նորա յագարա[կի] (ԺԵ. 25):

Որպէս յերգսն ասէ Սողոմոն. «Երդմնեցուցանեմ զձեզ դստերք Երուսաղեմի» (Երգ Բ. 7), *որ են հրեշտակք ի զաւրութիւն եւ յուժգնութիւն ագարակի զարթուցանել զսէրն, որ ո՛չ մեղան, եւ բարի եւ պարարտ անդաստանի եղեն գործաւնեայք:*

Եւ ի մերձենալ ի տունն՝ լուաւ զձայն երգոցն եւ զպար[ուց] (ԺԵ. 25):

Արդ, պարտ էր ի դառնալ որդոյն առ հայրն եւ ապաշխարել, համաձայն երգոց՝ լսելի լինել: Եւ երգք համաձայնք են աստուածաբանութիւնք, աւրհնութիւնք եւ այլոց այսպիսի զանազանք, եւ ո՛չ հակառակ ձայնից դէմք:

ԳՐ *Առ երկնաւորսն եւ առ երկրաւորս տաւնէ զկորուսելոցս կենդանութիւն՝ վերնոցն պարակցութեամբ:*

ԻԳ *Այս յաւդեալ բան նշանակէ զիմանալեացն բնութիւն, թանձր աւրինակաւք ձեւացուցանէ զհաղորդութիւն առակին առ ճշմարտութիւն: Զի այս խորհուրդ փրկութեան մարդկան ծածկեցաւ յիմանալեացն, որ մերձ են առ Աստուծոյ: Որպէս ասէ առաքեալ. «Խորհուրդն, որ ծածկեալն էր յաւիտեանցն եւ յազգաց, այժմ յայտնեցաւ»* (Կողոս. Ա. 26)՝ *ի ձեռն եկեղեցոյ, իշխանութեանց եւ պետութեանց:*

Եւ կոչեալ զմի ի ծառայիցն՝ հարցանէր զի՞նչ իցէ այն: Եւ նոքա ասեն, զի. «Եղբայր քո եկեալ է, եւ եզեն հայր քո զեզն պարարակ» (ԺԵ. 26-27):

ՍՏ *Արդ՝ ի վերանալն Քրիստոսի յերկինս աստուածային եւ մերոյին բնութեամբն միացեալ՝ ունելով զսպիս բեւեռացն եւ զխոցումն տիգին, զոր ի հանդերձեալսն ծանեաք նոյն կերպիւ գալով, զի տեսցեն զոր խոցեցինն: Ընդ որ մարգարէն հիացեալ ասէ. «Զի՞նչ է այդ վէրք ի ձեռս քո»* (հմմտ. Զաք. ԺԳ. 6): *Եւ լուեալ զայս ասէ. «Զոր վիրաւորեցայ ի տան սիրելոյ իմոյ»* (Զաք. ԺԳ. 6): *Նոյն տեսեալ եւ Եսայի ասէ. «Ո՞վ է սա, որ դիմեալ գայ յԵդոմայ: Կարմրութիւն ձորձոց իւրոց ի բոսորայ» (Ես. ԿԳ. 1), որ թարգմանի մարմին, որ թերեւս զկարմրութիւն արեանն, որ բ[ղ]խեաց ի կողից նորա: Քանզի պահէ զկողն եւ զարիւնն ի յանդիմանութիւն հրէիցն, զոր [մ]ի՛, յորժամ տեսցեն զնա փառաւք եկեալ, ուրասցին, եթէ զսա մեք ո՛չ խաչեցաք:*

Վասն այսորիկ զարիւնն եւ զտեղին խոցեալ եւ սպիացեալ՝ մնաց յարութեանն, զի յամաւթ արասցէ զնոսա ի ժամանակի թագաւորութեանն իւրոյ:

ԻԳ *Իսկ իբրեւ եմուտ յերկինսն աւրհնութեամբ հրեշտակացն, որք յուղարկէին զնա, եւ մերձեցաւ յառաջին դասն Գաբրիելեան, որք տեղեակ էին տնաւրէնութեանն, եւ նոքա մեծաւ ցնծութեամբ ելին ընդառաջ բազմութիւն զաւրացն եւ սկսան բարձրաձայն ուրախութեամբ աւրհնել զՔրիստոս: Զի տեսին մարմնով զայն, որ ո՛չ երբեք տեսին ըստ աստուածութեանն: Եւ շարժեալք յիւրեաց կայենից՝ յուղարկէին զնա փառաբանութեամբ:*

Սգ. (կր.) *Իսկ վերին դասքն՝ սրոբէիցն եւ յրոբէից եւ այլն ամենայն, զարմացեալ հիանային՝ տեսանելով զադամական պատկերն երկնագ[ն]աց եղեալ, անգիտանային զտնաւրէնութեան խորհուրդն սքանչացեալք: Քանզի անհաս մտաց էր Բանն, զի ծածկեաց Որդին Աստուծոյ զստորեաւ ճանապարհն եւ ո՛չ զեկոյց հրեշտակաց, զի խայտառակեսցէ զբանսարկուն ի ծածուկ: Եւ ո՛չ էր ժամանակ պատուոյ, այլ անարգութեան: Զի մի՛ ուսցին սպասաւորք, զի զառ ի ստորին զիջանելն ո՛չ գիտացին: Վասն այսորիկ աստուստ զվեր ճանապարհն զարմանային սքանչելիս նոր եւ սոսկ ալի իրս արտաքոյ բնութեանն՝ տեսանելով զնա մարմնով ի վեր երթեալ:*

ԻԳ *Եւ զանսովոր ձայն հնչմանն աղաղակէին առաջին դասուցն, որք ընդ նմա գային աւրհնութեամբ: Եւ ի սքանչացման եղեալ՝ սկսան եւ նոքա աղաղակել զԵսայեան. «Ո՞վ է սա, որ դիմեալ գայ յԵդոմայ»* (Ես. ԿԳ. 1): *Սկսանի ինքն Յիսուս առնէ պատասխանի, քանզի յառաջ գնայր քան զհրեշտակս, որք ընդ նմայն էին, որ ո՛չ թողու զծառայս իւր ի տարաբերս: Ասէ. «Ես եմ, որ խաւսիմ զարդարութիւն եւ պատմեմ զճշմարտութիւն եւ զիրաւունս փրկութեան»* (Ես. ԿԳ. 1):

ՍՏ *Ո՛վ գեղեցիկ տիրական Բանին, ո՛վ ճշմարտութիւն նմա միայնումն վայելուչ գոլով զգործսն ասէ, իսկ զպատիւն լռէ, քանզի ո՛չ ասաց ես եմ Տէրն ձեր, այլ զայն լռեաց: Ի գործոցն կամեցաւ զինքն ծանուցանել:*

ԻԳ *Վասն որոյ անգիտացեալ իշխանութեանցն հարցանեն. «Վասն է՞ր կարմիր են ձորձք քո, եւ հանդերձք քո իբրեւ հնձանահարի»* (Ես. ԿԳ. 2): *Յորում պատասխանի առնէ նոցա Տէր. «Հնձան հարի միայն եւ ի հեթանոսաց ո՛չ ոք էր ընդ իս: Կոխեցի զնոսա սրտմտութեամբ իմով»* (Ես. ԿԳ. 3), *զի «Ո՛չ ոք էր, որ աւգնէր», եւ ո՛չ ոք էր, որ փրկէր, «եւ ո՛չ ոք էր, որ ի թիկունս հասանէր»* (Ես. ԿԳ. 5): *Ապա ողորմեցայ կորուսելոցն:*

ՍՏ *Ո՛վ ճշգրտութիւն մարգարէին, մանաւանդ եթէ Հոգւոյն Սրբոյ ամենագիտողի, քանզի ո՛չ Եսայե[ա]ն են այսոքիկ, այլ Հոգւոյն Սրբոյ, որ ի նմա խաւսէր՝ գիտացեալ յառաջ, որ ի Քրիստոս կատարելոց էր, զբանն պատշաճեաց:*

ԻԳ. *Իսկ ներքին դասքն, որ ընդ նմա գային, իբրեւ տեսին, եթէ անգիտութեամբ որպէս զմարդ ոք հարցաքննեն զնա, ասեն մեծաձայն աղաղակաւ՝ իբրեւ սաստելով իշխանութեանցն եւ պետութեանցն եւ այլ հրաբուն զաւրացն. «Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, եւ մտցէ թագաւոր փառաց»* (Սաղմ. ԻԳ. 7): *Այսինքն՝ թոյլ տուք, ի բաց կացէք, ճանապարհ արարէք: Եւ նոքա հիացեալ՝ զարմացան, վասն զի ո՛չ գիտէին նոքա զոք թագաւոր փառաց մարմնով, որ այնպիսի բուռն զաւրութեամբ մտանէր յերկինս եւ այսպիսի նոր տեսութեան պատահել բանից: Դարձեալ կրկնեն. «Ո՞վ է սա թագաւոր փառաց»* (Սաղմ. ԻԳ. 8): *Ապա ներքինքն ասեն. «Տէր զաւրութեանց, սա է թագաւոր փառաց»* (Սաղմ. ԻԳ. 10): *Տէր զաւրութեանց յատուկ Աստուծոյ է: Եւ զայս լուեալ՝ բնաւ ապշեցան վերինքն, զի ո՛չ կարացին կալ ի վերայ խորհրդոյն, միայն լռեալ դադարեցին: Իսկ յորժամ տեսին, թէ անց ընդ ամենայն դասս իշխանութեանց եւ պետութեանց եւ տէրութեանց, եւ ել ի վերոյ քան զամենայն երկինս եւ եմուտ ի ներքին կողմն վարագուրին: Եւ նստաւ ընդ աջմէ Հաւր ի բարձունս իբրեւ յիւր սեփական աթոռ: Ապա զներքին դասն սկսան հարցանել, զի ուսցին ի նոցանէ: Եւ այս է, ասէ, երէց որդոյն կոչելն զմի ծառայակիցն եւ հարցանել:*

Սդ. *Բայց երկու պատճառ են անգիտանալոյ հրեշտակացն վերնոց: Մի՝ զի յաթոռ փառաց տեսանէին ընդ Հաւր, թէպետեւ յորովայնի Կուսին լիով յերկրի եւ բովանդակ յերկինս: Եւ միւս եւս՝ զի յառաջ ի ձեռն հրեշտակաց լինէր երեւումն կամ ազդեցութիւն ինչ Աստուծոյ առ մարդիկ: Կամեցաւ Աստուած, որ մեք ո՛չ վերջանայաք ի հրեշտակաց, զտնաւրէնութիւն[ն] ի նոցանէ ծածկեաց, զի զայս զանճառելի խորհուրդս ի մարդկանէ ուսանիցին:*

Եւ նոքա ասեն. «Զի եղբայր քո եկեալ է, եւ եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա» (ԺԵ. 27):

ԻԳ. *Արդ, գաբրիելեան դասքն, որ շրջէին ընդ մարդկան, զայս լուան ի մարգարէիցն՝ զիջանելն յերկնից, զառնուլ մարմին ի Կուսէն եւ միաւորելն ընդ աստուածութեանն, եւ տալ զանձն ի չարչարանս ընդ մարդկան, եւ արդարացուցանել եւ առ ինքն ժողովել, զոր ուսան յելից խորհրդոյն, որ կատարեցաւ ի մէջ մարդկան եւ ուսուցին զվերին դասապետութիւնսն:*

ՍՏ *Եւ այս է, զոր ասէ Պաւղոս, թէ՝ «Յայտնեցաւ բազմապատիկ իմաստութիւն Աստուծոյ ի ձեռն եկեղեցոյ իշխանութեանց եւ պետութեանց»* (հմմտ. Եփես. Գ. 10):

Բարկացաւ եւ ոչ կամէր մտանել (ԺԵ. 28):

ԻԳ. *Մարդկաւրէն ձեւացուցանէ զբանն, զի հրեշտակք ահիւ եւ դողութեամբ կան առաջի Աստուծոյ եւ ո՛չ իշխեն խաւսիլ ինչ: Բայց իմացան, եթէ բնութիւն մարդոյ միացաւ ընդ աստուածութեանն եւ նստաւ ընդ աջմէ Հաւր, եւ նմա կրկնի ամենայն ծունր երկնաւորաց եւ երկրաւորացս: Ծանեան, եթէ մարդկան ազգ քան զնոսա ի վեր էանց ի բուն իսկ յերկինս, որ ո՛չ ոք եմուտ յիմանալեացն: Ըստ այնմ՝ «Ո՛չ ոք ել յերկինս, եթէ ո՛չ որ էջն յերկնից»* (Յովհ. Գ. 13): *Եւ որպէս խոստացաւ առաքելոցն, եթէ՝ «Ուր եսն եմ, եւ դուք ընդ իս իցէք»* (հմմտ. Յովհ. ԺԲ. 26), *եւ առ Հայր զայս աղաւթէր. «Կամիմ, զի ուր ես եմ, եւ սոքա ընդ իս իցեն, զի տեսցեն զփառս իմ» (Յովհ. ԺԷ. 24): Ստուգապէս բարկացան հրեշտակք, զի կրի ի նոսա այս ախտ, որ ոգոց միայն է առ մեզ, այսինքն՝ նախանձ եւ փառասիրութիւն եւ ամբարտաւանութիւն: Բայց ո՛չ զաւրանայ բռնադատել զնոսա որպէս զմեզ: Եւ ի դէպ է ասել զայս.*

«Այս քանի՞ ամք են, զի ծառայեմ քեզ, եւ երբեք զպատուիրանաւ քո ո՛չ անցի» (ԺԵ. 29):

Բայց սակայն յայնպիսի պատիւ, բնութիւն նոցա ո՛չ ել եւ ո՛չ այլ յաւելուած պատուոյ առին:

ՍՏ *Գիտեա՛, զի ո՛չ է անգործ եւ դատարկ Սուրբ զուարթնոցն կենցաղ, այլ ունին ի բնութեանն իւրեանց պաշտաւն ծառայութեան:*

«Ուլ մի ոչ եղուր ինձ» (ԺԵ. 29):

ԻԳ. *Արդ՝ ո՛չ եթէ զայս ասել բաւական էին, այլ միայն խորհեցան ախտիւ նախանձուն:*

ՍՏ *Վասնզի զենումն ուլոյ՝ հոգոյ բանականի, որ բարձրացուցանէ զմեղուցեալսն եւ հանէ ի սուրբ կենդանութիւն, վասն զի ո՛չ մեղաւ երէց որդին, վասն այնորիկ եւ ո՛չ ուլոյ պիտոյանայր ի զենումն կամ զմտացն յարձակումն եւ մեղս չնչականս:*

«Իսկ յորժամ եկն որդիպ քո այդ, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս» (ԺԵ. 30):

Բանքս վստահ եղելոյ են յառաջախոհութեան, բայց պոռնիկք ի զանազան չարութեան հիւթս կան մարմնական կենցաղոյս:

Զեներ դմա զեզն պարարակ (ԺԵ. 30):

Սրկ. *Արտաքս լեալ նախանձու եւ կարծեաց անպատուութեան անձինն, զանճառելիսն առաջի արկանէր ցնծութեանն պատճառ:*

Եւ հայրն ելեալ՝ աղաչէր. «Դու հանապազ ընդ իս ես, եւ ամենայն ինչ, որ իմ է, քո է» (ԺԵ. 31):

Սգ. *Վկայութիւն է Հաւրն, թէ ո՛չ երբեք մեկուսացաւ ի բարոյն:*

Իգ. *Զի անկարաւտ բնութեանն եւ անկարիք, եւ յայնքան բարձրութեան կացեալ, եւ ո՛չ տիրական ինչ կամս կամ հարկեցուցիչ ի մեզս: Եւ զայս պատիւ ո՛չ արեամբ եւ ո՛չ ճգամբք կրից ստացան, այլ ընդ ստեղծուածին յամէնառատ պարգեւատուէն ձրի շնորհ ընկալան:*

«Այլ ուրախանալ եւ խնդալ պարտ էր» (ԺԵ. 32):

Ոկ. *Զուարճակից առնէր զիմանալի հոգիսն իւրոյ մարդասիրական բնութեանն, եւ երէց որդոյն աղերսէր՝ ասելով.*

«Զի եղբայրս քո այս մեռեալ էր եւ եկեաց» (ԺԵ. 32):

Մեռեալ էր, վասն զի կենդանարարն գոհացութեանն ցրուեաց՝ կելովն անառակութեամբ:

«Կորուսեալ էր եւ գտաւ» (ԺԵ. 32):

ՍՏ *Վասնզի լայն եւ ընդարձակ ճանապարհաւն գնայր զտարրողն ի կորուստ, եւ գտաւ՝ ի բաց եղեալ զմեռելոյ եւ զկորուսելոյ: Մի՛ զանպարտ բնութիւնս տիրագգած առներ, մի՛ յուրախութեան հաւրն զընդդէմսն իմասցիս: Եւ գործեսցես ո՛չ վայելչական բնութեան բարեաց, մի՛ յանպատ[ու]ութիւն իջուցանել՝ տրտմագին երեւելով, մի՛ ո՛չ ծանիցես զժամանակիս արժանաւորութիւն, այլ ընդ այլոյ վարկաներ: Ո՛չ է քում գերաշխարհիկ իմաստութեանդ վայելուչ: Յայնժամ էր տրտում, յորժամ հեռին էր ի մէնջ, եւ սովոյ զինքն վաճառէր եւ ընդ խոզս թաւալեալ շրջէր, յիրս, որ ո՛չ էր արժան: Եւ զբարետոհմութիւն իւր թշնամանէր անառակութեամբ: Իսկ արդ՝ փոխեցաւ ընդ իրին եւ ժամանակն, զիա՞րդ իմաստունս յամենայնի ո՛չ բերես ի քեզ զընտրութիւն: Այսպէս եւ այսու թելադրութեամբ հաւանեցուցանէր զանդրանիկն յուրախութիւն եղբաւրն: Ապա պայծա[ռա]նայր տաւն[ն], եւ սիրով ընդ միմեանս հայէին եղբարքն, եւ հայրն յաւելոյր զտաւնականսն յաղագս որդոց առ իրեարս խանդաղատանացն: Եւ պարաւորքն երգէին զգոհացողականսն ի վերայ փրկութեան մեղաւորացն, ընդ Հաւրն ողորմածի եւ գթասիրի՝ հիացեալ էին ակամ[ք]ք բազմականացն յաղագս անբաղդատելի մարդասիրութեանն Հաւրն եւ հեզութեան քաղցրութեանն, անոխակալութեանն, առատութեանն, եւ միանգամայն ասել իսկական նորա բարեգարդութեանն եւ ամենայն աշխարհի խնամածութեանն:*

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Առն միոջ էին Բ. որդիք: Ասէ կրտսէրն ի նոցանէ. «Հա՛յր, տո՛ւր ինձ բաժին, որ անկանի յընչիցդ». եւ նա բաժանեաց (Ղուկ. ԺԵ. 11-12):

Սովորութիւն է մարմնաւոր ծնաւղաց ի փոքրկութեանն այլ ազգ սնուցանել զմանուկն եւ ի մեծութեանն՝ այլ կերպիւ խրատել, քանզի մինչեւ յէ. (7) ամն ի հրոյ եւ ի ջրոյ պահեն եւ անտի յետ՝ ի դատարկաբանութենէ եւ յայլոց: Այսպէս եւ Տէրն մեր առնէ՝ խնամելով զընութիւնս:

Ա. Նախ՝ ասաց մարգարէիւքն. «Մի՛ շնար եւ մի՛ գողանար» (Մատթ. ԺԹ. 18): *Իսկ յորժամ հասեալ ի տիս մանկութեանն, խաւսի այլ կերպիւ ընտանեգոյն, իբր զարմատ մեղաց ի մէնջ կտրելով: Զի զոր աւրինակ ծառ ի յարմատոցն զարգանայ եւ պտղաբերի, այսպէս եւ մեղքն ի խորհրդոցն յառաջագայեալ՝ ի մահն վճարի, որպէս ուսուցանէ առաքեալն* (տե՛ս Յակոբ Ա. 15), *վասն որոյ ասաց յառաջագոյն.* «Էր՛ իրաւախոհ» (Մատթ. Ե. 25) *եւ մի՛ բարկանար, զի անտի ծնանի սպանութիւնն, եւ մի՛ հայիր յարատ* (տե՛ս Մատթ. Ե. 28), *զի անտի ծնանի շնութիւնն, եւ մի՛ երդուիր ամենեւին* (տե՛ս Մատթ. Ե. 34), *զի անտի ծնանի ուրացութիւնն: Իսկ մեք յամառեալ ի մերն, զհակառակ բանից նորա առնեմք, վասն որոյ աւրինակ բերէ մեզ զայս՝ ասելով.* **«Առն միոջ էին [երկու որդիք]»:**

Իբր թէ ի սա հայելով՝ իմասցուք զանմտութիւնն մեր, ըստ անառակին՝ վատնելով զխրատն աստուածային անառակ գործովք: Եւ դարձեալ՝ զի մեղանչել բնաւորեցաւ մեզ՝ ըստ այնմ. «Միտք մարդկան ի խնամս չարին հաստատեալ են ի մանկութենէ» (Ծնն. Ը. 21), *սակս որոյ եւ զդարձն ասէ, զի ի նմանէ ուսցուք, վասն որոյ ասէ.* **«Աւ միոջ [էին երկու որդիս]»:**

Արդ, ոմանց այսպէս թուեցաւ, թէ «երկուս որդիս» զարդարս եւ զմեղաւորս ասէ, զոր ոչ պատշաճեցուցանէ կարդ առակաւոր բանիս, քանզի ասէ երէց որդին.

«Երբէք զպատուիրանաւ քո ոչ անցի» (ԺԵ. 29):

Իսկ թէ արդարք, թէեւ մեծ ոմն է, ոչ է առանց մեղաց՝ ըստ այնմ. «Թէեւ միաւրեայ իցէ կեանք մարդոյ, ոչ է առանց [մեղաց]» (հմմտ. Յոբ ԺԴ. 4): *Եւ դարձեալ՝ թէ ըստ ներգործութեանց ոչ ունի ինչ մեղս, սակայն զնախահաւրն պարտիսն ամենեքեան ունէին, ապա եւ յայտնի է անպատշաճութիւն բանից նոցա, որ վասն առակիս, բայց արժան է բարեպէս մտաւք տեսանել բանս, զի* «այր» *կոչէ զԱստուած վասն արիականն բնութեանն եւ դարձեալ՝ իբր զնախատիպ պատկերիցս, իսկ* «երկու որդին» *ասէ զհրեշտակս եւ զմարդիկ: Եւ արդ, քանզի* «երէց» *ասէ զհրեշտակս, քան զմարդիկ: Եւ այս վասն բազում պատճառի:*

Ա. Նախ՝ ըստ ժամանակին, զի յառաջ զհրեշտակսն գոյացոյց յառաջնումն աւուր, իսկ ի վեցերորդ աւուրն ապա արար զմարդն:

Բ. Երկրորդ՝ վասն պատուոյն, որպէս եւ գրեալ է վասն մարդոյն. «Փոքր ինչ խոնարհ արար դու զնա, քան զհրեշտակս քո» (Սաղմ. Ը. 6):

Գ. Երրորդ՝ զի զհրեշտակս միշտ անմահ բնութեամբ ստեղծեաց, իսկ զմարդն՝ մէջ անմահութեան եւ մահկանացութեան, զոր թէ պահեալ էր զպատուիրանն, հանէր զնա ի Վերինն Երուսաղէմ:

Դ. Զորրորդ՝ զի նոքա ի լոյս ստեղծան, եւ մարդն՝ ի հողոյ ի ձեւ մարմնոյ:

Ե. Հինգերորդ՝ վասն տեղւոյն, զի մարդոյն բնակութիւնն ի դրախտին, իսկ հրեշտակացն՝ իմանալին:

Զ. Վեցերորդ՝ զի նոքա երէց են մեղանչականութեամբն, քան զմարդն:

Է. Եաւթերորդ՝ զի հրեշտակք դժուարաշարժ են ի մեղս կամ ամենեւին անշարժ, իսկ մարդն՝ դիւրաշարժ:

Ը. Ութերորդ՝ զի պարզ է տեսութիւն նոցա, քան զմարդոյս:

Թ. Իններորդ՝ զի այլ մերձաւորք են Աստուծոյ, քան զբազումս, այսինքն՝ անմարմնութեամբն:

Ժ. Տասներորդ՝ զի լուսափայլութիւնքն նախ ի հրեշտակս իջանէ եւ ապա՝ ի մարդկային դասս, որպէս գրէ սուրբն Դիոնէսիոս:

Եւ արդ, ասէ կրսեր որդին.

«Տուր ինձ բաժին, որ [անկանի յընչիցդ]» (ԺԵ. 12):

Այս դէմք առակիս են, եւ ոչ թէ ասացեալ են, այլ պահանջէ կարդ բանիս այս լինել: Այլ Աստուած ըստ այնմ կերպին, որպէս արար յոչ գոյից զերկուսն, այնպէս կարդեաց իւրաքանչիւրոցն բաժին, զի հրեշտակաց եւ զիմանալի բնակութիւն, վասն իմանալի բնութեանցն, իսկ մարդոյն՝ զդրախտն, զի որպէս մարդն միջակ գոլով ի մէջ անմահութեան եւ մահկանացութեան, այսպէս եւ բնակութիւն իւր ի միջակ տեղիս պատրաստեաց, այսինքն՝ ի մէջ երկնի եւ երկրի: Արդ, զայս տեսեալ մարդոյն, չեղեալ յաւժին խաբէութենէն, կամեցաւ ինչս ստանալ մեծ, այսինքն՝ կամեցաւ աստուածանալ եւ անաստուած կեալ ի դրախտին: Եւ փոխանակ աստուածանալոյն ի նոյն փառացն, զոր ունէր, անկաւ եւ մերկացեալ զանմահութիւնն: Եւ այս է, զոր ասէ.

Ոչ յեպ բազում աւուրց, ժողովեալ զամենայն կրտսեր որդւոյն, [գնաց յաշխարհ հեռի] (ԺԵ. 13):

«Յեպ ոչ բազում աւուրց» *ասելով՝ յայտ արար, եթէ ոչ եկաց ի դրախտին ժամանակ ինչ, այլ՝ փութով անցեալ զպատուիրանն Աստուծոյ: Այս է* **«գնալն յաշխարհ հեռի»**, *վասն զի ոչ գոյ տեղի, ուր ոչ գոյ Աստուած՝ ըստ մարգարէին, թէ՝* «[Մի՞թէ] զերկինք եւ զերկիր ես [ոչ] լնում,- ասէ Տէր ամենայն» (հմմտ. Երեմ. ԻԳ. 24), *եւ թէ՝* «Ելանեմ յերկինս, դու անդ ես» (Սաղմ. ՃԼԸ 8), *յաղագս որոյ չիք տեղի որոշելոյ զմեզ յԱստուծոյ: Բայց ասէ մարգարէին՝* «Ես Ասպուած մերձաւոր եմ եւ ոչ՝ հեռաւոր» (Երեմ. ԻԳ. 23), «այլ մեղքն ձեր որոշեն ի մէջ իմ եւ ի մէջ ձեր» (հմմտ. Ես. ԾԹ. 2): *Զի յԱստուած ոչ գոյ ամենեւին աղտ, վասն որոյ հնարեաց սատանայ զմեղս մարդկան՝ միջնորմն արկանել եւ հեռացուցանել այն աղտեղութեամբն ի մէնջ զանմեղն:*

Եւ զի՞ ի պատուիրանազանցութենէ մարդոյն բազում ինչ պատահեաց նմա:

Ա. Նախ՝ զի ի լուսոյն մերկացաւ, որով կարէր մերձաւորիլ առ Աստուած:

Բ. Երկրորդ՝ ամաւթով եղեալ յԱստուծոյ՝ կորանայր:

Գ. Երրորդ՝ զի մոռացաւ զԱստուծոյ ամենատես բնութիւնն՝ ծածկելով զինքն ի ներքոյ թզենւոյն:

Դ. Չորրորդ՝ զի ծառայ եղեւ մահու՝ ըստ այնմ. «Հող էիր եւ ի հող դարձցիս» (Ծնն. Գ. 19):

Ե. Հինգերորդ՝ զի յանմահութենէն զրկեցաւ:

Զ. Վեցերորդ՝ զի հանեալ վարեցաւ ի գեղեցիկ վայրուցն:

Է. Եաւթներորդ՝ զի զտեղի անասնոց վայելեաց՝ փոխանակ դրախտին:

Ը. Ութերորդ՝ զի զտրտմութիւն ժողովեաց յինքն՝ փոխանակ ուրախութեանն՝ ըստ այնմ. «Տրտմութեամբ ծնցես որդի» (Ծնն. Գ. 16):

Թ. Իններորդ՝ զի անկաւ ի մտաց, զի հոգիք ըմբռնեալք ի մեղս ի մտաց եւս անկանին:

Ժ. Տասներորդ՝ զի յաստուածային տեսութենէն եւ ի խաւսակցութենէն զրկեցաւ:

ԺԱ. Մետասաներորդ՝ զի ապականացու եղեւ մարմնովն:

ԺԲ. Երկոտասաներորդ՝ զի հոգւովն ի դժոխս գերեցաւ:

ԺԳ. Երեքտասներորդ՝ զի զծնունդս իւր ընդ իւր քարշեալ:

ԺԴ. Չորեքտասաներորդ՝ զի զՀոգին Աստուծոյ հեռացոյց յինքենէ՝ ըստ այնմ. «Մի՛ մնասցէ Հոգի իմ ի դոսա վասն լինելոյ դոցա մարմին» (Ծնն. Զ. 3):

ԺԵ. Հնգետասաներորդ՝ զի ապաշխարութեան կարաւտացաւ:

ԺԶ. Վեշտասաներորդ՝ զի փուշ եւ տատասկ բուսոյց յինքեան:

ԺԷ. Եաւթն եւ տասներորդ՝ զի քրտամբ երեսաց եկեր զհացն, փոխանակ անաշխատ ուտելոյն ի դրախտին:

ԺԸ. Ութն եւ տասներորդ՝ զի սովորեցաւ ի մեղանչելն:

ԺԹ. Ինն եւ տասներորդ՝ զի զանասնոց կերակուր կերաւ:

Ի. Քսաներորդ՝ զի թագաւորութիւնն կորոյս, զայն որ ասէ. «Կացուցեր զնա ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց» (Սաղմ. Ը. 7):

ԻԱ. Քսան եւ միներորդ՝ զի զմարգարէութիւնն բարձաւ:

ԻԲ. Քսան եւ երկուերորդ՝ զի կամարար սատանայի գտաւ:

Այս է ասելն.

Վատնեաց զինչս իւր, զի կայր անառակութեամբ (ԺԵ. 13):

Այսինքն՝ զի ի բազմանալ մեղացն հեռանայ Հոգին շնորհաց, այս է «վատնել»ն: Իսկ «անառակ» ասելն, այս է անաւրինակ, իբր թէ նախքան զնա մեղանչական ոչ գոյր աւրինակ նմա, որպէս եւ նա՝ մեզ, յաղագս որոյ դիպաւ սովոյ, զի ասէ՝

Եղեւ սով սաստիկ (ԺԵ. 14):

Իսկ «սով» զՀոգւոյն սովն ասէ, զի չիք ինչ քան զնա դժուարագոյն, եւ առաւել է, քան զմարմնոյ սովն:

Ա. Նախ՝ զի ի մարմնոյ սովն ինքեան միայն առնէ վնաս, իսկ Հոգւոյն՝ զմարմինն եւս սպանանէ:

Բ. Երկրորդ՝ զի մարմնոյ սովն հացի է, իսկ Հոգւոյն՝ առաքինութեան եւ Բանին կենաց՝ ըստ այնմ. «Ոչ միայն հացով միայն կենցի մարդ, այլ յամենայն զոր ելանիցէ ի բերանոյ Աստուծոյ» (Մատթ. Դ. 4):

Գ. Երրորդ՝ զի մարմնոյ սովն երեւի եւ հնար գտանի, իսկ Հոգւոյն սով՝ ոչ ոք գիտէ, եթէ ոչ ինքն՝ ըստ այնմ. «Ոչ ոք գիտէ զմարդն, եթէ ոչ հոգին, որ ի մարդն» (հմմտ. Ա Կոր. Բ. 11):

Դ. Չորրորդ՝ զի զմարմնոյ սովն մարդ լցուցանէ, իսկ Հոգւոյն՝ Աստուծոյ է կարիս աւգնականութեան:

Ե. Հինգերորդ՝ զի մարմնոյ սով աստ միայն տանջէ, իսկ Հոգւոյն սով եւ ի հանդերձեալն առաւելու, վասն որոյ ասէ **«սով սաստիկ»**, *եւ ոչ՝ լոկ «սով»:*

Արդ, ասէ.

Գնացեալ յարեցաւ ի միումն ի քաղաքացեաց աշխարհին այնմիկ (հմմտ. ԺԵ. 15):

Աստ յայտնի են, զի որք յԱստուծոյ հեռանան, դիւաց ընկեր լինին, զի քաղաքակից այսմ աշխարհի դեւք են՝ ըստ այնմ. «Իշխան աշխարհիս այսորիկ [ընկեսցի արտաքս]» (Յովհ. ԺԲ. 31): *Իսկ զի՞ ասէ՝* **«գնաց յարեցաւ»**, *այն է, զի բազում չարիս գործեցին բնութեանս դեւք:*

Ա. Նախ՝ զի ախտիւ լցին զբնութիւնս:

Բ. Երկրորդ՝ խաւարաւ տգիտութեան յԱստուծոյ աւտարացուցին:

Գ. Երրորդ՝ զի զմարդիկ ծառայս ինքեան գործեցին:

Դ. Չորրորդ՝ զի փոխանակ Աստուծոյ՝ զինքեանս պաշտել ետուն:

Ե. Հինգերորդ՝ զի ընկերակից տանջանաց ինքեանց գործեցին ի դժոխս: Եւ զայսոքիկ վասն այն պատճառի, զի նախ ընդ Աստուծոյ ի թշնամութիւն խորհեցաւ՝ ըստ այնմ. «Եղից զաթոռն իմ յամպս եւ եղէց նման բարձրելոյն» (հմմտ. Ես. ԺԴ. 14): *Եւ Աստուծոյ ոչ ինչ կարաց առնել, զքէն նախանձուն ի բնութիւնս մեր հանել կամեցաւ: Զոր աւրինակ՝ ոք թշնամի իցէ թագաւորի եւ նմա ոչ ինչ կարիցէ առնել, եթէ զսիրելի թագաւորին ըմբռնէ՝ փոխանակ նմա զնա՛ ցաւեցուցանէ. այսպէս սատանայ ընդ մեզ արար: Յաղագս որոյ ասէ.*

Առաքեաց յագարակս իւր՝ արածել խոզս (ԺԵ. 15):

Այս է, քան զամենայն վատթար կենդանիս ներքին կամեցաւ առնել՝ ըստ այնմ. «Հաւասարեաց անասնոց [անբանից] եւ նմանեաց նոցա» (Սաղմ. ԽԸ. 13, 21):

Եւ զի՞ սատանայ խոզի նմանի: Եւ այս վասն բազում պատճառի:

Ա. Նախ՝ զի վատթար կենդանի է խոզն. այսպէս եւ սատանայ, վատթար է այժմ, քան զամենայն կենդանիս եւ զգոյքս:

Բ. Երկրորդ՝ զի խոզն միշտ յոգոց հանելով երթայ. այսպէս՝ սատանայ միշտ ի լաց է եւ ոչ ունի ուրախութիւն ինչ:

Գ. Երրորդ՝ զի տղմասէր է. այսպէս եւ սատանայ մեղսասէր է յոյժ:

Դ. Չորրորդ՝ զի ոչ կարէ յերկինս նայել. այսպէս եւ սատանայ ոչ կարէ զԱստուած տեսանել:

Ե. Հինգերորդ՝ զի խոզն ունի մասն ինչ սրբութեան՝ զկճղակն. այսպէս եւ սատանայ ունի զանմահութիւն յինքեան անիբացդնելի:

Զ. Վեցերորդ՝ զի ժանիս ունի երկակի. այսպէս եւ սատանայ ունի կրկին կորուսիչ, նախ՝ մեղս տայ առնել, երկրորդ՝ յետ մեղացն յուսահատութեամբ կորուսանէ:

Է. Եաւթներորդ՝ զի ի վարդի հոտէն փախչի խոզն. այսպէս եւ սատանայ յառաքինութեան հոտոց սրբոցն յարահետ լինի:

Ը. Ութերորդ՝ զի ընդ ամենայն կենդանիս պատերազմի. այսպէս եւ սատանայ ընդ ամենայն ոք զհէնն իւր ցուցանէ՝ ընդ ծեր եւ ընդ տղայ, ընդ սրբոց եւ անսրբոց:

Թ. Իններորդ՝ զի կրկնակենցաղ է խոզն՝ ուտելով ունդս եւ միս. այսպէս՝ սատանայ այլազգաբար շրջի ընդ մեղսասիրացն եւ այլ ընդ՝առաքինեացն, զի զմեղսասէրսն միշտ գործելով զմեղս՝ կորուսանէ, իսկ զառաքինիսն՝ հպարտութեամբ:

Ժ. Տասներորդ՝ զի քան զամենայն կենդանիս բազում ծնունդս առնէ. այսպէս եւ սատանայի բազում է եւ անթիւ է հնարքն եւ զաւրք, վասն որոյ ասէ.

Գնաց յարեցաւ ի մի ի քաղաքացեացն եւ արածէր խոզս (ԺԵ. 15):

Իսկ աստ ասէ.

Ցանկայր լնուլ յեղջերուացն, զոր խոզքն ուտէին, եւ ոչ ոք տայր նմա (ԺԵ. 16):

Եղջերն մեղաց նմանի վասն Բ. (2) պատճառի:

Ա. Նախ՝ զի բազմաճուղ է. այսպէս եւ մեղքն բազում է եւ անթիւ:

Բ. Եւ երկրորդ՝ զի մինչդեռ ոչ է հասեալ, քաղցր է, իսկ յորժամ հասանի, դառնանայ. այսպէս եւ մեղքն յառնելն քաղցր երեւի, իսկ յորժամ հասանի ի հոգին եւ դառնացուցանէ յաւիտենականապէս:

Եւ զի՞ ասէ. «Ոչ ոք տայր նմա»: *Զի՞նչ իցէ այս կերակուր, որ խոզիցն անկանէր եւ մարդն չդտանէր: Եւ այս Բ. (2) մտաւք իմացեալ լինի:*

Ա. Նախ՝ զի անասունքն բնականապէս ունին առաքինութիւն ինչ, որպէս արագիլ՝ արդար, ուղտ՝ խոհեմ, առեւծ՝ արի, տատրակ՝ ողջախոհ, իսկ ի մարդն մի ի սոցանէ ոչ գտաւ:

Բ. Եւ երկրորդ՝ զի անասունք զբնական գործս ոչ փոխեն, այսինքն՝ արուն առ էգն, իսկ մարդիկ եւ զայն եւս քակեցին՝ ըստ այնմ. «Զպէտս բնականս ի պէտս անբնականս» (Ա. Հռոմ. Ա. 26): *Եւ այլ մեծամեծ չարիս գործեցին, զորս ոչ է արժան յիշել, վասն որոյ ասէ.* «Ցանկայր լնուլ զորովայն», *այսինքն՝ նմանիլ անասնոց գնացիցն,* «*եւ ոչ ոք տայր նմա*»: *Իսկ իբրեւ տեսեալ մարդոյն զայնքան անարգութիւնն իւր, ի միտս եկեալ ասէ.*

«Քանի՞ վարձկանք են ի տան հաւր [իմոյ] հացալիցք, եւ ես ասպ՝ սովամահ [կորնչիմ]» (ԺԵ. 17):

Բայց աստ է տարակոյս ինչ, զի ցանկայր լնուլ յեղջերացն, եւ մեղքն պատրաստ գոյր, զիա՞րդ կամեցաւ դառնալ ի հայր իւր: Այլ այս է, զի հացին կենաց ցանկացաւ, եւ զի պակասեալ էին, վասն

որոյ «**գնացեալ յարեցաւ յեղջիւրսն խոզաց**»: *Արդ, տեսեալ, զի ոչ ունէին նոքա զհացն կենաց, խնդրեաց զնա, որ կարողն էր տալ նմա զխնդրելին: Ասէ.* «**Քանի՞ վարձկանք են ի տան հաւր իմոյ**»: *Եւ եւս կրկին լինի հարց, թէ անառակ ի խոր խաւարի կացեալ, զիա՞րդ իմացեալ դարձաւ: Զայս առաքեալն ուսուցանէ, թէ՝* «Աներեւոյթքն Աստուծոյ երեւելի արարածովքս իմացեալ տեսանի» (հմմտ. Հռոմ. Ա. 20): *Զի մարդիկ ունէին բանական իմաստութիւն, որովք զբնութիւն արարածոց գտին եւ զշրջանս լուսաւորացդ, նմանապէս եւ զանազան արուեստս նովին քննութեամբ իմացան եւ զարարիչն ամենայնի: Եւ արդ, յորժամ մի ոք նկարեալ առաջի դնեմք՝ ի նա կապակցեալ ամենայն անառակ բնութեանս դարձումն: Եւ եղիցի մեզ աւրինակ Աբրահամ, զի նա եղեւ սկիզբն աստուածպաշտութեան, զի մինչ ի նա ոչ գոյր: Եւ զի՞ ընտրիչ եղեւ ամենայնի, զոր ասեմս:*

Ա. Նախ՝ հայեցաւ ի բնութիւն անասնոց եւ գիտաց, զի անբանք էին, եւ ոչ գոյր ի նոսա զաւրութիւն:

Բ. Երկրորդ՝ ետես զքարինս եւ զայլ անշունչս, զի ոչ ինչ էին:

Գ. Երրորդ՝ զլուսաւորս իմացաւ, թէ ի սպասաւորութեան են, ուստի յայտնի երեւեցան, թէ ծառայք են:

Դ. Չորրորդ՝ զսովամահ բնութիւնս եւ ետես զսոսա որոշեալս յԱստուծոյ եւ յայսքան գարշելի ախտս անգեալ:

Ե. Հինգերորդ՝ եւ զայն եւս ետես, զի քան զամենայն բնութիւն պատուական էր ստեղծեալ զմարդն վասն մտաւոր եւ անձնիշխան կամացն:

Զ. Վեցերորդ՝ ծանեաւ եւ զայն, թէ պիտանի է արարչին իւրոյ, զի զամենայն արարածս ի նմա ծառայութիւնն կացոյց, եւ յայս յամենայնէ գիտացեալ՝ ասաց.

«**Քանի՞ վարձկանք են ի տան [հաւր իմոյ հացալիցք]**» (ԺԵ. 17):

Եւ ո՞վք իցեն «վարձկանքն հացալիցքն»: Թուի, թէ զլուսաւորսդ ասէ, որք միշտ անդադար ի շարժման կան, իսկ «հացալիցք» են, այսինքն՝ լուսով լցեալ են եւ ամենայնիւ անկարաւտ. եւ այս է «հացալից»ն: Եւ ասացից.

«**Հայր մեղայ յերկինս**» (ԺԵ. 18):

Աստ երեւի խնամք արարչին ի բնութիւնս, զի թէպէտ դիւրակործան եմք ի մեղս, սակայն ինքնագտակք եմք ապաշխարութեանն, վասն այնոցիկ, որ գործեցաքն, զոր եւ առ տնտեսն գովեաց զՏէրն:

Զոր աւրինակ նինուէացիքն իմացան, թէ վասն իւրեանց անաւրէնութեանցն քաղաքն կործանի, եւ դարձան ի մեղաց, սոյն աւրինակաւ եւ բնութիւնս.

Եւ յարուցեալ եկն առ հայրն (ԺԵ. 20):

Եւ այս ոչ սոսկ բան, այլ կատարելապէս եկն, այսինքն՝ ի զղջումն: Այս է «գալն»: Եւ ասա Բ. (2) խնամք առաւել երեւի Քրիստոսի առ մեզ:

Նախ՝ զի ծառայք չէաք արժանի, որդի անուանէ զմեզ:

Եւ երկրորդ՝ զարարիչն մեր Հայր անուանէ, որ եւ այս զթութեան ցոյցք եւ ողորմութեան:

Յարեաւ ի հեռապանէ ընդ առաջ գնաց (հմմտ. ԺԵ. 20):

Ոչ ապաշխարութեան արտասուս կամ հառաչանք, այլ միայն դիմեցաւ գալ՝ ասէ.

Անկաւ զպարանոցաւ նորա եւ համբուրեաց (ԺԵ. 20):

Եւթնազգ խոնարհութիւն երեւի ասա եւ քաղցրութիւն:

Ա. Նախ՝ զի խոնարհեցաւ ընդ առաջ գնալ անառակ որդւոյն:

Բ. Երկրորդ՝ ոչ գարշեցաւ ի գարշելի պարանոցէն, որ համբուրեաց զնա:

Գ. Երրորդ՝ զի զառաջին պատմուճանն ագոյց նմա:

Դ. Չորրորդ՝ զի մատանի եդ ի ձեռս նորա:

Ե. Հինգերորդ՝ կաւշիկ յոտս նորա:

Զ. Վեցերորդ՝ զի եզէն զեզն պարարակ վասն նմա:

Է. Եաւթներորդ՝ զի ուրախ եղեւ ընդ գտումն մեղաւորին:

Իսկ ի հանդիպել հաւրն՝ ասէ որդին.

«**Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո**» (ԺԵ. 21):

Ի սմանէ պարտ է ուսանել մեզ՝ մեղաւորացս, զի այն է պատճառն, որ թէպէտ Աստուած անյիշաչար լինի մեզ, մեք զմեր մեղանչականութիւնն ոչ մոռանամք: Իսկ ընդ առաջ գնալն հաւրն, ցուցցուք ի յԱբրահամն, զոր աւրինակ եդաք՝ ասէ Ստեփանոս. «Աստուած փառաց երեւեցաւ հաւրն մերում Աբրահամու, մինչդեռ ի Խառան էր» (հմմտ. Գործք Է. 2): *Եւ ի Ծննդոցն ասէ.* «Երեւեցաւ նմա Աստուած առ կաղնեաւն Մամբրէի» (Ծնն. ԺԸ. 1): *Եւ ուտելն զբաղարճն ընդ Աբրահա-*

մու առ խորանաւն, եւ աղաչանքն Աբրահամու վասն Սոդոմայեցւոցն, եւ զաւետիսն որդւոյն ծնընդեան, վասն որոյ դէպ է ասել, թէ եւ զայս եւս պաղատեցաւ հառաչանաւք. «**Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո**», *զի զդէմ Ադամայ ունի նահապետն՝ ըստ որում ասաց.* «Հա՛յր, մեղայ յերկինս»: *Իսկ* «յերկինս» *ասելն զդրախտն ասէ, ուր առաջին յանցանքն Ադամայ եղեւ: Իսկ* «երկին» *կոչի դրախտն վասն Ե. (5) եղանակի:*

Ա. Նախ՝ զի բարձր է տեղեաւ:

Բ. Երկրորդ՝ վասն անմահութեան տե[ղ]եացն:

Գ. Երրորդ՝ վասն մերձ լինելոյն յերկինս:

Դ. Չորրորդ՝ վասն անապականութեան պտղոցն:

Ե. Հինգերորդ՝ վասն միշտ կանաչութեանն եւ պայծառութեանն:

Իսկ «**առաջի քո**» *ասէ, զի չէ հնար, ասէ, թաքչել ի քում ամենատես աչացդ, այլ ես հնարեցայ թաքչել ի ներքոյ թզենւոյն, զի յորժամ մարդն զարհուրելով եւ ամաչելով առնէ զմեղսն, այն կէս վնասու է: Զոր աւրինակ՝ լիրրն եւ անամաթն առաւել է, նոյնպէս զարհուրանաւքն նուազէ, քան զնա, վասն որոյ խոստովանի անառակ որդին.*

«**Ոչ եմ արժանի կոչիլ որդի քո, արա զիս իրրեւ [զմի ի վարձկանաց քոց]**» (ԺԵ. 19):

Աստ երիս իրս ուսուցանէ յանցաւորացս, որ թէպէտ խնամաւքն Աստուծոյ արժանաւորի թողութեան մեղաց նա[խ]՝ զանձն ընդ անցաւորսն ունել պարտ է, եւ երկրորդ՝ ոչ մոռանալ զյանցանս իւր, եւ երրորդ՝ զի խոնարհ լինիցիմք, զի յորժամ զայս առնէ յանցաւորն, Աստուած զայսոց ընդդիմակն առնէ: Զի որչափ մեք զմեզ մեղանչական ըմբռնեմք, նա արդարացուցանէ զմեզ, եւ որչափ խոստովանիմք, նա մոռանայ զմեր մեղքն, եւ որչափ ի խոնարհ ունիմք զանձինս, նա բարձրացուցանէ զմեզ՝ ըստ այնմ. «Որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրացուցանէ» (Մատթ. ԻԳ. 12, Ղուկ. ԺԴ. 11, հմմտ. Ղուկ. ԺԸ. 14), *որպէս աստ է տեսանել, զի ասէ անառակն.* «**Մեղա [յերկինս]**», *իսկ հայրն անկեալ՝ համբուրէ: Եւ ասէ անառակն.* «**Չեմ արժանի կոչիլ որդի**»: *Իսկ հայրն ասէ.*

«**Հանէք զպատմուճանն առաջին եւ ագուցէք [նմա]**» (ԺԵ. 23):

Իսկ «պատմուճանն» զչնորհս աւազանին ասէ, զոր ի դրախտին մերկացաւ: Եւ զի՞ պատմուճանի նմանեցուցանէ: Եւ այս վասն Ե. (5) պատճառի:

Ա. Նախ՝ զի պատմուճանն զբոլոր մարմինն ծածկէ. այսպէս եւ աւազանին շնորհք՝ զբոլոր մարդն:

Բ. Երկրորդ՝ զի պատմուճանին յատուկ է պայծառ լինել. այսպէս եւ մկրտութեամբն պայծառանայ հոգին, զի՝ «Որք ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք» (Գաղ. Գ. 27)*:*

Գ. Երրորդ՝ զի յետոյ պատահի մարդոյ ագանել զպատմուճանն. այսպէս եւ մկրտութիւնն, յետ մարմնական ծննդեանն պատահի մարդոյն:

Դ. Չորրորդ՝ զի որք կամին, նոքա զգենուն պատմուճան. այսպէս եւ որք կամին, նոքա ծնանին աւազանաւն:

Ե. Հինգերորդ՝ զի թէ կամի ոք, հանէ զպատմուճանն. այսպէս եւ կամաւք ուրանաք զչնորհս աւազանին, զոր աւրինակ կամաւ խոնարհեցաւ Ադամ ընդ կնոջ, եւ կերան եւ մերկացան զլոյսն: Իսկ զմերկութիւնն Ադամայ ոչ ոք յառաջնոցն չկարաց ծածկել, վասն զի ամենեքեան ի ներքոյ պարտուց նախահաւրն անկեալ էին: Ապա եւ ի ձեռն Տեառն գալստեանն արժանացաք նորին շնորհի՝ ըստ որում ասէ. «Գնացէ՛ք [այսուհետեւ], աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէք [զնոսա]» (Մատթ. ԻԸ. 19): *Բայց այս սրբութեան նշանս զոյր ի յառաջինսն, վասն որոյ յուսացաւ Ենովն, եւ Աբրահամ հաւատաց, բայց առժամայն ընկալան եւ ոչինչ, բայց զաւրութեամբ առին ի ձեռն հաւատոցն, զոր աւրինակ Ադամայ ասացաւ՝ ի նմին ժամու մեռանել յաւուրն, յորում ուտիցէ զպտուղն* (տե՛ս Ծնն. Բ. 17): *Եկեր եւ ոչ մեռաւ ներգործութեամբ, այլ՝ զաւրութեամբ մեռաւ, ըստ նմին աւրինակի եւ զառաջինսն իմասցիս, առ որս իմացեալ եղեւ խորհրդոյս տեսութիւն, բայց առանց Քրիստոսի ոչ ինչ առին:*

Իսկ զի՞ հրամայէ՝ հանել զպատմուճանն եւ ագուցանել: Եւ այս դէմք բանի միայն, զի Աստուծոյ ոչ է կարիս սպասաւորութեան, այլ՝ հրամանաւ լնու, զոր ինչ կամի: Բայց ըստ աւրինակի թագաւորաց խաւսի, այլ դէպ է ասելն, որպէս ասաց՝ առաքելոցն. «Գնացէ՛ք [այսուհետեւ], մկրտեցէք զամենայն [հեթանոս]» (Մատթ. ԻԸ. 19):

Իսկ զի՞ մատանի եդ ի ձեռն (տե՛ս Ղուկ. ԺԵ. 22), *այս զպատկերին նորոգիլն յայտնէ՝ ըստ այնմ, որ ասէ Եսայի.* «Ցնծացէ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց [ինձ] հանդերձ փրկութեան եւ պատմուճան [ուրախութեան], իբրեւ

փեսայի [եդ ինձ պսակ] եւ [իբրեւ] հարսն զարդու [զարդարեաց զիս]» (Ես. ԿԱ. 10): *Եւ այն, զի ի ձեռն աւանդեաց զպատկերին նորոգիլն, ուստի յայտ է, զի ի գործն կայացոյց զպատկերն իւր, զի որք սուրբ են վարուք, նոքա ունին զպայծառ պատկերն աստուածային: Եւ զի՞ ձեռն զգործն նշանակէ: Եւ այս վասն Ե. (5) պատճառի:*

Ա. Նախ՝ վասն սովորութեան հասարակաց, որք ամենայն ձեռաւք առնեն զարուեստն:

Բ. Երկրորդ՝ է միջակ տեղաւ ձեռն, որով կարէ մարդն զմարմնոյ գործն եւս կատարել եւ զհոգւոյ. զհոգւոյն, զի աղաւթէ ձեռաւք եւ մարմնոյն. «Զվասպակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ, եւ բարի [եղիցի]» (Սաղմ. ՃԻԷ. 2):

Գ. Երրորդ՝ զի կարէ ձեռն եւ պատկեր յաւրինել ի ձեռն դեղոց. այսպէս եւ բարի գործք զպատկերն Աստուծոյ կարէ կանգնել:

Դ. Չորրորդ՝ զի ձեռն է կենդանացուցիչ մարմնոյ եւ գործքն՝ հոգւոյ:

Ե. Հինգերորդ՝ զի ամենայն փառք մարդոյ յառաջին ի ձեռաց. այսպէս եւ փառք հանդերձեալ կենացն յառաջին ի բարի գործոց՝ ըստ այնմ. «Տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեսցեն [զհայր ձեր, որ յերկինս է]» (Մատթ. Ե. 16): *Եւ ասէ.*

«Ագուցէք զկաւշիկն յոտսն» (հմմտ. ԺԵ. 22):

Այն է, զոր ասէ Տէրն. «Եկու ձեզ իշխանութիւն կոխել զաւձս եւ զկարիճս եւ զամենայն [զաւրութիւնս թշնամւոյն]» (Ղուկ. Ժ. 19):

Եւ զի՞ «կաւշիկն» *զզաւրութիւնն նշանակէ:*

Ա. Նախ՝ զի թագաւորական է կաւշիկն. այսպէս՝ յաստուածային զաւրութենէն նորոգեալ մարդս պատերազմի ընդ թշնամւոյն:

Բ. Երկրորդ՝ զի զսպէ զոտսն յամենայն կողմանց. այսպէս՝ աստուածային զաւրութիւնն յամենայն չարէ պահէ:

Գ. Երրորդ՝ զի մեռելոտի մորթի լինի կաւշիկն. այսպէս՝ մահկանացու բնութեանս ետ Աստուած զզաւրութիւն իւր:

Դ. Չորրորդ՝ զի կաւշիկն զմարդն փառաւոր ցուցանէ. այսպէս եւ աստուածային խնամքն զսուրբսն գերագոյն ցուցանէ ամենայն աշխարհի:

Ե. Հինգերորդ՝ զի կաւշիկն զմարդն բարձր պահէ յերկրէ. այսպէս եւ աստուածային զաւրութիւնն հեռի պահէ զմարդն ի չարեաց, որպէս ասէ Յոհաննէս. «Ո՞, որ զիս պահեցեր անմերձ ի խառնակութենէ կանանց» (հմմտ. Ա. Կոր. Ե. 9, հմմտ. Յայտն. ԺԴ. 4): *Յետ որոց խրախութիւնս առնէ, ասէ.*

«Ածէք զեզն պարարակ, զենէք՝ կերիցուք եւ ուրախ լիցուք» (ԺԵ. 23):

Եւ այս զճշմարիտ պատարագիլն ի խաչին նշանակէ, ըստ որում ասէ մարգարէն. «Իբրեւ զոչխար ի սպանդ վարեցաւ, եւ իբրեւ զոր՝ առաջի կտրչի անմռունչ կայ» (Ես. ԾԳ. 7, հմմտ. Գործք Ը. 32):

Եւ զայս աւրինակ տպաւորեցաւ առ Աբրահամ ի պատարագելն ի Սահակայ, վասն որոյ ասէր Տէրն. «Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զաւր իմ, եւ տես Իսահակ եւ ուրախ եղեւ» (Յովհ. Ը. 56): *Յաղագս որոյ ասէ.*

«Կերիցէք եւ ուրախ լիցուք, զի այս որդիս մեռեալ էր եւ եկաց, կորուսեալ էր եւ գտաւ» (ԺԵ. 23-24):

Իսկ զի՞ եղին նմանեցուցանէ զՏէրն:

Ա. Նախ՝ զի եղն «հեզ» *ստուգաբանի: Եւ Տէրն ասէր.* «Ես եմ հեզ եւ խոնարհ սրտիւ» (Մատթ. ԺԱ. 29):

Բ. Երկրորդ՝ զի եղն սուրբ կենդանի է. եւ Տէրն մեր ոչ արար մեղս. «Եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորայ» (Ա. Պետ. Բ. 22):

Գ. Երրորդ՝ զի պատարագելի է. եւ Տէրն պատարագեցաւ ի վերայ խաչին՝ ըստ որում. «Սրբութիւն մեղաց մերոց արարեալ՝ նստաւ ընդ աջմէ [մեծութեանն ի բարձունս]» (Եբր. Ա. 3):

Դ. Չորրորդ՝ զի եղն գործէ զերկիր եւ սերմանէ. եւ Տէր մեր ասէ. «Ել սերմանացան սերմանել» (Ղուկ. Ը. 5), *որ եւ սերմանեաց զԲանն կենաց ի յոգիս մեր, եւ հերկեալ պատառեաց զքարացեալ սիրտս մեր յուսով անվախճան կենացն:*

Ե. Հինգերորդ՝ զի եղն յոյժ աշխատի, քան զամենայն կենդանիս. եւ Տէր մեր աշխատեալ մարմնով վասն մեր, ըստ որում ասէ. «Վասպակեալ ի ճանապարհին՝ նստէր» (հմմտ. Յովհ. Դ. 6), *եւ հանգիստ եղեւ ամենեցուն՝ ըստ այնմ.* «Եկայք առ իս, ամենայն աշխատեալք եւ ծանրաբեռնիք, եւ ես հանգուցից [զձեզ]» (հմմտ. Մատթ. ԺԱ. 28):

Իսկ զի՞ «մեռեալ էր եւ եկաց». *ըստ կրկին պատժոյն կրկին նորոգումն արար:*

Ա. Նախ՝ զի մեռեալ էր մեղաւք, այս է անբերելի մահ, զի զճշմարիտ կեանս սպանանէ, ընդդէմ այսմ կենդանութիւն ետ՝ կարի զարմանալի եւ աստուածային եւ անապական:

Բ. Երկրորդ՝ զի կորեալ էր անհամեմատ, այս է հոգին ի դժոխս մաշելով, ընդդէմ այսմ ի յարկսն յաւիտենից գտաւ անդ, ուր ուրախութիւն է մշտնջենաւոր:

Արդ, վասն զի եհեղ Որդին Միածին զարիւն իւր սուրբ, ի ձեռն իւր արեան միջնորդութեան ընծայեաց զբնութիւնս մեր Հաւրն երկնաւորի, յաղագս որոյ ասէ.

Սկսան ուրախ լինել (ԺԵ. 24):

Իսկ ասելն, թէ՝ «**Ածէք** եւ **զեզն պարարակ զենէք**», *եւ ոչ ասաց, թէ՝* «**Տուք ի ձեռն անառակ որդւոյն, զի զենցէ**», *ուստի ուսաք յեկեղեցի, որ թէպէտ մեղուցեալն զղջանայ եւ արժանի լինի թողութեան, բայց ոչ է արժան նմա այն, որ պոռնկեալն է, եւս սպասաւորել անարատ խորհրդոյն եւ պատարագել: Այլ, որք պահեցին զսրբութիւն նմա, նոքա մերձ լիցին նմա, եւ թէպէտ մեղքն թողեալ է ի ձեռն զղջմանն, սակայն ի դասս ապաշխարողաց է այսուհետեւ եւ ոչ յառաջ կատարելոցն, վասն որոյ թէպէտ զշնորհս աւազանին ետ կրկին Հայրն երկնաւոր, որպէս զառաջինն, այլ ոչ հրամայեաց ի զենումն համարձակիլ անարատ գառինն, այլ լինել ուրախակից:*

Որո՞յ պատճառ է, զի կրկին է գործ պատարագին:

Ա. Նախ՝ էութեամբ նմանիլ Աստուծոյ, որ է կուսութիւնն, որպէս եւ Քրիստոս կոյս էր: Եւ ապա՝ ծառայ լինել սրբութեան նորա, ըստ խորհրդոցն մաքրութեան եւ զղջման: Արդ, եթէ նման է Քրիստոսի մարդն ըստ սրբութեան կուսութեանն, կարէ գործակից լինել Քրիստոսի՝ ըստ որում ասէր. «Եղերուք սուրբ, զի ես սուրբ եմ» (Պետ. Ա. 16): *Իսկ եթէ կորոյս զայսպիսի սրբութիւն, ոչ կարէ գործակից լինել Քրիստոսի, ըստ նմանութեան նորա, որ ի յէութիւնն, այլ գործեցելոցն ուրախակից լինել, վասն տրտմութեան կամացն եւ արտասուացն եւ բազում սիրոյն, որ ի նա, զի որում շատ սիրէ, թողուաց Տէրն* (տես Ղուկ. Է. 47):

Եւ էր երէց որդին յագարակին եւ [մինչդեռ գայր եւ մերձ եղեւ ի տունն], լուաւ զձայն [երգոց եւ զպարուց], կոչեցեալ զմի ի ծառայիցն՝ [հարցանէր, թէ զի՞նչ իցէ այն]: Եւ նա ասէ [ցնա. «Զի եղբայր քո եկեալ է եւ] եզեն հայր քո զեզն պարարակ» (ԺԵ. 25-27):

Այս է տեսութիւն բանիս, զի վերին զուարթունքն ոչ էին տեղեակ Քրիստոսի մարդեղութեանն, բայց միայն հրեշտակաց դասք: Եւ զի տեսան յեկեղեցի զուրախութիւն հոգեւոր ի համբառնալն ի յերկինս հիացեալ, հարցանէին վերինք զներքինն դասն. «Ո՞վ է սա, որ դիմեալ գայ յԵդոմայ» (Ես. ԿԳ. 1), *որպէս պատմէ Եսայիաս: Նմին եւ Պաւղոս վկայէ, թէ՝* «Յեկեղեցւոյ ուսան զրազմապատիկ իմաստութիւնս քո տնաւրէնութեանդ» (հմմտ. Եփես. Գ. 10): *Արդ, աստ կարգաւորի բանք մարգարէին Եսայեայ, որ յելսն վերին պատմէ, քանզի մերձեալ Տէր մեր յառաջին դասն, որ տեղեակ էին Տեառն, զի Գաբրիէլ եւ դասք իւր ի ծննդեանն եւ յամենայն տեղիս սպասաւորէին նմա, եւ ընդ առաջ եղեւ նմա անթիւ բազմութիւնն, եւ սկսան աւրհնել զանճառ խորհուրդն, վասն զի տեսին Աստուած մարդացեալ, եւ այնպէս աւրհնութեամբ յուղարկէին ի վերին դասն, իսկ վերինքն, որ բուն անգէտք էին իջանելոյ եւ մարդանալոյ նորա, տեսեալ զմարմնովն վեր ընթանալն, այլեւ զանլուր ձայնն առաջի դասուն, զի ընդ նմա գնային, սկսան հիացմամբ ասել.* «Իսկ այս ո՞վ է, որ դիմեալ գայ յԵդոմայ» (հմմտ. Ես. ԿԳ. 1): *Եւ սկսանի Տէրն ինքնին տալ պատասխանի, զի առաջի նոցա գնայր, ասէ.* «Ես խաւսիմ զարդարութիւն եւ զիրաւունս փրկութեան» (Ես. ԿԳ. 1): *Ի գործոյն զինքն յայտնեաց, եւ ոչ ի բնութենէ պատուոյն: Իսկ նոցա անգիտացեալ տակաւին համարձակեալ՝ ասեն.* «Ընդէ՞ր են կարմիր ձորձք քո» (հմմտ. Ես. ԿԳ. 2): *Իսկ նա պատասխանեաց, թէ՝ «Ո՞վ իցէ»* (հմմտ. Սաղմ. ԻԳ. 8), *ըստ նմանութեան այսր բանի, զոր Հայրն ասէ.*

«Մեռեալ էր եւ եկաց, կորուսեալ էր եւ գտաւ» (ԺԵ. 24):

Ընդ նմին եւ Տէրն առաջի դնէ հարցաքննողացն զթշուառութիւն եւ զկորուստ մարդկան եւ զի ոչ ոք էր, որ փրկէր, ապա ողորմեցայ կորուսելոցն եւ հնձան հարի միայն զթշնամին ի խաչին եւ գտի զկորուսեալն եւ կենդանացուցի զմեռեալ ոգի մարդկան: Իսկ ներքին դասքն տեսին, զի անգիտութեամբ, իբրեւ զմարդ ոք հարցաքննեն, սաստեն իշխանութեանցն՝ ասելով. «Համբարձէ՛ք իշխանք զդրունս [ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից], եւ մտցէ թագաւոր փառաց» (Սաղմ. ԻԳ. 7): *Այսինքն՝ թոյլ տուք, ճանապարհ արարէք: Իսկ նոքա ընդ այս եւս զարմացան, քանզի ոչ գիտէին զոք մարմնով թա-*

գաւոր հզաւր: Ասեն. «Ո՞վ է սա թագաւոր փառաց» (հմմտ. Սաղմ. ԻԳ. 10), *ապա ասեն ներքինքն.* «Տէր զաւրութեանց, սա ինքն է թագաւոր փառաց» (Սաղմ. ԻԳ. 10): *Եւ դարձեալ՝ այս եւս իսկ, զի տեսին զնա վերացեալ, քան զամենայն պետութիւնս, եւ անցեալ ի ներքին կողմ վարագուրին, նստի ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս: Ապա հարցեալ զներքինքն եւ ուսեալք ի նոցանէ զխորհուրդ մարդանալոյն, այս է երէց որդւոյն կոչել զմի ի ծառայիցն եւ հարցանելն ի նմանէ: Այս ամենայն, որ ասացաք, կրեցաւ առ հրեշտակաց դասն, վասն որոյ ասէ.*

Բարկացաւ եւ ոչ կամէր մտանել (ԺԵ. 28):

Զայս մարդկաւրէն ձեւացուցանէ զբանս, զի ահա յայտնի է, զի ահիւ եւ դողութեամբ կան առաջի Աստուծոյ, այլ զի տեսին զբազում գործս, զոր ինքեանք ոչ գիտէին:

Ա. Նախ՝ զի իմացան, թէ զմարդկային բնութիւնն միացոյց ընդ իւրում բնութեան աստուածութեանն:

Բ. Երկրորդ՝ զի նստաւ մարդացեալն ընդ աջմէ Աստուծոյ:

Գ. Երրորդ՝ զի իմացան, թէ նմա կրկնի ամենայն ծունր երկնաւորաց եւ երկրաւորաց:

Դ. Չորրորդ՝ զի ծանեան, թէ մարդկային ազգ ի վեր անց քան զնոսա, զի առ Հայր ոչ ոք յիմանալեացն եմուտ՝ ըստ այնմ. «ԶԱստուած ոչ ոք եւրեւ երբէք» (Յովհ. Ա. 18):

Ե. Հինգերորդ՝ զի լուան, թէ զմարդկային ոգիքն զամենեսեան հանեալ ի դժոխոցն, եւ ճանապարհ յերկինս արարեալ, ապա բարկացան, զի կրեն նոքա զայս ախտ, քանզի նման են հոգւոց մերոց, եւ զինչ հոգի ունի, եւ զայն նոքա ունին, այսինքն՝ նախանձ, փառասիրութիւն եւ ամբարտաւանութիւն, ապա այս է զանազանութիւն, զի ի վերայ նոցա ոչ բռնանան եւ նեղեն զնոսա, որպէս եւ զմեզ, վասն որոյ ի դէպ ասել, թէ ախտացան: Եւ ասեն.

«Այս քանի ամբ են [ծառայեմ զքեզ] եւ երբէք զպատուիրանաւ [քով ոչ անցի], ուլ մի ոչ եւտուր մեզ, զի ուրախ [եղէց ընդ բարեկամս իմ]» (ԺԵ. 29):

Իսկ արդ՝

Զեներ դմա զեզն պարարակ (ԺԵ. 30):

Զայս ասել ոչ ոք բաւական է, այլ խորհեաց անախտիւ նախանձու: Այլ Հայրն բոլորից սփոփանս մխիթարութեան եղ առաջի նոցա՝ ասելով.

«Դու հանապազ ընդ իս ես, եւ որ ինչ իմ է, այն քո է» (ԺԵ. 31):

Այս զհրեշտակաց զբարի կեանսն յայտնէ:

Ա. Նախ՝ զի են անկարաւտ բնութեամբ:

Բ. Երկրորդ՝ զի ի վերին բարձրութիւնս կան յիմանալի աշխարհն:

Գ. Երրորդ՝ զի չեն ախտալից, որպէս մեք, այլ՝ անախտ:

Դ. Չորրորդ՝ զի ոչ ունին տրտմութիւն երբէք անենեւին:

Ե. Հինգերորդ՝ զի չունին իր ինչ, որ հարկ է ի վերայ նոցա մեղս առնել:

Եւ արդ, զայս ամենայն եւ այլեւս առանց ճգնութեանց եւ առանց աշխատութեանց ստացան: Այլ ընդ ստեղծանելն ամենառատ բնութիւն եղ ի նոսա շնորհաւք ողորմութեանն իւրոյ, իսկ ընդդէմ նոցա հէգ եւ թշուառականքս մեք ունիմք բազում նեղութիւնս:

Ա. Նախ՝ զի ընդ թանձրագունի եւ ընդ վայրաբերի մարմնոյ եմք կապեալ:

Բ. Երկրորդ՝ զի աւրէնք ախտից բազմէ ի վերայ մեր ըստ չափոյ մեղացն:

Գ. Երրորդ՝ զի մեր բնութիւնս հակառակ եւ պատերազմող է ընդ մեզ:

Դ. Չորրորդ՝ զի թշնամի եւս ունիմք՝ աւձ խաբող:

Ե. Հինգերորդ՝ զի յիմարութեան տեղի եմք անկեալ:

Զ. Վեցերորդ՝ զի ցանկութիւն ունիմք քարշող բնութեամբ:

Է. Եաթներորդ՝ զի հեշտութիւնն զմեզ պատրէ:

Ը. Ութերորդ՝ զի աւգնականն ունիմք զգալիս:

Թ. Իններորդ՝ զի յորժամ ի մեզս անկանիմք, մեծաւ բռնութեամբ կապիմք:

Ժ. Տասներորդ՝ զի յետ մեղանչելոյն յուսահատութեամբ փակեմք զդրունս ողորմութեան:

ԺԱ. Մետասաներորդ՝ զի անգիտանամք զճանապարհ փրկութեան:

ԺԲ. Երկոտասաներորդ՝ զի հիւանդութիւն մեղացն զչափաւոր իմաստութիւն մեր լուծանէ:

ԺԳ. Երեքտասաներորդ՝ զի թմրեալ ի մեղս, զդատաստան ինչ երեւեցուցանեն մեզ զդժուարութիւն:

ԺԴ. Չորեքտասաներորդ՝ զի կամաւ կուրացուցանեմք զմիտս մեր:

ԺԵ. Հնգետասաներորդ՝ զի լուծիչն այս ամենեցունց կարի ծանրագոյն եւ այպանելի, որ փրկէ զմեզ յամենայն տկարութենէ, այսինքն՝ զարիւն հեղուլ պարտ է, սով կրել, մերկութեան տանել, արտասուս չափել, միշտ հառաչել, բանտի եւ կապանաց համբերել, աշխատանաց եւ քրտանց, թքոց, պահոց եւ զետնախչտութեան եւ այլն ամենայն բժիշկ հնարեալ ըստ զանազան մեղացն, յորոց յայսոցիկ հեռի են իմանալեացն դասքն: Ապա յիրաւի էր ասելն.

«Դու հանապազ ընդ իս ես» (ԺԵ. 31):

Յուրախութեանս կաս եւ մարդկային ազգ՝ ի չարչարանս, եւ զի եղբայր քո է, ոչ էր պարտ թողուլ զնա յայնպիսի տանջանս: Արդ, յիրաւի էր զենուլն նմա զեզն պարարակ եւ քեզ՝ ոչ, զի դու կենդանի էիր եւ աստ՝ առ իս, իսկ եղբայրն քո մեռեալ էր եւ կենդանացաւ (Ղուկ. ԺԵ. 32)՝ *կորուսեալ էր ի դժոխս, բայց արդ, գտաւ յերկինս: Վասն որոյ ասէ յայլում տեղւոջ, թէ՝* «Ոչ է պիտոյ բժիշկ ողջաց, այլ՝ հիւանդաց» (Ղուկ. Ե 31, հմմտ. Մարկ. Բ. 17): *Այսուհետեւ բանս իրաւապէս զկայ առցէ, բայց աղաւթից ձերոց եւ բարեխաւսութեամբ եղբարք խնդրեսցէ Տէր՝ ըստ անառակին զկորուսեալ եւ զտառապեալ ազգս մեր, զի բազմացան մեղք մեր եւ կորուսին զմեզ՝ քակեալ ի յեկեղեցւոյ, որոշեալ ի թագաւորաց, սպառեալ ի հայրապետաց եւ պակասեալ ի տաւնախմբութենէ եւ յաղաւթից եւ ի բարի գործոց, եւ այն, որ անառակ որդւոյն դիպեցաւ, առաւել բազմապատիկ ազգիս հայկազեան պատահեցաւ, զի գնացեալ յարեցաք ի խոզեանն Թուրքաստանեաց, եւ զոր, ինչ նոցա դիւրին անկանի, մեզ ոչ ոք տայ: Եւ վայ է ինձ, զի անառակ որդին եկեալ ի միտս եւ զպակասութիւնն իւր գտեալ, դարձաւ՝ մեղայ ասելով: Իսկ ի յազգի իմում ոչ ոք է, որ զմտաւ ածէ զկորուստ հոգւոց եւ մարմնոց մերոց եւ կամ թէ իմասցի, թէ այսչափ վտանգի եմք տարակուսեալ, վասն որոյ աղաչեմ ի զիմաստս ի գործ արկանել եւ իմանալ զտառապանս մեր եւ ասել ընդ անառակ որդւոյն.* **«Մեղա յերկինս առաջի քո»** (ԺԵ. 18), *զի ոչ արասցէ ըստ անաւրէնութեան մերում, այլ հայեցեալ յանարատ միածինն, որ վասն մեր մեռաւ, եւ զդինս արեան*

նորա առ ինքն հաւաքեսցէ եւ քակեսցէ զբազմամանուած մեղս մեր եւ փրկական բղխմամբ կողին իւրոյ սրբեսցէ զչարաւացեալ հոգիս մեր եւ զերծուսցէ զմեզ ի դառն տանջանացն եւ յանբերելի ցաւոցն: Մանաւանդ տացէ մեզ զեղջ եւ աղբեւր արտասուաց՝ լուանալ զաղտեղի խորհուրդս մեր, զի եւ սրբոյ յարութեանն իւրոյ արժանաւորք լիցուք հաղորդել սուրբ մարմնոյ եւ արեանն իւրոյ շնորհաւք քաւչապետին ստեղծողին եւ անմահացուցանողին, որում պատիւ եւ փառք եւ զաւրութիւն, յաւիտեանս:

ՎԱՍՆ ԱՆԻՐԱՒ ՏՆՏԵՍԻՆ

Ղուկ. ԺԶ. 1-9

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Ասաց առ աշակերտսն. «Այր մի մեծատուն ունէր տնտես եւ եղեւ ամբաստանութիւն զնմանէ, որպէս թէ վատնեսցէ զինչս նորայ» (հմմտ. Ղուկ. ԺԶ. 1):

«**Տնտես**» *անիրաւութեան նշանակէ զամենայն մեղաւորս, որ իւր պարտապանաց թողու զյանցանս եւ առնէ իւր սիրելիս մամոնայ հարստութիւն եւ մեծութիւն ընչից, զոր բաշխեալ առատապէս կամ թողեալ զպարտիս, ստանա[յ] իւր սիրելիս զհրեշտակս եւ զհոգիս արդարոց:*

ԻԳՆԱՏԻՈՍ

Եւ ասէ առ աշակերտսն. «Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես, եւ եղեւ զնմանէ ամբաստանութիւն, որպէս թէ վատնիցէ զինչս նորա (Ղուկ. ԺԶ. 1):

Ըստ ժամանակին կարգաւ եղան ամենայն բանք առակացս այսոցիկ: Առաջին այն՝ իջանելն ի Հաւրէ եւ գնալ զհետ մոլորեալ ոչխարին (տե՛ս Մատթ. ԺԸ. 12-14, Ղուկ. ԺԵ. 1-7) *եւ զդրամն խնդրել եւ գտանել* (տե՛ս Ղուկ ԺԵ. 8-10), *յետ այնորիկ՝ տալ զինքն ի զենումն վասն անառակին դարձի* (տե՛ս Ղուկ. ԺԵ. 11-32), *զի թէպէտ եւ խորհուրդն առ Աբրահամաւ ցուցաւ, այլ ելք կատարածի խորհրդոյն պատարագաւն Քրիստոսի յայտնեցաւ, զի եւ ընդ պատիւ բնութեանս մերոյ նախանձաբեկք եղեն հրեշտակք: Արդ, իբրեւ այսքան խնամակալութեամբ ժողովեաց եւ արդարացոյց զբնութիւնս մեր, ապա չինէ տուն՝ զեկեղեցի եւ կեցուցանէ տնտես յայսմ տան՝ ըստ իւրաքանչիւր աստիճանի սպասաւորութեան: Եւ տնտես է իւրաքանչիւր ոք՝ եթէ մեծի եւ եթէ փոքու արժանացաւ շնորհի: Եւ է մեծ եւ առաջին՝ առաքելոցն սպասաւորութիւն՝ ըստ այնմ.* «Զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ մարգարէս, երրորդ՝ զվարդապետս» (Ա. Կոր. ԺԲ. 28): *Վասն այնորիկ յառաքեալսն*

դարձուցանէ զդէմս առակին եւ ասէ առ աշակերտսն. **«Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես»:** *Արդ, նոքա էին, որ զամենայն շնորհս եւ զամենայն գործոց մատակարարութիւնս ընկալան ի Քրիստոսէ, վասն որոյ եւ ամենայն անուամբք*[1] *նշանակին ի գրոց.* «Երբեմն զումարեալ թագաւորք յերկնաւորէն եւ կացեալ իշխանք ի վերա երկրի» (Սաղմ. ԿԷ. 15): *Այսպէս համարեսցին, ասէ, զմեզ մարդիկ՝ իբրեւ զպաշտաւնեայս Քրիստոսի եւ հազարպետս խորհրդոցն Աստուծոյ.* «Եւ խնդիր է ի մէջ հազարապետաց, եթէ ոք հաւատարիմ գտցի» (Ա. Կոր. Դ. 1-2): *Եւ դարձեալ՝* «Գեղեցիկ են,- ասէ,- ոտք աւետարանչացն խաղաղութեան» (Հռոմ. Ժ. 15): *Արդ, վասն զի այսչափ առատացաւ ի նոսա շնորհք Հոգւոյն, նորին աղագաւ կարեւոր էր առ նոսա հաստատել զբանն եւ նոքաւք՝ առ ամենեսեան: Վասն որոյ դնէ զանձն այր մեծատուն, որ սակաւ մի յառաջ զուարակ ածեալ ի զենումն* (տե՛ս Ղուկ. ԺԵ. 11-32): *Եւ ասա՝* «**այր**», *թէ յաղագս այրացելոյ աստուածութեանն, եւ թէ վասն հզաւր եւ արիական բնութեանն իմանալ ո՛չ է անտեղի: Զի նա միայն է այր, որում չիք ինչ առ որ տկարանայ: Եւ* «**մեծատուն**»՝ *նա, որ ամենայնիւ զծայրս մեծութեան բնութեամբ ունի եւ ոչ ստանալով յայլմէ: Արդ, ստացաւ նա արարչութեամբ զերկիր ամենայն՝ իբրեւ զյատակ եւ երկին՝ ի վերայ ձգեալ իբրեւ զձեղուն եւ հաստատեաց զսա իբրեւ զմի տուն՝ ամենայն առատ զանձիւք կանխաւ պաշտպանեալ: Դարձեալ ի լրման աւուրցս եկն եւ նորոգեաց զեկեղեցի եւ այսպէս կացոյց զմարդն տնտես. որում հոգեւոր շնորհ հաւատացաւ, նա յեկեղեցւոջ եղաւ ի Հոգւոյն տնտես եւ որում մարմնական ինչ արուեստ կամ ստացուած, կամ իշխանութիւն ինչ, կամ զաւրութիւն ինչ հաւատացաւ, եւ նա նմին տնտես է: Եւ բարւոք կոչեցաւ տնտես, զի տնտեսն չունի ինչ զիւր սեպհական, այլ տէրունեացն հաւատացաւ նմա, ուստի եւ պարտական է ըստ կամաց տուողին մատակարարել: Այսպէս եւ մարդկան ազգ՝ չունին ինչ զանձանց, այլ Աստուծոյքն հաւատացան նոցա եւ պարտական են ըստ կամացն Աստուծոյ զայն ի գործ արկանել, զի բարւոք գտեալ ի փոքունսն՝ եւ մեծին արժանացին, ըստ որում եցոյց ի բանս քանքարացն* (տե՛ս Մատթ. ԻԵ. 14-30, Ղուկ. ԺԹ. 11-27), *որ տոհմականաւքն մատոյց եւ որ զլացաւ վասն հեղգութեանն: Դարձեալ՝ ո՞վ իցէ հաւատարիմ եւ իմաստուն տնտես, զոր կացոյց*

[1] ԻՏ անուամբ

Տէր ի վերայ ծառայիցն, եթէ փոյթ գտանիցի, երանելի է, ապա թէ չարասցի՝ հարկանել զծառայսն՝ եղկելի է եւ թշուառական: Արդ, զայս վասն հատուցման յաւել եղ՝ բարեաց եղելոց եւ չարաց, զի կամ երկիւղ ունիցին եւ կամ ցանկութեամբ բարեացն փութասցին ի հաճոյս կամաց տուողին: Իսկ ասա՝ առակաւս զհնարս անիրաւաց[1] *փրկութեանն առաջի դնէ, զի մի՛ ոք, որ չար իցէ, անյուսութեամբ կորիցէ, այլ ունի նա ժամանակ եւ տեղի յելս շնչոյն խնդրել զԱստուած եւ բարեգործել: Արդ, զայս ամենայն յուզէ, զի մի ոք ի մինն միայն հայեցեալ վնասեցի, այլ յամենեցունց անտի զաւգտակարն ունիցի ի պէտս փրկութեան: Եւ ունին իմաստք խորհրդոյ այսպէս՝ եցոյց զկամս քաղցրութեան հաւրն ի վերադարձի անառակին, զի այնպէս եցոյց զինամս մարդասիրութեանն, մինչեւ նախանձու շարժել հրեշտակաց: Եւ զի մի ոք յայս հայեցեալ յորս այս կացցէ եւ անհոգ լիցի՝ կարդէ զհետ նորին եւ զայն, որ անիրաւ գտաւ առ պարգեւատուն: Եւ անուանէ «ծառայ», զոր ի շնորհաց ժամանակին որդի կոչեաց, վասն զի շնորհն մի անգամ է, եւ յամենայն ժամ շնորհ լինել ոչ ունի, այլ յետ շնորհին գործոց քննութիւն է՝ արդարութեամբ հատուցումն ի գալստեանն Տեառն, յառնուլն համարս ստուգութեամբ եւ ի հատուցանելն՝ ուղղութեամբ*[2]*: Վասն որոյ յայսմ առակի զգուշացուցանէ յառաջ քան զգալն եւ գատելն եւ չափելն՝ ըստ անիրաւութեան անիրաւացն, զի այսպէս միտս ստասցին՝ մերկանալ զանիրաւութիւնն.*

Եղեւ,- ասէ,- զնմանէ ամբաստանութիւն, որպէս թէ վատնիցէ զինչս նորա (ԺԶ. 1):

Եւ ո՞յք ոմանք են արդեաւք ամբաստանողքն, եւ զիա՞րդ ամբաստանութեան կարաւտէ իմանալ զյայտնի վարս ուրուք, այն, որ զաներեւոյթս մտաց տեսանէ եւ նախքան զգործելն ինչ: Արդ, թէպէտ նա ամենատես է բնութեամբ եւ ոչ կարաւտէ[3]*, եթէ գուշակեսցէ ոք, սակայն զի երկայնամիտ է, ներէ ժամանակ ինչ յանցաւորացն, իսկ մարդիկ կարճամիտ գոլով, ի չարութենէ զոք տեսեալ ի յափշտակութեան եւ ի նեղել զտնանկս եւ յայլ եւս գործս զազրալիս՝ հեղեալ անբարշտութեամբ ձանձրացեալք յայսպիսեաց*

[1] ԻՏ իրաւացի] անիրաւաց
[2] ԻՏ ողորմութեամբ] ուղղութեամբ
[3] ԻՏ կարաւտի

աստի, զձեռս ընդ երկինս ամբարձեալք՝ բողոքեն առ Աստուած՝ ըստ այնմ, զի ասէ. «Զրկեալն ի ձէնջ աղաղակէ եւ բողոք հնձողաց ձերոց ել առ Աստուած» (հմմտ. Յակ. Ե. 4)*: Նաեւ հրեշտակք, որք կարգեցան յերկրի՝ պահապանք տանս՝ շրջել ընդ մարդկան, են ամենայնիւ մաքուրք եւ մինչ տեսանեն զգարշ գործս ամբարշտաց տաղտկացեալք եւ նոքա ամբաստան լինին առ Աստուծոյ, զի մի միշտ երկայնամիտ լինիցի, այլ եւ՝ վրէժխնդիր՝ ըստ այնմ.* «Բարկութիւն սրտմտութեան Տեառն, իբրեւ զհուր ձորալիր պարանոցաթաղ յորդեսցէ» (Ես. Լ. 28-30). *եւ՝* «Յայտնեալոց է բարկութիւնն Աստուծոյ ի վերայ ամենայն անբարշտութեան եւ անիրաւութեան մարդկան» (Հռոմ. Ա. 18)*: Եւ դարձեալ՝ եթէ զմեծութեամբ քաղցրութեանն Աստուծոյ եւ զներելովն եւ զերկայնմտութեամբն արհամարհիցես, չգիտիցե՞ս, զի քաղցրութիւնն Աստուծոյ կամի զքեզ յապաշխարութիւն ածել:* «Այլ ըստ խստութեան քում եւ ըստ անզեղջ սրտիդ, զանձես քեզ բարկութիւն յաւուր յայտնութեան արդար դատաւորութեանն Աստուծոյ» (հմմտ. Հռոմ. Բ. 5)*: Եւ կարի բազումք են այսպիսիք ի Գիրս, որ զներելն եւ զիջանելն Աստուծոյ յայտնեն: Եւ դարձեալ՝ զսաստ սպառնալեաց վրէժխնդրութեանն՝ ըստ որում եւ ասա՝ ի ներելն Աստուծոյ ոչ զանգիտեաց ի ցասմանէ անտի, մինչեւ ամբաստան լինելով շարժեցին զՏէրն ի վրէժխնդրութիւն: Վասն որոյ.*

Կոչեաց զնա եւ ասէ. «**Զի՞նչ է այս, որ լսեմս զքէն. տո՛ւր զհամար տնտեսութեան քոյ, զի ոչ եւս կարես լինիլ տնտես**» (ԺԶ. 2):

Մարդկաւրինաբար ձեւացուցանէ զբանն, որպէս թէ լուաւ եւ տակաւին եւս յերկբայս է եւ քննութեամբ կամի կեալ ի վերայ ստուգութեանն: Արդ, զայս կամ կարգ բանիցն պահանջեաց, կամ խրատել զմեզ կամեցաւ՝ մի վայրապար առանց քննութեան զոք դատել, այլ հաւաստի քննութիւն նորա ի յարութեան[1] *անդ սահմանեալ է, յորժամ ընդ բանից եւ ընդ մտաց շարժման, որք մտին ընդ մեզ ի գերեզմանս մեր, համարս տալ պարտապան եմք, այլ աստ միայն կոչելն է, որով լուծանէ ի կենաց աստի: Իսկ ասելն՝* «**ոչ եւս կարես լինիլ տնտես**»*, փոխանակ ասելոյ, եղեալ է՝* «**Ոչ եւս է մարթ լինել քեզ տնտես**»*, զի ոչ է աւրէն չարի ուրուք եղելոյ՝ կալ ի նմին, յորում անաւրինագոյն գտաւ, զի զոր, ինչ ընկալաւ ոք յԱստուծոյ, պարտ է մեծաւ զգուշութեամբ հատուցանել Աստուծոյ՝ մաքուր,*

[1] ԻՏ յարութեան] յարքայութեան

առանց խառնակութեան չարեաց: Իսկ որ վատթարագոյն գտաւ, եթէ հոգեւորին էր վերակացու կացեալ եւ եթէ մարմնաւորի ինչ մատակարար եղեալ՝ ոչ է աւրէն կալ ի նմին, այլ տարաժամ բառնալ, զի մի եւս վատնիչ լինիցի աստուածայնոց գանձուցն: Եւ թէ զի՞նչ աւրինակ բանից վատնիչ լինելոցն իցէ, գիտեմ, թէ ամենայն ոք կարաւղ է առ որ հայեցաւ եւ ետես եւ զբանն յաւղել, յաղագս որոյ մեզ աւելորդ է ի գրի աստ կարգել, այլ յայն փութալ, զոր ինչ նեղեալ առ վտագնի առաջի եդ եւ հնարեցաւ գտանել զայն, ինչ որ եւ ի նմին իսկ ի պահանջողէն վկայեցաւ, թէ իմաստութեամբ արար, որ եւ ամենեցուն փութալի ցուցաւ.

Խորհեցաւ, ասէ, ի միտս իւր, թէ զի՞նչ արարից, զի տէր իմ հանէ զտնտեսութիւնս, այս է՝ լուծանէ ի կենաց ասպի, գործել ոչ կարեմ (հմմտ. ԺՁ. 3):

Զի չիք ինչ ժամանակ ներելոյ, զի գործովք առաքինութեան զժանգ անաւրէնութեանն յանձնէ քերեալ՝ ի բաց ընկեսցէ, եւ փոխանակ՝ բարեացն գործովք լցցի եւ յանփոփոխ կեանսն մերձեալ՝ ամենայն ինչ փակեալ մարդկան: Նաեւ ոչ որ մուրանալն կամի, զոյ տեղի, վասն այնորիկ ասէ՝ «մուրանալ ամաչեմ» (ԺՁ. 3): *Թէպէտ զամաչելն զնէ առաջի վասն կարգին, սակայն անդ ողորմութիւն գտանել եւ կարի լրբութեամբ ժողին ոչ է, զի եւ ոչ մեծատունն ի խնդրելն ընկալաւ ինչ*[1] *եւ ոչ կուսանքն, որոց պակասեաց իւղն* (Մատթ. Ի Ե. 1-13): *Արդ, սա տակաւին ի մարմնի գոլով, ծանեաւ, թէ ոչ ներէր նմա ժամանակն գործել ինչ, եւ որ առաջի կայր աշխարհն գնալոյ, ողորմութեամբ կեալ ոչ ունէր:*

Ապա ասէ՝ «Գիտեմ զինչ արարից»: Եւ կոչեալ զպարտապանս տեառն իւրոյ, ասէ ցառաջինն. «Դու քանի՞ ինչ պարտիս տեառն իմոյ»: Եւ նա ասէ, հարիւր մար ձիթոյ: Եւ ասէ ցնա. «Կա զգիր քո, եւ նիստ, գրեա յիսուն»: Ասէ եւ ցմիւսն. «Դու քանի՞ ինչ պարտիս»: Եւ նա ասէ. «Հարիւր քուռ ցորենոյ»: Ասէ ցնա. «Կա զգիր քո եւ նիստ, գրեա ութսուն» (ԺՁ. 4-7):

Դէմք առակիս համաւրէն յայն հայի, զի զոր ագահութեամբ ժողովեաց՝ փութայ[2] *սփռել եւ տալ աղքատաց եւ արտասուաւք եւ*

[1] ԻՏ > ինչ
[2] ԻՏ փութալ] փութայ

խոստովանութեամբ անկանել առաջի Աստուծոյ եւ հառաչանաւք խնդրել զնա: Բայց մեզ պարտ է յարմար՝ ըստ դրութեան[1] *բանիցն եւ զթարգմանութի՛ւնն մերձ կարգել, զի մի՛ ինչ թերատես լիցի: Եւ արդ, գիտելի է մեզ այս, զի իբրեւ աշխարհ իմն է բնութիւնս, եւ յաշխարհի բնութեանս՝ եղաւ յարարչէն միտքս տնտես, եւ պարտապանք Տեառն են հոգին եւ մարմինն: Եւ միտքն իշխանական գոլով եւ կառավար եւ ուղղիչ սոցա՝ յինքն առեալ, ունի զգիր պարտեացն, որով առ Աստուած յանցաւոր գտաք: Եւ որքան է ի հեշտութեան եւ ունի զախորժական ախտակիր բնութիւնս՝ հարեալ ի սէր աշխարհի, ոչինչ է նմա փոյթ վասն սպառնեալեաց դատաստանացն Աստուծոյ եւ ո՛չ կամի տալ զգիր պարտեացն ի ձեռս հոգւոյն եւ մարմնոյն, զի խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ պատառեսցեն, այլ ըստ նմանութեան այնր տնտեսի՝ հարկանէ զծառայակից հոգին եւ զմարմինն՝ ուտել եւ ըմպել ընդ պոռնիկս: Մաղթանաց հոգւոյն պարտականի ո՛չ անսայ, այլ ընկղմեալ*[2] *ի ցանկութեանց աստի կենացս եւ վարակեալ ի մեղացն կապանաց՝ ի վեր հայել եւ թեթեւանալ ի ծանր բեռանց մեղացն ոչ կամի: Իսկ ապա մերձեալ պահանջողն յայնմանէ, որ կոչէ տալ զհամար տնտեսութեանն եւ ունի ի նմին ժամու անհնարին տագնապ ցաւոց զմարմինն, բարձեալ է եւ ցանկութիւն, որով հեշտացեալ՝ յաւրանայր. ապականեալ որովայնն, ո՛չ բաղձայ կերակրոց եւ ըմպելեաց եւ զոր մատուցանեն՝ դժուարելով, ի բաց վարէ եւ զյոյժ համեղագոյնսն ի կերակրոց՝ իբրեւ ի դարշ տեսլենէ տաղտկացեալ: Սպառի եւ եռանդն ցանկութեան՝ պոռնկական դիմաւքն կախարդեալ, որք իբրեւ կապանաւք ձգէին՝ քարշեալ իբրեւ զշուն տոռամբ եւ ածեալ իբրեւ զարջառ ի սպանումն եւ իբրեւ զեղջերու հարեալ զլերդակողմն* (տե՛ս Առակ. Է. 22):

Այլ յայնժամ առ վտանգի ցաւոցն եւ որք յոյժ առաւելեալ են պայծառութեամբ գեղոյ, չէ ինչ փոյթ նորա: Բարձեալ է եւ սէր պայծառ զգեստուց եւ ոսկւոյ եւ արծաթոյ ցանկութիւն, դադարեալ է փառասիրութիւն եւ նախանձ եւ մախանք եւ առաջիկայ լքանելն զայս եւ յայլ աշխարհ գնալոյն ճանապարհ: Վտանգէ եւ ընդ ցաւոց բնութեանն կրից եւ երկիւղ անտի տանջանացն, եւ

[1] ԻՏ գրութեան] դրութեան
[2] ԻՏ զմայլի

ամենայն ուստեք տրտմականքն յաճախեն: Ապա այն, որ անիրաւութեամբ զամենայն ժամանակն զհետ գնաց ախտիցն ցանկութեան, յայնմանէ պակասեալ, կոչէ յինքն զհոգին եւ զմարմինն, տայ ի ձեռս նոցա զգիր պարտեացն, զի թերեւս հնար ինչ լինիցի թեթեւանալ ի բեռանց անտի եւ ազատիլ ի խղճէ մտացն: Եւ առաջին՝ ասէ հոգւոյն, քանի՞ ինչ են պարտիք մեղացն, եւ նա վասն զի ի գլուխ եհաս ամենայն անաւրէնութեան, զի հարիւրն թիւ կատարեալ է, ըստ որում եւ ի սերմանցս բարեաց պտղաբերութեան ի հարիւրորդն ժամանեաց թիւ, որ ի գլուխ ամենայն բարեացն եհաս եւ բովանդակ զամենայն առաքինութիւնս հատոյց: Ըստ նմին եւ աստ, որ ի գլուխ ամենայն չարեաց եհաս, ի հարիւրորդն ժամանեաց թիւ, զի ոչ իւիք պակաս ի չարեաց գտաւ: Եւ ապա ցուցանէ բանիւն, թէ այնպիսեաց յանցանաց, որ ընդ հոգին միայն անցանեն առանց գործակցութեան մարմնոյն, կէս վնասուն թողեալ լինի, վասն զի թեթեւ եւ դիւրաշարժ է ի մեղս եւ դժուար արգելելի վասն երագութեան բնական բերմանն եւ անժամանակաբար շաղի ընդ ցանկութեան, նորին աղագաւ բազմի, արժանանայ շնորհի յարդարադատ իրաւանցն Աստուծոյ: Ասէ եւ միւսոյն՝ դու քանի՞ ինչ պարտիս: Իսկ նա, վասն զի եւ մարմնով ընդ ամենայն էանց տեսակս չարեաց, զնոյն թիւ առաջի դնէ, արժանացուցանէ եւ զսա շնորհի, սակայն սակաւագոյն, քան զնորայն, զի մարմին կարի շաղի ընդ մեղսն եւ առաւել հեշտանայ գարշ ցանկութեամբն, եւ զոր մարմնով ոք գործեաց, կամակոր մտաւք յանցեաւ, վասն զի ունէր՝ խափանել զնա եւ ոչ կամեցաւ, այլ յաւժարութեամբ եւ արհամարհանաւք աւրինացն, զհետ գնաց կորստական մեղացն: Եւ զի մարմին ծառայական եւ դժուարաշարժ, ժամանակի կարաւտանայ եւ գործակցի՝ լնուլ զցանկութիւնն, վասն որոյ դիւրին է արգելուլ զբերումն նորա եւ բարեաց խորհրդով իբրեւ սանձիւք ընկրկել զանվայելուչ յարձակումն նորին: Քանզի զի՞նչ դժուարին է՝ արգելուլ զձեռս ի հեղլոյ զարիւն եւ ի հարկանելոյ եւ ի զրկելոյ եւ յագահութենէ եւ յորովայնամոլութենէ եւ ի պոռնկութենէ գէջ խառնակութեանց՝ եւ որ սոցին նման են եւ որ՝ այլ եւս անաւրինագոյն քան զնոսա: Յորոց լռելն եւ կալն ի հանդարտութեան եւ չափով մերձենալ ի կարեւորագոյնսն դիւրին է, իսկ անչափ տաժանիլն ախտիցն ցանկութեամբ՝ կարի դժուարին: Արդ, վասն սոցին այսոցիկ կրից հաւաստի քննութեամբն փոքր ինչ ներէ եւ մեղացն

մարմնոյ: Դարձեալ եւս քննելի է՝ զի՞նչ է, զի նշանակաւ որոշեաց ձէթ եւ ցորեան լինել պարտեացն, վասն որոյ չէ պարտ վայրապար զնիւթոյն բնութեամբն անցանել, այլ խնդրել եւ աստ իմաստս: Արդ, զոր աւրինակ զանկեալն ի ձեռս աւազակաց ձիթով եւ գինով բժշկեաց՝ նշանակեալ զաւծումն մկրտութեանն եւ զկենդանարար արիւնն, որով փրկեցաք: Ըստ նմին եւ աստ՝ մեղուցեալ անձն յետ աւազանին շնորհաց եւ հաղորդութեան մարմնոյ եւ արեանն՝ պարտապան սոցա գտաւ: Եւ ի ներելոյ՝ ի թողութեան ժամանակին, վասն զղջման եւ պաղատանացն, եւ զոր ագահութեամբն ստացաւ՝ տալ կամելով կարաւտելոց, զոր աւծման մկրտութեանն պարտական գտաւ, կէս վնասուն թողեալ լինի: Իսկ զոր առ մարմինն Տէրունական լրբութեամբ յանցեաւ անարժան հաղորդութեամբն ի զղջման եղեալ՝ գտանէ եւ այնմ ներումն թողութեան, բայց սակաւ՝ զհինգերորդ մասն միայն: Վասն զի կարի ծանր է մարմնոյ եւ արեանն Քրիստոսի հաղորդութիւնն՝ ըստ առաքելոյն. «Փորձեսցէ մարդ զանձն իւր եւ ապա ի հացէն անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ: Զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ եւ արեանն Տեառն» (Ա Կոր. ԺԱ. 28-29)*: Եւ որ ոք զաւրէնսն Մովսէսի արհամարհեաց, անողորմ դատաստանաւ ասացաւ, զի ամենայն ժողովուրդն սատակեսցեն զնա քարամբք*[1]*, ապա քանի՞ սաստիկ պատժոց են, ասէ, արժանի, որ անարժան հաղորդեցան, զի «զՈրդին Աստուծոյ առ ոտն հարեալ կոխեցին եւ զարիւնն Նորոյ ուխտին անսուրբ եւ խառնակ համարեցան եւ զհոգին շնորհաց թշնամանեցին»* (Եբր. Ժ. 28-29)*: Արդ, այսպէս անչափ յանցանք են եւ ծանր վնաս արեանն Աստուծոյ պարտական լինել անարժան հաղորդելովն, բայց սակայն վասն մեծի մարդասիրութեանն աւրինակ ներելոյ առաջի եդ, զի մի ոք ի մեծութիւն վնասուն հայեցեալ՝ անյոյս կորիցէ: Յաղագս որոյ խրատէ ողորմութեամբ եւ ցուցանէ զքաղցրութիւն բարերար կամացն, թէ յամենայնի պարտ է յուսալ, թէպէտ եւ կարի անբաւ են պարտիքն, եւ դադրեալ է ժամանակ ապաշխարութեանն: Վասն այնորիկ ասէ.*

Գովեաց տէր զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար (ԺԶ. 8):

[1] ԻՏ քարամբ] քարամբք

Իսկ արդ, եթէ գովելի է նմա այս, մի՛ վերջասցուք եւ յելսն մեր խնդրել զնա, թէպէտ եւ կարի ծանունք են բեռինքն եւ բարձրացեալ, քան զգլուխս մեր, զի ահաւասիկ ինքն է թողութեանն շտեմարանապետ եւ վասն նորին զաւրացուցանէ զառատութիւն շնորհին: Զի թէեւ ոչ ունի արդարացուցանել մինչ զի ժառանգաւոր Աստուծոյ լինել, սակայն յայնմանէ ազատեալ է, զոր ընդ մէջն կտրել դատեցաւ եւ զոր կապեալ ոտիւք եւ ձեռաւք՝ հրաման ետ հանել ի խաւարն արտաքին (տե՛ս Մատթ. ԻԲ. 13)*: Եւ արդ, կարի մեծ է յայսպիսեաց ապրելն: Եւ զի աւգտակար է, ապաքէն նա ինքն գիտէ, որ այսպիսի առակս յաւդեաց, զի ոչ եթէ վայրապար ինչ ի նմանէ ասացեալ եղեւ, այլ վասն զի ունի նա այսպիսեաւքս տալ քաւութիւն: Վասն նորին եւ գովէ զտնտեսն անիրաւութեան՝ յասելն. «իմաստութեամբ արար»:*

Զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են, - ասէ, - քան զորդիս լուսոյ յազգիս իւրեանց (ԺԶ. 8)

Վկայեաց իմաստնագոյնս լինել զգտաւղսն հնար փրկութեան, քան զայնս, որոց եւ ոչ մի ինչ փոյթ եղեւ վասն հնարիցն փրկութեան: Արդ, որդիս լուսոյ անուանէ զհրեշտակս վասն պարզ եւ անախտ բնութեան նոցա: Եւ թէ զիա՞րդ մարդկան ազգ իմաստնագոյն, քան զնոսա ցուցան, անտի առցես զաւրինակն, զի մարդիկ, անկեալ ի փառաց եւ աւտարացեալք յԱստուծոյ, հնարս գտին ապաշխարութեամբ խնդրել զԱստուած եւ մերձենալ առ նա անախտ կենաւք՝ առանց խրատու աւրինացն, որով ծանեան, թէ զոր յանցանքն աւտարացուցին, գիտէ ուղղութիւն ընտանի առնել եւ ի ճանապարհէն, յորմէ խոտորելովն վրիպական գտան, ընդ նոյն հետս դառնալն ունի ի նոյն անվրէպ ածել: Եւ զայս աւրինակ ուղղութեան բազմաւք ունիմք ճշմարտել: Իսկ որ ի դասուց անտի նոցա չեղեալ անկան, այսպիսի ինչ նոցա ոչ եղեւ, այլ եւս չարացան անմտութեամբ: Եւ մի ոք առ այս ընդդէմ դիցէ ասել, թէ վասն զի ոչ է նոցա մարմին չարչարելի, որ տաժանաբար կրիւք արտասուաց եւ տքնութեան եւ այլոց առաքինութեանց ուղղութեամբ ունիցին հաշտ Աստուծոյ հանդիպել: Առ որս ի դէպ է ասել, զի թէ եւ ի նոյն տեղի, ուստի անկաւ, ելանել ոչ ունէր, սակայն այլ եւս չարանալն կարի անտեղի էր: Ուստի աւրէն էր իմանալ, թէ այն, որ վասն յանցանացն այնոցիկ յերկիր ի խոնարհ ընկեց ի բարձրութենէ ան-

տի, ունի նա, նովին զաւրութեամբ եւ ըստ յաւելուածոյ անհնազանդութեան նորա եւ չարանալոյն՝ յաւելուլ նմա հարուածս եւ դատաստանաւ ըստ բազմապատիկ չարեացն հատուցանել ի վերայ նորա բազումս եւ կարի եւս տանջողական նեղութիւնս: Այլ նա յայսպիսեաց ինչ զմտաւ ոչ ած, այլ անմտացեալ, ի պատերազմողի կարգի[1] *զինքն հաստատեաց եւ կացոյց*[2]*: Եւ ընդ պատկերին Աստուծոյ մարտուցեալ պատրանաւք ուսոյց եւ նմա ապստամբել եւ հաւանեցոյց գործակից լինել իւրում անաւրէնութեանն: Եւ այսպիսի չարասէր եղեալ՝ անաւրէնութեամբ զբնութիւնս մեր ապականեաց, մինչեւ շարժեալ Աստուծոյ վրէժս՝ հատուցանել նմա: Եւ այս է, զի պատրաստեաց նմա հուր տանջողական իմանալի բնութեանն, վասն որոյ, թէ յետ անկմանն ապաշաւեալ էր զչարիսն եւ կացեալ էր ի հնազանդութեանն Աստուծոյ եւ մերս բնութիւն ի մերս կարգի, ապա այնպէս տանջանք ոչ պատրաստէին նմա: Եւ արդ, եթե զայս իմաստութիւն ստացեալ էր, երանելի ոմն էր: Զի թէպէտ եւ զդասն ելիք եւ զտեղի փառացն կորոյս, սակայն բնութիւն ունէր անմահ եւ անապական եւ անկարաւտ, զոր ոչ եբարձ ի նմանէ յանկանելն նորա: Արդ, այս է անիմաստութիւն նոցա, եւ այս է իմաստութիւն մեր, զի գիտացաք առ վտանգին խնդրել զԱստուած եւ դառնալ առ Հայրն եւ գտանել խնամս յԱրարչէն եւ հասանել թողութեան: Վասն որոյ ասէ.*

Իմաստնագոյնք են որդիք յաւիտենիս այսորիկ քան զորդիս լուսոյ յազգիս իւրեանց (ԺԶ. 8):

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

ԻԳ. *Այր զինքն անուանէ, որ յառաջ զուարակ ածեալ ի զենումն, եւ աստ այր յաղագս այրացեալ աստուածութեանն եւ վասն հզաւր եւ արիական բնութեանն, եւ տկարանալի: Մեծատուն[ն] ամենայնիւ գծայրս մեծութեանն բնութեամբ ունի եւ ո՛չ ստանալով: «Որոյ էր տնտ[ես]»: Արդ, ստացաւ նա արարչութեամբն զերկիր իբրեւ զյատակ եւ զերկինս իբրեւ զձեղուն՝ ի վերուստ ձգեալ, եւ հաստատեաց զսա իբրեւ զմի տուն ամէնառատ դանձիւք՝ պաշտպանեալ*

[1] ԻՏ կարգ
[2] ԻՏ եցոյց] կացոյց

կանխաւ: Եւ [ի] լրման ժամանակացն եկն եւ նորոգեաց զեկեղեցի, եւ կացուցանէ տնտես զմարդ ըստ իւրաքանչիւր աշտիճանի սպասաւորութեան: Եւ իւրաքանչիւր ոք եթէ մեծի եւ եթէ փոքու արժանացաւ շնորհի, եւ եղաւ ի հոգոյն տնտես, որում մարմնական ինչ արուեստ կամ ստացուած կամ իշխանութիւն հոգեւոր կամ մարմնաւոր կամ զաւրութիւն հաւատացաւ նմա եւ նմին տնտես է: Զի տնտեսն չունի ինչ զիւր սեփական, այլ ի տէրունեացն հաւատացաւ նմա, եւ պարտական է ըստ կամաց Տեառն մատակարարել: Այսպէս եւ մարդկան ազգի ի Տեառնէ տուաւ նոցա, եւ պարտական են ըստ կամացն Աստուծոյ զայն ի գործ արկանել: Որպէս ի քանքարսն է տեսանել, որք ի փոքուն գտան բարիոք, մեծին արժանացան եւ որ զլացաւն՝ պատժեցաւ (տե՛ս Մատթ. ԻԵ. 14-30):

Եւ ասէր առ աշակերտսն (Ղուկ. ԺԶ. 1):

Առաջին եւ մեծ սպասաւորութիւն առաքելոցն: Ըստ այնմ, թէ՝ «Զորս եդ Աստուած յեկեղեցոջն, նախ՝ զառաքեալսն, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս» (Ա. Կոր. ԺԲ. 28): *Վասն այնորիկ առ առաքեալսն դնէ զդէմս առակին, եւ որ զամենայն շնորհս եւ զգործս մատակարարութեան ընկալան ի Քրիստոսէ:*

Վասն այնորիկ բազում անուամբ կոչէ զնոսա ի Գրոց. երբեմն՝ «[Ի] գումարել երկնաւորին զթագաւորս» (Սաղմ. ԿԷ. 15) *եւ «Կացուցեն զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր»* (Սաղմ. ԽԴ. 17): *Եւ այսպէս համարեսցին զմեզ մարդիկ իբրեւ զպաշտաւնեայս Քրիստոսի եւ հազարապետս խորհրդոցն Աստուծոյ, առ որս առատացաւ շնորհք Հոգոյն: Վասն այնորիկ առ նոսա հատուցանէ զբանն, եւ նոքաւք ընդ ամենեսին խաւսի, որ գտան հաւատարիմ եւ իմաստուն տնտես, եւ ետուն զկերակուր ի ժամու հաւատացելոց:*

Եւ եղեւ, ասէ, ամբաստանութիւն, որպէս թէ վատնէ զինչս նորա (ԺԶ. 1):

ԿՐ *Զի ոչ ծածկի առաջի Աստուծոյ, որք ոչ ի հաճոյս Աստուծոյ մատակարարեն: Վասն այնորիկ եղեւ ամբաստանութիւն:*

ԻԳ *Արդ, որ զաներեւոյթսն տեսանէր եւ նախքան զգործելն ճանաչէր, զի թէպէտ եւ նա ամենատես է բնութեամբ եւ ո՛չ կարաւտի զուշակելոյ ումեք, սակայն երկայնամիտ է, ներէ ժամանակս յանցաւորաց: Իսկ մարդիկ, կարճամիտ գոլով, թէ տեսանեն զոք յափշտակելով, զտնանկս եւ զայլս ի գործս զաւրութեան, ձեռս յերկինս համբարձեալ առ Աստուած: Ըստ այնմ՝ «Զրկեալն ի ձէնջ աղաղակէ, եւ բողոք նոցա եհաս յականջս Տեառն»* (Յակ. Ե. 4)՝ *ի քրոբէս: Նաեւ հրեշտակք, որք կարգեցան ի պահպանութիւն մարդկան, տեսանելով զգարշ գործս ամպարշտաց, տաղտկան[ան] եւ ամբաստան լինին առ Աստուած, զի ի վրէժխնդրութիւն փութասցի: Թէպէտ եւ սրտմտութիւն Աստուծոյ իբրեւ զհուր ձորալիր պարանոցաթաղ, եւ յայտնելոց է բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդոցն անհաւանութեան, որք քաղցրութեամբն Աստուծոյ ո՛չ ապաշխարեցին, այլ գանձեցին անձանց զբարկութիւն:*

Վասն որոյ կոչէ զնա տէր եւ ասէ. «Զի՞նչ է այս, զոր լսեմս զքէն, տո՛ւր զհամար տնտեսութեան» (ԺԶ. 2):

Մարդկաւրէն ձեւացուցանէ զբանն որպէս թէ լուաւ եւ իբր թէ յերկբայս է, եւ քննութեամբ կամի ստուգել զայս: Կա՛մ կարգ բանիցն պահանջեաց, կա՛մ խրատել զմեզ կամեցաւ, զի մի՛ զոք առանց քննութեան դատեսցուք: Ըստ այնմ, թէ՝ «Իջեալ տեսից ըստ աղաղակին այնմիկ, որ յիս վճարեցա՞ւ» (Ծնն. ԺԸ. 21): *Այլ հաւաստի քննութիւն[ն] Աստուծոյ ի Յարութեանն սահմանեալ ընդ բանից եւ ընդ մտաց շարժման տալոց եմք համար, այլ աստ՝ կոչելն, յորժամ լուծանի ի կենցաղոյս:*

ԿՐ *Եւ ի հասանել մահուն, որ է տնտեսութեանն ի բաց բարձումն:*

«Զի ո՛չ եւս կարես լինել տնտես» (ԺԶ. 2):

ԻԳ *Եւ ո՛չ է աւրէն չար ի նմին կալ, յորում անաւրինեցաւ ոք: Եւ զոր ինչ ընկալաւ ոք յԱստուծոյ, պարտ է զգուշութեամբ հատուցանել: Իսկ որ վատթարագոյն գտաւ ի հոգեւորսն կամ ի մարմնաւորսն մատակարարութեամբ, ո՛չ է աւրէն կալ ի նմին, այլ տարաժամ բառնալ, զի մի՛ վատնիչ լիցի աստուածային գանձուցն:*

Ասէ ընդ միտս իւր տնտեսն. «Զի՞նչ արարից, զի տէր իմ հանէ զտնտ[եսութիւնս]» (ԺԶ. 3):

Կր. *Բառնայ ի կենաց աստի:*

«Գործել ոչ կարեմ» (ԺԶ. 3):

ԻԳ. *Ո՛չ է ժամանակ գործոյ, այսինքն՝ աղաչանաց եւ ներելոյ, զի գործաւք առաքինութեան զժառանգ անաւրէնութեանն ի բաց քերեսցէ եւ զտեղիքն բարեաց գործովք լցցէ: Ի մարմնի գոլով ծանեաւ, զի ո՛չ ժամանակն էր գործելոյ ինչ, զի առաջի կայր ճանապարհն գնալոյ:*

«Մուրանալ՝ ամաչեմ» (ԺԶ. 3):

ԿԲ *Զի ո՛չ սուրբքն աւգնեն եւ ո՛չ արդարքն բարեխաւսեն:*

ԻԳ. *Արդ՝ անդ ողորմութիւն գտանել կարի լրբութիւն էր ժողին, զի մեծատունն խնդրելովն ո՛չ ընկալաւ* (տե՛ս Ղուկ. ԺԶ. 19-31) *եւ ո՛չ յիմար կուսանքն, որոց պակասեաց իւղն* (տե՛ս Մատթ. ԻԵ. 1-13):

Ապա ասէ. «Գիտեմ զինչ արարից»: Եւ կոչեալ զպարտապանս տեառն՝ ասէ ցառաջինն. «Դու քանի՞ ինչ պարտիս տեառն իմոյ»: Եւ նա ասէ. «Հարիւր մար ձիթոյ»: Ասէ. «Կայ զգիր քո եւ նիստ գրեայ յիսուն» (ԺԶ. 4-6):

Իմաստունքն փոքր աշխարհ ասացին զմարդն եւ միտքն տնտես: Եւ պարտականք Տեառն են հոգին եւ մարմինն, եւ միտքն՝ իշխան եւ ուղղիչ սոցա: Եւ առեալ յինքն՝ պնդեալ ունի զգիր պարտեացն, որով մեղաւ Աստուծոյ: Եւ հեշտութեամբ զախորժակս ընութեանն յաշխարհի գործեաց եւ անփոյթ արար զսպառնալիս դատաստանին Աստուծոյ: Եւ ո՛չ կամի տալ զգիր յանցանացն ի ձեռն հոգոյն եւ մարմնոյն, զի խոստովանութեամբ եւ հառաչանաւք եւ արտասուաւք անկցի առաջի Աստուծոյ, եւ ի ձեռն ապաշխարութեանն պատառեսցի, այլ ըստ նմանութեան այնր տնտեսի հարկանէ զծառայակից հոգին եւ զմարմինն, ուտելով եւ ըմպելով ընդ պոռնիկս՝ ընկղմեալ ցանկութեամբ աշխարհիս, եւ ո՛չ կամի մաղթանաց հոգոյն լսել պարտականի: Իսկ ի մերձենալ պահանջող հրեշտակին, որ կոչէ տալ զհամար տնտեսութեանն, եւ նա ի ժամուն յայնմիկ տագնապէր ի ցաւոց մարմնոյն: Եւ բարձեալ է ցանկութիւն մեղաց[ն] եւ ապականեալ որովայնն, ո՛չ ընդունի կերակուր եւ ըմպելի: Եւ զոր մատուցանեն՝ դժուարելով ի բաց վարէ, թէեւ կարի համեղագոյն իցէ: Զի իբրեւ զշուն տոռամբ ձգեն ի սպանումն եւ իբրեւ զեղջերու հարեալ լերդակողմն: Եւ առ վտանգի ցաւոցն անարգէր զոսկին եւ զարծաթն եւ զփառասիրութիւն[ն] եւ զնախանձն, եւ ամենայն ուրեք տրտմականքն յաճախեն: Եւ ապա կոչէ

միտքն զհոգին եւ զմարմինն, եւ տայ ի ձեռս նոցա զգիր պարտեացն՝ խոստովանութեամբն, եւ ապա շնորհէ պարտապանացն զթողութիւն, թերեւս հնար լիցի թեթեւանալ ի բեռանց եւ ազատել ի խղճէմտացն:

Ասէ միտքն ցհոգին. **«Քանի՞ ինչ պարտիս»:** *Եւ նա ասէ.* **«Հարիւր մար ձիթոյ»** (ԺԶ. 6):

Վասնզի հարիւր թիւն գլուխ եւ կատարեալ թիւ է: Եւ ի բարի սերմանս Տեառն երեւեցաւ պտղաբերութիւն, որ է ամենայն առաքինութիւն: Նոյնպէս եւ աստ հարիւր թիւն, զի որ ի գլուխ ամենայն առաքինութեանց եհաս՝ այսու նշանակեցաւ: Աստ ցուցանի, որ հոգով միայն մեղաւ՝ առանց մարմնոյ գործակցութեան:

Գրեցաւ «յիսուն» (ԺԶ. 6):

Արդ, կէս վնասուն թողեալ լինի: Վասնզի թեթեւ եւ դիւրաշարժ գոլով է ի մեղս, եւ դժուարաւ արգելլի վասն [ան]արգութեան բնական բերմանն, շաղղելոյ ի ցանկութիւն: Վասն այնորիկ բազմաց արժանի լինի թողութեան [յ]արդար իրաւանցն Աստուծոյ:

Իսկ ձէթ, որով զանկեալս ի ձեռս աւազակացն ձիթով եւ գինով բժշկեաց, նշանակէ զաւծումն մկրտութեանն եւ կենդանի արիւնն, որով փրկեաց զմեզ, ըստ նմին եւ աստ մեղուցեալն յետ աւազանին շնորհացն: Եւ հաղորդութեան մարմնոյ եւ արեան Տեառն պարտական գտաւ, եւ վասն զղջմանն եւ պաղատանացն՝ յելս հոգոյն: Եւ, զոր ագահեաց՝ բաշխելով կարաւտելոցն յիսունն, կէս պարտեաց մեղացն թողեալ լինի:

Դարձեալ ասէ ցմիւսն. «Դու քան[ի]՞ ինչ պարտիս»: Եւ նա ասէ. «Հարիւր քոռ ցորենոյ, որ է կապիճ»: Եւ նա ասէ. «Կա՛ զգիր քո եւ նիստ գրեա՛ ութսուն» (ԺԶ. 7):

Իսկ որ մարմնով զամենայն չարիս կատարեաց, սակաւ ինչ թողեալ լինի. քսան միայն, զի մարմնովն շաղախեցաւ ընդ մեղս:

Եւ առաւել հեշտացաւ գարշ ցանկութեամբն, զոր գործեաց մարմնով եւ մտաւք հոգոյն կամակար, զի ունէր խափանել զնա եւ ո՛չ կամեցաւ: Այլ յուժարութեամբ արհամարհեաց զաւրէնս եւ գործեաց զմեղս: Զի մարմինն զդժուարաշարժ է ժամանակի, եւ գործակցի կարաւտանայ լնուլ զցանկութիւն[ն]: Եւ դիւրին է արգելուլ բարեաց խորհրդովն, եւ իբրեւ սանձիւք ընկրկել զյար-

ձակումն ի մեղս: Զի ո՛չ դժուարին է արդելուլ զձեռս յարիւն հեղլոյ, ի հարկանելոյ, ի զրկելոյ եւ յագահելոյ, եւ յորովայնամոլութենէ, եւ ի պոռնկութենէ: Եւ ի չափով մերձենալ ի կարեւորագոյնսն դիւրին է եւ անչափն դժուարին: Իսկ որ առ մարմին[ն] տերունական մեղաւ անարժան հաղորդութեամբ, եւ զղջանալովն գտանէ թողութիւն սակաւ, քսան միայն, վասն զի կարի ծանր է մարմնոյ եւ արեանն Քրիստոսի: «Փորձեսցէ մարդ զանձն իւր, եւ ապա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ, զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ» (Ա. Կոր. ԺԱ. 28-29), *«պարտական եղիցի մարմնոյ եւ արեանն Տեառն»* (Ա. Կոր. ԺԱ. 27): *Զի որ ոք զաւրէնսն Մովսիսի արհամարհէր, անողորմ դատաստանաւ ամենայն ժողովուրդն քարկոծ առնէին զնա: Ապա քանի՞ պատժոց արժանի են, որ անարժան հաղորդեցան: Զի զՈրդին Աստուծոյ կոխեցին եւ զարիւն նորոյ սուրբ ուխտին խառնակ համարեցան, եւ զհոգին շնորհաց թշնամանեցին: Այսպէս անչափ յանցանք են եւ ծանր վնաս արեանն Աստուծոյ պարտապան լինել: Բայց վասն մարդասիրութեանն աւրինակ եղ ներելոյ, զի մի՛ ոք անյոյս կորիցէ: Զի խրատէ ողորմութեամբ եւ ցուցանէ [զ]քաղցրութիւն: Պարտ է յուսալ, թէպէտ եւ անբաւ են պարտիքն, եւ դատել ի ժամանակս ապաշխարութեան:*

Գովեաց զքէր զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար (ԺԶ. 8):

Թէպէտ եւ առընթեր մահուն եւ յետին շունչն հասանելոյ, սակայն ո՛չ արար անփոյթ յիւրմէ փրկութենէն:

ՍՏ *Արդ, տնտեսն անիրաւութեան նշանակէ զամենայն մեղաւորս, որ իւր պարտապանացն թողու զյանցանս եւ առնէ իւր սիրելիս:*

ԵՓ *Սակայն անաւրէն գաւառապետն մեղացն իմաստուն գտաւ եւ գովեցաւ առաջի Տեառն: Զի մեղաւք մատնեաց զգանձս առաջինս, եւ խորամանկութեամբ եթող զպարտս ի վերջին ժամուն:*

Արդ, մի՛ վերջասցուք յելսն մեր խնդրել զնա, թէպէտ եւ կարի ծանր է բեռն մեղացն եւ բարձր քան զգլուխս մեր, զի աւասիկ ինքն է թողութեանն շտեմարանապետն: Զի թէպէտ եւ ո՛չ արդարացուցանէ ընդ ժառանգաւորս Աստուծոյ, սակայն ազատէ ընդ մէջն կտրելոյ, զոր կապեալ ոտիւք եւ կապեալ ձեռաւք հանէ «ի խաւարն արտաքին» (Մատթ. Ը. 12, ԻԲ. 13, ԻԵ. 30): *Եւ արդ, մեծ է յայսպիսեացս ապրել եւ տալ քաւութիւն:*

Զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են յազգս իւրեանց (ԺԶ. 8):

Զի մարդիկ անկեալ ի փառաց եւ աւտարացեալք յԱստուծոյ՝ հնարս գտան ապաշխարութիւն խնդրել զԱստուած եւ մերձենալ առ նա: Եւ ծանեան, թէ զոր յանցանքն աւտարացուցին, գիտէ ողղութիւն ընդանի առնել Աստուծոյ: Եւ ճանապարհ, յորմէ խոտորեցաք, ընդ նոյն յետս դառնալ եւ անվրէպ ածեն:

Քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց (ԺԶ. 8):

ԿՐ *Զհրեշտակս ասէ, զի ո՛չ սատանայ, որ ի նմին նիւթոյ էր կարաց յետ անկմանն [յ]այսպիսումն փրկութեան հասանել:*

ԻԳ *Զի չարացան անմտութեամբ: Եւ մի՛ ոք ընդդէմ դիցէ, թէ մարմին ո՛չ ունին: Առ որս ի դէպ է ասել, զի թէ ի նոյն տեղի ուստի անկաւն, ո՛չ ելանել, սակայն այլ ո՛չ եւս չար գտանել:*

Եւ պարտ է իմանալ, թէ որ վասն յանցանաց ի խոնարհ ընկէց, ունի զաւրութիւն վասն անհնազանդութեանն ի հարուածս արկանել եւ ըստ բազմապատիկ չարեացն հատուցանել: Իսկ նա [յ]այսպիսեացս ինչ զմտաւ ո՛չ էած, այլ անմտացաւ եւ պատերազմող զինքն կացոյց: Եւ ընդ պատկերին Աստուծոյ, մարտուցեալ պատրանաւք, ուսոյց ապստամբել յԱստուծոյ: Եւ հաւանեցոյց գործակից առնել անաւրէնութեանն իւրոյ, մինչ չարժեցաւ Աստուած վրէժս հատուցանել նմա հուր տանջողական: Զի թէ ապաշաւեալ էր, այնպիսի տանջանք ո՛չ պատրաստէին նմա:

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես. եւ եղեւ զնմանէ ամբաստանութիւն, որպէս թէ վատնիցէ [զինչս նորա]: Կոչեաց զնա. «Տո՛ւր զհաշիւն» (հմմտ. Ղուկ. ԺԶ. 1-2):

Ընդ սքանչելի առակաց Տեառն զարմանալ արժան է, թէ զիա՞րդ մարդասիրութեամբ լցեալ գոյ, զբոլորն խրատէ եւ զմասնաւորսն ուսուցանէ, զառաքինիսն յորդորէ եւ զմոլիսն յուղղութիւն ածէ, որպէս հայր գթած զանկիրթ որդի ուսման աւրինակաւ վարժեցու-

ցանէ. այսպէս եւ Տէր մեր արար, զի թէ զանձն իւր ոչ խնայեաց, այլ՝ վասն ամենեցուն մեր մատնեաց զնա: Ապա եւ զամենայն ինչս տնաւրինեաց փրկութեան մերոյ հնար, վասն որոյ առակաւոր բանիւ ուսուցանէ զմեզ ի մեղաց զերծանել. **«Այր մի էր մեծատուն»**: *Արդ, նախ տեսցուք, թէ քանի տունք են եւ տնտեսք եւ ապա՝ թէ առ ո՛ր տնտես է բան:*

Արդ, նախ՝ **«տուն»** *կոչի երկինքն, այսինքն՝ իմանալի աշխարհն՝ ըստ այնմ.* «Իմաստութեամբ շինեաց իւր տուն» (Առակ. ԻԴ. 3): *Իսկ* **«տնտեսք»** *ի նմա՝ զդասս հրեշտակաց՝ ըստ այնմ.* «Պաշտաւնեայք եւ հոգիք հարկաւորք են, որ առաքինի սպասաւորութիւն» (հմմտ. Եբր. Ա. 14):

Բ. Երկրորդ՝ կոչի **«տուն»** *դրախտն եդեմական՝ ըստ այնմ.* «Տէ՛ր, սիրեցի զվայելչութիւն տան Քո» (Սաղմ. ԻԵ. 8), *իսկ* **«տնտես ի նմա»**՝ *զմարդն առաջին՝ ըստ այնմ.* «Եդ զմարդն ի դրախտին՝ գործել զնա եւ պահել» (հմմտ. Ծնող. Բ. 15):

Գ. Երրորդ՝ **«տուն»** *կոչի աշխարհս զգալի՝ ըստ այնմ.* «Ոչ լուցանիցէ ճրագ եւ ածէ առել ի տան» (Ղուկ. ԺԵ. 8), *իսկ տնտես ի սմա՝ մարդկային բնութիւնս՝ ըստ այնմ.* «Զամենայն ինչ հնազանդ արարեր [ի ներքոյ ոտից նորա], գիւաշն եւ զարջառ եւ զամենայն [ինչ]» (Սաղմ. Ը. 8):

Դ. Չորրորդ՝ **«տուն»** *կոչի եկեղեցի՝ Նոր Սիոն՝ ըստ այնմ.* «Տան քում վայելէ սրբութիւն» (Սաղմ. ՂԲ. 5), *իսկ տնտեսք ի սմա՝ առաքեալք եւ մարգարէք եւ վարդապետք եւ հայրապետք՝ ըստ այնմ.* «Զորս եդ [Աստուած] յեկեղեցւոջ՝ այս են. նախ՝ զառաքեալս, [երկրորդ՝ զմարգարէս]» (Ա. Կոր. ԺԲ. 28) *եւ այլք:*

Ե. Հինգերորդ՝ **«տուն»** *կոչի իւրաքանչիւր մարդ՝ ըստ այնմ.* «Ես յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեզս» (հմմտ. Ես. ԿԶ. 2): *Եւ Պաւղոս ասէ.* «Որոյ տունն մեք իսկ եմք» (Եբր. Գ. 6): *Իսկ տնտեսք ի սմա՝ միտքն, որպէս ասէ աստ.* **«Որոյ էր տնտես. եւ եղեւ զնմանէ ամբաստանութիւն»**:

Արդ, յայսցանէ, զոր ասացաք բան սուրբ Աւետարանիս, երկնայնոցն ոչ պատշաճի, զի ոչ կարեն մեղանչել ի տնտեսութեանն եւ պարտապան գտանել, այլ են դժուարաշարժք ի մեղս կամ ամենեւին անշարժք: Իսկ Ադամայ ոչ պատշաճի, զի դեռեւս յանմեղութեանն էր, եւ տակաւին ոչ տիրէին մեղք, մինչեւ խաբեցաւ յաւձէն: Իսկ բոլոր բնութեանս ոչ հետեւի, զի բնութիւն առհասարակ ոչ կարէ մեղանչել, այլ առանձին՝ միոյ-միոյ մարդոյ: Եւ եկեղեցւոյ տնտեսի պատշաճի սակաւ ինչ այնու, զի նոքա ի մարդկանէ են, իսկ այնու՝ ոչ, զի թէ ոք տնտես կարգեցաւ յեկեղեցի, ոչ եւս կարէ ելանել ի նմանէ: Ուրեմն յայտ է, թէ իւրաքանչիւր առանձին մարդոյ պատշաճի: Արդ, առաւեռն պատրաստեսցուք, ո՞վ է այրն: **«Այր»** *է այրացեալ Աստուածն մեր Յիսուս, զոր եւ սակաւ յառաջ ասացեալսն* **«զուարակ»** *ասաց: Եւ յիրաւի, զի նա միայն է ճշմարիտ այր, զի ոչ ինչ է, զոր կարաւտի նա:*

Իսկ **«մեծատուն»** *կոչի, եւ սա առաւել մեծատուն, քան որ յաշխարհի:*

Ա. Նախ՝ զի ամենայն մեծատուն մասամբ ունի մեծութիւն, իսկ նա՝ ծայրագոյն եւ կատարեալ՝ ըստ այնմ. «Երկինք աթոռ իմ են եւ երկիր [պատրուանդան ոտից իմոց]» (Ես. ԿԶ. 1):

Բ. Երկրորդ՝ զի սոքա ստացմամբ ունին, իսկ նա՝ բնութեամբ:

Գ. Երրորդ՝ զի սոքա կարաւտ են աւգնականի, իսկ նա անկարաւտ բնութիւն է՝ ըստ այնմ. «Ո՞ւր էիր մինչ ես հիմունս արկանէի երկրի» (Յոբ ԼԸ. 4):

Դ. Չորրորդ՝ զի սոքա զոմանց կարաւտութիւն լնուն եւ ոչ իսկապէս, իսկ նա՝ զամենեցուն եւ կատարելապէս՝ ըստ այնմ. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք եւ ես հանգուցից [զձեզ]» (հմմտ. Մատթ. ԺԱ. 28):

Ե. Հինգերորդ՝ զի ի սոցա տալն [պա]կասին մեծութիւնք սոցին, իսկ նորայն անպակաս մնայ:

Զ. Վեցերորդ՝ զի սոքա ոչ կարեն ստեղծանել եւ տալ, իսկ նա՝ ստեղծաւղ եւ արարիչ՝ ըստ այնմ. «Ամենայն ինչ նովաւ եղեւ» (Յովհ. Ա. 3):

Է. Եաւթներորդ՝ զի սոքա թէպէտ մեծատունք, սակայն դեռեւս կարաւտին առնուլ, իսկ նա ոչ փափագի իրաց:

Ը. Ութերորդ՝ զի սոքա չարչարանաւք են ստացեալ, իսկ նա ոչ ունի աշխատանք:

Թ. Իններորդ՝ զի սոցա ինչքն կորստական է, իսկ նորայն՝ անկորուստ՝ ըստ այնմ. «Զուրախութիւնն ձեր ոչ ոք հանէ ի ձէնջ» (Յովհ. ԺԶ. 22):

Ժ. Տասներորդ՝ զի սոքա՝ մարդ սոսկ ի մեծութեան, իսկ նա՝ Աստուած մարդացեալ, յաղագս որոյ ասէ. **«Այր մի էր մեծատուն»**:

Իսկ յատկութիւն տնտեսին բազում ինչ է:

Ա. Նախ՝ զի տնտեսն ոչ ունի իւր ինչ, այլ ի տէրունեացն հաւատացաւ նմա:

Բ. Երկրորդ՝ յատուկ է տնտեսին ըստ կամաց տեառն գնալ եւ պատրաստել զամենայն, որպէս եւ կամեսցի:

Գ. Երրորդ՝ ժիր լինել ի գործն, յոր հրաւիրեալ է եւ ոչ երբէք ծուլանալ:

Դ. Չորրորդ՝ զկերակուրն պատրաստել ի ժամու:

Ե. Հինգերորդ՝ տալ յամենայն ժամու ծառայակցացն առատապէս:

Իսկ «ելանելն» ի տնտեսութենէն լինի վասն բազում պատճառի:

Ա. Նախ՝ զի ժիր ոչ լինի ի գործն:

Բ. Երկրորդ՝ թէ վատ չինէ զկերակուրն:

Գ. Երրորդ՝ թէ գող լինի:

Դ. Չորրորդ՝ թէ ընդ վայր մսխէ:

Ե. Հինգերորդ՝ թէ լիրբ լինի եւ լեզուաւ, եւ դիմաւք:

Զ. Վեցերորդ՝ թէ պիղծ լինի գործով:

Է. Եաւթներորդ՝ թէ անհնազանդ լինի բարուք:

Ը. Ութերորդ՝ թէ հիւանդ լինի մարմնով:

Թ. Իններորդ՝ թէ անհամբեր լինի:

Ժ. Տասներորդ՝ թէ պինդ լինի, ուիշտ:

Այսոքիկ պատճառք են ելանելոյ:

Արդ, այսպէս, որ ասացաք մարդկային բնութեանս, ոչինչ է, այլ յԱստուծոյ տուեալ է պարգեւքն ամենայն, զոր ինչ տեսանես ի վերայ երկրի՝ ըստ այնմ. «Զի՞նչ է, զոր ոչ առեր եւ զիա՞րդ պարծիս առեալդ, իբրեւ չառեալ» (հմմտ. Ա. Կոր. Դ. 7), *թէ քահանայութիւն է եւ թէ վարդապետութիւն, թէ այլն ամենայն: Եւ զայսոսիկ սակս այնր տայ, զի փոքուաւս զմեծ եւ զանճառելին ստասցուք՝ ըստ այնմ.* «Ի փոքուն հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ» (հմմտ. Մատթ. ԻԵ. 21) *եւ թէ՝* «Որ ի փոքուն հաւատարիմ է եւ ի բազմին հաւատարիմ է» (Ղուկ. ԺԶ. 10):

Արդ, ամենայն քահանայ եւ ամենայն ոք, որ շնորհ ընկալեալ է յԱստուծոյ, տնտես է այնմ գործոյ եւ շնորհի, յաղագս որոյ պարտի ըստ յառաջ ասացեալ յատկութեանց տնտեսին գնալ, իսկ եթէ զմի պատճառաց ելանելոյն գործէ, ըստ վերոյ ասացելոցս, ելանէ յայնմ բարեաց տնտեսութենէ: Եւ յայտ է, թէ այլ իրաց հանդիպի, յորժամ յայնմանէ զրկիցի, քանզի հակառակ են այնմ գործոյ, տասնեքին սոքա, որպէս ասացաւ ի կարգէ բանիցդ: Զի եթէ ի մարմնաւորս, որք զայսն գործեն, եղկելիք են, յայտ ուրեմն, եթէ առ Աստուած եւս առաւել պարտի զգուշութեամբ, իսկ եթէ ոք ոչ կարէ տանել այսմ եւ սխալել ի գործն զինչ եւ իցէ, առնէ, քանզի յուսահատի ուսուցանէ առակաւս մինչ ի յելս շնչոյն խնդրել զԱստուած եւ բարեգործել: Այլեւ զայս յառաջագոյն ուսոյց, այսինքն՝ զկամս քաղցրութեան հաւրն անառակ որդին, զի ընդունի յամենայն ժամ,

միայն զդարձն խնդրէ առ ինքն: Զի թէ ոչ ընդունի ի մահուան ժամանակի ծերութեանն, զիա՞րդ յերկարէ զժամանակ մեղաւորին, զի ասէ. «Ոչ կամիմ զմահ մեղաւորին» (Եզեկ. ԺԸ. 23), *քանզի որքան կայ, ի ծերութիւնն մերձի եւ ի մահուան ամբաստանութիւն, այսինքն՝ վատնելոյ զինչս նորա:*

Արդ, զիա՞րդ լինի այս, զի Աստուած ծածկագետ է, զանգործսն գիտէ, զիա՞րդ գործելեացն անգէտ մնալով կարաւտի ամբաստանութիւն: Արդ, թէպէտ նա ամենագէտ է, եւ ոչ է կարիս ամբաստան լինելոյ, սակայն երկայնամիտ է, ներէ ժամանակ ինչ յանցաւորաց: Իսկ մարդիկք, կարճամիտ գոլով, եւ զոմանք ի չարութեանն տեսեալ, ի յափշտակութեան եւ ի նեղել զտնանկս եւ յայլ ամենայն գործս զազրալիս, ձանձրացեալ յայսպիսեացս, զձեռն յերկինս համբարձեալ, բողոքեն առ Աստուած՝ ըստ այնմ. «Զրկեալն ի ձէնջ աղաղակէ, եւ բողոք հնձողաց եհաս յականջս Տեառն զաւրութեանց» (Յակ. Ե. 4): *Նաեւ հրեշտակք, որք կարգեալ են պահապան մարդկան, նոքա ամենեւին մաքուր, եւ տեսանեն զգործս ամբարշտաց եւ ձանձրացեալ, ամբաստան լինին նոքա առ Աստուած, զի մի միշտ երկայնամիտ լիցի, այլեւ վրէժխնդիր՝ ըստ այնմ.* «Յայտնեցեալ է բարկութիւնն Աստուծոյ ի վերայ ամբարշտութեան մարդկան» (հմմտ. Հռոմ. Ա. 18), *եւ թէ՝* «Բարկութիւն Տեառն իբրեւ զջուր ձորալից պարանոցաթաղ յորդեսցէ» (հմմտ. Ես. Լ. 27-28): *Արդ, գիտասցուք եղբարք, զի բազում ժամանակս երկայնամիտ լինի մեզ Տէր, մի՞թէ դարձցուք ի մեղաց, որպէս եւ ասացաք յԱւետարանէ աստի: Իսկ ի բազմանալ մեղաց մերոց լինի ամբաստանութիւն, եւ շարժեն զԱստուած ի վրէժխնդրութիւն, վասն որոյ կոչեաց զնա եւ ասէ.*

Զի՞նչ է, որ լսեմս զքէն, փուր ինձ զհամար տնտեսութեան [քոյ], զի ոչ եւս կարես լինել տնտես (ԺԶ. 2):

Մարդկաբար խաւսի, իբր թէ ոչ գիտէ եւ դեռ յերկբայս է: Եւ արդ, վասն այն արար, զի մեզ ուսուցանէ, թէ մի առանց քննութեան զոք դատել, զի թէ նա, որ ամենեցուն գիտողն է, առանց քննութեան ոչ դատէ, եւ մեք անզգամեալ միայն սուտ համբաւիւն զեղբայրն մեր ջանամք խեղդել: Արդ, կոչելն զհիւանդութիւնն՝ ասէ, որ կոչէ ի դուռն մահուն: Իսկ ասելն՝ «**ոչ եւս կարես լինել տնտես**», *յիրաւի, զի ամենայն, որ չարանայ, եւ այն բարեգործիւք ոչ միաբանի ընդ բարւոյն՝ ըստ այնմ.* «Զի՞նչ միաբանութիւն

է լուսոյ ընդ խաւարի» (հմմտ. Բ Կոր. Զ. 14): *Իսկ արդ, զի իմաստուն արար Աստուած զմարդն, յորժամ տեսանէ զայս, խորհի միտքն իմաստութեամբ իւրով՝ ըստ անառակին.* «Իմաստութիւն յեղս ճանապարհաց գովի» (Առակ. Ա. 20):

Խորհեցաւ եւ ասէ. «Զի՞նչ արարիցս, զի տէր իմ հանէ ի տնտեսութենէ» (հմմտ. ԺԶ. 3):

Այսինքն՝ լուծանէ ի կենաց աստի:

«Գործել ոչ կարեմ» (ԺԶ. 3):

Զի չիք ինչ ժամանակ ապաշխարութեան, զի քերեցիս զաղտ ի հոգւոյս, եւ փոխանակ չարեացն՝ բարի արարիս եւ ի հանդերձեալն յանփոփոխ կեանս ժամանել:

«Մուրանալ ամաւթ է» (հմմտ. ԺԶ. 3):

Զի այն չէ տեղի մուրանալոյ, եւ թէ մուրանամ եւս, ոչ ոք տայ ինձ, զի ոչ է անդ ողորմութիւն, զոր աւրինակ յիմար կուսանք (տես Մատթ. ԻԵ. 1-13), *վասն որոյ հնար իմանայ եւ ասէ.*

«Գիտեմ զինչ արարիցս» (ԺԶ. 4):

Եւ կոչեաց զմի մի ի պարտապանացն. «Դու քանի՞ ինչ պարտիս» (հմմտ. ԺԶ 5):

«Ճ. (100) մար ձիթոյ»: Ասէ [ցնա]. «Կա զգիր քո, եւ նիստ, գրեա՛ [վաղվաղակի] Ծ. (50)»: Եւ երկրորդն՝ Ճ. (100) քոռ ցորենոյ: «Կա զգիր քո, եւ նիստ [եւ գրեա՛] Զ. (80)» (հմմտ. ԺԶ. 5-7):

Եւ այս յիրաւի, զի դիւրաւ մեղանչէ հոգին եւ փոքր հեշտանայ ի մեղքն, վասն որոյ ըստ արդար դատաստանին զկէսն եթող: Իսկ զմարմնոյն զհնգէն մինն, վասն զի նա ունէր ի ձեռն ոչ առնել զմեղս եւ արար, զի դիւրին է, թէ կամի ոչ զշնութիւնն գործել եւ ոչ զայլն: Եւ զի կամաւորութեամբ գործեաց մարմնաւորաւք, յիրաւի զմինն թողու ի զղջումն, իսկ զայլսն՝ խոստովանութեամբ եւ ողորմութեամբ, եւ տրաւք տնանկաց: Դարձեալ՝ զոր յետ աւազանին գործեցաք, պարտապան եղաք նմին, զկէսն թողու, իսկ եթէ լրբութեամբ ի մարմին Տեառն մերձեցաք, այն դժուարին է, հնգէն մինն՝ ըստ որում. «Որ ուտէ [եւ ըմպէ] զմարմին Տեառն անարժանութեամբ,

դատապարտան անձին իւրում ուտէ եւ ըմպէ, զի ոչ խտրեաց զմարմին Տեառն» (Ա Կոր. ԺԱ. 29):

Իսկ «Ճ.» (100) ասաց, որ զկատարեալն նշանակէ, զոր աւրինակ՝ առաքինութիւնն ի հարիւրաւորն պատշաճեցան, նոյնպէս եւ մեղքն կատարեալ թուով ասէ:

Իսկ զի՞ զհոգւոյն մեղքն ի **«ձէթ»** *առակէ* (Ղուկ. ԺԶ. 6): *Եւ այս վասն բազում պատճառի:*

Ա. Նախ՝ զի ձէթն լուսոյ նիւթ է. այսպէս եւ բամբասանքն եւ սուտն հոգւոյն մեղք են:

Բ. Երկրորդ՝ զի անաւսր իմն է ձէթն. այսպէս եւ հոգւոյն մեղքն ոչ նիւթաւոր, որպէս մարմնոյ:

Գ. Երրորդ՝ զի դիւրաւ տարածանի ձէթն ի վերայ հանդերձին. այսպէս եւ հոգւոյն մեղքն փութանակի լինի:

Դ. Զորրորդ՝ զի ոչ իջանէ ձէթն յատակ ջրոյ, այլ յերեսն ելանէ. այսպէս եւ նախանձ եւ ամբարտաւանութիւն ոչ մտանէ ի մարմին, այլ ի հոգին:

Ե. Հինգերորդ՝ զի դժուարաւ ելանէ ձէթ ի նիւթոյ. այսպէս եւ հոգւոյն դժուար է լինել առանց մեղաց:

Զ. Վեցերորդ՝ զի կրկին զհակառակն յինքն ընդունի՝ զջերմութիւն եւ զցրտութիւն. այսպէս եւ հոգին միշտ զղջայ եւ միշտ մեղանչէ:

Է. Եաւթներորդ՝ զի ի վայթելն ոչ ածէ զձայն. այսպէս եւ մեղքն ի հոգին ոչ երեւի մարդկան:

Ը. Ութերորդ՝ զի թափանց զաւրութիւն ունի ձէթն. այսպէս եւ մեղքն թափանցանէ ի մարմինն եւ ի հոգին հասանէ:

Թ. Իններորդ՝ զի ինքն ըստ ինքեան ոչ լինի ձէթն, այլ ի նիւթոյ իմիքէ. այսպէս եւ հոգին ոչ ունի բնութեամբ մեղք, այլ ի պատճառէ իմիքէ լինի:

Ժ. Տասներորդ՝ զի հնարին մարդիկք հանել զձէթն ի հանդերձէն. այսպէս եւ գոյ հնար զհոգին սրբել ի մեղաց, որպէս ասէ Տէրն. **«Կա զգիր քո եւ նիստ գրեա՛ Ծ.»:**

Իսկ զմարմնոյն մեղք ի **«ցորեն»** *առակէ: Եւ այս եւս վասն բազում պատճառի:*

Ա. Նախ՝ զի ցորենն ոչ է մի թուով, այլ անթիւ. այսպէս եւ մարմնոյն մեղք ոչ են մի, այլ՝ բազում:

Բ. Երկրորդ՝ զի ծանր է ցորեանն. այսպէս եւ մեղք մարմնոյն ծանր են, քան զհոգւոյն:

Գ. Երրորդ՝ զի ի յաշխարհի ոմանք վաստակին ցորեան, այսպէս եւ ոմանք գործեն մեղս մարմնով եւ ամենեքեան:

Դ. Չորրորդ՝ զի առանց ծասկելոյ ոչ ոք առնու զհամ ցորենոյն. այսպէս եւ առանց մերձաւորութեամբ ի մեղս մարմնաւոր ոչ ոք գիտէ զնա:

Ե. Հինգերորդ՝ զի մի հատ ցորեանն բազում ճուխղք բերէ. այսպէս եւ մի մեղք մարմնոյն սովորեալ բազումս տայ գործել:

Զ. Վեցերորդ՝ զի դժուարին է ի հացէ կտրիլ եւ ոչ ուտել. այսպէս եւ թէ ոք սովորեցաւ ի չնութիւն, ոչ կարէ զերծանել ի նմանէ, եթէ ոչ աւգնականութեամբն Աստուծոյ:

Է. Եաւթներորդ՝ զի քաղցրութիւն տայ սակաւ մի եւ կորնչի յորկորն. այսպէս եւ մեղք մարմնոյն սակաւ մի հեշտացուցանէ եւ այլ ոչ եւս:

Ը. Ութերորդ՝ զի հաստատէ զսիրտ մարդոյն. այսպէս եւ մեղք մարմնոյն կապէ զմարդն եւ ոչ տայ թոյլ զղջալ կամ ապաշխարել:

Թ. Իններորդ՝ զի առատ է ցորեանն, եւ ամենայն մարդ գտանէ. այսպէս եւ մեղք մարմնոյն առ ձեռն պատրաստ է ամենեցուն գործողաց իւրոց:

Ժ. Տասներորդ՝ զի թէ ի ջուր անկեալ ցորեանն՝ փտի եւ կորնչի. այսպէս եւ մեղք մարմնոյն արտասուաւք դիւրաւ կորուսանի, որպէս ասէ. «Կալ զգիր քո, եւ նիստ գրեա՛ Զ.»:

Իսկ արդ, գիտեա՛, ո՛վ եղբայր, զի որպէս ասացաւ, ամենայն մեղաց կէսն թողութիւն, եւ մարմնոյ, եւ արեան պարտուցն հնգէն մին: Մի՛ յուսահատեսցիս, այլ ուղղեա զքեզ՝ ոչ լինել պարտապան նմա, զի դիւրին է ոչ լինել պարտապան. այս է փոքր ժամանակաւ խոստովանութեամբն յայս ամենայն ահէ եւ յերկիւղէ: Իսկ թէ սխալիս եւ ի նոյն մի յամեսցիս, այլեւ զայն փութով խոստովանեա՛: Զի թէ ի հնումն, որք զաւրէնսն անցանէին Մովսիսի, քարամբք սատակել հրամայէր, քանի եւս առաւել, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար եւ զարիւն Նորոյ Ուխտի խառնակ համարեցաւ: Ուրեմն յայտ է, թէ որչափ վնաս է անարժանութեամբ ուտել եւ ըմպել, բայց զի մի՛ յուսահատութեան ալիս զմեզ ընկղմեսցէ, ուսուցանէ քաղցրութեամբ այսու բանիւքս, որ ասացաւ ի յելս շնչոյն, թէպէտ անբաւ լինի պարտիքն, եւ է ժամանակդ ապաշխարութեան, վասն որոյ

գովեաց տէրն զտնտեսն՝ անիրաւութեան զիմաստութեամբ արար: Արդ, աղաչեմ սիրելի՛ք, մի՛ վերջասցուք ի յելք կենաց մերոց խնդրել զնա, թէպէտ եւ կարի ծանր է բեռն մեր եւ բարձրացեալ է, քան զերկինս, զի թողութեանց պարգեւողն ինքն է: Զի թէպէտ ոչ ունի յայնմ ժամու ընդ սուրբսն դասել, սակայն յայնմանէ ազատեցաւ, որ ընդ մէջն կտրի եւ ընդ անհաւատսն դասի, եւ զոր կապեալ ոտիւք եւ ձեռաւք, հանին ի խաւարն արտաքին ի լալ աչացն եւ ի կրճել ատամանցն (տե՛ս Մատթ. Ը. 12): *Եւ այս մեծ ողորմութիւնն է մեզ, թէ յայսպիսեացս զերծանիցեմք: Զայս եթէ ոք ընդդէմ բերիցէ ոչ հաւատալ, նախ ինքն գիտէ, որ զայս առակս ասաց, զի ոչ թէ սուտ ասաց նա, որ ճշմարտութիւնն է, քաւ լիցի, այլ՝ զի ճշմարիտ է բանք նորա, վասն որոյ ունի կարողութիւն, այսպիսեաւքս տալ զքաւութիւն: Իսկ եթէ ոք անհաւատ եղեալ բանիցս հակառակիցի, մեք ոչ ունիմք զայն սովորութիւն եւ ոչ եկեղեցիքն Աստուծոյ, յաղագս որոյ գովէ զտնտեսն անիրաւութեան, «զի իմաստութեամբ արար զայս»: Զնոյնս «իմաստութիւն յելս» գովէ Սողոմոն* (Առակ. Ա. 20), *եւ թէ՝ «Յորս գտայց՝ ի նոյն դատեցայց»* (հմմտ. Յովհ. Ե. 30):

Իսկ արդ, իմաստնագոյն ասէ զմարդիք, քան զորդիս լուսոյ, այսինքն՝ քան զհրեշտակս: Եւ այս ըստ բազում եղանակի:

Ա. Նախ՝ զի մարդկան ազգ դարձ ունի ի մեղաց, իսկ հրեշտակք ոչ ունին, զոր աւրինակ՝ դեւքն:

Բ. Երկրորդ՝ մարդիկք կարեն ապաշխարութեամբ ապրել, իսկ հրեշտակաց ոչ գոյ հնար ապաշխարութեան:

Գ. Երրորդ՝ զի առնուն թողութիւն մեղաց, իսկ հրեշտակաց ոչ գոյ հնար թողութեան մեղաց:

Դ. Չորրորդ՝ զի մարդիկ կարեն զինքեանս նուաճեցուցանել ընդ հրամանաւք նորագունիւք, իսկ նոքա բնականապէս վարին եւ ոչ ունին փոփոխումն:

Ե. Հինգերորդ՝ զի յորժամ մեղք ինչ անկանիմք, ի յետ մեղացն ողբամք զանցեալն, իսկ նոքա, թէ ի չար անկեալ եւ չարանան եւս, որպէս սատանայ եւ իւրքն:

Զ. Վեցերորդ՝ զի մեք առաւելացուցանեմք զառաքինութիւն, իսկ նոքա ոչ կարեն, զի ոչ ունին մարմնական գործիք:

Է. Եաւթներորդ՝ զի մեք գնեմք արեամբ մերով զարքայութիւնն, իսկ նոքա ոչ կարեն հեղուլ զարիւն եւ ոչ գնել, քանզի ոչ ունին մահ եւ ոչ՝ արիւն:

Ը. Ութերորդ՝ զի մեզ կարողութիւն գոյ ի հրեշտակաց դասն մերձաւոր լինել եւ եւս գեր ի վերոյ, իսկ հրեշտակք միոյ ճգնաւորի պսակի ոչ կարեն հասանել:

Թ. Իններորդ՝ զի մեք ձեռինն Աստուծոյ եմք ստեղծուած, իսկ հրեշտակք բանիւ միայն, որպէս եւ անասունք:

Ժ. Տասներորդ՝ զի Աստուած ի մեր բնութենէս էառ մարմին եւ ոչ ի հրեշտակաց, վասն որոյ ասէ Տէրն վասն ինքեան՝ «իմաստնագոյն», այսինքն՝ գերագոյն եւ բարձրագոյն է, քան զնոսա, վասն զի Աստուած է բնութեամբ, իսկ հրեշտակք սպասաւորք են նմայ:

Իսկ զհրեշտակք «որդիս լուսոյ» *կոչէ: Եւ այս վասն բազում պատճառի:*

Ա. Նախ՝ զի ի լուսոյ արարան հրեշտակք, վասն որոյ որդիք նմին կոչին՝ ըստ այնմ. «Ասաց Աստուած՝ «Եղիցի լոյս» (Ծնն. Ա. 3), *եւ թէ՝* «Որ արար զիրեշտակս իւր յոգիս եւ զպաշտաւնեայս իւր ի հուր» (հմմտ. Եբր. Ա. 7)*:*

Բ. Երկրորդ՝ զի պարզ է լուսոյ բնութիւնն. այսպէս եւ հրեշտակաց:

Գ. Երրորդ՝ զի անաղտ է լոյսն. այսպէս եւ հրեշտակք, որք մնացին յանկմանէն, ոչ կարեն մեղանչել:

Դ. Չորրորդ՝ զի անորակ է լոյսն. այսպէս եւ հրեշտակք:

Ե. Հինգերորդ՝ զի անձեւ է. այսպէս եւ զուարթունքն:

Զ. Վեցերորդ՝ զի չէ մարմին լոյսն. այսպէս եւ հրեշտակք:

Է. Եաւթներորդ՝ զի թափանցէ լոյսն ընդ ջուր եւ յապակի. այսպէս եւ հրեշտակք ոչ ինչ արգելք ունին:

Ը. Ութերորդ՝ զի բարձր է տեղեաւ լոյսն. այսպէս եւ կայանք հրեշտակաց գեր ի վերոյ է յիմանալի աշխարհն:

Թ. Իններորդ՝ զի ունի շարժումն լոյսն. այսպէս եւ հրեշտակք, որք առաքին ի սպասաւորութիւն՝ ըստ առաքելոյ (տե՛ս Եբր. Ա. 14)*:*

Ժ. Տասներորդ՝ զի լոյսն ոչ շեղի ի բնութենէ իւրմէ. այսպէս եւ հրեշտակք ոչ ապականին: Դարձեալ, զի լոյսն յումեքէ ոչ ըմբռնի, բայց ինքն զայլս ջերմացուցանէ. այսպէս եւ զհրեշտակք ոչ ոք կարէ ըմբռնել, բայց նա պատուհասէ զոք հրամանաւ Աստուծոյ:

Արդ, այսոքիկ գովութիւն, զոր կարգեաց Տէրն, յորդորէ զմեզ միշտ պատրաստ ի կալ: Եւ մանաւանդ, զի աւրինակաւս պարզէ զմիտք բանին, զի ասէ.

«Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան, զի յորժամ պակասեսցի այս կեանքս, ընկալցի զձեզ յարկսն յաւիտենականս» (հմմտ. ԺՁ. 9)*:*

Ուստի յայտ է, զի զանտի կեանքն ոչ իւիք իրաւք է գտանել, բայց միայն ողորմութեամբ, զի զայս ինչ, զոր անիրաւութեամբ գործեմք, զնոյն դարձեալ առցուք ի բարեգործութիւն, զի զստոյգ զմեղքն մեր ջնջէ ողորմութիւնն՝ ըստ այնմ. «Զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես եւ զանարէնութիւնս քո՝ փրաւք տնանկաց» (հմմտ. Դան. Դ. 24)*: Վասն որոյ, զոր աւրինակ զպահս ի յանձին ունիմք, ընդ նմին եւ զաղաւթս, ըստ սոցա կարաւտի ողորմութիւնն, զի կատարեալ լիցուք ի յառաքինութիւն: Եւ այս փոխէ մեզ, զոր աւրինակ առնեմք եւ նմին իրի հանդիպիմք, վասն որոյ մի՛ հեղգասցուք առնել զողորմութիւն, զի ողորմութեանն Աստուծոյ արժանաւոր լիցուք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս:*

ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՂՔԱՏ

Ղուկ. ԺԶ. 19-31

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Այր մի էր մեծատուն, ագանէր ծիրանիս եւ բեհեզ (հմմտ. Ղուկ. ԺԶ. 19):

Առակէ զամենայն մեծատունս, որ միայն զմարմնոյ հոգայ եւ յերկրային իրս զբաղեալ է. եւ աղքատ է ոմն, զամենայն, որ աղքատ է հոգւով, վասն որոյ ասացաւ. «Երանի աղքատաց հոգւով, զի նոցայ է արքայութիւն երկնից» (Մատթ. Ե. 3):

Եւ ի վերայ այսր ամենայնի եւ ի մէջ մեր եւ ձեր վիհ մեծ է հաստատեալ (հմմտ. ԺԶ. 26):

Որպէս գործովք մեկուսացեալ են ի միմեանց արդարք եւ մեղաւորք, նոյնպէս կայենիւք եւ տեղեաւք. եւ զայս գիտայ, զի զյարութիւնն նշանակէ առակդ, այլ եւ զայս եւս, եթէ է՛ ծանաւթութիւն ի հանդերձելումն:

ԻԳՆԱՏԻՈՍ

Այր ոմն էր մեծատուն, եւ ագանէր բեհեզս եւ ծիրանիս, եւ ուրախ լինէր [հանապազ] առատապէս: Եւ աղքատ ոմն՝ Ղազարոս անուն, անկեալ դնէր առ դրանն [նորա] վիրաւորեալ: Եւ ցանկայր յագիլ ի փշրանացն, որ անկանէին ի սեղանոյ մեծատանն: Այլ եւ շունք եւս գային եւ լիզուին զվէրս նորա (հմմտ. Ղուկ. ԺԶ. 19-21):

Առակիս բան ոմանց այնպէս թուեցաւ, թէ առանց էութեան բանք սոսկ ասացան եւ ունին զլրումն կատարման խորհրդոյն ի յարութեան անդ, յորժամ երկաքանչիւրոցն լիցի որոշումն եւ կարգի նոցա ըստ վարուցն հաւաստեաւք հատուցումն, եւ յայնմանէ առնուն զկարծիս, զի մեծատունն տագնապէր տանջեալ, եւ Ղազարոս կայր[1] *ի հանգստեան: Եւ ընդդէմ դնեն այսոցիկ, թէ նախ քան*

[1] ԻՏ կեայր

զամենեցուն յարութիւնն եւ զդատաստանին ընտրութիւն, հատուցումն ոչ է՝ ոչ արդարոց, ըստ արդարութեան նոցա եւ ոչ անբարշտաց՝ ըստ նոցա վատթար գնացիցն: Արդ, զայս զմտաւ ածին եւ յայն ոչ կարացին հայել, զոր մեծատունն մաղթէր նահապետին, զի առաքեսցէ զՂազար՝ քարոզս եւ ուսուցիչ եղբարցն, զի մի՛ եւ նոքա գայցեն յայն տեղի տանջանաց, եւ ասէն Աբրահամու. «Ունին զմարգարէիցն բանս, անտի ուսցին» (հմմտ. ԺԶ. 29):

Եւ այս ահա ի յարութեանն ոչ է, զի ամենեքեան յառնեն, եւ ոչ եթէ աշխարհ ինչ է յայնմ ժամու, որ քարոզ նոցա ոք լինիցի ուսուցանել, զի մի չարասցին կորնչել, կամ թէ իցէ բնաւ այնոցիկ, որ ընդ տանջանաւք կապեալ իցեն՝ տեսանել զարդարս: Արդ, պարտ է մեզ ամենայնիւ կալ ի վերայ ուղիղ տեսութեան բանիցս եւ որքան հնար է, կրթել զմիտս յստակ տեսութեան, զի մի ինչ մտածութիւն ընդդէմ անկցի՝ եղծանել հակառակաւն: Վասն որոյ իմանալ արժան է, զի բան առակիս փոխանակ աւրինակ ասելոյ եղեալ է, եւ աւրինակ երբեմն յանչնչից առեալ է, որպէս որ զսերմանիսն արկանէ յերկիր (տե՛ս Մատթ. ԺԳ. 4-24, Մարկ. Դ. 3-20, Ղուկ. Ը. 5-15): *Եւ է, զի ի կենդանեաց, որպէս ուռկան արկեալ ի ծով* (Մատթ. ԺԳ. 47-50), *եւ երբեմն՝ ի մարդկանէ առ մարդիկ, ըստ որում այգի տուեալ մշակաց* (տե՛ս Մատթ. ԻԱ. 33-46, Մարկ. ԺԱ 1-11, Ղուկ. Ի. 9-19), *եւ այլք բազումք, որ զնոյն ունին, եւ երբեմն յեղելոց իրաց եւ ի հին պատմութեանց առակս առաջի դնէ, որպէս երկու որդիք Աբրահամու եւ աւձն կախեալ: Արդ, այսպէս առեալ է եւ այս առակ՝ յեղելոց իրաց: Կամեցաւ զարհուրեցուցանել եւ տալ գիտութիւն այնոցիկ կենացն, որք աստի ի բաց վճարեցան: Առ այս պարտ է մերձ դնել զառաջին առակացն զբանս, այն, որ ցուցաւ կարդ ունել: Առաջին՝ գալ ի խնդիր կորուսեալ ոչխարին եւ դրամին եւ ապա՝ ածեալ լինի իբրեւ զզուարակ*[1]՝ *պատարագեալ ի վերայ անառակ ընութեանս: Եւ, արդ, կացուցանէ տնտեսս, յորոց փրկեաց պատարագաւն: Յայսցանէ ոմանք արդարութեամբ գնացեալս եւ ոմանք՝ անիրաւութեամբ, զորս կոչէ տալ համարս եւ յայսոսիկ, որ զղջացան՝ գովեաց: Եւ զի են, որ առանց հնարս փրկութեան գտանելոյ գնացին: Յայտնէ եւ զայսպիսեացն վտանգս, որ ընդունելոց է զնոսա ի լքանելն գայս եւ աւրինակ դնէ զմեծատունն, զի ամենեքեան, որ չարք իցեն, մի վասն զի աստ երկայնամիտ է Աստուած, արհա-*

[1] ԻՏ զուարակ

մարհանաւք կացցեն[1]*, իբրեւ թէ միշտ այնպէս լինիցի, եւ չկայ ինչ ի վերուստ դատաստանք եւ վրէժխնդրութիւնք: Եցոյց զվտանգս մեծատանն, զի անտի ուսցին, որ ինչ պահեալ են դատաստանք Աստուծոյ ի վերայ անբարշտաց: Դարձեալ՝ վասն զի երանեաց զաղքատութիւնն եւ զհալածական լինելն եւ անարգանս կրել վասն անուան նորա եւ եղկելի համարեցաւ զմեծատունսն՝ յասելն. «Վա՛յ ձեզ, մեծատանցդ, զի այսու կենաւքս չափեցաւ մխիթարութիւնն ձեր»* (հմմտ. Ղուկ. Զ. 24)*: Արդ, զայս երանութիւն, որ առ վշտացեալս եւ զսպառնալիս, որ առ փափկացեալս, յեղելոց իրաց մերձ դնէ, որ ինչ պատահեաց յետ աստի վճարելոյս Ղազարու եւ մեծատանն, եւ զի թանձրագոյն են յաւժարութեամբ մարդիկ եւ յերեւելեացս առաւելագոյն ըմբռնին ցանկութեամբ, քան թէ յաներեւութիցն: Եւ էին յայնմ ժամու քահանայապետք եւ իշխանք հրէիցն ի մեծութեան եւ ի հանգստեան, եւ որ ընդ նմա էին ի թշուառութեան, վասն այնորիկ առակեաց նա զաշակերտսն իւր ի Ղազար եւ զնոսա՝ ի մեծատունն, զի մի սոքա տարակուսեցին ի նեղութեան իւրեանց, եւ մի նոքա զուարճացին ի փառս իւրեանց, այլ սոքա Ղազարու հանգստեամբն մխիթարեսցին, եւ նոքա մեծատանն տանջանաւք տարակուսեսցին: Այսպէս եւ յետ նոցա ամենեցուն լիցի խրատ բարեպաշտութեան, զի մի՛ մեծատունք յաւրասցին եւ մի՛ աղքատք վհատեսցին: Վասն որոյ դնէ զմեծատանն, զի՝ զամենայն ինչ առատութեամբ ունէր՝ զգեստս պայծառս եւ երեւելիս եւ կերակուրս ամենալիցս, եւ ամենայն ուստեք հեշտալիքն յաճախէին նմա, եւ տրտմականք եւ ոչ մի ինչ բնաւ ուստեք: Եւ ընդդէմ կարգեալ էր սորա Ղազարուն կիրք՝ ամենայնիւ լի տրտմութեամբ, եւ մխիթարութիւն եւ ոչ բնաւ ուստեք: Արդ, այս Աստուծոյ նախախնամութեանն է, զի տայ փարթամութիւն անժուժկալից, զի ունիցին այնու վճարել զպէտս իւրեանց եւ աւելորդաւքն հաղորդել աղքատացն եւ գնել զանտի հանգիստն: Վասն այնորիկ եւ զոմանս աղքատս արար, զի տեղի լիցի մեծատանցն՝ բարեգործելոյ առ նոսա եւ ապականացու գոյիւքն ստանալ զմեծն եւ զանապականն: Ապա թէ չարասցին հեշտասիրութեամբ եւ ագահութեամբ, վճարէ զնոսա մերձակայիցս վայելմամբ եւ ի հանդերձեալսն անպատասխանիս արարեալ՝ պատժէ արդարութեամբն: Եւ աղքատք, եթէ*

[1] ԻՏ կայցեն] կացցեն

զոհացողք լինիցին, մեծի հանգստեան եւ փառաց արժանացեալ ի հատուցման արդարոցն յաւիտենական ունին զմխիթարութիւնն: Իսկ եթէ տրտնջողք իցեն եւ մտաւք յաւժարեալք ի մեծութիւնս եւ ոչ անսան խրատու ասողին. «Մեծութիւն թէ առու գայցէ, մի յաւժարեսցին սիրտք ձեր» (Սաղմ. ԿԱ. 11)*: Այսպիսիքս կրեն զաղքատութեան դժուարին կիրս եւ ի պարգեւացն Աստուծոյ զրկեալք են ի հատուցման աւուրն: Իսկ մեք աստ առակաւս ուսանիմք զտմարդի բարս մեծատանն եւ զհաստատուն միտս արդարոյն, զի ոչ սա խոնարհեցաւ առ նա եւ ոչ նայեցաւ ի վիշտս նորա, եւ գազանք ողորմեալ լիզուին զվէրս նորա, եւ ոչ նա չարացաւ*[1] *ինչ ի նեղութեանն, այլ կայր հաստատուն յուսով յայնքան տառապանսն: Նորին աղագաւ սահմանեաց յամենայնիւ չարաց եւ ի կատարեալ բարեաց՝ լինել ի միասին, զի անպատասխանի լիցի փափկացեալն եւ ոչ եթէ՝ ոչ տեսի, կարէ ասել, որքան զչունս անողորմ եցոյց բարս, զի եւ ի փշրանացն անկելոց ոչ կամեցաւ բարեգործել այնպիսում վշտացելոյ: Եւ զի մեծատունք ատեսցեն զմեծատանն զչարութիւն, եւ աղքատք ուսցին զարդարոյն զհամբերութիւն եւ մի դժուարեսցին ընդ աղքատութիւնն, զի մի ընդունայն լինիցի, վասն որոյ յարէ յայս զկատարած ելից երկոցունց նոցա.*

Եղեւ,- ասէ,- մեռանել աղքատին, եւ տանել զնա հրեշտակացն ի գոգն Աբրահամու (ԺԶ. 22)*:*

Դադարեցին նեղութիւնքն, եւ եհաս հանգիստն, լուծան տրտմականքն, եւ ժամանեաց մխիթարութիւնն, բարձան վէրքն, յորում կեայր տաժանաբար, եւ ընկալաւ զնա կեանքն անապական: Յետ շանցն՝ հրեշտակացն սպասաւորութիւն, եւ յետ այնորիկ, զի ի դուրս մեծատանն անկեալ դնէր՝ ի նահապետին գոգն գրգեալ հանգչէր: Որ ոք աստ սիրէ երկայնել զբանս վարդապետութեան, զգիրսն Յոհաննու ընթերցցի զՈսկեբերանին:

Մեռաւ,- ասէ,- մեծատունն՝ եւ թաղեցաւ (ԺԶ. 22)*:*

Էանց եւ սորա հեշտալի փափկութիւնն եւ զոր ունէր յերկրէ, յերկիր մնաց, եւ որ չարաչար ստացաւ, մերկ գտաւ, ուրախութիւնն եւ հանդերձիցն վայելչութիւն եւ կերակրոցն հեշտութիւնք

[1] ԻՏ զչարեցաւ] չարացաւ

եղծան, եւ տրտմականքն յաճախեսցին, եւ վիշտք եւ նեղութիւնք բազմացան, զի յամենեցունց, զոր յաճախեաց անձին իւրոյ՝ եթէ բարեկամս եւ եթէ ստացուածս, այնքան միայն զաւրեցին աւգնել նմա, զի պատուով զմարմինն գերեզմանի ետուն: Նորին աղագաւ եւ Տէրն զսորայս ասէ զթաղումն, զի այնչափ էր սահման մեծութեան նորա՝ ըստ այնմ. «Ոչ թէ ի մեռանելն իւրում առցէ ընդ իւր զամենայն, եւ ոչ են փառք նորա ընդ նմա» (հմմտ. Սաղմ. ԽԸ. 18), «այլ անձն նորա ի կենդանութեանն իւրում պատրուեսցի» (հմմտ. Սաղմ. ԽԸ. 19): *Եւ նախքան զայս՝* «Տունք նոցա,- ասէ,- են գերեզմանք նոցա, եւ անունք նոցա յիշին միայն նոքաւք» (հմմտ. Սաղմ. ԽԸ. 12)*: Իսկ վասն արդարոյն թաղման չկամեցաւ ինչ ասել, զի անարգ եւ առանց պատուի էր, կամ թէ բնաւ իսկ եւ թաղեցաւ ոչ: Զի թէ մինչ կենդանին էր, այնքան վիրաւք էր զազրացեալ, զի չունք էին սպասաւորք, եւ ի մարդկանէ չէր ոք, որ մերձենայր առ նա՝ ի խնամարկել. ո՞վ ոք էր, որ յետ մահուն հողոյ տայր զմարմին նորա, այլ այնպէս անթաղ անկեալ դնէր: Եւ մի՛ ոք տակաւին եւս մարմին՝ զանթաղսն մարմնով տեսեալ դժուարեսցի ինչ, կամ անարգ զոք թաղեալ՝ մի՛ երանեսցէ վասն պատուական թաղմանն անշնորհակալու մարմնոյն, այլ ի վարսն հայեսցի, թէ ոգի նորա ի կենդանութեան եւ ի զգայութեան յորո՞ւմ մասին իցէ: Եւ զայս, զոր եդաք, ոչ եթէ սահմանեցաք վճիռ ամենայն արդարոց՝ անարգ լինիլ ի մահուն եւ ամենայն անբարշտաց՝ պատուով ունել զգերեզմանս, այլ միայն վասն կարճմտացն ասացաք, որք յերեւելիս եւեթ հային եւ իմանալեացն չեն տեսողք: Ապա թէ ոչ՝ բազմաց արդարոց քաջավայելուչ են շիրիմք նոցա, եւ անաւրէնք անթաղ մնացին եւ ոչ ինչ սոքա գրեցան առ Աստուծոյ՝ ի հատուցումն նոցա: Իսկ մերս միայն վասն Ղազարու կրից անարգ մարմնոյն եւ բարետոհմութեան ոգւոյն եղաւ եւ մեծատանն բարեկրութեան եւ որ յետ այնորիկ վշտացն, վասն որոյ ասէ.*

Մինչ էր ի դժոխս՝ ի տանջանսն, ամբարձ զաչս իւր եւ ետես ի հեռաստանէ զԱբրահամ եւ զՂազար՝ հանգուցեալ ի գոգս նորա (հմմտ. ԺԶ. 23):

Որք տարակուսեալք վասն այսորիկ ասեն, թէ ոչ ոք է, որ ունի զհատուցումն բարեաց՝ ըստ արդարութեանն, եւ ոչ տանջանք ինչ են մեղաւորաց նախքան զյառնելն՝ ըստ առաքելոց. «Զեւ եւս ընկալան զաւետիսն Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի առանց մեր կատարեսցին» (Եբր. ԺԱ. 39)*: Արդ, այսոցիկ տարակուսանաց դիւրին է լուծումն, քանզի ունիմք զայս հաստատութեամբ, թէ սահմանեաց նա աւր, յորում դատէ զամենայն ոք արդարութեամբ: Բայց զայս առցես աւրինակաւ՝ աստի կենացս ամենայնիւ անվրէպ տեսանել եւ ի դժոխս, զի նախքան զմահն տէրունական, որով լուծաւ մահ, եւ դժոխք բացան, եւ արդելեալքն արձակեցան, ամենեքեան փակեալ էին ընդ իշխանութեամբ դժոխոց: Եւ թէպէտ գոյին արդարք, սակայն առանց պատարագելոյ ոչխարին, որով պատառէր դատակնիքն Ադամայ եւ բառնայր պարտիք մարդկութեանս, ումեք ազատանալ ի դժոխոց աւրէն ո՛չ էր: Վասն որոյ ըստ որում յաշխարհս յայս, զոր անիծիւք ժառանգեցաք, ի միասին բնակին չարք եւ բարիք, եւ է սա մեզ տեղի դատապարտութեան, եւ ոչ են որոշեալ արդարքն ի մեղաւորաց: Այսպէս պարտ է եւ վասն դժոխոցն գիտել, զի արդարք եւ մեղաւորք արգելեալ փակեցան ի նա վասն առաջին մարդոյն անհնազարդութեանն: Բայց սակայն ըստ որում աստ ոմանք չարչարեալ են ի դիւաց, որպէս այնք, որ ախտիւ մեղաց գերեցան ի նմանէ եւ անհնարին նեղութեամբ տանջեալ են ոգւով, թէպէտ անզգայացեալք՝ ոչ իմանան, զոր կրեն զապականութիւնն: Եւ են, որք մարմնով չարչարեալք են ի նոցանէ, որպէս որ կարկամեալ էր, զոր կապեաց սատանայ ամս ութուտասն եւ որպէս այն, զի ուր հասանէր, զարկուցանէր եւ փրփրեցուցանէր եւ ի հուր արկանէր եւ ի ջուր, զի կորուսցէ: Եւ արդ, իբրեւ այսպէս իշխեն ի վերայ տկարացն, սակայն սուրբքն սաստէին նոցա եւ հալածէին՝ իբրեւ զծառայս չարս եւ ապստամբս, յորոց եւ ի ստուերէն երկիւղիւ մեծաւ տագնապէին: Զայս աւրինակ առցես եւ ի դժոխս, զի է նա ստորին սահման երկրի եւ ոչ է անդ հուր տանջողական եւ ոչ այլ ինչ տանջանք ի վերուստ, այլ է անդ տանջանք դիւացն, զի զոր աստ մեղաւք եւ անհաւատութեամբ ծառայեցուցին, անդ անխնայ անհնարին լլկանաւք չարաչար տանջէին, որպէս զմեծատունն զայն: Իսկ առ սուրբսն եւ ոչ բնաւ մերձենալ համարձակէին նոքա, զի ըստ որում մինչ մարմնով էին, հալածէին զդեւսն վերին օգնականութեամբն, այսպէս եւ մերկ ոգւով, թէպէտ էին ի դժոխս, այլ զդեւս չարս հալածէին նովին զաւրութեամբն, քանզի չիք ինչ տեղի թափուր, ուր ոչ է մերձ ձեռն ամենակալ՝ ըստ այնմ.* «Եթէ յերկինս ելանեմ՝ անդ ես եւ թէ ի դժոխս իջանեմ եւ որպէս յերկինս՝ անդ մաւր ես» (Սաղմ. ՃԼԸ. 8)*: Արդ, այսպէս ոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ*

են, եւ ոչ մերձենայ ի նոսա չար, եւ «բանակք հրեշտակաց Տեառն շուրջ են երկիւղածովք իւրովք» (Սաղմ. ԼԳ. 8): *Եւ որպէս յերկրի առ Եղիսէիւ տեսաք* (տես Դ. Թագ. Զ. 17): *Եւ ի դժոխս զնոյն աւրինակ առցուք, յաղագս որոյ ասէ.*

Ի մեռանել աղքատին ի հրեշտակաց բերեալ եղեւ ի գոգն Աբրահամու (հմմտ. ԺԶ. 22): *Իսկ մեծատունն, տանջեալ ի դիւաց, տագնապէր* (տես Ղուկ. ԺԶ. 23), *վասն որոյ առ վտանգին աղաղակէր.*

«Հա՛յր Աբրահամ՝ առաքեա՛ զՂազար, զի թաց՝ցէ զծագ մատին ի ջուր, եւ զովացուցէ զլեզուս , զի պապակիմ ի տապոյ ասպի» (ԺԶ. 24):

Արդ, ըստ որում ասացաք, չիք ինչ ի դժոխս հուր այրիչ, զի այս իւրում ժամանակին պահեալ է դիւաց եւ որք նոցին հաղորդեցան չարեաց: Այլ Տէրն, զնեղութիւնն, զոր կրէին հոգիք անբարչտաց ի դիւաց անտի, առակեաց ի տապ: Իսկ զՂազարու զովացուցանելն միայն ծայրիւ մատինն եւ կաթիլ ջրոյն եւ զլեզուն եւեթ, թերեւս զայն տայ նշանակ, զի առաքեսցէ զՂազար՝ փոքր մի հալածել զդեւսն, որպէս եւ աստ՝ այսակիրք ապաւինին ի յարս սուրբս՝ զերծանել ի վտանգէն, զոր կրեն ի դիւաց: Այսպէս եւ մեծատունն այն գիտէր, թէ զաւրութեամբն այնու, որով պահեալ լինին արդարքն ի խաղաղութեան ի դիւաց անտի, ունէր զՂազար՝ հալածել ի մեղաւորաց զդեւսն, զի մի՛ տանջեսցին նոքա ի նոցանէ: Եւ զի՞նչ արդեւք իցէ, զի զանուն աղքատին ամենայն ուրեք նշանակեաց բանիւն, իսկ զմեծատանն եւ ո՛չ ընաւ ուրեք: Արդ, կարծելի է՝ թերեւս ի պիտանեաց առաջնոց սրբոցն ուրուք անուամբ անուանեալ էր նա, եւ վասն այնորիկ լռեաց, զի մի՛ անուամբ բարի առնն անուանեսցէ զչարն, կամ թէ ի մերձակայիցն, որ լսէին՝ էր ոք անուամբ մեծատանն, եւ խնայեաց ի նա, զի մի՛ խռովեալ ամբոխեսցի՝ կարծելով, թէ առ նա իցէ բանն: Եվ՝ վասն այսորիկ այսքան դատեալ եղեւ ի մէնջ: Այլ ժամ է այսուհետեւ ի վճիռ բանիցն Աբրահամու հայել, որ լի՛ է արդարութեամբ եւ կարի՛ դժուարին՝ լսելեաց.

[1] ԻՏ > եւ

«Ընկալար,- ասէ,- որդեա՛կ, դու զբարիսն քո ի կեանս քո եւ Ղազարոս՝ զչարչարանս: Վասն այսորիկ սա ասպ մխիթարի, եւ դու այդր պապակիս» (հմմտ. ԺԶ. 25):

Ողորմութեանն Աստուծոյ չափ սահմանեալ է եւ յաւիտենիւս այսու ձգի եւ անդր եւս, քան զայս անցանել ո՛չ ունի: Զի որչափ յաճախէ ոք ի մեղս եւ զղջացեալ անկանի առ Աստուած, արդարացուցանէ՝ աւրինաւք ընկալեալ: Ապա թէ ընդ մեզ մտանեն մեղքն մեր ի գերեզմանս մեր, այնուհետեւ նախանձ հրոյն է, որ ուտէ զհակառակորդս, եւ ոչ է գտանել ուրուք արտասուաւք թողութիւն, վասն որոյ եւ Աբրահամ, որ կարի ողորմած էր, առ նա անողորմ գտաւ եւ որ առ Սոդոմացիսն գթացեալ՝ խնամարկէր եւ բազում մաղթանս առաջի եղեալ Աստուծոյ՝ կամէր այնու խոնարհեցուցանել զԱստուած՝ ի ներելն, սակայն աստ դատաստանաւք խաւսի եւ արդարութեամբ դատէ. **«Ընկալար,- ասէ,- զմխիթարութիւնն քո ի կեանս քո, եւ Ղազարոս՝ զչարչարանս»:** *Ագահեցեր, ասէ, ժողովել զմթերս բազումս չուայտել եւ փափկանալ եւ բարեգործել առ կարաւտեալս ոչ հաճեցար: Դու ինքնին ուսուցեր, թէ ո՛չ է պարտ վշտացելոց առնել խնամակալութիւն, վասն այսորիկ* **«սա ասպ մխիթարի, եւ դու այդր պապակիս»:** *Յայս հայի եւ յայտնութիւն մարգարէին եղեալ, վասն որոյ ասէ.* «Վա՛յ, որ ագահէ զագահութիւն չար տան իւրոյ՝ դնել ի բարձունս զբոյն իւր՝ կորզել ի ձեռաց չարաց, խորհեցա[1] զամաւթ տան քո» (Ամբ. Բ. 9-10): *Վասն սորին եւ տախտակի գրեալ ասաց, զի ընթերցեալ ուսցին եւ մի անմտութեամբ գնասցեն զհետ ցանկութեանց, զի մի՛ ի[2] կատարածի այսոցիկ[3], դժնդակ կրից պատահեալ, անլուծանելի ունիցին զվրէժս իրաւացի հատուցմանն, զի նեղելոյն եղեւ ընդարձակութիւն հանգստեանն եւ որ փափկանայրն, անբերելի եհաս տանջանացն: Զայս եւ առաքելոյ հաստատեալ է իրաւացի դատեալ՝ յասելն.* «Պարտ է առաջի Աստուծոյ հատուցանել նեղչաց ձերոց նեղութիւն, եւ ձեզ նեղելոցդ՝ հանգիստ ընդ մեզ» (Բ. Թես. Ա. 6-7): *Ըստ այսմ եւ նահապետն այն. նախ՝ զիրաւունս կարգեաց եդ եւ ապա՝ յանհնարինսն աւանդեաց զբանն, իբրու թէ վհաւ արգելեալ փակին նոքա: Վասն որոյ ասէ.*

[1] ԻՏ խորհեցար] խորհեցաւ
[2] ԻՏ > ի
[3] ԻՏ այսորիկ

«Ի վերայ այսր ամենայնի վիհ մեծ է ընդ մեզ եւ ընդ ձեզ. զի ոչ, ապրի՝ առ ձեզ անցանել կարեն. եւ ոչ այրի առ մեզ որ կարէ անցանել» (ԺԶ. 26):

Եւ արդ, մի՛ որ ընդ այս տարակուսեսցի, քանզի է այս եւ ի միում քաղաքի տեսանել՝ զոմանս ի գահոյս յաւրացեալս եւ ի սպասաւորաց շուրջ լեալս եւ պատուեալս եւ ոմանք ի կապանս եւ ի խորին արգելարանս փակեալս: Յայս առցես ինձ եւ զՂազարու եւ զմեծատանն վհաւ ի բաց պարսպեալս գոլ ի միմեանց: Եւ արդ, անձին անյոյս փրկութեան եղեալ, ապա սկսանի մարդասէր բարս ցուցանել, որով խնամարկէր ազգայնոցն, յաղագս որոյ ասէր.

«Աղաչեմ զքեզ, հա՛յր Աբրահամ, զի առաքեա զՂազար ի տուն հաւր իմոյ, զի են իմ անդ եղբարք հինգ, [որպէս] զի տացէ նոցա պատուէր, զի մի՛ եւ նոքա գայցեն յայս տեղի տանջանաց» (ԺԶ. 27-28):

Դարձեալ՝ աղաչէր մեծատունն զԱբրահամ, ո՛չ եթէ մեղաւորք ոչ կամին զգնալն այլոց ի դժոխս, այլ զի մեծատունս այս, մինչ էրն յաշխարհի, բազում պատճառս մեղաց լեալ էր եղբարցն: Յաղագս այնր աղաչէր չգալ եղբարցն յայն տեղի տանջանաց, զի մի՛ առաւել պատիժս կրեսցէ[1]: Յորոց[2] ինքն վտանգեալ տագնապէր, ուսաւ, թէ լաւ է զամենայն ժամանակս կալ ի տառապանս, քան թէ տիրել ամենայն ծագաց երկրի եւ ի կատարածի հասանել այսպիսի դժնդակ կրից՝ ըստ այնմ. «Զի՞նչ ապուր է մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի եւ զանձն իւր տրուժեսցի[3]» (Մատթ. ԺԶ. 26): *Ուստի ընտրելի է, որ որ միտս ունի՝ զամենայն զկեանս իւր լնուլ կոծով եւ զամենայն աւուրս՝ տրտմութեամբ եւ արտասուաւք եւ տքնութեամբ հաչել զանձն, եւ թեթեւ համարել զամենայն նեղութիւնս եւ չգրել ինչ բնաւ, որ ինչ յաշխարհի իցէ, այլ զամենայն մերկանալ զաստի կեանս հեշտալիս եւ ամենայն նեղութեանց տալ զանձն յաւժարութեամբ եւ զայն խնդրել միայն, որով հնար իցէ զաղէտս տարակուսանացն այնոցիկ ի բաց քերել յանձնէ: Վասն որոյ ի փորձոյ ուսեալ զայս մեծատանն՝ աղաչէր, զի քարո՛զ զՂազար արձակեսցէ՝ եղբարցն պատուէր տալ: Յորոց ինքն զփորձ էառ եւ ծանեաւ,*

[1] ԻՏ > դարձեալ աղաչէր մեծատունն... պատիժս կրեսցէ
[2] ԻՏ յորում
[3] ԻՏ տուժեսցէ

կարծէր եւ եղբարցն զնոյն միտս ունել եւ հաւատալ, թէ արդարեւ այնպէս իցէ, եւ տալ զանձինս առաքինութեանց, մերկանալ ի ցանկալեաց աստի: Եւ զայն անգիտանայր, թէեւ եղբարքն նորին ախտիւն ըմբռնեալ են եւ ոչ հաւատան: Այլ թէ զի՞նչ եղբարքն իցեն, զամենայն բնութիւնս[1] իմանալ պատշաճ է. եւ հինգ վասն զգայութեանց թուոյ, զի մի՛ աչաւք խաբեալ՝ ըմբռնեսցին ի հեշտալի տեսութեանց եւ մի՛ ականջաւք ի պատիր բանից եւ մի՛ լեզուաւ ի բանս չարս եւ մի շաւշափելեաւք ի գարշ ցանկութիւնս, զի մի եւ նոքա այսպիսեաւք ընկղմեալ ախտիւք ի նոյն հասցեն տեղի տանջանաց: Կամ, թէ արդարեւ էին նորա եղբարք, որ նորին անիրաւ եւ չար մեղաւքն վարէին, որոց ողորմեալ, աղաչէ, զի առաքեսցէ զՂազար՝ խրատել զնոսա: Եւ առ այս զի՞նչ առնէ պատասխանի.

«Ունին,- ասէ,- զբանս Մովսէսի եւ այլոց մարգարէիցն, նոցա լուիցեն» (հմմտ. ԺԶ. 29):

Անտի ուսցին զհանգիստ արդարոցն եւ զտանջանսն մեղաւորացն: Եւ այնպէս կարող են, եթէ կամին, ապրեցուցանել զանձինս, քանզի լի են ամենայն բանք մարգարէիցն ամենայն աստուածեղէն իմաստիւք, որք սաստեն, սպառնան թանձրագունիցն մտաւք, եւ որք շաղեալք են ընդ գիշական ախտիցն, զի ուսեալք զերկիւղ տանջանացն, հեռասցին յապականացու կրիցն մեծաւ զգուշութեամբ: Յայտնեն եւ զփառս արդարոց, զի ցանկասցին հասանել փառացն եւ մի խաւարաւ անգիտութեան գնացեալ, հասցեն կորստեան: Իսկ նա, վասն զի գիտէր, որոց եւ ոչ ինքն լուաւ մարգարէիցն, ասէ.

«Ոչ, հա՛յր Աբրահամ, բայց եթէ ի մեռելոց որ երթեալ խաւսեսցի ընդ նոսա, եւ այնպէս հաւատան եւ ապաշխարեն» (հմմտ. ԺԶ. 30):

Ամենայն որ, յորոց կրէ ի նոյն եւ զայլս կարծէ, զի մինչ ի մարմնի էր, առասպելք թուէին նմա բանք մարգարէիցն, վասն զի սէր ընչիցն եւ այլոց հեշտութեանցն առ ինքեանս ձգեալ՝ պահէին զնա: Այլ յայնժամ մերկացեալ ի մարմնոյն եւ ազատեալ ի բռնութենէ ախտիցն եւ զգաստացեալ ի չարաչար կրիցն, որովք տան-

[1] ԻՏ բնութեանս

ջեալ լինէր ի դիւաց, կարծէր, եթէ զայս ամենայն լուեալ ի մեռելոց ուրուք առ նոսա գնացելոց, հաւատան եւ ապաշխարեն՝ զերծեալք յայնպիսի վտանգից: Բայց Աբրահամ, քանզի գիտէր, եթէ հաւատարմագոյնք են բանք մարգարէիցն, քան զմեռելոց յարուցելոց, վասն որոյ ասէ.

Եթէ Մովսիսի եւ մարգարէիցն ոչ լսեն եւ ոչ թէ ի մեռելոց ոք յառնէ՝ հաւանեսցին (ԺԶ. 31):

Եւ զիա՞րդ ունէին հաւատալ մեռելոյ յարուցելոյ մարդիկ, որ այնքան անհաւատութեամբ եւ ցանկութեամբ աշխարհի վարակեալք էին, մինչ զի զբանս մարգարէիցն չգրէին ինչ՝ ըստ այնմ. «Զբանս սուրբս խոտան համարեցան» (հմմտ. Յոբ Զ. 25): *Զի ահաւասիկ՝ մարդ ոք ի մեռելոց յարուցեալ զոր ինչ եւ խաւսի, մարդոյ են բանք, բայց մարգարէիցն հոգւոյն Աստուծոյ բանք են, զոր խաւսեցան: Քանզի պատգամաւորք Աստուծոյ էին*[1] *եւ անտի առեալ խաւսէին ընդ նոսա*[2]*, զի երկիցեն ի տանջանաց գեհենին եւ պիտանիք լինիցին կամ ցանկասցին բարեացն հատուցման եւ ուսցին մոռանալ զաստի հեշտալիս եւ յաւժարամիտք լինիցին՝ բարեգործեալ առ աղքատս՝ վասն երանելի յուսոյն եւ կատարածի հանգստեանն արդարոցն: Այլ յայսոցիկ՝ ոչ թէ միայն ոչ զղջացան, այլեւ անարգանաւք եւ չարչարանաւք բարձին զնոսա ի միջոյ՝ ըստ նորուն Տեառն ասելոյն.* «Առաքեաց ծառայս, զի ի պտղոյ այգւոյն առցեն եւ նոցա կալեալ՝ սպանին, եւ զոմանս անարգանաւք յդարկեցին[3]» (հմմտ. Մատթ. ԻԱ. 34-36): *Արդ, որ մարգարէիցն զայս հատուցին, մեռելոյ ուրուք լուիցե՞ն, ո՞չ ապաքէն զնոյնս առնեն եւ ի մեռելոց եկելոյ առ նոսա հատուցանել: Արդ, վասն զի յամառեալ պնդեաց մեծատունն ասել, եթէ զմեռեալ ոք տեսանեն յարուցեալ, որ խաւսեսցի ընդ նոսա, լուեալ ի նմանէ զայս, որ աստ է՛ նեղութիւն՝ երկուցեալ ապաշխարեն: Իսկ Աբրահամ, ըստ որում յայտնի էր նմա, ասաց, որ մարգարէիցն ոչ անսան բանից եւ ոչ մեռելոյ ուրուք հաւանեսցին լսել:*

Եւ զի մի թուեսցի ումեք, եթէ ուղիղ իմացաւ զայս ասել մեծատունն, թէ զմեռեալ ոք տեսանէին յարուցեալ, որ պատմէր զան-

[1] ԻՏ > նոքա

[2] ԻՏ նոքա] ընդ նոսա

[3] ԻՏ յուղարկեցին

տի կենացն, հաւատային ասացելոցն[1] *եւ զղջացեալ ապաշխարէին: Վասն այնորիկ, զի արդարացուսցէ զբանս Աբրահամու, որ վկայեաց, թէ ոչ լսեն, կոչեաց զՂազար ի գերեզմանէն եւ կորզեաց ի դժոխոց եւ էած, կացոյց ի մէջ նոցա կենդանացեալ, զի խաւսեսցի ընդ նոսա՝ հաւատալ եւ ապաշխարել, զի կեցցեն եւ մի կորիցեն: Իսկ եղբարք մեծատանն, քահանայապետք եւ ծերք ժողովրդեանն խորհեցան, զի սպանցեն զյարուցիչն՝ զՅիսուս եւ զոր յարոյցն՝ զՂազար: Այսքան ապառում եւ վայրենամիտ եղեն եւ յայսպիսի անհաւատութիւն ձգեցան, վասն որոյ ի նոյն յարեալ՝ ասաց առ աշակերտսն.*

«Ոչ է մարթ չգալ գայթակղութեան, բայց վա՛յ այնմիկ, յոյր ձեռն գայթակղութիւնն գա» (Ղուկ. ԺԷ. 1):

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Այր մի էր մեծատուն եւ ագանէր բեհեզս եւ զծիրանիս եւ հանապազ ուրախ լինէր (հմմտ. Ղուկ. ԺԶ. 19):

Առակիս բանս ոմանց այսպէս թուեցաւ, թէ առանց էութեան սոսկ բան ասացան, եւ ունի զկատարումն խորհրդին ի հանդերձեալ ատենին: Եւ զայս յայնմանէ առնուն կարծիս, որ մեծատունն տանջէր եւ զՂազար հանգչէր. եւ վկայ բերեն, թէ նախքան զամենեցուն յարութիւնն, հատուցումն ոչ է, ոչ արդարոցն եւ ոչ մեղաւորաց՝ ըստ առաքելոյն (տե՛ս Բ Կոր. Ե. 10): *Աստ, զայս զմտաւ ածին եւ յայն ոչ կարացին հայել, զի մեծատունն մաղթէր նահապետին, թէ առաքեա՛ զՂազար, զի մի եղբարքն իմ աստ եկեսցեն* (տե՛ս Ղուկ. ԺԶ. 28), *վասն որոյ ասէ.*

«Զմարգարէքն ունին, նոցա լուիցեն» (հմմտ. ԺԶ. 29):

Եւ այս ի յարութեանն ոչ է, զի ամենեքին յառնեն, եւ ոչ աշխարհ ինչ է, յայնժամ, որ պիտոյանայ քարոզութիւնն, կամ թէ բնաւ մեղաւորքն զարդարսն տեսանել կարասցեն: Ապա եւ՝ պարտ է մեզ ուղիղ պահել զմիտս բանիս, զի մի՛ ուրեք անկանիցեմք ի սխալանս ըստ ոմանց: Արդ, այժմ գիտելի է, զի ամենայն առակք ի տեղի աւրինակի առեալ լինի[ն] ի Տեառնէ: Է երբեմն, զի յանշնչիցն առեալ լինի առակն, որպէս ուռկանն (տե՛ս Մատթ. ԺԳ. 47-50), *եւ է, զի*

[1] ԻՏ ասացելոյն

կենդանեաց, որպէս ի մարդկանէ առ մարդիկ, որպէս մշակք այգ-ւոյն (տե՛ս Մատթ. ԻԱ. 33-34), *եւ որք զսերմանսն հնձեցին: Եւ երբեմն յեղելոց իրաց եւ ի հին պատմութեանց առաջի դնէ առակս, որպէս աւձ կախեալ յանապատի (տե՛ս Յովհ. Գ. 14), եւ զԱբրահամ, նմա-նապէս եւ այս առակս յեղելոց իրաց է, եւ այսու կամեցաւ զարհու-րեցուցանել եւ տալ գիտութիւն, որք աստի ի բաց վճարեցան: Արդ, երկաբնակք խնդան ընդ այս աւրինակ, իբր հաստատեալ իւրեանց քաւարան, որք խայտառակին յայտնի բանիւք, վասն զի Տէր մեր տակաւին ոչ եւս էր չարչարեալ: Իսկ յառաջ քան զխաչիլն, յայտ է, թէ հոգիք ամենայն ի դժոխս էին՝ արդարք եւ մեղաւորք: Իսկ յետ յարութեանն՝ ոչ եւս, այլ ազատեցան ամենեքեան՝ ըստ այնմ.* «Որք ի կապանս էք, ելէք, եւ որք ի խաւարի՝ յայտնեցարուք» (հմմտ. Ես. ԽԹ. 9), *եւ թէ՝* «Տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ մերոյ» (Ղուկ. Գ. 6), *ուստի յայտ է, թէ սուտ է քաւարան նոցա: Նաեւ ոչ յառաջ, քան զՔրիստոս է քաւարանն, զի այն, որ ի դժոխս էին, ոչ թէ տանջէին, իբր թէ քաւէին, այլ՝ անկարգ էր տանջանք նոցա, այսինքն՝ զի ոչ էր վասն իւրեանց գործոցն, այլ վասն նախահաւրն յանցանացն: Իսկ առանձին գործոց դեռեւս պահի հատուցանել ի դատաստանի՝ ըստ այնմ.* «Դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս» (Սաղմ. Թ. 18), *եւ թէ՝* «Մեզ [առաջի] ամենեցուն յանդիմանեա՛» (հմմտ. Ա Տիմոթ. Ե. 20): *Արդ, Տէր մեր ուսուցանէ մեզ աւրինակաւս ի պատրաստի կալ, զի մի՛ ընդ մեծատանն պապակիցիմք ի տապ գեհենոյն, վասն որոյ առակէ՝ ասելով.* «Այր մի էր»: *Արդ, նախ քննեսցուք, թէ զայս Աւետարանս, վասն է՞ր յառաջնում կիրակէին եւ յերկրորդին ոչ կարդամք, այլ ի չորրորդին: Այս է պատճառն, զի կարգաւորէ ուղղեալ, այսինքն՝ նախ պարտ էր գալ ի խնդիր կորուսեալ ոչխարին* (տե՛ս Ղուկ. ԺԵ. 4-6) *եւ դրամին* (տե՛ս Ղուկ. ԺԵ. 8-10), *եւ յորժամ գտաւ, զեղն պարարակ ի զենումն էած վասն անառակ ընութեանս* (հմմտ. Ղուկ. ԺԵ. 11-32): *Իսկ յետ զենման Գառինն ոչ գոյր պատճառ գնալոյ մեր ի դժոխս, բայց միայն մեղքն մեր, վասն որոյ աստ ընթեռնումք զսա, իբրեւ զգուշացուցանելով խորհրդով հանդերձեալ ատենին: Յաղագս որոյ ասէ.* «Այր մի»:

Դարձեալ, զի երանեաց զաղքատութիւնն եւ արհամարհեաց զմեծութիւնն մեծատանն՝ ասելով. «Վա՛յ ձեզ, մեծապանց[դ]» (Ղուկ. Զ. 24), *վասն որոյ ասացեալսն իւր հաւատարմացուսցէ յեղելոց իրաց մեծատամբն եւ Ղազարու:*

Դարձեալ զքահանայքն տեսանէին աշակերտքն փարթամա-ցեալս եւ զինքեանս աղքատս եւ գծուծս, վասն որոյ առակէ զքա-հանայսն ի մեծատունն եւ զառաքինիսն ի Ղազար, զի հաստատուն լիցին եւ մի՛ երկմտիցեն, յաղագս որոյ ասէ. «Այր մի էր մեծապուն»:

Արդ, է տարակոյս մի աստ, թէ զի՞նչ պատճառի Աստուած զոմանս աղքատս արար եւ զոմանս՝ մեծատուն: Արդ, կամ աղքատ պարտ էր առնել կամ մեծատուն, զի բազումք յուսահատին այսու: Զայս տարակուսութիւնս լուծանելով՝ ասեմք, թէ այս Աստուծոյ նախախնամութեանն է գործ, զի ծածկագէտ է եւ զամենեցուն միտս գիտէ, եւ զի կամի զամենեսին արժանի առնել այնմ բարեացն: Արդ, ոմանք ի վերայ երկրի անժոյժք են եւ ոմանք՝ համբերողք: Արդ, տայ անժուժիցն զփարթամութիւնն, զի ունիցին այնու լցուցանել զիւրեանց կարիս եւ աւելորդաւքն հաղորդել զաղքատս եւ գնել զանտի հանգիստն, վասն որոյ զոմանս աղքատս արար, զի տեղիք լիցին մեծատանց բարիս գործելոյ, զի թէ ամենեքեան մեծատունք էին, լինէին իբրեւ զայս մեծատուն, եւ թէ ամենեքին աղքատ, սա-կայն Եւայն ոչ վայել էր բարերար ընութեանն այնպէս աղքատ թո-ղուլ զմարդիկ՝ զրկեալ ի դրախտէն, վասն որոյ զոմանս մեծատունս արար եւ զոմանս՝ աղքատ, վասն ասացեալ պատճառացդ:

Եւ դարձեալ՝ աղքատ եւ մեծատուն արար, զի կարիս լիցին մի-մեանց, եւ այնու յաջողեսցի գործ աշխարհի, վասն որոյ ասէ. «Այր [մի էր մեծապուն]»: *Աստ* «մեծութիւն» *ո՛չ զտան մեծութիւն ասէ, այլ՝ զփարթամութիւն ընչիցն, զի բազում բարութիւնք մարմնականք կային, այլեւ զանկարգութիւն նմին, զոր կարգէ աստ:*

Ա. Նախ՝ զի ասէ. «Փարթամ էր ընչիւք եւ հացիւն եւ գինովն» (հմմտ. ԺԶ. 19) *եւ այլովքն:*

Բ. Երկրորդ՝ զյատուկ զգեստ նորա, որ ասէ. «Ազանէր բեհեզս եւ ծիրանիս». *բեհեզն վուշն է եւ ծիրանին՝ թագաւորական զգեստ:*

Գ. Երրորդ՝ զի ոչ էր յազգի նորա պակաս, քանզի այս է յատուկ մեծատանն:

Դ. Չորրորդ՝ զի հանապազ ուրախ լինէր եւ ոչ երբէք տրտմեցաւ ի կեանս իւր:

Ե. Հինգերորդ՝ զի ամենայն ոք կարաւտ էր ի նմանէ ինչ առնե-լոյ, որպէս ասէ՝ «առատութեամբ»:

Զ. Վեցերորդ՝ զի առողջ էր մարմնովն:

Է. Եաւթերորդ՝ զի էր տմարդի բարուքն, այսինքն՝ անողորմ:

Ը. Ութերորդ՝ զի ոչ հայեցաւ ի վիշտս աղքատին:

Թ. Իններորդ՝ զի հպարտութեամբ շրջէր ի մէջ բազմութեան քաղաքին:

Ժ. Տասներորդ՝ զի միայն զմարմինն հոգաց եւ ոչ զհոգին:

Ընդդէմ այսմ եւ Ղազարու չարիքն էին պատահեալ:

Ա. Նախ՝ զի աղքատ էր ամենեւին:

Բ. Երկրորդ՝ զի հիւանդ էր մարմնով:

Գ. Երրորդ՝ զի անկեալ դնէր ի դրան նորա:

Դ. Չորրորդ՝ զի վիրաւորեալ էր բազում վիրաւք անձն նորա:

Ե. Հինգերորդ՝ զի շունք էին սպասաւորք նորա, զի լիզէին զթարախս վիրացն:

Զ. Վեցերորդ՝ զի ցանկայր փշրանաց անկելոցն ի սեղանոյ մեծատանցն:

Է. Եաւթներորդ՝ զի ոչ ոք տայր նմա, զինչ եւ պիտոյ իցէր:

Ը. Ութերորդ՝ զի ոչ ունէր ազգականս:

Թ. Իններորդ՝ զի ոչ ոք ունէր մխիթարիչ իւրոյ վշտացն:

Ժ. Տասներորդ՝ զի եւ ծառայք մեծատանցն հարկանէին զնա, վասն որոյ ետ Տէրն փոխանակ նմա ուրախութեանն՝ զվիշտս պապակմանն եւ փոխանակ չարեացն Ղազարու զհանգիստն կենաց, զոր եւ ասէ.

Եղեւ մեռանիլ աղքատին, եւ տանել [զնա] հրեշտակացն ի գոգն Աբրահամու. եւ [մեռաւ] եւ մեծատունն՝ ի դժոխս (հմմտ. ԺԶ. 22):

Աստ է հարցումն. վասն զի՞ ասէ աստուածային գիր, թէ՝ «Գիտէ Տէր զապրուածապաշտսն փրկել ի փորձութենէ եւ զանիրաւսն պահել ի տանջանս» (հմմտ. Բ. Պետ. Բ. 9): *Եւ առաքեալ ասէ, թէ՝* «Ամենայն ոք փորձի յիւրոց ցանկութեանց» (հմմտ. Յակ. Ա. 17), *եւ թէ՝* «Աստուած անփորձ է ի չարեաց» (Յակ. Ա. 13):

Արդ, զիա՞րդ է, զի ամենայն արդարք միշտ ի փորձութեանն են, եւ զի արդարքն ոչ ունին ցանկութիւն, որ ի նոցանէ փորձին: Ուրեմն երեւի, զի Աստուած անիրաւ փորձէ զարդարսն:

Պատասխանի. Թէպէտ Աստուած անփորձ է ի չարեաց, սակայն զարդարսն ի փորձութիւն ձգէ, վասն բազում պատճառի:

Ա. Նախ՝ զի թէ ոչ փորձէ Աստուած զարդարսն, ոչ երեւին արդարութիւնք սրբոցն, վասն որոյ փորձէ, զի յայտնի արասցէ զքաջութիւն արդարոյն, որպէս զՅորայն եւ Աբրահամուն՝ ըստ այնմ. «Այժմ ծանեա՛, թէ երկիւղած ես [Աստուծոյ]» (հմմտ. Ծնն. ԻԲ. 12), *այսինքն՝ ծանուցի մարդկան:*

Բ. Երկրորդ՝ զի երբեմն սուրբքն հպարտացեալ արդարութեամբք համասեռք լինին սատանայի եւ այնպէս ընդ Բելիարայ կորնչին յաւիտենական, վասն որոյ թոյլ տայ Աստուած սրբոցն անկանել ի փորձութիւն, զի ի հպարտութէնէն ի խոնարհութիւն անկցին, եւ ապա յետոյ զզջմամբ խոստովանութեանն ապրեսցին:

Գ. Երրորդ՝ թոյլ տայ Աստուած, զի ի ձեռն անտեղի չարչարանաց սրբոյն մեծ իմն եւ սքանչելի գործ կանգնեսցի, որպէս յայտ է ի Քրիստոս, զի եւ ոչ վասն ինքեան չարչարեցաւ, այլ վասն մեր, զի ի ձեռն նորին չարչարանացն ապրեսցուք մեք:

Դ. Չորրորդ՝ թոյլ տայ սրբոյն անկանել ի փորձութիւն, զի ի յուղիղ մտացն մի թիւրեսցին, որպէս Պաւղոսի, զի ետ խայթ մարմնոյ սատանայ՝ կոփել զնա, զի մի՛ անկցի ի բարուոք մտացն եւ գնացիցն:

Ե. Հինգերորդ՝ թոյլ տայ Աստուած սրբոցն անկանիլ ի փորձութիւն վասն փառացն Աստուծոյ, որպէս ի ծնէ կուրին, զի նա ոչ ունէր զմեղս, յայտ է, զի [ի] ծնէ կոյր էր եւ հաւատաց Տեառն եւ ո՛ հաւր եւ մաւր իւր, որպէս ասաց Տէրն (տե՛ս Յովհ. Թ. 3), *այլ վասն փառացն Աստուծոյ եղեւ այնպէս:*

Զ. Վեցերորդ՝ թոյլ տայ Աստուած չարչարել սրբոց, վասն նախ անձու այլոց, զի այլքն, տեսեալ զսուրբսն ի չարչարանսն, փութասցին եւ նոքա, որպէս զսուրբ մարտիրոսսն, եւ որք զանձինս ի հոգ ետուն վասն Քրիստոսի: Բայց աստ տարակուսելի է, զի զի՞նչ ի սոք է սրբոյն մեռանելն, զի այլոց աւգտութիւն լիցի: Այսմ պատասխանէ սուրբն Գրիգոր Նիւսեայ, թէ՝ «Հանդիսի տեղի է այս կեանքս, ոչ թէ վասն այլոց միայն է աւգուտ սրբոյն չարչարելն, այլեւ վասն ինքեան, զի պսակաց չափն ի չարչարանք սրբոյն է, զի որքան տանջանաց համբերեսցէ, այնքան եւ պսակեսցի»:

Է. Եաւթներորդ՝ թոյլ տայ Աստուած սրբոյն ի փորձութիւնն, զի յսմենայնի յաղթող եւ կատարեալ երեւեսցի: Քանզի երկու են պատերազմողք, մինն՝ ներքուստ եւ մինն՝ արտաքուստ: Արդ, միայն չէ բաւական, թէ միայն ի ներքս ի բնութիւնն միայն պատերազմեսցի, այլեւ արտաքնոցն եւս յաղթող երեւեսցի, որ է չարչարելն եւ նախատելն ի ձեռն այլոցն: Վասն որոյ թոյլ տայ Աստուած, զի կրկին յաղթողութեանն կրկին եւ պսակեսցէ: Եւ թէ ո՛չ տայր

Աստուած զարտաքին փորձանսն, ասէին ոմանք, թէ ոչ են կատարեալ սուրբքն, զի զարտաքին չարչարանքն ոչ տեսին:

Ը. Ութերորդ՝ թոյլ տայ Աստուած, զի որ երբեմն ողորմութեամբ վարի առ ամենայն մարդիկ, այսպէս եւ երբեմն՝ արդարութեամբ: Արդ, զի՞նչ արդարութիւն էր Աստուծոյ, զի զաշխարհի փորձութիւն միշտ տայ վասն մեղաց եւ միայն մեղաւորաց: Քանզի սուրբքն թէպէտ ներգործութեամբ ոչ արարին մեղս, սակայն ի մեղանչական բնութենէս էին, եւ թէ՝ «Ոչ ոք է առանց մեղաց»,- ասէ Յոբ (հմմտ. Յոբ. ԺԵ. 14): *Վասն որոյ թոյլ տայ, զի արդարսն վասն իւր մեղաց կրեսցէ պատիժս, եւ զի Աստուածային գիր ասէ.* «Անձն, որ մեղիցէ, նոյնն եւ մեռցի» (Եզեկ. ԺԸ. 4): *Արդ, ոչ է դատաստան, զի արդարոցն վասն փոքր մեղացն գյաւիտենական մեռելութիւնն տայ, վասն որոյ հարկի, զի աստ մեռցին, զի անդ՝ զերծցին:*

Թ. Իններորդ՝ զի խնամքն Աստուծոյ, որ հաւասար է, յամենայնէ երեւեսցի, զի որպէս զարարածս ամենայն յորժամ բարեպէս խնամէ, ո՛չ թէ զարդարսն արտաքս հանէ ի մարմնաւոր բարութենէն, այլ՝ ի միասին շնորհէ՝ ոչ խտրելով: Այսպէս եւ ի ժամանակի նեղութեան աշխարհի եւ արդարքն չարչարին, զի որպէս կցորդեցան խաղաղութեանն եւ առողջութեանն արդարք եւ մեղաւորք, այսպէս եւ չարչարեսցին ի միասին, զի աստի կեանքս զայս խնդրէ, զոյն եւ Տէրն ասէ, թէ՝ «[Զի] զարեգակն իւր ծագէ ի վերայ չարեաց եւ բարեաց, եւ ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց» (Մատթ. Ե. 45), *որ է աշխարհական հանգիստ եւ տանջանք:*

Ժ. Տասներորդ՝ զի ծածկագէտ է Աստուած. տեսանէ զանգործսն որպէս զներկայ եւ գիտացեալ, զի սուրբքն յառաջիկայն ի չար գործ ինչ անկանին, խնամաւք իւրովք ի փորձութիւն ձգէ, զի մեռցի արդար, եւ զի մի՛ մեղաւոր լիցի, եւ կորուսցէ զայնչափ արդարութիւնն:

ԺԱ. Մեռասաներորդ՝ զի հանդիսադիրն ամենեցուն Քրիստոս է: Արդ, որպէս նա, որ Աստուածն է եւ սուրբն սրբոց, չարչարանաւք ել յաշխարհէս. այսպէս եւ հետեւողին պարտ է հետոց նորա հետեւել, վասն որոյ թոյլ տայ Աստուած:

ԺԲ. Երկոտասաներորդ՝ զի սրբոց բնակութիւնն հաւաստի ոչ է յայսմ աշխարհի, վասն որոյ նեղութիւն քարշեն, որպէս Տէրն ասէ. «Յաշխարհի ասէ նեղութիւն ունիցիք» (Յովհ. ԺՁ. 33): *Եւ յայտ է ի յանասունսն եւ ի թռչունս, զի ի բնակութենէ իւրեանց արտաքս գոլով, ոչ ունին հանգիստ, նոյնպէս եւ սուրբքն, ի սեպհական բնակութենէ իւրեանց արտաքս գոլով, չարչարին:*

ԺԳ. Երեքտասաներորդ՝ զի թէ սուրբքն ոչ անկանէին ի չարչարանք, գիտէաք, թէ Աստուած ամենեցուն միապէս տայ զիւր արքայութիւնն, իսկ զնոսա, տեսանելով այնպիսի նեղութեամբ, դատանել զերկիրն կենդանեաց, իմասցո՛ւք, թէ՝ «Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յայն հանգիստն», - որպէս ասէ առաքեալ (հմմտ. Գործք ԺԴ. 21):

ԺԴ. Չորեքտասաներորդ՝ զի սովորութիւն է տնկոց, զի որք պտուղք ունին, առաւել տեարք նոցա յաւտեն զաւելորդն եւ ջրեն, եւ այն նեղութիւն է ծառին. այսպէս եւ զսուրբսն առնէ, որ պտղաբեր ծառք են Աստուծոյ, միշտ յաւտէ եւ սրբէ փորձութեամբ, զի առաւել եւս պտղաբեր լիցի, որպէս ասէ Տէրն (տես Յովհ. Ժ. 2):

ԺԵ. Հնգետասաներորդ՝ թոյլ տայ ի փորձութիւն առ ի յուղղութիւն այլոց, զի ի նորա դիպուածոցն, որ անկաւ ի փորձութիւնն, այլքն խրատեսցին, որպէս զՂազարու եւ մեծատանն, զի թէ Ղազար եւ մեծատունն ոչ էին պատուեալ եւ անպատուեալ, ո՛չ ցանկայաք աղքատութեանն Ղազարու, եւ ո՛չ արհամարհէաք զմեծութիւն մեծատանն, վասն որոյ ասէ.

Մեռաւ մեծատունն: Եւ ի դժոխս ամբարձ զաչս իւր (ԺԶ. 22, 23):

Իսկ թէ վասն է՞ր կոչի արքայութիւնն «գոգս Աբրահամու» եւ ոչ գոգ Մովսիսի եւ կամ Նոյի եւ այլոցն:

Վասն Դ. (4) պատճառաց:

Ա. Նախ՝ «**գոգ Աբրահամու**» *վասն հաւատոյն ասէ՝ ըստ այնմ.* «Հաւատաց Աբրահամ յԱստուած, եւ համարեցաւ նմա արդարութիւն» (Ծնն. ԺԵ. 6), *զի որք զնորին հաւատն ստանան, մտանեն ի հանգիստ նորին:*

Բ. Երկրորդ՝ վասն Քրիստոսի, որ էր ի գոգոյն, այսինքն՝ յերանացն Աբրահամու ի զաւակէ նորին՝ ըստ այնմ. «Գիրք ծնանդեան [Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի] որդւոյ Աբրահամու» (Մատթ. Ա. 1): *Եւ զի՞ Քրիստոս է «արքայութիւն» եւ «հանգիստ», ինքն ասէր.* «Եկայք առ իս, ամենայն աշխատեալք եւ ծանրաբեռնեալք» (հմմտ. Մատթ. ԺԱ. 28), *եւ ընդ աւազակն ասէր՝* «Այսաւր ընդ իս իցես ի դրախտին» (Ղուկ. ԻԳ. 43):

Գ. Երրորդ՝ վասն աւրհնութեանցն, որպէս ասէ. «Ի զաւակի քում աւրհնեսցին ամենայն ազգք երկրի» (Գործք Գ. 25), *զի որ ոք բարի գործեսցէ, զնորայն աւրհնութեանց նորին արժանաւորին:*

Դ. Զորրորդ՝ զի Աբրահամ պատկեր է Աստուծոյ Հաւր, զի որպէս նա ետ զՈրդին միամաւր Իսահակ պատարագ Աստուծոյ (տե՛ս Ծնն. ԻԲ. 10). *եւ Հայր Աստուած զՄիածինն ետ ի մահ վասն մեր՝ ըստ այնմ.* «Այնչափ սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զորդին իւր միածին եւր» (Յովհ. Գ. 16), *այսինքն՝ ի մահ:*

Իսկ արքայութիւնն «գոգ» կոչի վասն բազում պատճառի:

Ա. Նախ՝ զի «գոգ» զժողով իրացն նշանակէ, որ ցուցանէ զժողովումն սրբոցն յարքայութիւնն երկնից՝ ըստ այնմ. «Ուր գէշն է՝ անդր արծուիքն ժողովեսցին» (Մատթ. ԻԴ. 28):

Բ. Երկրորդ՝ զի լայնատարած է եւ ընդարձակ է ամենեւին, որ է երկինք երկնից՝ ըստ որում ասէր Քրիստոս. «Ի տան Հաւր Իմոյ ապեւանք բազում են» (Յովհ. ԺԴ. 2):

Գ. Երրորդ՝ զի ապահով է յամենայն հակառակորդաց՝ որդին ընդ հովանեաւ ձեռաց հաւրն, այսպէս եւ «Հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են, եւ ոչ մերձենայ ի նոսա մահ»,- ասէ իմաստունն (Իմաստ. Գ. 1):

Դ. Զորրորդ՝ նշանակէ ամենեւին զհանգիստ, որպէս Որդի ի գոգս Հաւրն, եւ վասն ընտրելոցն ասէ իմաստունն. «Թուեցան յաչս անզգամաց, թէ մեռան» (Իմաստ. Գ. 2), *այլ նոքա են ի խաղաղութեան, այսինքն՝ ի հանգիստ, որպէս յայտ է ի Ղազարու:*

Ե. Հինգերորդ՝ նշանակէ զգորովագութ համբոյրն հաւրն առ որդին. այսպէս եւ Աստուած՝ զմեղաւորս համբուրէ, յորժամ դառնայ եւ ապաշխարէ, որպէս յայտ է յանառակ որդւոյն, զի եկ ընդ յառաջ եւ համբուրեաց զնա (հմմտ. Ղուկ. ԺԵ. 20):

Զ. Վեցերորդ՝ նշանակէ զմխիթարութիւն, զի որպէս հայրն յետ լալոյ առնու զորդին ի գոգն եւ մխիթարէ զնա. այսպէս եւ Աստուած Հայր, զչարչարեալսն եւ զնահատակեալսն յետ աստի կենացս մխիթարէ ի հանդերձեալսն, որպէս ասէ իմաստունն. «Սակայն ինչ խրատեալք գտցեն զմեծ բարութիւնս» (հմմտ. Իմաստ. Գ. 5), *զի Աստուած փորձեաց զնոսա որպէս զոսկի ի բովս, այսինքն՝ չարչարանաւք մարմնոյն մաքրեաց զժանգ մեղացն:*

Է. Եաթներորդ՝ զամենեւիմբ զուրախութիւնն նշանակէ որդւոց ի գիրկս հաւրն, այսպէս եւ սրբոցն ի տեսութենէն Աստուծոյ անտրտում ուրախութիւն դիպի, որպէս ասէ Տէրն. «Դարձեալ տեսից զձեզ, եւ ուրախ լիցին սիրտք [ձեր], եւ զուրախութիւնն [ձեր] ոչ ոք հանիցէ ի ձէնջ» (Յովհ. ԺՁ. 22):

Ը. Ութերորդ՝ նշանակէ զամենայն բարութեանց վայելումն որդւոյ ի գիրկս հաւրն. այսպէս եւ սրբոցն յարքայութեանն՝ ըստ խոստման բանին. «Ի սեղան Հաւրն նստեցուցանել եւ անցեալ պաշտել» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 37):

Թ. Իններորդ՝ զի փոքր մանուկն առնու հայրն ի գիրկն, որ նշանակէ զանմեղութիւնն արժանացելոցն՝ ըստ այնմ, որ. «Առ մանուկ մի, կացոյց ի մէջ նոցա եւ առեալ ի գիրկս՝ աւրհնեաց եւ ասէ. «Որ ոք ոչ դառնայցէ եւ լինիցի անմեղ, իբր զմանուկ՝ [ոչ մտցէ ի նա]» (հմմտ. Ղուկ. Թ. 47-48):

Ժ. Տասներորդ՝ զանհեռանալի մերձաւորութիւնն նշանակէ գոգ հաւրն. այսպէս եւ առաքեալն ասէ. «Ամպովք ընդառաջ Տեառն ելցուք» (հմմտ. Ա. Թեսաղ. Դ. 16), *եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք, որ եւ կեանք է յաւիտենից՝ ըստ այնմ.* «Եկայք աւրհնեալք Հաւր Իմոյ» (Մատթ. ԻԵ. 34):

Իսկ ասա՛ է տարակոյս ինչ, թէ վասն է՞ր զանուն աղքատին ասաց, եւ զմեծատանն՝ ոչ:

Ա. Նախ՝ այսպէս ասեն վարդապետք, թէ զառաջնոցն զբարի անուանս ունէր մեծատունն, վասն որոյ ոչ յիշեաց, զի մի՛ զբարի անունն ի վերայ չարեացն դիցի:

Բ. Եւ երկրորդ՝ զի ի ժողովրդենէն, որք լսէին, է՞ր ոք անուամբ մեծատանն, խնայեաց ի նա, զի մի՛ խռովեսցի, կարծելով, թէ առ նա իցէ բանն:

Գ. Եւ երրորդ՝ այլ յայտնագոյն, զի անուանք մեղաւորաց ջնջեալ են ի դպրութենէ կենաց, որպէս Դաւիթ ասէ. «Ջնջեսցին նոքա ի դպրութենէ [քումմէ կենաց] եւ ընդ արդարս [քո] մի [գրեսցին]» (Սաղմ. ԿԸ. 29): «Մի՛ յիշեսցի [անուանս նոցա ի շրթունս իմ]» (Սաղմ. ԺԵ. 4):

Իսկ զի՞ զմեծատանն թաղումն ասէ եւ զաղքատին՝ ոչ:

Այն է, զի զոր ինչ արար մեծատունն յերկրի առ բարեկամքն եւ այլն, ուտելն եւ ըմպելն եւ փառաւոր կենալն, այնքան զաւրեցին, մինչ զի ի գերեզմանն իջուցին, այլ յետոյ ոչ ինչ կարացին առնել: Ուստի ուսանիմք, ո՛վ մեծատունք, զայն բան, յորում զոր ասաց յառաջագոյն Տէրն, թէ՝ «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան» (Ղուկ. ԺՁ. 9), *զի յորժամ պակասիցի այս, լինիցի մեզ տեղի յայնմ արքայութեանն, զի աստի պարտ է չինել զարքայութիւնն զայն: Ապա թէ անհոգ կենամք, որպէս զմեծատուն՝ ուտելով եւ ըմպելով, եւ զայն կեանքն ոչ հոգամք. ուրեմն աւրինակ է մեզ մեծատունն՝*

ստուգիւ պապակիմք ի տապոյ մեղաց չարեացն: Իսկ զաղքատին ոչ յիշեաց, զի մեծ քան զայն էր, որ ի կենդանութեանն չարչարանքն: Եւ դարձեալ, զի ի կենդանութեանն չունք էին սպասաւորք նմա, ո՞վ էր, որ թաղէր զնա: Ուրեմն յայտ է, զի ոչ թաղեցաւ, զի աստ զչարչարանքն կատարելապէս ընկալաւ, վասն որոյ բարեացն կատարելապէս հասաւ: Իսկ արդ, ասելով զայս զաղքատս անթաղ թողցուք, եւ կամ զթաղեալսն այպանեսցուք: Այլ ի վարքն հայել արժան է, զի թէ վարք արդարոյն գոյ ի մեռեալն, ոչ ինչ պակասեցուցանէ թաղելն, եւ թէ ոչ՝ ոչ յաւելու: Նոյնպէս եւ աղքատն, թէ բարիւոք գնացս ունի, ոչ պակասեցուցանէ չթաղելն, եւ թէ ոչ ունի գործս բարիս, թէ քան զլերինս բարձրացուցանէ զգերեզմանս նոցա, ոչ ինչ յաւելու: Իսկ զայս, զոր Ղազարոս պատմեցաք, զոչ թաղելն ոչ թէ հարկիւ ասացաք, ամենայն արդար անարդ լինել ի մահուանն, եւ մեծատուն մեղաւորին փառաւորել, այլ միայն կարճամտացն ասացաք, որք յերեւելիս եւեթ հային եւ իմանալեացն չեն տեսողք, քանզի ահա բազում արդարոց քաջավայելուչ են շիրիմք նոցա, եւ բազում անաւրէնք անթաղ մնացին եւ ոչ ինչ սոքա գրեցան առ Աստուած ի հատուցումն նոցին: Իսկ մեր բանս վասն Ղազարու անարդ կրիցն մարմնոյն եւ բարձրատոհմութեան հոգւոյն եւ մեծատան վշտացն է: Իսկ լսելով զայն, թէ Ղազար ի գոգն Աբրահամու, եւ մեծատունն ի դժոխս պապակէր, մի՛ կարծեր հակառակ բանից առաքելոյն, որ ասէ. «Չեւ եւս ընկալեալ զաւետիսն Ապտուծոյ լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին» (հմմտ. Եբր. ԺԱ. 39- 40), *զի դեռեւս ի դժոխք էին հոգիքն, եւ Տէր մեր ոչ էր խաչեալ, որով աւերաւ դժոխքն, որպէս ասացաւ յառաջագոյն: Զի վասն դժոխոցն, որ յառաջ քան զչարչարանքն Տեառն, պարտ է այսպէս գիտել, զի դժոխքն է ի ներքին մասն երկրի, եւ զի նախ քան զԲրիստոս ամենեքեան անդ գնային՝ արդարք եւ մեղաւորք, եւ մի է դժոխքն եւ ոչ բազում, որպէս հաչեն երկաբնակքն, զոր ցուցից աւրինակաւ երկրի ըստ չորից եղանակաց զկերպ բնակելոյ անդ ի միասին արդարոց եւ մեղաւորաց:*

Ա. Նախ՝ զոր աւրինակ երկիր պատժապարտութեան տեղիք էր, եւ ամենեքեան ի միասին բնակեն՝ արդարք եւ մեղաւորք, այսպէս եւ ի մի դժոխքն բնակէին արդարք եւ մեղաւորք, եւ ոչ է բազում դժոխս, այլ մի: Այլ եւ այս գիտելի է, զի յարքայութիւնն երկնից ոչ՝ոք էր յայնժամ եւ ոչ այժմ՝ ի դժոխքն, այլ ամենեքեան առ հասարակ ի մի դժոխք էին:

Բ. Երկրորդ՝ զի յերկրիս յայսմ զոմանս տանջեն դեւք, այսինքն՝ զչարսն եւ յոմանց հալածական լինին. այսպէս եւ ի դժոխս ոչ գոյր այրիչ, որպէս ի հանդերձելումն, զի այն հուրն տանջիչ ի միւս անգամ գալստեանն կազմի: Այլ զչարսն դեւք տանջէին եւ ի սրբոցն հալածականս լինէին: Եւ այս եւս գիտելի է, զի ի հանդերձելումն դեւք ոչ զոք տանջեն, այլեւ ինքեանք տանջին ի հուրն՝ ըստ այնմ. «Երթա՛յք [յինէն, անիծեալք] ի հուրն յաւիտենականն, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա» (Մատթ. ԻԵ. 41):

Գ. Երրորդ՝ զոր աւրինակ ի մէջ քաղաքի բազում տեղիք, ոմանց՝ դարպաս, ոմանց՝ խանութ, ոմանց՝ բանտ, եւ ոմանց՝ տանջանարանք, ոմանց՝ հանգստարանք. այսպէս եւ ի դժոխս. ոմանց՝ տանջանք եւ կսկիծ, որպէս սոդոմայեցւոց, մեծատանն եւ այլոցն, եւ ոմանց՝ հանգիստ, որպէս Աբրահամու եւ այլ նահապետացն:

Դ. Զորրորդ՝ զի աստ դեւք մեղաւք եւ անհաւատութեամբ ծառայեցուցին. անդ անխնայ անհնարին լկանաւք չարչարեն: Իսկ սուրբքն ի մարմնի գոլով հալածէին զդեւս եւ թէպէտ ի դժոխքն գնացին վասն պարտուց նախահաւրն, սակայն զաւրութեամբն Աստուծոյ հալածէին զդեւսն, զի չիք ինչ տեղիք, ուր ոչ է ձեռն ամենակալին: Եւ դարձեալ՝ զոր աւրինակ աստ առ Եղիսէիւն տեսաք, բանակք հրեշտակաց (տե՛ս Դ. Թագ. Բ. 11-14) *նոյնպէս եւ անդ էին, որ եւ յատուկս դժոխոցն գոլով մեծատանն, համբարձ զաչս եւ ետես զԱբրահամ ի հեռաստանէ եւ ասէ.*

«Հայր Աբրահամ՝ ողորմեաց [ինձ եւ] առաքեա՛ զՂազարոս, զի թացցէ զծագ մատին [իւրոյ ի ջուր]» (ԺԶ. 24):

Եւ աստ եւս բազում յիմարութիւն երեւի մեծատանն:

Ա. Նախ՝ զի անտի կեանքն զգործն Աբրահամու ոչ գործեաց, որով որդի լինէր նմա: Իսկ իմացեալ զտանջանսն՝ «Հայր» կոչէ զնա:

Բ. Երկրորդ՝ զի յայն կեանքն ոչ ումեք ողորմեցաւ, իսկ ի դժոխքն ասէ. «Ողորմեա՛ ինձ»:

Գ. Երրորդ՝ զի յիւր կեանքն առ Ղազար ոչ գնաց եւ ոչ ետես զնա ի հիւանդութեանն, իսկ ի դժոխս զՂազար առ ինքն մեծարէ:

Դ. Զորրորդ՝ զի ի յիւր կեանսն Ղազարու ոչ ետ ի փշրանաց սեղանոյ իւրոյ, իսկ ի դժոխս Ղազարու գալ,- ասէ,- «թանալ զծագ մատին եւ զովացուցանել» (Ղուկ. ԺԶ. 24)*:*

Ե. Հինգերորդ՝ զի ի յիւր կեանքն ի հանգստութենէն ոչ ումեք հաղորդեցոյց, անդ զտապն պատմէ: Եւ դարձեալ ասէ անգիտութեամբ, եթէ հայր ես, արդարութիւն արա, զի զՂազար զհնգէն մինն մեղք է արարեալ, եւ նովին չափով ես՝ արդարութիւն: Արդ, հաւասարաբաշխութիւն արա՛ եւ առաքեա՛ զդա, զի մի մասն տանջի, եւ ես՝ մի մասն հանգչիմ, զի զայս ունի խորհուրդ, որ զծայր մի մատինն յիշէ: Եւ զի ծայրն յիշէ, այն է, զոր աւրինակ ծայր մատինն փոքր է, այսպէս եւ արդարութիւն մեծատանն կարի փոքր էր: Իսկ «տապ» զնեղութիւն զիւացն ասէ, որ լկէինն: Իսկ «զովացուցանել»՝ զհալածումն ասէ դիւաց: Եւ զոր աւրինակ՝ յերկրի այսակիրք ապաւինին ի սուրբսն՝ զերծանել ի վտանգէն, զոր կրեն ի դիւաց: Նաեւ մեծատունն գիտէր, զի սուրբքն ունէին կարողութիւն ազատել ի դիւաց: Իսկ զի լեզու յիշէ, այն է հայհոյութեամբն, զոր մեղանչելովն նովիմբ տանջի: Իսկ արդ, տե՛ս՝ զի՞նչ տա պատասխանի:

Ա. Նախ[1]*«Յիշեայ» ասէ, այսինքն՝ զքո բարիսն եւ զՂազարու չարչարանսն, եւ զի ոչ եմ անիրաւ, զի դու մի մասն բարեացն փոխարէն զկեանսն ընկալար, եւ սա նոյնպէս զտանջանսն: Արդ, դատաստանն ձեր վճարեալ է, վասն որոյ.*

«Սա ասէ մխիթարի, եւ դու՝ այդր պապակիս» (ԺԶ. 25):

Բ. Եւ երկրորդ՝ զի ողորմութեան չափ եւ սահման է այն յաւիտեան, եւ մինչ դեռ ի մարմնի էր եւ քան զայն անցանել ոչ է, զի այս աւտարս արդարութեան է եւ ոչ ողորմութեան, վասն որոյ «սա ասէ մխիթարի եւ դու այդր [պապակիս]»:

Գ. Եւ երրորդ՝ զի աւրինաւքն ոչ արդարացուցար, ընդ քեզ ի դժոխս իջուցեր, ոչ է հնար քեզ ելանել այսի: Նոյնպէս եւ զՂազարոս ոչ ունի ասի ելանել, վասն որոյ եւ ես թէպէտ կարի ողորմած եմ, ասա՝ անողորմ գտանիմ: Նոյն է եւ այժմ ժամանակի, եթէ ոք մեղաւք ի գերեզման մտանէ, եւ թէպէտ հիմա ոչ առնու զհատուցումն, սակայն ի հանդերձելումն նոյնն պատահի, զոր եւ ասէ մեծատանն. «Դու ընկալար զմխիթարութիւնն» (հմմտ. Ղուկ. Զ. 24), *զի զայն*

[1] Դ՛ լս

ընտրեցեր, այսինքն՝ զագահութիւնն եւ զշուայտանալն եւ զայլն, եւ դու ասացեր, թէ ոչ է պարտ վշտացելոցն առնել սփոփանս եւ խնամարկութիւն, վասն որոյ. «Սա ասէ մխիթարի, եւ դու այդր պապակիս»*: Արդ, իմացարուք, եղբարք, զի որք աղքատին ասեն ոչ ողորմել, ինքնին հատանեն զողորմութիւն իւրեանց յԱստուծոյ, զի զոր աստ առնեն, նոյնն եւ անդ պատահին, վասն որոյ ասէ.*

«Վիհ մեծ է ընդ մէջ մեր եւ ընդ մէջ ձեր» (հմմտ. ԺԶ. 26):

Այսինքն՝ հեռի է փառք մեր ի ձեր տանջանաց: Եւ կամ դարձեալ՝ ոչ ոք աստ եկեալ արդարանալ կարէ, եւ ոչ, որ արդարն է՝ մեղանչել, այն է ասելն.

«Ասպի ա[ն]դր ոչ կարեն անցանել» (հմմտ. ԺԶ. 26):

Իսկ մեծատունն յինքենէ յուսահատեալ՝ սկսաւ վասն ազգականացն աղաչել.

«Առաքեա՛ ի տուն հաւր իմոյ» (հմմտ. ԺԶ. 27):

Վասն զի ուսաւ, թէ լաւ է զայնքան ժամանակն տանջել, որպէս Ղազարու, եւ անդ հանգչել, քան թէ տէր լինել ամենայն աշխարհի եւ ի կատարածին դժոխոցն ժամանել: Նոյնպէս եւ մեզ ուսանել արժան է, վասն զի ասէ Տէրն. «Զի՞նչ ազգուտ է մարդոյ, թէ զամենայն աշխարհս շահեսցի եւ զանձն իւր տուժեսցի» (Մարկ. Ը. 36), *զի զի՞նչ տացէ փոխանակ անձին իւրոյ: Ապա ընտրել արժան է՝ այսինքն՝ զամենայն կեանս մեր լնուլ կոծելով եւ տրտմութեամբ եւ հեծութեամբ եւ արտասուաւք մաշել զանձինս, եւ զամենայն աստի նեղութիւնս ոչ ինչ գրել, եւ զոր ինչ հեշտալի է, զամենայն ի բաց ձգել եւ կամաւ զճգնութիւն ի յանձին բերել, որովք զաղէտն զայն եւ զտարակուսանքն զայն ի բաց կարիցեմք ձգել, զոր փորձիւ ուսեալ մեծատանն աղաչէր, զի քարոզս առաքեսցէ, զի այսպէս կարծեաց նա, թէ եղբայրքն այլ այնպէս հաւատային, որպէս եւ նա հաւատաց փորձիւ: Ո՛չ գիտէ, թէ նոքա զիւր առաջին ախտն կրէին եւ ոչ հաւատային: Իսկ «եղբարք» զամենայն ընութիւնս է իմանալ, եւ «հինգ» ասելն* (Ղուկ. ԺԶ. 28) *վասն սգայարանացն թուոյ, զի մի՛ աչաւք խաբեալ կամ ականջովք եւ այլովք: Եւ եթէ ճշմարտութեամբ էին եղբարք չարք եւ անհաւատք, վասն որոց ողորմել աղաչէր: Իսկ Աբրահամ, տե՛ս՝ զինչ պատասխանէ՝ ասէ.*

«Ունին զբանք մարգարէիցն, ի նոցանէ լուիցեն զպանջանս մեղաւորաց եւ զփառս արդարոց» (հմմտ. ԺՁ. 29):

Եւ որք կամին, կարող են ապրեցուցանել զանձինս, զոր ասացան, քանզի լի են Աստուածաշունչ գիրք, որք սպառնան մեղաւորաց փախչել ի մեղաց: Իսկ նա վասն զի գիտէր, զի ոչ լսէին մարգարէիցն բանից, զի եւ ինքն ոչ լսեաց, ասէ.

«Ոչ հայր, բայց թէ ի մեռելոց երթան, յոյժ հաւատան» (հմմտ. ԺՁ. 30):

Իսկ աստ վեցերորդ՝ անմտութիւն է, զի ի կենդանութեանն ամենայն բանք մարգարէիցն առասպել թուէր, զի հեշտացեալ էր ի սէր ընչիցն, իսկ յորժամ զերծաւ ի հեշտութենէն եւ անմարմնութեամբն ծանեաւ զշահն լսելոյ, կարծէր, թէեւ նոքա լուիցեն: Իսկ Աբրահամ ճշմարտագոյնս գիտէր զբանք մարգարէիցն, քան զմեռելոց յառնելն: Ասէ, թէ՝

«Աստուածաշունչ գրոցն ոչ հաւատան, եւ ոչ թէ յառնեն ի մեռելոց, նոցա հաւատան» (հմմտ. ԺՁ. 31):

Եւ ստոյգ գիտասցուք, զի լաւագոյնք են բանք Աստուածաշունչք, քան թէ ոք ի մեռելոց յառնէ, վասն զի մեռելոյն բանն մարդոյ բան է, իսկ գիրք՝ Հոգւոյն Սրբոյ: Իսկ որք Հոգւոյն Սրբոյ ոչ հաւատան, եւ ո՛չ յարուցելոյն ի մեռելոց, եւ արդ, վասն զի բազումք գոն յայսմ ժամանակի, զի ոչ այնմ հաւատան, եւ ոչ՝ այնմ, քանզի յոյժ անհաւատացեալ են, բայց մեք, սիրելի՛ք, ունկնդիր լիցուք բանիցս աստուածային եւ պահեսցուք զմեզ ի մեղաց, զի մի՛ ընդ պապակողացն դասիցիմք: Մանաւանդ ողորմած լիցուք եւ ի միտ ածցուք զանողորմութեան դատաստանն մեծատանն, զի թէ ոչ պատրաստիցեմք զմեզ, անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ առնէ զողորմութիւն, իսկ եթէ կրեմք փոքր ինչ նեղութիւն ի սակաւ ժամանակս, անդ յաւիտենական կենացն հասցուք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որով եւ ընդ որում Հաւր միանգամայն եւ Հոգւոյն Սրբոյ վայել է փառք:

ԴԱՏԱՒՈՐ ԵՒ ԱՅՐԻ ԿԻՆ

Ղուկ. ԺԸ. 1-8

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Ասաց նոցա զառակս զայս առ ի հանապազ աղաւթել եւ մի ձանձրանալ (հմմտ. ԺԸ 1). «Դատաւոր մի էր ի քաղաքի միում, յԱստուծոյ ոչ երկրնչէր եւ ի մարդկանէ ոչ ամաչէր» (հմմտ. Ղուկ. ԺԸ. 1-2):

Ոմանք ի Քրիստոս վերաբերեցին զառակս, քանզի որպէս Աստուած յԱստուծոյ ոչ երկնչի, այլ եւ ի մարդկանէ ոչ ամաչէ, զի չէ ինչ յետին գործեալ. արդ եթէ դատաւոր արդարութեան է Քրիստոս եւ ամենայն ճանապարհք նորա իրաւամբք են, որպէս եւ են իսկ ըստ ոմանց մեկնութեանդ, անիրաւութեան դատաւոր լինի Քրիստոս, քանզի ի վերայ ածէ աւետարանագիրն յետ սակաւուց՝ ասելով. «Լուարուք, զինչ դատաւորն անիրաւութեան ասէր» (Ղուկ. ԺԸ. 6). եւ եթէ այդ զմտաւ ածել յետին յիմարութիւն է եւ ընդդիմակաց են միմեանց դատաւորն արդարութեան եւ անիրաւութեան:

Ապա մեկնելի է այսպէս. երկուս անիրաւս եւ չարս աստ իմասցուք մին՝ զդատաւորն անիրաւութեան եւ միւսն՝ զայրոյն աւսոխ, որ էր ընդ իշխանութեամբ անիրաւ դատաւորին, եւ մարթի ի չարսն ումեմն իշխել, եւ ումեմն իշխել, որպէս Բեէղզեբուղ «իշխան դիւաց» ասացաւ (Մատթ. ԺԲ. 24, Ղուկ. ԺԱ. 15, 18, 19). *արդ անիրաւութեան դատաւորն յԱստուծոյ ոչ երկեաւ, քանզի ետ խաչել զՈրդի նորայ, սպանանել եւ զմարգարէսն նորայ, եւ զառաքեալսն են մինչեւ ցայժմ եւս հալածանս ի վերա[յ] քրիստոնէից յարուցանէ ըստ ներելոյ Աստուծոյ այն դատաւոր ամբարտաւան եւ ամբարհաւաճ եւ ի մարդկանէ ոչ ամաչէ, արհամարհելով զազգ մարդկան: Իսկ* **«այրի ի քաղաքին»** (տե՛ս ԺԸ. 3)՝ *հոգի մարդոյն, այրի լեալ ի Քրիստոսէ, որ է փեսայ եկեղեցական հոգւոյ. այս այրոյ թողեալ զՔրիստոս, ապաւինէր ի դատաւորն անիրաւութեան՝ լկեալ յոսոխէն, ի դիւէ, իրաւունս խնդրէր ի դիւաց, զի թաւթափեսցի ի բռնութենէ աւսոխին. աւսոխս այս, որպէս ասացի, կա՛մ դեւ իսկ էր, որ լկէր, կա՛մ մարդ՝ հնազանդեալ սատանայի. իսկ դատաւորն անիրաւութեան յաշխատութենէ այրոյն առնէր, զոր ինչ խնդրէին: Եւ խրա-*

տէ առակս, թէ պարտ է անձանձրոյթ աղաւթել առ Աստուած, զի եթէ դատաւորն անիրաւութեան, որ ոչ յԱստուծոյ երկնչի եւ ոչ ի մարդկանէ ամաչէ, յաղագս դեգերելոյ եւ թախանձելոյ այրւոյն արար նմա դատաստան, ո՞րչափ եւս առաւել Քրիստոս՝ արդարութեան արեգակն եւ դատաւոր, լուիցէ աղաչանաց եւ պաղատանաց այնոցիկ, որք հանապազ պաղատին եւ աղաչեն զնա:

ԻԳՆԱՏԻՈՍ

Դատաւոր մի,- ասէ,- էր ի քաղաքի ուրեմն[1], յԱստուծոյ ոչ երկնչէր եւ ի մարդկանէ ոչ ամաչէր (Ղուկ. ԺԸ. 2):

Դէմք առակիս ոմանց թուեցաւ, թէ վասն Աստուծոյ ասացեալ է, զի ոչ ունի նա զոք ի վերոյ, քան զինքն Աստուած, թէ երկնչի[2] ի նմանէ եւ ի մարդկանէ նա ոչ ամաչէ: Արդ, որք զայս ասացին, զհետ կարգի բանիցն գնալ ոչ գիտացին, վասն զի ի կատարածի անդ բանի առակին դատաւոր անիրաւութեան զնա կոչէ, զոր վասն Աստուծոյ իմանալ կարի անտեղի է, քանզի դատաւոր է նա իրաւանց եւ արդարութեան, բայց մեզ ըստ պատշաճի իրացն քննել արժան է: Արդ, զմիտս, ասէ, դատաւոր՝ ի քաղաքի բնութեանս, վասն զի եւ բնութիւնս իբրեւ քաղաք իմն ընդարձակ է, եւ մտանեն, շրջին եւ բնակին ի սմա չարք եւ բարիք. եւ են զգայութիւնքս ի մեզ՝ դրունք, որ ընդունին զմտեալսն: Իսկ միտքն է դատաւոր եւ ընտրիչ՝ որպէս կամի, կրէ եւ չտեմարանեալ պահէ եւ զոր ոչ ախորժէ, ի բաց դառնայ եւ արտաքոյ փակեալ պահէ կամ թէ մտեալ իցէ՝ արտաքս հանէ: Եւ այս է, որպէս է՝ առ ոմանս չարս լինել կամ բարիս: Բայց աստ վասն չարի ուրուք եղելոյ են բանք, զի ահաւասիկ յԱստուծոյ ոչ երկնչէր եւ ի մարդկանէ ոչ ամաչէր: Արդարեւ, այսպիսի են միտք վասն նրբութեան եւ ծածուկ գոլոյն՝ երկիւղն Աստուծոյ արհամարհեալ է ի նմանէ եւ իրագէտ վկայութեամբ, որով քննէ զամենայն ապիրատութիւնս. ամենայն ինչ յայտնի է նմա, եթէ գործեաց ինչ աղտեղագոյն, եթէ մտածութիւն ինչ անաւրէնից է[3] առ նա, եւ ի խորհուրդս զազրացեալ՝ շաղի ընդ ամաւթալիսն: Սակայն, ըստ որում ասացաք, վասն զի ոչ տեսանի, ի մարդկանէ ոչ ամաչէ: Եւ արդ, այսպէս զարատաւոր կիրս եւ

[1] ԻՏ ուրումն
[2] ԻՏ երկնիչցի
[3] ԻՏ անաւրինեցաւ] անաւրէնից է

զվնասակար ցանկութիւնս հանապազորդ յինքն ձգեալ՝ խստացեալ է ընդդէմ սպառնալեացն Աստուծոյ եւ զամաւթ առ մարդկան ինչ ոչ գրէ: Առ այսպիսի դատաւոր մատուցեալ այրի հոգին, զրկեալ յոսոխէ[1] մարմնոյն աղաչէ, զի դատ արասցէ, զի մի ամենայնիւ պակասեալ ի բարեաց, կորիցէ, վասն զի կարի մեծ եւ անբերելի տագնապ է ոգւոցն[2] դատարկանալն ի բարեաց: Թէպէտ եւ ապշելոցն ոչ երեւի, սակայն ոգին, որ կրէ զապականութիւնն՝ մարմնական ախտիւք լցեալ, բողոքէ առ միտսն, զի դատ արասցէ: Եւ է դատելն մտաց, յորժամ բաժանէ զմարմնոյն չափով կարեաց ընութեանն տալ, որ ի հաստատութեան պահէ զնա եւ ոչ այնչափ հեղուլ ի նա զարատաւոր կիրս վայրապար ցանկութեանց: Ըստ նմին եւ ոգւոյն[3] մասին զիւրն պատշաճ առաքինութիւն, որով եւ ոգին[4] պահէ զիւրն կենդանութիւն եւ մի կրիցէ զմեղացն մահ: Եւ է բողոքելն ոգւոյն առ միտսն այն, յորժամ զղջացեալ երբեմն՝ խոցոտեն զմիտս մեր յիշատակք վատթար գնացիցն մերոց եւ հեղգութեան, որով զժամանակն ծախեցաք եւ ստրջացեալ մեր՝ յապաշաւանս դառնամք: Է երբեմն, զի առանց ջանալոյ յարտասուս ցնդիմք եւ աստի կենացս յատելութիւն դառնամք եւ զարձակելն խնդրեմք. այս ամենայն ի թախանձելոյ հոգւոյն է: Բայց սակայն ցանկութիւն մեղացն, ընդ որում կապեալ է, ոչ տայ թոյլ առժամայն մերկանալ զչարն եւ ազատել զանձն ի պատժոց, այլ հայի ի ժամանակն: Եւ առժամայն ընտրէ զախորժակսն մարմնոյն տալ եւ յառաջիկայ ժամանակն ընկենու զբարեգործելն: Եւ ապա, այսու սնոտի յուսով զինքն խաբեալ՝ յանկարծակի լուծեալ ի կենացս, անպատրաստ եւ դատարկ ի գործոց բարեաց գտեալ՝ մտանէ ընդ մշտնջենաւոր կապանաւք, յորում[5] առաջին վստահանալն ժամանել ոչ զաւրեաց: Այլ աստ բանք են, որոց զղջումն յաղթեաց, վասն այնորիկ ասէ.

Թէպէտ եւ յԱստուծոյ ոչ երկնչիմ եւ ի մարդկանէ ոչ ամաչեմ, գոնեայ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ, զի մի ի սպառ եկեալ, թախանձիցէ զիս[6] (ԺԸ. 4):

[1] ԻՏ ի յոսոխ] յոսոխէ
[2] ԻՏ ոգւոցն
[3] ԻՏ հոգւոյն
[4] ԻՏ հոգին
[5] ԻՏ որում
[6] ԻՏ ինձ

Այս յայտնի է առ ոմանս[1]*, որ ի խղճէ մտացն տագնապին եւ առ ի չժուժել նեղասրտութեանն եւ տրտմութեանն, որ ի յիշատակէ մեղացն կրեն, հեղուն զանձինս ի լաւագոյնսն: Եւ են, որ անյուսացան, եթէ հնար է ապաշխարութեամբ հասանել արդարութեան, եւ ոչ կարացեալ տանել խղճի մտացն, ի խեղդ մտաբերեցին: Արդ, այսպէս զաւրաւոր եւ դժուարակիր է հոգւոյն թախանձելն զմիտսն յիշատակաւ մեղացն, վասն այնորիկ ասէ.* «Թէեւ յԱստուծոյ ոչ երկնչիմ»: *Այսինքն՝ թէ եւ չգոյր ինչ յԱստուծոյ կարգեալ ի վերայ անբարշտաց տանջանք եւ ոչ դատաստանաւ հատուցանել վրէժս եւ ի մարդկանէ ոչ մի ինչ ամաւթոյ եւ նախատանաց կիրք, գոնեայ վասն աշխատ առնելոյ զիս մտացս խղճի, լաւագոյն է դառնալն յարդարութիւն եւ ազատանալ ի տրտմական կրից աստի: Եւ այս է ասելն.* «Զի մի իսպառ եկեալ՝ թախանձիցէ զիս»: *Գիտէ, զի ի լաւագոյնսն փոփոխել*[2] *ազատէ յայսպիսի տխրական կրից եւ ի նոյն մնալն՝ թախծեալս պահէ զոգին: Եւ արդ, ըստ որում առ անիրաւ տնտեսիւն ասաց, եթէ՝* «Գովեաց Տէր զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար» (Ղուկ. ԺԶ. 8), *զնոյն եւ աստ առնէ, վասն որոյ ասէ.*

Լուարո՞ւք՝ զի՞նչ դատաւորն անիրաւութեան ասէր: Իսկ Աստուած՝ ո՞չ առնէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ աղաղակեն առ նա ի գիշերի, եւ երկայնամիտ միայն լինիցի առ նոսա (ԺԸ. 6-7):

Զի թէ զանմարդի եւ զվայրենամիտ դատաւորն բազում մաղթանքն հաւանեցոյց դառնալ յիրաւունս, քանիա՞ն ապա զարդարադատ բնութիւնն, որ եւ յամենայնի պատրաստէ տալ խնդրողին՝ միայն թէ՝ զարժանն խնդրիցեմք, որ մեզ աւգտակար իցէ եւ նմա տալն՝ պատշաճ: Արդ, վասն զի ի սկիզբն[3] *բանին յայն եդ, եթէ պարտ է ստէպ յաղաւթս կալ եւ ոչ ձանձրանալ եւ տալոյն երաշխաւոր լինի եւ անիրաւ դատաւորաւն զիրաւացին հաւատարիմ առնէ: Եւ թէ ժամանակաւ երկայնամիտ լինի, մեզ կարճամիտ լինել չէ աւրէն: Ցուցանէ եւ աստ մեզ ոսոխ զստանայ եւ վրէժխնդիր զԱստուած, զի ընդ ամենայնի, որչափ նեղէ զմեզ, ունի վրէժս հատուցանել Աստուծոյ: Դարձեալ եւ զչարս ի մարդկանէ զարհուրեցուցանէ, որք նեղեն զտնանկս, զի թէպէտ եւ զրկելոց չէ պարտ աղաւթիւք զԱստուած ի վրէժխնդրութիւն կոչել, սակայն նա ինքն զդատաստանս իւր դատէ՝ ըստ այնմ.* «Իմ է վրէժխնդրութիւն, եւ ես հատուցից» (Հռոմ. ԺԲ. 19): *Վասն որոյ եւ աստ մեծաւ պնդութեամբ զնոյն կարգէ.*

Այո՝ ասեմ ձեզ,- ասէ,- առնէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի (ԺԸ. 8):

Զի որ չարքն իցեն, մի արհամարհիցեն վասն երկայնմտութեանն, այլ երկիւղիւ վրեժխնդրութեանն չարչարեսցին, եւ որ նեղեալ են, յուսով մխիթարեսցին: Արդ, այս ամենայն ի կատարածի անդ ունի զտեսութիւն, զի ի դատաստանի կացեալ Աստուծոյ՝ դատի[1] *արդարութեամբ: Եւ թէպէտ մասնաւոր աստ ցուցանէ երբէք ուրեք առ արդարս կամ առ մեղաւորս, սակայն ամենայն իրաւունք նորա առ ամենեսեան պահեալ է իւրում ժամանակին, վասն որոյ յորմէ սկսաւ, ի նոյն աւարտէ զբանն.*

Իսկ որդի մարդոյ,- ասէ,- եկեալ, գտանիցէ՞ արդեաւք հաւատս յերկրի (ԺԸ. 8):

Զի յայտ լիցի, թէ ամենայն գործք բարիք, սպառեալ, պակասին յերկրէ եւ միայն թէ աստուածգիտութիւն մնացեալ իցէ[2]*, եւ այն՝ առ ոմանս, քանզի զայս արդեաւքն յայտ առնէ, վասն զի նեռն եկեալ՝ յանբարի աւուրսն յայնոսիկ եւ զաւրացեալ իշխանութեամբ ընդ կրաւնիցն տայ պատերազմ՝ բառնալ զնա:*

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Դատաւոր մի էր (Ղուկ. ԺԸ. 2):

Կր. *Զիշխանական միտսն ասէ, որ ի մէջ մարմնոյն եւ ոգոյն որպէս կամի ներգործէ, երբեմն ի բարիսն միտելով, որ են հոգեկան առաքինութիւնք, եւ է, զի զմարմնական վատթար ախտն:*

ԻԳ. *Արդ՝ միտքն է դատաւոր, եւ ընտրէ որպէս եւ կամի: Եւ կրէ եւ յշտեմարանի պահէ: Եւ զոր ո՛չ ախորժէ, ի բաց դառնայ եւ արտաքոյ փակեալ պահէ, կամ թէ մտեալ եւ արտաքս հանէ: Եւ*

[1] ԻՏ ոմանց
[2] ԻՏ փոխել] փոփոխել
[3] ԻՏ զսկիզբն

[1] ԻՏ դատէ
[2] ԻՏ լիցի] իցէ

այսպէս ոմանք բարիք եւ ոմանք չարք լինին: Բայց աստ վասն չար մարդոյ է առակս:

Սպ. *Անիրաւի եւ չարի:*

Ի քաղաքի (ԺԸ. 2):

Կր. *Աշխարհս ընդարձակ*

Իգ. *կամ զբնակութիւն մարդկան ասէ, որ մտանեն եւ շրջին: Եւ բնակի[ն] ի սմա չարք եւ բարիք: Եւ զդայութեանս գրունք են, որ ընդունին զմտեալսն:*

ՅԱստուծոյ ո՛չ երկնչէր եւ ի մարդկանէ ո՛չ ամաչէր (ԺԸ. 2):

Իգ. *Այսպիսի են միտքն վասն նրբութեան եւ ծածուկ գոլոյն: Աստուծոյ երկի[ւ]ղն արհամարհեալ է ի նմանէ: Եւ իրաւագէտ[ն] վկայէ, որ քննէ զամենայն ապիրատութիւն եւ ո՛չ թաքչի ինչ ի նմանէ գործք աղտեղիք, թէ մտածութիւն անաւրէն էառ, զի գարշ խորհրդով շաղի ի զազրալիս: Սակայն, զի մարդիկ ո՛չ տեսանեն, եւ նա ո՛չ ամաչէ՝ զարատաւոր կիրս եւ վնասակար ցանկութիւնս հանապազ յինքն ձգելով: Եւ խստացեալ է ընդդէմ սպառնալեացն Աստուծոյ, եւ զամաւթ մարդկան չգրէ ինչ:*

ՍՏ *Քանզի յԱստուծոյ ո՛չ երկեաւ եւ ետ խաչել զՈրդի նորա, եւ սպան զմարգարէս նորա եւ զառաքեալս: Եւ մինչեւ ցայժմ հալածանս ի վերայ քրիստոնէից յարուցանէ ըստ ներելոյն Աստուծոյ, դատաւոր ամբարտաւան եւ ամբարհաւաճ: Ի մարդկանէ ո՛չ ամաչէ՝ արհամարհելով զազգս մարդկան:*

Եփ. *Անիրաւութիւն նորա խիստ էր, զի համարձակեցաւ եւ էանց զերկի[ւ]ղիւն Աստուծոյ: Եւ ժպրհութիւն նորա արհամարհեաց զամաւթ մարդկան:*

Եւ այրի մի էր ի նմին քաղաքի (ԺԸ. 3):

Կիղ. *Հոգի մարդկան՝ անկեալ ի ճոխութենէ եւ ի փառաց դրախտին, եւ զրկեալ ի բարեաց:*

Իգ. *Զի կարի մեծ տագնապ է հոգոյն դատարկանալ յառաքինութենէ: Թէպէտ ափշելոցն մեղաւք ո՛չ երեւի, սակայն հոգին կրէ զապականութիւն՝ մարմնական ախտիւք լցեալ:*

ՍՏ *Հոգի մարդոյ այրի եղեալ է ի Քրիստոսէ, որ է փեսայ եկեղեցական հոգոյ:*

Գայր առ նա եւ ասէր (ԺԸ. 3):

Բողոքէր հոգոյն առ միտսն, յորժամ զղջացեալ խոցոտէ զմիտս մեր յիշատակաւ պիղծ գործոցն, որով զժամանակն ծախեցաք, եւ զղջացեալ յապաշաւանս դառնամք: Եւ երբեմն առանց ջանից արտասուեմք, եւ յաստեացս յատելութիւն փոխիմք, եւ զարձակեալն խնդրեմք: Այս ամենայնի թախանձել հոգոյն է:

ՍՏ *Ա[յ]րոյն թողեալ զՔրիստոս՝ ապաւինի ի դատաւորն անիրաւ՝ լլկեալ ի մեղացն անյագութեանց:*

«Դատ արա՛ ինձ» (ԺԸ. 3):

Իգ. Բարժանել չափով կարեաց մարմնոյն ընութեան տալ զհարկաւորն, որ ի հաստատութեան պահէ զնա եւ ո՛չ անչափն հեղուլ ցանկութեամբ: Ըստ նմին եւ հոգոյն մասն պատշաճ առաքինութեան, որով պահի ի կենդանութեան, եւ մի՛ կրեսցէ զմեղացն մահն:

«Յոսոխէ իմմէ» (ԺԸ. 3):

Սատանայ, որ զմարմինն միշտ զէն կազմէ զդայարանացն ցանկութեամբ ընդդէմ հոգոյն:

ՍՏ *Մարթի ի չարսն եւ յանիրաւսն: Ումեմն իշխել եւ ումեմն իշխիլ, որպէս Բեղզեբեղ իշխան դիւաց ասացաւ: Արդ՝ այրոյն իրաւունս խնդրէ՝ թաւթափեալ ի դառնութենէ ոսոխին, կամ դեւ էր, որ լլկէր, կամ մարդ՝ հնազանդեալ սատանայի:*

Եւ ո՛չ կամէր ի բազում ժամանակս (ԺԸ. 4):

Զմտացն վատթարագոյն յուժարութիւն[ն] ցուցանէ:

Կր. *Որ մեղաւքն կապեալ էր եւ ո՛չ տայր թոյլ մերկանալ զչարն եւ ազատել զանձն ի պատժոց: Այլ կայ ի ժամանակն, եւ առժամայն ընտրէ զախորժակս մարմնոյն տալ. յառաջակայ ժամանակն ընկենուլ զբարեգործելն: Եւ այս սնոտի յուսովս խաբէ զինքն, յայնկարծակի լուծանի ի կենաց աստի: Անպատրաստ, դատարկ ի բարի գործոց մտանէ ի մշտնջենաւոր կապանքն:*

Ասէ ի միտս իւր. «Թէեւ յԱստուծոյ ո՛չ երկնչիմ եւ ի մարդկանէ ո՛չ ամաչեմ» (ԺԸ. 4):

ԻԳ *Այսինքն՝ թէ չգոյր յԱստուծոյ կարգեալ տանջանք ամպարշտաց դատաստանաւն առնուլ վրէժս եւ ի մարդկանէ ամաւթ:*

«Գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրոյն՝ արարից նմա դատ» (ԺԸ. 5):

Մտացն խղճի[ւ] լաւագոյն է դառնալ յարդարութիւն եւ ազատիլ ի տրտմական կրից:

ԿՐ *Վասնզի ստէպ յիշելով զերկի[ւ]ղն Աստուծոյ սրտջացեալ մտացն՝ խորհրդածէ ի հոգեւորսն:*

ապ. *Խրատէ առակս, թէ պարտ է անձանձրոյթ աղաչել զԱստուած:*

«Զի մի՛ ի սպառ եկեալ թախանձիցէ զիս» (ԺԸ. 5):

ԻԳ *Արդ, այս յայտնի է ոմանց, որք ի խղճէմտացն կրեն տագնապ առ ի չժուժել նեղասրտութեանն, զոր յիշատակաւ մեղացն կրեն: Եւ են, որ հատանեն զյոյս ապաշխարութեան՝ ո՛չ արդարանալ նովաւ եւ ո՛չ տանելով խղճի մտացն, ի խեղդ մտաբերեցին: Զդժուարակիր է հոգոյն թախանձն, որ զմիտսն տանջէ յիշատակ մեղացն: Եւ գիտելով ի լաւագոյնսն փոխել՝ ազատի ի վշտացն կրից:*

Լուարարուք զի՞նչ դատաւորն անիրաւութեան արար (ԺԸ. 6):

ԿՐ *Այսինքն՝ զդարձումն մտացն, որ ի ստէպ յիշատակացն լինի: Զի ազաւթքն եւ հանապազ յիշատակ երկի[ւ]ղին Աստուծոյ դարձուցանեն զանիրաւ միտսն: Յաղագս դեգերելոյն եւ թախանձելոյն արար նմա դատաս[տան]:*

ԵՓ *Առաւել խիստ էր ժուլթիւն ա[յ]րոյն, որ խոնարհեցոյց զերկոսեանն, եւ զկնի իւր կամացն էած զայս, յետոյ դառն անիրաւ եւ ոսոխ փոխեաց ժուլթիւն: Եւ ետ պտուղ քաղցր, որ աւտար էր նոցա: Արդ՝ արար նոցա դատաստանս ուղիղ[ս] եւ հատուցումն արար կնոջ այրոյն:*

ԻԳ *Է՛, զի եւ զանմարդի եւ զվայրենամիտ դատաւորն հաւանեցուցին մաղթանքն բազում գալ յիրաւունս:*

Իսկ Աստուած ոչ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ աղաղակեն առ նա ի գուլ եւ ի գիշերի (ԺԸ. 7):

Եւ որք դառնան, Աստուած առնէ վրէժխնդրութիւն հոգեկանաց, այսինքն է՝ ձեռնատու լինի յառաքինասէր գործս առ ի ժուժկալութիւն, յորժամ աղաղակեն առ նա ստէպ աղաւթիւք եւ պաղատանաւք:

Եփ. Իսկ արդարութիւն Աստուծոյ պահանջել գիտէ, եւ ողորմութիւն Աստուծոյ կեցուցանել ճանաչէ: Թէպէտ եւ անաւրէնութիւն

նորա հակառակ էր արդարութեան նորա եւ չարութիւն նորա ընդդէմ էր ողորմութեան եւ քաղցրութեան նորա, որչա՞փ եւս առաւել կարեմք մեք ժուլթեամբ բռնադատել զողորմութիւն եւ զարդարութիւն Աստուծոյ: Զի տացէ նմա զպտուղ բնութեան իւրեանց, այսինքն՝ արդարութիւն նորա զվրէժս մեր խնդրէ ի սատանայէ եւ ողորմութիւն նորա հանդուսցէ զմեզ:

ՍՏ *Քրիստոս՝ արդարութեան արեգակն եւ դատաւոր[ն], լուիցէ աղաչանաց եւ խնդրուածոց այնոցիկ, որ հանապազ աղաչեն եւ պաղատեն զնա:*

Իգ. *Քանի առնէ արդարադատ բնութեանն, որ յամենայնի պատրաստէ խնդրողացն, միայն թէ զարժանն խնդրեսցեն, որ մեզ աւգտակար է եւ նմա պատշաճ: Վասնզի սկիզբն զայն եդ, թէ՝* «Պարտ է յաղաւթս կալ եւ ո՛չ ձանձրանալ» (ԺԸ. 1): *Եւ տալոյն երաշխաւոր լինի եւ անիրաւ դատաւորաւն զամէնարդարն Աստուած հաւատարիմ առնէ: Զի թէ ժամանակաւ երկայնամիտ լինի՝ [ի] տալոյն կարի անմիտ լինել ո՛չ է արժան:*

«Այո՛, ասեմ ձեզ, առնէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի» (ԺԸ. 8):

Իգ. Վասն այնորիկ ասէ զայս, զի որք չարքն իցեն՝ մի՛ արհամարհիցեն զերկայնմտութիւն Աստուծոյ, այլ երկի[ւ]ղիւ վրէժխնդրութեանն չարչարեսցին: Եւ, որ նեղեալքն են, յուսովն մխիթարեսցին, զի ի դատաստանի կացեալ Աստուծոյ՝ դատի արդարութեամբ: Թէպէտ եւ մասնաւոր ասա ցուցանէ, երբեք երբեք առ արդարս կամ մեղաւորս,

կի. *սակայն ամենայն իրաւունք նորա ի հանդերձեալ ատեանն ժամանեալ մնայ:*

Իսկ Որդի մարդոյ եկեալ՝ գտանիցէ արդեւք հաւատս յերկրի (ԺԸ 8):

Կր. *Հաւատս ասա ո՛չ զխոստովանութիւն Սուրբ Երրորդութեանն ասէ, այլ զսերտ եւ զանեղկբայ հաւատոցն, որովք կարողք եւ մարտիրոսքն զարիւնս իւրեանց հեղին վասն Տեառն:*

ԻԳ *Զի յայտնի լիցի, թէ ամենայն գործք բարիք սպառին յերկրէ, եւ միայն աստուածգիտութիւն[ն] մնացեալ լինի առ ոմանս: Քանզի զայս արդեւք յայտ առնէ, վասն զի Նեռն, եկեալ յանբարի յա-*

ուրբսն [յ]այնոսիկ եւ զաւրացեալ լինի իշխանութեամբ ընդ կրաւնից աստուածպաշտութեանն, տայ պատերազմ բառնալ զնա:

ՄԱՏԹԷՈՍ ՁՈՒՂԱՅԵՑԻ

Դատաւոր մի էր ի քաղաքի ուրումն, յԱստուծոյ ոչ երկնչէր եւ ի մարդկանէ ոչ ամաչէր: Եւ այրի մի էր [ի նմին քաղաքի] (Ղուկ. ԺԸ. 2-3):

Բարեխնամն եւ ամենագութն Յիսուս յամենայն ժամ կամի կեցուցանել զոգիս մեր եւ ոչ ունի նախանձ ըստ մերոյ անաւրէնութեան, նա թէեւ վասն մեր խաչեցաւ եւ զի՞ մեռաւ վասն մերոյ անաւրէնութեան. ուրեմն յայտնի է, զի կամի կեցուցանել զոգիս մեր, վասն որոյ զահ դատաստանին առաջի եդ մեզ այսաւր եւ պատմեաց զարհաւիրսն, մանաւանդ թէ զհատուցումն, որ անդ, զորմէ երկնչել տարակուսիմք, վասն որոյ մեծն եւ ամէնողորմն խնամէ զմեզ խրատիւ եւ առակաւ ցուցանէ մեզ ուսանել մեզ նա ի չարչարանաց զերծումն, վասն որոյ ասէ՝ **«կալ միշտ յաղաւթս եւ ոչ ձանձրանալ»**, *եւ ընդ նմին զառակն յաւրինէ.*

Դատաւոր մի էր ի քաղաքի (ԺԸ. 2):

Բայց՝ նախ տեսցուք, թէ ո՞վ է դատաւորն, եւ զի՞ ոմանք ասացին զԱստուած զոլ դատաւոր, պատճառելով, թէ ոչ ունի ի վերոյ ինքեան մեծ, յորոյ երկնչի եւ ոչ ի մարդկանէ ամաչէ, եւ ի յետին բան ոչ նայեցան, որ ասէ.

«Տեսանէք, զի՞նչ դատաւորն անիրաւութեան արար» (հմմտ. ԺԸ. 6):

Յորոց յայտնի ստութիւն այնմ բանի, վասն զի զԱստուած «դատաւոր արդարութեան» ուսաք ի Սուրբ Գրոց՝ ըստ այնմ. «Յարդարութիւն եւ յիրաւունս հաստատեալ է Աթոռ Նորա» (հմմտ. Սաղմ. ՁԸ. 15): *Այլ* **«դատաւոր»** *զմիտս մարդոյ ասէ, իսկ* **«քաղաք»**՝ *զմարդ, եւ* **«այրի»**՝ *զհոգին եւ զայլն նմանապէս, զոր ի կարգի ուսցուք:*

Ա. Նախ՝ տեսցուք, թէ զի՞նչ է գործ դատաւորին:

Բ. Եւ երկրորդ՝ թէ վասն է՞ր թիւրի դատաստանն:

Գ. Եւ երրորդ՝ թէ որպէ՞ս նմանի բնութիւնս մեր քաղաքի:

Դ. Եւ չորրորդ՝ ո՞ր է առաւելութիւն այսմ քաղաքի:

Ե. Եւ հինգերորդ՝ թէ զի՞նչ է ի դատաստան, զոր ոչ կամեցաւ առնել:

Զ. Վեցերորդ՝ թէ զիա՞րդ յետոյ արար:

Եկեսցուք յառաջին գլուխն եւ ասասցուք, թէ քանի են գործք դատաւորին:

Ա. Արդ, առաջին գործ է դատաւորին՝ լսել զբան դատախազացն, զոր ասեն:

Բ. Երկրորդ՝ քննել եւ որոնել զասացեալսն, թէ ճշմարտութեամբ ասեն, թէ՝ ոչ, թէ պատրուակաւ եւ զստոյգն հանել:

Գ. Երրորդ՝ զերկոսին դատախազին համանգամայն քննել եւ ոչ առանձին:

Դ. Չորրորդ՝ վկայս խնդրել Բ. (2) կամ երիցս՝ ըստ բանին Տեառն. «Յերկուց եւ յերից վկայից հաստատեսցի» (հմմտ. Մատթ. ԺԸ. 16):

Ե. Հինգերորդ՝ զսուտն սուտ առնել եւ զճշմարիտն՝ ճշմարիտ:

Զ. Վեցերորդ՝ վճիռ հատանել երկոցունց:

Արդ, ահա այս է գործ դատաւորին:

Իսկ միտքն, զի դատաւոր ետ Աստուած, ամենեւին ոչ կամեցաւ զմի ի սոցանէ ի գործ ածել: Եւ այս յայտնի ի պատճառացն, թէ՝

ՅԱստուծոյ ոչ երկնչէր եւ ի մարդկանէ ոչ ամաչէր (ԺԸ. 2):

Իսկ արդ, տեսցուք զերկրորդ գլուխն, թէ վասն է՞ր թիւրի ի դատաստանն: Եւ այս վասն Դ. (4) պատճառի:

Ա. Նախ՝ վասն անգիտութեանն, զոր ոչ իմանայ դատաւորն զուղիղն, այլ ըստ թիւր իմացմանն վատթար առնէ զդատաստանն:

Բ. Երկրորդ՝ զի առնու կաշառս, վասն որոյ կապի լեզու նորա՝ ոչ խաւսել զճշմարիտն:

Գ. Երրորդ՝ թէ երես առնէ կամ վասն մերձաւորութեան ազգականութեան, կամ վասն սիրելութեան, կամ վասն աղքատութեան եւ աղաչանաց:

Դ. Չորրորդ՝ թէ երկնչի ի բռնաւորաց եւ յիշխանաց եւ յաղագս այսոցիկ թիւրի դատաստանն:

Արդ, միտքն զայս ամենայն առնէ: Նախ՝ զի յիմարի ի մեղացն. զի ոգիք ըմբռնեալք ի մեղս ի մտաց եւս անկանին: Եւ ապա՝ առնու կաշառ զհեշտութիւն մեղաց, զի նախ նա հեշտանայ եւ ապա՝ մարմինն: Իսկ երես պահէ մարմնոյն. այս է, զի սիրեցեալ ի նմանէ վասն զկամսն կատարելոյ գործով եւ երկնչի եւս, գուցէ թէ դատ

առնէ, վնասեսցի բաժանմամբ: Արդ, պարտ է հոգւոյն, որ խաւարեալ է ի մեղս, յոյժ գոչալ եւ յԱստուած յուսալ, որ սաստեսցէ անխիղճ մտացն, զի արասցէ դատաստան:

Իսկ զերրորդ գլուխն տեսցուք, զի զբնութիւնս մեր քաղաքի նմանեցուցանէ, որպէս ասէ. «**Դափաւոր մի էր ի քաղաքի ուրեմն**»: *Եւ այս ըստ բազում յեղանակի:*

Ա. Նախ՝ զի քաղաքն ամրացեալ է պարսպաւք եւ բրգաւք. այսպէս եւ մարդն՝ մարմնով եւ ջլաւք եւ ոսկերաւք եւ նէարդեամբք:

Բ. Երկրորդ՝ զի ի քաղաքն են տունք բաժանեալք ի միմեանց. այսպէս եւ մարդն, զի գլուխն բաժանեալ է ի լանջացն. եւ ի գլուխն՝ տունս երիս՝ տեսողական, դատողական եւ յիշողական, նա թէեւ սիրտն որոշեալ է բոլորակութեամբն իւրով ի լերդէն եւ ի թոքոյն եւ երիկամունքն եւ այլն նմանապէս:

Գ. Երրորդ՝ զի յիւրաքանչիւր տուն գործի որիշ գործ ի քաղաքն. այսպէս եւ ի մարդն ի խելսն ունի որիշ գործ՝ բաժանումն առնել, այլեւ խելապատակն, նոյնպէս ստամոքսն՝ հալել, եփել եւ պարզել եւ արտաքս վտարել, եւ լերդն՝ կարմրել եւ ներկել, եւ սիրտն ընդ ամենայն յաւդուածս բաժանել եւ այլն նմանապէս:

Դ. Չորրորդ՝ զի զբարերարսն պահեն ի քաղաքի, իսկ զվատթարսն արտաքս հանեն. այսպէս եւ ի մարդն, զի ստամոքսն զգեղեցիկն ի գոլորշեացն առ խելապատակն առաքէ եւ զպարզ ջուրն՝ ի լեարդն, իսկ զդուրտն արտաքս վտարէ, այսպէս եւ խելապատակն՝ զաղի նորա յաչսն, եւ զդառն՝ ընդ ականջն, եւ զկծուն՝ ի քիթն, այսպէս եւ այլքն:

Ե. Հինգերորդ՝ զի սպասաւորք կարգեալ են ի քաղաքի՝ բերել ի նա զամենայն ինչ. նմանապէս եւ ի մարդն կարգեալ է. աչքն ծառայ է, զի տեսանիցէ, եւ ի ներքս ի միտքն տանի զկերպարն, զի ճանաչիցէ, եւ զձեռն, զի գործեսցէ, եւ զճաշակելիքն, զի մանրեսցէ, եւ հոտոտելիքն եւ այլն:

Զ. Վեցերորդ՝ զի բազում դրունք են քաղաքին. այսպէս եւ ի մարդն երկոտասան դրունք կարգեալ են յարարչէն, ընդ որում մտանեն եւ ելանեն: Այս է Բ. (2) ականջ, Բ. (2) աչք եւ Բ. (2) ռնգունք եւ մի բերան եւ Բ. (2) ծիծն, եւ պորտն, եւ յառաջքն եւ յետքն:

Է. Եաւթներորդ՝ զի են ի քաղաքին, որ բարեկամ են քաղաքին, եւ են, որ ոչ. այսպէս եւ ի մարդն կամի զառաքինութիւնն, որով

ապրի մարդն, իսկ մարմինն զհակառակն նորին խորհի,- ըստ առաքելոյ (տե՛ս Գաղ. Ե 17):

Ը. Ութերորդ՝ զի ի գիշերի դադարին ամենեքեան ի գործոց, որ ի քաղաքի. այսպէս եւ մարդոյն ի ննջելն դադարին ամենայն զգայարանքն ի գործոց իւրեանց:

Թ. Իններորդ՝ զի թագաւոր կարգեալ է ի քաղաքի, եւ նա նստի ի բարձր տեղւոջ. այսպէս եւ ի մարդն թագաւոր միտքն է, այն, որ նստի [ի] գլուխն՝ ըստ Սողոմոնի (տե՛ս Ժող. Բ 14):

Ժ. Տասներորդ՝ զի թշնամիք քաղաքին քակեն զքաղաքն եւ զինչսն տանին եւ փլուցանեն զշինուածսն, որ ի նմա. այսպէս եւ մահն զմարդն քակէ՝ զգեղեցկայարմար շինուածն, եւ զպատուականն ի նմա՝ զհոգին, հանէ ի նմանէ եւ զմարմինն լուծանէ ի միմեանց ապականութեամբ, վասն որոյ ասէ. «**Դափաւոր մի էր ի քաղաքի [ուրեմն]**»:

Հետեւմամբ տեսցուք զչորրորդ գլուխն, թէ քանի պատուականութիւն մարդոյս քաղաքի, քան զանշնչիցն: Եւ արդ, բազում պատուականութիւն սորա:

Ա. Նախ՝ զի քաղաքն ձեռագործ է մարդոյ, իսկ մարդն՝ Աստուծոյ:

Բ. Երկրորդ՝ զի քաղաքն բնակութիւն է մարդոյ, իսկ սա՝ Աստուծոյ, որպէս թէ քաղաքի է քաղաք:

Գ. Երրորդ՝ քաղաքն պատկեր է հողոյ, իսկ մարդն՝ Աստուծոյ:

Դ. Չորրորդ՝ քաղաքն անկենդան է, իսկ մարդն՝ կենդանի:

Ե. Հինգերորդ՝ զի քաղաքն՝ ապականացու, իսկ մարդն՝ անապական հոգւով:

Զ. Վեցերորդ՝ քաղաքն վասն մարդոյ ամենայն պիտոյիւք, իսկ մարդն՝ վասն Աստուծոյ:

Է. Եաւթներորդ՝ զի զաւրութիւն սորա եւ փառք անցաւոր է, իսկ մարդոյն՝ մշտնջենաւոր:

Ը. Ութերորդ՝ զքաղաքս աւերեալ շինէ ա՛յլ ոք, իսկ զբնութիւնս քակեալ, որ ստեղծ նա, շինէ յարութեամբն:

Թ. Իններորդ՝ մեծ է որքանութեամբ, զի սա ի տեղիս տեղիս, իսկ նա՝ յարեւելից մինչ ի մուտս եւ յայլսն:

Ժ. Տասներորդ՝ զի տեղիք այսմ քաղաքի է երկիր խոնարհ, իսկ մարդոյս քաղաք է երկին ի բարձունս եւ քաղաքակից հրեշտակաց:

Տեսցուք եւ զհինգերորդ գլուխն, թէ զի՞նչ է դատաստանն, զոր ոչ առնէ միտքն: Այս է ի հասանել ժամանակին ի գործ մեղացն հեշտանայ միտքն եւ թոյլ տայ առնել: Եւ զոր աւրինակ լուծ եղանց զերկոսինն ուղիղ վարէ, իսկ ի խոտորել լծոյն, խոտորնակի միակողմանի գնա նա. այսպէս զմիտքն՝ դատաւոր, եւ լուծ է դրել Աստուած ի վերայ հոգւոյ եւ մարմնոյ՝ առնել դատաստան եւ ուղղել, եւ ի միջինն գնալ ճանապարհ: Իսկ նա ոչ երկնչի ի նմանէ վասն բազում պատճառի:

Ա. Նախ՝ զի ոչ հաւատայ հատուցման գործոցն, թէ այս մեղացս վճարել կայ զփոխարէնն:

Բ. Եւ երկրորդ՝ զի զինքն միայն գիտէ եւ ոչ զայլ ոք:

Իսկ «ոչ ամաչի ի մարդկանէ».

Ա. Նախ՝ զի ծածուկ է եւ անտես ի մարդկանէ յամենեցունց:

Բ. Եւ երկրորդ՝ վասն նրբութեանն: Ուստի զամենայն ստուգապէս ճանաչէ, եւ թէ ուղիղ է բանն, նա ունի ամբարեալ եւ ամենեցուն հետեւող է: Յաղագս այնր, զի ոչ ոք տեսանէ զնա եւ յանդիմանէ, նմին իրի եւ ոչ ամաչի, եւ ոչ երկնչի, վասն որոյ եւ ոչ առնէ դատաստան արդար:

Քննեսցուք եւ զվեցերորդ գլուխն, թէ վասն է՞ր «այրի» *կոչէ զհոգին: Եւ այս վասն բազում պատճառի:*

Ա. Նախ՝ զի այրին յոյժ տառապանաւք կենայ, այսպէս եւ հոգին ի մէջ մեղաւորաց եւ անաւրէնաց՝ ըստ այնմ. «Տոռունք մեղաց պատեցան զինեւ» (Սաղմ. ՃԺԸ. 61):

Բ. Երկրորդ՝ զի միշտ աղաչէ այրին, եւ ոչ ոք լսէ. այսպէս եւ հոգին միշտ աղաչէ զմիտքն, եւ ոչ ոք լսէ նմա, որպէս եւ ասէ.

Այրի մի էր ի քաղաքին, գայր առ նա եւ ասէր. «Դատ արա՛ ինձ յոսոխէ իմէ»:

Եւ ոչ կամէր ի բազում ժամանակս (ԺԸ. 3-4):

Գ. Երրորդ՝ զի գծուծ է հանդերձիւ այրին. այսպէս եւ հոգին մերկ է ի բարեացն, յորժամ ի մեղքն է:

Դ. Չորրորդ՝ զի չունի ակնկալութիւն յումեքէ այրին. այսպէս եւ հոգին անյոյս լինի ի մէջ անհուն մեղացն:

Ե. Հինգերորդ՝ զի այրին «անայր» *կոչի. այսպէս եւ հոգին ի մէջ մեղացն անբարի կոչի:*

Զ. Վեցերորդ՝ զի «այրին» *այսպէս ստուգաբանի.* «այրի»՝ *այսինքն՝ կսկծի եւ խորովի, այսպէս եւ հոգին յոյժ կսկծի ընդ կորուստ իւր:*

Է. Եաւթներորդ՝ զի այրին իւրովի ջանայ եւ ոչ կարէ ապրել. այսպէս եւ հոգին առանց մարմնոյն ոչ կարէ արդարանալ:

Ը. Ութերորդ՝ զի այրին աղքատ լինի ամենեւին. այսպէս եւ հոգին աղքատ կոչի ի բարեաց կամ ի չարեաց:

Թ. Իններորդ՝ զի ամենայն ոք կամաւ ողորմի այրոյն եւ ոչ ի բռնութենէ հարկիւ. այսպէս եւ միտքն ոչ բռնութեամբ հարկիւ առնէ դատ հոգւոյն, այլ յինքենէ շարժեալ:

Ժ. Տասներորդ՝ բազում անգամ կամի այրին մեռանիլ եւ ոչ կարէ. այսպէս եւ հոգին ցանկայ ելանել ի ժահահոտ մարմնոյն եւ զերծանիլ ի նմանէ, որպէս ասէ Դաւիթ. «Տէր հան ի բանտէ զանձն իմ» (Սաղմ. ՃԽԱ. 8): *Վասն որոյ* «այրի» *կոչէ զնա:*

Հետեւաբար տեսցուք եւ զեաւթներորդ գլուխն, թէ զի՞նչ է դատաստան, զոր արար միտքն:

Արդ, այս է դատելն մտաց, յորժամ բաժանէ զմարմնոյն չափով կարեաց բնութեանն տալ վասն հաստատուն պահելոյ զնա, եւ ոչ անչափ հեղուլ ի նա զարատաւոր կիրսն: Նոյնպէս եւ զհոգւոյն մասինն՝ զիւր պատշաճ առաքինութիւնսն, որք զհոգին պահեն կենդանի, եւ զի մի կրեսցէ հոգի զմահ: [Ի]սկ բողոքել հոգւոյն առ միտս յերիս ժամանակս լինի:

Ա. Նախ՝ յորժամ զղջացեալ երբէք խ[ոց]ոտեն ի միտս, յիշատակելով զվատթար գնացս եւ զհեղգութիւնս անուղղայս, որով զժամանակն ծախեցաք:

Բ. Երկրորդ՝ յորժամ առանց ջանալոյ ընդ արտասուսն ցնդիմք. այս է զղջական բանս ի սրբոց, եւ նա հանէ զարտասուսն առանց կամաց մարդոյն:

Գ. Երրորդ՝ յորժամ նեղանամք յաշխարհէ, ատեմք զմեղս եւ կամենամք ելանել, զերծանել ի սմանէ, եւ այս ամենայն ի թախանձանաց հոգւոյն, իսկ ցանկութիւն մեղաց ընդ նմա կապեալ է, եւ ոչ տայ թոյլ առ ժամայն մերկանալ զչարն, այլ միշտ խաբէ, թէ յառաջիկայ ժամանակն բարի առնես, այժմ ժամանակ չէ: Եւ այսպիսի չար յուսով բազումք են կորեալ, յանկարծակի գալ ի վերայ լուծումն կենաց, անպատրաստ եւ դատարկ ի բարեաց գործոց գտեալ, մտեալ ի մշտնջենաւոր կապանսն, վասն որոյ ոմանք, որք ունին խղճմտանք, փոքր մի ասէ միտքն, թէ՝

«ՅԱստուծոյ ոչ երկնչիմ եւ ի մարդկանէ ոչ ամաչեմ, զոնէ վասն աշխատ առնելոյն [զիս այրոյն], արարից [նմա] դատ» (ԺԸ. 4-5):

Եւ արդ, երեք իրք տայ ասել զայս:

Ա. Նախ՝ որ ասէ մարդն, թէ լինի յԱստուծոյ իբր մի տանջանք գայ ի վերայ իմ, վասն այս ամբարշտութեանս դառնամ:

Բ. Երկրորդ՝ թէ երկնչի ի գազանաց կամ ի բռնաւորաց չարեաց, կամ ի ճանապարհէ եւ կամ յայլ իրաց եւ ասէ՝ դառնամ:

Գ. Եւ երրորդ՝ թէ խղճայ հոգւոյն եւ նեղանայ ի նորին թախանձանացն, ասէ՝ բաւական է դառնամ: Իսկ զայս աւրինակ Տէրն վասն հաւատացելոցն ետ, որք ի նեղութիւնս, եւ աղաղակեն առ Աստուած, եթէ իցէ ոք տարակոյս վասն այսմ, թէ՝ «Լսէ Աստուած աղաչանաց ծառայից իւրոց (հմմտ. Բ Մնաց. Զ. 19), *կամ* «վրէժխնդիր լինի նոցա» (հմմտ. Սաղմ. ՂԸ. 8),- *ասէ Տէր, զի զանմարդի եւ զվայրենամիտ դատաւորն բազում մաղթանաւքն հաւանեցոյց դառնալ յիրաւունս, քանի եւս Աստուած, որ ամենաղատն է, նա զի եւ յամենայնի պատրաստէ ի տալն, այլ այս միայն, որ զարժանն խնդրիցեմք ի նմանէ, որ մեզ աւգտակար իցէ եւ նմա տալն՝ պատշաճ: Եւ արդ, սկիզբն բանին յայն եղ, թէ՝* «Պարտ է ստեպ յաղաւթս կալ եւ ոչ ձանձրանալ» (հմմտ. ԺԸ. 1) *եւ թէ՝ չէք հաւատալ, թէ առնոյք զխնդրուածն, աւրինակ ձեզ դատաւորն անիրաւութեան, որ բազում խնդրելով՝ էառ: Ապա այս միայն է ի նմա տալն եւ ի վրէժխնդիր լինելն, զի երկայնամիտ լինի մեզ, իսկ մեզ կարճամիտ լինելն չէ աւրէն:*

Դարձեալ, որպէս այրոյ հոգւոյն ոսոխ զմարմին իւր աւրինակ ետ, նոյնպէս սատանայ բոլոր մարդկութեանս թշնամի է, իսկ Աստուած՝ վրէժխնդիր, զի զինչ իրաւք նեղէ զմեզ, Աստուած ամենայնի վրէժ հատուցանէ նմա:

Դարձեալ՝ չարք ի մարդկանէ թշնամի են հաւատացելոցն եւ նեղեն զտնանկս եւ զաղքատս, զապրանքն տանին եւ թալանեն եւ զայլն ամենայն, սակայն չէ պարտ զրկելոցն զԱստուած ի վրէժխնդրութիւն կոչել, զի Աստուած զիւր դատաստանն դատէ եւ ոչ թողու խուն մի մինչեւ հատուցցէ զամենայն: Եւ զայս հետագայ բանիւն ուսաք, որ ասաց պնդութեամբ, թէ՝ «Այո՛յ, ասեմ ձեզ, ճշմարտութեամբ առնէ զվրէժխնդրութիւն» (հմմտ. ԺԸ. 8):

Եւ զայս վասն այնր կրկնեաց, զի են մարդիկ, որ ոչ համբերեն երկայնամտութեան տանջանացն, վասն որոյ յուսադրէ զմեզ Աստուած, թէ ստուգիւ առնէ վրէժխնդրութիւն: Արդ, թէպէտ մասնաւորաբար ասա տայ հատուցումն, սակայն կատարեալն ի հանդերձելն իւրաքանչիւրոցն պահի անվախճան տանջանքն, բայց զայս յուսադրութիւնս, ո՛վ եղբայրք, մի՛ մոռասցուք, զի Աստուած է մեր ապաւէն եւ թէ ոք նեղէ զմեզ՝ կեղեքելով զկեանսն, այլ մեք մի՛ տրտմեսցուք վասն մարմնաւոր իրաց զրկելոյն, զի որպէս լուաք ի Տեառնէ, վրէժս առնու ի նոցանէ Աստուած, թէպէտ յայսմ ժամանակի պակասեալ է հաւատք ի մարդկանէ, զի ոչ հաւատան Աստուածաշունչ գրոցն, այլ զոր ինքեանք ի միտս բերեն եւ այնմ հաւատան: Եւ զոր մարմնոյ աչաւք տեսանեն, նոցին եւ ցանկան, որոց ոչ է մեզ փութալ ուղիղ քրիստոնէիցս, այլ կալ ըստ հրամանաւ Տեառն մերոյ, մանաւանդ ոչ առնել չար մարդոյ, զի մի՛ եւ նա բողոքեսցէ եւ վրէժխնդիր երեւեսցի մեզ Աստուած, եւ տանջանացն պատահիցիմք, այլ ուղղելով զվարս մեր ճշմարտութեամբ, զի պատրաստեալ պսակացն սրբոցն, հասցուք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որով եւ ընդ որում Հաւր, միանգամ[այն վայել է փառք յաւիտեանս. ամէն]:

ՓԱՐԻՍԵՑԻ ԵՒ ՄԱՔՍԱՒՈՐ

Ղուկ. ԺԸ. 9-14

ԻԳՆԱՏԻՈՍ

Եւ դարձեալ.

Առ ոմանս պանծացեալս յանձինս, թէ արդարք իցեն եւ խոտեն զբազումս, ասաց զառակս զայս (Ղուկ. ԺԸ. 9).

Զար է ամբարհաւաճութիւն եւ որ ի նոյն յարին ախտք հոգւոց, վասն զի կրկին գործեն ի մեզ զվնասն: Մի զի զբարիսն, որ ի մեզ են, հոսեն, եւ որոց կրեն զվատթարագոյնսն, իմանալ ոչ տան, եւ մարմնոյ հանգիստ ոչ շնորհեն, որպէս զայլ տեսակս ախտից, քանզի մարմնական ախտք առ հեղգագոյնսն եւ տարտամսն ընաւորեցան բուսանել, իսկ ամբարտաւանութիւն եւ որ նորին մասին են առ փոյթսն եւ որ առաքինութեամբ լնուն վարսն իւրեանց, զաւրանան: Եւ մեծ տոյժք են ոգւոյ, որ տաժանաբար տանին տքնութեան եւ պահոց պնդութեան եւ մաքրութեամբ բարեպաշտեն եւ ընդ պոռնիկսն եւ ընդ փափկացեալսն մարմնով՝ վրիպեալ գտանին ի հաւաստի ընտրութեանն: Եւ արդ, զի մի ոք առանց գիտութեան ըմբռնեսցի յայսպիսեաց վնասակար եւ անշահ ախտից, ասաց զառակս զայս.

Արք երկու ելին ի տաճարն՝ կալ յաղաւթս (ԺԸ. 10):

Քանզի անդ սահման էր աւրինացն մատուցանել Աստուծոյ զզոհս եւ զզոհութիւնս եւ ամենայն նուիրաց[1] առաքինութեան նոցա տեղի այն էր ընծայելոյ, եւ յաղագս այսորիկ անդ ելանեն եւ սոքա՝ աղաւթս մատուցանել Աստուծոյ: «**Մինն փարիսեցի**», *ասէ,* «**եւ միւսն՝ մաքսաւոր**»: *Մինն ի կարի լաւագունիցն՝ առ նոսա եւ միւսն՝ ի կարի չարացն, յորմէ եւ նոքա եւս գարշէին եւ բամբասէին եւս զՅիսուս՝ վասն առ նոսա մտանելոյն: Եւ նոյն ինքն՝ Տէրն, զմնացեալսն ի չարիսն, ասաց լինել իբրեւ զհեթանոսն եւ զմաքսաւորն: Արդ, զսոսա հուպ առ միմեանս եդեալ՝ զմինն՝ վասն ամբարտաւանութեանն ընդ չարս պատժէ եւ զմիւսն՝ վասն խոնարհութեանն արդարանալ վկայէ, վասն որոյ ասէ.*

[1] ԻՏ նուիրանաց] նուիրաց

Փարիսեցին կայր մեկուսի, եւ զայս առանձին աղաւթս մատուցանէր. Աստուա՛ծ իմ, գոհանամ զքէն. զի ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ՝ զյափշտակողս եւ զանիրաւս եւ զշունս (ԺԸ. 11):

Այս գոհութիւն չար գտաւ, քան որք տրտնջենն՝ ըստ այնմ, զոր չար հովիւքն գործէին եւ ասէին. «Աւրհնեալ Տէր եւ փարթամացաք» (Զաք. ԺԱ. 5): *Ըստ նմին եւ սա՝ յաղաւթելն վնասի, զի որպէս թէ բնաւ ոչ յանցեաւ եւ ոչ ինչ է կարաւտ խնդրուածս առնելոյ՝ աղաւթէ: Ոչ վասն որոյ յանցեաւ, զի մարդ էր ախտակիր բնութեամբ, եւ ոչ վասն ժամանակին, որ կայր առաջի դիւրասխալ բնութեանս: Վասն զի ըստ Յոբայ՝* «Ո՞վ իցէ առանց մեղաց, թէ եւ միով աւուրբ իցեն կեանք նորա ի վերայ երկրի» (Յոբ ԺԴ. 4). *Եւ* «Երկինք իսկ չեն անարատ առաջի նորա, թող թէ մարդ, որ ըմպէ զանաւրէնութիւն» (Յոբ ԺԵ. 13): *Արդ, այսու եւ որ ըստ այսմ իցեն, խրատիմք, թէ ո՛չ ոք յարդարոց վստահացաւ յարդարութիւնս իւր պարծել առաջի ամենատես բնութեանն: Այլ սա ախտիւ ամբարտաւանութեանն յիմարեալ՝ առ նա մեծաբանէր, որ յառաջ քան զգործելն զամենայն ուրուք ունի անվրէպ գիտել զվարս: Արդ, ոչ ներեաց Աստուծոյ՝ ճանաչողին, այլ ինքն սկսանի չարաչար գոհանալ, ասէ.* «**Ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ**»: *Կարի մեծացաւ յանդգնութեամբ յայսպիսի միտս եկեալ, զի զամենեսեան չարս համարեցաւ եւ զանձն միայն յարդարութեան կացեալ: Եւ զի՞նչ շահ անտի, զի այլք նախատեսցին առ նորա լաւութեամբն, ո՞չ ապաքէն այն, յորոյ ձեռն հատուցումն է, ոչ սխալէ՝ ըստ այնմ՝* «Տէր ճանաչէ զարդարն եւ զանբարիշտն» (Սաղմ. Ժ. 6): *Եւ զիա՞րդ թմրեալ ի փառասէր ախտիցն՝ զայ ասել՝* «**ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ**»: *Արդարեւ, ոչ էր նա իբրեւ զայլս ի մարդկանէ՝ զհեզս եւ զխոնարհս, յորս հանգուցեալ է Աստուած, այլ այսքան մոլեալ ի դիւաց, յորոց ըմբռնեալն էր, ոչ եբէր յինքն արգելուլ, զոր երկնէր, այլ, աղճատեալ խայտառակիւր առաջի Աստուծոյ եւ ոչ իմանայր: Զի որ զանձինս գովեն, լի են պարսաւանաւք: Արդ, գատեալ զամենեսեան, զորս շուն անուանեաց անիրաւս եւ յափշտակողս, զառնայ եւ ի մաքսաւորն յայն.*

«Եւ ոչ եմ,- ասէ,- իբրեւ զմաքսաւորս զայս» (ԺԸ. 11):

Մեծ ամբաստանութիւն է ոգւոցն չարութեան, յորժամ հասարակաբար ձգեն զմիտս ամբարտաւանս, բայց այն կարի եւս չարագոյն է, յորժամ ի մինն եւ ի մերձակայն կրթէ զբանն եւ առ ոտն

հարկանէ, զոր եւ սա, այնչափ ախտացեալ, էանց ընդ ամենայն, եւ ոչ անխայեաց յայն, որ այն ինչ անկեալ[1] *կայր առաջի Աստուծոյ եւ ժէր՝ գտանել թողութիւն, այլ անփակ բերանով եւ ի նա ձգեաց զբանս ամբաստանութեան: Ի վերա այսոցիկ յաւելու եւ զայն եւս, որ ապշելոց մտաց է.*

«Պահեմ,- ասէ,- երկիցս ի շաբաթու եւ տամ տասանորդս» (ԺԸ. 12):

Ո՞վ յիմարութեանն, թէ զորպիսի՞ ինչ առաքինութիւնս, ո՞ւմ պարծի, կամ ո՞յր առաջի բարբառի՝ արբեալ ամբարհաւաճութեամբ: Յայսպիսեաց ասի զգուշացոյց[2]*, որով ասացն.* «Յորժամ զամենայն կատարիցէք, ասասջիք, եթէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտ էր առնել, արարաք» (Ղուկ. ԺԷ. 10):

Եւ մաքսաւորն կայր մեկուսի, եւ չկամէր եւ ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր եւ ասէր. «Աստուա՛ծ, քաւեա՛ զիս՝ զմեղաւորս» (ԺԸ. 13):

Իբրեւ եղ զպատճառս փարիսեցւոյն կործանմանն, որ արդարն կարծէր զինքն, կարգէ առ նմին եւ զայն ինչ, որով արդարանայ յանցաւորն: Արդ, այս ամենայն ուստեք յայտ է, թէ սկիզբն մերոյ անկմանն ամբարտաւանութիւնն եղեւ, վասն որոյ եւ հաստիչն բնութեանս, իբրեւ կամեցաւ կանգնել զանկեալս[3]*, խոնարհութեամբ եմուտ ի բնութիւնս, զի զվէրս հպարտութեան բժշկեսցէ, եւ զնոյն եցոյց մեզ ճանապարհ բարձրութեան: Արդ, փարիսեցին զառաջինն պատճառս անկմանն մերոյ ախտացեալ՝ անկաւ, իսկ մաքսաւորս, զերկրորդ դեղս փրկութեան գտեալ, անդրէն ի նոյնն դարձաւ շնորհաւք փրկողին մերոյ Աստուծոյ, քանզի առ խոնարհութեանն եւ յերկինս հայել զանձն անարժամ համարէր, որ նման էր դարձին Մանասէի: Զի որպէս նա ասաց. «Զեմ արժանի հայել եւ տեսանել զբարձրութիւնս երկնից»*[4]*, նոյնպէս եւ սա՝ ոչ կամէր զաչսն յերկինս ամբառնալ, այլ բախէր զկուրծսն եւ հառաչէր՝ ասելով. «Աստուա՛ծ, քաւեա՛ զիս, զմեղաւորս»: Եւ զի այսպիսի*

[1] ԻՏ տնկեալ] անկեալ
[2] ԻՏ զգուշացայց
[3] ԻՏ զանկեալքս
[4] Տե՛ս Գիրք Աստուածաշունչք Հին եւ Նոր Կտակարանաց Վենետիկ, 1860, Աղաւթք Մանասէի թագաւորի, էջ 1215:

ոք էր կատարեալ զղջմամբ, վասն որոյ եւ վկայեաց նմա այն, որ գծածուկս յայտնէ.

Էջ սա,- ասէ,- արդարացեալ ի տուն իւր, քան զնա (ԺԸ. 14):

Եւ կարի քաջ յիրաւի, քանզի զոր խոստովանի ոք առաջի Աստուծոյ, կորուսանէ: Արդ, սա զմեղս խոստովան եղեւ եւ կորոյս, եւ նա՝ զարդարութիւնն, եւ թափուր գտաւ: Եւ սա ի ծովու մեղաց ալեկոծեալ՝ ի նաւահանգստի անդ խնդրեաց զնաւապետն եւ ի վտանգէ ալեացն յարուցելոց՝ ապրեցաւ: Իսկ նա ի նաւահանգստի անդ բեռամբ ընկղմեաց զնաւն, զի ոչ խնդրեաց զնաւապետն աւգնական, այլ զանձին ճարտարութիւնն առաջի եդ, առ որս ասէ.

Ամենայն, որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի (ԺԸ. 14):

Քանզի մարդ ոչ է ինքն իւր բաւական, այլ ձեռն ամենակալի է, որ խոնարհեցուցանէ եւ բարձրացուցանէ. զի որք ի նա ապաստան առնեն եւ զանձինս ի չափու ունին, ունի եւ նա ի ստոյգ բարձրութեանն հատուցանել պատիւ՝ փոխարէն խոնարհութեան նոցա: Իսկ որք[1] *փառասիրութեամբ անձամբ զանձինս յառաջ մատուցանեն՝ ի փառս ածել, եւ սոքա, վասն զի ոչ վստահացան յայնմանէ առնուլ, որ բաշխէ զփառս, նորին աղագաւ եւ նա ինքն ամփոփէ զիւրն, եւ այնպէս յանդիմանեալ լինի մարդկային տկարութիւնն՝ մերկացեալ յաստուածային փառացն, զի ոչ է բաւական անձամբ ստանալ զփառս, թէպէտ եւ աստ սակաւ մի խարէութեամբ ծածկեալ՝ գողանայ զինքն: Զգուշագոյնս դնէ հանդէպ այսոցիկ զմանկանցն ճառս, զի սոքա բնութեամբ ունին զաւրինակ բարեաց:*

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Ասաց առ ոմանս պանձացեալս, թէ արդարք իցեն եւ խոտեսցեն զրազումս, զառակս զայս (Ղուկ. ԺԸ. 9):

ԻԳ. *Զար է ամբարհաւաճութիւն եւ, որ ի նոյն յարին, ախտ հոգոյն, վասն զի կրկին գործեն ի մեզ զվնասն: Մի՛, զի զբարիսն, որ ի մեզ է, հոսեն իսկ, եւ վատթարագունիցն իմանալ ո՛չ տան զմեզ,*

[1] ԻՏ որ

եւ մարմնոյ հանգիստ ո՛չ շնորհեն, որպէս յայլ տեսակս ախտիցն, քանզի մարմնական ախտք առ հեղգագոյնսն բնաւորեցան բուսանել: Իսկ ամբարտաւանութիւն եւ ամբարհաւաճութիւն եւ սնափառութիւն անփոյթս յառաքինութեան վարս առ նոսա զաւրանայ: Եւ մեծ տոյժք են ոգոցն, որ տաժանաբար տանին տքնութեան եւ պահոց պնդութեան, եւ մաքրութեամբ բարեպաշտին ընդ պոռնիկսն, եւ ընդ փափկացեալսն վրիպեալ գտանին ի հաւատի ընտրութեանն:

Արք երկու ելին ի տաճարն կալ յաղաւթս (ԺԸ. 10):

Քանզի աւրինացն սահմանէր հատուցանել զոհս Աստուծոյ, եւ զգուշութիւն նուիրաց առաքինութեան: Տեղի էր նոցա իւրաքանչիւր ումեք կալ յաղաւթս ի տաճարին: Յաղագս այնորիկ անդ ելանեն:

Մինն՝ փարիսացի եւ միւսն՝ մաքսաւոր (ԺԸ. 10):

Մինն՝ ի կարի լաւագունիցն առ նոսա, եւ միւսն՝ ի չարացն, յորմէ եւ նոքա գարշէին: Եւ բամբասէին զՅիսուս վասն առ նոսա մտանելոյն: Եւ Տէրն զմնացեալն ի չարիս հեթանոսաց եւ մաքսաւորաց նմանեցուցանէ: Արդ՝ զսոսա առ միմեանս եղեալ Տէրն՝ զմինն վասն ամբարտաւանութեանն ընդ չարսն պատժէ եւ զմիւսն վասն խոնարհութեան արդար վկայէ:

Կր. *Թէպէտ եւ առ հրէայսն ասաց զառակսն, սակայն զամենեսին խրատէ ո՛չ հպարտութեամբ կալ յաղաւթս որպէս փարիսեցին:*

Փարիսեցին կայր մեկուսի եւ զայս աղաւթս մատուցանէր. Ասդուա՛ծ իմ, գոհանամ զքէն (ԺԸ. 11):

Իգ. *Ահա գոհութիւն չար քան զտրտունջ: Ըստ այնմ, զոր չար հովիւքն գործէին եւ ասէին. «Աւրհնեալ է Տէր եւ մեծացաք»* (Զաք. ԺԱ. 5): *Ըստ նմին եւ սա յաղաւթելն վրիպի եւ ի բարեպաշտելն գայթագղի: Ախտիւ ամբարտաւանութեանն յիմարեալ՝ առաջի նորա մեծաբանէր, զի որ յառաջ քան զգործելն զամենեցուն վարս անվրէպ գիտէ: Ո՛չ ներեաց Աստուծոյ ճանաչելոյն, որ ստեղծ զսիրաս, եւ ի միտ առնու զամենայն գործս նոցա: Ո՛վ գոհութիւն չար:*

«Ո՛չ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ զափշտակողս եւ զանիրաւս եւ զշունս» (ԺԸ. 11):

Որ մեծ յանդգնութեամբ յայսպիսի միտս եկեալ, զամենեսին չարս համարելով եւ զանձն միայն արդար, արդ՝ զի՞նչ [չ]ահ, զի այլք նախատեսցին նորա լաւութեամբն: Ո՞չ [ապա]քէն հատուցանողն ո՛չ սխալէ: Տէր ճանաչէ զարդարն եւ զամբարիշտն, զի ամբարտաւանք ի մտաց եւս անկանին: Արդ՝ ո՛չ էր սա ի խոնարհ, յորում հանգչի Աստուած, այլ ունելով զմայրն անմտութեան՝ մոլորեալ ի դիւաց:

սողմ. *Ո՛չ կարէր արգելուլ, զոր երկներ սրտիւ, զի որ զանձն գովէ՝ լի՛ է պարսաւանաւք. «Գովեսցէ զքեզ ընկերն եւ մի՛ քո բերանդ»* (Առակ. ԻԷ. 2): *Զի մարդ էր ախտացեալ բնութեամբ, եւ ո՛չ իմանայր:*

Որպէս Յոբ յանդիմանէ. «Ո՞վ է առանց մեղաց, թէ մի աւր իցէ կեանք նորա ի վերայ երկրի» (Յոբ ԺԴ. 4): Եւ երկինք չեն անպարտ առաջի նորա, թող թէ մարդ, որ ըմպէ զանաւրէնութիւն: Ըստ այնմ՝ «Անաւրէնութիւն յղացաւ, եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ» (Սաղմ. Ծ. 7): *Եւ ո՞վ ոք վստահացաւ յարդարոցն յարդարութիւն պարծել առաջի ամենատես բնութեանն:*

Եփ. *Իսկ փարիսացին ստոյգ ասաց յաղաւթսն, բայց պարծանաւք խաւսեցաւ, խոտեցաւ:*

Կամ իբրեւ զմաքսաւորս զայս (ԺԸ. 11):

Մեծ ամբաստանութիւն ոգոցն չարութեան, յորժամ հասարակաբարձեն զմիտս ամբարտաւանս: Բայց այն կարի եւս չարագոյն է, յորժամ յայն մինն, որ մերձն կայր, կրթէ զբանն եւ առ ոտն հարկանէ, զոր եւ սա անչափ ախտացաւ եւ էանց ընդ ամենեսին: Եւ ո՛չ անխայեաց զայն, որ կայր առաջի Աստուծոյ եւ ժտէր գտանել թողութիւն: Այլ անփակ բերանով եւ ի նա յարձակեաց բանս ամբարտաւանութեան:

Սկ. *Զի թէ յերկնից բարբառ լինի, մի՛ ոք հաւատասցէ մինչեւ յաւրն, յորում քննէ Աստուած զգաղտնիս մարդկան, եւ ապա՝ իւրաքանչիւր գովութիւն եղիցի ի Տեառնէ:*

«Այլ պահեմ երկիցս ի շաբաթու եւ տամ տասանորդս ի սպացուածոց» (ԺԸ. 12):

Տեսանե՞ս, զի զստացուածս իւր ասաց ստուգաբար եւ ո՛չ յԱստուծոյ շնորհեալ: Այ[սո]ւ ամենայն ուստեք զհպարտութիւն /ԻԳ./ յանձն իւր ձգէր: Ո՞վ յիմարութիւն, ո՞ւմ առաջի պարծիս՝ արբեալ ամբարհաւաճութեամբ: Վասն որոյ Տէրն աստի զգուշացոյց. «Յորժամ զամենայն առնիցէք, ասասջիք՝ ծառայք անպիտանք եմք, զոր պարտն էր առնել՝ արարա՛ք» (ԺԷ. 10): *Պարտական եմք առնելոյն եւ ո՛չ պարծելոյն:*

Եւ մաքսաւորն կայր մեկուսի եւ ո՛չ զաչս յերկինս ամբառնայր (ԺԸ. 13):

Կր. *Տե՛ս, որպէ՞ս զհակառասկն դնէ՝ զխոնարհութիւն ընդդէմ ամբարտաւանութեանն: Նա զանձն գովէ. «Ո՛չ եմ իբեւ զայլս», եւ սա ո՛չ զաչս յերկինս համբառնայր՝ անարժան համարելով զանձն:*

ԻԳ *Այս եղեւ պատճառ կործանման փարիսեցոյն: Եւ Տէրն, որ կամեցաւ կանգնել զբնութիւնս մերոյ սխալանս, խոնարհութեամբ եմուտ ի բնութիւնս, զի զվէրս հպարտութեան բժշկեսցէ: Եւ զսոյն եցոյց մեզ ճանապարհ բարձրութեան: Փարիսեցին*

զպատճառս անկմանն մեր գտաւ եւ անկաւ, իսկ մաքսաւորն՝ զդեղ փրկութեան մերոյ, որ յԱստուծոյ շնորհեցաւ, գտեալ կանգնեցաւ: Որ նմանեցաւ զարձին Մանասէի, որ ասէր. «Զեմ արժանի հայել եւ տեսանել զբարձրութիւնս երկնից» (հմմտ. Ես. ԼԸ. 14):

Եւ սա ո՛չ կամէր զաչս յերկինս ամբառնալ, այլ բախէր զկուրծս իւր եւ ասէր. «Ապտուա՛ծ, քաւեա՛ զիս՝ զմեղաւորս» (ԺԸ. 13):

ԵՓ *Արդ՝ մաքսաւորն, որ զմեղսն խոնարհութեամբ ասէր, հաճոյ եղեւ: Զի զմեղսն խոստովանել ծանր է քան զարդարութիւն[ն]: Աստուած ընդ այն հայի, որ բարձեալ ունի զծանրութիւն:*

ԿՐ *Յիրաւի ընկալաւ զայսպիսի խոնարհութեան աղաւթս, զի կատարեալ էր զղջմամբն:*

Ասեմ ձեզ. «Էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա» (ԺԸ. 14):

ԵՓ *«Որ քննէ զսիրտս»* (Սաղմ. Է. 10), *արդարացոյց զսա միովս, որ խոնարհեցաւ՝ զմաքսաւորն: Զի թէ մեղաւոր էր փարիսեցին, մեղս ի վերայ մեղաց յաւելոյր: Զի յաղաւթս եկաց եւ եղեւ բարկութիւն վասն ամբարտաւանութեանն:*

ԻԳ Արդ, սա զմեղսն խոստովանելով առաջի Աստուծոյ՝ կորոյս զնա, եւ նա՝ զարդարութիւն: Վասն այնորիկ թափուր գտաւ ի բարեաց: Սա ի ծովէ մեղաց ալեկոծեալ՝ զնաւահանգիստն խնդրեաց զպետն նաւարկելոց եւ ի յարուցեալ մրրկէն ապրեցաւ, իսկ նա մերձ ի նաւահանգիստն ընկղմեցաւ, զի ո՛չ խնդրեաց զնաւապետն աւգնական, այլ զանձինն ճարտարութիւն:

Զի ամենայն որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի, եւ որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի (ԺԸ. 14):

Քանզի մարդ ո՛չ է իւր բաւական, այլ ձեռն Աստուծոյ, որ բարձրացուցանէ զխոնարհս: Զի որք ի նա ապաստան առնեն զանձինս եւ ի չափու ունին, Տէրն ստուգութեան ի բարձր հանէ զնոսա եւ ի պատիւ փոխանակ խոնարհութեան նոցա: Իսկ որք փառասիրութեամբ զանձինս յառաջ մատուցանեն ի փառս եւ ո՛չ վստահացան յԱստուծոյ առնուլ, որ բաշխէ զփառս, վասն այնորիկ նա յինքն ամփոփէ զիւրսն եւ այնպէս յանդիմանէ զմեր տկարութիւնս՝ մերկացեալ յաստուածային փառացն:

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Արք երկու ելին ի տաճարն կալ յաղաւթս, մինն փարիսեցի եւ միւսն՝ մաքսաւոր (Ղուկ. ԺԸ. 10):

Գիտել արժան է, զի ժամ աղաւթիցն, որ կարգեալ են մեզ, ոչ ի Նորումս միայն է, այլեւ ի Հնումն կարգաւորեալ գոյր եւ Աւրէնս եղեալ՝ ըստ այնմ. «Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել [առ քեզ, Տէր]» (Սաղմ. ճԺԸ. 62), *եւ թէ՝* «Ի գիշերի համբարձէք [զձեռս ձեր ի սրբութիւն]» (Սաղմ. ճԼԳ. 2): *Եւ թէ՝* «Ընդ առաւաւտս կանխեցից յանդիման» (հմմտ. ԿԲ. 7), *եւ թէ՝* «Ես առ Աստուած կարդացի, եւ [Տէր] լուաւ [ինձ]»: Յերեկոյս, ի վաղորդայն, ի հասարակ աւուրն» (Սաղմ. ԾԴ. 17-18) *եւ այլ եւս բազումս, զորս գտանեմք ի Սուրբ գրոց, մանաւանդ, թէ եւ յառաքելոցն իսկ կարգեցան մերս եկեղեցւոյ կարգաւորութիւնք, զորս ուսանիմք յառաջիկայսդ ի գիրս գործոց, որում ոչ է արժան հեղգալ եւ ծուլանալ ի ժամուն յայնմիկ, եւ ոչ միայն յայնմ ժամու, զի Տէրն ասէ.* «Յամենայն ժամ աղաւթս արարէք» (Ղուկ. ԻԱ. 36): *Իսկ թէ ոչ գոյ մեզ յամենայն ժամ հասանել այնմ գործոյ, զի զբաղիմք ի մարմնաւոր պիտոյից վաստակ, գոնեա ի սահմանեալ ժամն պատրաստ լիցուք, զի թէ ի*

հնումն մաքսաւորին արժան էր աղաւթել, ապա եւ մեզ, որ շնորհաւքն Քրիստոսի արդարանամք, վասն որոյ ի մէջ բերէ աստանաւր Տէրն առակաւոր բանիւք զմեզ ուսուցանելով, իբր յորդորելով եւ աւրինակ եղեալ, թէ որպէս կացցուք յաղաւթս՝ ասէ. **«Արք երկու ելին ի տաճարն [կալ յաղաւթս]»:**

Նախ՝ տեսցուք, թէ վասն է՞ր ասաց զառակս զայս: Այն է, զոր Աւետարանաւն յայտնէ, թէ վասն այնոցիկ, որք հպարտացեալ էին եւ զինքեանս արդարս կարծէին եւ զայլս՝ մեղաւորս, վասն որոյ ասէ զառակս:

Բայց տեսցուք, թէ զի՞նչ է առաւելութիւն հպարտութեան, քան զամենայն մեղաց: Արդ, հպարտութիւնն մեկին է եւ ոչ ունի ճուղս եւ դստերս, եւ մի է յէ.(7)անց մահու չափ մեղաց եւ առաջին ամենեցուն: Եւ այս է սորա առաւելութիւնն, զի բազում վնասս գործեն զմեզ:

Ա. Նախ՝ զի զբարիսն, որ ի մեզ իցէ, արտաքս հանեն, զոր աւրինակ, եկեալ խաւարն հանէ զլոյսն. այսպէս եւ ի հանդիպիլ հպարտութեանն ելանեն ամենայն բարութիւնք մեր:

Բ. Երկրորդ՝ զի որք զհպարտութիւն կրեն, զվատթար մեղսն ամենեւին իմանալ ոչ տայ, վասն իւր առաւել չարութեանն:

Գ. Երրորդ՝ զի որք հպարտք են, ոչ ունին հանգիստ մտաց եւ մարմնոյ, քանզի որքան մարդ խոնարհ է, այնքան հանգիստ է:

Դ. Չորրորդ՝ զի ամենայն տեսակ ախտիցն իր մի ցուցանեն մեզ, թէ՝ գողութիւն զինչսն, թէ պոռնկութիւն, զհեշտութիւնն եւ ագահութիւն եւ որկորամոլութիւն զկերակուրն: Իսկ հպարտութեանն ոչ ինչ գոյ ամենեւին:

Ե. Հինգերորդ՝ զի մարմնական ախտն եւ այլն առ այնոսիկ լինի, որ հեղգ են եւ թոյլ, եւ տարտամ, եւ գիջասէր: Իսկ հպարտութեանն առ առաքինիքն եւ որք փոյթ սրբութեամբ վարին, անդ առ նոսա գաւրանայ:

Զ. Վեցերորդ՝ զի յորժամ ոք առ պոռնիկսն երթայ, գիտէ ճշմարտութեամբ, թէ վրիպեցաւ ի ճշմարտութենէն: Իսկ ամբարտաւանն ոչ իմանայ զմեղս, զոր գործէ հպարտութեամբ, այլ գիտէ եւս, թէ առաքինութիւն է:

Է. Եաւթներորդ՝ զի փութով կորնչի ամբարտաւանն՝ ըստ այնմ. «Տեսի զամբարիշտն վերացեալ բարձրացեալ քան զմայրս [Լիբանանու]: Անցի, եւ ահա ոչ էր, խնդրեցի՝ [եւ ոչ գտաւ տեղի նորա]» (Սաղմ. ԼԶ. 35-36):

Ը. Ութերորդ՝ զի ամենայն մեղք մի ժամ լինի մեզ, իսկ հպարտութիւնն ոչ երբեք անկանի ի մտացն:

Թ. Իններորդ՝ զի յամենայն մեղաց կարող գոյ զերծանիլ, իսկ ի հպարտութենէն ոչ է հնար ամենայնիւ, զոր աւրինակ, սատանայ է տեսանել:

Ժ. Տասներորդ՝ զի ամենայն մեղք ընդ մարդոյ լինի, իսկ հպարտութիւնն յածէ ամբարշտութիւն՝ ըստ այնմ. «Եղից զաթոռ իմ յամպս, եւ եղէց նման բարձրելոյն» (հմմտ. Ես. ԺԴ. 14), *վասն որոյ մեծ է, քան զամենայն մեղս եւ առաւել է կորուսիչ ոգւոց մարդկան, որպէս ցուցաւ: Եւ արդ՝ զի մի ոք առանց գիտութեան գոլով ըմբռնեսցի յայսպիսեաց վնասակար ախտից, վասն որոյ Տէրն ասաց զառակս զայս.* **«Արք երկու ելին [ի տաճարն կալ յաղաւթս]»:**

Արդ, տեսցուք, թէ վասն է՞ր անդ ելանէին ամենայն ոք: Եւ այս վասն Բ. (2) պատճառի:

Ա. Նախ՝ զի անդ էր սահմանեալ աւրէնքն յաղաւթս կալ՝ ըստ այնմ. «Տուն իմ տուն աղաւթից կոչեսցի» (Մատթ. ԻԱ. 13), *որպէս ասէ առ Մովսէս.* «Արասցես խորան, զի անդ երեւեցայց քեզ» (հմմտ. Ելք ԻԶ. 1, ԻԵ. 8), *եւ Սողոմոնի, թէ՝* «Շինեսցես տուն անուան իմոյ» (հմմտ. Բ. Թագ. Է. 13), *զոր եւ յաղաւթսն ասէր.* «Եթէ ոք կացցէ յաղաւթս ի տանս, զոր շինեցի» (հմմտ. Գ. Թագ. Ը. 27):

Բ. Եւ երկրորդ՝ զի ամենայն գոհութիւնք, պարգեւք եւ ընծայք անդ մատուցանէին Աստուծոյ: Իսկ սոքա ելին ի տաճարն ոչ վասն պատարագ մատուցանելոյ, այլ զպատճառն յաւելու՝ ասելով. **«կալ յաղաւթս»:**

Իսկ զի՞ ասէ **«յաղաւթս ելին»** *եւ ոչ յայլ ինչ. ուսուցանէ զմեզ աստանաւր, յորժամ առաջի սուրբ եկեղեցւոյ գալ զաղաւթսն խոկալ, եւ ոչ զայլ ինչ, զի պատճառ գալոյ մեր աղաւթքն է:*

Եւ արդ, բազում ինչ է, զոր ոչ է պարտ մեզ առնել յեկեղեցւոջ:

Ա. Նախ՝ չէ պարտ ի տեղի աղաւթիցն զրոյց տալ, զի սատանայ է խաւսակից, եթէ ոք զրոյց տայ, զի անդր խաւսակից մեր Աստուած է, ըստ սահմանի աղաւթիցն, զի զինչ է աղաւթքն, եթէ ոչ խաւսակցութիւն առ Աստուած, ապա եւ զնա թողեալ եւ ընդ այլում զրուցել ոչ է արժան:

Բ. Երկրորդ՝ ոչ է պարտ ի տեղի աղաւթից յետս դառնալ եւ հայել ի կին մարդ կամ յայլս, զի միայն, որ ասաց Տէրն, զարատն սատանայ բերցէ ի մեզ հակառակ փրկութեան աղաւթիցն:

Գ. Երրորդ՝ ոչ է պարտ ի ձայնս քաղցրանուագս նայել, այլ ի զղջական բանսն, որ ի մէջ քաղցրանուագացն երգողին, զի երգողն եւս առաւել պարտի պատրաստել, զի մի փքասցի ի քաղցրութիւն ձայնին, եւ ձրի աշխատի գլուխ նորա, քանզի ոչ ունի վարձս:

Դ. Չորրորդ՝ ոչ է պարտ ծիծաղիլ, այլ լալ, զի այն լալոյ տեղիք է եւ արտասուելոյ, զոր Սողոմոն խրատէ. «Լաւ է գնալ ի տուն սգոյ, քան ուրախութեան» (հմմտ. Ժող. Է. 3), *զի ասէ Տէրն.* «Վա՛յ ձեզ, որ ծիծաղիքդ» (Ղուկ. Զ. 25), *քանզի այնպէս կարծեն, թէ դժոխք ոչ պատէն զնոսա:*

Ե. Հինգերորդ՝ ոչ է պարտ խարբալել զմիտս անցեալ բանիւքն, զի աղաւթքն խաւսակցութիւն է առ Աստուած, որպէս եւ ասացաւ, զի թէ դու, որ աղաւթես եւ խնդրողդ ես, ոչ իմանաս՝ զի՞նչ խաւսիս, զիա՞րդ պիտի առնուս փոխարէնն կամ պարգեւք:

Զ. Վեցերորդ՝ ոչ է պարտ ննջել ի տեղի աղաւթիցն, այլ՝ արթուն կալ՝ ըստ այնմ. «Արթո՛ւն կացէ՛ք, զի ոչ գիտէք, զի [երբ տէր գայցէ]» (Մարկ. ԺԳ. 35), *զի թէ անդ ննջես, զի՞նչ զանազանութիւն ունի քունն, որ ի տունն, եւ թէ քնոյ համար գաս, յոյժ բարի է ոչ գալն:*

Է. Եաւթներորդ՝ ոչ է պարտ զառանձնականն աղաւթսն աղաղակելով ասել, այլ ի սրտին գոչել՝ ըստ Մովսիսի, զի եդ զծունկսն դէմ երեսացն եւ ի սրտէն գոչեաց, վասն որոյ ասէր Տէր. «Զի՛ գոչես առ Իս» (Ելք ԺԴ. 15): *Նմանապէս եւ Տէր մեր ուսոյց՝* «Մո՛ւտ ի սենեակ հոգւոյդ, փակեա՛ զդրունս զգայարանացդ եւ Հարսն քում ի ծածուկ առ Ասպուծոյ, եւ նա հատուցէ քեզ յայտնապէս» (հմմտ. Մատթ. Զ. 6):

Ը. Ութերորդ՝ ոչ է պարտ զբան Աստուածաշունչ գրոց առանց հասկանալոյ թողուլ, զի մի զուղիղն թիւր իմասցիս, եւ լինի քեզ դայթակղութեան պատճառ: Եւ զի նա է կերակուր է հոգւոց մերոց, պարտ է, ծասքել, զի համ առցուք:

Թ. Իններորդ՝ ոչ է պարտ փութալ, թէ երբ ելանիցեմք ի ժամատեղեացս, այլ՝ որքան խնդրես, այնքան առնուս, եւ զի Տէրն հանէր զգիշէր ի գլուխ յաղաւթս՝ ըստ այնմ. «Որ հայցէ՝ գտանէ» (Մատթ. Է. 8):

Ժ. Տասներորդ՝ ոչ է պարտ յորժամ ի յաղաւթսն կալ ի մտի խոստանալ, թէ յորժամ ելանեմք յեկեղեցւոյս, զայն չար առնեմք կամ զայն, այլ զայն խոստանալ, թէ այլ ոչ գործեմ, զոր գործեցի, վասն որոյ ասէ Տէրն. **«Արք երկու ելին [ի փաճարն կալ յաղօթս]»:**

Իսկ արդ, որ աղաւթեն, յերկուս բաժանէ Տէրն՝ մին՝ փարիսեցի եւ միւսն՝ մաքսաւոր, այսինքն՝ ոմանք լաւագոյնք եւ ոմանք՝ չարագոյնք: Զորոյ գերագունին պատիւն տեսցուք, եւ չարագունին՝ զանաւրէնութիւնն: Արդ, ասէ.

Փարիսեցին կայր մեկուսի (ԺԸ. 11):

Զի թէպէտ ոք առանձին աղաւթէ, սակայն Աստուած գիտէ զսիրտս նոցա, վասն որոյ ասէ.

Զայս առանձին աղաւթս մատուցանէր. «Ասպուած իմ, գոհանամ զքէն» (ԺԸ. 11):

Արդ, փարիսեցւոյն ամբարտաւանութիւնն յայտնի է ի բազում իրաց:

Ա. Նախ՝ զի հպարտութեամբ զառանձին տեղն կալաւ եւ ոչ խոնարհութեամբ:

Բ. Երկրորդ՝ զի զԱստուածն ամենեցուն «իմ» ասաց, վասն որոյ Տէրն ուսոյց՝ ասել. «Հայր մեր, որ յերկինս» (Մատթ. Զ. 9):

Գ. Երրորդ՝ զի ասաց՝ **«գոհանամ զքէն»**, *եւ այս բարւոք է, բայց նա, ոչ այսպիսի խորհրդով, այլ թէ իբր ամենեւին ոչ եմ յանցաւոր, եւ զներքոյ անկեալ կարեաց բնութիւնս անկարիս եցոյց:*

Դ. Չորրորդ՝ զի մարգարէն ասէ. «Ես որդն եմ եւ ոչ եմ մարդ, նախատինք [մարդկան] եւ արհամարհանք [ժողովրդոց]» (Սաղմ. ԻԱ. 7), *իսկ սա ասէ.*

«Ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ» (ԺԸ. 11):

Ե. Հինգերորդ՝ զի Յոբ ասէ. «Եթէ միաւրեայ իցէ կեանք մարդոյ ի վերայ երկրի, ոչ է առանց մեղաց» (հմմտ. Յոբ ԺԴ. 4), *իսկ սա ամենեւին անմեղ ցուցանէ զինքն՝ ասելով՝ «ոչ եմ», իբր թէ ոչ գոյ առ իս մեղք:*

Զ. Վեցերորդ՝ զի Աստուած զանգործսն գիտէ՝ ըստ մարգարէին (տե՛ս Սաղմ. ՃԼԸ. 16), *իսկ սա կամեցաւ զԱստուծոյ կանխագիտութիւնն կորուսանել՝ զինքն արդար երեւեցուցանելով:*

Է. Եաւթներորդ՝ զի առակախաւսն ասէ. «Մի՛ գովեսցէ զքեզ քո բերան, այլ ընկերին» (հմմտ. Առակ. ԻԷ. 2), *իսկ սա զինքն գովէ, թէ՝*

«Տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց» (ԺԸ. 12):

Ը. Ութերորդ՝ զի զամենեսան, որք զպահքն պահէին, չար համարեցաւ, եւ զինքն միայն արդար՝ ասելով՝ **«պահեմ»**, *իբր թէ նոքա չեն իմ ընկեր:*

Թ. Իններորդ՝ զի ասէ իմաստունն. «Ինքեան գիտակքն իմաստունք են», իսկ սա զինքն մոռացաւ եւ զայլոց գովութիւն իւրն համարեցաւ:

Ժ. Տասներորդ՝ առաւել չարութիւն սորա այս է, զի զմաքսաւորն արհամարհեաց՝ ասելով.

«**Իբրեւ զայս մաքսաւորս**» (ԺԸ. 11):

Զի թէպէտ ամբարտաւանութեան գործ է հասարակաբար ձգել զմիտս, այլ այն առաւել է, զի առ մինն եւ մերձակայնն, որ առ ոտն եհար, որպէս փարիսեցին, որ ոչ խնայեաց, որ անկեալ էր առաջի Աստուծոյ, եւ խնդրէր զթողութիւն, այլեւ զնա եւս անգոսնեաց:

Արդ, այսքան միայն ասացան ի նորայն չարութենէ, իսկ զայլ ծածուկսն Աստուած գիտէ:

Ընդ դիմակ նմին մաքսաւորին բարութիւնն բազում երեւի:

Ա. Նախ՝ զի որպէս փարիսեցին հպարտութեամբ կորեաւ, ըստ նմանութեան բնութեանս մեր, որ զառաջինն կորեաւ հպարտութեամբ, իսկ մաքսաւորն խոնարհութեամբ գտաւ բարձրացեալ՝ ըստ այնմ. «Ես յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեզս [եւ ի խոնարհս]» (Ես. ԿԶ. 2), *եւ՝* «Որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրացի» (Մատթ. ԻԳ. 12):

Բ. Երկրորդ՝ զի որպէս փարիսեցին մեծ համարեցաւ զինքն քան զամենայն, իսկ սա քան զամենայն ցած եւ վատ համարեցաւ զինքն, քան զամենայն ըստ ասելոյն՝ «չկամէր» (Ղուկ. ԺԸ. 13), *այսինքն՝ ոչ մեծացոյց զինքն:*

Գ. Երրորդ՝ զի այնքան անարժան համարեցաւ զինքն, մինչ զի ոչ կամէր զաչսն յերկինս համբառնալ, ըստ այնմ. «Ձեմ արժանի հայել եւ տեսանել [զբարձրութիւնս երկնից]»[1]*:*

Դ. Չորրորդ՝ զի լայր աղաղակելով, որ եւ այս զկատարեալ զղջումն ցուցանէ:

Ե. Հինգերորդ՝ զի «**կոծէր զկուրծսն**» (Ղուկ. ԺԸ. 13), *եւ այս զփափագ սրտին նշանակէր:*

Զ. Վեցերորդ՝ զի ոչ գովէր զինքն, որպէս փարիսեցին:

Է. Եաւթներորդ՝ զի ասէր.

[1] Գիրք Աստուածաշունչք Հին եւ Նոր Կտակարանաց, Աղաւթք Մանասէի թագաւորի, էջ 1215:

«**Ապրուած քաւեա զիս՝ զմեղաւորս**» (ԺԸ. 13):

Այսինքն՝ մի՛ արա զիս, որ երկուացեալս եմ մեղաւք, եւ կամ սրբեա՛ զիս ի յանցանացս:

Ը. Ութերորդ՝ զի եւ ոչ մի զարդարութիւն իւր յիշեաց, որպէս փարիսեցին, որ եւ զայս առնել պարտ է. ոչ ասել զոր գործեն զարդարութիւն կամ զարդիւնս:

Թ. Իններորդ՝ զի եւ ոչ զփարիսեցին ի միտ էած եւ ոչ չար եւս խաւսեցաւ զնմանէ:

Ժ. Տասներորդ՝ զի խոստովան եղեւ զմեղս իւր, զի որք խոստովանին, կորուսին, զոր ասեն՝ ըստ այնմ. «Ասա դու նախ զանարէնութիւնս քո, զի արդարացիս» (Ես. ԽԳ. 26):

Արդ, զայս աւրինակ ետ մեզ Տէր, զի յորժամ յեկեղեցին գայցեմք, զամենայն ինչ ի բաց ընկենուցումք, եւ որպէս յառաջագոյն ասացաք զայն առնել, քանզի ի մէջ ծփանաց ալեկոծութեան եմք, պարտ է ձեռն ձգել առ նաւապետն, աւգնականթիւն խնդրելով ի նմանէ, թերեւս յեզր ելանիցեմք ի մէջ խռովութեան մեղաց ծովուս, այլեւ ոչ անհոգ լինել, զի մի հեղձուսցէ զմեզ յուսահատութեան ալիքն: Եւ արդ, մարդ ինքն ինքեան ոչ է բաւական, որպէս ոք, ի խորխորատ անկեալ կամ ի ծով, ինքեամբ ոչ կարէ ելանել, ապա թէ ոք արտաքուստ մերձաւոր ի նմա եւ ի ձեռն ձգեալ հանէ, այսպէս թէ ի նա ապաստան կայցեմք, որ կարողն է խոնարհել եւ բարձրացուցանել զմեզ: Եւ զի ըստ չափու պարտ է ունել զանձինս մեր խոնարհ եւ հնազանդ, զի ի նմանէ փառաւորիցիմք: Իսկ որք փառասիրութեամբ զանձինս յառաջ մատուցեալ ի փառսն եւ ոչ յԱստուած վստահանան առնուլ զփառս եւ զգովութիւնս, վասն որոյ նա, որ ծածկագէտն է, զիւրն յինքն ամփոփէ, յայնժամ ծանակ լինին այնոքիկ տկարութեամբք իւրեանց, զի ոչ զաւրէն առ խուն մի բարկութեանն Աստուծոյ: Եւ զի՞նչ է այս, զի աստ գողանամք փոքր մի ժամանակ զմեզ առաջի մարդկան սուրբ երեւեցուցանել եւ փարթամ, արդար: Եւ զայն մոռանամք, թէ որ բարձր է առաջի մարդկան, պեղծ է առաջի Աստուծոյ, վասն որոյ աղաչեմ պատրաստ լինել, զի այն է աղաւթից դիտաւորութիւնն՝ գնալ աղաւթել, զի փառաւորեսցի յԱստուծոյ եւ արդարացին: Իսկ զի՞նչ աւգուտ է անմեղ գնալ ի ժամատեղ եւ մեղաւք ի տուն գալ. Աստուծոյ բաժին գնալ եւ սատանայի դառնալ, որպէս փարիսեցին: Եւ այս յոլովի մեր աւուրքս, քանզի եմք գերի եղեալ սատանայի, զի այնո-

քիկ, որք գիտունք են, թէ Բ. (2) պատահի ի մին եկեղեցի, նախանձու պաշտեն՝ զմիմեամբք ելանելով: Ես լաւ պաշտեմ, եւ իմ ձայնս քաղցր է եւ արուեստիւ, ի յայս անուն վարդապետէ ուսեալ եւ զոր ինչ զգիշերն ամենայն սրբութեամբ կեցեալ, անդանօր նախանձիւ բանսարկու լինին եւ ելանեն արտաքս: Իսկ որք տգետք են, զայն ինչ լուեալ, թէեւ յերեքորեայ զբանս աստուածային իցեն լուեալ, ոչ ինչ արձանանայ ի նոցին միտս, բայց աղաղակ պաշտաւնէից, եւ նախանձն իբրեւ զբեւեռս ի սիրտս նոցա հարեալ՝ աղջամղջին սրտիւ ելանեն յեկեղեցւոյն գայթակղեալք: Եւ ոչ իմացան, թէ յինչ պէտս գնացին յեկեղեցին եւ կամ զինչ առին, որ եւ այս աներեւոյթաբար կորուստ հասարակաց է, եւ ոչ իմանան, զի թէ մի բան փարիսեցւոյն, որ ասաց՝ «պահեմ» (Ղուկ. ԺԸ. 12), եւ ուղիղ էր կորոյս զնորին արդարութիւնն, քանզի եւս առաւել, որ անիծիւք անարգեն զընկերն եւ նախատինս բարուրանաց դնեն, եւ այն, զի ոչ ելանէ խէթն այն ի մտաց երկուցունցն, եւ յետ այնորիկ անզղջաբար եւ առանց մեղայի ձեռնարկել ի սուրբ խորհուրդն, որ բերէ զանբերելի պատուհասն յԱստուծոյ: Վասն որոյ աղաչեմ, մանկունք եկեղեցւոյ, ուսումնասկի՛ցք իմ, մի զծածուկ նետս բանսարկութիւնն ի սիրտս ձեր հարկանիջիք, այլ խոնարհութեամբ իւրաքանչիւր ոք, զոր շնորհ ունի, ի պէտս Աստուծոյ ծախիցէ, իսկ եթէ ծնանի ոխ եւ բարկութիւն ի քոյդ ասելոյ, լռեա՛ ի բարկութենէ եւ հանգիր, զի անդ ի լռութիւն քո հաճի Աստուած եւ ոչ ի պաշտաւնն, զի մի տկար եղբայրն քո գթիցի, բայց ակն ունիմք փրկչին, զի մի տացէ գերի գերողին զփրկեալքս պատուական արեամբն իւրով, զի գինք արեան նորա եմք եւ ազատեալք անարատ ձեռացն, որում վայել է փառք յաւիտեան:

ԱՌԱԿ ՏԱՍՆ ՄՆԱՍԱՑ

Ղուկ. ԺԹ. 11-27

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Եւ ասաց. «Այր ոմն բարեփոռիմ գնաց յերկիր հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն եւ դառնալ (հմմտ. Ղուկ. ԺԹ. 12):

«Այր բարեփոռիմ»՝ *Քրիստոս, «եկեալ ի հեռասպան երկիրս»՝ ի յերկնաւորացն յերկրաւորսս թագաւորեաց եւ համբարձեալ յերկինս, դարձեալ գալոց է՝ դատել զմեռեալս եւ զկենդանիս:*

Եւ կոչեցեալ զծառայս իւր՝ եւ նոցա տասն մնաս» (ԺԹ. 13[1]):

Նոյն առակ է, որ ի Մա[տ]թէոսին, «տաղանդն» *եւ* «քանքար» *անուանեցան* (տե՛ս Մատթ. ԻԵ. 14-30). *եւ նոյնպէս մեկնեսցի, բայց միայն զանազանի, զի անդ* «ութ քանքար» *ասացաւ* (Մատթ. ԻԵ. 15) *եւ ասա՝* «տասն», *կատարեալ թիւդ:*

ԻԳՆԱՏԻՈՍ

Արդ, յաւելու[2] *նոցա առակ՝ բառնալ զայն կարծիս, որ առժամայն իցէ:*

Ասէ. «Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն եւ դառնալ» (Ղուկ. ԺԹ. 12):

«Այր»՝ *վասն բնութեանս մերոյ, զոր առ, եւ ազնուական, որ ոչ միայն ազնուական, այլ եւ քան զամենայն բնութիւն ազնիւ անդր եւս կացեալ անզուգական բարձրութեամբ: Մի եւ նոյն է մերով բնութեամբս՝ ի խառնելն եւ ի միանալն: Իսկ* «յաշխարհ հեռի գնալն»՝ *չիք ուրեք հեռագոյն ի մէնջ տեղի, քան ուր գնաց նա՝ ի սրբութիւն սրբութեանցն մտեալ՝ ի ներքին կողմն վարագուրին: Բայց ասելն՝* «առնուլ իւր թագաւորութիւն եւ դառնալ», *թէպէտ տան զայսպիսի իրս առելոյն, սակայն եւ ոչ առ նա պատշաճի, վասն զի ընդ առնուլն զամենայն ինչ ունի եւ ոչ թէ առ սակաւ սակաւ եկն ի*

[1] US 3
[2] ԻՏ յաւել

կատարելութիւն՝ յառաջադէմ եղեալ, այլ զձեւ կերպարանի բանիցդ, վասն ըստ մեզ յայտնելոյն կարգէ, ապա թէ ոչ, զի՞նչ ունի ասելն. «Իշխանութիւն ունի Որդի մարդոյ թողուլ զմեղս» (հմմտ. Մատթ. Թ. 6): *Եւ իշխանութիւն տայ աշակերտին՝ թողուլ եւ ունել, եւ հաւատայ նմա զփականս արքայութեանն երկնից, զի փակեսցէ մեղուցելոցն եւ բացցէ զղջացելոցն: Եւ այսպիսի ունելով իշխանութիւն եւ յետ յարութեանն, իբրու թէ ոչ ունէր, ասէ՝* «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի» (Մատթ. ԻԸ. 18): *Իսկ Պաւղոս, որպէս թէ տակաւին եւս ոչ ունի, ասէ.* «Յորժամ տացէ ի ձեռս զթագաւորութիւնն Աստուծոյ եւ Հաւր» (Ա Կոր. ԺԵ. 24): *Նման սմին եւ Դանիէլ ետես, զի* «Նմա տուաւ իշխանութիւն, եւ թագաւորութիւն նորա՝ թագաւորութիւն յաւիտենական» (Դան. Է. 13): *Արդ, զայս ըստ որում ասացաւ, վասն յայտնելոյն կարգեալ է, այլ նա ընդ սկզբան յղանալոյն, զամենայն ունէր, որ ինչ յատուկ աստուածութեանն է, եւ ոչ այնորիկ ընկալաւ ինչ: Զայս աւրինակ բանից իմանամք եւ աստ, զի եկն նա նուաստութեամբ կեցուցանել եւ դարձաւ անդրէն, ուստի եկն եւ հաստատեաց ժամանակ, յորում դատէ զամենայն տիեզերս, եւ յայնժամ յայտնէ զինքն իւր ընտանի փառաւքն: Արդ, երեւեցաւ այժմ ծննդեամբ եւ վարագուրեաց ի մէնջ զաստուածութիւն իւր թանձրագոյն մարմնովն եւ կոչեաց զամենայն ազգս՝ ծառայս իւր եւ «ետ մնասս տասն եւ ասաց.*

«Յարգեցէ՛ք զայդ» (ԺԹ. 13):

Նման են այս առակ եւ որ ի Մատթէոսի Աւետարանին գրեալ են քանքարն (տես Մատթ. ԻԵ. 14-30) *եւ այնպէս, մինչ զի կարծելի եղեւ, թէ նոյն իցէ: Սակայն զնոյն ասել կարգ բանիցն ոչ ունի, զի անդ այլ չափ առաջնոյն եւ այլ՝ երկրորդին եւ երրորդին: Իսկ աստ՝ հաւասար չափէ ամենեցուն, եւ անդ հաւասար մատուցին զշահն չափով տուողին: Իսկ աստ՝ ի հաւասարէն, զոր ընկալան, ոմն՝ բազումս եւ ոմն՝ սակաւս մատոյց: Արդ, ի համեմատելն զայս ընդ մերս՝ բարւոք դատեցաք՝ յատուկ առ վարդապետս որոշել զքանքարսն, իսկ զմնասն զայս հասարակաբար առ ամենեսեանն տուեալ աւրինացն նորա հնազանդութիւն՝ գործել զնա եւ պահել, որում ամենայն ոք ինքնատէր եւ բաւական է: Իսկ տասն ասացեալ զմնասն՝ կամ զգայարանաւքս չափի, որով ընդունիմք կամ ի բաց ընկենումք, կամ թէ զաւրէնս իւր թուեաց՝ ըստ աւրինացն ի մի ածեալ, վասն զի այնպէս մինն միւսովն պահեալ լինի: Արդ,*

տուկալ զայս, ասէ. **«Յարգեցէ՛ք մինչեւ եկից»:** *Եւ է սա յայտնի տեսողացն, զի զաւրէնսն, զոր ետ, պարտ է ի գործ ածել ամենայն զգուշութեամբ եւ սպասել, ակն ունել գալստեան նորա եւ ըստ վաստակոցն ակն ունել եւ հատուցմանն.*

Եւ քաղաքացիքն, *ասէ,* **որ ատէին զնա, առաքեն հրեշտակս եւ ասեն. «Ոչ կամիմք զթագաւորելն դորա ի վերայ մեր»** (ԺԹ. 14):

Այնքան յայտնագոյն ունի զմիտսն յելից բանից[1]*, զի եւ մեկնութեան ընաւ իսկ չէ ոք կարաւտ, թէ ո՞վ ոք քաղաքացիքն իցեն կամ զիա՞րդ ատեցին զնա.* «Ցիրսն եկն, ասէ, Յովհաննէս, եւ իրքն զնա ոչ ընկալան» (Յովհ. Ա. 11): **«Ատեցին զնա»,** *զի լոյս էր՝ յանդիմանիչ գործոց նոցա, եւ նոքա սիրեցին զխաւար առաւել, քան զլոյս, զի ծածկեսցեն զգործս իւրեանց զազրալիցս, որք էին գերեզմանք՝ լցեալք ապականութեամբ, վասն որոյ աղաղակէին յատենի անդ եւ ասէին.* «Չիք մեր թագաւոր, բաց ի կայսերէ» (Յովհ. ԺԹ. 15): *Եւ երկայնք են բանք, որով ցուցին նոքա զբարս ատելութեան եւ ապստամբութեան ընդդէմ այսր թագաւորի, զի զնոյն ինքն զնա տեսեալ, ոչ միայն ատեցին, այլեւ բազում ձաղանաւք նախատեցին եւ ընդ փայտի բեւեռեալ՝ սպանին: Եւ նորա առ Հայր երթեալ, զվկայս աստուածութեան նորա, որ քարոզէին զամենակալ թագաւորութիւն նորա, հալածականս առնէին, զի մի յայտնեսցեն զպատիւ թագաւորութեան նորա: Եւ այս է, զոր ասաց.*

Առաքեցին հրեշտակս եւ ասեն. «Ոչ կամիմք զթագաւորելն դորա ի վերայ մեր»: Եւ եղեւ, *ասէ,* **դառնալ նմա՝ առեալ զթագաւորութիւնն, կոչէ զծառայսն, որոց ետ զարծաթն, եթէ զինչ շահեցան** (հմմտ. ԺԹ. 14-15):

Ամենայն ուստեք յայտնի են աւրինակք բանիցս, զի գայ նա՝ առեալ ի Հաւրէ զբնակաւոր զիւր թագաւորութիւնն եւ նստի՝ դատել, ըստ այնմ՝ «Հայր ոչ դատէ զոք, այլ զամենայն դատապարտեալ եղ Որդւոյ իւրոյ, զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի, նովին սահմանաւ՝ Հաւր» (հմմտ. Յովհ. Ե. 22-23)*: Արդ, առնու նա համարս յամենեցունց հաւատի քննութեամբ: Մատեաւ նախ առաջի նորա ըստ կարգի, որ կատարեալ ցուցաւ ի գործս առաքինութեան՝ զիւրն պատմել առաքինութիւն, վասն որոյ ասէ.*

Մնասն քո տասն մնաս արար (ԺԹ. 16):

[1] ԻՏ իրացն] բանից

Եւ այս ըստ առաջին կարգին, որ եւ յաւդեսցէ ոք զբանս, յաղագս կատարելութեան ունի զթիւս զայս:

Ասէ ցնա. «Ազնի՛ ծառայ եւ բարի, զի ի սակաւուդ հաւատարիմ եղեր, լիցիս իշխանութիւն ունել տասն քաղաքի[1]»:

Ամենայն պատուով պատուէ զառաքինացեալսն. նախ՝ անուամբն, զի զոր անուն Աստուծոյ եղ, նովին եւ զծառայսն կոչէ: «Այր ոմն ազնուական գնաց առնուլ իւր թագաւորութիւն» (ԺԹ. 12) եւ չիք ոք բարի, բայց մի Աստուած: Եւ ասա՝

«Ազնիւ ծառայ եւ բարի, ի սակաւուդ, *ասէ,* **հաւատարիմ եղեր»** (հմմտ. ԺԹ. 17):

Ըստ որում զվատթարսն յանհաւատարիմ լինելոյն դատէ, ըստ նմին եւ զսոսա՝ ի հաւատարիմ լինելոյն պատուէ: Անդ ասէ. «Եթէ յանիրաւ մամոնային եւ յաւտարին չեղէք հաւատարիմ, զճշմարիտն եւ զձերն ձեզ ո՞ հաւատասցէ» (Ղուկ. ԺՁ. 11): *Իսկ ասա ասէ, զի.*

«Ի սակաւուդ հաւատարիմ եղեր, լիցիս իշխան տասն քաղաքի» (հմմտ. ԺԹ. 17):

Եւ արդ, ոչ եթէ քաղաքք[2] իցեն ի հանդերձեալսն, յորոց վերայ իշխանս կացուցանէ զնոսա, որք զաւրէնս նորա կատարեցին, այլ՝ զի բազմապատիկ խոստացաւ ի վարձատրութեանն հատուցանել, եւ ասա քաղաքաւք նշանակէ, որ տայ զայն իմանալ, թէ որքան զանազանեալ են տասն քաղաք եւ տասն մնաս արծաթոյն, զոր մատուցին եւ ընկալան:

Ըստ այսմ կարգի եւ երկրորդն մատուցեալ՝ ասէ.

«Մնասն քո հինգ մնաս արար» (ԺԹ. 18):

Ընդունի եւ սա յարդարադատ իրաւանցն Աստուծոյ չափով առաքինութեանն զպարգեւսն: Կացեալ լինի եւ սա **իշխան ի վերայ հնգից քաղաքաց:** *Իսկ միւս ոմն՝ հէգ եւ թշուառական՝ մատուցեալ ամբաստան լինի զքաղցր Տեառնէն, այն, որ ոչ ունի արդարացուցանել զնա, այլեւ դատապարտ եւս առնել:*

«Գիտէի, *ասէ,* **զի այր մի ստամբակ ես. բառնաս, զոր ոչ եդիր, եւ հնձես, զոր ոչ սերմանեցեր, երկեայ եւ թաքուցի զարծաթն քո»** (հմմտ. ԺԹ. 22):

[1] ԻՏ քաղաքաց
[2] ԻՏ քաղաք

Եթէ հեզ ասացեալ էր զՏէրն, գոյին ինչ իրաւունք, որպէս թէ ասել՝ վստահացեալ ի հեզութիւն քո՝ հեղգացայ: Իսկ որովհետեւ գիտէր զնա խիստ եւ թէ հարուածս եւ տանջանս արկանէ զգլխով անբարշտաց, ապա պարտ էր նմա զգաստանալ եւ զարհուրել ի տանջողական բռնութենէ անտի նորա եւ ի գործ արկանել զարծաթն, զի մի պատիժս կրեսցէ ի ստամբակ տեառնէն[1]: Յայս հայի ասելն.

«Ի բերանոյ քումմէ դատեցից զքեզ, ծառա՛յ անհաւատ» (ԺԹ. 22), *զի ոչ էիր անգէտ, այլ գիտէիր զխստութիւն դատաւորին եւ զսաստն, որ կայ ի վերայ մեղաւորաց:* **«Անհաւատ»** *ասելով՝ ընկենու ի հաւատոյն զայն, զոր ոչ յոյսն յորդորեաց եւ զարթոյց ի գործ պատուիրանի նորա եւ ոչ սպառնալիք տանջանացն զգաստացոյց՝ լինել պիտանացու:*

«Ընդէ՞ր,- *ասէ,-* **ոչ արկեր զարծաթդ իմ ի սեղանաւորս, եւ ես եկեալ փոկոսեաւք պահանջէի»** (ԺԹ. 23):

Եւ զայս զի՞նչ ունիցի իմաստ առ այս, քանզի ի քանքարացն առակի յարմարէ, թէ առ վարդապետս ասացեալ է, իսկ ասա, զի առ իւրաքանչիւր ոք ասացեալ է, որպէ՞ս ամենայն ոք արկանէ արծաթ ի սեղանաւորս: Արդարեւ, ամենայն ումեք հարկ է այս, զի որպէս վարդապետաց է՝ զեկեղեցիս խրատել, նոյնպէս է եւ ամենայն ումեք իւրում տանն բարւոք վերակացու լինել եւ խրատիչ: Եւ թէ յառաջնորդաց արիւն ամենայն ժողովրդեան խնդրի, քանի՞ եւս զորդւոցն, զորս ծնաւ ոք պահանջի, թէ երկիւղիւն Աստուծոյ, ոչ սնուցանէ:

Ասէ սպասաւորացն. «Առէք ի դմանէ զմնասն եւ տուք այնմ, որ ունի զտասն մնասն» (ԺԹ. 24):

Այս լուծանելն ի հաւատոյն է, զոր յայլում վայրի ընդ մէջ կտրել հրաման ետ: Այսու ուսուցանէ, թէ եւ զբան հաւատոյն, զոր խոստովանեաց, բառնան ի նմանէ եւ ընդ անհաւատսն պատժեն: Իսկ ասել ծառայիցն. **«Տէր, ունի տասն մնաս»** (ԺԹ. 25), *այս իբրեւ յաչաղանք թուին: Ոչ եթէ ի քննութիւն անդ ժամանակին գոյ ումեք ասել ինչ ի հրեշտակաց, յորժամ նա հաւասարէ ի դատելն, այլ միայն զայն կամի բանիւն յայտնել, եթէ այնչափ է պարգեւք*

[1] ԻՏ ստամբակութենէն] ի ստամբակ տեառնէն

արդարոցն, մինչ զի եւ հրեշտակաց նախանձ արկանեն: Իսկ առ այս Տէրն, զի զիրաւունս դատաստանին յայտ առնէ եւ ոչ միայն շնորհ, ասէ.

«Ամենայնի, որ ունիցի՝ տացի. եւ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցի, բարձցի ի նմանէ» (ԺԹ. 26):

Զայս եդ իմանալ մեզ՝ եթէ ոչ ըստ չափոյ վաստակոցն[1] *են պարգեւքն, այլ ըստ աշխատութեանն, որում արժանի արարին զանձինս, ունին եւ յաւելու նոցա այլ եւս առատութիւն պարգեւաց նորա: Իսկ ծուլիցն եւ հեղգացելոցն, վասն զի ոչ կամեցան ստանալ ինչ անձանց յանտի բարեացն, արդարութեամբ բառնայ յայնպիսեաց եւ զայն եւս, զոր ինքն ետ զաւազանին շնորհ, որով որդիք Աստուծոյ արժանացան լինել: Արդ, մերկանայ զայն, զի զորդիս ոչ տանջէ, այլ զապստամբս: Ըստ որում եւ թագաւորք երկրի դատեն, զի զմեղուցեալ ոք իշխան նախ՝ զպատիւ եւ զհանդերձ իշխանութեանն մերկանալ հրաման տան եւ ապա՝ մատնեն դահճաց. նոյն իրաւանց հետեւին եւ աստուածայինքն: Արդ, զայս, որ առ հաւատացեալս է բան՝ ուղղեալ իրաւամբք, ձգէ այնուհետեւ զդատաստանն ի վերայ անհաւատիցն, զի եւ զնոցայն դատեսցի ըստ նոցունց ժպրհութեանն, վասն որոյ ասէ.*

«Զթշնամիսն իմ՝ զայնոսիկ, որք ոչ կամէին զթագաւորելն իմ, ածէ՛ք եւ սպանէ՛ք առաջի իմ» (ԺԹ. 27):

Որքան առաջին գալստեամբն զքաղցրութիւն նորա տեսին, յերկրորդի անդ՝ զսաստկութիւնն ծանիցեն, յաղագս որոյ այն, որ ի մահու անդ կարդայր առ Հայր՝ աղաչելով. «Հա՛յր, թո՛ղ սոցա, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն» (Ղուկ. ԻԳ. 34), «եւ որ ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա» (Ղուկ. ԺԲ. 10)՝ *այժմ ահարկու դատաւոր եւ վրէժխնդիր զանձն ցուցանէ՝ ըստ նմին աւրինակի յամենայն յաւիտենիս երկայնամիտ է առ ամենեսեան, իսկ յիրաւանցն մերձեցեալ ժամանակ վարի առ ամենայն քննութիւնս՝ ոչ բարկութեամբ եւ ոչ քաղցրութեամբ, այլ իրաւամբք եւ արդարութեամբ հատուցանել: Արդ, զայս ամենայն առաջի դնէ, զի մի ոք վասն քաղցրութեանն անհոգ լիցի, այլ զսատն լուեալ՝ զարհուրեսցի ի վրէժխնդիր լինելոյ նորա:*

[1] ԻՏ վաստակոյն

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Յաւել առակ մի վասն համարելոյ նոցա, թէ այժմ մերձեալ է արքայութիւն Աստուծոյ (Ղուկ. ԺԹ. 11):

Իգ. *Աշակերտքն, եւ որ մերձն էին, համարէին, թէ առժամայն յայտնելոց է վերին թագաւորութիւնն մարմնապէս յերկրի: Եւ էր այսպիսի կարծիք առ նոսա: Նորին աղագաւ եւ որդիքն Զեբեդեայ ընդ աջմէ եւ ընդ ահեկէ նստել խնդրէին* (տե՛ս Մատթ. Ի. 21, Մարկ. Ժ. 35): *Վասն այնորիկ յառաջակայ առակաւս բառնայ զայնպիսի կարծիսն:*

Ասէ. Այր ոմն ազնուակ[ան] (ԺԹ. 12):

ԿՐ *Այր աստանաւր Փրկիչն զինքն անուանէ, իսկ ազնուական՝ ըստ որումն է[ջ] յերկնից աստուածութիւն եւ ի սրբոյ Կուսէն անապականաբար ծնեալ:*

ԻԳ *Վասն բնութեանս մեր, զոր էառ եւ միացոյց ընդ աստուածութեանն եւ անզուգական բարձրութեամբ միեւնոյն արար: Եւ մերոյ բնութեանս որոշեաց զդրախտն ի բնակութիւն, տեղի ամենաբարի եւ անկարաւտ, անմահ եւ անապական, խառնեալ, եւ միանալ ընդ նմա ի կեանսն յաւիտենից:*

Գնաց յաշխարհ հեռի (ԺԹ. 12):

Սգ. *Եկեալ յերկնից երկրաւորացս թագաւորեաց:*

ԿՐ *Որ ի ժամանակի խաչին աւանդեաց զմարդկային հոգիսն ի ձեռն Հաւր եւ չոգաւ առ հոգիսն, որ ըմբռնեալն էին: Ըստ առաքելոյ բանին, թէ՝ «Քրիստոս վասն այսորիկ մեռաւ եւ եկեաց, զի մեռելոց եւ կենդանեաց տիրեսցէ»* (հմմտ. Հռոմ. ԺԴ. 9): *Զի որպէս ազգակից մերով մարմնովս քարոզեաց մարմնաւորացս զիւր աստուածութիւն[ն], այսպէս եւ ազգակից մերով հոգովս՝ երթեալ քարոզեաց զիւր աստուածութիւն[ն], որ յոյժ հեռի են բնութիւնք հոգոցն ի մարմնական կենցաղոյս՝ անտեսանելի գոլով:*

սրկ. *Եմուտ ի գերեզման[ն], որ կրէ զամենայն բանիւ, եւ ապականեալ զեղծագործն, որպէս խաչիւն զչարչարանսն՝ անապական առնելով զ[ը]յրռնեալսն ի մահուանէ:*

Սրկ. *Իջանելով ի դժոխս՝ մարդկային անձամբ իւրով յաշփտակել զորս ի նմա՝ զիշխանութիւն նորա խափանելով: Կապէր զհզաւրն՝ կորացուցանելով զամբարտաւանութիւն նորա:*

Առնուլ իւր թագաւորութիւն եւ դառնալ (ԺԹ. 12):

ԻԳ *Վասնզի ընդ առնուլն զմարմինն ի Կուսէն եւ ընդ սկիզբն յղանալոյն ունէր, որ ինչ՝ յատուկ աստուածութեանն, եւ ո՛չ յետ այնորիկ ընկալաւ ինչ: Որպէս եւ ինքն ասաց. «Իշխանութիւն ունի Որդի մարդոյ թողուլ զմեղս»* (Ե. 24): *Եւ իշխանութիւն տայ աշակերտին թողուլ եւ ունել: Եւ հաւատայ նոցա զփականս արքայութեանն երկնից, զի փակեսցէ մեղուցելոցն եւ բացցէ զղջացելոցն: Եւ այսպիսի բնութեամբ ունէր զիշխանութիւն միացեալ ընդ մարմնոյն: Բայց զկնի յարութեանն, իբրու թէ ո՛չ ունէր, ասէ. «Տուաւ ինձ իշխանութիւն յերկրի»* (Մատթ. ԻԸ. 18): *Վասն յայտնի լինելոյ տէրութեանն իւրոյ ասէր:*

ՈԿ *Մարդկաւրէն իմն խաւսելով ընդ նոսա, քանզի չեւ եւս առեալ էին զՀոգին, որ կարող էր բարձրագոյնս առնել զնոսա եւ զմեծամեծսն ծանուցանել:*

ԿՐ *Արդ՝ առեալ Քրիստոսի զդաւանութեանն անուն իւրոյ աստուածութեանն եւ թագաւորութեանն յապստամբ ծառայիցն ի կռապաշտ ոգոյն: Զի թէպէտ եւ հասարակաց իմանի Աստուած գոլ, սակայն ո՛չ հեստելոցն եւ ուրացելոցն եւ երկրպագուացն դիւաց իմանի Աստուած գոլ: Իսկ յորժամ ծանուցաւ Հոգոցն՝ յայտնելովն եւ քարոզելովն զինքն, ըստ առաքելոյ բանին, թէ՝ «Հոգոցն, որ ի բանդին էին, երթեալ քարոզեաց»* (Ա Պետր. Գ. 19) *ապստամբելոցն, յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայնմտութիւն[ն]: Յայնժամ խոստովանեցաւ Աստուած եւ թագաւոր հոգոցն՝ որ գունակ եւ մարմնոցս:*

Գնաց յաշխարհ հեռի (ԺԹ. 12):

սպ. *Համբառնալն մարմնով յերկինս, զի երկնայնոցն եւ երկրայնոցս թագաւորեաց:*

Սպ. *Զիք հեռագոյն տեղի, քան որ նայն գնաց:*

ԻԳ *Ի սրբութիւն սրբոցն՝ մտանել ի ներքին կողմն վարագուրին:*

ԿՐ *Եւ անդ առնու ի հաւատացելոց փառաբանութիւն, եւ երկրպագութիւն ի հրեշտակաց եւ ի մարդկանէ: Ըստ այնմ՝ «Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց եւ երկրաւորաց, եւ ամենայն լեզու խոստովան լիցի Տէր Յիսուս ի փառս Աստուծոյ Հա[ւր]»* (Փիլիպ. Բ. 10-11):

Եւ կոչեալ առ ինքն զծառայս իւր (ԺԹ. 13):

ԻԳ *Արդ՝ երեւեցաւ այժմն ծննդեամբ, եւ վարագուրեաց ի մէնջ զաստուածութիւն իւր թանձրագոյն մարմնովն, եւ կոչեաց զամենայն ազգս ծառայս իւր:*

ԵՓ *Զի սփռեալ է գիտութիւն նորա ի վերայ ամենայն ազգաց: Որպէս ասացին նինուեացիքն. «Ո՞ գիտէ, դառնայ Տէր եւ ողորմի»* (հմմտ. Յովնան Գ. 9): *Արդ, յայտ է, թէ գիտէին, զի ողորմած է եւ սիրէ զապաշխարողսն: Գա՛ն արբին փաղչտացիքն եւ գիտացին զՏէր բժիշկ: Դատապարտեցաւ Ամոն եւ եհան զորդին իւր պատարագ Տեառն: Նոյնպէս եւ Բաբէլ մատուցանեն եգիպտացիքն պատարագս Տեառն: Տեսե՞ր աւասիկ, զի գիտէին զնա Տէր ամենայն հեթանոսք, որպէս Իսրայէղ բարկութեամբ: Իսկ առ հաւատացեալսն ասէր մարգարէն.* «Արարիցզկաղն ի ժառանգութիւն եւ զգրկարն յազգս հզաւր»:

Եւ նոցա տասն մնաս եւ ասէ ցնոսա. «Յարգեցէք մինչեւ եկից» (ԺԹ. 13):

ԻԳ *Զմնասս զայս հասարակաբար ամենեցուն ետ, զաւրինաց նորա հնազանդութիւն գործել եւ պահել, որում ամենայն ոք ինքնատէր եւ բաւական: Որպէս ասէ Մաղաքիաս. «Քանզի յարեւելից մինչեւ ի մուտս արեւու, փառաւորեալ է անուն իմ ընդ ամենայն հեթանոսս»* (Մաղաք. Ա. 11), *եւ «Ժողովեցից զհեռացեալսն, եւ զցրուեալսն մերձեցուցից»* (հմմտ. Ա. Մակ. Գ. 9):

սպ. *Իսկ տասն ասացեալ մնասն, որ նշանակէ զկատարեալ առաքինութիւն[ն], միաբանութեամբ հինգ հոգեղէն զգայութեամբք ընդ հինգ մարմնեղէն զգայութեանցս, զի տասն կատարեալ թիւ է:*

Իգ. *Որով ընդունիմք զբարիսն կամ ի բաց ընկենումք զչարն: Կամ զաւրէնս իւր թուեաց Քրիստոս ըստ աւրինացն, որ տուաւ հրէիցն՝ ի մի ածելով ամենայն զգուշութեամբ: Եւ սպասել գալստեան նորա, եւ ըստ վաստակոց ակն ունել հատուցման:*

Իգ *Կամ աւրէնք նոր տուան Իսրայեղի, ի գալստեանն թարգմանեցին եւ ամենայն լեզուք*

եփ. *խորհել նովին հոգով եւ աւրհնեսցեն զայն, որ գրեացն զնա: Ըստ այնմ, թէ՝ «Ամենայն հոգիք աւրհնեցէք զՏէր»* (Սաղմ. ՃԾ. 6) *եւ «Ընդ ամենայն երկիր ել բարբառ նորա»* (Հռոմ. Ժ. 18):

ԿՐ *Կամ զշնորհս վարդապետութեանն ի կաթողիկէ եկեղեցոջ գործել նոքաւք՝ քահանայից եւ վարդապետաց եւ ամենայն ժողովրդոց, մինչեւ ի միւս անգամ գալուստն:*

Իսկ քաղաքացիքն, որ ապէին զնա (ԺԹ. 14):

ԻԳ *Իւրքն էին: Ըստ ասելոյն. «Ցիւրսն եկն եւ իւրքն զնա ո՛չ ընկալան»* (Յովհ. Ա. 11): *Ատեցին զնա, զի լոյս էր յանդիմանիչ գործոց նոցա: Եւ նոքա սիրեցին զխաւար առաւել քան զլոյս, զի ծածկեսցեն զգործս իւրեանց զաղրալիս, որք էին գերեզմանք լցեալք ապականութեամբ:*

Սգ. *Ըստ այնմ՝ «Ատեցին զյանդիմանիչս ի դրունս իւրեանց»* (Ամովս Ե. 10): *Եւ որպէս Յովէլ ասէ. «Բայց դու, Իսրայէ՛ղ, լուսով աւրինացն եւ մարգարէիցն եւ քահանայիցն, խաւարեցան աչք քո»* (հմմտ. Յովէլ Բ. 10, Գ. 15): *Ահա որպէս որդիք հնդկաց էք դուք ինձ որդիք Իսրայէղի: Եթէ կամիք դուք հաւատալ յիս, որդիք էք Աբրահամու, ապա եթէ ոչ՝ մի՛ պարծիք, քանզի ի հեթանոսս արարի զշնորհս որպէս եւ ի ձեզ: Զի Իսրայէղ հանի ես յերկրէն Եգիպտացոց եւ զփղշտացիսն ի Գամրաց կողմանէ եւ զասորիսն ի Բոսորայ* (տե՛ս Ամովս Թ. 7): *Եւ զի ասէ մարգարէն. «Մեծամեծք նոցա լի են անաւրէնութեամբ, եւ բնակիչքն խաւսին ստութեամբ: Վասն այնորիկ սկսայց հարկանել զքեզ վասն մեղաց քոց»* (հմմտ. Միքիէ Զ. 12): *Ո՛չ միայն ատեցին, այլեւ բազում ձաղանաւք նախատեցին եւ ընդ փայտի բեւեռեալ՝ սպանին: Եւ նորա՝ առ Հայր երթեալ: Եւ զվկայս աստուածութեան նորա, որք քարոզէին զամենակալ թագաւորութիւն նորա, հալածական արարին, զի մի՛ յայտնեսցեն զպատիւ թագաւորութեան նորա:*

Առաքեցին առ նա հրեշտակս եւ ասեն. «Ո՛չ կամիմ[ք] զքեզ թագաւորել ի վերայ մեր» (ԺԹ. 14):

ԿՐ *Զոր քաղաքացիս ասաց զհրէայսն: Վասնզի ի նոցանէ ծնաւ ըստ մարմնոյ Տէրն: Որք ասէին ցՊիղատոս. «Զիք մեր թագաւոր, բայց ի կայսերէ»* (Յովհ. ԺԹ. 15): *Եւ դարձեալ. «Մի՛ գրել թագաւոր հրէից»* (Յովհ. ԺԹ. 21), *որք սպանան ի Տիտոսէ սովով եւ սրով:*

Եփ. *Զոր Մաղաքիա վկայէ. «Մինչչեւ եկեալ հարից սատակեցից զերկիրն Իսրայեղի»* (հմմտ. Մաղաք. Դ. 5-6): *Զվերջին սատակումն նոցա ի Հռոմայեցոցն: Ցոյց, զոր ասաց Դանիէլ մարգարէն. «Յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածոյն Երուսաղեմի, զի կայցէ ի տեղոջն սրբոցըեան»* (հմմտ. Դան. ԺԱ. 31): *Եւ Քրիստոս ասաց. «Թողեալ լիցի տունդ ձեր աւերակ, եւ ասացէք լերանց թէ՝ ծածկեցէք զմեզ եւ բլրոց թէ՝ անկերուք ի վերայ մեր»* (հմմտ. ԻԳ. 30):

Եւ եղեւ ի դառնալ նմա՝ առեալ զթագաւորութիւնն (ԺԹ. 15):

ԿՐ *Զերկրորդ գալուստն ասէ յերկիր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս:*

ԻԳ *Եւ յայնժամ յայտնէ զինքն իւր ընտանի բնութեամբն՝ փառաւք թագաւորութեանն իւրոյ:*

Եւ կոչեաց զծառայսն, յորս փուեալ էր զարծաթն, զի գիտասցէ, եթէ ո՞ զինչ շահեցաւ (ԺԹ 15):

Նստի ի դատել: Ըստ այնմ՝ «Հայր ո՛չ դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդոյ իւրոյ, զի ամենեքին պատուեսցեն զՈրդի, նովին սահմանաւ՝ Հաւր» (հմմտ. Յովհ. Ե. 22):

ԵՓ *Զի յաւուր յայնմիկ յայտնելոց է վրէժխնդրութիւն Աստուծոյ՝ առնլով համարս յամենեցունց հաւատի քննութեամբ:*

Եկն առաջինն եւ ասէ. «Տէր մնասն քո տասն մնաս արար» (ԺԹ. 16):

ԻԳ *Մատեան առաջի նորա ըստ կարգի: Զի, որ կատարեալ ցուցաւ ի գործս առաքինութեան, նախ՝ զիւրն պատմել զառաքինութիւն, յոր եւ յաւդէ ոք զբանս: Յաղագս կատարեալ բարեգործութեան թուոց է ասացեալ:*

Ասէ ցնա. «Ազնիւ ծառայ» (ԺԹ. 17):

Ամենայն պատուով փառաւորէ զառաքինացեալսն՝ անուանակցութեամբ: Զի զոր Աստուծոյ ետ՝ այր ոմն ազնուական ասելով, նովին անուամբ զծառայսն կոչէ:

«Եւ բարի» (ԺԹ. 17):

Ոկ. *Որպէս ասաց ինքն. «Զի՛ք ոք բարի, բայց մի Աստուած»* (Մարկ. Ժ 18, Ղուկ. ԺԸ 19): *Քաջ ծառայ եւ բարեգործ: Այն իսկ է, բարեգործին զ[ը]նկերին կարիսն տեսանելով՝ հաղորդիլ նմա կարեկցութեամբ:*

«Զի ի փոքուդ հաւատարիմ եղեր» (ԺԹ. 17):

Զամենայն երանութիւնս այսու բանիւս յայտ առնէ:

ԻԳ *Ըստ որում զվատթարսն յանհաւատարիմ լինելոյն դատի եւ զարդարս ի հաւատարիմ լինելոյն պատուէ: Յառաջագոյն ասաց.*

«Յանիրաւ մամոնային եւ յաւտարին չեղէք հաւատարիմ» (ԺԶ. 11): *Զճշմարիտն եւ զձերն ձեզ ո՞ հաւատայ: Իսկ ասա ասէ.*

«Ի փոքուդ հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերայ փասն քաղաքաց» (ԺԹ. 17):

Արդ, ո՛չ եթէ քաղաք իցէ մարմնաւոր ի հանդերձեալսն, զի իշխանս կացուցանէ զնոսա, որք զաւրէնս նորա կատարեցին, այլ վասն զի բազմապատիկ խոստացաւ: Եւ ասի քաղաքաւք նշանակէ զանիմանալիսն, որոյ ճարտարապետ եւ Արարիչ Աստուած է:

Եկն երկրորդն եւ ասէ. «Մնասն քո» (ԺԹ. 18):

ՍՏ *Արծաթն քո հնգապատիկ ընտրեալ եւ փորձեալ ի հողոյ:*

«Հինգ մնաս արար» (ԺԹ. 18):

Արդ, յայտնէ զայս սուրբ առաքեալն Պաւղոս. «Իւրաքանչիւր ոք ի ձէնջ, եթէ սաղմոս ունիցին, թէ՛ մարգարէութիւն, թէ՛ յայտնութիւն, թէ՛ լեզուս, թէ՛ թարգմանութիւն» (Ա. Կոր. ԺԴ. 26): Իսկ եթէ ի Մատթէոս այլ ազգ կայ առակ, զայս պարտ է ասել, եթէ այլ այս է եւ այլ այն:

Ասէ եւ ցնա. «Եւ դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց» (ԺԹ. 19):

ԻԳ *Եւ սա ընդունի յարդարադատ իրաւանցն Աստուծոյ չափով առաքինութեանն զպարգեւսն:*

Կր. *Զի ըստ հաւատոցն աճեցուցանել զբան հաւատոցն եւ զառաւելութիւն գործոցն առաքինութեանց, կարգաւորութիւն յանձինս եւ ի ժողովուրդս:*

ՍՏ *Ուսուցանել եւ գործել զաստուածայինսն՝ հաճութեամբ զլուսափայլ վարսն:*

Եկն եւ միւսն եւ ասէ. «Տէ՛ր, ահա մնասն քո ծրարեալ ի վարշամակի» (ԺԹ. 20):

ԿՐ *Այսինքն՝ ո՛չ ի գործ արկ զհաւատոցն բան, մնաց անպտուղ՝ պատճառելով զանձին եւ զայլոց ծուլութիւն: Գուցէ, որք աշակերտինն եւ ո՛չ անսայցեն իմոյ վարդապետութեանս, եւ զնոցա գործսն յինէն պահանջէիր:*

«Երկեայ ի քէն, զի այր մի ստամբակ ես. բառնաս, զոր ո՛չ եդիր, եւ հնձես, զոր ո՛չ սերմանեցեր» (ԺԹ. 21):

ԻԳ *Զի թէ հեզ ասացեալ էիր զՏէրն, գոյին իրաւունք պատճառելոյ: Վստահացայ ի հեզութիւն քո եւ հեղգացայ: Իսկ որովհետեւ գիտէիր զնա խիստ եւ արկանող զտանջանս զգլխով ամբարշտաց, պարտ էր զգաստանալ եւ զարհուրել ի բռնութենէ անտի, եւ ի գործ արկանել զարծաթն, զի մի՛ պատիժս կրեսցես ի ստամբակ տեառնէն:*

Ասէ ցնա. «Ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ, ծառա՛յ անհաւատ» (ԺԹ. 22):

Զի գիտէիր զդատաւորն պատժող մեղաւորաց: Անհաւատ ասելով՝ ընկենու ի հաւատոցն զայն, որ ո՛չ սպառնալիքն եւ ո՛չ պատիւն զարթուցին ի գործելն:

«Ընդէ՞ր ոչ արկէր զարծաթն իմ ի սեղանաւորսն» (ԺԹ. 23):

Կր. *Այսինքն՝ ի լսելիս հաւատացելոց: Զի որպէս մարմինք ի ձեռն կերակրոց զաւրանան եւ տեւեն, այսպէս եւ հոգիք ի ձեռն գիտութեան հաւատոց եւ վարդապետութեան բանի պայծառացեալք լինին:*

ՍՏ *Արդ՝ ի վարդապետս հմուտս եւ բարի, որք ունին ճշմարիտ վարդապետութիւն, եւ ի նոցանէ ուսանել զմիտս գրոց, եւ առնել եւ զայլս ուսուցանել ի յառնելն: Ի դէպ է:*

ԻԳ *Իսկ ասա իւրաքանչիւր ոք ասացեալ էր բանս, որպէս ամենայն ոք արկանէ արծաթ ի սեղանաւորսն: Եւ ամենայն ումեք հարկ է այս: Եւ որպէս վարդապետացն խրատել զեկեղեցիս, այնպէս եւ ամենայն ումեք՝ իւրում տանն, որ ընդ իւրում իշխանութեամբ է, վերակացու լինել բարիոք եւ խրատիչ: Եթէ յառաջնորդաց արիւն ամենայն ժողովրդեանն խնդրի, քանի՞ եւս որդոցն, զոր ծնաւ եւ սնոյց, պահանջի: Եթէ ո՛չ՝ երկի[ւ]ղիւն Աստուծոյ սնուցանէ:*

«Եւ ես եկեալ փոկոսիւք պահանջ[էի]» (ԺԹ. 23):

Կամի յունկն նոցա զգործոյն աւրինակ: Եւ զհանդէս քեզ պարտ էր առնել եւ ինձ զդժուարագոյնսն թողուլ:

Ասէ ցպասաւորսն. «Առէ՛ք ի նմանէ զմնասն եւ տո՛ւք այնմ, որ ունի զտասն մնասն» (ԺԹ. 24):

ԿՐ *Հրաման տայ մերկացուցանել ի նմանէ զշնորհս Հոգւոյն Սրբոյ, որով արժանաւորեցաւ այնմ շնորհի, զոր թաքոյցն, եւ մատուցանել տանջանաց, ուր* «**լալ աչաց է եւ կրճել ատամանց**» (հմմտ. ԺԳ. 28):

ԻԳ *Եւ լուծանել ի հաւատոցն, զոր յայլում վայրի ընդ մէջ կտրել հրաման ետ: Նաեւ այսու ուսուցանէ, զի զբան հաւատոցն, զոր խոստովանեաց բառնան: Եւ ընդ անհաւատսն պատժեն, զի ծոյլքն ո՛չ կամեցան ստանալ ինչ [յ]անձանց ի բարեացն Աստուծոյ: Արդարութեամբ բառնայ ինքն յայնպիսեացն զայն, զոր ետ ինքն զաւազանին շնորհն, որով որդիք Աստուծոյ արժանաւորեցան կոչիլ, մերկանայ յապստամբացն: Ըստ որում՝ թագաւորք երկրի դատին զիշխան ոք մեղուցեալ: Զպատիւն եւ զհանդերձ իշխանութեանն հրաման տայ մերկանալ եւ ապա մատնել դահճացն: Ի նոյն իրաւանց հետեւին աստուածայինքն:*

Ասեն ցնա. «Տէ՛ր, ունի զտասն մնասն» (ԺԹ. 25):

Այս թուի ինձ յաչադանք: Ո՛չ զի դատաստանի քննութիւն է, եւ ո՛չ հրեշտակք ասեն ինչ, յորժամ նա հաւասարէ դատելովն, այլ կամի բանիւս յայտնել, թէ արդարոյն այնչափ պարգեւս բարի է, զի եւ հրեշտակաց նախանձ արկանեն:

«Որ ունիցի՝ տացի եւ յաւելցի, եւ որ ո՛չ ունիցի՝ բարձցի ի նմա[նէ]» (ԺԹ. 26):

Ոկ. *Որ փոյթ ունի յանձին սպասաւորել, եւս առաւել յինքն ամփոփել զպարգեւսն Աստուծոյ: Եւ զի ո՛չ ըստ չափոյ վաստակոցն են պարգեւքն, այլ ըստ աշխատութեանցն, որում արժանի արարին զանձինս: Առնուն եւ յաւելու նոցա եւ այլ եւս առատութիւն պարգեւաց:*

«Բայց զթշնամիսն իմ, որ ո՛չ կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա, ածէք այսր եւ սպանէք առաջի իմ» (ԺԹ. 27):

ԻԳ *Զգէ այնուհետեւ զբանն ի վերայ անհաւատիցն: Եւ դատի զնոցա ժպրհութիւն[ն], որք յառաջին գալ[ս]տեան նորա զքաղցրութիւն տեսին, յերկրորդի անդ զասստկութիւն ծանիցեն: Արդ, որ ի խաչին ի Հաւրէ զթողութիւն խնդրէր անաւրինացն.* «**Զի ո՛չ գիտեն զի՞նչ գործեն**» (ԻԳ. 34), *եւ «Որ ոք ասէ բան զՈրդոյ մարդոյ՝ թողցի նմա»* (Մատթ. ԺԲ. 32, Մարկ. Գ. 28), *զիա՞րդ աստ պահանջէ: Զի անցեալ է ժամանակ երկայնմտութեան, եւ այժմու ժամանակիս է, իսկ այն ժամանակն՝ իրաւանց եւ քննութեան եւ արդարութեամբ հատուցանել: Վասն այնորիկ զայս եդ առաջի, զի մի՛ ոք քաղցրութեամբ անհոգասցի, այլ զգաստն լուեալ զարհուրեսցի ի վրէժխնդրելոյն:*

Կր. *Արդ, կշտամբեալ առաքին ի տանջանս յաւիտենականս, զոր առակաւոր բանն սպանումն ասէ:*

Սպ. *Եւ զի Նաւում ասէ. «Նախանձոտ եւ քինախնդիր է Տէր» (Նաւում Ա. 2): Թէպէտ եւ երկայնամիտ է, սակայն ո՛չ արդարացուցանէ զամբարիշտն, այլ խնդրէ զվրէժս ի հակառակորդաց եւ ի թշնամեաց իւրոց* (տես Նաւում Ա. 3, 2): *Զոր Մատթէոս ասէ. «Զծառայդ անպիտան հանէք ի խաւարն արտաքին»* (Մատթ. ԻԲ. 13):

ՍՏ *Ուր հոգին ամենայնիւ խաւարի դառն տրտմութեամբ, ուր ո՛չ է այցելութիւն աստուածային լուսոյն: Որպէս Փիլոն Յիկոնացի գրովն Մովսիսի մեկնէ, եթէ՝ «Խաւարն, որ ի վերայ անդնդոց էր, արտաքս առաքեաց»: Տեսանե՞ս, զի անարժանքն արտաքսին ի բոլոր աշխարհէս եւ ի դրախտէն Աստուծոյ եւ յերկնից արքայութենէն:*

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Այր մի ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն եւ դառնալ (Ղուկ. ԺԹ. 12):

Զի՞ «**այր**» *վասն բնութեան մերոյ ասէ. զոր էառ Բանն Աստուած, իսկ «ազնուականն»՝ վասն միաւորութեան Բանին: Եւ արդ, զի՞ է նա ազնիւ քան զամենայն գոյքս, ցուցից բազում եղանակաւ:*

Ա. Նախ՝ զի Աստուած է բնութեամբ Տէր մեր մարմնով, իսկ այլ ամենայն գոյքս՝ ծառայք եւ ստեղծուածք: Եւ այս մի համեմատութիւնս բաւական է ցուցանել զամենայն, բայց յերկարեցից սակաւ մի վասն համբակացն, վասն զի որպէս կատարեալ Աստուած է Բանն մարմնով եւ նոյնն կատարեալ մարդ է:

Բ. Երկրորդ՝ զի անապական է մարմնով՝ ըստ այնմ. «Մարմին նորա ոչ եւրես զապականութիւն» (Գործք Բ. 31), *իսկ մարմինս մեր՝ ապականացու եւ ի հող լուծանելի:*

Գ. Երրորդ՝ զի մեք մեղանչեմք, իսկ նա ոչ արար մեղս եւ «ոչ գտաւ նենգութիւն [ի բերան նորա]» (Սաղմ. ԼԱ. 2):

Դ. Զորրորդ՝ զի մեք ոչ մաղ մի կարեմք սպիտակացուցանել, իսկ նա կարէ եւ այլ եւս բազում արարածս ստեղծանել:

Ե. Հինգերորդ՝ զի մեր կամքս եւ կարն հակառակ են, զի զոր, ինչ կամիմք, ոչ կարեմք առնել: Իսկ նորայն հաւասար է, զի զոր, ինչ կամի եւ կարէ, եւ զոր, ինչ կարէ եւ կամի՝ ըստ մարգարէին. «Զոր ինչ կամեցաւ եւ արար» (Սաղմ. ՃԼԴ. 6):

Զ. Վեցերորդ՝ զի մի մասն մարդոյս, այսինքն՝ հոգին կամ մարմին, ոչ է առանձնակի կատարեալ մարդ: Իսկ նորա հոգին կամ մարմին կատարեալ Աստուած է, վասն զի ի Բանն միաւորեալ է անբաժանապէս:

Է. Եաւթներորդ՝ զի մեր մարմին ոչ կարէ կենդանացուցանել զհոգիս մեր, իսկ Բանին Աստուծոյ մարմին եւ արիւն սրբէ զմեզ յամենայն մեղաց՝ ասէ առաքեալն. «Եւ կեցուցանէ զհոգիսն» (հմմտ. Բ. Կոր. Գ. 6):

Ը. Ութերորդ՝ զի մարմին մարդոյ ոչ է ճաշակելի մեզ, իսկ նորայն ճշմարիտ կերակուր է եւ արիւնն՝ ըմպելի, որպէս ինքն ասաց (տե՛ս Յովհ. Զ. 56):

Թ. Իններորդ՝ զի սոսկ մարդ ոչ կարէ զմեղս թողուլ, իսկ նա կարող է զմեղս թողուլ, զի Աստուած է բնութեամբ, որպէս ասաց. «Թողեալ լիցին քեզ մեղք քո» (Ղուկ. Է. 48), *որ է իշխանաբար:*

Ժ. Տասներորդ՝ զի ամենայն ոք, թէ աստ է, անդ չէ եւ թէ անդ է, աստ ոչ է. իսկ Տէր մեր յերկինս ընդ աջմէ Հաւր նստի եւ յամենայն եկեղեցիս պատարագի անծախապէս, այլեւ բնակէ յամենայն սուրբս:

ԺԱ. Մեծասաներորդ՝ զի արարածքս կարաւտինք ամենայն իրաց, իսկ նա անկարաւտ է բնութեամբ՝ ըստ այնմ. «Որ միայն ունի զանմահութիւն՝ բնակեալն ի լոյս անմատոյց» (Ա Տիմ. Զ. 16):

ԺԲ. Երկոտասաներորդ՝ զի մեք ցանկամք հրեշտակաց նմանիլ, իսկ նա ի հրեշտակաց երկրպագութիւն առնու՝ ի սէրովբէից եւ ի քէրովբէից:

ԺԳ. Երեքտասաներորդ՝ զի մեք փոփոխական եմք եւ այլայլական բնութեամբ, իսկ նա՝ անփոփոխ եւ անեղուն ի բնութիւն:

ԺԴ. Զորեքտասաներորդ՝ զի մեք այլ կերպիւ եմք նախքան զյարութիւնն եւ այլապէս՝ յետ յարութեանն, իսկ նա միեւնոյն գոլով մարմնովն յառաջ եւ յետոյ՝ ըստ որում ասէր. «Շաւշափեցէք զիս եւ տեսէք, զի ես նոյն եմ» (հմմտ. Ղուկ. ԻԴ. 39):

ԺԵ. Հնգետասաներորդ՝ զի մեք ի դատաստան մտանեմք, իսկ նա դատէ զմեզ եւ պատժէ եւ փառաւորէ՝ ըստ այնմ. «Զամենայն դատաստան եւ Որդւոյ իւրում» (Յովհ. Ե. 22): *Է եւ այլ բազումք, զոր առ ի չձանձրանալոյ, վասն ոչ գրեցի: Բայց այսքան պատճառ լիցի իմաստութեան ձեր, զի իմասցիք ի սկզբանէ յղացման նորին եւ ի ծնունդն, եւ ի գործն, եւ յետ յարութեան ուտելն, եւ հանդերձիւ երեւիլն, որով ցուցանէ զնա ազնիւ եւ գերակատար, վասն որոյ ասէ.* «*Այր մի ազնուական*»:

Իսկ զի՞ ասէ. «**Գնաց յաշխարհ հեռի**»: *Այսինքն՝ ի ներքին կողմ վարագուրին, այսինքն՝ յերկինս լուսեղէնս յանմատոյց բնակարանս, զոր Պաւղոս ասէ* (տե՛ս Եբր. Զ. 19): *Իսկ* «**գնալ**» *զհամբառնալն ասէ, զի կամաւ ել եւ նստաւ ընդ աջմէ Հաւր: Իսկ այն բնակութիւնն, զոր* «**հեռի**» *կոչէ, ոչ այնպէս հեռի է, իբր թէ ոտամբ չափի կամ աւուրքք եւ տարով չափի նորա հեռաւորութիւնն, այլ՝* «**հեռի**» *ասի նա ըստ Ե. (5) եղանակի:*

Ա. Նախ՝ զի նա բնակարան է Սուրբ Երրորդութեանն, իսկ այս երկիր՝ անասնոց վայր: Եւ տե՛ս, թէ որքան[1] *հեռաւորութիւն է Աստուծոյ առ անասնոց բնութիւն:*

Բ. Երկրորդ՝ զի նա անտեսանելի է զգայարանաց մարմնոյ, իսկ այս զգալի աչաւք տեսանի: Եւ իմա՛, թէ քանի հեռաւորութիւն է ի զգայարանացս առ միտս:

Գ. Երրորդ՝ զի նա անմարմնոյ վայրք է, իսկ սա՝ մարմնաւորաց: Եւ գիտեա, թէ որքան հեռաւորութիւն է մարմնոյ առ անմարմինսն:

Դ. Զորրորդ՝ զի նա անեղին տեղիք է, իսկ սա՝ եղականացս, եւ տես, թէ որքան է անդր եղականն յանեղէն:

Ե. Հինգերորդ՝ զի այս ապականեալ վայր է, իսկ նա՝ անապական, որով ճանաչել կարես զհեռաւորութիւն այնմ աշխարհին: Իսկ զի՞ «*աշխարհ*» *ասաց եւ ոչ երկիր. որ ցուցանէ, թէ արտաքոյ է ամենայն աշխարհիս, որ յերկնէ եւ յերկրէ, եւ որ ի մէջ սոցունց պարառեալ են բնութիւնքն:*

Իսկ զի՞ «**աշխարհ**» *կոչի նա. վասն է. (7) պատճառի:*

Ա. Նախ՝ զի որպէս աշխարհս հանգիստ է կենդանեաց, այսպէս եւ լուսեղէն խորանն հանգիստ է աստուածութեանն՝ ըստ այնմ. «Նստի յերկինս երկնից» (Սաղմ. ԿԷ 34), «Եւ Տէր է անուն նորա» (Սաղմ. ԿԷ 5):

[1] Դ որքան են

Բ. Երկրորդ՝ զի որպէս յաշխարհի բնակեն մեծ եւ փոքր, այսպէս եւ ի լուսեղէն խորանն հանգիստ է հրեշտակաց եւ արդարոց, եւ սրբոց, եւ զղջացողաց՝ ըստ այնմ. «Ի սեղան Հաւր իմոյ բազմեցուցից եւ անցեալ պաշտեցից» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 37):

Գ. Երրորդ՝ զի որպէս աստ յայտնի են թագաւորք եւ ծառայք, այսպէս եւ անդ Աստուած բազմի ի կառս քերովբէականս, եւ հրեշտակք՝ շուրջ զնովաւ՝ ըստ այնմ. «Տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան եւ վերացելոյ: Եւ սերովբէք [կային] շուրջ զնովաւ» (Ես. Զ 1):

Դ. Չորրորդ՝ զի որպէս աստ ամենեքեան հնազանդ[1] *կան հրամանաց թագաւորին, այսպէս եւ անդ մնան եւ սպասեն հրամանաց արքային Աստուծոյ, եւ ոչ ոք ելանէ արտաքոյ հրամանաց նորա՝ ըստ այնմ.* «Ամենեքեան քեզ սպասեն» (Սաղմ. ՃԳ. 27):

Ե. Հինգերորդ՝ զի որպէս աստ կերակրով ապրին ամենայն կենդանիք, այսպէս եւ անդ յաստուածային լուսափայլութենէն զմայլեալ հոգիքն կան եւ մնան յաւիտենական:

Զ. Վեցերորդ՝ զի որպէս աստ որոշեալ է իւրաքանչիւր տուն, այսպէս եւ ամենայն սրբոց զանազանեալ է բնակութիւնք նոցին ի վայրի միոջ՝ ըստ այնմ. «Ի տան Հաւր իմոյ աթեւանք բազում են» (Յովհ. ԺԴ. 2):

Է. Եաւթներորդ՝ զի որպէս աստ ոմն զաւրաւոր եւ ոմն նուազ փառս ունի, այսպէս եւ անդ ոմն՝ հարիւրաւոր եւ ոմն՝ վաթսնաւոր եւ երեսնաւոր եւ այլ փառք արեգական եւ այլ՝ լուսնի: Իսկ զի՞ գերագոյն է նա, քան զսա: Այս է, զի զոր ինչ տեսանեմք ի սմա, մեղք եւ մահ, եւ ապականութիւն, եւ կարաւտութիւն, ցանկութիւն, զրկումն եւ սպանումն, ախտ եւ այլն ամենայն, ոչ է անդ ամենեւին՝ ըստ այնմ. «Ուստի մերժեալ են ցաւք եւ տրտմութիւն եւ հեծութիւն» (հմմտ. Ես. ԾԱ. 11) եւ այլն:

Իսկ ասէն՝ «**առնուլ իւր թագաւորութիւն եւ դառնալ**», *թէպէտ եւ տան զայսպիսի իրս առնլոյն, սակայն առ նա անպատշաճ է, վասն զի ընդ առնուլն զամենայն ունի գերալրապէս: Բայց որպէ՞ս իմասցուք զայս: Արդ, վասն զի եկն Տէրն մեր, եւ ամենայն ինչ նորա ծածկեցան աստ, զի մի՛ չարն գիտասցէ զայս, այս է, զի աղքատ կերպիւ շրջեցաւ եւ յաղքատ մաւրէն ծնաւ, եւ հետիոտս ընթացաւ, եւ չարչարեցաւ: Նա, թէեւ մեռաւ, այլեւ ամենայն նուաստականքն, որք կարծիս տան մարդկան, իբր թէ ընդ աղքատ կերպին,*

[1] Դ հնազանդ

որ յաշխարհի երեւեցաւ առնուլ զթագաւորութիւն, այլ նա ի բնութենէ ունի զթագաւորութիւնն: Այլ զի յայտնի այժմ նա Տէր գոլով եւ թագաւոր երկնի եւ երկրի. այն է «**առնուլն**»*: Իբր թէ յայտնէ թագաւորութիւնն նա, որ աղքատ կերպիւ երեւեցաւն յերկրի: Ապա թէ ոչ, զի՞նչ ցուցանէ ասելն.* «Իշխանութիւն ունի Որդի Մարդոյ [յերկրի] թողուլ զմեղս» (Մատթ. Թ. 6), *եւ զիշխանութիւն եւ ետ աշակերտացն թողուլ եւ առնուլ, եւ հաւատայ նմա զփականս արքայութեանն եւ այլն: Եւ արդ, այս ամենայն ցուցանէ նախքան զյարութիւնն: Իսկ յետ յարութեանն ոչ էր նմա այս իշխանութիւն, զի ասէր.* «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի» (Մատթ. ԻԸ. 18): *Եւ Պաւղոս, որպէս թէ տակաւին եւս ոչ ունի, ասէ.* «Յորժամ դադարէ ի ձեռս զթագաւորութիւնն Աստուծոյ եւ Հաւր» (Ա. Կոր. ԺԵ. 24): *Նմանապէս եւ Դանիէլ, թէ՝* «Տուաւ նմա իշխանութիւն եւ թագաւորութիւն նորա յաւիտենական» (հմմտ. Դան. Է. 14): *Այլ այս է, ըստ որում ասացաւ, զի վասն յայտնելոյն ասէ, ուր յայտնի երեւի աստուածութիւն նորա եւ թագաւորութիւն: Իսկ յորժամ յերկրի շրջեցաւ, ի ծածուկ էր: Իսկ զի՞* «դառնալ» *ասէ. իբր զի հաստատեաց աւր մի, յորում գայ կրկին անգամ՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս եւ յայնժամ յայտնէ զինքն իւր ընտանի փառաւքն: Այսքան վասն վերանալոյն ասաց եւ դարձեալ վասն գալոյն: Իսկ յորժամ երեւեցաւ մեզ ծննդեամբն ի կուսէ եւ վարագուրեաց ի մէնջ զաստուածութիւնն իւր թանձրագոյն մարմնովն: Եւ կոչեաց զամենայն ազգաց ծառայս իւր եւ ետ նոցա տասն մնաս եւ ասէ.* «**Շահեցէ՛ք զայդ**» (հմմտ. ԺԹ. 13): *Արդ, այս առակ նման է այնմ առակին, որ ի Մատթէոս գրեալ են քանքարքն* (տես Մատթ. ԻԵ. 14-30): *Եւ կարծելի եղեւ, թէ նոյն է, սակայն Բ. (2) իրաց յայտնի է այլ գոլ:*

Ա. Նախ՝ զի անդ այլ չափով առաջնոյն էր ետ, եւ այլ՝ երկրորդին, եւ երրորդին, իսկ աստ հաւասար չափէ ամենեցուն:

Բ. Երկրորդ՝ զի անդ որչափ ընկալան, կրկնապատիկ շահ բերին, իսկ աստ ի հաւասարէ, զոր ընկալան, ոմն՝ բազում եւ ոմն՝ սակաւ մատոյց: Արդ, ի համեմատութենէ ուսաք, զի քանքարսն առ վարդապետսն ասաց, իսկ զմնասս զայս հասարակաբար առ ամենեսեան տուեալն աւրինաց նորա հնազանդութիւն՝ գործել զնա եւ պահել, որում ամենայն ոք կարէ տիրել: Իսկ «զտասն» *ասացեալ զմնասն՝ զկամսն զդայարանաւք չափէ, որով ընդունիմք կամ ի բաց ընկենումք: Եւ դարձեալ զաւրէնս իւր թուեաց՝ ըստ աւրինացն ի մի ածեալ, վասն զի մինն միւսովն պահեալ լինի: Արդ, այս է.*

«Շահեցուցէք մինչեւ զամ ես միւս անգամ» (հմմտ. ԺԹ. 13):

Իսկ այս յայտնի է ի տեսողացն, զի զաւրէնսն, զոր ետ, պարտ է ի գործ արկանել ամենայն զգուշութեամբ եւ միշտ սպասել եւ ակն ունել գալստեան նորա: Եւ ըստ աշխատանաց աւրինացն ակն ունել հատուցման պսակին:

Իսկ զի՞ ասէ.

Քաղաքացիք յղեցին, թէ՝ «Ոչ կամիմք զթագաւորելն դորա ի վերայ մեր» (հմմտ. ԺԹ. 14):

Այն է, զոր հրէայքն աղաղակէին. «Չիք մեր թագաւոր, [բաց ի կայսերէ]» (Յովհ. ԺԹ. 15), *վասն որոյ Յոհաննէս վկայէ.* «Յիւրսն եկ, եւ իւրքն զնա ոչ ընկալան» (Յովհ. Ա. 11): *Եւ զպատճառն ասէ, թէ՝* «Սիրեցին [մարդիկ] զխաւար առաւել, քան զլոյս» (Յովհ. Գ. 19), *զի լոյսն յայտնի առնէ զգողն, իսկ խաւարն ծածկէ: Եւ ոչ միայն ատեցին, այլեւ սպանին: Մանաւանդ, թէեւ զվկայս աստուածութեան նորա հալածականս առնէին: Եւ այս է ասելն, թէ՝* **«Ոչ կամիմք զթագաւորելն դորա ի վերայ մեր[1]»:**

Եւ եղեւ դառնալ նմա (հմմտ. ԺԹ. 15):

«Դառնալն» յայտնի ցուցանէ զբնականապէս թագաւորութիւն իւր, եւ նստի ի դատել՝ ըստ այնմ. «Հայր ոչ դատի զոք, այլ՝ զամենայն դատաստանն եւ Որդւոյ իւրոյ» (Յովհ. Ե. 22): *Աստ ստուգապէս զքննութիւնն ուսուցանէ, զոր առնէ ի հանդերձեալ դատաստանին: Եւ նախ զառաքինիսն դատէ, որք ասեն.*

«Մնասն քո տասն մնաս արար» (ԺԹ. 16):

Այսինքն՝ զի կատարեալ արարի զառաքինութիւնն, զի Ժ. (10) թիւն զկատարեալն ցուցանէ, որպէս ասացաւ ի վերոյ: Եւ նորա ասացեալ՝

«Ծառայ բարի, ի սակաւ հաւատարիմ [եղեր], լիջիր ի վերայ Ժ. (10) քաղաքի» (հմմտ. ԺԹ. 17):

Այսինքն՝ կատարեալ պսակ քեզ շնորհեսցի, զի թէ զաւտարն ճշմարտապէս շահեցուցեր, զիմն կարես ամբողջ պահել:

Եւ զի՞ բազմապատիկ խոստացաւ կատարողացն զաւրէնսն՝ ասելով. «Ճ.(100)ապատիկ առցէ եւ զկեանսն [յաւիտենականս] ժառանգեսցէ»

[1] Դ իմ] մեր

(Մատթ. ԺԹ. 29): *Նոյն եւ աստ Ժ. (10) քաղաքաւս զնոյն ի նոյն նշանակէ իմանալ, զի տե՛ս, թէ քանի շատ է Ժ. (10) քաղաքն, քան զտասն արծաթն: Նմանապէս եւ երկրորդին պատասխանէ՝ տալ իշխանութիւն ի վերայ Ե. (5) քաղաքաց (տե՛ս Ղուկ. ԺԹ. 18): Իսկ երրորդ թշուառականն եւ անաւրէնութեամբ կացեալ, մատուցեալ ամբաստան լինի զքաղցրութենէ նորա եւ այսպիսի բանս ասէ, որ ոչ արդարացուցանէ, այլ բարկացուցանէ: Ասէ.*

«Գիտէի, զի այր մի խիստ ես, հնձես զոր ոչ սերմանեցեր» (հմմտ. Ղուկ. ԺԹ. 21, Մատթ. ԻԵ. 24):

Եւ թէ հեզ էր ասացեալ, զոյին իրաւունք, իբր թէ ասէր՝ վստահացայ ի քո հեզութիւնդ եւ հեղգացայ: Այլ՝ աւտարոտի ասաց եւ «ստամբակ», այսինքն՝ գոռոզ եւ այլն, վասն որոյ ասէ.

«Ծառայ անհաւատ» (ԺԹ. 22):

«Անհաւատ» ասելով՝ ընկենու ի հաւատոցն: Եւ յիրաւի, զի զյոյսն ոչ յորդորեաց ի գործ պատուիրանին, եւ ի սպառնալեաց տանջանացն ոչ երկեաւ, որ զպատուիրանն արարեալ էր, վասն այն.

«Անհաւատ»,- ասէ,- «ընդէ՞ր ոչ արկեր ի սեղանաւորս, եւ ես եկեալ՝ փոկոսաւք պահանջէի» (հմմտ. ԺԹ. 23):

Իսկ աստ ընդդէմ բերեն, զի թէ քանքարացն առակքն ի վարդապետսն առեալ լինին: Եւ այս եւս ահա տարեալ եհան ի վարդապետսն, որոց պատասխանեմք, թէ արդարեւ ամենեցուն հարկ է այս, զի որպէս վարդապետաց է խրատել զեկեղեցիս, նոյնպէս եւ ամենայն ումէք իւրում տանն պարտ է վերակացու լինել եւ խրատել բարւոք: Եւ թէ յառաջնորդէն ամենայն արիւն ժողովրդեանն խնդրի, քանի եւս առաւել ի մարմնաւոր ծնաւղացն՝ զորդւոցն, զոր ծնաւ, պահանջի, թէ երկիւղն Աստուծոյ ոչ սնուցանէ, վասն որոյ ասէ.

«Առէք ի դմանէ եւ տուք այնմ, որ ունի զտասնն» (հմմտ. ԺԹ. 24, հմմտ. Մատթ. ԻԵ. 28):

Այս է լուծանել ի հաւատոցն, զոր այլում վայրի «ընդ մէջ կտրել» *հրաման ետ, զի զբան հաւատոցն, զոր խոստովանեաց Բանիւն, եւ զմկրտութեան շնորհն առնու եւ ընդ անհաւատսն պատժէ յաւի-*

տենական հրովն: Իսկ հրեշտակք, զի յաչաղկոտք են, ասեն՝ Տէր ունի զԺ.ն (10) մնասն (տես Ղուկ. ԺԹ. 16): *Եւ արդ, այնչափ առաւել է պսակք արդարոցն, որ զհրեշտակս ի նախանձ արկանեն:*

[Հարց]: Իսկ թէ վասն է՞ր զչնորհ աւազանին հանէ:

Պատասխանի: Այս է, զի յորժամ յաւազանն մկրտին, Աստուծոյ որդիք լինին, իսկ Աստուած զիւր որդիսն ոչ տանջէ: Այլ, զոր աւրինակ, թագաւոր ոք, յորժամ զիշխան ոք յիշխանութենէն կամի ձգել եւ սպանանել, յառաջ զպատիւ իշխանութեանն զհանդերձն հանել տայ եւ ապա՝ սպանանել: Նոյնպէս եւ Աստուած ոչ կամի որդիական անուամբ տանջել զմեղաւորսն, այլ՝ նախ քակէ ի նմանէ զանուն եւ ապա՝ դժոխոցն մատնէ: Իսկ զթշնամիսն, այսինքն՝ զհրէայսն, որք ոչ կամեցան զթագաւորութիւն նորա, տանջէ սպանմամբ ի գեհեանն յաւիտենական: Արդ, զայսոսիկ աւրինակ տայ զհրէայսն, որք ոչ կամեցան զթագաւորութիւն նորա, տանջէ սպանմամբ, զի մի միայն զայժմու գիտութիւնս նորա իմանալով, հեղգասցուք ի սուրբ պատուիրանաց նորա, այլ զսաստն եւ զվրէժ դատաստանին ի միտ ածցուք եւ պատրաստ լիցուք սուրբ գործով, այսինքն՝ ոչ միայն սուտ անուն քրիստոնեութեան, այլ ըստ անուանն եւ զգործն հաստատուն ունիցիմք, զի մի՛ ընդ անհաւատսն պատիժ կրեցեմք, վասն որոյ այս ամենայն աւրինակ վասն տկար մտաց մերոց հրամայեաց: Այլ, ո՛վ սիրելիք որդեակք իմ, զի զոր ինչ առնեմք մեք եւ մոռանամք, նա անմոռաց պահէ, եւ զի զիւրն խնդրէ եւ զչահն պահանջէ: Արդ, եթէ զչնորհս աստուածային առեալ ի գանձուց նորա ձրի եւ ծախէ ոք՝ մեծամեծ գին առնելով, ուրեմն լսէ նա՝ «ծառայ չար եւ վատ», զի այնպիսին շահ ոչ բերէ Տեառն իւրոյ, այլ՝ որպէս ձրի գտաւ եւ ձրի վաճառեսցէ՝ ըստ այնմ. «Ձրի առէք եւ ձրի տուք» (Մատթ. Ժ. 8): *Մանաւանդ, զի շահ ի յոգիսն ածէ, որ ձրի վաճառեաց: Իսկ որ զմարմինն պարարէ աստուածային շնորհաւք, թաղելով յերկրի զանճառ գանձ նորա, վճիռ դատաստանի երեւեսցի նմա: Իսկ մեզ մի՛ հասցէ պարտապան գտանել մեծի տանուտեառն, այլ պարզ դիմաւք ցուցանել նմա զչահն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:*

ԱՌԱԿ ՃՐԱԳԻ
Ղուկ. Ը. 16-18

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Ոչ ոք ճրագ լուցեալ ծածկէ զնա ընդ անաւթիւ կամ ի ներքոյ մահճաց դնէ, այլ ի վերայ աշտանակի, զի որք մտանեն, տեսցեն զլոյն (հմմտ. Ղուկ. Ը. 16):

Ոչ ասէ զայս յաղագս երեւելի ճրագիս, այլ վասն իմանալւոյն ասէ. բանի ուղիղ վարդապետութեանն, որ ոչ ծածկի անաւթիւ իւիք, կամ ի ներքոյ մարմնոյ, այլ ի վերայ աշտանակի իւրոյ. **«անաւթ է տան»** *հոգւոյս զաւրութիւնք.* **«մահիճք»** *մարմինս, որք մտանենն՝ լսողք բանին վարդապետութեան լուսոյն ճշմարտի:*

Որ ունիցի, տացի նմա, եւ որ ոչն ունի եւ զոր կարծիցէ ունել, հանցի ի նմանէ (հմմտ. Ը. 18):

Որ ունի զճրագն եւ դնէ ի վերայ աշտանակի, տացի նմայ գաղտնին եւ անյայտն, իսկ որ ոչն լուցանէ եւ դնէ ի վերայ աշտանակին, թէպէտ եւ կարծէ իմանալ ինչ, բարձցի յանդիմանեալ, զի մի՛ ստութեամբ ուսուցէ:

ՎԱՍՆ ՀՐԱՒԻՐԵԼՈՅՆ Ի ԽՆՋՈՅՍ

Ղուկ. ԺԴ. 8-11

ԻԳՆԱՏԻՈՍ

Տեսեալ զնոսա, թէ զիա՞րդ բարձրնփիր լինէին ի կոչունսն, ասէ ցնոսա. «Յորժամ կոչիցիս ի հարսանիս կամ ի կոչունս, մի բազմիցիս յառաջին բարձին. գուցէ պատուականագոյն քան զքեզ իցէ կոչեցեալ ի նմանէ. եւ եկեալ, որ զքեզ եւ զնա կոչեաց՝ ասիցէ ցքեզ. «Տո՛ւր սմա տեղի». եւ ապա սկսանիցիս ամաւթով զյետին տեղին ունել (Ղուկ. ԺԴ. 7-10):

Առ խոնարհութիւնն մեծաւ խնամով կրթէ զմեզ ոչ միայն անդի հատուցմամբքն, այլեւ ի մերձակայիցս ցուցանէ ի փառասիրութենէն դժուարին կիրք եւ ի խոնարհութենէ՝ հեշտալիք: Զայս աւրինակ բանից յամենայն իրս իբրեւ զաւգտակարս դնէ, որպէս յորժամ ասէ. «Լե՛ր իրաւախոհ ընդ ոսոխին քում զերծանիլ ի նմանէ, զի մի մատնեսցէ զքեզ դատաւորին եւ դատաւորն՝ դահճի» (հմմտ. Մատթ. Ե. 25): *Արդ, այսպէս կարեւոր համարի ոչ միայն զեհենին երկիւղիւն զարհուրեցուցանել, այլ եւ աստի՝ ամաւթովս: Արդ, զայս խնամս առաջի արկանէ, զի են որ քանի յանտի կենացն վրիպիլ՝ յաստեացս զարհուրին, վասն որոյ ընդ այնպիսի թանձրամիտսն խաւսելով՝ ասէ. «Մի՛ անմտութեամբ զաթոռոցն առաջինն ընտրէր, զի մի ամաւթով եւ նախատանաւք զվերջինն կալցես տեղի»: Ապա դարձուցանէ զբանն ի խրատու ի հեշտալիսն եւ ասէ.*

Այլ երթիջիր, բազմեսջիր ի յետին բարձին եւ այն, որ կոչեացն զքեզ, ասիցէ քեզ. «Բարեկա՛մ, ի վեր մարի՛ր»: Եւ եղիցի քեզ փառք առաջի բարձակցացն քոց» (հմմտ. ԺԴ. 10):

Արդ, զայս յաւելու, զի իւրեանցն ախտիւն գրգեալքն ուսցին զխոնարհութիւն, զի թէեւ ոչ վասն աստուածային փառացն, գոնէ վասն մարդկային փառացն անսալ պարտ է եւ խոնարհիլ: Զի կարի չար են այսպիսի ախտք, որ ի փառասիրութենէ եւ յամբարտաւանութենէ, եւ յոխակալութենէ, եւ ի նախանձուէ մտանեն եւ

ըմբռնեալ՝ վարակեն զոգիսն: Զի այլ յանցանք թէպէտ եւ ապականիչք են ոգւոց, սակայն զգայութիւնս փոքր ինչ հեշտացուցանեն, իսկ սոքա զոգիսն հանդերձ մարմնովն հաշեն եւ թշնամի եւ ատելի ամենայն ուրուք առնեն: Նորին աղագաւ երանէ Տէրն զաղքատս հոգւով եւ զհեզս եւ զսգաւորս, զի այնպիսիքն յայսպիսեաց ախտից ազատ են եւ ի մարմնի են խաղաղականք, եւ առանց ամբոխելոյ, եւ սիրելիք բազմաց, եւ բարեբանեալք յամենեցունց, եւ առ Աստուծոյ բարձունք, եւ հատուցման բարեացն արժանաւորք: Իսկ փառասէրք եւ անբարտաւանք աստ՝ զամենեսեան ատելիս եւ անպատուադիրս եւ պարսաւադէտս ունին եւ առ Աստուծոյ, անարդ եւ յետնեալք, հրոյ եւ խաւարի ժառանգաւորք: Դարձեալ քննելի է բանս, զի ի սկզբան բանին առակ ասաց, թէ իցէ, իսկ այսպէս սոսկ պարզ՝ ուղիղ են: Ապա թէ յեղանակելով զգուշագոյն իցէ, ունի այս իմաստ զնոյն ինքն զնա լինել կոչող իբրեւ զփեսայ այսր մաքուր եւ անախտ հարսանեացս եւ առագաստի ուրախութեան, յորում ժողովեաց ի ձեռն հաւատոյն կոչման ի ճանապարհաց եւ ի հրապարակաց զմեզ՝ բարձր քարոզութեամբ առաքելոցն, եւ խրատէ՝ ոչ անձամբ զանձն յառաջ մատուցանել յաստիճան ինչ բարձրագոյն, որպէս զայնոսիկ, որ պարսաւեալ են ի գրոց, որ նեղին եւ մղին առ սեղանն եւ ոչ անսան Աստուծոյ ընտրութեանն, կալ մնալ կոչողին շնորհելոյ զպատիւն, որպէս ճանաչէ այն, որ զանյայտսն տեսանէ, զի լինիցի փառաւք պատուասիրութեան կոչողին: Եւ այսպէս, խոնարհք պատուեալ, բարձրանան յանկապուտ բարձրութեանն: Իսկ որ աստ գուն գործեն՝ յարգել զանձինս, յայնմ ատենին յետնեալ գտանին եւ կորացեալ ամաչեն, զի զսնոտիսն խնդրեցին եւ աստուածայնոցն ոչ բաղձացան:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Ասէ ցնոսա. «Յորժամ կոչեսցիս ի կոչունս, մի՛ բազմեսցիս յառաջին բարձին» (Ղուկ. ԺԴ. 8):

ԻԳ *Կրթէ զմեզ մեծաւ խնամով ի խոնարհութիւն: Ո՛չ միայն անտի հատուցմանն, այլեւ ի մերձակայիս ցուցանէ զփառասիրութիւնն դժուարին իրք, իսկ զխոնարհութիւնն՝ հեշտալիք: Զայս աւրինակ բանից յամենայն իրս իբրեւ զաւգտակարս դնէ, որպէս ասաց.* «Լե՛ր իրաւախորհ ընդ ոսոխին քում՝ զերծանել ի նմանէ, զի

մի՛ մատնեսցիս դատաւորին» (հմմտ. Մատթ. Ե. 25): *Այսպէս կարեւոր համարի ո՛չ միայն զեհենին երկի[ւ]ղիւն զարհուրեցուցանել, այլեւ աստի ամաւթովն, զի են, որքան յայն կենացն վրիպեալ, յաստեացս առաւել զարհուրին: Յիսուս ինքն է կոչաւղ փեսայ մաքուր եւ անախտ հարսանիս եւ առագաստ ուրախութեան երկինք, յորում ժողովէ ի ձեռն հաւատոցն կոչման՝ քարոզութեամբ առաքելոցն:*

Մի՛ բազմիցիս յառաջին բարձին (ԺԴ. 8):

Ընդ թանձրամիտսն խաւսի մի՛ անմտութեամբն զառաջին աթոռսն խնդրել, զի մի՛ ամաւթով զվերջինն ընկալցիս: Խրատէ մի՛ անձամբ զանձն յառաջ մատուցանել յաշտիճան ինչ բարձրագոյն: Որպէս զայնոսիկ, որ պարսաւեալ են ի գրոց, որ մղին առ սեղանն եւ ո՛չ անսան Աստուծոյ ընտրութեանն՝ կոչողին շնորհելոյ զպատիւն: Որպէս ճանաչէ այն, որ զանյայտսն տեսանէ, զի լիցի կոչողին փառաւք պատուասիրութեամբ:

«Այլ յորժամ կոչեացիս, բազմեսջիր յեփին տեղոջ: Եւ այն, որ կոչեաց զքեզ, ասիցէ. «Բարեկա՛մ, ի վեր մատիր»: Եւ եղիցի քեզ փառք առաջի բարձակցացն քոց» (ԺԴ .10):

Զի իւրեանց ախտիւն գրգեալք՝ ուսցին զխոնարհութիւն: Եթէ ո՛չ վասն աստուածային փառացն, գոնեայ վասն մարդկան փառացն պարտ էր խոնարհել: Զի կարի չար է փառասիրութեան ախտն, յամբարտաւանութիւն եւ յոխակալութիւն, եւ ի նախանձ ըմբռնեալ արկանեն զհոգին: Զի այլ յանցանք թէպէտ եւ ապականիչ են ոգոց, սակայն զգայութիւնքն հեշտանան փոքր ինչ: Իսկ սոքա զոգիսն հանդերձ մարմնովն հաշեն եւ թշնամի եւ ատելի ամենեցունց առնեն: Վասն որոյ Տէրն երանէ զաղքատս եւ զհեզս եւ զսգաւորս (հմմտ. Մատթ. Ե. 3-5), *զի այնպիսիքն յայսպիսեաց ախտից ազատեն եւ ի մարմնի խաղաղ կեանս ունին՝ եւ առանց ամբոխելոյ, եւ սիրելիք ամենեցունց, եւ Աստուծոյ բարեացն արժանաւորք: Իսկ փառասէրք եւ ամբարտաւանք անտ՝ յամենեսին ատելի[ս] եւ անպատուադիրս, եւ աստ պարսաւեալք են եւ ի հանդերձեալսն յԱստուծոյ անարգեալք եւ խաւարի ժառանգորդք:*

Զի ամենայն, որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրա[ցցի] (ԺԴ. 11):

US *Իսկ որ զինքն խոնարհեցուցանէ կամաւորութեամբ, նա բարձրացցի: Իսկ որ ի տնանկութեան է, խոնարհի եւ տառապի, կամ ի նախատանաց ուրուք, այսոքիկ ո՛չ է խոնարհութիւն: Բայց Քրիստոս հրամայէ ինքն զինքն խոնարհեցուցանել յուժարութեամբ, որպէս ինքն կամաւորութեամբ խոնարհեցաւ:*

Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի (ԺԴ. 11):

Իգ. *Իսկ որ աստ գոն գործել յարգել զանձինս, յայնմ ատենին յետնեալ գտանին: Եւ կորացեալ ամաչեսցեն, զի զսնոտիս բարձրութիւն խնդրեցին եւ ո՛չ աստուածայնոցն բաղձացան:*

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՀՐԱՒԻՐԵԼՈՅՆ
Ղուկ. ԺԴ. 12-14

ԻԳՆԱՏԻՈՍ

Տայ պատշաճ խրատ եւ այնմ, որ առնիցէ ընդունելութիւն, մի բնաւ կոչել զոք ի փարթամաց կամ ի բարեկամաց, զի ունին նոքա, ասէ, հատուցանել քեզ հաւասար չափով եւ առ Աստուծոյ եւ ոչ մի ինչ հատուցումն: Որպէս այն, զի մեղաւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն զկշիռն:

«Այլ դու, - ասէ, - կոչեա՛ զաղքատս եւ զամենայն հաշմեալս, որոց ոչ գոյ փալ այժմ փոխարէնս: Եւ յայնժամ երանելի ես» (հմմտ. Ղուկ. ԺԴ. 13-14):

Զի զԱստուած ունիս պարտական, եւ հատուցանէ քեզ բազմապատիկ յարքայութեանն, ի հատուցման արդարոցն (հմմտ. ԺԴ. 14):

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Ասէ ցկոչնապէրն. «Յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս եւ զեղբարս եւ զազգականս քո» (Ղուկ. ԺԴ. 12):

Մի՛ բնաւ զոք կոչել ի փարթամաց կամ ի բարեկամաց, զի ունին նոքա հատուցանել հաւասար չափով: Եւ յԱստուծոյ եւ ո՛չ մի ինչ հատուցումն լինի քեզ: Որպէս ասաց Քրիստոս. «Մեղաւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն զկշիռն» (Զ 34):

«Այլ դու կոչեա՛ զաղքատս եւ զամենայն կաղս եւ զկոյրս, որոց ո՛չ է փալ այժմն փոխարէն: Եւ յայնժամ երանելի ես» (ԺԴ. 13-14):

Զի զԱստուած ունիս պարտական, եւ հատուցանէ քեզ բազմապատիկ յարքայութեանն արդարոց:

ՎԱՍՆ ՄԵԾԻ ԽՆՋՈՅԻՑ
Ղուկ. ԺԴ. 15-24

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Եւ նա ասէ ցնոսայ. «Այր ոմն արար ընթրիս մեծ, կոչեաց զբազումս: Եւ առաքեաց զծառայս իւր ի ժամու ընթրեացն՝ կոչել յ[ը]նթրիսն» (հմմտ. Ղուկ. ԺԴ. 16-17):

«Ծառայ»՝ Քրիստոս, վասն զի ի կոչումն եւ ի փրկութիւն ամենեցուն ծառա[յ]եաց Հաւր՝ զկերպարանս ծառայի առեալ, եւ եկեալ ոչ ի սպասաւորիլ, այլ ի սպասաւորել. «Եւ ես,- ասէ,- ի միջի ձերում ոչ բազմեալ, այլ սպասաւոր» (հմմտ. Ղուկ. ԻԲ. 27)*: «Ժամ ընթրեացն»՝ գալուստն առաջին:*

Առաջինն ասաց. «Ագարակ գնեցի» (ԺԴ. 18), *եւ որ ի կարգին է.*

Ոչ կամեցան գալ յ[ը]նթրիսն, որք ուսան եւ գնեցին ագարակս՝ աղանդ աւտարս յաստուածապաշտութենէ: Ունի այնպիսին հարկաւորութիւն ելանել եւ տեսանել զագարակն, այսինքն՝ փորձել եւ քննել զաղանդ հաւատոյն, զոր ստացաւն:

Եւ միւսն ասաց. «Զոյգս եզանց գնեցի հինգ, եւ երթամ փորձել զնոսայ» (հմմտ. ԺԴ. 19):

«Զոյգս հինգս» ասացաւ, որ թողեալ զիմանալի եւ զմտաւոր զգայութիւնս, եւ միայն մարմնեղէն հինգ զգայութեամբքս իմաստասիրէ:

Եւ այլն ասաց. «Կին առի եւ վասն այնորիկ ոչ կարեմ գալ» (հմմտ. ԺԴ. 20):

«Կին առի»՝ ասէ, ոչ զիմանալի եւ զհոգեւոր իմաստութիւն, այլ զմարմնեղինաց եւ զաշխարհիս այսորիկ զբաղանս եւ զցանկութիւնս:

Եւ եկեալ ծառայն՝ պատմեաց զայն տեառն իւրոյ (հմմտ. ԺԴ. 21):

Որ պատմէ զհրաժարումն նոցայ յընթրեացն Քրիստոսէ՝ հեռացուցնելով ի Հրէից զփրկութիւն աստուածային:

Եվ[1] վաղվաղակի յանցս եւ ի հրապարակս եւ ի փողոցս քաղաքիդ (հմմտ. ԺԴ. 21):

Սոքա են հեթանոսք ընդարձակ, որ նստին, այնոքիկ են, որք զ[ը]նդարձակ ճանապարհ գնացին, եւ վարէին զկեանս իւրեանց առանց վարդապետութեան եւ հաւատոյ. «եւ ի փողոցս», որք երբեմն երեւեալ կարծէին զչարութեան գնացս իւրեանց. «քաղաք»՝ երկրային աշխարհս. «աղքատք, խեղք, կաղք, կոյրք» (տես ԺԴ. 21)՝ յիմարք աշխարհիս այսորիկ. «աղքատք»՝ զաղքատացեալս յաստուածպաշտութենէ: Նոյն աւրինակաւ իմացիր, «զխեղս եւ զկոյրս եւ զկաղս». սոքայ ոչ տեսանէին եւ ոչ գնային ըստ ճշմարիտ իմաստութեանն:

Եւ ասէ տէրն ցծառայն. «Եվ ի ճանապարհս եւ ի ցանկս եւ արա մտանել այսր» (հմմտ. ԺԴ. 23):

Կոչեցեալ յընթրիսն, որք ի փողոցս քաղաքին նստէին եւ ի հրապարակս հրամա[յ]է կոչել եւ զայնոսիկ, որք արտաքոյ քաղաքին. եւ եթէ «քաղաք» զերկրաւոր աշխարհս անուանեցաք, արտաքոյ քաղաքիս ո՞վ արդեւք իցեն, զոր կոչել հրամայեաց. կարծեմ, եթէ որք դժոխս արգելեալ էին հոգիքն սրբոցն, զորս ազատեաց Քրիստոս իւրովն իջանելով ի դժոխս:

ԻԳՆԱՏԻՈՍ

Զայս լուեալ՝ ոմն բաղձացաւ բարեացն: Ոչ արդարեւ իմանալեացն, ըստ որում է իրացն բնութիւն, այլ տակաւին մարմին գոլով մարմնապէս իմանայր զհատուցումն արդարոցն՝ որպէս սադուկեցիքն ասեն. «Ի յարութեան ո՞ւմ ի նոցանէ լինիցի կին» (հմմտ. Մատթ. ԻԲ. 28, Ղուկ. Ի. 33): *Նովին ցանկութեամբ ընդունեալ այրս այս, մարմնոյ հեշտացուցիչ կերակուր կարծելով, երանեաց, որ կերիցէ ճաշ յարքայութեանն Աստուծոյ: Այլ Յիսուս ոչ սաստեաց, զի տգիտութեամբ եւ ոչ թէ չարութեամբ խաւսեցաւ: Ապա առակս յաւդէ, որով զնոսա տարագիրս յայնպիսի երանութեանցն ցուցանէ լեալս[2]: Զի ահաւասիկ, հրաւիրեաց զնոսա մարգարէիքն եւ կոչեաց առաքելաւքն բազում խնամակալութեամբ, եւ նոքա, յուլացեալ եւ կապեալ աշխարհի ցանկութեամբ, վերջացան գնալ զհետ կոչողին,*

[1] ՍՏ եւ
[2] ԻՏ լեալ

այլ իւրաքանչիւր ոք զիւրն առաջի դնէ պատճառս մեղաց, որով ըմբռնեցաւ ոմն յագարակս եւ ոմն ի լուծս եզանց հնգից, թերեւս ամենայն զգայարանաւքն շաղախեալքն եւ այլ ոմն ի սէր կանանց հարեալ՝ ոչ կամեցան անսալ կոչողին, իսկ այլք կարի չարացան անհաւատութեամբ, անարգանս եւ վէրս, եւ մահս, եւ անհնարին տանջանս հասուցին ի վերայ նոցա, որ կոչեցին զնոսա յարքայութիւնն եւ ի փառսն Աստուծոյ: Եւ ապա՝ զի՞նչ. բարկանայ անբարկանալի բնութիւնն, մերժէ զհրէայսն եւ հրաման տայ՝ կոչել զհեթանոսս, զկաղացեալսն ի ճանապարհացն արդարութեան եւ զկուրացեալսն՝ ի լուսոյ գիտութեանն Աստուծոյ, եւ աղքատացեալսն՝ ի շնորհաց Հոգւոյն եւ ի հայրենի փառացն՝ ժողովել զնոսա ի գռեհաց, ի փողոցաց, ի քաղաքէ անբարշտաց, ի չարեաց ճանապարհաց: Եւ այսպէս գիւրալուր հեթանոսք անսան կոչողին, եւ իսկ եւ իսկ կատարի հրամանն, վասն զի հեթանոսք նուիրեցին զանձինս իւրեանց Աստուծոյ եւ փոխանակ տանն Յակոբայ, որ խոտորեցան, ամենայն հեթանոսք ի չորից ծագաց երկրի եկեալ լցին զարքայութիւնն Աստուծոյ: Առ որ հայեցեալ սպառնայ անհաւատիցն եւ ասէ.

Ոչ ոք յայնց կոչեցելոցն ճաշակեսցէ յընթրեաց իմոց (Ղուկ. ԺԴ. 24):

Եւ զի մի ոք ի ձեւ կերպարանաց առակին հայեցեալ՝ կարծեսցէ զիւրին զայն եւ կոչունք հարսանեաց յատուկ, այլ գիտասցեն զայն կարի ծանր եւ տաժանելի, վասն զի խաչեալ է փեսայն, եւ սպանեալ են հարսանեացն մանկունք, եւ կոտորեալ որդիք առագաստին, եւ արեամբ եւ խաչիւ կոչին հրաւիրեալքն, քարկոծեալ են կոչողքն եւ խողխողեալ կոչեցեալքն, արեամբ թաթաւեալ են հարդերձք հարսանեաց նոցա: Արդ, յայս հայեցեալ Յիսուս, ասէ ժողովրդեանն, որ գնային զհետ նորա:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Իրրեւ լուաւ զայս ոմն ի բազմականացն, ասէ. «Երանի, որ կերիցէ ճաշ յարքայութեանն Աստուծոյ» (Ղուկ. ԺԴ. 15):

Բաղձացաւ բարեաց, ո՛չ իմանալեաց իրացն բնութեան, այլ մարմնապէս իմանայր զհատուցումն արդարոց: Որպէս սադուկե-

ցիքն ասեն. «Ի յարութեանն ո՞ւմ լինիցի կին» (Մատթ. ԻԲ. 28, Մարկ. ԺԲ. 23): *Նոյնպէս եւ այրս այս կարծեաց մարմնոյ հեշտացուցիչ կերակուր: Իսկ Յիսուս ո՛չ սաստեաց, զի տգիտութեամբ եւ ո՛չ չարութեամբ խաւսեցաւ:*

Այր ոմն գործեաց ընթրիս, հրաւիրեաց [զբազումս] (ԺԴ. 16):

ԿՐ «Այր» *զինքն անուանէ Տէրն, եւ* «**ընթրիս**»՝ *զժամանակս խաչին, յորժամ բաշխէր զմարմին եւ զարիւնն իւր: Իսկ ընդէ՞ր ընթրիս ասաց եւ ո՛չ ճաշ: Վասնզի յետին ժամանակս եկն ի մերձեալ կատարածի:*

Եւ առաքեաց զծառայս իւր ի ժամու ընթրեացն (ԺԴ. 17):

ՍՏ «Ծառայ» *կոչէ զՄովսէս եւ զմարգարէքն:*

«**Ծառայ**»՝ *Քրիստոս, վասն զի ի կոչումն եւ ի փրկութիւն ամենեցուն ծառայեաց Հաւր՝ զծառայի զկերպարանս առեալ, եւ եկեալ ո՛չ ի սպասաւորիլ, այլ ի սպասաւորել բազմաց (*հմմտ. Մարկ. Ժ. 45): *Եւ «Ես, ասէ, ի մէջ ձեր եմ, ո՛չ բազմեալ, այլ սպասաւոր»* (հմմտ. ԻԲ. 27):

Կոչել զհրաւիրեալսն (ԺԴ. 17):

ԿՐ *Զառաքեալսն, որք բազում խնամով ելին կոչել յեկեղեցի Աստուծոյ, որ բաշխի մարմին[ն] եւ արիւնն կենսաբեր:*

Պատրաստեա՛ ամենայն ինչ (ԺԴ. 17):

ՍՏ *Սեղան իմաստութեան եւ գիտութեան աստուածայնոյ:*

Սկսան հրաժարել ամենեքին մի ըստ միոջէ (ԺԴ. 18):

Զաշխարհասիրացն եւ զմարմնասիրացն ասէ, որք ո՛չ հետեւեցին աւետարանական քարոզութեանն, որք են հրէայքն:

ԻԳ *Նոքա, յուլացեալ եւ կապեալ աշխարհի ցանկութեամբ, վերջացան գալ զհետ կոչողին: Եւ իւրաքանչիւր զիւրն դնէ առաջի, որով ըմբռնեցաւ ի պատճառս մեղացն:*

Առաջինն ասէ. «Ագարակ գնեցի» (ԺԴ. 18):

ՍՏ *Ո՛չ կամեցան գալ որք ուսան, զի գնեցին ագարակս՝ աղանդ[ս] աւտարս յաստուածպաշտութենէ: Այնպիսին հարկաւորի ելանել եւ տեսանել զագարակն, այսինքն՝ փորձիւ քննել զաղանդն հաւատոյն, զոր ստացաւ:*

Միւսն ասաց. Լուծս հինգս եզանց գնեցի եւ երթամ փորձել (ԺԴ. 19):

Սպ. *Թողեալ զիմանալի եւ [զ]մտաւոր խորհուրդս բարիս, որով Աստուած փառաւորի ի խորհուրդս սրբոց իւրոց, եւ միայն մարմնեղէն հինգ զգայութեամբքս իմաստասիրէ զերկրաւորս:*

Իգ. *Թերեւս՝ ամենայն զգայարանաւք շաղախեալ:*

Եւ այլն. Կին ածի, վասն այնորիկ ո՛չ կարաց գալ (ԺԴ. 20):

Սպ. *(իգ.) Ո՛չ զուգեցաւ ընդ իմանալի եւ ընդ հոգեւոր իմաստութեանն, այլ յաշխարհիս այսորիկ ի զբաղումն ցանկութեան:*

ԻԳ *Ի սէր կանանց հարեալ՝ ո՛չ կամեցան անսալ կոչողին:*

Եւ եկեալ ծառայն՝ պատմեաց տեառն իւր[ում] (ԺԴ. 21):

ՍՏ *Պատմէ զհրաժարումն հրէիցն ի փրկութենէն Քրիստոսի աստուածային:*

ԻԳ *Զարացան անհաւատութեամբ: Անարգանս եւ մահս տանջանաւք հասուցանէին ի վերայ նոցա, որք կոչէին զնոսա յարքայութիւն եւ ի փառսն Աստուծոյ:*

Ապա բարկացեալ տէրն ասէ. «Ելէք ի հրապարակս» (ԺԴ. 21):

Յազգս հեթանոսաց, որ ո՛չ էին գնացեալ ի շաւեղս պատուիրանաց[ն]:

Կր. *Որք ընդարձակ ճանապարհ գնային՝ վարելով զկեանս իւրեանց առանց վարդապետութեան հաւատոց:*

Փողոցս (ԺԴ. 21):

Սպ. *Որ երիւրեալ կարծէին զչարութեան գնացս իւրեանց:*

Քաղաք (ԺԴ. 21):

Երկրաւոր աշխարհս:

Զաղքատս (ԺԴ. 21):

ԻԳ *Զաղքատացեալս յաստուածային ճոխ աստուածպաշտութեանցն, զաղքատացեալսն ի շնորհաց Սուրբ Հոգւոյն եւ ի հայրենի փառացն:*

Կաղս (ԺԴ. 21):

Կր. *Զհեթանոսս, որք խեղ էին հոգով ըստ կռապաշտութեանցն եւ բիւր չարեացն:*

ՍՏ «Կաղս», *որք ոչ գնան ընդ ճշմարիտ իմաստութիւնն եւ ընդ ճանապարհս արդարութեան:*

Զկոյրս մոյծ այսր (ԺԴ. 21):

Յիմարս աշխարհիս:

ԻԳ *Զկուրացեալսն ի լուսոյ գիտութենէ Աստուծոյ:*

Ասաց տէրն. Եկ ի ճանապարհս *եւ արա՛ մտանել, զի լցցի տուն իմ* (ԺԴ. 23):

ԿԲ *Տուն՝ աշխարհ հաւատացելոց, ընթրիս առակեաց: Վասն որոյ եւ ասաց. «Երանի, որ կերիցէ ճաշ յարքայութեանն Աստուծոյ»* (ԺԴ. 15):

ՍՏ *Հրամայէ կոչել զայնոսիկ, որք արտաքոյ քաղաքին են: Կարծեմ, թէ որք ի դժոխս արգելեալք էին՝ հոգիք սրբոցն, զորս ազատեաց Քրիստոս իւր իջմամբն ի դժոխս: Կամ յամպարշտաց չար ճանապարհաց այսպէս դիւրալուր հեթանոսք կատարեն զհրամանն՝ նուիրելով զանձինս փոխանակ տանն Յակոբայ, որ խոտորեցան ամենայն հեթանոսք ի չորից ծագաց երկրի եկեալ լցին զարքայութիւնն Աստուծոյ: Ասէ.*

«Ո՛չ որ յայնց կոչեցելոց ճաշեսցէ յլ[ն]թրեաց իմոց» (ԺԴ. 24):

ԻԳ *Սպառնայ անհաւատիցն, զի մի՛ ի ձեւ կերպարանաց առակիս հայելով՝ կարծիցի դիւրիւն կոչունք հարսանեաց յատուկ, այլ գիտասցեն ծանր եւ տաժանելի: Վասնզի խաչեալ է փեսայն, եւ մանկունք հարսանեացն սպանեալ են, եւ որդիք առագաստին՝ կոտորեալք, եւ հրաւիրակքն՝ արեամբ: Եւ խաչիւ կոչեն քարկոծեալք եւ խո[ղ]խողեալ կոչեցեալքն, եւ արեամբ թաւթաւեալ են հանդերձք նոցա հարսանեացն:*

ՎԱՍՆ ՉԱՐ ՄՇԱԿԱՑՆ

Ղուկ. Ի. 9-19

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Այր ոմն տնկեաց այգի եւ եր մշակեաց եւ գնաց ճանապարհ աւուրս բազումս (հմմտ. Ղուկ. Ի. 9):

«Այգի»՝ *աստուածական վարդապետութիւնն մարգարէական եւ առաքելական, յորս զայգին ետ, զի պտղաբերեսցէ հրէական ժողովուրդն.* **«ծառայք»** (տես Ի. 10)՝ *Մովսէս եւ այլ մարգարէքն.* **«որդին, զոր սպանին»** (տես Ի. 15)՝ *Քրիստոս՝ միածին Որդին Աստուծոյ:*

ԻԳՆԱՏԻՈՍ

Սկսանի այնուհետեւ ի սկզբանց անտի աւրինակաւ այգւոյ եւ մշակաց (հմմտ. Ղուկ. Ի. 9) *մերկացուցանել զգործ նոցա, որով ընդդէմ Աստուծոյ վարեցան խստութեամբ եւ զծառայս նորա՝ զմարգարէսն՝ առաքեալս առ նոսա, հարուածովք եւ արեամբ դարձուցին ունայնս եւ ի ներելն Աստուծոյ բազմաւք, լաւագոյնք ոչ եղեն, վասն որոյ եւ ընդդէմ ժառանգաւորին կարի ժպրհութեամբ մարտեան: Եւ թէ զի՞նչ այսոցիկ հատուցումն գործոց. նախ ինքեանք տան անձանց զվրիժուցն սահման, զի դատաստանաւ է փոխել կորստեամբ զչարսն եւ արանց բարեաց հաւատալ զայն, իսկ ի կնքել Տեառն զբանս նոցա, զգաւնացեալք ամփոփեն զանձինս, հրաժարեալք ի բանէ անտի,* **«քաւ»**, *ասեն,* **«մի լիցի»** (Ի. 16):

Վասն այնորիկ ասէ.

«Եւ թէ ոչ այսպէս, զիա՞րդ ապա արդարանան բանք մարգարէիցն, եթէ ոչ անարգեալ վիմին գլուխ լիցի, եւ ոչ հարեալքն ընդ նմա մանրեսցին, եւ ոչ զնովաւ անկեալքն հոսեցին» (հմմտ. Ի. 17-18):

Արդ, յորմէ պարտ էր զարհուրել նոցա վասն զի իմացան, սակայն նոքա նովին գրգռեցան ունել զնա, թէպէտ եւ երկիւղ ժողովրդեանն արգել, նաեւ զի տարաժամ ո՛չ էր աւրէն: Իսկ իբրեւ անձամբ վճարել զայն ոչ զաւրէին, խորհեցան, զի աւրինաց տէրութեանն Հռովմայեցւոց լուծիչ զնա յանդիմանեսցեն լինել, կամ

վտարանդիս զնոսա տուեալ, զոր համբաւեն՝ ազատիչ նոցա լինել: Եւ զայս, ոչ պարզ ուղիղ, առաջի եդեալ, այլ թաքուցանեն զանձինս՝ գողանալ զնա:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Ապա սկ[ս]ալ ասել զառակս առ ժողովուրդն. Այր ոմն տնկեաց այգի (Ղուկ. Ի. 9):

ՍՏ *Մարդ Աստուած ասի ի բազում գիրս աստուածայինս վասն Որդոյն Աստուծոյ՝ զգենլոյ զկերպ մարդկան:*

Տնկեաց այգի (Ի. 9):

Զհաւրէ, ասէ, յորժամ ի ձեռն Մովսիսի հանէր զիսրայեղացիսն յԵգիպտոսէ: Եւ Դաւիթ ասէ. «Այգի յԵգիպտոսէ փոխեցեր, հաներ զհեթանոսս եւ զիսրայէղ տնկեցեր» (Սաղմ. ՀԹ. 9): *Զոր եւ Եսայի քաջայայտ առնէ զբանն. «Այգի Տեառըն զաւրութեանց տունդ Իսրայեղի»* (Ես. Ե. 7):

Սպ. *Կամ այգի աստուածային վարդապետութիւն[ն] է՝ մարգարէական եւ առաքելական, յորս զայգին ետ, զի պտղաբերեսցէ հրէական ժողովուրդն:*

Եր զնա մշակաց (Ի. 9):

ԿՐ *Զոր ետ ցքահանայսն գործել զայգին՝ վարդապետել ժողովրդեանն: Դաստիարակել առ հաւատս ըստ աւրինացն եւ մարգարէիցն, որք գուշակէին զՔրիստոսի աւետարանութիւն աւետեացն:*

Գնաց ճանապարհ ի ժամանակս բազումս (Ի. 9):

Գնալ Տեառն զո՛չ երեւեալ նոցա հրեղէն ամպով՝ զկնի խաւսելոյն ի Սինեական լերինն եւ պատգամացն եւ ահագին երեւմանցն, եւ ո՛չ այլ գունակ երեւեցաւ ժողովրդեանն:

Առաքեաց առ մշակսն ծառայ, զի ի պտղոյ այգոյն տացեն նմա (Ի. 10):

Սպ. *Զմովսէս եւ զմարգարէսն առ քահանայսն խնդրել զհաւատս եւ զգործս բարիս ժողովրդեանն: Սակայն եւ այնմ ընդդէմ Աստուծոյ վարեցան ստութեամբ:*

Մշակքն զան հարին, անարգեցին եւ առաքեցին ունայն (Ի. 10):

ԵՓ *Արդ, գանեցաւ Միքիայ, ապտակեցաւ Սեդեկիայ: Որպէս եւ Յովսիայ ասէ. «Եղեն նոքա որոգայթ դիտանոցին, որպէս վարմ ձգեալ ի վերայ լերանց»* (հմմտ. Ովսէ Ե. 1): *Նոյնպէս եւ դուք զմարգարէսն ճշմարտութեան որսայիք ի սպանումն: Վասն այսորիկ ջնջեցից զմարգարէսն եւ կոտորեցից զարդարսն ի բանս բերանոյ իմոյ, զի հաւանեցուցից զմարդիկ:*

Յաւել զերրորդն առաքել, եւ զնոսա վիրաւորեցին] (Ի. 12):

ՍՏ *Քարկոծեցին զԵրեմիայ եւ զԶաքարիայ որդի Ամովդա:*

ԻԳ *Հարուածաւք [եւ] արեամբ դարձուցին ունայնս:*

Առաքեցից զորդի իմ սիրելի (Ի. 13):

ԵՓ *Այսինքն՝ ի բնութենէ Հաւր Որդին միածին, եւ յետոյ՝ առաքեալն: Ո՛չ թէ վերջին էր նա, այլ զի յետոյ երեւեցաւ այն, որ երբեմն էր իսկակից Հաւր: Որպէս վկայեաց Յովհաննէս, թէ՝ «Որ գալոց[ն] է զկնի իմ, յառաջ է քան զյաւիտեանս»* (Յովհ. Ա. 30):

Թերեւս ի սմանէ պատկառեսցին (Ի. 13):

Ոկ. *Ո՛չ անգիտանալով ասէ. «Քա՛ւ լիցի»* (Ի. 16), *այլ ցուցանէ զառաւել չարութիւն նոցա անպատասխանի: Այլ ինքն գիտէր, զի սպանանելոց էին, եւ առաքեաց, «թերեւս պատկառեսցին»: Եւ նոցա պարտ էր ակնածել եւ յանդիմանիլ:*

ԿՐ *Եւ ի մեծագոյն նշանացն ցածնուլ՝ Որդի գոլով եւ Տէր ամենայնի, եւ ո՛չ հանգոյն մարգարէիցն, որ իշխանաբար հրամանաւ թողոյր զմեղս եւ ազատէր վերստին ծննդեամբ ի ծառայական կարգաց:*

Իրրեւ տեսին մշակքն, ասեն. Սա է ժառանգն, սպանցուք, եւ մեր լիցի ժառանգ[ութիւնն] (Ի. 14):

Որպէս Հերո[վ]դէս լուաւ զգալուստն Քրիստոսի եւ կոտորեաց զմանկտին՝ կամելով կորուսանել զնա (տե՛ս Մատթ. Բ. 16-18):

ԵՓ *Զնա սպանին, եւ ժառանգութիւն բարձաւ եւ տուաւ հեթանոսաց, զի հանդերձեալ էին հեթանոսք լինել նմա ժառանգ: Ըստ այնմ՝ «Նախանձեցուցից զձեզ, ոչինչ ժառանգաւորաւք»* (Հռոմ. Ժ. 19): *Զի որպէս որդիք աւտարաց հնազանդեցաւ ինձ, եւ բարձաւ ժառանգութիւն եւ տուաւ հեթանոսաց, նոյնպէս բարձաւ անուն ժողովրդեան եւ տուաւ հեթանոսաց: Եւ անուն հեթանոսաց եղաւ ի վերայ Իսրայեղի:*

Հանին զնա արտաքոյ քան զայգին եւ սպ[անին] (Ի. 15):

Տեսանե՞ս, զի յառաջագոյն մարգարէանայ եւ զտեղին յայտնէ, ուր սպանելոց էին:

ԿՐ *Զոր յետ բազում նշանացն, զոր տեսին, արտաքոյ քաղաքին ի խաչ հանին, զոր առակաւոր բանիւն* «**այգի**» *կոչեաց:*

Զի՞նչ արա[ս]ցէ տէր այգ[ւոյն] (Ի. 15):

ԵՓ *Մուծանէ զնոսա ի դատաստան առաջի նոցա, թէ որում արժանի էին մշակքն կամ զինչ հատուցումն գործոց:*

Կորուսցէ զմշական զայնոսիկ (Ի. 16):

ԿՐ (իգ.) *Զի ի ձեռն առակացն եցոյց զլինելոց նոցա, թէ արհամարհելոց են ազգն, մանաւանդ թէ՝ կորնչելոց, եւ այգին այլոց լինելոց:*

(կր.) *Եւ դուք, որ զծառայսն հալածեցիք եւ զորդին սպանիք, ելանելոց էք: Զոր եւ Մատթէոս ասէ.* «**Չարսն չարաւ կոր[ուսէ]**» (Մատթ. ԻԱ. 41):

ԵՓ *Իսկ ինքեանք զվճիռ դատապարտութեան հատին ի վերայ անձանց, զի թշնամեացն վկայութիւն ստուգութեամբ լի է:*

Տայցէ զայգին այլոց (Ի. 16):

Այսու զհեթանոսաց մուտն կարի քաջ յայտնեաց: Որպէս ասաց Ամբակում. «Դարձուցից ի վերայ հեթանոսաց շրթունս ընտրութեան փոխանակ այնր, որ հանապազ սանձք մոլորեցուցիչք եղեալ էին յերախս նոցա»: Զ[ի] ընդ միով լծով ծառայեսցեն նմա, որ կազմեցաւ խաչն ի Քրիստոսէ, որ եդաւ խորհրդով ի վերայ ուսոյ Շմաւոնի նշան դարձին հեթանոսաց:

Իբրեւ լուան՝ ասեն. Քա՛ւ՝ մի՛ լիցի (Ի. 16):

Կր. *Վասնզի խ[ս]տագոյն համարեցան, ասեն մի՛ լիցի այդպէս: Զգաւնացեալ ամփոփեն զանձինս՝ հրաժարելով ի բանէ անտի:*

Յիսուս հայեցեալ ընդ նոսա՝ ասէ. Զի՞նչ իցէ, որ գրեալն է. Վէմն, զոր անարգեցին (Ի. 17):

Զմարգարէութիւն Դաւթի ի մէջ բերէ (տե՛ս Սաղմ. ՃԺԷ. 22) *ի դէմս նոցա [եւ] պատկառեցուցանելով՝ սաստէ:*

Սր. *Վէմ զինքն նշանակեաց նոցա: Ըստ որում՝ ընթերցեալ էին զմարգարէութիւն Եսայեայ իբրեւ յերեսաց Աստուծոյ. «Ահաւասիկ դնեմ ի Սիոն վէմ ընտիր, գլուխ անկեան»* (Ես. ԻԸ. 16), *եւ զ Դանիէլի՝ «Ի լեռնէ վէմն առանց ձեռին հատեալ»* (Դան. Բ. 34): *Եւ Պաւղոս ասէ. «Վէմն էր ինքն Քրիստոս»* (Ա Կոր. Ժ. 4): *Որ արբուցանէր նոցա զջուրն, զոր կանխաւ ետ աւրինակ ժողովրդեանն, զոր արհամարհեցին ի ժամանակի հաւատոցն: Վասն որոյ Զաքարիայ ասէ. «Ահաւասիկ Տէր կայր ի վերայ անդամանդեայ պարսպաց»* (հմմտ. Ամովս Է. 7), *որ է մարմինն Քրիստոսի: Անարգեցին, զի ասէին. «Զէ դա յԱստուծոյ»* (հմմտ. Յովհ. Թ. 16, 33) *եւ մոլորեցուցանէ զժողովուրդն:*

Շինողքն (Ի. 17):

Կր. «**Շինող**»՝ *զհրէից վարդապետսն կոչէ: Որպէս Եզեկիէլ ասէ, թէ՝ «Շինէին զորմն եւ ծեփէին փորիւ առանց խճելոյ»* (հմմտ. Եզեկ. ԺԳ. 10-14):

Եղեւ գլուխ անկեան (Ի. 17):

Վասնզի որպէս անկեան վէմ զերկոսեան ազգս միաւորեաց՝ զհրէայս եւ զհեթանոսս, որք հեռագոյնք էին ի միմեանց եւ հակառակք, թշնամիք միմեանց հաւատովք եւ գործովք: Ի Տեառնէ եղեւ այս եւ է սքանչելի յաչս մեր: Այն իսկ է. «Բարձցի ի ձէնջ արքայութիւն Աստուծոյ» (Մատթ. ԻԱ. 43) *եւ տացի ազգի, որ արասցէ պտուղ հաւատոցն Քրիստոսի: Որպէս Միքիայ մարգարէ ասէ. «Հով[ու]եսցէ զնոսա զաւրութեամբ Տեառն ի փառս անուան նորա»* (Միք. Ե. 4):

ԵՓ *Անուն Յիսուսի է, զի մեծասցի նա եւ բարձրասցի մինչեւ ի ծագս երկրի: Քրիստոս բարձրացաւ մինչեւ ի ծագս երկրի քարոզութեամբն իւրով, որ սփռեցաւ մինչեւ յոլորտս երկրի: Ըստ Դաւթայ՝* «Ընդ ամենայն երկիր ել բարբառ աւետեաց նորա» (հմմտ. Սաղմ. ԺԸ. 5):

Ամենայն, որ հարցի ընդ վէմս, ընդ այս խորտակեսցի (Ի. 18):

ԵՓ *Ածէ ինքեամբ զպատիժսն ի վերայ իշխանաց ժողովրդեանն, որ մարտեան ընդդէմ նորա: Եւ կամեցան շիջուցանել զնա, զի ո՛չ քաղցրացաւ նոցա վարդապետութիւն նորա:*

ԿՐ *Այլ թշնամանաւք խաչէին եւ ընդ[դ]իմացան, խորտակեցան յահաւոր զաւրութեանց եւ ի նշանացն եղելոց, եւ բարձաւ թագա-*

ւորութիւն նոցա, եւ զկնի Համբարձմանն եղծաւ կարգ պատարագացն, եւ ցրուեցան ընդ ոլորտս երկր[ի]:

Եւ յոյր վերայ անկցի՝ հոսեցէ (Ի. 18):

ԵՓ *Զոր ասաց Դանիէլ. «Վէմն, որ եհար զպատկերն եւ փշրեաց, եւ ինքն եղեւ լեառն մեծ, եւ լցաւ ի նմանէ ամենայն երկիր»* (Դան. Բ. 35)՝ *աւետարանական քարոզութեամբն: Եւ խափանեաց նա զպաշտաւն կռոցն՝ այլովքն հանդերձ:*

Սկ. *Եւ աստ՝ զառնուլ քաղաքին եւ զբնաջինջ լինել ազգին, զոր կարի յայտնագոյն գուշակեաց:*

Կր. *Եւ զյետնում աւուրն գուշակէ, զոր Յովհաննէս ասաց. «Հեծանոցաւն սրբել զկալն»* (Մատթ. Գ. 12, Ղուկ. Գ. 17): *Զբաց որոշեալսն յաջմէ եւ յԱբրահամեան կայանիցն եւ ընդ դիւացն առաքել ի տանջանսն մեծ:*

Խնդրէին դպ|իրքն| (Ի. 19):

ՍՏ *Ի ցեղէն Շմաւոնի էին դպիրքն եւ խառն կային ընդ քահանայսն, թէպէտ եւ ո՛չ ի քահանայագործութիւն:*

Կր. *Զի ո՛չ ոք էր, որ առնէր զճշմարտութիւն: Ժողովուրդն իբրեւ զքահանայ հակառակի, զի ո՛չ հաւանէին նոքա խրատու որպէս ո՛չ քահանայքն աւրինացն, զի գայթակղեցան նոքա ի տուէ:*

Եւ քահանայապետքն ի նմին ժամու արկանէին ի նա ձեռս (Ի. 19):

Կր. *Յորժամ պարտ էր զարհուրել եւ երկիր պագանել, եւ ի պատժոցն զոր լուան՝ ակնածել եւ ցածնուլ: Սակայն նովին զրգռեցան, զի տարաժամ ո՛չ էր աւրէն:*

ԱՒՐԻՆԱԿՆ ՃՇՄԱՐԻՏ ՀՈՎՈՒԻ

Յովհ. Ժ. 1-18

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Որ ոչ մտանէ ընդ դուռն գաւթին (հմմտ. Յովհ. Ժ. 1):

Այսինքն՝ է պատուիրանացն Աստուծոյ շաւեղք, ընդ որ հետեւին ի գաւիթսն՝ յեկեղեցի Աստուծոյ, զի նա՛ է գաւիթ բանաւոր ոչխարաց: Վասն որոյ եկն հովիւն քաջ ի խնդիր մոլորեալ ոչխարին:

Այլ ընդ այլ ելանէ, նա գող է եւ աւազակ (Ժ. 1):

Սկսաւ Տէր մեր յամաւթ առնել զնոսա, զի որ ի ծածուկ դարանաւք եկին, գողք էին եւ աւազակք, զի ոչ ցուցին զանձինս իւրեանց յայտնապէս: Զի որպէս եկին գողք ի պատճառ ծննդեան նորա, գան եւ աւազակք ի պատճառս երկրորդ գալստեան նորա, եւ բազմանան համբաւք նոցա. մի՛ ելանիցէք՝ ի խնդրել զնոսա եւ մի՛ իցէք որսացեալք:

Իսկ որ մտանէ ընդ դուռն, ոչխարաց հովիւ է (Ժ. 2):

Ահաւասիկ Տէր խաչինն իբրեւ մտանէր ի գաւիթ իւր ընդ դուռնն, այսինքն՝ ի ժառանգութիւն իւր, համարձակութեամբ նշանաւք եւ արուեստիւք եւ քաջութեամբ, ահա՝ ի ներքս ի սրտի ձերում է վկայութեամբ իրաւք եւ ոչ թաքստեամբ, եթէ կարաւտացին խնդրողք նորա:

Նմա դռնապանն բանայ (Ժ. 3):

ՈՍԿ *ՁՄովսէս ասէ, զի ի ձեռն նորա տուան աւրէնք եւ աստուածածանաւթութիւնք:*

Զիւր ոչխարս կոչէ յանուանէ եւ հանէ զնոսա (Ժ. 3):

«**Հանէ զնոսա**» (հմմտ. Ժ. 4)՝ *Աւետարանն:* «**Առաջի նոցա երթայ**» (Ժ. 4)՝ *ոչ Մովսէս, այլ պատուիրան նորա առաջնորդէր նոցա, որ եւ ինքն իսկ Տէրն է, որ մտանէր ընդ դուռն՝ ի նա պահելով զաւանդութիւնն, այլեւ բանալով, որք հաւատան ի նա:*

«Որք յառաջ, քան զիս էին, գողք էին եւ աւազակք» (Ժ. 8):

Զ Յուդայ Գալիլեացի ասէ եւ զԹեւդաս, եւ զսադուկեցիսն, եւ զփարիսեցիսն:

ԵՓ *Եւ նոքա յայտնիք էին, զի ոչ էին Քրիստոսք, վասն այսորիկ եւ ծածուկ խնդրէին գողանալ զմարգկութիւնս, եւ յանդիմանէ զնոցա հպարտութիւնն, զոր յաւդէին, վասն այնորիկ երկնչէին յայտնել, թէ իցեն մեծ ոք, ասէին, թէ յանձն առցեն նոցա:*

«Ես եմ դուռն» (Ժ. 9):

Որ յիս հաւատայ, մտցէ, եկեսցէ Հաւր յանդիման լինել աւազանին չնորհաւք: Որ ոչ հաւատայ յիս, ոչ հոգւովն, այլեւ մարմնովն կրէ զսատակումն, որպէս Թեւդաս եւ Յուդա եւ նմանք նոցա (տես Գործք Ե. 36-37):

«Իսկ որ մտանէ, ճարակ գտցէ» (հմմտ. Ժ. 9):

Զյաւիտենական արքայութիւնն՝ զմարմին եւ զարիւն Տեառն:

«Ես եկի, զի զկեանս ունիցիք» (հմմտ. Ժ. 9):

Յերկնից ասէ՝ **«եկի»** *եւ մարդացայ՝ մարմնով տնաւրինել եւ ի մահուանէ, որ տիրեալ էր ազգի մարդկան, կամիմ ազատել եւ առնել կենդանի ոչ բազմաժամանակեա կենաւք, այլ՝ յաւիտենական:*

«Ես եմ հովիւն քաջ» (Ժ. 11):

Փոխանակ քաջին, զբարին գտաք. մի՛ ոք անհանճար իմասցի զասացեալսն զխոնարհագոյնս, զի թէ զայսոսիկ ոչ խոստովանեաք զթափումն ի մեր բնութիւնս եւ յորժամ այլ բարձրագոյնս լուիցուք, ի միտ առցուք, թէ նորա՛ են խոնարհագոյնքն, որ ի բարձրութենէն ի մեր նուաստացաւ բնութիւնս՝ ոչ փոխելով յիւր բնութենէն, այլ փոխատրելով զմերս՝ յինքն միացոյց: Դարձեալ, զի **«հովիւն»** *եւ* **«բարին»** *հասարակ աստուածութեանն են յորջորջանք, որպէս մարգարէն ասէ. «Որ հովեաց Իսրայէլի նայեաց»* (Սաղմ. ՀԹ. 2). *«Որ զԻսրայէլ հովեաց եւ ի մեզ նայեաց եւ փրկեա»* (հմմտ. Սաղմ. ՀԹ. 20), *ասէ.*

Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարացն (Ժ. 11):

Զարչարանաւք մահուն ասէ, զի ոչ վասն ինքեան մեռանի, զիւր պարտսն վճարելով որպէս մարդ, այլ վասն հաւտիս փրկութեան կրէ զմահ:

Վասն է՞ր առակաւոր բանիւք ճառէ առ աշակերտսն եւ առ հրէայսն զիւր մահուն, զի յորժամ ըմբռնեսցի ի մահն, ի միտ առցեն: Իսկ **«վարձկան»** *զմարգարէս եւ զառաքեալս եւ զարդարս կոչէ, որ թէպէտ յաւժարէին ապրեցուցանել զհաւտն, վասն զի յայն եղ զնոսա Աստուած, զի ի կռոցն որոշեալ՝ փրկեսցեն զոգիս նոցա ի մահուանէ, այլ այն ոչ հանգոյն իմոյս ասէ, զի կարեն իսկ ոչ, զի որք վասն Աստուծոյ սիրոյն զմահ յանձինս իւրեանց կրեցին, հաստուցումն վարձուց գրէին ինքեանց, այլ ոչ վասն հաւտին փրկութեան մեռանէին եւ ոչ կարէին զնոսա ապրեցուցանել:*

Վարձկանն իբրեւ տեսանէ զգայլն, զի գայ (Ժ. 12):

«Գայլ» զսատանայ անուանէ՝ տեսանելով զհաւտն կործանեալ ի չարագործս նորա, զայն իմանային, այլ ոչ կարէին հնարել, ասէին չառ նորեն իմացմունսն, այլ զանձինս եւեթ ապրեցուցանել ջանային՝ գիտելով եւ զինքեանս ընդ կարաւք գրաւեալ:

«Ես՝ քաջս հովիւ, ճանաչեմ ,- ասէ,- զիմսն» (Ժ. 14):

Այսինքն՝ զիմ սիրողսն, եւ զի մի՛ կարծեսցեն, որպէս այլք ի մարդկանէ ճանաչեն, ասէ.

«Ճանաչիմ յիմոցն» (Ժ. 14):

Նոցա ճանաչիմ, ասէ, ես, որք հաւատան յիս եւ բարի գործոցն: Զիս ծանուցանեմ նոցա յաւուր հատուցման նոցա փրկիչ եւ ապրեցուցանել եւ ընդ իս իսկ թագաւորեցուցանելով անմահ: Յարէ ի նոյն.

«Որպէս գիտէ զիս Հայր» (Ժ. 15):

Որդի՝ ըստ բնութեան եւ ըստ զաւրութեան, եւ իշխանութեան, եւ արարչագործութեան, այսպէս զնա ասէ՝ գիտեմ մի բնութեամբ:

«Վասն այսորիկ սիրէ զիս Հայր» (Ժ. 17):

Զանչափ բարերարութիւն Հաւր ցուցանէ մի բնութեամբ:

«Զայս պատուէր առի ի Հաւրէ իմմէ» (Ժ. 18):

Ոչ փոքր գոլով քան զՀայր, ասեմ զայս, այլ թէ Հաւր կամաւք լինի չարչարանքս իմ եւ մահ եւ ոչ յանձնէ ինչ:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

Եւ աստ դնի տասներորդ պատճառն, թէ Աստուած է Քրիստոս: Այսպէս, որ ոք էութեամբ եւ մեծութեամբ նոյն է ընդ Աստուծոյ, Աստուած է, իսկ Քրիստոս նոյնն է էութեամբ եւ մեծութեամբ ընդ Աստուծոյ, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Եւ զէութիւն եւ զմեծութիւն Քրիստոսի ցուցանէ աստ չորս կերպիւ. առաջինն է հաւատացելոցն ներգործութեամբ, որպէս ասէ. **«Ես եմ դուռն եւ մուծանող»** (հմմտ. Յովհ. Ժ. 9): *Երկրորդ. որ հովուէ զամենայն բարի եւ քաջ հովուութեամբ, որպէս ասէ.* **«Ես եմ հովիւն քաջ»** (Յովհ. Ժ. 11): *Երրորդ. հայրական հաղորդութեամբ, որպէս ասէ.* **«Հայր իմ, որ եւ ինձ [զնոսա], մեծ է քան զամենայն»** (Յովհ. Ժ. 29), *այս է զԱստուածութիւն: Չորրորդ. իւր վկայութեամբն, որպէս ասէ.* **«Ես եւ Հայր իմ մի եմք»** (Յովհ. Ժ. 30):

Արդ, նախ եցոյց աւետարանիչս զվարդապետութիւն Քրիստոսի լուսաւորիչ գոլ: Աստ ցուցանէ զսոյն վարդապետութիւնս կենդանացուցիչ գոլ, զի յայս գլուխս բանիւ ցուցանէ, զի կենդանացուցիչ է, եւ յետ այսորիկ զգալի նշանաւ ցուցանէ: Եւ այս գլխոյս նախ ճառէ զհեզութիւն Քրիստոսի, առ ի յուսուցանել, եւ երկրորդ՝ ճառէ զչարութիւն հրէից՝ առ ի զնա հալածել: Անդ եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսաղէմ, այլ աստ ցուցանէ զաւրութիւն բարի հովուին եւ գողին, եւ զանազանութիւն նոցա երեք եղանակաւ.

Առաջին՝ Վասն զանազան մտանելոյ ի հաւտն, որպէս ասէ. **«Ամէն, ամէն ասեմ ձեզ, որ ոչ մտանէ ընդ դուռն ի գաւիթ [ոչխարացն], այլ ընդ այլ ելանէ, նա գող է եւ աւազակ, իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց»** (Ժ. 1-2):

Մեկնութիւն. Արդ, ի կարճոյ սոյնպէս բացայայտի. դուռն *զաւրէնսն ասէ,* հովիւ՝ *զքահանայսն եւ զփարիսեցիսն,* ոչխար՝ *զժողովուրդն,* գաւիթ՝ *զխորանն հին, որպէս պատուական է ներքին տաճարն քան զգաւիթն, սոյնպէս մերս եկեղեցի, քան զխորանն իսրայէլացւոց:*

Երկրորդ՝ Զի ամենայն ոք նախ զգաւիթն կոխէ եւ ապա ի ներքս մտանէ, սոյնպէս առաջին է այն, քան զմերս, այլ ընդ այլ ելանէ: Քահանայքն եւ փարիսեցիքն ոչ պահեցին զաւրէնս. զող *զփարիսեցիսն ասէ, զի կեղծաւորք էին,* աւազակ՝ *քահանայքն, որ յայտնապէս յանցանէին, իսկ* հովիւ, *որ մտանէ ընդ դուռն, Քրիստոս վասն իւր ասէ:*

Եւ այլ կերպիւ մեկնեն վարդապետք. աստ անուամբ դրանն իմանի ուղիղ մուտ հովուութեան, իսկ այլ ընդ այլ ելանելն նշանակէ զթիւր մուտն ի հովուութիւն հոգւոց, եւ Քրիստոս ասէ յառաջիկայդ. «Ես եմ դուռն» (Ժ. 7), *զայն ցուցանէ, թէ որ լինի հովիւ ի վերայ ոչխարաց, պարտ է, զի ի Քրիստոսէ ունիցի իշխանութիւն եւ զճշմարտութիւն Քրիստոսի եւ զսէրն առ Քրիստոս: Եւ զի հովիւ է Քրիստոս, զայս ճշմարտութիւնս եւ զիշխանութիւնս եւ զսէրս Քրիստոս գոյացութեամբ ունի, եւ այլք զերիսս զայս ունին հաղորդութեամբն ի Քրիստոս, եւ նոքա բարի հովիւք են, իսկ որք հաւատովն հերձուածող են եւ չունին ճշմարիտ իշխանութիւն եւ ոչ սիրեն զՔրիստոս, այլ զինքեանս, նոքա չար հովիւք են եւ չար որոմն սերմանեն եւ գողանան զմիտս եւ զհաւատս եւ սպանանեն զհոգիս ժողովրդեանն: Եւ թէ ոք ճշմարիտ հաւատացեալ է ի Քրիստոս եւ զճշմարիտ իշխանութիւն ընդ Քրիստոսի ոչ ունիցի, վարձկան ասի: Եւ այնպիսին գող ասի, զի ոչ խնդրէ զփրկութիւն ոչխարաց եւ ոչ զփառս Քրիստոսի, այլ զփառս անձին իւրոյ: Այլ առաւել գող եւ աւազակ ասի, որ առանց հաւատոյ եւ ուղիղ իշխանութեան զանձն հովիւ կացուցանէ բռնութեամբ, սա յատկաբար կորուսանէ զոչխարս եւ սպանանէ, իսկ վարձկանն չար աւրինակաւ միայն սպանանէ:*

Վասն դրան

Դարձեալ՝ դուռն տասն յատկութիւն ունի. նախ՝ զի նովաւ մտանեմք եւ ելանեմք: Երկրորդ՝ զի առաջին է ի մուտն, երրորդ՝ զի ամենեցուն է մուտ, չորրորդ՝ բանայ եւ փակէ, հինգերորդ՝ զմտեալսն ի ներքս պահէ, վեցերորդ՝ ուղղութիւն է, եւթներորդ՝ նեղութիւն է, ութներորդ՝ խոնարհութիւն է, իններորդ՝ բարձրութիւն է, տասներորդ՝ նախ մի ոտամբ կոխեմք:

Եւ վեց են դրունք. նախ՝ Քրիստոս, որպէս ասէ. «Ես եմ դուռն»: *Երկրորդ. աւրէնքն, որպէս ցուցաւ: Երրորդ. Եկեղեցի Սուրբ՝* «Սիրէ Տէր զդրունս Սիոնի» (Սաղմ. ՁԶ. 2), *ասէ: Չորրորդ. ծնունդն եւ մահն դուռն է հանդերձեալ կենացն: Հինգերորդ. դրունք են զգայութիւնքս հոգւոյն: Վեցերորդ. դրունք են հաւատն եւ մկրտութիւն ի գործս բարեաց:*

Գաւիթ չորս կերպիւ է. նախ՝ մարմնոյ շրջապատք: Երկրորդ. հին ժողովարանն գաւիթ է նորս Եկեղեցւոյ: Երրորդ. գաւիթ է ստորինս Եկեղեցի վերնոյն Երուսաղէմի, ըստ այնմ. «Ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեսցին» (Սաղմ. ՂԱ. 14): *Չորրորդ. գաւիթ է կայանք հոգւոցն վերնոց փառաց երկնաւոր արքայութեան: Յայս միտս ի կողմ հարաւոյ շինեմք զգաւիթս Եկեղեցւոյ, զի հոգիքն են ի լոյս հանգստեան եւ ի ջերմ սէրն Աստուծոյ:*

Չորս են ոչխարք բանաւոր հաւտից. նախ՝ երկնաւոր բանակք: Երկրորդ. մարդկային ազգ ըստ մոլորեալ ոչխարին: Երրորդ. հրէիցն ժողովք յորդան ետ, որպէս խաչին ասէ: Չորրորդ. քրիստոնէից ժողովք, ըստ այնմ. «Արածեա՛ զոչխարս Իմ» (Յովհ. ԻԱ. 16):

Եւ դռնապանք չորք են. նախ՝ դռնապան կոչի Հոգին Սուրբ: Երկրորդ՝ Մովսէս եւ այլ մարգարէքն: Երրորդ՝ հայրապետք եւ վարդապետք Եկեղեցւոյ: Չորրորդ՝ միտք բանական, ըստ այնմ. «Դռնապանին պապուէր պացէ, զի արթուն լինիցի» (Մր. ԺԳ 34):

Այս ըստ մասին տեսութիւն:

Երկրորդ. Զանազանութիւն է բարի հովուին ի գործոյն՝ ուղիղ առաջնորդելով ոչխարացն եւ յարաւտս ածելով, որպէս ասէ.

Բան. **«Նմա դռնապանն բանայ»** (Ժ. 3):

Մեկնութիւն. Նախ՝ մարմնապէս աւրինակն, զի դռնապանն հովուին բանայ եւ ընդդէմ գողիցն փակէ, եւ ոչխարքն զձայն հովուին ճանաչեն ի սովորութենէ, որպէս ասէ Եսայի. «Ծանեաւ եզն զպատգիչ իւր» (Ես. Ա. 3), *եւ հովիւն ճանաչէ զնոսա յանուանէ եւ առաջի նոցա երթայ, եւ այլն յայտնի է: Դարձեալ՝ հոգեպէս ի Քրիստոս տեսանի, որպէս ասէ մեկնիչդ. դռնապանն Մովսէս է, զի ի ձեռն նորա տուան աւրէնք, եւ բանալն է, որ յաղագս Քրիստոսի մարգարէացաւ.* «Մարգարէ յարուցէ ձեզ Տէր Աստուած» (տես Բ. Աւր. ԺԸ. 15), *եւ թէ՝ «Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ»: Այլ եւ զաւրհնութիւն Յակովբայ վասն Յուդայի.* «Մի՛ պակասեսցէ իշխան ի [Յուդայ եւ պետ յե-

բանաց նորա], մինչեւ եկեսցէ [նա, որոյ իրն է հանդերձեալքն]» (Ծնն. ԽԹ. 10): *Դարձեալ՝ դռնապանն զՅոհաննէս ասէ, եւ բանալ վկայութեամբն, որ յաղագս Քրիստոսի:*

Բան. **«Եւ ոչխարքն ձայնի նորա լսեն»** (Ժ. 3):

Մեկնութիւն. Որպէս առաքեալքն եւ հաւատացեալքն ի ժողովարանին:

Բան. **«Կոչէ յանուանէ»** (Ժ. 3):

Մեկնութիւն. Նախ՝ զերկնաւորսն, որպէս ասէ Դաւիթ. «Զամենեսեան զնոսա յանուանէ կոչէ» (Սաղմ. ՃԽՁ. 4): *Երկրորդ. զթիւ ընտրելոցն անուանք ձեր գրեալ են յերկինս: Երրորդ. կոչեաց յանուանէ զառաքեալսն: Չորրորդ. զամենայն հաւատացեալս յաւազանէն կոչէ:*

Բան. **«Զամենեսեան հանէ»** (Ժ. 3):

Մեկնութիւն. Նախ՝ ի հաւատս, երկրորդ՝ յարդարութիւնս, երրորդ՝ յԱւետարանս, չորրորդ՝ յերկինս. «Ուր ես եմ, անդ եւ պաշտաւնեայն [իմ եղիցի]» (ԺԲ. 26):

Բան. **«Առաջի նոցա երթայ»** (Ժ. 4):

Մեկնութիւն. Նախ՝ քարոզութեամբ, երկրորդ՝ վարուք, երրորդ՝ չարչարանաւք, չորրորդ՝ յարութեամբն եւ փառաւք: Սոյնպէս պարտ է առնել բարի հովուաց եւ առաջնորդաց Եկեղեցւոյ՝ հանել զժողովուրդն ի խաւարէ մեղաց եւ անգիտութեանց եւ լինել առաջի նոցա բարի աւրինակաւ առաքինութեան վարուց:

Երրորդ. Զանազանութիւն ցուցանէ բարի հովուին եւ չար, որպէս ասէ.

Բան. **«Եւ ոչխարքն զհետ նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա»** (Ժ. 4):

Մեկնութիւն. Սոյնպէս ժողովուրդն զհետ բարի հովուին ընթանայ, որպէս զհետ Քրիստոսի բանիցն եւ վարուցն եւ այլ առաքինութեանց: Իսկ չար հովուացն, որպէս ասէ.

Բան. **«Զաւտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն աւտարաց»** (Ժ. 5):

Մեկնութիւն. Ի չորս բաժանեաց զհովիւս՝ զերկուսն բարի հովիւ. նախ՝ զՔրիստոս, երկրորդ՝ զճշմարիտ եւ զուղղափառ առաջնորդս Եկեղեցւոյ: Եւ զերկուսն՝ չար. նախ՝ զփարիսեցիսն, երկրորդ՝

զհերձուածողս եւ զծոյլս, եւ աւտար զնոսա քարոզութեամբն եւ վարուքն: Եւ աւտար է նախ՝ որ յեկեղեցւոյ որոշեալ լինի: Երկրորդ. զի յայտնի մոլորեալ ի հերձուածս: Երրորդ. ի կարգէն թիւրեալ: Յայնպիսի աւտարացն պարտ է ամենեւին ի բաց փախչել:

Եւ գիտելի է, զի աստ անուամբ ոչխարաց նախ իմանին ամենեքեան, որք ունին շնորհս յԱստուծոյ, այսինքն՝ հաւատ եւ սէր յայնմ ժամանակի: Երկրորդ. իմանին միայն նախասահմանեալքն յԱստուծոյ ի փրկութիւն, յորում ժամանակս եւ իցեն: Եւ սոքա երկոքին ոչխարք ոչ լսեն զձայնն եւ ոչ հետեւին աւտարին, այլ միայն ճշմարիտ հովուին, զի նոքա, որք ունին զշնորհս, մնալով ի շնորհս, ոչ մեկնին ի ճշմարիտ հովուէն, այլ թէ թողուն զշնորհս, կարեն թողուլ եւ զճշմարիտ հովիւն: Եւ դարձեալ՝ նախասահմանեալն յԱստուծոյ ի փրկութիւն ոչ որոշին ի ճշմարիտ հովուէն, զի ընդ ժամանակի նախասահմանեցաւ հնազանդիլ Քրիստոսի: Եւ ասացեալ բանքս Քրիստոսի ծածուկ էր, զի առակաւ էր, որպէս ասէ.

Բան. «**Զայս առակ ասաց նոցա Յիսուս**» (Ժ. 6):

Մեկնութիւն. Այսինքն՝ փարիսեցւոցն: Առակ ասի, յորժամ բան ինչ վասն այլոյ բանի դնի, կամ յորժամ իր ինչ նշանակէ եւ նովաւ այլ ինչ իր ցուցանի: Եւ թէ վասն է՞ր առակաւ խաւսէր Քրիստոս, ասացաւ հատորն համարն: Եւ զի նոքա ոչ ծանեան զառակն Քրիստոսի, վասն այն պարտ էր մեկնել զնա, որպէս զկնի դնէ.

Բան. «**Ասէ նոսա Յիսուս**» (Ժ. 7):

Մեկնութիւն. Եւ զի առակն Քրիստոսի երկու մասն ունէր՝ մին, զոր ընդ այլ մտանէ, գող է եւ աւազակ, եւ զայս նախ մեկնէ: Երկրորդ. զի որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ճշմարիտ: Եւ զայս երկրորդ մեկնէ: Անդ. «**Ես եմ հովիւն քաջ**», իսկ աստ վասն առաջնոյն ասէ.

Բան. «**Ամէն, ամէն ասեմ ձեզ, [զի] ես եմ դուռն ոչխարաց**» (Ժ. 7):

Մեկնութիւն. Քրիստոս դուռն ասի, զի Նովաւ մարդիկ առ Աստուած մտանեն, եւ զի առաջին մասն առակին ոչ միայն զդուռն յիշէ, այլ եւ զգալն, վասն այն զկնի մեկնէ զգալն.

Բան. «**Ամենեքեան, որ յառաջ քան զիս եկին, գողք էին եւ աւազակք**» (Ժ. 8):

Մեկնութիւն. Զայս ոչ է պարտ իմանալ վասն մարգարէիցն, որ յԱստուծոյ առաքեցան, այլ նախ վասն նոցա, որք եկին առանց հաւատոցն Քրիստոսի, զի ի սկզբանէ աշխարհի, որք փրկեցան, հաւատովն Քրիստոսի փրկեցան, թէպէտ հաւատ նոցա ծածուկ էր եւ մերս յայտնի, այլ որք ոչ ունէին զհաւատն Քրիստոսի, ոչ մտին ընդ դուռնս այս, գողք էին եւ աւազակք:

Երկրորդ. իմանի բանս վասն Յուդայի եւ Թեւդայի գալիլեացւոյ, որ ի Գիրս Գործոցն է գրեալ (հմմտ. Գործք Ե. 34-42), որք յանձնէ եկին եւ ոչ առաքմամբն Աստուծոյ, որպէս ասէ Յովսէպոս. «Թեւդաս կախարդ ոմն էր, որ խաբեաց զբազումս ի ժողովրդենէն Իսրայէլի եւ տարաւ զնոսա մինչեւ Յորդանան գետ՝ խոստանալով նոցա բաժանել զջուրն եւ անցուցանել անթաց ոտիւք, որպէս եւ հարքն նոցա յառաջագոյն անցին», իսկ Յուդաս գալիլեացի ի ժամանակս ծննդեանն Քրիստոսի արգելոյր զժողովուրդն հրէից ի հնազանդութենէ կայսեր եւ ի հարկ տալոյ, եւ բազումք հետեւեցան նմա, որք ոչ էին ճշմարիտ ոչխարք: Նոքա էին աւտարք եւ գողք, զի Թեւդասն կախարդութեամբ պատրէր զժողովուրդն, եւ Յուդայ գալիլեացի յայտնի իբրեւ զաւազակ, ասէր զինքն թագաւոր Իսրայէլի:

Երրորդ. Իմանի բանս վասն սադուկեցւոցն, որ աւտարացան ի բանից եւ ի կամաց եւ ի գործոց մարգարէից, եւ ոչ լուան նոցա ոչխարքն, որպէս լուսաւորեալն ի կուրութենէ, որպէս յայտ է ի մեկնիչդ:

Եւ դուռն կոչի

Բան. «**Ես եմ դուռն**» (Ժ. 9):

Մեկնութիւն. Որպէս այլուր ճանապարհ կոչի եւ որթ անուանեաց զինքն եւ այժմ դուռն կոչէ: Եւ այս է առաջին, որ ցուցանէ, թէ Աստուած է Քրիստոս էութեամբ եւ մեծութեամբ հաւասար է Աստուծոյ, որպէս ասէ՝ ես եմ դուռն եւ մուծանող հաւատացելոց:

Եւ ի վերայ այնմ բանի լինի վեց իմն հարց.

Առաջին. Վասն է՞ր Քրիստոս դուռն կոչի:

Նախ՝ զի Քրիստոսիւ մտանեն մարդիկ առ Աստուած, ըստ այնմ. «Ոչ ոք գայ առ Հայր, եթէ ոչ ինեւ» (հմմտ. Ժ. 9): Երկրորդ. զի ոմանց փակէ եւ ոմանց բանայ, այսինքն՝ անհաւատից եւ հաւատացելոց, որպէս յիմար կուսից եւ իմաստնոց: Երրորդ. զի պահէ զորս ի տանն են,

եւ Քրիստոս է պահապան քրիստոնէից: Զորրորդ. զի մուտ եւ ելն նովաւ լինի, որպէս ասէ. «Ընդ իս մտցէ եւ ելցէ» (հմմտ Ժ. 9), *եւ այլ յատկութիւն ասացաւ ի վերոյ:*

Երկրորդ հարց. Վասն է՞ր ասէ յաւդիւն՝ դուռն:

Պատասխան. Նախ՝ զի յատկասցի ի հասարակ դրանց, երկրորդ՝ զի կենաց է դուռն, երրորդ՝ զի երկնից, չորրորդ՝ առ Հայր մտից:

Երրորդ հարց. Վասն է՞ր յոմանս Եկեղեցիս միափեղկ է դուռն եւ յոմանս՝ երկփեղկ:

Պատասխան. Երկոքինն խորհրդաւորք են. նախ՝ զի ետես Յոհաննէս ի տեսլեան զդուռն վերին քաղաքին յողջոց մարգարտաց, իսկ Սողոմոն արար զդուռն տաճարին երկբացիկս: Դարձեալ՝ միափեղկեանն զմիութիւն Բանին մարդացելոյ նշանակէ, իսկ երկփեղկն զհոգի եւ զմարմինն Քրիստոսի:

Եւ սուտ են, որ ասեն զԱստուածութիւն եւ զմարդկութիւն նշանակէ. նախ՝ զի Աստուածութիւն եւ մարդկութիւն ոչ բաժանեցան, այլ հոգի եւ մարմինն: Երկրորդ. զի Սողոմոն արար զդրունս երկբացիկս ի գիոց եւ պատեաց ոսկով, որ ցուցանէր փայտն զանապական մարմին եւ հոգին, եւ ոսկին՝ զԱստուածութիւն միաւորեալ: Երրորդ. զի ողջ մարգարիտն նշանակէ զԲանն միացեալ ի մարմնի: Զորրորդ. ասէ ասա. «Ես եմ դուռն»՝ *միաւոր, եւ ոչ՝ դրունք՝ բազմաւոր: Եւ զի մուտ դրանն, որ է բացուածք ընդ որ մտանեն, որ ասի դուռն, եւ այս միաւոր է եւ ոչ բազմաւոր, զի ընդ տախտակն թէ մի, թէ բազում ոչ ոք մտանէ, այլ բացուածն, որ մի է, որով զինքն նշանակեաց Տէրն:*

Զորրորդ հարց. Զի՞նչ է. «Ընդ իս մտցէ եւ ելցէ» (Ժ. 9):

Պատասխան. Նախ՝ հաւատովն մտցէ եւ առ Իս ելցէ: Երկրորդ. մտցէ առ իս եւ ելցէ յերկինս՝ առ Հայր: Երրորդ. մտցէ յԵկեղեցիս եւ ելցէ յերկինս: Զորրորդ. մտցէ ի շնորհս եւ ելցէ ի փառս, այսինքն՝ Քրիստոսիւ մտանեմք ի հաւատս եւ յաշխարհիս թշուառութենէն ելանեմք ի փառս:

Հինգերորդ հարց. Զի՞նչ է ճարակն:

Պատասխան. Զորս ինչ. նախ՝ դալար արաւտն յաւիտենական կենդանութեան: Երկրորդ. աւետարանական վարդապետութիւն Քրիստոսի: Երրորդ. մարմին եւ արիւնն փրկական: Զորրորդ. ի սեղան Հաւրն բազմեցուցանել եւ անցեալ պաշտել, այսինքն՝ յիմաստութեանց եւ ի տեսութեանց փառաց Աստուածութեանս կերակրեցից զնա:

Վեցերորդ հարց. Զի՞նչ է ճարակք բազմաւորապէս կոչէ:

Պատասխան. Վասն բազում երանութեանց մարդկային մասանց, զի հինգ պատճառաւ ասէ. «Մտցէ եւ ելցէ», *նախ՝ զի այս է սահման դրան, զի ել եւ մուտ ընդ նոյն արասցեն: Երկրորդ. զի ոչխարքն արտաքս ճարակին յանդաստանս եւ ձմեռն ի տան: Երրորդ. ցուցանէ խորհրդաբար, զի ընտրեալքն ճարակեն մտածութեամբ մտանելով առ Աստուած եւ արտաքս հային՝ խոկալով ի գործս Նորա: Զորրորդ. ցուցանէ, թէ միտք մեր կերակրին հայելով ի հոգեւոր եւ իմացական իրս իբրեւ ի ներս եւ հայելով ի զգալի իրս իբրեւ արտաքս: Հինգերորդ. ցուցանէ, թէ երանեալքն կերակրին ի միտս՝ հայելով զԱստուածութիւն Քրիստոսի եւ արտաքս տեսանելով զգալապէս զմիաւորեալ մարդկութիւն Քրիստոսի: Եւ վասն այսմ պատճառի ճարակք ասէ, որ է արաւտք բազմաւորական:*

Յորժամ եցոյց զինքն դուռն գող, զկնի ցուցանէ զմտեալսն, որք ոչ Քրիստոսիւ՝ գողս գող, որք ոչ եկին ի փրկութիւն ժողովրդեան, այլ ի մահ:

Բան. «Գող ոչ գայ, եթէ ոչ զի գողասցի եւ սպանցէ եւ կորուսցէ» (Ժ. 10):

Մեկնութիւն. Երկու բացասութիւն ի մի ստորասութեան տեղի դնէ, զի այս է ըստ մարմնոյ գողի խորհուրդն եւ կամքն եւ գործ, որ ասաց:

Եւ հոգեպէս գող հինգ կերպիւ ասեն. նախ՝ փարիսեցիքն եւ սադուկեցիքն, եւ Յուդա եւ Թեւդաս, որ յառաջ քան զՔրիստոս եկին եւ ի չարիս առաջնորդէին: Երկրորդ. յետ Քրիստոսի հերձուածողք եւ չար առաջնորդք Եկեղեցւոյ, որ մոլորութիւն են ժողովրդեանն եւ կորուստ: Երրորդ. գող ասի նոյն ինքն սատանայ, որ խաբելով մտանէ ի մարդ: Զորրորդ. գող ասի մեղք, որ կորուսիչ է հոգւոց: Եւ չորքս այսոքիկ չար են յայտնապէս, իսկ հինգերորդ՝ գող ասի մահն, ըստ այնմ. «Ո՛չ գիտէք յորում աւուր գողն ձեր գայ» (հմմտ Ղուկ. ԺԲ. 39): *Եւ սա միջակ է գող, զի բարեացն բարի հանդիպի եւ չարեացն՝ չար:*

Բան. **«Ես եկի, զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին»** (Ժ. 10):

Մեկնութիւն. Գալն ի յերկնից զմարդեղութիւն ասէ, եւ ընդդէմ չար գողոցն զկեանս տայ, զի ունիցին, եւ առաւել եւս ունիցին:

Վեց է իմացումն. նախ՝ շնորհքն, որ աստ ունիմք, կեանք է հոգւոյ, որպէս ասէ Պաւղոս ի Հռոմայեցիսն. «Շնորհքն Աստուծոյ կեանք են յաւիտենական» (տե՛ս Հռոմ. Զ. 23), *վասն որոյ ասէ.* զկեանս ունիցին, եւ առաւել եւս ընդունիցին *զկատարումն շնորհաց յարքայութեան երկնից: Երկրորդ. առաւել կեանս զխորհուրդ նոր աւրինացս ասէ, զի թէպէտ պատարագ հնոյն շնորհս տայր, ոչ յինքեանց, այլ միայն վասն բարութեան ընդունողին, նոյնպէս եւ թլփատութիւն ի սկզբնական մեղացն մաքրէր, այլ ոչ այնպէս, որպէս մկրտութիւն եւ Պատարագն Սուրբ: Երրորդ. առաւել կեանս զյաւիտենականն ասէ ի վերայ ժամանակեայս, որպէս ասէ մեկնիչդ: Չորրորդ. որպէս մեղքն մահ է եւ առաւել տանջանք, նոյնպէս արդարութիւն կեանք է, եւ առաւել կեանք՝ ազատն ի տանջանաց: Հինգերորդ. աստ յուսով եւ զաւրութեամբ կենդանացաք եւ առաւել անդ արդեամբ եւ ներգործութեամբ: Վեցերորդ. աստ հոգւով միայն կենդանացոյց եւ անդ հոգւով եւ մարմնով յարուցանէ, զայն առեալ կեանք ասէ:*

Յորժամ եցոյց Քրիստոս զառաջին մասն առակին, զի ընդ այլ մտեալքն գողք են եւ աւազակ, զկնի ցուցանէ զմիւս մասն առակին, որ է բարի հովիւ մտեալ ընդ դուռն:

Թէ հովիւ է Քրիստոս

Բան. **«Ես եմ հովիւն քաջ»** (Ժ. 11):

Մեկնութիւն. Այսինքն՝ բարի: Եւ այս է երկրորդ բանն, որ ցուցանէ, թէ Աստուած է Քրիստոս եւ էութեամբ եւ մեծութեամբ հաւասար է Աստուծոյ, որ զամենայն հովուէ բարի եւ քաջ հովուութեամբ, որպէս ասէ. «Ես եմ հովիւն քաջ»: *Եւ մի երկմտեսցիս վասն նուաստ անուանս, զի ոչ միայն հովիւ ասէ, այլեւ բարի, որ Աստուծոյ է յատուկ, ըստ այնմ.* «Չիք որ բարի, բայց մի Աստուած» (Ղուկ. ԺԸ. 19): *Նաեւ զՀայր մարգարէքն հովիւ կոչէին, ըստ այնմ.* «Ո՛ հովուեսդ Իսրայէլի, նայեաց եւ փրկեաց զմեզ» (տե՛ս Սաղմ. ՀԹ. 2-4): *Դարձեալ՝ որպէս Քրիստոս զինքն լոյս անուանէ վասն խաւարելոյն, եւ կեանք՝ վասն մահացելոյն, եւ բժիշկ հիւանդաց, սոյնպէս եւ հովիւ կոչեաց վասն*

ցրուելոյն, փոխարկաբար չփոթմամբ միաւորելն է, որպէս ալիւր եւ ջուր, եւ փոխատրապէս անշփոթ միաւորութիւն, որպէս հուր եւ երկաթ եւ որպէս լոյս ընդ աւդ:

Վասն յատկութեան հովուին

Եւ վեց յատկութիւն հովուին, որ աստ ասաց. նախ՝ զի ընդ դուռն մտանէ ի փարախն: Երկրորդ. զի դռնապանն բանայ: Երրորդ. զի ոչխարքն ձայնի նորա լսեն: Չորրորդ. զիւրսն կոչէ յանուանէ: Հինգերորդ. զի հանէ զիւրսն ամենայն: Վեցերորդ. զի առաջի նոցա երթայ:

Դարձեալ ասեմք տասն յատկութիւն հովուին, որպէս ասէ Դաւիթ. «Տէր հովուեսցէ զիս» (Սաղմ. ԻԲ. 2), *նախ.* «Ի վայրի դալարուոջ բնակեցոյց» (Սաղմ. ԻԲ. 2), *այսինքն՝ ի վայրենացեալ գիտութիւնս Սուրբ Գրոց: Երկրորդ.* «Առ ջուրս հանգստեան սնոյց» (Սաղմ. ԻԲ. 2), *այսինքն՝ մկրտութեամբ սուրբ աւազանին: Երրորդ. առաջի հաւատին ընթանայ, ըստ այնմ.* «Երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի» (Յովհ. ԺԴ. 2): *Չորրորդ. ընդ թշնամիսն պատերազմի, որ է սատանայ եւ մահ եւ մեղք: Հինգերորդ. զմոլորեալսն դարձուցանէ ըստ առակի անառակին* (հմմտ Ղուկ. ԺԵ. 11-32): *Վեցերորդ. զկորուսեալն գտանէ, որպէս զդրամն* (հմմտ Ղուկ. ԺԵ. 8-9): *Եւթներորդ. զբեկեալն պատէ, որպէս զկիսամահ վիրաւորեալն* (հմմտ Ղուկ. Ժ. 29-37): *Ութերորդ. զգաւրավարսն պահէ, որպէս՝* «Ընդ ձեզ եմ զամենայն աւուրս» (տե՛ս Մտ. ԻԸ. 20): *Իններորդ. ի վերջ աւուրն ի փարախն ժողովէ, այսինքն՝ ի կատարածի երկնաւոր փարախն: Տասներորդ. հովուական բանիւք մխիթարէ, այսինքն՝* «Ի սեղան Հարն բազմեցուցանէ» (հմմտ. Մտ. ԻԵ. 34),- *ասէ:*

Իսկ յաւդիւն ասելն՝ հովիւն, եւ ոչ սոսկ՝ հովիւ, չորս ինչ նշանակէ. նախ՝ ցուցումն է եղական ի հասարակ հովուութեանց: Երկրորդ. նշանակ է ծանաւթութեան յառաջին ժամանակաց: Երրորդ. որոշող է յատկութեան եւ բարի հովուին եւ չարեաց: Չորրորդ. ընդդէմ է եւ ներհակ հովուին մահացու, ըստ որում. «Մահ հովուեսցէ զնոսա» (Սաղմ. ԽԸ.15), *եւ աստ կենաց է հովիւ:*

Բան. **«Հովիւ քաջ դնէ զանձն ի վերայ ոչխարաց»** (Ժ. 11):

Մեկնութիւն. Չորս է իմացումն. նախ՝ զի ազնիւն վասն անարգին ոչ մեռանի, այլ անարգն վասն ազնուին մեռանիցի, վասն

որոյ հովիւն վասն ոչխարին ոչ մեռանի, թէպէտ աշխատի եւ պահէ, այլ ոչխարն վասն մարդոյն մեռանիցի, իսկ հոգի մարդոյն ազնիւ է քան զմարմինն, վասն որոյ հովիւն հոգւոց վայելչաբար դնէ զմարմնոյ կենդանութիւն վասն փրկութեան հոգւոց հաւատին: Երկրորդ. ընդդէմ է չար հովուացն, որ սպանանէ զոչխարս, այլ Նա կեցուցանէ: Երրորդ. զի վասն փրկութեան մարդկան մեռանի, այլ ինքն ոչ է պարտական մահու, զի ոչ արար մեղս: Չորրորդ. զի կամաւ եւ գիտութեամբ մեռանի, ասէ զայս յառաջագոյն:

Ասաց զզանազանութիւն բարի եւ չար հովուաց, այժմ ասէ զանազանութիւն վարձկանաց:

Բան. **«Իսկ վարձկանն, որ ոչ է հովիւ»** (Ժ. 12):

Մեկնութիւն. Նախ՝ գիտելի է, զի վարձկանն կրկին է, այսինքն՝ բարի եւ չար: Բարի վարձկան է, որ վասն հոգւոյ եւ յաւիտենից կենացն աշխատի, որպէս մարգարէքն եւ արդարքն սուրբ: Եւ չար վարձկան է, որ վասն մարմնոյ եւ ժամանակիս լինի, ոչ մարմնոյ վարձկանաց ասեմ, այլ հոգւոյ, որպէս եպիսկոպոսք, վարդապետք, որ վասն մարմնոյ շահի եւ փառաց աշխարհի լինին, նոյնպէս եւ կրկին են ծառայական երկիւղն. բարի է, որ վասն հոգւոյն տանջանաց երկնչի, եւ չար, որ վասն մարմնոյն:

«Իսկ վարձկանն, որ ոչ է հովիւ», *զմարգարէսն ասէ, եւ զարդարսն, որ փոխարէն աշխատութեան զերանութիւն ընկալան:*

Զանազանութիւն մարգարէից եւ Տեառն

Եւ գիտելի է, զի մարգարէքն եւ արդարք չորս իրաւք հաւասարեն ընդ Տեառն եւ չորս իրաւք պակաս:

Եւ հաւասար են. նախ՝ զի ի կռոցն դարձուցանէին զժողովուրդն: Երկրորդ. ի մեղաց հանէին: Երրորդ. զհաւատն Քրիստոսի ուսուցանէին: Չորրորդ. վասն սիրոյն Աստուծոյ մեռանէին եւ սրբութիւն գործէին:

Զայսոսիկ եւ Տէրն արար, իսկ պակաս եւ տկարք եղեն. նախ՝ զի վասն ոչխարացն ոչ կարացին մեռանել: Երկրորդ. զանէծս Ադամայ ոչ բարձին: Երրորդ. ի մահու հոգւոյ եւ մարմնոյ ոչ ազատեցին: Չորրորդ. զփառս եւ զերանութիւն մարդկան ոչ տուին: Եւ զայսոսիկ հովիւն քաջ կատարեաց:

Դարձեալ՝ վարձկան վասն վարձուն ասի, եւ այն է, որ վերակացու լինի վասն աւգտի ժամանակաւորացս, որ վարձ կոչի, որպէս ասէ յառակս անառակին. «Ի տան հաւր իմոյ վարձկանք բազում են» (տես Ղուկ. ԺԵ. 17), *իսկ երկնաւոր փառքն ոչ ասի վարձ, այլ ի հասարակ սովորութենէ վասն աշխատանաց հատուցմանն վարձ ասի, ըստ այնմ. «Վարձք ձեր բազում են յերկինս»* (Մտթ. Ե. 12), *իսկ երկնային փառքն յատկաբար ժառանգութիւն կոչի, որ հատուցանի որդւոց, իսկ վարձկանն, որ հայի յերկրաւոր իրս, ոչ է ճշմարիտ հովիւ, որպէս ասէ.*

Բան. **«Որոյ ոչ իւր են ոչխարքն»** (Ժ. 12):

Մեկնութիւն. Ասա անուամբ հովուին իմանի տէր ոչխարացն, որ պահէ զոչխարն իբրեւ զիւր, եւ վարձկանն վասն վարձուն պահէ եւ ոչ վասն ոչխարաց, վասն որոյ ի նեղութեան ժամանակի հեռանայ յոչխարաց, որպէս ասէ.

Թէ գայլ է սատանայ

Բան. **«Իբրեւ տեսանէ զգայլն, զի գայ»** (Ժ. 12):

Մեկնութիւն. Գայլ կոչի սատանայ վասն տասն պատճառի: Դարձեալ գիտելի է, զի երեքն են գայլք եկեղեցւոյ. նախ՝ սատանայ, երկրորդ՝ հերձուածողք, երրորդ՝ չար իշխանք, որ բռնութեամբ ածեն ի մեղս: Եւ յորժամ ի զանազան չարիս կործանին ոչխարքն, գիտասցեն, եթէ եկեալ է սատանայ, զոր պարտ է աղաւթիւք ընդդէմ կալ սատանայի եւ ուղիղ վարդապետութեամբ հերձուածողաց ընդդիմանալ, եւ բռնաւոր իշխանին բանադրական բանիւ կամ մխիթարելով զոչխարսն: Այլ այսու զանազանի վարձկանն ի գայլոցն, զի թէպէտ վարձկանն ոչ խնդրէ զփրկութիւն բանական ոչխարաց, սակայն ոչ հալածէ զնոսա, այլ պահէ վասն ընչից շահելոյ ի նմանէ, եւ յորժամ ոչ շահի, փախչի, որպէս ասէ.

Բան. **«Թողու զոչխարսն եւ փախչի»** (Ժ. 12):

Մեկնութիւն. Կրկին է փախչելն, կամ տեղւոջէ ի տեղ ընթանայ, կամ զի ոչ ինչ աւգնէ ոչխարացն:

Բան. **«Եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ»** (Ժ. 12):

Մեկնութիւն. Յայնժամ յափշտակին, յորժամ ի մեղս ածին, եւ յայնժամ ցրուին, յորժամ ի հաւատոցն բաժանին, ապա ասէ զպատճառ փախչելոյն:

Բան. **«Քանզի վարձկան է եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն»** (Ժ. 13):

Մեկնութիւն. Այսինքն՝ միայն հպի ի ժամանակաւոր իրս եւ ոչ սիրէ վասն ինքեան, այլ վասն շահին, եւ յորժամ շահն պակասի, թողուն եւ փախչին:

Վասն ճանաչմանն

Յորժամ ասաց վասն բարի հովուաց եւ չարաց եւ վարձկանաց, այժմ ասէ զանազանութիւն ոչխարաց:

Եւ զայս կրկին նշանաւ. նախ՝ վասն անդրադարձութեան ճանաչման հովուին եւ ոչխարաց, որպէս ասա ասէ. **«Ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն»** (Ժ. 14): *Երկրորդ. վասն սիրոյ հովուին, որ ունի առ ոչխարս, անդ.* **«Եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց»** (Յովհ. Ժ. 14):

Եւ զառաջինն ասէ.

Բան. **«Ես եմ հովիւն քաջ. եւ ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն»** (Ժ. 14):

Մեկնութիւն. Որպէս մարմնաւոր հովիւն ճանաչէ զոչխարս իւր դրոշմամբ եւ կերպիւն եւ խնամելովն, նոյնպէս եւ ոչխարն զհովիւն ճանաչէ, միշտ ի նա հայելով եւ ձայնիւն եւ տածելովն, այսպէս եւ ճշմարիտ հովիւն Քրիստոս ճանաչէ զհաւատացեալս հաւատով եւ մկրտութեամբն եւ բարի գործով եւ Աւետարանին շնորհաւք:

Դարձեալ՝ ճանաչումն Աստուծոյ կրկին է. նախ՝ տեսական ճանաչումն, եւ այսու Աստուած զամենայն գիտէ զբարի եւ զչար, որպէս ասէ Պաւղոս. «Ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի [աչաց] նորա» (Եբ. Դ. 13): Երկրորդ. ասի ճանաչումն Աստուծոյ հաճոյական սիրով եւ հոգացողութեամբ, եւ Քրիստոս այս կրկին կերպիւս ճանաչէ զհաւատացեալս Իւր: Դարձեալ՝ ճանաչէ Աստուած զեղեալսն եւ զլինելոցն եւ զծածուկս սրտին: Եւ սոյնպէս ճանաչէ Քրիստոս, զոր ոչ ճանաչէ մարդ: Դարձեալ՝ որպէս մեկ-

նիչդ ասէ՝ անդ ճանաչէ Քրիստոս, զի հատուցանէ բազում վարձս եւ յաճախ պարգեւս եւ փառս անկողոպտելիս:

Եւ զայս չորս մտաւք իմասցիս. նախ՝ առ որդիսն եւ վարձկանսն եւ ծառայսն է: Երկրորդ. ի հոգի, ի մարմին եւ ի միտս: Երրորդ. վասն հաւատոյ եւ յուսոյ եւ սիրոյ: Չորրորդ՝ հարիւրաւոր, վաթսունաւոր եւ երեսնաւոր:

Բան. **«Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր»** (Ժ. 15):

Մեկնութիւն. Նախ՝ զի գիտութեամբն Հաւր հաւասար է, ապա եւ էութեամբն ընդ Հաւր հաւասար Աստուած է, եւ զայս մի իմանալ բաժանմամբ, այլ միութեամբ, զի որպէս էութեամբ միացեալ է Բանն Աստուած ի մարդկութիւն իւր եւ մի է բնութեամբ եւ մի է անձամբ, սոյնպէս մի է եւ գիտութեամբ, մի է եւ կամաւք, եւ որպէս մարդկայինս ընդ Բանն Աստուած միաւորեալ մի է անբաժանելի, սոյնպէս եղական գիտութիւն ընդ անեղ գիտութեան է միացեալ եւ ստեղծական կամք ընդ անստեղծ կամացն է միաւորեալ, զի յետ անճառ միաւորութեան Բանին եւ մարմնոյն, այլ ոչ ունի երկուութիւն եւ ոչ բաժանումն, եւ որ բաժանէ ի Քրիստոս իր ինչ ի բնաւորական գոյացութեան, բաժանեալ լիցի ինքն եւ որոշեալ ի շնորհաց միութենէն Քրիստոսի եւ ի փառաց նորին զրկեսցի:

Յետ այսաւրիկ դնէ զերկրորդ նշանն, որ է սէր ճշմարիտ հովուին առ հաւատացեալս:

Բան. **«Եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց»** (Ժ. 15):

Մեկնութիւն. Այն է դնել զանձն, զի Քրիստոս կամաւորապէս մեռաւ վասն մարդկան հաւատացելոց եւ հոգին բաժանեցաւ ի մարմնոյն, այլ հոգին եւ մարմինն միշտ միաւորեալ մնացին առ Աստուածութիւն, զի անձն զհոգին ասէ, որ մատոյց Հաւր Աստուծոյ, որպէս ասէր. «Հա՛յր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ» (Ղուկ. ԻԳ. 46): Եւ զի կարծէին հրէայքն, թէ միայն նոքա էին ոչխարք եւ միայն վասն նոցա մեռանելոց էր, վասն որոյ զայս կարծիքս ի բաց բառնայ:

Բան. **«Նա եւ այլ եւս ոչխարք են իմ»** (Ժ. 16):

Մեկնութիւն. Վասն հեթանոսաց ասէ, որ չէին ի գաւթէ եւ ի ժողովարանէ հրէիցն:

Իսկ ասելն՝ **նա, երեք ինչ ցուցանէ. նախ՝ բառ է նախդիր, երկրորդ՝ դերանուն է, երրորդ՝ բացասական է, որպէս ասել, թէ՝ ոչ, որպէս եւ Դաւիթ ասէ. «Նա՝ երանի ժողովրդեանն, որոյ Տէր Աստուած աւգնական է նմա»** (տե՛ս Սաղմ. ճԽԳ. 15), *զի բացասելով զկարծիս հրէիցն ի բաց բառնայ եւ դերանուն զդէմս հեթանոսաց ասէ, եւ նախդիրն սկիզբն է բանի:*

Եւ աստ լինի չորս հարց.

Առաջին. Թէ որպէ՞ս էին հեթանոսք ոչխարք նմա, զի դեռ չէին հաւատացեալք:

Պատասխան. Նախ՝ զի թէպէտ հնազանդութեամբ չէին նմա, այլ նախասահմանութեամբ նմա էին: Երկրորդ. թէպէտ հաւատով չէին նմա, այլ արարչութեամբ նմա էին:

Երկրորդ հարց. Վասն է՞ր ասէ. **«[Եւ զայնս եւս] պարտ է ինձ ածել այսր»** (Ժ. 16):

Պատասխան. Զի քան զհրէայս նոքա պարտականք էին վասն չորից. նախ՝ վասն բազմութեան ազգացն: Երկրորդ. զի դիւրահաւանք էին: Երրորդ. զի զճշմարտութիւն ստացան եւ ոչ՝ զաւրինակն: Չորրորդ. զի կատարեալք եւ հաստատուն մնացին ի հաւատս: Եւ հրէայքն ընդդէմ այսմ սակաւք էին, եւ անհաւանք, եւ անկատարք, եւ փոփոխեալք ի հաւատոցն:

Երրորդ հարց. Վասն է՞ր ասէ. **«Զայնի իմում լուիցեն»** (Ժ. 16):

Պատասխան. Զի թէպէտ առաքեալքն զհեթանոսս ի հաւատս ածին, այլ գործակցութեամբն Քրիստոսի էր, որպէս գրէ Մարկոս ի վերջքն. «Իսկ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն տեղիս Տեառն գործակցութեամբ» (Մր. ԺՁ. 20):

Եւ ձայնի, ասէ, լսեն վասն հնգից. նախ՝ զի միջնորդաւք խաւսեցաւ: Երկրորդ. զի հեռաւորք էին: Երրորդ. զի բազումք էին: Չորրորդ. զի յայտնի քարոզեցաւ նոցա: Հինգերորդ. զի դիւրաւ լսեցին, վասն այն ձայն ասէ:

Չորրորդ հարց. Վասն է՞ր ասէ. **«Եղիցին մի՛ հաւտ եւ մի՛ հովիւ»** (Ժ. 16):

Պատասխան. Նախ՝ զի սատանայ ցրուեաց զազգս մարդկան ի պէսպէս կուռս եւ ի զանազան մեղս, Քրիստոս ընդդէմ նմին ժողովեաց ի մի հաւտս եւ ի մի հովիւ: Երկրորդ. զի Ինքն Քրիստոս ի բաժանմանէ ի միութիւն եկն, վասն այն եւ զբաժանեալ ազգս ի

միութիւն ածէ, այսինքն մի՛ հաւատովն, եւ մի՛ մկրտութեամբն, եւ մի՛ հաղորդութեամբն, եւ մի՛ յուսովն, եւ սիրովն եւ այլն:

Միութիւն է ի մէջ քրիստոնէից, եւ թէ ոք ասէ՝ պարտ է մի՛ գլուխ լինել, որպէս պապն Հռովմայ, ասեմք, թէ՝ սուտ են ամենեւիմբ վասն չորս պատճառի. նախ՝ զի Քրիստոս առաքելոցն հաւասարապատիւ ետ զերկոտասան աթոռս դատողութեան: Երկրորդ. զի յորժամ համբարձաւ, եդ զձեռս ի վերայ առաքելոցն եւ արար զնոսա կաթուղիկոսունս: Երրորդ. զի իւրաքանչիւր յազգս առաքեալքն ձեռնադրեցին եպիսկոպոսունս: Չորրորդ. զի ի ժողովն Նիկիոյ ի չորիս բաժանեցին զչորս կողմս աշխարհիս ըստ չորից աւետարանչացն, եւ զԵրուսաղէմ, եւ զԿիպրոս, եւ զՀայք ինքնագլուխ սահմանեցին:

Եւ թէ ոք ասիցէ, եթէ ընդէ՞ր Հայոց ազգիս երեք կաթողիկոս է, զի անպատշաճ է միոյ մարմնոյ երկու կամ երեք գլուխ լինել, կամ միոյ հարսին երեք փեսայ: Ասեմք առ այս, եթէ ճշմարիտ մի՛ է կաթողիկոս եւ մի՛ գլուխ ազգիս Հայոց, որ ի սրբոյն Գրիգորէ յաջորդեցին մինչեւ ցայժմ, իսկ ազուանիցն ոչ է Հայոց, այլ ազուանից կաթողիկոս եւ ի Լուսաւորչէն մերմէ կարգեալ զսուրբն Գրիգորիս թոռն իւր: Իսկ Աղթամարայն՝ թերակատար եւ սուտ անուն, ո՛չ է կաթողիկոս, այլ արքեպիսկոպոս, եւ այժմ ապստամբեալ ո՛չ աւրինաւք, այլ բռնութեամբ կոչեն զինքեանս կաթողիկոս, միայն անուամբ եւ ոչ իրաւք ստացեալ սուտ անուն, որպէս եղջերուաքաղն եւ յարալէզն:

Այսքան առ այս:

Յետ այսորիկ զկատարեալ սէրն ցուցանէ, որ ունի Քրիստոս առ ոչխարս:

Բան. **«Վասն այսորիկ սիրէ զիս Հայր իմ, զի ես դնեմ զանձն իմ»** (Ժ. 17):

Մեկնութիւն. Չորս է իմացումն. նախ՝ վասն որոյ սիրէ զիս Հայր, այսինքն՝ վասն սիրոյն Հաւր առ իս զիս առաքեաց ի փրկութիւն ոչխարաց: Երկրորդ. վասն այն սիրէ զիս Հայր, այսինքն՝ վասն հնազանդութեանս իմոյ առ Հայր, զի կատարեցից զկամս Հաւր: Երրորդ. վասն սրբութեան հոգւոյս եւ չարչարանաց մարմնոյս սիրէ զիս Հայր: Չորրորդ. վասն հեթանոսաց ժողովելոյս ի մի հաւտ եւ ի մի հովիւ սիրէ զիս Հայր իմ:

Թէ զինչ է մահն Քրիստոսի

Բան. **«Զի ես դնեմ [զանձն իմ], զի միւսանգամ առից զնա»** (Ժ. 17):

Մեկնութիւն. Զորս ինչ ցուցանէ. նախ՝ զաստուածային զաւրութիւն իւր, ըստ այնմ. «Ես սպանանեմ եւ ես կեցուցանեմ» (Բ. Այր. ԼԲ. 39): *Երկրորդ. զկամաւոր չարչարանս եւ զյարութիւն: Երրորդ. զտկարութիւն հրէիցն յանդիմանէ: Չորրորդ. զանազանէ զմահն իւր յամենայն մարդկանէ:*

Հարց. Որպէ՞ս որոշի մահն Քրիստոսի յամենայն մարդկանէ:

Պատասխան. Զորիւք. նախ՝ որպէս ասէ. «Դնեմ զանձն իմ», այսինքն՝ զհոգիս դնեմ արտաքոյ մարմնոյս եւ առնում յարութեամբն: Իսկ մարդիկ բանիւ ոչ զհոգիս հանել կարեն եւ ոչ արգելուլ ի յելանելն եւ ոչ միւսանգամ առնուլ, որպէս յայտ է ի մեկնիչդ: Եւ չգիտելն զայն ասէ, զի ոմանք ի խաւար ասեն եւ ոմանք ի լոյս, ոմանք ի տանջանս եւ ոմանք ի հանգստի: Եւ դարձեալ՝ թէպէտ գիտեմք առ հասարակ, այլ յատկապէս ոչ գիտեմք զտեղիս հոգւոց:

Եւ չորս ինչ ճարտարապէս է Քրիստոս ի յարութիւն մեր. նախ՝ զապականեալ մարմինն անապական կազմէ: Երկրորդ. զզանազանեալ մարմինս անխառն յարուցանէ: Երրորդ. զհոգի եւ զմարմին ի մին կապէ: Չորրորդ. ամենայն ուստեք եւ զամենայն մարդիկ յարուցանէ: Եւ զայս առնէ ի քթթել ական եւ ի սուղ վայրկենի:

Երկրորդ. դարձեալ զանազանի մահն Քրիստոսի երիւք. նախ՝ ի ձայն բարձր աղաղակեաց (հմմտ. Մտ. ԻԷ. 50): *Երկրորդ. զգլուխն խոնարհեցոյց* (Յովհ. ԻԹ. 30): *Երրորդ. զաչսն եխից, զի ամենայն մարդոյ ի մեռանելն ձայնն նուազի, եւ գլուխն պնդի, եւ աչքն ի բաց մնայ:*

Երրորդ. այլ է մահն Քրիստոսի սոյնպէս, զի մահն Ադամայ եղեւ ի ներգործելոյն, եւ մահ ամենայն մարդկան պարտաւորութիւն է եւ ակամայ, իսկ մահն Քրիստոսի կամաւ է, ո՛չ ի գործոյ եւ ո՛չ պարտք, զի ոչ ունի մեղս:

Չորրորդ. յայտ է ի սքանչելեացն, որ նախքան զխաչն, յորժամ ոչ կարէին ձեռն արկանել ի Նա եւ ի խաչին սքանչելիքն ամենայն:

Հարց. Վասն է՞ր կամաւ էր մահն Քրիստոսի:

Պատասխան. Վասն չորից, որպէս նախ ասացաւ յերկրորդ հատորն, համարն. նախ՝ զի ցուցցէ զինքն Տէր մահու եւ կենաց, եւ ոչ ի ներքոյ մահու: Երկրորդ. զտկարութիւն հրէիցն, զի իւր կամաւն չարչարեցաւ: Երրորդ. զի կամաւն զկատարեալ սէրն ցուցանէ: Չորրորդ. զմեծամեծ հատուցմունքն, որով փրկեցան մարդիկ:

Բան. **«Միւսանգամ առից զնա»** (Ժ. 17):

Մեկնութիւն. Ցուցանէ, զի Քրիստոս իւր յատուկ զաւրութեամբն յարեաւ ի մեռելոց, զի ինքն զինքն յարոյց, զի ինքն էր յարուցիչ եւ ինքն էր յարուցեալ, որպէս ի խաչին, նոյն ինքն մեռեալ էր եւ կենդանի, որպէս ինքն է Պատարագ եւ ինքն ընդունի, եւ զի Քրիստոս կամաւորապէս չարչարեցաւ, վասն այն ասէ.

Բան. **«Ոչ ոք հանէ զնա յինէն, այլ ես դնեմ զնա անձամբ իմով»** (Ժ. 18):

Մեկնութիւն. Ոչ ոք հանէ, այսինքն՝ բռնութեամբ բաժանէ զՀոգիս իմ յինէն, եւ զայս ոչ է պարտ իմանալ, թէ Քրիստոս ոչ մեռաւ ի չարչարանացն, զի թէ կամեցեալ էր, միով բանիւ կարէր զչարչարողսն կորուսանել, այլ զայն պարտ է իմանալ, թէ Քրիստոս կամաւ եկն ի չարչարանս եւ ի չարչարանացն մեռաւ:

Եւ զի ցուցցէ, թէ Քրիստոս ոչ ի հարկէ եւ ոչ յանկարութենէ ետ զՀոգին, ասէ.

Բան. **«Իշխանութիւն ունիմ դնել զնա եւ իշխանութիւն ունիմ [միւսանգամ] առնուլ զնա»** (Ժ. 18):

Մեկնութիւն. Եւ այսու ոչ է պարտ իմանալ, թէ Հոգին Քրիստոսի բաժանեալ եղեւ ի Բանէն, զի Բանն Աստուած զմի անգամ առեալն զհոգի եւ զմարմինն եւ միաւորեաց ընդ իւրում Աստուածութեան, այլ ոչ բաժանեցաւ ի նմանէ, վասն այն մարմինն Քրիստոսի եւ հոգին բաժանեցան ի միմեանց ի մահն, այլ Աստուածութիւն անբաժանելի մնաց ի մարմնոյն, որ ի գերեզմանի եւ ի Հոգւոյն, որ ի դժոխս, այլ զայն պարտ է իմանալ, զի հոգին եւ մարմինն բաժանեցան ի մահն եւ միաւորեցան յարութեամբն:

Եւ զայն ոչ արար անկարգ եւ անսահման, վասն որոյ ասէ.

Բան. **«Զայս պատուէր առի ի Հաւրէ իմմէ»** (Ժ. 18):

Մեկնութիւն. Այսինքն՝ Հաւր հրամանաւ զանձն իմ դնեմ ի մահ, եւ ոչ պատահմամբ, եւ ոչ ի հարկէ, այլ սահմանաւ եւ կամաւ

Հաւր, որպէս յայտ է ի մեկնիչդ: Ոմանք տարակուսին առ այս, եթէ՝ ոչ ոք եհան զՆա յինէն. նախ՝ զի հրէայքն խաչեցին եւ սպանին:

Դարձեալ՝ զի թէ կամաւ ետ զանձն, ահա Ինքեան սպանող է եւ անձնամատն:

Պատասխան. Այս է առաջնոյն լուծումն, զի հրէայքն ոչ կարէին խաչել, որպէս յամենայն տեղիս, ուր ոչ կամէր, ելանէր ի ձեռաց նոցա, այլ Քրիստոս ազատ կամաւքն իւր խաչեցաւ եւ եհան զոգին: Իսկ երկրորդին, զի թէպէտ կամաւ ետ զանձն՝ ոչ որպէս այլք, որ վասն նախանձու, կամ այլ իրաց լլկելով ի դիւէ անձնամատն լինին, այլ Քրիստոս վասն փրկութեան մարդկան ետ զանձն:

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

[Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ մտանէ ընդ դուռն ի գաւիթ ոչխարացն, այլ ընդ այլ ելանէ, նա գող է եւ աւազակ] (Յովհ. Ժ. 1):

«Դուռն» *զաւրէնքն ասէ:* «Հովիւ»՝ *զքահանայքն եւ զփարիսեցիքն:* «Ոչխարք»՝ *զժողովուրդն:* «Գաւիթ»՝ *զխորանն հին.*

Ա. Առաջին՝ զի որպէս պատուական է ներսինն, քան զգաւիթն. այսպէս մերս եկեղեցի քան զխորանն իսրայէլացւոցն:

Բ. Երկրորդ՝ զի ամենայն ոք նախ զգաւիթն կոխէ եւ ապա ի ներս մտանէ. այսպէս առաջին էր այն, քան զմերս:

«Այլ ընդ այլ ելանէ»՝ *քահանայքն եւ փարիսեցիքն, որ ոչ պահէին զաւրէնսն:*

«Գող» *զփարիսեցւոցն ասէ, զի կեղծաւորք էին:*

«Աւազակ»՝ *քահանայքն, որ յայտնապէս անցանէին:*

[Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց: Նմա դռնապանն բանայ, եւ ոչխարքն ձայնի նորա լսեն. եւ զիւր ոչխարսն կոչէ յանուանէ, եւ հանէ զնոսա] (Ժ. 2-4):

Իսկ *որ* «հովիւ է ոչխարաց»՝ *Քրիստոս վասն իւր ասէ:*

«Դռնապան» *Մովսէս է, զի ի ձեռն նմա տուան Աւրէնքն:* «Բանալն» *այն է, որ յաղագս Քրիստոսի մարգարէացաւ.* «*Մարգարէ յարուցցէ ձեզ*» (Գործք Գ. 22), *եւ թէ՝* «*Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ*» (հմմտ. Բ. Աւր. ԻԱ. 23, Գաղ. Գ. 13-14), *նաեւ՝ զաւրհնութիւնն Յակոբայ վասն Յուդայի, թէ՝* «*Մի՛ պակասեսցի իշխան ի քէն, մինչեւ ցնա, որ իւրն է հանդերձեալն*» (հմմտ. Ծնն. ԽԹ. 10):

Մովսէս գրեաց եւ զայս: Դարձեալ «դռնապան» *զՅովհաննէս ասէ եւ* «բանալ» *վկայութեամբն, որ յաղագս Քրիստոսի:*

«Ոչխարք ձայնի իմում լսեն» (հմմտ. Ժ. 3):

Որպէս առաքեալքն եւ հաւատացեալքն ի ժողովրդոց: Եւ կոչեաց զառաքեալսն յանուանէ, նաեւ այժմ զամենայն հաւատացեալս յաւազանէն: Առաջի նոցա գնաց վարուքն, քարոզութեամբն եւ չարչարանաւքն եւ եհան զնոսա յԱւետարանն: «Ապար»՝ *զԹեւդաս կախարդն ասէ* (տե՛ս Գործք Ե. 36), *որ գողութեամբ պարտէր զժողովուրդն: Եւ զՅուդա Գալիլեացի* (տե՛ս Գործք Ե. 37), *որ յայտնի իբրեւ զաւազակ ասէր թագաւոր լինել զինքն Իսրայէլի:*

«Ես եմ դուռն»՝ *ոչ թէ այսմ գաւթի, այլ արքայութեանն երկնից: Եւ նախ զգաւիթն ասաց* «*դուռն*», *յիրաւի, զի որպէս մարդիկ նախ ընդ դուռն գաւթին մտանեն եւ ապա ի սրբութիւնն, այսպէս ամենայն ոք ընդ շաւիղս աւրինացն ընթանալով, առ Քրիստոս մերձենայն:*

«Ընդ իս եթէ ոք մտցէ» (Ժ. 9):

Որ հաւատայ յիս, մտցէ յարքայութիւնն եւ մնասցէ կենդանի յաւիտեան: Դարձեալ՝ «մտցէ» *առ իս եւ ելցէ առ Հայր.*

«Եւ «ճարակ գտցէ» (Ժ. 9):

Այժմ զմարմին եւ զարիւն իմ տամ նմա ի ճաշակումն եւ ի հանդերձեալսն, ի սեղանոյ Հաւր իմոյ յիմաստութեանց եւ ի տեսութեանց փառաց աստուածութեանս կերակրեցից զնայ: Առաւել եւս «կեանք» *զյաւիտենականն ասէ՝ ի վերայ այսմ կենացս* (տե՛ս Յովհ. Ժ. 10):

«Ես եմ հովիւն քաջ» (Ժ. 11):

Իբր թէ բարի: Մի երկմտեսցես վասն այս նուաստ անուանս, զի ոչ միայն «*հովիւ*» *ասէ, այլեւ բարի, որ Աստուծոյ է: Նաեւ մարգարէքն զՀայր կոչէին այսպէս.* «*Որ հովուեսդ Իսրայէլի, նայեա՛ եւ փրկեա՛ զմեզ*» (հմմտ. Սաղմ. ՀԹ. 2): *Զի որպէս Քրիստոս զինքն լոյս անուանէր* (տե՛ս Յովհ. Ա. 5), *վասն խաւարելոցն եւ կեանք մահացելոցն եւ բժիշկ հիւանդացն* (տե՛ս Մատթ. Թ. 12, Մարկ. Բ. 17, Ղուկ. Ե. 31), *այսպէս եւ ժողովող, այսինքն՝* «հովիւ» *ասաց վասն ցրուելոցն: Եւ է յատկութիւն հովուին.*

Ա. Առաջին՝ զի ի դուռն մտանէ ի փարախն:

Բ. Երկրորդ՝ զի դռնապանն բանայ:
Գ. Երրորդ՝ զի ոչխարքն ձայնի նորա լսեն:
Դ. Չորրորդ՝ զի զիւրսն կոչէ յանուանէ:
Ե. Հինգերորդ՝ զի հանէ զիւրսն զամենայն:
Զ. Վեցերորդ՝ զի առաջի նոցա երթա:

«Հովիւ բաջ զանձն [իւր] դնէ» (Ժ. 11):

Այսինքն՝ ի մահ տամ զիս, եւ ասէ զայս, զի ոչ էր նա ընդ հարկի մահուան, վասն զի ոչ արար մեղս, եւ մահ մեղաց էր պատիժ, այլ վասն մերոյ փրկութեան:

Իսկ «վարձկանն» զմարգարէսն ասէ, զարդարսն, որք փոխարէն աշխատութեանցն զերանութիւնն ընկալան: Իսկ «փախչիլ» ասէ նոցա, զի տեսանելով զգայլն սատանայ, յափշտակելով զմարդկային բնութիւնս յԱստուծոյ, չար գործով իւրով, զանձինս իւրեանց կեցուցանէին ի յարկածից թշնամւոյն: Եւ թէպէտ եւ ի մահ տային զինքեանս, որպէս Եսայի սղոցեցաւ, եթէ մի այ[լ] քարկոծեցաւ (տե՛ս Եբր. ԺԱ. 37), *եւ ոչ կարկամէին ազատել զբնութիւնս:*

Երեք են գայլք եկեղեցւոյ:
Ա. Առաջին՝ սատանայ:
Բ. Երկրորդ՝ հերձուածողք:
Գ. Երրորդ՝ չար թագաւորքն՝ հալածողք քրիստոնէից:

«Ճանաչիմ յիմոցն» (Ժ. 14) *հաւատովք եւ գործովք արդարութեան եւ սիրելովն զիս:*

«Եւ ճանաչեմ զիմսն» (Ժ. 14)՝ *փրկելով զնոսա եւ ընդ իս յաւիտեանս թագաւորեցուցանելովն:*

«Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ [եւ ես զՀայրն]» (Ժ. 15):
Ցուցանէ ընդ Հաւր հաւասար ունելով զգիտութիւնն:

«Նաեւ այլ եւս ոչխարք [են իմ]» (Ժ. 16). *զՀեթանոսաց ժողովուրդն ասէ:*

«Վասն այնորիկ սիրէ զիս Հայր [իմ]» (Ժ. 17):

Ոսկեբերան զառաւել սէրն ցուցանէ զՀաւր առ մարդիկ: Դարձեալ՝ վասն այնորիկ, զի մի եւ զնոյն կամիմ, որպէս Հայր, զի որպէս նայ կամի, եւ ես կատարեմ զփրկութիւն մարդկան:

«Ոչ ոք հանէ զնոսա յինէն» (հմմտ. Ժ. 18):

Տարակոյս է այս, զի հրէայքն խաչեցին եւ սպանին, եւ դարձեալ տարակոյս է, զի թէ կամաւ ետ զանձն, ահա անձնամատն եղեւ: Այս է առաջնոյն լուծ, զի թէ բռնութեամբ հրէայքն ոչ կարէին խաչել, որպէս յամենայն տեղիս, ուր ոչ կամէր, ելանէր ի ձեռաց նոցա, իսկ երկրորդին, զի թէ պատգամաւ ետ, որ որպէս այլք, որ վասն նախանձու եւ այլ ինչ իրաց՝ լկելով ի դիւէ անձնամատն լինին, այլ Քրիստոս վասն մարդկան փրկութեան ետ զանձն:

«Իշխանութիւն [ունիմ] դնել զանձն եւ իշխանութիւն» (հմմտ. Ժ. 18):

Որպէս ասէ մարգարէն. «Ես սպանանեմ, եւ ես կեցուցանեմ» (Բ. Այր. ԼԲ. 39), *որպէս զի յայտ լիցի, թէ Աստուած է:*

ՎԱՍՆ ՈՐԹՒՈՅՆ ԵՒ ՃԻՒՂԻՆ

Յովհ. ԺԵ. 1-11

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

«Ես եմ որթն ճշմարիտ» (Յովհ. ԺԵ. 1):

ՈՍԿ *Վասն այնորիկ խրատէ զնոսա, որով առաւելագոյն արժանասցին պտղոյն: Զի՞նչ կամի նշանակել ի ձեռն առակիս: Որպէս որթն բնութեամբ ունի զվեր առաքումն ուռ, այնպէս եւ տայ զպտուղն, որքան ընդ որթոյն կապեալ է եւ միաւորեալ. նոյնգունակ եւ դուք՝ հաւատովն եւ սիրովն, որ յիս: Բայց ինքն յԻսրայէլի այգւոյն է որթն՝ հայրական Բանն Աստուծոյ, ոչ քան զերկրաւոր տեսակս, այլ զերկնայինն եւ զիմանալին առնլով, որ զլսողսն քաջ ի ճշմարտութիւնն ածէր, որք Հոգւովն Աստուծոյ նորոգեալ են գիտութեամբ:*

«Ես եմ որթն» (ԺԵ. 1)

Որոյ պտուղն է անճառ գիտութիւն եւ իմաստութիւն եւ փառք:

«Եւ Հայր իմ մշակ է» (ԺԵ. 1):

Որով ամենայն գործք յաւրինին, եւ արարածք լուսաւորին եւ ընդ հովանեաւ նորա խնամին՝ զվերագոյն կամս անճառ ծնաւղին Հաւր ճառելով, եւ անմահական է նոր տունկն որթոյն հայրենի ձեռաւքն մշակի՝ ըստ անախտ մարմնոյն եւ ձեռն է բանն՝ ըստ այնմ. «Եղիցի ձեռն քո ի վերայ առն» (Սաղմ. ՀԶ. 18), *որպէս ներգործող կամքն, որ առ Ադամն ասոր անկեալ, եւ աջ քո ի վերայ որդւոյ մարդկան: Աջոյն զաւրութեամբ զաւրացուցանէր զստեղծուածս իւր առ հաւատսն: Նա՛ է մշակն, որ խնամէ իւրոց ծառայիցն, գիտողն գաղտնեաց մարդկան եւ հատուցանողն ըստ գործոցն, ոչ ազգման կարաւտի Որդին Աստուծոյ, զի ոչ արմատն վայելէ ի խնամոցն Աստուծոյ մշակին, այլ ուռն, զի ուսցին, թէ առանց նորա զաւրութեան ո՛չ ինչ գործի:*

«Ամենայն ուռ, որ յիս է» (ԺԵ. 2):

Այն է, զոր ձգեաց զորթ իւր Բանն Աստուած, մինչեւ ի ծով եւ ի գետս՝ գիտութիւն խորոցն Աստուծոյ, հասին առաքելոցն գունդն, շառաւեղքն պտղաբերք, զաւրութեամբն Աստուծոյ հաստատելով զոստս[1] *նոցա առ գեղեցիկ արմատն խորոցն Աստուծոյ եւ լնուն բռունք զաւրաւորք, որպէս մշտնջենաւորք լերինք՝ ծածկեալք ի հովանւոյ ճառագայթիցն Աստուծոյ, եւ բարեգարդ բարունակք:*

Եւ որ ոչ բերէ պտուղ, կտրէ զնա (ԺԵ. 2):

Որպէս զանպտուղ ուռն Իսրայէլի, որ էին գաւսք եւ անպիտանք փշաբերք, զոր անեծ Տէրն զչար մշակսն ըստ աւրինակի թզենւոյն անպտուղ (տե՛ս Ղուկ. ԺԳ. 6-9), *որ աւրինաւքն էին տերեւալիցք եւ դառինք, եւ չորք, եւ սրով հոգւոյն հատեալք, զոր կտրեաց Բանն՝ ի բաց դնելով, եւ եդ զնոսա առակս եւ յողբ ի դէպ:*

«Եւ ամենայն, որ բերէ պտուղ» (ԺԵ. 2):

Երկոտասանքն, որք նախ բոյսք եւ փափուկք էին եւ գրգանս գորովաւքն Քրիստոսի, կրկնատարածք եւ իմաստունք, որպէս գնդակ Հոգւովն շուրջ կալով, եւ ի ծաղիկ ունէին՝ զաւրինակ պտղոյն, որ է սերտ սէրն Աստուծոյ:

«Սրէ զնա» (ԺԵ. 2):

Այսու յորդորէ զնոսա ի հաւատս եւ քաջալերս տայ, որպէս ընտիր սիրելեաց, զամենեցուն միտս նոքաւք ընդունակ առնել Աստուծոյ, որ Հոգւովն բուսան գեղեցիկ ուռք, որ ի քաղցր որթոյն Քրիստոսի, որպէս ասաց.

«Դուք սուրբ էք վասն Բանին, զոր խաւսեցա ընդ ձեզ» (ԺԵ. 3):

Զի առաւել պտղաբերք լիցիք՝ ճանաչել մեզ զառաւելութիւն սիրոյն Քրիստոսի, թէ պտուղ հոգւոյն այս է. սէր, որ է արմատ կենդանի որթոյն, եւ խնդութիւն, որ է իմաստնալի ուռ՝ կենդանագրեալք ի Հոգւոյն Աստուծոյ, խաղաղութիւն, որ է գնդակին շաղկապ՝ խաղաղութեամբ սպասել Բանին Աստուծոյ՝ գիտողին խորհրդոց նոցա:

«Որ բերէ պտուղ, սրէ [զնա]» (ԺԵ. 2):

---

[1] Լս.՝ զոստս

ՈՍԿ *Այսինքն՝ բազում հոգամտութեամբ տա պտղաբեր առնել. նաեւ արմատս պէտս ունի առ մաւտ յուռն փորել շուրջ, բայց աստ ոչ ինչ ասէ վասն արմատոյն, այլ զամենայն վասն ուռոցն ցուցանելով խնամս, թէ նա ի՛նքն է մշակն, իսկ աշակերտքն բազում աւգնութեան կարաւտին, որ ի մշակէն, իսկ որ անպտուղն է եւ ոչ յայգւոջ կարէ լինել:*

«Իսկ որ բերէ պտուղ, սրբէ զնա» (ԺԵ. 2):

ՍՏ *Զի փորձութիւնքն առաւել եւս յորդորեն ի քաջապտղութիւն:*

«Դուք արդէն իսկ սուրբ էք վասն բանին, զոր խաւսեցայ ընդ ձեզ» (ԺԵ. 3):

ՈՍԿ *Այսինքն՝ ընդունելով զհաւատոց բան, զոր վարդապետեցի ձեզ, ցուցանէ զինքն խնամակալ ուռոյն, քանզի եւ սրբեաց, եւ ասէ.*

«Եւ որպէս ուռն ոչ կարէ բերել պտուղ յանձնէ, որ ոչ է հաստատեալ յորթն, այնպէս եւ որ ոչ է հաստատեալ յիս» (հմմտ. ԺԵ. 4):

Զի մի ի վատութիւն անկեալ թուլասցին, պնդէ զանձն նոցա եւ զուգէ ընդ ինքեան, իսկ ի բաց հատեալքն յինէն անպիտան լինին, որպէս հատեալ ուռ: Իսկ ազգակցութիւն, որ ի մարմնոյն որ ի կուսէն առ, ոսկերք եւ մարմինք եմք, զի նա՛ է մշակն, որ խնամէ զծառայս իւր, գիտողն գաղտնեաց մարդկան եւ հատուցանողն ըստ գործոց: Որպէս ուռն ոչ հաստատեալ յորթն անպտուղ է, այսպէս եւ դուք ոչ առանց աւգնականութեան կարէք համբերել չարչարանաց եւ մահու, եւ հալածանաց, եւ պտղաբերել զառաքինութիւն.

«Եւ ոչինչ կարէք առանց իմ առնել» (հմմտ. ԺԵ. 5) *ի լաւագունիցն, իսկ ըստ թանձրամտացն որ իմանի, ոչինչ կարել առնել: Ընդէ՞ր ապա այնքան յորդորէր եւ քրքրէր զմիտս նոցա առ լաւագոյնսն, զի՞նչ տացուք նման զՀաւրէ զննել. զի Որդի լոյս է եւ ի լուսոյն Հաւր, զի առանց նորա ոչ գոյ հնար արարածոց տեսանել զՀայր առանց Որդւոյ չհաւատալոյ, որպէս ուռն, որ ոչ է հաստատեալ յորթն* (տե՛ս Յովհ. ԺԵ. 6):

ՍՏ *Երեւելի առակաւքս զիմանալի բարձրութիւն ցուցանէ բանիւ Բանն Աստուած, որպէս ասէ Պաւղոս, թէ՝ «Անտեսանելիք զաւրութիւն եւ իմաստութիւն Աստուծոյ ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ լինի»* (հմմտ. Հռոմ. Ա. 20)՝ *ըստ որթոյն եւ ուռոյն եւ պտղոյն, որ «մշտնջենաւորութիւն աստուածութեան նորա»* (հմմտ. Հռոմ. Ա. 20), *որ ըստ առման մարմնոյն ժողովեաց զաշակերտսն բանիւն, որպէս ուռ կապելով զնոսա սիրով հոգւոյն:*

«Եթէ որ ոչ է հաստատեալ յիս, ել նա արտաքս [իբրեւ զուռն] եւ ցամաքեցաւ» (ԺԵ. 6):

Որպէս ուռն անհաստատ եւ չորին՝ ըստ անպիտան մատնչին Յուդայի՝ արտաքսեալ եւ անպտուղ, եւ կամակոր, եւ խաւարին տանջեալ խեղդմամբ հատմամբ ի Տեառնէ:

«Որ հաստատեալ է յիս, եւ ես՝ ի նա» (ԺԵ. 5):

ՈՍԿ *Որդի՝ Հաւր կատարելակից եւ ոչ նուազ գոլ յաշակերտացն խնամարարութիւն հաստատելով զնոսա ի սրբոյ հաւատոյ եւ սիրոյ:*

«Ել արտաքս» (հմմտ. ԺԵ. 6):

Ի մշակական ձեռանէ ցամաքեցաւ, ի շնորհացն Աստուծոյ, զոր ունէր, մերկացաւ եւ անապատացեալ յաւգնականութենէ եւ «ի հուր արկանի» (հմմտ. ԺԵ. 6): Կամ զհրէիցն զնեղութիւնն գուշակեաց, որ լինելոց էր ի Տիտոսէ եւ յայլոցն:

«Ես եմ որթ» (ԺԵ. 5):

ՍՏ *Որ գեղեցիկ է տունկս քան զտեսակ տնկոց փայտից մրգապահաց, արդ որ ի սերովբէիցն պահի ծառն կենաց յԵդեմ կամ յերկինս շրջափակեալ յանմահութիւն, Քրիստոս ըստ ողորմութեան խնամոցն լինի մարդ եւ նմանի մարդկան, զի նմանեաւն զնմանն մաքրեսցէ՝ ըստ այգւոյն անմահութեան դրախտին՝ անապական մարմնովն հրաշագործելով մարդ. եւ որթ երկնային, որպէս յանկեան տեղւոջ տաճար շինեաց ամբիծ եւ զրնութիւն մարդկան ձողաբարձ զարդարեաց հրեշտակաց սպասաւորութեամբ:*

«Եւ դուք՝ ուռ» (ԺԵ. 5):

Աստուածային փառաւք հիմունս եդ զառաքեալսն մինչեւ ի ծով եւ մինչեւ ի գետս Աւետարանին քարոզն, ի չորս կողմ երկրի եւ հոգւոյն շառաւեղաւքն վարսաւորեալ:

«Որ յիս հաստատեալ է» (ԺԵ. 6):

Որ ի նոյն փառս հաստատեաց զմարդն, որ հաստատեալ է յիս հոգւով եւ ոչ գրովն, որ սպանանէ (տե՛ս Բ. Կոր. Գ. 6), *զոչ հաստատեալսն ի սէրն Աստուծոյ. եւ հոգին կեցուցանէ զընդունողս Բանին: Որ հաստատեալ է յիս սիրովն, եւ ես ի նա՝ կամաւք եւ զաւրութեամբ, նա բերէ պտուղ՝ աստուածպաշտութիւն գործովք կատարեալ՝ ըստ այնմ, թէ՝ «Աստուծով արասցուք զաւրութիւն»* (Սաղմ. ՃԷ. 14), *եւ Պաւղոս ասէ. «Զամենայն յանուն Յիսուսի Քրիստոսի արասցուք»* (հմմտ. Կողոս. Գ. 17), *եւ թէ՝ «Որոց սիրեն զԱստուած, գործակից լինի յամենայն ի բարիս»* (հմմտ. Հռոմ. Ը. 28):

«Թէ որ ոչ է հաստատեալ յիս» (ԺԵ. 6):

Որ ըստ պատուիրանին Աստուծոյ՝ սրբութեամբ եւ անեղծութեամբ, որպէս զՊետրոս եւ զՅոհաննէս հաստատուն սիւնքն եւ զայլ աշակերտսն՝ անբիծ:

«Ել նա արտաքս» (ԺԵ. 6). *որպէս զողորմելի ուռն զՅուդաս կամ զբոլոր ազգն հրէից:*

«Եւ ցամաքեցաւ» (ԺԵ. 6) *ի սիրոյն Քրիստոսի, որպէս եւ ամենայն մեղաւորք եւ չարքն աշխարհի:*

«Եւ ժողովեն զնա եւ ի հուր արկանեն, եւ այրի» (ԺԵ. 6):

Հրեշտակք՝ սպասաւորք Աստուծոյ, որ ի գերեզմանաց ձայնիւ փողոյն ի կատարածի աւուրն, որպէս եւ ինքն յորոմանց ագարակին առակի ասաց (տե՛ս Մատթ. ԺԳ. 24-30), *թէ՝ առաքեսցէ զհնձողսն, որ են ժողովիչք, ժողովեն զչարին ուռսն, որ ի դառն տապոյ մեղացն չարացան, եւ արկցէ զնոսա ի հնոց հրոյն. «Անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց»* (Մատթ. Ը. 12), *եւ ոչ ուստեք աւգնականութիւն:*

«Թէ կայցէք յիս» (ԺԵ. 7):

ՈՍԿ *Եւ որ զբարեմիտ աշակերտսն խրատէ Տէրն եւ նոքաւք՝ զամենայն տիեզերս. ցուցանէ, թէ խորամանկք բազումք փոխադրեն զչարութիւնն յայլս եւ ցուցանէ, թէ սուրբքն անպարտելիք եղիցին:*

«Եւ բանք իմ ի ձեզ» (ԺԵ. 7):

ՍՏ *Կենդանականն, զոր ասաց Պետրոս, բանս կենաց ունիս եւ սուրբ, զոր հրաշաբանս ասէ Յովհաննէս, եւ որք ընկալաք զբան նորա, հաստատեցաք ի սէր նորա, եւ ի հոգւոյն իւր ետ մեզ:*

«Զոր, զինչ կամիցիք եւ խնդրեսջիք» (ԺԵ. 7):

Զի խնդրելոյն աւրինակ է զերկնայինսն եւ զանճառսն եւ զոչ զերեւելիս, որպէս ասաց Քրիստոս. «Խնդրեցէք զարքայութիւն նորա» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 31) *եւ զարդարութիւնն եւ զհաճոյսն, եւ որ ինչ աստ է, տացի ձեզ ի կամողի ձեզ: Եւ Պաւղոս ասէ. «Ոչ խնդրեմք զառժամանակեայքս, այլ զաներեւոյթքն եւ զյաւիտենականն»* (հմմտ Բ. Կոր. Դ. 18), *որում ուշ եդեալ ընթանամ ի կետ կոչմանն Քրիստոսի, որ ասաց.* «Աւն, արիք գնասցուք աստի» (Յովհ. ԺԴ. 31):

«Յայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ» (ԺԵ. 8):

ՈՍԿ *Զի դուք աշակերտէք զտիեզերս, բայց որ զպտուղն բերէ, նա է իմ աշակերտ, յորս փառաւորի Հայր, յորժամ յիս հաւատասցէ երկիր՝ մտեալ ընդ աւրինաւք, եւ ազգակից իւր արար եւ փառաւորս շնորհաւք աստուածային զորս սիրեաց, եւ խաղաղութիւն զինքն ի նոսա եւ փառաւորեալ ի նոսա ասաց զՀայրն բոլորից, ուստի Բանն ճշմարիտ բղխեաց, զոր եդ ի նոսա իմանալի որթովն եւ կալ հաստատուն.*

«Զի պտուղ յոյժ բերիցէք եւ եղիջիք աշակերտք» (ԺԵ. 8):

Իմանալին Հաւր մշակողին ընձայեալք աստի, այս իմանալի պտղոցն բերք բանական տնկոցն իւր պտուղ է: Եւ Հաւր փառք եւ ընդունակ, որ ի խաչին ողկոյզն ճմլեցաւ եւ սրբոց միտքն լցան անապական բաժակաւն՝ ըստ Պաւղոսի. «Հողագործին պարտ է նախ ի պտղոյն վայելել» (հմմտ. Բ Տիմ. Բ. 6)՝ *ի խաչին չարչարանացն, որ ի փառս աշխարհի իրքն եղեւ, եւ առաքելոցն աւանդէ կրել զչարչարանս մահու:*

«Որպէս սիրեաց զիս Հայր» (ԺԵ. 9):

ՈՍԿ *Յայսմ տեղւոջ մարդկաւրէն բարբառի, որ մեռանիլ յանձն էառ եւ զթշնամիսն այնքան պատուոյ արժանի արար եւ յերկինս եհան:*

«Սիրեաց զիս Հայր». *որ յառաջ էր սէրն, քան զլինելն աշխարհի, որ ասաց. «Դայ է Որդի իմ սիրելի»* (Բ. Պետ. Ա. 17):

«Եւ ես սիրեցի զձեզ» (ԺԵ. 9). *ի լրման ժամանակիս ժողովել զնոսա:*

«Հաստատուն կացէք ի սէր իմ» (ԺԵ. 9):

Եւ որք լուանն, սիրեցին զՈրդին եւ սիրեցան ի նմանէ եւ առին պատուէր վասն զիմանալիսն ճառեալս իմանալ զԱստուծոյ՝ ըստ այնմ. «Որ սիրեն, նա տեղեկանայ ամենայն սքանչելեացն Աստուծոյ, թէ կատարեալ սէրն մերժէ զմարդկան երկիւղ» (հմմտ. Ա Յովհ. Դ. 17-18), *եւ որ զպատուիրանն պահէ, աւրէնքն լնուն եւ մարգարէքն:*

«Թէ պահիցէք զպատուրանն եւ կայցէք ի սէրն իմ» (ԺԵ. 10)

Որ ասաց. «Պատուիրանն, որ տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս» (հմմտ. Բ. Պետ. Գ. 11): *Եւ այս առնէ ծանաւթ աշխարհի. զաշակերտութեանդ ձեր ինձ, որ սիրեցի զձեզ եւ մարդ եղէ եւ աւրինակ սիրոյ, զիմ ճշմարիտ սէրն ետու. թէ ո՛ր է առաւելութիւն պտղոյն եւ անշարժ կալ յարմատն Աստուծոյ:*

«Որպէս ես զպատուիրանս Հաւր պահեցի» (ԺԵ. 9):

ՈՍԿ *Առ նոցա կարծիսն ասէ, զի մի ասիցեն, թէ ելաք ի հայրենեացն եւ թողեալ եղեաք, յիս, ասէ, հայեցարուք, որ սիրեցեալս եմ ի Հաւրէ, բայց կրեմ զչարչարանս խաչին, ապա որչա՞փ ձեզ չէ՛ պարտ խռովել: Եւ որպէս ես ի սկզբանէ իսկակից էութենէ նորա, որպէս սիրելի Որդի եւ Միածին, եւ ճառագայթ փառաց Հաւր, եւ գոյակից, եւ փառակից անբաժանելի հրաշիւք եւ կամ ի սէր նորա:*

ՍՏ *Եւ ոչ ձեզ տացի դժնդակս այս չարչարանս՝ նայել ի սիրոյն բանն, զի մեծ է եւ անպատմելի, ցուցցո՞ւք զաւրինակն ի ձեռնգործոցն, զի մեք թշնամիք գոլով՝ հաշտեցոյց, իսկ սիրելիք եղեալ՝ հաստատուն կացցուք. նա ոչ վասն ընտանի շնորհին սիրէ, զի անկարաւտ է, ուստի գերակայ արմատն կայ ի խորւոջն, ունի յինքեան զանճառ լոյսն, որով սիրեալ ասէ եւ ոչ քննեալ: Պաւղոս ասէ. «Սիրով արմատացեալք ի նա եւ հաստատեալք»* (հմմտ. Եփես. Գ. 17): *Եւ սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ քննել, զոր ինչ սիրոյն Աստուծոյ է լրումն եւ հաւատոցն կատարումն:*

«Զայս խաւսեցայ ընդ ձեզ» (ԺԵ. 11):

ՈՍԿ *Այս տրտմութիւնս, որ կայ ի ձեզ, ցուցանէ, թէ ոչ են տրտմութեան արժանի մերձակայքս. լուայք վասն նեղութեան, որ բերէ պարգեւս երկնայինս: Յայտնէ այս, թէ՝ վասն իմանալի որթոյն խաւսեցաւ բանս.*

«Զի ուրախութիւն իմ ձեզ իցէ» (ԺԵ. 11):

ՍՏ *Յայտ է, թէ գովութիւն որթոյն, որ պտղոյն է վայելումն գինւոյն, որ նախ զայգեգործն ուրախ առնէ եւ ապա՝ այլոցն տայ: Եւ այգեգործ այնպիսի որթոյն Հայր է, եւ ուրախ է Հայր ի գործս Որդւոյ, վասն արարածոց փրկութեան, զի եկն տնկեցաւ Յենգաղեայ այնպիսի որթն եւ ուրախ է ի գործս իւր եւ ի կամս Հաւր:*

ՈՍԿ «Ուրախութիւն իմ ի ձեզ». *Լնուլ զկամս առաքողին Հաւր, որ բոլոր կեանս տայ աշխարհի, որպէս Տէր եւ կեցուցիչ եւ լոյս աշխարհի: Այս բարի յայնժամ ունի զվարձս, յորժամ ի կատարումն եկեսցէ, զոր աւրինակ՝ նաւ ծանրաբեռն, թէ ոչ ի նաւահանգիստն հասանէ, ի մէջ ծովուն ծփի, այսպէս ի վախճան հասանել վաստակոց անձինք Պաւղոս ասէ. «Փառք եւ պատիւ եւ խաղաղութիւն համբերողացն»* (հմմտ. Հռոմ. Բ. 10), *զի հատանել ընթացիցն ուրախ լինին վաստակողքն, եւ ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի, նոցա ուրախութիւնն ոչ այլ ինչ է, թէ ոչ Քրիստոս, որ ասաց ընդ նոսա լինել եւ զանապական բաժակն էր տալոց մխիթարիչ Հոգին ի վերուստ, որ ուրախ առնէ այն գինին զսիրտս իմաստնոց:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

«Ես եմ որթն ճշմարիտ» (Յովհ. ԺԵ. 1):

Յորժամ որթ լսես, երիս իրս յայտնէ. նախ՝ զուռն, երկրորդ՝ զպտուղն տերեւովն եւ երրորդ՝ զմշակն:

Իսկ թէ ընդէ՞ր որթ անուանէ զինքն, այս է, զի որթոյն չորս յատկութիւն կայ. նախ՝ զի կենդանական ունի զաւրութիւն, երկրորդ՝ զի աճողութիւն ունի, երրորդ՝ զի պտուղ բերէ, չորրորդ՝ զի տերեւ բերէ, որով ի տաւթոյ զպտուղն պահէ եւ ի ցրտոյ: Այսպէս եւ Քրիստոս կենդանութիւն է ամենայն կենդանեաց:

Երկրորդ. զի յորժամ սոքա ի Քրիստոս միանան սիրով եւ հաւատով, բազումս կարող են դարձուցանել յաստուածպաշտութիւն եւ զփոքր հաւտն Քրիստոսի աճեցուցանեն: Երրորդ. զի բարեպաշտութեան պտուղն ի Քրիստոս միանալով ի հանդերձեալ կեանս պտղաբերեն: Չորրորդ. զի խնամքն Աստուծոյ ի վերայ հաւատա-

ցելոց իբրեւ զտերեւս ի վերայ պտղոց հանապազ հովանի է, զի յամենայն վնասակար աւդոց չարութեանց պահէ զնոսա:

«Եւ Հայր իմ մշակ է» (ԺԵ. 1):

Մշակ ասի Հայր եւ բոլոր Երրորդութիւն, զի լրումն շնորհաց եւ ճշմարտութեան եհեղ եւ տնկեաց ի մարդկութիւն Քրիստոսի, բայց գիտելի է, զի մշակն ոչ աշխատի եւ յաւտէ զարմատն, այլ զուռն, նոյնպէս եւ Հայր ոչ աշխատի եւ հոգայ վասն արմատոյն, որ է Քրիստոս, այլ զուռն կամի սրբել եւ խնամել, որ են հաւատացեալք:

«Ամենայն ուռ, որ յիս է եւ ոչ [բերէ պտուղ]» (ԺԵ. 2):

Զորս ազգ մխիթարութիւն դնէ աստանաւր յառաջիկայդ առաքելոցն. նախ՝ թէ յիս հաստատուն լինիք հաւատով, նա պտուղ յոյժ բերելոց էք: Երկրորդ. զի զերկիւղն եւ զխորշումն պահապան դնէ նոցա, այսինքն՝ թէ ոք հատանի յինէն որպէս ուռ յորթոյ, այնուհետեւ պտղաբերել, այլ հրոյ ճարակ լինի, զգուշացուցանէ զնոսա այսու երկիւղիւս, զի յորժամ նեղութիւն գայցէ, մի՝ վաղվաղակի գայթակղիցին: Երրորդ. զի զոր ինչ խնդրէք յանուն իմ, առնուք (տե՛ս Յովհ. ԺԶ. 23): *Զորրորդ. զի Հայր Իմ փառաւորի ի ձեզ պտղաբերելն:*

ՄԱՏԹԷՈՍ ՁՈՒՂԱՅԵՑԻ

«Ես եմ որթն ճշմարիտ» (Յովհ. ԺԵ. 1):

«Ճշմարիտ» ասէ առ ի զանազանել զինքն ի վայրենի որթոյ, որ ոչ տայ պտուղ: Իսկ «որթ» ասի Քրիստոս, վասն Ե. (5) պատճառի.

Ա. Առաջին՝ զի որպէս զգալի որթս ունի անարգ փայտս եւ անաւգուտ երեւի, թէպէտ կարի բարի ունի զպտուղն, նոյնպէս Քրիստոս մարդկայինս բնութեամբ անարգ եւ արհամարհելի երեւէր, սակայն ի ձեռն խոնարհութեան նորա եղեւ պտուղ փառաւոր եւ պատուական:

Բ. Երկրորդ՝ ասի Քրիստոս «որթ», զի որպէս ուռ, շաղկապեալ ընդ որթոյ ի նմանէ ունի ազդումն կենդանութեան եւ հաստատութեան, նոյնպէս հաւատացեալքն ի Քրիստոսէ:

Գ. Երրորդ՝ զի որթն պտուղ բերէ, այսինքն՝ ողկոյզ, որ բազում պտուղ ի նմին կան յեռեալ, այսպէս գործ մի գործեաց Տէր մեր, այսինքն՝ աւերեաց զդժոխքն, ուստի բազում հոգիքն, որպէս մի ողկոյզ պտուղ պատրաստեցաւ Հաւր Աստուծոյ:

Դ. Զորրորդ՝ զի զանազան որակաւք բերէ պտուղ որթն, այսպէս հաւատացեալք Քրիստոսի զանազան առաքինութեամբ որդիք նորա կոչին:

Ե. Հինգերորդ՝ զի նախ ուռ բերէ որթն եւ ապա՝ պտուղ, այսպէս եւ Տէր մեր նախ ծնանի զմեզ աւազանաւն եւ ապա՝ արժանի է պտուղն:

«Եւ Հայր իմ մշակ է» (ԺԵ. 1):

«Մշակ» ասի «Հայր» եւ բոլոր Երրորդութիւնն, զի լրումն շնորհաց եւ ճշմարտութեան եհեղ եւ տնկեաց ի մարդկութիւնն Քրիստոսի, բայց գիտելի է, զի մշակն ոչ աշխատի եւ յաւտէ զարմատն, այլ զուռն, նոյնպէս Հայր ոչ աշխատի եւ հոգայ վասն արմատոյն, որ է Քրիստոս, այլ զուռն կամի սրբել եւ խնամել, որ են հաւատացեալք:

Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, զի Դ. (4) են, զորս պիտոյ է սիրել, այսինքն՝ Աստուած, հոգիս մեր, ընկերն եւ մարմին: Եւ զի՞ սէրն կարգաւորէ. վասն որոյ Աստուած, որ մեծագոյն է, նախ զնա՛ սիրել արժան է եւ ապա զայլսն վասն նորա: Իսկ վասն հոգւոյն պարտ է զընկերն եւ զմարմինն արհամարհել, եւ վասն փրկութեան ընկերին պարտ է զկենդանութիւն մարմնոյն դնել, եւ քանզի այս է մեծագոյն բարի[ք], զոր կարեմք վասն ընկերին առնել եւ զանձն դնել վասն եղբաւրն, է մեծ նշանակ եղբայրսիրութեան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խոսք 5

Վասն սերմանաց (Մատթ. ԺԳ. 4-23, Ղուկ. Ը. 5-18) 17
Վասն որոմանց առակին (Մատթ. ԺԳ. 24-30) 49
Մեկնութիւն առակին որոմանց (Մատթ. ԺԳ. 36-43, 51-52) 57
Վասն հատոյ մանանխոյ (Մատթ. ԺԳ. 31-32, Ղուկ. ԺԳ. 18-19) 69
Առակ խմորոյն (Մատթ. ԺԳ. 33, Ղուկ. ԺԳ. 20-21) 74
Առակ գանձի (Մատթ. ԺԳ. 44) 81
Վասն մարգարտի (Մատթ. ԺԳ. 45-46) 85
Առակ ուռկանին (Մատթ. ԺԳ. 47-50) 88
Առակ հարիւր ոչխարաց (Մատթ. ԺԸ. 12-14) 93
Առակ երկուց պարտապանացն (Մատթ. ԺԸ. 23-35) 97
Վասն այգւոյն եւ մշակաց (Մատթ. Ի. 1-16) 111
Վասն անիծեալ թզենւոյն (Մատթ. ԻԱ. 18-20) 127
Առակ երկուց որդւոցն (Մատթ. ԻԱ 28-32) 130
Վասն այգւոյն (Մատթ. ԻԱ. 33-46, Մարկ. ԺԲ. 1-11) 136
Վասն սեղանին հարսանեաց (Մատթ. ԻԲ. 1-14) 171
Վասն թզենւոյն (Մատթ. ԻԴ. 32-35, Մարկ. ԺԳ. 28-31, Ղուկ. ԺԳ. 29-33) 195
Տանուտէր եւ տնտես (Մատթ. ԻԴ. 42-51, Մարկ. ԺԳ. 33-37) 204
Առակ տասն կուսանաց (Մատթ. ԻԵ. 1-13) 229
Առակ քանքարաց (Մատթ. ԻԵ. 14-30, Ղուկ. Ի. 9-18) 251
Բարի սամարացի (Ղուկ. Ժ. 29-37) 268
Առակ անմիտ մեծատանն (Ղուկ. ԺԲ. 16-21) 285
Առակ անպտուղ թզենւոյն (Ղուկ. ԺԳ. 6-9) 299
Յաղագս կորուսեալ ոչխարին (Ղուկ. ԺԵ. 3-7) 313
Վասն կորուսեալ դրամին (Ղուկ. ԺԵ. 8-10) 319
Վասն անառակ որդւոյն (Ղուկ. ԺԵ. 11-32) 331

Վասն անիրաւ տնտեսին (Ղուկ. ԺԶ. 1-9) 392
Մեծահարուստ եւ աղքատ (Ղուկ. ԺԶ. 19-31) 418
Դատաւոր եւ այրի կին (Ղուկ. ԺԸ. 1-8) 443
Փարիսեցի եւ մաքսաւոր (Ղուկ. ԺԸ. 9-14) 460
Առակ տասն մնասաց (Ղուկ. ԺԹ. 11-27) 475
Առակ ճրագի (Ղուկ. Ը. 16-18) 497
Վասն հրաւիրելոցն ի խնջոյս (Ղուկ. ԺԴ. 8-11) 498
Ընտրութիւն հրաւիրելոցն (Ղուկ. ԺԴ. 12-14) 502
Վասն մեծի խնջոյից (Ղուկ. ԺԴ. 15-24) 503
Վասն չար մշակացն (Ղուկ. Ի. 9-19) 509
Աւրինակ ճշմարիտ հովուի (Յովհ. Ժ. 1-18) 515
Վասն որթոյն եւ ճիւղին (Յովհ. ԺԵ. 1-11) 540

ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմող՝ Լիլիթ Հովսեփյան
Խմբագիր՝ Գևորգ Տեր-Վարդանյան

Հրատարակչական Խորհրդի նախագահ և բաժնի տնօրեն՝ Նաթան Արք. Հովհաննիսյան
Հրատարակչական Խորհրդի անդամներ՝ Ա. Մադոյան, Պ. Հովհաննիսյան, Գ. Տեր-Վարդանյան
Սրբագրիչ՝ Հ. Նիկողոսյան
Էջադրումը՝ Ղևոնդ քահանա Մայիլյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2013

Թուղթ՝ օֆսեթ 70x100, 1/16
Ծավալ՝ 34.5 տպ. մամուլ, կազմը կոշտ,
Տպաքանակը՝ 300:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ